Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐ

Երևան
«Սովետական գրող»
1988

ԳՄԴ 84Հ1
Չ 755

Առաջաբան՝ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻ
Կազմող՝ Ա. Ս. ՔԻՇՈՅԱՆ

Չոպանյան Ա. Հ.

Չ 755 Երկեր /Արշակ Չոպանյան.— Եր.: Սովետ. գրող, 1988.— 872 էջ:

Առաջաբանը՝ Կարլեն Դալլաքյանի

Արևմտահայ ականավոր գրող, քննադատ, հրապարակախոս, հասարակական գործիչ, թարգմանիչ Չոպանյանի ներկա ժողովածուում տեղ են գտել նրա բանաստեղծական ժառանգությունը, արձակ գործերը: «Գրական դեմքեր» բաժնում, ներկայացված է ականավոր գրողների և արվեստագետների մասին գրած քննադատական հոդվածներն ու բնութագրումները: Նարեկացի, Կոմիտաս, Աբովյան, Դուրյան, Սիամանթո, Վարուժան, Սունդուկյան և ուրիշներ:

Չ 4702080106 (64) / 705(01)88 — 6—88

ԳՄԴ 84Հ1

ISBN 5—550—00006—7

© «Սովետական գրող» հրատարակչություն ձևավորման, կազմելու և առաջաբանի համար, 1988 թ.

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

Արշակ Չոպանյանը ծնվել է 1872 թվականին Պոլսում, արհեստավոր ոսկերիչի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Պեշիկթաշ թաղի «Մաքրուհյան» դպրոցում, ապա ավարտել է Պոլսի Կեդրոնական վարժարանը: Կեդրոնականը արևմտահայ մտավորական կադրերի պատրաստման հռչակավոր օջախ էր, որտեղ դասավանդում էին ժամանակի նշանավոր հասարակական ու մշակութային գործիչներ Մ. Չերազը, Ե. Տեմիրճիպաշյանը, Գ. Սրվանձտյանցը, Հ. Հինդյանը, Թ. Թերզյանը, Մ. Գարագաշյանը և ուրիշներ: «Մաքրուհյանի» աշակերտը և կեդրոնականի ուսանողը արդեն սկսել էր բանաստեղծություններ գրել և հրատարակել սյոյսահայ մամուլում: Պատանի բանաստեղծը ծլարձակում էր ժամանակակից եվրոպական անկումային պոեզիայի, մասնավորապես Բոդլերի, Վինյիի, Լեոպարդիի, շնչի տակ և Մ. Գարագաշյանի ու Ե. Տեմիրճիպաշյանի հառաչող հավիտենական տրտմության խոր ազդեցությամբ: Պատահական չէ, որ երիտասարդ բանաստեղծի քնարի արտադրանքը գրեթե ամբողջովին «հոռետեսությամբ մթնցած էջեր էին, մխիթարիչ հավատալիքներեն որբացած» — ինչպես խոստովանում է ինքը:

Ժամանակի պոլսահայ երիտասարդության մեջ մատերիալիստական հայացքների սաղմնավորման և տարածման գործում մեծ դեր էր վերապահվել Բյուխներին և Սպենսերին: Նրանց, թեպետ և խիստ սահմանափակ, մատերիալիզմի տարածումը Պոլսում, համիդյան ռեակցիայի պայմաններում, երբ որևէ գիտական ուսմունք այնտեղ մուտք գործել չէր կարող, յուրովի առաջադիմական երևույթ էր և կոչված էր բավարարելու հասարակության առաջընթացի պահանջը: Ա. Չոպանյանի փիլիսոփայական հայացքներն էլ ձևավորվեցին բյուխներ-սպենսերյան մատերիալիզմի ազդեցությամբ:

Ա. Արփիարյանի, Գ. Զոհրապի, Լ. Բաշալյանի, Ե. Օտյանի, Տ. Կամսարականի և արևմտահայ 80-ականների մյուս ներկայացուցիչների հետ ամենօրյա աշխատակցությունը, գրականության մեջ ռեալիզմի, արևմտահայ աշխարհաբարի հաղթանակի, ժողովրդի լուսավորության համար մղված պայքարը դառնում են այն հիմքերը, որոնց վրա ձևավորվում են Չոպանյանի գրական-հասարակական հայացքները: «Արևելք» — «Մասիս»-ի

այդ խումբին շնորհիվ է դարձյալ, որ ես մղվեցա հեռանալ ռոմանտիզմեն... ու ձգտեցա դեպի իրապաշտ ու ավելի լայն բանաձևով մը դեպի կենդանի. ուղղակի անձնական գրականությունը, դեպի արդիական ոգին»,— գրում է Չոպանյանը մի առիթով:

1895 թվականին Ա. Չոպանյանը հրատարակում է «Ծաղիկ» գրական հանդեսը, որ ստիպված դադարեցնում է արդեն նույն տարեվերջին: Մինչ 1895 թվականը Չոպանյանի իսկ հայտարարությամբ նա հեռու է մնացել անմիջական քաղաքական գործունեությունից, ամբողջապես նվիրվելով գրականությանը: 90-ական թվականների կեսերին տեղի ունեցած հայկական անլուր կոտորածները Չոպանյանի մեջ արթնացնում են հայրենասեր քաղաքացուն: Այնուհետև, նա իր ամբողջ երիտասարդական գործունեությունը ստորադասում է մի նպատակի՝ իր ժողովրդի ազգային ազատագրության նպատակին: Սուլթան Համիդի իշխանության խավար ռեակցիայի տարիներին, բնականաբար, Պոլսում հասարակական-քաղաքական լայն գործունեություն ծավալել հնարավոր չէր: 1895 թվականի վերջերին Չոպանյանը գաղտնի մեկնում է Պոլսից և ընդմիշտ հաստատվում Փարիզում:

Երկար տասնամյակներ Չոպանյանը ծավալում է լայն ու խոր պրոպագանդիստական գործունեություն, բազմիցս հանդես է գալիս եվրոպական լսարանների առջև, պաշտպանելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի արդար գործը, մեծապես նպաստում է համաշխարհային առաջադիմական-հասարակական կարծիքի մշակմանը, ներգրավում է Ֆրանսիայի և Եվրոպայի առաջադեմ շատ գործիչների, այդ թվում Ա. Ֆրանսին, Ժ. Ժորեսին, Է. Վերհարնին և ուրիշների հայ ժողովրդի ազատագրական պայքարի պաշտպանության օգտին ակտիվ հասարակական գործունեության մեջ:

1898—1911 և 1927—1949 թվականներին Չոպանյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Անահիտ» գրական-հասարակական հանդեսը: Վիթխարի էր հանդեսի դերը արևմտահայ և սփյուռքահայ գրականության և առհասարակ մշակույթի, քաղաքական-հասարակական մտքի զարգացման գործում:

«Անահիտ»-ում Չոպանյանը շարադրում էր իր հայացքները հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ, սուր քննադատության կրակի տակ առնվելով զանազան քաղաքական հոսանքների արկածախնդրական գործունեությունը:

«Անահիտ»-ին ու նրա խմբագրին վճռական դեր վիճակվեց հայ միջնադարյան բանաստեղծության մի շարք խոշոր դեմքերի ստեղծագործությունների մեկնաբանման, պրոպագանդման ու ժողովրդի մեջ տարածման գործում: Հանդեսի էջերը լայնորեն տրամադրվում են օտար մշակույթների արդագանդմանը հայության մեջ:

Չոպանյանը աշխուժորեն աշխատակցել է թիֆլիսահայ և պոլսահայ մամուլին, ինչպես նաև Փարիզի «Ապագա», «Արև», Բոստոնի «Պայքար» և ուրիշ թերթերի: 1924 թվականին սփյուռքահայությունը նշում է վաստակաշատ գործչի գրական-հասարակական գործունեության 35-ամյակը: Ֆրանսիական կառավարությունը Չոպանյանին շնորհում է «Պատվո լեգիոնի» շքանշան՝ հայ մշակույթը Ֆրանսիայում տարածելու համար: Մշակութային լայն գործունեության համար Ռումինական կառավարությունը նույնպես նրան պարգևատրում է շքանշանով 1932 թվականին:

1908 թվականին նա լինում է Էջմիածնում, որտեղ հյուրընկալվում է իր բարեկամ Կոմիտասի խցում: Երևանում, Թիֆլիսում, Բաքվում անձնական ծանոթություն և բարեկամություն է հաստատում Թումանյանի, Բաշինջաղյանի, Լեոյի և շատ ուրիշ խոշոր դեմքերի հետ: 1932 թվականի տարեվերջին Սովետական Հայաստան կատարած այցելությունը անջնջելի տպավորություն է թողնում նրա վրա: Իր հուշագրությունները նա շարունակաբար տպագրում է «Անահիտ»-ում ընդհուպ մինչև 1935 թվականը:

Արշակ Չոպանյանը վախճանվեց 1954 թվականին Փարիզում, նոր գնալով ավտոմոբիլի արկածի:

* * *

Եթե մեկտեղենք Չոպանյանի գրչին պատկանող արտադրանքը, ապա այն հպիվ կարող է տեղավորվել մեկ հարյուրյակից ոչ պակաս ստվարածավալ հատորներում: Չոպանյանը ստեղծագործել սկսել է 13—14 տարեկանից և առաջին անգամ տպագրվել «Մաքրուհյան» վարժարանի «Բուրաստան մանկանց» հանդեսում: 90-ական թվականների սկզբներին «Արևելքում», «Մասիսում», «Հայրենիքում» գրեթե ամեն օր լույս են տեսնում Չոպանյանի թարգմանությունները, ինքնուրույն բանաստեղծությունները, հեքիաթները, արձակ բանաստեղծությունները, հոդվածները: Երվանդ Օտյանի խոստովանությամբ, այդ տարիներին Չոպանյանը ամենաբեղմնավոր հեղինակն էր:

1891 թվականին առանձին գրքով լույս է տեսնում Չոպանյանի անդրանիկ ժողովածուն «Արշալույսի ձայներ» խորագրով: Մեկ տարի անց՝ «Թրթռումներ» փոքրածավալ ժողովածուն և «Թուղթի փառք» վիպակը: 1893 թվականին Չոպանյանը գրում է «Մութ խավեր» թատերախաղը, որը նույն տարում բեմադրվում է Պոլսում: Թատերախաղը լույս է տեսնում միայն 1950 թվականին «Բամբասանք» խորագրով: 1894 թվականին Թիֆլիսում հրատարակվում է նրա «Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը» մենագրությունը: 1896 թվականից սկսած Չոպանյանը Փարիզում ֆրանսերենով լույս է ընծայում մի շարք գրքույկներ. «Հայկական ջարդեր» (փաստաթղթերի ժողովածու), Աղասու «Զեյթունի» թարգմանությունը, «Հայաստանը, նրա պատմությունը, գրականությունը և նրա դերը Արևելքում» և այլն: 1902 թվականին հայերեն հրատարակվում է Չոպանյանի «Նահապետ Քուչակի դիվանը» աշխատությունը, ինչպես նաև ֆրանսերենով «Հայ հին ու նոր բանաստեղծություն» հատորը: Սրանց հաջորդում են. ֆրանսերենով՝ «Հայ ժողովրդական երգեր» (1903), «Քերթվածներ» (1908), «Կյանք ու երազ» (1913) և հայերենով՝ «Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը» (1907), «Քերթվածներ» (1908), «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» (1910), «Հայ էջեր» (1912):

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և հետագայում Չոպանյանը հրատարակում է մի քանի գրքույկներ, որոնք նվիրված են հայ ազգային ազատագրական պայքարին: Հայկական մշակույթի պրոպա-

գանդման գործում անգնահատելի տեղ ունի Չոպանյանի «Վարդենիք Հայաստանյաց» ֆրանսերեն հրատարակությունը, որի երեք ճոխ հատորները համապատասխանաբար լույս են տեսնում 1918, 1923 և 1929 թվականներին:

Արշակ Չոպանյանը երկու հատորի մեջ հավաքում է իր գրական-քննադատական հոդվածների մի որոշ մասը և դրանք հրատարակում «Դեմքեր» խորագրով՝ համապատասխանաբար 1924 և 1929 թվականներին: Նույն տարիներին հեղինակում և հրատարակում է գրական-հասարակական հարցերին նվիրված մի քանի գրքեր, գրքույկներ, ինչպես նաև պատմվածքների միհատորյակ «Պատկերներ» խորագրով (1923): 1929 թվականին նա կազմում և հրատարակում է Թովմաս Թերպյանի ստեղծագործությունների երկհատորյակը:

* * *

«Չի կարելի մարքսիստ լինել, չտածելով ամենախոր հարգանք դեպի բուրժուական մեծ հեղափոխականները, որոնք համաշխարհային պատմական իրավունք են ունեցել խոսելու բուրժուական «Հայրենիքների» անունից, որոնք ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարի մեջ քաղաքակիրթ կյանքի են բարձրացրել տասնյակ միլիոնավոր նոր ազգեր»,— ասում է Վ. Ն. Լենինը (հ. 21, էջ 273):

Իրենց ջանքերի օբյեկտիվ բովանդակությամբ և արդյունքներով արևմտահայ 80-ականները եղան իսկական «բուրժուական մեծ հեղափոխականներ» որոնց գործունեությունը հին, ավատական հասարակության դեմ բարձրացող հեղափոխական բուրժուազիայի պայքարի և դրան սերտորեն միահյուսված ազգային-ազատագրական շարժման համաձուլվածքի արտացոլումն էր: Եվ առաջադիմական էր այդ գործունեությունը այնքան ժամանակ, քանի դեռ չէր լուծվել, անավարտ էր մնացել ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարը: Արշակ Չոպանյանը այդ սերնդի ներկայացուցիչներից մեկն էր, որ երկար տարիներ իր բազմակողմանի գործունեության բոլոր ճյուղերը ստորադասել էր թուրքական բռնապետության լծից հայ ժողովրդի ազգային ազատագրության հիմնական նպատակին: Բնականաբար, Չոպանյանի գրական-բանասիրական, մշակութային գործունեության հիմնական ուղղությունը որոշվում էր նրա քաղաքական հայացքների համակարգով:

Չոպանյանի քաղաքական հայացքների համար հատկանշականն այն է, որ նա սկզբից ևեթ հստակ ու որոշակի հայտարարում է, թե ինքը արդարացի, ճիշտ և բնական է գտնում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը օտար բռնատիրության դեմ: Նրա քննադատությունն ուղղված է ոչ թե շարժման էության, այլ գործադրման ու ղեկավարման տակտիկայի, թույլ տված ճակատագրական սխալների դեմ:

Ինքը՝ Ա. Չոպանյանը, 90-ական թվականներին արևմտահայ իրականության մեջ առաջիններից մեկն էր, որ կանգնեց և մշտապես մնաց ամուր կանգնած դեպի Ռուսաստան կողմնորոշվելու քաղաքական հողի վրա:

Դրա առհավատչյան է «Ռուսիա և հայերը» հոդվածը, որը Ա. Չոպանյանը գրել է 1906 թվականի սկզբներին:

Բազմաթիվ առիթներով և պատմական զարգացման տարբեր էտապներում Չոպանյանը մատնացույց է անում, որ Ռուսաստանին է վերապահված վճռական դեր խաղալու հայ ժողովրդի ազգային ազատագրության հարցում: Եվ ընդհակառակն, նա պայրյթով նշավակում է արևմտյան դիվանագիտությունը, որի հաշիվների համար հայկական հարցը պարզապես մանր դրամ էր: Հանձնարարվող ժողովածուի մեջ ընթերցողը պիտի գտնի այս տողերը «Դյուցազներգություն» քերթվածի մեջ:

«Ու քաղաքակիրթ ազգերը
Ճեշարժ հանդիսատես կըլլան այդ
Հրեշային սպանդին,
Ինչպես թատրոնի մեջ մարդ խաղ մը կը դիտե...»

Հենց Չոպանյանի մտքի խորության վկայությունն է, որ դեռ դարասկզբին ասես կանխատեսում է ֆաշիզմի մարդատյաց ոճրագործությունները, գազիք ցեղասպանությունները.

«Այսօր ոճիրը զոր անպատիժ թողուցին,
Տարապարտանորեն աճած, մեծցած, բազմապատկված
Կը տարածա աշխարհիս...»

Հոկտեմբերյան հեղափոխությունից և Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո Չոպանյանը ամբողջովին կանգնում է նորաստեղծ կարգերի պաշտպանության դիրքերում: Բոլշևիկյան հեղափոխության կատարած գործը նա համարում է վճռական, որը ոչ միայն սոցիալական հեղաշրջում է առաջ բերել, այլև ստեղծվել է ապատ ազգերի բարեկամության վրա հիմնված մի նոր պետություն: Այդ իրողությունը Չոպանյանը ընդունում է բարեկամությամբ և համակրությամբ, համարում այն որպես ամբողջ աշխարհի համար լավագույն ապագայի նախապատրաստություն: Չոպանյանի քաղաքական դիրքորոշմանը խիստ բնութագրական է նրա հայտարարությունը ԱՄՆ-ի «Դիթրոյթ նյուզ» թերթի թղթակցին. «Դուք կրնաք սովիեթներու մասին խորհիլ այն, ինչ որ կուզեք: Մեր տածած զգացումները հանդեպ սովիեթներու երախտագիտական են և, երբ «մեր»-ը կըսեմ, ըսել կուզեմ ամբողջ հայ ազգինը»: Պետք է նկատի ունենալ, որ այս հայտարարությունը արվել է 1927 թվականին ԱՄՆ-ում գտնված ժամանակ, երբ հակասովետական պրոպագանդը այդ երկրում լայն չափեր էր ընդունել:

* * *

Անգնահատելի է Արշակ Չոպանյանի ծառայությունը հայության մեջ, ինչպես նաև Եվրոպայում հայ միջնադարյան պոեզիայի պրոպագանդման ու տարածման գործում: Այդ խնդրին Չոպանյանը մոտենում էր կրկնակի

նպատակով: Նախ, հայ ժողովրդի դարավոր մշակույթի պրոպագանդը և տարածումը ինքնըստինքյան կարևոր էր՝ միջնադարյան սրեելիայի լավագույն արժեքները մոռացման փոշուց թոթափելու և նրանց արժանի տեղը դնելու տեսակետից: Ապա, Չոպանյանի գործունեությունը նպաստում էր մի կողմից հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչման և կոնսոլիդացիայի պրոցեսի արագացմանը ազգային-ազատագրական պայքարի ժամանակաշրջանում, մյուս կողմից՝ եվրոպական առաջադեմ հանրային կարծիքի մշակմանը:

Արդեն 1895 թվականին իր «Ծաղիկ» հանդեսում Չոպանյանը առաջին անգամ խորությամբ ու լայնորեն վերլուծում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը որպես բանաստեղծություն: «Հանենք կ'անիկա աղոթք գրողի կրոնական գույնեն, ուր սահմանափակված էր, և դնենք իր տեղը, գրական մեծ հանճարներուն օդակարկառ բարձունքին մեջ: Ալ չըսենք, որ մեր բանաստեղծությունը հսկա չունի»— եզրակացնում է Չոպանյանը փայլուն վերլուծությունից հետո: Այնուհետև, տարիների ընթացքում Չոպանյանը բազմիցս հայերեն և ֆրանսերեն բանախոսություններ է կարդում Գրիգոր Նարեկացու վերաբերյալ: Նրա ուսումնասիրությունը տպագրվում է Փարիզի «Մերքյուր դը Ֆրանս» և Թիֆլիսի «Կավկասկի վեստնիկ» ամսագրերում, ինչպես նաև իր մի շարք ֆրանսերեն աշխատություններում հրատարակում է թարգմանություններ Գրիգոր Նարեկացուց:

Մեծ է Չոպանյանի ավանդը նաև Նահապետ Քուչակի ստեղծագործական ժառանգության լուսաբանման, պրոպագանդման ու տարածման գործում: 1897 թվականին Վենետիկում կատարած բանասիրական պեղումների ժամանակ նա հանդիպում է խիստ շահեկան միջնադարյան տաղաշարքի, որի հեղինակի անունը նա գտնում է Աբիսուակես Տեվկանցի «Հայերգ»-ի մեջ: Հետագայում, նոր պրպտումների շնորհիվ Չոպանյանը հարընտացնում է քուչակյան տաղաշարքերը ու 1902 թվականին լույս ընծայում իր «Նահապետ Քուչակի դիվանը» աշխատությունը, որով Քուչակը հայ գրականության պատմության մեջ գրավեց իրեն արժանի դիրքը: Չոպանյանը գնահատում է նրա «աղբյուրի պես բխող, լեռան ծաղկի պես մեկ ցայտքով ժայթքող, ամռան գիշերվան աստղի պես խաղաղ ու պարզ ցոլացող» «սրտի» երգերը, որ անբռնապբռսիկ են, ուղղակի ընթերցողի հոգուն են հասնում առանց որևէ ավելորդ ձևախաղության:

Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու, Նաղաշ Հովնաթանի, Առաքել Սյունեցու և մի շարք ուրիշ միջնադարյան բանաստեղծների ժառանգության ուսումնասիրման և պրոպագանդման գործում Չոպանյանը նույնպես ներդրնում է իր մեծ ջանքերը, հաճախ առաջնությունը ունենալով այդ հեղինակներին խորությամբ մեկնաբանելու հարցում: Նրանց բանաստեղծությունները, իր թարգմանությամբ, Ա. Չոպանյանը հրատարակում է «Հայ աշուղներ» ֆրանսերեն հատորում, որից մեծապես օգտվում է Վ. Բրյուսովը իր «Հայաստանի պոեզիան» գրքում: Եվրոպական ընթերցողին ներկայացնելով հայ աշուղներին, Չոպանյանը շեշտը դնում է հատկապես նրանց ժողովրդային էությանը ի տարբերություն արևմտյան տրուբադուրների, որոնք ավելի շուտ ազնվականական նկարագիր ունեն:

Ուրիշ ժողովուրդների մեջ հայ մշակույթի տարածման գործում Չոպանյանի ծառայությունները շատ բարձր են գնահատվում հայ անվանի

մտավորականների կողմից: Լեոն մի առիթով գրում է. «Բրյուսովից առաջ հայոց գրականության մասին հիացմունքով խոսել են Անատոլ Ֆրանսը, Ջեյմս Բրայսը, Պոլ Ադանը, Գաբրիել Մուրեյը: Բայց նրանցից ոչ ոք հայերեն չգիտեր: Ինչպես էին կարողանում նրանք ոգևորվել հայ հանճարով և վեր հանել հայկական ոգին: Շատ պարզ է պատասխանը,— նրանց առջև դրված էր Արշակ Չոպանյանի մեծ գործը... Բրյուսովն էլ մեծ չափերով օգտվել է Չոպանյանից, և ես հավատացած եմ, որ նրա գեղեցիկ թարգմանությունների մեծ մասը ֆրանսերենից է: Եվ եթե վաղը մի ուրիշ օտարազգի կամենա մոտենալ հայ սրտին ու զգացմունքին, նա էլ պիտի գնա նախ և առաջ որոնելու Չոպանյանին»: Վայերի Բրյուսովն էլ շատ բարձր է գնահատում Չոպանյանի գործունեությունը, գտնելով, որ արևմտյան հասարակությանը Հայաստանին ծանոթացնելու համար նա այնքան շատ գործ է արել, ինչպես ոչ ոք, և որ այդ ամենի համար հայ գրականությունը խորին երախտագիտությամբ պարտական է նրան:

Եվ թեպետ արդեն իսկ մեր դարասկզբին Չոպանյանը մեծ վաստակի հասավ հայ մշակույթի տարածման բնագավառում, նույն այդ հարցում վիթխարի նշանակություն ունեցավ նրա եռահատոր «Վարդենիք Հայաստանյաց» ֆրանսերեն գործը, որը լույս տեսավ ավելի ուշ: «Վարդենիք Հայաստանյացի» գտած ընդունելությունը թե օտար, թե հայկական շրջանակներում աննախադեպ էր: Բացելով Ա. Չոպանյանի գրական-հասարակական գործունեության 35-ամյակին նվիրված հոբելյանական հավաքույթը Փարիզում, Ալ. Շիրվանզադեն ասաց. «Հանուն հայրենիքի դուք օտարների դռները բախել եք ոչ դատարկ ձեռքերով, ոչ ողորմություն խնդրելու համար, այլ արդարություն, այլ հատուցում իր պարտքի: Ձեր հոյակապ La Roseraie d'Armenie-ն միայն բավական է իբրև մուրհակ ազգերի դիմաց և իբրև ապացույց, թե որքան գնահատելի և որքան պանծալի է մեկ համար այսօրվա օրը»:

Ավետիք Իսահակյանը 1923 թվականին անձնական նամակում գրում էր Չոպանյանին. «...Նորից պիտի ասեմ. Roseraie-ն մի գանձարան է, մի դյուրանկան պարտեզ մեր փառքի, մեր լույսերի, մեր հանճարի... Եվ Ձեր դերը, սիրելի մեծանուն եղբայր, հսկայական է մեր մեջ, ու անսպառ է Ձեր հայրենասիրությունը, Ձեր նվիրումը մեր ազգին, իսկ Ձեր վարձը գրեթե ոչինչ, քաղքենի մտքով, բայց անմոռանալի է ու պիտի մնա անմոռանալի Ձեր անունը»:

* * *

Գեղարվեստական գրականության վերաբերյալ Ա. Չոպանյանի տեսական հայացքները սկսել են ձևավորվել 90-ական թվականների սկզբից և լուրատեսակ էվոլյուցիա են ապրել «արվեստն արվեստի համար» կամ «զուտ արվեստի» գաղափարախոսությունից մինչև ռեալիստական արվեստի պաշտպանությունը: 19 տարեկան Չոպանյանը հրապարակայնորեն պնդում է, թե գիտության և տեխնիկայի առաջընթացին զուգահեռ բանաստեղծությունը գնում է դեպի մահ: Բանաստեղծության վախճանի մասին

նրա դատողությունները կառուցված են ֆրանսիական գրականության նյութի վրա:

Անցյալ դարի 80—90-ական թվականների նոր հեղափոխական տրամադրությունների գրականության համար հատկանշական էր ամենօրյա սարքերական մասնի համար ստեղծվող գրականությունը, որը գեղարվեստական ակնարկի և պատմվածքի մի տեսակ խառնուրդն էր և ներայացնում էր ակնառուների գրառումները և այդ առթիվ արված խոհերը: Սակայն ժողովածուի մեջ էլ ընթերցողը պետք է գտնի այդ շարքի փոքրիկ հրաշակերտներ («Քարե անտառին», «Փողոցի աղջիկը», «Մուրացիկը», «Ասող մը», «Կենդանի սալյակ», «Կոիվ մը», «Մուրացիկ երաժիշտների մասին» պատմվածքները) և աբանչելի ընդհանրացումներ, ինչպես օրինակ. «Չքավոր մարդոց կվաթառությունն տեսած եք: Ամենեն բուռն, ամենեն տենդագին, ամենեն տխուր բաներեն մեկն է» կամ՝ մուրացկան երգիչները «թշվառության և երաժշտության կրկին պերճախոսությամբ են կինված»:

Այս ամբողջ գրականությունը սոցիալական կյանքի, նրա մեջ բուն դրած չարիքի մերկացման գրականությունն էր: Իր հոդվածներից մեկում Ա. Չոպանյանը գրում է. «Պետք ըսեն, որ գրականությունը սփոփանք մըն է մարդուն համար, պետք չէ, որ կայն իրականության մեջ թաթավե, այլ անկից վեր բարձրացնե և «իդեականին մաքուր վերնագավառաց մեջ անկից վեր բարձրացնե և «իդեականին մաքուր վերնագավառաց մեջ անկից վեր բարձրացնե: Ո՞ր վերնագավառը, խնդրեմ: Մարդ կրնա իր կյանքեն, իր հոգիեն, ինքն իրմե դուրս ելլել»: Ա. Չոպանյանը գտնում է, որ կարևորը ժողովրդի կարիքներն են, որ սոցիալական խնդիրները արդեն մտնում են գրականության մեջ, որ «գրագետները ժողովրդին կը խոտին և ժողովուրդն ալ կը պիրե գրականությունը»:

Չոպանյանը հանդես է գալիս մերկապարանոց քարոզի, գրականության մեջ բացահայտ բարոյախոսության դեմ: «...մենք կը նկարենք, նկարին խոր կդնենք մեր հոգին, մեր գաղափարը և ընթերցողին կը թողունք գուշակել ինչ-որ թաքուն մնացած է, ավարտել գրվածը: Կը կարծեք, թե Զոհրապի «Ներսեսը» աղքատ տղու մը պատմությունը, որուն մեջ հպիվ քանի մը պտիկ խորհրդածություններ սպրդած են, շատ ավելի ազդեցիկ չէ, քան աղքատության վրա երկայն ճառեր»:

Չոպանյանի տեսական կառույցներում կարևոր նշանակություն է ստանում գրականության մեջ լավատեսական հայացքի անհրաժեշտության խնդիրը, որը վերջին հաշվով կապվում է դրական իդեալի գաղափարի հետ: Նա խստորեն հանդես է գալիս երիտասարդ բանաստեղծների դեմ, որոնք հպիվ կյանքի սեմի վրա սկսում են լալկան ոտանավորներով մահ երգել և Նիրվանա կանչել: Այդ հուսահատական գրականությունը, թե էսթետիկական և թե փիլիսոփայական տեսակետից, ասում է Չապանյանը,— սխալ է, կեղծ և անիմաստ: «Կյանքը սեփ սև տեսնել, ասիկա առո՞ղջ աչքի գործ է, գրականությունը միօրինակ ողբերգ մը ընել, ասիկա լա՞վ ճաշակի արդյունք է»:

Այսպիսի պահանջը բնավ էլ միայն էսթետիկական հարցադրում չէ: Խոսքը շատ ավելի լայնորեն ընդգրկում էր հայ ժողովրդի հետագա կեցության խնդիրը, որով գրականությանը ևս առաջադրանք էր տրվում նպաստել դրան: Պատահական չէ Չոպանյանի համոզմունքը, թե հայ ժողովուրդը «պետք է վրայեն նետե այդ անբույժ ցավագարի, ամենրջ սգավորի քուրձը: Պետք է, որ ան ալ ուժեղներու շարքին մեջ կոնգնի և հաղորդակից ըլլա մարդկային մեծ հրճվանքին»:

Ա. Չոպանյանի ռեալիստական հայացքների վերջնական ձևավորման մեջ վճռական նշանակություն ունեցավ հասարակության և արվեստի ու գրականության հարաբերության հարցում նրա տեսակետների արմատացումը: Այդ իմաստով մեծ կարևորություն են ստանում 1895 թվականի վերջերին հրապարակած հոդվածները, որոնցում նա ճշտում է իր դիրքը բուրժուական հասարակության նկատմամբ և այդ հասարակության ներսում գրականության դերի հարցերն է ուսումնասիրում: «Պուրժուաներ»-ին նա «խոշոր թարթուֆ է համարում, որոնք թշնամի են բանաստեղծությանը, արվեստին, մտածմանը: Հենց այդ տարտուֆային հասարակության սոցիալական արմատների մերկացում է պահանջում նա գրականությունից: Չոպանյանը Դյումա-որդուն հանդիպելիս քննադատում է այն պատճառով, որ գրողը ձգտել է սքողել ֆրանսիական բուրժուական հասարակության հակասությունները, հաշտեցնել դրանք, և հասարակությունն էլ իր հերթին վտանգ չի տեսել նրանից, սիրել է նրան: Դյումա-որդին,— գրում է Չոպանյանը,— «էրերուն խորքը երթալու չափ հանդուգն չէ եղած: Ընկերական կյանքին ամբողջությունը իր բոլոր փտությամբ չէ հասկացած... Ընդունած է ընկերական կազմվածքը պտիկ շտկումներով: Չէ տեսած, որ այդ շտկումները ավելի կը սքողեն փտությունը, և ատով ավելի վնասակար են»: Այսպիսով Չոպանյանը խոշոր թերություն է համարում բուրժուական հասարակության գոյություն ունեցող սոցիալական համակարգը իր ամբողջության մեջ ընդունելը. անհրաժեշտ շտկումները առավել ամրապնդում են այն, մինչդեռ հարցը այդ համակարգի հիմնովին վերափոխումն է:

Սոցիալական անարդարություններով լեցուն տիրող հասարակարգի մեջ գրականության և արվեստի դերի այդպիսի ըմբռնումը Չոպանյանի ռեալիզմի տեսության վճռական տարրն է դառնում, որն իր արտահայտությունն է գտնում նաև նրա գեղարվեստական պրակտիկայում: Նա քաջալերում է այն գրականությունը, որը մղում է մարդկությանը՝ հանդես գալ հաստատված տիեզերական կարգ ու սարքի դեմ: Պատահական չէ, որ սիմվոլիստական դպրոցի ներկայացուցիչ Բերնար Լապարի մեջ Չոպանյանը հատկապես բարձր է գնահատում նրա կայրոյթը սոցիալական վիթխարի անարդարության դեմ և նրա խորին համոզումը, թե այդ անարդարացի հասարակությունը մի օր պիտի տապալվի, երբ տառապողները գիտակցեն իրենց իրավունքը ու ելնեն վճռական պայքարի:

Չոպանյանի ռեալիստական տեսական հայացքները ամբողջությամբ վերցրած հող են նախապատրաստում, որպեսզի նա հասկանա, գնահատի, հարգանք ու բնական համարի «մարքսյան մտայնությամբ, համամարդկային ոգով ղեկավարվող» գրականությունը և արվեստը Սովետական Հայաստանում, գրականությունը համարի «բարոյական ու քաղաքական խորունկ ու թանկագին գործություն»: Հատկանշական է, որ Սովետական Հայաստանի գրականությանը հաղորդակցվելը որոշակի կնիք է դնում Չոպանյանի տեսական հայացքների վրա: Եվ երբ ետադարձ հայացք է ձգում հայ քննադատական ռեալիզմի գրականությանը, ապա այն գնահատում է որպես սոցիալական հեղափոխություն պատրաստող գրականություն: Կամ՝ անցյալի դյուցազներգություններում փնտրում է էջեր, որոնք դրդում

էին մարդկանց դադարել հլու մեքենաներ լինելուց և ձգտել կերտել իրենց ճակատագիրը սեփական ձեռքերով:

Ա. Չոպանյանը հաճախ է օգտագործել «կուտ արվեստագետ» կամ «կուտ բանաստեղծ» արտահայտությունները: Եթե երիտասարդական շրջանում դրանք յուրատեսակ տուրք էին էսթետիզմին, ապա տարիների հոլովույթում աստիճանաբար կտվում են նախկին պարունակությունից, ստանում նոր իմաստ, որը ձևի և գաղափարական բովանդակության ներդաշնակության պահանջն էր մարմնավորում: «Զուտ արվեստագետ» մը կամ «կուտ բանաստեղծ» մը ըլլալ,— գրում է նա,— չի նշանակեր որևէ աշխարհայացք չունենալ, միմիայն շնորհալի պատկերներ և ներդաշնակ բառեր քով-քովի շարելով շատնալ, կան այդպես ընողներ, բայց անոնց գործը շինծու ծաղիկ մըն է և չի կրնար համարվիլ ճշմարիտ արվեստ»: Գեղարվեստական ստեղծագործության բովանդակության գաղափարական հարըստության պահանջը Չոպանյանը դնում էր որպես արվեստի կատարելության, ձևի և բովանդակության բարձր համապատասխանության անհրաժեշտություն: Նա չէր կարողանում հաշտվել այն երկերի հետ, որոնք գեղեցիկ են՝ գեղեցկության սիրուն: Նման գործերում, շեշտում էր նա, պակասում է «էական բան մը» և այդ էականը Չոպանյանը համարում էր գաղափարայնությունը: Եթե պակսում է յուրաքանչյուր պատկերի ետև դրված գաղափարը, «յուրաքանչյուր տաղի ղեկավար մտածումը»— ասում էր նա, ապա «տաղը կդառնա կարդարուն լապտեր մը, որուն ճրագը չեն վառած»:

Արշակ Չոպանյանի էսթետիկական հայացքներին բնորոշ է նաև մի խիստ կարևոր հատկանիշ: Գրականության և արվեստի մեջ նա տեսնում էր լավագույն միջոց ժողովուրդների միջև փոխըմբռնություն և բարեկամություն հաստատելու համար: «Գրականություն, արվեստ՝ ահա մեծ, անդիմադրելի ու բարերար միության գծերը բոլոր ազգերու միջև»— գրում էր նա: Սա ոչ միայն տեսական դրույթ էր, այլև պրակտիկ գործունեության ուղենիշ, որին իր բազմարդյուն կյանքում անշեղորեն հետևել էր Արշակ Չոպանյանը, հայ գրականությունը ծանոթացնելով Եվրոպային և համաշխարհային գրականության հրաշակերտները՝ հայությանը:

* * *

Արշակ Չոպանյանը համաշխարհային և հայ գրականության պատմության լավագույն գիտակ էր, ժամանակի հայ գրական քննադատության առաջնակարգ դեմքերից մեկը: Նրա գրականագիտական աշխատությունները, որ մի քանի ստվար հատորներ են կազմել, վերլուծության խորությամբ, հարցադրումների և լուծումների ռեալիստական ճշմարտացիությամբ այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքը: Մատերիալիստական աշխարհընկալումը և գրականության պատմագրության ու գրաքննադատության կուլտուր-պատմական մեթոդի սկզբունքները Չոպանյանի հիմնաքարերն էին: Միջավայրը և ժամանակը, ինչպես նաև ազգային գույնը այն բանալիներն էին, որոնցով նա բացահայտում և բացատրում էր գրական երևույթները, նրանց կապը հասարակության կյանքի հետ:

Հայության մեջ եվրոպական և ռուսական մշակույթի տարածման գաղափարը Չոպանյանը հղացել էր «Հյուսիսափայլի», «Փորձի» և 80-ական շրջանի մամուլի տիրական ազդեցության տակ: Նպատակը հայ ժողովրդի լուսավորությունն էր, նրա մեջ եվրոպական քաղաքակրթության տարածումը. վերջին հաշվով հեղաշրջիչ մի գործ, որին ձեռնարկել էին բարձրացող բուրժուազիայի դեմոկրատ գաղափարախոսները որպես բուրժուական ազգի ստեղծմանը ու նրա կոնսոլիդացիային նպաստող հզոր ազդակի:

Ա. Չոպանյանը առհասարակ շատ բարձր էր գնահատում ռուսական գրականությունը, շեշտելով նրա հարամարդկային նշանակությունը: «Ռուս քաղաքակրթությունը Ասիո վրա տարածվող մտավոր տիրական վորությունը ըլլալու սահմանված է, և ռուս մտածումն ու ռուս արվեստը պետք է ծանոթ դառնան հայերու ամբողջությանը»,— գրում էր Ա. Չոպանյանը դեռևս անցյալ դարի վերջերին: Իր գրականագիտական աշխատություններում Չոպանյանը մեծ տեղ էր հատկացնում Պուշկինին, շեշտելով նրա ստեղծագործության ժողովրդայնությունը, նրա մեջ արտացոլված ռուս ժողովրդի ուրույն հոգին, ուրույն հրապույրը, ուրույն գեղեցկությունը: Չոպանյանը ընդգծում է, թե Պուշկինը հող նախապատրաստեց ռուսական ռեալիզմի համար, որը Գոգոլից հետո այնքան տարբեր աշխարհին «այն երեք հրսկաները, որ կը կոչվին Դոստոևսկի, Տուրգենև ու Տոլստոյ»:

Գոգոլի ծննդյան 100-ամյակը նշելիս (1909) «Ռուս դպրության բարեկամների ընկերությունը» պաշտոնական հրավեր է ուղարկում Արշակ Չոպանյանին: Չկարողանալով անձնապես մասնակցել հանդիսություններին, Չոպանյանը ուղերձ է հղում, որի մեջ նա ընդհանրացված գծերով ներկայացնում է իր կարծիքը ռուս գրականության վերաբերյալ: Նա շեշտում է, թե ռուս գրականության հավաքական հատկանիշներն են՝ վեհանձն գթության ոգին, մարդկային եղբայրության բուռն ծարավը, բացարձակ արդարության բաղձանքը, կյանքի ռեալիստական արտահայտությունը, բարձր՝ առանց արվեստականության արվեստը: Հենց այդ գծերով էլ, ասում է Չոպանյանը, ռուս գրականությունը խոր ազդեցություն է թողել հայ գրականության վրա:

Արշակ Չոպանյանին իսկ բնութագրող հատկանշական երևույթը այն է, որ նա ռուս գրականության մեջ տեսնում էր բռնության դեմ պայքարի դրոշ բարձրացնող առաջամարտիկի: Հայ ընթերցողներին նա Պուշկինին ներկայացնում էր որպես «բռնության վոհ մը»: Նա մեծապես գնահատում էր ցարական բռնատիրության դեմ պայքարի ռահվիրա, լեհ բանաստեղծ Միցկևիչին: Համեմատելով նրան «Պուշկինի վավանների»՝ Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի հետ, Չոպանյանը գրում է, որ նրանք և «բոլոր ռուս նոր գրագետները... ավելի ճիշտ տեսան, ավելի հավատարիմ եղան դարուն ոգիին, կրոնքն ու բռնությունը նույնացուցին ու ապատության հաղթանակը ցուցուցին քաղաքական, կրոնական, բարոյական, ընկերական բովանդակ հին կարգուսարքին տապալմանը մեջ: Եվ ռուս ժողովուրդը, որ ամենեն վայրագ բռնավորներեն մեկ քանին արտադրած է, տվավ միանգամայն ամենեն անկաշկանդ ու բուռն հեղափոխականներ: Այդ ժողովուրդը անտարակուսելի կերպով կոչված է մարդկության ընդհանուր ապատության գործին մեջ ամենակարևոր դեր մը կատարել»:

Արշակ Չոպանյանը քաջահմուտ էր ժամանակակից եվրոպական գրականության բոլոր հոսանքներին: Լավագույնս ճանաչելով նաև կյանքը, նա

կարողանում էր բացահայտել այս կամ այն հոսանքի էությունը, ցույց տալ զարգացման տենդենցները, գնահատել հասարակության կյանքում կատարած դերի չափով:

Պատահական չէ, որ Չոպանյանը խստորեն քննադատում էր դեկադենտական և նատուրալիստական ուղղությունները: Դարավերջյան եվրոպական հասարակությունը Չոպանյանը համարում էր փտած, բարոյական անկման տիրապետության տակ: «Ֆրանսիայի մեջ կվարձալի գրականություն մը կը տիրեր, երգեցիկ-սրճարանի լղճուկ երգերով, պոռնկագրական վեպերով և ցածոգի ոդևիլներով,— գրում է Չոպանյանը,— բնապաշտ վեպը (որուն, սկիզբեն իսկ Տուրգենև... մեղադրած էր հոգեկան ու մտավորական ձգտումի պակասը, անհոգ ընդօրինակության, սնամեջ ձևամոլության ուղղությունը) հետզհետե հեռացած էր Բալզակի ու Ֆլոբերի մեծ ճամփեն և հակվածցուտ բացառություններով,— բոլորովին ինկած էր կարճամփեն և հակվածցուտ բացառություններով,— բոլորովին ինկած էր կարճատես դիտողության, կյանքի մանրամասնությանց աննշանակ ու դյուրին հավաքման ու նկարագրական կատաղության սխալ ըմբռնումին մեջ»:

Ինքնին հետաքրքիր է տեսնել, թե Չոպանյանը ինչն էր համարում Բալզակի և Ֆլոբերի մեծ ճամփան: Դա գեղարվեստական գրականության մեջ տիրող հասարակարգի սոցիալական վիճակի մերկացումն էր արվեստի կատարյալ միջոցներով, կամ, ինչպես Չոպանյանն է ասում. «արդի ընկերության արյունոտ տիղմը քրքրել», «արդի ընկերությունը» պատկերել «իր բոլոր կվվելի ու ծիծաղելի գիծերովը, ադամանդի պես ամուր, հստակ ու թանկագին ոճի մը մեջ»: Գրականագիտական հայացքների այդպիսի ուղղությունը Չոպանյանի մշակված, հաստատուն համոզմունքների արտահայտություն էր, որ նա մարմնավորում էր իր բազմաթիվ ուսումնասիրություններում Հյուգոյի, Հայնեի, Բալզակի, Ֆլոբերի, Մոպասանի, Իբսենի, Զոլայի, Դոդեի, Ֆրանսի, Միսթրալի, Վինեիի, Վերհարնի և ուրիշների ստեղծագործությունները վերլուծելիս:

Դարավերջյան Եվրոպայի դեպի քայքայում ընթացող հասարակության ու բարոյազուրկ գրականության մեջ միակ կայդուրիչ ուղղությունը Չոպանյանը տեսնում է ռեալիզմի գրականության մեջ: Այդպիսի գրականությունը Չոպանյանը համարում է Իբսենի ստեղծագործությունը: «Իբսենի գործին մեջ դարուն բոլոր տենդերը, բոլոր բնալանցական և ընկերական խնդիրները կը ցոլան: Այդ ստեղծագործողը մաքառող մըն է միանգամայն... արդի կյանքը, արդի ընկերությունը տեսած է իր ստությամբ, իր կեղծիքներով, իր տգեղությամբը և իր կվվանքն անոր երեսին պոռցած է»:

Արշակ Չոպանյանը թողել է մեծածավալ ժառանգություն հայ գրականության բազմադարյան հարցերին նվիրված: Եթե մեկտեղվեին նրա բոլոր ուսումնասիրությունները, ապա կստացվեր հայ գրականության պատմություն սկզբից մինչև ընթացիկ դարի կեսերը, որի մեջ իրենց պատասխանն են ստանում շատ և շատ հանգուցային հարցեր, արտացոլում են գտնում գրեթե բոլոր խոշոր հեղինակները: Մասնավոր ուշադրություն Չոպանյանը դարձրել է նոր և նորագույն գրականությանը և, մանավանդ, արևելահայ ու արևմտահայ հատվածների արտադրած մշակույթը հայ ժողովրդի ամբողջ կանգվածի մեջ տարածելուն: Դա ոչ միայն մշակութային, այլև քաղաքական նպատակ էր հետամտում: «Անտենով,— գրում է Չոպանյանը,— Նալբանդյանցի, Նալբանդյանցի, Ոսկանյանի և Սվաճյանի օրերուն, ավելի մոտություն կար երկու կողմի գրական գործիչներուն միջև... «Հյուսիսափայլը» կը հետևեր Պոլսո ազատական մամուլին ջանքերուն, նույնպես և «Մեղուն» «Հյուսիսափայլին» կաջակցեր, անոր գործունեությունը կը ճանչցներ թրքահայոց»: Չոպանյանը իր առջև խնդիր է դնում շարունակել և զարգացնել այդ ավանդույթը:

Առաջիններից մեկը, որի գործունեությունը և կյանքը համակեց Չոպանյանին, որի գնահատությանը և գաղափարների տարածմանը խորին սիրով ու հարգանքով նվիրաբերեց նա իր գրիչը, Խաչատուր Աբովյանն էր: Չոպանյանը Աբովյանի գործունեության մեջ տեսնում էր մի ամբողջ ժողովրդի բարոյական զարթոնքը: Իր հիացումը և երախտագիտությունը հայտնում էր Աբովյանին, որովհետև «Աբովյան ժողովրդին ձայնը եղավ, ուզեց լույսը տանիլ խոնարհ խավերուն մեջ... Աբովյան ժողովրդին, ամբողջ ժողովրդին խոսեցավ, ժողովրդին լեզվով, ժողովրդին վրա: Ինքը նոր հայերենին կյանքը հաստատեց և առջի փորձեն իսկ հաղթանակը տարավ, որովհետև իր գործը կատարեց գրական հրաշակերտով մը»: Այդ հրաշակերտը՝ «Վերք Հայաստանին», Չոպանյանի գրչի տակ տարալուծվում, ապա նորից սինթեզվում է գրադատական մեծ վարպետությամբ: «Վերքը նա համարում է ժողովրդական դյուցազներգություն, որտեղ ժողովրդի կյանքն է բաբախում, տառապում, հևում: «Թող ինձի չվերագրեն որևէ շովինություն, զոր անկարող եմ ունենալու,— գրում է Չոպանյանը,— եթե ըսեմ, որ այդ վեպը, իր տեսակին մեջ, *մեկ հատիկ է* ամեն ազգի, ամեն ժամանակի գրականություններուն մեջ»:

Նոր ժամանակներում հայ ժողովրդի լուսավորության, նրա մեջ եվրոպական քաղաքակրթության տարածման գործում Ա. Չոպանյանը խոշոր տեղ է հատկացնում Մխիթարյանների երկու կենտրոններին: Նա վեր է հանում Մխիթարյանների կատարած իր ժամանակի համար մեծ աշխատանքը հայ ժողովրդի պատմության, Հայաստանի աշխարհագրության, հայ լեզվի բազմաթիվ բառարանների ստեղծման, հին ձեռագրերի հրատարակության, մեծաթիվ թարգմանությունների (որոնցում մեծ տեղ էին գրավում աշխարհիկ գրականության համաշխարհային գանձերը), մտավորական կադրերի պատրաստման և այլ բնագավառներում: Միևնույն ժամանակ Չոպանյանը մատնացույց է անում, որ հակառակ իրենց ձգտումների ընդարձակության, Մխիթարյանները «վանքի», «դպրոցի», «գրքի» ազդեցությունն էին կրում. «Իրենց աշխատությունը գրասենյակի աշխատություն մըն է, ուղեղի արտադրություն մը»:

Մխիթարյաններից Ղ. Ալիշանը մեծ ազդեցություն է ունեցել երիտասարդ Չոպանյանի ձևավորման վրա և հետագայում էլ Չոպանյանը խորին սիրով անդրադարձել է նրան: Ալիշանի անձն նա բնորոշում էր որպես անխոնջ աշխատասիրություն, մշտավառ ու բեղմնավոր հետաքրքրություն, կաթոգին ու խանդոտ զգայնություն, գողտր ու թևավոր երևակայություն, և այդ բոլորը հայրենասիրության հրայրքով անցած: Ալիշանի գործերի, հատկապես «Խորհրդածությունք ընդ եղևնյավ»-ի, «Հուշիկների» և «Նահապետի երգերի» մեջ մի քանի հատվածներ Ա. Չոպանյանը համարում է բանաստեղծական մաքուր ու բարձր ներշնչման և հոգեթռիչ ոճի հրաշալիքներ: Չոպանյանը նկատում է, որ Ալիշանը որոշակի ազդեցություն է ունեցել 19-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության զարգացման վրա, բայց

արձանագրում է նաև, որ Ալիշանը անմատչելի մնաց ժողովրդական կանգվածներին «գրաբար լեզվով ու շատ խրթին գրաբարով մը-գրած ըլլալուն համար»:

Չոպանյանի հայացքների իսկ համար բնութագրող է այն ուշադրությունը, որ նա ընծայում է հեղափոխական դեմոկրատ Հարություն Սվաճյանին: Նրա անվան հետ է Չոպանյանը կապում արևմտահայ հրապարակախոսության ստեղծումը, հրապարակախոսություն, որ կոչված էր դուրս գալու սենյակից, վար իջնելու Պառնասից, նետվելու հրապարակ ու խառնվելու ժողովրդին, որ նպատակ էր դրել կբաղվելու միայն նրա առօրյա կյանքով, ցույց տալու նրան կյանքի նոր ճանապարհը պարզ ու հստակ, ժողովրդի իսկ լեզվով ստեղծված գրականությամբ: «Իբր գործիչ Սվաճյան իրավունք ունի առաջին տեղերեն մեկը բռնելու մեր ժամանակակից պատմության մեջ»,— գրում է Չոպանյանը: Նա Սվաճյանին համարում է հայ գրականության երգիծական ժանրի հիմնադիրը, Պարոնյանի նախորդը, ինչպես նաև արևմտահայ գրականության մեջ ռեալիստական վիպագրության առաջին փորձողներից մեկը: Բայց այդ բոլորից վեր Չոպանյանը դասում է Սվաճյանի «Մեղուն»: «Մեղուի» հոդվածները կարդացած ատեն,— գրում է Չոպանյանը,— մարդ կկգա, որ այդ հոդվածները կը լափվեին ժողովրդին անուս դասեն, կհասկցվեին, կմարսվեին և կանուցանեին, կնորոգեին, կկորացնեին կայն»:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Չոպանյանի ուսումնասիրությունները Հ. Պարոնյանի, Ս. Պեշիկթաշլյանի և Պ. Դուրյանի ստեղծագործությունների վերաբերյալ: Չոպանյանը ինչ-որ չափով վրիպում է Հ. Պարոնյանի ճիշտ գնահատման և մեր գրականության պատմության մեջ նրա տեղը որոշելու հարցում: Չնավորվող բուրժուական հասարակության դրամական հարաբերությունների, շուկայի կյանքի արտացոլումը, ըստ Չոպանյանի, բացասաբար է ազդել Պարոնյանի վրա, խաթարելով նրա ստեղծագործության ձևը և բովանդակությունը, իբր վրկելով այն «մտածումից», «ճշգրիտ ոճից» և «նուրբ դիտողականությունից»: Այնուամենայնիվ, Չոպանյանը անում է մի շարք արժեքավոր դիտումներ, հատկապես մատնացույց է անում մեծ երգիծաբանի սերը էսնաֆ դասի և «անկից ավելի վար մեր «մութ խավերուն» նկատմամբ»: «Բոլոր այս պատկերները գծված են բարքերու ամենաճիշտ գիտությամբ մը,— գրում է Ա. Չոպանյանը,— տիպարներու այնպիսի իրականությամբ և պատմվածքի այնպիսի համով արագությամբ մը, որ կարելի է ըսենք վերջնական, վճռական պատկերները համարել Պոլսո հայ էսնաֆ դասին, թանկագին անով, որ ատոնք ճշտությամբ պիտի պահեն միշտ կյանքը այդ դասին»: Կատակերգականի պարոնյանական զգացումը Չոպանյանը գնահատում է որպես մի զորություն, մի մասնավոր ուժ, «որու վրա խոսած ատենիս պետք է գլխարկնիս շատ բարձր հանենք»:

Դուրյանին և Պեշիկթաշլյանին Չոպանյանը նվիրում է առանձին մենագրություններ, որոնք, ըստ էության, մենագրական ուսումնասիրությունների սկիզբն են դնում մեր գրականության պատմության մեջ: Այլևայլ շահեկան կողմերի հետ ուսումնասիրությունները արժեքավոր են այն տեսակետից, որ առաջին անգամ խոր գիտական վերլուծությամբ գնահատվում և ներկայացվում են մեր երկու խոշոր բանաստեղծները:

Իր բազմամյա գրականագիտական գործունեության ընթացքում Արշակ Չոպանյանը հաճախ է անդրադարձել Ռաֆֆուն: Նա Ռաֆֆուն համարում էր «Հյուգոյի տեսակեն», որովհետև հայ վիպասանի հերոսներն էլ «ժողովրդի ծոցեն ելած ու մարդկային ընկերության անարդարություններեն կրված, ըմբոստ ու պայքարասեր» մարդիկ են, որ պայքարում են «չքավոր ժողովուրդը կեղեքող ու շահագործող» գեշ հովիվներուն դեմ»: Պատահական չէ, որ հեղինակային վեպերի կողքին Չոպանյանը բարձր է գնահատում «Խաչագողի հիշատակարանը», «Ոսկե աքաղաղը», «Խասփուշները»: Ռաֆֆին,— ասում է Չոպանյանը,— հավատարիմ հետևորդ իր վարպետ Մ. Նալբանդյանին, կը սիրեր միացնել երկու իտեալներ՝ սոցիալական և ազգային ազատագրության իտեալները»:

1912 թվականին Չոպանյանը գրեց իր լավագույն գրականագիտական հոդվածներից մեկը՝ «Գաբրիել Սունդուկյանց» խորագրով, որը նա հրատարակեց Պոլսի «Բյուզանդիոն»-ում: Չոպանյանը Սունդուկյանին համարում է «հայոց մեջ ճշմարտապես իրապաշտ» ուղղության հիմնադիրը: Հետաքրքրական է դիտել, թե Սունդուկյանի ռեալիստական արվեստի բաղկացուցիչ տարրերից որոնք են մասնավորապես գրավում Չոպանյանի ուշադրությունը:

Առաջին հերթին՝ դիտողականությունը: «Ատիկա կարճատեսի մանրախույզ հատվածական դիտողություն չէր, այլ թափանցող հայացք»: Չոպանյանի համար առանձնակի նշանակություն ունի արվեստի առավելագույն սեղմությունը, և նա Սունդուկյանի ստեղծագործության մեջ հենց այդ կողմն է շեշտում: «Այդքան հակիրճ, սեղմ, խիստ հեղինակ քիչ կարելի է գտնել»: Չոպանյանը բարձր է գնահատում, որ Սունդուկյանը օբյեկտիվ, անտարբեր դիտող չէր, միևնույն ժամանակ բարձր է գնահատում, որ Սունդուկյանը կարողանում էր խոր թաքցնել տենդենցը: Չոպանյանը «Պեպոն» համարում է արվեստի կատարյալ գործ, որը կոչված է ապացուցելու, թե արվեստը մարդկությանը շնորհում է հաճույք և միաժամանակ հանդիսանում մարդկային հրեշությունների ամենահզոր պատուհասողը:

1909 թվականին Չոպանյանը գրում էր. «Հայերը, իսկապես, երկու թատրերգակ միայն ունին՝ Սունդուկյանը և Շիրվանզադեն. Շիրվանզադեն շարունակած, ընդլայնած և կատարելագործած է ինչ-որ Սունդուկյանց սկսած էր»: Առհասարակ, Չոպանյանը շատ բարձր է գնահատում Շիրվանզադեի արվեստը, նրան համարում է հայ գրականության «ամենեն իսկական ռեալիստը, որի ստեղծագործություններում խոր գթությունն է շնչում դեպի ընկճվածներն ու սոցիալական անարդարության զոհերը և զվվանքը՝ կեղծիքից, իարդախությունից, շահամոլությունից, կեղեքումից: Շիրվանզադեի ոճը, ըստ Չոպանյանի, պարզ է, բնական, հստակ, ճշգրիտ, ամուր, առանց ավելորդ պաճուճանքի, առանց ճոռոմաբանության, բայց վայելուչ և շնորհալի՝ երբ պետք է, հոգեբանությունը արտահայտող հատվածները՝ նրբերանգ, քնքուշ, առանց նրբամտության ու անհարկի մանրամասնությունների մեջ ընկնելու: Շիրվանզադեն,— հայտարարում է Չոպանյանը, պատկանում է հավիտենական դպրոցին՝ ռեալիստական դրպրոցին:

Չոպանյանը մասնավորապես պաշտամունքի և մեծագույն հարգանքի զգացում է տածել Հովհ. Թումանյանի նկատմամբ, որին նա համարում

էր հայ գրականության ամենաժողովրդային դեմքը: «Կարելի է ըսել,— գրում է նա,— թե նույն ինքը հայ ցեղն էր, որ անոր մեջ ինքզինքը կերգեր իր հատուկ զգայնությամբ ու մտայնությամբ իր բնորոշ ոգով ու ճաշակով»: Չոպանյանը բարձր է գնահատում Թումանյանի հատկապես լավատեսական ոգին: Չոպանյանը եղել է հայ գրականության և արվեստի շատ խոշոր գործիչների առաջին գնահատողներից մեկը: Նրա բարեկամական օգնությանը շատ են պարտական Զ. Եսայանը, Թեքեյանը, Սիամանթոն, Վարուժանը, մեր ժամանակներում Սեման, Մանուշյանը, Վահե Վահյանը և շատ ուրիշներ՝ գրական վարպետության կատարելագործման, գրական խառնվածքի կազմավորման գործում, ինչպես նաև Կոմիտասն ու Շահինը, նրանց գործի արժեքավորման և ժողովրդականացման հարցում:

Երիտասարդ, խոստումնալից գրողներին Չոպանյանը հոգատար ձեռքով ուղղում է, հուշում բովանդակության և ձևի կատարելագործման ուղիները, պահանջում գեղարվեստական գործի հասարակական հնչեղություն: Հետաքրքրական է, այդ տեսակետից օրինակ, Չոպանյանի հանձնարարականը Վարուժանին: Նա բանաստեղծին առաջարկում է կարդալ Բարբյեի «Աստվածային յամբերը» և Հյուգոյի «Հատուցումները»: Բարբյեի «Յամբերը» և Հյուգոյի «Հատուցումները» հանձնարարելը ինքնին հետաքրքրքրական է: Չոպանյանը հրավիրում է Վարուժանին ծանոթանալ 1830 թվականի հուլիսյան հեղափոխության թեժ օրերը արտացոլող «Յամբերին», որոնք շնչում են սոցիալական ազատության և ըմբոստության ոգով. նույն ձևով նաև՝ 1848 թվականի հեղափոխությանն է նվիրված Հյուգոյի «Հատուցումներ» ժողովածուն, որի քաղաքացիական հայրենասիրական կրակը ատելություն էր ներշնչում Լուի Նապոլեոն 3-րդի ու նրա վարչության նկատմամբ և մեծ ազդեցություն ունեցավ Փարիզի Կոմունարների վրա: Արդեն Վարուժանի առաջին քերթվածներում Չոպանյանը տեսնում էր բանաստեղծի հեղափոխական-հայրենասիրական ատաղձը և ձգտում ավելի խորացնել այն, ապահովել այդ ուղղությամբ համապատասխան բանաստեղծական դաստիարակություն:

20-ական թվականներից սկսած, Ա. Չոպանյանին մտահոգում են սփյուռքահայ գրականության հետագա զարգացման հարցերը: Սփյուռքահայ գրականության նոր վերելքի հնարավորությունը նա միանգամայն հստակ կապում է նորաստեղծ Սովետական Հայաստանի իրականության հետ: Սովետական Հայաստանը նա համարում է ամբողջ սփյուռքահայության գոյության հիմնական կռվանը: Միաժամանակ, Չոպանյանը ուշի ուշով հետևում էր մշակութային կյանքի զարգացմանը Սովետական Հայաստանում, հսկայական խանդավառությամբ ընդունում կուլտուրական հեղափոխության արդյունքները:

Չոպանյանը բազմիցս անդրադարձել է երիտասարդ սովետահայ գրականության հարցերին, հպարտությամբ և հրճվանքով արձանագրել գրական աշխույժ կյանքի զարգացման թափը, գնահատանքի խոսքեր ասել մեծաթիվ գրողների ու բանաստեղծների ստեղծագործությունների առթիվ, կանխատեսել շնորհք ու տաղանդ այնպիսի երիտասարդ գրողների ու բանաստեղծների մեջ, ինչպիսիք էին օրինակ, Մ. Արմենը, Վ. Նորենցը, Ս. Տարոնցին, Հ. Շիրազը: Սփյուռքահայ իրականության մեջ Չոպանյանն առաջինը շեփորեց Եղիշե Չարենցի երևումը «իբր նոր ասող գրական

երկնքին մեջ»: Չարենցի գնահատման մեջ Չոպանյանը ելնում է «Ռուսաստանը և Կովկասը հեղաշրջող ու արմատական վերանորոգման ճամփուն մեջ դնող պոլշևիկ հեղափոխության» փաստից: Եվ քանի որ բանաստեղծի գործերը «ամենեն սորեղ ու անձնադրոշմ արտահայտություններն են Չարենցի, էջեր՝ ուր ամեն ինչ, մտածում ու ձև, ստեղծագործությունն է հեղինակին, մարդկային պատմության արտասովոր շրջանի մը ուղղակի ներգործության տակ երկնված՝ այդ մեծ շրջանին հոգին արտահայտելու համար հարկ եղած ուժն ու շունչն ունեցող քերթողի մը կողմե, որ խառնվածքի հապճագուտ բարդությամբ մը Հայնեի մը քնարական սրամտությունը կը միացնե Վերհարնի մը դյուցազներգական ամեհի ավյունին» քանի որ Չարենցը «բարձր մշակույթի բանաստեղծ մըն է, արվեստագետ քերթող մը» Չոպանյանը նրան համարում է «հայոց մեծագույն բանաստեղծներեն մին» և «մին ամենեն ինքնատիպ ու բավական բանաստեղծներեն, որ որևէ ազգին մեջ երևան եկած ըլլան»:

* * *

Արշակ Չոպանյանի ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործությունը՝ չափածո, արձակ, դրամատիկական գործերը, նրա բազմարդյունք գործունեության մեջ իր նշանակությամբ գրավում է երկրորդական տեղ, քանի որ անկշռելիորեն մեծ է Ա. Չոպանյանի դերը մնացած ասպարեզներում: Բացարձակ արժեքի տեսակետից դիտած, սակայն Չոպանյանի գեղարվեստական ժառանգությունը լիովին կբավարարեր հայ գրականության պատմության մեջ որոշակի տեղ ապահովելու նրա հեղինակին: Այսօր, նրա գեղարվեստական գործերից շատերը ունեն միայն ճանաչողական արժեք, քիչ չեն, սակայն, այն երկերը, որոնք գեղեցկագիտական հաճույք կարող են պատճառել նաև մեր ժամանակակից ընթերցողին:

Բանաստեղծ Չոպանյանը, մանավանդ, երիտասարդական տարիներին կրել է ֆրանսիական դարավերջյան պոեզիայի, մասնավորապես սիմվոլիստական ուղղության ազդեցությունը: Պարբերական մամուլում լույս տեսած՝ նրա առաջին չափածո գործերի վրա երևում է, ինչպես ինքն է արտահայտվում, «մահապաշտ դպրոցի» խոր կնիքը: Արձակագիր Չոպանյանի սկզբնավորության վրա նույնպես զգացվում է ֆրանսիական նատուրալիզմի ազդեցությունը:

Չոպանյանի անդրանիկ ժողովածուն, որ կրում էր «Արշալույսի ձայներ» խորագիրը, ջերմ ընդունելություն է գտնում: «Մահապաշտ դպրոցը» այլևս հաղթահարված էր, բայց նա դեռ որոնում էր սեփական ձայնը: Հիմնական թեման է սերը, բայց աննյութական է ու եթերային այդ զգացումը, կյանքի և մահվան պրոբլեմը, բայց գրքային է շեշտը. երջանկության որոնումը, բայց պակասում է կենսական փորձը: Անբացատրելի մի տրտմություն, շղարշի նման թեթև, կամ երբեմն թանձր մառախուղի տեսքով նստած է Չոպանյանի քնարական հերոսի հոգու խորքում: Քնարական կերտվածքների մի մասն էլ քնքուշ, կարծես շշուկով արտասանվող, միայն բանաստեղծի հոգու խաղաղեցմանը նախատեսված կտորներ են, բայց բավական է փոքր-ինչ ականջ դնել այդ մենախոսությանը, որպեսզի այն հետա-

քրքրի նաև ուրիշին, ստանա նոր գունավորում: «Ադամա վիշտը», «Կաղանդի նվերը», «Պատուհանին քերթվածը» փոքրիկ գլուխգործոցներ են, որոնցում հոգեբանական անսպասելի լուծումով անհատական կգացումը ստանում է ընդհանրական երանգ, կամ արդեն իսկ հնչում են սոցիալական մոտիվներ:

Չոպանյանի երկրորդ՝ «Թրթռումներ» խորագրով փոքրիկ ժողովածուն նույնպես պարունակում է մի քանի ինքնադրոշմ բանաստեղծություններ. «Ատե, բայց մի մոռանար կիս», «Այս պահը», «Ձերմակ հնչյակ» բայց դրանց կողքին կան նաև կտորներ, որոնք ասես բռնապբոսիկ վիճակների և արհեստական տողերի կուտակումներ լինեն:

Չոպանյանի էվոլյուցիան դեպի ռեալիստական մեթոդը տեղի է ունենում բավականին արագ: «Թուղթի փառք» վիպակում արդեն կգացվում է կյանքի ռեալիստական պատկերման ձգտումը: Մտահղացումը գեղեցիկ էր. ցույց տալ, որ տիրող սոցիալական կարգերը թշնամի են գրականությանը և արվեստին, որ գրողի փառքը այդ իրականության մեջ «թուղթի փառք» է: Երիտասարդ հեղինակին չի հաջողվում մինչև վերջ իրականացնել մտահղացումը: Սոցիալական իրականության հենքը աստիճանաբար փոխակերպվում է պարզ բարոյական-սիրային հիմքի: Մերժված բանաստեղծը (վիպակի հերոսը) այլևս սոցիալական իրականության կոհը չէ, այլ՝ «անիմանալի» սիրո հերթական քմահաճույքի:

Հերոսի և հասարակության բախման խնդիրը շատ ավելի հաջող է լուծված «Մութ խավեր» դրամայում: Վիպակի և դրամայի մտահղացումները գրեթե կրկնվում են: Դրամայում էլ հեղինակը ջանում է ապացուցել, որ հասարակական տարբեր խավերի պատկանող անհատները, միմյանց սիրելու դեպքում էլ սոցիալական իրականության մեղքով դատապարտված են անջատման: Դրամայում այդ մտահղացումը գտնում է իր հաջողված կենսագործումը: «Մութ խավերի» գործողությունը տեղի է ունենում Պոլսում 80—90-ական թվականներին: Սա արդեն ինքնըստինքյան կարևոր դրական քայլ էր արևմտահայ թատրոնի պատմության մեջ, որի՝ ժամանակակից թեմայով խաղացանկը գրեթե դատարկ էր մնացել Հ. Պարոնյանից հետո: Դրամայում Չոպանյանը անխնա մերկացնում է հարուստ ջոջերի՝ քահանայից մինչև ազգային գործերը վարելու հավակնող էֆենդիների սոցիալական խավի արատները: «Մարդ էրիկ կառնե նե՝ սիրելու համար կառնե: Փարա, հասկցար, փարայի համար կառնեն էրիկը»,— ասում է նրանցից մեկը: Միևնույն ժամանակ հատկանշական են Չոպանյանի ջերմ ու սրտառուչ կգացմունքները «ստորին» խավի մարդկանց նկատմամբ: Կարևոր է նաև, որ հեղինակը չի բավարարվում միայն իրերի ռեալիստական պատկեր գծելով: Իր հերոսներից մեկի շուրթերով նա ասում է. «Դարեր ի վեր գայլ-մարդը գառնուկ-մարդը կուտե. խեղճ աղջիկ, գառնուկ մըն է եղեր. պետք է գառնուկ չըլլալ, պետք է կռվիլ, պետք է գայլին դեմ գայլ ըլլալ»:

Ռեալիստական հասուն արվեստի վկայություն է «Տղու հոգիներ» պատմվածքների շարքը, որոնցում, քննարկելով կյանքի և մահվան մըշտընջենական պրոբլեմը, Չոպանյանը անվարան մերժում է հանդերձյալ աշխարհին ու Արարիչը, հաստատում կյանքը: Նույն 90-ական թվականների կեսերին Չոպանյանը գրում է «Քանի մը օր Պարտիզակում» ակնարկը, որը հայ ռեալիստական ակնարկի կարևոր էջերի թվին կարող է դասվել:

Գրականության մեջ ռեալիստական մեթոդի կիրառումը լավագույն հիմք է Չոպանյանի քաղաքացիական պոեզիայի զարգացման համար: 1897 թվականի վերջերին նա գրում է հռչակավոր «Օրոր Մայր Հայաստանին» քերթվածը, որը կարճ ժամանակամիջոցում թարգմանվում է բազմաթիվ լեզուների և դառնում շատ և շատ հավաքույթների բեմերի մշտական հյուրը: «Օրորը» նոր էջ էր նշանավորում արևմտահայ պոեզիայի պատմության մեջ, նախապատրաստելով Սիամանթոյի և Վարուժանի երևումը: Այդ քերթվածը և հետագա գործերը, որոնք ամփոփված են «Քերթվածներ» ժողովածուի մեջ, նկատի ունի «Անի» ամսագիրը, երբ գրում է, թե առանց Արշակ Չոպանյանի պոեզիայի ստեղծած հիմքի հետագա մեր քնարերգությունը պիտի չկարողանար այդքան կարճ ժամանակամիջոցում հասնել արտահայտչական այն ճոխության և հորինման այլազանության, որոնց հասավ նոր, պայքարող սերունդը:

«Օրորը» լուսաբաձակի նման լուսավորեց պոեզիայի հետագա վերելքի ճամփան, իր պայքարի կոչող շնչով և վառ լավատեսական ոգով: «Օրորի» տրամադրություններին ու գաղափարներին արձագանքում է «Պլտիկ հայ գեղջուկին պատահարը» հեքիաթը, որը գեղարվեստական բարձր արժեքով է օժտված: Չոպանյանը այս գործում կուգորդում է ազգային հալածանքի և սոցիալական շահագործման դեմ պայքարի հարցերը: Ու եթե «օրորի» մեջ նա խավարը ծվատող հայացքով դիտում է վաղվա վառ այգաբացը, ապա «Պատահար»-ում մատնացույց է անում դեպի այդ լուսավոր օրը տանող ճանապարհը, որը հողագնդի վրա հաստատված անարդարացի կարգն ու սարքը՝ «աստծո տունը» կործանելու ճանապարհն է:

Ընթացիկ դարասկզբին Չոպանյանի գեղարվեստական ստեղծագործությունների որոշ մասում գաղափարական տեղատվության տարրեր են երևում: Դարձյալ հնչում են մռայլության, լքվածության, անփարատելի վշտի մոտիվները: Դա փակուղու առջև կանգնած ազգային ապատագրական պայքարի յուրատեսակ արտացոլման արդյունքն էր: Հետաքրքրական է դիտել, որ այդ գործերի տակ, որոնք հրապարակված են «Անահիտ» հանդեսում, Չոպանյանը ստորագրում է «Տերվիշ» կեղծանունով, կարծես չուզենալով իր անունը կապել անկումային տրամադրությունների ստեղծման հետ:

Շուտով, սակայն, հրապարակի վրա են դրվում նրա «Քերթվածներ» հատորը, «Գեղոն հայ լեզվին» արձակ բանաստեղծությունը, «Կյանք և երազ» արձակ գործերի հատորը (ֆրանսերեն), որոնցում դարձյալ հիմնական մոտիվը պայքարի լավատեսական, կենսահաստատ շունչն է: «Քերթվածներ»-ը բարձր է գնահատում Վարուժանը: «Ան Ձեր հոգվույն իսկությունն է,— գրում է նա Չոպանյանին,— գանձն է, զոր խանդաղստանքով քուս պիտի պահեմ: Հոն անթիվ գոհարներ կան մաքուր և վսեմ ծովու մը հատակեն դուրս բերված, որոնց մասին իմ գնահատումս բարձր է: Մեր ժողովուրդը պետք է Ձեր վրա երկար մտածե ու երկար խոսի...»:

«Կյանք և երազ» հատորը արժանանում է Էմիլ Վերհարնի, Յուրի Վեսելովսկու, եվրոպական մամուլի շատ օրգանների խանդավառ գնահատանքին:

Քսանական թվականների սկզբներին Չոպանյանը գրում է իր վերջին գեղարվեստական գործը՝ «Հրաշք» թատերախաղը: Դա սփյուռքահայ գրականության մեջ առաջին ծավալուն գեղարվեստական ստեղծագործությունն էր, որի մեջ արծարծվում էր երիտասարդ Սովետական Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի կենսականորեն անհրաժեշտ և բախտորոշ հարցը: Չոպանյանը շեշտված գաղափարական նպատակադրումով և կրքոտությամբ պաշտպանում է սովետական նորաստեղծ հանրապետությունը: Թատերախաղի գլխավոր հերոսները՝ գյուղացին, մանր առևտրականը, արվեստագետը ընդունում, ճանաչում են Սովետական Հայաստանի իրականությունը և այնտեղ ընդմիշտ մեկնելու որոշում են տալիս: Դրանց հակառակ, ավելի ունևոր խավերի ներկայացուցիչները վերապահ են, կամ հակառակորդի դիրք են բռնում: «Կարծես միևնույն ժողովրդի չենք պատկանիր»,— հերոսներից մեկի բերանով դիտում է հեղինակը: «Դոլշևիկները,— ասում է թատերախաղի մի ուրիշ հերոս,— հարուստին թշնամի, աղքատին պաշտպան են, և կուզեն, որ մարդիկ հարուստի և աղքատի, շահագործողի և շահագործվողի չբաժանվին»: Թատերախաղում Չոպանյանը կայրությամբ մերժում է Սովետական Հայաստանի հացեին տարածվող հերյուրանքները:

«Հրաշք»-ը սիմվոլացնում է անդամալուծության շեմին կանգնած գաղթահայության «հրաշքով» բուժումը, երբ նա հարում է Սովետական Հայաստանի նկատմամբ դրական կողմնորոշվելու, նրա շուրջը համախմբվելու գաղափարին:

Ահշակ Չոպանյանի խորին համոզումն էր դա, որովհետև նա իր ամբողջ գիտակցական կյանքը, գործունեության բազմապատ ճյուղերը նվիրաբերել էր ժողովրդին ծառայելու միակ նպատակին և Սովետական Հայաստանի մեջ տեսնում էր ոչ միայն փրկության խարիսխը, այլև հայ ժողովրդի կարթոնքի, բարգավաճման ու ծաղկման միակ ռեալ հնարավորությունը:

ԿԱՐԼԵՆ ԴԱՎԱԹՅԱՆ

ՔԵՐԹՎԱԾՆԵՐ

Կուզեի որ սիրտս ըլլար
Աղվոր ծաղիկ անթառամ,
Զեղուն հյութով երկնահամ.
Եվ դուն, մեղո՛ւ օդապար,
Բաժակիս մեջ հեշտալիր,
Կյանքս հավիտյան ծրծեիր։

Հալե՛ր, հալե՛ր իմ հոգին
Եվ ըլլար ծով կապուտակ,
Ջուրերով քաղցր ու հստակ.
Եվ դուն, կարապ տարփագին,
Թևերովդ լուսածի՛ր
Ծոցս հավիտյան պատանիր։

ԿՆԱԽԱՆՁԻՄ ԵՐՋԱՆԻԿ

Կնախանձիմ երջանիկ
Ձգիստներուդ, որ մոտեն
Իրենց ծալքին մեջ փափկիկ
Քու մարմինդ կգրկեն։

Կնախանձիմ քու ոտքիդ
Մանրիկ քնքուշ մուճակին
Ու մանյակիդ մարգրիտ,
Որ կպարուրե վիզդ անգին.

Կնախանձիմ սյուքերուն,
Որ մազերդ կշոյեն,
Ամբիծ աստղին իսկ սիրուն,
Որ կժպտի քեզ վերեն։

Կատեմ երկինքն, ուր աչքերդ
Հափշտակված կթաղվին,
Ու մատյանը հրաշակերտ
Ու կսուզվիս հոգևին։

Խոհերն որ քեզ կպատեն,
Ու երազներն անուշակ,
Որ միտքդ ինձմե կանջատեն,
Կատեմ հեռով մը վայրագ։

Հավտա՛, Աստված իսկ կ'ատեմ,
Խորհելով որ անոր, մերթ,
Աղոթքիդ մեջ երկնաճեմ,
Կուղղես քու սիրտդ ու աչքերդ։

Ծառերուն մեջ ալոտն իր վարդ
Շողերն առատ կթափե.
Երկինքն ի վար լույս մը զվարթ
Կիյնա, լույս մը սատափե.

Ու քաղցրության մեջ առտվան,
Արկա՛յն ատեն, ցավագին,
Անգութ վարդին մոտ կճվան
Երգերն անհույս սոխակին։

Աչքերուս մեջ շեշտակի
Նայե՛ անքթիթ
Այդ նայվածքովդ հրեշտակի
Աստեղափթիթ։

Ու հետ այդ հուր նայվածքին
Հոգիդ մեջս անցնի
Եվ թող վառե իմ հոգին
Լույսով գարունի։

Կուզեի այսպես մնամ
Երկար՝ աչքս հառած
Աչքիդ՝ մինչև որ դառնամ
Դիակ մը սառած։

Անձայն և աղվոր ղերդ ասաղ ու ծաղիկ,
Բոլոր հրապույրներդ կերգեն լռելյայն։
Հոգիս կունկնդրե անոնց նվագը լայն,
Մերթ բուռն ու տենդոտ, մերթ ջինջ, խաղաղիկ։

Բուրումներու նուրբ երգը թափանցիկ
Կդայլայլեն ճոխ մազերդ դեղձան.
Ճակատդ երազուն՝ քնքուշ գթության
Կ'երգե տաղն ադու և մելամաղձիկ։

Երկնաշող աչքերդ հուշիկ կհծծեն
Քաղցր անուրջներուն գեղոնն հրեղեն.
Ծոծրակդ շուշան՝ ծարավն հեշտանքին.

Շրթունքդ՝ համբույրին տենչը վարդագույն.
Ու լանջդ՝ թաքուն՝ կմնչե լռին,
Կարոտն անվախճան փայփայանքներուն։

Արևուն լո՛ւյսը կփռվի կպատկի,
Մեծատարած շղարշի մը պես ոսկի,
Իր մրափեն նոր արթնցած ծովուն վրա,
Որուն նուրբ մորթը սյուքի մ'տակ կսարսռա.

Մանրիկ-մանրիկ ալյակներուն վրա բյուր
Կցրվի լույսն ու կցանե կետեր հուր,
Որ ջուրերուն հետ կերերան անդադար,
Ցատքեցնելով փաղփեցնելով կայծեր վառ։

Եվ այդ կայծերը ջուրին վրա և օդին մեջ
Կելևէջեն շարժմամբ մ՝արագ ու անվերջ,
Միլյոնավոր ճանճիկներու պես հրեղեն
Որ լույս թռիչով մը կխլրտան, կպաբեն։

✖

Ա՜խ, գեթ երբ սիրտդ փուշն զգա տրտմության,
Երբ ձանձրույթի կամ զզվանքի վայրկյաններ
Հոգվույդ վրա թույներն իրենց թափել դան,
Երբ ցավ մը վիզդ վար ծռե կամ ստվեր
Մը կյանքիդ լույսը մղտացնե, կամ երբ սև
Գիշերին խորը քեզ թաքիծ մը փարի,
Երբ վերջալույսն իր ոգեվարն հևիհև
Քեզ փոխանցե կամ իր ցուրտը մարմարի
Զմեռվան հո՜վը հոգիիդ մեջ կաթե,
Գեթ այդ մաղձոտ վրդովումի պահերուդ՝
Երբ անձուկ մը կփոթտե շուրթդ բուստե,
Հիշե՛, բոպե մ՝հիշե՛ դժբախտ սերս մութ։

ՍԻՐԵՐԳ ԱՌ ԼՈՒՍԻՆ

Ես փափկահյուս ամպն ըլլայի սպիտակ,
Որ իր կաթնաթույր թափանցկության տակ
Կսքողե դեմքիդ փողփողումն հստակ։

Մին ըլլայի ես անթիվ աստղերեն,
Մեղմնե՛ր, որ շուրջդ, ո՜վ վարդ լուսեղեն,
Կպտուտքին միշտ ու հյութ կքաղեն։

Ես լեռն ըլլայի ճակատով թխահեր,
Ուր կթառիս պա՜հ մը երկինքն ի վեր
Դեռ չբացած լայն անտես քու թևեր։

Ըլլայի՜ անտառն, որուն խավաբշտին
Ոստերուն մեջեն հուշիկ կսահին,
Կկախվին ոսկի մազերդ նրբին։

Ես ծովն ըլլայի, որուն վրա առատ
Թույլ թույլ կփռես քու լույսն անարատ,
Արծաթ ու ոսկի, հուր ու մեղր ու կաթ։

Ա՜խ, գեթ այն շիրիմն ըլլայի ցրտին,
Ուր գրգվող շողերդ կուգան մեղմագին
Հոսել լույս թախիծն իրենց արցունքին։

ՏԵՍԻԼՆԵՐ

ՎԵՐՀԻՇՈՒՄ

Ա.

Ինձ կթվի երբեմն հիշել կյանքը մը նախկին՝
Բագրատունյաց մայր-քաղաքին մեջ հոյաշեն,
Օրովն անուշ մերին Աշոտ Ողորմածին,
Երբ դեռ Կ՝ապրեր մեր ցեղն իր կյանքը խրոխտորեն։

Աչքիս առջև կուգա պալատն ամրապայծառ,
Հաղթ սյուներով, նրբաքանդակ պերճ որմերով.
Բարի արքան, խաղաղ դեմքովն իր մեծափառ
Սեղանին գլո՜ւխը կբազմեր հայրագորով.

Իր քով՝ դշխոն ազնվագեղ, քնքշահայաց,
Կնազեր գողտր, և իրենց շուրջը բազմաթիվ
Խեղճեր, հաշմեր՝ սեղանակցիլ հրավիրված.

Ես, դեռատի աշուղ, սազիս վրա մեղմիվ
Կերգեի հին երգերն Հայոց. արքան, խոհուն,
Լուռ, կերազեր, ու կժպտեր դշխոն սիրուն։

Բ.

Ու կտեսնեմ ահա պատկերն ալ առնագեղ՝
Մերկ սուրերուն կայծակնացայտ ընդհարումին,
Երբ հայ կորո՛վը կկանգներ՝ թափով ահեղ՝
Վանել ամեն դիաց խուժող ժանտ թշնամին.

Կելլեր արքան իր պալատեն՝ զերդ առտվան
Քաղցր ստվերեն կելլե արևը փողփողուն.
Դեմքն իր քնքուշ՝ վճիտ բոցով մ'արիական
Կճաճանչեր ու կվառեր սիրտն ամենուն։

Ու ցեղն ամբողջ կխոյանար հետն արքային,
Ծիծաղերես, մահվան մեջեն փառապսակ,
Անկախությունը պաշտպանել վեհ Քաղաքին։

Ես հո՛ն էի, սուրբ պայքարին մեջ հրապայլակ.
Ստվերները կերգեի հին հերոսներուն
Ու անուշությունն Հայրենիքի համար մահուն։

Գ.

Կվերհիշեմ ասոնք... և սիրտս թունդ ելած,
Երբ կանհետի տեսիլն աղվոր ու ներկային
Կտարածվի դեմս ավե՛րը մռայլամած,
Կրողամ դառն ամոթին դո՛ղը ցավագին...

Չըլլա՞ պիտի երբեք, որ ցուրտ քու շիրիմեդ
Հառնես դուն, ո՜վ Անցյալ փառքի ու ազատության.
Ո՜վ մեծություն հին օրերուն, միթե անհետ
Կորսվեցա՞ր ու մարեցա՞ր դուն հավիտյան։

Ա՜խ, ո՞վ դարձնե պիտ՝ ինձ բամբիռնը երբեմնի.
Ու փչե մեջս աստվածային շունչը հրեղեն.
Որ ես գոռամ, ո՜վ իմ ցեղս, երգը զարթոնքի,

Ու ցրցվելով սարկության անարգ մոխրեն,
Բոցավառված նորեն խանդո՛վդ դյուցազնի,
Վերականգնես արևուն տակ տունդ Հայրենի։

ՍՏՎԵՐՆԵՐԸ

Լևոն Բաշալյանին

Այն տեղը մութ է, ամայի և լռին.
Հող մը ամուլ, ուր ոչ մեկ խինդ կյողի,
Ուր չի շողար ծաղկին ժպիտն ու ծառին։

Երկինք մը ցած ինչպես ձեղուն մը հյուղի
Ու ոճիրի պես սև. օդին մեջ՝ անվերջ
Կծածանի փտումի հոտ մը լեղի։

Ձեռքս որ, կույր, կթաթխափե մութին մեջ,
Երբեմն ցուրտ կգա քրտինք մը յուղոտ,
Զոր կթափեն պատեր մռայլ, հին ու գեջ։

Սրունքներուս մեջեն մուկեր զարշահոտ
Կվազվոտեն, և ոտքիս տակ թանձր օձեր
Իրենց մարմինը կքաշեն բազմահոդ։

Գլխուս վերև, մերթ չղջիկներ՝ ծանր ու ծեր՝
Կանցնին անձայն. շրջմոլ հուրեր նվաղուն
Կթրուչտին մելամաղձիկ, համրերեր։

Եվ միայնակ կթափառիմ այդ անհուն
Այրին մեջ ուր արհավիրքներ կբնակին
Եվ ուր կտիրե սառուցիկ շունչը մահուն։

Եվ ահարեկ, մարմինս համակ սարսռագին,
Կհարցնեմ՝ «Ո՞ւր եմ, ո՞վ զիս բերավ հոս.
Ի՞նչ է այս տեղն որ նման է Դժոխքին»։

Կարձագանքե ձայնիս խորինն այն քաոս,
Եվ ստվերներ հանկարծ մութէն կհառնեն,
Կիներ, որոնց լանջն ունի վերք մշտահոս։

Ճերմակ քողեր վար կկախվին ճակատներն՝
Ուր կկրէ անձյուրն աստղիկ մ'աղվալույս.
Ու դողդոջ են, վտիտ, տխեղծ, դժգույն են։

Կմոտենա մին, աչքերով մշտակույս,
Կուրծքին վրա ծալված թևերը նիհար,
Դեմքն համակված ցավով մը ցուրտ և անհույս։

Կհարցնեմ. Ո՞վ ես, աղջի՛կ գալկահար...
Եվ ան՝ «Ես Սերն եմ, կհծծէ խուլ ձայնով,
Տուփանքը զիս խոցեց մեռցուց չարաչար»։

Երկրորդ ստվեր մը կոահի ինչպես հով,
Ստվեր մը նուրբ ու թափանցիկ ու տմույն։
Եվ իր բերնին շունչն հոտավետ է և զով.

Կուգա, սպիտակ թեթև ամպի մը հանգույն,
Ու կնայի աչքերուս մեջ շեշտակի.
«Ո՞վ ես դուն, որ անմեղության ունիս գույն»։

— «Ատեն մ՚աղվոր, հզօր էի, հրեշտակի
Պես՝ երբ մարդոց մէջ պարզ, վճիտ էր հոգին.
Հավատքն եմ ես, դուստրը երկրի և երկնքի»։

Երրորդ մը, խրոխտ, ազնվագեղ, տրտմագին,
Իմ առջևես կանցնի համր, ու կգոչեմ.
«Ո՞վ ես դուն, ո՞վ է քեզ մատներ խավարին»։

— «Ես Քերթությունն եմ, անցքիս վրայ օդաճեմ
Կսփռեր ջինջ հրճվանքներ գերագույն
Գեղեցկության, ուժթափ հիմա կդանդաչեմ

Հեղձողական ստվերներու մէջ մահագույն»։
Կանցնի ուրու մը կապտաչվի. «Ո՞վ ես դու»։
— «Ես Պատրանքն եմ, կբուժեի ցավն հոգվույն»։

Կուգա ստվեր մը վարդերանգ և աղու,
Որ պատասխան կուտա հարցմանս անփոփոխ՝
— «Երազն եմ ես, սրտին թուչունն երկնաչու»։

Եվ ուրիշներ ալ դեռ կուգան խուռնամբոխ,
Հեք մեռելներ, որ անցյալին վրա կողբան
Եվ որոնց կյանքը Ջարն ըրավ ոտնակոխ։

Բայց ահակին մը, քալվածքով հաղթական,
Ծփուն մալ,մնով մ՚օձագալար ու նրբին,
Կուգա՝ գոռոզ ու նենգ ժպիտով մ՚հեգնության։

— «Ո՞վ ես դուն»։— «Ես թագուհին եմ այս վայրին.
Միակ Ոգին եմ, որ ողջ է և որուն
Կհնազանդի հիմա սիրտը մարդկային.

Տարակույսն եմ»։— «Բայց ելքն ո՞ւր է, գթություն,
Ելքն այս սավդին ուր ամեն հույս է մեռած...»։
Ոչ մեկ ձայն ինձ պատասխանեց, և անհուն
Խափար մ՚թշալ ծածկեց ամեն բան հանկարծ։

ԱՍՏՂԵՐԸ

Ոչինչին ծոցեն դեռ չէր նշուլած այգն առաջին,
Անկերպարան և մռայլ, քաոսն անհուն կտարածվեր։
Եվ ահա տենչն արթընցավ հոգիին մեջ Արարչին՝
Ճարժուն կյանքի փոխարկել տխուր պարապը հրեշավոր։
Իր մտքին մեջ տիեզե՛րքը հղացավ բոմանդակ,
Հավերժական իր շրջանովն, էակներովն, օրենքներով։
Ցանձրացած իր երկայն մինավորիկ խոկումեն՝
Անհունության մը մեջ սև, զոր կլեցներ իր անձը լոկ,
Ինքզինքին տեսարան մ՚ընծայելու համար հաճո,
Կուզեր Ոչի՛նչը զվարթացնել փթթեցնելով անոր մեջ
Գեղեցկության, դաշնակության, երանության քերթված
մը մեծ։
Ուրվագծեց Տունն ամրավ, հիմեն մինչև ի կատարն,
Իր սյուներով, զարդերով ու բյուրազան բնակիչներով.
Ամեն ինչ նախատեսեց, ավազի մանր հատեն
Մինչև լեռն հաղթանդամ, ցոդի շիթն ու ծովն հսկա,
Արևուն ջա՛հը վեհանձն ու զով անդո՛ղրը գիշերին,
Սլացիկ ծառերն հերագեղ, թարմ ծաղիկնե՛րը տարափոտ,
Ու նվագներն հովերուն, ու քաղցրությո՛ւնը գարնան,
Հասունացնող ամփոփո՛ւմը փառահեղ ձմեռին,
Ամրան բարի ջերմությունն ու տոնն աշնան հունձքերուն
Եվ անասունն ե՛րը բյուրակերպ, իրենց դերո՛վը հատուկ.

Եվ ամենե՛ն վերջ, իբր հանգում, իբր պսակ իր գործին,
Մարդն հղացավ, բարձրագույն ուրվագծված էակներուն,
Մարդը, որուն լոկ պիտի տար, իբրև շնորհ գերագույն,
Կայծ մ'իր հզոր, ստեղծագործ, ամենահաս հոգիեն,
Կարողությո՛ւնը մտածման, գիտակցությո՛ւնը լուսավոր։
Եվ արբշիռ հաճույքով, գոհ իր ծրագրեն և հպարտ,
Արձակեց Արարիչն իր «Եղիցի»-ն հրաշագործ,
Ու բոպեի մը մեջ ի լույս եկավ աշխա՛րհը բովանդակ։
Բայց անձկությունն մը հանկարծ պատեց հոգին Աստծու։
Զգաց սխալն աղետավոր և անողորմ, զոր գործեր էր։
Այդ էա՛կը բացառիկ, որուն սիրով մը խորին
Պարգևեր էր ինչ որ բոլոր մնացյալին էր մերժեր,
Այդ էա՛կը միայն ցատապարտված էր կքելու
Անքուժելի դժբախտության մը բեռին տակ։ Մյուս բոլոր
Էակներն և իրերն, անգիտակից ու բնազդական,
Պիտի հլու կատարեին դերն որ իրենց էր վիճակված,
Առանց ոչինչ ըմբռնելու, անխուզարկու, անտրտունջ,
Մինչդեռ մա՛րդը, խառնուրդ աստվածության և անասնության,
Ունենալով գաղափարն հավերժության ու անհունին
Եվ զգալով զինքն անցավոր ու զաղփաղփուն ու չնչին,
Կարող հղանալու արդարությո՛ւնը բացարձակ
Ու կարո՛ղ նաև ամբողջ տիեզերքին մեջ տեսնելու
Անգոյությունն արդարության, մարդը կյանքին մեջ իր կարճ,
Բզքտված հակընդեմ ձգտումներե տիրական,
Տառապեր պիտի վայրագ տառապանքով մը ներքին,
Տառապանք անդարման, որ տրտմությունն իր դրժընդակ
Տարածեր պիտի համայն տիեզերքին վրա անիմաստ,
Մրթընցներ պիտի զայն, ըներ զայն գործ մը վիժած։
Եվ արարիչը պահ մ'արդեն կարծեց լսել ճիչն անեծքի,
Զոր անթիվ սերունդնե՛ր մարդկային դարեդար՝
Ապագային խորերեն իր ճակատին կարձակեին...
Սակայն ստեղծված էր աշխարհ, և անհնար էր այլևս
Ուղղել սխալն ահավոր։ Մեծ տխրություն մը սեղմեց
Սիրտն Արարչին։ Ու լացավ։ Մթության մեջ միջոցին,
Ինկան հրեղեն արցունքներն աստվածային աչքերեն։
Ահա ինչպես ծընան աստղերն, և ահա ինչու լույսն անոնց
Խորհրդավոր է ու վեհ, և այնքա՛ն ալ թաղծագին։

ԵՐԱԶԸ

Ա.

Երազ մըն էր ղողղոջուն ու դալկահար,
Ոգի մ'կիսամեռ,
Զոր իրիկուն մը լուսնի շող մը նիհար
Սենյակս էր նետեր։

Կարծես երկայն թաքուն վըշտով մը մինակ
Տանջվելե խոնջած,
Եկեր ինկեր էր, ոգեսպառ, տխրունակ,
Թևերը փրթած։

Գիրկս առի զայն ու շոյեցի ընդերկար
Մարմնիկը հատած,
Որուն մեջ լույսն հիմա, հիվանդ, կդողար
Ջերթ կանթեղ մ'առկայծ։

Ես սիրեցի, ինչպես տխեղծ աղջիկներ
Կսիրենք գթոտ,
Սիրեցի զայն՝ որովհետև դժբախտ էր
Ցավով մ'անծանոթ։

Բ.

Շաբաթ մ'ամբողջ մեր խեղճ տարփանքը տևեց.
Բարձիս վրա պառկած,
Գլխուս մոտիկ երազն իր ողբը հրծծեց
Խուլ ձայնով մը ցած։

Կրսեր ինծի բոլոր իղձերը փշրած
Իր դառն կյանքին,
Ու կպատմեր երկնքին մեջ լուսամած
Իր վի՛շտը մթին։

Եվ ես անոր կպատմեի մեր ցավերն
Աշխարհի վրան,

Ու կրսեի. «Ամեն տեղ, վարն ինչպես վերն,
Ցավն է տիրական»։

Ու մեր եղբայր հոգիներուն մեջ գորով
Մը ծնավ անհուն,
Եվ սփոփանք պահ մը գտանք իրարմով
Մեր մորմոքներուն։

Գ.

Ինծի հաճախ երկնքին վրա կխոսեր
Մելամաղձորեն.
Կրսեր ինչպես հոն իրարու կուտան սեր
Աստղե՛րը հրեղեն։

«Հոգիներ են,— կրսեր,— որ ջինջ եթերին
Մեջ կապրին կյանքով
Մը տենդագին, կյանքով մ'որ լի է խորին
Հույզով, տանջանքով։

«Սերն է անոնց տենչն ու հրայրքն անհեղլի,
Սերը բռնավոր,
Սերը կույր, Սերն անողորմ ու պաշտելի,
Սերն ամենազոր։

«Երբոր ժպտի անոնց, անուշ ու պայծառ,
Հպարտ կվառին,
Ու երբ զրկվին անոր շողեն բարերար,
Թոշնած կմարին։

Դ.

«Բայց խոցվածներն այդ մերթ կիջնեն երկնքեն
Ձեր երկրին վրա մութ,
Ամոքել հոս՝ սրտի մ' հպմամբ մարդկեղեն
Իրենց ցավն անգութ։

«Եվ ատոնց էջքն է որ հոգվույն մեջ մարդոց
Կթափե տրտում

Անրջանքներն անասելի, քաղցրաբոց
Խանդերն անպատում։

«Ես այդ դժբախտ հոգիներեն մեկն էի,
Անեծք մ'ահավոր
Խամրեց օրերս, զանոնք դարձուց ամայի
Անապատ մը չոր։

«Բայց մեջս արդեն հուրը տակավ կմարի,
Կզգամ, վերջս է մոտ...
Եղբա՛յր, հիշե՛ զիս՝ պահերուդ մեջ ցավի՝
Հուշով գորովոտ»։

Ե.

Ու գիշեր մ'ան մեռավ. իզո՛ւր ջանացի,
Ժամերով երկայն,
Թափելով վրան հեղեղներ տաք արցունքի,
Արթնցընել զայն։

Հետո, մինակ, կատարեցի ես, ավա՜ղ,
Սև հանդեսն անոր
Թաղմանը, ե՛ս քահանա, ե՛ս դիաթաղ,
Ե՛ս հուղարկավոր։

Իմ սուգիս մեջ փաթթեցի զայն, ու կերոն
Ըրի հառաչներս.
Եվ ընդերկար հեծկլտացի, լացի հոն,
Եղերամոր պես։

Հետո, բացի սիրտս ու այնտեղ թաղեցի
Երազն անկենդան.
Քովիկն այնքա՜ն մեռելներու սիրելի՝
Որ հոն կքնանան։

ՕՐՈՐ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դուն նստեր ես ճամփաներուն անկյունը,
Մազերդ ի վար իջեր կախվեր է ձյունը,
Մարմնույդ վրա կփոսանան մութ խոցեր,
Եվ աչվներդ արյունի լիճ են դարձել։

Ո՞ր չար պարիկը հյուսեց թելը բախտիդ...
Ո՞վ տեսնելով քեզ տապալած ու վտիտ՝
Պիտի հիշե, որ դուն երբեմն հզոր
Աղջիկն էիր սև աչքերով լուսավոր։

Կծփային մազերդ ինչպես դրոշ մը լայն՝
Ազատ լեռան մեջ ուր հոգիդ մեծաձայն
Կմոռնչեր խոյանալով սարե սար,
Ու ծոցդ հպարտ՝ մեղր ու կաթով կուռենար։

Քեզ ցանկացին հելուզակները բոլոր.
Պաշարեցին քեզ ոսոխներ ահավոր.
Երկար ատեն ոգորեցար, կռվեցար,
Մինչև ա՛լ խոնջ ինկար գետին ուժասպառ։

Եվ քու հոգիդ արգավանդ էր ու բարի՝
Կործանարար ուժերուն մեջ վիթխարի.
Դուն կյանքի ծիլ մ'ավելցուցիր աշխարհին,
Մատներդ հողեն գեղեցկություն հանեցին։

Դուն Անահիտն էիր խաղաղ աչքերով,
Ոսկիամայրն էիր պայծառ լանջքերով,
Ծոցեդ բարիք, նայվածքեդ լույս կտեղար,
Շրթներդ դաշն էին ու ձեռքդ ճարտար։

Եկան խուժերն ու ձեռքիդ կապ անցուցին,
Բզքտեցին, աղարտեցին ծոցդ անգին.
Եվ բյուրախոց դարձար դուն Մայրը կարմիր՝
Գողգոթային ճամփուն վրա ծնրադիր։

Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ քաջ եղար ցավին մեջ...
Աղետքին տակ հոգիդ մնացեր էր անշեջ.

Կարծբը լուծեր կոստատեցիր ու մահեն
Քանի՜ անգամ ոտքի ելար դուն նորեն։

Աչքդ լույսին կսևեռեր անդադար.
Միտքդ, խիզախ, նոր աշխարհին կդառնար.
Ու դարերով համառեցար, առանձին,
Բումբ ձեռանալ ասիական հեղեղին։

Մեծցավ հեղեղն ու ղգետնեց քեզ մոլեգին
Ու մարեց բոցդ թափով իր ալիքին.
Ջվառական, խավարին մեջ, հողմած,
Միշտ կենդանի, դուն սպասեցիր գալարված։

Գիշեր ատեն, մերթ հին շիրմաց խաչերը
Կերերային, ու Մասիսի քաջերը
Մութին մեջեն կշողային բարկաճայթ,
Աչվրներեն արձակելով շառ ճառագայթ,

Օդին մեջ խուլ կթընդային թմբուկներ,
Դուն, դող ելած, կառնեիր պահ մ'աչքդ վեր,
Ու, վրդոված, կնայեիր լեռներուն,
Ոչի՜նչ՝ բայց մութը ծանր ու պաղ լռություն...

Օր մ'ալ ցավի ցնցման մը մեջ անսահման՝
Ցցվեցար մեծ ճիչով մ'անձկոտ ընդվզման,
Աշխարհ ձայնիդ խուլ մնաց ու բիրտ ուժին
Կույր գարշապարը ճզմեց ճիգը քուկին։

Բարկ հուրերու մեջ ճիվաղներ ցատկեցին,
Սիրտդ այրեցին ու աչվրներդ փորեցին,
Տունեդ վանված, հովերուն տակ մնացիր,
Մերկ տարածված — չորս դիդ արյուն ու մոխիր։

Հիմա նստեր ես, ցավագի՜ն ուրվական,
Ավերներուն պատկերին մեջ տխրական.
Կխածկրտե վերքերդ հովը սառուտ,
Արյուն կիյնա խեղճ ծիծերեդ կաս-կապուտ։

Դանդաղորեն կժաժես գլուխդ ու կուլաս,
Ու ցած անուշ ձայնով օրոր կկարդաս
Ձավկըներուդ, որ արյունին մեջ ինկան
Եվ անոնց, որ շորս հովերուն ցրվեցան։

Օրո՜ր կանանչ արևներուն, լուսավետ
Աչվրներուն, որ մարեցան առհավետ,
Եվ անոնց, որ դեռ կապրին ու կտանջվին
Ջնդաններուն մեջ ու մռայլ աքսորին։

Հերի՜ք, հերի՜ք... այդ օրորդ ողբ է մահու.
Հերի՜ք... մենք նոր օրոր ունինք երգելու,
Պիտի երգենք օրորն հույսին ու վրեժին,
Ու մեռելներն պիտի հողին տակ սաթսին...

Հերի՜ք, հերի՜ք... վեր առ գլուխդ ու մի՛ լար,
Ցավը սուրբ է, ցավը՝ մեծ ու փրկարար.
Ոչինչ կա վեհ, քան խաչին տակ զոհն արի,
Գիշերին մեջ կհյուսվի այգը բարի։

Ժանտ դահիճներն ու քանդողները մթին
Փոշիի պես պիտի անցնին ու ցնդին
Ու մոխիրին մեջեն պիտի ելլես դուն,
Տառապանքեն նորոգված ու շողշողուն։

Մի՛ լար, մի՛ թույլ մազերդ հովուն տարտղներ,
Մի՛ լար, մի՛ խեղճ գլուխդ վար կործաներ.
Ճանչցիր դուն քեզ, ժողվե՛ ավյունդ ցիրցան,
Հերի՜ք ուժերդ օտար տան սյուն կանգնեցան։

Հանգի՜ստ դժգույն եղբայրներուն, որ ինկան,
Ելի՛ր, օրհնե՛ մեզ, տարածե մեր վրան
Թևերդ անհուն։ Թող մեր արյունն ու հոգին
Քու արևուդ մատաղ ըլլան ու ցամքին։

Մութին մեջեն պիտի ցցվիս հաղթական,
Աչքերդ աստղեր պիտի դառնան ու ցոլան.

Վերքերդ վարդ պիտի ըլլան հոտավետ
Ու լույս պիտի թափի ճերմակ մազերեդ։

Պիտի կանգնիս ճամփաներուն բերանը,
Պիտի քանդես Բռնության սև խորանը.
Ոտքի՛ ելիր, ցավերդ երկունքն են հսկա,
Ով Մա՜յր, աշխա՜րհ մը ծոցիդ մեջ կխլըրտա։

ԼԵՌԱՆ ԾԱՂԻԿ

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հուանդին

Ա.

Հոն, ուր ամեն բնակություն կդադրի,
Հոն, որ մարդուն կվախնա ոտքն առնել քայլ,
Երկնադրացի այն բարձրությանց վրա վայրի
Ուր արևուն կիյնան շողեր նախատիպայլ,
Ծնավ Արուս։

Իր մայրն, աղջիկ լեռներու,
Հողին, քարին, մացառին հետ միշտ ապրած,
Ընկեր հուժկու արծիվներուն օդասլաց,
Անվախ՝ ժայռեն,դահավեժեն ահաբկու,
Ամուր անոնց պես և անոնց պես մթին,
Լեռան մը սեպ կողին վրա ապալեր,
Բացվածքին մոտ ապառաժուտ անդունդին,
Այծյամներու քով զայն աշխարհ բերած էր։
Եվ հոն, այդ չոր ամայության մեջ մաքուր,
Մեծցած էր ան, կյանքով մը կարծր ու շարքաշ,
Կյանք մը զվարթ, խաղաղ, առողջ, անփրփուր,
Ինչպես կապրին վայրի վարդերը մատղաշ։
Լեռներուն վրա իր մանկությունն անցած էր,
Իր առաջին նայվածքն երկինքն էր տեսած,
Երկինքն ազատ և անշղթա իր ամպեր,
Փայտե խեղդուկ ձեղուններու փոխան ցած։

Միշտ օդին մեջ, հողին վրա, ժայռին քով,
Աղվոր մանրիկ անասունի մը նման,
Կյանք մը վարած էր լի վազքով, խոնջենքով,
Ո՜չ խանձարուր ունեցած էր, ո՜չ օրրան,
Հովերն ահեղ, մռընչելով կատաղի
Օրրած էին իր նիրհումներն առաջին։
Միշտ կիսամերկ, անհո՜գ տաքի կամ պաղի,
Չէր ճանչցած իր մարմինը բանտն հագուստին,
Կենդանիի մորթով հագիվ սքողված։
Իր ոտվրներն, բոբիկ հողին, քարի վրա,
Խոտին, ցողին մեջ էին միշտ թաթխված,
Ու միշտ արձակ թափած մազերն իր ոսկյա։
Եվ իր հոգվույն մեջ լեռնեն բան մ'էր մտեր,
Հողի կար համ մը իր մսին մեջ ամուր.
Արծվի նայվածք մը կվառեր իր բոցեր
Աչվրներուն մեջ. խոտի հոտ մ'հեշտաբույր
Իր մազերեն կարտաշնչվեր հորդառատ.
Այտին, բերնին վրա ու լանջքին մեջ ճերմակ՝
Վայրի պտուղի ու ծաղկի հյութն անարատ,
Եվ հոգվույն մեջ հովերուն խենթ ու վայրագ
Անկախությունն ու խոյանքը մոլեգին։
Կճանչնային զինքը ժայռերն ու ծառեր,
Այդ ընկերներն իր մանկական հասակին.
Անոնց քույրն էր, անոնց փոքրիկ աղջիկն էր.
Եվ ամենքը կսիրեին զանիկա.
Ծառերն, երբ ան կանցներ, մրմունջ մը հեշտին
Կարձակեին, և առվակներն արծաթյա
Կերգեին քաղցր երբ զանիկա տեսնեին։
Խոտերն անոր ոտքին ներքև գգվանքի
Կփոխվեին, և ծաղիկները փափուկ
Կուղղեին միշտ անոր ժպիտ մը ոսկի։

Բ.

Շատ հեղ կերթար, գլուխն առած, միս-մինակ,
Թևը կողով մը ու ձեռքը ցուպ մը խոշոր,
Կերթար, կերթար, ուր որ ելլեր իր դիմաց,
Չվախնալով գազաններեն ահավոր.
Մերթ կմտներ անձավներ խոր, մթամած,

Որոնց խոնավ ալքերուն մեջ անվեհեր
Կմխրճվեր թնդացնելով երգ մը խրոխտ.
Եվ եթե օձ մ'այնտեղ իրեն դեմ ելլեր,
Չէր տատաներ, իր քաջությունն անհողդողդ,
Ցուպի հարված մը, և կանցներ ու կերթար։

Գ.

Երբեմըն մոտն անուշ մաքուր մեկ առվի,
Կանգ կառներ և նստած եզերքը ոտքերն
Երկարորեն կլվար, մերթ՝ վիթխարի
Ծառերն ի վեր կմագլցեր մեծ ճիգով,
Մինչև կատարն, հոն ուր երկինքն է մոտիկ,
Եվ այնտեղ լայն ճյուղի մը վրա՝ անվրդով
Ընկողմանած, տերևներուն խաղաղիկ
Փսփսուքին մեջ հեշտօրոր կհանգչեր։

Դ.

Գիշերները շատ անգամ ժայռ մը կընտրեր
Իրեն բազմոց, և աստղերուն դալկահար
Հառած իր բուռն ու սայրասուր նայվածքներ,
Երկար ատեն կխորհեր լուռ, մութին մեջ,
Իրեն համար անոնք ոսկի, ադամանդ
Վառ ծաղիկներ էին, միշտ թարմ ու անշեջ,
Եվ իր փափագն էր անոնցմե գեթ մեկ հատ
Փրցնել դնել իր մազերուն մեջ ծփին։
Ու գիշեր մը սարը ելավ բարձրադույն,
Կարծելով թե աստղերն անոր կհպին,
Աստղերն ուր բան մը կժպտեր իր հոգվույն։

Ե.

Իր հայրենիքն, իր տիեզերքը համբուն՝
Այդ ամայի լեռն էր, որմե դուրս ելած
Չուներ երբեք։
Վարն, իր դիմացը, հեռուն,
Կնշմարվեր, մշուշի մեջ սքողված,
Լայն դաշտերեն ու մարգերեն ալ անդին,

Շատ, շատ հեռուն, եռուզեռում մը շփոթ,
Դիզված, խռնած բաներու կույտ մը մթին.
Եվ անհանգիստ, հետաքրքիր, փարանոտ,
Կուզեր գիտնալ արդյոք ինչե՞ր կան այնտեղ,
Ի՞նչ գաղտնիքներ, ի՞նչ էակներ, ի՞նչ վայրեր։
Ու գլուխն առած իր ձեռքերու մեջ կարշնեղ,
Լեռան աղջիկն երկայն ատեն կերազեր։

Զ.

Օր մը, իշխան մը գնաստի և ադվոք
Լեռան վրա ոտի եկած ըլլալով,
Հանդիպեցավ Արուսին այն պահուն որ
Կուգար, զվարթ, այտերը վառ, ոտքերը գոփ։
Ոտքը բոբիկ, ուսերն ու բանջն ամբողջ թաց։
Մազերուն մեջ վարդեր կարմիր ու ճերմակ։
Երկուքն ալ պահ մը կանգ առին զարմացած.
Արուս, ապշած, կդիտեր այն գարգմանակն,
Որ կերևար անոր փայլուն ոսկեզօծ
Գլխարկին վրա, և զգեստներն երփնագեղ,
Ուր բյուր զարդեր կդիզվեին պերճ ու հոծ,
Եվ ամեն, ինչ որ անոր վրա կար շքեղ,
Ոսկե գոտին, սուսերը մեծ, շողշողուն,
Ոլոր պեխերն ու մորուքը սրածայր.
Եվ իր հոգվույն մեջ անորոշ ու անհուն
Հանկարծ հուզում մը պայթեցավ մրըրկազայր.
Իշխանը, նուրբ դեմքով, ազնիվ արյունով,
Պալատներու մեջ միշտ ապրած տեգ տոհմիկ,
Կդիտեր, սիրտը ցնցված ու վրդով,
Առույգ աղջիկն այդ վայրի ու գեղեցիկ,
Քաղքին մեջ դեռ էակ մ'այդ կերպ տեսած չէր,
Դեռ լոկ նրբին դժգույն կույսեր էր սիրած,
Թարմ ու կարմիր հյութազեղուն այդ այտեր,
Եվ այդ մազերն որ կիյնային հորդ, անսանձ,
Ուսերուն վրա ճերմակ, կլոր, մսավետ,
Եվ մութ կապույտ աչքերը մեծ ու խորին
Ու կիսամերկ մարմնույն գիծերը վեհ-վեհ,
Այդ բոլորն իր սիրտը մատաղ գերեցին։

Ու Արուս, իր միամտության մեջ անմեղ,
Զայն կարծեց նոր տեսակ էակ մ'անծանոթ,
Կենդանի մը ավելի վեհ ու շքեղ,
Քան ինչ որ ինք տեսած էր, և իր շիկնոտ
Այտերուն վրա ժպիտ մ'անուշ փթթեցավ
Իսկ իշխանը զմայլած, հուզված, կխորհեր
Թե այդ աղջիկն հոգեն ելած չէր հարկավ,
Թերևս ոգի մ'որ կպահեր այդ լեռներ
Կամ հրեշտակ մ'այդտեղ իջած ման գալու
Եվ այնպիսի տարփանքով մը անսահման
Պաշարվեցավ, որ ուզեց այդ կույսն հուժկու
Տանիլ պալատն և իրեն կին ընել զայն։

Է.

Թավիշե լայն բազմոցներու վրա փափուկ,
Ոսկեճամուկ հանգերձներով պաճուճված,
Արուս հիմա դշխոյ մըն էր վեհաշուք,
Իր լերկ ժայռերն և իր կյանքը լեռնահած,
Իր պայքարներն, իր արշավներն ու խազեր,
Անասունի մորթն ու խոշոր ցուպը բիրտ,
Ատոնք ամբողջ թողեր էր ու հեռներ
Այդ կտրիճին, որ կախարդեր էր իր սիրտ։
Եվ իշխանը, անձ շատ մեծ և շատ հզոր,
Տեր բազմաթիվ երկիրներու, անվանի
Իր քաջությամբ և աչքերուն ալ ադվոր,
Կպաշտեր զայն իբր իր հրեշտակն ու հուրի։
Եվ երջանիկ եղավ Արուս, հետզհետե
Վարժվեցավ այդ նոր կյանքին ու սիրեց,
Զվարճացավ դիտելով իր արծաթե
Զարդերն և իր գլխուն գոհար թագը մեծ։
Հիմա անթիվ ուներ հլու նաժիշտներ,
Որ իր կամքին ստրուկն էին անձնատուր.
Ոսկի խոշոր հայրի մեջ կդիտեր
Իր այտերուն վարդն ու բերնին բացված նուռ.
Եվ երբ ըլլար որ ձանձրույթ մը գար վրան,
Իսկույն ճարտար երաժիշտներ կփութային
Իր ոտքին տակ հնչեցընել նվագարան,

Անուշ երգով վանել թախիծն իր սրտին։
Եվ ազնվազարմ օրիորդներն ոստանիկ
Կկրծվեին իրենց սաստիկ նախանձեն
Երբ տեսնեին զայն իր էրկանը քովիկ
Ճոխ կառքին մեջ ընկողմանած պերճորեն,
Անցնելով խրոխտ իր հրապույրովն հաղթական
Ա՛լ իր լեռները մոռցած էր, ու վայրի
Այդ արարածը հիմա մեղկ փափկության
Մեջ թաթխված՝ կթուլանար օր-օրի։

Ը.

Ապարանքին ետևի մեկ սենյակեն՝
Հեռուն, հեռուն, հորիզոնին վրա գորշ՝
Լեռներու շարք մը կերևար մշշորեն,
Շարք մը երկայն, որ կգծվեր անորոշ՝
Մուխի, խունկի, ամպի գույն ու երազի.
Իրիկուն մը, Արուս մտավ դիպվածով
Այդ սենյակը՝ այն պահուն, ուր կտատամսի
Լույսը կյանքի ու մահվան մեջ. կրակե ծով
Մը կվառեր հեռուն երկինքը կարմիր,
Ուր արևը կտատաներ ոգեվար.
Եվ արյունի այդ հորդության վրա հրալիր՝
Սև ու հստակ շրջագծերով ուրվանկար
Կտարածվեր երկար շարքը լեռներուն։

Սրտեն Արուս զարնըվեցավ կարեվեր.
Հո՞ն իր լեռներ, հո՞ն իր ամբողջ մանկություն,
Հո՞ն իր բնակավայրն, հո՞ն իր վիհերն ու ժայռեր,
Հո՞ն քարայրներն, հո՞ն կատարները ձյունոտ,
Հո՞ն իր վազքերը մոլեգին ու հիմար՝
Արհավիրքին, վտանգին մեջ անծանոթ,
Հո՞ն իր խոշոր ծաշիկները գունավառ,
Հո՞ն ճախրասլաց թռչունները մեծ ու սև,
Հո՞ն իր բոբիկ ոտքերն ու մորթն անասնի,
Հո՞ն իր աղվոր կյանքը, չարքաշ ու թեթև։
Ու զգաց հանկարծ զարթումն ըմբոստ, վայրենի
Իր մանկության կրակներուն, խանդերուն.
Զգաց, որ հովն ու ժայռն ու վիհն և արծվին

Կբախեին իր մեջ իրենց թևն անհուն։
Ու երբ աչքերն դարձուց շուրջն ու ծանրագին
Տեսավ իրերն, առարկաները փաղփուն,
Կակուղ թավիշն ու բեհեզները նրբին,
Լացավ Արուս լաց մը խորեն իր հոգվույն։

Թ.

Իշխանն հիմա կզարմանար, թե հանկարծ
Ի՞նչպես Արուս փոխված, ուրիշ էր եղած,
— Ա՛լ զինքը չէր սիրեր դուստրը լեռներուն,—
Եվ թե ինչո՞ւ անոր լեցուն երեսներ
Կհալեին՝ օրըստօրե դալկագույն,
Քիչ հետո ան հիվանդ ինկավ անկողին,
Անխոսուկ ու մռայլ, կհատներ համրորեն,
Մնալով խուլ իր ամուսնույն աղերսին,
Չհանելով բառ մ'իր դժգույն շրթներեն։
Միայն խնդրեց, որ իր մահիճը տանին
Այն խուցն, ուրկից լեռը հեռվանց կերևար,
Եվ հոն, գաղտնի ամենքեն, երբ առանձին
Մնար, կելլեր ու կհառեր իր աչքեր
Հեռուն այն մեղմ անրջային գիծերուն։
Եվ այդպես, միշտ անձայն, իր մեջ թաղելով
Այդ սև գաղտնիքն, որ կըներ զինքը դժգույն,
Պահելով միշտ դեմք մը հանդարտ, անվրդով,
Արյունոտած հոգիի մը սուտ դիմակ,
Առանց լալու, առանց իր քաղցր ամուսնին
Իսկ հայտնելու իր ցավն, անդունդ անհատակ,
Միշտ ինքը իր մեջ այրելով, փակ ու լռին,
Մեռավ առտու մ'աչքերն անթարթ սևեռած
Այն ստվերոտ տարտամ կապույտ լեռներուն,
Որ առտվան կարմրության մեջ լուսամած
Կժպտեին իրեն ժպտով մը անհուն։

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆԻՆ

Եվ հիմա, որ դուն անդին անցար դռնեն խորհուրդին,
Խոհուն ու քա՛ղցրը վարպետ, որ դրախտի մ'մեջ անգիշեր
Հոգվույն հավերժ թևածման կհավտայիր սրտագին,
Ի՞նչ տեսար, ախ, ի՞նչ զտար՝ երբ սուզվեցար թանձրասավեր
Անծանոթին ծոցը պաղ... Ո՞վ, ո՞ր աստվածը գթած
Պիտի շնորհ ըներ մեզ, որ սև վերմակը հողուն
Նետելով պահ մը գլուխդ տոնեիր վեր ու մթնած
Աչքերդ հեղ ա՛ալ հառելով այն ժպիտո՛վդ սիրուն,
Մեզ պատմեիր ինչ որ կա գերեզմանին սեմեն ներս։
Արդյոք իրա՞վ աչքերդ, հազիվ գոցված երկրավոր
Արփվույն լույսին, բացվեցան լույսի մը մեջ մշտապես
Շողուն ու քաղցր ավելի քան աշխարհին մեր բոլոր
Լույսերն աղոտ. դուն գտա՞ր արդյոք սանդուխն ադամանդ,
Ու միթե հոն հրեշտակներ եկա՞ն ձեռքեդ բռնելով
Քեզ վեր հանել դեպ աշխարհն անապական, անկաշկանդ
Երջանկության ու սիրո։ Ինչքա՞ն մեր խեղճ սրտին զով
Ու սփոփարար պիտ ըլլար գիտնալ, որ այժմ հանգչած,
Հանգիստով մը գերագույն, ստվերներուն մեջ մաքուր
Երգիչներուն մեր երկրին, հովանույն տակ լուսամած՝
Տիեզերքի գյուցազներգը, հորինող գեթահուր
Բանաստեղծին, կխոկաս, հեռու աղբեն, արյունեն
Այս մեր սուտի ու ջարդի երկրագունդին ապիրատ
Ու կհրճվիս նվագովն անճառ, զոր քեզ կձոնեն
Հրեշտակներուն տավիղներն ու կլսես մեղրակաթ
Խոսքն ընտրված միտքերուն, որ կմեկնեն քեզ կյանքին
Գաղտնիքը՝ մեզ համար փակ...
Ինչ պահ մ'արդեն կթրվի
Տեսնել հույլին մեջ զքեզ անմահներու կանտոին...
Հոգիդ այլևս ազատված պատյանեն թանձր կավի,
Ջերմ տաղտուկեն ու ցավեն մեր կենցաղին այս ռամիկ,
Դարձած համակ մաքրություն և ուժ, ավյուն ու ճախրանք,
Սերովբեներուն երամներն, արփաճաճանչ, վարդերանգ,
Կպաշարեն քեզ ու մեղմ երգերով քեզ կօրորեն.
Ու երկրի մեջ զավկներուն վեհ ոգիներն ալ կուգան
Դիմավորել քեզ ու քաղցրը ողջույնով մը կբսեն՝

— «Բարո՛վ եկար, ո՛վ եղբայր. վարն, Երկրին մեջ
տրտմության
Ու տվայտանքի, ծանրաքարշ հողի կյանքին մեջ ստոր,
Դուն գեղեցիկն զգացիր, սիրեցիր ու երգեցիր.
Դուն անցար հոն ինչպես շող մ'արփվույն ճահճին վրա
պղտոր,
Աչքդ հառած երկնավոր իդեալին լուսածիր,
Դուն քու ճամփուդ վրա տղմուտ՝ հոգվույն վարդերն ու շուշան
Ցանեցիր և անոնցմով պճնեցիր ձորն այդ տրտում։
Երգերդ, ուր դուն թափեցիր սիրտդ, սիրո ատրուշան.
Աստվածության անստվեր արեգակեն անպատում
Կքաղեին իրենց բոցն, ու հրեշտակաց երգերեն,
Զոր հոգիդ մենության մեջ կլսեր ներքնակի՝
Անուշությունը իրենց։ Բարո՛վ եկար։ Քեզ Որ էն
Պիտի պսակը շնորհե մեծ հանգստյան ու փառքի»։
Եվ ահա դուն, դեմն ելած Հոգիներու Հոգիին,
Պսակը լույս կընդունիս ու շրթներով գերանյութ՝
Կերգես գեղոն մ'օրհնության, ա՛յնքան քաղցր ու կաթոգին,
Այնքան լեցուն հրապույրով ու թարմության ծաղկահյութ,
Որ հրեշտակներն՝ զմայլած՝ քեզ կծափեն քնքշորեն,
Ու մեծ Արքան վեհության, դաշնակության, զորության,
Դորովագին կժպտի...
Ամա՛ր, ըսե՛ թե խորեն
Ծնած սուգին՝ ասիկա չէ լոկ երազ մը վաղանց.
Երևցի՛ր մեզ, զերթ երբեմն էմմավուսին մեջ նախկին՝
Հիսուս տրտմած իր հոտին։ Խոսե՛, վարպետ, մեզ ըսե՛,
Ապահովե՛, հաստատե՛ թե Բուրաստանն այդ վերին
Կա՛ արդարև՝ իր անճառ ծաղիկներովը լույսե,
Օդովն իր միշտ գարնային, կանանչներովն անթառամ
Ու մշտաջինջ երկնքով։ Ըսե՛ թե Զարն ու Խավար
Հավիտյանեն ի վեր հոն չեն մտած ո՛չ մեկ անգամ,
Թե անոնք, որ աշխարհիս վրա տանջվեցան չարաչար,
Զոհ ոճիրին կամ ազնիվ երազներու նահատակ,
Արդարներն ու մաքուրներն, անձնվերներն ու քաջեր,
Այնտեղ ընդմիշտ մոռնալով ցավի ամեն հիշատակ,
Խաղաղ ու դաշնի կյանքով մ'ուր ալ մարմնո պիղծ տենչեր
Ի սպառ մարած են, կապրին ծոցն հանգստյան մ'անվրդով,
Կյանք մտավոր հեշտանքի, ուր Աղբյուրն իսկ գոյության

Եվ պատճառն ու նպատակն ալ անսքող աչքերով
Կնշմարեն, կըմբռնեն, ու ցնծալիր կարբենան
Գեղեցկության գերագույն հայեցումովն հոգեզմայլ,
Եվ Աստուծո գործակից կըլլան գործին մեջ հզոր,
Ով կվարե Համասփյուռ կյանքին գաղտնիքը մռայլ՝
Արդարության ու սիրո դեպի նպատակ մ՝հեռավոր,
Զո՜ւր կոչ, ունա՞յն աղերսանք... Մեր ու քու մեջ լռության
Լռություն է՝ որ կանգուն՝ կքարանա անողոք։
Շիրիմն անխոս է, մահուն դիմակն հավերժ անթափանց,
Մենք կմնանք շվարած, անձկության մեջ ծնկաչոք,
Խոցված, մոլոր ու վհատ, ցանկանալով հին Բնազդին
Հավտալ անուշ, կազդուրիչ երազին այն միամիտ,
Բայց անկարող։

Եվ ահա մտածման ձայնը ցրտին

Մեր վիրավոր սրտին վրա կհնչի՝ կուռ ու վճիտ.
«Այն զոր կողբաք, լրացուց իր դերն, և այժմ անզգած
Ծրար մըն է լոկ նյութի։ Մարմինն անոր ծոցն հողուն
Պիտի լուծվի ու տարրերն՝ հազար նոր ձև զգեցած՝
Նոր կյանքերու պիտի մաս դառնան Բնության մեջ անհուն։
Անհատին կյանքն անցավոր, ամբողջությունն է անմահ։
Կյանքը մեկ է և անվերջ, իր ձևերն են այլազան
Ու վաղանցուկ։ Ուժ մը կա, ամենակալ, բարձրագահ,
Տիեզերքին մեջ տիրող, խորհրդավոր, անսահման,
Անմեկնելի։ Ան երբեք չի՛ սխալիր։ Ամեն ինչ
Ան հորինած ու լարած է օրենքով մ՝անհեղլի.
Դաշնակությամբ մ՝անայլայլ, ուր մութը հոն, լույսը ջինջ
Անհրաժեշտ են նույնքան։ Աշխարհքս չէ լոկ Չարի
Հանդիսարան. կան մաքուր հոն հոգիներ ինչպես այն
Զոր կողբաք դուք։ Ցավը պետք է մարդկային հոգիին
Մաքրագործմանը համար։ Անփառունակ և ունայն
Պիտի ըլլար կյանքն առանց ընդդեմ Չարի պայքարին։
Լացե՛ք, զի դառն է զատվիլ մեծ հոգիե մը սիրված.
Բայց մի՛ ի զուր ակնապիշ երկինքն ի վեր սպասեք
Վերերևմանը անոր, որ աչքն ընդմիշտ է փակած։
Ան ա՞լ իր գործն ավարտեց և իր պայծառ ճակտին սեգ՝
Հոս իսկ արդեն ստացավ պսակն իր սուրբ վաստակին։
Վարձքն արդարին մարտիրոս՝ իր վեհ ցավն իսկ է արի,

Եվ հանճարի՛նը՝ հանճարն, անշեջ լույսովն իր խորին։
Ան, զոր կողբաք՝ անշառամ կյանքով մը միշտ պիտ ապրի
Իր երգերուն մեջ աղվոր. հո՛ն է, հո՛ն է իր հոգին»։

ԵՐԳ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Ահա կտեսնեմ ողկույզներն ոսկի՝ արփվույն տակ զվարթ,
Տերևներուն կանանչին մեջ ծիծաղով մը լուսեղ
Ծաղկած բարի շոյանքին ներքև սյուքին խանդակաթ։
Ձեռքեր, ձեռքեր կուգան, բիրտ, կտրել գլուխներն այդ անմեղ
Եվ կտանին հնձանին մեջ նետել, դե՛զ ողբական,
Ու գարշապարն անողորմ դահիճներուն մոլեգին
Կշաղաշաղեն ողկույզնե՛րը լի հույզով սրբազան։
Բայց կտտամահ դիակն կենսածորան պտուղին
Կվերածնի խաղողին հոգին, հզոր ավելի,
Գինիին մեջ հրաբորբոք։

Ու կտեսնեմ՝ հեղապար

Ահա հովուն տակ կօրորվի օրհնանքով ու սիրով լի
Խարտիշագեղ հասկերուն վետվետուն ծովը պայծառ.
Կշողա սուր մանգաղին կապույտ փայլակը ցրտին,
Ու հասկերուն կթափին վառ գլուխներն անջատված,
Ու կալին մեջ կամնըված, երախին մեջ ջաղացքին
Փշրվելով կդառնան փոշի անշարժ ու մեռած։
Բայց մանրամաղ նշխարեն նահատակված հասկերուն
Կվերածնի ցորենին հոգին, վեհանձն ավելի,
Կենսապարգև Հացին մեջ։

Ու հիմա քեզ, ո՞վ դժգույն

Անուշ Քրիստոս, կտեսնեմ խաչիդ վրա պաշտելի.
Քու մեծ հոգիդ անարատ, ինչպես ծաղիկ մ՝անպատում,
Կկանգներ լույսն իր խաղաղ՝ պիղծ ճահիճին վրա կյանքին։
Ցցվեցավ ձեռքը քանդիչ՝ ճակտիդ վրա վեհ ու տրտում,
Բռնեց վզեդ ու քաշեց տարավ քեզ բլուրը մթին
Ու քեզ փայտին վրա գամեց։

Բայց կենաղրավ քու մարմնեդ

Ու փրկագործ, վերածնավ, կյանքով մը վառ ա՞լ հավետ,
Հոգիդ, գինին գերագույն, գերագույն Հա՛ցը մարդոց։

Այսպես և դուն, ա՜զգ Հայոց, նահատակմամբ մը վսեմ
Խորհրդավոր՝ մեծութեամբն իր տարօրեն, սև թաթին
Ներքև Չարին, դարերե ի վեր, բախտով մը դժխեմ,
Բզիկ-բզիկ հոշոտված, կչարչարվիս ցավագին,
Ներբանին տակ Բռնության կճմլըվիս անխնա,
Կոգեվարիս համրորեն՝ գամված խաչի մը վայրագ...

Բայց մոտ է օրն հարության, քու բյուրախոշ, արյունլվա,
Դառնակոշկոճ մարմինեդ, Արևելքին վրա համակ
Խավարապատ, փրկության համար զոհին ու դահճին,
Պիտի բխին նորոգիչ Ազատության գինին հուր,
Արդարության հայը սուրբ, և լուսափաղփ ղերթ արփին՝
Եղբայրության վեհանուշ ճաճանչն երիցս մաքուր։

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Դյուցազներգություն, այո՛, և ոչ ողբերգություն։
Սև են լուրերը, որ մեր երկրեն կուգան,
Ավելի սև, քան հավաքված սևությունը բոլոր գիշերներուն,
Որ աշխարհի ծնունդեն ի վեր արևն սքողեցին...
Գետերը հիմա կարմիր են հոն՝ մեր մարտիրոսներուն
արյունովը,
— Կարծես պողոտաները Մահվան՝ ծածկած վարդերով
ցավագին։
Դաշտերը հիմա ճերմակ են հոն՝ շեղջակոտմամբը մերկ
դիակներուն,
— Կարծես պարտեզները Մահվան՝ դալկասուգ շուշաններով
ծաղկազարդ։
Լիճերը հոն մեծ աչքեր են դարձած՝ արցունքով լեցուն,
Որ իրենց շուրջ տիրող ամայության վրա կուլան։
Լեռները, իրենց ոտքը կատարված ոճիրեն դողահար,
Խելահեղ հովերով իրենց սարսափը կաղաղակեն աշխարհի
չորս ծագերուն,
Ու կցցեն, կերկարեն իրենց ալևոր գլուխները թափուր միջոցին մեջ,
Փնտրելով Աստվածը, որ պիտի գա լուծել վրեժն այդ անմեղներուն...
Աշխարհ ամբողջ, Արհավիրքի տիրապետության տակ կքած,
Կցնցվի այս գերագույն արհավիրքեն, որ իր մեծությամբը
կգերազանցե բոլոր սխրագործությունները չարին.

Աշխարհ ամբողջ, զարհուրած, նայվածքները կդարձնե դեպի
հոն, ու բոլոր բերանները կգոչեն՝ «Անօրինակ ողբեր-
գություն, մեծագո՛ւյնը ողբերգությանց...»
Ես կըսեմ՝ դյուցազներգություն ու մեծագո՛ւյնը դյուցազն-
երգությանց։

Ու եթե չեք հավատար, պահ մը ձեր աչքերը փակեցեք
ներկա ժամու տեսարանին,
Եվ դարերու անհուն կտավին վրա տեսեք պարզվիլը հերոսական վեպին,
զոր այդ ժողովուրդը հոն գծած է։

Ահա հինավուրց օրերը պատմության առավոտին.
Արևմուտքի ցեղ մը կբաժնվի հելլենական հողերուն արծաթափայլ
ափունքներեն,

Ծովը կանցնի, ոտք կդնե հողին վրա մռայլ Ասիո,
Կքալե արկածախնդիր ու խրոխտ գնացքով մը,
Ու կերթա մինչև դյութական ափունքը Վանա մեծ լճին՝
Գեղեցկագույն ծաղիկներով ու հնագույն ավանդավեպերով զարդարված,
Մինչև ոտքը վեհաշուք Արարատին, սպիտակահեր նահապետին, որ
Արևելքին կնախագահե,

Հոն կկանգնե իր վրանը,
Կհավաքե իր շուրջ և կձուլե իր մեջ
Բնիկ ժողովուրդները, որոնց վաղնջական արությունը
Կմարտնչեր դարերե իվեր արյունռուշտ Ասորեստանին դեմ,
Ու կըսե՝ «Այստեղ է իմ տունս,
Այստեղ պիտի կատարեմ իմ առաքելությունս,
Բարբարոսներուն քարոզել Արևմուտքի աղատ ոգին,
Արևմուտքին ծանոթացնել մոգություններն Ասիո—
Մինչև այն օրն, ուր Արևելք ու Արևմուտք
Ազատության հաղթական լույսին մեջ եղբայրանան»։
Եվ ահա կծնի ազգը՝ ուղեղով Արևմուտք, սրտով Արևելք,
Թվով փոքր, ճակատագրով մեծ,
Փառավոր, այլև դժնդակ գործի մը կոչված։
Բոլոր բռնակալությունները կուգան անոր վրա հարձակիլ,
Բոլորը, խավարչտին Ասիայեն, տիրամոլության հին վառարան,
Ու նույնիսկ Եվրոպայեն, Ազատության հայրենիք,
Բոլոր բռնակալությունները, ինչպես կոհակներ ահագին,
Կուգան զայն ընկլուզել, հետո կընկրկին, կցրվին, կցնդին։
Եվ ան կվերերևնա, միշտ կենդանի, ինչպես ժայռ մը անխորտակելի։

Հսկա կայսրություններ կփլչին անոր շուրջը,
Անոր առույգ բազուկը, անխոնջ,
Կպահպանե, կվերաշինե, կհավերժացնե պապենական տունը։
Եվ ահա կծագի արշալույսը Նոր Աշխարհին.
Արարատը, որ ատենով տապանն ընդունեցավ,
Կընդունի նոր այգուն ճառագայթներն առաջին,
Ավելի մեծ քարն իր Մեծ Տիգրանը, որ իր մականին տակ խոնարհեցուց
Արևելքը բովանդակ,
Կանգնեց ոստան մը հզոր՝ հելլեն արվեստով համակ պճնված,
Ու միայն Հռոմեն պարտվեցավ,
Ավելի մեծ քան իր հերոսները բոլոր,
Որ, տոհմական թագը գլուխնին,
Պատերազմի դաշտին վրա ցեղին արիությունը պանծացուցին,
Ավելի մեծ եղավ այդ ժողովուրդն ինքն իսկ, երբ առաջինը՝
ժողովուրդներուն մեջ,
Իր արքաներեն մեկուն ճակտին վրա ցցեց
Խորհրդանշանը եղբայրության և ազատության կրոնքին,
Զոր պղատոնական ոգին հղաջավ և զոր Գալիլեացին
աստվածայնորեն ապրեցավ,
Նշանը սիրո և արդարության,
Պատկերը ոգեկան ուժին,
Որ կկանգներ, ինչպես արևը խավարին դեմ,
Ընդդեմ հին աշխարհի վարդապետությանց՝
Բիրտ Ուժի երկրպագու,
Ատելության ու անարդարության վրա հիմնված։
Եվ ահա, այնուհետև, բոլոր հրոսներն Ասիո,
Որ, ինչպես ամպեր մրրկածին, կարկուտով ուռած և կայծակներով
բեռնավոր,
Այդ ցեղին վրա կխուժեն...
Երկար ատեն ան կմաքառի ու ամբողջ աշխարհի մը կդիմադրե,
Կմաքառի ու նոր Գաղափարը կպաշտպանե,
Կտառապի տառապանքն ամբողջ, ու կդիմանա.
Իր հոշոտված մարմինը կփլչի հուսկ ապա, բայց հոգին կմնա անվթար.
Ան պաշարված, ընկլուզված է խավարով, բայց իր ներքին լույսը կմնա
անշեջ.
Ան կկրե բոլոր մահերն ու չի մեռնիր։
Ուրիշ ժողովուրդներ իր շուրջը գլուխ կծռեն Բռնության,

Իրենց հոգին կծախեն, իրենց կրոնքը կուրանան,
Տառապանքն զերծանելու համար տիրող ցեղերուն հավատքը կընդգրկեն,
Կտարափոխվին ու կայլասերին.
Ան իր ինքնության դեմ դավաճանելեն նախամեծար կհամարե
մարտիրոսությունը,
Ու տառապանքին մեջեն կսպասե Արդարության ապագային,
Կսպասե անոր, վստահ իր հարությանը
Եվ ամբողջ աշխարհի մեջ Ազատության հաղթանակին։
Սուրը փշրված է ձեռքին մեջ,
Բազուկները ծանրաբեռնված են շղթաներով,
Ջանիկա ստրուկ են դարձուցած,
Ու զայն կծաղրեն,
Կարհամարհեն զայն,
Եվ անոր ճակտին քրտինքը բրտորեն կշահագործեն,
Բայց ան ստրուկ չէ, քանի որ հոգին մնացած է ազատ։
Իր շղթայակապ ձեռքերովը
Ան գեղեցկություն կստեղծե,
Արևելքը կպճնե դյութական պալատներով ու տաճարներով,
Զայն նուրբ քանդակներով ու շնորհալի նկարներով կկիտվածազարդե,
Կհորինե կերպասներ, ուր լուսնի լույսը կարծես սևեռված է,
Ու կապերտներ, ուր երազի դրախտներ կհայելանան կարծես,
Ու պատմուճաններ, ուր կփողփողին Արևելքի իրիկուններուն
վերջալույսները շքեղ,
Արվեստի պերճությամբ մը կպայծառացնե իր բարբարոս տերերուն
կյանքը կոպիտ,
Ամենեն աղվոր ծաղիկները, ամենեն մաքուր ու մտերիմ ծաղիկներն
իր հոգիին՝
Կպահե, կզարգացնե, կմշակե
Իր հովիտներուն մեկուսացյալ անկյուններուն մեջ, ծոցն իր շինական
խրճիթներուն ամփոփման
Կամ խորը մենավոր բարձունքներու վրա բունված իր վանքերուն,
Ջերմությանը տակ իր արցունքներուն, իր երազներուն և իր հավատքին։
Ո՜վ լուսեղեն հոսումը, մաքուր ինչպես աղբյուրները լեռներուն,
Իր բանաստեղծությանը, սրտե համակ ժայթքած,
Ո՜վ կենսախայտ ու սիրուն քմայքը սրբազան ձեռագիրները զարդարող
իր երփնագեղ պատկերներուն.
Ո՜վ վսեմ տրտմությունը միստիկական տաղերուն, ճախրանքներն ու
վերացումները՝

Թևերուն վրա ամենեն հրեշտակային մեղեդիներուն,
Հեռու զազիր տեսարանեն աշխարհի անգթությանց,
Դեպի արդարության Աղբյուրին լույսն անարատ,
Ու վեհաշունչ ողբերը թշվառության վրա մարդկային,
Ու ճիչերը գերագույն տառապանքի,
Որոնք, ամենեն սև ժամերուն, կբարձրանան, հեծեծող կոչերով, դեպի Դատավորը վերին,

Ու սրափողումը հույսի պայծառ ազաղակին, Քրիստոս հարյա՜վ,
Որ, խրոխտ հանկերգի մը պես, կանցնի այդ ցավի սաղմոսներուն մեջեն
Ու տիրող աղջամուղջներուն մեջտեղը
Արդարության հաղթանակին ապահովությունը կգոռա,
Ու կաթոգին շնորհը, գողտր մաքրությունը գեղջկական երգերուն,
Ո՜վ անուշ օրորները մայրերուն, լավագույն ապագային տեսիլովը լուսավորված,

Ու հովվերգությունները երիտասարդ սիրտերուն,
Որոնք վարդ բոցովն իրենց տարփանքներուն ամոթխած
Կլուսավորեն թախծագին ստվերը ցեղին ճակատագրին,
Ու հոգեզմայլ ներբողը
Աստուծմե ստեղծված հրաշահեղց տիեզերքին,
Զոր մարդուն շարությունը դժոխքի փոխած է.
Ամբողջ նվիրական դայլայլ մը ոգեկան սոխակներու,
Որ կթափի, ինչպես ցող մը մաքրագործման և ինչպես անձրև մը օրհնության,

Օդը ժանտահոտ դարձնող ոճիրին ու փտության մեջեն,
Երկրիս վրա թշվառ ու մարդկության վրա ցավատանջ,
Ու երբ կդադրի երգելե,
«Արդարություն» կաղաղակե աշխարհի հզորներուն,
Արդարություն կհայցե, արդարություն կպահանջե
Աշխարհի ազատ ազգերեն.
Նույնիսկ իր բռնավորներուն
Մեղմ ու համոզկեր լեզվով մը
Կփորձե արդարություն ուսուցանել.
Ու մերթ, մոլեգին պայքարով մը հուսահատ,
Կճգնի զայն ստանալ...
Բազուկը շղթայակապ,
Ուզելով իր կապանքները փշրել,
Կուզե նաև փշրել կապանքները, ավելի ծանր,
Որ կկաշկանդեն ու կանդամալուծեն հոգին իր բռնակալներուն.

Լույս կուզե ամենուն համար,
Ազատություն Արևելքին համար բովանդակ,
Արդարություն աշխարհի համար ամբողջ։
Թանձր անգթությունը գաղանասիրտ բարբարոսներուն
Կրկնապատկված մոլեգնությամբ զինքը կկոխոտե...
Աշխարհ անտարբեր անոր նահատակումը կդիտե.
Աշխարհ զայն չի ճանչնար, աշխարհ զայն չի հասկնար...
Նույնիսկ ազատ ազգերը,
Եսականության գեշ գինիովը հարբած,
Կքամահրեն զայն ու կծաղրեն։
(Քանի մը արդար հոգիներ միայն կլսեն անոր ճիչը,
Հայն կըմբռնեն,
Ու եղբայրաբար կհակին դեպի ան, մխիթարելու համար զայն ու պաշտելու...)

Եվ ահա ցնորատեսիլ շվայտությունը Ոճիրին...
Ահա պայծառ արևուն տակ, բաց օդին, օր ցերեկով, խաղաղության ատեն,

Յուրտ ու հաշվված գործադրումը
Խելագար ծրագրին
Ազգի մը զավակներուն մեծազանգված խողխողմամբ անոր հոգին ոգանելու...

Ու քաղաքակիրթ ազգերը
Անշարժ հանդիսատես կըլլան այդ հրեշային սպանդին,
Ինչպես թատրոնի մեջ մարդ խաղ մը կդիտե...

Այսօր ոճիրը զոր անպատիժ թողուցին,
Տարապայմանորեն աճած, մեծցած, բազմապատկված,
Կսպառնա աշխարհիս...
Զարը, խրախուսված, փաղաքշված, շոգոմված,
Կուզե հիմա իր տիրապետությունը տարածել
Մարդկության վրա բովանդակ...
Ահա անկարեկիր հանդիսականները իրենք իսկ հարձակման ենթարկված,
Որ զինվոր են հիմա,
Որպեսզի պայքարին դուռներուն դեմ դահիճներուն,
Որպեսզի սանձեն Ոճիրը,
Որպեսզի Զարը զգետնեն...
Եվ անսահման բանակին մեջ Ազատության զինվորներուն
Կտեսնվի խումբ մը քու զավակներուդ, ո՜վ Հայոց ազգ ալևոր

Ու երբ փարատին ամպերն
Այս ահավոր փոթորկին,
Երբ երկինքը շողացնե կապույտ մը անարատ,
— Հովերը այն ատեն պիտի տարվին դատնան ու վին,
Երգելու համար Հաղթանակը Ոգիին,—
Ազգերը, որ Ազատության համար կկռվին,
Պիտի գան քեզ ողջունել, ա՛զգ Հայոց,
Հինավուրց խորհրդանշան անպարտելի Հոգվույն,
Եվ քու ճակտիդ վրա արյունաթաթավ
Պիտի դնեն դափնին անթառամ...
Այն ատեն դուն պիտի կանգնիս ավերակներուդ մեջեն,
Պիտի ցցվիս դարավոր հերոսուհիի հասակիդ բարձրությամբն ամբողջ,
Եվ քու ծեր ձեռքերդ, քու բարի ձեռքերդ, լայնաբաց,
Նորաստեղծ աշխարհը պիտի օրհնեն։

1892—1917

ԱՐՇԱԼՈՒՅՍ

ԱԴԱՄԻ ՎԻՇՏԸ

Լեռներու ստորոտ, մարմանդին վրա,
Շուքին տակ ծառի մը բազկատարած,
Վճիտ առվակի մը մոտ արծաթյա
Եվա մեղկորեն էր ընկողմանած։

Բոցակեզ արևն հորիզոնեն վեր
Կ՚ելլեր հաղթական. զեփյուռն անուշակ
Կպարզեր օդին մեջ փափուկ թևեր,
Վարդը կխնկեր, ու կ՚երգեր սոխակ։

Բայց ո՛չ արևին, ո՛չ ծաղիկներուն
Կնայեր Եվա. ուժով կսեղմեր
Իր թևերուն մեջ մանկիկ մը սիրուն,
Խնձոր այտերով, խաժակն, ոսկեհեր։

Որ առաջին կարդին վրա կմասնակցի կռվին...
Եվ անոնց ձեռքերն են, անոնց ձեռքերն են,
Որ կբռնեն դրոշը սուրբ պայքարին...
Սև են լուրերը, որ մեր երկրեն կուգան,
(Աղետը, որ այս անգամ գերազանցեց բոլոր աղետներն անցյալին),
Բայց այս սեությունը նվազ սև է, քան սեությունը մարդկային խղճին,
Որ երեկ, կարող ըլլալով գործել, անշարժ մնաց ժողովրդի մը
խողխողման հանդեպ...
Եվ աղետը, որ Հայաստան աշխարհն այսօր կհարվածե, նվազ
քստմնելի է,
Քան ինչ որ պիտի ըլլար աղետը մարդկության մը որուն մեջ խիղճը
մեռած ըլլար ընդմիշտ...

Մեծ ջրհեղեղն է արյան,
Ջրհեղեղը քավումի,
Որ աշխարհը կողողե...
Կոռնան հովերն արհավիրքի,
Ինչպես փողերն աշխարհի կատարածին.
Ու կատարածն է արդարև, կատարածը որ կմոտենա,
Եսականության ու բռնության աշխարհին...
Արթնցեր է ազնվությունը մարդկային,
Կանգներ է իր արիության մեջ համակ,
Որպեսզի ընդմիշտ սպաննե
Մարդկային միսով ապրող
Վաղնջուց վիշապը.
Հեղաշրջումն է վերանորոգիչ.
Մարդկային անասունը պետք է մեռնի
Հարվածներուն տակ Ոգի-Մարդուն.
Ուժին մռայլ շրջանը պիտի փակվի,
Եվ ահա գալուստը պայծառ Բանականության տիրապետումին։
Վաղը, երբ չարը պարտված ըլլա,
Երազված դարագլուխին ծիածանը
Պիտի ծագի.
Ան պիտի ծագի վերստին
Քու վեհավառ Արարատիդ կատարին,
Ո՞վ երկիր ցավի ու հավատքի,
Պիտի ծագի ու տարածվի ու շողա
Նոր մարդկության մը վրա,
Մարդկության մը վրա, Ոճիրին աղտեղումեն մաքրված

Կշարժեր անդուլ մանկիկն անհանդարտ,
Խաղալով մանրիկ մատներովն իր մոր
Գանգուրներուն հետ. և ան, գոհ, զվարթ
Կհամբուրեր զայն, ժպտելով անոր։

Ծառի մ'ետևեն Ադամ կդիտեր
Այդ պատկերն աղու և շնորհալի,
Ու լուռ, տրտմությամբ լեցված, կմտորեր՝
Աչքն իր մանկիկին հառած ծաղկատեր։

Հանկարծ արցունքով աչքերը լեցուն,
Հառաչ մը կուրծքեն թռավ թախծալեր,
Ճակտին զարկավ ձեռն ու շեշտով մը դառն՝
«Տե՛ր,— ըսավ,— ինչո՞ւ մայրը մ'ինձ չտվիր»։

ԿԱՊՈՒՑՏ ՀՆՉՅԱԿ

Աստղերուն պես, որոնց շնորհն ավելի քաղցր է և սուրբ,
Որովհետև հեռավոր և անմատույց մեր ձեռքին,
Եվ որոնց ջինջ բիբերուն ժպիտն աղու, գերանուրը.
Աննյութ տենչով մը միայն կթոթռացնե մեր հոգին,

Աստղերուն պես, գողտրաղջիկ, մեկուսացի՛ր, հեռացի՛ր,
Թև առ ու վե՛ր բարձրացիր կրքերու թանձր ամպերեն.
Թույլ մի՛ տար, որ շրթներուդ գաղջ հսկայքերը գազիր,
Թույլ մի՛ տար, որ ցանկությունք ծոցիդ վարդերը պղծեն։

Փաթթե՛ մարմինդ ու հոգիդ քողերու մեջ սպիտակ.
Շուշա՛ն եղիր, տեսլացի՛ր. թող մեջդ կինն անհետի
Ու երևան գա հրեշտակն, ամբիծ, թեթև, լո՛ւսս հատակ.

Եվ սերդ թող սրտիս խորն, ամենեն խորն հասատուվի,
Ինչպես պատկե՛րը Կույսին՝ մատուռին մեջ առանձին,
Որուն մարդիկ ծնրադիր, ադաթքներով կմերձին։

ՍԻՐՈ ԾԻՀ

Օ՜հ, կայծակը, որ ամպերեն
Ջիկզակելով կսլանա
Եվ որ, հսկա օձ հրեղեն,
Կաղնիներուն կսպառնա,

Կրնա՞ հանկարծ այերին մեջ
Կասիլ, մնալ առկախյալ,
Կամ խոլ վազքին իր տալով վերջ՝
Կրնա՞ երկինքը դառնալ...

Եվ սա հեղեղն ամեհի,
Որ դաշտերը կ'ողողե,
Որ ժայռերուն դեմ կկռվի,
Ընդերքն հողին կպեղե,

Կրնա՞ միթե, փրփրադեզ
Ահեղ սողունն այդ հեղուկ,
Կրնա՞ սանձել արծաթագեմ
Իր կոհակներն հեղհեղուկ...

Իմ սրտիս մեջ ալ ինկավ շանթ,
Հեղեղք հոգիս ողողեցին.
Մնա՞ք բարով, խինդ, հույս ու խանդ,
Ձիս դրժոխքին մեջ թաղեցին...

ՏԱՂ

Անո՜ւշիկ աղջիկ, քեզ կգտնեմ ամեն տեղ.
Երբ գիշերանց հառեմ աչքերս աստղերուն,
Ա՛յնքան ջինջ են, ա՛յնպես քնքուշ և անմեղ,
Որ կկարծեմ անոնց լույսին մեջ սիրուն
Տեսնել նայվածքդ բյուրեղ։

Ծառերու տակ երբ որ ելլեմ խրթկվան
Ման գալ անունդ հիմարաբար կրկնելով,

Այն փայփայիչ նվագն աղվոր խոլական,
Զոր ոստերուն մեջեն կ'երգե սյուքը զով,
Ինձ կթվի ձայնդ աննման։

Առավոտուն, երբ երկնքին մեջ վճիտ
Պատուհանես դիտեմ ծնունդն արեգին,
Զեփյուռը, շունչ Արշալույսին վարդաժպի,
Որ իմ մազերս կուգա շոյել մեղմագին,
Կուտա սարսուռն համբույրիդ։

ՈՐԲՈՒԿԸ

Այնպես մութ էր այն գիշերն,
Որ իրարու ականջեն
Կփսփսային հրեշտակներն՝
«Ինչպե՞ս իջնենք երկնքեն»։

Այնպես ցուրտ էր այն գիշերն,
Որ սուր ձաղկին տակ հովուն
Կդողային մերկ ծառերն՝
Արձրկելով ողբ մ'անհուն։

Ելջանիկներն իրենց տան
Մեկ, շուրջ շողուն սեղանին,
Կաղանդին տոնն աննման
Կտոնեին ցնծագին։

Փողոցի մը մեջեն լայն
Որբ տղա մը, միս-մինակ,
Սավերի մը պես անձայն,
Կ'անցներ, խոհուն, գլխահակ։

Մանր թախիծ մ'իր դեմքին
Վրա, մռայլ, կփրուվեր.
Գիշերն աղվոր Կաղանդին
Իրեն մահվան էր գիշեր։

Վերցուց աչքերն ու տեսավ
Տուներուն մեջ լուսավառ
Զվարթություն այն ամբավ,
Զոր Կաղանդն հոն կտեղար։

Եվ իր փոքրիկ խեղճ հոգին
Այնպես խորունկ հուզվեցավ,
Որ աչքն հառած երկնքին,
Լալով աղոթք մը ըրավ։

Հանկարծ թանձր մութին մեջ,
Շուշանի պես սպիտակ,
Բացած թևեր լայն ու պերճ
Երևցավ վեհ մեկ հրեշտակ։

Գութն էր, պաշտպան խեղճերուն,
Զոր կասեցնել չեն կարող
Ցուրտն ու հովն ու մթություն
Եվ Մա՛հն իսկ, Մա՛հը լափող։

«Ըսե՛ ինձ, ո՞վ հեք մանկիկ,
Որ դառնորեն կ'արտասվես,
Ի՞նչ կբաղձա քու սրտիկ,
Ըսե, կարող եմ տալ քեզ,

«Աղվոր հագո՞ւստ կամ պատկեր,
Շաքա՞ր և կամ խաղալի՞ք,
Կ'ուզե՞ս անուշ խորտիկներ
Կամ հյութալից համեղ միրգ»։

— Երբ իմ մայրիկս ողջ էր դեռ,
Ըսավ որբուկն հրեշտակին,
Ձիս կգրկեր կպագներ,
Գիշերն երբ գար Կաղանդին։

Բարի՛ հրեշտակ, չեմ ուզեր
Խաղալիք կամ զգեստ մաքուր,
Չեմ ուզեր միրգ կամ պատկեր,
Մորըս համբյո՛ւրն ինծի տուր։

ԵՐԱԶ

Հեռավոր ու ամայի
Ծովերու մեջտեղ
Ես ունենալ կուզեի
Պալատ մը բյուրեղ.

Եվ երթայինք միասին
Քեզ հետ, սիրական,
Թաղել մեր սերն այդ բույնին
Մեջ առանձնության։

Մեր շուրջը, գիծ բաժանման
Երկնի և ծովուն,
Խաժ հորիզոն մ'հեշտական
Բոլորեր անհուն։

Հոն պատմեինք իրարու,
Հառած աչք աչքի,
Մեր խոլ երազն օդաչու,
Մեր երազն ոսկի։

Ու մեզ միայն լսեին
Լուռ ժայռերն անշարժ,
Մեզ միմիայն տեսնեին
Ամպերը շղարշ։

Ծովուն շշունչն իր խորին
Երգով վեհափառ
Օրօրեր սե՛րը մերին,
Մինչև մահը գար...

ԱՆՇԵՋ ՀՈՒՐԸ

Արևը հրավառ մայրամուտք ունի,
Կսառի ամռան, շունչեն ձմեռվան.
Մեր հայբույրն, ո՜վ սիրական,
Պիտի երբեք չգտնի։

Դեղնած կթափին տերևներն աշնան,
Կթոշնին վարդեր, միրգեր կհրատին.
Մեր սիրտերը տարփագին
Հավիտյան թարմ պիտի մնան։

Այտեր կթոռոմին, կմարին աչքեր,
Ճակտին վրա անբիծ խորշոմք կփորվին.
Մեր սերն, ո՜վ լույս իմ սրտին,
Պիտի երբեք չբլլա ծեր։

ՑԱՅԳԵՐԳ

Գիշերն ահա իր բարեկամ
Կհոսե ստվերն աշխարհի վրա.
Եկուր նստինք սա ծառին տակ,
Հոս չկա ձայն, հոս մա՛րդ չկա։

Սեփ-սև է մեր շուրջն ամեն բան,
Զունի երկինքն աստղ ու լուսին.
Խաղաղությունն ահա անհուն.
Լուռ է թռչունն ու լուռ քամին։

Մոռնա՛նք, ամե՛ն բան հոս մոռնանք,
Մոռնա՛նք երեկն, այսօր ու վաղն,
Մոռնա՛նք ցավերն, անձկությունները
Եվ կյանքի տենդն ու մահվան պաղն։

Ճակատդ ի վար, իմ սիրելի՛ս,
Զգե թափե՛ մազերդ առա՛տ,
Ու մի՛ խոսիր. գիշերին պես
Եղի՛ր լռին ու մռայլապատ։

Ես քու ոտքիդ տակ ծնրադրած,
Գլուխս ծոցիդ, աչքերս փակ,
Մունջ ու անշարժ պիտ՝ունկնդրեմ
Սրտիդ տրոփին նվագն անուշակ։

ԻՐԻԿՎԱՆ ԵՐԳԸ

Իրիկվաններն ինչո՞ւ հոգին
Կզգա թախիծ մ'անսահման,
Արդյոք սո՞ւգն է եղերական
Մահվանն անուշ արևին։

Խավարին հետ, որ երկնքին
Կհեղեղե հորդառատ,
Սրտին մեջ ալ մառախլապատ
Տրտմություններ կ'անձրևեն։

Օրվան խոնչենքն ի հուշ կ'ածե
Սին հոգնությունը կյանքի.
Եվ աչքն, ուր քունը կհածի,
Մահվան պաղ քունը կ'ըգե։

Կմեռնի լույսն, ու կմարին
Ձայներն, աշխարհը կխոկա.
Եվ հոգույն մեջ, որ կմութնա,
Կտժգունի բոցն հույսին։

Կ'ամփոփվի մարդ, հուշք կ'արթննան,
Անցյալին հուշք շարագույն.
Ու վաղը, վա՜ղն, ո՜վ ձանձրություն,
Պետք է կրկնել միշտ նույն բան...

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Եկո՜ւր ծպտինք, սիրելի՛ս,
Փոխենք օրվան մը համար,
Երազի մը մեջ հիմար,
Դուն սիրտդ ու ես իմ հոգիս։

Ես չար ըլլամ, դուն բարի.
Դուն հեգնությունդ ծածկես,
Ու ես սրբեմ աչքերես
Արցունքներու ցողն աղի։

Պահ մ'էակն այն չըլլաս ցուրտ,
Որ զիս ա՜յնքան կ'չարչարե,
Ու հոգվույդ մեջ մարմարե
Իր դողն անուշ թափե գութ։

Եվ յուրացնեմ ես պեսպես
Քմահաճույքներն այլանդակ,
Որոնց ցանցով դըժընդակ
Զիս ամեն օր կտանջես։

Օ՛ր մը, գեթ օ՜ր մ', հասկցա՜ր,
Կ'ուզեմ փոխենք դերերնիս,
Դուն զոհն ըլլաս, սիրելի՛ս,
Ես դահիճը սիրտով քար։

•

ՊԵՊԵՔԸ

Պերճ ու զարդարուն խանութի մ'առջև,
Ուր խաղալիքներ կվաճառվեին,
Աղջընակ մը, հին զգեստներով տձև
Կեցած կդիտեր, լուռ, զմայլագին։

Գլխուն շուրջ աղտոտ մաղեր գանգրավոր
Կխովանային, թափած ուսն ի վար.
Ոտքերն էին մերկ, ցեխոտ ու խոշոր,
Թևերը վտիտ և անպատսպար։

Մեծ ապակիին ետև զետեղված՝
Թանկ առարկաներ, փաղփուն, գունագեղ,
Իրենց դյութական փայլը ճոխապանծ
Կտարածեին, շլացուցիչ, շքեղ։

Կաղանդի նվերներ, պեսպես ու գողտրիկ,
Ոսկեթել ծառեր կեղծ պտուղներով,
Անմուխ շոգեկառք, անգեղգեղ թռչնիկ,
Հովիվ մ'ու գառներ, ծաղկալից կողով։

Դեռ ինչե՞ր, ինչե՞ր, խոհանոց մ'ամբողջ,
Ուր կշարվին սան, շերեփ ու պնակ,
Պառավ մ', որ մատով կկարե դողդոջ,
Պարոն մ', որ անձայն կքերթե ջութակ։

Բայց ամենեն վեր, ամենեն սիրուն,
Պեպեք մ'է բազմեր թավշե բարձի վրա,
Նայվածքն այնպես տաք, այնպես վառվռուն,
Որ կարծես կ'ապրի էակն այն գաճյա։

Գլխարկին մեջեն լայն ու ծաղկազարդ
Խարտյաշ խոպոպներ թեթև կթափին,
Շրջանակելով փոքրիկ դեմք մը վարդ,
Ուր կպարզե քիթն իր թևը նրբին։

Շրջազգեստին տակ, որ կծավալե
Իր շուշանաթույր փառքը հրաշազան,
Կ'երևան ոտքերն՝ հագած մետաքսե
Ծակոտկեն գուլպա, մուճակ ոսկեցան։

Կժպտի պեպեքն, այտերն հեշտության
Կարծես սարսուռով մ'համակ թրթռուն,
Աչքերը խոշոր, սև՝ ոսքի նման,
Շրթունքը փայլուն, վառ, կեռասի գույն։

Տրտմության հառաչ մ'աղջկան վտիտ
Կուրծքը կ'ուռեցնե, և մինչ արցունքներ
Կլեցնեն աչքերն անփայլ անփթիթ,
«Մե՞ղք, կ'ըսե, մե՞ղք, որ պեպեք չեմ եղեր»։

ԵՂԵՐԵՐԳ

Երկինքը սև, սև մուշտակներ թող հագնի,
Թող լալագին ոռնան հովեր ձմեռայնի,
Թող բնությունն ավեր դառնա սգատեսիլ,
Թող ամեն բան մթնե, պաղի, դժգունի.
Կուզեմ մահու չափ տրտմիլ։

Անձրևն օդին մեջ թող կախե, երերուն,
Գորշ վարագույրն իր տխրանվագ ջուրերուն,
Թող չունենան ծառերն ոստեր գեղածիլ,
Փրփրակուտակ թող մռնչե ծովն անհուն.
Կուզեմ մահու չափ տրտմիլ։

Գերեզմաններոց մը վիս տարեք, ուր նոճիք
Սև սյուներու նման կանգնին ուղղաձիգ.
Թախծության թող զիս ընկլուզե թանձր ալիք.
Թողեք զիս հոն մեռելներուն հետ խոսիլ.
Կուզեմ մահու չափ տրտմիլ։

ԱՍՏՂԵՐԸ

Աստղերը լուռ ցավեր են,
Որոնք կ'այրին հավիտյան,
Արցունքներ ջինջ թախծության
Կախված երկնի բիբերեն։

Գիշերին ծոցն օվկիան
Բոցոտելով քաղցրորեն,
Աստղերը լուռ ցավեր են,
Որոնք կ'այրին հավիտյան։

Անհունին մութ խորերեն,
Աստվածային հրամատյան,
Ամբավ քերթվա՞ծ լուսերփնյան,
Խորհուրդ ու սուգ կծորեն.
Աստղերը լուռ ցավեր են։

ՄԵՌՆԻ՞Ղ

Եղիա Տնմիրճիպաշյանին

Եվ ըսին՝ «Ա՛յս է օրենքն հավերժական անհեղլի,
Պետք է թոռմին ծաղիկներն, պետք է որ ձյունը հալի,
Պետք է խոտե՛րը չորնան ու տերևնե՛րը թափին
Ու մարդը պետք է մեռնի... բայց մահը բառ մըն է սին.

Հյուլեն անմահ է հավետ ձևերու տակ բյուրազան.
Կորուստ չկա, մահ չկա, այլափոխում կա միայն»։

Ո՜վ ամբարիշտ հեգնություն... օ՜հ, մի խաղաք
մահվան հետ.

Մեծ երկաթե պատն է ան, որուն մեր գլո՜ւխը հավետ
Պիտի բաղխի ցավագին. սքողյալ կինն է անսահման,
Որուն շուքը կ'երկննա, կմթագնե մեր ճամփան
Եվ որուն դե՜մքը ոչ ոք տեսած է ցարդ։
Ի՜նչ սփոփ,
Խորհիլ թե կյանքդ ու հոգիդ, խանդերդ, հույզերդ
սրտատրոփ,
Երազ և հուշ ու տենչանք, երգ ու ծիծաղ և արտոսր,
Պիտի ապրին հավիտյան... ձևերու տակ նորանոր։
Ի՜նչ փույթ ինձի, եթե աչքս ըլլա ծաղիկ հոտավետ,
Սիրտս սափոր մը գինի, արյունս առվակ վետ ի վետ.
Իմ ես, որով կ'անջատվին էակներու ամբոխեն,
Որով կզգամ թե գոյ եմ, ո՞ւր պիտ 'երթա այն ատեն.
Ի՞նչ պիտի 'լլա այն էակն, որ այժմ ե՛ս եմ, ե՛ս միայն։

Պիտի կորչի՜... պիտի 'լլա ինձմե ի զատ ամեն բան...
Երբ կխորհիմ թե դառնամ պիտի օր մ'ափ մը մոխիր,
Թե ա՜լ պիտի չլսեմ բնության ձայներն հեշտալիր,
Թե, ո՜վ հրեշտակս, ա՜լ երեսդ պիտի չտեսնեմ հավիտյան,
Թե ալ շրթներս համբույրին պիտի սուրբ բո՜ցը չըզգան,
Թե, ոսկորի բիրտ կտոր, իմ գանկս այլևս խոհերե
Ընդմիշտ թափուր պիտի մնա և փտտած սի՜րտս՝ սերե,
Եվ թե ինձմե վերջը միշտ մարգերուն մեջ ծաղիկներ
Պիտի բուրեն և շողա արևն ոսկեհեր,
Թե պիտի միշտ ժպտի, ջինջ, քաղցր կապույտն երկնքին,
Թե միշտ սոխա՜կը երգե պիտի երգն իր տարփագին,
Այնպիսի ցավ մը վայրագ սիրտս համակ կճմլե,
Որ չեմ ուզեր հավատալ, թե այս բոլորն իրավ է։

Ո՜չ, անիկա, որ կըսե «Մեռնիլ կուզեմ», կստե.
Եվ անձնասպանն, այն պահուն, ուր իր կյանքը կքանդե,
Չի մտածեր։ Ո՞վ ըսեր է, թե մահն է գերագույն
Հեշտանքն, հանգիստն անվրդով, երանավետ քունն անհուն.
Չենք իսկ գիտեր թե իրոք կչքանա՞ լիովին

Մեր էությունն, երբ թաղվի խորը մահվան խավարին։
Թերևս լոկ զըրկումն է զորութենեն ապրելու,
Ու փայտացած սառուցիկ մարմնին մեջ սիրելու
Տենչանքն անուշ ու կարոտն ողջ կմընան հավիտյան։
Ինձ կթվի՝ ոսկորներս պիտի հողին մեջ սարսռան,
Երբ ծաղիկներ բուսնին վրաս և երբ զգամ կանացի
Ոտք մը մանրիկ, որ շիրիմիս վրա կոխե և անցնի...

ՄՌԱՅԼ ՀՆՉՅԱԿ

Գիշերն ըլլալ կ'ուզեի, անաստղ ու թանձր գիշերն,
Եվ թուխ անհուն վերարկուիս ծալքերուն մեջ պարփակել
Քուկին մարմնիկդ հրեշտակի և իր ամբիծ հրապույրներն,
Զոր նայվածքներ պիղծ կդողնան միշտ անարգել։

Ես Հուրն ըլլալ կ'ուզեի, տարր անարատ ու վայրագ,
Եվ պատել քեզ անհամար բազուկներով շառաթույր,
Լափել մազերդ ու մոխիր դարձընել լանջդ անապակ,
Մարդոց բերնին անմատույց ընել համբույրդ երկնաբույր։

Կ'ուզեի Մահն ըլլալ, մեծ տարփավորն այն նախանձոտ
Ու թևերուս մեջ պահել քեզ բանտված հավիտյան,
Հեռու գռեհիկ այս կյանքեն, որ աղբյուս է գարշահոտ,

Թաղվիլ քեզ հետ հողին կույս մենության մեջ անսահման,
Քեզ պարուրել առհավետ սիրուս մեջ ջինջ և ազատ,
Որպեսզի ոչ ոք երբեք ունենա քեզ ինձմե զատ։

ՁԱՐԹՈՆՔ

Կվերածնի հուրն Ոչընչին արգանդեն,
Կկարմրին կատարները լեռներուն,
Կհագնի ծո՜վը ծիրանի սարսռուն,
Այգուն սլաքներն են, որ գիշերն կքանդեն։

Կկարմրին կատարները լեռներուն,
Բոցեր կ'ժայթքին երկընքին մռայլ անդունդեն,
Այգուն սլաքներն են, որ գիշերն կքանդեն,
Պատռելով մութն ու վանելով զայն հեռուն։

Բոցեր կ'ժայթքին երկընքին մռայլ անդունդեն,
Կցնդի ստվերն ալիքներով գալարուն.
Պատռելով մութն ու վանելով զայն հեռուն,
Արևը դուրս կնետվի խոր իր բանտեն։

Կցնդի ստվերն ալիքներով գալարուն,
Կ'արթննա սյուքն ու թռչուններն կքերթեն.
Արևը դուրս կնետվի խոր իր բանտեն.
Բաղցր պահն է, կյանքի զարթո՛նքն է սիրուն։

ՓԱԽՈՒՍՏ

Նստինք նավակ մը, եկո՛ւր,
Լուսնին քաղցր հոգին
Մեր երկնքին մեջ մաքուր
Կայրի տարփագին։

Աղվոր մազերդ ուսդ ի վար
Թափե՛ հովերուն.
Թող մեզ տանին մեղմավար
Ջուրերն օրորուն։

Քաղաքեն, ուր կզեռան
Մարդիկ, հեռանա՛նք.
Հոն պզտիկ է ամեն բան,
Ամեն բան՝ գարշանք։

Տե՛ս հորիզոնն, որ հեռուն
Կերկարի անդույր,
Լուսնին անճառ շողերուն
Ներքև լուսաթույր։

Մեր շուրջ ափե՛րը փախչին
Ու մենք հոն սլանա՛նք,
Ուր կկանչե Անուրջին
Հրավերն հրավանկ։

Ամպհովանի մեղ երկինք
Ու ծովն անկողին.
Թող զեփյուռներն հեշտասրինգ
Անուշ կողկողին։

Աստղերն իրենց բույնին խոր
Քնանան խաղաղ.
Պառկին ջուրերն անժխոր
Ու միապաղաղ։

Բոլոր ձայները մարին,
Շարժումը դադրի.
Ծծենք, մինակ, անհունին
Հեշտանքը վայրի։

Եվ մենության մեջ այն լուռ,
Մեր սերն, անշղթա,
Պարզելով իր թևը հուր,
Թռչի ու խայտա։

ՀՈՎԸ

Հովն ուղևորն է ծերունի,
Որ հին երգեր կմռմրռա,
Երբ, մենավոր, անռահվիրա,
Անտառներուն մեջեն կանցնի։

Ձայնն համբույրի գգվանք ունի,
Երբ կսահի ծաղկանց վրա,
Հովն ուղևորն է ծերունի,
Որ հին երգեր կմրմրռա։

Բայց երբ ծոցն է օվկիանի,
Կոռնա ինչպես Նիակարա.
Ու ձմեռ գիշեր երբ կսուրա,
Կերգե անեծք մը վայրենի.
Հովն ուղևորն է ծերունի։

ՀԵՔԻԱԹ

Աստված առավ ափ մը լույս,
Խառնեց անոր շիթ մը ցող,
Դրավ հոն կայծ մը շանթեն,
Շաղեց մատովն ըստեղծող։

Հետո մասնիկ մ'առավ փոխ
Աստղերուն լուռ նվագեն,
Միստիկ բույրեն վարդերուն,
Ձեփյուռին խոլ քմայքեն,

Արշալույսին ամոթխած
Շիկնումեն ու խոր տրոփեն
Ծովուն սրտին և նետեց
Այդ զանգվածին մեջ հրեղեն.

Ապա, դեռ հոն չփչած
Իր կենսատու շունչը մեծ,
Գորովի մեջ թաթխեց զայն,
Խենթությունով համեմեց,

Օծեց կաթիլ մ'արցունքով
Ու վրան սրսկեց հեշտություն,
Եվ ահա ծնավ գողտր ու նուրբ,
Փոքրիկ էակ մը սիրուն։

Կթուչըտեր, բայց թռչուն չէր,
Կբուրեր, բայց չէր ծաղիկ,
Եվ ուներ շունչ մը գգվող,
Թեպետև չէր զեփյուռիկ։

Էակ մ'աղվոր ու մաքուր,
Ինչպես հրեշտակ մ'ոսկեհեր,
Ու դևի պես անառակ,
— Եվ այդ էա՛կը Սե՛րն էր։

ՍՅՈՒՔԸ

Աննյութ թևովն աղվասույլ,
Անտես թռչուն օդեղեն,
Կհածի սյուքն համր ու թույլ։

Նազոտ հրեշտակ մըն է ծույլ,
Ծնած արփվույն մեկ շողեն.
Աննյութ թևովն աղվասույլ։

Երբ այգուն քա՛ղցր նշույլ
Կիյնա մութին ջինջ քողեն,
Կհածի սյուքն համր ու թույլ։

Կերգե կանցնի մեղմ ու հույլ,
Սիրված խոտեն ու ցողեն,
Աննյութ թևովն աղվասույլ։

Փայփայելով հույլ ի հույլ
Ծաղիկները թավշեղեն,
Կհածի սյուքն համր ու թույլ։

Ջքնաղ բուրվառ սիրաբույլ
Երազներու խնկեղեն,
Աննյութ թևովն աղվասույլ
Կհածի սյուքն համր ու թույլ։

ԱՂՋԻԿ ՄԸ ՈՐ ԿԱՂՈԹԵ

Աղջիկ մը որ ծնրագիր
Կաղոթե,
Կարծես թրթռուն է փանդիռ
Արծաթե,
Որմե նրվագ մաղվաթիռ
Կցայտե.

Կամ նուրբ բուրավառ մը ոսկի
Ուրմե վեր

Անուշահոտ կնդրուկի
Ոլորներ
Կբարձրանան մեղմակի
Համբերեր.

Շուշա՛ն, որուն թափանցիկ
Ու փափուկ
Բաժակն ի վեր ուղղաձիգ,
Անշըշուկ,
Կլսանա բույրն համբարձիկ,
Խուսափուկ։

ԱՊԱՍՏԱՆԸ

Երբեմըն միտքս, ստվերամած
Խոհանքներու տակ պարտասած,
Կ'ուզե վիհի մը մեջ մոայլ
Թաղվիլ քնանալ քուն մ'անաղմայլ։

Ձիս գիշերին մեջ պահեցեք.
Անոր պատանքը թանձրամեղ.
Թերևս իր ցուրտ համբույրով սև
Հանդարտեցնե սիրտս հեհեհ։

Հողին ներքև ծածկեցեք գիս,
Մահվան խորհուրդն իմ հոգիիս
Թերևս տա սփոփն ու դադար,
Զոր կփնտրե ան վայրապար։

Բայց չեմ ուզեր իմ վիշտս անգին
Հանձնել շիրմին ու գիշերին,
Բաց գրկիդ վիհն, ով սիրելիս,
Հոն լոկ կրնա հանգչիլ հոգիս։

ԱՏԵ՛, ԲԱՅՑ ՄԻ՛ ՄՈՌՆԱՐ ԶԻՍ

Դիպվածը մեզ օր մ'իրարու հանդիպցուց
Ու սիրեցինք մենք զիրար,
Գտած ըլլալ կարծեցինք՝ ինչ որ վաղուց
Կփնտրեինք անձկաբար,
Հիմա կզգանք որ, ա՜խ, խաբեր ենք մենք մեզ,
Ու կզատվինք, սիրելի՛ս,
Գիտե՞ս քենե ի՞նչ պիտի լոկ խնդրեմ ես,—
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս։

Քանզի սրտով սիրեցի պահ մ'ես զքեզ,
Եվ ինծի դառն է հիմա
Մտածել, թե ոչինչ, ոչի՜նչ իմ սերես
Պիտի սրտիդ մեջ մնա։
Գիտեմ, ամեն բան վերջացած է մեր մեջ,
Բայց չպատռենք վիպակնիս.
Թող գեթ մե՛կ էջ անկից մնա, գեթ մե՛կ էջ.
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս։

Երբ իմ անունս հնչե երբեմն ականջիդ,
Դող մը հոգիդ թող ցնցե.
Թող հիշատակս ստվերե աչքերդ վճիտ,
Եվ համբույրիս իմ բոցե
Հետքը թող միշտ անտես այրի այտիդ վրա.
Մեր տարփանքեն, նազելիս,
Արձագանք մը, ցոլք մը, շուք մը թող մընա.
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս։

Ո՞վ գիտե, ես գուցե եղա հանցավոր,
Գուցե դժբախտ ըրի զքեզ,
Մնա՜ս բարով, աշխարհ լայն է, դուն աղվոր
Այլուր թերևըս գտնես
Երջանկություն, որուն սիրտդ է արժանի.
Երբ նոր սեր մը, պաշտելի՛ս,
Մեր խեղճ սիրույն մոխիրներուն մեջ ծնի,
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս։

ԾԱՂԻԿԸ

Ա.

Երբ կյանքիս վրա ծագեցար,
Սիրտս որ հող մ'էր խոպան,
Կենսազարթույց ցնծության
Խայտաց դողով մը հիմար։

Ծաղիկ մը նուրբ ու ճերմակ,
Հոգվո մը պես թափանցիկ,
Աստղի մը պես գեղեցիկ,
Բուսավ այնտեղ, լո՛ւյս համակ։

Քու շրթներուդ մեկ ժպիտ
Անոր արմատն ոռոգեց
Եվ անոր բաժա՛կը ծծեց
Ճաճանչն արև-նայվածքդ։

Ծավալեցավ հարաճուն
Իմ սրտիս մեջ այն ծաղիկ
Եվ անոր բուրո՛ւմը գողարիկ
Խընկեց հոգիս, կյանքս համբուն։

Մինչև ուղեղս ելավ բույրն,
Ու միտքս, անով արբեցած,
Հորդընձյուղեց օդայած
Երազանքներ երկնագույն։

Բ.

Տե՛ս հիմա, ո՞վ նենգավոր.
Լքված ցողեն և արևեն,
Թառամեցավ տրտմորեն
Քաղցր ծաղիկն այն աղվոր։

Ա՜խ, մեռա՞վ ան, փտտեցա՞վ,
Ու հոտեր գարշ, հեղձական,
Գոլորշաբար բարձրացան
Իր թերթերեն կենսադրավ,

Եվ հոսմամբն իր թույներուն
Եղծեց դիակն այդ ցրտին
Արյունն ամբողջ իմ սրտին,
Որ այժմ հիվանդ, սարսռուն

Զուրկ կյանքի քա՛ղցր հուրեն,
Ուժքամ՝ սառած կուրծքիս տակ,
Տանջանքներու մի վայրագ՝
Կոգեվարի համբորեն։

ԳԵՂՈՆ

Դուն ազնիվ ես ու թանկագին,
Քան ոսկին ու մարմարիոն.
Ճակդիտ աստղե՛ր երկնքին
Պետք է հյուսեն բրաբիոն։

Սիրո կրոնքին դեմքդ է բագին,
Ու ժպիտդ հոն՝ սուրբ ամպիոն,
Որմե սփոփներ, ջինջ, կժայթքին
Ջերթ հակինթ ու սարդիոն։

Թող ոտքիդ տակ, խոնարհ, կըքին
Բոլոր կույսե՛ր բարձրիյոն.
Ցունեցան քույդդ երբեք քուկին՝
Աթենք, Հրոովմ ու Սիոն։

Երազված դրախտն է քու հոգին,
Անմահ սոխակ մը կերգե հոն.
Թող գովք փառքդ զմայլագին՝
Դարերուն մեծ երգեհոն։

ԱՅԳԸ

Աչվրներն անոնց, որ նոր կսիրեն,
Կ'արձակեն մատաղ կրակ մ'անծանոթ,
Ինչպես նորածույլ ոսկի մեկ անոթ
Կվառի արփվույն հրաբորբ համբույրեն։

Այգ մը հոգիին մռայլ վիհերեն
Կծագի և հոն կշողա շիկնոտ.
Աչվրներն անոնց, որ նոր կսիրեն,
Կ'արձակեն մատաղ կրակ մ'անծանոթ։

Կյանքի բոցն է որ այնտեղ ուժգնորեն
Կպատռե մշուշն երազին աղոտ.
Նոր աշխարհներ են, աստղեր նորավոտ,
Որոնք Ոչընչին կժայթքին խորեն,
Աչվրներն անոնց որ նոր կսիրեն։

ՍԻՐԵՐԳ

Քեզ, իմ սիրելի՛ս, երգելու համար,
Ես պիտի ընտրեմ բառերուն մեջեն
Անոնք որ ազնիվ են ինչպես մարմար

Եվ անոնք որ քաղցր ու ճոխ կհնչեն,
Որպեսզի անունդ ապրի հավիտյան՝
Կախված իմ տաղիս անկորուստ փունջեն։

Ու պիտի հավքեմ դեռ բառեր բուրյան,
Բառեր փետուրի պես գիրգ ու փափուկ,
Բառեր խրոխտ և ամբիծ ինչպես քամելիան,

Բառեր, որ ցոլքեր ունին խուսափուկ,
Բառեր, որ աստղի քրթթումներ ունին,
Եվ անոնք, որ նուրբ են զերթ տերեվուկ։

Հետո լույս հրճվանքն անմեղ գարունին
Փոխ պիտի առնեմ, և զեփյուռին սույլ,
Ու դայլայլն անուշ սիրո թռչունին,

Թիթեռնիկներեն իրենց վազքը հույլ,
Այգեն իր ժպիտն ու լուսընկայեն՝
Լայն մազերն արծաթ, թափած հույլ ի հույլ։

Պիտ՝ ոգեմ խոհերն որ կհմայեն,
Սուրբ ճաճանչումով պատկերներն անգայտ,
Երանգներն, ու ջինջ ձայներ կմայեն,

Եվ հիշատակներն, որոնք ճառագայթ
Ունին իրենց մեջ, տենչանքներն աղվոր
Որոնք կթռչին ճախրանքով անգայթ։

Ու պիտի բանամ գոհար տուփը, որ
Կպարփակե նուրբ ոճերն ու ձևեր
Եվ ասույթներն հանդուգն, անսովոր,

Ու պիտի գրեմ. բայն հզոր թևեր
Պիտի ընդլայնե, և մակբայն ոսկի
Թիթեռի մը պես պիտի սլանա վեր,

Պիտի վառի զերթ ցայտք մ'արեգակի՝
Գոյականն, ու խոլ հրթիռի նման՝
Խիզախ ածականը պիտի ժայթքի,

Պիտի գրամ ու լայն շունչով մը հուզման՝
Պիտ երգեմ չքնաղ քու դեմքդ հրագեղ
Եվ քու հոգիիդ շնորհն անսահման։

Եվ դարե ի դար, սիրով բոցակեզ
Սիրտերը մատաղ, երգիս շողյունեն
Քեզ գուշակելով, պիտի պաշտեն քեզ

Ու զիս նախանձով պիտի երանեն։

ՀՈՎԻՆ ԵՐԳԸ

Ես աներևույթ բնակիչն եմ օդին,
Էակ բազմարվեստ ու խորհրդավոր.
Հազար թև ունիմ ու հազար բերան։

Բաց են իմ առջև երկիրն ու երկին.
Խոհերս, երազներս, քմայքներս աղվոր
Անթիվ են, անվերջ ու միշտ այլազան.
Նրբին ամպերուն հետ լուսածորան
Երբ այգուն անգայտ մշուշներն ցնդին,
Կխաղամ, զանոնք կխտղտացնեմ
Իմ փափուկ ու գիրգ փայփայանքներով.
Մերթ ալ ծաղկներուն բաժակը բուրյան
Համբույրովն իմ զով կթրթռացնեմ.
Աղջկանց թեթև խոպոպներն ոսկի
Կսիրեմ շունչովս օրրել մեղմակի,
Ու գգվանքս անոնց այտերուն հավետ
Հրճվանք մըն է քաղցր ու երանավետ.
Ես բանաստեղծ ոգին եմ։

Խորին ամայի անտառներուն մեջ
Ու կկուտակվին խորհուրդք և ստվերք,
Կհնչեցնեմ նվագներս պերճ.
Ծառերն կսիրեն բյուրազան իմ երգ,
Մերթ գողտր ու քնքուշ, մերթ բուռն ու վսեմ,
Մերթ խրոխտ ու գոռ,
Ջոր կբարձրացնեմ
Երբ ծովուն վրայեն կ'անցնիմ սրարշավ,
Լայն բացած անթիվ թևերս թրթռուն.
Շարժուն ջուրերու բանակն այդ ամբավ
Կփոխակերպեմ քնարի մ'անհուն,
Եվ իմ բյուր հազար
Մատներով ճարտար
Իմ խոլ խոյանքիս ներքև օդաճեմ
Հզոր նվագներ անկից կհանեմ.
Ես երաժիշտ ոգին եմ։

ԱՅԳԵՐԳ

Ծառերուն մեջ, մութնուլուսուն,
Սոխակն ելեր է կանուխ,
Ու ստվերին մեջ հորդ ու հոսուն,
Կվազե իր երգին ուխ։

Աչքերը փակ, մըշիկ-մըշիկ
Կքնանա վարդը լուռ.
Վերեն սոխակն իր անուշիկ
Կ'երգե այգե՛րգը տխուր.

Լույսն ելավ շողշող,
Արթնցի՛ր, ելի՛ր.
Այս սերն է մաշող,
Թի՛ր լի՛ր լի՛ր...

Տե՛ս, քանի՞ օր է՝
Դեմքդ լուսալիր
Սիրտըս կփորե,
Թի՛ր լի՛ր լի՛ր...

Քեզի մոտ, քու-քով,
Ո՞ր աչք չի հալիր
Աղի արցունքով,
Թի՛ր լի՛ր լի՛ր...

Գնաց խինդս ինձնե,
Ձեփյուռն իսկ, խոլ իր,
Ձիս կլայնե,
Թի՛ր լի՛ր լի՛ր...

Թիթեռնիկներուն
Երփներանգ ջոլիր
Ըզքեզ օրն ի բուն,
Թի՛ր լի՛ր լի՛ր...

Կպագնեն, մինչդեռ
Հեռուն, սիրտս ալ իր
Կհամբե վիշտեր,
Թի՛ր լի՛ր լի՛ր...

Ծառերուն մեջ ավոտն իր վարդ
Շողերն առատ կթափե,

Ու երկընքեն լույս մը զվարթ
Կ'իյնա, լույս մը սատաֆե։

Եվ զովության մեջ առտվան,
Վարդին վերև, լալագին,
Երկայն ատեն դեռ կճվան
Վանկերն աղու սոխակին։

ՍՈԽԱԿԸ ՄԵՌԱՎ...

Սոխակը մեռավ սեր հեծկլտալեն,
Մառերն որբացած, մելամաղձորեն
Կխոկան լռիկ, գիշերը հիմա
Անկյանք է և պաղ՝ պուրակին վրա։

Բայց ողբ մ'ահա խուլ ու մեղմիկ, խորեն
Ամփոփված մութին, հանկարծ կթրթռա.
Քմահաճ վարդին սիրտն է անօրեն,
Որ, խղճի խայթով գայարված, կուլա։

ՍՊԱՍՈՒՄ

Աղջիկ մը կա հոգվույս մեջ,
Որ հավիտյան կփորձե
Հիշել մոռացված երգ մը հին
Որ խույս կուտա միշտ իրմե։

Տղա մը կա մտքիս մեջ,
Որ կսպասե անդադար,
Հույսով մը որ չի հոգնիր,
Մեկուն որ չի՛ գար, չի՛ գար։

Ներուկ մը կա սրտիս մեջ,
Որ կկանչե հավիտյան
Մեկն որ հեռուն է և որ
Չի՛ տար երբեք պատասխան։

ԻՄ ՓՈՒՆՋՍ

Փունջը, որուն քուրումը քաղցր է ինձի՝
Կազմված է ծաղիկներե կենդանի.
Գթած պարկեշտ մը պարտեզին մեջ կյանքիս
Տնկեց զանոնք, որ միշտ խնկեն իմ հոգիս։

Աչքերդ անոր տերեփուկներն են տամուկ,
Մազերուդ խուրձն անոր ոեհա՛նը փափուկ.
Բերանդ մեխակն և այտդ վարդն է բուրյան.
Լանջքդդ շուշանն ու ճակատդ քամելյան։

Համբույրդ անոր կարմիր սմբուլն աղվաշունչ,
Գորովդ՝ անուշ մանուշակը նրբափունջ,
Նազերդ անոր «ապրիմ-մեռնիմ»-ն հոգեխռով։

Սիրուս թելովն այդ փունջն անգին կապեր եմ.
Եվ որպեսզի թարմ մնա միշտ, կ'ոռոգեմ
Սրտիս արյամբն և աչքերուս արցունքով։

ԼՌԻՆ, ԵՐԱԾՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Անձայն և աղվոր զերթ աստղ ու ծաղիկ,
Բոլոր հրապույրներդ կ'երգեն լռելյայն.
Հոգիս կ'ունկնդրե նվագն անոնց լայն,
Մերթ բուռն ու տենդոտ, մերթ ջինջ, խաղաղիկ։

Բուրումներու նուրբ երգը թափանցիկ
Կդայլայլեն ճոխ մազերդ դեղձան.
Ճակատդ երազուն՝ քնքուշ գթության
Կ'երգե տաղն աղու և մելամաղձիկ.

Երկնաշող աչքերդ հուշիկ կհծծեն
Քաղցր անուրջներուն գեղոնը հրեղեն,
Ծոծրակդդ շուշան՝ ծարավն հեշտանքին,

Շրթունքդ՝ համբույրին տենչը վարդագույն,
Ու լանջքդ՝ թաքուն կմնչե, լռին,
Կարոտն անվախճան փայփայանքներուն։

ՏԱՂԻԿ

Անուշությունն աչքերներուդ կրնա բուժել է՛ն մահացուն
Վերքերուն.
Բայց ես դարման, որտե՞ղ, ավա՜ղ, գտնեմ վերքիս իմ
ահավոր,
Քանի որ
Իմին սրտիս մեջ զայն բացավ անուշությունն իսկ այդ
ունգուլ
Աչքերուդ։

ՃԵՐՄԱԿ ՀՆՉՅԱԿ

Ննջարանին անկյունը գաղջ ու լռին,
Ուր սպիտակ վարագույրներ կմաղեն
Արշալույսին բարակ փոշին լուսեղեն,
Կընդնշմարվի քնքուշ մահիճը կույսին։

Ճերմակ բարձին վրա, ոսկեփայլ ու ծփին
Մազերուն մեջ՝ մանրիկ դեմք մ'ուր կցողեն
Անտես աստղեր շիթեր իրենց ջինջ շողեն,
Կնկարվի իսկն աղոտ լույս-ստվերին։

Ու երազներն իրենց ճերմակ թևով թույլ
Կուգան շոյել զայն երգերով մեղմասույլ.
Աչքերը փակ՝ կժպտի կույսն, անարատ

Ժպտով մ'ուր ցոլքն է աստղերուն ծիրանի.
Եվ առավոտն, հափշտակված, հորդառատ
Իր լուսացա՛յտքը ներս թափել կվարանի։

ԱՆՁԻՆՁ ԲՈՒՅՐԸ

Պահարանին մեջ, հնոտի
Թուղթերու տակ կորսված,
Օր մը գտա անուշ հոտի
Սրվակիկ մը պարպված։

Շիթ մ'իսկ չկար ա՛լ հեղուկեն,
Բայց մարմնին վրա սրվակին
Դեռ այն բուրմա՛նը խնկեղեն
Կծածաներ նուրբ հոգին։

Այսպես երբոր ցամքի մեր մեջ
Սեր որ մեզ կլնուր,
Անոր անուշ բուրմունքն անվերջ
Կ'ապրի սրտին մեջ թափուր։

ԵՐԱԶ

Գիտե՞ս, երբեմն կերազեմ
Աշխարհ մը նոր, տարօրինակ,
Աշխարհ մը լուռ ու թախծադեմ,
Ուր ապրեինք քեզ հետ մինակ։

Աշխարհ մը լայն, անհորիզոն,
Առանց լերան, առանց վհի,
Որպեսզի մեր նայվածքը հոն
Տեսներ անհուն մը ամայի։

Միայն ծյուրած սև նոճիներ
Կանգնեին հոն ասդին անդին,
Եվ սուգ մը թանձր հոսեր իջներ
Անոնց վտիտ մարմնեն մթին։

Ու վերջալույս մը նվաղկոտ,
Երկնքին մեջ միշտ առկախված,
Ոգևարի դալուկ մ'աղոտ
Մաղեր, նշույլ մը ստվերամած։

Ու ձեռք ձեռքի, անձայն ու համբ,
Թափառեինք հոն հավիտյան,
Ծծելով սև ու խոր ու համբ
Երանությունը տրտմության։

ՌՈՆՏՈ

Միս-մինակ իմ անլամբար
Սենյակիս մեջ կծկտած,
Ես կխորհիմ տրտմաբար.
Դուրսը հով կա սրընթաց,
Տարերքներու մո՛ւթ գուպար։

Լալկան անձրևն անդադար
Կթըզկա իր երգը թաց,
Ես կխորհիմ անբարբառ,
Միս-մինակ։

Կխորհիմ քու լուսավառ
Դեմքիդ, որ սիրտս է բանտած,
Ու ես կուլամ ձայնով ցած
Իմ սենյակիս մեջ խավար,
Միս-մինակ։

ԿԱՊԸ

Ճառագայթե ավելի նուրբ ու փափուկ՝
Թաքուն հանգույց մը կա ամեն բան զոդող.
Գույնն ու հնչյունն ու բուրումը խուսափուկ,
Կույսին ժպիտն, ակնարկն աստղին լուսացող,
Կդաշնակվին ներքին կապով մ՝հարասքող,
Ճառագայթե ավելի նուրբ և փափուկ։

Պարզ եղանակ մը, թախծագին կամ ուրախ,
Կբանա մերթ ամբողջ սափոր մ՝հուշերու,
Անձնյուր խաղին հետ, որ կսահի թնաբախ
Անցյալի կտոր մ՝իր մութ քունեն կզարթնու.
Մեզ վերապրիլ կուտա հին կյանք մը հեռու
Պարզ եղանակ մը, թախծագին կամ ուրախ։

Տաղիկներ կան, որ անձեր միտք կբերեն,
Անոնց գույնին մեջ դեմք մ՝ընտել կերևի,

Կզգանք գիրգ շունչ մ՝անոնց բուրմա նը խորեն,
Եվ բաժակն, ուր կխաղա քմայրը հովի,
Կհիշեցնե աչվքներ սև կամ ծավի.
Տաղիկներ կան, որ անձեր միտք կբերեն։

Վերջալույսին մեջ մեռելներ կտեսնենք,
Ամռան ծովուն մեջ գորովներ երջանիկ.
Աստղերուն մեջ կժըպտի սուրբ սեր մ՝աննենգ,
Մեր ցավին մռունչն են որոտումն ու մրրիկ.
Կհեծծե սյուքն անուշ անուն մը գողտրիկ.
Վերջալույսին մեջ մեռելներ կտեսնենք։

Խորհրդավոր, խոր, համասփյուռ թելերով
Այսպես ամեն բան կկապվի սերտապին.
Սերն ու ծաղիկ, երազանքն ու սյուքը զով,
Բնությունն ու մարդ, անկենդանն ու կենդանին,
Իրար կմեկնեն և իրարու կդաշնակվին
Խորհրդավոր, խոր, համասփյուռ թելերով։

ՎԵՐԱՀՈՒՇՔ

Առջի օրն ուր տեսա քեզ,
Դեմքդ անծանոթ չէր ինձի.
Արևնման ոսկեգեղ
Գլուխդ որ ոչ մեկ գանձի
Կբաղդատվի, սրտակեզ
Հուրն այտերուդ աղարծի,

Նրբին հասակդ հոյասլաց,
Բերանդ որ վեր է վարդեն,
Բոլոր հմայքներդ լուսամած՝
Ինձ կթվեր թե արդեն
Անցյալին մեջ ես տեսած
Ճանչցած էի տարփորեն։

Արդյոք ուրիշ աշխարհի
Մեջ սիրեցի՞նք մենք զիրար,

Աշխարհ մ'ուր կյանքն էր բարի,
Ուր սերն էր ջինջ ու պայծառ,
Երբ դեռ ուժը խավարի
Մեզ չէր նետած անկից վար։

Չէ՛, կհիշեմ. մանկության
Վարդ այգուն մեջ իմ սրտիս,
Էակ մ'անճառ, աննման
Երազեց օր մ'իմ հոգիս,
Կույս մը շնորհով գերբնական.
— Այդ տեսիլքին կնմանիս։

ՍՈՒՅԼԸ

Նավերուն սույլը հեռալուր
Դյութող հրապույր մ'ունի թաքուն.
Երբ մեղմ, երկայն, հնչե այգուն,
Կարծես սիրո կոչ մըն է հուր։

Իրիկվան, ճիշն է կարծես սուր
Անհույս տենչի մը ճիգերուն.
Նավերուն սույլը հեռալուր
Դյութող հրապույր մ'ունի թաքուն։

Գիշերին մեջ մռայլ ու լուռ,
Երբ, պատռելով խավարն անհուն,
Երկարի՝ խոր ու ծավալուն,
Կարծես Մահվան ձայնն է տխուր,
Նավերուն սույլը հեռալուր։

ՄԱՀԻԿԸ

Դժգույն կապույտ երկնքին վրա առտվան,
Թեթև բամբակ ամպերուն մեջ ցիրուցան,
Ճերմակ մահիկն անփայլ, նրբին, շղարշյա,
Հոնքի մը պես առանց աչքի կկորնա։

Կհասուննա արեգակն ու կհալին
Ամպերն անգայտ, կցնդին խորն երկնքին,

Եվ կմնա կապույտը մերկ ու մաքուր,
Ծով քնացած, միապաղաղ, անփրփուր։

Կ'անցնի թռչուն մը, գծելով գիծ մը սև,
Որ օդին մեջ կ'ավրվի իսկույն իր ետև,
Եվ այդ ծավի անհունին մեջ ամայի
Մահիկն իր կույր նայվածքը միշտ կնայի։

ԳԻՏԵ՞Ս

(Ռոնդո)

Գիտե՞ս, գիշե՛րը կուլամ,
Մոմիս դիմաց, մինակուկ,
Ու մոմիս պես, խուսափուկ,
Կհալի կյանքս ալ, կզգամ։

Աչքիս առջև՝ անթառամ
Կկանգնի դեմքդ փափուկ.
Գիտե՞ս, գիշե՛րը կուլամ,
Մոմիս դիմաց, մինակուկ։

Կ...ոկայծի մոմս, ու տարտամ
Լուսաստվերին մեջ, գաղտուկ,
Արցունքներով անշըշուկ
Տալով անունդ երկնահամ,
Գիտե՞ս, գիշե՛րը կուլամ։

ԵՂԵՐԵՐԳ

Սև ջուրերուն վրա սև խաղեր կանչեցեք,
Սև-սև խաղեր կանչեցեք, վա՛րդ աղջիկներ,
Վա՛րդ աղջիկներ, դուք այն կտրիճն ողբացեք,
Այն խեղճ կտրի՛ճը, որ կորավ վաղամեռ։

Մրրիկը չէ որ սպաննեց զանիկա,
Ձայն սպաննողը սե՛րն էր, սե՛րը վայրագ,

Սերը վայրագ, որուն բերնին մեջ թույն կա,
Բերնին մեջ թույն և աչքերուն մեջ կրակ։

Ան ալ մեզի պես թարմ էր ու գեղեցիկ,
Գեղեցիկ ու թարմ, ինչպես այգ մը գարնան.
Գարնան այգու պես մարեցավ վաղանցիկ,
Անցավ ինչպես երազ մը խոր գիշերվան։

Անլույս գիշեր մը, ցավեն սիրտն ընկճված,
Սիրտն ընկճված, գնաց ծովուն մոտ մթին.
Գնաց ծովուն մոտ և անձայն ու անլաց,
Անլաց, անձայն, նետվեցավ ծո՛ցը ջուրին։

Սև ջուրերուն վրա սև խաղեր կանչեցեք,
Սև-սև խաղեր կանչեցեք, վա՛րդ աղջիկներ.
Վա՛րդ աղջիկներ, դուք այն կտրիճն ողբացեք,
Այն խեղճ կտրի՛ճը, որ կորավ վաղամեռ։

ԻՆՉՈ՞Ւ

Օդայածիկ նվագի պատառ մը տարտամ,
Որ կիսաբաց պատուհանե մը կթռչի,
Մեզ մտածկոտ՝ կկեցնե շատ անգամ,
Որ կտրտմինք, որպես թե խայթ մը խղճի
Կանգներ հանկարծ և գալարեր մեր հոգին.
Կարծես անո՛ւրջ մը կցնդի օդաշու,
Եվ կզգանք սո՛ւգը ջախջախված բաղձանքին.
Ինչո՞ւ...

Գիշերին մեջ, հաճախ, լույսերն հեռավոր
Որ սև զանգվա՛ծը կծակեն տուներուն,
Մեզի կուտան երազանքներ անսովոր
Ու կարթընցնեն մտքին մեջ հույլն երերուն
Անմեկնելի ու ցավատանջ թաղծությանց՝
Խորհրդավոր և անկայուն զերթ գնչու,
Գերեզմանի պես խավարչտին և անթափանց.
Ինչո՞ւ...

ՄՐՐԻԿ

Դուրսը, մութին մեջ անհուն,
Գալարվելով մոլեգին,
Կոռնան հրեշնե՛րը թաքուն։

Ծառերը մերկ, դողդոջյուն
Կհեծեծեն լալագին
Դուրսը, մութին մեջ անհուն։

Շաչեցնելով սուր լեզուն,
Ընդհարելով մութ ագի՛ն,
Կոռնան հրեշնե՛րը թաքուն։

Բնության հեռերն են համբուն,
Որ կպայթին կժայթքին
Դուրսը, մութին մեջ անհուն։

Վա՛յ անոնց, որ դուրսն անտուն
Կհածին այժմ, երբ, մթին,
Կոռնան հրեշնե՛րը թաքուն։

Նախճիրներ են անանուն,
Որ կմռնչեն ու կանցնին
Դուրսը, մութին մեջ անհուն։

Աշխարհ կառնե վայնասուն,
Կդողա հողն ու երկին,
Կոռնան հրեշնե՛րը թաքուն։

Թոհուբոհն է որ կանգուն,
Կերգե քանդումը կյանքին,
Դուրսը, մութին մեջ անհուն։

Դև, ուրվական, անգղ ու շուն,
Մահու դեմքեր խավարչտին,
Կոռնան հրեշները թաքուն։

Ահով արբշիռ, ցայգն ի բուն,
Կունկնդրեմ սև մեծ երգին,
Դուրսը, մութին մեջ անհուն,
Կերգեն հրեշնե՛րը թաքուն։

ՀԱՌԱՉ

Դուն վերն ես, լույսերու մեջ,
Գեղեցիկ, երջանիկ,
Ես վարն եմ, լալով անվերջ
Իմ արցո՛ւնքս լռիկ։

Դուն վերն ես, ադամանդի,
Բեհեզի մեջ թաղված.
Ես վարն եմ, վտարանդի,
Անծանոթ, մշտայած։

Փողոցեն, չնշմարված,
Ես կանցնիմ գողունի,
Ու վերեն ոչ իսկ նայված
Մը կուղղես դուն ինծի։

Դուն աստղն ես անմատչելի,
Ես անցորդն աննշան,
Որ զմայլած, վեր կնայի
Այդ շողին դյութական։

Իմ կյանքիս մթութենեն
Ո՞վ ուղղեց դեպի վեր,
Դեպի դեմքդ արծաթեղեն
Ո՞վ ուղղեց իմ աչքեր։

Դուն վերն ես, երկնքին մոտ,
Երկնքեն քաղցրագույն.
Ես վարն եմ, անշուք, աղոտ,
Ստվերի մը հանգույն։

Ու չգիտնա՛ս պիտի երբեք,
Քու կյանքիդ մեջ պայծառ,
Թե հոգի մը վշտաբեկ
Խամրեցավ քեզ համար։

ՑԱՅԳԵՐԳ

Պատուհանիդ առջև ահա գիշերանց
Կուգամ դժբախտ քաշկրտել սերս մթին
Ու խավարին մեջ դեպի ստվերդ պաշարված
Կբարձրացնե հոգիս ցայգերգն իր լռին։

Ցայգերգ մը ոչ անոնց նման, զոր զվարթ
Պարմանի մը կհնչեցնե կիթառով,
Գարնան գիշեր մը, երբ աստղերն են հանդարտ,
Եվ երբ վերեն կհոսե կույսն իր զորով։

Չէ՛, հիմա մութ գիշեր է ցուրտ, դժընդակ,
Երկինքը սև է, անձրև կա ասղընտող,
Հովն երեսիս կփաթթե սուր իր մտրակ,
Ու ես ցեխին մեջ կդողամ ինչպես գող։

Դուն չես գիտեր... վերը խաղաղ, երջանիկ
Թերևս հիմա կծիծաղիս անտարբեր։
Ու թերևս ալ՝ անկողնիդ մեջ փափկիկ
Հիմա կապույտ քեզ կօրորեն երազներ։

Ես հոս իմ սերս ինձ ջահ ըրած և կիթառ,
Սիրուս, որ հորդ կարյունի շատ կարևեր,
Ձայն կքերթեմ, զայն կճմլեմ անդադար,
Ու կլսե լոկ մութն անոր հեծյուններ։

Հովը կոռնա, անձրևը սուր կթափի՝
Գետնին վրա խուլ շաչեցնելով երգ մ՝անվերջ,
Եվ իմ հառաչս, որ կուգա մեղմ կբախի
Պատուհանիդ, կխեղդվի մութին մեջ։

ՁՄՌԱՆ ՊԱՏԿԵՐ

Ճերմա՛կ ամեն կողմ, ամե՛ն բան ճերմակ,
Ձյունով շպարված, ձյունով փաթթված,
Լռին կփռե բնությունն համակ
Իր մեռելությունն համայնատարած։

Եվ այդ ընկղմող ճերմակության մեջ
Դույներն ու բիծեր կերթան կանհետին.
Չյունին տարափին տակ մշտավայրէջ
Մահն է ազատին, սևին ու մութին։

Դըժգույն ու խաղաղ երազ մը շուշան
Աշխարհ մը կորրե թևերով մաքուր.
Մեծ պայծառ ժպիտն անբիծ կուսության,
Յոլթն է գեղեցկին անշարժ և տխուր։

Բայց կզգամ, որ քեզ սիրել չեմ կրնար,
Անհո՛ւն հրաշալիք, պերճ ու ցրտագին,
Ընկճո՛ղ վեհություն, որուն անբարբառ
Գեղեցկության մեջ կպակսի հոգին։

ՏԱՂ

Աչքերուս մեջ շեշտակի
Նայի՛ անբրիթի՛
Քու նայվածքովդ շրեշտակի
Աստեղափրթիթ։

Ու հետ այդ հուր նայվածքին
Հոգիդ մեջս անցնի
Եվ թող վառե իմ հոգին
Լույսով գարունի։

Կուզեի այսպես մնալ
Երկա՛ր, աչքս հառած
Աչքիդ, մինչև որ դառնամ
Դիակ մը սառած։

ԵՐԱԶԻ ՄԸ ՄԵՋ

Երազի մը մեջ ձայն մ'լսավ ինձի.
«Կուզես քեզ տանիմ այն աշխարհն ազվոր.
Ուր սիրան է անվիչ, փարդն առանց փուշի,

Ուր կյանքն անվախճան տոն մ'է լուսավոր.
Արևն հոն երբեք մարը չի մտներ,
Ու մահն այնտեղ ոտք երբեք չի կոխեր»։

Եվ ես պատասխան տվի այդ ձայնին.
«Չէ՛, իմ տառապանքս ես կնախընտրեմ,
Ինչպե՞ս ապրիլ կյանքն երբ Անծանոթին
Տենդն ամեն վայրկյան չի ցցվիր մեր դեմ.
Թող միշտ պայքարիմ, երազեմ, հուսամ.
Թող որ իմ անվերջ իղձովս արբենամ»։

ՏԱՂ

Դուն իմ անո՛ւնս գրեցիր տափարակ
Ավազին վրա ծովեզրին.
Ջուրը եկավ և իր խավերը բարակ
Ջայն լիզեցին, ավրեցին։

Դուն իմ անո՛ւնս գրեցիր սպիտակ
Կակուղ էջին վրա ձյունին,
Թափեցան բյուր-բյուր գնդակները բամբակ.
Ջայն ծածկեցին, ավրեցին։

Ես սրտիս վրա գրեցի անունդ հուր տառով,
Փոթորիկներ զգացման
Անցան վրայեն, բայց հոն անեղծ, անխոով,
Տառերը միշտ կմնան։

ԻՆՁՈ՞Ի

Քենե հեռու կթառամի իմ հոգին,
Քու տեսքդ ինձի ինչպես արևն է ծաղկին.
Սիրտս ամեն տեղ ամեն պահ քեզ կկանչե,
Առանց քեզի աշխարհն ինձի ոչինչ է։

Սակայն ինչո՞ւ, երբ իմ մոտս ես ու գինով
Կընես զիս քաղցր աչվընտրուդ գարունով,
Ինչո՞ւ վրդովք մը, կարծես վախ մը խորին
Կմրրկե իմ սրտիս ծովը լռին։

ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

Վիլլանել

Ամպերուն մեջ ծիրանի,
Ուր կայրի սուգ մ'անսահման,
Լույսն համբորեն կմեռնի։

Երկինքն, հանգույն վրանի,
Կ'ունենա դող մը հուզման,
Ամպերուն մեջ ծիրանի։

Մութին մոտ, որ դարանի
Մտած հուշիկ կուգա ման,
Լույսն համբորեն կմեռնի։

Գիշերը, սև ծերունի,
Կխոցե տի՛վը պարման,
Ամպերուն մեջ ծիրանի։

Եվ մինչ վառ վերքն արյունի
Կժայթքե ցայտք ուղխանման,
Լույսն համբորեն կմեռնի։

Կլեցվի սիրտը գաղտնի
Տրտմությունով մը լքման։
Ամպերուն մեջ ծիրանի,
Լույսն համբորեն կմեռնի։

Երբոր կինեն հուսահատած կամ զզված՝
Աչվընեներնիս կդարձնենք Բնության,
Անկարեկիր կգտնենք զայն և անզգամ,
Մեզի օտար, ու շատ մեծ, շատ անսահման։

Մեր վիշտը երբ անտառներուն մեջ տանինք,
Ծառերուն երգն անհաս կմնա մեր հոգվույն.
Մեր արցունքին վերև հաճախ չինչ երկինք
Մը կտեսնենք, հեգնոտ, անհոգ ու ժպտուն։

Չէ՛, այդ անհուն գեղեցկությունն անվախճան
Չի դաշնակվիր բաղձանքներուն մեր թզուկ,
Ու կտանջվինք ի տես հաղթ պերճության,
Որ չի սրզմիր մեր թևերուն մեջ անձուկ։

Չէ, արշալույս մը համբուրել չենք կրնար
Ու չենք կրնար գրկել աստղիկ մը պսպղուն,
Մեր սիրտը չի՛ բավեր ծաղկանց անհամար,
Ու չենք կրնար ծովուն ըլլալ տարփածուն։

Ինչ որ մեր խողճ սրտին տրված է սիրել,
Կինն է, Բնության մանրանկարը չնչին.
Աստված անոր վրա ուզեց ամփոփել՝
Փոքրացնելով, ինչ որ կա գողտր ու նրբին։

Շիթ մը այգեն քսեց անոր վարդ այտին,
Ծառերուն թավ մազին տվավ փունջ մ'անոր,
Անոր աչին մեջ կաթեց պուտ մը երկին,
Ու դրավ մսին մեջ ծաղիկները բոլոր։

Բայց, ճշմարիտ մանրանկար Բնության,
Այդ տիեզերքն ալ համառոտ ու սիրուն
Մնաց անզգացած՝ ինչպես դոհար անկենդան,
Հոգվույն համար լըլկում, աչքին՝ հեշտություն։

ԱՍՈՒՊՆԵՐ

Ա.

Հանդարտ ու մաքուր, ջուրը կփռվի
Ավազանին մեջ, անշարժ, քնացած.
Ո՛չ կնճիռ մը մեղմ, ո՛չ փոթ մը հովի,
Ո՛չ առարկայի մը ցոլքն անդրադարձ։

Եվ քար մը հանկարծ տղու մը ձեռքեն,
Կերթա ծակել ջո՛ւրը միապաղաղ,
Եվ անոր վերքեն ջինջ շիթեր կցատքեն
Ու բոլորակներ կգծվին խաղաղ։

Բայց բոլորտակնե՛ր կծափարին
Ու կնվագին, և շիթերն ալ շուտ
Կթափին նորեն դոգն ափուղածին,
Նորեն կքնանա ջուրն իր քանը ցորտուս։

Բ.

Իր պատուհանին աղջիկ մը հենած,
Անտարբեր աչքով դուրսը կնայի,
Միտքը պարապին մեջ թափառահած,
Կուսութեանը մեջ հոգին ամայի։

Պատանի մ՝ սղվոր փողոցեն կանցնի,
Ընդհարելով շեշտ նայվածքը սևեռ
Անոր նայվածքին. սարսուռ մը գաղտնի
Կույսին հոգվույն մեջ կբախե թևեր։

Կանցնի և անհետ կրլլա պատանին.
Սարսուռին թախիծ կհաջորդե սուրբ՝
Մոռացումն հետո կուգա վերջապին,
Ու նորեն հոգին կնիրհե թափուր։

ՈՒՐՎԱԿԱՆՔՆԵՐ

Միջօրեի արևը հուր կտեղա.
Հարսնուկի գույն փոքր հովանոց մը բացած,
Մատղաշ աղջիկ մը կքալե համբագնաց՝
Մեղմասարսուռ խոտերու մեջ զմրխտյա։

Եվ բոլորշի կերպասին վրա արյունոտ,
Զոր թափանցիկ ն՝ընեն աչքեն ու արտիտուս,
Դեմքն սպիտակ ինչպես մի քաղցրաբոյր,
Հովանոցին շուրջն շինված ընդ ոստոստ։

ԵՐԳ

Ամառ գիշերով, պարտեզս լուսնի տակ,
Եթե պատահի, որ դող մը գարշանի
Գա հանկարծ ձեր սիրտը ցնցի հանակ,

Սարսուռ մ՝ինքնարուխ մտնուկ հրվանդի,
Այդ սարսուռը մի՛ մտնեք։

Թանձր մութի մեջ, եթե միա-միանակ,
Թախիծ մը գրկե ձեզ, սև համբարու,
Ու հանկարծ առանց պատճառի փափագ
Ունենաք երկար, քաղցրորեն լալու,
Այդ արցունքը մի՛ մոռնաք։

Առտու մը գարնան, համբույր մ՝անպիտակ
Եթե ակամա փախչի ձեր բերանեն,
Համբույր մը մաքուր, թեթուշ, սպիտակ
Դեպ աներևույթ էակ մ՝օդեղեն,
Այդ համբույրը մի՛ մոռնաք։

ԱՌՋԻ ՁՅՈՒՆ

Առջի ճերմակ, առջի ձյուն,
Ավետաբեր ձմեռվան,
Փղջո՛ւկն քեզ, ո՞վ փանդուխտ
Հոգիներուն կուսակոն։

Շուշան-թերթեր կաթնագույն,
Խոլ փետուրներ կարապի,
Անմեղության երկնքին,
Որ շիթ առ շիթ կթափի։

Ո՞վ ցնծություն, հույլ ի հույլ
Թիթեռնիկներ սպիտակ
Կթռչըտին, համբ ու թույլ,
Թռիչով մ՝անվերջ պտտատակ։

Տուներուն վրա ճերմակ շալ,
Գետինը գորգ սպիտակ.
Ճերմակ տերև դյուրահալ՝
Մերկ ծառերուն վրա փոստակ։

Առջի ճերմակ, առջի ձյուն,
Ավետաբեր ձմեռվան,
Ողջո՜ւյն քեզ, ո՜վ խնդություն
Հոգիներուն կուսական։

ԱՆԾԱՆՈԹԸ

Ո՜վ մեծ հրապո՜ւյրը տիրական
Խորհրդասքող իրերուն,
Ո՜վ սաստկությո՜ւնը մեր սիրույն անսահման
Ամեն բանի ուր կա գաղտնիք մը թաքուն։

Աստղերը լուռ երկնքին մեջ անհատակ,
Գիշերին մեջ բարձրացող սույլ մ'հեռավոր,
Լույս մը վառած պատուհանի մ'ետև փակ,
Երազի մեջ աղոտ լսված երգ մ'աղվոր...

Ու հորիզոն մը, որ հեռուն ի կապույտ
Մեգին ներքև նոր աշխարհներ կծածկե,
Ու մահվան դեմքն, որ լայն քողին տակ իր մութ՝
Մեր ճամբուն վրա երազ մ'անհուն կսրսկե...

Բոլոր ասոնք, որոնց առջև
Հարցանշան մը կցցվի,
Իմ տանջանքներս, իմ սերերս են հևիհև,
Ինչպես քու սիրտդ ալ, ո՜վ աղջիկ սևաչվի։

ԼՈՒՍԻՆԸ

Ձմեռվան պայծառ երկնքին մեջեն
Կթավալի մեծ լուսինը ոսկի,
Ու խաղաղավետ օդին մեջ ծավի
Անոր ջինջ շողե՛րը կպաղպաջեն։

Գետինն, երեկվան մաղձոտ անձրևեն
Խոնավ, կփռե լճակներ աղտոտ,

Եվ այդ հայլիներուն մեջ շարժուն և աղոտ՝
Լուսնին դեմքն ազնիվ, բյուրապատկորեն

Կրկնված, բեկբեկ ու ծամածռած,
Կլորճվին ու կտգեղնա.
Կգոհեհկանա ժպիտն ամոթխած։

Ով սուրբ Իտեալ, քու լույսդ աղվոր
Կպղծվի այսպես, երբ հայելանա
Ամբոխին ծփուն հոգվույն մեջ պղտոր։

ԵՐԿՈՒ ԱՂՎՈՐ ԱՉՈՒԿՆԵՐ

Երկու աղվոր աչուկներ
Ձիս կարեվեր խոցեցին,
Դաշույնն անոնց նուրբ բոցին
Եղավ սրտիս մահաբեր։

Կարծես արդեն իսկ մեռեր՝
Պառկեր եմ ծոցը փոսին.
Երկու աղվոր աչուկներ
Ձիս կարեվեր խոցեցին։

Բայց նորեն, խորն ահաստվեր
Այս տրտմական խավարին՝
Երկու լույսեր կվառին
Ձերթ մութ ծովուն վրա աստղեր,
Երկու աղվոր աչուկներ։

ՀՆՁՅԱԿ

Օր պիտի գա, որ դուն պառավ ըլլաս պիտի,
Ոսկի մազերդ ափ մը ձյունի պիտի փոխվին.
Մետաքս երեսդ պիտի թոռմի ու կնճռոտի,
Եվ աչքերուդ բոցերն ընդմիշտ պիտ նվաղին։

Ձմեռվան ժանտ գիշերներուն մեջ սառուցիկ,
Վառարանիդ քով կծկըտված, մերթ միայնակ,

Հանկարծ զողով մը ցնցրված մեկամազգիկ՝
Պիտ հիշես սե՛րըս, զոր փշրեց ձեռքդ վայրագ։

Պիտ հիշես ու պիտ ինքնին ըսես. «Ոչ ոք
Չիս անոր պես սիրեց երբեք». ու պիտի լաս.
Գալարված դա՛ռըն տանջանքով մը անողոք։

Ես այն ատեն խաչաղ պառկած պիտի ըլլամ
Սև հողուն տակ, որդեն ծաղիկ բուսած վրաս,
Պիտի լսեմ լացըդ, բայց չուտ պիտի մնամ։

ՈՂԲ

Մեկիկ-մեկիկ, տերևներն,
Աշնան շունչո՛վը թոշնած,
Կթափթըփին, մինչդեռ վերն
Երկինքը մութ է և թաց։

Ու ես գարունն այն պայծառ
Կհիշեմ, ուր քեզ ճանչցա.
Ծաղկած ծառերն լուսավառ
Կօրհներգեին մեր վրա։

Եվ լույսին մեջ ու բուրման,
Ես պահ մ', ավա՜ղ, կարծեցի,
Թե իրապես հավիտյան
Պիտի սիրես դուն ինծի։

Մեկիկ-մեկիկ, երազներն,
Տերևներուն հետ թոշնած,
Կթափթըփին, մինչդեռ վերն
Երկինքը մութ է և թաց։

ԿԱՂԱՆԴԸ

Չորս եղանակներն
Ատենով ըսին
Կաղանդ հրեշտակին.

«Ո՞րն է մեր մեշին
Քու նախընտրելին»։

Կաղանդը տեսավ
Գարունը ալ-տրթի,
Նուրբ թևերը վարդ
Տարածված ամբակ
Օդին մեջ լազվարթ,

Ամառն հրավառ,
Հաղթ մարմնով մազեղ,
Կանգուն փառահեղ,
Նայվածքը պայծառ
Խինդով բոցաղեղ,

Եվ աշունը պերճ,
Հունձքերով նախշուն
Մարմինը հասուն՝
Ճոխ քողերու մեջ
Մութ-ծիրանեգույն։

Ձմեռը զառամ
Անկյուն մ'անբարբառ,
Վտիտ, դալկահար,
Սմքած, մերկանդամ,
Կուլար, կդողար։

Ու հրեշտակն, հոգին
Գութով լի, ընտրեց
Ձմեռն, և անկեց
Ի վեր հետ ձյունին
Կուգա Տոնը մեծ։

ՑՈՂԸ

Առտվան ցողը կփայլեր ապիտակ
Մարգերուն վառ կանանչին վրա կենդանի։
Եվ կթվեր մինչ մարգրի՛տ մը հատակ

Թարմ խոտերուն վրա և ծաղկանց թավշենի,
Արցունքի շիթ մը կդառնար ցրտագին
Մերկ մացառին վրա կամ զաղիր եկբանին։

Եվ հիշեցի սերն, որ շաղ է օրհնության
Անոնց սրտին մեջ, ուր կշողա անապակ
Գեղեցկության, թարմության լույսն աննման,
Եվ որ, ավա՜ղ, կդառնա ցավ մը վայրագ
Անոնց համար, որոնց կյանքն է անգարուն,
Տգեղներուն, տխեղծներուն, հաշմերուն։

ՇԱՌԱԳԱՅԹԸ

Արևեն փրթած խարտյաշ մազ նրբին,
Օդին մեջ, երկայն, կիյնա թելն ոսկի,
Լուսեղեն շավիղ, որմե Սերոբին
Մարմնիկը շուշան վար կսողոսկի,
Այն պահուն ուր նոր կշողա արփին։

Անտառներուն մեջ, ուր հորդ կթափին
Ստվերներն, հանգույն դեղնորակ հասկի՝
Կկախվի խոտին վրա և թուփին,
Արևեն փրթած։

Ժայռերը լոռուտ ու ծերուկ թմբին
Կսիրեն զայն երբ պայծառ կծագի,
Ծածանելով թույլ նազով, մեղմակի,
Ժպտելով լերան, ջուրին և ափին,
Արևեն փրթած։

ՓԱՍՈՒՌԱՆԵՐԸ

Ամռան գիշերն իր ստվերին
Թափանցիկ քողը կպարզեր,
Երկնքին մեջ կշողային
Ոսկի աստղերն ինչպես հարսեր։

Այն պահն էր, ուր ձայներն ամեն
Մեծ թըմբիրին մեջ կմարին,
Երբ երազները կճեմեն
Խաղաղավետ ծոցն եթերին։

Եվ ահա ջինջ այդ իրավարեն,
Ինչպես աչքեր տենդաքրթիթ,
Փոսուռաները համրորեն
Դուրս ելան, խեղճ կայծեր վտիտ։

«Մանրիկ նվաղ ուրվականներ,
Ըսի, քնատ լույսեր մաղձոտ,
Ո՞ր ձեռքն է ձեզ շիրմեն հաներ,
Ո՞վ եք դուք, ի՞նչ կփնտրեք հոտ»։

Եվ մութին մեջ դողդղաացող
Պզտիկ կանանչ լույսերն ըսին.
«Սերը, կյանքին արևն ու ցող,
Ջծաղկեցուց մեր սիրտն ասին։

«Մահեն հետո, ամեն հոգի
Լույսի կ՝փոխվի. այն որ ճանչցավ
Սերը, կ՝դառնա աստղ երկնքի,
Բայց անոնք, որ կյանքի մեջ ցավ

Ունեցան լոկ, հոս՝ հողին մոտ
Փոսուռաներ կըլլան դժգույն.
Մենք հոգին ենք մշտակարոտ
Սերեն լքված դժբախտներուն։

ԾՈՎԱՅԻՆ ՄՈՏ

ԼՈԳՈՒՀԻՆԵՐԸ

Ամառվան ջինջ առավոտն իր վճիտ լույսն է սփռեր
Իրերուն վրա, որ դեռ նոր քունե ելած կշողան.
Օդին մեջ սույլ մը սյուքի ու խոտերուն մեջ բույրեր,
Ու մեղկ անդորր մը հեշտին՝ միջոցին մեջ անսահման։

Ծովն, որուն մորթը կապույտ կարսորա մեղմորեն,
Կտարածվի թափանցիկ, ծփանքներով մանտրտիկ.
Որ իրենց զով գոգին մեջ թարմ ճաճանչներ կորորեն,
Դաշներգելով համբաբար զարթոնքի երգ մը գողտրիկ։

Այն պահն է, ուր լոգանալ կերթան կույսերը մատաղ,
Ուսերնուն վրա անխնամ խուրձը թափած մազերուն,
Դեռ աչքերնին երազի կրելով մշուշ մը նվաղ,
Գիշերվան գիրգ երազին սիրով համակ թրթռուն։

Ծովը մեծ կինն է, դյութող, աղեստավոր հրապույրով,
Եվ կինը զայն կսիրե իրրև իր քույրն անդրանիկ,
Ջուրին անհուն համբույրին մեջ պարուրող, հոգեխոով,
Կսորվի ինչ որ գգվանքն ունի արվեստ ու դաշտնիք։

Ծովն այժմ ահա տարփագին անոնց մարմնույն կփարի
Ու իր ճապուկ թևերով զանոնք մեղմիվ կընդգրկե,
Կհամբուրե բուստ շրթներն, ուսերն հանգույն մարմարի,
Շուշան լանջքերն ու վարսերն, ուր բուրումներ կան խունկե

Եվ պատանին սիրատենչ, որ նավակին մեջ կանցնի,
Հափշտակված ու շլացած այդ տեսիլքեն մոգական,
— Կապույտ ջուրին մեջ ծփուն վարդ շողյուններ մարմինի—
Կուզե ծովուն մեջ ալյակ մ'ըլլալ գոնե մեկ վայրկյան։

ՍԱՐՍՈՒՌ ՄԸ

Կթափառիմ, մինակ, ծովուն եղերքեն,
Ունկնդրելով կոհակներուն որ կերգեն։

Խիճերուն մեջ որ ոտքիս տակ կգլորին,
Կնշմարեմ, կես-խրված մեջն ավազին,
Մոմ-լուցկիի ջրաթաթավ տուփ մը, որուն
Վրա կժպտի կանացի դեմք մը սիրուն։

Աղջիկ մըն է, մազերուն մեջ վարդ մը վառ,
Կուրծքն հոլանի, և հուր նայվածքը պայծառ
Հառած կարծես դողտր երազի մը աղոտ։

Եվ ամայի ծովափին վրա, ծովուն մոտ,
Այդ խեղճ թուղթին կտորն հանկարծ ինձ կազդե,
Քաղցր հուզում մը թափանցանց՝ որպես թե
Ալիքներեն կին մ'արդարև գեղանի
Ելած ու դեմս ըլլար կանգնած՝ կենդանի։

Ու վրդոված, կերթամ ծովուն եղերքեն,
Ունկնդրելով կոհակներուն որ կերգեն։

ՈՒՐՎԱՆԿԱՐ

Կտարածվի երկինքը ջինջ կապույտով,
Այնչափ ջինջ, որ հավտալ կուտա բարության.
Ու կնայիմ, հոգիս խաղաղ անվրդով,
Այդ Անհունին որ կժպտի հավիտյան։

Ու պահ մ'երկրեն բարձրանալով՝ անջատված,
Կմխրճիմ պարապության մեջ անծիր,
Փորելով զայն ակնարկներով ոչապաց,
Փնտրելով բաներ, որ չեն երևիր։

ՔՆԱՑԱԾ ԾՈՎ

Անվերջանալի և անսարսուռ,
Ծովը կնիրհե,
Անծայր զանգված միակտուր
Կապույտ բյուրեղե։

Նավերն այնտեղ կթողու
Երիզ մ'սպիտակ,
Որ ընդ երկար, փողփողուն,
Կմնա հստակ,

Ինչպես նուրբ գիծ մ'ասեղի՝
Թիթեղին վրա
Կամ կոխլանճին, որ կ'սողի՝
Ակոսն արծաթյա.

Կփորձվիս կոխել հոն
Ու քայլով մ'անվախ
Երթալ մինչև հորիզոն,
Անհոգ ու խաղաղ։

Բայց մի՛ խաբվիր, այդ քնած
Մարմնույն խորն է որ
Լուռ կսպասե, դարանած,
Մրրիկն ահավոր։

ԾՈՎԱՆԿԱՐ

Իր միակերպ լույծ ու կակուղ գորշությամբ՝
Կտարածվի ծովն երկնքին տակ անամպ,
Միապաղաղ, անշարժ, անծայ անկենդան,
Հաստատնությամբ մը թույլ, պաղած յուղի նման։

Եվ դոնդողի այդ վիթխարի պնակին վրա
Կերկարաձգին տեղ-տեղ գիծեր արծաթյա,
Շոգենավի հետքեր, որոնք կթվին
Նրբին ճեղքերը գդալի մը ծայրին։

Բազմաթիվ սև պղտիկ ձուկի նավակներ,
Առագաստներ՝ թև մը ճիրմակ ցրցած վեր,
— Ջամիշն ու նուշը, անբաժան դոնդողեն,—
Նմանությունը կճշտեն կավարտեն։

ԿԱՅԾԵՐ

Արևուն լույսը կփովի կպառկի,
Մեծատարած շղարշի մը պես ոսկի,
Իր մրափեն նոր արթնցած ծովուն վրա,
Որուն նուրբ մորթը սյուքի մ'տակ կաարսռա։

Մանրիկ-մանրիկ այլակներուն վրա բյուր
Կցրվի լույսն ու կցանե կետեր հուր,
Որ ջուրերուն հետ կ'երերան անդադար,
Ցատքեցնելով փաղփեցնելով կայծեր վառ։

Եվ այդ կայծերը ջուրին վրա և օդին մեջ
Կելևէջեն շարժմամբ մ'արագ և անվերջ,
Միլյոնավոր ճանճիկներու պես հրեղեն,
Որ լույս թռիչով մը կխլրտան կպարեն։

ՀՅՈՒՍԿԵՆԸ

Հանդարտ ծովուն վրա հպանցք մը հովի
Կթոթափե փափուկ մետաքսը ծավի,
Ջևացնելով անոր երեսն՝ աներեր,
Շաղապատված ու համաչափ կոր գիծեր։

Անծայրածիր նրբին հյուսկեն մը ճարտար,
Որուն կակուղ, կապուտագեղ ու պայծառ
Թափանցկության մեջեն աղոտ կ'երևա
Կանանչությունը խոտերուն ընդծվյա։

ՓՐՓՈՒՐԸ

Ես ժանյակն եմ ձյունագույն,
Պճնող կատարն ալիքին.
Հառաչանքն եմ կաթնագին՝
Հուզված ծովին խաժ հոգվույն։

Իմ ծոցս իրեն կընտրե բույն
Երփներանգ շողն արեգին.
Ես ժանյակն եմ ձյունագույն
Պճնող կատարն ալիքին։

Ոչի՛նչ ինձմե փափկագույն.
Մնունդ հովուն քմայքին,
Կպարեմ պահ մ՝հեշտագին
Ու կցնդիմ ես իսկույն.
Ես ժանյակն եմ ձյունագույն։

ԾՈՎՈՒՆ

Եկո՛ւր փայփայեմ քու բաշդ սպիտակ,
Եկո՛ւր դիր գլուխդ իմ գգվանքիս տակ,
Թո՛ղ որ համբուրեմ լանջդ կապուտակ։

Եկո՛ւր, իմ գազա՛նս, իմ սե՛րս, իմ հոգի՛ս,
Երբ այդպես փրփրաս, ոստնուս, պտուտքիս,
Հեշտանք է քու տեսքդ աչքիս ու մտքիս։

Կպաշտեմ զքեզ, մեծ կո՛ւյս մոլեգին,
Եվ կնախանձիմ երջանիկ ձուկին,
Որ կապրի ընդմիշտ ծոցիդ մեջ անգին։

Տո՛ւր ինձի հզոր ոգիդ կատաղի,
Սիրտս անդունդներուդ զայրույթովն աղի
Թրթռացո՛ւր ինչպես քնար բազմաղի։

Տո՛ւր ինձ խրոխտություն և ուժդ ընդվզման,

Հոգվույս մեջ փչե հովերն անսահման,
Որ մկաններուդ վրա կուգան ման։

Կպաշտեմ զքեզ, և կբաղձամ որ,
Երբ որ ես մեռնիմ, ինձի ահավոր
Վիհդ ընեն շիրիմ, ո՞վ հրեշ աղվոր։

ԾՈՎԱՓԻՆ ՎՐԱ

Օրվան գոհիկ ժիորեն
Հոգնած, ծարավ հանգստյան,
Կերթամ ծովափն, ուր կերգեն
Ալիքները դյութական։

Եվ մինչ տակավ իրիկվան
Ջով ստվերներն կմաղվին,
Մինչ գիշերն իր անսահման
Կպարզե թևը լռին,

Արփունքին վրա, անբարբառ,
Կծծեմ շունչը ծովին,
Ու կզգամ, որ համբաբար
Կթափե ժանգն իմ հոգին։

Եվ հեշտանքով կունկնդրեմ
Մեծ աղոթերգը խորին,
Ջոր քաղցրությամբ մը վսեմ
Կնվագե քնարը ջուրին։

ՈՐՈՐԸ

Երբեմն անձկավ կբաղձամ
Ըլլալ որորն երջանիկ,
Որ ծովուն վրա հաղթանդամ
Կ՝օրրե մարմինն իր փոքրիկ։

Ջուրին վրա միշտ տարածել
Կուրծքս մերկ ու իմ բոլոր
Ծակտիքներովս ծծել
Անդունդին զով կյանքն աղվոր։

Ելևէջել անդադար
Կոհակներուն հետ երեր,
Ջուրի սարե ջուրի սար
Տապրտկիլ անվեհեր,

Ուտել փրփուրն ու խմել
Կատաղությո՛ւնը ծովուն,
Ջգալ անհոգ և ընտրել,
Վիհն իմ ներքև թավալուն։

ԴԱՆԱԿԸ

Պայծառ լուսնին տակ որ կփայլփլա,
Առագաստանավ մը կսահի շուտ,
Լույսով ներկված ջուրերուն վրա
Գծելով սրածայր երկայն թևն իր մութ։

Եվ այդ թևն, որուն մարմինն անտես է.
Կթվի ցցված դանակ մը հսկա,
Որ ծովուն վրայեն, ահեղ, կվազե,
Պայծառ լուսնին տակ, որ կփայլփլա։

ԼՈՒՍՆԻ ԾԱԳՈՒՄ

Հանդիպակաց լերան ետև
Երկինքը մեղմ կշառագնի,
Կարծես աղոտ ցոլք մը թեթև
Շատ հեռավոր մեկ հրդեհի։

Հանկարծ, կարմիր ինչպես արյուն,
Լույսի պատառ մը կցատկե,

Ծեկ երկաթի պես շառագույն,
Ու կմեծնա հետզհետե։

Կմեծնա և կբոլորնա,
Եվ ահա գունտ մըն էր խոշոր,
Հորիզոնին փակած վրա
Հիմա դեղին փայլով մը շոր։

Քանի մը փոքր ամպեր նրբին,
Որ գորշ բիծեր կտարտղնեն
Երկնքին վրա, կ՚ոսկեզոծվին
Այդ նորածին ճաճանչումեն։

Եվ մութ-կապույտ ծովուն վրա
Որ փայփայող մեղմ զեփյուռի
Մը շունչին տակ կսարսռա,
Լույս մը խարտյաշ կկաթկթի։

Լույս մը փաղփուն, ծփուն, փափուկ,
Որ յուղի պես կտարածվի,
Երերական ու խուսափուկ,
Սնդիկի պես որ կսահի։

Ջանակներ թաց և ոստոստուն
Կցոլցլան դողդոջ փայլով,
Մեկ երեսիկն ալիքներուն
Քաղցր լույսով մը ներկելով։

Նավակ մը փոքր հեռուն կանցնի,
Ջինջ ջուրերուն վրա հրավառ՝
Երկայն մութ թև մը հոլանի
Նկարելով հստակաբար։

Գողտր քերթվածն է օդային,
Միստիկական քերթվածն անուշ,
Ջոր, լռության մեջ գիշերին,
Կերգե լուսնին ոգին քնքուշ։

ՀՈՎՀԱՐԸ

Իրիկվան դեմ, երկնքին մեջ դժգունած,
Կես-լուսընկան կընդերևա ամոթխած,
Ճերմակ ստվեր սատաֆ փայլով նվաղկոտ,
Որ կհալի նուրբ կապույտին մեջ աղոտ։

Եվ մարդ ինքնին կհարցնե. «Արդյոք ո՞վ,
Ո՞ր երկնային կույսն, անհոգ մեկ շարժումով
Շուշան-թերթե կամ հրեշտակի փետուրե
Այդ հովհարն այնտեղ բացված ձգեր է»։

ՈՒՐՎԱՆԿԱՐ

Զյունի պես ճերմակ ամպի ահագին
Կտորներ ուռած, կակուղ ու լեցուն,
Երկնքին վրա կունտ-կունտ կփակչին,
Անշարժ ու կարծես յուղոտ ու կպչուն։

Ու տիտանի խոլ ախորժակ մ'ըզքեզ
Կբռնե հանկարծ ի տես այդ սերի
Կույտերուն, որոնք կշարվին դեզ-դեզ
Երկնի ափսեին վրա վիթխարի։

ԾՈՎԱՆԿԱՐ

Բուրձուեֆեն դիտված

Պղտիկ ու կլոր լուսինկան սիրուն
Երկայն ու պայծառ ստվեր մ'է ձգած,
Մեծ լայն արահետ մը որ ջուրերուն
Վրա կբացվի՝ համակ լուսամած։

Այդ դեղին փայլուն ժապավենին վրա
Ջուրին սարսուռները կձևացնեն
Փաղփուն համաչափ գիծեր արծաթե,
Որ կշերտեն զայն մեղմիվ, նրբորեն։

Դարձես վիթխարի ձեռք մ'աներևույթ
Լուսեղեն հսկա մատիտով մը թաց՝
Այդ մեծ կտավին վրա ժուր-կապույտ
Գիծ գիծ շուք տալով պատկերն է շինած։

ԿՈՎԸ

Եզերված թանձր փունջերով մացառներու թավարծի,
Պզտիկ քարուտ դեղին ուղի մը կբացվի՝ ճարճ ու նեղ,
Ուր ո՛չ ստվեր մը կերևա, ո՛չ էակ, մը կհածի,
Եվ ուր արևը կփռե իր ճերմակ լույսն հրազեղ։

Խիտ ցախերուն մեջտեղեն կով մ'հաղթմարմին և խաղաղ,
Համրարար վեր կելլե գլուխը ճոճելով ծանրորեն
Ու վեհությամբ մը մեծաշուք, արձակելով աջ ու ձախ
Քաղցր նայվածք մը, զոր կարծես վճիտ խոհեր կօրորեն։

Կանգ կառնե պահ մը ճամփուն վրա, զոր կլեցնե իր պարարտ
Հզոր մարմնով, ու կնայի հեռուն, ծովին, երկնքին,
Հեղ մ'իր ռունգովը կծծե սուլող հովիկը զվարթ,
Ու բառաչյուն մ'իր թոքերեն կբարձրանա լայն, խորին։

Հետո, նորեն տատանելով կոտոշներն իր գալարուն,
Իր կողերը կմտրակե կարճ ագիովը բարակ
Ու կքալե կհեռանա, երերցնելով իր լեցուն
Ճերմակ ծիծերն, որ կկախվին իր լայն ուժեղ փորին տակ։

✠

Սեփ-սև է երկինքն, անաստղ, անլուսին,
Ամեն բան թաղված է ծոցն ստվերին.
Ոչինչ կորոշվի՝ տուն, մարդ, ծով, ցամաք.
Խավարն է գրկեր տիեզերքն համակ։

Սակայն այդ լույսի մահվան մեջ անհուն
Զայնի կյանք մը դեռ դիմնա արթուն.
Աղջամուղջին թանձր ու ցրտին գոգեն
Կոհակներն, անտես, կոռնան ու կերգեն։

ԿԻՐԿԸՆԴԽԱՌՆՈՒՄ

Տեսեք, հովն է որ իր համբույրը կուտա
Հեշտամոլ ծովին,
Եվ այդ համբյուրին տակ ծիծերու պես հսկա
Ջուրերը կ'ուռին։

Անտես սիրողն, հազար թևով, մոլեգին,
Ծովուն կփարի,
Ու կ'վայելե զայն՝ իր հզոր տարփանքին
Թափովը վայրի։

Գալարվելով հրճվանքե ու փրփրալով,
Ջուրերն կցատկեն,
Ու հովն իր բուռն երանությամբը գինով,
Կ'ոռնա կատղանքեն։

Վերեն երկինքն, անհուն աչքովն իր ծավի
Կդիտե, լռին,
Հանդիսավոր գիրկընդխառնումն ահռելի՝
Օդին և ջուրին։

ԿՈՀԱԿՆԵՐԸ

Կանցնի սարսուռը մրրիկին
Հանդարտ անծալ ծովուն վրայեն.
Ջուրերն հանկարծ կսրսրփին,
Կբողդողան ջղաձգորեն։

Կճեղքուտվի մորթը կապույտ,
Եվ անհամար այդ վերքերեն
Ճերմակ արյան ցայտքեր փրփրուտ
Գալարվելով դուրս կժայթքեն։

Ջուրերուն գույնը կփոխվի,
Լեղակաթույր, հետո կանանչ
Ու հետո սև, ու վիհն աղի
Կմռնչե ահագնականչ։

Խենթ բլուններ արտասովոր,
Այիքները կցատքռտեն,
Ջիդիկներով զարմանավոր
Դեպ ի ծովեզրը կդիմեն։

Մութ մարտիկներ, վառ ճերմակով
Գարդամանակված, կմոլեգնին,
Իրար հրելով, պատռտելով
Կուգան դեպի ժայռերն ափին։

Կուգան, իրենց խոյանքին տակ
Կխշրտան, կճարճատին
Գայլախազներն, որ հոն կուտակ
Ջուրին մղմամբ կդղրդին։

Ու բոլորն ալ կարծր ափունքին
Զարնվելով կատաղորեն,
Կքայքայվին ու կմեռնին
Խուրձ մը արցունք վեր նետելեն։

Ինձ կթըվի տեսնել պատկերն
Մարդկային բյուր սերունդներուն,
Որոնց այսպես մութ կոհակներն
Ատեններե ի վեր անհուն,

Կծնին ու բիրտ հովի մ'ձաղկին
Տակ գալարված կոռնան, իրար
Բզկտելով կխորտակվին
Ափունքին դեմ Մահվան խավար։

1893

ԱՆՁԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքներու ժխորին մեջ աենդագին
Երջանկությունը փնտրելե վհատած,
Դուրս նետվեցա խաժամուժեն մարդկային
Ու մեր զեռուն կյանքին բավղեն մթամած։

Վեր սլացա տափակ ռամիկ դաշտերեն
Եվ ըսի. «Լեռն անշուշտ գիտե բույնն անոր».
Բայց ինձ ճաղատ տիտանն ըսավ տրտմորեն՝
«Ես լոկ ձանձրությունս կճանչնամ դարավոր»։

Թողեցի լեռն ու հովերուն մոտեցա,
Այդ խրոխտ, ազատ ոգիներուն անսահման.
Բայց ինձ ըսին. «Մենք հառաչներն ենք հսկա
Ցավերու, որ ձեզ միշտ գաղտնիք պիտի մնան»։

Հովերեն վեր ելա ու վեր ամպերեն,
Գացի երկինք ու աստղերուն հարցուցի։
«Մեր նշույլներն արցունքի մեծ շիթեր են»
Ըսին մութին այդ աչվրներն ալ ինձի։

Աստղերեն վեր, անհունին մեջ ամայի
Տեսա աստվածն, որ թախծագին կխորհեր,
«Երջանկությունն ո՞ւր է, ո՞վ հայր» գոչեցի,
Եվ տերն ինձի պատասխանեց՝ «Չեմ գիտեր»։

ԱՌԵՂԾՎԱԾԸ

Մեծ պարտեզի մը մեջ պայծառ
Բամբիշ մը կա լուսահեր.
Իր մատներուն մեջ վարդավառ
Կբռնե խեղճ թիթեռներ
Ու հոն զանոնք մեկիկ-մեկիկ
Կփետրոտե խնդալով
Ու կսպանե, հետո, լռիկ,
Կուլա իր քաղցր աչքերով,
Ու թիթեռներն կվերածնին
Արցունքներուն տակ սիրուն
Ու վերստին կթռչըտին
Շուրջն անոր վարդ մատներուն,
Եվ ան, անվերջ, այս խենթ, մթին
Կզբոսնու խաղը կրկնել,
Ու ոչ ոք այս առեղծվածին
Կրցավ դեռ բառը գտնել։

ԳԻՇԵՐԻՆ ՄԵՋ

Գիշերին մեջ ծովափ դացի
Ու սև տեսա ջուրերը լուռ.
Ու սև ջուրերն ըսին ինձի՝
«Եկո՛ւր, եկո՛ւր...»։

Գիշերին մեջ, աչքերու պես
Կշողային մռայլ փայլով
Ու կերգեին. «Հոս կվայելես
Մեծ սերը զով»։

Գիշերին մեջ, թևերու պես
Գորովագին երկննալով,
Կհծրծեին «Հոս կգտնես
Քունն անխռով»։

Գիշերին մեջ սրտիս նկուն,
Իղձ մը ծնավ լսել կոչին,

Երթաչ հանգչիլ ծոցը ծովուն
Խաղաղ մահճին։

Բայց գիշերն այն քաղցր էր, քնքուշ
Սյուք մը ճակատս կշոյեր.
Կժպտեին աստղերն անուշ
Զերթ քրոջ աչքեր։

Ուժգս կորավ. «Գուցե ծովն ալ
Սուտ կխոսի, աշխարհ անվերջ
Սուտ մ'է» ըսի, ու փախա մռայլ
Գիշերին մեջ։

ԻՄ ՍԻՐՏՍ

Իմ սիրտս տուփ մըն է խոր,
Ուր քովե քով եմ շարեր,
Ինչպես չորցած թիթեռներ,
Մեռած սերերս բոլոր։

Ոմանք զույնով երկնքին,
Ոմանք ծաղկի երանգով,
Կան որ ցոլքեր ունին զով,
Ոմանք ալ ցուրտ, խավարչտին։

Ոմանք հին են ու փտտած,
Ուրիշներ թարմ տակավին,
Եվ կան որ դեռ արյունին
Իրենց վրա բիծն ունին թաց։

Նշխարներն են իմ հոգվույս
Վաղամեռիկ խանդերուն,
Որ ապրեցան անգարուն
Եվ արդ կնիրհեն քունն անլույս։

Մերթ գողունի կբանամ
Մենության մեջ գիշերին

Նուրբ կափարիչը ներքին,
Եվ գունաթափ ու թառամ

Դիակներուն վրա անգին
Արևազուրկ զավակներուս,
Կ'երգեմ, դժնե և անհույս,
Սուգին օրորը մթին։

ԳԻՇԵՐԱԿԱՆ

Երկինքը սև է, դժոխքի պես սև,
Թախիծ մը խոնավ վերեն կհոսի.
Մարեց սիրտս իր հուսկ ճանանչը լույսի.
Մութը կդիզվի կուրծքիս ալ ներքև։

Թախիծ մը խոնավ վերեն կհոսի.
Դուրսը կհեծեն քամին և անձրև,
Մութը կդիզվի կուրծքիս ալ ներքև.
Հոգվույս մեջ կուլա սեր մ'առանց լույսի։

Դուրսը կհեծեն քամին և անձրև,
Կափկափուն ձայնով մը որ կմսի.
Հոգվույս մեջ կուլա սեր մ'առանց լույսի։
Կխածնե զիս ցավ մ'օձի պես տձև։

Կափկափուն ձայնով մը որ կմսի,
Մահն է որ կ'անցնի, անհուն, հոլաթև,
Կխածնե զիս ցավ մ'օձի պես տձև,
Լայն է վերքս ինչպես բերան մը փոսի։

ԵՐԿՐԻՍ ՄԱՀԸ

Եվ խորհիլ թե օր մ'երկրագունդը մերին,
Որ կխայտա հիմա խանդով կենսաշող,
Պիտի մեռնի, դառնա դիակ մը ցրտին՝
Միջոցին մեջ ունայն վազքով մը սլացող։

Պիտի չորնան ծառերն ու ծովը ցամքի.
Հողը բարի պիտի պաղի, կարծրանա,
Եվ իր ծոցեն ա՛լ պիտի դուրս չժայթքի
Ծաղիկներու գանձն երփներանգ, զմրխտյա,
Դալարիքին հետ ու հունձքին։ Կյանքն ամբավ
Պիտի լռե հորիզոնե հորիզոն։
Եվ ամեն ինչ որ եղավ, մարդն ըրավ,
Իր երազներն, իր հրճվանքներն ու լալոն,
Իր դարավոր ճիգն հոյակապ՝ արիության,
Գեղեցկության, արդարության, ամեն ինչ
Որ իր արյամբն ու քրտինքով սրբազան
Ստեղծեց ան՝ դիմելով միշտ վեհ ու ջինջ
Իդեալի մը գերազանց քան բնության
Օրենքը կուռ, անագորույն ու մթին,
Բոլոր ասոնք պիտի կորչին հավիտյան.
Ու ըլլան որպես թ՝ երբեք եղած չըլլայ։

Ըսե՛ք, աստղեր, դուք որ անուշ կհսկեք
Մեր վերև, դուք որ նույնպես օր մ՝ապագա
Օրերուն մեջ պիտի մեռնիք, ա՜խ, ըսե՛ք,
Կարելի՞ է, ներելի՞ է ասիկա։

ՏԱՂ

Գիշերին մեջ երբ մինակ ցավերուս հետ կոգորիմ,
Միտքս մութին մեջ կոգե դեմքիդ շնորհն երկնային.
Ու հիշատակդ ինչպես զով շողը լուսնին մտերիմ,
Կմեղմե մութը սրտիս և մութը պաղ գիշերին։

Մեծ գիշերին մեջ շիրմին օր մ՝երբ թաղվիմ միս մինակ,
Նորեն քու դեմքդ չքնաղ պիտ ոգեմ, ո՜վ սիրական.
Ու պաշտելի պատկերիդ անշեջ կանթեղն անուշակ
Մահվան խավարն ահավոր պիտ ամոքե հավիտյան։

ԼԵՌԱՆ ՔԱՐՆ ԸՍԱՎ

Լեռան քարն ըսավ
Ծովափի քարին.
«Եղբայր, կյանքդ անբավ
Տանջանք մ՝է լռին.

«Ջուրերը վայրագ
Քեզ միշտ կծեծեն,
Պիտի անոնց տակ
Հատնիս համբորեն։

«Ես վերը՝ հանդարտ,
Անշարժ տարածված.
Կքնանամ զվարթ
Երկնքին տակ բաց։

«Անձրևները ցուրտ
Չիս մերթ կթրջեն.
Բայց արևուն՝ շուտ
Կչորնամ նորեն»։

— «Չիս մի՛ մեղքընար,—
Ափին քարն ըսավ,—
Այս կյանքն ինծ համար
Հեշտանք է անբավ։

«Քու կյանքիդ մեջ շար
Դուն դեռ չես գիտեր
Սերն և իր բոլոր
Խինդերն ու վիշտեր։

Ծովն իմ անսահման
Սիրահարս է և
Ես իր աննշան
Սիրուհին թեթև։

Իր լիզումին տակ
Հոգիս կբերկրի,

Եվ ինծի նվագ՝
Մոռնչն իր վայրի։

Ի՜նչ փույթ եթե հոս
Ես պիտի հատնիմ,
Թող խաժ այս քաոս
Ըլլա իմ շիրիմ։

Ա՜խ, մեռնի՜լ անկից,
Մեռնի՜լ անոր մեջ,
Զոր կսիրես անբիծ
Տարփանքով մ'անվերջ։

Մեռնի՜լ շիթ առ շիթ
Անոր համբույրեն,
Անոր մեջ հոգիդ
Քամել համբորեն։

Սիրահար սրտին
Համար ասիկա
Ամենեն հեշտին
Վայելքն է որ կաս։

ՀՈՎԻՆ

Բյուրաբերան ու բյուրաթև։
Էա՜կ անտես, անծայր և անհաս,
Որ մերթ ուժգին, մերթ հեզ, թեթև,
Միջոցին մեջ կսլանաս,
Բյուրաբերան ու բյուրաթև։

Քու խենթ քմայքդ կսիրեմ,
Մեղմ նվագներդ ալ քնարական
Ու խաղաղիկ երգդ վսեմ
Պուրակներու մեջ երբ գաս ման,
Քու խենթ քմայքդ կսիրեմ։

Ավելի ես կհմայես զիս՝
Երբ զայրույթով մը վիթխարի,
Անզուսպ, ահեղ շռինդով կանցնիս
Օդին մեջեն, դև՜ ամեհի,
Ավելի ես կհմայես զիս։

Մե՜ծ երաժիշտ անհունալար,
Որուն գործիքն են օդն ու ծով,
Եվ որուն մարդը չի կրնար
Վերլուծել երգն հոդեվրդով,
Մե՜ծ երաժիշտ անհունալար։

Երբ մութին մեջ ոռնաս հանկարծ,
Ինձ կթվի, որ անհամար
Գազաններ են երախաբաց
Որ կմռնչեն վայրագաբար,
Երբ մութին մեջ ոռնաս հանկարծ։

Երբ որ բախես անթեթև թևերդ,
Կարծես հազար դրոշներ են լայն
Որ, այերին մեջ, վետ ի վետ
Կծածանին շառաչածայն,
Երբոր բախես անթիվ թևերդ։

Օվկիանո՜ս կդողա,
Երբ կսուրաս անոր վրայեն,
Հարվածներովդ երբոր հսկա
Կպատռտես զայն ուժգնորեն,
Օվկիանո՜ս կդողա։

Դուն կիսոյանաս ահագնասլաց,
Ու հաղթ լեռնե՜ր կսարսին,
Եվ անտառներն հաստազանգված
Կցնցվին ու կդղրդին,
Դուն կիսոյանաս ահագնասլաց։

Կտապալես ուժով վայրի
Ամեն ինչ, որ գնացքիդ առջև

Կ'ելլե, շուշան և կամ մայրի,
Նավ լայնանիստ կամ կուր թիթև,
Կտապալես ուժով վայրի։

Մարդը գոռոզ և իմաստակ,
Որ զինքն արքա արարչության
Կհորչորչե, քու անցքիդ առակ
Կդողդողա տերևանման,
Մարդը գոռոզ և իմաստակ։

Ո՛ւժ ահեղ, ե՛րգ խորհրդավոր,
Բնության հոգվոյն մեծ շունչն ես դուն,
Բարբառն հզոր, որով անոր
Կթարգմանվին խոհերն անհուն,
Ո՛ւժ ահեղ, ե՛րգ խորհրդավոր։

ԿԻՆԸ

Ինչպես նկար մը յուղանկար,
Որ մոգություն մրն է աչքին
Երբ հեռուեն զայն կդիտեք
Եվ որ անհարթ, կոպիտ, մթին

Կդառնա կույտ մ'երբ մոտենաք,
Կինն այսպես է հաճախ, անոր
Մեջ կկարծեք տեսնել համակ
Ազնվություն, գորով ու շնորհ,

Բայց վա՜յ ձեզի, եթե մոտեն
Ճանչնաք զանի և սրտին մեջ
Տեսնեք դևերն, որոնք հոն են...

Պետք է խարեենք մեր սիրտը խեղճ,
Պետք է սիրենք կինն հեռուեն,
Խելագարի պես, կուրորեն։

1893

ՄԵԿՆՈՒՄ

Իրիկունն իջավ, երկինքը մթնեց,
Ծովուն վրա դժդույն շուքեր թափեցան.
Քաղաքն իր կարմիր լույսե՛րը վառեց,
Երջանիկ՝ հույսովն անուշ գիշերվան։

Կես-մութին մեջեն նուրբ զանգակ մ'անտես
Ճոլոզեց վճիտ թրթռումներով.
Նավահանգիստը քաղցր է գոգի մը պես,
Քունին զով թևին ներքև ապահով։

Բայց ամպ կա երկինքն, հով անցավ օդեն,
Ցամաքը հիմա գաղջ է և խաղաղ,
Լույսերը զվարթ երազներ կերգեն.
— Անդին՝ ծովը ծանր ու խավարը պաղ։

Ու կբաժնվինք մենք հիմա կերթանք,
Նավն ահա սուլեց. մնա՛ս բարով, քաղա՛ք.
Մարեցավ զանգակն, ու մենք ի՞նչ անանք
Տխուր ծովուն մեջ, մութին մեջ դատարկ։

ՓՇՐՎԱԾ ՍԻՐՈ ԵՂԵՐԵՐԳԸ

ՏԱՂԱՇԱՐՔ

Ցավս աչքիս մեջ, ճակտիս վրա
Դալուկ մ'անհուն է դրեր.
Չիս տեսնողը կսարսռա,
Որպես թե ստվեր մը տեսներ.

Սոխակներն, որ զիս այնքան
Կսիրեին քնքշորեն,
Հիմա սոսկմամբ խույս կուտան,
Երբ իմ անցնիլս տեսնեն։

Ու կարմիր վարդ մ'անցյալ օր
Ըսավ, երբ մոտը գացի.
«Այս թափառողն ով է, որ
Աչքեր ունի մեռածի»։

Լուսինն երկնքին մեջ կտարածեր
Իր արծաթեղեն քերթվածն անսահման.
Առվակը սիրո երգ մը կհծծեր
Ծառերուն ներքև հուշիկ գալով ման։

Ու երջանկության այս տարափին տակ,
Որ անուշ-անուշ երկնքեն կ'իյնար,

Թևեթև,— մի՞տքդ է—գացինք մենք մինակ՝
Այն գիշերն, ուր զիս սիրել խոստացար։

Եվ գեղեցիկ էր գիշերն այն գարնան,
Ու դուն գիշերեն ավելի աղվոր.
Եվ հոն հավատացի ես երջանկության
Եվ ինձ թվեցավ թե միշտ լուսավոր։

Գիշեր մը մեր շուրջ պիտ տարածվեր
Եվ թե Բնության դրախտին մեջ դուն
Պիտի միշտ վրաս շուշանե թևեր
Բանայիր, հոգվույս պահապան զվարթուն։

Դուրսը թանձր է մութն և ի՜նչ թախծագին
Կերգեն հողին վրա անձրևին շիթեր.
Գիշերն հիմա սուգ մըն է ահագին,
Եվ դուն, իմ աղվո՜ր, ա՜լ զիս չես սիրեր։

Տե՜ս հիմա ինչ կերազեմ.
Գիշեր ըլլա խավարչտին,
Թանձր ամպերով թիաղեմ,
Որ տրտմորեն աստանդին։

Աստղերն ըլլան քնացած
Երկնքին մեջ մոայլ ու մունջ,
Եվ անձրև մը ձայնով ցած
Երգե երգն իր թախծահունչ։

Փողոցներեն լուռ ու մութ,
Ուր ամեն քայլ ա՜լ դադարի,
Հով մը միայն նվաղկոտ
Հեծկլտալով թափառի։

Ու ես, լքված, միս-մինակ,
Կես գիշերին, այն պահուն,
Ուր հեռվեն տխրունակ
Մեղեդիով կերգե բուն։

Սուզված ցավիս մեջ անհույս,
Անցնիմ լռիկ, թախծագին,
Գիրկս առած իմ խեղճ սիրույս
Պաղ դիակը թանկագին։

Եվ սակայն խորհե՝ որքա՞ն երջանիկ
Կրնայինք ըլլալ։ Այս երազն, հոգի՛ս,
Աղվոր երազ էր։ Դուն պիտի գողտրիկ
Հրեշտակն ու մուսան ըլլայիր մտքիս.
Քու շնորհիդ մեջեն տիեզերքն համայն
Պիտի տեսնեի. դուն դըշխոն հոգվույս
Պիտի ըլլայիր, և երկնքին տակ լայն
Քեզմե պիտի գար ինծի կյանք ու լույս։
Եվ այս աշխարհին մեկ անկյունն, հեռուն,
Պիտի շինեինք պզտիկ բույն մ'անուշ,
Ուր բույրերուն մեջ թարմ ծաղիկներուն
Պիտի օրրեինք մեր սերը քնքուշ,
Ու նախանձեին պիտի մեր բախտին
Թռչուններն ազատ. ու երբ դաշտերեն
Ման գայինք մեկտեղ, պիտի ըսեին
Վարդերը սիրուն. «Այս տղաքն ո՞վ են,
Որոնք եղեմեն ելլել կթվին»։
Եվ կյանքը մեզի պայծառ մեծ քերթված
Մը պիտի դառնար, ուր ոսկի տառով
Մեր երջանկությունն ըլլար տարփողված։
Ես համակ ավյուն, դուն՝ համակ գորով,
Դուն՝ բարություն, ես՝ անձնվիրություն,
Պիտի ապրեինք, իրարու փարած.
Ու մեր իինդն այնքան պիտի ըլլար անհուն,
Որ պիտի լայինք, ժպտելե հոգնած։

Սեպե՛նք, սիրելի՛ս, որ աս կատակ էր,
Բախտին անողորմ մեկ կատակն հիմար,
Եվ ջանա՛նք մոռնալ, ու թող մեր սրտեր

Այնպես համարին, թե երբեք զիրար
Չեն ճանչցած։ Գիտեմ, այս սերը դժբախտ
Մեր հոգիին շատ խորերն էր բունած.
Ի՞նչ ընենք, պե՛տք է զայն մեռցնել. մեկ լա՛խտ
Անոր թարմ գլխուն, ու եղավ գնաց...
Եկո՛ւր, մենք ըլլանք դահիճներ ահեղ,
Մտնենք մեր սրտին մեջ և անգթորեն
Փրցնենք մեր սերն, եթե հետ մեկտեղ
Նույնիսկ կտորներ փրթին մեր սրտեն։

Ա՜խ, երբ կըսեմ, որ զիս մոռնաս մշտապես,
Կզառանցեմ... Չէ՛, զթությո՞ւն, ատիկա
Ինծի մահ է։ Տե՛ս ինչ միայն կուզեմ ես։
Այն պահերուն, ուր հոգիիդ մեջ խինդ կա,
Ժպիտներուդ, հրճվանքներուդ մեջ վճիտ,
Երբ կյանքն ուրախ բույրերով ռունգդ գգվե,
Երբ խնծիղի ձայներ հնչեն ականջիդ,
Երբ ապրիլը քաղցր ու համով ու լավ է՝
Հասուն, հյութեղ պտուղի մը պես բուրյան,
Առավան ջինջ զարթումներուդ կամ պայծառ
Երազներուդ մեջ, ուր տարփանք մ'անսահման
Քու շուրջդ հավերժ կթափառի թևապար,
Կամ լուսնազօծ գիշերներուն մեջ ամրան,
Կամ երբ ըսեն քեզի թե շատ ազվոր ես,
Կամ երբ այն, որ պիտի սիրե քեզ հիմա՝
Համբույրի մը մեջ անվերջ սեր երդվննա,
Մոռցի՞ր զիս այդ պահերուն մեջ արծաթյա։
Սակայն երբ սիրտդ փուշն զգա տրտմության,
Երբ ձանձրույթի կամ զզվանքի վայրկյաններ
Հոգվույդ վրա թույներն իրենց թափել գան,
Երբ ցավ մը վիզդ վար ծռե կամ ստվեր
Մը կյանքիդ լույսը մղկտացնե, կամ երբ սև
Գիշերին խո՛րը քեզ թախիծ մը փարի,
Երբ վերջալույսն իր ոգևարն հևիհև
Քեզ փոխանցե կամ իր ցուրտը մարմարի
Զմեռվան հովը հոգիիդ մեջ կաթե,

Գեթ այդ մաղձոտ վրդովումի պահերուդ,
Երբ անձուկ մը կփոթտե շուրթերդ բուստե,
Հիշե՛, բոպե մ'հիշե իմ խեղճ սերս մութ։

✖

Ինչպե՞ս մոռնալ քեզ... դուն իմ մեջս իսկ ես,
Ու շուրջս, ամեն տեղ, կյանքիս մեջ համակ.
Եվ որպեսզի դուն դուրս ելլես սրտես,
Պե՞տք է որ իմ սիրտս դառնա դիակ։

Ինչպե՞ս քեզ մոռնալ... Գթացե՛ք ինձի,
Հովե՛ր, եկեք, բո՛ւռն, հոգիես անցեք.
Թերևս մարե ձեր շունչն ամեհի
Այս հուրն որ, ավա՜ղ, չի մարիր երբեք։

Ո՞ւր փախչիլ... անլույս խավարին իսկ մեջ
Քու դեմքդ կուգա միշտ դեմս ցցվիլ.
Ու եթե քնանամ, ձայնիդ երգն անվերջ
Կուգա երազիս մեջ արձագանքվիլ։

Դեյանիրայի թունավոր շապիկ,
Քեզ ինչպես նետեմ ուսերես անդին.
Քու անձնյուր հյուսվածքդ, անձնյուր քու թելիկ
Փակած է մսիս ե՛ն խորունկ նյարդին։

Քեզ մոռնա՛լ, մեռնի՛լ է ինձի համար.
Ու սառուցի՛կ մահ մըն է ատիկա.
Չէ՛, թող թույնն հոգիս այրե բոցավառ,
Եվ թող սիրելեն իմ մահս ինձի գա։

✖

Անոնք, որ մեծ անապատեն անցեր են,
Կպատմեն թե մերթ, երբ ծարավ ու խոնջած,
Կ'երթա ճամբորդն ավազի մերկ դաշտերեն,
Հեռուն, հեռուն, հորիզոնին մոտ հանկարծ
Ծիծաղագեղ պատկեր մ'անուշ կփթթի,

Ծառեր, որոնց ստվերն հստակ կերկննա
Ջինջ գետակի մը ծոցին մեջ արծաթի,
Կանանչ թալշե կակուղ մարգի մը վրա,
Եվ պապակած ճանապարհորդը խանդով
Կխոյանա ուրախությամբ սարսռուն
Դեպ ի հոն, ուր զվարթ տեսիլն ակնթթով
Կփայլեցնե հույսն իր պայծառ ջուրերուն։

Եվ այդ ջուրե՛րը պատրանք են, ու պատկերն
Արևուն մեկ չար կատակն է... ու երբ հոն
Հասնի ճամբորդն, իր հուսախաբ նայվածքներն
Ուրիշ բան չեն տեսներ թե ոչ հորիզոն
Մը միշտ դատարկ հեռուն, և իր ոտքին տակ
Ավա՜ղն անհուն ու հրաբորբոք, մերկ ու չոր...

Ո՞վ սիրելիս, սերդ այդ միրաժն էր վայրագ,
Եվ ես այն խեղճ եղա խաբվածն ուղևոր...

ԽԱՎԱՐԻՆ ՄԵՋ

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Օրերը կհոսին մութ Հավերժն ի վար,
Իրերը կդառնան անվախճանաբար,
Ու տիեզերքին մեջ անծայրապարփակ
Կյանքն ու Մահն հավիտյան կպագնեն զիրար։

Երգ մըն է տարտղնած, որ ավարտ չունի,
Մեծ առկախ տուն առանց ծածքի և սյունի,
Եվ էությունն ամբողջ, շարժումեն հոգնած,
Աչք մըն է մշտաբաց, միշտ կարոտ քունի։

Ոչնչին ծոցին մեջ փոշին կպարե,
Ոգի մը խելագար պարը կվարե.
Եվ անիմաստ հեվքոտ պարին մեջեն միշտ
Կեուլե ձանձրույթին հովը կապարե։

ԼՌՈՒԹՅՈՒՆ

Քա՛ղցր աստվածուհի՝ փակ շրթունքներով,
Աչվերդ անշարժ, ճակատդ անվրդով,
Մարմինդ անտես փաթթված խաղաղ
Ճերմակ քողերու մեջ միապաղաղ,

Թևերդ կյանքին վերև ընդլայնած,
Կհանդարտեցնես մեր տենդերն ու լաց.
Եվ կոծն ու ժխո՛րը մեր տանջանքին
Քու փեշերուդ տակ կիյնան կամքին։

Դուն ցոլացումն ես անհուն Ոչինչին,
Որուն մեջը Կյանքն արկած մ՝է չնչին.
Քենե՛ եկանք մենք, քե՛զ պիտի դառնանք.
Բա՛ց քու գիրկդ զով, որ հանգչինք քնանանք։

Գլուխս, ավա՛ղ, դժոխք մըն է բոցավառ,
Դժոխք մ՝անհուն՝ ոլորտներով անհամա՛ր.
Կղգամ ամբողջ հոն մարդկությունն ալևոր,
Որ կվառի իր ցավերով դարավոր։

Ծանր, ահագին և հրակեզ, ան կճնշե
Մարմնուս վրա, կլափե զայն՝ կմաշե,
Ու կտարածե վայրագ հրդեհն իր մթին
Ամբողջ կյանքիս վրա, և ամբողջ աշխարհին։

Ա՜խ, կարենա՛լ ապրիլ առանց խորհելու,
Ըլլա՛լ ծաղիկ, կամ խոտ, կամ քար, կամ առու,
Ապրիլ առողջ, անգիտակից ու հանդարտ,
Կյանքով մ՝որ պարզ ըլլար, ապուշ ու զվարթ։

Մեռած ջուրերու մեռա՛ծ ծաղիկներ,
Լայն տերևներով անշարժ տարածված,
Սուգի ծովերու հոգնա՛ծ ալիքներ,
Եվ դուն, սև՛ շուշան, ցավին մեջ բացված,

Հեշտաթույր խոտեր, մելանուշ հոտեր,
Վիժած կյանքերու դալուկներ ու պաղ,
Հատած սրվակներ, լռած դրվագներ,
Երգեցեք ինձ մութ օրոր մը դանդաղ։

ԾՈՎՈՒՆ

Չէ՛, չեմ սիրեր որ քնանաս ծուլորեն,
Աղվոր լազվարթ մարմինդ անշարժ տարածած.
Չեմ ուզեր որ քեզ տիրե մարդն անորեն,
Եվ զբոսնու քեղմով՝ անվախ, անկասկած։

Չէ՛, ստրուկ չես դուն, խաժահե՛ր թագուհի,
Քեզ համար չեն թմբիրը վատ և պախուրցն.
Ելի՛ր, ձայն տուր ալիքներուդ ամեհի
Ու վեր ժայթքե անոնց ճերմակ-կապույտ խուրձն։

Պատռե՛ ծավի լայն պատմուճանդ այդ նրբին,
Ու կանանչցի՛ր, սեցի՛ր, այդ մեղկ ժպտին տեղ՝
Քու անսահման դեմքիդ վրա մոլեգին՝
Ցույց տուր մահվան սպառնալիքը ահեղ։

Գոռա՛, ցատկե՛, եղի՛ր անհուն կատաղին,
Պիրկ գալարե կանանչ սյուներդ ջուրի.
Փրփուրներուդ ճերմակ լորձունքն երկնքին
Նետե՛, մոնչմա՛նդ հետ, անե՛ծք վիթխարի։

Որչափ ունիս աղիքներուդ մեջ զայրույթ,
Ինչ արհավիրք որ ունիս սև վհիդ մեջ,
Որոտումին մեջ պայթեցուր ջուրերուդ
Ու խոլական ոստումներուդ մեջ անվերջ։

Թող սահանքներն անհուն բացվին երկնքին,
Թող թափի ծոցդ հսկա անձրևն ընկլուզող,
Ու լեռնաձև կանգնած ջուրերդ ահագին
Թող գան խեղդել մարդն ու իր կյանքն երկրասող։

Թող ջնջվի աշխարհ մ՚ուր լիրբ, կտիրե
Կեղծիքը վատ, անգթությո՛ւնը գձուձ,
Ո՛րն նենգության ուր ոչ մեկ սիրտ կսիրե,
Ուր կսիգա հաղթող Ոճիրն հինավուրց։

Տե՛ս սա ճղճիմ եռուզեռումն աղտեղի
Ծիծաղաշարժ էակներու իմաստակ,

Որոնց հոգին կլցնե հե՛ռը լեղի
Եղբայրության սուտ քողին տակ կապուտակ։

Կճգնին շա՛նթը զսպել, հո՛ւրը գերել,
Ու քեզ լուծի տակ առնել, ծո՛վ անարատ,
Եվ կթողուն իրենց պիղծ սիրտն անարգել
Իր փտության կատարել գործը հայրատ։

Կանանին անոթության ուրիշին
Ու կհրճվին իրենց եղբորը ցավով,
Կկոխոտեն անմեղն անզոր, կքծնին
Գարշապարին շուրջ անոր որ է ուժով։

Սուտը լկտի կոտորածը վայրագ
Իրենց հոգվոյն հեշտանքներն են գերագույն.
Ու երբ իրենց մեջ հառնե մերթ անապակ
Էակ մ՚ազնիվ, խաչ կհանեն զայն խսկույն։

Եվ որպեսզի չքմեղացնեն արյունի
Իրենց ծարավն անասնական, կհնարեն
Սև աստվածներ, արյունկզակ, վայրենի,
Եվ անոնց անվամբ իրար անվերջ կջարդեն։

Ծո՛վ, ծո՛վ, ցցվե, եղի՛ր ուժը վրեժխնդիր,
Խուժե՛ երկրիս վրա և քանդե՛ զայն ի սպառ,
Ու մարդն անարգ և այս աշխա՛րհը զազիր
Վերընկղմին թող քաոսին մեջ խավար։

ԴՈՒՆ ՊԻՏԻ ԳԱՍ

Դուն պիտի գաս աղվոր հեռավոր ափերեն
Տեղ մը, չեմ գիտեր ուր, ես կզգամ որ կաս դուն.
Հավիտյանեն ի վեր իմ հոգիս անձկորեն
Կսպասե օդային քու գալուստդ սիրուն։

Մեծ ցավի ժամերուն, երբ բիրտ բեռը կյանքին
Անողորմ ծանրությամբ ուսերս կփշրեր,

Երազված դեմքիդ ցոլքն, աղու և կաթոգին,
Հոգիիս մութին մեջ քաղցրություն կծորեր։

Ու մոգիչ երևմանդ հրապույրը վճիտ
Քույրորեն բուժեց միշտ իմ սիրտս կարևեր,
Ու մրմունջը բարի, որ կթափեր բերնիդ
Ջով ու ջինջ ստվե՛րեն, գիս հույսով կգիներ։

Կզգամ, գիտեմ որ կաս... ու միայն ես գիտեմ.
Ավելի մտերմորեն քու դեմքդ կճանչնամ,
Ո՜վ Անուրջ խուսափուկ, ո՜վ Աղջիկ ուրվադեմ,
Քան բոլոր շոշափված դիմակներն իրական։

Կճանչնամ քեզ մինչև խորքն անգայտ քու հոգվուդ
Ու գիտեմ, որ երբեք երկրիս վրա ո՛չ մեկ տեղ
Ո՛չ մեկ կույս ունեցավ անարատ ու կապույտ
Ճառագայթը քու լայն նայվածքիդ երկնագեղ։

Քու անունդ, զոր ինձի հայտնեց ձայնը մութին,
Անուշ է ավելի, քան անունը մահվան,
Ու ճակատդ ավելի պայծառ, քան շողն անգին
Լուսնակին և քան բույն աստղերուն մայրական։

Պիտի գաս... քեզ համար արցունքովս հորինած
Ծովի մը մեջ անհուն, բյուրեղ տուն մ' եմ կանգներ,
Զարդարված ցնորքին վարդերովն հրահայաց,
Ուր գորովն անկողին մ' ամպահյուս է փռեր։

Ու երբ իմ թևերուս մեջ իյնաս նվաղիս,
Ու երբ սուրբ լանջիդ վրա հանգչի գլուխս հրավառ,
Քու հոգիդ խառնվի պիտի իմ հոգիիս,
Ու մեռնինք պիտի քաղցրը մահով մը երկար...

Մահն իր անուշ թևերով
Իմին վզիս փարեցավ,
Եվ խոր ու բուռըն սիրով
Հոգիս անոր հարեցավ։

Հիմա մռայլ որորներ
Ուղեղիս մեջ կհնչեն
Ու կ'անցնին սև թափորներ
Երազներուս իմ մեջեն։

Կարծես իջնել մ'է անվերջ
Ջուրերու մեջ՝ դեպ ի վար,
Եվ կյանքս այդ զով վհին մեջ
Պիտի մարի համբաբար։

Կյանքս եղավ լեռ մը քարոտ,
Լերկ ու մերկ ու անարոտ.
Սիրո մատները նարոտ
Չկապեցին ճակատիս.
Մնաց միշտ սիրտս կարոտ
Լսելու քաղցրն ավետիս։

Մատնված սև վիշտերու,
Սպասեցի ես ի զուր,
Սպասեցի հավիտյան
Հոգվույս քրոջ գալստյան։
Ու միշտ հեռու, միշտ հեռու
Փախավ ինձմե թևով սուր
Թռչնիկն անուշ ցնծության։

ԱՅՍ ԳԻՇԵՐ

Այս գիշեր, ջղուտ ձանձրույթիս խորեն,
Կհիշեմ տրտում, բուռն հաճախանքով, այն պահը կրկին,
Ուր տեսա անցնիլը տարտամորեն,
Խուսափուկ, խռովիչ երևույթ անգին,
Ո՜վ դուն, անծանոթ աղջիկ, գեհիկ և աստվածային,
Զոր թերևս երբեք ա՛լ պիտ չտեսնեմ, և որ ինձի տվիր
Հուզում մ'ա՛յնքան խոր, այնքա՜ն թախծալիր։

Գարնան օր մըն էր, արևով ծաղկած,
Թարմ հովուն մեջեն սահող նավուն մեջ,
Քեզ տեսա, գլուխդ որևէ մարդու մ'ուսին կոթընած.
Դեմքդ կշողար հրճվանքով մ'անվերջ.
Մեծ արևուն մեջ ծիծաղըդ պայծառ
Կբարձրանար ջինջ, հնչուն ու թեթև,
Ու մարմինդ համակ անով կթրթռար,
Եվ լայն ու խորունկ աչքերուդ մեջ սև
Մանկություն մ'ամբողջ կզվարճանար.
Լանջակիդ տակեն, դեռ մանր ու մատղաշ ծիծերըդ ցայտած,
Նթուվռային Թռչնիկներու պես.
Էությունդ ամբողջ շնորհով մ'երկնային
Կշողար, ու նուրբ, գողտր ու խոլ անշա՜փ,
Որ թևի պզտիկ հարվածով մ'հանկարծ
Օդն ի վեր ելլելը կսպասեի։
Հոգիս գինովցած՝ պահիկ մը խարխապ
Թևով մաղերուդ քովերն հածեցավ.
Բայց ա՜խ, ծիծաղիդ մեջեն հովն ինծի
Բերավ քու բառերդ, բառեր գռիհի՝
Տիղմի մեջ թաթավ։

Մեծ սրճարանի մ'օդին մեջ հոտած, շինծու լույսին տակ
Գտա քեզ նորեն,
Տխուր ու տափակ
Երգ մը կվազեր ջութակներն ի վար
Երաժիշտներուն ռամիկ մատներեն.
Մարդու դիմակով անասուններու ամբողջ զազիր պար
Մ'էր քեզ բոլորեր,
Եվ դուն, նույնը միշտ, ծիծաղովդ հիմար
Շրթունքդ վառեր,
Աչքերուդ վճիտ մանկությանը մեջ ծաղկած գողտր ու զով,
Հովեն տարուբեր բույսի ճոճումով՝
Մարմինդ իր ճապուկ շնորհին մեջ ժիր,
Ճերմակ թաթիկներդ օդին մեջ թեթև
Թիթեռնըկելով, կսլանային
Ամենուն մեջեն,
Բարակ, վետվետող, փափուկ, բարեձև,
Հեգնակա՜ն հրեշտակ, փորձառո՛ւ տղեկ, շքե՜ղ անասուն,

Ոսկի ցնծություն
Ուր խենթ բոժոժներ տենդով կհնչեն։

Խե՜ղճ աղջիկ, գիտնա՜ս...
Այդ քու ծիծաղիդ մեջ տիեզերքին հավիտենական
Գեղեցկության լույսն է որ կշողա,
Ու շնորհդ օդային երբոր կխնդաս,
Մանուկ բերնիդ շուրջ և քու անարատ ճակատիդ վրա
Ցոլքն է իրերուն հոգիին անհաս ներդաշնակության.
Բայց դուն չե՜ս գիտեր...
Աչերըդ միշտ կույս՝ համբույրներուն տակ,
Ծիծաղըդ միշտ ջինջ՝ անպատկառ ու չար ծաղրիդ հակառակ
Բերանդ սիրո բոց, հոգիդ անտարբեր
Եվ անգիտակից, կերգես և Մահվան
Վրայեն ու Կյանքին մեջեն անսահման,
Խե՜ղճ քուրիկ, անմե՛ղ մեղավորուհի, կանցնիս ցատքելեն...
Ու դուն չե՜ս գիտեր...
Քու անցքըդ կրկին կյանքիս եզերքեն
Սարսուռն ինձ տվավ քաղցր ու ցավագին շլացումներուն,
Ո՜վ դեմք վրդովիչ, տրտում ցնծություն,
Վայրկյան մը քեզնով դողդղաց հոգիս.
Այժմ աչքես նորեն, թերևս առհավետ, դուն կկորսըվիս
Ու կերթաս սուզվիլ կյանքին անորոշ տգեղության մեջ.
Բայց ծիծաղդ հիմա
Ու շնորհդ բնածին, հրապույրդ հոգեհմա,
Քեզմե անջատված՝ պատկեր մը կըլլա,
Եվ նույնիսկ երբ անձդ իմ մտքես հավետ
Ջնջըվի անհետ,
Այդ պատկերը միշտ իր անշեջ շողովն հոն պիտի ցոլա՜։

ԳԻՇԵՐԱՆՎԱԳ

Ջութակներու գոհիկ ու ցավագին
Հեծյունին մեջեն
Լալկան հոգին դաշնակին
Կկողկողի արցունքներով որ շիթ առ շիթ կհնչեն.

Հոծ մարդկություն մը, անորոշ, անծանոթ,
Ջորսդին կոռնա, կխնդա.
Սրճարանին քրտնած օդին մեջ հեքոտ,
Ուր կվառին սուտ շրթունքներն էգերուն
Արուներու նայվածքին տակ մոլորուն,
Ցած հրճվանքի խժուկ մ'համառ կթնդա.
Ու հոգիիս պաղ պարապին մեջ աղոտ
Ջանձրույթ մը խուլ կհոնդա։

Դուրսն, ամպոտած ապակիեն անդին, լույսեր երերուն,
Կարմիր լույսերն անցնող տենդոտ կառքերուն,
Ու խոպոտ ձայնն ահագին
Ջղախտավոր, քնատ, կատղած քաղաքին...
Լույսե՛ր, շարժում ու ձայներ,
Կյանքին խոշոր զավեշտը...
Թանձր անձկություն մը կդիզվի կուրծքս ի վեր.

Ջուրակին ողբն հիմա, անոր սուր շեշտը
Կցավցնե սիրտս որպես թե զայն խածներ.
Աչքիս, տարտամ պատկերներով հեղհեղուկ,
Կընդերևան գունատ ձևեր խուսափուկ,
Ձևեր շփոթ, գաղափարի ստվերներ,
Ձևեր ահեղ, խորհրդավոր, ծաղրելի...
Ու մեծ խոնջենք մ'ուղեղիս մեջ դանդաղորեն կհալի։

Ա՜խ, խե՜ղճ հեշտանքը շինծու...
Դեմքերը վատ՝
Կեղծ լույսին տակ, մթնոլորտին մեջ հայրատ։
Ա՜խ, անիմաստ այս հոգնությո՛ւնն ապրելու...
Ու կխնդա՛ն ատոնք, անդուլ կխնդան,
Ապուշությամբ գինովցած...
Ու կտեսնեմ ահա կանգուն մեծաբաց՝
Ցանկությամբ վառ աչքներուն վերև նայվա՛ծքը Մահվան
Շուրջս երկայն կիյնա ստվեր մը պղտոր.
Կտժգունին հանկարծ լույսե՛րը բոլոր.
Դեմքերը, պաղ ու դեղին,
Ուրվականներ կթվին.
Օդը դիա՛կ կհոտի...
Ու կփախչիմ, առանձնության ու խավարի անոթի։

ՍՓԻՆՔՍԸ

Անապատին մեջ ուր, լուսնին տակ լռին,
Ունայնությունը կնիրհեր անսահման,
Տեսա սփինքսը հինավուրց հեքիաթին։
Գլուխը բաց, աչքերը մեծ, ցուրտ ու լայն,
Իր առյուծի թաթերուն վրա երկնցած,
Կմտածեր բերանը փակ ու խաղաղ։
— Դուն, որ գիտես լուծումն հավետ փնտրված
Հավերժական առեղծվածին, ո՞վ ճիվաղ
Անագորույն ու վեհափառ, հայտնե՛ զայն.
Օ՜, մեզ հայտնե՛ վերջապես բառն անհրաժեշտ,
Որ բացատրե մեզի իմաստն այս ունայն
Տիեզերքին, թե ինչո՞ւ դատն այս զավեշտ
Կխաղանք հոս, ո՞ւրկից եկանք, ո՞ւր կերթանք,
Թե ի՞նչ թաքուն նպատակի մ'կձգտին
Մեր սա բոլոր ճիգն ու տենդն ու տվայտանք»։

Սփինքսն—հրա՜շք—բացավ բերանը ցրտին
Ու ցած ձայնով հծծեց. «Եկո՛ւր, ականջիդ
Գաղտնիքս ըսեմ—չկա գաղտնիք, ու չկա՛
Կյանքին իմաստ մ'ու նպատակ մը վճիտ։
Ամեն բան սուտ է և սին ու խարեբա.
Եվ եթե կա իմաստ մը, չեմ գիտեր զայն,
Եվ ո՛չ մեկը տիեզերքին մեջ անհուն
Գիտե զայդ, ո՛չ իսկ աստվածներն,— եթե կան.
Ահա՛ գաղտնիքս, բայց մի՛ կրկներ ո՛չ մեկուն»։

ԲԼՈՒՐԻՆ ՎՐԱ

ԵՐԳ ՄԸ

Ամոքելու համար տաժա՛նքը երկար
Ճամբորդությանն արկածավոր, երբ կ՚անցնի,
Մինավորիկ, ձորերեն ժանտ ու խավար,
Սայլորդը քաղցր և օրորող երգ մ՚ունի։

Դուք, որ կյանքի ճամբորդությունը դժնե
Կուղևորիք մութ ուղիեն ապալեր,
Ունեցե՛ք երգ մ՚որ ձեր հոգին արբեցնե,
Երգ մը, — Արվեստ, Դյուցազնություն և կամ Սեր։

ՄՈՐՍ

Դուն, որ թողլով զիս օրրանիս մեջ միանակ,
— Գուցե կյանքի ցավն ինձ տալեդ խղճահար,—
Անհետացար խավարին մեջ անհատակ,
Ո՛վ մայր, իմ մութ հոգվույս աղբյո՛ւրը պայծառ.
Ո՛վ սուրբ գորով, սե՛ր անարատ, քա՛ղցր գոգ,
Ո՛ւր ես թաքչած... Ես քեզ երբեք չճանչցա.
Այլև երբեք չեմ հավտացած, որ իրոք
Ամբողջապես ջնջված ըլլաս։ Ճակտիս վրա
Կզգամ, հաճախ, երանությամբ մը տրտում,
Անցնիլն անուշ մատվըներուդ գգվանքին,
Կան պահեր, ուր կկարծեմ ձայնդ անպատում
Լսել ականջն ի վար սրտիս անձկագին.
Քեզ միշտ վերևս կգուշակեմ թևաբաց,
Գորովագո՛ւթ ու ցավագին ուրվական.

Եվ ամեն հեղ, որ իմ կյանքիս մեջ կրցած
Եվ կատարել գործ մը հօգուտ մարդկության
Կամ միս-արյուն տալ երազի մը սիրուն,
Քեզ եմ խորհած, ու խորեն իմ հոգիին
Քեզ եմ ոգած և մըրմնջած եմ. «ո՞վ դուն,
Որ կհրսկես վրաս սիրով կաթոգին,
Տե՛ս, արժանի՞ եմ քեզի, գո՞հ ես ինձմե...»։
Եվ զգացած եմ նուրբ ժպիտ մը անտես,
Որ վերթ նվագ մ՚այերային իր թավշե
Ու ղեփյուռե թևերով զիս քնքշապես
Կփայփայեր։
Ու թեպետև գիտությանն
Անողորմ ձայնը հոչակած է, ավա՜ղ,
Թե մահվընե ետքը մարդեն ուրիշ բան
Չի մնար հողին մեջ, բացի մոխրի դեզ մը պաղ,
Կերազեմ միշտ— անվանելի՛ ցնորք հոգվույս—
Որ դուն՝ հողին տակ չես իջած, և անթառամ
Եվ անծանոթ պարտեզի մ՚մեջ աղվալույս՝
Կսպասես, որ գամ օր մը քեզ միանամ։

ՊԵԱԹՐԻՉԵ

Պեաթրիչեն երբ մեռավ, վհատություն մ՚այնքան խոր
Պատեց հոգին Տանթեի, որ կարծեց թե ա՛լ հնար
Չկար իրեն ապրելու. իրեն կթվեր թե բոլոր
Իր արյունը ալ ցամքեր էր կուրծքին մեջ ուժասպառ։

Ու խորհեցավ, որ լավ ևս էր լիովին չքանալ.
Բայց մինչ խոհին մեջ այդ մութ կգալարվեր ան, անհույս,
Բացվեցավ ծա՛ծքը խուցին, ու թևերով լուսածալ
Պեաթրիչեն երևցավ. «Կեցիր, եղբա՛յր իմ հոգվույս,

Ըսավ, մեռած չե՛մ. հրեշտակ մ՚էի զոր Տե՛րը ղրկեց
Լուսավորել քու հոգիդ. թողուցիր, որ զիս սիրես
Իմ ձևիս տակ մարդկեղեն, որ ունենաս շունչը մեծ՝

Գործին համար հոյակապ, զոր պիտի դուն կատարես.
Վերզգեցա այժմ իմ ձև՛ս լուսեղեն և սակայն
Պիտի քու քովդ և քու հետդ ըլլամ կյանքիդ մեջ համայն»։

Մի՛ ատեր վիշտը երբեք և անկից մի՛ վախնար դուն,
Երկինքը, տե՛ս, անկենդան է, երբ անամպ է համակ.
Ամպերն են, որ կարժեցնեն վերջալույսին և այգուն
Պերճ երանգներն ու լուսնին նշողումներն անուշակ.
Անոնց քողին ներքևեն, մեջեն անոնց ժանյակին
Ավելի ջինջ կերևա կապույտն ու խոր ավելի.
Ու ծիածանը թովիչ, այդ հրաշալիքն երկնքին,
Լույսին, անոնց մաքառմանը ծնունդն է զմայլելի։
Տառապանքն է, որ ի հայտ կբերե ուժը թաքուն
Եվ ճոխությունը ներքին մարդոց հոգվույն. զուրկ անկե՝
Մերկ է հոգին ու դատարկ, առանց կյանքի և անգույն.
Եվ որպեսզի ան ալ իր այգն երփնագեղ շողացնե
Եվ իր գոտին ծիրանի կախե մութին մեջ եսին,
Պետք է պայքարը վշտին ուժերուն հետ էության։
Բայց վա՜յ, եթե վիշտն հոգվույն տիրապետե բոնագին,
Ինչպես երկինքն, երբ ամպերն հորդակուտակ թանձրանան,
Կանհետանա ու կմեռնի, այնպես հոգին խեղդված
Կանէանա, երբոր վիշտը հոն իշխե հաղթական։
Վիշտը պետք է ըլլայ ոսոխն հարկավոր ու պարտված,
Մի՛ ատեր վիշտն և անկից մի՛ վախնար, բայց վարե՛ զայն։

Անմահությունը հոգիին ցնորք մը չէ բացարձակ.
Մահը փշրե պիտի քու եսդ ու չքացնե, բայց անկից
Պիտի մնա մասն էական՝ հավերժապես կենսունակ.
Ինչ որ ուներ քու էությունդդ ցայտական՝ ինքնագիծ,
Վերերևա պիտի հավետ զավակներուդ, թոռներուդ
Մեջ դարե դար, ու եթե սիրտդ էր մեծ կամ միտքդդ ստեղծող
Ու կրցար կյանք մ'ապրիլ հզոր կամ կերտել գործ մը հրուտ,
Հոգիդ ընդմիշտ մարդոց մտքին մեջ պիտ ապրի լուսաշող։

ԱՆՈՐ, ԶՈՐ ԱՏԵՆՈՎ ՍԻՐՆՑԻ

Ներե՛ ինձի դուն, զոր խոցված իմ սրտիս
Անիծեցի դառնությունո՛վը համբուն.
Անիծքս բուռն եղավ չափովն իմ վշտիս,
Ու վիշտս մեծ էր չափովը քու անհուն
Գեղեցկությանդ...
Ներե՛ ինձի, երբ էակ
Մ'այդքան աղվոր է հորինված Բնութենեն,
Պետք է պաշտել զայն խոնարհ ու գլխահակ,
Փառաբանող բառեր միայն մեր բերնեն
Թափել անոր ոտքերուն տակ, զմայլիլ
Ու տառապիլ, և երազով ու հույսով
Ծփալ արբշիռ, ու հառաչել, ու հալիլ,
Եվ օրհնել միշտ։
Օրհնյալ ուրեմն ըլլաս, ո՜վ
Դուն, որով սիրտս բոպե մ'լոկ, բայց բոպե
Որքան հավերժն է թանկագին, գերագույն
Երջանկությո՛ւնը ճանչցավ, ո՜վ քերոբե
Իջած երկնուստ ծածանիլ պահ մ'իմ հոգվույն
Պարտեզին մեջ, զոր քաղցրությամբ վարդալույս
Ողողեցիր և ապա ընդմիշտ ցնդեցար,
Օրհնյա՛լ ըլլաս հանուն ցավիս ու սիրուս,
Օրհնյա՛լ, քանի որ գոյություն ունեցար։

Մի՛ պարծենար գեղեցկությամբը զոր ունիս կամ տաղանդով.
Անոնք քեզի ընծայված են Բնութենեն, Դիպվածեն,
Քու ջանքերուդ արդյունքը չեն, քուկինդ չեն։ Զզվանքով,
Քամահրանքով մի՛ նկատեր անոնք որ խեղճ, զրկված են,
Դեմքով տգեղ, մարմնով տխեղծ, մտքով ի ծնե ապիկար.
Հանցանքը իրենցը չէ, ինչպես արժանիքն ալ քուկդ չէ։
Միայն աղվոր նկարագի՛ր մը, վեհ հոգի՛ մը պայծառ՝
Մեր անձնական գործն է, և անով հպարտանալ պատշաճ է։
Որովհետև հոգի մ'ազնիվ ծնունդն է միշտ դժընդակ
Երկայն կռվի մը Բնության դրած վայրագ բնազդներուն

Ընդդեմ մղված։ Ինչ ալ ըլլաս, խոնարհ էակ կամ հանճար,
Գիտցի՛ր՝ ոչինչ կա թանկագին որքան սիրով տոգորուն
Սիրտ մը մաքուր, քու ճիգերովդ իսկ դարբնված առնաբար,
Գեղեցկագո՛ւյն արձաններուն, երգերուն ու գիրքերուն։

ՀՈՐՍ

Մտքիս մեջ միշտ դեմքդ ազնվագեղ ու խաղաղ,
Ո՛վ հայր, կապրի իր վեհությամբ միամիտ.
Քաղցրահայաց խոհուն աչքերդ, միշտ մատաղ
Բոցով մը վառ, մազերուդ տակ մոխրախիտ
Ու խոնջ կնճռոտ ճակտիդ տակ լայն, քեզ հակած
Կտեսնեմ դեռ դազկահիդ վրա սիրական,
Ստեղծագործ մատներդ տարփմամբ զբաղած
Հոգի ու կյանք տալու նյութին անկենդան.
Արծաթն, ոսկին բիրտ և ակունքները անտաշ,
Կամքիդ շունչին տակ հղկված, ձևափոխ,
Ընդելուզված, կդառնային գեղահրաշ
Նուրբ էակներ՝ կանանց շնորհն հավելող։
Քե՛զ կպարտիմ, հա՛յր, արևոտ արյունիդ
Եվ քու սիրուն օրինակիդ, ինչ որ ցարդ
Ճիգերս ընել հաջողեցան, քու վճիտ
Կյանքդ ինձ ուսուց սիրել սիրով խանդակաթ
Գեղեցկությո՛ւնը Բարիին և անգին
Բարությունը Գեղեցկության։ Ու տե՛ս, հա՛յր,
Ես զգացմանց ու խոհերու մետաղին
Ու բառերու ակունքներուն վրա պայծառ
Կկրկնեմ քո՛ւ գործդ ուժերովս իմ խոնարհ։

❀

Կարմիր ըլլա թող երազդ և թող տարտամը կապույտ
Թեթև ու խոլ չընե սիրտդ, ինչպես դաշտին խոլ արտույտ։
Ապրե՛ անկախ և ուժով, քու հոգիիդ համեմատ,
Եղիր տերև մը կյանքի մութ ծառն ի վար հաստատմատ։
Մի՛ ձգեր սիրտդ ջուրին երթալ ծփալ դիպվածով,
Քալե՛ միշտ դեպ Իդեալդ, ինչպես առուն դեպի ծով։

❀

Եթե ամեն բան իրոք աշխարհի մեջ ունայն է,
Զգուշացի՛ր դուն նորեն լալկանի դեմք առնելե.
Արհամարհե՛ անողորմ ճակատագիրն, և անոր
Վայրագության դեմ հանե վեհ բարություն մը աղվոր։
Ողբալ զո՛ւր է, և վա՛տ է, բայց և խույս տուր շնական
Ու գռեհիկ ծաղրանքեն. ազնիվ ու քաջ տրտմության
Քող մը հստակ՝ լավագույն պատմուճանն է հոգիին։
Եթե չունի նպատակ Արարչությունն ահագին,
Քու կյանքդ իրեն ունենա թող նպատակ մը պայծառ։
Մի՛ կքիր բնավ ու վերեն սփոփ կամ նեցուկ մի՛ հուսար.
Հոգի՛դ պետք է քեզ բավե։ Արդար եղիր և արի,
Առանց վարձքի սպասելու։ Թող ճիգդ միշտ մաքառի
Զարին դեմ, նույնիսկ երբ հույս չունիս վստահ հաղթելու։
Եղի՛ր ազնիվ ավելի, քան անգութ կարգն իրերու։
Այդպես ապրե՛, զի այդ կյանքն է գեղեցիկն ամենեն,
Եվ ոչինչ կա ճշմարիտ բացի միայն Գեղեցկեն։

1907—1909

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

ՏՂՈՒ ՀՈԳԻՆԵՐ

ԵՍ ԻՆՉ ԸՆԵՄ ՀՈԳԻՈՎ

Զմեռվան խաղաղ կիրակիներեն մեկն էր, չոր ցուրտ օդով մը, որ ավելի քաղցր կընե տունը մնալու եսական հաճույքը։ Վարի պզտիկ սենյակին մեջ, ուր վառարանին տաքությամբը թուլցած մթնոլորտը ապրիլը կրկնապես ախորժալի կդարձներ դուրսի կծու հովեն պատսպարված այդ մտերիմ ու ապահով եղկության մեջ, երկու եղբայր միևնակ մնացեր էին։ Զարմայր, սեղանին առջև անցած, պատմություններու գիրք մը կկարդար, առասպելի աշխարհին կապույտ ոլորտներուն մեջ մոլորած։ Պատուհանին առջև փոքրիկ Տրդատը իր խաղալիքներն առած, լուրջ բան մը ընելու խորունկ ձևով մը անոնցմով կզբաղեր։

Տրտում երգ մը երկնցավ փողոցին ծայրեն. թավ ձայնի կտորներ լայն ողբ մը կբարձրացնեին, որ հովուն մեջ կտարտղներ։ Տրդատ ականջ դրավ։ Ձայները մոտեցան, խունկի հոտ մը մինչև սենյակին ներսը մտավ, եկեղեցիի խորհրդավոր քաղցրություն մը բերավ հոն. ու պատուհանին առաջը թափոր մը երևցավ՝ խաչերով, մոմերով, սևազգեստ մարդերով։ Հուղարկավորություն մըն էր։

Տրդատ, զարմացած, նայեցավ։ Առաջին անգամ էր, որ կյանքին մեջ կհանդիպեր այս տեսարանին։ Չհասկցավ զայն։ Եվ բնազդաբար, տղոց անհագ ու բռնավոր հետաքրքրությամբը,

— Զարմայր,— պոռաց,— ի՞նչ է սա։

Զարմայր, դժգոհ իր ընթերցումին գինովությանը մեջ խանգարվելուն, գլուխը վեր առավ, վայրկյան մը նայեցավ ու

— Մեռե՛լ է,— մրմնջեց։

Հետո գլուխը գրքին վրա կախեց նորեն։

Տրդատ ապշած դուրս կնայեր. փողոցին վարի ծայրը դեռ կերևային սև մարդերը, ու խաչը, որ անոնց վերև օդին մեջ կցցվեր, ու ձայները, լալագին, կերկնային փողոցին մեջ։

Մեռե՛լ...

Վախ մը չէր զգացածը, բայց անհանգստություն մը չհասկցված բանեն, անծանոթին առջև վրդովումը։

— Ի՞նչ ըսել է մեռել։

Զարմայր գիրքը ձգեց։ Պզտիկին հարցումը իր ծիծաղը շարժած էր։ Բզե՛զ. դեռ չէր գիտեր։

Ու բացատրեց անոր.

— Այդ մարդիկը հիմա գերեզման կտանին կոր մարդ մը, որուն կյանքը վերջացած է։ Այդ մարդը ա՛լ աշխարհի վրա չպիտի պտտի, ա՛լ պիտի չուտե, պիտի չխոսի, պիտի չտեսնե...

Տրդատ աչվքները բացած մտիկ կըներ։ Խաղալիք մը, զոր ձեռքը բռներ էր, վար ինկավ։

— Ի՞նչ, հիմակ ատ մարդը ա՛լ պիտի չքալե՞։

— Չէ՛. հողին մեջ պիտի դնեն զայն, վրան ալ քար մը։ Եվ հողին մեջ որդերը պիտի ուտեն անոր մարմինը։ Աչքերը, թևերը, ոտքերը պիտի փրթին, հալին, և միևնակ ոսկորները պիտի մնան։

— Ամեն մարդ ասա՞նկ պիտի ըլլա, ե՞ս ալ ասանկ պիտի ըլլամ։

— Դուն ալ, ես ալ, հայրիկն ալ, մայրիկն ալ։

Անհագին սարսափ մը ցցվեցավ Տրդատին փոքրիկ հոգիին մեջ, և այդ թարմ իմացականությունը, առաջին անգամ բախելով անէացման գաղափարին, կճղմվեր անկից։ Չկրցավ դիմանալ, ու վախուն՝ սկսավ լալ։

Զարմայր քովը եկավ, անոր վախեն զվարճանալով։

— Խե՞նթ ես, Տրդատ, վախնալու բան չկա. դեռ շատ ատեն ունինք մեռնելու։

Տրդատ կուլար, սիրտը այնքան կոտրած, որքան եթե իր ամենեն սիրական խաղալիքը կորսված ըլլար։

Լացին ձայնեն մայրը վար վազեց։

Տրդատ, զայն տեսնելով, լացը շատցուց. թևերը անոր վզին անցուց ու, գլուխը անոր երեսին դնելով։

— Մայրի՛կ,— կհեծկլտար,— ես պիտի մեռնիմ եղեր, դուն պիտի մեռնիս եղեր, ա՛լ պիտի չքալենք եղեր, ա՛լ պիտի չխոսինք եղեր... Իրա՞վ է...

Զարմայր բացատրեց. ու մայրիկը, հուզված պզտիկը կուրծքին վրա սեղմեց, և ըսավ անոր, համբույրներու մեջ.

— Մի՛ վախնար, տղաս. մեռնելն ետքը, նորեն պիտի ապրինք։ Այս աշխարհեն ետքը, ուրիշ աշխարհ մը պիտի երթանք։ Մեր մարմինը պիտի մեռնի, բայց մեր հոգին անդին պիտի երթա։

Տրդատ լացը դադրեցուց.

— Հոգի՞ն...

Պահ մը խորհեցավ, և հարցուց.

— Մինակ հոգի՞ս պիտի երթա անդին. հապա գլո՞ւխս, հապա թևե՞րս, հապա ոտքե՞րս։

— Անոնք հողին մեջ պիտի մնան։ Հոգին պիտի երթա մինակ։

— Ի՞նչ... ըսել է ա՛լ պիտի մայրիկը չտեսնե՞մ, ա՛լ հայրիկիս ձեռքը պիտի չբռնե՞մ, ա՛լ պիտի չքալե՞մ, ա՛լ կերակուր պիտի չուտե՞մ... է՛, ի՞նչ ընեմ, հոգիով ի՞նչ ընեմ ես։

Ու լացը նորեն սկսավ, կատաղի, խորունկ, անհույս լաց մը այս անգամ։ Եվ մայրիկը, որ պատասխան չէր գտներ, զգաց, որ իր աչքերն ալ կթրջեին։

ԱՍՏՎԱԾ ՊԱՊԱՆ

Հիվանդին սենյակեն դուրս ելած ատեն Մարթա տուտուին աչքերը լեցված էին։ Ծանր անձկություն մը կկարդացվեր իր հյուծված դեմքին վրա։ Դանդաղկոտ քայլերով գնաց բազմոցին վրա ինկավ և, գլուխը ձեռքերուն մեջ առնելով, սկսավ խորունկ մտմտալ։ Շրթները կդողային, և ցած ձայնով մը կմրմնջեր մերթ՝ «Աս ի՞նչ ձյուն էր մեր գլխուն եկավ...»։

Խե՜ղճ կին... ի՞նք, որ այնքան կսիրեր իր հարսը, ինք, որ կուզեր աղվոր կաղանդ մ'անցընել տալ իր թոռնիկին։ Երկու ամիս առաջ արդեն սկսած էր. խորհիլ, թե ի՞նչ նվեր ըներ Պողոսիկին. կուզեր անոր տալ սիրուն ու զվարճալի բան մը, բայց որ շատ սուղի չնստեր։ Դեռ այդ խնդիրը լուծած չէր, որը հարսը հիվանդանալով, բոլոր ծրագիրները խանգարվեցան։

Պողոսիկին մայրը լվացարար էր. իրիկուն մը հոգնած ու քրտնած տուն դառնալու ատեն՝ պաղ առած և նույն գիշերն իսկ անկողին ինկած էր, և ա՛լ չէր կրցած ելլել անկից։ Կարծելով թե ունեցածը թեթև բան մըն էր, և արդեն հետին ծայր աղքատ ըլլալով, ամուսինը չէր կըրցած բժիշկ բերել, ու հիվանդը իր կեսրոջ միամիտ ու անբավական խնամքներուն միայն ձգված, հետզհետե ավելի տկարացած էր։

Մարթա տուտուն, որ առջի օրերը իր աղոթքներով և ավանդական

դեղերով հուսացած էր զայն բուժել, հիմա կսկսեր ինքն ալ վհատիլ և գեշ վախճանի մը երկյուղն ունենալ։

Կաղանդին նախորդ օրն էր։ Մարթա տուտու ամբողջ գիշերը անցուցած էր հիվանդին քով, որ մինչև լույս չարաչար տանջված էր։ Առավոտուն մեռելային հանդարտություն մը նկած էր վրան, և ցուրտ քունի մը մեջ ինկած էր։ Այդ միջոցին է, որ պառավը սենյակեն դուրս կելլեր, ցավեն ու քնատութենեն ջախջախված։

Ու հիմա, բազմոցին վրա կծկտած, գլուխը ձեռքերուն մեջ, կմըտմըտար, կմտմտար, աչքերը հիվանդին սենյակին դռանը հառած։

Արագ ոտնաձայն մը լսվեցավ հանկարծ սանդուղքին վրա։ Դուռը բացվեցավ, պզտիկ տղա մը մտավ ներս։ Անուշ աչքերով, բարակ ճկուն մարմնով սիրուն մանչ մըն էր։ Վազեց պառավին գիրկը նետվեցավ ու անոր ձեռքը համբուրեց։ Մարթա տուտուն իսկույն իր մարմարի պես գունատ դեմքին վրա բոնազբոսիկ ժպիտ մը ձևացուց և իր զողզոջուն շրթներով մանկան ճակատին երկայն համբույր մը դրավ։ Պողոսիկն էր, իր թոռնիկը, զոր աստուծմե հետո ամենեն ավելի կսիրեր և որ դպրոց երթալե առաջ եկած էր մեծ մայրը տեսնելու։

Բայց անիկա իսկ քիչ մը տրտում կթվեր այս առտու, այդ կրակոտ մանկիկը, որուն ներկայությունը տանը մեջ զվարթության փթթում մըն էր։ Այդ փոքրիկ շաղակրատը, որուն արծաթե ծիծաղը լույս կծավալեր իր շուրջը, լուռ էր այդ օրը, և աչքերը խոշոր բացած՝ մամիկին երեսն ի վեր կնայեր, ու ինք ալ կթվեր բան մը մտածել։ Կզգար պառավը ինչ որ կանցներ այդ մատաղ հոգիին մեջ, և սիրտը կարյուներ՝ խորհելով, որ խեղճ տղան այդքան կանուխ կսկսեր տառապանքը ճանչնալ։

Ոտքի ելավ հանկարծ Մարթա տուտուն։ Հույսի աղոտ ճառագայթ մը իր մթնցած աչքերը լուսավորեց։ Բազմոցին մյուս անկյունեն գնաց առավ իր թաշկինակը, քակեց անոր ծայրերեն մին, որ կապված էր, տասնոց մը հանեց անկից, տվավ Պողոսիկին և ըսավ.

— Ա՛ռ ասիկա, տղաս, դպրոցեն առաջ շիտակ եկեղեցի գնա՛, մոմ մը վառե՛, աղոթք ըրե՛ աստուծո, որ մայրիկդ աղեկցնե ու գոց դուռ մը բանա հորդ, հաջողություն տա անոր գործերուն։ Գնա՛, զավա՛կրս, շուտ ըրե՛, քու ձայնդ արդար է, թերևս աստված կլսե ու կողորմի։

Վայրկյան մը չանցած փողոցն էր Պողոսիկը։ Գլուխը կախած, առանց չորս կողմը նայելու, կվազեր, կվազեր՝ եկեղեցին շուտ հասնելու համար։ Բայց վազած ատենը շատ մը բաներ կմտածեր. մոր հիվանդությունը, մեծ մորը քանի մը օրե ի վեր ունեցած ծանր տխրությունը կճնշեին իր միտքը, ուր սակայն տիրական տեղ մը միշտ կպահեր Կաղանդին մոտավորության գաղափարը, հետևյալ օրը իր հարուստ

ընկերներուն ստանալիք փայլուն նվերներուն, ուտելիք համեղ խորտիկներուն մտածումը։ Ինք պիտի ստանա՞ր արդյոք նվեր մը։ Մեծ մորը վերջին խոսքերը իրեն քիչ մը սիրտ տված էին, ինք արդեն լսած էր անկից, թե բարեսիրտ մեկն էր աստված պապան. «Հարկավ, կըսեր ինքնիրեն, երբ երթամ իրեն աղաչեմ, ինծի պես խելոք տղու մը վրա կգթա, մայրիկս կաղեկցնե ու հայրիկիս քիչ մը ստակ կղրկե, որ ինծի վաղը նոր լաթ ու աղվոր պատկերներ տա»։ Այսպես ըսելով տասնոցը ափին մեջ կսեղմեր ու կվազեր՝ սիրտը հույսով լեցուն։

Բայց ահա փողոցին ծայրը երևցավ կարկանդակ ծախող մը, որ թարմ, անուշահոտ խմորեղեններով բեռնավոր սակառ մը կկրեր գըլխուն վրա։ Պողոսիկը, որ առտուն բան մը կերած չէր և որ կյանքին մեջ երբեք այդ կարկանդակներեն չէր ճաշակած, բուռն փափագ մը զգաց ատոնցմե հատ մը ուտելու. կանգ առավ և սկսավ զմայլմամբ դիտել այդ փայլուն, ոսկեզօծ, հոյակապ կարկանդակները։ Մեծ էր փորձությունը, տասնոցը ձեռքը կայրեր (առաջին անգամն էր, որ տասնոց մը ձեռքը կանցներ), կարկանդակներուն անուշ բուրմունքը կխենթեցներ զինքը։ Մտածեց սակայն, որ եթե տասնոցը տար կարկանդակին, աստված կրնար բարկանալ, ու ոչ միայն իրեն և իր ընտանիքին չողորմիլ, այլև այդ հանցանքը մեծ մորը իմացնել։ Ուզեց ճամփան շարունակել. չկրցավ. ոտքերը կարծես գամված էին գետնին։ Հանկարծ, հնարամիտ գաղափար մը ունեցավ, որ իր վախերն ու խղճահարությունները փարատեց. պիտի ուտեր կարկանդակը և հետո պիտի երթար աստուծմե ներում խնդրեր...

Այդպես ալ ըրավ։ Գնեց տենչալի խմորեղեն և, տան մը անկյունը կենալով, շուտ մը լափեց զայն, հետո վազեց եկեղեցին ու ոսկեփայլ շրջանակով մեծ պատկերի մը առջև ծունկի գալով՝ իր փոքրիկ թևերը բացավ և ըսավ.

— Ո՜վ աստված, քու մոմիդ ստակը ուրիշ բանի գործածած ըլլալուս համար մի՛ բարկանար։ Դուն այնչափ բարի սիրտ ունիս, որ ինծի անշուշտ պիտի ներես։ Դուն արդեն այնքա՜ն հարուստ ես, հազարներով աստղ ունիս երկինքը, իմ մեկ պզտիկ մոմս ի՞նչ պիտի ընես։ Երբոր մեծնամ ու դրամ վաստկիմ, այս մեկ մոմին տեղ շատ մը մոմեր պիտի վառեմ քեզի։ Կաղաչեմ քեզի, որ չնեղանաս և այս ըրածս մեծ մայրիկիս չիմացնես։ Կաղաչեմ, որ բժշկես մայրիկիս և հորս գործերուն հաջողություն տաս։ Գիտեմ, որ աղեկ բան չըրի քու մոմիդ դրամը կարկանդակին տալով, բայց անոթի էի, չդիմացա անուշ հոտին։ Քեզի մի՛ պահեր։ Մեծ մայրս ըսավ, որ դուն կլսես պզտիկ տղոց ձայնը, լսե՛ աղաչանքս, և ողորմե՛ իմ ծնողքիս։

Ու դեռ ասոր պես խել մը բաներ ըսավ Պողոսիկը աստված պապային։ Իրեն կթվեր, թե տեսակ մը մեծ հայր էր, բարի ու գթած ծերունի մը, որուն հետ կխոսեր։ Ամբողջ սիրտը բացավ անոր։

Եկեղեցիեն ելած ատենը, խիզճը հանդարտած կզգար և սիրտը թեթևցած։ Մինչև իրիկուն զվարթ երևցավ դպրոցին մեջ։ Իրեն անտարակուսելի կթվեր, որ աստված պիտի կատարեր իր խնդիրքը և իրիկվան տուն դառնալուն՝ մայրը առողջացած պիտի գտներ։

Երբ տուն դարձավ իրիկվան, զայն մեռած գտավ...

Ամբողջ գիշերը ահռելի չարչարանքներու մեջ անցուց։ Կմտածեր, համոզված էր, թե ինքն էր այդ դժբախտության պատճառը, և այդ մտածումը կսարսափեցներ, կտանջեր, կջախջախեր իր փոքրիկ հոգին։ «Այո,— կըսեր ինքնիրեն,— ես մոմը չվառեցի, աստված բարկացավ, մայրիկս չաղեկցուց։ Ե՛ս եմ պատճառը, ե՛ս եմ, ե՛ս եմ...»։ Ու մինչև լույս լացավ, գլուխը բարձին մեջ խոթելով, որպեսզի ձայնը չլսեն։ Քանի մը անգամ ցատկեց անկողնեն, ծունկի եկավ և աղոթեց աստծո, որ ողջնցնե իր մայրը և անոր տեղ իր հոգին առնե, իր հանցավոր, իր անպիտան հոգին... բայց աստված չլսեց իր այս աղոթքը, ինչպես առաջինն ալ չէր լսած։

Հետևյալ առտուն, շատ տխուր, շատ դժգույն էր Պողոսիկը։ Այդ սև Կաղանդի գիշերը իր մանկական թարմ դեմքին վրա չարագուշակ լրջություն մը տարածած էր։ Հիմա լուս էր բոլորովին, ու չէր լար, մինչ մեծ մայրիկն ու հայրիկը անկենդան մարմնույն քովն իր մորը, ցավեն խելահեղ՝ կհեծկլտային։ Երեսը կախած, կմտածեր։ Ու պահ մը մեծ մայրը լսեց, որ անիկա ակռաներուն մեջեն կմրմռար.

— Չէ՛, չար մարդ է եղեր աստված պապան...

ԾԻԾԸ

Գլուխը բաց, թրթրիկ հագուստներու մեջ վտիտ մարմնիկ մը քաշկըրտելով, ծակծկած գուլպաներով ոտքերը խոշոր տրեխներու մեջ թաղված, պզտիկ աղվորիկ տղա մը շտապով կանցնի փողոցեն, երկու ձեռքով բռնած ահագին շիշ մը, իրեն կեսին չափ։ Ու անձրևին տակ, որ իր հողմապտույտ հորձանքներն անոր երեսին կզարնե, զկծեցուցիչ ցուրտին, որ կկապուտցնե անոր ականջներն ու թաթիկները, կվազե, կվազե, ջրկույտներուն վրայեն ցատքելով, աճապարանքին մեջ ցեխի ճախճախուտներու մեջ ընկղմելով, չթրջելու համար տուներուն տակեն

ջանալով երթալ, քիթը բերանը դժգոհությամբ, նեղությամբ, գրեթե լալու փափագով ծռմռտկված, կվազե տղեկը, ամեն մեկ քայլին ցեխի ցայտքեր բարձրացնելով իր ետևեն, դեպի մոտակա գինետունը։

Քանի մը վայրկյան հետո անոր դառնալը կտեսնեմ անկից, հիմա քիչ մը դանդաղաքայլ, որովհետև հազիվ կրնա վերցնել շիշը լեփ-լեցուն՝ երկու թևին մեջ, գրկին վրա սեղմած։ Երբեմն զայն տան մը սեմին վրա դրած հոգնություն կառնե. բայց հանկարծ, կարծես մղված աներևույթ զսպանակե մը, կարմրած ձեռքերուն մեջ քանի մը անգամ կփչե, ու հո՜փ, նորեն կբռնե շիշը վզեն ու հատակեն, և կվազե։

Ի՜նչ կխորհի արդյոք այդ չարատանջ վազքին մեջ... իրենց ընտանեկան երջանկության քայքայումը, մայրիկին արցունքները, իր ուտելիք տփոցը, ամբողջ գիշերներ առանց հացի, առանց քունի, կռիվով ու վայնասունով անցված, նախատինքներու, զրկանքներու, խեղճության ամբողջ պաշար մը, ահա՜ ինչ որ կտանի այդ շիշին մեջ լեցված։ Օ՜հ, եթե կարենար քարի մը զարնել ջախջախել այդ ապակիե հրեշը, որուն ծոցը սատանան կբնակի, ինչքա՜ն ուրախ պիտի ըլլար։ Բայց հայրիկին արյունոտ աչքերը, որ իր դարձին հարցական պահանջկոտ նայվածքով մը իր աչքերուն մեջ պիտի մխրճին, և անոր փայտացյալ ձեռքերը, որ քուրջի պես պիտի ճմրկթեն իր մարմինը, զինքը կահաբեկեն և ամեն հանդգնություն կսպանեն իր մեջ։

Ու պզտիկը կվազե, շո՜ւտ, շո՜ւտ, ուշացած ըլլալու վախեն արդեն դողդողալով, ավելի պինդ բռնելով շիշը՝ բարձրավիզ ու լայնափոր, որ իր մութ ուռուցիկ զանգվածին ամբողջ ծանրությամբ կճնշե անոր կուրծքին վրա, որպես թե անոր ճակատագիրն ըլլար մարմնացած։

1892

ԵՐԿՈՒ ԾԵԾ

Ղալաթիա, նեղ փողոցե մը անցած միջոցիս, լացի ձայն մը զիս կկեցնե։ Կդառնամ ձայնին կողմը, և քստմնելի տեսարան մը կեցած տեղս զիս կգամե։

Աղտոտ տան մը բաց դռան ետևը, քարերու վրա, այլանդակ կերպարանքով կին մը, պզտիկ ճզղած աղջիկ մը ոտքերուն տակ առած, կծեծե զայն։ Անասնական ցած ճակատ մը, որուն վրա փայտի պես հաստ մազեր, թնճուկ եղած, կխովանան, արվեստական հոնքերու տակ հիվանդ բոցով վառող սև սուր աչքեր՝ մութ ծիրով մը շրջանակված, այտերը լլրճված՝ ծայրահեղ կարմիրի մը պոռոտ ստությամբը, շրթունքը թանձր ու ճաթոտած, դեմքին վրա ունենալով առնական բան մը, զոր ավելի կշեշտե պեխի սկզբնավորություն մը, կոշտ-կարմիր երեսով մուշտակի մը մեջ փաթթված, երկայնահասակ, չոր, տձև արարած մըն է կինը, զաղիր՝ գլխեն մինչև ոտքը։

Աղջիկը խեղճ մանրիկ կույտ մըն է ափ մը միսի ու պատառ մը ոսկորի, քանի մը քուրջերու մեջ ծալլված, մոմի պես բարակ թևերով, որ մերկ դուրս կիյնան պատռտած վերարկուեն, և դժգույն, ազազուն, հատած դեմքով մը, որ մազերուն խառնիճաղանջին մեջ կկորսվի։

Խելահեղ կատաղությենե մը բռնված, որ իր նայվածքին մեջ դիվային կայծ մը կվառե և իր կիսաբաց բերանին խորը երևցող սեղմված ակռաներուն մեջ գիշակերի վայրագություն մը կդնե, մեղեցան կմոլեգնի պզտիկին վրա, ինքիրմե եկած, քանդումի բարբարոս զինովությամբ մը բռնկած, ծեծելով զայն ինչպես գորգ մը կծեծեն։

Նախ ձեռքովը միայն կտարափե ապտակներ, որ, կարծը, կփակչին անոր երեսին, և կոուփի հարվածները, որ անոր գլխուն, ուսերուն վրա կիջնեն, ու կսմիթները, որ անոր միսը փրցնել կձգտին, հետո կատաղության հարաճուն սաստկությանը մեջ, ծունկերովն ալ կսկսի անոր զարնել ու մազերը ձեռքին փաթթած՝ ոտքովը կիցեր տեղալ անոր վրա, այս ամենը այնպիսի անգթությամբ մը և անհագությամբ մը, որ մարդ ատիկա տեսնելով կհավատա չարին ահեղ հեշտության։

Մանկիկը, դեսինը կծիկ եղած՝ քուրջի չնչին կտորի մը պես, որուն վրա կկոխկռտեն, կընդունի այդ բոլոր կարկուտը, թվելով ծծել հարվածները ինչպես հողը անձրևի կաթիլները կծծե, իր կյանքի գոյությունը ծանուցանելով միայն մեծ լացով մը, որ երբեմն ահագին պոռչտուքով մը կպայթի, երբեմն յուղոտ թանձրացման մը մեջ կխոպոտանա, երբեմն ալ կխեղդվի, կմարի հեղձամղձուկ լռության մը մեջ, որ բոլոր հեծկլտուքներեն ավելի ցավագին է։

* * *

Նույն օրը, իրիկվան, Պեշիկթաշի նավամատույցին վրա կհանդիպիմ տարվոք մարդու մը, որ աղջնակ մը ունի գիրկը։ Աղեբեկ մազերով, թմբռկած երեսով, անուշ գորովալից աչքերով, մեծ հայրիկի զմայլելի տիպարներեն մեկն է, որոնք իրենց կյանքին վերջերը անցյալին բոլոր հիշատակներն ու ներկային բոլոր սերերը կկեդրոնացնեն ազվոր կենդանի պեպեքի մը վրա, որ իրենց ալևույթին ձյուներուն մեջ բուսած

ծաղիկն է և իրենց ավարտող կենսունակության վերջին նվաղ նշույլը կկապեն նոր սկսող գոյության մը թարմ լույսին։

Պզտիկը ճերմակ կակուղ հրեշտակիկ մըն է, որ իր թոմպուլիկ անդամներուն և իր վարդագույն բամբակ միսին մեջ անդրաշխարհի շնորհ մը դեռ կպահե, իր կլոր մանրիկ գլխուն շուրջը ծաղկած ոսկի խոպոպներուն մեջ՝ քանի մը շիթ երկնքի լույսեն և իր աչքերուն ջինջ կապույտին մեջ՝ ցոլքեր նախկին մեծ երազ մը, որ աստենի կյանքին մեջ հետզհետե պիտի ցնդի ու չքանա։

Մեծ հորը երկու բազուկներուն վրա իր շփացած երեխայի եսամոլ տիրակալությամբ բազմած, երկու ճերմակ մինինիկ թաթիկներուն մեջ առած այդ խոշոր բարի գլուխը. կծեծե զայն։

Այդ անագին մարդուն իրեն պես ճզճիմ արարածի մը քմահաճույքին ամենահլու համակերպությամբ անձնատվությենեն հպարտացած, զվարճանալով իր տիեզերական ամենազորության այդ կատակեն, ուր մանկական չարության բնազդն ալ կմտնե, անիկա իր անվնաս անգթությունը առաջ կտանի, պաշտելի վայրագությամբ մը, որ մեծ հայրիկը կխենթեցնե հաճույքե և որ զինքը խնդալեն կմարեցնե։ Անոր երեսին կփակցընե իր փոքրիկ կակուղ ապտակները, անոր միսը կճմռե, մատներն աչքը կխոթե, մազերը կքաշե, քիթը կսեղմե, կատաղությունը հագեցնելու համար ամեն տեսակ հնարքներ ի գործ դնելով և հետզհետե ավելի քաջալերվելով ծերուկին անվերջ երջանիկ խնդուքեն ու այն կաթոգին համբույրներեն, որոնցմով ան կփայփայե իր չարագործ ձեռվընները։

Եվ այս գողտրիկ ապտակակոծության հանդեպ հանկարծ մյուսը, մութ ու բզքտող, լղճուկ թշվառության մը մեջ անբանացած կնոջ մը վայրենի գայրույթին պոռթկումը՝ պատահմամբ ծնած ու ավելորդ բեռ մը նկատված խեղճ փոքրիկ էակի մը դեմ, միտքս կուգա, այդ շնորհի ու խանդաղատանքի վարդագեղ պատկերին քով իր դժոխքի գույներուն արհավիրքը ցցելով։ Սրտի կծկում մը կզգամ, և աչքս կդարձնեմ այդ սիրուն լուսավոր պատկերեն, մտածելով, որ ամբողջ մարդկային կյանքը այսպիսի բիրտ հակապատկերներով կազմված է։

1893

ՀԵՌԱՎՈՐ ՔՈՒՅՐԻԿԸ

Երբ պզտիկ Աննան, իր խարտյաշ խոպոպներուն և իր վարդ ժապավեններուն մեջ, Կաղանդի Է՛ն աղվոր պուպրիկեն ալ աղվոր, ելավ արտասանեց իր ամանորի շնորհավորության ոտանավորը, զոր մայրը

իրեն գոց ընել տված էր, ընտանիքին բոլոր անդամները, զմայլած այդ գողտրիկ հրեշտակի ձայնեն, որուն մեջ նոր տարվան բոլոր հույսերը կհնչեին կարծես, զանիկա գորովով համբուրեցին։

Ուրախությենեն ու արտասանության հուզմունքեն կարմրած, աղջիկը գնաց կարգով ձեռք պագնելու։ Նվերներուն ատենը եկած էր։ Մեծ մայրիկը, լայն, անուշ խնդուքով մը դեմքին փոթերը բազմապատկելով, անոր ծաղկյալ գլխուն վրա իր աչվրներուն կաթոգին բարությունն ու իր թոռնած շրթունքին օրհնությունները թափեց, մինչեռ ձեռքովը սիրուն ոսկի ապարանջան մը անոր դաստակը կանցրներ։ Հորեղբայրը անոր արծաթահյուս քսակիկ մը տվավ, ուր աղջկան մատը դրամի կարծրություն շոշափեց։ Հայրիկը անոր ընծայեց ոսկեզօծ խոշոր գիրք մը, և մայրը՝ հարսի պես հագված մեծ պուպրիկ մը՝ անկողինովը մեկտեղ։

Պուպրիկը տեսած ատեն, Աննա ցատքրտեց հրճվանքեն։ Այդչափ մեծ, այդչափ ճոխ, այդչափ կենդանի պուպրիկ դեռ չէր ունեցած։ Եվ որպես թե պզտիկ քույր մ՝ըլլար, գրկեց պագավ դանիկա։

Իր ուրախության ճիչը ժպիտներու փունջ մը փթթեցուց սենյակին գաղջ մթնոլորտին մեջ, ուր առարկաներն ու դեմքերը, հանդարտ երջանկությամբ մը օծված, կփայլեին։

Անկյունը, վառարանը կճարճատեր, իր դոան ճեղքեն լույսի գիծ մը երերցնելով։ Պատի մը վրա մեծ հոր կենդանագիր մը, սիկարեթի մուխեն աղոտացած, անցյալին խորերեն կարծես մաղվող նայվածքով մը կժպտեր այս ընտանեկան քնքուշ պատկերին։ Ու սենյակին տարությենեն մղտացած ապակիները, բաղնիքի մը հեշտական հոգնությամբը թուլցած դեմքերու պես, կբրտնեին։

Հիմա զվարթ խոսակցություն մը սկսեր էին. մեծ մայրը հին հիշատակները քրքրեց, հորեղբայրը զվարճություններ գտավ ըսելու, և մայրիկը ուրախությամբ արբշիռ նայվածքով մը կպարուրեր իր քաղցր աղջիկը, որ ապարանջանն ու քսակը մոռցած, պուպրիկին հետ հին բարեկամի մը պես կխոսակցեր։

***

Բավական ուշ էր, երբ Աննա ամենուն հետ իր սենյակը ելավ պառկելու. իր ստացած բոլոր նվերները անկողնին վրա շարեց, միտքը դրավ, որ հետևյալ առտուն գրքին պատկերները նայի, և ուզեց, պառկելե առաջ, իր պուպրիկը հանգչեցնել։ Արարողությունը երկայն էր։ Մեկիկ-մեկիկ, զգույշ շարժումներով, հանեց անոր աղվոր զգեստները, և ճակատեն անգամ մը համբուրելե հետո, զայն իր հատուկ փոքրիկ

մահիճին մեջ երկնցուց։ Մետաքսե փոքրիկ վերմակը անոր վրա քաշելու վրա էր, երբ խեղդուկ լացի ձայն մը լսեց։ Ձայնը քովի սենյակեն կուգար, ուր կպառկեր խարբերդցի սպասուհին։

Աննայի սրտին մեջ հանկարծ արթնցավ ամբողջ պատմություն մը, զոր իր ուրախություններուն մեջ մոռցեր էր։ Մարիամը անուշլեզու կին մըն էր, որ շատ անգամ Աննան զվարճացուցած էր իր գյուղին հեքիաթներովը, և որուն տխուր երգերը լսելով՝ խոր հուզմունք մը զգացած էր երբեմն։ Եվ անոր հանդեպ՝ ազնիվ տղոց այն ինքնաբուխ խանդաղատանքն ուներ, զոր անոնք կզգան դժբախտ էակներու համար։ Այդ խանդաղատանքը ավելի աճած էր այն օրը, երբ իմացած էր, թե Մարիամ, որուն ամուսինը մեռած էր, իրեն պես աղվոր ու կայտառ փոքրիկ աղջիկ մը ուներ երկիրը, տարիներե ի վեր մորմեն հեռու, բարեկամներու խնամքին հանձնված։ Սպասուհին քանի-քանի անգամ անոր վրա իրեն խոսեր էր լեցված աչքերով, և ըսեր էր, թե կուզեր քիչ մը ստակ մեկդի դնել և երթալ տեր ըլլալ իր զավկին։ Աննա երբեմն, ընազդական գորովով մը, անո՞ր խորհեր էր, այդ հեռավոր, այդ անծանոթ, այդ լքված քուրիկին, և իրեն թվեր էր, թե պիտի սրտանց սիրեր զայն, եթե իր մոտն ըլլար։

Լացին ձայնը զինքը խռովեց։ Պուպրիկը ձգեց, դուրս ելավ կամաց մը, գնաց զարկավ քովի սենյակին դուռը։ Մարիամ, զարմացած, բացավ, հազիվ ժամանակ ունենալով աչքերը սրբելու։

— Ինչո՞ւ կուլաս կոր, տատա՛, հարցուց Աննա։

Մարիամ գրկեց պզտիկը և երեսը անոր երեսին կոթնցուց.

— Ա՜խ, զավա՜կս։

Մոր մը շեշտը կար իր ճիչին մեջ։

— Աղջիկս միտքս եկավ... Կաղանդ գիշերով հիմակ ի՞նչ կընե կոր...

Աննայի սիրտը ելավ։ Աչքին առջև պատկերացավ պզտիկ քուրիկը, հեռուն՝ խեղճ մութ հյուղի մը մեջ միս-մինակ տխուր նստած, և իր երջանկությունը ծանր եկավ իրեն։

— Եկո՛ւր,— ըսավ։

Եվ զանիկա իր սենյակը տանելով, իր արծաթահյուս քսակին մեջ գտնված բոլոր ստակը անոր տվավ։

— Ասով պեպեքներ ա՛ռ,— ըսավ,— աղջկանդ ղրկե։ Իմս կուտայի, բայց ա՛լ բարեկամ եղանք, չեմ կրնար բաժնվիլ։

Ու ցած ձայնով՝

— Հայրիկիս բան չըսես։

Մարիամ օրհնեց զայն ու մխիթարված դեմքով մը գնաց իր սենյակը։

Աննա անգամ մըն ալ համբուրեց իր պեպեքը և անկողինը մտավ, հուզված, բայց շատ գոհ։ Ու գիշերը, երազի մեջ, հեռվեն՝ մշուշներու մեջեն երևցած խարտյաշ աղվոր աղջիկ մը տեսավ, որ քաղցրորեն կժըպտեր իրեն։

ՍՐԲԱՊՂԾՈՒՄ ՄԸ

Շոգենավին մեջ։ Ցած, դորշ երկնքի մը տակ՝ գորշ, անշարժ ծով մը։ Մին այն մոխրագույն ծանր օդերեն, որ անձնասպան ըլլալու փափագ կուտան։

Քիչ մարդ կա։ Անկյուն մը՝ խոշոր կլոր ակնոցներով մունջ ծերուկ մը, որ բուի կնմանի։ Դիմացս՝ անգլիական ծաղրանկարային դեմքեր հիշեցնող ընձուղտաձև այլակերպ աղջիկ մը, պերճ ու անճաշակ հագուստներու մեջ իր երկայն բարակ իրանը կաղապարած, գիրք մը կթըղթատե ավելի քան կկարդա։ Քովս՝ դիվանագետի դիմակով,— ճաղատ գլուխ, մեծ քիթ, երկայն մորուք, ոսկի ակնոցներ,— երկու կմախային մարդիկ նստած են, երեսնին կախած, ամբարտավան, ինքնագոհ, իրենց կոկոզավիզ լռությունը հազիվ մերթ ընդ մերթ մոլտացված բառով մը խզելով։ Անդին՝ մարմնեղ կին մը, թավիշե տակառի մը մեջ լեցված իր կարմիր առատ միսերուն կուտակումը կցուցադրե՝ մոմիայի նմանող կարճուկ դնդին վտիտ մարդու մը քով, որ մեռած նայվածքով մը, անխոսուկ, ծովուն հառած է։

Եվ ահա պզտիկ աղջիկ մը, մին շոգենավերու մեջ սլքտացող մուրացիկներեն, կուգա շուրջս մորացող հուսահատեցուցիչ անշարժության մեջ թրթռուն կյանքի կայծ մը դնել, զիս պաշարող այլանդակ տգեղությանց պատկերին մեջ թարմ շնորհի լույս մը շողացնել։

Շատ պզտիկ է, բայց շա՜տ, հազիվ վեցամյա։ Արևելյան տիպարով մանրիկ կանոնավոր դեմք մը ունի, ուր շատ խելացի երկու պաշտելի սև աչուկներ կվառին՝ ճերմակ փափուկ մորթի մը վրա, սիրուն կերպով շրջանակված՝ պզտիկ բարակ կտավի մը մեջ, որ վիզին տակ կկապվի. պատռտած լաթերու մեջ փաթթված է նուրբ ճկուն մարմինը, որ հովու տակ օրորվող մատաղ ոստնկի շարժումներ ունի. ու խոշորկեկ նալքններու մեջ շարշարվող ոտքերը, բոբիկ, մատները ցեխով ծեփված, մանրիկ են ու ազնվագիծ։

Կուգա դիմացս կկենա, ու բոպեապես դեմքն ու շարժումները կփոխվին, շնորհալի թշվառության հուզիչ երևույթը կվերածվի վաղահաս քապոթինության ցավագնորեն գռեհիկ պատկերի մը։ Երկու սրունքները իրարու կփակցնե մսկոտ կծկումով մը, գլուխը ուսերուն մեջ կքաշե, քիթը բերանը կծռմռե՝ տառապանքի արտահայտություն մը տալով իր դեմքին, աչքերը կպզտիկցնե լալու ձև մը առնելով, քանի մը բառ կմրթմրթա, մուրացկանի հասարակ բանաձև մը, զոր կճվա ողորմուկ ձայնով մը, վիզը ծռելով, ամբողջ անձին մեջ պաղատանք դնելով։ Հայտնի է, որ գոց սորված խոսքեր կարտասանե, որոնցմե ոմանք իր հասակին չեն հարմարիր. «Երեք օր է բան չեմ կերած... կմսիմ կոր... հացի փարա մը տուր... աստծու սիրուն... զավակներուդ սիրուն...»։ Արտասանությունը վարանոտ է, բռնազբոսիկ, բայց աղաչական շեշտին, շարժումներուն, դեմքին տված արտահայտությանցը մեջ դերասանական ակներև տաղանդ կա։ Կեղծ է ամեն ինչ այդ պահուն իր մեջ, և ինք գիտե ատիկա, գիտե, որ լալու փափագ չունի, բայց այդպես ընելու ստիպված է՝ «արհեստին» բերմամբ։ Թշվառ մըն է անշուշտ, բայց որ իր բուն լեզուն չի խոսիր, որովհետև եթե կարենար իր փոքրիկ ուղեղին իսկական մտածումներն արտահայտել, պիտի ըսեր. «Տվեք ինծի հայր ու մայր մը, որ աշխատին և զիս պահեն, ազատեցեք զիս այս ձանձրալի դերը կատարելու պարտավորությենեն, ինծի աղվոր հագուստներ, խաղալիքներ տվեք, ձգեցեք, որ երթամ իմ հասակիս ընկերներ գտնեմ ու հետերնին զվարճանամ...»։

Զզվանքով կմտածեմ այն անճոռնի հորը կամ հրեշային մորը, որ, փոխանակ իրենք հազար նեղության ենթարկվիլ հանձն առնելով, նույնիսկ մուրալու ամոթը իրենք ընդունելով՝ իրենց զավակը պահելու, այդ փոքրիկ սիրուն անմեղ էակը դարձուցեր են կեղծիքի գործիք, ստակ որսացող մարդամեքենա, և այդ մատղաշ տարիքին մեջ բռնադատեր են զայն իր սրտահույզ թարմությունն իսկ իրենց համար դրամագլուխ մը դարձնելու։ Անշուշտ՝ շոգենավուն մեկ անկյունը, մանկության այդ շահագործողները կսպասեն հիմա աղջնակին վերադարձին, որպեսզի ձեռքեն առնեն հավաքած դրամները, կամ ծեծ մը քաշեն անոր, եթե ձեռնունայն դառնա։

Դրամ մը կդնեմ փոքրիկ ափին մեջ, ու հիմա գոց սորված երկրորդ բանաձևն է որ կմրմնջե. «Աստված գործերուդ հաջողություն տա...»։ Բայց ասիկա՝ աճապարանքով, անգույն ձայնով մը, ուր զսպված ձանձրույթ կզգացվի։

Ու կդիտեմ, որ ինծմե բաժնվելե հետո, դեռ ուրիշի մը քով չգացած,— միջնարարին,— դեմքը պահ մը կշտկվի, կծկված գիծերը

կուղղվին, լայն արտահայտությունը կանհետանա, շարժումները կգրաւնեն իրենց բնական շնորհը։

Ու հիմա, շուրջ շարված ծաղրանկարային պատկերները նվազ տեղ կթվին ինծի, քան եղերական տգեղությունը մանկության դեմ գործված այս զազիր ոճիրին։

ԱՆՈՒՐՋԸ

Վերը, վերնատունին վանդակներուն առջև, իր մորը քովիկը կծկտեր նստեր է դժգույն նիհար աղջիկը, նիհար՝ հիվանդությենեն, ու դժգույն՝ աղքատությենեն, պզտիկ տասնամյա Վարդուկը, որուն հայրը շատոնց մեռած է։

Եկեղեցին իր տոնի գույներով ու տոնի ձայներով կխայտա։ Խորանը, Ավագ-Հինգշաբթիի ճերմակություններով հարսնևորած, կփողփողի իր ոսկեղեն աւոթներով, որ ցերեկվան պայծառ լույսին մեջ զվարթ փայլով մը կվառին, իր Ավետարանի ու խաչի գոհարազարդ արծաթույքներով և իր ֆուլյալով լեցուն անոթներով, որ դեղին բոցերու պես կլուսավորեն կաթնաթույր սփռոցը, մեղմ ու խաղաղ բոցեր, որ կթվին ժպտիլ՝ կերոններուն կարմիր դողդոջուն սուր կրակներուն քով։ Պատարագվորը, թեատարած, գլուխը բաց, կեցեր է խորանին առջև, ու բեմին վրա, ինչպես տարմ մը սիրո զմայլանքեն արբեցած պլպուլներու, կիսաշրջանաձև շարված դպիրները թարմ ձայնի լայն անուշ ելևէջներով կդալարյալին սրբասացությունը, երկայն ու դանդաղ մելամաղձոտությամբ մը հեծեծելով այդ միստիկական պաղատանքի երգը ողբագին, քշեցներու անընդհատական հնչուն մրմունջին մեջ, որ պուրակի մը տերևներուն խարշափյունին պես հառաչաձայն կթավալի։

Վեհ հանդարտություն մը կծածանի տաճարին մեջ, խորանին ճերմակներեն արտաշնչվելով. շարականին համր ու ծավալուն մեղեդիեն հոսելով, գետինը ծնրադրած բազմաթիվ հավատացյալներուն ամփոփված, հափշտակված դեմքերուն վրա ցոլանալով ու զվարթ երանգ մը առնելով գարնանային երիտասարդ արևի լայն ճառագայթեն, որ աջ պատին մեծ պատուհանեն շեղակի ներս կերկննա, ճերմակ թրթռուն այերային առվակի մը պես, որուն մեջ բյուր-բյուր արծաթ հյուլեներ կպտտուտքին, և որ իր անցքին վրա մեջտեղը կախված մեծ ջահին կհանդիպի, զայն սպիտակ բարակ մշուշով մը կպարուրե և անոր պրիսմակներուն երփներփն ու երերուն ցոլքերը դիմացի պատերուն վրա և դեռտինը կցրցքնե։

***

Պզտիկ Վարդուկը, գույներու և ձայներու այս ծայրահեղ անուշությունեներեն հափշտակված, երանավետ արբեցության մը մեջ իր հոգին մեղմորեն օրորուն, կմտածե Արքայության։ Իր մայրիկը երբեմն անոր վրա խոսած է իրեն՝ ըսելով թե այդ աշխարհին մեջ շատ դժբախտ եղող անմեղ ստրարածները օր մը հոն պիտի երթան անասելի և անվերջ երջանկություն մը վայելել։ Ու հիմա Վարդուկ կխորհի ինքնին. «Արքայությունը այսպիսի տեղ մը ըլլալու է, մեր խոնավ փոքրիկ մութ խրճիթեն շատ տարբեր, ասանկ լույսերով ու երգերով լեցուն տեղ մը, ա՛լ ավելի մեծ, ա՛լ ավելի գեղեցիկ, և ուր նաև անշուշտ բարի ու խելոք պզտիկ աղջիկներուն երկնային հրեշտակները կուտան ամեն օր հրաշագեղ պուպրիկներ, որ խաղան, լուսեղեն զգեստներ, որ զարդարվին, և համեղ խորտիկներ, որ ուտեն»։

Ու Վարդուկ աչքերը եկեղեցիին տեսարանեն կդարձնե դեպի մայրը և անոր դեմքը կդիտե։ Եվ անոր դեմքը իր մեջ այնպիսի սուր կերպով կարթնցնե իրենց ամեն օրվան կյանքին պատկերը, որ ա՛լ չի կրնար նայվածքը զատել մորը երեսեն ու միտքը անջատել իրենց կյանքին ցավագին պատկերեն։ Կդիտե այդ փորված փոսացած ու մթնցած աչքերը, ուր նայվածքը, խորանին պիշ-պիշ սևեռուն, այնչափ խորապես տխուր է. կդիտե այդ այտերը, աշնան տերևի պես դեղնած ու չորցած, կդիտե այդ թոռմած շրթները, որ անվերջ աղոթքի մը բառերը մրմնջելով անձայն՝ կերերան անդադար։ Այդ ամբողջ դեմքին վրա, ուր թշվառությունը իր դժխեմ կնիքը դրոշմած է, սովորականեն ավելի խոր այնպիսի թախիծ մը կնկատե այս բոպեին, ու նաև անձկագին պաղատանքի արտահայտություն մը, զոր չէր տեսած, որ իր փոքրիկ սիրտը կսեղմվի, ու աչքերը կլեցվին. կհիշե այն բոպեները, երբ իր մորը լալը տեսած է՝ երբ ան հաց չէ ունեցած իրեն տալու, որովհետև շատ աղքատ են, այրին ու որբը, միս-մինակ ամենքեն լքված, շա՜տ աղքատ։ Իրենց ամբողջ կյանքը կհիշե, զրկանքներով, տանջանքներով լեցուն իրենց կյանքը, անոթությունեն մեռնելու վախը միշտ վերևը կախված։ Կհիշե իր մայրիկին ամենօրյա չարաչար դատանքը պատառ մը ուտելիք ճարելու համար, կհիշե առանց կրակի անցված ձմեռ գիշերները, կհիշե դրպրոցին մեջ հարուստ ընկերուհիներու աղվոր հագուստին քով իր պատրոտած հին ու մին զգեստներեն զգացած ցավն ու ամոթը. ու կըսե ինքնին՝ «Մայրիկս հիմա անշուշտ իր աղոթքին մեջ կաղաչե կոր աստուծո, որ մեզի օգնության հասնի ու մեր ցավերը թեթևցնե». ու Վարդուկ կուզե իր ձայնը միացնել մորը ձայնին. «Ով աստված,— կմրմնջե,—

մեզ շուտով տար այդ քու Արքայությանդ մեջ, ուր ա՛լ ոևէ ցավ պիտի չունենանք»։

Վարը դպիրները կշարունակեն դաշներգել երկնահամ մեղեդին, և անոր քաղցրությունը նորեն կգրավե ու կգերե իր հոգին, հոն գալարվող վիշտը կմեղմացնե, կլուսավորե, կթեթևցնե։ Եվ ահա հանկարծ, լայն ու մելանուշ օրհներգին ձայնով, ու եկեղեցին լցնող երփնագան լույսերուն ու խունկի բուրումնավետ մշուշին մեջ՝ ուր կկարծե հրեշտակներու անցնիլը տեսնել, վրան թմբություն մը կուգա, գլուխը մորկանը ծունկին վրա կիյնա՝ թուլցած, աչքերները կմթնան, ու բոլոր զգայարանքները կկասին պահ մը, իր փոքրիկ հոգվույն վրա ծանրացող լուսավոր ու մռայլ տեսիլներուն սաստկությենեն ուժաբեկ։ Կամաց-կամաց, անզգալի փոխանցումներով, ամեն բան կաղոտանա իր շուրջ. գիծերը ստվերներու կփոխվին, ստվերը մառախուղ կըլլա, որուն մեջ եկեղեցիին բոլոր լույսերը կընկլուզվին, կանհետանան, և ուր հուսկ ապա կընկղմի, կկորսվի իր մայրիկին դեմքն ալ, ու սև քող մը կպատե ամեն բան։

Բայց ահա անուրջ մը, համատարած մթության մեջեն ծագող արշալույսի մը պես, կճերմկի, կանջատվի աղջամուղջեն, անոր թանձրությանը վրա ձևացնելով պայծառ բիծ մը, որ հետզհետե կծավալի, կընդարձակվի, ամբողջ խավարը կհալեցնե։

Պզտիկ Վարդուկը հիմա իր գյուղին եկեղեցիին մեջ չէ, ոչ ալ մորը քովիկը։ Ոչ ձեղուն, ոչ հատակ, ոչ պատեր կտեսնե իր շուրջ. կզգա, որ օդին մեջ է, առկախ, և թե վեր կբարձրանա մեղմ ու հեշտավետ ամբարձումով մը, պզտիկ թավիշե շունչեր կսահին իր քովերեն՝ երեսները շոյելով, անպատում քաղցրությամբ բուրումներ իր ռնգունքը կհամբուրեն, և իրեն կթվի, թե Արքայությունը կտանին զինքը...

***

Ադամանդե լայն դուռ մը կտեսնե դիմացը, որ ծխնիներու ճլվլացող երաժշտությամբ մը կբացվի իր առջև, ու սպիտակ շղարշներու մեջ փաթթված թևավոր օդաթռիչ էակներ զինքը ներս կառաջնորդեն։ Հրաշալի է վայրը, ուր կմտնե. վերը ճերմակ անհունություն մը կպարզվի, ուր գույնզգույն բյուրավոր աստղեր կթռչտին՝ երփներանգ կաթիլներ սրսկելով միջոցին մեջ. վարը՝ ճերմակ է հատակը, և կակուղ, որպես թե շուշանի թերթերե շինված ըլլար. օդը ճերմակ է՝ կաթի պես, և անուշ համ ունի՝ խորտիկի մը պես, և քաղցր հոտ ունի՝ ծաղիկի մը պես։ Ոչինչ անշարժ է, և ոչինչ միօրինակ, առարկաներ կերևան ու կանհե-

տանան վայրկենապես, ձևեր կհայտնվին ու ակնթարթի մը մեջ կցնդին կկորսվին սպիտակ գոլորշիի մը մեջ ու հետո նորանոր կերպարանքներու տակ դարձյալ մեջտեղ կելլեն։ Սյուներ տեղ-տեղ կբարձրանան, մարմարե սյուներ, ոսկիե սյուներ, արծաթե սյուներ, կփողփողին պահ մը և հետո կփոխվին հսկա կերոններու և իրենց կատարը կարմիր բոցի լայն լեզու մը կճոճեն։ Վերը, սպիտակ տարածության մեջ, ուր լուսեղեն մեղուներու պես, բաղմաթույր աստղիկները կպտուտքին միշտ, կամարաձև գծեր կկազմվին երբեմն, տարտամ կորություններ՝ զմայլելի գույներով, որ կկախվին պարապին մեջ, խոլական ճարտարապետության մը համեմատ իրարու քով գալով, աներևակայելի և անկարելի ամբողջություն մը կազմելով, որ հետո կքայքայվի, կշոգիանա, կանհայտանա։ Հրաշազան թռչուններ կանցնին, որոնց փետուրները կարծես ծիրանի գոտիին մեջ թաթխված են, որոնց տոմները կերկարաձգվին ինչպես լուսափաղփ վարսամներ, և որ իրենց անցքին վրա անդրաշխարհյան ներդաշնակությամբ գեղգեղանքներու զգլխիչ տարափ մը կտեղան։ Մեծ թիթեռներ կտեսնվին, այնչափ մեծ, որչափ աշխարհի վրա երբեք տեսած չէ Վարդուկը, վերջալույսի ամպի գույն թևերով, որ կարմիր ձյունի խոշոր գնդակներու պես կթռչտին իր գլխուն վերև ու շուրջ. հետո իրենց շարժունությունը կկորսնցնեն, իրենց թևերը կամփոփեն, ծաղիկներ կըլլան, առանց ցողունի, օդին մեջ աներեր կեցած, մեծ գունագեղ աչքերու պես, որ կնային լայն բացված։ Ու անհուն քաղցրությամբ բուրմունք մը, ավելի անուշ քան կնդրուկինը և բոլոր երկնավոր ծաղիկներունը, կծավալի օդին մեջ։ Ու բոլոր այդ գույներու, ձևերու, շարժումներու մշտափոփոխ տեսիլներուն մեջեն կանցնին միշտ սլացիկ մարմնով հրեշտակները, իրենց թափանցիկ կարապաթույր քողերը սպիտակ մուխի պատառներու պես իրենց շուրջ ծածանելով, ոմանք իրենց գլխուն վերև արուսյակ մը կրելով քրքմագույն մազերնուն մեջ, ուրիշներ ձեռքերնին լույսի հատիկներով համրիչներ բռնած, և ամենքը հընչեցնելով իրենց արագ թեթև անցքին վրա եթերային փափկությամբ նվագներ, այնքան քաղցր, որ զանոնք լսելով փոքրիկ Վարդուկը կկարծե, թե իր ամբողջ մարմինը շաքարեղեն ծովու մը մեջ կլողա։

* * *

Իր աղքատ աղջկան մոայլ կյանքը մոռցած պահ մը, այդ հրաշալիքներուն մեջ կթափառի, զմայլած, հափշտակված, երջանիկ, կտեսնե, որ ամեն բան կճանչնա զինքը հոն, ծաղիկները իրեն կժպտին, թիթեռները զինքը կհամբուրեն, ու հրեշտակները, իր երեսը փայփայելով,

իրեն լուսեղեն շքեղ հանդերձներ կհագցնեն, ու կտանին զինքը կրազմեցնեն ծաղկազարդ մարգի մը վրա, ուր համադամներով ծանրաբեռն սեղան մը կփողփողի, և իրեն կծառայեն անճառելի հացն ու գինին երկնքին։

Բայց այդ բոպեին, իր ճակտին վրա հպումը կզգա բանի մը, որ զինք կսարսռեցնե, որ փետուրի պես թեթև է ու փուշի պես խայթող միանգամայն, կակուղ, լույծ բան մը, որ կքսվի իր միսին, այնչափ փափուկ, որ համբույրի մը կնմանի և որ կայրե կխոցե, որպես թե հալած մետաղի հրավառ կաթիլ մը ըլլար։ Ու անմիջապես կարթննա իր մեջ հիշատակն իր մորը, զոր այդ դյութական տեսարաններուն մեջտեղը մոռցեր էր վայրկյան մը։

— Բարի հրեշտակներ,— կըսե զինք պաշարող երկնային ոգիներուն,— բերեք հոս իմ մայրիկս ալ։

— Ո՛չ,— կըսեն հրեշտակները,— դեռ անոր ատենը չէ եկած. ան դեռ ժամանակ մը ունի երկրի վրա անցընելու։

Վարդուկ կզգա, որ իր ճակտին վրա հալած մետաղի կաթիլը կմեծնա, կծավալի, այրուցքը կսաստկանա, իր ամբողջ մարմնույն մեջ կտարածվի։

— Ջեմ ուզեր ուրեմն հոս մնալ առանց իմ մորկանս. տարեք զիս անոր քով,— կգոչե՝ սիրտը թունդ եկած։

Եվ ահա բոլոր այն ճերմկություններն ու երփներփումները աղոտ իրարանցումի մը մեջ կշփոթվին, կձուլվին, տարտամ լուսաստվեր մը կկազմեն, ուր բոլոր ձևերն ու գույները իրենց հստակությունը կկորսնցընեն, ու բոլոր նվագները կմարին, դորշ անհուն անձայն պարապի մը մեջ կթաղվին։

Հետո, նորեն, անզգալի փոխանցումներով, այդ դժգույն պարապության մեջեն ձևեր, գիծեր երևան կելլեն, ձայներ կհառնեն, ու Վարդուկ իր խուսափող անուրջին պատռտած շղարշի ծվեններուն մեջեն կտեսնե նորեն կամարը իր գյուղին եկեղեցիին, և իր վերև մայրիկին մաշած դեմքը, ուր, ավելի ևս թանձր, կծանրանա ներքին վշտին ճնշիչ տրտմությունը։

Եվ իր կես քուն կես արթուն աչքերով Վարդուկ կնշմարե, որ մայրիկին աչքերը լեցուն են արցունքներով, որոնց մեկ կաթիլը թարթիչներուն ծայրը կերերա, և որոնց առաջինը, իյնալով իր ճակտին, զինք արթնցուցեր էր իր այնչափ քաղցր անուրջեն։

ՓՈՔՐԻԿ ՍԱՄԱՐԱՑԻՆ

Յուղոտ գդակ մը ճերմկած մազերուն վրա, ղլուխը վեր՝ վզին վրա շիտակ, աչքերը անշարժ՝ պարապին մեջ պաղած, ծերուկ կույր մուրացկան մը կուգա, դանդաղաքայլ, փողոցն ի վար։

Մեկ ձեռքով կուրծքին կոթնցուցած է փտած ջութակ մը՝ իրեն պես զառամ, ու մյուս ձեռքը անոր կքսե կնտնտոցը, որ կճզա ու կանցնի։

Պատռտած վերարկուին վրայեն, չվանով մը վիզին կապված, ճերմակ տոպրակ մը, հացի կտորվանքներով ուռուցիկ, կկախվի մեկ կողն ի վար։ Մինակ է, և ոտքերը, կասկածոտ հառաջխաղացումով մը, գետինը կփնտրեն ամեն մեկ քայլին։

Դեմքին վրա այն ինքնամփոփ վեհ հանդարտությունը կծավալի, որ նվիրական գեղեցկություն մը կուտա կույրերու կերպարանքին։ Վարի շրթունքին մեկ կծկումը միայն՝ դառնության գիծ մը կդնե այդ թափառիկ մարգարեի դիմակին։

Արծաթ թելեր ճակտին արևահար մագաղաթին վրա կթափին։ Ու լայն ակնակապիճներուն խորը, բիբերուն կանանչ գունդերը, մեռած աչքերուն ճերմակ հեղուկին մեջ կլողան։

Տուներուն եզերքեն, քսքռավելով կերթա, ու իր մատները իրենց մեքենական շարժումովը կերթևեկեն միշտ ջութակին վրա, և միամիտ եղանակ մը, միօրինակ ու տրտում, մաշած թելերեն կթափթփի։

Հանկարծ, խազ մը, կոտրած, օդին մեջ կմնա։ Թելերեն մեկը փըրթած է։ Կույրը կանգ կառնե. իր եղանակը, իր հին բարեկամը, իր միակ բարեկամը, իր քանի մը խազով խեղճուկ եղանակը, կաղ է հիմա։

Անձկություն մը կշեշտե շրթունքին ծալքը։ Մատովը կշոշափե գործիքը, կգտնե լարը, որ անջատված, վար կկախվի. կփորձե զայն կապել փայտին. բայց մութը թանձր է իր շուրջը, և իր մատը չի տեսներ։ Հուսահատ, լարը կձգե վար, ու պատին կոթնած՝ անշարժ կկենա։

Դպրոցական մը կանցնի, անութին տակ գիրքերով։ Կտեսնե կույրին շարժումը ու կմոտենա անոր։ Բարի տղեկ մըն է, խելացի աչվընեռով։ Կույրին թևին կդարնե մեղմիվ, կառնե ջութակը ձեռքեն, թելը կկապե, անոր ձեռքը կուտա նորեն ու կամաց մը անոր կաղաչե իրեն համար քիչ մը նվագել։

Կույրը, ուրախ, քանի մը օրհնենք կմրթմրթա, ջութակը կխոթե վզին մեջ, կնտնտոցը կփակցնե թելերուն և երջանիկ աշխուժով մը՝ ծերացած գործիքին սրտեն կցատքեցնե իր հավիտենական տխուր պըզտիկ եղանակը։ Թելերը կպոռան կնտնտոցին տակ. լաց մըն է կելլե թրթռացող նյութեն, և երգը այնպես մութ, այնպես կույր է, շեշտը այնպես մելամաղձիկ, այնպես ողորմ, որ չես գիտեր կուրծքե՞ն կելլե մուրացիկին՝ թե կուրծքին փակած գործիքին, որովհետև մեկը մյուսին հետ նույնացած է կարծես։

Տղեկը, գոհ, տասնոց մը կդնե ծերուկին ափը ու կհեռանա։ Եվ իր երգին հետ նորեն մինակ, կույրը կշարունակե խարխափող թափառումը իր անվերջ մութին մեջ, որ հիմա ինծի կթվի թե փոքրիկ լույսով մը քաղցրացած ըլլալու է իրեն համար։

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Ա.

Մեծ մայրիկեն սկսյալ, որ իր ծերուկ հոգնած աչքերը գորովոտ թարմ ժպիտով մը վառած՝ զվարճացող հետաքրքրությամբ մը կդիտե, մինչև տան սպասավորը, որ կխաբաց դռնեն զարմացած նայվածք մը ներս կսահեցնե, ընտանիքին բոլոր անդամները, հայր, մայր, քույրեր, ժողովված շարված են սեղանին քով, ուր փոքրիկ Զարեհը, յոթ-ութ տարեկան տղեկ մը, իր առաջին նամակը կգրե։

Երկու ամիս է, որ սկսած է գրելու վարժություն ընել, և հիմա, Կաղանդեն մեկ երկու շաբաթ առաջ, իր ծնողքը կուզեն, որ անոր գրելու սկզբնավորությունը այդ նամակով ըլլա, նամակ մը, որ պիտի ղրկվի օտար երկիր նոր մեկնած իր մեծ եղբոր։

Հայրը, պզտիկին ուսին հակած, տոն կուտա, բառերուն հետ գիրերն ալ մեկիկ-մեկիկ զրուցելով, անոր վարանող թաթիկն իր ձեռքով ուղղելով, խնդալը չի կրնար բռնել՝ ամեն անգամ, որ շատ խենթուկ ձարտուք մը կելլե անվարժ մատին տակեն. և ամբողջ ընտանիքը, ժպիտ մը շրթունքին վրա, կհետևի այդ համր աշխատության։

Բ.

Եթե կիրակի օրով փոքրիկ անառակը խաղերը ձգեր, եկեր թուղթին վրա քիթը ծռելու հանձն առեր է, պատճառը սպահովապես աղբարիկին սերը չէ միայն, նախ՝ այդ դժվարին ու քիչ մըն ալ ձանձրալի աշխատության փոխարեն սպասված նվերն է, և հետո՝ անձնասիրության այն փաչաքշումը զոր կունենա, որովհետև պզտիկներն ալ ունին իրենց անձնասիրությունը, որ հեռու է պզտիկ ըլլալե — իր շուրջ խմբված,

իրմով զբաղված, իր հաջողությանը ծափահարելու պատրաստ տեսնելով ամբողջ ընտանիքը։

Եվ արդեն, սկսելով բազմաշմուտ գիտնականի ձևեր առնել, հոնքերը արվեստական լրջության արտահայտությամբ մը պոստած, մեկ ձեռքով թուղթը բռնած, որպեսզի չերերա, և մյուսով, կամաց-կամաց, ամեն գիրին կանգ առնելով, ճերմակ էջը կմրոտե ծուռմուռ գիծերով, ամեն մեկ տողին կենալով՝ գլուխը դեպ ետև տանելու և աչքովն ամբողջությունը գրկող նայվածք մը նետելու համար։

Ու հայրիկը, մանկական ուրախությամբ մը համակված, կշարունակե բառերն ու գիրերն ըսել, հատիկ-հատիկ հետևելով տղեկին տատամոտ ջանքերուն. անոր գլխուն ետև՝ ձեռքին մեջ խնդրելով երբեմն քրքիջ մը, զոր չի կրնար զսպել։

Գ.

«...Երթալեդ ի վեր ամենուս սիրտը կոտրած է. դուն մեր հետը չըլլալուդ համար՝ այս տարվան Կաղանդը... (Զարեհ ականջը կտնկե այս բառին) այս տարվան Կաղանդը շատ ուրախ չպիտի անցընենք...»։

Զարեհ գրիչը կնետե։

Ի՞նչ... ինչո՞ւ... Ամենը աղեկ, բայց ատիկա, չէ՛, ատիկա երբեք պիտի չգրե։ Ի՞նչ ըսել է, եղբայրը մեկնած ըլլալուն համար՝ ինքը ինչո՞ւ պիտի զրկվի Կաղանդի ուրախություններեն...

— Ինծի նվեր չպիտի՞ տաք. անուշապուր չպիտի՞ եփենք...

Իր ամենեն փափուկ, ամենեն զգայուն կողմեն վիրավորված, Զարեհ, այդ բոլոր պարտավորյալ ձանձրույթին ու տաժանելի աշխատանքին գլուխ ծռելե հետո, հիմա չի հանդուրժեր այդ գաղափարին, և ամբողջ զորությամբը կբողոքե, պնդելով, որ չպիտի գրե ատիկա, չէ՛, երբեք չպիտի գրե։

Իր շուրջը, ամենքը, ա՛լ անկարող ինքզինքին զսպելու, կողերնին բռնելու աստիճան կխնդան, մանկական եսասիրության այդ միամիտ վախեն մեծապես զվարճանալով։ Եվ երբ քրքիջներու ժխորը կդադրի, երբ ամենքը հստակ և համոզիչ բառերով կբացատրեն, թե ատիկա աղբարիկին հաճույք պատճառելու համար ըսված խոսք մըն է և թե Կաղանդը նորեն շենքով-շնորհքով պիտի տոնեն, միմիայն այն ատեն է, որ Զարեհ գրիչը դարձյալ ձեռք կառնե և կշարունակե գրել վտանգավոր պարբերությունը։

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՓԱՅՏԵ ՄԱՐԴԵՐԸ

Ամենեն սիրուն բաներեն մեկը զոր տեսած եմ երբեք,— Թոմաս Հոլտենի փայտե մարդերը։

Թատրոնը մութ է, կազի լամբաներուն մեկ շատ փոքր մասը վառած են, որպեսզի տեսարանին ամեն կողմերը չլուսավորվին և ֆանթոշները կարելի եղածին չափ նվազ ֆանթոշ երևան։

Երբ վարագույրը կբացվի,— պզտիկ փողփողուն գողտրիկ վարագույր մը,— կտեսնենք նույնպես պզտիկ, գրեթե մանրադիտական, ու նույնպես փողփողուն թատերաբեմ մը։ Գույնզգույն լապտերներ դողդոջուն լույս մը կհեղուն թավշյա ողորկ հատակին և ոսկեզօծ որմերուն վրա։ Երաժշտությունը կսկսի, գվարթ ոստոստուն երաժշտություն մը, և ահա կերևան փայտե մարդուկները, այնչափ շնորհալի, այնչափ բարեձև ու համակրելի, որչափ չեն հաճախ նույնիսկ մսեղեն մարդերը։ Ակնախտիղ ծոպերով, ոսկեզօծ զարդերով, պատվական քարերով պճնված շողշողուն հագուստներ կծածկեն վտիտ կմախքը։ Եվ այդ ճապուկ ու ճարպիկ էակները կցուցնեն մեզի իրենց տարօրինակ ճարտարությունները. ոմանք լարերու վրա կխաղան ի ձայն երաժշտական գործիքներու, ուրիշներ նվագահանդեսներ կկազմեն ձայնավոր ու գործիավոր, կան որ պզտիկ թատերգություններ ներկայացնեն, և ուրիշներ, որ կպարեն։ Անիսառն զվարթություն մը կծորի այդ սևեռյալ բիբերեն, կատակաբանություններ ու քրքիջներ կթափին այդ փայտե շրթունքներեն։ Պզտիկ տղաքը, որ զարմանքով կդիտեն այս բոլորը, հիմա մտքերնեն կրսեն անշուշտ. «Ի՞նչ զարմանալի բան, այս մորուսավոր պարոնները և այս տարվոք կիները մեզմե շատ ավելի անառակ են»։ Իրարու ետևե կվազեն, իրար կծաղրեն, իրար կծեծեն, իրարու դարան կլարեն, ու կխնդան, ու կցատկեն, ու կպարեն։

Այս փայտե մարդերու հույլին մեջ կուգան երբեմն մտնել արտաքոց էակներ, արջ մը թավամազ ու լայնաթաթ, որ զարմանալի համբերությամբ կտոկա ֆանթոշներեն մեկուն չարաճճի խաղերուն, կմախք մը, ճշմարիտ մարդկային կմախք մը, որ միակ տխուր խաղը կկազմե զվարթությանց այս փայլուն համերգին մեջ և որ, տրտմաթախիծ երաժշտության մը թրթռումներով, կուգա ժանտատեսիլ պար մը պարել, մահու պար, դանդաղ ու չարագուշակ։

Եվ ապա հանկարծ տեսարանը կփոխվի, ու ցնորական պատկեր-

ներ երևան կելլեն, շլացուցիչ էլեկտրական լույսով մը լուսավորված. օվկիանոսին խորութիւններն են որ կպարզվին, և անոնց հեղուկ թափանցկության մեջեն կնշմարենք հրեշային գաղաններու ելևէջը, երփնամորթ ու բյուրագալար օձերու փաղփուն օղակները, արյունարբու պողիպոտներու քստմնելի թաթերը, կոկորդիլոսներու վիրապային երախներն, ու խայտաբղետ ձուկերու խուսափուկ վտառներն, ու նավի բեկորներ, որ ընկղմած մարդերու դիակներ, փտած կմախքներ, ջախջախված անդամներ, ամբողջ փայլն ու ամբողջ խավարն ստորանդրնդային աշխարհներուն։

Եվ ահա նորեն տեսարանը կփոխվի՝ կարծես մոգական ազդեցության մը տակ, ու կփոխադրվինք հազար ու մեկ գիշերներու պերճափառ մեկ դրախտը, ուր հուրիներ կճեմեն լուսեղեն մթնոլորտի մը մեջ ու կվերանան կցնդին խունկի մը պես, որ տաճարին մեջ կբարձրանա։

Բոլոր այդ խաղերն ու տեսարանները, այդ բոլոր սիրուն զվարթ էակներն ու իրենց շարաճճիությունները, բոլոր այդ նվագները, փողփողումներն ու հրաշալի պատկերները այնպիսի արտասովոր հրապույր մը ունին, որ կկարծեմ տեսնել մարմնացած երազ մը, որ մեր աչքերուն առջև անծանոթ հրեղեն աշխարհներ կպարզե. կթվի ինծի, թե հեռավոր մոլորակի մը մեկ մասն է, որ հսկա հեռադիտակի մը մեջեն կերևա մեզի իր բյուրերփնյան դաշտերով և իր ոստոստուն էակներով։

Ու բոլոր մը մտքես կանցնի բաղդատել այդ մարդկային ծաղրանկարները իրական մարդոց հետ, և ինծի կթվի թե շատ տարբեր չենք անոնցմե, քանի որ մեզ ալ անծանոթ զորություն մը կխաղցնե շատ ավելի տխուր տեսարաններու մեջ, շատ ավելի դառնալուր երաժշտությամբ մը, ահեղ մեքենավար մը, Ճակատագիրը, Դիպվածը կամ աստված։ Եվ ո՞վ գիտե թե ավելի երջանիկ չեն այդ փայտե էակները, որ իրենց լանջին մեջ չունին այն հրավառ մսի կտորը, ցավատանջ զգացմանց այն փոքր կարմիր տիեզերքը, որուն մեջ վիշտերու օվկիան մը որոտաձայն կալեկոծի։

ԱՄՈՒ ՄԸ

Զարմանալի՜ ամոլ. թեև թև մտած են ու կերթան, դանդաղաքայլ, փողոցե փողոց, խանութե խանութ, մարդե մարդ։ Մուրացիկներ են, կինն ու այրը։ Այրը կույր է, և կինը առաջնորդի դեր կկատարե։ Տարօրինակ դեմքեր, երկուքն ալ։ Կինը՝ թափթփված մազերով, կոտած մորթով, սրածայր քիթով տգեղ արարած մըն է, ժեռոտ մարած աչքերուն մեջ

ստորնացած, գձուձ, ստրուկ հոգիի մը պաղատող նայվածքն ունենալով։ Այրը կուրության վեհությունն ու խաղաղությունը ունի իր ծյուրած կծկած դիմագծերուն վրա, և իր աչքերուն մեջ, ուր մշտաթթիթ թարթիչներու տակ կանանչ խոշոր՝ կարծես պայթած՝ բիբեր կթավալին, մեռած աշխարհի ցրտություն մը կտարածվի։ Շրթունքները բաց են ու կերերան մերթ ընդ մերթ, կարծես հծծելով անծանոթ բառեր ի տես այն խոլական պատկերներուն, որ խավարին մեջ իր դեմ կհառնեն։ Ձեռքը արմոնիք մը բռնած է ու կնվագե, անգիտակից շարժումով մը հին մոռացված եղանակ մը։ Այն ի՜նչ տխուր է շեշտը որ կելլե խեղճ պղտիկ քառակուսի այդ տուփեն։ Խոպոտ, հաբրուխե կարծես մարած ձայն մըն է, որ կհեծկլտա, որ կհռնտա։ Ոչ մեկ ողբ ինծի այնքան հուզիչ է թված, որքան ողբը մեռաղին, այն սուր, հզոր, թրթռուն ջայլը, որ կոշտ նյութին աղիքներեն կելլե մարդկային մատին մոգական հրպման տակ, բոլոր այն խորին վիշտերը, որ այդ անբարբառ մարմիններուն մեջ կուտակված կմնան թաքուն ու թաղված, կարծես լեզու կառնեն ու կուլան։

Երբեմն այրը կդադրի նվագելե, և կինն իր ձեռքն անցորդի մը երկնցնելով քանի մը բառ կմռլտա, աղաչանքի գետնաքարշ սողացող բառեր։ Մերժումը մը կամ տասնոց մը, և երկու մուրացիկները կշարունակեն իրենց ճամփան, թեև թև, իրարու սեղմված, գրեթե երջանիկ, կինը միշտ չորս կողմը նայելով, այրն իր աչքերուն ուրվականը կետի մը հառած որ վե՞րն է ու հեռո՞ւն, և անտարբեր մարդերու ամբոխեն մեջեն պատեցնելով իրենց խղդուկ, արցունքոտ երաժշտությունը։

ԲՈՒՆ

Թյունելին մեջ։ Կին մը՝ հրեշտակի աչքերով (հրեշտակ բարության իմաստով առնված), և աղջիկ մը՝ բուի աչքերով. ահա ամբողջ պատկերը։

Աղջիկը հազիվ հնգամյա է և ակնոց կկրե, խոշոր գոգավոր ակնոց մը, որ անոր շիլ տարտամ աչքերուն բուի մը նայվածքը կուտա։ Եվ մայրը տխուր է, խորունկ տխրությամբ մը, որ անոր ակնարկներուն ետեը կպահվըտի, անոր ամեն մեկ խոսքը կթափանցե, ամեն մեկ շարժմանը մեջ կուրվագծվի։ Այդ փոքրիկին մոտեցող բոլոր բարեկամներուն առաջին շարժումը՝ գգվանք մըն է, համբույր մը կամ անուշ խոսքը մը, ողորմություն՜ արգահատանքի։ Աղջիկը իզուր կճգնի իր երկու խեղճ

բիբերուն նայվածքը միացնել ու զինքը գգվողին դարձնել, իր հյուծված դժգույն մանրիկ դեմքը գրեթե ամբողջովին ծածկող այն ահագին ակնոցին ետևեն երկդիմի նայվածք մըն է, որ տեսնողին սրտի սեղմում կուտա։

Եվ աչքդ բնազդորեն կերթա աղջկան նայվածքեն մորը նայվածքին։ Ի՜նչ անդունդ... Բոլոր այն ջախջախված սերերն ու ցրտացած բարեկամությունները, որոնք օր մը այդ աղջկան ողորմելի սիրտը պիտի պատռեն, ցավի այն վիրապները, որոնց մեջ անոր հոգին պիտի գլորի, հուսահատության այն ջղաձգությունները, որ անոր բազուկները պիտի գալարեն, այդ ամենը կտեսնես մորն աչքերուն մեջ, և... ուրիշ բան մըն ալ, ահե՛ղ. տեսակ մը ցավ, տեսակ մը խղճի խայթ այդ հրեշը ծնած ըլլալուն։

ՄՈՒՐԱՑԻԿԸ

Թաքսիմի մարզարանը շրջապատող վանդակապատին եզերքը, մայթին վրա, ամեն իրիկուն աղքատ կին մը կնստի, մուրալու համար։ Գլուխ մաշած մանիշակագույն յազմա մը կապած, որուն մեջ դեմք մը կշրջանակվի, ցավագին, անակնարկ դեմք մը, որովհետև կույր է մուրացիկը։ Եվ այդ խղճուկ յազման, միշտ մեկ ուսին վրա հակած այդ գլուխը և այդ մագաղաթացյալ դեմքը՝ իսկատիպ նկարչի մը աղքատ աստվածածին մը պիտի կարենային ներշնչել։

Եվ կինն իր գիրկը նվագարան մը ունի, որ նույնպես մաշած կարմիր լաթով մը ծածկված է, հավանականաբար՝ արմոնիֆ մը։ Մեկ ձեռքով թիթեղե պնակ մը բռնած է, ողորմությանց ընդունարան. մյուս ձեռքը, որ չերևար, մեքենական շարժումով մը կերերցնե այն խեղճ գործիքը, որ մեկ քանի կոտրած խազեր կհանե, մշտնջենապես նույն մեկ քանի խազերը, որոնք երբեք չեն հաջողիր եղանակ մը կազմել, տեսակ մը տարօրինակ երաժշտություն, որ ակամա, քերթվելով կելլե հիվանդ կոկորդե մը, երաժշտություն մը, որ կթվի ձանձրանալ այդ աղտոտ կարմիր բանտին մեջ, երաժշտություն մը, որ ոչ մեկ արտահայտություն ունի, ինքն ալ կույր՝ մուրացիկին պես։

Ու այն խլացուցիչ ժխորին մեջ, զոր կհանեն կառքերն ու տրամվայները, կկորսվի այդ պզտիկ թոքախտավոր նվագը, ինչպես կինն ալ կկորսվի, մոռցված, պտտելու ելած տիկիններուն ու պարոններուն երփներանգ ու հոտավետ ալիքին մեջ։

ՀՐԵՇԻ ՄԸ ԾՈՑ ՀՐԵՇՏԱԿ

Հասարակաց պարտեզի մը մեջ, անկյուն մը, երաժիշտներու խումբ մը կնվագե։

Կդիտեմ վայրկյան մը, փոխանակ մտիկ ընելու։ Ի՜նչ անճոռնի բան։ Տակառի նման ուռած խոշոր սնդուկներ, որոնց վրա կունտ ծայրով փայտի կտոր մը կիջնե ամեն վայրկյան, խոշոր դեղին խողովակներ, որոնց բերանը լայն հորանջում մը ունի, խողովակներ, գալարում խողովակներ, և այդ խողովակներուն փակած բերաններ, փչելով ուռած կարմրած այտեր, ու փայտե մանր կամ խոշոր զորձիքներ՝ կուրծքի վրա կամ երկու ծունկի միջև բռնված, որոնց անընդհատ կքսվին երկայն նուրբ փայտի կտորներ, որ հիմար շարժումով մը կելլեն կիջնեն, և այս բոլորին մեջտեղը, մաքուր սև զգեստներ հագած պարոն մը, որ ցպիկ մը օդին մեջ կխաղցնե անդադար, ամբողջ մարմինը մեկ կողմեն մյուսը դարձնելով ամեն վայրկյան։

Եվ սակայն ատոնք են, որ ծնունդ կուտան երաժշտության օդային ալիքին, այն աստվածային հոսանուտին, որ մեր ականջներեն մինչև մեր սիրտը կվազե ու զայն երանությամբ կարբեցնե։

Ավա՜ղ, միայն Հյուգոյի մեջ չէ, որ հակադրությանց կհանդիպինք։

ՔԱՐԵ ԱՆԿՈՂԻՆ

— Ելի՛, զավա՜կս։
— Զգե, հատե գնա։
— Ճանըմ, հիշ հոդ կպառկվի՞։
— Էո՜ֆֆ, գնա՛ բանդ։

Փերայի Մեծ Փողոցին վրա, կեսգիշերին, կնոջ մը և պատանիի մը միջև կփոխանակվին այս խոսքերը։

Պատանին, գլուխն ամբողջ դեզ մը խոխվներու, ուսերն ու թևերը մերկ, պատռտած տաբատով մը, որուն մեջեն սրունքները կերևան, խոշոր ոտքերով, որոնց վրա աղտի ծեփ մը կթանձրանա, պառկած է փակ խանութի մը առջև, մայթին վրա։ Կինը, որ հավանականաբար անոր մայրն է, փոքրիկ տղու մը ձեռքեն բռնած, կշարունակե աղաչել անոր։ Պատանին կհամառի, ու՝ վերջին պատասխան՝ մեկ կողմեն մյուսը դառնալով կքնանա։ Կինը կհեռանա, գլխիկոր, համրաքայլ, ու մութին մեջ կսուզի։

Եվ կան, որոնց քով կին ալ չի տեսնվիր. կան որ մեծափարթամ տուներու մարմար սեմին վրա փռված են, այդ շենքերու շքեղության վրա ցավագին արատ մը կազմելով, ու խոնջ և միամիտ դիրքերու մեջ իրենց վտիտ ձերձազգայց մարմինը տարածած, կիսկան, անհոգ, անզգա...։

Ու կառքերը կթավալին մեծաշռինգ, սալաքարերուն վրա անվերջ որոտում մը պտրտցնելով. ու սիգաճեմ պարոններ նազելաշուք տիկիններու և վարդաժպիտ օրիորդներու հետ կանցնին, պարոնները իրենց բերանն ունենալով սիկարեթ ու տիկինները՝ շաղակրատություն։ Ի՞նչ փույթ, այդ ժխորը երաժշտության կփոխվի, օրոր կդառնա, ու կքնանան անոնք՝ իրենց քարե անկողնույն վրա, որպես թե իրենք ալ քարե ըլլային, կքնանան փողոցի այդ զավակները։

ՓՈՂՈՑԻ ԱՂՋԻԿԸ

Ճաշարան մը։ Բազմաթիվ լույսեր զոր հայելիներն ավելի կբազմապատկեն։ Ժիսոր պնակի, պատառաքաղի բախումներու, սպասարկուներու արձակած սուր ու եղանակավոր կոչերու, ճաշողներու խոսակցությանց, ծիծաղներու, բաժակի ընդհարմանց։ Կերակուրի հոտեր՝ օդին մեջ առկախ, Դեմքերու վրա՝ հրճվանք ու գոհունակություն։

Պզտիկ աղքատ տղա մը կերևա, ամոթահար երևույթով, աչքերը հազիվ համարձակելով վեր բարձրացնել, գլխարկը ձեռքը, ոտքերը բոբիկ, արգահատեցնելու չափ տգեղ։ Դոնեն կսպրդի ավելի, քան կմտնե, ու կպտտի սեղանե սեղան, սեցած ոսկրուտ ձեռք մը ամենուն երկնցնելով, որուն կընկերանա ծռած վիզի մը և արցունքոտ աչքի մը ամբողջ պաղատանքը։ Բայց պզտիկին ձեռքը դատարկ կմնա, ընթրող տիկինները ձանձրության ծամածռություն մը կնեն, և պարոնները կարձկեն խիստ նայվածք մը, որ կվանե և որ մերթ գրեթե հարված մը կսպառնա։ Ու կհեռանա տղեկը, անխոսուկ, միշտ գլուխը կախ, վիզը ծռած, ձեռքն օդին մեջ բաց, մինչև որ նորեն դուռը կհասնի, առանց տասնոց մ'իսկ ստացած ըլլալու։

Հինգ վայրկյան հետո նույն դռնեն կմտնե փոքրիկ աղջիկ մը, բավական կոկիկ զգեստներով, ու սիրուն, շատ սիրուն աչքերով։ Եվ տեսնելու է ի՞նչպես գիտակցությունն ունի իր սևուկ աղվոր աչքերուն զորության։ Շեշտակի կսևեռե անոնց անհունապես անուշ նայվածքը ամեն մեկ ճաշողի աչքերուն վրա։ Եվ այդ նայվածքը պաղատանք չունի, այլ

պահանջում մը, գրեթե հրաման մը։ Վիզը ծռած է, բայց ոչ ի նշան աղաչանքի, այլ իբր միջոց հրապուրանքի։ Եվ ձեռքը չերկննար, չի բացվիր մուրալու, այլ մեղմիվ կհրե ճաշողին թևը. և այդչափ։ Բառ մը չելլեր այդ խորհրդավոր աղջկան շրթունքներեն։

Բայց ահա ձեռքերը զրպան կմտնեն, ո՞րը տասնոց, ո՞րը քառասունոց կընե աղջկան ափը. շատերը իրենց հացը կամ պտուղը կուտան անոր. և այս ամենը՝ ժպիտով մը ընկերացած, որ ոմանց քով բարի է, այլոց քով աղտոտ։

Ո՜վ Գեղեցկություն, երկնքե՞ն կուգաս թե դժոխքեն,— Պոտլեռ իրավունք ուներ՝ այսպես հարցնելու։

Եվ ափերը պտուղներով լեցուն, աղջիկը իր պտույտը կշարունակե։ Ոմանք՝ անոր ստակ կամ միրգ տալե հետո՝ կփսփսան իրարու ականջին՝ նշանակալից նայվածքներ ուղղելով իրարու։

Վայրկյան մը, աղջիկը անկյուն մը կնստի պտուղներն ուտելու համար, բայց ահա ճաշարանին դռնեն ձեռք մը կերևա, որ հրամայող շարժումով մը ոտքի կհանե զայն։ Ճաշարանին պատուհանեն կընդնըշմարվի, դուրսը, ստվերին մեջ կեցած կին մը, որ աղջկան ցույց կուտա այն սեղանները, որոնց քով դեռ չէ գացած։ Մայրն է, ո՞վ սոսկում, մա՜յրը, ապրանքին տերը։

Քալե՛, քալե՛, խե՜ղճ աղվոր աղջիկ, շարունակե՛ պտույտդ այդ ժպիտներուն, պտուղներուն, գգվանքներուն մեջեն։ Օր մը ավելի լավ պիտի գիտնաս գործածել աչքերուդ բոցը, և այն ատեն առատ-առատ պիտի ստանաս դրամ ու ժպիտ։ Դուն պիտի չպտտիս սեղանե սեղան ողորմություն հավաքելու. այդ մարդիկը որ քեզի կժպտին այսօր, անոնք պիտի պտտկին փեշերուդ շուրջն ու համբույրներդ պիտի գնեն։ Ու փողոցի կինը պիտի ըլլաս, դուն որ փողոցի աղջիկն ես այսօր։ Սատանան, որ քու մեջդ կքնանա, պիտի արթննա, ու աչքերուդ մեջ, լանջիդ մեջ, մազերուդ մեջ պիտի վառե դժոխքին հուրը։ Եվ պիտի ըլլաս ինչպես պեպեք մը տղեկի մը գիրկը, խաղալիք մը, ի՛ր մը զոր մատներու մեջ կդարձնեն, զորդ մը, որուն վրա կկոխկոտեն, աթոռ մը, որուն վրա կնստին։ Համբույրները համբույրներու պիտի հաջորդեն և մարդկային մոլորության աղտը պիտի կուտակվի այտերուդ վրա։ Ու ժպիտդ, որ կգգվե հիմա, պիտի խածնե այն ատեն։ Մազերդ օձեր պիտի դառնան ու սիրտեր պիտի խեղդեն։ Այտերուդ ու շրթունքներուդ շպարին թույնը, և թույնն աչքերուդ ու ամբողջ մարմնույդ, պիտի հոսի անոնց վրա, որ քեզի պիտի մոտենան։ Եվ դուն, որ կյանքի հրճվանքը պիտի ներկայացնես, մահ պիտի սփռես, հե՜ք, աղվո՜ր աղջիկ...

ՍՐԲԱՊՂԾՈՒԹՅՈՒՆ

Մեծափարթամ հուղարկավորություն մը։

Մեռելակառքը գերեզմանատուն հասած է։ Սգակիր կառքերեն պըզտիկ սև ալիքներ կթափին, որոնք միանալով կկազմեն սև հոսանք մը, որ շիրիմներուն ու խաչերուն մեջեն կուղղվի դեպի հատուկ գերեզմանը։

Բայց ի՞նչ սպիտակություն է, որ այդ սևը կարատե։ Հուղարկավորներու մռայլ ամբոխին մեջ պայծառ շրջազգեստներու փունջ մը կերևա։ Այո՛, երեք կիներ են, շուշանաթույր շղարշե հանդերձներով, և այդ կիները երեք ծաղիկներ են մոլության։ Հանկարծ բաժնվելով բազմութենեն, կերթան շիրմի մը վրա կշարվին կնստին, խեղճ սուրբ դամբանը խանութ դարձնելով իրենց առուտուրին։ Եվ մինչ նոր գոցված գերեզմանին վրա կրոնականներն իրենց մահանվագը կբարձրացնեն, մինչ սգավոր աչքեր տրտմությամբ կակնարկեն հողակույտին, երեք կիները քարին վրա լիրբ դիրքերով նստած, սև գուլպաներով կաղապարված իրենց լեցուն բումբերը ցուցնելով զարդարուն շրջազգեստին տակեն, զոր վեր քաշած են, կխնդան աղտոտ ու կառչող ծիծաղով մը, որ կվառե իրենց շրթունքներուն բարկ կարմիրը և իրենց աչքերուն դժոխային սևը, ուռեցնելով կլորցնելով իրենց այտերը, որոնց վրա բրնձափոշիի աղվամազ մը կփթթի։ Եվ արդեն իսկ իրենց բոլորտիքը կազմված է շրջանակ մը ապուշներու և սրիկաներու, որոնք ոչ մեկ տեղ կպակսին։

Ու քստմնելի է հոգիի այդ ապականությունը որ կուգա կանգնիլ, ժպտուն, հաղթական, մարդկային մարմինին տարրալուծման վրա, մոլությունը, որ սիրտը կփտեցնե և որդը, որ ոսկորները կկրծե հանրակինը՝ մսեղեն գերեզման ու գերեզմանը՝ անհո՛ւն հանրակին։

ՁԻՆ ԵՎ ԱՆԾԱՆՈԹԸ

Միջօրեի արևին տակ սայլ մը կերթա համրաքայլ, Փերայի Մեծ-Փողոցեն, որ այդ տաքուն ամայացած է։

Ճակատը քրտինքեն փայլուն, ծաղկախտեն ծակծկված այտերը կաս-կարմիր, ծունկերը հոգնութենեն դեղուն, ֆեսին վրայի յազման բակված ուսին վրա կախված, Քյուրտ մը կքալե սայլին առջևեն, հևալով, ամեն մեկ քայլին գլուխը վեր ծուելով, դեմքը խոնջենքի ու ձանձրության անբացատրելի ծամածռությամբ մը համակված։ Ու սայլը կկրե ո՛չ փայտ, ո՛չ մարդ, ո՛չ բանջարեղեն, այլ... սատկած ձի մը։

Փորը նեղա բացված, կողերը՝ զիրենք ծածկող մաղթաթի ու չոր մաշկին տակեն դուրս ցցված, փայտացած սրունքներն օդին մեջ դեպի վեր անկված, կռնակի վրա պառկած է կենդանին, գլուխը սայլին քովընտի տախտակներեն մեկուն կրթնած։ Ո՜հ այդ գլուխը... ամբողջ քերթված մը արհավիրքի ու խորհուրդի։ Ցանցառ բաշի մը մեկ քանի աղտոտ թելերը վիզին ու ճակատին վրա կկախվին. աչքերը կիսաբաց են, անշարժ, անակնարկ, խոշոր բիբերով, որոնք հալած կպչուն մարմնի մը ապավորությունը կթողուն. բերանն ալ բաց է՝ մեծ-մեծ ակռաներով։ Սայլին ցնցումները դիակին կհաղորդեն միօրինակ ու տենդոտ շարժումներ և արվեստական կյանքով մը զայն կոգևորեն։ Ոտքերը անընդհատ կերերան՝ օդին մեջ ձևացնելով շրջյալ պար մը խոլական. ու գլուխը սայլին ամեն մեկ թոթուրտուքին կբարձրանա ու կծռի, միշտ նույն մեքենական շարժմամբ, հաստատական նշան մը ընել թվելով, որպես թե պատասխաներ խորին հարցումի մը, զոր Անծանոթն իր ականջին կփսփսա այդ խորհրդավոր ուղևորության մեջ դեպի գերեզման։

Եվ այն որ սայլը կքաշե, մյուս ձին, ողջը, կքաշե ու կքալե, Քյուրտին խարազանին շաչյուններուն տակ, ինքն ալ խոնջ՝ հևիհև, սրունքները դանդաչկոտ, մտքեն թերևս երանի տալով իր ընկերոջ, որ ընդմիշտ կազատի այս աշխարհեն ուր ձիերն իսկ իրավունք ունին հոռետես ըլլալու...

Ու սայլը կերթա միշտ համրաքայլ, միջօրեի արևին տակ, Փերայի Մեծ-փողոցեն, որ ամայացած է այդ տաքուն։

ՄՈՒՐԱՑԿԱՆ ԿԻՆԸ

Նուրի օսմանիե մզկիթին բակը, անկյուն մը, մուրացկան մը նստած է, կույր տաճիկ կին մը, որ կերգե։ Նվագածությամբ կամ երգելով մուրացող աղքատները միշտ զիս մասնավորապես հուզած են, որովհետև թշվառության ու երաժշտության կրկին պերճախոսությամբ են զինված։ Նրբագիծ դեմք մը ունի այդ կինը, ուղիղ, մաքուր ճակատով, սրածայր բարակ քիթով, պզտիկ դժգույն շրթունքներով, ծյուրած անարյուն այտերով. բայց ինչ որ այդ դեմքին վրա ամենեն ուշագրավ է, աչքերն են, փակ կոպերով, որոնց վեթոտած, իրար փակչտած թարթիչներուն տակ նայվածքի փլատակ մը կա, ճերմակ կապույտ թաց մարմին մը, որ կերերա, ճզմված ու ցեխոտած տերեփուկ։ Գլուխը՝ սև ծաղիկներու ջուրքով սպիտակ յաշմագ մը կապած է, քունքին վրա մեկ գնդասեղով թաբռնված, ծայրերը՝ հովին ծածանելով։ Խահվեի գույն բարակ պատմուճան մը հագած է, մաշած, աղտեն փայլունցած, վարի եզերքները

ծվիկ-ծվիկ ու ցեխոտ։ Խոշոր տրեխներու մեջ ընկղմված են ոտքերը, բոբիկ։ Ու քարի մը վրա նստած, ձեռքերը ծունկերուն վրա միացուցած, աչքերն անընդհատ տենդոտ քթթումով մը թարթափելով, գլուխը համաչափ շարժմամբ մը վեր ու վար տատանելով, կերգե թրքուհին, երգ մը երկարածավալ, դանդաղընթաց, միօրինակ, և տխուր, տխուր՝ արևելյան երաժշտության ամենախորին տխրությամբ։

Ինչո՞ւ այդ թանձրահոծ մելամաղձությունը, այդ սև, կրծող, անվերջ մորմոքը՝ Արևելքի երգերուն մեջ։ Հրավառ ու պերճ երկնքի մը ներքև, երանգաճոխ բյուրադաշնակ բնության մը ծոցը, առատահույզ եռացկոտ կյանքի մը մեջ, հեշտավետ կլիմայի մը տակ, ինչո՞ւ այդ անհուն տրտմությունը, որ կտոգորև արևելցիներու մտածումներն ու զգացումները, ամենեն դառնացյալ ու հուսահատ փիլիսոփայություններուն ծնունդ կուտա, լալագին երաժշտությունը կփթթեցնե, տառապակոծ հոգիի մը վրա բուսած արտասվազօծ ծաղիկներ։ Արևելյան երգերու մեջ պաղատանքի շեշտ մը գտած եմ, որուն խորությունը ոչ մեկ երաժշտություն ունի, աղոթերգներու մեջ պաղատանք առ Ամենակալն, և այն ատեն՝ լայն ու վեհ կոչ մը աղերսարկու, հոդվույն ճիչն առ աղբյուրն հոգիներուն, հյուլեին ձայնն առ մեծ Ամբողջը, սերունդներուն մեջ՝ պաղատանք առ կույսն, և այն ատեն՝ տարփատենչ սրտի մը արյունը, որ կհոսի՝ տաք, ծխաշունչ ու թունալից, ամբողջ անձին, ամբողջ էության խոնարհումը անմատչելի հուրիի մը ոտքին տակ, գանկաջախջախ երկրպագություն այդ դրախտ-էակին առջև, հիմարական անհույս պաշտում առ շնորհներու այդ արևակը։

Բայց արևելյան երգերու տրտմությունն ավելի ևս տրտում կթվի ինծի այդ կույր Արևելուհույն բերնին մեջ։ Յուղոտ ձայնով մը, այնչափ յուղոտ, որ խազերը կարծես իրարու կփակչին իր կոկորդին մեջ, կերգե տեսակ մը անվերջ եղերերգ, մերթ այնքան ցած, որ բառերն անկարելի կըլլա որոշել այդ մոլտուքին, այդ տեսակ մը ներքին մենախոսության մեջ, մերթ բարձր, թրթռուն, ելևէջավոր, լայն հառաչներով պատառված։

Ոչ ոք ուշադրություն կդարձնե երգին ու երգողին. և ինքն ալ, կարծես անտարբեր իր շուրջ անցած դարձածին, իր երգն երբեք չընդմիջեր ողորմություն հայցող բառեր մոմռալու կամ ձեռքն ի մույր կարկառելու համար։ Հեռու արտաքին աշխարհեն, կյանքի հաբահոլով շարժումեն հեռու, մեկուսացած իր խավարին մեջ, վշտին գինովությամբն արբեցած, կերգե, կերգե անդադար, տրտմության ամբողջ հեշտությունը ծծելով իր երգին մեջ, որ՝ մուրացկանի խնդրանքե մը ավելի՝ կթվի կյանքին վրա արձակված ողբ մ՚ըլլալ, կյանքին, որ իրեն կերևա՝ իր բիրերուն ոլորակին մեջեն՝ ահեղապես մութ։

ԿԵՆԴԱՆԻ ՍԱՅԼԱԿ

Պեշիկթաշի վերջին հրդեհին ավերակներուն մեջ։ Կիսակործան պատեր, ծխնելույզի մնացորդներ, գետինը տեղ-տեղ քարի, չորացած շաղախի, այրած երկաթե դեզեր։ Խորտուբորտ ճամփա մը, որ մերթ հողակույտներ կկազմե, մերթ փոսեր, զոր նոր տեղացած անձրև մը ջրշեղջներու փոխած է։ Լուսինը կբարձրանա հորիզոնեն, խոշոր, պայծառ, կլոր լուսին մը, հսկա թավալուն ոսկեդրամ, և իր առատ հասուն լույսը կիյնա այդ մեծապատ ավերավայրին վրա, փլփլված պատերուն անկանոն ստվերը հողին վրա, կբանի քմահաճ ժանյակներու ձևով, կբեկբեկի կաղտոտի այդ խառնակ շեղջակույտին մեջ, իր պատկերը՝ երկնցած, տափակցած, կոտրտած, ոձեցած՝ կրազմապատկե տղմուտ, պղտոր ջրշեղջներուն մեջ։

Այն պահն է, ուր շուկայի մարդիկ տուն կդառնան, ձեռքերնին տոպրակներով բեռնավորված, գինետուներու տեղ կանգնած վրաններուն և խանութներու տեղ շարված քյուֆներուն մեջեն։ Այդ խուռն ու աղմկահույզ բազմության մեջ երկու հոգի աչքիս կզարնեն, ծերուկ մը և պզտիկ աղջիկ մը, որ կքալեն դանդաղ քայլվածքով մը, միշտ նույն հեռավորությունը պահելով իրարմե։ Ուշադրությամբ կդիտեմ ու կտեսնեմ, որ մուրացկաններ են. ծեր, կույր մը և աղջիկն իր առաջնորդը։ Երկուքն ալ մութ գույնով քուրջերու դեզ մը ունին իբր հագուստ, և իրենց գլխուն վրա, մին խոշոր փաթթոց մը ճերմակ և մյուսը՝ ճերմակ պզտիկ լաչակ մը, այնպես որ հեռվեն կթվին ոպիտակ գլխով սև ուրվականներ։ Երկուքին ալ դեմքը որոշակի չի տեսնվիր, այդ ճերմակության մեջ կորսված ափ մը սև։ Աղջիկն իր մեկ թևն անցուցած է թիթեղե ման մը, որուն մեջ կտատանի՝ անոր ամեն մեկ քայլին ճողփալով ապուր մը կամ լույծ կերակուր մը, գարշահոտ. մյուս ձեռքով բռնած է երկայն ցուպ մը, որուն ծայրը ծերուկին ձեռքն է։ Եվ աղջիկը ոչ միայն առաջնորդը, այլ անասունը, կովն է այդ կենդանի սայլին, որուն լծված է իր մատաղ ՊՅանքին ամբողջ թարմությամբ և զոր պարտի քաշել տանիլ մի՛շտ, մի՛շտ, աշխարհի մեջեն, մարդոց մեջեն։ Ու կզգամ, որ սիրտս կսեղմվի ի տես այդ երկու ստվերներուն որ կանցնին՝ փայտի կտորով մը միացած՝ այդ թախծագին ավերակներուն մեջեն, աղոտ ու սև՝ լուսնին արծաթ շողերուն տակ։

ԿՌԻՎ ՄԸ

Այն ճամփան, որ Ղալաթիո Կեդրոնական Վարժարանին Արևելքի խմբագրատունը կտանի և որ կանցնի Քեմեր-Ալթը կոչված թաղին մեջեն, ահռելի կերպով լեցուն ճամփա մըն է, լեցուն կյանքով, շարժումով, աղմուկով, բազմությամբ, աղտոտությամբ, մոլությամբ։ Գետինը՝ խորտուբորտ, ցեխոտ, աղբախուզբով խճողված։ Աղտոտ գորշ, աղտոտ դեղին, աղտոտ կարմիր տուներ, որոնց ծեփը կթափվի, որոնց դուռը մշտաբաց վիհի մը ձգողություն ունի, խոշոր կոտրտած պատուհաններով, որոնց եռահեն լրբենի դեմքեր կտեսնվին հաճախ։ Տուներուն տակ՝ շարք մը խանութներ, մեծ մասամբ գինետուներ, որոնց խորը տակառները կերևան՝ փորի վրա պառկած, լայն, մութ, թանձրազանգված, իրենց խոնավ մարմնույն բոլոր ճեղքվածքներեն ընդարմացում, անասնացում արտաշնչելով։ Պատերուն վրա շիշերու բանակ մը, պզտիկ, սիրուն շիշերու, որոնք կարմիր կամ կանանչ գլուխ մը ունին, կուրծքերնուն վրա կկրեն իրենց անունը ցուցնող թղթիկը և որոնք կպարունակեն ինչ որ վիշտեր կծնի ու վիշտեր կքնացնե։ Տակառներուն շուրջ ու շիշերուն տակ, երկայն նստարաններու վրա ընկողմանած, կարմիր փքացած երեսներով մարդիկ փողոցի երգի մը մեկ քանի բառերը կմռլտան, քաշքշելով, երկնցնելով, ծամծմելով զանոնք իրենց ակռաներուն մեջ։ Գինետուներեն հետո սրճարանները կուգան, ծույլ, ախտամոլ, դատարկապորտ մարդոց բույն, ուր սիկարեթներու, նարկիլեներու ծուխը և խահվեի գավաթներու գոլորշին օդը կթանձրացնեն ու կգարշահոտեն։ Հետո սափրիչի կրպակներ, մաքրության միակ խազ՝ աղտոտության այդ համանվագին մեջ, նպարավաճառանոցներ, որոնց առաջքը շարված են աղած ձուկի տակառներ ու լեմոնի կողովներ և որոնց ձեղունեն կախված են սոխ, սխտոր, երշիկ, ապուխտ, ամենքն ալ յուղոտ, ու սև, մրրգավաճառանոցներ ու մսավաճառանոցներ, ուր ցուցադրված են եզան, հորթու կամ ոչխարի միսի խոշոր կտորներ, կարմիր ու դեղին, ճարպոտ։

Փողոցը, ամեն մեկ քայլիդ, փայտե թապլաներ, որոնց մեջ դիզված է լաֆեռտան, թույլ, կպչուն, կարմրորակ, յուղոտ։ Խանութներուն առջև, պզտիկ կրակարաններու վրա ձուկ կտապկեն, անպիտան յուղի ռնգաշարշար հոտ մը արձակելով օդին մեջ։

Խանութներուն մեջ, սեմին վրա, տուներուն առջև, դուրսը, ամեն կողմ, կմտնեն, կելլեն, կքալեն, կխոսին, կշարժին, կգործեն մարդեր, կիներ, տղեկներ, մարդերը՝ խոշոր, յուղոտ, կարմիր, կիները՝ մսոտ, ուռած, ներկված, դանդաղ, կրելով անճոռնի հագուստներ, որոնց վրա գույներն աչքը կպատռտեն, տղեկները՝ տժգույն, տխեղծ, ազազուն,

դեմքերնին վերքերով, պալարներով ծածկված, քուրջերու մեջ մարմիններնին փաթթված և աղտո՜տ, աղտո՜տ, աղտոտության ալ զավակներ։ Գլուխնին գորշ լաչակներով ծածկած պառավ կիներ կանցնին անդադար ամբոխին մեջեն, խանութները կմտնեն, մեկուն կամ մյուսին կմոտենան ու խոսքի կբռնվին. ամենքին ծանոթ են, և ունին դեղին յուղոտ, խոշոր դեմք ու փոսացած աչքեր որոնց հոսնական նայվածքը կասկածելի անցյալ մը գուշակել կուտա։

Այդ ճամփուն վրա բացվող բազմաթիվ կողմնակի փողոցներուն մեջ կտեսնվին քովե քով շարված պզտիկ խանութներ, ուր կծախվի մարդկային միս։ Տատանելով քալող գինովներ կանցնին, կարմիր, կարծես եռացող դեմքով, որուն վրա կերերար լկտի ժպիտ մը։ Ու ամեն կողմ, կանացի միևնույն տիպարները, ամենքն ալ նույն կաղապարեն ելած, իրարու համանման, ինչպես համանման են բոլոր պեպեքները, ամենքն ալ կարմիր ու գիրուկ, անամոթ ու առնական քայլվածքով մը, աղտոտ դեղձան կամ աղտոտ շեկ մազերու փունջ մը իրենց ճակտին, մինչև իրենց աչքերուն վրա ինկած։ Ամենքն ալ բաց գույն շրջազգեստի մը վրայեն բաց գույն մուշտակ մը հագած են,— տեսակ մը համազգեստ մոլության,— ոտքերնին նալբններ ունին անցուցած, որոնք խրոխտաբար կբլաքեն իրենց համարձակ քալվածքին մեջ, և ամենքն ալ իրենց շուրջ կարձակեն գրգռող, հրավիրող, քաշող նայվածքներ։ Լաթեռնաճիներ կանցնին, թուխ կարմիր պզտիկ կոնաձև ֆես մը դրած՝ արվեստական կանորեն գանգուր յուղափայլ մազերու փունջի մը կատարը, ոսկեզօծ դակորեն լայն են սրունքներուն վերի կողմը և որ երթալով կնեղնան. ատոնք իրենց ուսին վրա կկրեն լաթեռնան, այդ ախտաթաթավ թաղին հոգին, այնքա՜ն մելամաղձիկ և այնքա՜ն հեշտորոր այդ նվագարանը, որուն ողբը, խուլ ու խորին, կարծես զզվանքի շեշտ մը կպարունակե մարդկային աղտոտության ու ապուշության դեմ, զոր ամեն օր տեսնելու և իր ներդաշնակությամբը փայփայելու դատապարտված է։

Այս եզական ճամբուն մեջ է ահա որ հանդիպատես եղա երեկ կռիվի մը, որ ուներ նույնպես եզական նկարագիր մը։

Կին մը և հրեա տղա մը իրարու ձեռքե կողով մը կքաշեին։ Կինը զայն երկու ձեռքով բռնած էր ամրապինդ, և հոնքերը պռստած, շրթունքները սեղմված, երեսը բարկությամբ ծամածռված, կջանար կողովը կորզել Հրեային ձեռքեն, որ կընդդիմանար, խռոված ու միանգամայն շվարած դեմք մը ցուցնելով՝ կլոր յուղոտ անծոպ ֆեսի մը տակ։ Հայտնի էր, որ մեջերնին չնչին դրամական հաշիվ մը ունեին, զոր այդ կողովին միջոցով կուզեին մաքրել։ Վենը սստակացավ տակավ, Հրեան՝

իր ցեղին հատուկ կեղծ դյուրաբորբոքությամբ և աղմկահուզությամբ՝ սկսավ պոռչտալ, անցորդներուն խոսքեր ուղղել, կնոջ վրա ցատքելու պես ձևեր ընել, հիմար ցնցումներով կողովն իր կողմը քաշել։ Ի վերջո, տեսնելով, որ այդ բոլորը ապարդյուն կմնա, լաց մը փրցուց, լայնաբաց ու ծռած բերնով լաց մը, մեծաժխոր, եղանակավոր, որուն մեջ դեռ բառեր կորոշվեին, կոտրված, խեղդված, անհասկանալի։ Բայց կինը մտիկ ընողներեն չէր։ Ճակտին վրա թափվող մազերու խուրձին մեջեն սև պճլտուն բիբերը թավալելով շպարին շինծու կարմրության տակեն բարկության կարմիրը դուրս հանելով, հայհոյությանց տարափ մը տեղալով բերնեն, միշտ կառչած կկենար կողովին։ Կովողներուն բոլորտիքը շարված դիտողներու շրջանակը հետզհետե կստվարանար։ Խանութներեն, փողոցներեն ու չես գիտեր ո՞ր ծակերե հանկարծ դեզ մը հրեա դուրս ելան, պզտիկը շրջապատեցին և հուզյալ շարժումներով, աղաղակներով, վայնասունով կպաշտպանեին զայն։ Մյուս կողմեն՝ թափեցան մեկ քանի թանձրամարմին կնիկներ, անսահման փորերուն վրա աղտեն սևացած գոգնոցներ կապած, մեկը շիլ, մյուսը՝ հաստ ահագին ակնոցով, գլուխնին բաց գիսախոիվ կամ լաչակի մը մեջ փաթթված, նաև ճմրթված յուղոտ գլխարկով մարդիկ, որոնց ազգն ու արհեստը տարակուսական են, ջրհանկիրներ, գինեպաններ որ իրենց շիշերն ու գավաթները ձգելով եկան, սրունքներնուն վրա տատանելով, պաշտպանողական շեշտով մը միջամտել ի նպաստ իրենց բարեկամուհիին, զոր թևեն ամենայն մտերմությամբ քաշելով՝ կուզեին բաժանել Հրեայեն։ Տղուն ցեղակիցները կշարունակեին պոռալ, կիները՝ ճչալ, կանչվռտել, գինովները կզայրանային և իրենց աչքերուն կարմրած սպիտակուցին վրա սպառնալիքի արտահայտություն մը դնելով՝ կպատրաստվեին բազուկներով փաստաբանելու։ Ամբոխը ևս քան զևս կստվարանար, կխոնվեր՝ այդ պայքարին շուրջը, ճամփան կգոցեր, հակառակ ջանքերուն ոստիկանի մը, որ կուզեր բազմությունը ցրվել։

Եվ ահա աղբակառք մը քաշող ձի մը, հասնելով այդ կետին ու կարելիություն չգտնելով անցնելու, իր խոշոր մազոտ գլուխը մարդոց գլխներուն վրայեն երկնցնելով կնայեր, իր մեծ բարի աչքերուն մեջ զարմանքի ու անհամբերության նայվածք մը ցուցնելով։ Ու ազնիվ, այո՛, տարօրինակ կերպով ազնիվ ու բարձր կթվեր ինծի այդ ձիու խոշոր գլուխը իր միամիտ զարմանքի ու իրավացի դժգոհության արտահայտությամբ, քան պժգալի զեռումը այդ բոլոր պզտիկ մարդկային դանկերուն, որոնց մեջ ուղեղի տեղ տիղմ կա դիզված։

ՍՊԻՏԱԿ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ցձյունեն։ Վերը, շատ վերը, երկնքին մութ հատակին վրա, միլիոնավոր պզտիկ գարշ կետերու եռուզեռում մը, անսահման ամպ մը մոխրագույն, որ կեփի, մանրադիտական միջատներու խոլ թռիչ մը ցանուցիր, կարծես փոշին որ կթափի երկինքն ավլող հրեշտակներու ավելեն։ Օդին մեջ, գլխուդ վերև, շուրջդ, խոշոր ճերմակ գնտակներ են թույլ ու կակուղ, որ կծածանին դանդաղ նաղանքով մը, հանդարտ ու անվերջ վայրէջք մը անհամար թիթեռնիկներու, կուսական համբույրներու տարափ մը սպիտակ։ Ճերմակության տիրապետություն մը ամեն կողմ. ոտքիդ տակ ճերմակ կակուղ կապերտը որ կխարշափե ամեն մեկ քայլիդ. տուներն իրենց գլխուն վրա ճերմակ շալ մը ունին փռած. դռներն ու պատուհանները ճերմակ գիծով մը շրջանակված են. ծառերը ճերմակ սավանի մը մեջ կկաղապարեն իրենց կմախքին մերկությունը։ Եվ ամբողջ բնությունը իր շուշանաթույր հանդերձավորման մեջ Ավագ Հինգշաբթի օրվան եկեղեցիի մը երևույթն ունի։

Փանկալթիի մայթին վրա, տուներու տակեն քալելով, գրեթե վազելով, քանի մի եվրոպացի քահանաներ ու քանի մը դպիրներ պզտիկ դագաղ մը կտանին,— հուղարկավորությո՞ւն մը՝ այդ օրին։ Ամենք ալ առանց հովանոցի, ձյունին ցուրտ ու լույծ հպումներուն իրենց մորթն անձնատուր, դժգոհության սուր արտահայտությամբ մը դեմքերնին ծամածռված, անհասկանալի բառեր ծամծմելով, կառաջանան շուտ շուտ դեպի եկեղեցին։ Ու հովին քմահաճույքներուն տակ կծածանին, կծռին, անընդհատ կարճելով ու երկարելով, բոցեղեն լեզուները որ դպիրներու նուրբ ու սպիտակասքող մոմերուն ծայրը կցցվին։ Եվ դագաղ մը չէ որ կտանին այդպես, այլ տուփ մը, ճերմակ պզտիկ տուփ մը, որովհետև նորածին մըն է մեռելը։ Ճերմակներ հագած են կրոնավորներն ու դպիրները. ճերմակ սուգ մը կպաշարե մահն այդ տխեղծ էակին, որ վայրկենական թռիչով մը եկեր անցեր է աշխարհեն, ակնթարթային նայվածք մը նետելով կյանքի վրա։ Ու ինծի կթվի թե հոգիի այդ սաղմը, որ իր թևերը չէ ցեխոտեր մեր մեջեն անցած ատեն, դեռ սպիտակ՝ այն սպիտակությամբ որով երկինքը զայն շաղվեր էր, իր հարազատ հուղարկավորությունը կունենա սպիտակության այս ճոխ փթթումին մեջ, որ ամենուստ զայն կշրջապատե։

ԾԵՐՈՒՆԻՆԵՐՈՒ ՄԱՀԸ

Քապաթաշի ծովեզրյա բլրակը քմահաճույք մը ունեցած է. ա՛լ չուզեր պահել իր վրա թառած տուներու շարքը, և անսովոր շարժումով մը զանոնք կվանե. հե՞ք վռնտված հյուրեր։ Ավելի պարզ խոսելով, երկրաբանական չեմ գիտեր ո՛ր երևույթին իբր հետևանք, այդ բլրակը դեպի ծով կքաշե։ Ոստիկանությունը պարպել տված է այդ տուներն ու հիմա փլցնել կուտա զանոնք։

Վարեն անցած ատենդ կտեսնես պատ մը, բավական բարձր, որ կեզերե բլրակին ստորոտը։ Գատին վերև՝ կարգ մը տուներ, մեծ մասամբ հին, սևցած, մաշած փայտերով, պատուհանները՝ ֆաֆեսներով ծածկված, անշարժ, լուռ և տխուր մահմետական տուներու մեղկ տխրությամբ, հսկա դագաղներու պես քովե քով շարված։ Ավելի վեր՝ բլրակին կողերը, որոնց վրա պատեր, ծառեր, քարի կույտեր կերևան խառն ի խուռն, և ամենեն վեր՝ մեկ երկու շքեղ մեծակառույց ապարանքներ, իրենց փակ վարագույրներով, լուռ ու մեռած կարծես, տրտմորեն կնային իրենց ոտքին տակ բացվող ավերակին։

Դեզ մը գործավորներ կաշխատին, տուներուն տանիքին վրա, դրռներուն առջև, պատուհաններուն մեջ, մեկիկ-մեկիկ փլցնելով անդամներն այդ փայտեղեն էակներուն, մանր-մունր հարվածներով քայքայելով, սպաննելով զանոնք, հոս տանիք մը տարտղնելով, հոն պատշգամ մը տապալելով, անդին սենյակ մը փլցնելով, և դանդաղ այլ անխուսափելի մահվան մը մեջ հարկերն ու տախտակները խառնակուտելով։ Մարդկային այդ բնակարանները տակավ կկորսնցնեն իրենց մարմինն ու ձևը, կտարբաղադրվին, կմահանան, կփտին, կթափթփին՝ որդ-կացինին խածվածքներուն տակ։

Ու մոխիրի, կիրի, քարի, փայտի տխուր շեղջակույտին մեջ, որ բլրակին ոտքը կդիզվի, կիյնան կպառկին խեղճ հինավուրց այդ տուները, որոնց զառամ մարմինը կարծես կհեծե տապարին շոր հարվածներուն տակ և որոնց անկման մեջ մարդկային շատ մը կյանքերու հովերները, ընտանեկան ուրախությանց ու ցավերու ուրվականները կուլան ու կցնդին։

Եվ արտասովոր տրտմություն մը սիրտս կսեղմե, վաղեմի ծանոթի մը մահվան կսկիծին նմանող բան մը, կսկիծ մը, ուր արդահատանքին կխառնվի հարգանքի զգացում մը, որովհետև ծերություն մըն է որ կմեռնի։

ԼՈՒՍՆԻՆ ՀԵԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Գիշերն եկած է, ձմռան հազվադեպ պայծառ գիշերներեն, այնչափ պայծառ, որ եղանակին ու ժամուն վրա տարակույս կունենաս անպատճառ։ Խոշոր շողշողուն լուսին մը երկնքին մեջ կթավալի, անամպ և աստղերով կետավորված երկինքի մը մեջ, որուն մութ կապույտին կուտա լուսավոր թափանցիկություն մը։

Մահալլեպիճի մը Կյումյուշ-Սյուի զառիթափեն վեր կելլե, դանդաղ հոգնած քայլերով։ Գլխուն վրա կկրե իր թապլան՝ ճերմակ լաթով մը ծածկված։ Կդառնա անշուշտ իր օրական թափառումեն, մեկ քանի պզտիկներու քմահաճույքին կամ որկրամոլության շնորհիվ քսակը քիչ մը գիրցած։

Եվ զառիթափը, քանի մը օր առաջվան անձրևներուն թողած ցեխովը համակ ծածկված, կփայլի լուսնին տակ, յուղոտ ու թանձր փայլ մը, անհուն ոսկեզօծում մը, զոր կմղկտացնե տիղմին սևությունը։

Տուներու ապակիները լույսով կծեփվին։ Վարը, ծովը կփռվի, հանդարտ, անշարժ, անծալ, հալած ոսկիի պես փողփողելով։

Շառագույն կարճ ու կապտածոպ ֆեսը գլուխը, սրունքները փոքուրին խողովակներուն մեջ սեղմած, ուսին վրա անձեռոց մը ձգած, իր շարժուն խանութին տակ կառաջանա մահալլեպիճին քնացող քալվածքով մը, հեռավոր հիշատակներու զարթումը անշուշտ զգալով իր սրտին մեջ, լքված գյուղին ու լքված ընտանիքին պատկերը տեսնելով աչքին առջև, ու երազներ երազելով պայծառ լուսնին տակ, որ գիշերին մեջ կծորե անհուն երազն իր լուսեղեն հոգվույն։

Հանկարծ, սխալ քայլ մը կամ սայթաքում մը, և թապլան կգլորի գետին, պնակներու, շիշերու, սկուտեղներու մեծաժխոր խշրտուքով մը։ Ամբողջ դրամագլուխ մը որ կփճանա։ Բարեսիրտ անցորդներ կփութան հավաքվիլ ավերակին շուրջը և կջանան կոտրտուքներու այդ դեզին մեջ անվնաս մնացած բան մը գտնել։ Եվ ինք, երազողը, կմնա ապշած, բերանաբաց, անշարժ, իր դժբախտության առջև։

Վերեն, լուսինը միշտ պայծառ ու զվարթ, գիրուկ դեղին այտերը լուսաշող, խոշոր աչքերն ու լայն բերանը մեծաբաց, կթվի շարաճճի ու անհոգ ծիծաղով մը խնդալ։

ԳԱՃԵ ՄԱՐԴԵՐՈՒՆ ԶԱՐՄԱՆՔԸ

Օդը չափազանց աղվոր է, գաղջ ու անուշ օդ մը, որ մարմինը կփայփայե, խնծղալից արևով մը, որ բնության վրա կյանք կհոսե, և պզտիկ զով զեփյուռով մը, որ համբույրի մը քաղցրություն ունի։ Փերայեն իջնող զառիվայրին ոտքը կեցած, չորս կողմս կնայիմ, ձանձրությամբ լեցված, հետաքրքրող բան մը փնտրելով։

Ա. Լա Պել Ժառդինիեռ հանդերձավաճառանոցին առջև, որ Փերայի և Ղալաթիո ճամփաներուն անկյուն մը կազմած տեղը կգտնվի, գաճե մարդերուն քով, որոնք խանութին դրան երկու կողմը կկենան՝ մաքուր ու շիկ զգեստներ հագած ու վայելչորեն փողկապված, տարօրինակ էակ մը աչքիս կդարնե, այնչափ անշարժ ու անձայն, որ կկարծեմ բոպե մը, թե ինք ալ մին է այդ գաճե մարդերեն, բայց այնքան տգեղ ու աղտոտ, որ այդ զարդարանքի ու պերճանքի հասատության սեմին վրա հայհոյանքի մը տպավորությունը կթողու։

Ավելի ուշով կդիտեմ։ Աղքատ մըն է, կույր, կոպերը կարմիր, անթարթիչ եզերքներով իրարու փակած, կարծես իրարու կարված. մսոտ ճեղքրտված շրթունքները կիսաբաց են, ցույց տալով խոշոր ճերմակ ակռաներու կրկին շարք մը. քիթը նուրբ է ու սրածայր. երեսը կարծրաթել մորուքով մը սեցած է ու շրջանակված կարմիր աղտոտ թաշկինակով մը, որ ծնոտին տակեն կանցնի, երկու ականջները կծածկե ու կերթա անծոպ գունաթափ ֆեսի մը մեջ կկորսվի։ Վիզը շալ մը կապած է, որուն ծայրերը վերեն վար կոճկված վերարկուին մեջեն դուրս կիյնան, խոշոր բազմամյա վերարկու մը, որուն օձիքը վեր քաշած է, որուն փեթռտված ծայրերով երկայն թևերը ձեռքերուն մինչև մատները կհասնին և որուն փեշերը ծվիկ ծվիկ կկախվին, անհամար ցեխացայտքերով աստեղազարդված։ Տաբատին ծունկին վրա խոշոր կարկատան մը կտարածվի մեծ ու անկանոն կարերով։

Մեկ ձեռքը դեպ առաջ,— վտանգին մերձավորությունն իմանալու համար լարված այդ հանապազօրյա ժեսթին ակամա կրկնում,— մարմինը մեկ սրունքին վրա կրթնած, մյուս սրունքը՝ կախ, թույլ, երերուն, շեղակի երկնցած, մուրացիկը կկենա միշտ, անշարժ, անխոս, թերևս վայրկյան մը հոգնություն առնելու համար երկարատև շարատանչ պտույտե մը, կամ հավերժապես անձրևի, ձյունի, ցուրտի ենթարկված իր խեղճ մարմինը այդ աղվոր օդին կենսահեղ ջերմության մեջ պահ մը լողանալու համար իր կոտած մոռթը մեղմորեն փաղաքշող եղկ հովիկին զգայութենեն գուշակելով զվարթությունը, որ բնության մեջ կժրպտի և շարժումը որ մարդերը կոգևորե։

Ու գաճե մարդերը, իրենց թանկագին հագուստներուն մեջ այնքա՜ն սիրուն, տեսակ մը զարմանքով կդիտեն այդ անշնորհք ու այլանդակ այցելուն, որ իր դեմքին տգեղությամբն ու զգեստներուն խեղճությամբը կուգա աղտոտել իրենց անթերի արդուզարդը։

ԽԹՄԱՆ ԻՐԻԿՈՒՆ

Ծնունդի խթման իրիկունն է. Փերայի Ս. Երրորդություն եկեղեցվույն դրան առջև, մուրացկաններու երկարաձիգ շարք մը մոնողին ու ելլողին վրա կհարձակի, կպաշարե, կքաշկրտե, պիտի ըսեի՝ կպատռտե զանոնք։ Ու ի՜նչ հավաքածու հաղվադեպ արտառոց դեմքերու, ճյուղային ծուռումուռ մարմիններու, աննկարագրելի այլանդակ զգեստներու, բոլոր հաշմություններն ու տգեղությունները, բոլոր զազրանքն ու արհավիրքն աղքատության ու հիվանդության, ցուցահանդես մը մարդկային հրեշության ու ծաղրանկարային դիմագծության։ Ծերուկի գլուխ մը, ահագին, ամբողջ մազ ու մորուք, վաղող աչքերով, բերանը շողիքոտ, կոյանոցային քիթով։ Կին մը՝ խոշոր լայն դեմքով, աչքերը շիլ, բերանը մսոտ ու մեծ մեծ ցցված ակռաներով, քիթն ու ծուռը կոր՝ կաղնեբեկ մը ձևացնելով, գիշատիչ թռչունի տարբառմ նմանություն մը։ Անդին կաղ մը որ անթացուպերու վրա կրթնած է, մեկ ոտքը կիսատ, լաթերու մեջ պլլված, ուռուցիկ, օդին մեջ առկախ, երերուն։ Ուրիշ մը՝ քիթին տեղ ծակ մը, աչքերուն տեղ երկու պայթուցիկ կանանչ գունտեր թավալուն, ավերակ դեմք մը, որուն բոլոր գիծերը կծկված, քաշված, ճմրթկված են։ Կմախային մարդ մը, որուն թևերը պզտիկ մսագունտեր են, կարմիր, կարծր, կլոր, ուսերուն ծայրը տատանող։ Ուրիշներ, որոնց սրունքները գալարուն, ծռմռտկած գիծեր ունին, ոտքերն իրարու հակառակ ուղղությամբ դարձած, ծունկերը դեպի ներս քաշված, իրարու գրեթե դպած։ Եվ բնության այս սխալներուն, այս մարմնեղեն զարտուղությանց, այս մարդկային անկանոնությանց քով, ստությունն ու խաբեությունը, առողջ աչքեր որ պատան կկրեն, պատվական սրունքներ որ խեղության տձևությունը կկապկեն, անախտ բիրաններ որ թոթովախոսին շարշարված, կոտրտած լեզուն կընդօրինակեն։ Այնուհետև, վարձկանները, ստնդիաց մանուկներ՝ խանձարուրքով պատած՝ կնիկներու գիրկը, պզտիկ տղաք ու աղջիկներ, որ անցորդին ետևեն կվազեն,

անոր փեշեն փակչելով, անոր սրունքներուն կառչելով, հալածելով զայն իրենց անվերջ պաղատագին պոռչտուքովը։

Եվ այս ամենքը միաբերան կկանչուըռտեն, կճչան, կհաչեն, կոռնան, կբղկան, կմռլտան, կհոնդան, ձայներ որ կսողան կքաշկռտվին, ոմանցը սրագոչ, անկյունավոր, պատառող, ուրիշներունը՝ հաւա, թավ, հորդ, խուլռտ, ու յուլռտ ոչորկ շրջագիծերով, տարտամ գորշ գույնով, դանդաղ ծույլ ոլորումներով, այլոցն ալ՝ մարած, ճզղած, ընդայի վրզ-վրզուկներ, աղաղակի ստվերներ, ուժասպառ թոքերու քերթուքներ։ Եվ այդ ձայներուն մեջ բառեր կթավալին, ցեխի պես մարդուն վրա փակչելով, անցորդին ձեռքերը լղելով, սրունգներուն փարելով, արգահատանքն ու սիրտը շարժելով, աղաչանքի գետնաքարշ բառեր՝ մաղթանքներու և աղոթքներու խավով մը ոսկեզօծված։

ԱԳՌԱՎՆԵՐԸ

Արևն արդեն վաղուց մայր մտած է, և կիջնեմ Կյումյուշ-Սուի զառիթափեն վար, աչքս հառած երկայն ընդարձակ գերեզմանոցին, որ այդ ճամփան կեզերեն։ Նոճիներուն տակ, որ իրիկվան մթնաշաղին մեջ կցրցվին, վտիտ ու սև, խավարն ամենեն ավելի հոծ է, գերեզմաններուն, փաթթոցավոր քարի կտորներուն շուրջը, ալշամուղջի թանձր ու մեռյալ զանգվածներ որ կխտանան ծառերուն մեջտեղը, անոնց տերևներեն կարծես հոսելով կամ դիակներու փտությամբ հագեցած հողեն արտաշընչվելով և որ կծավալին, կլճանան, կմորանան։ Գիշերն իր մռայլ վերմակը կփռե մեռելներուն վրա, իր անսահման վերմակը, որ զանոնք ամենուստ կպարուրե ու կտաքցնե և որուն տակ ավելի հանդարտ, աներազ ու անխռով, կքնանան անոնք ցերեկվան բիրտ լույսին խտղտուքեն այլևս իրենց ակնակապիճներուն խառռոյը չարչարված չզգալով։

Նոճիներուն վերև, ագռավներու խուռնամբոխ երամ մը կպտտուտքի, կանոնավոր բուլորակներ գծելով երկնքին մեջ, հետո խոլ զիկզակներով զանոնք քայքայելով, խումբ-խումբ թառելով ծառերուն կատարը, ապա նորեն թև առնելով ու կազմելով մեծ սև շրջանակը որ դդառնա, դանդաղորեն կդառնա գերեզմանոցին վրա, կոկռալով կառչելով մեծաժխոր թևաբախումի ծանր ու չար շռինդով մը։ Եվ այդ հիմար դարձդարձումը կշարունակվի անընդհատ, դիվային կանոնավորությամբ մը, մերթ նոճին նոճի ոստոստում մը, մերթ նոճիներեն վեր միահամուռ սլացք մը, մերթ անսահման տարտղնում մը, սև խաշոր բիծերու երթևեկ մը, վազվռտուք մը, իրարանցում մը, ու միշտ այդ մասնական սևությանց համախմբումը, շղթայաշարումը, երկարաձգումը և բոլորածիր շրջրջումը մահաստանին ամայության վերև։

Եվ մինչ ստվերները կաճին կհորդանան հետզհետե, մինչ երկինքն անհուն խորին գորշություն մը կդառնա համակ, այդ պահուն ուր երկրի վրա կապարագին ծանրացող լռությունը շուներու խուլ հաչյուններ միայն կպատռտեն՝ հեռուե հեռու բարձրանալով, մինչ աղոտ բալի մը մեջ կսուզվի ու կհալի տանիքներու խառնակույտը, որ կեռուզեռա զառիթափին մյուս եղերքը, մինչ հեռուն, շատ հեռուն, հոն ուր ծովն ու երկինքը մոխրագույն տարտամության մը մեջ կխառնվին իրարու, Սարայ-Պուռնիի փարոսին լուսացայտ քթթումը կբողբոջե, ձմեռնային գիշերամուտի մը այդ խորհրդավոր թաղծության մեջ, չեմ գիտեր ինչ ունին շարագուշակ ու սարսռեցուցիչ՝ այդ սևատարը թռչունները, որ գերեզմանատան մը վերև կհորձանապտուտին,— ոգիները գոգցես մեռելներուն, որ հողեն դուրս են ցատքած, իրենց բարեկամ խավարին մեջ, իրենց հովանի տվող նոճիներուն վերև, օդին մեջ դառնալու համար իրենց գիշերային բոլորապարը խոլական։

ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Ավագ Հինգշաբթի օրվան եկեղեցի մը՝ իր հարսանեկան սպիտակության մեջ վեհորեն զվարթ. վերին զվարթություն մը, որ օդին մեջ կծածանի, բարձր ու խոր գմբեթեն կհոսի, ճերմակներ հագած խորանին ոսկի զարդերուն փողփողմանց և ծաղկեփունջերուն երփնաճոխության մեջ կժպտի, կաթնաթույր աստղանիշ վարագույրին հանդարտ ծալքերուն մեջ կպահվըտի, սպիտակասրող սյուներին ի վար կվազե, պատերեն կախված պատկերներուն մութ գույները կլուսավորե, կողմնակի պատուհաններեն տաճարին կիսաստվերին մեջ շեղակի երկնցող լույսի լայն ճերմակ թափանցիկ ժապավենին վրայեն կսահի, գարնանային

բաց գույն արդուզարդներուն երիտասարդության, ծաղկազարդ գլխարկներուն թարմության մեջ կլողա, կրոնքի երգերը երգող շարականներուն հոսուն ու ծավալուն ներդաշնակության մեջ կճառագայթե. զվարթություն, որ երկնքեն կիջնե և որ երկրեն կարտաշնչվի, կրոնքին զվարթությունը և զվարթությունը եղանակին։

Նոր ամուսնացած մանկամարդ կին մը սրամիտ ու բանաստեղծական գաղափարն ունեցած է սպիտակութեանց այս օրվան մեջ մեռնելու։ Կեսօրվան ժամերգության միջոցին, իր դագաղը կշտկեն եկեղեցիին մեջտեղը, արարողություն մը արարողության մեջ։ Ահագին իրարանցում մըն է կսկսի. լուսարարը, ժամկոչը, քահանաներ, տիրացուներ կերթան կուգան՝ բան մը բերելով կամ տանելով, խոսելով, վիճելով, ճարտարապետությունն ընելով մահու այդ սև շենքին։ Նախ՝ տախտակե քառակուսի հենարանը կբերեն, աղտոտ, չոր ու մերկ, իր երկու զույգ բռնատեղիները խխունջի եղջյուրներու պես ցցած, հետո՝ սև թավիշե ծածկույթը արծաթ եզերույքներով, որուն վրա ճերմակ փողփողուն խաչը կփռվի հանդարտիկ՝ պզտիկ պզտիկ աստղերու ցանցնուքով մը պաշարված, ապա՝ դագաղը, մանրիկ կոկիկ զարդարուն տուփ մը՝ արծաթ դրվագներով, իր հավիտենական նույն տրապիզի խորհրդանշական ձևին մեջ վայելչորեն գարշելի։ Չորս զույգ կերոններ, բարձր, նուրբ ու սպիտակափայլ, միակ սև ժապավենով մը փողկապված, դագաղին շուրջը կշարվին, իրենց բոցեղեն լեզուներն օդին մեջ ճոճելով։ Ամենեն ետքը՝ պսակները կբերվին, լայն, ճոխ, գունագեղ ժապավեններով պճնված, իրենց կանացի թարմության մեջ հեգնականորեն կենսահորդ։ Լուսարարը, ագռավի դեմք մը աղվեսի նայվածքով, ճաղատ փայլուն ճակտի մը տակ՝ խոշոր ակնոցին ետև փճլտացող զոշաքաղ սուր աչքերուն մեջտեղեն ցցված կեռ քիթով,— ամեն բան տեղավորվելե հետո՝ մահաշուք շենքին շուրջը կպտրտքի, վերջին ձեռք մը կդնե անոր վրա, քիչ մը հեռուն կկենա լավ տեսնելու համար ամբողջությունը, և, ինչպես նկար մը դիտող գեղարվեստասեր մը, ճաշող մարդու մը չափ անտարբեր, աչքին մեկը գոցելով կնայի, համաչափությունը կզննե, թերությունները կուղղե ու կքաշվի։

Այս բոլոր արարողությունը կզվարճացնե պզտիկները, որոնք խումբ-խումբ հավաքված կդիտեն, իրենց Զատկի նոր լաթերուն մեջ խրոխտորեն զվարթ։ Մանկական հետաքրքրությամբ մը, որ աղջնակներուն մեջ կկրկնապատկվի կանացի պճնասիրության զգացմամբ մը ի տես դագաղին ժապավեններուն, զարդերուն, ծաղիկներուն, կնային այդ բոլոր առարկաներուն՝ սիրունորեն խնդալով իրարանցումին համար, հիացման բերանաբացությամբ մը արծաթներուն փայլին և պսակներուն

երփնագեղության վրա, իրարու ցույց տալով լուսարարին քիթը, թավիշե ծածկույթին աստղերը, կամ տերտերի մը մորուքը, իրարու ականջն ի վար բաներ փսփսալով, բաներ, որ իրենց տղեկի մանրադիտական ուրախությունն են, ու ցատքրտելով այնքան անմեղ որքան անպատշաճ ուրախությամբ մը, զվարճանալով այդ բոլոր տխուր բաներեն՝ որոնց մռայլ իմաստը դեռ անկարող են ըմբռնելու, ու միշտ խնդալով բարձրաձայն, առանց մտիկ ընելու հանդիմանությանցն ու սպառնագին ձևերուն զայրացած ժամկոչին, որուն ետևեն չարաճճի մը հինգ մատը բթին դրած կերերցնե։

Ու փտությունը որ կսկսի, դագաղին մթության մեջ միս-մինակ կձանձրանա։

ՃԵՐՄԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Կիյնան, կիյնան օդածածան ու թեթև, բյուրավոր պզտիկ ճերմակ ծիվերը, թափթփուք վերն ամպերուն ետև գզվող անվերջ բամբակի դեզի մը։ Այնչափ թեթև են ու այնչափ թույլ, որ կըմբռնես թե միայն օդին մեջ կրնան կյանք ունենալ, անջատ կյանք մը, անջատ ձևով մը, և թե բոպե մը հետո ատոնք վարը համատարած ճերմակության մեջ պիտի հալին կորսվին։ Եվ այդ մանրիկ սիրուն չնչին առարկաներուն կուտակումն է որ կկերպարանափոխե բնությունը և կգծե մեծ տարօրինակ սպիտակ նկարը որ կավրվի այնպես դյուրավ ինչպես կշինվի։

* * *

Ամեն բան կպլշկի, կլղրճվի ճերմակով։ Պատերուն վրա՝ կաթի մեջ թաթխված ցեխի կտորներ են որ կփակչին, սպիտակ արատներ ձևացնելով. պատուհաններն անթափանց դարձած են խոլանկար ճերմակությամբ մը, որ բյուրեղացած փրփուրն է կարծես պաղած կաթի ալիքներու։ Գետինը թանձր կակուղ ճերմակ նյութով մը սալահատակված է։ Տանիքներուն ու պատերուն ուղիղ գիծերը սպիտակ սերի լայն հորիզոնական շերտ մը կկրեն, ամբիծ ու կակուղ։ Ծառերը մածունի մեջ թաթխված ըլալ կթվին, իրենց ոստերուն վրա կրելով կունտ կունտ կտորներ պաղած յուղոտ սպիտակ հեղուկի մը։ Ընդարձակ տարածությունները միապաղաղ սփռոց մը ունին ճերմակ թավիշե, որուն վրա

երբ աբեն իյնա, միլիոնավոր վառ կետեր կկայծկլտան, այդ սպիտակության վրա ցանված ադամանդի փոշիի պես, որ լույսին տակ կցոլցլա։ Ու ճամփաներուն միօրինակ ճերմակության վրա, երբ արևը ելլե, կառքի անիվներու փորած գիծերը փայլ կառնեն։

* * *

Անկյունները կմեղմանան, ցցվածքները կկլորնան, կոշտ գիծերու երկրաչափական կանոնավորությունը շնորհալի կորությանց մեջ կհալի, ամեն խորտուբորտություն, ամեն անհարթություն կանհետի ձյունին հաամեն խորտուբորտություն, ամեն անհարթություն կանհետի ձյունին հաամեն վասարեցնող ողորկության տակ։ Ու դաշտերուն մեջ, ձյունին անկանոն ուռեցքները, այդ ճերմակությամբ կաղապարվելով, կաթնագույն մսի կլորություններ, կանացի մարմնի շուշանաթույր կորություններ կհիշեցնեն։

* * *

Ծովը, ցամաքի վրա բարձրեն դիտվելով, անորոշ բան մը դարձած է, գորշ մառախուղի մը մեջ թաղված, երազե վարագույրի մը ցանցառ պատռվածքներեն ցույց տալով առարկայի ձևեր հիշեցնող թանձր, մութ արատ մը հոն, մռայլ կույտ մը հոս, սև գիծ մը անդին։ Ու միտքս կուգան ընդարձակ սրահները, ուր ամբողջ գիշեր մը, դռները փակ, վառարանը մխա ու սիկարեթները վառին, օդը լեցնելով հոծ գորշությամբ մը որ կծածանի։

Հեռուն, տունի, պարտեզի, փողոցի խառնամառնումները, որ գյուղերը կկազմեն, կերևան անորոշ տարածություններու պես, ուր սև ու ճերմակ փոշի մը կտեսնես, որպես թե աներևույթ ձեռք մը աղ ու պղպեղ ցանած ըլլար վիթխարի քանակությամբ։

* * *

Մի՛շտ, մի՛շտ, հուսահատեցուցիչ անսպառությամբ մը և անկումի միօրինակությամբ մը, որ գլխու պտույտ կուտա, կթափին, կթափին անհամար սպիտակ առարկաները, տարօրինակ ճերմակ ճանճիկներու պես, որ չես գիտեր ուրկից կուգան, իրենց անձայն թույլ թռիչը գահավիժելով դեպի հողը, ուր պիտի մեռնին ընդհանուր ճերմակ մահվան մը մեջ։

Եվ այս բոլոր պատրանքի սպիտակության ու գերեզմանի լռության

մեջ, երկնքին տակ որ անշարժ է և գորշ, տուներուն մեջեն որոնք իրենց սպիտակ շալին տակ կքնանա, փողոցներուն մեջ ուր ձայները կդադրին՝ ձյունին կակղության վրա, ես ամենեն խոլական ու ամենեն երանավետ երազը կունենամ հանկարծ։

Տենչալի մեծ ճամփորդություն է, կխորհիմ, որ երկիրը պիտի ընե միջոցին մեջ, մեծ անկարելի ճամփորդությունը։ Եվ մոգություն մը ահա կքնացնե զայն սպիտակ թմրության մը մեջ ու կփաթթե, կփաթթե զայն, ինչպես առարկաները, զոր կփաթթեն ու սնտուկի մը մեջ կդնեն ուղևորության ատեն, կփաթթե զայն ճերմակ բամպակի անհատնում դեզերու մեջ, որպեսզի չվնասվի որևէ հպումե, երբ հրաշալի զորությամբ մը հանկարծ ելլե իր սովորական տեղեն ուր ա՛լ կձանձրանա, երթալու համար, պարապության մեջեն, ուրիշ տեղ մը, հեռու տեղ մը, տեղ մը, ուր նոր երկինք մը կպարզվի ու նոր արևներ կթավալին։

ՍՏՐԻՏԵԱ ՓԱՆԱՅԻՐԻՆ

Զքավոր մարդոց զվարճությունը տեսա՞ծ եք։ Ամենեն բուռն, ամենեն տենդագին, ամենեն տխուր բաներեն մեկն է։ Մինչդեռ հարուստին համար տոն մը զանազանություն մըն է լոկ իր օրերուն մեջ, աղքատին համար տոն մը ամենեն մեծ բանն է, ցանկալի, անզուգական, անբաղդատելի բանը, որուն կսպասե և որ զոր կերազե օրերով և որուն հույսովը առաջ և հիշատակովը հետո՝ ուժ կառնե իր շաբաշաբ աշխատությանց մեջ։ Հարուստն իր ձեռնոցված մատներուն ծայրովը միայն կդիպչի, անտարբեր ու ձանձրացած ձևով մը, բերկրանքի բաժակին, որուն պարունակված ըմպելիքը՝ շրթունքին չմոտեցուցած՝ գիտե արդեն։ Աղքատը օրերով ծարավ մնացողի հիվանդ եռանդով մը իր պապակած շրթունքն ամբողջ կփակցնե բաժակին, իր ակռաներուն տակ զայն փըշրելու աստիճան սեղմելով, իր ամբողջ էությամբ ծծելով ինչ որ հեշտանք կա այդ ըմպելիքին մեջ, հալեցնելով այդ գինին վառ ծիրանիին մեջ իր կյանքին սովորական սևը։ Կուտակված վիշտի, դառնության, շարշարանքի մթերքներ են որ ուրախության ծերպ մը, խնծիղի ծակ մը գտնելով, ահագին պայթումով մը կժայթքին դուրս, իրենց ծպտված ցավի վայրենի սաստկության մեջ ավելի տանջանքի գալարման մը նմանելով, քան խնդության վայելման մը։ Անոր համար է որ աղքատ մարդոց հանդեսները, հանրային զվարճության օրերը, ժողովրդական

տոները ջղուտ ծայրահեղ ոգևորություն մը ունին, որուն մեջ զսպված լացի մը կարծես թախիծը կա։ Եվ անոր համար է որ մասնավոր սիրով մը կսիրեմ բոլոր փանայիրները, ինչպես բոլոր տխուր բաները։

***

Բարեկենդանի երկուշաբթի օրն է որ կկատարվի Սարիտնա փանայիրին, փանայիրներուն ամենեն իսկատիպներեն և ամենեն համբավորներեն մեկը, որ Թաթավլա կժողովե խոնարհ դասակարգերու բոլոր մեկ օրվան կենցաղասերները։ Փանկալթիի մեկ կողմնակի փողոցեն վար իջնելով երբ կհասնիս զառիթափին ստորոտը, Տոլապ-Տերեի ձորը, ուր պղտոր ջուր մը կվազե, խժլդուք մը կուգա հեռուն, մերձավորությունն զգացնելով անտես ամբոխի մը, որուն հնքն է կարծես։

Այդ առավոտին ճամփուն հետևելով, կանցնիս փայտե տուներու երկու շարքի մեջտեղեն, և ահա հանկարծ, անկյուն մը դառնալով, ինքզինքդ կգտնես խաժամուժի մը մեջ, որ կշարժի ու կճչա։ Տոնավայրն ես։

Թաթավլայի ցից ու անվերջ զառիվայրը ծածկված է գույնզգույն ալիքով մը որ կխլրտա, կծփծփա անընդհատ, սև ալիք մը ֆեսերու կարմիր կետերով ծպտումներու երփներանգ արատներով կխայտախարվի։ Զառիվերին երկու եզերքը գտնված տուներու պատուհանները դիտող կիներու դեմքերով լեցված են. տեղ տեղ չորս-հինգ գլուխ՝ նույն շրջանակին մեջ, քովե քով փակած, մեջե մեջ մտած, գերմարդկային ճիգեր ընելով սղմելու համար այդ անձուկ քառակուսիին մեջ։ Դռներն ամբողջ բաց են, ու սեմին վրա, ինչպես և բակին մեջ, նստած են տան էրիկմարդիկը, որոնք տեղ-տեղ կշատանան փողոցին մեջ անցածը դիտելով, տեղ-տեղ ալ բոլորակ կկազմեն ափսեի մը շուրջ, ուր կպանծա օղիի շիշը մեզեներու երամին մեջտեղը։ Փողոցին մեջ ալ, ահագին մեծամասնությունը դիտողները կկազմեն, դատարկապորտներ, որոնք ձեռքերնին գրպաններն կպտտին չորս կողմ նայելով, հետաքրքիրներ, որոնք տեղական բարքերու այդ պատկերը տեսնելու եկած են, ամբողջ ընտանիքներ, որ հեռու տեղերե փութացած են գալ այդ համբավված տոնը տեսնելու։

Եվ կդիտեմ թե ի՞նչ ողորմելի կերպով քիչ բան ու հիմար բան է որ այդքան հետաքրքրության առարկա կդառնա, այդ բոլոր դիտողները կհավաքե։ Հարյուր հոգիի չափ կտեսնեմ տան մը առջև խմբված և որոնք իրարու վրա կելլեն, իրար կճզմեն՝ տեսնելու համար ալպանիական պար մը, զոր կպարեն հինգ վեց հոգի, կոշտ ու անշնորհ շարժումներով, առանց նվագարանի, խռպոտ խանչյուններով, որ երգի տեղ կբռնեն։ Անդին, հիսուն հոգիե ավելի կվազեն, իրար հրմշտելով, դիմակավոր աղջիկներու խմբակի մը ետևեն, հալածելով պաշարելով զայն իրենց նայվածքներովն ու լկտի խոսքերով։ Ճիշդ այնպես հոս ալ ինչպես բովանդակ կյանքին մեջ, աննշան ու անիմաստ քանի մը բաներ, որ վայելք կկոչվին, շատ պզտիկ թիվ մը մարդերու որ ատոնցմով կզվարճանան, և անոնց շուրջ՝ ահագին մեծամասնությունը՝ որ բերանբաց կդիտեն անոնց վայելքը գոհանալով այն քանի մը շիթերով, որ այդ երջանկութենեն իրենց վրա կցատքեն։

***

Դիմակը եսին մոռացումն է, մին այն խարեություններեն, որով մարդը կծածկե կյանքն իր աչքեն։ Եվ Բարեկենդանը տարվան այն օրն է, որ մյուս բոլոր օրերուն տրտմությունը կծածկե իր պատրանքի քողին տակ, այն օրն, ուր աղքատը քանի մը ոսկեզօծ քուրջերով տոհմիկի կերպարանք կառնե և քանի մը գավաթ օղիով թախծալից կյանքը զվարթության շողերով կվառե։ Հոս աղքատությունը այնքան մեծ է, որ մեկ օրվան համար իսկ դասակարգ փոխելու համար պետք եղած ծպտումը չեն կրնար վճարել և կրավականանան վիճակ փոխելով, կամ ամենեն տարօրինակ, ամենեն անճոռնի կերպարանքն առնելով։ Մրցումը ասոր մեջ է. ո՞վ պիտի հաջողի ամենեն խեղկատակ ծպտումը ստեղծել։ Մեկը, լայն ցնցոտիներու մեջ փաթթված, շալակը ուրիշ մըն է առեր, որուն ճշմարիտ ոտքերը կկորսվին լաթերու մեջ և որ կեղծ հաշմ ոտքեր կկախե զինք կրողին կուրծքն ի վար։ Ուրիշ մը վառարանի խողովակի ձևով երկայն սև գլխարկ մը ունի գլուխը, ու խայտառակ դիմակ մը կկրե, ուր քիթը, երկայն ու կարմիր, պաճ պիպերի մը ձևով, կցցվի։ Մեկն ալ սատանա է ձեացեր, բայց գոեհիկ ու քիչ մըն ալ արտառոց տիպար մը ստանայի, նեղ սև լաթերու պատյանի մը մեջ վտիտ մարմինը կապարած, ետևեն՝ կաս-կարմիր բարակ պոչ մը, երեսը սև լաթով մը ծածկած, ուր երկու կարմրածիր ծակերե աչքերը կերևնան և ուր կլոր բացվածքե մը քիթը դուրս կթափվի. գլխուն վրա ստեպղինի նման երկու եղջյուր կկրե, ձեռքն ալ՝ պալոն մը, զոր դիմացը ելլողին գլխուն կփակցնե։ Կան ալ որ ծպտելու համար ամենեն նախնական, ամենեն տղայական միջոցներով գոհացած են, Մեկը հին մուշտակ մը հագած է՝ հակառակ կողմը դարձած, գլուխն ալ յազմա մը կապած է, երեսը լեղակ քսած ու քթին տակ շինծու պեխեր զետեղած։ Կան որ կնոջ հագուստներ հագած են, գլուխնին ծաղկապաճույճ գլխարկ մը, վրանին երկայն շրջազգեստ մը, ոտքերնին կանացի կոշիկ, ձեռքերնին հողմահար մը, զոր իգական կոտրտուքներով կշարժեն, շատ պզտիկ դիմակին քովեն ածիլված երեսը և շատ կարճ թևոցին մեջեն մազոտ դաստակը

ցույց տալով։ Կիները միայն ունին պերճանք հիշեցնող օպտումներ, վարդագույն կամ կապույտ բեհեզե շրջազգեստներ, թևերը շղարշի մեջ, գույնզգույն ժապավեններով, որոնք ցեխին մեջ կաղտոտին, գլուխնին դրած են ոսկենիշ թավիշե գտակ մը, որմե կթափին աղտոտ խարտյաշ մազերու առատ խուրձեր, ու վարնոց մետաքսե դիմակին քովերեն ցույց կուտան բենց՝ ներկված ու փոշոտված երեսներուն եղերքը։ Իրենցմե ոմանք ձիու վրա հեծած են. սեգ ու տիրական հպարտությամբ մը կոբացնելով իրենց հասակը, հաղթական նազանքներով կանցնին ամբոխին մեջեն, որ զիրենք կլափե նայվածքով. իրենց ցուցամատն ու բթամատն իրարու կքսեն՝ գռեհիկ երգ մը մոլտալով կամ իրենց հետևող նվագարանի մը ընկերանալով։ Ուրիշներ հետիոտն կերթան, պարի ոստումներով, մարմնի գրգռիչ ծեքծեքումներով. իրենց ետևեն քաշելով դիտողներու բազմություն մը, որ հրմշակումներով, հայհոյներով կհետևի անոնց։

* * *

Վերը, զառիթափը կավարտի ընդարձակ սարահարթի մը հանգելով. հոն է որ ամենեն ավելի հոծ է ամբոխը և հանդեսին շարժումը ամենեն ավելի բուռն։ Բոլոր ձայները կան հոն, և ամենեն անճոռնիները, իրարու խառնված, կազմելով ժխոր մը որ ա՛լ անուն չունի, լաթեռնային ճռվողումը, թմբուկներուն թավ դափրտուքը, զոր կփորե զուռնային սուր ճիչը, բան ծախողներու եղանակավոր գոչյունները, պարողներու երգերը, զվարճացողներու աղաղակները, և դեռ անորակելի շատ մը ձայներ որ կմիանան խլացուցիչ խժլդուք մը կազմելով։ Իրարանցումը աներևակայելի է. չարտաֆներու տակ, ընտանիքներ նստած են սեղաններու շուրջ, ինչպես և խմողներու խմբակներ, նվագարաններով. պզտիկ վրաններու մեջ տարօրինակ բաներ ի տես դրված են, խուժանին հետաքրքրությունը քաշող։ Կառքեր կեցած են, ճոխ կառքեր, որոնք շքեղությունը կզարմանա այդ խայտառակությանց ու աղտեղությանց մեջտեղը գտնվելուն, կառքեր, որոնց մեջ բարեկեցիկ ընտանիքներ կդիտեն ժողովրդին զվարճությունը։ Երբեմն սև տոմինոներ, վայելուչ ծպտումներով դիմակավորներ, նախորդ գիշերվան պարահանդեսեն անշուշտ մնացած, կանցնին, առանց խառնվելու այդ բազմության մեջեն։ Տուներու շարքի մը առջև, գնչու կիներու խումբ մը կեցած է, Ֆուլեայի գույն լայն շալվարով, գլուխնին լայն յազմայով մը՝ որուն վրա ինքն իսկ Ֆուլեան՝ գարունն ավետող՝ կցցվի արդեն։ Ու երգի պատառներ արձակելով, պարի պզտիկ կտորներ սկսելով, կսպասեն որ հրավիրող

մը գանեն պարելու կամ երգելու։ Անդին, խումբ մը Լազեր, կլայեկին մուրերով երեսնին սնցուցած, իրենց աղտոտ ձորձերուն մեջ փաթթված, երկայն ու վտիտ ամենքն ալ, ջութակաձև գործիքի մը ճղացող քեռթուկին հետևելով տձև պար մը կպարեն, անկանոն ոստոստումներով, և ոռնալով կարմրացնող լպրշությամբ խաղեր։ Դիտողներու ստվար շրջանակի մը մեջ, քիչ մը հեռուն, խրվաթներ, մացառոտ կեղծ մորուքով ու պեխով իրենց դեմքը խռվացուցած, իրենց տոհմային մեկ բոլորաբարը կդառնան, կատաղի պար մը, ուր իրենց պայքարի ոգին կտեսնվի մինչև իսկ զվարճության մեջ, պար մը, որուն շարժումներն ավելի վայրագ քան զվարթ բան մը ունին, մոլեգին գոչյուններով, թևի ու սրունքի վայրենի մղումներով, դեմքերնուն վրա շարագուշակ լրջություն մը, և ամենքը հետևելով ոստումներուն պարագլուխի մը, որ վաղակ մը կշարժե սպառնագին։

* * *

Վարը, զառիթափին ստորոտը, ձորին ամբողջ երկայնությամբը, ուրիշ տեսարաններ են, որ կշարվին։ Վազող պզտիկ առվակին երկու կողմերը, որ տեղ-տեղ փայտե խախուտ կամուրջներով կմիանան, բազմաթիվ խանութներ կտեսնվին՝ քով քով զետեղված, ամենամեծ մասամբ՝ գինետուն ու սրճարան։ Փողոցը կերկարի, օձապտույտ ընթացքով մը, միշտ եզերվելով այդ խանութներեն, որոնց ետև, հոս ու հոն բացվող նեղ փողոցակներեն կերևան հին, փլփլկած տունները, իրենց տանիքներն իրարու կցելով մսկոտ ու զառամ կծկումով մը։ Հոդ, այդ հին տուներուն ու սրճարաններուն մեջ է որ զվարճացողները, պտտելե, պարելե, հոգնելե հետո կուգան հանգիստ առնել ու խմել։ Սոսկալի որջեր են, մութ ու աղտոտ, զազիր։ Մրոտած ցած ձեղունով, սևցած պատերով ավելի կամ պակաս նեղ սենյակներեն, ուր տարտամ կիսաստվերի մը մեջ, խորը, տակառներ կպառկին, ու շիշեր կշարվին, իբր ամենզարդ ունենալով սևցած կանթեղ մը ձեղունեն կախված, քանի մը միամիտ նախնական պատկերներ՝ պատեն, վառարան մը մեջտեղը, ու սեղաններ, որոնց շուրջ գինեմոլները կբազմին։ Բոլո՛րը աղքատ մարդիկ, ջրհանկիրներ, ձկնորսներ, նավավարներ, բեռնակիրներ, թինթինցած ծերունիներ, որ իր ձեռքեն փախչող հաճույքներուն դեռ տենդագին փարումով մը կփակչի, մինչև նորաբույս պատանին որ վաղահաս խանդով մը կգրկե շվայտության հրապուրիչ մարմինը, ամենքը, այդ հոտած ու կեղտոտ խցիկներուն մեջ դիզված, առջևնին օղիին շիշը որ ցավերը կքնացնե, քովերնին վարդագույն զգեստներով դիմակավորուհի մը, որուն

հոտավետ ներկայությունը ծիրանի կթափե իրենց կյանքին վրա, կխմեն ու կերգեն, հեշտանքի անգուսպ գերասատկության մը մեջ ամեն բան մոռնալով։ Ասոնք ամենքն ալ ընտանիքի հայրեր կամ ընտանիքի զավակներ են, հոդերով, մտմտուքներով ծանրաբեռնված, օրապահիկին լլկող մտածմամբը գալարված։ Ու կբավե որ գիտեք ի՛նչ ծայրահեղ պոռչտուքով կխոնչեն իրենց երգերը, ի՛նչ մոլորուն նայվածքով կպապուրեն իրենց ընկերուհին, ու ինչ հեշտագին սեղմումով մը իրենց բերբուրեն իրենց ընկերուհին, որպեսզի համոզվիք ի՛նչ տառապանքներ կխեղդվին կպարտկվին այդ զվարթության մեջ որ ինք ալ դիմակներ կխեղդվին կպարտկվին այդ զվարթության մեջ, ամենեն գձուձ բնազդներուն այդ անառակ զարթման մեջ, տակավ այս խեղճ մարդերը պիտի թաղվին մինչև վիզերնին անբարոյականության ամենաթանձր ճահիճի մը խորը, անասունի անգիտակից վայելման մը մեջ սպանելով մարդուն մտածելու և տառապելու արժանապատվությունը։ Գինետունի մը անկյունը, տասնամյա աղջիկ մը կտեսնեմ, գինով, խումբ մը սրիկաներե շրջապատված, որ անոր անամոթ շարժումներն ու լկտի խոսքերը լսելով կզվարճանան։ Ա՛լ վերջին կետն է ատիկա։ Ու սոսկմամբ կփախչիմ, գրեթե առանց ետիս նայելու, որպես թե այդ բոլոր գինովներն ու դիմակավորներն ու խանութներն ու այդ բոլոր հանդեսի խրախճանքներն ուրվականներու պես զիս հալածեին, կփախչիմ, մինչև հոգիս խորը կյանքի զզվանքն ու սարսուռը կրելով։ և անսահման տրտմության մը մեջ, որ հանկարծ կպաշարե զիս, կխորհիմ այն զարհուրելի խնամության, այն անհերքելի եղբայրության, որով կգրկընդխառնին վիշտն ու խինդը, երջանկությունն ու հիմարությունը, տառապանքն ու մոլությունը։ Եվ այն մեծ խուլ ժխորը, որ հիմա ետևես կուգա կհասնի ականջիս, ինծի հոնտյունը կթվի զոր ցավերու մեջ գալարվող մարդկությունը հիմարության գիրկը կարձակե ողբագին։

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Թոփհանեի ու Քապաթաշի միջև գտնված ճամփուն վրա, պատի մը տակ, պզտիկ աղջիկ մը կծկտեր է, պզտիկ աղջիկ մը, որ կմուրա։

Հակառակ գրեթե պայծառ երկնքին, սոսկալի ցուրտ մը կա, մորթը կապուտցնելու աստիճան։ Իրիկուն է։ Թրամվայները լեփ-լեցուն կանցնին, փողոցին հանդարտ լռության մեջեն, ձիու դոփյունի և անիվի գլորման ժխորով մը։ Շուկայի մարդիկ, մեկ ձեռքերնին տոպրակ մը կամ ծրար մը, մյուս գրպաննուն խորը թաղված, օձիքնին վեր դարձուցած, մսկոտ շարժումներով կերթան։

Պզտիկ մուրացկանը, գլուխը չուլ մը առած, ու վրան՝ անորակելի զգեստ մը, որուն մեջ փաթթվեր է, ձեռքերը գոդը խոթած, բոբիկ ոտքերը տակը քաշած, կծիկ մը դարձած է, ինքիրմով ջանալով տաքցնել իր խեղճ տխեղծ մարմնիկը, որ քարերուն վրա կփայտնա։ Անշարժ, գլուխը կուրծքին վրա հակած, առանց նայելու անցորդներուն, երբեմն-երբեմն քանի մը բառ կմռլտա հեծյունով մը, միակ կյանքի նշանը՝ քուրջի ու միսի այդ մանրիկ կույտին մեջ։

Վայրկյան մը գլուխը վեր կառնե, ու դեմքը կտեսնեմ, տգեղ, նիհար, ողորմելի դեմք մը, ներս գացած այտերով, աչքերը մութ ու մարած, մորթը չոր ու ագտի շպարով մը ծեփված։

Եվ երբ հովը իժի սուլումներով կուգա կանցնի, իր սառնային շունչովն անոր մարմինը պարուրելով, կտեսնեմ, որ ամբողջ անդամներովը կսարսռա։

Անցորդները իր առջևեն կերթան, առանց իրեն նայելու, գրեթե առանց զինքը տեսնելու, հազիվ քիչ մը ասդիեն քալելով, որպեսզի վրան չկոխեն։ Եվ աղջիկը կճվա, կճվա միշտ։

Բայց ահա նույն ճամփեն, տնտնացող քալվածքով մը, խորված սիսեռ ծախող մարդ մը կուգա, գլուխը երերցնելով պզտիկ տարտամ երգի կտորի մը համեմատ, զոր կմրթմրթա քիթին տակեն։ Խեղճուկ գավառացի մըն է, շալվարով, ֆեսին վրա յազման կապած, ոտքերը տրեխներ ու թևին տակ իր մաղը, ուր հատիկներ կան։ Օրվան աշխատությունն ավարտած, տուն կդառնա ապահովապես, և ուրախ կերթա, որովհետև մաղը գրեթե պարպված է։

Հանկարծ իր ոտքերուն տակ կնշմարե փոքրիկ մուրացկանը և կանգ կառնե, որպես թե բան մը զինք կեցներ հոն գամված։ Ու կտեսնեմ, որ բոպեապես երգը կլռե իր բերանին մեջ և ուրախությունը կմարի իր միամիտ արևակեզ դեմքին վրա, որ լուրջ արտահայտություն մը կառնե այդ լքված արարածը տեսնելով։

Եվ բարի մարդուկը ոտքը կապված կզգա թշվառության այդ պատկերին առջև։

Չէ, ինքը պիտի չանցնի առանց բան մը ըրած ըլլալու։ Եվ իսկույն մաղը մոտեցնելով աղջկանը, անոր ափին մեջ կլեցնե բոլոր խորված սիսեռները, որ մնացած են։

Մայթին վրա, խանութի մը առջև, շուն մը կծկված է՝ իր քանի մը լակոտներովը շրջապատված։ Անոնցմե մեկը թրամվայի փիծերուն վրա կպտտկի, ցռուկը՝ գետինը հոտվտալով։

Սույլ մը կերկննա, ու թրամվայը կմոտենա։ Լակոտը փիծերուն վրա է դեռ, ցռուկը՝ վար։ Թրամվայը կանցնի։ Ցավագին ոռնոց մը կլսվի անիվներուն տակ։ Լակոտը քուրջի պես տափակցած՝ մնացած է հոն։

Մայրը կդիտեմ անձկությամբ։ Կցատկե տեղեն, կնետվի իր զավկին վրա։ Լակոտը չէ արյունած, բայց դիակնացած է արդեն, որովհետև ողնաշարը կոտրած է։ Վրայեն՝ ողջ կթվի դեռ, բայց չերերար։ Ու մայրը, խղճուկ կաղկանձումներով, բերանը կառնե անոր մարմինը, որ երկու կողմեն կկախվի, և կբերե մայթին վրա։

Նախ, երկայն նայվածքով մը, անոր քովիկը կսպասե։ Լակոտը չերերար։ Այն տտեն ցռուկը կմոտեցնե, կհոտվտա զայն, կլիզե, գլուխն անոր կքսե, թաթերովը զայն կշարժե։ Լակոտը չերերար։

Ա՜խ, տեսնելու է իր հուսահատությունն այն առեն։ Պոչին վրա կնստի ու տխուր նայվածք մը կպտտցնե դիտողներուն վրա, որոնք շարվեր են դիակին շուրջը. օգնություն ուզելու ձև մը ունի, կարծես ճար մը կհայցե իրմե գերադաս էակեն, մարդեն, իր զավկին բուժման համար, ճարը, զոր իր անասունի միտքը չի զորեր գտնել։

Հետո, նորեն կսկսի լզվռտուքը, իր հիմար ճիգը զավտեն արթնցնելու, որովհետև չի կրնար հավատալ, չի կրնար հասկնալ, որ մեռած կըլլա իր զավակը։

Եվ ի՜նչքան սրտաշարժ է իր ցավը։ Զուտ մայրության ցավն է, անասնական խորունկ զգացում մը, որ միսին մեջ ունի իր արմատները։ Անձին մեկ կտորին կորուստն է, որ տրտմություն կբերե, տրտմություն մը ավելի թանձր՝ անասունին մեջ, որ չի հասկնար առիկա, չի կրնար ատոր համոզվիլ. և ոչինչ ունի մխիթարվելու համար։

Ու կդիտեմ խեղճ մայրը, որ ամբողջ մարմինովը կպաշարե իր զավկին դիակը, զայն կանհետացնե իր փորին տակ, ուզելով իր տաքությունը անոր հաղորդել, լուռ հիմա, ա՛լ անշարժ, ու մեր վրա հառած իր խոշոր բարի աչքերը, որոնց մեջ վիշտը մարդկային բան մը ստացած ըլլալ կթվի և որոնք կուլան։

Քնալբի առջև, ծովուն վրա, ափունքեն քիչ հեռու, տձև խոշոր առարկայի մը ծփծփալը կնշմարվի։ Քուրջի դե՞զ թե նետված կողով դեռ չորոշվիր։ Կակուղ բան մը, որ ջուրին շարժումներուն համեմատ կծածանի, եզերքին մոտենալով։

Քանի մը հետաքրքիրներ ափունքին վրա կեցած, կդիտեն, հարցումներ ուղղելով իրարու։

Եվ հանկարծ ծովի բազնիքներուն մեջեն ճիչ մը կլսվի։

— Դիա՜կ մը, մարդկային դիա՜կ մըն է։

* * *

Այո՛, մարդկային դիակ մըն է։ Ջուրերը, դեպի ցամաք իրենց տանմամբ, զայն կքշեն մինչև ափունքը։ Դիտողները կավելնան, կխըմբվին, կկուտակվին։

Երկու սրունքները, մոմազօծ կտավե հաստ տաբատի մը մեջ խոզովակված, կերկննան, կակուղ ու թույլ մարմինի համար ծածանքներով։ Փորի վրա պառկած է դիակը, և ջուրին երեսը, կոնակը կցցվի, մերկ, աղտոտած մարմարի կապտորակ ճերմակությամբ։ Գլուխ ու թև չերևար։

— Ձկնորս ըլլալու է,— կըսե մեկը՝ մոմազօծ կտավեն դատելով։

* * *

Պզտիկ ձյունոտ փրփուրներ ժայթքելով իրենց կապույտ պատուվածքներեն, ալիքներն իրենց օրորող ծոցին վրա զայն մեղմորեն տարուբերելով՝ կմղեն դեպի ափունքը, մինչև մեր ոտքը։

Ու հիմա հստակորեն կտեսնենք զայն։ Ծոսկալի բան է։ Բավական սաստիկ զարշահոտությունը, որ կարձակվի դիակեն, գուշակել կուտա, թե քանի մը շաբաթվան ըլլալու է։ Ծվիկ-ծվիկ կախված գուլպաներուն մեջեն ոտքերը կերևան, ճերմակ ու քարացած։ Տարատը, ամուր՝ հաստակառակ բազմաթիվ կարկտաններու, անեղծ է դեռ։ Մեջքը պատող լայն սև գոտիեն անմիջապես վեր կսկսի ճերմակ միսի զանգվածը, որ կոնակն է ամբողջ, մինչև ուսերն ու վիզը, թուլամորթի մը միսը՝ ավելի, գորշ ճերմակ, ուռած, ողնաշարը որոշ գծվելով, մորթին ծալքերը քարացած։ Ուսերուն ծայրեն, թևերը, բզիկ-բզիկ եղած, լխպիկ լաթի կտորներու պես կկախվին, ջուրին լիզումին մեջ քայքայվելով հետզհետե։ Եվ այդ անձև անճանաչ միսի կույտին կապված, երկայն կապով մը որ

աղիքի կնմանի և որ վիզն է, գլուխը, միսերն ամբողջ հալած, իր ոսկրուտ տուփի լերկ դեղնությամբ այլանդակ խեցիի մը երևույթն առնելով, կերերա ջուրին վճիտ թափանցկության մեջ։

Ափունքին վրա շարված մարդերը կնային ապշահար, ու կիները, սարսափած, դեմքերնին ձեռքով կդոցեն։

***

Եվ սակայն աղտոտությունը, որուն շուներն իսկ պիտի չմոտենային, այս անանվանելի առարկան, այնչափ ահռելի որչափ մահը միայն կրնա շինել, այս արհավիրքը, մարդ մը եղած էր։

Այդ կապտաթույր կոնակին տակ սիրտ մը բաբախած էր, այդ լիլիուկ դանդին մեջ մտածումներ երերացած էին։

Կյանք մը, իր արցունքներովն ու ժպիտներովը, եռացած էր այդ հոտած միսի պատառին մեջ։

Այդ իրը լացած, խնդացած, սիրած, սիրված էր։

***

Մութ կյանք մը՝ ապահովապես, տառապողի, մաքառողի դժնդակ կյանք մը։

Զկնորս, անոթութենեն փախչելու համար մթին անձնատվությունը ծովին բազմածուղակ ծոցին, անվերջ պայքարը տխեղծ բազուկին՝ ահավոր ջուրի պարիսպներու դեմ, որ կփլչին ու կխորտակեն ամեն ինչ, որ գտնեն իրենց առջև։

Եվ առաջին պատկերեն մինչև վերջինը, տաժանատանջ աշխատողի այդ կյանքը կնկարվի աչքիս, անձրևեն թրջած ու հովեն սարսված մռայլ խրճիթին մեջ դողդղալով անցված մանկութենեն սկսյալ, զոր կկռեն արդեն ծովի, մրրկի, մահվան մղձավանջներ, մինչև վերջին քայքայումը խավար գիշերի մեջ, պոռացող հովերուն տակ, պայթող ալիքներուն վրա։

Զրկանքի և տվայտանքի կյանք մը, հացի պակասը՝ պակուցիչ ուրվականի մը պես միշտ առջևը ցցված, սպառող հոգնություններով լեցուն, և ամենուստ պաշարված՝ վտանգներու սև ցանցովը։

Կյանք մը՝ անդունդին վրա կախված, ամենեն մութը կյանքերուն, որովհետև մեծ մասամբ մութի մեջ անցված կյանքն է մշտական պայքար մը։ Զմեռ գիշերներով, փակ երկնքին թանձր սևության տակ, ցուրտ հովերուն կատաղության մեջ, սեփ-սև ջուրերուն վրա երկարատև թափառումները՝ փայտի զաղփաղփուն կտորի մը վրա, ի՜նչ եղերական կյանք։ Եվ ի՜նչ գիշեր, այն գիշերն, ուր առանց մնաք բարովի մեկնած ծովի մարդը, հեռու իր սիրածներեն, որոնք անդին կուլան ու կաղոթեն, ծովին վայրագ կլափներուն մեջ թավալելով, մութին անհուն մենության մեջ լուռ ու մունջ կխեղդվի։

***

Մաքուր ժպտուն երկնքին տակ, ուր բամբակ ամպիկները պզտիկ հովի մը քմահաճույքին համեմատ կդիզվին ու կտարածվին, ծովը կծփծփա, իր կապույտ ալյակներուն ոստոստումին մեջ՝ զվարթ ու գեղեցիկ։ Եվ կապույտ ալյակները, փրփուրի ճերմակ փետրափունջերով գարգմանակված, կուգան՝ գգվանքներու ամենեն անգութովն ու հեգնականովը իրենց զով թևերուն մեջ պարուրել զայն ու փայփայել, ու երկար ատեն, իր պաշտած որսը լիզող գազանի հանդարտ հեշտությամբ մը՝ մեղմորեն կլիզեն այդ լաթի ու միսի նողկալի կույտը։

Խե՜ղճ անծանոթ եղբայր, ոչ ոք պիտի լա վրադ, որովհետև մե՛կը, քու կինդ անգամ, քեզ պիտի չճանչնա այդ զազիր ծպտումին տակեն, զոր մահը քեզի հագցուցեր է։

Անոնք, զոր կսիրեիր, հեռուն, խեղճուկ հյուղակիդ մեջ, երկար ատեն պիտի սպասեն քու դարձիդ։

Բախտավո՜ր նորեն, որ ջուրերը քեզ մարդաբնակ ցամաքի մը մոտ են նետեր, ոսկորներդ, ծովեն վաստակաբեկ, հողին խաղաղիկ ու բարի ծոցին մեջ պիտի հանգչին, ու վրադ խաչ մը տնկվի թերևս, որ աղոթքի կեցնե անցորդները։

ԱՄԲՈԽԸ

Ամբոխը կսարսափեցնե զիս, կնեղե զիս, կընկճե զիս ու կխռովե զիս։

Բնության մեծ տարրերուն պես խորունկ, հզոր ու կույր է ան։

Անոր շարժումները սաստիկ են ինչպես ծովուն տատանումները, անոր կիրքերը կմրրկին և անոր ծոցը կործանումը կընակի։

Անգիտակից է ան, ու կխլրտա հովին համեմատ, որ զայն կցնցե։ Ու հովին համեմատ, անոր դեմքը, ինքնին անանձնական ու անգույն, արտահայտություն ու իմաստ կստանա։ Երբ գեղեցկության հորիզոնեն մը հասնի շունչը՝ կյանքով բեռնավոր, և անոր մկանունքներու մեջ ու

մինչև ընդերքներուն խորը թափանցե, ամբոխը նվիրական վրդովմունքը կունենա լանջքի մը, որ սիրով կելևէջե. անոր կոհակները կուռենան ինչպես որովայնը, որ պիտի ծննդաբերե, և անոր ալեծփանքը ստեղծագործության երգեր կհնչեցնե։

Սակայն թանձր է ան ու համառ. երկայն զիկզակներե, դժնդակ ճիգերե ետքը միայն՝ գաղափարը կրնա զայն ճեղքել, անոր մեջ մխվիլ ու տարածվիլ. և նույնիսկ երբ անոր տիրե և անոր հետ խառնվի, գաղափարը իր սկզբնական մաքրությունը կկորսցնե, ի փոխարեն այն բազմապատկումին ու տևականացումին, զոր կշահի Ամբոխին մեջ ծավալելով։

Ու հաճախ անարդիկ, անթափանց, աննվաճելի է ամբոխը և այն ատեն շարի զորություն մը կդառնա։ Թաքուն խորություններեն ելած գեշ հովեր, նենգավոր ու վատ սողոսկումներով, կպղտորեն ու կտրորեն զայն. անոր ալիքը վարերեն բարձրացած տիղմերովը կմթագնի, ստորին մղումներեն կցասկոտի, ու Մահվան երես մը կբլլա, լորձունքոտ բերաններով, որ գաղափարին դեմ կթքնեն ու կպոռան։

Ատով, խոկման մարդուն, զուտ գաղափարի և զուտ գեղեցկության նվիրված մարդուն համար թշնամու տարրն է Ամբոխը, որուն բիրտ ու վտանգավոր հպումը կպղծե ու կավրե զինքը, ինչպես խոցոտ շրթունքի համբույր մը,— մինչդեռ գործունեության մարդուն համար, սքանչելագործ ու թանկագին ուժն է ան, որուն միջոցովը կկատարվին մարդկային մեքենավարության բոլոր կերպարանափոխությունները։

Ինծի տրվեցավ Ամբոխը ճանչնալ իր բազմազան դիմագծությունները. ու չեմ գիտեր էակ մը ավելի առաձգական, ավելի անորակելի, ավելի հեղհեղուկ, այնքան պարզ իր իսկությամբը, որքան կնճռոտ իր արտահայտություններով, այնքան առերևույթս հակասական, որքան ներքնապես անփոփոխ ու համանման, և՝ ըլլա շարագործ կամ կենսաբեր, գոհիկ կամ հերոսական՝ միշտ հզոր, միշտ մեծ, միշտ ահազդեցիկ։

Կճանչնամ Փարիզյան Ամբոխը, տեսեր եմ զայն իր ցնծության ու զայրույթի, կատակի և խանդավառության վայրկյաններուն. ոստոստուն, հիմար, սիրուն ամբոխն է ան, որ գիտե միշտ թեթև, գրեթե թևավոր երևնալ՝ հակառակ որ ամբոխ մըն է, այսինքն թանձրությունն իսկ, և որուն բոլոր ալեկոծությունները պարի շարժումներ կառնեն, որուն հեղափոխություններն անգամ գյուցազներգական դիմակահանդեսի ձևն ունեցած են։ Բարեկենդանի օրերուն, այդ բարակ ու դյուրաթեք զանգվածը, ֆոնֆեթիներուն երփներանգ անձրևին տակ, զավեշտական թափորներուն շուրջը, խենթացող ջուրերուն պես է որ կվազեն, կցատկրոտեն ու կցոլան. բարկության կամ խանդի պահերուն, ջուրերը կմթնեն, կտենդոտին, կմռնչեն, բայց այդ մռնչյունը վիթխարի քահրահի մը կնմանի նորեն, և եթե արյուն իսկ ցատկեր այդ խենթացած կոհակներուն բախումեն, արյունը գինիի տեսք մը պիտի ունենար, որ կվառի ու կերգե։ Ու ատիկա միշտ կշարժի, միշտ կպղպջակե, միշտ գույն կփոխե, ծովու մը պես, որ կարծես միմիայն փրփուրե շինված է։

Տեսեր եմ ցավին ամբոխը, ախտավարակ, ողորմելի, մխիթարական ամբոխը մեր Արմաշի ուխտավորներուն։ Կհիշեմ հին ահռելի իրիկունը, ուր գեղջուկ եկեղեցիին խոնարհ կամարներուն տակ, կլոր, տխմար ու անշարժ աչքերով երկայն վտիտ տիրամորը պատկերին առջև, տեսա ողբակոծ երկրպագությունը ցավագարներուն, դժբախտներուն, հուսահատներուն, որոնք իրենց զազիր ու քստմնելի տառապանքին մեջ գետնատարած՝ կյանք կհայցեին։ Դիշերային եղերերգություններուն լալկան միօրինակությանը մեջեն, զոր գյուղացի աղջիկներու միամիտ ու դողդոջ ձայները կերկնցնեին տաճարին գմբեթն ի վեր, դիվահարներու բարձրաղաղակ զառանցանքը, խենթերու քրքիջը, հաշմերու պաղատանքը, հիվանդներու լացը, ու բոլոր անձկություններն ու շարշարանքները մատնված ու դավաճանված գոյություններուն՝ կպոռթկային, կկուտակվեին, կգալարվեին, խոշոր ծիծաղելի պատկերին առջև, որ իր անշարժ անկենդան աչքներովը կդիտեր անխոսուկ. ճրագներուն դողացող ու դալկահար լույսին մեջ, վերքերով ծածկված մարմիններ կսողային, ավրշտկված դեմքեր կծամածռվեին, կմախային բազուկները կպրկվեին, աղաչավոր եղունգներե բզկտված կուրծքեր կարյունեին, կատաղի աչքերներ կբոցոտեին, և այդ ամբողջը կոռնար, կմլավեր, ու կսպասեր Անեռույթին, Անկարելիին, Հրաշքին։

Օր մըն ալ Հույսին ամբոխը տեսա, հայ ամբոխը 95-ի տենդագին ու սրտաճմլիկ օրերուն։ Պապ-Ալիի ցույցեն հետո, զրույց ելած էր, թե Սուլթանը որոշած էր վերջապես Հայաստանի բարենորոգմանց ծրագիրը ստորագրել, և հազարավոր հայեր, ուրախությենե խելահեղ, Ծտիքուլեի դաշտին մեջ գացին՝ Սահմանադրության տարեդարձը տոնելու պատրվակով՝ նավակատիքը հանդիսավորել ազգային ազատագրության, զոր արդեն կատարված կերևակայեին... Ա՜խ, խե՜ղճ միամիտ ամբոխ. ամենամեծ մասամբ հայաստանցիներ էին. իրենց խաներուն գարշահոտ ու չվառական մթությենեն դուրս ելած, իրենց արախչիին ու ապային նախշուն հայկականությամբը խրոխտորեն համազգեստված, կուգային դարավոր տառապանքին տակ ճղմված իրենց սիրտը զովացնել՝ պոռթկացող, մոլեգին, հիմարական հրճվանքի մը մեջ։ Տեղ-տեղ

կխոնվեին, կկուտակվեին հանպատրաստից ամբոխներու շուրջը, որոնց վրայեն կրակոտ ու սրտաշարժ երիտասարդներ մանկական պոռոտախոսություններ կթոցնեին, աչվընին սպառնալից, ու մատերնին ցցված դեպի հորիզոնը,— Ապագան, ազատությունը,— և էլեկտրական բառերուն մոգությենեն բռնված, ամբոխը կղժար, կհևար, կաղաղակեր, կուլար... Ու մինչև իրիկուն Ֆոիքուլեի դաշտը լեռնական պարերուն տակ թնդաց, ազատ երդերուն ժայթքումին մեջ բոցավառեցավ. ու ոչ մեկը նշմարեց այդ ուրախության ոստոստումին ներքև Աղետքը, որ մութին մեջ դարանած կսողսկեր. ու ոչ մեկը կրցավ գուշակել, թե այդ խոշոր, աղվոր տոնը պիտի ունենար ամենեն ահավոր վաղորդայնը արյունի և սուգի...

Ուրիշ օր մը, տեսա ամբոխը Զարհուրանքին։ 95-ի աշնան այն ցորեկն էր, ուր հանկարծ լուր ելավ թե անգլիական նավատորմիղը Մարմարա մտեր էր. մեկ վայրկյանի մեջ սարսափը թռավ անցավ մեղկ ու վախկոտ քաղաքին մեկ ծայրեն մյուսը. հակասական, բազմաձև, հարաճուն, ծավալական, համայնապարփակ սարսափ մը, որ փուվեցավ օդին մեջ, թափանցեց ամեն ծակ ու ծուկ, բոլոր դեմքերը դեղնեցուց, ու այնպես ըրավ, որ ամենքը իրարմե ահաբեկեցան, ու ամեն մարդ ինքնիրմե սոսկաց. անորոշ, խորհրդավոր, անբացատրելի վախն էր փորձանքին, որ վերահաս է, որ վայրկյանե վայրկյան պիտի խուժե. և ամեն մարդ փախչիլ սկսավ, առանց գիտնալու որմե՞ կփախչեր, ինչո՞ւ և ո՞ւր։ Քրիստոնյաները կփախչեին, կարծելով թե տաճիկները վերջին հուսահատ կատաղությամբ մը պիտի ջարդեն զիրենք՝ եվրոպական զորության ժամանումեն առաջ. տաճիկները կփախչեին, կարծելով թե անգլիացին արդեն ներսն է և կուգա զիրենք կոտորել։ Խանութները հապճեպով կգոցվեին, տենդոտ շռինդի մը մեջ. խելագար բազմություններ կվազեին փողոցներուն մեջեն։ Գուժաբեր աղաղակ մը, չես գիտեր ուսկից ելած,— Եկա՜ն, եկա՜ն,— կբազմապատկվեր, կտարտղնվեր, կդառնար ու կսուրար օդին մեջ, փախչող խումբերուն վրայեն, ինչպես պտուտքող մահակառաջ տարմ մը ագռավներու՝ հովեն ալեկոծված գերեզմանոցի ծառերու վերև։ Դժգույն, անձայն, չարագուշակ, փախչողները կշարունակեին իրենց խելակորույս շփոթած վազքը, վախնալով ետևնին դառնալու, վախնալով դիմացնին նայելու, կարծելով, թե ամեն կողմե պաշարված են վտանգով, և այս բոլորը՝ առանց որ մեկը զենք մը տեսած, արյուն նշմարած, բախում մը նկատած ըլլար, ամենքը պարզապես բռնված վախին վախովը,— ամբոխը վատ, ապուշ ու եղերական։

Բայց ամբոխ մը, որ մտքիս մեջ ձգած է ամենեն մղձավանջային, ամենեն հալածողական հիշատակը, տեսակ մը խուճապքն է եռուզեռուն

ճիվաղային մարդկության՝ որ ինծի ցորեկ մը հայտնվեցավ, 92-ին, Տոլմապաղչեի մզկիթը շրջապատող հրապարակին մեջ, Ռամազանի նախորդ օրը։

Կառավարության կողմե այդ օրը աղքատներուն ուտեստի թերթեր կբաժնեն։ Խառնածին խաժամուժն էր,— մուրացկաններ, դատարկապորտներ, ավազակներ, հաշմանդամներ, խելագարներ, որ քաղաքին բոլոր մռայլ խորշերեն, փապարներեն դուրս թափած կուտակված էր փողերանոցին առջև, կայսերական շնորհը ընդունելու։ Ահավոր, կատաղի ու նողկալի տեսարան մըն էր։ Մեծ, պղտոր, ծփանուտ ծով մը գլուխներու, ուր կնկան թյուլպենտներու աղտոտ ճերմակությունը կթունավորվեր փաթթոցի կանանչությունններով, կարյունատեր ֆեսի կարմրությունններով, կմթներ մազոտ խոշոր գդակներու թանձրությամբը։ Գլուխները, իրարու փակած, իրարու մեջ մտած խառնված, անընդհատական շարժումով մը կերերկտային, կպզպզակեին՝ նեղ ավազանի մեջ բանտված փրփրագին ջուրերու պես։ Եվ այդ բոլոր հորձանքը դեպի փողերանոցին դուռը կխուժեր, որուն բարձրադիր դռնառաջին վրա կնշմարվեր բաշխողը։ Ոստիկանի ձեռքեր կտեսնվեին տեղ-տեղ, ամբոխը զսպելու ջանացող գավազանի հարվածներով. բայց գավազան ու ոստիկան կիսեղդվեին մարդկային մսի Մայլսթրոմին մեջ, որ կաճեր, կթանձրանար, կշեղջակուտվեր։ Վանդակապատին մոտ պզտիկ խմբակներ կային, գետինը ծալապատիկ նստած կամ ոտքի վրա,— ծույլերը, անճարակները և հաշմերը,— որոնք չէին ուզած հրմշտուքին մեջ արկածվիլ և կսպասեին հեղեղին ցամքելուն, որպեսզի իրենց կարգը գար։ Մոտեն, որոշ կտեսնեի զիրենք, և ատոնք ինծի կցուցնեին միությունները, որոնցմով այդ ամբողջ զանգվածը կազմված էր. կային հոտ թաթարներ, քյուրտեր, տաճիկներ, լազեր, չերքեզներ, նույնիսկ գնչուներ և հրեաներ և դեռ անանվանելի ցեղե ու տեսակե մարդիկ, բոլոր նմուշները ոչ-քրիստոնեա բազմազան ցեղերուն, ջոկերուն ու ոհմակներուն, որ «օսմանյան կայսրություն» անվանված անճոռնի խառնակույտը կձևացնեն։ Այլանդակ տիպարներ, հելուզակի գլուխներով, մացառուտ զարհուրելի մորուքներով, գիշակերի բերաններով, ոճիրի աչվընիներով, հաստ մազոտ ցնցոտիներու մեջ, ձեռքերնին՝ խոշոր ցուպեր։ Մաշկացած սևցած միսով անասնանման կիներ, կիսամերկ՝ լաչակնուն մեջեն սահեցնելով դժնյա ու նենգ նայվածքներ, շալակնին կրելով իրենց վիժուկները՝ պարկի մեջ կախված։ Ու խեղանդամները, անհեթեթ երևույթներ՝ գեշ երազե մը փախած կարծես, իրաններ առանց թևի, աչքեր հալած բիբերով, դեմքեր, որոնց կարծես, իրաններ առանց թևի, աչքեր հալած բիբերով, դեմքեր, որոնց քթին տեղ խոռոչ մը կբացվի, մարմիններ ծակերով փոսացած, պալարներով ուռեցվորած, ախտերով ծոմոկված, ու դեմքեր խոժոռ, սևեռուն

ու մոլեգին՝ այսաշարշար նայվածքներով. ու այդ ամենուն վրա, թանձրակուտակ մոլեռանդության կատաղություն մը՝ անոթութենեն մտրակված։ Անդին, զանգվածը կգալարվեր, կռնար, կվժար։ Հանկարծ ճիչեր լսվեցան. մեկ քանի պզտիկ աղաք ճղմվեր էին խումանին մեջ, ու կիներ կոխոտվեր։ Վայնասուն մը փրթավ, զոր խռպոտ աղաղակները խեղդեցին, թաղեցին, լափեցին իսկույն։ Եվ ձգեցի գացի, առանց հոգս նայելու համարձակելու, մինչև կոկորդս զզվանքով ու սարսափով թխմված։

Ամեն անգամ որ այդ արհավիրքի պատկերը մտքիս մեջ վերակենդանանա, գաղափարներու սարսռացնող զուգորդությամբ մը, Պոլսո ջարդին հիշատակը կկանգնի աչքիս... Այդ Տոլմապահչեի հրեշներն էին որ, հրամանովը Ելտըզի Ուրվականին, իրենց որջերեն ու անձավներեն դուրս ցատկեցին ու, բիրերով, մահակներով, դանակներով զինված, մեր անդեն ու հանկարծակիի եկած եղբայրներուն վրա թափեցան... Եվ նույն-նույն գաղափարին տրամաբանական շարունակությամբը, միտքս նույնհետայն ավելի հեռուն կերթա, կհասնի մինչև մութ ու ցավագին տարածությունները հայ հողին, ու կտեսնեմ հոն՝ ծայրե ծայր՝ աղջամղջին խուժանի մը խոյանալն ու մոլեգնիլը հրդեհի և արյունհեղության մխացող կարմրությանցը մեջեն։ Ոճիրին ամբոխն է... քանդումին բաստ, շվարած ժողովրդի մը վրա, ու կկոխկոտե, կբզկտե, կջախջախե զայն... Ու նույն ճիվաղներն են, իրենց մահու թաթերովը, իրենց դևի աչքերովը, որ կհրոսեն մեր բարի, մեր ալևոր, մեր սիրուն գյուղերուն վրա, ուր հայրենիքին հինավուրց ստվերը, հույսերով լեցուն, կծածաներ դեռ ու կերգեր։ Սև թաթերը, դաշույններով եղունգված, ճերմակ մազերով գլուխներու, մատաղ ու վարդ դեմքերու վրա կելևէջեն. և արյունակաթ բերանները, խավարով լեցուն, դողդողացող, ճերմակ կուսությունններու վրա կծռին ու կծանրանան...

Ասիկա անհնարին, անըմբռնելի, անընդունելի պատկերն է։ Ու մարդ ձեռքերը աչքերուն կփակցնե, որպեսզի վայրկյան մը ոչինչ տեսնե, որպեսզի մտածումը կասեցնե վայրկյան մը...

Սակայն և կա ամբոխ մը, որ Ամբոխին դերագույն ազնվացումն է,— ամբոխը վրիժառու, ազատատենչ Մաքառումին։ Հոյակապ, օգոստափառ, հսկայական տեսիլն է ան, որ ամեն տեսիլ կգերազանցե։ Հավաքական գիտակցությունն է, որ կարթնանա և, խրոխտ ու վեհ, անձնազոհության զրահին մեջ կփաթթվի, Արդարության վահանը թեր կանցընե, կստաղավարտվի սուրբ Բարկություններուն պողպատովը ու կցցվի Բռնության դեմ, որ Չարին դիմակն է, որ Մահվան պատվանդանն է,

որպեսզի պատռե այդ դիմակը, որպեսզի կործանե այդ պատվանդանը, և որպեսզի Կյանքը վերահաստատե, որպեսզի ապուշ ու տձև Բիրտ Ուժը ստորադասե Գաղափարին ներդաշնակ տիրապետությանը։

ԴԵՊԻ ԱՆՑՅԱԼԸ

Դիմացե դիմաց նստեր են, բազմոցին երկու անկյունը, մեկն իր կարին վրա ծռած, մյուսն իր գուլպան հյուսելով, խոսակցության մը մեջ, որ կերկարի, կերկարաձգվի։

Պատուհաններուն վարագույրները փակ են. սեղանին վրա կանթեղ մը դրված է, որուն լույսը պառավին կիսադեմքը կերիտասարդացնե, մինչդեռ իր ստվերը, խոշոր ու ծիծաղաշարժ, վարագույրին վրա՝ իր գլխուն շարժմանց համեմատ՝ կընդլայնի ու կկծկի։ Մյուս կինը, նվազ տարվոք, երեսեն կընդունի լույսը, և այդ շեշտ պայծառության մեջ՝ դեռ թարմ ցավի մը ծալքերը կմատնե իր աչքերուն տակ։

Պատեն, Աստվածածնի պատկեր մը, դեղնած, կկախվի։ Բազմոցին առջև, պղնձե կթակարանին մեջ, որուն կարմիրը լույսին մեջ կվառի, կրակները համբորեն մոխիր կդառնան, ու բարի տաքություն մը կշոգիանա անկից։

Միս-մինակ, երկու կիները կիսոսակցին։ Նվազ տարվոքը դեռ նոր, վեց ամիս առաջ, իր վերջին զավակը կորսնցուցած է։ Իր ցավը հանգարտեր է արդեն, բայց անոր անցքը տխրության ակոսներ քաշեր է դեմքին վրա, և գլխուն կոտրված հակումը կպատմե լացերը որոնց մեջ այդ մայրը թաթլտկեր է։

Մյուսը, պառավը, սևեր հագած, պառավներուն սևերը, որոնք իրենց մեռած երիտասարդության սուգը կթվին, անուշ համակերպության ձև մը ունի, որ իր դեմքին կուտա խաղաղ արտահայտությունն անոնց, որոնք կյանքը գիտեն և որոնք ա՛լ պիտի չլան։ Դրացուհի մըն է, որ գիշերները կուգա սգվորին մխիթարանք կարդալու, անոր մենությունը լեցնելու։

Անընդհատ, արագ մատներով կաշխատին։ Եվ խոսակցությունը կշարունակվի, դանդաղ, լռություններով կտրված։ Հիշատակներու համարիչն է որ գաղջ սենյակին պարզուկ ընտանության մեջ կքակվի, հատիկ հատիկ կքաշվի, ու կտարածվի՞...

Անցյալին մեջ հետադարձ պտույտն է, այնչա՞փ քաղցր անոնց, որոնք ամեն բան հոն են ձգեր և որոնք հիմա մինակ են ներկային մեջ։

Գերեզմաններ կբացվին, անհետացած դեմքեր կվերակոչվին, և մեռելի հոգիներ, արթնցած, սենյակին մեջ կծածանին։

— Ողորմած հոգի հայրս ինծի ասանկ խրատ տված է։

— Իմ ալ լուսահոգի մայրս ատանկ կըսեր։

— Դուն կճանչնայի՞ր իմին քույրս։

— Չէ՛, իմ մեծ քույրս, լուսահոգին, ան աղեկ կճանչնար։

— Մեծ քույրդ ինչեն մեռավ։

— Քոլերային տարին էր...

Ու հին, հին օրերը դուրս կելլեն ժամանակին դամբարանեն։ Երկու կիներն իրարու հետ կբաղդատեն իրենց անցյալը, կջանան իրար համոզել, թե մին մյուսեն ավելի դժբախտ է եղած։

— Ես չո՞ւրս հատ զավակ եմ ձեռքե հաներ։

— Է՛ ե՞ս... Զավկի ցավը ինծի հարցուր դուն։

Կրոնքի խոսքեր կանցնին, Ավետարանի շունչ մը որ սենյակը խընկավետե։

— Աստված ասանկ է ուզեր...

Ու միշտ, ցավի կամ տրտմության հուշերեն հետո, հանկերգի մը պես կկրկնվի, այդ բոլոր սրտի մոխիրին քրքրուքը հույսի կայծով մը վառելով, այդ բոլոր գերեզմաննոցի մեջ թափառումի մելամաղձությունը հավատքի լոյսով մը ոսկեզօծելով, ժողովրդական բարեպաշտության անուշ բանաձևը որ մեռելներուն դեմքը կլուսապսակե, որ մահը ճաճանչում մը կդարձնե։

— Լուսերուն մեջը պառկի՛...

Լռությունները երբեմն կերկննան, տրտում հիշատակներեն հետո մանավանդ։ Մատները, այդ միջոցին, արագ, տենդոտ շարժումով մը, լաթերուն մեջեն կվազեն, գուլպային վրա կերերան։ Կրակ մը կփայլի մոխիրներուն մեջեն, կայծ մը կցատքեցնե ու կմարի։

Դրսեն, գիշերապահի մը ճոկանը քարերուն վրա կթնդա։ Ա՛լ չեն խոսիր։ Թմրություն մը կծանրանա հիմա մթնոլորտին մեջ։ Մատները ձանձրացած են։ Հիշատակները հոգնեցուցած են։ Երկու հինացած ցավագին ուղեղները։ Կար կարողը ձեռքերը խոնջ կզգա, գլուխը կդնե պատին ու կմնա՝ աչքերը փակ, և պառավը գուլպան ձեռքեն ձգելով, թույլ մրափի մը մեջ գլուխը կուրծքն ի վար կկախե։

ԿՅԱՆՔ ԵՎ ԵՐԱԶ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Պետրոս Աղամյանին

Այդ գիշերը մահու չափ տրտում էր հոգիս։

Ծովու մը եզերքն էի։ Ետիս՝ մեծ անտառ մը մութ պատի մը պես կերկննար։

Սքանչելի գիշեր մըն էր ամառվան։ Անամպ երկնքին մեջ, որ կտարածվեր անծայրածիր, կշողար լիալուսինը, և անոր քաղցր պայծառությունը ծովը կլուսավառեր։ Զվարթ սյուք մը երգելով կվազեր մեղմաձուփ ալիքներուն վրայեն, և իր թեթև քայլերը հոն կկազմեին փրփուրներ, որոնք ոսկի ծաղիկներու պես կբացվեին։ Հեռուն, ծովին անհուն շրթունքը խաղաղ ու լուսավոր համբույրով մը երկինքը կհամբուրեր։

Այս կախարդիչ տեսարանին վճիտ գեղեցկությունը, հեռու՝ ամոքելե անձկությունը, որով զիս ընկճված կզգայի, զայն կարծարծեր, զայրացնելով զիս, իբր բնության մեկ արհամարհոտ հեգնությունը մարդկային թշվառության երեսին նետված։ Կխորհեի տառապանքով ու տգեղությամբ շինված մեր գոյության ունայնությանը։ Կտեսնեի հաղթական Չարին դեմ մեր ընդվզումներուն ողբալի անզորությունը։ Կտեսնեի մեր ամենեն վեհանձն բաղձանքներուն, մեր ամենեն մաքուր երազներուն շնական իրականության գարշապարին տակ ջախջախվիլը։ Ու ցավագին հիշատակներուն մեջեն, որոնք ինչպես սև մեղուներու երամ մը ճակտիս շուրջ կբզզային, խորտակված հույսերու, փլած հավատքներու մեջեն, աշխարհն ինծի կերևար ինչպես ճակատագրին մեկ կոպիտ սխալը։ Կտեսնեի, որ այն բոլոր անկայուն ու պատրողական բաներուն մեջ, որոնք կյանքին իսկությունը կկազմեն, ինչ որ միայն կմնա անխախտ և ապահով, Մահն է, այդ հավերժական պոռնիկը, որուն թևերուն մեջ ամբողջ մարդկությունը կերթա քնանալ։

Այս թախծագին մտածումներեն ճնշված, չկարենալով այլևս հանդուրժել շլացուցիչ տեսիլն այդ դյութական գիշերին, հրավառ ճակատս երկու ձեռքերուս մեջ առի և, ամբողջովին անձնատուր ըլլալով հուսահատության այն նոպային, որ հոգիս կխեղդեր, ես ինծի կհարցնեի, թե արդյոք գոյություն ունեցա՞ծ է երբեք՝ ինչ որ մեր հայրերը Երջանկություն կոչեցին։

Հանկարծ լսեցի ձայն մը, որ զիս կկանչեր։

Վեր առի գլուխս։ Դիմացս, քանի մը քայլ հեռու, ալյակի մը կատարին վրա կին մը կար կանգնած։Մոգական էակ մըն էր, ավելի գեղեցիկ, քան նույնիսկ անոնք, զոր մերթ կընդնշմարենք մեր երազներուն մեջ։ Երկայն, մաքուր ծալքերով թեթև սպիտակ շղարշ մը կկաղապարեր անոր մարմինը, որուն ներդաշնակ շրջագիծները ծովուն ոսկի հատակին վրա հստակորեն կնկարվեին։ Իր բազուկները, կարապի ուլանպես ճերմակ ու ճկուն, կրծքին վրա ծալված էին։ Իր ձյունափայլ վզին դափուկ պատվանդանին վրա կկանգներ պաշտելի գլուխ մը, որ հունական արձաններու ձևական կատարելության կմիացներ գերաշխարհային հրապույր մը անբացատրելի։

— Ո՞վ ես դուն,— գոչեցի ակամա ծունկի գալով։

— Եկո՛ւր,— պատասխանեց Անծանոթուհին։— Ես մեծ մխիթարիչն եմ։ Դուն, որ կտառապիս ու կհեծես, եկուր իմ գիրկս հանգչեցնել խոնջեմ։ Դուն, որ հոգիդ պիտի թոթափե իր ճակատդ, ու քեզ տանիմ այն աշխարհն, ուր հոգիդ պիտի թոթափե իր մթությունը։

Եկո՛ւր, իմ պետությունս երկինքին բարձրագույն ոլորտներուն մեջ է հաստատված։ Երբ իր սպիտակ թևերը բացած Տիվը կփախչի երկինքի վերև և գիշերին սարսուռը կսկսի աշխարհի վրա սավառնիլ, կելլեմ իմ պալատս և կուգամ ցավատանջ սիրտերն սփոփելու։

Եկո՛ւր, ես եմ, որ տիեզերքին վրա կսփռեմ երփներանգ քող մը, որ զայն կգեղեցկացնեմ, ես միայն բույր ու դաշնակություն կուտամ ինչ բանի որ հպիմ, և ես եմ, որ անպատում խորհրդով մը կպատեմ աստղերուն դժգույն կերոններն ու լուսնին ոսկի նշխարքը. ես եմ, որ ծովին թուխ կոնակին վրա կցողեմ այն ահեղ հրապույրը, որ կհուզե ու կկազդուրե մեծ հոգիները. ես եմ, որ կճաճանչեմ փեռեկտյալ ամպերուն մեջեն, երբ վերջալույսն արևմուտքի մեջ հրեղեն արցունք կթափե կամ երբ այգն իր վարդ ժպիտով արևելքին դեմքը կծաղկեցնե։ Եկո՛ւր և ըսե՛ ինծի ինչ որ կտենչաս. քեզի վայրկյան մը աստվածություն կարող եմ տալ. կրնամ քեզ երկրին ընդերքի մեջ կամ ծովուն ալիքներուն խորը պտտեցնել. կրնամ քեզ աստղե աստղ առաջնորդել երկնքի ծավի անդունդին մեջ։

Եկո՛ւր, շատերը փնտրեցին երջանկությունը, որուն դուն ալ ծարավ ես. ոմանք գանձերու և այլք հեշտության մեջ կարծեցին զայն տեսնել. եղան, որ գիրքերու մեջ և կամ բնության ծոցը հուսացին գտնել զայն. ոմանք ճգնեցան զայն վայելել մոլության մեջ և որիշներ՝ կրոնքի մեջ, և եղան նույնիսկ, որ զայն մահվան մեջ փնտրեցին։ Երջանկությունը, միակ ու գերագույն երջանկությունը, իմ պետությանս մեջ միայն կարելի է գտնել։ Վասնզի գանձերը կոշտ հաճույք մը միայն

կրնան տալ. հեշտությունը տառապանքն է, որ ժպտուն դիմակով մը երեսը սքողած է. գիրքերը ձեր ուղեղը կմաշեցնեն և ձեզի ուրիշ բան չեն հայթայթեր, բայց եթե լեղի գիտակցությունը կյանքի թշվառության. բնությունը, մեծապայծառ ու անկարեկիր, ձեզ կճզմե ու ձեր հեծեծանքներուն վրա կծիծաղի. մոլությունը ծաղկասքող անդունդն է, որուն խորն օձերը կսողան. սերը բառ մըն է, որ իր նշանակությունը կորսընցուցած է, և դժբախտութենեն ավելի դառն է այն երջանկությունը, զոր կուտան կրոնքն ու մահը։ Եկո՛ւր գիրկս հանգչեցնել քու խոնջ ճակատդ, ու քեզ տանիմ այն աշխարհն, ուր խաղաղությունն ու երջանկությունը պիտի գտնես»։

Լռեց։ Ու իր ձեռքին շարժումներովը կկանչեր զիս։ Իր նայվածքը զիս կխելահեղեր։ Իր նրբահյուս շղարշեն և իր մազերեն կհոսեին բուրումներ, որ զիս կզգլխեին. իր ամբողջ մարմինեն կելլեր հոսանքի մը, որ անդիմադրելի զորությամբ մը զիս դեպի ան կքաշեր կտաներ։

Ոտքի ելա դողալով ու նետվեցա իր թևերուն մեջ, զոր բացած էր ինծի։ Հոգ, վիշտ, անձկություն, ամեն ինչ ինձմե թափեցավ ու հեռացավ, ինչպես մշուշը, որ նորածագ արևուն ճաճանչներուն տակ կհալի ու խույս կուտա, երբ հպումը զգացի այդ գերմարդկային մարմնույն։ Սիրտս կուրծքիս մեջ կնվաղեր։ Ինծի կթվեր, թե ներդաշնակության ամպերու մեջ կփաթթեին զիս, թե լույսի օվկիանոսներու խորը կընկղմեին զիս, թե անուշահոտության հեղեղներու մեջ զիս կլոգանային։ Ինքզինքս կորսնցուցած, բազուկներովս փարեցա Անծանոթուհուն պարանոցին, ու «Թուչինք» ըսի անոր։

Տեսա այն ատեն, որ երկու մեծ սպիտակ թևեր անոր ուսերուն վերև կպարզվեին, այնքան լայն, որ առագաստներու պես հովեն կուռեին և այնքան նուրբ, որ անոնց մեջեն լուսինն ու աստղերը կտեսնվեին։ Եվ այդ թևերը, որ շուշանաթույր ստվեր մը կհոսեին վրաս, սկսան շարժիլ. ու կվերանային, ավելի թեթև՝ քան փետուրը, ավելի արագ՝ քան փայլակը։

Վարը, ծովափն ու անտառը հետզհետե կմթնային, կշոգիանային։ Քիչ հետո այլևս ծովը միայն կնշմարեի, անհո՛ւն անապատ ջուրերու, որ կտարածվեր ողորկ և անշարժ։ Կթռչեինք, կթռչեինք ու ևս քան զևս երկնքի անվերջ խորությանց մեջ կմխրճեինք։ Տեսա հանկարծ, որ աստղերը կմոտենային... Բայց այդ ապերասան ճախրանքը կընդարմացներ ու կուժաբեկեր զիս։ Գլուխս դիցուհվույն ուսին վրա ինկավ թուլցած, ու աչքերս փակվեցան։

Երբ սթափեցա, ինքզինքս տեսա ուրվատեսիլ պալատի մը մեծ դռան առջև։

— Անհունությունը ճեղքեցինք,— ըսավ ինծի Անծանոթուհին,— համաստեղությանց անտառին մեջեն հառաջացանք, Մեր Կաթինին մեծ գետեն անցանք և ահա հասանք սիեզերքի ամենավերին բարձունքը, այն գերագույն մարզն, ուր կգտնվի իմ կայանս։

Ձյունի պես ճերմակ ու բյուրեղի պես թափանցիկ էին որմերն այդ տարօրինակ շենքին, որուն հիմերն օդին երերուն հյուվեներուն վրա հաստատված էին ու մեծաշող պայծառություն մը ներսը կճառագայթեր։

Մտանք հոն։ Ինչ որ տեսա այդ հրաշալիքներուն վայրին մեջ, երբեք պիտի չմոռնամ, բայց և երբեք պիտի չկարենամ ճշտիվ նկարագրել։ Մարմինս կթվեր կորսնցուցած ըլլալ իր ծանրությունը։ Կսահեի ավելի, քան կքալեի այն ճերմակ հատակին վրա, որ կակուղ էր փետուրե անկողնի մը նման։ Անծայրածիր էր պալատը։ Մեջեմեջ անհամար կամարներ կերթային հեռուն կորսվիլ անչափելի խորության մը մեջ. այդ կամարները բյուրերանգ ու քաղցրանուշ ծիածաններու պես էին, կընթնած օձաձև նուրբ սյուներու վրա, որոնցմե ոմանք լույսով շինված էին, այլք զուտ ոսկիով, և ուրիշներ կարկեհաններով, զմրուխտներով և արևաքարերով կշողային, գույներու այնպիսի քնքշությամբ մը, որուն նմանը երկրի վրա դեռ չէի տեսած։

Աջ ու ձախ կբացվեին մերթ ընդարձակ սրահներ շքեղություններով զեղուն կամ երկարաձիգ ճեմելիքներ անլուր պերճությամբ, որոնք կերթային հեռուն երփնագեղ մշուշի մը մեջ կորսվիլ. ու մերթ մեծ պատուհաններ ցույց կուտային հրաշազան բնանկարներ, որ պալատը կպաշարեին, դրախտային երանգաճոխությամբ բնանկարներ, անսահման պարտեզներ, ուր ծառերը փարթամաթույր խոշոր ծաղիկներ կթվեին և ուր մեղեսիկե ու շափյուղայե լիճերու մեջ կնավեին իրենց սեփական սպիտակությամբն արբշիռ մեծ կարապներ։

Կհառաջանայինք։ Ու գլխուս վերև, օդին մեջ, կամարներուն տակ, ճեմելիքներուն ու սրահներուն մեջ, ամեն տեղ կնշմարեի անթիվ հույլեր սպիտակ ու թեթև հրեշտակներու, որոնք կթռչտեին, վարդի թերթերու պես կարմիր ու հոտավետ թևեր շարժելով. այդ թևերուն հպանցքեն երաժշտություն մը առաջ կուգար, երաժշտություն մը հազիվ լսելի, բայց որ անհուն անուշություն մ'ուներ, ինչպես երազի մեջ լսված խորհրդավոր երգերունը կամ ինչպես լուռ նվագն այն նայվածքին, որով սիրահար մը պաշտված էակին առաջին անգամ կհայտնե իր սիրտն այրող կրակը։ Եվ այդ բոլոր անշոշափելի ձայները, փսփսուքներու պես մեղմ, կկազմեին տարտամ ու ներդաշնակ խժլդուք մը, որ կնմաներ տերևներու սոսափյունին, երբ զեփյուռը կուգա իր դանդաղ ու մեղկանուշ համբյուրներովը զանոնք սարսռացնել։

Կամարներուն տակ, հեռուն կնշմարեի երբեմն հույլեր դեռատի ու սպիտակափայլ աղջիկներու, որոնք՝ իրենց ոսկի մազերը ծաղիկներով պճնած՝ կպարեին, իրենց թեթև ոստմանց մեջ ամենեն շնորհալի ձևերը տալով իրենց մարմնույն։ Բայց քանի կհառաջանայինք, այդ աղջիկներն ու իրենց պարերը կցնդեին ինչպես ճերմակ ամպերը, որ երկնքի կապույտին մեջ կհալին կամ ինչպես ծուխը, որ գալարվելով կբարձրանա և միջոցին մեջ կնվազի։

Կանգ առավ դիցուհին։ Բոլորշի սրահ մը հասած էինք, ավելի ընդարձակ ու ավելի դյութագեղ, քան ամեն ինչ-որ տեսած էի այդ պալատին մեջ։ Վերը կբացվեր խոր գմբեթ մը, որուն կեդրոնը կփողփողեր արեգակ մը, որուն լույսն ավելի հզոր ու միանգամայն ավելի քաղցր էր, քան մեր հանապազօրյա արևինը. անոր շուրջ, ինչպես և սրահին պատերուն վրա և սյուներուն, կշողային միլիոնավոր աստղիկներ, որոնք խմբված էին դրասանդներու, փունջերու, պսակներու, դափնիներու ձևով և ունեին ճառագայթումի անասելի քաղցրություն մը ու երանգներու հրաշալի այլազանություն մը։

Այդ սրահին մեջտեղը տեսա երկու մանկամարդ կիներ, որ երկու ոսկի գահերու վրա նստած էին։

Մին կերգեր. ջրեղեն որաներու պես, որոնք շատրվանի մը ծորակներեն կժայթքին, խազերը կսլանային իր կուրծքեն, որ կուռեր հողմով լեցված առագաստի մը նման. ձայնը մերթ կգոռար այն ուրագաններուն պես, որոնց մռնչյունները կթվին սիեզերքի կործանումը գուժել, մերթ կթավալեր առվակի մը պես, որ գայլախաղները ծնծղելով ու ափունքներուն խոտերը համբուրելով կվազե, ու մերթ կդայլայլեր սոխակին պես, որ գիշերային աղջամուղջներն իր մելադաշնակ մարգրիտներուն անձրևովը կլուսավառե, և իր ամբողջ մարմինը կսարսռար քնարի մը նման, որ կրթրթռա արվեստագետի մը մատներուն տակ։

Ունկնդրելով անոր, ինծի կթվեր, թե կզգայի կենսական ուժին իմ մեջս հարյուրապատկվիլը, հոգիս մեծնալը, մաքրվիլը, համակ լույս և համակ բուրմունք դառնալը՝ ինչպես ամեն ինչ, որ զիս կշրջապատեր։ Նվազագույն հիշատակը այն բոլոր գծուծ, ցավագին ու խայտառակ երևույթներուն, զոր կյանքն ունի երկրիս վրա, կանհետանար, կտարրալուծվեր գեղեցկության, վեհության ու երանության արբեցումին մեջ, որ զիս կհամակեր և ինծի ամբողջապես կտիրանար։

Երբ ան դադրեցավ երգելե, մյուսը սկսավ իր բերնեն հոսեցնել գետ մը կախարդիչ բառերու։ Այնչափ անուշ էին անոր աչքերը, որ մարդ պիտի փափագեր անոնց կապույտին մեջ խեղդվիլ։ Ու քանի կխոսեր, նայվածքն ավելի փայլուն կդառնար։ Այտերը կկարմրեին, իր երկայն

ոսկի մազերը գլխուն հրայրքոտ շարժումներուն համեմատ կալեծփեին ու բոցերու պես կգալարվեին մարմնուն շուրջը։ Այդ գունագեղ ու ներդաշնակ բառերը, զոր կարտասաներ, խորհրդավոր ու գերմարդկային լեզվի մը կպատկանեին. անոնց մեկ փոքր մասը կըմբռնեի երբեմն, և այդ քիչը, այն հրաշալի տեսիլներով, զոր ինծի կընծայեր, այն մտածումներով ու զգայություններով, զոր ինծի կթելադրեր, մտքիս մեջ խորին երանություն մը կծավալեր։

Ինծի կթվեր, ունկնդրելով անոր, թե կյանքի խորհրդին մթությունը, մաքուր լույսով մը թափանցվելով, կմեղմանար. ինծի կթվեր, թե տիեզերքը վերին գեղեցկություն մը կզգենուր, ինքնավստահության, պայծառամտության ոգի մը կմտներ մեջս, բաղձանք մը կգրավեր զիս Ճարին դեմ մինչև վերջին շունչս կռվելու. կկարծեի ընդնշմարել նպատակ մը, անորոշ, հեռավոր, բայց լուսավոր ու ապահով, տիեզերական կյանքի ամբողջ դատանքին և ամբողջ տառապանքին։

Դիցուհին մոտեցավ ինծի և ըսավ.

— Քիչ մարդիկ ճանչցած են իմ զորությունս։ Քու եղբայրներդ կծիծաղին իմ երթերային պետությանս վրա և կնախընտրեն անաանական կյանքի մը ժահահոտ ճահիճին մեջ սողալ կամ կույր ու դառնագին տարակույսի մը ամուլ հուսահատության մեջ մաշիլ։ Անոնք միայն, որ հոս եկան ունկնդրել այն տիրական ձայներուն, զոր քիչ առաջ լսեցիր, երջանկությունը ճանչցան։

Ես Երևակայությունն եմ։ Այս երկու կիներն իմ դուստրերս են՝ Բառնաստեղծությունն ու Երաժշտությունը։ Այն խուսափուկ պարող կույսերը, զոր տեսար կամարներուն տակ, Գատրանքներն են, իմ նաժիշտներս, ու հրեշտակները, որ պալատիս մեջ կթռչտին, Երազներն են, որ իմ Գետությանս բնակչությունը կկազմեն։

Այդ րոպեին ցնցում մը դղրդեց պալատը։ Դուռ մը բացվեցավ պատերեն մեկուն մեջ, ու տեսա բարձրահասակ գեղեցիկ պարմանի մը, որ համբաքայլ ու լռին ներս կմտներ։ Մարմինը ծածկված էր սև մեծ քողով մը։ Աչքերը կշողային հմայիչ նշույլներով, երկու աստղերու նման։ Ճակտին վրա կկրեր խաչաձևներու պսակ մը։ Երազներու հույլ մը իրեն կհետևեր։

Դիցուհին ըսավ ինծի.

— Մեկնումի ժամը հասած է քեզի համար։ Առավոտն արդեն սկսած է ձեր աշխարհին վրա իր վարդերը սփռել։ Ահա եղբայրս՝ Քունը, որ անկից կդառնա հոս, մարդերը իրենց ցավերուն ձգելով։ Երթա՛ս բարով։ Հիշե՛ զիս, երբ վհատության վայրկյաններ ունենաս, և կանչե՛ զիս, երբ պետքն զգաս կազդուրվելու։

Տեսա այն ատեն, որ շուրջս ամեն ինչ ալեծուփ մառախուղի մը կփոխվեր, ուր այդ տեսիլը կընկլուզվեր ու կանհետանար։ Եվ ինծի թվեցավ, թե այդ գերագույն բարձունքներեն անդիմադրելի ուժ մը խելացնորիչ անկումով մը զիս վար կդահավիժեր։

Երբ աչքերս բացի, ինքզինքս գտա ամայի ծովափին վրա, վիթխարի ծառերուն հովանվույն տակ։ Հորիզոնին նայեցա. գիշերին ծոցեն Տիվը կծագեր, ու հրավառ ամպերու կարմիր խանձարուրքին մեջեն դուրս կցատկեր լուսեղեն Մանուկը։

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սիպիլին

Ա.

ՑԱՅԳԵՐԳ

Ահա Գիշերը։ Ստվերին մեջ, որ կթանձրանա, գույներն ու ձևերը կդժգունին, շփոթ կդառնան։ Խավարի ջրհեղեղ մըն է, որ աշխարհը կընկլուզե։ Լույսը կմեռնի, ձայները կխեղդվին, շարժումը կանդամալուծվի։ Տիեզերքն անսահման գերեզմանի մը կփոխվի։

Եվ հանկարծ, ադոտ ու անուշ պայծառություն մը, կարծես ճառագայթումը Գիշերին հոգվույն, համասփյուռ մթության մեջ կկայլակե։ Միստիկական երևումն է աստղերուն։

Օ՜հ, եթե կա վայրկյան մը, ուր թևեր ունենալու տենչը մեր մեջ ավելի քան երբեք ուժով կարթննա, այս պահն է, օրվան ամենեն քաղցր, ամենեն վրդովիչ պահը, երբ նորածագ աստղերը, մեր հոգին իրենց բարակ ու մոգիչ ճաճանչներուն ցանցին մեջ բանտելով զայն դեպի վեր, դեպի Անծանոթը, դեպի Անհունը կքաշեն։

Այն ատեն, մեր մտքին մեջ ալ, ուր աղջամուղջներն ավելի թանձր են, քան խավարը Գիշերին, կծագին երազներու համաստեղությունները։ Երևակայությունը իր անշոշափելի թևերը կբանա և իր խոլ թռիչքը կպտտեցնե աշխարհե աշխարհ, ցնորքե ցնորք։

Բ.

ԵՐԳ

Եթե բոլոր այն երազներն, որ ուղեղիս մեջ կծաղկին, երկինքն ի վեր սրսկեի, երկինքը պիտի ողողվեր։

Եթե օվկիանին մեջ նետեի այն բոլոր հույսերը, որ սիրտս կլեցնեն, օվկիանը պիտի հորդեր։

Ավազի հատիկին մեջ, որ իմ գանկս է, կպարզվի երկինք մը ավելի լայնատարած, քան այն, ուր աստղերը կթավալին։

Արյան կայլակին մեջ, որ իմ սիրտս է, կալեծփի օվկիան մը ավելի խոր, քան այն, ուր կանանչ մեծ կոհակները երգելով կպարեն։

Գ.

ԱՐՑՈՒՆՔՆ ՈՒ ԾԻԾԱՂԸ

Գիշեր մը լսեցի Արցունքն ու Ծիծաղը որ կվիճեին.

— Ես քեզմե գերագույն եմ,— կըսեր ծիծաղը.— ես եմ կյանքին հզորագույն տարրը։ Մարդը նախ զիս կճանչնա։ Մանուկին առաջին բարբառը ժպիտն է։

— Ո՛չ,— կպատասխաներ Արցունքը, առաջին ձայնը, զոր երեխան կարձակե, ցավի ճիչ մըն է։ Եվ ես եմ, որ իր աչքերուն մեջ կշողամ, երբ առաջին անգամ բացվին անոնք։

Ծիծաղը.— *Ես եմ, որ մոր դեմքին վրա կճառագայթեմ, երբ ան ծոցին մեջ կդգա թաքուն կյանքը իր զավակին. և ես եմ, որ անոր աչքերուն մեջ կդնեմ, երբ ան առաջին անգամ իր զավակը կդիտե, այն նայվածքը, զոր բանաստեղծները երկնքին հետ կբաղդատեն։*

Արցունքը.— *Ես եմ, որ մոր աչքերը կմշշապատեմ, երբ երկունքին ցավերուն մեջ ան աշխարհ կբերե իր զավակը, որովհետև մարդը դատապարտված է ցավերու մեջ ծնելու։ Եվ ես եմ, որ երբ մահը մանուկին տխեղծ կյանքին վրա կփչե, մոր բիբերուն խորը կդնեմ այն նայվածքը, զոր բանաստեղծները անդունդին հետ կբաղդատեն։*

Ծիծաղը.— *Ես եմ, որ բնության մեջ կիշխեմ։ Արևը երկնքին ծիծաղն է, որ կյանք ու խինդ կհեղու աշխարհի վրա։ Աստղերը գիշերին ժպիտներն են, որ խավարը կլուսավորեն։ Այգը առավոտին ծիծաղն է, որուն առջև ամոթահար խույս կուտա աղջամուղջը։*

Արցունքը.— *Ես ցողն եմ, որ ծաղիկներուն այտերն արցունքներով կսքողեմ։ Ես ամպն եմ, որ կհեծեմ, առվակը, որ կհառաչե և ծովը, որ կկողկողի։ Ե՛ս եմ, որ կտիրեմ բնության մեջ։*

Ծիծաղը.— *Ես Լույսն եմ, և Լույսը առաջին ստեղծածն է Արարչին։*

Արցունքը.— *Բայց Մութը կար Լույսեն առաջ, Արարչագործութենեն առաջ կար Քաոսը, որուն ծոցին մեջ կծփար մենավոր սկզբնական տարրը, Ջուրը։ Եվ ես շիթ մըն եմ Քաոսեն։*

Ծիծաղը *այլևս չպատասխանեց։*

Դ.

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՔԵՐԹՎԱԾԸ

Ո՞վ երբեք պիտի կարենա պատմել այն բոլոր հրապույրը կամ բոլոր այն արհավիրքը, որ պատուհանի մը չորս գիծերուն մեջ կբնակին։ Անիկա աչքն է, ուր տան մը հոգին կցոլանա։ Ու երբեմն ան կդառնա խորհրդանշան մը, ուր կյանքի մեկ ամբողջ երևույթը կընդերևա։

Տեսեք սա խրճիթի պատուհանը։ Պզտրտիկ է ան։ Որդնոտած է անոր փայտը և ապակին փոշիով ծածկված։ Վարագույր չունի։ Ինչ որ հոն մերթընդմերթ կտեսնվի, զառամ պառավի մը չորցած գլուխն է կամ ցնցոտիներ հագած տղեկի մը դժգույն դեմքը։ Թշվառության նայվածքն է ան։

* * *

Հրդեհն անցեր է սա տունեն, և իր կարմիր շունչը անոր մարմինը լափեր ու կմախքը միայն թողեր է։ Այդ քարե մերկության վրա, պատուհաններուն տեղ կբացվին խոշոր սև ծակեր, խորունկ ու դատարկ՝ ինչպես դիակի աչքեր։ Ավերակին նայվածքն է ան։

* * *

Ահա տուն մը, ուր դեռ նոր այցելած է սև շունչով այն կրակը, որ Մահն է։ Պատուհանները, իրենց սեփ-սև մեծ վարագույրներով, վիշտեն մթագնած աչքերու կնմանին։ Ցավին նայվածքն է ան։

* * *

Սա եկեղեցիի պատուհանը լայն է, մեծ է, մութ է։ Երբ իր ապակիներուն վրա իրիկվան ճառագայթները կցոլանան, կարծես գերբնական արևամուտք մըն է, ավելի գեղեցիկ, քան երկինքը, որ հոն կբոցավառի։ Ու երբեմն, ստվերներուն մեջեն, որ հոն կկուտակվին, կփթթի բույլ մը փոքրիկ լույսերու, որոնց շուրջ, ինչպես թափանցիկ ամպ մը, որ աստղերը կսքողե, անուշ կապույտ մուխի մը երկար գալարները կպարզվին։ Անդենականին նայվածքն է։

* * *

Ի՜նչ փայլ, ի՜նչ շքեղություն այդ պատուհանին մեջ, որ կարծես շենքին մարմնույն վրա փթթած ծաղիկ մըն է։ Արվեստագետը քանդակագործության բոլոր զարդերն անոր վրա թափեր է, ու վաճառականը մարմարներու ազնվագույնն ու բյուրեղներու մաքրագույնը տվեր է անոր։ Փայլուն թափանցկությանը մեջեն անոր ապակիներուն, մետաքսի ու ժանյակի ամպ մը կծածանի։ Փարթամության նայվածքն է։

* * *

Ահա պատուհան մը բանտի. նեղ ու խավարտչին ծերպ մը, թանձր պատի մը մեջ փորված, երկաթե հաստ ձողերու ցանցով մը ամրացած։ Ապակիի կտորին ետև, զոր կմառախլապատեն սարդի ոստայններն ու փոշին, կտեսնվի ահռելի դեմք մը, որ անոր փակած է, գիսախռիվ խոշոր գլուխ մը կնճռոտ ճակատով, արյունոտ ու պաղած աչքերով և անզոր կատաղության գժնդակ արտահայտությամբ մը։ Հուսահատության նայվածքն է։

* * *

Պատուհանը երբեմն պարտեզի մը երևույթը կստանա։ Պատատուկը կամ որթատունկը իր կանանչ, քմահաճ ժանյակներով անոր շրջագիծները կհագվեցնե։ Ծաղկի թաղարներու շարք մը երփնագեղ կյանքով մը կլեցնե անոր պարապությունը։ Եվ այդ կանանչությանց և այդ ծաղիկներու մեջտեղեն կշողա, ինչպես գարնանային լուսինը վարդերանգ սատափե ամպիկներու մեջտեղը, թարմ ու ժպտուն դեմքը մը աղջկան։ Նայվածքն է Շնորհին։

* * *

Բայց երբեք պատուհանն այնքան վրդովիչ չէ, որքան գիշերը, երբ փակ վարագույրի մը ետև լույսի կաթիլ մը կդողդողա հոն, եկրավոր ա՜ստղ, զոր կպաշտեն բանաստեղծը, ուղևորն ու սիրահարը։ Այդ կարմիր քառակուսիին ետև ի՞նչ կանցնի. թշվառությո՞ւնն է արդյոք, որ հոն կգունատի. սե՞րն է, որ կժպտի հոն. ոճի՞րն է, որ հոն դեմքը կխոժոռե. հանճա՞րն է, որ այնտեղ աշխարհ մը կստեղծե։ Նայվածքն է Խորհուրդին։

•

Ե.

ԿԱՊՈՒՅՏԻՆ ՏԱԿ ՍԵՎ

Վաղուց սիրեցի ծովը, որուն սյուքը մեր հոգին կխաղաղե, որուն կոհակները վսեմ երգեր կհնչեցնեն և որուն ծոցին մեջ կփթթին, ինչպես լուսափայլ շուշանները ջուրերու այդ մեծատարած պարտեզին, սպիտակ որորները։

Երկրիս աչքն է այն լեցված անհուն ծավի արցունքով մը, և որուն նայվածքը հավերժապես երկինքին է հառած։

Երազի մը պես կապույտ, օրրան գեղեցկագույն երազներուն, ինքն իսկ մարմնավորված երազ մըն է վիթխարի։

Բայց այն օրն, ուր միտքս, անոր ծիծաղկոտ դեմքը զմայլանքով դիտած ատեն, անոր մինչև խորքերը սուզեցավ ու տեսավ պողիպոտները, օձերն ու բյուր նհանգները, որ հոն կզեռան, և ընկղմած նավերու բեկորներն ու խեղդված մարդոց ոսկերոտիքը, և բոլոր այն արհավիրքները, որ ծածկված կմնան անոր գեղաճաճանչ մակերեսին տակ, այդ օրը ծովուն համար իմ ունեցած սպաշտամունքս ցավագին սոսկումով մը թունավորվեցավ, որովհետև հասկացա թե անոր սիրտն այնքան նենգավոր է որքան դեմքը գրավիչ։

* * *

Աչքերուդ կապույտը, քնքո՜ւշ աղջիկ զոր կսիրեմ, ծով մըն է, ուր նայվածքս կլողա, ուր սիրտս կնավե։ Ան ավելի մանր է, քան խաղաղ լճի մը ամենեն փոքր ալյակը, այլ քան օվկեանն իսկ ավելի խոր է։ Ո՜չ զեփյուռ ունի, ո՜չ որոք, ո՜չ երգ. հոն միայն կտեսնենք քու մտածում-

ներդ ու երազներդ, որ լռիկ կանցնին տարտամ ու անորոշ, նման խուսափուկ ու անշրջագիծ ստվերներու, կամ ինչպես սպիտակ առագաստները, հազիվ նշմարելի, որ հորիզոնին վրա կսահին։

Արդ երբեմն անձկությամբ կխորհիմ, որ եթե կարենայի սուզիլ խորագույն հատակը քու աչքերուդ այդ կապույտ անդունդին, թերևս հոն օձեր ու պողիպոտներ, նավաբեկված սիրտերու բեկորներ ու հեղձամահ սերերու կմախքներ պիտի գտնեի...

•

Ր

ՉԵՈՓԼԻՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌԸ

Չեոփլիքը,— Թաքսիմի հրապարակին ետևը սմքած ցած, նեղ ու խորտուբորտ ձոր մը, որ իր երբեմնի աղբանոցային վիճակեն պահած է այդ անունը, ամեն տարի Զատկի երեք օրերուն արտասովոր ոգևորությամբ մը կեռա։ Խուժանն իր քեֆը կնե հոն, և խուժանին քեֆը տունն տուն պտտելով հինգ վայրկյաններց պզտիկ անհամ հաճույքներ ժողվող ու նեղ հագուստներու մեջ բանտարկված շիք պարոններու հաճույրին չի նմանիր. անիկա բացօթյա տեղ, երկնքին տակ, հողին վրա լայնորեն կտարածվի ու բուռն բան մը ունի, ամբողջ պոռթկում մը ուրախության, որ լացնելու չափ տխուր է խորհողին համար։

Նեղ ու անհարթ ճամփա մը, բլուրին ստորոտը, մեկ կողմե տնակներու ընդհատ շարքով մը եզերված, դատարկապորտներու թողած գարշահոտությամբը տոգորված, կտանի Չեոփլիքը։ Ճամփուն կեսին, խուլ այլ հարատև ժխոր մը կսկսի լսելի ըլլալ. ժխոր մը, որ ամբոխին շնչառությունն է զոգցես և որուն մեջ կորոշվին հարիշներուն հնչուն ապտակները թմբուկին պիրկ մորթին վրա և զուռնային ռնգային սրագոչությունը, որ կփորե ընդհանուր խժուքը։ Քանի մը քայլ ալ, և վրաններ կերևան, մեծ ու պզտիկ, բազմաթիվ, աղոտ կանաչ կամ գորշ կտավով, իրենց լայն կողերը գետինը տարածած, իրենց սրածայր կոնաձևը տընկած։

Վերը, բլուրին ալեձև կորացումները կզարդարվին դիտող մարդոց երկայն անկանոն ժանյակով մը, ժանյակ, որ երկնքին փայլուն կապույտին վրա հստակորեն կնկարվի սեփ-սև։ Բլուրին կողերուն վրա՝ երկու երեք շարտաֆներ, որոնց շոր տերևներե կազմված ծածկույթին ծայրերը կարմիր դրոշներ կծածանին, հետաքրքիրներու հանդարտ բազմություն մը կհովանավորեն, բոլորն ալ էսնաֆ ընտանիքներ, մեծ մայրեն սկսյալ մինչև թոռնիկները, հեռու տեղերե եկած փանայիրը տեսնելու համար։ Վարը, պզտիկ վրաններու տակ առժամանակյա խանութներ հաստատված են, ուր կծախվին ջուր, լիմոնատ և օշարակ, աղտոտ ճերմակ ջուր մը, պղտոր դեղինով լիմոնատ մը, ներկի կոշտ կարմիրով օշարակ մը, տախտակե սեղաններու վրա երեք խոշոր կոնքերու մեջ լցված, որոնց առջև կշարվին երկայն ու նեղ գավաթները, սառի մեծ կտորի մը քով ու աղտոտած ճերմակ գուլպայի գույն ունի։ Ասդին անդին, պաղպաղակի տուփեր, որոնցմե երկննալով դուրս կելլե ճերմակ մածուցիկ նյութը որ կզովացնե, լոֆմայի թապլաներ, ուր պզտիկ կլոր յուղոտ գնդիկները կշողան կպչուն փայլով մը, մանալլեպիի սեղաններ, ուր ջերմակ լույծ կլորները կփռվին թաց տախտակին վրա, կաթնապուր, անուշապուր, տեսակ-տեսակ շաքարեղեններ, տեղ մը՝ ամբողջ շենք մը շաքարե, որ մաս առ մաս կքայքայվի, և զանազան խմորեղեններ ու պտուղներ։ Այդ բոլորն ալ իրենց շուրջ գնողներու խմբակներ ունին, վասն զի չափազանց աժան են, և այդ օրը մարդ օգուտ պետք է քաղե ֆելեֆիրեն, մանավանդ պզտիկները, որոնք այդ աղվոր բաները լափելե հետո ամաններն ու մատվներնին ալ կլզվոտեն, հեռացած ատենին ըղձական տխուր նայվածք մը նետելով տուփին կամ թապլային վրա, ուր ամբողջ երանություն մը կա իրենց ստամոքսին ու սրտին ալ համար, որովհետև այդ հասակին մեջ սիրտն ու ստամոքսը մեկ են։

Տեղ-տեղ, մարդ կշռող գործիքներ, կամ հիմար խաղեր, որով ստակ կշռոթեն։ Մեջտեղը մեծ կոնաձև ծածկույթի մը տակ, փայտե ոլորտիկ անասուններու և կառքերու բոլորշի շարք մը, որ կդառնա անդադար, ուրախութենե խենթեցնելով փոքրիկ տղաքները, որոնք՝ իրենց կեղծ հեծանելիքին վրա սրունքներնին պինդ բռնած՝ կխնդան իրենց շուրջը խռնված դիտողներուն։ Քիչ մը հեռուն, երեք-չորս կախաղաններ, ուր երբեմն ամբողջ ընտանիք մը կլեցվի, օդին մեջ կտատանին, գլուխներու, հագուստներու, խառնամառն գույներու համաչափ ելևէջներով, գլխու պտույտ ունեցողներու խնդուքը, վախցողներու ճիչերն ու հաճույք զգացողներու երգերն ալ իրենց հետ տարուբերելով։ Մերթ, մարդոց վխտացող կույտերուն մեջեն, տարօրինակ դեմքով ու տարօրինակ հագուստներով կնիկներ կանցնին, դեմք ու հագուստ կոշտ ու վառ գույներով, մազի պզտիկ ջրվեժն իրենց ճակատն ի վար, սիկարեթ մը իրենց ականջին վերև, աչքերուն խորը ապականության ձգողությունը և շարժումներուն մեջ լրբության խրոխտ համարձակությունն ունենալով, իրենց ճամփուն վրա կողանքի սարսուռներ ցանելով։

Քիչ մը հեռուն, անկյուն մը, վրանի մը առջև, որուն ներքսակողմին սևության վրա պատկերը հստակորեն դուրս կցայտքե, խումբ մը պան-

դուխտներ կպարեն հալիքճտան կամ ձեռնապարը, ի ձայն գուռնայի խլացուցիչ զոնչյունին, որ խցված քիթե մը գոգցես կելլե, քանի մը անփոփոխ եղանակներու վրա մշտնջենապես գարձող եղանակ մը մոմռալով, նրո նա նա նա, նրո նա նա, թմբուկին թավ թփռտուքին ընկերացած։ Նախշուն գդակը գլուխին կամ ֆեսը, որուն երկայն ծոպը յազմային տակեն մեկ ուսին վրա կկախվի, բեռնակերի կամ ջրհանկիրի նկարուն համազգեստն են հագած, ոմանք իրենց թնին վրա ոսկեզօծ երիզներ կրելով իրենց ունեցած աստիճաններուն ի նշան, մեջքերնին դեղին Մուշամին բազմապատիկ փաթաթքներուն մեջ սեղմված. որմե վար լայն տաբատը կոկսի հետզհետե նեղնալով։ Ամենքն ալ լեցուն կոթովի դեմքեր ունին՝ նոր նոր ածիլված, ոլորուն խրոխտ պեխերով, աչքերնին վառ, կրակոտ, ոմանցն ալ վայրագ արյունոտ։ Հաստ և ամուր վիզերու վրա, լայն ու հուժկու ուսերու մեջտեղ հաստատված են իրենց զորավոր գլուխները։ Այդ կատաղի պարը կպարեն, եղանակին համեմատ իրենց մարմինը երկու սրունքներուն վրա տատանելով ու երկու ձեռքերնին իբարու զարնելով։ Հետո մեկ կարգը ամբողջ կխուժե դեմացի կարգին վրա, ուր ձեռքերը՝ օդին մեջ բաց բռնված՝ կընդունին ձեռքի հարվածները, որոնք կփակչին ահագին շառաչյունով մը։ Հարվածները տվողներն ու ընդունողները ամենքն ալ մանկական զվարթությամբ մը կցատքեն. ընդունողները անվախ անհոգ կսպասեն, արհամարհոտ ծիծաղով մը կնային զարնող ձեռքին, և հարվածը տվողներն իրենց բոլոր ուժը կթափեն կարմրցնելու իրենց առջև բացվող ձեռքը։ Եվ ասիկա կշարունակվի անդադար, ժամերով, առանց ձանձրույթի ստվերն իսկ տալու խաղացողներուն, հետզհետե ավելի գրգռելով զանոնք, հիմարություն մը, մոլեգնություն մը դառնալով հետզհետե, հակառակ ճակատներուն որ կփողփողին, կուրծքերուն որ կհևան և երեսներուն ու ձեռքերուն որ կարմրությամբ կվառին։ Որովհետև ատիկա մոռացումն է երեկի հոգսանության ու վաղվան տվայտանքին, հաճույք մը, որ սակայն տառապանքի կնմանի, անսանձ ու միամիտ զեղում մը կատաղության, խենթության, տղայականության։ Ատիկա ուժի մսխում մըն է՝ ոչ ասոր անոր համար, ոչ հացի փարա հանելու համար, այլ քմահաճույքի, զվարճության, քեֆի համար, իրենց առօրյա հոգերը, տաղտուկները, ցավերը մոռնալու համար, վերջապես իրենց սեփական անձին, հոգիին, կյանքին համար։ Ատիկա,— այդ սրունքները որ կերերան, այդ ձեռքերը, որ իրար կծեծեն, այդ խոշոր դեմքերը որ իրենց քրտինքներուն մեջեն կխնդան, և այդ նրո նա նա նան, որ կոնգաձայնե,— ատիկա՝ երջանկությունն իսկ է իրենց համար։

Պարին շատ մոտ, տնակի մը առջև, ուր փոկեր ի տես դրված են,

լաբեռնա մը իր հեշտաթավալ ճովողումը կճլվլա, իր մեղմահոս անուշ ձայնալյակներուն հետ մեռաղյա հնչուն խաղերու զվարթ ոստոստումը քշելով տանելով։ Տնակին դրան վերև՝ պատկեր մը, ծիծաղաշարժ կոշտությամբ նկարված կներկայացնե կանոնավոր ալիքներով ծովի մը մեջ բանի մը խոշոր փոկեր, իրենց ցցված ակռաներով ու քաուչուկի նման մարմնով, նավու մը մոտ, որուն նավաստիները, յուրաքանչյուրը նավուն կեսին չափ, դեղին աձև մարդիկ, անասունները կորսան նետերով, որոնք նավուն չափ խոշոր են։ Եվ փոկերն ի տես դնողը իր կոկորդին բոլոր ուժովը կպոռա անցորդները ներս հրավիրելու համար, աներևակայելի հատկություններ վերագրելով իր կենդանիներուն, հետաքրքրություն արթնցնել ջանալով առանց հաջողելու։

Բայց տոնին հոգին կխտանա երեք կեդրոններու մեջ, երեք պզտիկ շարժուն, կրկեսներ, ուր ժողովուրդը կխռնվի, մարիֆեթները տեսնելու համար, մարիֆեթները, որոնց վրա օրերով առաջ իրարու խոսած են արդեն, տեսնողներուն պատմվածքեն գրգռված, իրենց երևակայությամբը լսածին չափազանցելով, ու սպասելով տարօրինակ, հրաշալի բաներ տեսնելու։ Երկուքը ընդարձակ վրաններ են և մին տնակ մը, երեքն ալ իրենց մուտքի դրան վերև ունենալով պատկեր մը, որ կներկայացնե ճարտարարության խաղեր, մարմնամարզի գործիքներ, աղջիկներ, որ շրջանակներու մեջեն կանցնին, օդին մեջեն սլացող մարմիններ, սանդուղներու վրա գլխիվայր իջնող մարդիկ, բոլոր անկարելիությունները իրականացած։ Պատկերին տակ, չորս հենարաններու վրա հաստատված ամրակազմած մը, ուր փայտե սանդուղով մը կելլվի և որուն վրա ներսը կատարվելիք փորձերուն նախաճաշակը կուտան՝ անցորդները հրապուրելու համար։ Հոպիաը, գլուխը՝ ճերմակ կամ կարմիր գդակ մը, իր դասական ճերմակ լայն հագուստները կկրե, թույլ կարճ տաբատը՝ որուն եզերքները բոժոժներ կկրեն, և կարմիր երկայն կոշիկներ։ Ալյուրոտ երեսին կեղծ դալկության վրա քիթին ու հոնքերուն լեզակագույն արատներն ու շրթունքներուն արհնավատ կարմրությունն ունի և հեգնական շարաճճի խնդուք մը ամբողջ դեմքին վրա տարածված։ Թակի մը կոթը ծնծղայի մը զարնելով կկանչե, կժողովե բազմությունը, ձեռքով ալ, խոսքերով ալ, ծամածռություններով ալ հրավիրելով զայն։ Իր քով կան աճպարարն ու անոր օգնականը, երկուքն ալ ֆանելյով իրանին ծածկած և պնդավարտիքի մեջ սրունքներնին կաղապարած, պզտիկ մարմնամարզիկներ՝ մարմնույն փակած հագուստով, որոնք իրենց բոլոր անգամները քուրջի պես կծռմռակեն, ձոզերե վեր կշուլվին, ճպարարին մեջքին կպլլվին սավանի մը պես։

Գլխավոր հրապույրը, սակայն կիներն են. յուրաքանչյուր խումբի

մեջ մեկ կամ երկու պարուհիներ, մաղերնին ուսերն ի վար ձգած, գլուխնին ոսկենիշ և արծաթածոպ գդակ մը, ծաղիկ մը կամ մետաղե զարդ մը կրելով, դեղին, կարմիր կամ կանանչ շրջազգեստ հագած, կարմիր կամ վարդագույն գուլպաներով, որոնց վրա կարմիր երիզ մը կփաթթվի, և կարմիր զարդարուն մուճակներով։ Վարը, դրան առջև, պզտիկ նվագախումբը,— երեք շեփոր, մեկ նրբասրինգ, մեկ թմբուկ,— աղմկալից եղանակներ կհնչեցնե, ամբոխին դիմացը, որ հետզհետե կխռնվի, աճպարարն իր խաղերը կկատարե,— ձեռնածության փորձեր, պարապ գլխարկի մը մեջեն տասնհինգ գլան հանել, բերնեն անվերջանալի գույնզգույն դերձան մը քաշել դուրս, օղակներ իրարու մեջ անցնել ու շղթա կազմել ահագին արագությամբ, նարգիլե մը ափին մեջ ու ձեռքին վրա, կամ բազուկին, հետո կոնակին վրա պտտցնել։ Հտպիտն իր վարպետությունը կցուցնե, իր բոլոր սիրուն խոսքերն ու իր անդիմադրելի ծամածռությունները, զավեշտական սափրիչություն մը մեծդի ժանգոտ մկրատով ու բութ խոշոր ածելիով, պզտիկ կատակերգություններ օգնականի մը հետ չափազանցյալ թյուրիմացություններե առաջ եկած շալիկ տեսարաններ, շմոռնալով մեկ քանի ավանդական ծիծաղահարույց շարժումները, օրինակի համար՝ մատը պարուհիի մը մարմնույն դպցնել ու հետո լղվռտել զայն որկրամոլի հրճվանքով։ Պարուհիները, ձեռքերնին շնորհալի ճոճումներով օդին մեջ կերերցնեն, և միջամատին ու բթամատին հանրածանոթ շփումը կրկնելով անդադար՝ ոտքերու արագ ու ճարտար շարժումներով կպարեն, մին ծուտ դար՝ ոտքերու արագ ու ճարտար շարժումներով կպարեն, մին ծուտ ծամելով անընդհատ, ուրիշ մը խոսք կամ ժպիտ նետելով մոտը գտնվողներուն ու հեշտության սարսուռ մը պատցնելով աչքով զիրենք լափող ամբոխին մեջ, սիրելու պետք մը և վայելման տենչանք մը արթնցնելով, մինչ բազմության մեկ անկյունը կորսված միամիտ մըն ալ անշուշտ, բանաստեղծի հիվանդ խառնվածքով, խորունկ ու անթարգմանելի հուզմունքով մը ցնցված՝ ի տես այդ կանացի վարդ մարմիններուն, որոնց վրա իր երազած հավերժահարսերու և հուրիներու ցոլքը կկարծե տեսնել, ատոնց կարմիր մանրիկ մուճակներուն տակ կոխկըրտվելու թաքուն իղձ մը կղդա իր մեջ։

Ու դիտողները չքավոր մարդիկ են ամենքն ալ, բեռնակիրներ, բաղնեպաններ, ջրհանկիրներ, գործավորներ, աղքատ կնիկներ իրենց զավակներով, որոնք հասարակաց զվարճության այսպիսի օրերու կսպասեն՝ մութի մեջ անցած իրենց կյանքին կուտակված ձանձրույթը թոթվելու համար։ Գնչուներ ալ՝ մեծ քանակությամբ, արևակեզ սև չոր դեմքեր՝ ածիլված կամ խոշոր ազատ մորուքով ու ցից պեխերով։ Ամենքն ալ՝ ունեցած նոր զգեստին հագած, ամեն գործ ու մոմոուք

թողած, կյանքը մոռցած՝ զբոսանքի մեջ տապլտկելու համար, այդ խեղկատակություններեն կխնդան տղու պես, կոկորդալիր, անբռնազբոսիկ, լայն խնդուքով մը։ Հետո, զմայլանքեն ապշության կանցնին ի տես այդ անընմրոնելի ճարպկությանց, չանալով մեկնել զանոնք և հասկնալ անոնց գաղտնիքը, և իրենց ճիգերուն ամլութենեն հաղթված՝ սքանչացման հայհոյություններ արձակելով այդ վարպետներուն երևսն ի վեր։ Ներսը, վրանին մեջ, նույն բաներն են որ կտեսնվին, նորեն պզտիկ կատակերգություններ, պարեր, աճպարարի խաղեր, մարմնամարզի քանի մը փորձ ավելի։ Ու մտնողները դժգոհ կելլեն դուրս ու իրենց հետաքրքրությունը կանիծեն, որ դուրսը տեսնվածով չի գոհացներ, կորսված ստակը կմեղքնան։

Երեքշաբթի օրը, իրիկվան դեմ, վերջացավ փանայիրը, կրկեսները վերջին ներկայացումը տվին, ու հետո փայտոսի աղաղակը բարձրացավ, տարածվեցավ, եղերերգի մը պես թախծագին, ու փակեց տոնը։ Այդ բոլոր բազմությունը հատիկ-հատիկ, կաթիլ առ կաթիլ սկսավ ցրվիլ, ցնդիլ, հատնիլ, ոմանք հոգնած, հագեցած, գրեթե ձանձրացած, ուրիշներ՝ հաճույքի, ուրախության լիություն մը, քանի մը աղվոր օրեր անցուցած ըլլալու գոհունակությունը տանելով իրենց սրտին մեջ. ու պզտիկ տղաքը՝ իրենց իղձերու անհագության մեջ՝ տոնին ա՛լ լմնցած ըլլալուն տխրությամբը համակված, հետսահայաց տրտում, գրեթե ցավագին նայվածքներով կհեռանան այդ տեղեն։ Քայքայում մը սկսավ այն առեն, մահվան մը չափ կսկծեցուցիչ, քայքայումը հանդեսի կազմվածքին, վրանները որ կքակվին, կախոցանները որ տեղերնեն կհանվին, ուտելիք ծախելու համար հաստատված սեղանները որ կտարվին, կմախքն իսկ այդ տոնին որ կտարրալուծվի, կանհետանա։ Քանի մը ժամ հետ, Զեոփլիքը գրեթե թափուր էր ու գրեթե անձայն, շարտաֆներն ու քանի մը վրանի մնացորդներ միայն պահելով, մերկացած իր կենդանությենեն, հրդեհավայրի մը պես տխուր ու ամայի դարձած, տխուր, անսահման ուրախությամբն ավարտած երջանկության մը, որուն ետևեն կցցվի հանապազօրյա կյանքի անխուսափելի վաղորդայնին ցուրտ ու ճնշիչ պատկերը։

ԼՈՒՍՆԻՆ ՏԱԿ

Երկնքին անհուն դաշտին մեջ, ուր հազարներով կծաղկին աստղերուն ոսկի մանուշակները, արծաթե մեծ վարդը բացվեր է, լուսնին վարդը, որ ցողուն չունի և որ բույրի տեղ լույս կաթուաշնչե։

Հեռուն, հորիզոնի վրա, ուր երկինքն ու ծովն իրարու կդպչին, հսկա մատ մը՝ շուշաններու սպիտակության մեջ թաթխված, լույսի ճերմակ գիծ մը քաշեր է, ճերմակ կակուղ գիծ մը, որ կերկարի՝ ծովը եզերող լուսաշող անծայր ճամբու մը նման։

Թեթև, սպիտակ մշուշ մը, կարծես շունչը ծովուն, կալեծփվի, լուսինեն մեղմիվ արծաթազօծած ջուրին վերև, անուրջի համր օրորումով մը։

Օդին մեջեն, ուր ստվերը, լույսով հագեցած, սիրով ծանրաբեռն սրտի մը նշողումն ունի, ինչպես մեծ շունչ մ՝անուշահոտ՝ կանցնի սիլելու տենչը։ Եվ անոր հպումին տակ, խոտերուն մեջ կսաթսան ծաղիկները, ծովուն մեջ կդողդղան ալյակները, լույսով ողողված տերևներուն մեջեն թռչունները կդայլայլեն, և իրենց պատուհանին կրթնած կույսերը, վրդովված կերազեն։

Կույսերը հիմա վրդովված են։ Կզգան խորհրդավոր ձեռք մը, որ իրենց սրտին դեռ փակ դռները կբանա. և դատարկ ստվերին մեջ որ հոն կծածանի, հանկարծ կարթնանա գեղգեղանքն անծանոթ թռչունի մը, որ կդայլայլե երգ մը ավելի քաղցր քան սոխակինը, և հոգեկան լույսի մը ճառագայթները հոն կթափանցեն ու կծավալին, լույսի մը, որ ավելի անուշ է քան լուսինը, բայց որ կայրե։ Եվ համակված, արբեցած՝ հեշտության լրությամբ մը, որ իրենց կուրծքը կուռցնե և իրենց երակներուն մեջ կենսական հույզը կեռացնե, կույսերը հիմա խորապես վրդովված են։

Վերը, կապույտ դաշտին մեջ, ուր կշողան անթիվ ոսկի մանուշակները, իր լուսեղեն մոգիչ ծիծաղով կխնդա լուսինը, աթոռին վարդը, ուր սիրո իսկությունը կբնակի, և որ, իր փաղփաղուն փառքին մեջ փրռված, կհրմվի, մեծ անգութ վրդովիչը, մեծ բարի մեղսակիցը։

ՍԵՐԸ

Ա.

— «Զիս պիտի սիրե՞ս միշտ»,— ըսավ շուշանը՝ առտվան պայծառության մեջ իր թարմ սպիտակությունն օրրելով։

— «Հավիտյա՛ն»,— հծծեց թիթեռնիկն իր երփներանգ թևերը շարժելով։

Ու զեփյուռը, որ կանցներ, խնդաց տրտմորեն։

Թերթերը թուլցած ու մորթը ճմրթկած, իրիկվան ստվերներուն մեջ՝ շուշանը կկախվեր մեռած։

Տղու մը քարեն ճզմված, թիթեռնիկը անշարժ գետինը պառկած կմնար։

Ու զեփյուռը, որ կանցներ, խնդաց տրտմորեն։

Բ.

Լայն բացված ու երիտասարդ սրտի մը պես կաս-կարմիր վարդի մը մեջ ընկղմած, մեղու մը երկար համբույրով մը կծծեր տրբեցությունը, որ կթաքչի բուրումնավետ թավիշե այդ փոքրիկ դրախտին մեջ։

Ու զայրացած, ինչպես կզայրանա մարդ տեսնելով ագռուկ մը, որ աղվոր աղջկան մը արյունը կծծե, մոտեցա մեկդի հրելու այդ անհոգ ու անգութ սիրահարը։ Բայց իր բուրումին մեջեն, որ նոր սիրել սկսած կույսի մը շունչն է կարծես, հառաչով մը ծաղկին թերթերուն մեջ անցած, վարդն ինծի ըսավ.

— «Մի՛ բաժներ զիս անկից, որ իմ կյանքս է և որ իմ մահս պիտի ըլլա։ Իմ դահիճս է ան և իմ սիրականս։ Այն ըսպեսն իսկ, ուր լույսին բացվիլն ղգացի՝ անոր ոսկի համբույրը կերազեի, և անոր համար է, որ հավաքեցի իմ թերթերուս բոլոր հույզն ու հոգվույս խունկը բոլոր։ Իմ ծոցս անորն է, իմ սիրտս անորն է, իմ արյունս անորն է։ Կզգամ, որ իր համբույրին տակ կյանքս իսկ է, որ կքամվի, բայց այս համբ ու հեշտագին ապառումը իմ երջանկությունս է։ Կուզեի անհատնում մթերքներ ունենալ հույզի և բուրման, որպեսզի դարեր ու դարեր իմ ծոցիս մեջ կարենայի պահել իմ սիրականս ու իմ դահիճս»։

Գ.

Իր կանանչ տերևներուն վզնոցին մեջեն վեր ցցելով կարմիր տամուկ խոպոպներով լի կլոր գլուխը, վարդ մը, առավոտյան զեփյուռին տարփատենչ գգվանքներուն տակ սարսռալով, կերազեր։

Եվ ահա, իր մանրիկ թևերուն կարմրապիսակ ճերմակութիւններն երերցնելով, եկավ թիթեռնիկն իր սիրուհիին քով։ Ու բարի արևին տակ, որ ամեն բան կներե, բաց օդին, համարձակ, որպես թե խուցի մը մեջ ըլլային,— ծաղիկներն ու թիթեռնիկները ամոթխածութիւն չունին,— թիթեռնիկն իր թիթեռնիկի լեզվով ու վարդն իր վարդի լեզվով երկայն ատեն իրարու ըսին բոլոր այն խենթ բաները, զոր կըսե մարդ՝ երբ կսիրե։

— Եկո՛ւր,— կհառաչեր թիթեռնիկը,— եկուր ինծի հետ օդին մեջ, իրարմե միշտ անբաժան, անցնինք դաշտերուն վրայեն, ծառերուն վրա թռինք, ջուրերուն վերև թռչինք, եկո՛ւր...

Ու անիծելով իր ցողունը, որ ղինքը հողին կկապեր, վարդը լացավ թևեր չունենալուն։

Դ.

Գարնան վճիտ օդին մեջ, ուր հոտավետ շունչեր կհածին, թիթեռնիկներն իրենց գույնզգույն թևերը թոթվելով կթռչտին սեր փնտրելու։

Մարմանդին մեջ, իրենց առավոտյան արդուզարդն ըրած, ծաղիկները, բարակ վիզերնուն ծայրը իրենց փափուկ գլուխը շնորհալի նազանքով ճոճելով, կսպասեն։

Ուղտափուշերը, զազրատեսիլ, կմտմտան։

Եվ այնքան գեղեցիկ են մայր երկրին այդ գեղեցիկ զավակները, իրենց առավոտյան արդուզարդին մեջ՝ այնքա՛ն գեղեցիկ, որ թիթեռնիկները շվարած՝ չեն գիտեր, ո՛րն ընտրեն։

Վարդն իր վարդի գույն շրջազգեստն է հագեր, և շուշանն իր շուշանի գույն քողն է վրան առեր։ Մանուշակն իր մանուշակի բույրը կարձակե, և կակաչն իր կակաչի ծոցը կբանա։

Ուղտափուշերը, մենիկ ու լքված, անշարժ կկենան։

Զեփյուռը կանցնի, ծաղիկները կսարսռան, ու, երփներանգ ձյունի հատիկներու պես, թիթեռնիկները կտարտղնին այդ սիրո ծոցերուն վրա, որ իրենց կսպասեն։

Եվ անուշաբույր արբեցության մը մեջ, լռին, օդին ծաղիկներն ու ծաղիկները հողին՝ իրար կպագնեն։

Ուղտափուշերը, հուսահատ, կարտասվեն։

ԵՐԳԵՐ

Ա.

Գարնան աղվոր եղանակին, գարնան մատաղ եղանակին, կփթթին բոլոր թարմութիւնները և կարթննան բոլոր թարմ ձայները մատաղ սիրտերուն։

Կլսե՞ս, սիրելի՛ս, մաքուր ցայգանվագը, զոր տերևազարդ ծառերուն ստվերին մեջեն սոխակը կթռցնե, ու ծովուն տարփակեզ համանվագը կլսե՞ս։

Ո՞վ ինծի պիտի տա լուսեղեն ձայնն աստղերուն, որ անհունին մեջ հավերժական Սիրո տաղը կերգեն և անուշահոտ գորովալի քնքուշ ձայնը ծաղիկներուն, որ կգեղգեղե մեղմիկ օրրերգ մը՝ հոգվույն միայն լսելի, և բոլոր այն թաքուն ձայները, որ խորհուրդը կերգեն, որպեսզի պատմեմ Գիշերին, թե որչա՛փ քեզ կսիրեմ։

Բ.

Կանանչ զմրուխտի կանանչով մը, հույսի կանանչով մը, դաշտերը կփռեն իրենց փայլուն թավիշը, ուր ցողի կաթիլները կկայծկլտան և զեփյուռն իր խուսափուկ սարսուռը կպատցնե։

Ու կարմիր, հրավառ կարմիրով մը, այդ մատաղ կանանչին վրա կժայթքին կարմիր հարսնուկները, ինչպես սիրով խոցված աստվածի մը սրտին արյունի անթիվ կաթիլները, որ կարծես երկինքեն ինկած են հոդ։

Եթե գայիր սրտիս մեջը նայիլ, պիտի տեսնեիր, ո՜վ սիրելիս, մարդ մը կանանչ, ինչպես զմրուխտը, և կանանչ, ինչպես հույսը, զոր քու գողտր ժպիտդ հոն փթթեցուցած է և այդ կանանչին վրա՝ խոշոր կարմիր կաթիլներ, արյունի կաթիլներ, զոր քու անգութ քմահաճույքդ ցանցնած է հոն։

Գ.

Ինչքա՜ն երջանիկ են թռչունները, որ թեթև օդին մեջ կպատցնեն իրենց ազատ տարփանքները։

Ո՞վ մեզ պիտի ազատե հողին գամված այս թանձր ու ծանր կյանքեն։

Դուն պիտի վեր ելլեիր, ո՜վ սիրելիս, լույսին տակ խաղտացնող

գույներով մեծ թներդ պարզելով, պիտի մեղմորեն ելլեիր դեպի արևը՝ առտվան թարմ սպիտակությանը մեջ, և ես, շլացած այն ոսկի ակոսեն, զոր քու թռիչդ օդին մեջ պիտի գծեր, քաշվելով ու արբենալով քու լուսաճաճանչ ու թեթև մարմնույդ ծփծփուն շնորհեն, վճիտ միջոցին մեջեն քեզի պիտի հետևեի։

Օ՜հ, համբույրը՝ մաքուր երկնքին անծայր մենության մեջ, կապույտ սեմին վրա Անհունին։

Դ.

Քեզի փունջ մը քաղելու համար դաշտը գացի, ու ծաղիկներուն վրա ծռեցա, առավոտյան լույսին տակ ցողով փայլփլացող մատաղ ու գեղեցիկ ծաղիկներուն։

Բայց խեղճ պզտիկ ծաղիկները, մատներուս ծայրը մահը տեսնելով, ինծի ըսին, աչքերնին արցունքով լեցված, ու այն իրենց մանրիկ փափուկ ձայնովը, զոր մարդ ավելի կզգա քան կլսե.— «Մեր վիզը մի՛ կտրեր։ Այս բարի արևին տակ ապրիլը այնքա՜ն անուշ է, ու զեփյուռն այնքա՜ն քնքշությամբ մեզ կհամբուրե։ Դեռ շատ մատաղ ենք և կուզենք դեռ ապրիլ ու սիրել։ Մեր վիզը մի՛ կտրեր»։

Քու անունդ տվի անոնց, ո՜վ սիրելիս, և ըսի.— «Ձեզ անոր կուրծքին վրա պիտի դնեմ, ձեզ անոր մազերուն պիտի խառնեմ»։

Այն ատեն, ուրախության սարսուռով մը շարժեցան անոնց թերթերը, և անոնք հոժարակամ իրենց վիզը երկնցուցին ինծի։

ՊԱԼԸՔԼԸԻ ՓԱՆԱՅԻՐԸ

Մեծատարած ու ակնապարար դաշտերու մեջեն առաջացող ճամփա մըն է որ Ետիքուլեեն կտանի Պալբքլը։ Արտեր, բանջարանոցներ երկու կողմը կփռվին, լայն, իրենց բերքերուն հորդությամբը հարուստ։ Ավելի հեռուն, կանանչ խոտերով ծածկված ընդարձակ տարածություններ երևան կելլեն, երկարելով մինչև հորիզոնը, ուր շարք մը պզտիկ-պզտիկ ծառեր կքնանան կծկված, միապաղաղ զմրխտաթույր սփռոցներ, որոնք արևին լույսին տակ ավելի փայլուն, ավելի գգվող գույնով մը կոգևորվին, երիտասարդ կենդանի կանանչ մը, որ սիրելու փափագ կուտա։ Ու նեղ ճամբան, դեղին ժապավեն, որ անկանոն գծով մը կեզերե այդ կանաչությունը, հողին խորտուբորտությանց համեմատ մերթ կերևա բավական տեղ՝ օձապտույտ կամ ուղիղ, մերթ կընդհատի, կանհետի՝

խոտերու տակ, ցածը։ Աջ կողմը, տեսարանը ավելի զանազանյալ է։ Տուներ, մեծ ու պզտիկ, տեղ-տեղ համախմբված, տեղ-տեղ ցանցառ, պարիսպի ու բերդի մնացորդներու ընդհատ ու երկարաձիգ շղթա մը, պատեր որ հինցած խոշոմած գեմքերու զառամություն ունին, կոտրտած կեռիքներով կիսափուլ աշտարակներ, անցյալ դեպքերու մեռնավոր հիշատակներ հանդարտիկ դաշտերու ամայության մեջ, մզկիթներ ալ՝ մեծ քանակությամբ, իրենց գմբեթներուն կապտությամբ կլոր ալիքներուն գորշությունը դնելով համայնապատկերին մեջ, իրենց նրբահասակ սպիտակ մինարեները ցցած դեպի երկինք, և ատոնց մեջ, շուրջը, վերեը, ամեն տեղ, նոճիներ,— որոնք մզկիթներուն հետ, Պոլսոյ պատկերներուն գլխավոր տեղական գույնը կազմեին,— խիտ-խիտ իրարու քով սեղմված երկայն մթին շարքերով, կամ անջատ-անջատ, իրենց սգավոր վտիտ մարմինը բարձրացնելով տուներուն մոխրագույն խառնակությունին մեջեն։

Կես օրն արդեն անցած է։ Դարնանային տեսլականորեն քաղցր օրվան մը օդը կնե։ Կենսատու ջերմություն մը կհոսի ուրեեն, մեղմիկ հովով մը մեղրավեռված։ Երկինքը մարած կապույտ մը ունի, այնչափ մարած, որ կարծես քիչ մը սպիտակություն ծծած է այն շուշանաթույր թափանցիկ ամպի ծվեններեն որ կծածանին, թեթև, փետրային։ Կանանչ դաշտերուն մեջ, դեղին ճամփուն վրա խումբ-խումբ մարդիկ իրարու դեմ կելլեն, անոնք որ կդառնան փանայիրեն և անոնք որ նոր կերթան հոն, վերջինները՝ հետիոտն, կամ ձի, էշ հեծած, ոմանք ձեռքերնին կարմիր երկայն մոմեր բռնած, առաջինները՝ ավելի բազմաթիվ։ Ամենքն ալ ավելի կամ նվազ գինով են, ամենքն ալ դեմքներուն վրա զեղուն զվարթություն մը և մարմիններուն վրա խրախճանքի հագնություն։ Ուրախության աղաղակներով ու բարձրաձայն խոսակցություններով բացավայրին լռությունը կաղմկեն։ Ոմանք կերգեն, ըմպելիքներեն խռպոտած ձայնով մը, երգեր որ կրոնական չեն և քրքիջներով կընդմիջվին. մաս մըն ալ նրբասրինգի մը կամ ջութակի մը ընկերակցությամբ կպարեն։ Անյագներ որ փանայիրը մինչև իսկ վերադարձի ճամփուն վրա կշարունակեն։

Հունաց հիմարանոցին կիսաշրջանակաձև պզտիկ պատուհաններուն մեջ, ամուր վանդակներուն ցանցին ետև, ձեռքեր կերերան, գլուխներ կերևան. խելագարներն են որ իրենց բանտին և իրենց մտքին ալ մթության խորեն կտեսնեն մեծաժխոր այդ տողանցությունն ուրախության, իրենց արտահայտազուրկ դեմքին վրա անհասկանալի ծամածռություններ նկարելով, բաներ պոռալով անցորդներուն, ձեռքով կանչելով կամ

բարեբերելով զանոնք, անակնկալորեն տխուր ու արհավրալից խաղ՝ ցնծութեան այս համանվագին մեջ։

Տոնավայրը դաշտ մըն է հարթ ու ընդարձակ, բարձր ու առատ ծառերով, որ դեռ նոր սկսած են տերևներով ծածկվիլ,— Պալըքբլի Հայոց գերեզմանատունը։ Ճշմարիտ մահաստան մը, զուրկ հեգնականորեն շքեղ դամբարաններու ղվարթութենեն, աղքատ ու տրտում, քարի կտորտանքներու ցանցնուք մը անսահման, ծուռումուռ, պառկած կամ ցից, խոշոր քարեր, խոտի տակ մասամբ ծածկված կամ մամուռով պատած, կարծես հսկա տարտղնուքը քայքայված շենքի մը փլատակներուն։

Ահագին բազմություն մը իր բիրտ ու աղմկալից զվարճությունը կփռե հոն։ Մարդկային ստվար կույտեր են որ կտատանին ու կպոռան, անընդհատ շարժում մը որմե ժխոր կծնի անընդհատ։ Եվ ինչ որ այդ ժխորն ու այդ շարժումը կկազմե,— ամբողջության վրա նետված առաջին ակնարկեն կհասկցվի ատիկա,— միշտ նույն ծանոթ բաներն են, միևնույն բաները, զոր ուրիշ փանայիրներու, ուրիշ որևէ տոնի ու խրախճանքի մեջ կտեսնենք և որ միշտ միևնույնը պիտի մնան, ցորչափ մարդը զվարճանալու պետք զգա, պար, կախօրան, կրկես, նվագարան, ուտելիք, միշտ միևնույն կատակերգությունը՝ տարբեր դերասաններե ներկայացված։ Ի՞նչ ողորմելի պզտիկ բան՝ մեր սիրտը, ու երջանկությունը՝ ի՞նչ ուրվական. այդչա՜փ քիչ բան, և այդչա՜փ ապուշ բան, որ կբավե մեզ երջանիկ ընելու, և միշտ նույն բաները՝ ամբողջ երկրագունդին, ամբողջ մարդկության, ամբողջ կյանքին համար. ու միայն այդ բաները, հիմար բաներ որ սակայն են ինչ որ կա երկնքին տակ քաղցր, ինչ որ վիշտերուն մոռացումը կուտա, մթիթարար պատրանքը՝ իր քանի մը անփոփոխ դեմքերով։

Մեծ մասամբ նպարավաճառներ, մսավաճառներ, կաթնավաճառներ, բանջարավաճառներ, մրգավաճառներ են զվարճացողները, հույն, պուլկար, ալպանացի, մաս մըն ալ հայ, ամենքն ալ շալվար, փոքուռ հագած, գլուխնին յազմայով ֆես, ոտքերնին՝ գույնզգույն գուլպա, կամ բոպիկ՝ տրեխներու մեջ։

Երեք-չորս ծառերե ձևացած շրջանակի մը մեջտեղը, տափակ մեծ գերեզմանաքարի մը վրա, խումբ մը Խովաթներ կպարեն հոգնեցուցիչ պար մը տձև ու այլանդակ։ Պարագլուխը, երկայն հուժկու երիտասարդ մը, ձեռքը՝ կարմիր թաշկինակովը, զոր ամեն մեկ շարժման կերերցնե օդին մեջ, մյուս ձեռքը՝ իր քովինին ուսին վրա, անդադար կցատքե, կատաղի ու միօրինակ ոստումներով. մերթ ոտքը հորիզոնական գծով մը դեպ առաջ կցցե,— բոպիկ աղտոտ խոշոր ոտք մը, որուն վրա կհառե ըմպելիքեն ամպոտած աչքերուն մոլորուն նայվածքը,— մերթ կթողու

քովինին ուսը, շրջան մը կընե ինք իր վրա, գետինը կկոկոզի, ու հետո ոտքի կելլե նորեն, և հանկարծ իր ընկերոջ ձեռքեն բռնելով՝ կեցած տեղեն քիչ մը անդին կվազե՝ հոն շարունակելու համար պարը, միշտ նույն շարժումներով, որոնց կհետևին մյուսները՝ ձեռք ձեռքի շղթայաշարված, և որոնց յուրաքանչյուրին ինք կընկերացնե ուժով հա՜ մը, թանձր ու կոշտ։ Կերևա թե իր տեսակին մեջ չափազանց լավ պարող մըն է երիտասարդը, որովհետև իր շուրջը հավաքված դիտողները, որոնց թիվը հետզհետե կաճի, սքանչացման նայվածքներ կուղղեն անոր, որոնց հաղթականորեն գոհ ժպիտով մը կպատասխանե վարպետը, ավելի կրակ տալով իր խաղին, ոստումներն ավելի երագելով և ավելի պինդ շեշտելով իր հան։— Այդ միջոցին, քանի մը հույն քահանաներ, իրենց երկայն սև պատմուճանին քղանցքը մեկ ձեռքով վեր առած, խոզովակաձև փակեղին ետև հորդ մազերու կանացի կույտը ծոծրակին վրա ինկած, կանցնին նազելաքայլ. պարը մեկ հարվածով կդադրի խսկույն։ Պարողները վրայե վրա՜ քանի մը տասնյակ խաչ կհանեն, մինչև որ կհեռանա կրոնականներու խումբը։

Քիչ մը հեռուն, դիտողներու ուրիշ շրջանակի մը մեջտեղը, երկու թանձրամարմին երիտասարդներ, կարմիր ուռուցիկ այտերով, հաստ զգայնոտ շրթունքով, մազերնին քրտինքեն փայլուն, իրենց ականջին վերև քանի մը ֆուլեա կրելով, կպարեն պորտի պարը, նողկալի։ Կանչներուն վրա նստած երեք չորս նվագածուներ նրբաբարինգով ու ջութակներով արևելյան եղանակներ կածեն։ Երկու պարողները, դիմացե դիմաց կեցած, երկու սրունքի վրա անշարժ, փորերնին կերերցնեն։ Մերթ կտեղափոխվին ու նորեն կշարունակեն խաղը։ Մերթ ալ, իրարու բոլորովին մոտեցած, փոր փորի դպած, իրաննին դեպ ետև ծռած, գլուխնին գրեթե վար կախված, ձեռքերնին ալ ինկած վար՝ թույլ, աչքերնին փակ՝ հեշտության արտահայտության մեջ մը կորսված, կկրկնեն այդ դանդաղ շարժումները, լկտի ծիծաղներ և հիացման կոշտ խոսքեր ներշնչելով դիտողներուն։ Հետո, պարողներեն մին, մատներուն ճակղարանները անցուցած, մյուսին շալակը կելլե, ու պարը առաջ կտարվի, ավելի այլանդակ. վարինը կշարունակե պորտը խաղցնել, վերինը իր մատներուն ընդհարմանց ծնծղայանքը կխառնե նվագածության մեկ թավալումին, և գլուխը կտատանե երկու ուսերուն վրա՝ ծաղրելիորեն կանացի նազանքով մը. ամբողջությունը կկազմե հրեշային էակ մը, մարդկային կրկնապատկություն, որ կոստոստե, համակ շարժում։

Ուրիշ տեղ մը, խումբ մը պանդուխտներ բոլորովին տարբեր նկարագրով ակնահաճո բոլորապար մը կդառնան, իրենց մեջտեղ ունենալով երկայնահասակ չոր մարդ մը, որ փայտե տձև նեղ ջութակ մը կքերթե

ճչացող հնչյուններ ցատքեցնելով անկից, գլուխը եղանակին համեմատ երերցնելով և իր շարժումներով պարին ուղղություն տալով։

Ու քիչ մը անդին, ավելի անդին ալ, այս կողմ, այն կողմ, ամեն տեղ, կվխտան պարողներու շրջանակները, ամենքն ալ քանի մը զվարթ խաղերու համեմատ դառնալով ու ցատքելով, ուրախության արբեցությանն անձնատուր, մարմինը երերցնելով և անդամները ծռմռտկելով բոլոր երևակայված եղանակներով։ Եվ ասիկա այնչափ առատ է և այնչափ հարատև, որ տակավ կվարժվիս այդ գռեհկության, կընտելանաս այդ տձևության, ու հիմարության անդիմադրելի հոսանքի մը մեջ քեզ ալ մղված զգալով, բնական կգտնես այդ ոստոստումները, և զվվանքի տարտամ ծամածռությունը որ շրթունքդ կծկած էր՝ տակավ ժպիտի մը փոխվելով, հանկարծ ապուշ փափաք մը կունենաս լրջության հավակնություններդ թոթվել նետելու, մտածումներեդ, վերացումներեդ, երազներեդ մերկանալու, ու հոփլա՜, սրունքներդ երերցնելու։

Հովանավոր ծառի մը տակ, քանի մը երիտասարդներ, աթոռակներու վրա նստած, մտիկ կընեն խումբ մը գնչուհիներու երգերը։ Ես ոչինչ տեսած եմ այնքան ճշմարտապես անբարոյական,— և ամենեն ցուրտ ու գռեհիկ նրբագայումը անբարոյականության, զոր կարելի ըլլա երևակայել,— որքան այդ կիները, որ իրենց երգերուն հետ փողոցե փողոց կպտրտցնեն հռանությունն իրենց նայվածքին և իրենց քրքիջին։ Ամենքն ալ գիվային կերպով տգեղ են, տարվոք ալ, մեկը գրեթե պառավ մըն է թմբռված. մեծ մասը՝ ծաղկավատեն ծակծկված ու ամենքն ալ արևեն սրնձերկնված գեմքեր ունին, սևաբիբ վավաշոտ աչքերով և հեշտամոլ մաղը շրթունքներով, որոնց մաշած ու փոթփոթած թավիշին ետևը ճերմակ առատ ակռաներ կշպրտին. գլուխնին ցազմային պղտոր ճերմակության մեջ կկորսվի. իրենց ազատոտ սևցած վիզեն վար, կուրծքին մեկ մասը կերևա, շոր ու մաշկալին յելտիրմեին վերին պզտիկ բացվածքեն։ Ներքեն, իրենց երգը համաչափելու համար իրարու զարնելով իրենց ձեռքերը, որոնց եղունգները հինայով կարմրած են։ Բերանին լայնորեն բացած, վերին ու ստորին ծնոտները երերցնելով ու իրենց ամբողջ գլուխը՝ երգին երեջնեռան համեմատ ցնցելով, կերգեն երգեր, որ նյութական սիրուն գալանանքն են, ամենեն տաք բացատրություններով արտահայտված։ Մեկի առոնցմե մին իր երգը կընդմիջե և քովինին ականջին բան մը կփսփսա, որ գիրենք վատաղաբար քրքրջալ կուտա՝ ձեռքերնին ծունկերնուն զարնելով, գլուխնին դեպ ետև կախված, աչքերնին զվարթության ծարտահեղությունեն արցունքոտած, և կամ գրգռիչ խոսքով մը՝ տակ կուգան գլուխնք վարձակներեն, որոնք

ֆեսերնին ծռած մեկ կողմ, զսպված ծիծաղով մը մտիկ կընեն, ջանալով անտարբեր ձևանալ, գրեթե լուրջ։

Անդին, երկու մսավաճառներ ըմբշամարտություն մը կկատակեն։ Իրենց բոպիկ ոտքերուն վրա ամուր հաստատված, գլուխնին դեպ առաջ՝ դրած իրարու, մեկ ձեռքովնին մյուսին ուսը բռնած, երկուքն ալ կհրդնին իրենց մյուս ձեռքը հակառակորդին սրունքին անցնել։ Ճիգերը կշարունակվին, ծաղրաբանություններով, ծիծաղներով ընդմիջված, երբեմն՝ դիտողներուն ալ քաջալերական խոսքերեն ոգևորված։ Եվ ահա մին մյուսին սրունքեն կհաջողի բռնել, ուժով մը կթոթվվե, ծունկն անոր կոնակին կդնե, կկորացնե զայն ու կփռե գետին։ Պառկողը չընդունիր, կատարելապես պարտված չի համարիր ինքզինքը, և երբ քանի մը հոգի ալ իրավունք կուտան իրեն, կուիվը նորեն կսկսի, այս անգամ քիչ մը լուրջ։ Հաղթվողն է որ կիյնա նորեն։ Ու ասիկա քանի մը անգամ կկրկնվի, պարտվողին անձնասիրությունը գրգռելով, մինչև որ մյուսը, ա՛լ նեղացած, իր քակված գոտին շուտ մը մեջքը փաթթելով, կցատքե անոր վրա, գետին կզարնե զայն ու վրան նստելով, երկու ձեռքով անոր գլուխն անշարժ բռնած հողին վրա, մանկական ցրվանքով մը խնդալով, բաներ կմռմռա անոր, բաներ, որ մեր տղայության «մե՛ծ մեղա, պզտի՛կ մեղա» կհիշեցնեն։

Բայց բազմության մեծագույն մասը միշտ խռնված է կրկեսներուն շուրջ, որ Ջեոփլիքիններն են, նույն վրանները, նույն խաղացողները, նույն խաղերը։ Անոնց մոտ, երկայն ուղիղ գծի մը վրա, շարք մը կախօրրաններ, պզտիկ կարմիր դրոշներով զարդարված, կտանին։ Վրանի մը մեջ հրաշալիքներ ի տես դրված են, և երիտասարդ մը մուտքի դրան առջև կեցած կբացատրե՝ «Ամերիկայեն եկած մարդ մը կա ներսը, որ կրակ կկլլե և դուրս կուտա նորեն.— Գերմանիայեն եկած կնիկ մը կա, որուն փորը ծակ է մինչև կոնակը, այնպես որ ետևը դրված ժամացույց մը կերևա», են, են։ Գերեզմաննոցին կից քարուկիր շենքի մը մեջ ալ ուրիշ տարօրինակություններ դրված են ի տես, երկու գլխով կով մը, կողեն իրարու փակած երկու տղաք, ամերիկյան օձ մը (տոնավաճառներու մեջ շատ բան իբր ամերիկյան կներկայացվի, որովհետև հեռավորությունը կավելցնե հրապույրը), կոկորդիլոս մը, ու նորեն, ու միշտ՝ այդ փոկերը, այդ դարշելի հավիտենական փոկերը, որ ժողովրդային տոներու մեջ անպակաս են, որպես թե չափազանց սիրուն բաներ ըլլային։ Այնուհետև՝ կշռվելու գործիքներ, ուժ փորձելու գործիքներ, բաղդ նայող աղավնիներ, ամեն ինչ, որ հետաքրքրությունը կշարժե։ Եվ ամեն տեղ, ամեն մեկ քայլիդ, իբր սրճարան, իբր գինետուն, իբրև ճաշարան ծառայող բազմաթիվ վրաններու տակ կամ պզտիկ

շարժուն սեղաններու վրա, ամեն տեսակ ուտելիքներ, եփած կերակուր, միրգ, շաքար, զովացուցիչներ, ու ամենեն ավելի՝ կարմիր հավկիթ, Զատկի գլխավոր հատկանիշը, Լաթեռնաներն անթիվ են, անոնք ալ տոնավորված, ճերմակ շղարշներու տակեն ցույց տալով իրենց ձվաձևին շրջանակաձև պատկերը, գույնզգույն ոսկեզօծ գունտերով, փողփողուն գնդակաշարքերով, կեղծ ծաղկեպսակներով ու հարսի թելփեշեի կտորներով պճնված, իրենց խտացյալ տրտմության ալիքները հավիտենապես թավալելով ընդհանուր խժլտուքին մեջ։

Հանկարծ, այս այլազան ժխորներուն բաբելային խառնաղաշնակության, ամբոխի լայն ու թանձր այն եռման մեջ, որ շուրջս կփրփրա, այդ բոլոր նյութական ուրախության ապերասան զեղման մեջ, տխուր խորդածություն մը սիրտս կսեղմե, հարսնիքի մը շողշողմանց մեջ մեկեն ի մեկ հառնող ուրվականի մը նման.— բոլոր այդ ցնծությունը գերեզմաններու վրա կկայտռե... պարող ոտքերը շիրիմներու վրա կկոխեն, այդ երգերն ու այդ նվագները դիակներու վրա կկաթին, այդ զվարթությունը փտության վրա կոստոստե... Բոլոր այդ կյանքի հորդության ու խնծիղի շոնդալից պոռթկումին տակ, անոնք ի՞նչ կղգան, մեռելնե՛րը, որովհետև ինծի համար՝ մեռելները կղգան, զգացումը չկընալով մեռնիլ. և կկարծեմ տեսնել անոնց կմախացյալ դեմքին զայրույթի կծկումը և անոնց բոլոր ոսկորներուն մեջ ցավի սարսուռն անսահման, ու բողոքի անդիմադրելի զգացում մը ցցվելով հոգվույս մեջ, անբնական, անճշմարտանման, անկարելի կգտնեմ այդ անտարբերությունը, ես որ կվախնամ գերեզմաններու վրայե քալելու, որպես թե սիրտերու վրա կոխեի։

* * *

Մտալլկումի մը պես զիս հալածող այդ խորհրդածությունը թոթվելու համար, պահ մը կհեռանամ գերեզմանոցեն, եկեղեցիեն ու այազման կերթամ տեսնել։ Հունաց գերեզմանատան մոտ, որ, գեղակերտ սպիտակ շիրիմներովն այնքա՜ն կոկիկ ու փայլուն ավելի փարթամության շլացքը կներշնչե քան մահվան թախիծը, պզտիկ պարտեզի մը մեջ կգտնվի Ս. Աստվածածնա սիրուն փոքրիկ մատուռը, բյուզանդյան ճարտարապետությամբ շինված, նոր—հունական բազմախճող ճաշակով զարդարված։ Երկու կարգ բարձր ու լայն սյուներ դոնեն կերթամինչև խորանը՝ մանրիկ վարագույրով մը փակված, անտես, խորհրդավոր։ Այն նվազ ստվերոտ լույսին մեջ, որ սակավաթիվ պատուհաններեն

կսողան, փողփողումներ դուրս կցատքեն, պատկերե շրջանակներե, ոսկեզօծումներե, սուրբերու գլուխը պատող մղտապույն ոսկիով կամ արծաթով դրվագված լուսապսակներե, որ ապակյա պահարանի մեջ առնված են, զարդի, ճոխության, պատկերի ծայրահեղ կուտակում մը այդ պզտիկ քառակուսիին մեջ, տուփ մը կարծես, ուր թանկագին առարկաներ դիզված են։ Աջ կողմը, ամպիոնը, շատ բարձր և շատ զարդարուն նեղ սանդուղով մը կելլվի։ Անոր առջև, վարը, խաչելություն մը պառկած է շքեղ շողշողուն սփոցներով և պես-պես ծաղիկներով ծածկված սեղանի մը վրա. ու անմիջապես քովիկը, ափսե մը՝ դրամ հավաքելու համար։

Պարտեզին մյուս կողմն է այազման՝ ուր կիջնվի պզտիկ սանդուղով մը, թաց և ցեխոտ։ Փոքր քառակուսի մըն է, մութ, որ վերեն երկու երեք մանր պատուհաններե հազիվ աղոտ լույս մը կընդունի, պատերը նորեն լեցված, ծածկված պատկերներով ու կրոնական զարդերով, վանդակապատի մը ետև, որուն երկու կողմեն փայտե սանդուղներ վեր կելլեն։ Քիչ մը ցածր, ջուրը կտեսնվի, նվիրական ջուրը, որ ըստ ավանդության, այդ գիշերը սովորականեն քիչ մը ավելի կբարձրանա, հանդարտ և անծալ, իր սև մակերեսին վրա լույսի ստվերի մը ծածանքը միայն ունենալով, որ պատերեն մեկուն եղերքը վառված մոմե մը կթափվի։ Վանդակապատին առջև, դույլերով ջուր դրված է, որմե կախման կամ աչքերնուն կքսեն ուխտավորները, ու հոդ ալ, մի՞շտ, կա ափսեն, ուր թավալող դրամներուն հնչյունը կխառնվի աղոթքի փսփսուքներուն ու ցավի հառաչներուն։

Եկեղեցյակին կիսաստվերն ու այազմային մթությունը երկար ատեն զիս իրենց ծոցը կպահեն, և երբ դուրս կելլեմ, օրը երեկոյացած է արդեն. փանայիրն ավարտված է, բազմությունը ցրված է մեծ մասամբ։ Գերեզմանոցը ամայի է հիմա, վրաններն ու քանի մը խախորրաններ միայն ունենալով իր վրա, մեկ քանի հետամնաց թափառողներու և բան ծախողներու հետ։ Հիմա ժխորը դադրած է, շարժումն ալ. հանդարտությունը կտարածվի շիրիմներուն վրա, վերահաս գիշերին հետ, որ երկնքեն կիջնե ու աննշմարելի ստվերի փոշի մը կցանե օդին մեջ, հորիզոնին վրա օրվան վերջին կարմրությունները կսրբե, գերեզմանոցին ծառերն ի վար կվազե, զոր կփոխե մութի տարտամ կույսերու, կսեցնե հողն ու դալարիները և կմրոտե գերեզմանաքարերուն ճերմակությունը։ Ու մեկնած ատենս, գոհունակության բուռն զգացմամբ մը սիրտս լեցված, կժպտիմ՝ խորհելով, որ հիմա շունչ պիտի առնեն մեռելները, ա՛լ ազատած ուրախության կանչվրտուքներեն ու բոլոր

այն առնի ծավալուն իրարանցումեն, զոր խավարը բոլորովին պիտի ավլե ընդհուպ, և պիտի նորեն իրենց քունը քնանան՝ անխոով՝ մեծ Որորոցին խաղաղասիրուն թևերուն տակ։

ԵՐԱԶԻ ՔՈՂԱՔ

Այս աշնան առավոտով, հրաբորբոք արևուն տակ որ, դժգույն կապույտով երկնքեն, Մարմարային վրա ոսկեզօծ մեղմ լույս մը կհոսեցնե, Կղզիներեն մեկնած մեր շոգենավը համրորեն կուղղվի դեպի Պոլիս։ Արդեն իր ճամփուն կեսին հասած է, ու հեռվեն, քաղաքը՝ զինքը ծածկող մշուշին մեջեն կգուշակվի ավելի, քան կերևա։

Ինչ որ ամենեն առաջ կնշմարվի, մութ գորշ երկար խավ մըն է, բծավորված արծաթափայլ ու խուսափուկ զանակներովն առագաստներուն կամ թռչուններուն, որ կանցնին։ Ստվերի թանձր պատ մըն է կարծես, որ հստակ գիծով մը կանջատվի երկնքին պայծառ ճերմակութենեն և որ վարեն ծովուն կխառնվի, իր ետև ինչպես հմայական քողի մը ետև թաքցնելով Պոլիսը։

... Շոգենավը կհառաջանա, և տակավ այդ պատը, որ կերկարի երկնքին վրա, թափանցկություն կստանա, որուն մեջեն բարակ սլացիկ ճերմակությամբ քանի մը նրբին դողդոջուն գիծեր երևան կելլեն։ Ու քանի կմոտենանք, կբազմապատկվին այդ գիծերը, ավելի որոշ ձև կառնեն։ Հետո, մութ կույտեր դուրս կցատկեն այդ ընդհանուր գորշությենեն, տարտամ գույներով, որոնք կհիշեցնեն շենքեր, և ատոնք իրենց գմբեթները կուռեցնեն պաղած մուխի լայնատարած այդ ծովուն մեջ, որ առկախված կմնա օդին մեջ։ Գիծերեն հետո գույներն են, որ ավելի որոշ կդառնան. հողի պղտոր դեղնություններ, պարիսպի ադամանդ ճերմակություններ, ծառերու մութ կանանչություններ կտեսնվին խառնիխուռն։ Ամենեն վերջը կերևա մոխրագույն շեղջակույտ մը շփոթ, տուներու ամբոխը, դեռ ստվերի մեջ թաթխված, տարտամության մեջ ծածանուտ, եղրագիծերը հալած, շրջապատող մթնոլորտին խառնված ու նրբացած, կակուղցած, թափանցկացած, կարծես փոշիե գիծեր դարձած, զոր հով մը պիտի կարենար ցրվել և որոնք իրականեն ավելի հեռուն կերևան, կթվին պատկանիլ ուրիշ աշխարհի մը, աշխարհ մը, որ երկնքին մեջ է ավելի, քան երկրի վրա, անմատչելի, անիրական աշխարհ մը, դյութա-

կան քաղաք մը, երկինքեն իջած կամ ծովեն ելած, և որ պիտի անհետանա, երբ մոտենանք։

Եվ բոպե մը, երանավետ ցնորամտության նոպայի մը մեջ, ինծի կթվի թե ինչ որ հոդ կտեսնեմ, մեր հանապազօրյա Պոլիսը չէ, այլ երազի քաղաք մը, ուր դեռ չէ կոխած մահկանացուի մը ոտքը, ուր քաղաքականությունն ու իր ոճիրները, լրագրությունն ու իր ստությունները, կրոնական պայքարներու ահռելիությունն ու գրական գավառաբներու ծիծաղելիությունը դեռ բոլորովին անծանոթ են, հեքիաթի ու բանաստեղծության քաղաք մը, որ քնակված է միայն մաքի պարիկներե ու գեղեցիկ ոգիներե, որոնք խունկով անուշահոտված ու ծիածաներփնյան նուրբ մշուշով մը մեղմորեն սքողված մթնոլորտի մը մեջ իրենց թեթև պատմուճաններուն բազմերանգությունները փաղփեցնելով շուշանի մեծ պարտեզներու մեջտեղը, իրենց ամբողջ կյանքը իրարու զարմանալի պատմվածքներ ըսելով, աստվածային մեղեդիներ երգելով և սիրով ու երազով արբենալով կանցնին։

Բայց արդեն մոտեցած ենք, և ա՛լ կարելի չէ երազել։ Հիմա ճիշտ ապշեն ենք Պոլիսին։ Սակայն, եթե թռավ անուրջը, որ մտքիս քավեցավ վայրկյան մը, անուրջի երևույթ մը— անուրջի մը, որ հիմա գժնեստաբել, մահաշուք վրդովա— վմնա դեռ քաղաքին վրա։ Հիմա մենք իսկ մեջն ենք մտած մշուշին, և կապարագույն թանձր փոշիի անշաժ անձրևին մեջեն, մաս մը միայն կտեսնենք ցամաքեն, պպտիկ կտոր մը՝ մեզի շատ մոտը, և ատկից զատ՝ ամեն կողմ, ոչինչ, բացի սպիտակ ալիքներեն, որ ամեն բան ծածկող մեծ զանգվածներով կծածանին, կվեստվետին օդին մեջ։ Եվ այդ հողի կտորին վրա իսկ, զոր կնշմարենք, ծառերը, տունները, մզկիթները, պարիսպները, հողը, որ կերևան՝ իրարու խառնված, իրարու մեջ մտած, այլանդակ անբնական խմոր մը ձևացուցած, գորշ սավանով մը վրեն շփված, մուխով ամբողջ ծեփված են կարծես։

Շոգենավեր կանցնին մեր մոտեն, կարծես խոշոր ահ հրեշներ, որ համատարած տմուն սպիտակության մեջեն կսահին, արձակելով թրջած կապույտով, սիկարեթի մուխի գույնով ծուխ մը, ու կերթան մեր ետև սուզվիլ, կորսվիլ մշուշին մեջ, որ՝ արևուն ճառագայթներուն տակ՝ հիմա թեթև դեղնություն մը առած է։

Նավակներ փոքրան ծովուն մղտացած կապույտին վրա, և մարդիկը, որ ատոնց մեջ ինշմարվին, ուրվականներ կթվին, որ ստվերի ու մահու այդ տիրապետության մեջ կսահին։

Մեծ շոգենավեր կանցնին, տեղ-տեղ մենավոր, տեղ-տեղ խումբով, հոս ամբողջ երեսով, հոն՝ մասամբ, քանի մը ծխանիցով՝ այս-

տեղ, քանի մը կայմեր՝ անդին, ցուկներու շարք մը՝ քիչ մը հեռուն, այստեղ՝ ամփոփված առագաստներ, անդին՝ կազմածքի, չվաններու խառնամառնում մը, կարծես հրկիզված անսահման շենքի մը ցանուցիր ավերակները, որ հոս ու հոն դեռ կցցվին։

Վերջապես Կամուրջը կերևա, երկայն մութ ժապավեն, որուն վրա կխլրտան, մրջնային եռուզեռումով մը, հազարավոր սև կետեր։ Ա՛լ վերջնական քայքայումն է երազին։ Օդային քաղաքը, իր պարիկներն ու իր խնկաբույր մթնոլորտը, ամենքը թռած-գացած են։ Ա՛լ մեր դիմացն ուրիշ բան չունինք, բայց եթե մեր քաղաքն ու մեր կյանքը, այնպես ինչպես եղան երեկ, այնպես ինչպես պիտի ըլլան վաղը...

ՀԱՋԻՆ ՔԵՐԹՎԱԾԸ

Մրմունջ մը, որ երաժշտություն մըն է։ Կոկորդին մեջ ձայնի վախկոտ թևաբախում մը, որ մերթ հիվանդ մխին սկրդուքն ու երբեմն ալ տառապանքի երգն է ցավատանջ հոգիին. ու բոլոր երաժշտություններուն մեջեն՝ ամենեն վրդովիչը կդառնա երբեմն, այդ մանրիկ թռչտուքը փսփսացող խաղերու։

* * *

Ահա՛ անվնաս պատճառներե առաջ եկած անորոշ ու բուսական հազը մատղաշ տղեկներուն, կակուղ ձայներու բողբոջում մը, որ լեռան ծաղկի բնական ծլումով մը կուրծքեն կոկորդը կելլե, փոքրիկ ուսերը գողտր շարժումով մը կթոթվե, վարդ բերանները թերթերու պես կբանա, այտերը թեթև, կարմրությամբ մը կտաքացնե, արցունքի վճիտ շիթով մը աչքերուն փայլը կշեշտե։

* * *

Ահավոր է անիկա, երբ իր ճանկերուն բովանդակ անգթությամբ կքերթե մանկական կոկորդներուն թարմությունը։ Եվ երաժշտությունը հոնդյունի մը արհավիրքը կստանա, երբ հեղձումի տանջանքներուն մեջ գալարվող պզտիկ էակը իր խռչափողին մեջ խայթիչ օձի մը օղակներուն թանձրանալն զգալով, բերանը լայն բացած, կուրծքը հևալով, այտերը կա-կարմիր, աչքերը դուրս ընկած ոգևարի խեղդուկ հեծեծանք մը կարձակե։

* * *

Բայց անհունապես, հրապուրիչ է հազը, երբ՝ թեթև հարբուխի մը ծնունդ՝ պատանուհիի մը կուրծքին մեջ կերթա բույն դնել։ Նորաբույս լանջը հուզված ալյակի ելևէջներով կուսի. աչքերը, մեղմիկ տենդե մը արցունքոտած, կշողան, մորթը, արյունով վառված կենսախայտ կարմրություն մը կհագնի, ու ձյունափայլ վիզին մեջեն, նոր թռիչ առած թռչնիկներու ճռվողյունի մը պես, ձայնի գողտրիկ ոստումներ օդին մեջ փեթռտվող շուշանի թերթերու տարաղնումով մը կբարձրանան դեպ իր բերանը, որ կկխարացվի։

* * *

Կան կեղծ հազերը, ամենեն պաշտելիները նվազներուն, որովհետև կոչեր են կամ խոստովանություններ, աղաչավոր հազերը, որոնք սիրահար պատանիին բերնեն կթռչին դեպ ի իր պատշգամբը ելած դիցանույշը՝ անոր ուշադրությունն ու համակրությունը գրավելու համար, և գորովագին հազերը, զոր խանդաղատանքով բաբախուն աղջիկը կթափե իր պատուհանին բարձունքեն սիրելիին վրա, որ փողոցին մեջ կթափառի անձկագին, օրհնա՛լ ստություններ, զոր Սիրո հրեշտակը առաքինությանց կփոխե և որոնց կնոջե բարի ճշմարտությունը։

* * *

Բայց կան քստմնելի հազերը, որոնց մեջ սոսկումը կերգե և որոնց ետևը Մահը կքրքջա, անագորույն, հազերը ժանտ հիվանդություններուն, որոնք անկողնին գամված դժբախտին կուրծքը կպատռտեն, կոկորդը կճմլեն, ցավագին ճիչերով անոր կյանքին բզբտումը կողբերգեն, ու մելամաղձիկ հազերը, որոնք հատած չորցած ծերունիներուն բարակուկ մարմինը կցնցեն, անոնց տժգունած շրթունքներեն կյանքի համր քայքայման տրտում մրթմրթանքը դուրս կթափեն։ Ու կա մանավանդ սարսռեցուցիչ հազը, ցուրտ ու դալկահար հազը դանդաղ սպասումներուն, անգույն ու երկայն հազը, որ խուսափող կյանքին թախծալից զողանջ կթվի։ Եվ այդ կտրուկ ու չոր հեկեկանքը, որ, օղակ-օղակ, շարշարանքի շղթայի մը պես, կոկորդեն կբարձրանա, հյութասպառ լան-

ջին, կմախացած մարմնին, ճերմկած շրթունքներուն, մաշկացած մորթին, փոսացած աչքերուն, դեմքին ուրվականային դժգունության ու նայվածքին դերեզմանական տրտմության մեջ՝ ահեղորեն շարագուշակ, ավերակներու վրա վայող բուի կական մը կդառնա։

ԵՐԿՆՔԻՆ ՃԱՄՓԱՆ

(Հեքիաթ)

Թովմաս Թեոդյանին

Հրաչյա կկոչվեր մին, և մյուսը՝ Նվարդ, ու իրենց սերը, հնգետասն ամյա հասակի ծաղիկ, մաքուր էր ինչպես ձյունը լեռներու կատարը։ Կապույտ աչքեր ուներ աղջիկը, և պատանին՝ սև աչքեր, ու երկուքն ալ՝ սպիտակ հոգի մը։

Իրարու հանդիպած էին գարնան առավոտ մը, երբ Նվարդ դաշտերն ելած էր ծաղիկ ժողվելու և Հրաչյա իր հոտն արածելու։ Եվ իրենց նայվածքներուն առաջին համբույրը հայտնած էր իրենց, թե աշխարհի մեջ կան բան մը ավելի քաղցր, քան դաշտերուն ծաղիկներն ու գառնուկներուն մայրը։ Եվ մին իր գառնուկներն ու մյուսն իր ծաղիկները թողած էր և սկսած էին իրարու հետ, իրարու համար ապրիլ։

Եվ իրարու մեջ ձուլված այդ երկու հոգիներն այնպես անջատված էին մարդոց ամբոխեն և առանց աշխարհի մեջ հարուցած ժխորեն, որ բնությունը զանոնց որդեգրած և իր խորհուրդներուն պալատին ադամանդե դուռն անոնց առջև բացած էր։ Սկսած էին հասկնալ հովերուն, առուներուն ու թռչուններուն լեզուն և ինչ որ ճառագայթն իր փողփողմանը մեջ կբարբառի, և ինչ որ վարդն իր բուրմանը մեջ կգեղգեղի, և աստղերուն գիշերային վեհ բանաստեղծությունը։

Կսեն թե երբ լուսնին տակ իրենց երջանկությունը կերգեին, երբ անտառներու թարմ ստվերին մեջ միասին կմխրճեին, երբ մարգերու վրա աղվոր թիթեռնիկներու ետեն կվազին, երբ մին իր թևերը մյուսին վզին մանյակ ըրած՝ իրարու աչքերուն մեջ կսուզեին, կամ երբ, ծառի մը վրա թառած, մին իր ականջներուն իրրև օղ կեռասներ ունենալով և մյուսը՝ հարսնուկներու պսակ մը իր սև մազերուն վրա, խընդալե կմարեին, կսեն թե Լուսինը, սիրահար Գիշերին, և թե սոխակը՝ վարդին սիրահար, կլսեր, նախանձելով այդ սիրուն, որ ավելի գողտրիկ էր քան իրենցը։

* * *

Գիշեր մը, սև էակ մը եկավ գողցավ Նվարդը և զայն տարավ հեռուն անծանոթին մեջ։

* * *

Առավոտյան Հրաչյա անհուն տրտմություն մը զգաց, երբ ինքզինքը մինակ գտավ, և ինչպես տղա մը, որուն սիրական խաղալիքը ձախավեր ձեռք մը կոտրած է, լացավ։ Հետո, մտածեց, որ թերևս կատակի համար անիկա գացած տեղ մը պահվըտած էր, ու փնտրելու ելավ զայն։ Անցավ այն բոլոր անտառներեն ու դաշտերեն, ելավ կատարն այն բոլոր բլուրներուն և իջավ այն բոլոր ծովափներուն վրա, ուր իրենց սերը տարած էին արածել։ Երկար ատեն փնտրեց անոր մանրիկ պաշտելի ոտքերուն հետքերը խոտերուն վրա, շրջազգեստին կտոր մը մացառներուն կառչած, անոր մազերեն խուրձ մը ծառի մը ոստերուն փաթթված։ Բայց խոտերը, մացառներն ու ծառերը ոչինչ չէին պահած իր սիրելիեն։ Արցունքներեն մարած իր ձայնովը, երկար ատեն աղաղակեց անհետացած աղջկան անունը և դաշտերուն մենությանը մեջ արձագանգը միայն իրեն պատասխան տվավ։

Այն ատեն գնաց, հուսահատ, ծովուն եզերքը նստավ, և ինչպես մայր մը իր զավակը հեռուները տանող նավուն ետեն կոչա, երկարորեն ողբաց.

- «Քա՜ղցր աղջիկ, ավելի քաղցր քան ցողը որ երկնքեն կիջնե, ո՞ւր գացիր։ Այնչա՜փ երջանիկ էինք։ Ինչո՞ւ հեռացար ինձմե։ Ի՞նչ ըրի քեզի։ Աչքերս քեզ կպաշտեին, շրթներս քեզ կգովեին, ճակատս քու առջևդ կխոնարհեր, ձեռքերս քեզի կբարձրանային ինչպես Աստծո. սիրտս խունկ մըն էր, որ քու գեղեցկությանդ առջև կայրեր։ Ի՞նչ ըրի քեզի։ Քեզի համար ես իմ սրինգս թողուցի, քեզի համար գառնուկներս թողուցի, քեզի համար ազատությունս թողուցի, և դուն իմ կյանքս ոսկեզօծեցիր քու նայվածքիդ մեկ շողովը։ Ինչո՞ւ, եթե այսպես պիտի լքեիր զիս, երեցար ինծի և հոգիս քու ոտքերուդ կապեցիր, քա՜ղցր աղջիկ»։

***

Ու մեծ եղավ Հրաչյայի զգացած ցավը, ինչպես մեծ կըլլա ցավն այն թռչնիկներուն, որոնց մայրը անգղի մը կեր եղած, իրիկվան չի դառնա բույնը։ Իր կյանքը ստվերներով համակվեցավ, հառաչներն իր կուրծքը մաշեցուցին. արցունքներն իր աչքերը խամրեցին, ձեռքերովը փետտեց իր աղվոր գիշերաթույր մազերը, և եղունգներն այտերուն վարդը փեթռտեցին։ Ա՛լ չէր ուտեր, ա՛լ չէր քնանար, ա՛լ չէր խոսեր. միակ բառը, որ իր շրթներուն կառչած կմնար, սիրելիին անունն էր։

***

Օր մը, հիշեց ուրիշ առավոտ մը, ուր իր առաջին արցունքները թափած էր, այն առավոտն, ուր արթնցած ատեն իր մայրն այլևս տանը մեջ չէր տեսած։ Հայրը իր հարցմանը պատասխանած էր՝ «Մայրդ երկինք գնաց»։

«Թերևս Նվարդն այլ երկինք գացած է», խորհեցավ Հրաչյա, պետք է ուրեմն որ գտնեմ երկինքին ճամփան։

Այս գաղափարը զինքն այնքան լեցուց ուրախությամբ, որ երկինք երթալը մոտակա գյուղն երթալու չափ դյուրին երևցավ իրեն։

***

Հրաչյա մեծ դաշտի մը մեջ կդտնվեր, երբ այդ գաղափարն ունեցավ։ Հեռուն, հորիզոնին վրա, կապուտակ մշուշի մը մեջ՝ երկինքը հողին կդիպչեր։ «Ահա՛, գոչեց, ահա՛ երկինքին ճամփան, կբալնե որ այս դաշտին ծայրն հասնիմ, ու պիտի գտնիմ երկինքը»։ Օրերով, օրերով քալեց, առանց հանգչելու, առանց բան մը ուտելու։ Գետերու հանդիպեցավ, որոնցմե լողալով անցավ, հեղեղատներու, որոնք իր ճամփան երկարեցին, մացառուտ տեղերու՝ ուր իր ոտքերն արյունեցան։ Բայց շարունակեց քալել, համբերատար ինչպես ոտքով ուխտի գացող բարեպաշտ մը, արհամարհելով ամեն խոչընդոտ և իր սիրելին անունը տալով ամեն անգամ որ խոնջենք զգար։ Սակայն դաշտը չէր վերջանար, և երկինքը, ուր կուզեր հասնիլ, ամեն քայլին կհեռանար։

***

Եվ առավոտ մը, որ ծովու մը ափը կգտնվեր, տեսավ արևը որ ջուրերուն ծոցեն երկինք կբարձրանա։ «Ահա՛ ճամփան», գոչեց։ Եվ լաստ

մը շինելով մղեց զայն դեպի հորիզոնը, ուրկից կհուսար ինքն ալ երկինք բարձրանալ։ Ցուրտը զինքը սառեցուց, հովեր ելան, որ լաստը ալիքներուն վրա հորձանապտույտ խաղցուցին։ Հրաչյա՝ անդրդվելի՝ կառաջանար միշտ։ Օր մը, նշմարեց երկայն գորշ գիծ մը, որ երկինքը ծովեն կզատեր։ Երբ ավելի մոտեցավ, տեսավ որ ծովը հոն կվերջանար ու ցամաքը նորեն կսկսվեր...

***

Այն ատեն, գնաց գտավ երկրիս ամենեն բարձր ծառը։ «Այս ծառին կատարը երկնքին կդիպչի, ըսավ. ամպերը, որ թռչուններեն ավելի բարձր կթռչին, ասոր գլխուն վրա կթառին։ Ասիկա կրնա զիս երկինք տանիլ։» Ու շուլլվեցավ այդ ծառն ի վեր, որուն կատարը հասավ շարաթ մի տևող տաժանելի վերելքով մը։ Բայց երբ հասավ աշխարհիս բարձրագույն ծառին կատարը, տեսավ որ երկինքն ավելի բարձր էր, շատ բարձր, անմատչելի։

***

Ու Հրաչյան խորհեցավ. «Կըսեն թե լեռներ կան, որոնց գագաթն ամպերուն մեջ կկորսվի և ուր հրեշտակները կիջնեն երբեմն. թերևս անոնք զիս երկինք տանին»։ Սոսկալի ճամփորդություն մ'ըրավ ու հասավ երկրիս ամենեն վիթխարի լերան կատարը. ուրիշ բան չգտավ հոն, բայց եթե հավիտենական ձյունները։

***

Բոլոր այս ձեռնարկներուն ի դերև ելլելեն սրտաբեկ, մարմինը տարապայման հոգնութենեն և անոթության տանջանքներեն ուժաքամ, հոգին լլկիչ սևեռամտածման մը միշտ կառչած, Հրաչյա ինկավ ծառի մը տակ, անկարող այլևս շարժում մ'ընելու, անկարող այլևս լալու, անկարող նույն իսկ իր պաշտելիին անունը տալու։

Մահը, տեսնելով սիրո այդ մարտիրոսին տառապանքը, գթաց անոր վրա, և իր ցուրտ կմախքին արհավիրքը պառավ կնոջ մը ցնցոտիներուն մեջ ծածկելով, եկավ ըսավ Հրաչյային. «Ես կրնամ քեզ սիրելիիդ մոտ տանիլ»։ Հակառակ՝ իր ձայնը քաղցրացնելու համար ըրածջանքին, այն ոսկրեղեն կոկորդեն ելած շեշտն այնպես չոր էր ու խրո-

պատ, և այդ քարջերու մեջ փաթթված անծանոթը այնպիսի անվստահելի երևույթ մը ուներ, որ Հրաչյա անոր հավատք չընծայեց։ «Օ՜հ, ըսավ մտքին, իմ նվաբդիս գտնված տեղը հրեշտակ մը միայն կրնա ինծի զրուցել. ես իմ երիտասարդությունս մաշեցուցի գտնելու համար երկնքին ճամփան ու չգտա զայն. այս խեղճ պառավյալ կնի՞կն է որ պիտի զայն գտնե»։ Ու մերժեց հետևիլ պառավին։

Մահը հեռացավ՝ ուսերը թոթվելով։

* * *

Այն ատեն նոտավ ծառի մը տակ և անբուժելի տխրության մը մեջ ընկղմեցավ։ Հուսախաբությունները զինքը խորտակել էին, տառապանքները իր կյանքը չորցած տերևի մը պես տխեղծ դարձուցեր էին։ Աշխարհը հիմա իրեն կերևար ցավագին երազի մը մեջեն։

Առավոտ մը, երկարատև անձրևե մը հետո, տեսավ ծիածանը, որ խանավ դաշտերեն կբարձրանար ու երկնքին մեջ կերթար կկորսվեր։ Հիմար հույս մը ցնցեց զինքը։ «Ահա՜, մրմնջեց, ահա՜ օրհնյալ կամուրջը, որ զիս երկինք պիտի տանի»։ Եվ ուղղվեցավ դեպի ծիածանը։ Իր անցուցած չարատանջ կյանքը, իր արցունքները, ծոմապահությունները, ու մանավանդ հորի պես խոր իր վիշտը ծյուրած էին իր մարմինը, որ հոգվույն շուրջ ծածանող թեթև քող մը դարձած էր, այնպես որ ծիածանին եթերային հյուսվածքը իր ծանրության տակ չպատռեցավ։ Վեր ելավ անոր վրայեն ինչպես մրջյուն մը որ ժապավենի մը վրայեն կքալե։ Եվ քանի կբարձրանար, անճառ խնդություն մը սիրտը կողողեր. կմոտենա՜ր երկնքին, ա՜լ այս անգամ ապահով էր։ Եվ անհուն հրճվանքով կդիտեր դաշտը, որ վարը կհեռանար ու կմթննար։ Քիչ հետո ամպերուն մեջ հասավ. վեր նայեցավ, հուսալով տեսնել երկնքին դուռն ոսկեղեն։ Ավա՜ղ, երկինքը միշտ հեռուն էր, շատ ավելի վեր քան ամպերն ու ծիածանը։ Այս վերջին հուսախաբությունը այնպիսի անձկությամբ մը իր սիրտը համակեց, որ իր զգացած ցավին ծանրության տակ ծիածանը փլավ։ Ու Հրաչյա իր երազներուն կատարեն գահավեժ ինկավ վար։

* * *

Ինքզինքը գտավ մութ, շատ մութ տեղ մը։ Կանգի վրա պառկած էր, և հանկարծ իր ներքև ցնխատ հոգի խանավության մը զգաց։ Սոսկալի ցուրտ մը իր գեմքը կխածատեր, և փտության գարշահոտություն մը իր անդունքը չարշարեց։

Շրջմոլիկ հյուրի պես նվազ նշյուլ մը թանձր մութին մեջ սարդեցավ, ու Հրաչյա ոսկորներու խշրտուք մը լսեց։ Նշույլը ծավալեցավ, ու Հրաչյա տեսավ ալևոր կին մը, որ իր առջև եկավ կանգնեցավ. պառավն էր, որուն արդեն անգամ մը հանդիպած էր։

— Ո՞ւր կգտնվիմ, հարցուց պառաւին։

Պառավը պատասխանեց.

— Այստեղ է այն, զոր կսիրեիր։

— Ուրեմն երկինքը հո՞ս է։

Պառավը լուռ մնաց. մեկգի նետեց իր ցնցոտիները, և Հրաչյա տեսավ Մահը իր մոայլ մերկության մեջ։

ԼՈՒՍԻՆԻՆ ՆԱՄԱԿԸ

Լուսինն ի՞նչ կընե վերը, միս-մինակ։— Ամեն իրիկուն ելլել ծովուն ծոցեն կամ լեռան մը կատարեն և ամայի երկնքին մեջ ժամերով թափառիլ, շատ զվարճալի բան մը չէ։ Հաճախ այդ բանի վրա խորհած եմ, ու երբեմն ինծի թված է խորին ձանձրույթ մը նշմարել գիշերային ուղևորուհուն դժգույն դեմքին, պոստված հոնքերուն, խոշոր, կարմիր, ուռած աչքերուն և բերնին մեջ, որ կարծես մեծ հորանջման մը մեջ բաց է մնացած։ Ու շատ անգամ ինքնիրենս կրկնած եմ այդ հարցումը՝ «Ի՞նչ կընե Լուսինը վերը, միս-մինակ»։

Այնքան հետաքրքրվեցա ճշտիվ գիտնալու, թե ի՞նչ է Լուսինը և ի՞նչ կանցնի անոր հոգիին մեջ, որ վերջ ի վերջո որոշեցի իրեն խսկ ատիկա հարցնել նամակով մը, զոր իրեն ուղղեցի։ Ի՞նչ լեզվով գրեցի այդ նամակը, որպեսզի Լուսինն ըստծս հասկնար, ինչպե՞ս զայն իրեն հասցուցի, ասոնք գաղտնիքներ են, զոր մեջտեղ հանելու պիտի զգուշանամ անշուշտ։ Նամակիս մեջ իրեն ղրկեր էի բաներ մեր երկրեն ու բոլոր երազողներեն, որ անոր վրա կգտնվին. հետո անոր կարտահայտեի զմայլանքը, հիացումն ու սերը, զոր կզգանք այն անուշ ու գրեթե հոգևան լույսին համար, զոր կհոսեցնե գիշերներու թախծության մեջ. անոր կծանոթացնեի գլխավոր վարկածները, զոր մարդկային միտքը ցարդ հղացած է բացատրելու համար խկությունն ու դերը խորհրդավոր թափառողուհուն, և իրմե կխնդրեի, որ ինքն իսկ ըսեր ինծի ինչ որ է ինք իրոք, ինչ որ կընե երկնքին մեջ և թե ինչո՞ւ իր դեմքին վրա երբեմն կտեսնվի սրտնեղության ծամածռությունը։

Եվ Լուսինն ինծի պատասխանեց։

Ահա՛ իր նամակը, զոր կարդացի այն լույսովն իսկ, զոր վերեն կհոսեցներ իմ երկնային թղթակցուհիս.

«Որդի Երկրի.

Շնորհակալ եմ ձեզի այն հաճելի անակնկալին համար, զոր ինծի պատճառեցիք ձեր նամակով։ Անմխիթար առանձնությանս ամբողջ տրտմությամբը համակված, հավիտենական պտույտս կկատարեի երկընքի դաշտերուն մեջեն, երբ ստացա ձեր գիրը, զոր լեցուցեր էիք այնքան սիրուն զգացումներով։ Մեծապես զոհ եղա իմանալով, որ Երկրի մեկ բնակիչը կմտածեր վերջապես ինծի իսկ դիմել իմանալու համար, թե ես ի՞նչ եմ, և թե կնշմարեր ձանձրույթի ժանգը, որ իմ լուսավառ դիմակիս ետև կդիզվի։

Դուք երբեք պիտի չկարենաք հասկնալ, թե ինչ աստիճան ջիղերս ոտք կելլեն— և ասիկա դարերե ի վեր— լսելով այն բոլոր երգերն ու տաղերը, զոր ձեր երկրագունդի մարդիկն ինծի կուղղեն և որոնց մեջ կհամառին զիս մերթ մեռած աշխարհ մը, մերթ կենդանի աստվածուհի մը, մերթ լապտերի մը տեղ դնել... ու մասնավորապես կկատղիմ, երբ կտեսնեմ, որ անոնք կերևակայեն, թե պայծառության կեդրոնավայրը, երջանկության բույնն ու սիրո դրախտն եմ ես։ Դուք՝ մարդիկդ, ամեն ինչ երևույթներուն համեմատ կդատեք։ Ես ամենեն դժբախտ էակն եմ Աստաշուրյան։ Որովհետև գլուխ մըն եմ ես, միմիայն գլուխ մը, որ վիխթարի ուղեղ մը կպարունակե և որ ստիպված է, ամբողջ հավիտենականության մ'ընթացքին, զուտ մտային չարաչար աշխատանքի մը մեջ ինքզինքը մաշեցնել։

Ամեն ինչ կհասկնամ, և ինծի անկարելի է ապրիլ։ Զրկված եմ այն բոլոր գործարաններեն, որոնք հարկավոր են կյանքը վայելելու համար հասարակ կերպով, այսինքն լավագույն ձևով։

Կուզեմ սիրել, սիրվիլ, պայքարիլ, գործել։ Անկարելի։ Ունիմ զգայնություն մը, որ սկիզբեն ի վեր միշտ չգործածված մնացած ըլլալուն համար ավելի գերասուր դարձած է և հոռեգույն չարչարանքն է ատիկա։

Չեմ իսկ կրնար բարեկամի մը հաղորդել այն բոլոր դիտողություններն ու ծանոթությունները, զոր դարերու ընթացքին դիզած եմ, ամեն ինչ, որ գիտեմ բնության գաղտնիքներեն։ Հավերժական առանձնության մը դատապարտված եմ։ Աստղերը շատ հեռու են ինձմե. ու, ինձմե շատ ավելի երջանիկ, խումբ-խումբ հավաքված, իրենց աներևույթ բույներուն մեջ տեղավորված, գիշերները կանցընեն աղվոր պատմություններ իրարու պատմելով։ Արևը, որուն սիրուհին, գեթ, ավաղ, ուղեղային սիրուհի մը ըլլալու տենչով կտոչորիմ, ինձմե համառորեն խույս կուտա և հորիզոնին վրա անհետանալ կթուքա, երբ ես ծագիմ։ Երբեմն դիտմամբ կուշացնեմ իմ առավոտյան մեկնումս, որպեսզի ջանամ անոր մոտենալ և հետը բարեկամություն հաստատել, զո՞ւր ճիգ, ծուռ նայվածք մը կարձակե ինծի, որ զիս կդժգունեցնե, ու կանցնի, իմ իրեն ըրած դարպասս արհամարհելով։

Երբեմն ձանձրույթը զիս այն աստիճան կկրծե, որ կծյուրիմ, կհալիմ, թելի պես կբարակնամ. ինծի կթվի, թե մեռնելու մոտ եմ ու կուրախանամ ատոր համար... Ավա՜ղ, անագորույն ճակատագիր մը ինծի ցավաբեր անմահություն մը շնորհած է։ Այդ սպառման շրջաններուն կանոնավորապես կհաջորդեն հարության շրջաններ, իմ կենսական ուժերս նորեն ինծի կդառնան, ու նորեն կսկսիմ իմ անիմաստ ու միօրինակ կյանքս քաշկոտել։

Իմ միակ ժամանցս ձեր երկրին վրա անցած դարձածը դիտելու մեջ կկայանա. նույնիսկ ատիկա է այն պաշտոնը, որուն համար աստված զիս ստեղծած և զիս այս մշտնջենական գիշերային պտույտը կատարելու դատապարտած է։ Պետք է որ նոթագրեմ ամեն ինչ, որ տեղի կունենա ձեր երկրագունդին վրա և անոր այդ մասին տեղեկագիր տամ։ Կզզվիմ վերահսկիչի, լրտեսի այս արհեստեն, որ ինծի պարտադրված է. բայց ստիպված եմ կատարել զայն։

Եթե, գոնե, արձանագրել կարենայի գնդեղիկ, խելացի, շահեկան բաներ, որ ատակ ըլլան խանդավառելու, հրճվեցնելու իմինիս պես լավ հավասարակշռված իմացականություն մը։ Ավա՜ղ, դաղափար չունիք, թե ինչքան ծիծաղելի ու սոսկալի է տեսարանը, զոր կյանքն ըմբռնելու ձեր եղանակը կընծայե ինծի։ Թերևս պիտի նեղանաք այս վիրավորիչ ածականներեն, բայց եթե գիտնայիք ամեն ինչ, որ տեսած եմ ու դեռ կտեսնեմ ձեր աշխարհին վրա, ապահովապես համակարծիք պիտի ըլլայիք ինծի։ Դուք՝ մարդիկդ, որ ամեն ինչ ունիք ձեզի համար ներդաշնակ ու քաղցր կյանք մը հորինելու, ամեն ջանք կթափեք ձեր գոյությունը հետզհետե ավելի այլանդակ ու անհանդուրժելի դարձնելու համար։ Ամբարհավաճ ու անհետևողական, բնության օրենքներեն կհեռանաք, հազար կտոր կըլլաք հետապնդելու համար վտանգավոր ու պատրողական ցնորքներ, զոր ձեր ախտավարակ երևակայությունը ձեզի կներշնչե, փոխանակ հետևելու, հլուորեն, խաղաղորեն, թելադրությանը անվրեպ բնազդին, որ տիեզերքի հավիտենական օրենքներուն արտահայտիչն է։ Ի խնդիր բացարձակ Երջանկության, բացարձակ Արդարության, բացարձակ Զորության, բացարձակ Գիտության, բոլոր բացարձակներուն, որոնք ընդմիշտ անմատչելի են ձեզի, որ մեկ օրվան

արարածներ եք, կավրեք, կխանգարեք, կմթագնեք, կթունավորեք այն կարճ ժամը, զոր ունիք Երկրի վրա ապրելու։ Եվ ի՞նչքան անգութ եք իրարու հանդեպ։ Ի՞նչքան՝ առանց դիտնալու՝ անգութ եք ինքզինքնուդ իսկ հանդեպ։ Զարիք կգործեք հեշտանքով։ Բերանիդ լեցուն է ամենեն վսեմ բառերով, և ավելի վայրագ եք, քան ամենեն վայրագ գազանները։ Գիտե՞ք ձեր երկրագունդին այն միակ էակները, որոնց համար քիչ մը համակրություն ունիմ, ճիշտ այդ անասուններն են, զոր գուք կարհամարհեք։ Անոնք լուրջ են և համեստ, երբեք ծիծաղելի, երբեք զզվելի, միշտ տրամաբանական։ Անոնք ճշմարիտ ըմբռնումն ունին տիեզերական օրենքին, և անոնք ունին ամբողջ երջանկությունը, զոր աշխարհի մեջ կարելի է ունենալ։ Բայց իմ դերս կկայանա մասնավորապես մարդոց արարքները գիտելու մեջ, և այդ գործը իսկապես չափազանց տաժանելի է ինծի համար։ Շատ հաճախ կտեսնեմ հրեշային բաներ, ուր ցածությունը, վատությունը, կեղծիքն ու վայրագությունը անլուր ծայրահեղության մը կհասնին. այն ատեն է, որ զիս շատ կարմրած կամ շատ դժգունած կտեսնեք. ու երբեմն, այնքան զավեշտական տեսարաններ կպարզվին աչքերուս տակ, որ ա՛լ չկարենալով լրջությունս պահել, կսկսիմ քրքջալ, այդ պահուն է, որ գեմքս ձեզի լուսաշող կերևա։ Բայց ատիկա լեղի զվարթություն մըն է լոկ, ցավագին ուրախություն մը, որ զիս ավելի կտառապեցնե, քան իմ բարկության նոպաները։

Գիտի նախընտրելի, հավատացեք, փոքրիկ շուն մը ըլլալ երկրագունդին վրա, ապրիլ կարճ, բայց պարզ ու խաչաղ կյանքով մը, բոպե մը ճաշակել կյանքի բուռն հրճվանքը և, մտքի բոլոր անոտի տանջանքներեն զերծ, իրերու ոչ ծագման, ոչ վախճանին վրա խորհելով, օր մը անաղմուկ անհետանալ. ատիկա շատ ավելի ինծի հաճելի պիտի ըլլար, քան ապուշ կյանքը, որուն ստված, չեմ գիտեր իմ ո՞ր մեղքիս համար, զիս ընդմիշտ դատեր է։

Բայց ահա նամակ մը, որ ծայրահեղորեն երկնցավ։ Գրեթե այնչափ շաղակրատ ըլլալու վրա եմ, որչափ մարդկային արարած մը։ Ողջամբ կացեք։ Գիշեր բարի։

Ձեր խոնարհ աղախինը
Լուսին»

ԱՊԱԳԱ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՏԵՍԻԼ

Ինքզինքս կգտնեմ անսահման քաղաքի մը մեջ, որ միահարթ դաշտի մը վրա տարածված է։ Ո՛չ մեկ տուն, ո՛չ մեկ վաճառանոց, ո՛չ մեկ խանութ։ Միայն հսկայական շենքեր, որոնց մեջ մեքենաներու ճոնչյունը կլսվի, և տարապայման բարձրությամբ ու հաղթ ուռուցիկ իրանով աշտարակներ, որոնց կատարը կկանգնի վիթխարի հեռագիտակ մը՝ դեպի երկինքն ուղղված։ Փողոցներուն մեջ, կամ ավելի ճիշտը՝ այդ շենքերեն դուրս, որովհետև փողոցի նմանող ոչինչ կանանկի հոն, կատարյա՛լ ամայություն. ո՛չ մեկ պարտեզ, ո՛չ մեկ ծաղիկ, ո՛չ մեկ գալարիք. հո՛ղ միայն, հազ մը ան, չոր, կարծր, ու լերկ ծերունիի մը գանկին պես։

Երկինքը գորշ, տխուր, պաղ գույն մը ունի։ Եվ արևը, որ երկրիս մոտեցած ըլլալ կթվի, խոշոր արև մը տժգույն, կարծես ծերացած և անարյուն դարձած, ամպերուն մեջեն կթափե մսկոտ ճառագայթներ, որ կարծես կարսփան։ Եվ ահռելի կերպով ցուրտ է։

Ապշած, չորս կողմս կնայիմ, չգիտնալով թե ո՛ւր կգտնվիմ։ Եվ հանկարծ, տեսակ մը ներքնատեսությամբ կամ խորհրդավոր հայտնությամբ կհասկնամ թե այն տարօրինակ երկիրն ուր որ փոխադրված եմ՝ մեր աշխարհն է, ինչպես ան պիտի ըլլա 19.000.000-րդ դարուն, և թե մարդկային քաղաքակրթության վերջին փուլին է որ ականատես կըլլամ։

Այդ զարմանալի շենքերեն մեկուն դռնեն ներս կսպրդիմ։ Հսկա կանթեղ մը, ձեղունեն կախված, կուրացուցիչ լույս մը կսփռե, որուն քով արևուն վերջալուսային նշույլը զոր քիչ առաջ տեսա՝ խավար կթվի և այդ արվեստական պայծառության մեջ, անհամար մեքենաներու, գործիքներու, շիշերու, խողովակներու, կաթսաներու շուրջը, տակը, վրան, քովը կզիռա, կխլրտի, կվազե, կցայտքե, կթռչի, կգործե, առանց ճիգ մը հանելու, մարդերու ամբողջ մրջնակույտ մը։ Մարդ կսեմ, որովհետև ուրիշ բառ չեմ գտներ, հատկանշելու համար այդ ցնորատեսիլ էակները, որոնք շատ տարտամ նմանություն մը ունին մեր օրյա մարդոց։ Գանկեր են՝ մեկ մերթ տրամաչափով, բոլորովին զուրկ մազե, պեխե ու մորուքե, կես մերթ երկարություն ունեցող մարմնի մը վրա հասատված։

Բայց ահա կնշմարեն զիս, ու իսկույն շուրջս կբազմի պզտիկ շարջանակ մը, որ հետզհետե կստվարանա։ Նախ զարմացմամբ կդիտեն զիս, հետո կսկսին ծիծաղիլ։ Եվ ի՞նչ ծիծաղ. անդունդի պես լայն բերաններ կբացվին այդ մեծածավալ դեմքերուն վրա, որոնք խոշոր ու անորակելի ծամածռությամբ մը կկծկվին։ Եվ իրենց հարաճուն զվար-

թության մեջ, իրենց փոքրիկ ձեռքերով իրենց պտրտիկ փորը կբռնեն և իրենց ոտքերը գետինը կգարնեն։

— Գլուխը տեսեք,— կըսե մին, արտառոց լեզվով մը, զոր հրաշքով կհասկնամ,— ինչքա՜ն մանրիկ է։

— Ի՜նչ երկայն են սրունքները։

— Բերնին շուրջը մազ ունի։

— Գլխուն վրա իսկ մազ կա։

— Ի՜նչ փոր։

— Տարօրինակ անասուն մը ըլլալու է։

— Թերևս այլասերած կապիկ մըն է։

Ա՛լ չկրնալով ինքզինքս զսպել, կընդմիջեմ իրենց բացագանչությունները և կգոչեմ զայրագին.

— Պարոննե՛ր, ես մարդ եմ, ԺԹ. դարու մարդ մը։

— Հմմասփյո՜ւռ ապշություն։ Ամբողջ սրահին մեջ խոսքս իրարու կկրկնեն։ Եվ այն ատեն ավելի ուշադրությամբ կդիտեն զիս։ Ա՛լ ամենքը դադրած են աշխատելե։

Կառնեն զիս բարձր տեղ մը նստեցնեն, և շուրջս հավաքվելով տեղեկություններ կհարցնեն ԺԹ. դարու մարդկության վրա։ Ամբողջ պերճախոսությունս ժողվելով, կներբողեմ մեր դարը. կխոսիմ մեր արվեստներուն, մեր գրականության, մեր գիտության մեր բարքերուն վրա. ամեն բառս խորին ապշություն առաջ կբերե 19.000.000-րդ դարու մարդոց մեջ։

Եվ երբ կավարտեմ ճառս, կխնդրեմ, որ անոնք ալ իմ հարցումներուս պատասխանեն։ Կհավանին, և իրենցմե մին հանձն կառնե բոլորին կողմե այդ նեղությունը կրել։

Ա՜հավասի՛կ մեր խոսակցությունը, զոր հավատարմորեն կնոթագրեմ, առանց որևէ բան ավելցնելու, զանց առնելով միայն հիշատակել այն անվերջ քրքիջները, որ յուրաքանչյուր հարցումիս կբարձրանան հազարավոր բերաններե։

Հ. — Ո՞վ է հիմա ձեր բանաստեղծը։

Պ. — Բանաստեղծությունը մին էր նախնական մարդկության հիվանդություններեն, տեսակ մը ուղեղային ծյուրախտ միքրոպն ու դարմանը շատոնց գտնված են։

Հ. — Ըսել է բանաստեղծություն, երաժշտություն, թատրոն չունի՞ք այլևս։

Պ. — Ատոնք հիմա կապիկներուն մեջ շատ ծաղկեալ վիճակի հասած են։

Հ. — Կապիկնե՞ր...

Պ. — Այո՛, անոնք անթիվ բանաստեղծներ ունին, և այս իրիկուն իսկ իրենց հռչակավոր մեկ երաժիշտին հոբելյանը տոնելու վրա են։

Հ. — Բայց կապիկները...

Պ. — Կհասկնանք ձեր զարմացումը։ Կապիկները այն չեն հիմա, ինչ որ էին ատենով։ Իրենց ցեղը զարգացած է, բնաշրջության օրենքներուն համեմատ։ Անոնք հիմա կմտածեն, կխոսին, կկարդան ու կերգեն, ու նույնիսկ կհետևին հեռվեն մեր մտավորական շարժման։ Ու միայն կապիկները չեն, բոլոր կաթնակերները հիմա համալսարան և Ակադեմիա ունին։

Հ. — Ձեր դպրոցները ո՞ւր են։

Պ. — Մենք դպրոց չունինք այլևս։ Ապրիլ սկսած վայրկյանեն, մարդ մը արդեն յուրացուցած է իրմե առաջ կուտակված բոլոր ծանոթությունները։

Հ. — Բայց ինչպե՞ս, դպրոցն ուրեմն մոր արգանդին մե՞ջ փոխադրած եք։

Պ. — Մայր չկա այլևս։ Ատիկա սերնդագործության դանդաղ և կոպիտ եղանակ մըն էր, որ կարգիլեր գիտության առաջադիմությունը։

Հ. — Ուրեմն կինն այլևս գոյություն չունի՞։

Պ. — Ո՛չ, այդ աղետաբեր էակը, որ մարդուն կյանքը կպղտորեր, որ զայն դեպ ի սկզբնական անասնությունը կքաշեր կտաներ և զայն ուղեղային գործունեությենեն կհեռացներ, շատոնց ի վեր անհետացած է։

Հ. — Ի՞նչպես ուրեմն կնեք մարդկային սեռը պահպանելու համար։

Պ. — Մասնավոր գործարաններ ունինք, ուր մարդիկ կշինեն։

Հ. — Հէ՞...

Պ. — Այո՛, ատիկա գյուտ մըն է, որ երկու միլիոն տարի առաջ կատարված է։ Ատոր կիրակրումը հիմա շատ դյուրին դարձած է և կկատարվի բացարձակորեն անթերի կերպով։ Անոնք, որ մարդ կշինեն, անոր ուղեղին մեջ կդնեն նախկին շրջանի բոլոր ծանոթությունները պարունակող տարրեր. ատոր համար է որ նորածինը սորվելու պետք չունի. իր ընելիքն ուրիշ բան չէ, բայց եթե դարավոր գործը առաջ տանիլ։

Հ. — Սիրո քաղցրություններն ուրեմն անծանո՞թ են ձեզի։

Պ. — Ատիկա վտանգավոր հիվանդություն մըն էր, տեսակ մը կատաղություն, որ մեր նախնիքները կշարշրկեր և որմե շատոնց ի վեր հաջողած ենք մարդկային սեռն ազատել։

Հ. — Մե՜ղք, մե՜ղք, լուսինը ուրեմն այլևս սիրո տեսարաններ չի լուսավորեր։

Պ. — Լուսին չկա։ Մեկ միլիոն տարի է որ ան կտոր-կտոր եղավ ու երկնաքարերու ձևով երկրիս վրա ինկավ։

Հ. — Արևն ալ շատ հոգնած կթվի ինծի։ Ու երկիրը ինծի շատ ծերացած երևցավ։ Իր մահը թերևս մո՞տ է։ Մարդկային սեռը ա՛լ շատ ժամանակ չունի թերևս ապրելու։

Պ. — Երկրիս մահն արդարև բավական մոտ է։ Բայց ասիկա մեզի մտահոգություն չի պատճառեր։ Այն օրն ուր այդ բանը պատահի, ուրիշ մոլորակ մը կանցնինք։

— Ի՞նչպես։

— Մոլորակներու միջև հաղորդակցությունները հաստատված են երեք հարյուր հազար տարիե ի վեր։ Հա՜, աղեկ միտքս ձգեցիք։ Ներեցեք, ըսելիք մը ունիմ Լուսնթագի մեր բարեկամներուն։

Եվ բերանը խոշոր խողովակի մը փակցնելով կպոռա։

— Ի՞նչ լուր մեծ Առեղծվածեն։

Կլսեմ հեռավոր ձայն մը.

— Գործը լավ ճամփու մեջ է, լուծելու վրա ենք Առեղծվածը։

— Ի՞նչ է այդ առեղծվածը, կհարցնեմ։

— Խոսքը այն գլխավոր խնդրո վրա է, որ բոլոր խորհող էակներուն միտքը կզբաղեցնե. խոսքը տիեզերական կյանքի առեղծվածին վրա է. պետք է էության ծագումը, նպատակն ու վախճանը երևան հանել. բոլոր մոլորակները հիմա ասոր միայն կաշխատին. արդեն հաջողեցանք արարչության խորհուրդներուն երեք քառորդը բացատրել, և մոտ է այն օրն, ուր ճշմարտությունը ինքզինքը մեզի ցույց պիտի տա՝ առանց ոևէ քողի։

Այս խոսքերուն, չեմ կրնար ժպիտ մը զսպել, հիշելով, որ արդեն բավական հաճախ ասոնց պես ֆրազներ լսած եմ մեր խոնարհ ԺԹ. դարուն ինչ ինչ քուրմերեն։

— Ներեցեք, կսեմ խոսակիցս ընդմիջելով, ներեցեք եթե ձեզ վար կիջեցնեմ այդ վսեմ բարձունքներեն. ձեր քաղաքին մեջ ոչ տուն, ո՛չ խանութ տեսա։ Ո՞ւր կբնակիք, ո՞ւր կճաշեք, ո՞ւր կքնանաք։

— Մենք չենք բնակիր, մենք չենք ճաշեր, մենք չենք քնանար. ատոնք ժամանակ կորսնցնելու միայն կծառայեն։ Կարելի՞ է մեծ առեղծվածն սպասցնել։ Արդեն այլևս պետք ալ չունինք այդ բաներն ընելու։ Չենք մսիր, որպեսզի տանը մը մեջ պատսպարվինք, որովհետև շատոնց է, որ գտած ենք «ցուրտի հիվանդության» դարմանը։ Մենք երբեք չենք անոթենար...

— Չե՞ք անոթենար...

— Երբե՛ք։ Յաջողած ենք մեր մարմնոյն տալ կատարյալ և անփոփոխ հավասարակշռություն մը, որով ան իր ուժերեն ոչինչ կկորսնցնե ու հետևաբար պետք չունի սնունդ առնելու։ Գալով քունին, ատ ալ նեղացուցիչ հիվանդություն մըն էր, որ մեր նախահայրերը կստիպեր իրենց աշխատությունները կասեցնելու։ Անոր միքրոպը ջնջելու միջոցը գտանք։

— Բայց շատ միօրինակ ըլլալու է ձեր կյանքը։ Ծնելենդ մինչև ձեր մահը ձեր բոլոր ժամանակը այդ առեղծվածին հետ կանցնեք։

— Մահ չկա՛ այլևս, սիրելի պարոն։ Մահը նախապատմական հիվանդություն մըն էր, որուն միքրոպը...

— Նորե՞ն միքրոպ...

— Անշուշտ։ Ամեն ինչ իր միքրոպն ունի, և ամեն միքրոպ կրնա ջնջվիլ էլեկտրականության որոշ չափով մը, զոր գիտնալու է հաշվել։ Տիեզերքը երկու առանցք ունի, միքրոպն ու էլեկտրականությունը։ Ամեն բան...

Ու մարդուկը կնետվի երկարապատում ճառի մը մեջ, ուր «միքրոպ» և «էլեկտրականություն» բառերը ամեն վայրկյան կկրկնվին հանկերգի մը պես։

— Բայց դուք չե՞ք հոգնիլ, կպոռամ, ձանձրույթին ինչ ըլլալը չե՞ք գիտեր։

— Օ՜հ, կպատասխանե հաղթական ձևով մը, արդեն չորս միլիոն տարի կա, որ այդ զզվելի հիվանդության միքրոպը ջնջելու միջոցը գտան...

Այդ րոպեին, շնչահեղձության պես բան մը կզգամ, որ կուրծքս կճնշե։ Մեծ մառախուղ մը կիջնե շուրջս և ամեն ինչ կծածկե։

Ու հանկարծ, ինքզինքս իմ անկողնիս մեջ կգտնեմ նորեն, արթնացած այն մղձավանջեն, որ քունիս մեջ եկեր էր զիս լլկել։ Գեղապյծառ գիշեր մըն է։ Պատուհանես կտեսնեմ լուսնին լույսը, որ իր սատափագիշեր մըն է։ Պատուհանես կտեսնեմ լուսնին լույսը, որ իր սատափագիշեր մըն է։ Պատուհանես կտեսնեմ լուսնին լույսը, որ իր սատափագիշեր մըն է։ Պատուհանես կտեսնեմ լուսնին լույսը, որ իր սատափ-ամշող ծիծաղը վճիտ երկնքին մեջ կծավալե։ Խումբ մը պատանիներ ճամփուն վրայեն կանցնին երգելով։ Դեռ ահարկու տպավորությանը տակ այն տեսիլին, որ ինծի ցույց կուտար ապագա մարդիկը՝ առանց սիրո և առանց լուսնկայի ապրող, քունին քաղցրությենեն և մահվան հանգչեցուցիչ հույսեն զուրկ, մեքենաներու և գործիքներու վրա հավիտենապես ծռած, և որոնց միակ զբաղումը, միակ խտեալը, միակ հաճույքը այդ ահռելի Առեղծվածն է, կորհնեմ երկինքը, որ զիս ԺԹ. դարուն ծնցուցեր է։

ՍԱՐՍՈՒՌԸ

Քանի մը օր առաջ գացած էին — երեքն ալ — այդ նույն գերեզմանատան մեջ թաղել իրենց հոգվույն հոգին, այն զոր կյանքեն ավելի կսիրեին, ու հիմա առաջին այցը կուգային տալ իրենց պաշտելույն գերեզմանին։

Մին, փարթամ սեղանավոր մը, մարմարակերտ մահարձանի մը ոտքը նետեց իր ճոխ պսակը։ Երկրորդը, գործավոր մը, դաշտային ծաղիկներու պարզուկ փունջ մը ձգեց քարի կտորի մը վրա։ Եվ երրորդը, աղքատ ձորձազգայց բանաստեղծ մը, փայտե խաչի մը մոտեցավ ու երեսի վրա գետինը պառկելով ճակատը հողին կքսեր խելահեղ։

Հանկարծ, երեքն ալ սարսռացին, սարսուռ մը, որ իրենց մարմնույն մեկ ծայրեն մյուսն անցավ ու գնաց իրենց սրտին մեջ կեդրոնացավ. և ասիկա մեղմ ու պարզ սարսուռը չէր վշտի մը որ կարտահոսի, այլ ցուրտ, չոր ու կծու սարսուռ մը, որ զիրենք հանկարծ ցնցեց, առանց որ գիտնային թե ինչու։

***

Հողին տակ, իրենց սև անկողիններուն վրա ընկողմանած, երեք մեռելները կխոսակցեին, անհատնում շաղփաղփանք մը, որ գեր կհընչեր այդ մահաշուք կայանին թախծալից պարապին մեջ։

— Օ՜հ, կսեր մին ոսկրեղեն ծիծաղով մը, ինչպես քրքջալու փափաք կզգայի, երբ խեղճ մարդուկս հազարերորդ անգամ ըլլալով ծունկի կուգար առջևս և շատ ծիծաղաշարժ ձևով մը «կսիրե՜մ քեզ» կսեր։ Դրամի մարդոց ամենեն զգայունն էր. և եթե իր զգացումները զիս կտաղտկացնեին, իր դրամը գիտեի գործածել. սիրականներս ամենքն ալ անոր համը նայեցան։ Կբավեր, որ գլուխս վար ծռեի ամեն անգամ որ «կսիրե՞ս զիս, հրեշտակս», մլավեր։

— Իմինս, կսեր երկրորդը, էշուն մեկն էր, հաստ ու անշնորհք գործավոր մը, որ խելքը կթոցներ վրաս. առտվեն իրիկուն քրտինք կթափեր բոլոր քմահաճույքներս գոհացնելու համար, և իմ քմահաճույքներս միշտ ի վնաս իրեն էին. բայց ինքը այդ բաները հասկցող մարդ չէր, ու մինչև մահը այնչափ ապահով մնաց իմ հավատարմությանս, որքան ես՝ իր ապուշությանը։

— Ես, ըսավ երրորդը, անկեղծորեն կսիրեի իմնիս, բայց զայն շատ սիրելուս համար էր որ միակ անգամ մը զինքը խաբեցի։ Գիշերներ կլուսցներ անքուն և անոթի՝ ոտանավորներ գրելով։ Սիրտս կճմըլվեր տեսնելով, որ իր կյանքն ու իր տաղանդը թշվառության մեջ կմաշեին։ Բարի էր ան, հեզաբարո, սիրալիր, ուներ ազնիվ ու միամիտ հոգի մը, հոյակապ բանաստեղծություններ կշարադրեր. զմայլելի տողերով իմ դեմս ներբողացած էր. բայց իր ապրուստը ապահովելու համար դրամ վաստկելու ձևը բնավ չէր գիտեր։ Այո՜. զինքը շատ սիրելուս համար խաբեցի զայն, ու երբեք չգիտցավ թե ինչպես շահած էի այն դրամը, զոր մը իրեն տվի, որպեսզի անոթութենեն չմեռնի։

***

Գերեզմանին խոնավ խավարին խորը փսփսացված այս խոսքերը հողին մեջեն սողոսկեցան ելան վեր, խոտերուն ծայրը դողդողացող ցողին, ծաղիկներուն բաժակեն գոլորշացող բուրման, օդին մեջ թռչտող զեփյուռին խառնվեցան, թունավորելով ցողն ու բույրն ու զեփյուռը և ծնունդ տալով սարսուռին որ երեք սգավորները ցնցեց։

Եվ սակայն սգավորները — երեքն ալ — հանդարտ սրտով իրենց տունը դարձան, որովհետև չէին գիտեր թե ինչու սարսռացին։

ՁՅՈՒՆԻՆ ՔԵՐԹՎԱԾԸ

Ի՜նչ մոգական, ի՜նչ խոլական, ի՜նչ աղու և աննյութական բան, ձյունը։ Երկնքին գորշութենեն ուր կծնի, մինչև հողին ցեխոտ սևությունն ուր կուգա մեռնիլ, իր նազելատատան դարձդարձիկ վայրէջքը, ի՜նչ քերթված։ Խորհրդանշանը ամեն բանի, որ բնության մեջ կա մաքուր, թեթև, կուսական։ Թերթե՜ր աստվածային ծաղիկներու, որոնց լուսանյութ տունկերը վերը՝ Արքայության մեջ կրուսնին և զոր հրեշտակները մեր աշխարհին վրա կթափվեն ձմեռվան տխրությունը զվարթացնելու համար։

Ինչ հրճվանք, ճերմակության այդ տիեզերական տիրապետությունը, այդ հաղթանակն ամբծության գույնին, այդ ամենաշուք ցոլացումը գերագույն անմեղության մը։ Եվ ի՜նչ անսահման ու հոգեգրավ քմապատկեր, այդ հսկա վալսը՝ անծայրածիր միջոցին մեջ սանձարձակ, հորձանապտույտ այդ վալսը բյուրավոր ճերմակ թիթեռնիկներու։

***

Դիտեցեք սա բնանկարը, պարզ ու վսեմ, ճերմակով ու սևով միայն կազմված սա պարզ ու վսեմ բնանկարը, զոր դիզված ձյունը կհորինե։

Ան դաշտերը նիրհող սպիտակությանց խաղաղ լիճերու կիրճեն, մութ ցցվածքներուն եղերքը ճերմակ շուք մը կդնեն, տարօրինակ գիծեր կքաշեն, արտառոց դեմքեր կգծեն տուներուն ճակատը, պատերուն վրա խոշոր ճերմակ արատներ կցանցեն, պատուհաններու ապակիներուն վրա ճերմակ ու նուրբ ծաղիկներ կասեղնագործեն, ծառերու սև ճյուղերն ի վար ճերմակ կակուղ տերևներ կկախեն։

* * *

Հիմա, հովը, իր բոլոր շղթայազերծ կատաղության մեջ, իր խելառ ու հզոր թռիչով միջոցը կկտրեն կանցնի։ Ձյունը որ օդը կլցնե և անոր մեջ կերերա, այլևս ո՛չ ձև ունի, ո՛չ մարմին, անորոշ, անորակելի, անընմբռնելի ճերմակություն մըն է, ձյունը իր հյուլեներուն վերածված, կարծես ճերմակ մուխ մը, որ միջոցին մեջ կալեծփա, հովին քմահաճ մոլեգնութենեն մտրակված, պատռտված, բզկտված։

* * *

Ահա՛ դաշտ մը, ծածկված կակուղ խոնավ մը, այնքան կակուղ, որ կարծես ձմեռվան սպիտակ դալարիք մըն է հողին բուսած։ Ի՞նչ սքանչելիք, տեսքն այդ մեծատարած ճերմակ արոտավայրին, ուր կթվի թե ցնորքի հոտեր քիչ հետո պիտի գան այդ ճերմակ խոտերուն մեջ արածիլ։

* * *

Սառը ձյունին անգութ ձեռն է։ Ան թիթեռնիկը բյուրեղի, ծաղիկը քարի կիրճեն։ Փափուկ, թեթև, միամիտ բանը կարծք, հատու, նենգ բան մը կդառնա։ Տանիքներու եղերքն ի վար կոնաձև կկախվին սառույցի շարքերը. գետինը կակուղ ճերմակ գորգին տեղ, լպրծուն կարծրություն մըն է, գորշ-ճերմակ, որ կտարածվի։ Քալվածքը հիմա դեղևուն կդառնա, թանձր մութի մեջ խարխափումի պես բան մը վտանգի վրա տոտիկ տոտիկ կասկածոտ ու համր քայլերու շարք մը։ Եվ ասիկա մեզի կհիշեցնե այն հավերժական օրենքը, որ կնոջ ճերմակ գեղեցիկ կուրծքին մեջ քարե սիրտը կդնե և սառին դարանը ձյունին ճերմակ գեղեցկության մեջ։

* * *

Բայց ահա ձյունհալը։ Անիկա ողբալի մահն է ձյունին։ Գորշ վաթագույրը որ երկինքը ծածկված էր, ծվիկ-ծվիկ կպատռտի, կշոգիանա,

կանհետի, երևան հանելով արևը, անփայլ մսկոտ, դժգույն արև մը, բայց որուն ճառագայթները բավական ուժ ունին սպանելու համար այն թեթև, նրբին, գրեթե երազային էակը որ ձյունն է։

Այն ատեն կսկսի փլզումը սպիտակության մեծ ճարտարապետության, զոր միլիոնավոր ձյունագնդակներն իրենց կուտակմամբ կառուցած էին։

Ճառագայթները կմղտացնեն, կաղտոտեն ու հետո կչքացնեն ճերմակությունը, կավրշտկեն գիծերը, իրար կխառնեն ձևերն ու վերջ ի վերջո բոլորովին կավրեն կջնջեն ձյունին մաքրամաքուր զմայլելի գործը։

Ու տրտմությամբ կդիտեմ խեղճ աղվոր ճերմակ ձյունին անարատ հոգվույն համբորեն, անգթորեն, գռեհկորեն մեռնիլը, մինչդեռ իր շուշանաթույր մարմինը սև ցեխ կդառնա ու փողոցներուն մեջ կթանձրանա, տղմուտ հեղեղ կդառնա ու զառիթափներն ի վար կհոսի, ջրկույտ կդառնա և փոսերուն մեջ կփռվի, արցունք կդառնա ու երկարորեն, կաթիլ, կաթիլ, կարծես ինքն իր վրա լալու համար, տանիքներու եղերքն ի վար կթափվի։

ՔՈՒ ՄԱՂԵՐԴ

Երևագ ի վար, ինչպես քող մը սև, թափե՛ մաղերդ, զոր կսիրեմ, ճերմակ եղեռգ ի վար, աղվո՛ր աղջիկ, թափե քու սև մաղերդ։

Թափե՛ մաղերդ, և թող ծածկեն ճակատդ, անբիծ ճակատդ, որուն ետին քու խոլ մտածումներդ կան նստած, քու չար մտածումներդ, որ կդավեն ինծի դեմ և զոր կատեմ։

Թափե՛ մաղերդ և թող անոնք աչքերդ ինծի անտես դարձնեն, քու գեղեցիկ, պայծառ աչքերդ, որոնց խորը կշողա քու նենգավոր ծիծաղդ, քու ծիծաղդ, որ իմ տանջանքս է։

Թափե՛ մաղերդ, և թող սքողեն քու բերանդ, քու նուրբ, ծիրանագույն բերանդ, ուր կբնակին քու սնոտի խոսքերդ, քու ստող խոսքերդ։

Թափե՛ մաղերդ և այդ մռայլ կոհակին մեջ ընկլուզված անհետացիր, ինչպես լուսինը թուխ ամպի մը ետև կանհետանա։

Մաղերդ բարի են։ Անոնց հպումը բեհեզի պես փափուկ, զով է և

մաքուր, ինչպես քրոջ համբույր մը, և անոնց հալած եբենոսի փայլուն սևության մեջ գիշերին անհուն խաղաղությունը կքնանա։

Մազերդ բարի են։ Անոնք իրենց երկար ու խորունկ հյուսկեններուն մեջ պահած են ոգեկան բուրմունքը, անմեղ բուրմունքը նախնական Եդեմին, և իրենց անուշահոտ լռության մեջ անոնց սարսռուն թելերը երջանկությունը կդաշներգեն։

Թափե՛ մազերդ, հոսեցուր անոնց մեծ քաղցր ստվերը դեմքիդ վրա, մարմնուդ վրա, տարածե զայն աշխարհիս վրա ու բովանդակ կյանքին վրա։ Թող բոլոր բիրտ լույսերը, որոնք աչքերս կհոշոտեն, թող բոլոր խաբեբա գույները, որոնք սիրտս կլլկեն, անհետանան քու մազերուդ անսահման ու խաղաղաբեր խավարին մեջ։

ԱԾՆԱՆ ԵՐԳ

Երբ իմ սերես ձանձրանաս ու երբ ես ալ ինքզինքս այլևս անարժան զգամ քեզ սիրելու, երթա՛նք՝ աշնան իրիկուն մը՝ մեծ անտառը, ուր դեղնած տերևները մեր ոտքերուն տակ խշրտան, երթա՛նք իրիկուն մը, այն պահուն, ուր արևն իր օրհասական լույսին անարյուն ճաճանչները կերկնցնե շորցած ոստերուն մեջեն, ու երկուքս՝ մինակ, դալկահար տերևներուն տակ թաղենք մեր սերը։

Թաղե՛նք մեր սերը ոտքն այն ալևոր կաղնիին, որ մեր առաջին հանդիպումը հովանավորեց, արի ու խոհուն տրտմությամբ մը թաղե՛նք մեր աղվոր գանձը։ Եվ որպեսզի ոչ ոք անոր հանգիստը վրդովե, որպեսզի ոչ ոք գիտնա անոր գոյությունը, անոր վրա ո՛չ շիրիմ կանգնենք, ո՛չ խաչ տնկենք։ Անտառին մեջ ծաղիկներ ժողվենք, վայրի ծաղիկներ ժողվենք ու թափե՛նք անոր վրա, որ ծաղիկն էր մեր հոգիին, ու թռչուններեն, որոնք զայն իրենցմե կհամարեին, խնդրե՛նք, որ անոր վրա երգեն։

Ու երբ առանց կերոնի և առանց խունկի, ամայի անտառին մեկ անկյունը, դեղնած տերևներուն տակ, հողուն խորը, շատ խորը թաղենք մեր պաշտելի մեռելը, ետ դառնա՛նք, լռիկ ու խաղաղ, յուրաքանչյուրս իր ճամփեն, անարյուն ճաճանչներուն տակ արևուն հոգեվարքին։

ՕՁԸ

Ինծի ըսին, ո՞վ սիրելիս, թե քու հոգիդ հայրենիքն է շուշաններուն և թե հոն լույս մը կշողա ավելի մաքուր քան լույսը լուսնին։

Աչքերդ էին, որ ըսին ինծի, աչքերդ, որոնք դեռ չեն ստեր. և շրթներդ էին, որ ինծի ըսին, շրթներդ, որոնք դեռ չեն ստեր և իր լեզվովն արշալույսին, քու ժպիտդ էր որ ըսավ զայն ինծի։

Ուրախ ինչպես պանդուխտը, որ օտար հողերու վրա երկար ատեն թափառելե հետո իր ծննդավայրը կդառնա, ճամփա ելա, ո՞վ սիրելիս, դեպի դրախտը քու հոգվույդ։

Ծովն, ուրկից անցա, ծովն էր իմ արցունքիս։ Ու թեթև, ինչպես շունչը վարդերուն, նավակը որ զիս կառներ կտաներ, իմ երազս էր, դիմացս, նստած՝ լռիկ, Հույսը մեղմորեն կթիավարեր։

Կանանչ էր ափը, ու երբ հոն ելա, ա՛լ մենակ էի։ Օդին մեջ բուրումներ կհառաչեին։ Ծառերուն մեջեն, որոնցմե ծաղկյալ սպիտակություններ կձյունեին, անճառ երաժշտություն մը կհոսեր։ Այգային լույս մը, արծաթազօծ վարդերանգությամբ, միջոցին մեջ կթրթռար։

Եվ անսահման էր բնանկարը։ Կաթնաթույր հեռաստաններ լուսալիր պարապի մը մեջ կերազեին։ Օդին մեջ կլողային նրբաձև ու թեթև թռչուններ՝ երփներանգ փետուրներով։ Ճերմակ վարդեր կժայթքեին գետնեն. և արևը, դալկահար ճառագայթներով՝ որ կիզիչ չէին, ճերմակ էր ինչպես քամելիա մը։

Եվ զգացի, հափշտակված, Գորովներու Հովիտեն, ուր մեծ գեղեցիկ ծառեր իրենց քաղցր հովանին ճերմակ դառնալու հոտի մը վրա կթափվեին, Մաքրությանց Դաշտը, ուր ճերմակ հագված մանուկներ ծաղիկներ կքաղեին երգելով։ Բյուրեղե այրի մը մեջ, աղամանդե գահու մը վրա բազմած, տեսա Գութը, պայծառադեմ ու խոհուն, ու Միամտությանց ծառուղիին մեջ, քաղցր ձայն մը հեքիաթներ պատմեց ինծի։

Անմեղության Պուրակին ծոցը, ուր անտես թռչուն մը խորհրդավոր երգ մը կգեղգղեր, խորը թափանցիկ ստվերին որ հոն կծածաներ ու թավշային զգվանքով մը այտերուս կքսվեր, մետաքսի պես փափուկ հողեն կսլանային շուշաններ, երկար ու անձայն, իրենց բուրմանը մեջ նվաղած։

Բարակ բուներով ծառերուն վրա, տերևներու կանանչ ժանյակին մեջ, աղավնիներ էին թառած։ Եվ, ինչպես սրբարաններուն մեջ, աչքերը վայրահակ, ձեռքերը միացուցած, Հրեշտակ մը կաղոթեր։

Սարսուռ մը շուշանները երերցուց։ Բուրումները այնչափ սաստկացան, որ կուրծքիս մեջ սրտիս թուլնալն զգացի։ Աղավնիներն իրենց

ճերմակ թևերը կիսովին բացին, տերևները քաղցր բառեր մրմնջեցին, և իր աստվածային լեզուին մեջ, Հրեշտակը ամբողջ բարությունը երգեց։

Ինչո՞ւ սիրտս գերագույն արբեցության այդ վայրկյանին մեջ չմեռավ։ Ինչո՞ւ չցնդեցա ու անշոշափելի բուրմունքի մը մեջ չփոխվեցա, խառնվելու համար շուշաններու բուրմունքին, ո՜վ սիրելիս, Դրախտին մեջ քու հոգիիդ։ Ավա՜ղ, սուլում մը բարձրացավ հանկարծ, և երկու զմրուխտներ ստվերին մեջ պսպղացին։

Շուշանի մը ցողունին փաթթված, փոքրիկ օձ մը, ժապավենի մը պես բարակ, գլուխը ցցեր էր։ Իր պզտիկ կանաչ բիբերը վրաս սևեռացան։ Հրեշտակը դադարեցուց իր երգը, և ահա ինչ որ իր չարագուշակ նայվածքին մեջեն փոքրիկ օձն ըսավ ինծի.

«Ծաղիկներուն ծոցն ու հոգիներուն խորը, ես պահվտված կկենամ, իմ ժամուս սպասելով։ Ամեն մաքրություն իմ նայվածքիս բոցին տակ կշոգիանա. իմ լեզուիս հպումով՝ գորովը կթոռմի, բարությունը կմեռնի։

«Ես ծաղիկները կխամրեմ ու հոգիները կաղարտեմ. ես պտուղները կփտեցնեմ և աչքերը կթունավորեմ։ Ամենեն անուշ նայվածքը մարդասպան դանակի և ամենեն անարատ համբույրը գեհենի կփոխեմ։ Հազար անուն կուտան ինծի, ու ոչ մեկ անուն ունիմ։ Եվ հավիտենական եմ ես»։

Օձը լռեց, և զմրուխտները մարեցան։ Բայց աղավնիները վայեցին, տերևները ցավագին մրմունջ մը արձակեցին, շուշաններն իրենց գլուխը հակեցին, Հրեշտակը թևերովը դեմքը սքողեց. օդին մեջ փտության ուրվականին հոտն առի. ու լալով փախա քու հոգիեդ, ո՜վ իմ սիրելիս։

ԼԱՑՈՂ ԿԻՆԸ

Հուշերուն մեջ, երբ զանոնք երբեմն թղթատենք մեր սրտին խորը, կգտնենք ընդարձակ վեպեր իրենց բովանդակ ընդլայնումով, իրենց լույսի նախերգանքով, իրենց տենդի գլուխներով և հաճախ իրենց աղետի վերջաբանով. կգտնենք նաև պատմվածքներ, փոքրիկ սիրուն պատուհաններ, որ կյանքի սիրուն բնանկար մը կշրջանակեն. կհանդիպինք հոն քերթվածներու, ուր դեռ կթրթռա, ժամանակեն մեղմացած, մեր երբեմնի հոգիին արցունքներուն ու ծիծաղներուն արձագանքը։ Ու հանկարծ, մրոտված էջերուն մեջեն կբացվին պարապ էջեր, որոնք, ավելի վրդովիչ, քան եթե բոլորովին պարապ ըլլային, կպարունակեն տող մը

կամ միակ բառ մը, էջին ճերմակության մեջ կղղիացած։ Խորհրդավոր տողեր են ատոնք, մոգական բառերն են, որոնց իմաստը կորսնցուցած ենք, որոնք հաճախ երբեք որոշ իմաստ մը չեն ունեցած և որոնց հիմա մեր երազին համեմատ իմաստ մը կուտանք։ Ամենեն հուզիչ էջերն են ատոնք անցյալի ալպոմին, հուզիչ՝ տենդոտ մատով մը ուրվագծված այն գլուխներուն պես, զոր մեծ նկարիչներուն գծագրությանց մեջ կգտնենք, առանց մարմինի, առանց անունի գլուխներ՝ սպիտակ էջին մեջ՝ մենավորիկ, որոնք իրենց նայվածքին ու դիմագծության մեջ կմատնեն ինքնակ սարսուռը, որ անոնց ծնունդ տված է արվեստագետին գրեթե անկիտակից ձեռքին տակ, իրենց խորհրդապահ ու սքողյալ հրապույրին մեջ մերթ ավելի վրդովիչ, քան ամբողջապես նկարված պատկերներու աղմկահույզ փայլը։

Ատոնք վերհուշումներն են կյանքի վայրկյաններու, չսպասված, հազիվ զգացված, չհասկցված ու քիչ հետո մոռցված վայրկյաններուն, որոնք մեր հոգիին քսվելով՝ կանցնին ու կերթան անծանոթին մեջ կկորսվին, և որոնք ատեն մը ետքը, տրամադրությանց, հանգիտությանց տակ, կամ վերակոչող պատկերներու ազդեցության տակ, դուրս կցատկեն մեր հոգիին գերեզմանեն, ինչպես հոդեն կելլեն հին արձանի կտորվանքներ։

Երբ անրջանքի ժամերուն այդ հուշերեն մեկը գա մեր դեմքին առջևեն անցնի, խոր կըլլա հուզումը, որ մեզ կպատե և բուռն փափագ մը կզգանք աննյութական խուսափուկ այդ փոքրիկ էակը բռնելու, զայն քննելու, հասկնալու, զայն ավելի ամբողջապես վերապրելու, ինչպես որ հնագետը գտնված բեկորի մը վրայեն կգուշակե, կվերակերտե ու կանվանակոչե ամբողջ արձանը։

Այն ատեն, այդ երազի ծվենին վրա՝ կկանգնենք ամբողջ շենք մը ցնորքի, ավելի աղվոր ու սիրելի, քան իրականները, որովհետև ատիկա մեր քմայքին համեմատ կբարձրանա, մինչդեռ մյուսներուն մեջ մեր սիրտն ու մեր կյանքը նյութեղենն են միայն՝ ճակատագիր ճարտարապետին ձեռքը։

Մին այդ հուշերեն, որ երբեմն մոռացման մշուշեն կանջատվին ու ինծի կժպտին, հին աշունի մը մեկ դժգույն վայրկյանին մարած պատկերն է։ Առանց անունի պատկեր մը, հիշատակով ու երազով շինված պատկեր մը, զոր կսիրեմ, ինչպես կսիրենք հին կենդանագիրները նախահայրերու, զոր չենք ճանչցած, բայց որոնց նայվածքը, արյունին ներքին կապովը, մեզ կխանդաղատեցնե։

Իրիկուն մըն էր անցած աշունի մը։ Շոգենավն, ուր կգտնվեի, Կամուրջեն մեկնելու վրա էր։ Չես գիտեր ի՞նչ խեղդված տրտմություն մը կծածանի, աշնան իրիկունները, Կամուրջին երկայնքը, այն պահուն, ուր արևը, Ոսկեղջյուրի կողմը, առագաստանավի կայմերու չոր անտառին ետևը, իր վերջին հոգնած ճառագայթները կերկնցնե, երբ տուն դարձող մարդերով խճողված շոգենավերու իրար կտրող երկայն, կրկնված սուլումներն օդին մեջ կտարածվին՝ ինչպես հոնդյունները մահամերձ օրվան։ Այդ իրիկունը, ոգեվարող արև մըն ալ չկար։ Երկինքը, ամպերով գորշված, պաղ միօրինակությամբ մը, կշտապեցներ գիշերին մերձեցումը, մոտեցնելով ծովին կապույտը, որ խուլ ու մեռած գույն մը առեր էր, արդեն իսկ ստվերով մրոտելով ինչ որ դեռ կերևար քաղաքեն։ Օդին մեջ մտատանջ ու խոնջ բան մը կար, որպես թե օդն իսկ ձանձրացած ըլլար ու գիշերվան գալուստին անհամբերությամբ սպասեր։ Ու երկինքը, գոց, անշարժ, հուսահատեցնող գորշությամբ մը, իր կարծես քարացած դեմքին ետևը՝ կթվեր անձկությունն ունենալ անոնց, որ լալ կուզեն ու չեն կրնար։

Զով ըլլալուն, քիչ մարդ կար նավուն վերնահարկը։ Օդին ու բոպեին տրտմությենեն թափանցված, մտացիր՝ ձեռքով մը ոևէ գիրք մը թղթատելու վրա էի։ Աչքերս երբ վեր առի, նշմարեցի երիտասարդ կին մը, որ եկեր, դիմացս նստեր էր։ Սևեր հագած էր։ Փոքրիկ քողի մը մեջեն կընդերևար նիհարկեկ դեմք մը, անհուն տրտմությամբ մը համակված գիծերով։ Կապույտ աչքեր ուներ՝ ծաղկի պես փափուկ, զոր քողին շուքը մեղմորեն կմթնեցներ։ Պիշ ու ցավագին նայվածքը, որ զանոնք կգամեր ծովուն մեջ՝ հեռուն տարտամ կետի մը վրա, ավելի մութ և ավելի խոր կդարձներ զանոնք։ Երբեմն դիմագծերը կկծկվեին, կոպերը վար կիջնեին, թարթիչները տենդագին իրարու կդիպչեին, աչքերը վայրկյան մը կգոցվեին, հետո նորեն կբացվեին՝ ավելի մութ, ավելի լեցված և իրենց լռիկ սևեռումին մեջ մատնելով մեծ ու տաժանելի փափագ մը լալու։

Հանկարծ իր շրթունքները թեթև մը դողացին։ Արցունքի երկար ու վճիտ կաթիլ մը աչքերուն եզերքեն համրորեն դուրս ելավ, թարթիչներն ի վար սահեցավ, հետո ուրիշ մը, հետո երրորդ մը և բոլորն ալ կամաց-կամաց ինկան իր այտերուն վրա, մինչդեռ ինքը անշարժ կմնար նույն դիրքին մեջ, նայվածքը՝ հիմա արցունքեն լուսավառ՝ միշտ ծովուն պիշ հառած։

Նույն վայրկյանին դփդփոց մը լսվեցավ վերնահարկին ծածկույթին վրա. բարակ անձրև մը, շատ հանդարտ, մեղմիկ էջքով մը, երկնքեն դեպի ծովը կմաղվեր։

Շոգենավը սուլեց, ջուրերը նավուն շուրջը խշրտացին, ու ճամփա ելանք։

Մինչև այն բոպեն, ուր ան նավեն դուրս ելավ, աչքերս չկրցա հեռացնել այդ վշտահար դեմքեն, որ հոն, դիմացս, կկենար անշարժ, աչքերն արցունքով լեցված։ Ի՞նչ էր այն ցավը, որ կտանջեր այդ կինը։ Երբեք պիտի չգիտնայի ատիկա, ինչպես երբեք պիտի չգիտնանք այն ահագին ու թաքուն վիշտերը, որ երկնքին անհուն աչքերը կլացընեն։ Զայն դիտելով, ինծի կթվեր, թե հասարակ կսկիծ մը չէր, որ զինքը կկրծեր։ Ան ինծի կթվեր վսեմ ու անիրագործելի բաղձանքներով հաճախված հոգի մը, որ կփնտրեր հեռուն, պարապին մեջ, անգտանելի բույնն իր երազին և այդ ապարդյուն փնտրտուքին խոնջենքեն կուլար։

Մոտակա կայարաններեն մեկը հասնելուս, այդ կինը ոտքի ելավ ու բազմության մեջ անհետացավ։

Հետևյալ օրը, պայծառ արևածագով զարթումի մը մեջ, արդեն մոռցած էի մշուշոտ այդ պահն ու այդ մշուշոտ դեմքը։ Բայց այդ բոպեին զգայությունը սրտիս մեջ գծեր էր, ճերմակ էջերեն մեկուն վրա, խորհուրդի տողը, ներդաշնակ ու տրտում տող մը, որ կմնա անջնջելի։ Անկից ի վեր, շատ անգամ, աշուններուն, երբ երկինքը կքողարկվի ամուլ ամպերով, որ կուշանան անձրևելու, օդին մեջ կնկարվի աչքիս առջև, շրջագծելով որ հետզհետե ավելի այերային, մուխի ու երկնակապույտի գույն կդառնա, Անծանոթուհուն երկար մռայլ դիմաստվերը՝ իր անշարժ աչքերովը, որ կուլան։ Ու հիմա, ժամանակին հոլովմամբը տեսլականացած, ան ինծի համար կդառնա դեմքն իսկ Մելամաղձության, որ, իրիկվան երկայն սույլերուն մեջ, լալ չկրնալեն ձանձրացած երկնքի մը տակ, սև շղարշին մեջեն իր համբ ու լռիկ արցունքները կթափե։

ՑԱՎԻՆ ՏՈՒՆԸ

Ճաճանչահորդ առտու մը, ծաղիկներու մեջ իրարու հանդիպեր էին։ Մեկը լեռնեն կիջներ, սարի պես ուղղաբերձ, աչքերը վառ ինչպես փայլակը բարձունքներուն։ Մյուսը հովտեն կուգար վազող ջրերուն պես մազերը վճիտ, հասակը ճապուկ ինչպես սլացիկ վարդենիները։

Զավեն ժայթքած էր լեռներուն գոգեն։ Մեծ ժայռերը, որ երկնքին կսպառնան, անոր խիզախ ու խրոխտ ըլլալ սորվեցուցած էին։ Խորունկ անտառները, որոնք արևուն կարգիլեն իրենց ծոցը թափանցել, վտանգին

հրայրքը տված էին անոր։ Ու սարսափը երբեք անոր մոտեցած չէր։ Ամենեն դժվարին կատարներն ի վեր մագլցեր, ամենեն մութ վիրապներուն խորն իջեր էր, ու բոլոր գազանները փախեր էին անոր աղեղին առջևեն։ Ինքն իսկ Աղեղ մըն էր, լարված դեպ ի անհուն որսաստանն աշխարհի։

Անուշ ծլած էր մանկաշնորհ առուներուն ափունքը, եղեգներուն զով նվագին մեջ։ Արևն անոր մարմնույն մեջ հոսեցուցեր էր իր հրավառ ոսկին, ծաղիկներն անոր անձին հաղորդեր էին իրենց ժպիտն անուշահոտ, թռչուններն իրենց հոգին՝ քաղցրադաշնակ։ Անոր օրերը սահեր էին մաքուր ու թեթև, ինչպես ամպերուն բեհեզն ամառվան երկնակապույտին մեջ։ Եվ ան դարձեր էր կենդանի Քնար մը, դեղձան լարերով, լույսին մեջ բաբախուն։

Երբ դեմ առ դեմ ելան ու իրենց նայվածքներն իրարու բախեցան, իրենց թվեցավ թե արևը կբյուրապատկվեր և թե երկինքն ի վար վարդ կտեղար։ Աշխարհաստեղծ շունչն անցավ իրենց ճակատներուն վրայեն, ու իրենց թվեցավ թե կվերածնեին. իրենց սրտին մեջ աստղեր բացվեցան, իրենց մարմինը ցնծաց անմահական հույզովը հինավուրց անտառներուն, ու երկու կյանքերը դիցական տենդին մեջ իրարու խառնվեցան։

* * *

Այն առեն՝ ձեռք ձեռքի ճեմել ելան գոյության մեկ ծայրեն մյուսը. հաղթական անցքն մըն էր աշխարհի մեջեն որ անոնց շուրջ հարսներգ կերգեր։ Անոնց ճամփուն վրա, վտակները կճվայլին, որ պատկերնին իրենց ջուրին մեջ կախեն, ծառերը հայրաբար գլուխնին կճոճեին, հորիզոնները կժպտեին սիրապատար աչքերու պես, և հովն անոնց մազերուն մեջեն հեքիաթներ կսուլեր։

Զավեն Անուշի համար ծովերուն խորը մխրճեցավ բուստ ու մարգարիտ քաղելու, հովազներ խեղդեց՝ անոնց կանանչ աղվոր աչքերովն անոր մանյակ հյուսելու, և երբ անտառ մը իրենց ճամփան փակեր, ձեռքովը ծառերը արմատախիլ կներ, որպեսզի ան կարենա հանգիստ անցնիլ։ Անուշ ծաղիկներ կժողվեր Զավենին մազերուն խառնելու, սիրամարգներ կփնտռեր անոր պատմուճան հորինելու, և քաղցր երգեր կմայեր, որպեսզի անոր սիրտն օրորե։

Ուրախությամբ լուսավառված, կերթային։ Ուղիներն իրենց առջև կբացվեին ինքնամատույց ծոցերու պես, իրենց բոպիկ ոտքերուն տակ երկրի սիքտը կզգային գորովով բաբախուն։ Երկնքին հոգին անոնց

գլխներուն վրա կիջներ ու զանոնք փառքով կլուսապսակեր, և երբ սիրազեղ հափշտակության երկար նայվածքով մ՚իրարու վրա կզմայլեին, կարծես երկինքն ու երկիրն էին որ իրար հիացմամբ կդիտեին։

* * *

Իրենց երջանկությունը նվազեցին երգերով, որոնք աստղազարդ երկինքներուն պես կծավալեին։ Իրենց երազները սևեռեցին ճամփուն ժայռերուն վրա փորված շնորհալի խորհրդանշաններով։ Հողին վրա իրենց ստվերը զիրենք հրճվեցուց իր շրջագծերուն գեղեցկությամբ։ Երկայն թափառումներեն հանգչելու համար, ծովուն սպիտակ մոլեգնության դիմացը կամ բլրակներուն զմրուխտե կողերուն վրա կանգ կառնեին ու իրենց քմայքին պատկերովը կերպավորված վաղանցուկ բույն մը կհորինեին։ Ու երբեմն ալ կկենային, արշալույսներուն քաղցրությանը մեջ, բանին մոգության շնորհիվ իրարու արտահայտելու համար կաթոգին ու ահեղ խորհուրդը Սիրո, բայց երբեք այնքան խորապես իրարու չթափանցեցին, որքան երբ անշարժ, անբարբառ՝ իրարու կնայեին։

Իրենք իրենցմով արբշիռ, պաշարված ծիածանաբիլյան ամպով մը, որ իրենց անձեն կգոլորշանար, վերջ ի վերջո զիրենք պորտն իսկ կարծեցին համաշխարհային էության կեդրոնը, որուն շուրջ ամեն ինչ կթավալեր։ Իրենց ճակատն այլևս չուզեց որևէ զորության առջև խոնարհիլ, բացի արևեն, զոր իրենց հայրը կզգային և զոր առավոտներու վեհաշուք ամփոփմանց պահուն իրենց սրտին բովանդակ խոյանքովը կօրհնեին. ու կհավատային թե երբ ծայրագույն կետը հասնեին իրենց երկրավոր ուղևորության, թևեր պիտի բուսնեին իրենց ուսերին և անծայրածիր միջոցին մեջեն պիտի բարձրանային մինչև արևը՝ անոր երկնավոր պետությանը մեջ իրենց լույսի դաշնակության կյանքը շարունակելու համար։

* * *

Երբեմն, ճամփան, դիակներու վրա կոխած անցած էին, ու չէին հասկցած։ Երկայն վտիտ մուրացկաններ մերթ դիմացինին կելլեին, աչվընին մարած, ու մսաթափ ձեռքերնին իրենց կբանային, բայց անոնք չէին տեսներ։ Ու երբեմն խուլ ամբոխներ կերևային դաշտերուն մեջ, հողին վրա կքած, չարագուշակ բզզյունով մը զեռալով, բայց անոնք կանցնեին անվրդով՝ որպես թե միս-մինակ ըլլային երկնքին տակ։

խումբ-խումբ ագռավներ ատեն-ատեն անոնց գլխուն վրայեն կոնչելով կշրշշրջեին, բայց անոնք չէին իմանար։ Իրիկվան տժգույն լռություններուն մեջ՝ եթե ականջ դնեին, պիտի լսեին հեծյունը, որ երկրի ընդերքեն կբարձրանա, ծառերուն մեջեն կանցնի իբր ողբ մը երկար, կսարսռացնե ստվերը ինչպես մեծ սիրտ մը ցավատանջ ու թեև կ'հառնե մինչև աստղերը, որ արցունքներու պես կդողդղան. բայց անոնք ուրիշ բան չէին լսեր, այլ միայն մրմունջն իրենց համբույրներուն ու ջերմ նվագն իրենց հնչուն սրտին։ Ո՛չ տիեզերական սուգը գիշերներուն, ո՛չ ծերությունը, որ աշնան դեմքին վրա կդեղնի ու կխորշոմի, ո՛չ աստղերը որ անհունն ի վար կիյնան կմեռնին, ո՛չ հյուծված մահիկը սառուցիկ կես-գիշերներուն, իրենց մտքին աչքերուն առջև բացած էին այն հեղարկած պատուվածքը, որուն խորն Անձկությունը կերևա։ Գիշերրին մեջեն արշալույսը կտեսնեին։ Ու հոգինին պայծառ, թևավոր քայլով մը՝ անոնք միշտ դեպի արևը կընթանային։

* * *

Բայց իրիկուն մը, որ բլուրներու գեղեցկագույնեն վար կիջնեին, աղետաբեր Հանդիպումը ունեցան։ Ամբողջ օրը բարձունքներու ագամանդե լույսին մեջ խաղացած էին։ Երբեք բնությունը այնքան ծիծաղկոտ չէր եղած, որքան այդ օրը։ Կատարեն տեսեր էին լայնարձակ զմայլելի բնանկարներ, իրենց ոտքին տակ մինչև հեռուները տարածված, վարդ ու կանանչ բնանկարներ՝ արծաթափայլ նուրբ մշուշի մը մեջ ընկղմած։ Մեծ թռչունները, որոնք միջոցն ակոսելով կանցնեին, իրենց թևերեն պատվական ակունքի փաղփյուններ կթափեին։ Բոլոր ծաղիկները կերգեին արբշիռ օդին մեջ։ Իրենք իսկ երբեք ինքզինքնին այդքան հզոր զգացած չէին, որքան այդ պահուն, ու երբեք իրարու այնքան շողարձակորեն գեղեցիկ երևցա չէին։ Անուշ հողեն կցայտեր ինչպես սպիտակ շատրվան մը դեպ ի երկինք սլացող, Զավեն կցցվեր ինչպես կանանչ թավոստյան կաղնի մը՝ դաշնակավոր բույներով թրթռուն։ Իրենց հպարտությունն աճեցավ, երկինքին չափ լայնատարած դարձավ։ Ու իրար գրկած ատեննին, կարծեցին թե տիեզերքն ամբողջ իրենց թևերուն մեջ կսեղմեին։ Իրենց թվեցավ, թե կյանքին կատարն էին հասած։ Զիրենք աստվածներու փոխված զգացին, ու սպասեցին թևերուն, որ զիրենք մինչև արևը պիտի բարձրացնեին։

Բայց ահա ժամերուն անիվն իր հոլովումը երազեց, իրիկվան դալկությունն օդին մեջ ծավալեցավ, ստվերները դուրս ելան իրենց թաքստոցեն, և արևը խույս տվավ։ Իրենց թվեցավ թե ձայն մը, վարեն զիրենք հրամայականորեն կկանչեր։ Եվ իջան։

* * *

Լույսը տմույն հևքով մը կոգևարեր, երբ ստորոտը հասան բլուրին։ Եվ հանկարծ, կածանի մը անկյունը դառնալուն, անվախճան ձոր մը տեսան, որ իրենց առջև կբացվեր ու կերթար անչափելի խորություններու մեջ կորսվիլ։ Հազարավոր ագռավներ կպտուտքեին, շատ ցած, ամենքը մեկանց պոռալով, աղիողորմ ստվերին մեջ, որ համրորեն կմազվեր։ Ճախճախուտ գետնեն՝ փտած ծաղիկներու զարշահոտություն մը կբարձրանար։ Սև ազազուն ծառեր կցցվեին, վտիտ, և անոնց ետին հեռուն՝ երկնքին արյունը կամաց-կամաց կհատներ։

Անծանոթ վրդովումով մը լցված, Զավեն ու Անուշ իրարու նայեցան։ Ուրվականներու պես տժգույն տեսան իրար։ Առաջին անգամ ըլլալով, սոսկումը ճանչցան։ Ուզեցին փախչիլ, բայց ձորը զիրենք կքաշեր, զիրենք կպաշարեր, զիրենք կանդամալուծեր. զգացին, որ ստվերն իրենց մեջը կթափանցեր, և իրենց այնպես թվեցավ, որ հոգինին կմութնար։ Սև ծառերը երկար ու խուլ հովի մը տակ իրենց սրածայր գլուխները դանդաղորեն երերցնելով զիրենք ներս կկանչեին, ներս, մինչև խորը դժնե ձորին։

Իրարու կոթընած, հառաջացան անխոսուկ։ Եվ ահա տեսան, ձորին բերանը, խոշոր մութ տուն մը, որ, գետնին վրա պառկած անվերջ կերկննար։ Անոր պատերեն արյուն կմզվեր, և անոր պատուհանները սև ծակեր էին, փորված աչքերու նման։

Դրան առջև, ոսկրոտիքի դեզի մը վրա, պառավ մը կար նստած։ Անոր մազերը ճերմակ էին ու աչքերը սև. անոր բերանը կարմիր էր ու լաթերը սև։ Անհատնում սև թել մը մատներուն մեջ բռնած, կմաներ անդադար, ու մանած ատենը՝ մատներեն արյուն կկաթկթեր։ Եվ թավ ու մեղմ ձայնով մը ան կերգեր.

Ցավին տունն է ասիկա,
Կյանքին սիրտն է ասիկա։
Արևները կմարին,
Տերևները կթափին,
Ու բոլոր աչքերը պիտի գոցվին։

Մահն ստեղծեց կյանքը,
Որպեսզի խաղա անով։
Եվ ինչ որ ես գիտեմ,
Միմիայն ես գիտեմ։

Սարսափով բարևեցին պառավը, և առանց բառ մը ըսելու, կարծես ակամա ներս մղված, մտան այս տան մեջ։

* * *

Դալկահար մթության մը խորը ողբեր կգալարվեին։ Օրհասական նշույլները, որ սև պատերուն նեղ ճեղքերեն մտնելով հոս ու հոն կպլպլային, երևան կբերեին մարդկային կերպարանքներ կանաչորակ տիղմի մը մեջ եռուզեռուն։ Եվ տուն մը չէր ատ, այլ քարայր մը՝ անծայրածիր տարածությամբ։ Գետինը կելնէջեր հիմար զիկզակներով, հոս վիհեր կբանար սևության, անդին կուռենար խավարի կույտերով։ Եվ ատիկա կերկարաձգվեր մինչև խորությունները՝ հետզհետե ավելի մռայլ, ուր կզգայվեր՝ գունատ շրջմոլիկ հուրերու ցոլքերուն տակ՝ խորքեն ավելի մութ ձևերու շարժտկիլը։

Եվ անհամար էր ամբոխն էակներուն, որոնք կտքային այն աներևույթ զորության տակ, որ զանոնք ամեն կողմե կսեղմեր ու կճմլեր։ Գաղ հով մը կանցներ օդին մեջեն, սև հով մը խոնավ թևերով, ու անոր անցքին վրա խավարը կսարսռար։ Զավեն և Անուշ անոր մեջ մահվան հոտն առին։

Ճահճի մը վրա ցոլացիկ երկու շուշանի նման էին։ Իրենց սպիտակությունը կվիրավորեր տիրական ստվերը։ Ամչցան իրենց շքեղությենեն։ Հազարավոր աչքեր, արյունով լեցուն, կրակի կտորներու պես կարմիր, մութին մեջեն իրենց վրա կսևեռվեին։ Ու ողբը կուգար վիթխարի կոհակներով իրենց գլխուն վրայեն կանցներ...

Հանկարծ, արևը հիշեցին, թևերնին վեր բարձրացուցին և զայն իրենց օգնության կանչեցին. «Եկո՛ւր, կաղաղակեին, եկո՛ւր սպաննե՛ այս աղջամուղջը»։ Բայց այդ հիշատակին, աղջամուղջն ավելի թանձրացավ, վերջին նշույլները մեռան պատերուն ճեղքերուն մեջ, ու տեսան սև գունտ մը, որ օդին մեջ կբարձրանար, սուգի լուսին մը, որ խավար կսփռեր։ Եվ ահա քարայրը մեծցավ, տիեզերք մի դարձավ։ Սեվեռված աչքերուն կարմիր կրակները, շրջմոլիկ հուրերուն կանաչորակ նշույլները, և ֆոսֆորափայլական ակոսները, զոր հեծյունները կգծեին միջոցը ճեղքելով անցած ատեն, այդ բոլոր ցավի լույսերը կմեծնային, կբազմապատկվեին և հետզհետե ավելի որոշ երևան կհանեին այդ ստվերի պետության զեռացող անհունությունները։ Դիմացնին տեսան ծով մը հողմատատան սև խոշոր ալիքներով. վերը, երկինք մը կպարզվեր, միլիոնավոր սև աստղերով։ Ու ողբը կհարյուրապատկվեր. դեմը՝ կոհակները կկոծեին, վերը՝ աստղերը կհեծեին. խավարը կուլար միջոցին

մեջ. ու վերեն մինչև վար, բյուրավոր էակներ միաձայն կկողկողեին։

— Ինչո՞ւ, գոչեց Զավեն։

— Ավա՜ղ, մնջեց Անուշ։

Ու մին բռունցքը կսեղմեր, մինչև մյուսը գլուխը կհակեր ու կուլար։

* * *

Սակայն հիմա իրենց մեջ նոր սարսուռ մը զգացին, ցավագին ու շատ անուշ սարսուռ մը, ավելի անուշ, քան իրենց բոլոր համբույրները։

Իրենց երկու սիրտերը, որ իրարու կապված էին, կքակվեին, ու կտարածվեին այդ բոլոր աչքերուն վրա որ կարյունեին։

Ու խորհեցան քանդել այդ սև տունը։

Անուշ հիշեց օձերը, որոնք իր աչքերեն թռվված, քար կտրեր էին։

Զավեն միտքը բերավ վագրերը, զոր իր երկու ձեռքովը խեղդեր էր։

— Դրանը քով, ըսավ Զավեն, ծեր կին մը տեսանք, անիկա թերևս կյանքն է, որ կմաներ իր մատներուն մեջ։ Թերևս ան է սարդն այս սև ոստայնին։

Ու վազեց դեպի դուռը, որուն մոտ պառավը տեսած էր։

Գտավ զայն այդ անիծյալ տան սեմին վրա նստած։ Ու անոր մատները կմանեին հավերժական թելը։ Եվ ան կերգեր միշտ՝

Ինչ որ ես գիտեմ,
Միմիայն ես գիտեմ։

— Գիտցածդ ըսե՛ ինծի, պառա՛վ։ Բացատրե ինծի, թե ո՞վ է կառուցեր այս արհավիրքի տունը և ինչո՞ւ։

Պառավը որևէ պատասխան չտվավ անոր ու իր երգը շարունակեց։

Այն ատեն Զավեն բռնեց զայն մազերեն և ուզեց անոր գլուխն իր դաստակին տակ ծռել։ Բայց պառավը անշարժ մնաց։ Ու Զավեն զգաց, որ իր մատներն այրեցան ուր որ անոր մազերուն դպել էին։ Իրեն այնպես թվեցավ, թե ոսկորներուն մեջեն օձեր կանցնեին։ Մուխի պես ցընդեցավ իր աստվածությունը։ Խեղճ զգաց ինքզինքը։

Ներս դարձավ, սրտաբեկ, Անուշը փնտռելու։ Անոր աչվերներուն կարոտն ուներ։ գլուխն անոր կուրծքին հանգչեցնելով քնանալու փափաքը կզգար։

Սև քարակույտի մը կատարը կեցած, Անուշ կերգեր։ Անոր մարմինեն կապույտ նշույլներ կթափեին, և խավարն անոր շուրջը կմեղմանար,

ու էակները խումբ-խումբ ամեն կողմե անոր ոտքը կդիմեին, և ողբը կթուլնար անոնց բերնին մեջ։

— Ավա՜ղ, ըսավ Զավեն անոր վոտենալով, պառավն անպարտելի է, անոր մազերը փախան ձեռքես, ու քիչ մնաց որ մեռնեի։

Անուշ կերգեր՝ աչվրները գոց։ Վեր առավ կոպերն ու Զավենին նայեցավ։ Կապույտ նշյուլները կաճեին անոր շուրջը։ Անոր բիբերը մեծցեր էին ու արևներու պես կշողային։ Նայվածքը լայնցեր էր ու ծովու պես կփողփողեր։ Երգը մարեցավ շրթունքին վրա։ Ողբերը թմրեր էին։ Խավարը անձայն էր հիմա։ Անուշ թևերը տարածեց՝ գթության ժեսթով, հետո երկու ձեռքերը սրտին վրա միացուց Անձնվիրության կեցվածքով։

ԿՈՒՅՐԵՐԸ

Վեհաշուք ու նվիրական էակներ են անոնք։ Ռամիկը կյանքի եզերքեն անոնց դանդաղկոտ անցքը արհամարհոտ արգահատանքով մը կդիտե։ Եվ սակայն անոնք կկազմեն ազնվագույն արտահայտությունը դեմքին։

Ստվերով զրահված հոգիներն են։ Անոնց գոյությունը սովորական գոյություններեն գերիվեր է, ինչպես գիշերին սքողյալ շքեղությունը տվընջյան պոռոտ փաղփումեն։ Ճաճանչազարդված են Աղետին մեծ լուսապսակովը։ Կթվին ըլլալ՝ մեր մեջ՝ առաքյալները Խորհրդին։

Գլուխնին բարձր, իրենց դատարկ Աչքերը դեպի անհունը սևեռած, անոնք կանցնին, սրբազնագույն դանդաղություններով, ձեռքերնին դեպ առաջ կարկառուն՝ կարծես օրհնելու համար։

Կանցնին խաղաղ ու լռին։ Կթվին վտանգն արհամարհել։ Կսահին օդին մեջեն, ուղղվելով դեպի բարձունքներ, դեպի հեռաստաններ, ձգտելով դեպի աներևույթ նպատակներ։ Ազատ են կյանքի կեղեր տեսնելու զզվանքեն։ Ներքին նայվածքն ունենալու են։ Տեսնելու են ինչ որ կա իրերուն ներսդին և ինչ որ հորիզոնին ետև կթաքչի։ Ահա ինչու իրենց դեմքը ծանրախոհ է ու իրենց աչքերը պաղած։ Կթվին մեծ բաներու հանդիսատես ըլլալ։ Երբեք չեն խնդար։

Շատ մը բանաստեղծներ ողբալի ցավագար մը կնկատեն Կույրը. անոնցմե ոմանք զայն պատկերը դարձուցած են գերագույն անժառանգյալին։ Նոր ժամանակներու քնարն է մանավանդ, որ զայն այդ կերպարանքով տեսած է։ Անմիջական վայելքներու և կարճատես դիտողության օրերու մեջ, կույրը երևցած է իբրև մարդոց ամենեն չվառականը։ Պոտլեռ ինքն իսկ, որ մերօրյա բանաստեղծներուն ամենեն խորունկներեն մեկն է, այդ ողորմելի երևույթին տակ կներկայացնե զայն իր «Կույրերը» հնչյակին մեջ.

> Դիտե՛ զանոնք, ո՞վ հոգիս, քստմնելի են իսկապես,
> Խամաճիկներ են կարծես, տարտամորեն ծաղրելի,
> Ահավոր ու եզական զերթ թափառող քնաշրջիկ
> Ջես գիտեր ո՞ւր հառելով իրենց բիբերը մթին։

Մեր Խաչատուր Միսաքյանը կթվի կարեկցության այդ բոլոր ողբասացությունները խտացուցած ըլլալ էջի մը մեջ, ուր ցույց կուտա կույրը, որ «թանձրամած խավարի մեջ խավարամած և անճարակ երևակայությամբ թափառական, ամեն քայլափոխի վերահաս կորստյան մը վախով գլուխը կորացած, ուսերը կծկած և ձեռներն իրմե առաջ կարկառած, աջ ու ձախ տատանելով, անստուգության մեջ անծանոթ և փախստական ապավեն մը կփնտրե. և ասանկ՝ կասկածը, վարանքը, տարակուսությունը, տագնապն ու արհավիրքը իր չար ոգիներուն պես ամեն տեղ իրեն հետևելով, լքուցիչ և անզանազան շարժմունք մը ընելու վստահությունը սրտին տիրեր, ղեկն ու կողմնացույցը կորսված և մրրիկներու մեջ ամպապատ սև գիշերի մը տակ ծփացած նավու մը պես ոչ ինքզինքն ինտոր ուղղելիքը դիտե և ոչ հասնելիք նպատակը»։

Այդ սոսկումը և այդ արգահատանքը Պրեռկել ծայրագույն ներուժությամբ մը արտահայտած է իր զարհուրելի նկարին մեջ, ուր տողանցքը կցուցնե Ավետարանին կույրերուն, որոնք իրար դեպի անդունդը կքաշեն։ Մղձավանջային կերպարանքներ են, դեմքեր՝ կարմիր ու լույծ աչքերով կամ կանանչորակ ուռուցիկ բիբերով, կամ ողբալի ու միամիտ անհոգությամբ մը դեպի խորխորատը ձգտող ակնակապիճներով։ Այդ պատկերը կույրերուն հանդեպ արգահատանքին ամենեն հզոր արտահայտություններեն մեկն է, միևնույն ատեն Կույրին խորհրդանշանին դեմ գործված ամենեն խորունկ սրբապղծությունը, վասնզի ան հոն ներկայացուցած է ողորմելի, գռեհիկ ու ծիծաղաշարժ, և որովհետև արվեստագետը չէ հասկցած, թե այդ երերտկող ուրվականները իրենց վիհի աչքերով շատ ավելի գեղեցիկ են, քան ապուշ հովիվը, որ իր անասունները հանդարտորեն կարածե հասարակ ու գողտրիկ դաշտանկարին խորը։

Բայց մարդկային միտքը կթվի վերադառնալ Խորհուրդին հինավուրց հրայրքին. վաղը կույրերը թերևս նորեն պիտի բարձրանան պատկառանքի պատվանդանին վրա, որուն արժանի են։ Պիտի նորեն

հասնինք խորաթափանց տեսությանը հիներուն, որոնք Կույրը սրբացուցին, որովհետև հասկցան, որ անիկա կներկայացնե այն, որ իրերու մակերևույթին իր աչքերը գոցած է՝ անոնց խորքն ավելի լավ տեսնելու համար։ Անոնք Հոմերոսը ներկայացուցին փակ աչքերով ծերունիի մը երևույթով։ Անոնք գրած են, թե ապագան ընդնշմարող գուշակներեն շատերը կույր էին։ Ու թերևս այդ մտածումով է, որ առանց բիբի աչքեր շատերը կույր էին։ Ու թերևս այդ մտածումով է, որ առանց բիբի աչքեր տրուած են իրենց աստվածներուն, որպեսզի անոնց մեծությունը խորհրդապատկերեն այդ վեհափառ պարապին մեջ, ուր Անհունը կրնա սղմիլ։

Կույրը տեսանողն է, ստեղծողն է։ Իր փրկարար խավարովը բոլոր արտաքնություններեն անջատված, անիկա այն էակն է, որ իր հոգիովը կկերտե իր տիեզերքը։ Գիտունը, որ ականջները կխցե փողոցային ժխոկկերտե իր տիեզերքը։ Գիտունը, որ ականջները կխցե փողոցային ժխոտին ու կճգնի իրերու իսկությանը թափանցել, բանաստեղծը, որ կմոռանա այս տիղմը, ուր կտապլկտինք, և աստղերուն կսիրահարի, դյուցազնը, որ, գաղափարե մը հմայված, մահվան գիրկը կնետվի, Կույրին դիցավեպը կիրականացնեն. անոնք փակ աչքերով մարդիկն են, որ հեռուն կտեսնեն։

Հրապույրն այն բաներու, զոր ամեն աչք կտեսնե, զոր ամեն ձեռք կրնա փայփայել, ոչինչ է՝ բաղդատմամբ անոնց, զոր միտքը կերազե, կերևակայե, կստեղծե։ Ո՞ր ծաղիկը պիտի երբեք հավասարի գեղեցկությանը միստիկական Վարդին, որուն համար ամբողջ մարդկություն մը կարոտակեզ հալեցավ։ Աստղերուն քաղցրագույններն անոնք են, որ մեր աչքերուն անտեսանելի տիեզերքներուն մեջ կժպտին։ Աշխարհիս ամենեն աղվոր աղջկան բիբերը այնքան թանկագին չեն, որքան հոգեկան նայվածքը կույր կույսի մը, որ իր աչքերուն հավերժական սուգին մեջեն, մահու չափ խորունկ ու անուշ սիրով մը կսիրե։

Մեր ամենաբարձր հուզմանց բոպեին աչքերնիս կգոցենք երաժշտության սարսուռին տակ, սիրո գերագույն դողին մեջ, կամ երբ մեծ վիշտ մը մեզ կգինովցնե, մեր կոպերը ինքնին վար կիջնեն, նյութական աշխարհը կցնդի, վայրկյանի մը համար Կույրը կըլլանք։

Ու այն մեծ դեմքերուն մեջ, ուր մարդկային ճակատագիրը կցոլանա և կամփոփվի վսեմագույնը, դեմքն է Իդիպոսին, երբ, աչքերը փորելով՝ թափառաշրջիկներու ցուպը ձեռք առավ և ճամփա ելավ դեպի մռայլ հորիզոնները։ Որքան ատեն որ աչքերը բաց էին, այդ մարդը ոչինչ տեսավ և ոչինչ հասկցավ կյանքեն և ինքնիրմեն, ու թեև ունկր ամենին ազնիվ և ուղղամիտ հոգին, վայրագ ճակատագրականութենե մը մղված՝ գործեց ամենեն հրեշային ոճիրները, զոր կարելի ըլլա գործել։ Զզված կյանքեն, ճակատագրեն, աստվածներեն և ինքնիրմեն իսկ, նաև՝ փակեց իր մարմնական աչքերը, որոնք զինք խաբած և իրեն դավաճանած էին, և վանված իր տունեն, ինկած իր աստիճանեն, զորութենեն, փառքեն, խավար աչքերով մուրացկան մը դարձավ, կյանքը հասկցավ ավելի լավ, քան երբեմն, անոր խորքն ընդնշմարեց ավելի հստակորեն, քան կյանքի որևէ մեկ վայրկյանին, բարձրացավ մինչև այն վերին տեսողությունը, զոր ունին սուրբերը, իմաստունները, մարգարեները, և ինքն իսկ դարձավ խորհրդանշական դեմք մը, ամենեն խորունկը, գրավիչն ու լիակատարը այդ դեմքերուն, այն, որուն մեջ կյանքի անթափանցելի խորհուրդը կմարմնավորի իր անիմաստ հակասություններով և իր բոլոր ցավագին արհավիրքով։ Ալևոր կույր մուրացիկները, որ երբեմն մեր ճամփաներեն կանցնին, կարծես ցոլքերն են այդ հավիտենական դեմքին։ Անոնք ալ Կյանքին ընդերքն ընդնշմարել կուտան մեզի։ Անոնք մեզի կհիշեցնեն ինչ որ կուզենք մոռնալ և ինչ որ կանգիտանանք։ Անոնք մեզի կըսեն, թե մենք ամենքս մութի մեջ քալողներ ենք, որ, ի ձայնս մշտական ներքին ողբի մը, հևիհև ու խոլ գնացքով մը անընդհատ կընթանանք ի խնդիր ցանկացված հանգրվաններու, որոնց երբեք չենք հասնիր, մինչև որ ժամանենք վերջնական խավարին, մինչև որ մտնենք մահվան խավարին մեջ, ուր թերևս պիտի հասկնանք ամեն ինչ, որ այս աշխարհիս վրա չհասկցանք։

ԳԵՂՈՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅ ԼԵԶՎԻ

Ինչպես գետ մը անհուն, հինավուրց լեռներու անմատույց բարձունքներեն ծնած, և որ անհաշվելի ժամանակներե ի վեր արևուն տակ կպտտեցնե իր թարմ կյանքը մշտահոս ու գեղեցիկ, դուն կվազես դարերուն մեջեն, ո՜վ գեղեցիկ ու քաղցր Լեզու Հայկական։ Քու ակունքդ կկորսվի Անցյալին ալևոր սարերուն մշուշին տակ խորհրդաստղ։ Առասպելախառն ստվերներուն վեհության ծոցեն, ինչպես կաղնի մը հաստաբերձ՝ քու նորացայտ ուղխինահոսմանդ վերև կանգուն՝ դեռ կտեսնենք պայծառ դեմքը հսկա դիցակերպ Հայկին, որ քու վրադ կաթեցուց Բռնության դեմ առաջին բազուկը բարձրացնող ըմբոստի իր նայվածքն առնական։ Եվ մեր որդիական աչքերուն զմայլած խանդաղատանքը դեռ կնշմարե խրոխտ շնորհը գեղեցիկ Արային, որ քու եզերքդ ի վար պահ մը շողաց, ինչպես բուրաստան մը շուշաններու, ու հետո Սիրո և Հայրենիքին հավատարիմ, արի մահով մը մարեցավ, մահով մը երփնավառ ու մաքուր, ինչպես կարմիր պարտեզ մը մեծ վարդերու։ Ու

մեզի ավելի մոտիկ ժամանակներուն ընթացքին մեջ, ինչքան դեմքեր մետաքսե բամբիշներու, երկաթե հերոսներու, խունկի մարգարեներու և կրակե բանաստեղծներու, որոնք իրենց երազը քու ջուրերուդ մեջ հայելացուցին։

Հարյուր ցեղ, է՛ն հզորներեն և է՛ն նուրբերեն, է՛ն վայրագներեն և է՛ն ազնիվներեն, քու ափունքներեդ անցան։ Անոնցմե շատերը, որ սև մտածումն ունեցան քեզ ցամքեցնելու, իրենց բուռն անցքին հարուցած փոշիին մեջ թաղվելով՝ կորան առհավետ, իսկ դուն անոնց անձնյուրեն ցոշող մը, երանգ մը, թույր մը, զանակներ առիր ու ամփոփեցիր քու ծոցիդ մեջ, քու պատմուճանիդ շքեղությունը անոնցմով պերճացուցիր և համառ ու մշտակայտառ՝ դարերուն մեջեն քու վազդ շարունակեցիր։

Ո՞վ մեզի վերստին լսելի պիտի ընե մեծապանծ նվագները, ազնըվական տաղերն ու ազատաշունչ հաղթերգները, զոր ալիքներդ հընչեցուցին՝ այն ոսկեղեն օրերուն, երբ փառքին երիվարը քու հողիդ վրա սիգարշավ կսուրար՝ Տիգրաններուն և Տրդատներուն հուժկու ձեռքով առաջնորդված։ Ժամանակին խավարներուն տակ թաղված, կքնանան անոնք։ Բայց մենք անոնց արձագանքը կգտնենք հզոր ու լիալիր հան

ուր ատենով սոսին կհնչեցներ իր աստվածաբարբառ պատգամը խրոխտ և ուր՝ այգիներուն մեջ ճոխապանծ՝ վարդը կտիրեր,— հիմա, ավա՜ղ, իբր ծաղիկ ու ծառ գերագույն՝ իր որբերն ունի։

Եղանակը, ուր ատոնք կծլին, ո՛չ աշուն է, ո՛չ գարուն, ո՛չ ամառ է, ո՛չ ձմեռ։ Ե՞րբ կուգա, հայտնի չէ. ինչքա՞ն կտևե, ոչ ոք գիտե։ Հրաբխային բորբոքմանց շրջաններուն պես, խորհրդավոր բոպե մըն է, ուր հանկարծահաս պայթումով մը, ամառնային փոթորիկներուն ամենեն ահավորեն իսկ ավելի ուժգին ու քստմնելի մրրիկ մը, խավարով ու շարիքով ամբողջ ուռած, կսուրա, կխուժե մեր երկրին վրա, արյուն ու աղբ անձրևելով, դիակներու և ավերակներու շեղջակույտեր դիզելով։ Ու երբ ան կանցնի ու կանհետանա, ահա հողուն վրա կտեսնենք բուսած այն անթիվ գժգույն ծաղիկներն ու փոքրիկ տխեղծ թուփերը, որ մեր որբերն են։

Ա՜խ, ինչպե՜ս տխեղծ են և ի՜նչ ահավորապես դժգույն։ Պերճ տերևներով հագված ու թոշունի երգերով թրթռուն հզոր ծառերուն, վառ գույներով շողացող ու թիթեռնիկներ հրավիրող երջանիկ ծաղիկներուն չեն նմանիր։ Մերկ են, վտիտ են, լուռ են, և դժգո՜ւյն, դժգո՜ւյն։ Եղերական նունուֆարներ, անոնք կտատանին՝ խեղճ ու թույլ ճոճումով մը՝ արյունի ծովուն մեջ, ուր բուսած են։

Բայց և ինչքա՜ն գեղեցիկ են, ներքին գեղեցկությամբ մը, անասելի ու վրդովիչ գեղեցկությամբ մը գեղեցիկ։ Իրենց դալուկին մեջեն կճառագայթե, ավելի անուշ ու գրավիչ, քան է՛ն շքեղ ծաղիկներուն փարթամ երանգները, նշույլ մը գերագույն մաքրության. և անոնցմե կարտաշնչվի բուրում մը հոգեկան, ավելի ազնիվ, քան նույն ինքն վարդինը, բայց որ քիչերուն է զգալի։

Սովորական անցորդը, որ կդիտե զանոնք, տրտմած ու շվարած՝ ի տես այդքան մերկության և այդքան դալկության, կհարցնե ինքնին. «Տե՜ր Աստված, տիեզերքի մեջ ամեն ծառ ու ծաղիկ գոյության պատճառ մը, իմաստ մը, դեր մը ունի, տեսքովը կհրապուրե, բուրմունքովը կարբեցնե, պտուղներովը կսնուցանե, հյութովը մեղր կընծայե, կամ դեղ կըլլա ցավերու. այս ողորմուկ տունկերը ինչո՞ւ են բուսեր, ինչի՞ կրնան պետք գալ»։

Բայց եթե անցորդին բանական լսելիքն ըլլա այնքան նուրբ, ինչքան պետք է այս տարօրինակ բույսերուն լեզուն իմանալու համար,

պիտի լսե ինչ որ անոնց դալկությունը կըսե՝ իր անգիտակից ու խորունկ բարբառով։

«Մենք,— կըսե այդ դալկությունը,— ցավագին ծաղկափթթումն ենք Արևելքի տարապայման թշվառության, այս այլասերած ու ինկած աշխարհին մեջ մենք Անմեղությունն ենք, որ կտառապի, որպեսզի քնացած խիղճերն արթնցնե, որպեսզի վերարծարծե եռանդն անոնց, որ Չարիքին դեմ կմաքառին, որպեսզի մարդկության ցույց տա արհավիրքն այն փտության, ուր թանձր ու գարշահոտ խավարի մը մեջ ընկղմած այդ աշխարհը կտապալտկի, որպեսզի տիեզերքը մղե՝ գթության գերագույն շարժումով մը Արևելքի ազատարարներուն օգնության հասնելու։ Ու երբ հասնի օրը, ուր գործը ամբողջապես կատարված պիտի ըլլա, երբ Արևելքը վերականգնի ազատագրված ու մաքրագործված, մենք այլևս երբեք պիտի չերևանք և թռչնալից կանանչ ծառերն ու արևոտ վվարթ ծաղիկները միայն պիտի օրորվին այս հողերուն վերևը»։

ԿՅԱՆՔԻ ՏՈՆԸ

Մահամերձ է տարին։ Այս իրիկուն մարդկային ընտանիքը պիտի տոնե մեծագույնն իր տոներուն։ Պետք է ուրախությամբ թաղել մեռնող տարին և խնդալով վաղել ընդառաջ նորեկ տարվան։ Այսպես կհրամայե հինավուրց ավանդությունը, և ավանդությունը, կյանքի օրենքեն ուղղակի ներշնչվող անվրեպ բնազդին ձեռքով հիմնված, գանձարանն է խորին ու հավիտենական ճշմարտության։ Հարևանցի դիտողին համար, քայլ մը ևս դեպի գերեզման տանող այս իրիկունը պետք է տրտմաբեր ըլլար քան ցնծառիթ։ Բայց Ավանդությունն է, որ ունի իրավունք։ Առողջ ու հզոր մարդկության համար, Ամանորը քայլ մը չէ դեպի մահ, այլ հաղթական հաստատումը համաշխարհային կյանքի մշտանորոգ անվախճանության։ Չէ՞ որ ավելի տրամաբանական գործադրումով մը այդ գաղափարին, հին հեթանոս օրերուն մեջ՝ Ամանորը կտոնվեր տարվան այն պահուն իսկ, երբ բնությունն ինքն ալ՝ ձմռան առերևույթ մահեն հարություն առնելով՝ Կյանքի անմահ ու հարանույն զորությունը կհռչակե։ Ի՞նչ կարևորություն ունի տիեզերական գոյության անընդհատական մշտառույգ թավալման մեջ մասնական ճակատագիրը դեպի օրհաս հակող, իրենց մեկ վայրկյանի դերին ավարտմանը մոտեցող անհատներու։ Բնությունը Բովանդակն ունի միայն ի նկատի, և բովանդակն անմահ է։ Եվ ահա այդ անմահությունն է, որ այս իրիկուն կտո-

նեն մահկանացու էակները, որոնց դեռ տրված է ատեն մը ևս բաժին ունենալ կյանքի աստվածային շնորհեն։ Հին տարին ու նոր տարին Հավերժության անծայր ծովուն մեջ, միևնույն անցամաքելի ու մշտաթավալ ջուրին վերեվերումներն են։ Մեռնող տարվա այս բերկրապսակ թաղումը հերքումն է Մահու սև ու սուտ գաղափարին և շնորհապարտության ծիծաղկոտ ողջույն մը առ Կյանքն անշիջանելի։ Ու նույն ատեն ասիկա տոնն է, ուր մարդկությունը կպանծացնե իր հոգվույն ամենեն մռայլ ծալքերուն մեջ իսկ թաքուն ապրող, կյանքի պայմանն ու հիմքը եղող Լավատեսությունը։ Ասիկա տոնն է, ուր մարդկությունը կուզե մոռնալ ցավերը, զոր անցյալը բերավ իրեն և խրոխտ, արի բազուկով մը վեր կանգնել հույսը լավագույն Ապագային։ Ասիկա տոնն է, ուր մարդ, հառակ առօրյա կենցաղին բոլոր տգեղությանց ու տառապանքներուն, իր հավատքը կհայտնե Կյանքին գեղեցկությանն ու վեհությանը վրա և ուր իր համոզումը կշեշտե, թե Կյանքը կդիմե դեպի բարձր ու լուսավոր Նպատակ մը, խորհուրդի և խավարի մեջ փաթթված, բայց անհերքելի։

Այսպես է իմաստն այս տոնին։ Ու բնական, գեղեցիկ ու օգտակար կգտնեմ այն մեծ խանդավառությունը, որով դարեր ի վեր մարդիկ կտոնեն այս տոնը խորախորհուրդ։ Եվ սակայն մինչ բանականությունս լիովին համախոհ կզգա ինքզինքն անոնց, որ կհրճվին այս պահուս, ինչո՞ւ սիրտս, ճնշված անհուն անձկությամբ, կմերժե մասնակցիլ համատարած բերկրանքին ու նույնիսկ կխոցվի, կտառապի այդ մեծադղորդ բերկրանքեն։

Ավա՜ղ, այս տոնը ուժեղներուն տոնն է։ Ու ես կխորհիմ, անդիմադրելի մղման մը տակ, իմ լեզուս խոսող ալևոր պառավներուն, որ այս բոպեիս հեռուն, Տավրոսին ոտքը, սուգի ու մոխիրի մեջ նստած, իրենց բզկտված զավակները, իրենց քանդված օջախը կողբան։ Եվ խղճի խայթի մը պես անգութ ու անվանելի՝ կհալածե զիս տեսիլը եղկելի աղջիկներուն, որ իմ քույրերս էին ու լղրճվեցան, ու անվրեժ մնացին... Զղջիկի պես՝ սև թևերը բաց, տգեղ ու զազիր, գլխուս վերև կպտուտքի, իր հպանցքովն ուղեղս կճանկռտե սա պժգալի բառը՝ կոտորա՜ծ... Ու վերջին աղետը, որուն հիշատակը օձաձև կգալարվի վզիս շուրջն ու կխեղդե զիս, նոր օղակ մըն է միայն, ավա՜ղ, երկարաձիգ սև շղթայի մը... Ահա ամբողջ շղթան, որ կհառնե, կցցվի, կդարձդարձի շուրջս ու փշրված ոսկորներու ճարճատումով մը ուսերուս վրա կուգա կդիզվի ու կծանրանա...

Դուրսը, կլսեմ, կզգամ այս մեծ քաղաքն ամբողջ, որ իր բոլոր լույսերը վառած, իր ուրախության բոլոր աղբյուրները բացած, հզոր, հրնչուն, վճիտ ծիծաղով մը կխնդա։

Եվ ինչո՞ւ չխնդա։ Իր զավակները դարերե ի վեր թափեր են հերոսի արյունը և մտածողի քրտինքը ու կանգներ են փառք մը անխորտակելի ու տիեզերաշող, որուն առջև զմայլած, ծունկի կուգա երախտագետ մարդկությունը։ Իր բոլոր ձևերով, Ուժն է, որ կծաղկի ու կգահե հոս, և հրճվանքը բնական արտագրումն է ուժին։ Ինչո՞ւ չխնդա այս քաղաքը։

Իմ ցեղս,— ու որքա՜ն երկայն ատեններե ի վեր, ափսո՜ս,— մոլորեր է Փառքի բարձրադետ արևազօծ ճամփեն և մութ դաժան ձորի մը մեջ է ինկեր՝ անտուն, անզեն, ուժաքամ։ Ինչքա՜ն վերք իր ճակտին վրա, և ավելի կսկծեցուցիչ քան վերքերը՝ ինչքա՜ն անարգանք...

Անձկությունը, որ կպարուրե սիրտս, կստվարանա, կկարծրանա, անըմբռնելի ցավով մը կգալարե ջիղերս բոլոր, և դուրսը՝ երջանիկ քաղաքին ծիծաղը կմեծնա, կընդլայնի, ևս քան զևս հնչուն ու զվարթ։

Ինչի՞ կառչիլ այս լքման մեջ, ինչպե՞ս գտնել սփոփ։ Ինչո՞վ սրտիս վրայեն նետել այս լեռը... Որովհետև ես չեմ կարող համակերպիլ այս ճակատագիրն ընդունելու և գլուխս ծռած մրմնջալու. «Այդպես է մեր բախտը»։

Ընդունիլ հավիտենական զոհի բախտը և մեր հին քրոնիկագիրներուն ու եղերերգակներուն պես ողբալու մեջ գտնել մխիթարանք, ո՜չ, ես այդ չեմ կարող։

Կյանքը պետք է դեպի մեծություն ձգտի։ Լավագույն է մահը, քան կյանք մը անփառունակ։

Ողբը՝ ճնշող, փոքրացնող, խեղդող է։ Տկարության զավակ, ան կբազմապատկե տկարությունը, ան կապականե, կտգեղցնե կյանքին դեմքը։ Դեպի մեծություն խոյացող կյանքը հրճվանքով կվարձատրվի, կպսակվի ու հրճվանքի մեջ է, որ կյանքն իր լիալիր, գեղեցկագույն ու ճշմարտագույն տեսիլը կզգենու։ Ազնիվ ու բեղուն ուժին հաղթական ինքնարբեցութենեն կծնի հրճվանքը, և ան կկազդուրե, կմեծցնե, կթևավորե հոգին։

Իմ ցեղս պետք է վրայեն նետե այս անբույժ ցավագարի, անվերջ սգավորի քուրձը։ Պետք է, որ ան ալ ուժեղներուն շարքին մեջ կանգնի և հաղորդակից ըլլա մարդկային մեծ հրճվանքին...

Բայց ի՞նչ լույս է այս, որ հանկարծ կցաթի հոգիս պաշարող մութին մեջ։ Աղետի, խեղճության, արհավիրքի պատկերները կցնդին ու դեմս կկանգնին արության, առաքինության, տաղանդի ջահերը, զոր

իմ ցեղս, իր բազմամյա արկածալից դժնդակ ուղևորության մեջ։ Պատմության լեռներեն ու ձորերեն, վառեր է հոս ու հոն՝ իր վրա խուժող ու զինքը խեղդել ուզող խավարին երկայնքը։ Ահա՛ մեր հին օրերու քաջերը, անոնք, որ հաղթել գիտցան ու ցեղիս պատիվը բարձր բռնեցին։ Ի՞նչ փույթ, որ քմահաճ համբավը անոնցմե շատերու անունը փողհարած չըլլա մեկ ծայրեն մյուսն աշխարհիս. մենք գիտենք, որ է՛ն մեծ քաջերուն չափ քաջ եղան անոնք։

Ահա՛ նոր օրերու մեր հերոսները։ Ի՞նչ հսկա ճիգ՝ Ազատության ափ մը տարփավորներու կողմե հազվադեպ հանդգնությամբ լարված։ Չէ՞ որ այդ ճիգն էր Արևելքի թմբիրը պատռողն ու վերջնական կերպարանափոխությանց ուղին հարթողը։ Ահա՛ մեր իմաստունները, հայրագոհությամբ խոհական նահապետի դեմքեր վաղնջուց դարերուն, ժողովրդասերը ազգապետի, խիզախ ռահվիրայի, բոցեղ քարոզչի վեհ ստվերներ՝ նոր ատեններու մեջ հայտնված։ Եվ ահա՛ հանճարը ցեղին, իր հոյակապ լեզվին մեջ շողացայտ, քերթողական ու գեղարվեստական քանի մը շքեղ ստեղծագործությանց մեջ մինչև վսեմագույն կատարները բարձրացած։ Ի՞նչ փույթ, որ ասոնք պաշարված, սեղմված ըլլան մթության ու հեքության շատ մեծ զանգվածներով։ Ինծի համար, այս բոպեիս, ասոնք են մեր Պատմությունը, ասոնք միայն։ Մնացյալը բոլոր՝ մղձավանջ մըն է, երկարորեն ծանրացած՝ կուրծքին վրա իմ ցեղիս, և օր մը ամբողջապես պիտի փարատի անտարակույս։ Ճնշված կուրծքին տակ, սիրտը մնացեր է տաք ու առույգ, ապրելու և ստեղծագործելու միշտ կարող։ Մնացյալը՝ ինչպես սիմունն է, հզոր ու ապուշ սիմունը, որ ուղևորին վրա կհարձակի և կզգետնե զայն։ Բավ է, որ սիմունին անցնելե հետո, ուղևորը, տապալած բայց չխորտակված, գիտնա ոտքի կանգնիլ, դարմանել իր վերքերը և շարունակել իր ճամփան։

Այո՛, դուն պիտի շարունակես քու ճամփադ, Հայ ժողովուրդ, ծեր ու անխոնջ ուղևոր։ Աչքդ քու անցյալիդ լուսավոր հանգրվաններուն հառած, պիտի կանգնիս, վերքերդ՝ անգամ մը ևս՝ պիտի դարմանես և քու վրադ հավատքով լեցուն՝ պիտի քալես։ Քու դերդ դուն դեռ լրիվ չես կատարած։

Հեռո՛ւ քենե վհատությունը։ Պետք է հաղթել թշնամի ճակատագրին։ Պետք չէ ընդունիլ տկարի բախտը։ Տկար չե՛ս դուն։ Նյութական անզորությանդ մեջ դուն ունիս ուժը գերագույն, հոգեկան ուժը։ Դիտակցությունն ունեցիր այդ ուժիդ, նետե՛ Վրայեդ ստրկության ու տառապանքներուն դիզած հիվանդագին ժանգն ապականարար, ամփոփե՛ կորովնելդ, միացո՛ւր ու դաշնավորե՛ զանոնք, անոնց գլուխը դիր՝ իբր առաջնորդ՝ իմացական կորովը, և քալե՛, ապրե՛, գործե՛, քու փառքիդ և քաղաքակրթության օգուտին համար։

Բարով եկավ ուրեմն Ամանորը։ Օրհնյա՛լ ըլլա Կյանքի Տոնը։ Թոթվե՛ գլգլյակներդ, Հայ ժողովուրդ, սրբե՛ արցունքներդ, ու սիրտդ հույսով լեցուն, ինքնավստահ ու արի նայվածքով մը դուն ալ ողջունե Նոր տարին։

ՈՒԹ ՁԱՅՆԵՐԸ

Գարնան գեղեցիկ գիշեր մըն է։ Լուսինը կշողշողա երկնքին մեջտեղը։ Հանկարծ, ութ մարդկային գլուխներ, երկրագունդիս զանազան կետերուն վրա, դեպ ի լուսինը կուղղվին, և այդ ութ գլուխներեն, որոնց աչքերը անոր վրա կսևեռվին, միևնույն բոպեին կբարձրանան ութ ձայներ։ Եվ ահա՛ ինչ որ կսեն այդ ութ ձայները։

Առաջին ձայն (գիտուն մը).— Շատոնց է, որ գիտությունն ապացուցած է, ու զորավոր փաստերով, թե դուն այլևս բնակիչ չունիս, ով լուսին։ Բայց իմ նպատակս է գիտենալ, թե ի՞նչ տեսակ էակներ էին անոնք, որ քու լեռներուդ ու հովիտներուդ մեջ կծնեին ու կմեռնեին, թե ի՞նչ բանի մեջ անոնց մարմնական կազմությունն ու ապրելու եղանակը կտարբերեին մերիններեն, թե ի՞նչ էր իրենց կարծիքը հոգիի գոյության մասին և թե ինչպե՞ս կբացատրեին բնության խորհուրդները։ Արդեն շնորհիվ իմ դիտողությանցս ու հետազոտությանցս՝ գտած եմ բավական հետքեր ու հենակետեր, որոնք ինծի ընդնշմարել կուտան այն կյանքը, որ ատենով կշարժեր քու մեջդ։ Պիտի շարունակեմ ջանքերս, և ապահով եմ, որ քիչ ատենեն պիտի կարենամ ճշգրիտ ու մանրամասն տեղեկություններ ունենալ քու անցյալիդ վրա։ Եվ այն ատեն, իմ շնորհիվս, Երկիրը կատարելապես պիտի ճանչնա իր խորհրդավոր արբանյակը։

Երկրորդ ձայն (բանաստեղծ մը).—

Մինչ թրխմբուր քող գիշերին
Պարզի լերանց ի կատար,
Մինչ հույլ ի հույլ աստեղք երկին
Պըլպլան ի նշույլ գալկահար,
Խորհրդավոր այս վեհ պահուն,
Մինչ աշխարհ կա անդորրու,

Մինչ ամեն ինչ հանգչի ի քուն,
Դըշխո՛յ գիշերց, ո՜վ աղու՝
Լուսնյակ, հառես աչքըս քու վրա,
Ու ի հայացս իմ զմայլագին
Առ քեզ հոգյակըս վերանա
Ջերդ խունկ, որ մեղմ դեպ երկին
Սլանա յալիս գալարուն,
Քե՛զ, երազոց մա՛յր ու կայան,
Որ հոսես ջինչ լույսդ օծուն
Լուռ միջոցին մեջ անսահման
Եվ անցնիս երթաս, ոգի՛ հրեղեն,
Գիշերին հարս ամոթլյած,
Ցերամս աստեղց, որ զքեզ պատեն
Որպես նաժիշտ ոսկեզգեաց։

Գ. ձայն (պառավ մը).— Կտեսնե՞ս, զավա՛կս, աստված պապային աչքն է որ վերեն մեզի կնայի կոր։

Դ. ձայն (ճամփորդ մը).— Օրհնեա՛լ ըլլաս, ո՜վ լուսին, դուն ջահն ես, զոր Աստված գիշերվան խավարին մեջ կկախե առաջնորդելու համար ուղևորին քայլերուն՝ երկար ու տաժանելի ճամփու մը վտանգներուն մեջեն։

Ե. ձայն (կույս մը).— Դուն մեր գլխուն վրա կփայլեիր այն գիշերն ալ, ուր մելամաղձիկ լճակի մը ափանց վրա հավերժական սեր ուխտեցինք իրարու. մեր աչքերը դեպ ի քեզ բարձրացան, ու մեր հոգիները, ճառագայթներուդ վրայեն սահելով, ելան մինչև քու ծոցդ ու հոն իրար գրկեցին։ Այն իրիկունը, մենք իրարու խոստացանք մեր երկուքիս սրտին տենչերուն և երազներուն ժամադրավայրն ընել քեզ։ Օ՜հ, սիրո գողտրիկ տեսարաններ լուսավորելու համար է որ Աստված քեզ երկընքին մեջ դրած է... Այնքան անուշ է քու լույսդ և այնքան անբիծ, այնքան թարմություն ու միանգամայն այնքան դալկություն կա քու ամոթխած դեմքիդ վրա, որ դուն իսկ կթվիս ըլլալ սիրով հրդեհյալ երկնային կույս մը, որ հավիտենապես կթափառի հաստատության ամայի դաշտերուն մեջ ի խնդիր իր անգտանելի սիրականին...

Զ. ձայն (մահամերձ մը).— Դուն որուն աչքերը լույս կուլան, վերջին շող մըն ալ կաթե՛ դժգույն ճակտիս վրա... կաթե շող մըն ալ աչքերուս վրա, որոնք ի սպառ պիտի փակվին քո լույսիդ ինչպես և կյանքի լույսին։ Եվ երբ սև մարդիկը կրծող որդերու աշխարհը տանին զիս, ո՜վ լուսնակ, զիս մի՛ մոռնար, եկո՛ւր թառե նոճիի մը կատարն ու քու մեղրանուշ լույսեդ քանի մը կաթիլ հոսեցուր գերեզմանիս վրա։ Վասն զի դուն երկնքին մեջ դրված են մահամերձներու տխրությունը մեղմացնելու և մեռելներուն վրա ողբալու համար։

Է. ձայն (աստվածաբան մը).— Ո՜վ Տեր, անբավ է քու իմաստությունդ ու քու բարությունդ անսահման։ Ամեն բանի վրա քու նախախնամությանդ հետքերը կտեսնենք։ Արևին կենսատու լույսեն զրկված տիեզերքն երբ խավարի մեջ թաղվի, դուն լուսնին սուրբ կանթեղը երկընքեն վար կկախես, որպեսզի Սատանան, որ գիշերին թագավորն է և մութի մեջ ավելի ազատ կգործե, անկարող դառնա մարդոց դարան լարելու և երթա իր վիհերուն խորը պահվտի...

Ը. ձայն (ավազակ մը).— Զզվելի է սա անպիտան լուսինը, որ արգելք կըլլա իմ գործիս։ Չեմ գիտեր ի՞նչ բանի կծառայե այդ անիծյալ կանթեղը։ Քանի որ ցերեկը միշտ լույս կըլլա, գիշերն ալ միշտ մութը պետք է տիրեր։ Աբիկա մեծ անկանոնություն մըն է բնության մեջ։ Եթե Աստված քիչ մը ավելի լավ տրամաբանող ըլլար, իմ արհեստս շատ ավելի շահաբեր կդառնար։

Այսպես կը խոսին, գեղաճաճանչ գիշերին մեջ, ութ մարդկային ձայները, լուսնին, որ կշարունակե միջոցին մեջ թավալիլ, վսեմ՝ իր շնորհագեղությամբ, մելամաղձությամբ ու լռությամբ։

ՊՕՏԻԿ ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻՆ ՊԱՏԱՀԱՐԸ*

ՀԵՔԻԱԹ

Բիեռ Քիեռոքին

Վերջին իրիկունն էր այդ շարագուշակ 1895 տարվույն, ուր Ոճիրը աշխարհիս վերև սավառնեցավ։ Մոլեռանդ ու թալանող անբաններու բազմություններ խելահեղ կառավարության մը հրամանովն արձակված էին հայ գյուղերուն վրա։ Քանդիչ ուժերը պաշարած էին աշխատության ու խաղաղության ժողովուրդ մը։ Դիմադրությունը, զոր փորձեցին մեկ քանի երիտասարդներու խմբակներ՝ ջախջախվեցավ, խուլ ձորերուն խորը, խուռնամբոխ զինվորականութենեն. և ծերերուն, տղաքներուն ու կույսերուն տկարությունը գազանի ճիրաններու մեջ բզկտվեցավ ու

* Այս հեքիաթին ֆրանսերեն թարգմանությունը հրատարակված է «Մեռքյուռ տը ֆրանս»-ի 1899 մարտի թվույն մեջ։

լրճվեցավ։ Ամպերուն մեջեն՝ Զարի դեմքին անցնիլը տեսնվեցավ, հրճվանքի ծամածռած. և վայրկյան մը կարծեցին թե Արևը պիտի մեռներ։

Հրոսները քաշված էին հիմա, մահու խրախճանքը դադրած էր, բայց արհավիրքը դեռ կհածեր ամայացած գյուղերն ի վար։ Հրդեհված եկեղեցիներն իրենց վտիտ սև կմախքները կցցեին. կործանած տնակներն ու այրած արտերը իրենց համր մերկությանը մեջ կարսփային։ Փողոցները դատարկ էին։ Ողջ մնացողներն իրենց ծակերուն մեջ սմքած կկենային, աներևույթ, որպես թե ամենքն ալ հողին տակ ընկլուզված ըլլային։

Զմեռը կուգար ավարտել մարդկային ձեռքերուն գործը։ Զյունը ճամփաները գոցեց, հաց չունեցող խեղճ մարդիկը բոլորովին առանձնացուց. և սպանիչ հովերը կրակ չունեցող խոնարհ հյուղակներուն վրա խուժեցին։

Այդ կաղանդի նախորդ իրիկունը, ոչ մեկ լույս երևցավ պատուհաններուն մեջ, և ձյունապատ երդիկներեն ոչ մեկ երգ բարձրացավ։

Քամին կանցներ միջոցին մեջեն, և իր ոռնումը, միայնակ, կերկարաձգվեր ամայի գյուղերուն մեջ, մեծ համերգի մը պես։

Սակայն մահը առերևույթ էր։ Խռովյալ, դանդաչկոտ ու համառ գոյություններ, ձյունին տակ ու լռության մեջ, կտևեին։ Հոգիներ խուլ կերպով կրաբախեին սառած աղջամուղջին խորը։ Անեծքներ, ողբեր, աղոթքներ ու ցասումներ կզեռային, աննշմարելի, այդ տժգույն անշարժության մեջ։

Եվ ահա արտակարգ պատահար, որ այդ գյուղերեն մեկուն մեջ, Ք...ի մոտերը, տեղի ունեցավ, վերջին իրիկունն այդ տարվույն որ մահ հոտեցավ։

* * *

Գյուղին խրճիթներուն ամենեն տխեղծին մեջ, գիշերվան շատ հառաջացած մեկ պահուն, տասերկու տարեկան տղեկ մը կհապաղեր մտմտալու։ Տեսեր էր՝ այդ աշունին անիծված օրերուն՝ արյունոտ աչքերով մարդիկ, որ իր հորը վրա հարձակեր, բիրի հարվածներով զայն զգետներ, անոր գլուխը կտրեր ու գնդակի պես իրարու նետեր ու հետո ուրախության աղաղակներով մեկներ էին՝ հետերնին քաշքռտելով իր քույրը, տասերեք տարու աղջնակ, զոր մորը գրկեն հափշտակեր էին։ Իր ամբողջ խեղճ գյուղին հեծելն իմացեր էր մարդկային մրրիկի մը անցքին ներքև։ Տեսեր էր տաճիկներ, որ փողոցին մեջ դիզված դիակներուն վրա կթքնեին։ Տեսեր էր իրենց փոքրիկ եկեղեցվույն տրտմորեն

այրիլը ամբարիշտ ամբոխի մը քրքիջներուն առջև։ Անկից ի վեր, տնակին մեջ քաշված կապրեր, իր երկու պզտիկ եղբայրներուն հետ, որ իրենց հորը ետևեն կուլային, և իր մորը՝ որ, խենթացած, հին օրերու խաղեր կերգեր։ Օրեր անցուցեր էին առանց ուտելու։ Ընտանիքի փոքրիկ հայրը դացեր էր աշխատիլ իրենց գյուղին այն մեկ քանի մարդոցը քով, որոնք դեռ քիչ մը ստակ կրնային ունենալ. հետո դիմեր էր մորուեղ, գիրուկ օտարականներու, որոնք աղետքեն ի վեր գյուղին մեջ կերթևեկեին, և որոնք՝ իրենց բաշխած հացին փոխարեն՝ պապենական հավատքին ուրացումը կպահանջեին։ Ատի զինքը ճմլեր էր, և այլևս չէր ուզած տեսնել այդ մարդիկը, որ իր երկրին դավանանքները կնախատեին։ Շատ անգամներ արյունելու աստիճան ծեծ կերած էր տաճիկներեն՝ այն կատաղի նայվածքին համար, զոր անոնց կարձակեր փողոցներուն մեջ քովերնեն անցած ատենը։ Տուն դառնալուն, լռիկ մնչիկ ինքզինքը կկրծեր՝ մտածելով, որ անկարող էր աշխարհիս բոլոր տաճիկները մորթելու։

Տարօրինակ տղա մը եղած էր միշտ։ Ամենափոքրիկ հասակեն իսկ, իր ծնողքին կշտամբանքներուն դեմ կըմբոստանար։ Հաճախ կերթար անտառներուն մեջ թափառիլ, օձերեն ու գայլերեն աներկյուղ։ Մեկեն ավելի անգամներ գետին հոսանքին մեջ ինքզինքը վտանգած էր՝ անուշադրությամբ ջուրը ինկած պզտիկ աղջիկներ ազատելու համար։ Քիչ կխոսեր, և իր ցանցառ խոսքերուն մեջ վրդովիչ վաղահասություն մը ցույց կուտար. կուզեր ամեն բան գիտնալ։ Հարցումները, զոր հորը կուղղեր, միամիտ դեղջուկը կշվարեցնեին։ Օր մը հարցուց անոր, թե ինչո՞ւ իրենց գյուղին ծեր վշտաշատուն, այդ այնքան տգեղ ու չար մարդը, երջանիկ կյանք մը կանցներ, մինչդեռ իր հայրը, որ բարի մարդ մըն էր, օրն ի բուն իր արտի բրդուճին վրա կքած, հազիվ կտոր մը հացկտներ իրեն ու իր ընտանիքին համար. ուրիշ անգամ մը անոր հարցուց թե ինչո՞ւ մարդիկ տաճիկներու և հայերու բաժնված էին և ինչո՞ւ առաջինները, ծույլ, աղտոտ ու բիրտ, վերջիններուն ճակտին քրտինքովը կապրեին ու անոնց դատանքը նախատինքներով ու կեղեքումներով կվարձատրեին։ Հայրը կպատասխաներ, թե այդ բաները մարդոց հասկացողությենեն վեր էին, թե երկնքին խորը աներևույթ էակ մը կար, բոլոր մարդոց հայրը, մեծ ծերունի մը, Աստված անունով, որ կյանքը շտկրտած էր իր ըմբռնած ձևովը, և թե ամեն բանի պետք էր հանդուրժել՝ քանի որ Հայրը այդպես կուզեր, որովհետև ամենամեծ փորձանքներ հառաջ կուգային, եթե մարդ տրտնջար անոր դեմ։ Ավելի ընդարձակ տեղեկությանց համար, խորհուրդ տված էր, որ երթա տեսնվի քահանային հետ, որ այս մասին երկայն բարակ կրնար խոսիլ։ Քահանան

միևնույն բանը կրկնած էր, և ավելցուցած էր թե, Աստված երկնքին մեջ երանավետ կյանք մը պատրաստած է այս աշխարհիս մեջ չարչարվողներուն և թե անկից պիտի վտարվին աշխարհիս չարերն ու հզորները, որոնց կսպասեն հավիտենական պատուհասները։ Աղետքի օրերուն, պզտիկ գեղջուկը տեսեր էր գյուղին ծերունիները, որ բազուկներին երկինք կբարձրացնեին և կպաղատեին Աստծո որ իրենց օգնության հասնի։ Բայց Աստված տեղեն չէր շարժած, ու լիրը սուրերը Աստված աղերսող դողդոջուն բերաններուն մեջը մխվեր էին։

Չէր հասկնար ու գաղափարն ունեցավ երթալ տեսնել այդ Աստվածը, որուն բարության կերպը զինքը կզարմացներ, անձամբ անկից բացատրություն առնելու համար այս աշխարհիս իրերուն վրա։

Այդ իրիկունը ամեն ատենե ավելի այս գաղափարին կմտածեր։ Երեք օրե ի վեր ամբողջ ընտանիքը անոթի էր։ Ձյունը ամեն հաղորդակցություն կտրած էր։ Մնացեր էին միս մինակ՝ անոթության ու ցուրտին հետ դեմ առ դեմ։ Այդ առավոտն իսկ՝ պզտիկներեն մեկը մեռեր էր, անոթութենեն հատած, ինչպես նիհար մոմ մը որ մեծաբոց կրակի մը առջև կհալի։ Մյուսը, անկյուն մը կծկտած, անձայն ու անշարժ կկենար, քուրչի ծրարի մը պես։ Մայրը ջղային տագնապներե ուժասպառ, գետինն ինկած փռված էր, ծանր թմբության մը մեջ ընկղմած։ Ու գիշերը ողողած էր անճրագ և անպատուհան խրճիթը, զոր դուրսը ոռնացող հովն ուժգնապես կցնցեր։ Մութին մեջ տեսավ, կանգուն, իր հորը կտրված գլուխը, որուն աչքերը արյուն կուլային։ Շուրջն իր եղբորը մեռնիլն զգաց։ Ու այդ սև լռությունը կխեղդեր զինքը։ Որոշեց վերջ տալ։ Ալ ուրիշ բան չէր մնար, բայց եթե երթալ Աստված տեսնել։

Լսեր էր, որ Աստծո քով տանող միակ ճամփան մահն էր։ Եվ գիտեր թե մեռնելու համար պետք էր երկայն ատեն մսիլ կամ անոթի մնալ։ Երկրորդ միջոցը շատ երկար էր։ Որոշեց առաջինին դիմել։

Առանց բառ մը ըսելու կամաց մը դուռը բացավ, դուրս սահեցավ, գնաց ձյունին մեջ պառկեցավ ու մահվան սպասեց։

* * *

Այն շավղեն, որով ձյունի հատիկները երկնքեն երկիր կիջնեն, փոքրիկ հոգին դեպ ի վեր թռավ։ Աղջամուղջին մեջեն բարձրացավ, հովերեն տարուբեր, ձյունի հատիկներուն զարնվելով, ու շնչասպառ էր երբ հասավ երկնքին մեծ ոսկի դռանը սեմին առջև։

Շատ ատեն անցավ, մինչև որ հրեշտակները դռները բացին. կաղանդը տոնելու վրա էին, և բավական սպասցուցին նորեկը, ինչպես

որ նույն բանը կպատահի աշխարհիս մեջ՝ հարուստի տունները. այն քարիկը քիչ մնաց պիտի զղջար երկրեն հեռացած ըլլալուն. բայց այն գաղափարը թե վերջապես Աստուծո հետ պիտի խոսեր, արդեն մտքին մեջ պատրաստեր էր այն մեկ քանի ծեր խոսքերը, զոր անոր պիտի ըսեր, և Աստուծո բերնեն իսկ մեծ բացատրությունն իմանալու հույսը, զինքը սրտապնդեցին, համբերություն ու քաջություն տվին իրեն։

Բայց երբ դուռը բացվեցավ, իր աչքին պարզված տեսարանը զինքը այնքան զմայլեցուց, որ վայրկյան մը ամեն բան մոռցավ։ Հեշտական գաղջություն մը զինքը պարուրեց, փայփայիչ, թուլացուցիչ։ Այդ տեղը լեփ-լեցուն էր լույսերով, ու պաշտելի բուրումներ կծածանեին հոն, որպես թե շատ մեծ ու շատ շքեղ եկեղեցի մը ըլլար, շատ ավելի գեղեցիկ, քան երկրիս վրա տեսնվածները։

— Ո՞վ ես դուն,— հարցուց դուռը բացող հրեշտակը։ Նեղսիրտ ձև մը ուներ, խրախճանքին ճիշտ մեջտեղը այս անակնկալ այցելութենեն անհանգիստ եղած ըլլալուն համար։

— Երկրի տղա մըն եմ ես, պատասխանեց պզտիկը։

— Ի՞նչ մտածելով այս ատեն, ու այս գիշեր, ելեր եկեր ես։ Ի՞նչ կուզես։ Անցագիր ունի՞ս։

— Չունիմ և չեմ գիտեր ատոր ինչ ըլլալը։ Ես տղա մըն եմ, որ մեկուն գեշություն չէ ըրած, և կուզեմ Աստված տեսնել։

Հրեշտակը զարմացած էր քահանային վկայագիր չունեցող և ներս մտնելուն պես Աստծո հետ տեսակցություն մը խնդրելու համարձակող այս հոգին տարօրինակ ժամանումեն։ Բայց տղեկը կպնդեր. կըսեր թե շատ կարևոր բաներ ուներ Աստուծո ըսելու. և մատղաշ ալ էր ու շատ սիրուն. հրեշտակը հավանեցավ զայն Աստուծո մոտ տանիլ, պայմանով, որ անհարկի բան մը չընե։

Սրահե սրահ առաջնորդեց զայն արքայության մեծ ամփիթատրը, ուր այդ իրիկունը Աստված հրեշտակներն ու արդարները հավաքած էր՝ կաղանդը տոնելու համար։

Ինչ աղվոր էր։ Տղեկը շլացած կդիտեր։ Սրահները, որոնցմե կանցնեին, շատ ավելի մեծ էին քան իր երկրին դաշտերը։ Օդը հոն լուսավոր էր և փաղփուն երանգներով խայտաբղետ։ Ջեղունները հեռավոր էին ու խորունկ՝ երկինքներու պես, և արտակարգ գույներով աստղեր հոն կպտուտքեին անպատում երաժշտությունով մը։ Անծանոթ անուշահոտություններ միջոցին մեջ կծածանեին։ Հրեղեն ծառեր կցցվեին, պրիսմակաթույր բոցերով տերևավորված, արևներ կրելով իրրև պտուղ. մեծ կապույտ թռչուններ, փոսփորափայլական թևերով, ծիածանաձև

պոչերով, երգելով կթուշտեին։ Կակաղ ու թավշենի հատակեն կսլանային մեծ ծաղիկներ ներդաշնակ ձևերով և որոնց բաժակները կնոջ դեմքերու պես կփթթեին։

Այս ծայրահեղ պերճանքը, այս փափկությանց առատությունը տղեկին տխեղծ ու մկոտ հոգին կընդարմացնեին։ Բոլոր այդ բաները այնքա՛ն քաղցր, այնքան արբեցուցիչ էին, որ վախցավ թե տկարանա և հարկավոր ուժգնությամբը խոսելու անկարող դառնա։ Գերագույն ճիգ մը ըրավ, և մտածումը սևեռեց հիշատակին վրա իր ընտանիքին, զոր վարը թողած էր տառապանքի ու խավարի մեջ։

— Աճապարե՛նք, խնդրեմ,— ըսավ ծերունի հրեշտակին, որ զինքը կառաջնորդեր։ Կուզեմ անմիջապես Աստված տեսնել։

Հրեշտակը կվարաներ։

— Դժվար է այս ժամուն զինքը տեսնել։ Արքեն ան սովորություն չունի պզտիկ տղոց հետ խոսելու։ Ավելի լավ է որ իր դիվանադպիրներեն մեկը տեսնես։

— Կուզեմ Աստվա՛ծ տեսնել, պնդեց տղեկը։

Վերջապես հասան մեծ ամփիթատրը։ Անհամար բազմություն մը այնտեղ շարված էր ճոխ խնջույքի մը շուրջը։ Տղեկը մատեցավ։ Պերճափարթամ սեղանը կերկնար, երկնավոր համադամներովը ծանրաբեռնված։ Հազար տեսակ խորտիկներու, կաթկանդակներու և մրգեղենների մեջ, նշմարեց, շողշողուն անոթներով՝ կաղանդի համբավավոր հայկական կերակուրները, Արքայության եզանակով պատրաստված. ոնուշապուրը, հոսուն արշալույսով շինված, լուսիններով պճեղված, ու Ցրան Ծիրկաթինի փոշի ցանված. քրքմաներկ փիլավը, հավերժական լյունավ հորինված, հրեշտակի աչքերով զարդարուն, արևածագի դեղինով երփնված. դոնդողը, ամառվան երկնքի ամպերով կազմված, աստղի խորվտանքներով ծակծկված և լուսնի լույսով փոշեցան։ Այդ բոլորը կփողփողեր, կպսպղար լույսերու և ծաղիկներու խոլ զեղխության մը մեջտեղը։ Եվ սեղանին շորս կողմը, մերկ սերաբենների օդածածան հույլեր անվախճան երանության տաղը կերգեին՝ կուսական հոգիի գույնով յոթնաղյաններու նվագման ընկերակցությամբ։

Ծեր հրեշտակն էր, որ խնջույքին այս մանրամասնությունները կբացատրեր։

Տղեկը ակնարկ մը պտրտցուց կոչնականներուն վրա։

«Անշուշտ, կմտածեր, այս հոգիները որ այստեղ, տիրոջը տան մեջ, կհրճվին, հոգիներն են այն մարդոց, որ վարը դժբախտ եղան և բարի եղան»։ Հանկարծ կոչնականներեն մեկը ճանչցավ. իրենց նախկին գյուղապետն էր, առջի տարին մեռած, խարդախ, բիրտ, հափշտակիչ, կեղեքիչ, կեղծավոր ու շատ շար մարդ մը։ Քիչ անդին նշմարեց վաշխառուն, իրենց գյուղին սահելի վաշխառուն։ Եվ ահա, ո՛վ արհավիրք, տեսավ տանջիկներ, որոնք վայրագ ախորժակով մը խոշոր պատառներ կուլ կուտային, որպես թե մորթված մարդու գլուխներ լափեին։ Աչքերուն չհավատալը եկավ։ Վիթխարի զայրույթ մը կոկորդը սեղմեց։ Աչքը վերեն վար պտրտցուց կոչնականներու երկայն շարքին վրա. ամենքն ալ պարարտ, այտեղ, ինքնագոհ հոգիներ էին, ապուշ ու անգութ կերպանքով մը։ Ուշադրությունը գրավեց կլորիկ, ուռած, շատ տգեղ հոգի մը, որ աղվոր քերոբե մը կփայփայեր՝ իր լայնաբաց երախին մեջ աստղեր ընկլուզելով։

— Ո՞վ է այդ մարդը, հարցուց հրեշտակին։

— Երկրի վրա սեղանավոր էր ան։

Ուրիշ մը, նիհար, կանաչորակ մոյնքով, աչքերը արյունով ողողած, զազիր ծիծաղով մը կխնդար։

— Ո՞վ է այս մարդը։

— Երկրի վրա սոկիան էր ան։

Տղեկը կատաղությենեն ցատքեց։ Գիտեր թե ինչ կնշանակեին այդ սոկիան և սեղանավոր բառերը։ Իր հայրը երբեմն տարտամորեն խոսած էր անոնց մասին։ Ի՞նչ գործ ունեին այդ թշվառականներն Աստուծո տանը մեջ։

Զգեց իր ծեր առաջնորդը, և խելահեղ վազքով մը դեպի Աստված սլացավ։ Ձայն նշմարեր էր հեռուն, սեղանին գլուխը, համաստեղությունների դրվագված ու լայն վարդագույն ամպհովանիով մը ստվերված մեծ ոսկի աթոռի մը վրա։

Հրեշտակներու հույլերը կկենային անշարժ իր գլխուն շուրջը, հրամաններուն սպասելով։ Քովերը ուներ պապեր, սուլթաններ և կայսրեր, որ իրեն թահաֆ պատմություններ կպատմեին, զինքը խնդացնելու համար։ Ծերուկ, մորուքին բացավառ մացառին մեջ կնճռած դեմքը խոռոչուզ, աչվքները փարոսներու պես կարմիր, հսկա պատառներ կկլլեր ահաբեկիչ որկրամոլությամբ մը։

Հանկարծ ձայն մը թնդաց, անակնկալ, տարօրինակ, սրագոչ թեև մանրիկ.

— Տե՛ր, մտիկ ըրե ինծի։

Տղեկն էր։

Գլուխները ասդին դարձան, իրարանցում մը առաջ եկավ, և Աստված հոնքերը պռստեց։

— Տե՛ր, շարունակեց փոքրիկը, ես երկրի տղա մըն եմ. և ինծի ըսած են, թե դուն բարի ես։ Տեսար, որ բարիները կտառապին հոն և չա-

բերը երջանիկ են ու հզոր։ Եկած եմ քեզի հարցնել այս անիրավության բացատրությունը։ Բայց կնշմարեմ, որ հոս քու սեղանդ ընդուներ ես ոչ թե մեր աշխարհին դժբախտները, այլ սրիկաներն ու ճիվաղները։ Իրա՞վ է ուրեմն, որ դուն մարդոց հայրն ես; իրա՞վ է, որ դուն բարի ես։ Պատասխան տո՛ւր։

Հրեշտակները վրդովեր էին, սերոբեները երգելե դադրեր, շատակեր երախներն այլևս չէին շարժիր. ապշության սարսուռ մը սեղանին շըրջանն ըրեր էր։ Փոքրիկ սուր ձայնը ահավոր հնչականություն մը ստացած էր այդ մեկ քանի բառերն արտասանելով։

Աստված ասդին էր դարձեր, դեմքը ծամածռած, արյունը գլուխն ելած. իր խորին ոնգունքները բարկութենե կմխային։

— Այդ պզտիկ ստահակը դռնեն դո՛ւրս ըրեք, խանչեց, և գիսավոր աստղերով խարազանեցեք հրեշտակը, որ զինքն իմ Արքայությանս մեջ մտցուցեր է։

Այն ատեն սրտմտությունն ընդլայնեցավ ու բարձրացավ պզտիկ ապստամբին հոգիին մեջ։ Եվ այդ սրտմտությունն այնքան մեծ, այնքան գեղեցիկ էր, որ տղեկը վայրկյան մը կարծեց թե իր կատաղությանը պայթումովը պիտի կարողանար օդը հանել բոլոր այդ ստության տունը՝ այդ զեշ հայրովը մեկտեղ։

Կռուփը ցուցուց Աստուծո, ու թքավ դեպի ան։

Իսկույն պաշարվեցավ երկնավոր ծառաներեն։ Եվ ահա իր աչքերը մթնեցան, իր շուրջն ամեն բան ցնդեցավ, և զգայ, որ կգահավիժեր լռության մեջ ու ցուրտի մեջ։ Բայց հանկարծ տեսավ կապուտակ ստվեր մը, որ զինքը պարուրեց. տրտում քաղցրությունով մթին դեմք մը իր առջին երևցավ. սև ու տաք թևեր զինքը բռնեցին իր անկումին մեջ. և խորունկ ձայն մը ականջն ի վար փսփսաց. «Եկո՛ւր ինծի հետ. ես Վռնտվածն եմ ու Ապստամբը. ես եղբայրն եմ դժբախտներուն. եկուր ինծի հետ. մենք պիտի կործանենք Աստուծո տունը»։

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ա.

Մեր մեջ ուշ կմտնե աշխարհատյաց վանականության մռայլ միստիկականությունը։ Մեր հին կրոնքը, նախ զանդիկ կրոնքի եղբայրը, հուրի և լույսի երգ մըն է, հետո հույն-լատին հեթանոսության ցոլք, արուեստի ու գեղեցկության նվիրագործում մըն է, միշտ պայծառ ու առույգ ըմբռնումով մը կյանքի։ Եվ կյանքի այդ ըմբռնումը ցեղին անչափ հարմար է, որ երկար ատեն, նույնիսկ քրիստոնեության մուտքեն հետո, անիկա կշարունակե սիրել ու պահել նախկին լուսավոր երգերը, ծաղկավետ դիցաբանության կայտառ ու գունագեղ «վիպասանություն»-ները։ Շատ ճապուկ ու դյուրընկալ ցեղ, կճկի սակայն քրիստոնեության, կըմբռնե զայն և անոր ոգին կյուրացնե՝ մինչև իր տոհմային մտայնության հետ նույնացնելու աստիճան։ Բայց երբեք բուն միստիկական զգացումը, այդ բացարձակ ղղվանքը երկրավոր կյանքեն և երկնավորին ամբողջական ու տարամերժ անձնավորությունը, արմատ չէ կապած մեր մեջ։ Մերիններին չեն կրցած համոզվիլ չսիրելու իրենց աշխարհը։ Մեր եկեղեցիին նահատակները երկու անգամ սուրբ են։ Մեր պատմագիրները և կրոնական բանաստեղծները երկու հրայրքները մենկեն ունին։— Դեմք մը կա սակայն մեր գրականության մեջ, թերևս միակը, որ զուտ միստիկական է, և մեկը՝ ամենեն հրաշալի դեմքերեն ընդհանուր միստիկական գրականության. Նարեկացին է ան։

Ի՞նչ դեմք,— և ի՞նչ գործ։ Մեկը այն մարդկային տիպարներեն, որոնք անդունդի խորություններով փորած են իրենց կյանքին տիրական մտածումը, անոնցմե, որոնց երազը կյանքեն ավելի մեծ եղած է, և որոնք հաղվագյուտ կարողությունը ունեցած են իրենց երազին ամբողջ մեծությունը արտահայտելու։ Գործը, զոր Նարեկացին թողած է, ամբողջ մըր-

րիկ մըն է անհունի մեջ գալարվող զգացման մը, և չեմ գիտեր գործ, որ անկից ավելի զորավոր ըլլա։ Էջեր կան հոն, ուր մեր բանաստեղծը մարգարեներուն ուժին հավասարած է, և էջեր, ուր Շեքսպիրի հով մը կանցնի։ Ամբողջ միստիկականություն է այդ գործը, և ամբողջ քնարերգություն։

Ի՞նչ ազդեցություններ զայն պատրաստած են. որո՞նք եղած են կյանքի պարագաները և այն մտավորական ներգործությունները, որոնք այդ մտածումը և այդ ոճը շինած են։— Քննադատությունը դեռ քիչ բան ըրած է այս կարևոր խնդիրը լուծելու համար։ Նարեկացիին վրա կենսագրական ծանոթությունները սակավաթիվ են։ Հայսմավուրքին մեջ տարտամ ուրվագիծ մը կա միայն իր կյանքեն, որ լույս կբերե գործին վրա, բայց որ անոր կազմությունն ամբողջապես բացատրելու չի բավեր։ Գրիգոր Նարեկացին ծնած է 951-ին. Խոսրով Անձևացի եպիսկոպոսի որդին է, ինչպես կգրե Հայսմավուրքը, «Ծնեալ եւ վարժեալ սրբութեամբ եւ իմաստութեամբ առ ոտս Անանիա վարդապետի՝ առաջնորդի Նարեկայ վանիցն։ Եւ ի նոյն վանս կրոնաւորեալ ձեռնադրեցաւ քահանայ, եւ կարգեցաւ վարժապետ միանձանց ի սուրբ վանս եւ յաստուածային գիտութիւնս»։

Այսչափ իր կյանքին պատրաստության վրա։— Բայց այս հակիրճ ծանոթությունը որոշապես ցույց կուտա, թե Նարեկացին լավագույն պայմաններն ուներ պատրաստվելու համար այն կյանքին, որուն կոչված էր։ Իր պատանությունը ժամանակին երկու գրական մեծ մտքերուն ազդեցությամբը սնավ։ Խոսրով Անձևացին, հեղինակ՝ «Ժամագրքին» և պատարագի խորհուրդին վրա մեկնությանց և աստվածաբանական գրքերու, հմուտ և փայլուն աստվածաբան գրագետ մըն էր։ Անանիա, Նարեկի վանքին առաջնորդը, և անոր անունով Նարեկացի կոչված, հեղինակ մեկնողական և խրատաբանական գործերու, որոնցմե քիչ բան մնացած է, բազմագետ ու մեծ գրչի համբավ վայելած ու պատմիչներեն «մեծ փիլիսոփա, երևելի վարդապետ, այր անուանի և գիտնական» կոչված է։ Գրիգոր վայելեց մշտական ու սերտ ազդեցությունն այս երկու աստվածաբան գրագետներուն, որոնցմե Անանիա մանավանդ, որուն հանձնված էր Գրիգորի բարոյական, հոգեկան և մտավորական կրթությունը՝ անոր միտքն ու կյանքը կազմավորեց վանքին մեջ։ Անոր ձեռքին տակ Գրիգոր ընդարձակ հմտություն մը ամբարեց, խորունկ ու լայն ուսումնասիրություն մը Աստվածաշունչին՝ զոր ծծած է, ինչպես իր գործեն կերևա, ու մեծ ծանոթություն մը եկեղեցիի հայրերուն, որոնց ցոլքն իր ոճին մեջ հայտնի կտեսնվի և որոնցմե հիշատակություններ շատ ունի իր էջերուն մեջ։ Իր աստվածաբանական հմտությունը շատ մեծ է, բայց նույնչափ

մեծ են իր մեջ խղձն ու կարողությունը իր մտածումը գեղեցիկ ձևով մը արտահայտելու. իր ուսումնասիրություններն ըրած է ուրեմն աստվածաբանի և բանաստեղծի կրկնակ ձգտումով։

Այս տեղեկությունները կբավեն բացատրելու համար Նարեկացիի մտքին կազմությունն իբր աստվածաբան. բայց ինչ որ ամենեն թանկագինն է, իր զգայնության ձևակերպումը, գրեթե ոչինչ՝ ատիկա լուսաբանող։ Արդ, Նարեկացին, հմտության մարդ մը ըլլալով հանդերձ, զգայնության մարդ է ամեն բանե առաջ. իր գործը ավելի հուզման գործ է, քան մտածման. իր աստվածաբանությունն իսկ՝ տրամաբանող աստվածաբանություն մը չէ, այլ քնարերգական աստվածաբանություն մը։— Ո՞րն էր այն ներքին զրաման, որ իր հոգիին մեջ շինեց տառապանքի ահռելի այն շեշտը, ուրով ամբողջ իր գործը կթնդա, ո՞րն էր այն ճեղքը, որ վանական սովերին մեջ իր սրտին վրա գտվեցավ, հետո երկնցավ՝ անոր շրջանն ըրավ ամբողջ, հետո խորցավ, վերք մը եղավ, ու անչափ ատեն ծորեց արյունոտ բանաստեղծության հրավառ հեղուկը որ «Նարեկ»-ին մեջ կմխա։ Մեզքին վախը, կյանքի հաճույքներուն փորձության սարսափը այնչափ խորունկ զգալու համար, ինքզինքը անոնցմե փրցնելու շարժառանքը շատ ցավագին եղած ըլլալու է. իր ծայրահեղ եռումով փրփրացող ոճը զայն մեզ կցուցնե իբր չափազանց զգայուն ու տաք խառնվածք մը։ Ոչ մեկը պիտի համարձակի կարծել, թե Նարեկացին սիրած ըլլա աշխարհի սիրով, ինչպես Միշլե կենթադրե Հիսուսի նմանության հեղինակին համար. իր բոլոր այն բազմաթիվ տողերն իսկ, ուր մեր սուրբը ինքզինքը աշխարհի հառած, կյանքի փակած, կրքերու մեջ պղծված կցուցնե, հեռու այդպիսի ենթադրություն մը մեզի ընել տալ կարողանալե, հոգեբանին աչքին կշեշտեն այդ միապաղաղ կուսությունը, որ, իր բացարձակ մաքրության երազին մեջ, աշխարհային վայելքի մտածումը, սիրելու խուսափուկ կամեությունն իսկ՝ իրագործված մեղքի, հոգին լղճող անկումի համեմատություններովը կտեսնի. Նարեկացին, մանկությենեն վանք մտած, անոր խնկահոտ կիսաստվերին մեջ սնած, աշխարհը ճանչցած չէ, բայց առաջին օրերուն, ուր իր մեջ եռ եկող կյանքի հույզը՝ ապրելու փափագին հայտնությունն ըրած է, ու իր բանաստեղծությամբ բորբոքած երիտասարդությունը՝ վայելել երազած է, երբ երկնքին սիրովը լեցված, իր կյանքին հույզը ցամքեցուցած ու երիտասարդությունը իր ծաղկին մեջ քսկ խաչը հանած է հավիտենական երիտասարդության համար, ապահովապես այդ տառապագին օրերուն, իր սիրտը սկրդուք մը ունեցած է. այդ հոգեբանական տագնապը հարկավոր է իր երգին մեջ գալարվող ցավը բացատրելու համար։— Բայց աստուծո գաղափարը ալիքի պես բարձրացած, իր հոգիին մեջ լեռնացա-

է, և իրմե զատ ամեն բան իր ներքև խեղդած։ Ու Նարեկացին հասած է այն հազվադեպ վիճակին, ուր ա՛լ կտրված է աշխարհեն, տեսակ մը հոգեն վեր, մարմնեն դուրս կյանքի մեջ մտած, ուր երկրավոր իրերը այլակերպված կերևան և ուր ա՛լ կսկսի գերերկրավորին տեսությունը։ Նարեկացին աստված տեսած է։

Եվ հոս, հրաշալիին աշխարհը կմտնենք։ Նարեկացիին շուրջը ժողովուրդը քանի մը ավանդավիպական միջադեպներ հյուսած է, որոնք անոր դեմքը լուսապսակված դեմքերուն դասը կդնեն։ Եվ իր ճշմարիտ սուրբի կյանքը, իր մարմնի և հոգիի անայլայլ կուռությունն է, որ ժողովրդին համար Նարեկացին հրաշքի կարող ըրած է. որովհետև աստված հավատացյալներուն համեմատ՝ գերագույն մաքուրներուն միայն կբանա հրաշալիին ոլորտը, և անոնք միայն, որոնք լոկ հոգի եղած են՝ կրնան մարմնական կյանքին կարգուսարքը խախտել իրենց սքանչելագործ կամքին զորությամբ։ Ու մեր կրոնական դեմքերեն թերևս ոչ մեկը այնչափ մեր մեջ խորհրդանշանը եղած է երկնադրացի գերերկրավորության՝ որչափ Նարեկացին. ժողովուրդը զանիկա «հրեշտակական» կոչած է. ու անոր գիրքը իրեն համար դարերու ընթացքին, աղոթքի մատյանե ավելի բան մը, հրաշքի աղբյուր մը դարձած է. ամենեն թաքուն ախտերու բուժիչը, փորձությանց դեմ է՛ն ուժով վահանը, և այն հզոր խոսքը, որմե դևերը ահաբեկ կհալածվին։ Ժողովուրդը այս ծայրագույն նվիրագործումին մղողը, Նարեկացիին կյանքին չափ, և թերևս ավելի, իր գործն է եղած, գործ մը այնքան հանկուցիչ իր զգացման առատությամբ, պատկերներու զորությամբ ու ճոխությամբ, ոճի բարդ, մռայլ, մոգական հրապույրով և լեզվի անհուն երաժշտականությամբ՝ որ ազգը, հմայված, ան ալ հրաշք մը նկատած է, տեսակ մը խորհրդավոր տեսիլք, ուր սերոբեները տուն տված են ու բանաստեղծը՝ գրած. ու ոչ մեկ կրոնական գիրք մեր մեջ այնչափ կարևորություն ստացած է որչափ «Նարեկ»-ը. մեր ժողովուրդը Ավետարանին քով, պիտի համարձակիմ ըսել՝ անկից առաջ դրած է զայն. իր աղոթքի գերագույն գիրքը նկատած է զայն, «հայ» աղոթքին նվիրական գիրքը։

Այո՛, աստված երևցած է անոր։ Այրի մը մեջ, մենավորիկ աղոթած ատենը, լույս կբխի քարերեն, և Հիսուսը կերևա իր մոր՝ Աստվածածնին հետ։ Ա՛լ ընտրվածն է անիկա, հրեշտակացած մարդը, որ բնութենեն վեր է. և ժողովուրդին համար ա՛լ ոչինչ կա անոր անհնար։— Ահավասիկ իր հրաշքներեն մեկը, զոր Հայմամավուրքը կպատմե։ Իր վայելած համբավին նախանձող կրոնավորներ զինքը կամբաստանեն եպիսկոպոսներուն և իշխաններուն իբրև ծայթ և հերձվածող. անոնք ալ քանի մը հոգի կղրկեն, որ ելլե իրենց առջև գա հարցաքննվելու. Նարեկացին իրեն եկողներուն

կըսե՝ «Եկեք քիչ մը բան ուտենք և հետո կերթանք»։ Երկու աղավնի տապկել կուտա և անոնց առջին կդնե։ Օրը ուրբաթ էր, պահքի օր։ Ավելի կգայթակղին եկողները, և կըսեն՝ «Միս կուտվի՞ ուրբաթ օրով»։ Սուրբը, մոռցած ըլլալ կձևացնե, «Կներեք, չգիտնալով ըրի», կըսե, և աղավնիներուն դառնալով. «Ելե՛ք, կգոչե, ձեր տեղն ու ձեր երամը գացեք, վասընզի այսօր պահք է»։ Իսկույն տապկված աղավնիները կկենդանանան ու թևերնին բանալով կթռչին։ Այս տեսնելով, ամենքը սուրբին ոտքը կիյնան և ներում կխնդրեն։— Այս հրաշքին վրա հավելվածական մաս մը, ինչպես քանի մը ուրիշ հրաշքներ ալ, կգտնենք պատմված՝ Նալյան Հակոբ պատրիարքին Նարեկի մեկնության առաջաբանին մեջ։ Այն օրը, ուր այս մարդիկ կուգան Նարեկացին տանելու, սուրբը գաշտն էր, ոչխարներ արածելով զբաղած, երբ զինքը կուգան կկանչեն, կտեսնե որ գայլ մը եկեր՝ իր հեռանալուն կսպասե՝ ոչխարները ուտելու համար. գայլը կկանչե և կպատվիրե, որ մինչև իր դառնալը ոչխարներուն վրա իբր պահապան կանգնի. տուն կերթա, աղավնիներուն հրաշքը կկատարե, և դարձին կտեսնե, որ գայլը խելոքիկ պահպանություն կընե ոչխարներուն, գառնուկ մը նե, որ գայլը խելոքիկ պահպանություն կընե ոչխարներուն, գառնուկ մը նվեր կուտա անոր և կարձակե զայն։— Ան քարայրին մոտ, ուր Քրիստոսն ու Տիրամայրը տեսավ, օր մը աղբյուր մը կբխեցնե, որ դեռ կա կըսվի, և հրաշքներ կգործե։— Բայց ահա իր վերջին հրաշքը, որմե հետո կվախճանի. Նարեկ գյուղին մոտ Գորգ անունով մեծատուն մը կար, որ կիրակի օրերը կաշխատեր և ծառաներն ալ կաշխատցներ. Նարեկացին կխրատե անոր սուրբ պահել կիրակին, և երբ անիկա մտիկ չըներ, կանիծե զայն։ Երեք օրեն մարդը կմեռնի։ Ասոր վրա գյուղին դատավորը բռնել կուտա սուրբը և շղթայի կդարնե. սուրբը կաղոթե, և երեք օրեն շղթաները կհալին, և ինքը կարձակվի. հոն, ուր զինքը շղթայեցին, աղբյուր մը կբխի, որ հրաշքներ կգործե։ Հետո, սուրբը հանդիսավորապես կպատարագե, ժողովուրդը կօրհնե — և կառանձնանա հսկելու և աղոթելու, բայց ա՛լ դուրս չելլեր իր աղոթատեղիեն. և երբ հոն կմտնեն, զինքը չեն գտներ, անհայտ եղած էր աղոթքով ու պահքով. անոր անհետացման վրա տեղեկություն կխնդրեն. հրեշտակ մը կերևա և կըսե թե սուրբը աստուծո քով ելած է։

Ահա իր կյանքը և իր մահը՝ ինչպես որ ժողովուրդին երևակայությունը, պաշտոնական հիացումով մը, ձևակերպած է։ Ինչ որ գիտենք ստույգ, քանի մը ընդհանուր գծեր են իր կյանքեն։ «Հոգեկան» կյանք մըն է որ ունեցած է, աղոթքի, կրոնական ընթերցմանց և վանական զբաղմանց կյանք մը, «Խստակրօն եւ աստուածահաճոյ վարուք, որպէս հրեշտակ ի մարմնի քաղաքավարեալ»։ Իր օրերը անցուցած է խոկալով, աղոթելով, կարդալով ու գրելով։ Բայց կերևա թե լոկ խոկացող մը եղած չէ,

այլ գործող մը ալ. կրոնքի գործին համար աշխատած է. վանքին մեջ ուսուցիչ էր միանձներու, քանի մը անգամ հերձվածողներու դեմ ճառեր գրեց ու ճշմարիտ քրիստոնեական վարդապետությունը պաշտպանեց. «Երգ երգոց»-ը մեկնեց, որպեսզի ամբողջ ժողովուրդը անոր իմաստը հստակ ըմբռնե ինչպես ինքը կըմբռներ, քարոզներ արտասանեց, հրապարակային կրոնքի կյանք մը ալ ունեցավ՝ եթե կարելի է այսպես ըսել։ «Ամենայն փութով ջանայր, կրսե «Հայմավուրք»-ը, ուղղել զխանգարեալ կարգաւորութիւնս եկեղեցւոյ»։

Նարեկացիին կենսագրության մեջ կետ մը, շատ շահեկան, բայց շատ ալ մութ մնացած, այն գերն է, զոր իր Հովհաննես եղբայրը կրնա ունեցած ըլլալ իր գործին երկնումին մեջ։ Երեք եղբայր էին արդեն, Գրիգոր, Հովհաննես և Սահակ. Գրիգոր Նարեկացին չի խոսիր Սահակի մասին, որուն անունին կհանդիպինք նոսրով Անձևացիի մեկ գործին մեջ և որ կերևա թե կգրեր ինչ որ իր հայրը տուն կուտար։ Բայց Հովհաննեսը երկու տեղ հիշված է Գրիգոր Նարեկացիին և շատ նշանակալից դերով։ «Նարեկ»-ին կցված հիշատակարանին մեջ կգրե թե Հովհաննես եղբայրը իր խորհրդակիցը, աշխատակիցը եղած է. «...Եւ, Գրիգոր, կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց եւ կրտսեր վարժապետաց, գործակցութեամբ եղբօր իմոյ ընտրելոյ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծապատ եւ բարձրապատիւ ուխտի վանականի, որք իբրեւ զմի մարմին բանական և յերկուց առ մի կերպարան չինելոյ միակրօնք համապատիւք զուգահաւանք, ի քառից աչաց առ միեւնոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք»։ «Ապարանից Խաչին պատմության» կցված հիշատակարանին մեջ, իր եղբոր համար ավելի հարգալից, անոր կարևորությունը ավելի մեծցնող տողեր գրած է. «Յիշատակեցաս զանուն իմ որուպ... եւ զեղբայրն իմ զանդրանիկ զՅովհաննէս ցանկալի անուն ի միում կարգի, որ գիտականն է և հանճարեղ իմաստասէր քան զիս տուեալ յամենայնի»։ Մարդ վայրկյան մը կփոքձվի երկու Նարեկացիներուն աշխատակցության մեջ Գոնկուրներու օրինակին նախորդ մը տեսնել. բայց ինչ որ հոգեբանական կամ վիպական գործերու մեջ կրնա իրականանալի ըլլալ, կարելի՞ է քնարերգության համար, և կրնա՞նք երևակայել, որ «Նարեկ»-ին այն սրտազեղ ճիչերը երկու հոգիի խորհրդակցությամբ պատրաստված ըլլան։ Այդ անչափ անձնական շեշտը կրնա՞ երկու անձի բաղադրությենե առաջ գալ։ Ավանդությունը միշտ Գրիգոր Նարեկացիին վերագրած է ամբողջ հեղինակությունն իր գործին ու թերևս, ինչպես հ. Զարբհանալյան կգրե իր պատմության մեջ, Հովհաննես հմուտ խորհրդատու մըն էր միայն, աստվածաբանական խնդիրներու մեջ իր եղբորը օգնող, և կրոնական գրքեր ուսումնասիրելու համար՝ անոր աջակցող մը։

Գրիգոր Նարեկացի մեռավ վաթսուն տարեկան, և թաղվեցավ Նարեկի վանքին մեջ, Սանդուխտ կույսին գերեզմանին մոտ։ Այդ երկու կուսությունները ամփոփող դամբարանները իրարու մոտիկ ժողովրդին համար՝ սրբության կայան մըն են, և հրաշքներու աղբյուր կհամարվին։ Ու սրտաշարժ չէ՞, որ մեր առաջին կույսը, շնորհալի մարտիրոսուհին, իր շուշան սավերին տակ կհովանավորե մշտապես, Նարեկի վանքին աղոթամբոնջ լռության մեջ, այն տարօրինակ բանաստեղծը, որ կուսության ամենեն խորունկ երգը ողբերգեց։

Բ.

Գրիգոր Նարեկացիի գործը կբաղկանա աստվածաբանական երկասիրություններե, աղոթքներե, քանի մը պատմական հատվածներե, և կրոնական բանաստեղծություններե։ Այս բազմաձև արտադրության մեջ, մտայնության բացարձակ նույնություն մը կա. նույն մղումն է որ իրեն պատմել, երգել կամ մեկնաբանել կուտա։

Առաջին տողեն մինչև վերջինը, ատիկա գործն է աստուծո գաղափարով հիպնոսացած մտքի մը։ Իրեն համար ամեն տեսակ նյութ միջոց մըն է այդ գաղափարն արտահայտելու ու թերևս ատիկա գաղափար մըն ալ չէ իր մեջ, որչափ խորունկ հուզում մը. Նարեկացին այն սկոլաստիկ աստվածաբաններեն չէ, որոնք հստակ սահմաններով կորոշեն աստուծո հղացումը, հանդերձյալ կյանքին մանրամասնությանց վրա կպիճին, կամ բնազանցական պատճառաբանություններով մարդուն հոգին ու կյանքը կբացատրեն։ Ինքը բանաստեղծի, տարօրինակ կերպով չգուտ բանաստեղծի հոգի մըն է, որ կանուխեն բախած է աստուծո գաղափարին, անոր մեծությենեն ինքզինքը ջախջախված զգացած է և որ ամբողջ կյանքին մեջ այդ ցնցումին հիվանդ ու տառապեցնող զգայությամբը կսարքրա։ Երբեք իրեն համար բանաձև մը չէ աստված, երբեք բնազանցական սահմանով մը չէ, որ զայն կորակե, իրեն համար անիկա անհանը, անանծանոթը, անհատն է, բայց միանգամայն անհուն մը, որ զգալի է, անծանոթ մը, որ զինքը ամեն կողմե կսեղմե, անհատ մը, որուն խորհուրդը շոշափելի վերքի մը պես իր հոգին կցավցնե։ Զանիկա իր մեջ կբզգա, իր վերև, իր շուրջը և անոր վրա։ մտածելը իրեն համար հեռու, վերացական խոհանք մը ըլլալե, ցավ մը, սաբսաթ մը կամ երանություն մըն է՝ վայրկյանին համեմատ, միշտ զգացում մը, գրեթե նյութական զգացում մը։ Ասոր համար է, որ իր արտահայտության ձևը քնարերգությունն է միշտ, զինքը ճզմող զգացմանց ու զգայությանց տաստիկ, գրեթե բնազդական արտարձակում մը, ուր ամեն բան կբխի գերազդեցված երևակայությենե մը և ծայրահեղորեն ձգտված զգայությենե մը։

Աստուծո գաղափարը այս կերպով զգացված և այս կերպով արտահայտված, ահա՛ իր ամբողջ գործը։ Այդ գաղափարն ու այդ ձևն է, որ կգտնենք իր «Ապարանից Խաչին պատմության» մեջ, ուր դյուցազներգական քնարականությամբ մը կպատմե խաչին մեկ կտորին Հունաստանեն հանդիսավոր և հրաշագործ փոխադրությունը մինչև Մոկաց աշխարհը, և որուն կցված են խաչին ներբող մը և Աստվածածնին հռչակավոր ներբողը, իր բանաստեղծական ամենեն հրաշունչ հատվածներեն մեկը։ Այդ գաղափարն ու այդ ձևը՝ «Առաքելոց ի գովեստ» ճառին, ինչպես «Հակոբ Մծբնա հայրապետին գովեստ»-ին, ինչպես «Երգ երգոց»-ին մեկնության մեջ, որ գրած է Նյուսացվույն նմանօրինակ գործին հետևողությամբ։ Այդ գաղափարն ու ձևը իր գանձերուն և իր զմայելի տաղերուն մեջ։ Բայց այն գիրքը, ուր ամենեն խորունկ և ամենեն ընդարձակ կերպով կգտնենք այդ ներշնչումը և այդ ոճը, իր «ողբերգության մատյան»-ն է, իր աղոթագիրքը, «Նարեկ»-ը։

Եվ այդ գիրքը հեղինակին հոգիին ամենեն ճշմարիտ արտահայտությունն է, ճիշտ անոր համար, որ ամենեն քիչ աստվածաբանականը և ամենեն շատ քնարերգականն է իր ամբողջ գործին մեջ։ «Երգ երգոց»-ին մեկնությունը, գրեթե ամբողջ աստվածաբանական, իր երկասիրության մեջ գրական տեսակետով ամենեն տկարն է. բանաստեղծը, բնագրի մը կապված, անոր կհետևի քայլ առ քայլ, բացատրելու վարդապետական աշխատությունը կկատարե, ուր ավելի իր աստվածաբանի հմտությունը և ճարտարությունը կերևա, քան բուն իսկ իր հոգին, թեև նորեն իր հոգին, իր բանաստեղծի հոգին կմատնվի մեկնելու համար Ս. գրքին բանաստեղծական գլուխն ընտրելու հակումին՝ ինչպես իր մեկնողական ոճին մեջ։ «Ապարանաց Խաչին պատմությունը» և «Մծբնա Հակոբ Հայրապետին գովեստը» երկու հոյակապ կտորներ են քնարերգական վիպումի, ուր քրիստոնեական «հրաշալին» այնչափ խանդով, այնչափ հավատքով և այնպիսի պերճ երևակայությամբ մը արտահայտված է, որ այդ երկու հատվածները քրիստոնեական դյուցազներգության երկու ճշմարիտ ղերվագներ կդառնան։ Սակայն այս բոլոր էջերուն մեջ, քնարերգությունը կամ աստվածաբանական, կամ վիպողական է, և ատով անանձնական բանաստեղծություն մըն է, քիչ հարմար ամբողջությամբ արտահայտելու Նարեկացիին հոգին, որ ամենեն անձնական շեշտը ունեցողն է մեր գրական հին դեմքերուն մեջ։ Որպեսզի Նարեկացին իր բովանդակ ուժովն ինքզինքը մեզի ճանչցնե, պետք է որ դեպքերը, աստվածաբանական կնճիռները ցնդին, անհետանան և ինքը մինակ մնա իր սևեռյալ գաղափարին հետ, և այդ ամեն բանե անջատման մեջ ինքզինքը երգե միայն։ Եվ «Նարեկ»-ին մեջ,— բացի քանի մը գլուխներե, ինչպես երրորդության դավանանքին և Աստվածածնի պաշտամունքին բացատրությունը, մեռոնի աղոթք,— ատ ըրած է միայն։

Մայրե ծայր այդ գիրքը երգն է միակ հոգիի մը, անոր ցավերուն, զմայլանքներուն, դողերուն, բոլոր հուզումներուն։ Եվ ինչպես որ այդ երգը կլայնցնե, մեծ արվեստի այն էական հատկանիշն է, որով գործը ընդհանուր և մասնավոր է միանգամայն, մարդկային և միանգամայն անհատական, կզգանք, որ իր վրա խոսած ատեն, բանաստեղծը ամբողջ մարդկության հոգին իր մեջ խտացած կտեսնե. ինքզինքը ինկած զգացող այդ էակը, որ բարձունքներուն աչքը հառած գթություն կաղաչե, այդ էակը ամբողջ մարդկային ազգն է։ Բայց բանաստեղծն այնչափ ուժով, այնչափ անձնապես կզգա այդ ընդհանուր զգացումը, որ իր երգը անհատական շեշտ մը կառնե, հստակ եսի մը ձայնը կըլլա,— երգը Մարդուն և մարդու մը։ Եվ այսպես՝ այդ աղոթքի գիրքը, զոր բանաստեղծը գրած է մարդկության իղձը ուզելով արտահայտել առ աստված, իր հոգիին խոստովանանքը եղած է, տեսակ մը անվերջ խոսակցություն աստծու հետ։ Աղոթքին ընդհանուր տիտղոսը արդեն լավագույն բացատրությունն է ամբողջ գրքին։ «Ի խորոց սրտի խոսք ընդ աստուծոյ»։

Ճշմարիտ խոսակցություն մը, ուր բանաստեղծին տառապագին ձայնը միայն կլսենք, բայց որուն ետև կզգանք, նույնիսկ իր ահավոր լռության մեջ, աստուծո ներկայությունը, որ հետզհետե ավելի խոր, ավելի սուր կընե բանաստեղծին խոսքը։ Վանականին քերթվածն է աս, պարզ, և սակայն ամբողջական հոգեբանությամբ մը, միստիկականության ցավագին վեպ մը, ուր կտեսնենք սիրով լեցված էակ մը՝ աստուծո տարվագին վեպ մը, ուր կտեսնենք սիրով լեցված էակ մը՝ աստուծո տարփանքովը վառված, որ անոր մեծությունը կերգե, և գութ կպաղատի անկից։ «Նարեկ»-ը վերլուծելով, կտեսնենք որ «երկնքի սերը» իր բոլոր ձևերովը արտահայտված է հոն, ձևեր, որոնք նույն զգացման տարբեր երեսներն են, հզոր միությամբ մը կապված։

Այդ տարբեր երեսները գրքին մեջ ցրված են, առանց կարգի, և շատ անգամ կրկնված։ Կրնանք, սակայն, այդ անհուն խառնաշփոթության մեջեն՝ որ ինքն իսկ ամբողջ հուզումով շինված այդ հոգեկան մրրկի վիճակին հավատարիմ պատկերն է, զատել գլխավոր տարրերը և իրենց բնական հաջորդությամբը շարել։ Ահա՛, այն ատեն, հոգեբանական կմախքը, զոր կգտնենք գրքին բանաստեղծության տակ.— Պաշտողական գովեստ՝ աստուծո մեծության.— Զղվանք իր անձին համար, գիտակցություն իր ոչնչության՝ աստուծո բաղդատմամբ...— Վախ ինքիրմե, սարսափ փորձութենե, և խնդրանք՝ շարեն ազատելու.— Բաղձանք՝ աստուծո շնորհն ընդունելու և հողաքարշ պաղատանք ատոր համար.— Հույս, սակայն, Աստվածածնին վրա, որուն բարեխոսությունը ամենաշքոր է, և այդ

կազդուրող հույսին համար՝ երախտագետ սեր մը առ երկնավոր միջնորդուհին.— Հավատք, վերջապես, աստուծո բարության վրա, և հույս փրկության։

Ասոնք են, գրեթե ամբողջությամբ, այն գլխավոր մոտիվները, որոնց բյուրաձև ու անհատնում ընդլայնումները գրքին երաժշտությունը կձևացնեն։ Ասոնցմե ամենեն տիրականը առաջինն է, այն, որ կերպով մը լայթ-մոտիվն է այս ողբերու ներդաշնակության, անոր սկիզբն ու մեջտեղն ու վերջն է, անոր հոգին է, և մյուսները անոր կհանդին, ինչպես իրենց աղբյուրին ու նպատակակետին,— գովեստը աստուծո մեծության։

Այդ գովեստը քիչ անգամ վիպական ձև ունի. Նարեկացին աստուծո զորությունը բացատրելու համար, անոր պատմական արտահայտության չի դիմեր, ու չի ծանրաբեռներ իր երգը մարդկային պատմության այն միջադեպներով, ուր այդ զորությունը հայտնված է, այլ ապացուցումը պզտիկ կերևա իրեն կարծես. ինքը կերգե աստուծո մեծությունը ինքն իր մեջ, և ավելի կսիրե ցուցնել, թե ինչեր կարող է քնել ան, քան թե ինչեր ըրած է։ Հազվագյուտ են այն հատվածները, ուր աստուծո մեծությունը պատմական ձևով կտարփողե. գեղեցիկ էջ մըն է այդ տեսակին մեջ ԲԱՆ ԿԳ.-ը, որ թվում մըն է տիեզերքին ու մարդկային պատմության մեջ աստուծո զորության հայտարար դեպքերուն ու նշաններուն. «...Որ զլուծութիւն ծովուն սահանաց իբր զկարկաւս քարանց կառուցեալ եզանակեցեր, որ զկարծրանիւթ վէմն անապատին ի վիճակս հոսեալ բխեցեր... որ պատուաստեալ պարիսպ Երիքովի իբր զթեթևութիւն յարդի ցնդեցեր... Որ սասանես զերկիր եւ ըզսիւնս նորին ի հիմանց... որ զարուսեկին անզգայ էութիւն իբր երասանաւ իմն դաստիարակես...»։ Այս վիպողական ձևը, քարոզի կամ դյուցազներգության շատ հարմար, լավագույն ձևը չէ զուտ քնարերգության համար, որ իրերը իրենց տարտամ, ընդհանուր գծերուն մեջ կտեսնե. Նարեկացին գրեթե միշտ կնախընտրե ներբողին քնարերգական ձևը, ու փոխանակ մարդկային պատմության մեջ փնտրելու աստուծո մեծության փաստերը, իր հոգիին, իր երևակայության մեջ կփնտրե զորության բոլոր այն ստորոգելիները, զոր կրնա վերագրել անոր, և այդպես, իր երգը, հաճախ երկայն թվում մը ածականներու կամ փառաբանող նախադասություններու, աստվածաշնչական օրհներգության կամ նախնական բանաստեղծությանց գավաբանական աղոթքի ձևը կառնե։ Ահավասիկ ԲԱՆ ՂԱ.-ին սկզբնավորությունը, որ ժայթքում մըն է ահաբեկ հիացման բառերու. «Տէ՛ր, տէ՛ր գթութեանց և աստուած ողորմութեանց, անուն մեծութեան, ձայն ահաւորութեան, կոչումն սաստկութեան, լուր անհասութեան, բաբբառ դողութեան, հնչումն հիացման, յուսադրութիւն բարերարութեան ամենառդորմ քաղցրութեան,

յորմե երկուցեալ ստատանին ամենայն բնութիւնք եղելոց ի քո սպառնալեաց ահիդ պատուցման, ոտատանին սերոբէք, ամփոփին քերոբէք, պարուրին պարք լուսակերպիցն, երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոցն, նոյնք ցնծան դողութեամբ մեծաւ ի մի նաւակատիս բերկրութեան, զարհուրին դեւք, ընկրկին չարութեանցն գունդք, պակասին խաւարասիրացն հոգիք, անդնդոց մատնին հրեշտակք օտարին»։ Այս տեսակին մեջ որուն նմաշներովը շատ հարուստ է «Նարեկ»-ը, հրաշակերտ մըն է ԲԱՆ Գ.-ին սկզբնավորությունը, ուր երկու էջե ավելի կտևե թվումը, և ուր հիշված ստորոգելիներեն մեկ քանին քերթողական հոյակապ գյուտեր են. «Տէր իմ, տէր ստուգի պարգեւաց, փառաւորեալ, ահեղ, ահարկու, հզոր, սաստիկ անտանելի, անմերձենալի, անըմբռնելի, անճառելի, անտեսանելի անզննելի, անշոշափելի, անորոնելի, անժամանակ, ինքնաբուն բարի, անշամանդաղ գիտութիւն, ճշմարիտ էականութիւն, բարձր ու խոնարհ, օրհնաբանեալ միութիւն, անսասուր ծագումն, անտարտամ հանգիստ, անյեղլի կնիք, բաժակ բերկրութեան, հաստիչ հոգւոց հաց, օտար մթութեանց սէր, ծածկոյթ ցանկալի, արփիացնցուղ ցօղ, համօրէն աւետիս, սփոփանաց լուր, բերկրութեան բերումն, լայնական հնարք, աներեւոյթ շաւիղ, աննմանական տիպ, անզուգական գութ, համբոյր փրկական»։

Բայց ամենակարողին այս ներբողը այն պայծառ երգը չէ, որ հին հնգկական կամ երանյան աղոթքներուն մեջ կբարձրանա և ուր մարդը, կյանքի գոհունակությամբ բաբախուն, կյանքը ստեղծողին փառքը գովաբանած է։ Հոս երգողը ինքզինքը այնչափ անարգ ու ճղճիմ կգտնե որչափ ստեղծողը՝ մեծ։ Եվ այդ հակընդդեմ զգացումներուն բախումը սրտաշարժ կընե այս երգը։ Բանաստեղծը հոս ինքզինքը ճզմված կզգա այդ մեծությենեն, և այնչափ համոզված է իր պղծությանն ու տգեղությանը, որ իրեն կթվի, թե ինքը կաղտոտե այդ անհուն մաքրությունը. և ահա տառապանք մը կդառնա իրեն համար այդ մեծությանը խորհիլ։ Իր տարփանքը իր շարչարանքն է, իր սերը իր սարսափն է։ Ասված իր ամբողջ իրքը իր շարչարանքն է, իր սերը իր սարսափն է։ Ասված իր ամբողջ իրքը, իր վախն ալ է ամբողջ։— Եվ այն ատեն, ահավասիկ սարսափի, ինքնազզվանքի ու հուսահատ պաղատանքի մեծագոչ մրրիկը, որ ճիչերու լայն հորձանքներով կբարձրանա բանաստեղծին հոգիեն։ Եվ վանքին տրտում առանձնացումին մեջ, սա սրտաճմլիկ պատկերը կտեսնենք ինքիրմե գանած վանականին, որ գլուխը քարերուն կդարնե, ափերովը կուրծքը կծեծե, և աչքը գետերու կփոխե՝ ի գութ շարժելու համար այն՝ զոր կսիրե լալու չափ և որմե կդողա մահու չափ։

ԲԱՆ ՁԳ.-ին մեջ ամբողջ հատված մը կա, ուր զինքը ջախջախող այդ բազդատությունը կընե իր և իր արարչին միջև. «Դու լոյս ես եւ յոյս, եւ

ես խաւար եւ յիմար... դու ի վեր քան զկիրս երկրիս, եւ ես կաւ անարգութեան գարշութեան»։ Ու կարելի է գլուխներ հիշել ամբողջ, ուր այս ինքնակոծ համեմատությունը այլազան ձևերով կկրկնվի. ԲԱՆ ԿԷ.-ին մեջ, ոնը անգութ ձեռքի մը պես աղոթողը կմերկացնե, անոր հոգիին բոլոր շարավն ու պալարները կցուցնե, ինքզինքը ամբաստանելու ցավագին կատաղությամբ մը. «Զամբարեալ թարախ վիրիս քամեցի. զխորս պարտեաց իմոց ծանուցի, զամոթալեացն զգեստ մերկացուցի, զգարշելիսն յանդիմանեցի, զմրուրն մահու փոխեցի, զպալարս հոգւոյս խածուածոց՝ քահանայապետից Քրիստոսի բացի»։ ԲԱՆ ՀԲ.-ին մեջ քսանեն ավելի ածականներ (մեղավոր, անօրեն, անիրավ և այլն), որոնցով ինքզինքը կանվանարկե, իրենց կուռ ու մոլեգին հաջորդության մեջ՝ ինքնագան չարչարանքի մը մտածումը կարթնցնեն։ Եվ այն ի՞նչ մելամաղձիկ բանաստեղծությամբ պատկեր մըն է, որով իր հոգիին անկման հուսահատությունը կնկարե ԲԱՆ ԻԲ.-ին մեջ. «Զիթենիս ամայական, անպտղական և կործանական...»։ ԲԱՆ Ի.-ին մեջ, որ «Նարեկ»-ին ամենեն հրաշալի գլուխներեն է, չորս էջեր մեկ շունչով այդ ինքնամեղադրանքին ալիքը կթավալեն. «Անբարտաւանեցայ՝ փոշիս շնչաւոր, անբարեհաճեցայ՝ կաւս ձայնաւոր, հպարտացայ՝ հողս անարգութեան, ի վեր ամբարձայ՝ մոխիրս մերժելի, բազուկ կառուցի՝ բաժակս մանրելի, գիրկս արկի կենցաղոյս սիրոյ եւ ի քեզ թիկունս փոխանակ դիմաց դարձուցի»։ Էջերը կդառնան, գլուխները գլուխներուն կհաջորդեն, և այս եղանակը չի դադրիր, նորանոր բառերով, նոր երաժշտությամբ մը, անիկա միշտ իր մահու երգը կհնչեցնե։ Եվ զդալի, գրեթե տեսանելի է տառապանքը՝ բոլոր այդ էջերուն մեջ, ուր նույն մտածման բազմակուտակ կրկնությունները տիրական գաղափարեն ճողոպրելու անկարելիությունը կմատնեն, ու հիվանդ հեշտությունը այդ կրծող վհատության մեջ հետզհետե ավելի խոր խրելու։ Կզգաս, որ բանաստեղծը տեսակ մը հաճույք կիմանա ինքզինքը կոխոտելու մեջ, այն տրտում հաճույքը, զոր սիրով ստրկացած տարփավորը կունենա իր պաշտելիին առջև։ Իր աստուծո սերն է միշտ, որ ավելի սաստիկ կարտահայտվի, իր ողորմելի անձին անոր բաղդատմամբ։ Բայց սարսափի զգացում մըն ալ կա, աստուծմե մերժվելու վախը, որ երգին մեջ՝ խոնարհության շեշտեն ավելի, հուսահատության ցավը կդնե։ Աստուծո և իր միջև մեղքը կա, և իր աստուծո սիրույն ամբողջ սաստկությունը հսկայական համեմատություններ կուտա սիրո այդ խոշընդոտին, փրկության հավերժական այդ արգելքին։ Տեղ մը մեղքը կներկայացնե քստմնելի եռուզեռումով մը անմահաբեր հարձակմանց բյուրաձև երևույթներու, պատկերավոր բառերու ընտրությամբ մը և կուտակումով մը, որ ընթերցողին մսին վրա մրջյունի կծումներ կանցընե՝ «Մեղանք իմոցս յանցանաց անթիւ, ոմն եւ ծնունդք իւր, ոմն եւ շառաւիղք իւր, ոմն եւ բիծք իւր, ոմն եւ արկածք իւր, ոմն եւ փուշք իւր, ոմն եւ արմատք իւր... ոմն եւ ճիրանք իւր, ոմն եւ խլրտմունք իւր, ոմն եւ հրդեհմունք իւր» ևն.։ Թվումը երկու էջ կբռնե։ Իր մեղքը՝ ծով մըն է ամբողջ, անոր ալիքներովը, վիհերովը և մրրիկներովը. «Իսկ որ առ իս կրին սխալմունք՝ գերազանցէ քան զհեղեղին ջրակուտակ տիեզերասոյզ ամենասպառ ծովուն յորդութիւն եւ գլխոց լերանց վերագրէ»։ Ու տեղ մը, ա՜լ կարելիս ուժասպառ իր մեղքին մեծությունը պարզելե, համակ արեվելյան ծայրահեղությամբ վսեմ պատկերի մը մեջ զայն բացատրելու անկարողությունը կհայտնե. «Զի թէ զլիճ մի ծովուց ի յորակութիւն դեղոյ հեղեղեցից, և զդաշտս ասպարիսօք բազմօք սահմանեալ ի տարածումն լայնութեան քարտեզի չափեցից, եւ զպուրակս յոքունց անտառաց շամբից եղեգանց ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից, եւ ոչ զթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց զօրեցից, ընդ գրով սահմանի գրաւել»։

Մեղքին վախը իրեն հետ կբերե վախը մեղքերու աղբյուրին, չարի իշխանին։ Նարեկացիին գործին մեջ, սատանին դեմքը հաճախ կցցվի, իր շուքին սևը նետելով երգին մեջ։ Իր հոգիին վերև դարանած կզգա զայն, իր մարմնին մեջ բունած կգտնե զայն։ Դեպի աստված իր վերելքի տենչին մեջ, անոր մութ ու կեռ մատը կզգա, որ իր մսին կկառչի ու վար, դեպի խավարը, կքաշե զինքը։ Ան է, անդիմադրելի փորձիչը, որ, աղոթքներու փրկավետ խնկավորման մեջ, կուգա երկրին բաղձանքը կբերե, մարմնին մարմաջները կարթնցնե, ամբողջ կժանքը իր երակներուն մեջ կհոսե։ Եվ այն ատեն, պետք է լսել բանաստեղծը, որ կորուսչին դեմ իր ատելությունը ու անկից իր սարսափը կժայթքե. «Նարեկ»-ին մեջ բազմաթիվ են այն էջերը, ուր դևերուն անտես հրավերին անձկությունը կարտահայտվի, զանոնք հալածելու համար՝ աստուծո անունին խանդաբորբոք արտասանությամբ։ Եվ այս զգացումը բացատրելու համար, բոլոր աղգերու բանաստեղծությանց մեջ, չեմ գիտեր քերթված մը այնչափ նեղուժ ու ջղուտ՝ որչափ այդ ապշեցուցիչ «Ընկալ քաղցրությամբ»-ը։ Գիշերին վրդովիչ լռության մեջ, խուցին տրտում ու մենիկ կիսաստվերին խորը, վանականը, անկողնին ոտքը ծնրադիր, կպաղատի աստուծո՝ հեռացնել իրմե դևը, որուն հպումը կարծես կզգա արդեն իր մարմնին վրա, մաքուր ընել իր քունը այն երկրաբույր երազներեն, որոնց սարսուռը արդեն իր ծակոտիկներուն վրայեն կսահի կարծես «Փարատեա՛, ամենապարգեւ, զամոթական տխրութիւնս, անջրպետեա՛, հնարաւոր, զմահացու կրթութիւնս, աւարեա՛, միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս, բացատրեա՛, վերնային, զմոլելոյն մառախուղ. կնքեա՛ կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս... Տեառնագրեա՛ քո անուամբդ զլուսանցոյց երդ յար-

կիս. պարփակեա՛ քո ձեռամբ զառաստաղ տաճարիս... ամրացո քո՛ աջովը զհանգըստեանս խշտի, մաքրեսցես ի յաղբից զծածկարան անկողնոյս, պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս...»։

Ինչպե՞ս բոլոր բառերը հոգին կնկարեն, և ինչպե՞ս անկեղծ են բոլորն ալ։ Երբեք բանաստեղծն ինքզինքն այս աստիճան մատնած չէ։ Ու երբեք, ոչ ոք, կուսակրոնության շարշարանքը այս ցավագին ուժով արտահայտած է, այդ հոգեկան տանջանքը, որ կծնի բացարձակ մաքրության իղձին՝ մարմնին բոնավոր իրավունքներուն տակ բեկբեկումի։ Բանաստեղծը կզգա, որ օրվան վերջին աղոթքին առեն, փոխանակ զվարթության մը, որ ամբողջ օրվան աղոթքներեն իր մեջ անցած ըլլար, տրրտմություն մը հիմա կծանրանա իր հոգիին մեջ։ Աստված շատ հեռու է, շա՛տ անտես, ու մոտը, ձեռքին տակ, աշխարհի երանությունները կան, համեղ, քաշող, այնչա՛փ հրապուրիչ։ Ու տխուր է, ու կտառապի, և իր տխրությունն ու տառապանքը անով ահռելի են, որ այդ տխրությունը «ամոթական» է իրեն համար։ Եվ այդ տառապանքը իր դատապարտությունը, իր մեղքին վավերացումն իսկ է։ Ու գետնամած, գթություն կաղերսե.— Ա՜խ, իր «անկողնին ծածկարանը» սատանին հպումեն զե՞րծ մնար...

Ո՞ւսկից պիտի դա այդ գութը։ Ուղղակի աստուծմե՞։ Բայց վախ մը, ամոթ մը զինք կկապեն հաճախ, ու չի համարձակիր իր աղոթքը շիտակ դեպի աստված նետելու։ Այն առեն աստուծո և իր միջև հաշտության դեմք մը կծագի, ծիածան կամուրջ մը օդին մեջ թրթռուն՝ հողեն մինչև աստվածությունը,— Աստվածածի՞նը։ Անիկա մարդկային վիճակեն անցած է, գիտե «կավ»-ին տկարությունները. և անիկա «բարի է որշափ անբիծ», անոր խնդրանքով աստված պիտի տա իրեն երազված հանգիստը։ «Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս՝ բարեխոսութեամբ հայցուածոց սրբոյ Աստուածածնից...»։ Անիկա բեհեզ ամպ մըն է, աստուծո դեմքին վրա ձգված, անոր հրդեհող լույսը կմեղմացնե, անիկա քաղցրությունն է՝ աստուծո բարկության վրա միշտ կաթող, անիկա կին-տարրն է աստվածության մեջ։ Եվ իր վախերուն ու վհատությանց մեջ, երբեմն, երբ աստուծմե աղերսանքեն ալ պարտասած է, բանաստեղծը անոր սիրույն, անոր գութին մեջ կապաստանի, ու իր ձայնը այն առեն անօրինակ փափկություններ ունի անոր շնորհն ու բարությունը երգելու համար, փափկություններ, որոնց մեջ իր չսիրած մարդու բոլոր երազները կգտնենք հալած. Դանտեի «Առ Աստվածածին» երգը, ամբողջ աստվածաբանությամբ հյուսված, ավելի խորունկ է, բայց ոչ այնքան սրտաբուխ և բանաստեղծական, որքան ԲԱՆ Զ.-ին հրաշալի ներբողը Տիրամոր՝ «Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերոբէ, երկնաւոր արքայուհի, անխառն իբրեւ զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանց քան զբնակութիւն անկոխելին սրբութեանց, երանաւոր խոստմանն տեղի, եղեմ շնչական...»։

Բայց այս փախուստը դեպի Տիրամոր շնորհը՝ հազվադեպ է իր մեջ։ Աղոթքը միշտ կդառնա նորեն աստուծո, անոր, որմե կրնա գալ ամեն գութ ու ներում, ան որ բուն առարկան է իր սիրույն, հույսին ու վախին։ Այդ աղոթքը իր զգացման ու ձևին մեջ բացարձակապես արևելյան է, և անով իսկատիպ, և տարօրինապես հզոր։ Եվրոպական մատենագրության մեջ դժվար է բան մը գտնել՝ ատոր բաղդատվելիք. «Նմանություն Հիսուսին», տառապանքի խորության, տենդաշարշար աղաղակներու զորության տեսակետով, «Նարեկ»-ին քով վարդի ջուր է։ Այս աղոթքին գաստությունը ըմբռնելու համար՝ պետք է արևելքը ճանչնալ, ու գիտնալ թե արևելքցին ի՞նչ ծայրահեղ ստրկացում մը կդնե, ի՞նչ անձի ուրացման, գետնաքարշ սողման շեշտ մը՝ իր աղաչանքին մեջ, և թե նմանապես ի՞նչ արտակարգ չափազանցության կտանի իր ողբին ֆիզիկական արտահայտությունը։ Արևելյան աղերսագիր մը և արևմտյան մեռելի ողբ մը,— ահավասիկ «Նարեկ»-ին աղոթքը։ Այդ աղոթքը շարշարանք մըն է ամբողջ, ոչ միայն հոգիին ,որ կուլա, այլ մարմնին ալ, որ ինքզինքը կբզկրտե. այդ աղոթքը շրթունքեն հանդարտիկ չի բխիր, ամբողջ մարմնեն ցավատանջորեն կփրթի։ Մտիկ ըրեք զինքը, երբ իր աղոթքին ձևը կնկարե. «Զեռն համբառնամ տարածմամբ բազկացս, երիկամանցս գործակցությամբ, սրտիս հեծութեամբ, լեզուիս և շրթանցս ձայնարկութեամբ»։ Ուրիշ տեղ մը, նկարագրությունը ավելի ուժով է և ավելի ընդարձակ. «Ի յոտս քո անկանիմ, եւ զգարշապարից հետս համբուրեմ, կշտամբանաց քարամբք կոծիմ եւ հառաչանօք սրտիս տապանամ, ի խեթ խղճիս խոցոտիմ և բոցով շնչոյս ճենճերիմ, աղի ցօղով արտասուացս այրիմ և երիկամանացս աղդմամբ կիզանիմ, յուսակտուր օդով ցամաքիմ եւ դառնաշունչ հոգմով շիջանիմ, թախանձանաց բանիւս երերիմ եւ կողկողագին հեծութեամբ դողամ...»։ Ու գլուխներ, գլուխներ կթավալին այս շեշտով, և որ Նարեկացիին մեջ ընդհակառակն անհատնում աղբյուր մը կդառնա միշտ նոր ու միշտ զորեղ բացատրությանց։ Ահավասիկ մեղային երգը (ԲԱՆ ԻԷ.), անհուն ողբ մը ինքն իր վրա երկայն երկրպագություն մը իր մեղքերուն գետնասփյուռ ծավալմանը մեջ. «Մեղա՛յ ծագմանդ ճառագայթից՝ խաւարս մեռայ...»։ Անգամ մը վերջին դատաստանին օրը հասած կերևակայե, երևակայության կենդանությամբ մը և սաստկությամբ մը, որուն Մասիյոն ալ չէ հասած իր համանման մեկ հատվածին մեջ. պետք է կարդալ ամբողջ կտորը (ԲԱՆ ՀԹ.), տեսնելու հա-

մար թե սարսափի զգացումը մինչև ո՞ր աստիճան ուժով կրնա արտահայտվիլ. «Զինչ գործեցից՝ ողբալիս հոգի յայնմ մեծի աւուր վտանգի... Զի եթե զօրքն լուսոյ դասուք արդարոցն, որ փառաւորեալքն են երանութեամբ, սարսին դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաստանին, ես եղկելիս՝ աւանդակերոյս սատակման որդիս՝ ո՞ւր երեւեցայց...»։ Անգամ մը իր ծերության օրերը միտքը կբերե, այն օրերը, որ մարմինը պիտի տկարանա, ուր հոգին իր կորովը պիտի կորսընցընե։ Ի՞նչ պիտի ընե այդ նվաղման օրերուն, ի՞նչպես պիտի ուժ գտնե իր մեղքին վրա լալու, ի՞նչպես պիտի կարենա նույն սաստկությամբ իր աղոթքը բարձրացնել. և կաղաչե աստուծո, որ այդ օրերուն մեջ զինքը չլքանե. «Մի՛ անարգեր զալիսն, մի՛ կորացուսցես զկորուսեալն, մի՛ զիջուսցես զկքեալն, մի՛ անվերարկու առներ զսառուցեալն, մի՛ անպատիւ՝ պատկերն հնացեալ... մի՛ ամբարձման թեւք փետտեալ, մի՛ պատուհանք աչացս փակեալ»։ Վերջապես, անգամ մը, ահավոր ցնորքի մը մեջ, ինքզինքը նույնիսկ մեռած կերևակայե. այն ի՞նչ ջղուտ գաղափար է, որ ղինքը կցնցե, երբ կխորհի իր դիակին, որ պիտի չկրնա աղոթել, որ ա՛լ իր փրկությունը վաստկելու միակ միջոցեն զուրկ է վերջապես։ Ա՛լ ասիկա ծայրն է, վերջին ծայրը՝ միստիկական երևակայության. և հոդ, մահը նկարագրելու համար, Նարեկացին բացատրություններու տարափ մը դրած է՝ այնչափ սարսող երևակայությամբ մը, որ նույնիսկ Պոսյուեի, Շեքսպիրի՝ մահը պատկերացնող բացատրությունները վայրկյան մը կմոռնանք. «Ցորժամ... անկեալ դնիմ դի անկենդան, կարկեալ ի խօսից, կաշկանդեալ ձեռօք, լքեալ անդամօք, խփեալ շրթամբք, կափուցեալ աչօք, տախտակ անշարժուն, կոճղ կիսայրեաց, արձան անզգայ, պատկեր անբարբառ, գոյութիւն անշունչ, ողորմելի տեսիլ, աշխարելի կերպարան, ողբալի օրինակ, եղկելի դեմք, արտասուելի նմանութիւն, լռեցեալ լեզու, ցամաքեալ խոտ, թօթափեալ ծաղիկ, ծորեալ դեղ, շիջեալ ղամբար, դատարկ կոկորդ, խոպանացեալ սիրտ, աղխեալ ազդարան, սպառեալ աղբիւր, թալկացեալ մարմին, ժողխեալ որովայն, քակտեալ տաղաւար, կոտորեալ ոստք, բաժանեալ յօդք, հատեալ ծառ, սղոցեալ արմատ, թողեալ տուն, հնձեալ արտ, ստորախուզեալ բոյս, օտարացեալ բարեկամ, մոռացեալ պահեստ, թաղեալ գարշութիւն, մերժեալ ատելի, բարձեալ լեռ, անարգեալ կմախք եւ իբր անպիտան առ ոտն կոխեալ...»։

Այս սարսռեցնող հատվածեն հետո, ուր բառերը հրաշեկ երկաթի պես կշչեն, կկարմրին ու կհալին, և որուն լայն ծավալումին մեջ մարմնին համար տարբաղադրությունը կկարծես տեսնել հոդ առ հոդ, կուզեի ա՛լ բան չավելցնել։ Բայց հոդ, այդ սարսափին մեջ չէ որ կանգ կառնե Նարեկացին աղոթքը. պետք է զայն ցուցնել մինչև իր հոգեբանությանը

վախճանը։ Իր սարսափը զինքը կմղե ավելի բարձր աղաղակելու առաստված, ավելի խոր ցուցնելու անոր իր խեղճությունը և ավելի սրտաշարժ շեշտով անոր գութը պաղատելու. «Կործանեալ շինուածոյս մի՛ պատուհաս մատուսցես, շանս սպանելոյ մի՛ քարինս արձակեսցես, զփոշիս ցնդելի մի՛ ի դատ ընտրութեան կոչեսցես...»։ Երբեմն իր անձկության գուբին մեջ լույսի նշույլ մը կսպրդի, պստիկ բարակ ոսկի թել մը հույսի, առանց որուն պիտի ջախջախվեր հոգին։ Այդ հույսը անհրաժեշտ է որպեսզի կարենա ապրիլ, որովհետև իրեն համար աստված կյանքն իսկ է, բուն կյանքը։ Առանց անոր հասնելու հույսին, ինքը մեռած, ջընջված պիտի զգար ինքզինքը. որովհետև կսիրե աստված ոչ թե հանդերձված վայելքին համար, այլ իրեն իսկ համար, «Ոչ ի տուրսն, այլ ի տուողն յաւետ կարօտիմ»։ Ու վայրկյաններ կուգան, ուր երազուն մելամաղձությամբ մը ինքնին կհառի իր փրկության անուրջին, «Ի՞նչ արդեօք տեսանել զփշրեալս նաւ որբալի հոգւոյս ողջացեալ...»։ Ու վերջապես, կուգան պահեր, ուր աստուծո գթության վրա իր հավատքը այնպես կաճի, այնպես կմեծնա ու իր մեղքին կուտակումը կընկլուզե, որ հույսը, առանց որևէ տարակույսի, պայծառ կշողա իր հոգիին ցավոտ ջուրերուն վերև. «Արդ կամք քո յիս, եւ խաւարն ինձ ճառագայթ. ճրագ յուսոյ քո անդ, եւ գիշերն վաղորդայն»։ Իր մեղքը ամբողջ Բաբել մըն է, բայց աստուծո գթությունը՝ անհունն է, և անհունը պիտի հաղթե. «Այլ շնչեսցէ օդ քո քաղցրութեան իբր առ Նոյին, եւ որ զլերինս հալե զորութիւն, ցամաքեցուցանել զշիղջս ջրակոյտս բազմակոհակս և երկրակործան իմոցս պարտեաց և լեռնակարկառ բարձրութեան մեղացս ամբարձելոց» Հոդ, այդ հույսի լուսավետ բարձունքին մեջ, ուրկից վեր ա՛լ երկինքը սկսի, կավարտի ու կմարի իր ողբին հնիհև թռիչքը, որ անդունդներեն գալարվելով կբարձրանար։

Գ.

Նարեկացիին գործին մեջ երկնցող այս զգացմանց շղթան, որուն օղակները, քակված, խառնիխուռն ցրված են հոն, միմիայն անոր հոգիեն չէ անշուշտ, որ կառնե իր նախանյութը։ Այդ շղթան, ամբողջ իր օղակներովը, կգտնենք «Աստվածաշունչ»-ին և ս. հայրերուն վարքագրության մեջ։ Ինչ որ Նարեկացիին կվերաբերի, այն ուժն է որով այդ զգացումները յուրացուցած է՝ այն աստիճան, որ անոնք իրմե առաջին անգամ զգացված կկարծվին, և մանավանդ այն ձևը, որով արտահայտած է զանոնք։ Եվ հոս կհասնինք Նարեկացիին գործին այն մասին ուսումնասիրության, որ ամենեն ավելի իրն է, որ միմիայն իրն է, իր ոճին ուսումնասիրության։

Ի՞նչպես կազմված է այդ ոճը,— իսկատիպներեն մեկը, որ գիտենք բոլո՞ր գրականությանց մեջ։ Հո՛ս է, որ կենսագրական ծանոթությունները ցավալի կերպով անբավական են։ Գիտենք, որ Նարեկացին, գիտուն անձերու առաջնորդությամբ, ընդարձակ հմտություն մը դիզեց, և տիկա կզգացվի իր ոճին մեջ, որ բազմահնար ու շատ արվեստագետ գրագետի մը ոճն է։ Բայց ի՞նչ գրքեր ամենեն ավելի կարդացած է, ո՞ր գրականության ազդեցությունը կրած է, ո՞ր լեզուները իրեն ծանոթ եղած են։— Ասոնց պատասխանը ենթադրություններով միայն կրնանք գտնել։

Թե հունարեն գիտցած է կամ ոչ, հայտնի չէ։ Իրավ է որ «Նարեկ»-ին մեջ տեղ մը կգրե. «Ստեփաննոս, որ ըստ ելլադականին Գասակ առձայնի», բայց տարիկա կատարյալ ապացույց մը չէ, որովհետև թարգմանություններն մը կրնա քաղած ըլլալ այդ ծանոթությունը։ Եղիշե վ. Դուրյանի կարծիքով, Նարեկա վանքը հիմնողները արևմուտքի կողմեն եկած ըլլալով, հավանական է, որ հունարենի ծանոթությունը հետը բերած և վանքին մեջ հաջորդաբար զարգացուցած ըլլային։ Նարեկացիին համար, հունարեն գիտցած ըլլալը անհրաժեշտ է սակայն, բացատրելու համար ոճն ըմբռնելու իր նրբարվեստ եղանակը։ Եվ հետո, հունական գրականության ձև մը չունի՞ն այն երկու կտորները (Մեռոնի ազոթքը և ԲԱՆ ՂԱ.-ը), որոնք «թարգմանաբեն» ենթադրուելու կկրեն և որոնց ո՛ր լեզվեն թարգմանված ըլլալը չի գիտցվիր։ Նարեկացիին ոճին կազմության բացատրությունը պիտի թերևս դյուրանա երբ գտնվի այդ երկու կտորներուն բնագիրը, որովհետև այդ երկու կտորներուն մեջ զգալու և գրելու եղանակը շատ կնմանի Նարեկացիին գրելու ընդհանուր եղանակին, եթե, ինչ որ ավելի հավանական է իր գերազանցապես իսկատիպ մտքին համար, ինքն իսկ չէ որ իր թարգմանությամբ բնագիրը կերպարանափոխած այդ ձևին վերածած է։

Արաբական ազդեցության մը խոսքը հաճախ կհեղեղվի Նարեկացիին առիթով, իբրև հետևանք արաբական տիրապետության։ Բայց չեմ կարծեր, որ հավանական ըլլա Նարեկացիին արաբերեն գիտցած ըլլալը։ Կրոնական խտրացը երկու ազգերուն միջև արգելք մը եղած ըլլալու է, որ հայեր, վանականներ մանավանդ, ուսումնասիրեին տարբեր կրոնքի մը լեզուն ու գրականությունը։ Գաղափարներու և զգացումներու համար, հայտնապես կտեսնվի, որ մեր մենները ոչինչ առած են տիրող ցեղին իմաստասիրական, բանաստեղծական ու կրոնական գրականությենեն։ Բայց գրելու եղանակին մեջ արաբական ոճին ազդեցությունը կերևա։ Ը. դարեն սկսյալ, հայ գրողներուն մեջ խրթին և մանվածապատ պարբերությանց հակումը, բառերու կուտակման, ճարտարապետությանց ու երկրաբանության սերը կհաստատվի և կշեշտվի հետզհետե։ Արտաքին ազդեցություն մը է միայն ուրեմն, որ կրնա արաբերենի տարրական ծանոթությենե մը ծնիլ, կամ նույնիսկ ականջի ազդեցություն մը ըլլալ՝ արաբական կտորներու արտասանումեն կրած. Նարեկացիին ոճին մեջ ակներև է այդ ազդեցությունը, բառերու հորդություն, պարբերությանց երկարածավալ մանվածներ, և մանավանդ բառերու շարակարգության միջոցով երաժշտականության ջանքեր։ Ասոնցմե՝ այն, որ իր ամբողջ գործին մեջ կտիրե և ամենեն գլխավորն է ու մշտականը, բառերու ներդաշնակ հաջորդությունը և նախադասությանց կոր գծերով իրարու վրա լայն թավալում մը, հին հայերեն լեզվին սեփական հատկություն մըն է և արդեն կերևա ոսկեդարու ոճին մեջ, այն տարբերությամբ որ Նարեկացիին մեջ կորերը ավելի երկայն են ու բազմոլոր շաղապատումներով իրարու կհյուսվին, ինչպես Աստվածածնին ներբողին հրաշալի սիզբնավորությունը. «Գեամարք խմբից դասուց երջանկացն պատուասիրեն բիւրաբեղուն բանիւք գովեստի՝ զսկզբնալոյսն կենաց գոյից ի կիցս բանից ըղձայնութեանց, եւ որպես փողովք, տաւղօք և քնարիւք զգայակոն սրտի շարժեալ զգործի զգերազանցեալն ի լոյս անմատոյց ուրախութեամբ վերադրուատեն»։ Բայց երաժշտականության միջոցներուն մեջ, Նարեկացին կգործածե, իր տաղերուն մեջ մանավանդ, տառակրկնությունը (allitération). «Ի գել գայր ի գել, սայլիկն ի գել...», կամ «կրկին կոթասցի կարկամեալ կամաւ», և վերջակրկնությունը (քաֆիե). «Եւ հետս շուղաց երթեւեկութեանց՝ փայտակերտ լաստաց անխարիսխ յարկաց եւ անշունչ կառաց՝ գերագոյն դիմաց՝ երկնագոյն դաշտաց՝ լուծական լեռանց, անկայուն յատակաց ի կոյտս կոհակաց՝ կապոյտ կուտակաց, եբր ի թռիչս օդոց ի թեւս թեթեւս եւ յարագընթացս ամպաչու թռնչոց երկթեւեան կենդանեաց՝ զամենքումբք անցեալ տիրեցին», նմանահնչության այդ երկու ձևերը՝ որոնք արաբ ոճի հատկանիշներն են։ Այս բառախաղական ճարտարությունները մշտական չեն Նարեկացիին ոճին մեջ. առաջինը շատ հազվագյուտ է, և երկրորդը քիչ անգամ այնչափ երկայն տևականություն ունի, որչափ վերը հիշված կտորին մեջ։ Ասոնք չեն, որ Նարեկացիին ոճին բուն նկարագիրը կկազմեն։ Ինչ որ մասնավոր կնիքն է անոր, նույն գաղափարին բազմազան բացատրություններով երկարատև կրկնությունն է, և տեսակ մը կշռություն, տեսակ մը չափազանցություն, որոնց օրինակը չեմ գիտեր թե կարելի՞ է գտնել արաբ գրականության մեջ։ Կրկնությունը արևելյան գրականությանց մեկ սովորությունն է, և «Աստվածաշունչ»-ին մեջ ծայրե ծայր կտիրե. բայց «Աստվածաշունչ»-ին մեջ մեկ գաղափարը երկու անգամ կկրկնվի, և բառերու փոփոխմամբ մը միայն՝ «Ազատեա զիս ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս».

պերճախոսության մեջ կրկնությունը ձև մը եղած է, և հեթանոս ճարտասաններն ու եկեղեցիի հայրերը զայն ընդլայնած են՝ նույն գաղափարին տարբեր պատկերներով վերարտահայտությունն ընելով զանի, եղանակ մը զոր նոր բանաստեղծներուն մեջ Հյուգոյի քով կգտնենք ամենեն ավելի։ Կրկնության այդ եղանակն է, որ ունի Նարեկացին, բայց այդ եղանակը իր մեջ այնպես զարգացած, այնպես հատուկ դրոշմ առած է, որ ա՛լ իրենն է դարձած։ Եվ ինչ որ այդ կրկնության հրապույրը կկազմե, սա է որ անիկա հռետորական ցուրտ ձև մը չէ, մտքի ճարտարախաղություն մը և հմտության ցույց մը չէ, այլ բնական բխումը անսպառ ներշնչման մը։ Կզգաք, որ բանաստեղծը այնչափ լեցված, ողողված է իր գաղափարովը, որ չի գոհանար անոր մեկ խոսքով արտահայտությամբ՝ նույնիսկ երբ այդ խոսքը ամենեն ուժովն է, և իր զգացումը ամբողջ բացատրելու անհագ բաղձանքով մը, իր կանգ առած ու ծայրահեղորեն ձգտված մտքեն կքաշե կհանե բացատրությանց անհուն համրիչ մը, որուն հատիկները, իրարմե ավելի կուռ ու սեղմ, նույն գաղափարը կխբտացնեն միշտ։ Իր կրկնությունը երբեմն լայն վետվետում մըն է թանձր ու ծփանուտ պարբերությանց, որոնք կոհակներու պես կուռեենան, իրարու կհաջորդեն, նույն իմաստը իրարու փոխանցելով, երբեմն շարք մըն է համաչափ նախադասությանց, երբեմն ալ պարզապես թվում մը ածականավոր գոյականներու կամ միմիայն ածականներու։ Այս կրկնության եղանակը, որ ձանձրանալի և նույնիսկ ծիծաղելի պիտի ըլլար ուրիշ ամեն պարագայի մեջ, հոս՝ այն հուզմունքով, զոր Նարեկացին կդնե անոր մեջ և բացատրությանց ստեղծման արտակարգ ուժով՝ գեղեցկություն մը կդառնա, և գեղեցկություն մը, որ իր նմանը չունի որևէ ուրիշ բանաստեղծի մեջ, ահռելի բան մըն է այն բեղունությունը որով բացատրությունները կդարբնվին ետևե ետև, երբեմն կկարծեք երկայն շարքե մը հետո, որ ա՛լ հատավ աղբյուրը, և թե բանաստեղծը ուժասպառ պիտի հանգչի, և ապշություն մըն է երբ կտեսնեք, որ նոր համարի մը մեջ նորեն նույն թվումն է որ կշարունակվի միշտ նույն ուժեղ ժայթքումով։ Երևակայեցեք, որ հիսուն ու մեկ բառ դիզած է (ԲԱՆ Է.) մեղքին բյուրազան ձևերը նկարելու, հարյուր չորս նմանություն՝ իր մեղավորությունը հայտնելու (ԲԱՆ ԾԶ.) և քառասուն պատկեր մահվան ավերը պատմելու համար, և ջախջախող բան մըն է, երբ խորհիք, որ այդ նմանություններն ու պատկերները ամենեն գեղեցիկներն են հայ բանաստեղծության։

Նարեկացիի ոճին մյուս հատկանիշն ալ, պարբերության կշռությունը, իրեն սեփական է։ Համաչափ կտրատում մըն է նախադասությանց, որոնք համանման ելևէջով իրարու կհաջորդեն. և այդ կշռությունը կերևա ճիշտ իր թվումներուն հետ, երբ անոնք կտրուկ նախադասություններ են երեք-չորս բառով, կշռությունը կարճ և հատկտյալ է (եթե զիս գըտցես՝ Տիրամայր, թե ինձ ողորմեսցիս՝ սրբուհի...), երբ նախադասությունները երկայն վետվետումներ են, կշռությունը անոնց վրա լայն օրորումով մը կծավալի (Տեառնադրեա քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս, պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս)։ Այս տողերը Եղիշե վ. Դուրյանի կարծիքով, պարտին գրված ըլլալ գլխու այն համաչափ ճոճումին համեմատ, որ աղոթքին կընկերանա։

Նարեկացիին ոճին արտաքին շինվածքեն անոր ներքին կազմության անցնելով, հոն կգտնենք երկու մեծ հատկություններ, որոնցմե բոլոր կախությունը։ Հոդ իր վարպետը Աստվածաշունչն է նորեն, նույն ոճն է, ավելի խրթնացած, ավելի կնճռոտած, նույնքան խոր ու ջղուտ, ու հաճախ ավելի նուրբ։ Մարգարեներուն խիզախ երևակայությունն է, անոնց պատկերներու առատությունը, որ ամեն բան կանվանե և որ գիտե ամենեն շնչին իրերն անգամ կենդանի ու մանրամասն գույնով նկարել։ Բանաստեղծն իր արտահայտության համար ոևէ կաշկանդում չի ճանչնար, ոևէ ամոթխածություն կամ երկչոտություն չունի։ Իր բացատրությունը բացարձակն է, գերագույն վեհությունն է, երբ ուզե աստուծո մեծությունը երգել, և ամենեն ուժով գոհկությունը՝ երբ իր մեղքին վրա խոսի։ Իր երևակայությունը երազողի, տեսանողի երևակայություն է, որուն մեջ անհունը ձևեր կառնե, անծանոթը տեսանելի կդառնա, տեսիլքը իրականության շրջագծերով կնկարվի։ Կարդացեք այն դյուխը, ուր վերջին դատաստանը կերևակայե, կամ մանավանդ այն այլաբանությունը, ուր Հիսուսի էջքը կտեսնե լեռնեն վար խորհրդանշական թափորով մը շրջապատված (Սայլն այն ջանէր ի լեռնէն ի Մասեաց...)։ Իր շունչը, փոխանակ այն շանթի էջքն ըլլալու, որ «Աստվածաշունչ»-ին հակիրճ ու կորովի քնարերգության հատկանիշն է, լայն ժայթքում մըն է հզոր և առատ պատկերներու, կամ բառերու հորդաբուխ բողբոջումի մը մեջ ծավալում մը միևնույն պատկերին. ահավասիկ պատկեր մը, զոր Դավիթ մեկ տողով պիտի բացատրեր և որ հոս աճած ծովացած է կարծես. «Կարդ ես, զօրավոր, հզօր, ամենազօր, ամենարուեստ, զամենեցուն զմեղս ընկըղմել և չքացուցանել բառնալ ի միջոյ, իբր զճաճանչ փոքու կայծական սահմանեալ ի չափ ոչէից անկեալ ընկլուզեալ կորուսեալ ի տիեզերատարածն ծովու»։

Իսկ այն ներուժ իրապաշտությունը, որով իրերն ու զգացումները իրենց ամեն կողմերովը կպատկերացնե Նարեկացին, զայն ամբողջապես առած է «Աստվածաշունչ»-ենն։ Դիտելու այն տարօրինակ կարողու-

թյունն է ասիկա, զոր տեսակ մը երազողներ կունենան, և զոր անոնք ավելի ուժով, ավելի բուռն ասոիճանով մը կունենան, քան սովորական դիտողներ։ Ոչ միայն բնության մեծ պատկեր մը հրաշալի կենդանությամբ կգտնենք նկարագրված Նարեկացիին մեջ (օրինակ նավաբեկության պատկերը ԲԱՆ ԻԵ.-ին մեջ), այլ երբեմն ամենաչնչին իրերն իսկ կտեսնենք հոն մանրամասնության զարմանալի առատությամբ մը և արտահայտության գրեթե գիտական ճշտությամբ մը նկարված. կարդացեք բորբոտներուն նկարագրությունը (ԲԱՆ ԿԹ.)... «Կորակոր գնացիւքն, արջնաթեր դունովն, կրկնապարոյր կոտաց կոցան, որ զօրէն ունի խայթոցած կարճի, իբր դժնիկ փշովք իւոցոտեալ՝ ծծեն ձգեն զարեանն խոնավութիւն...»։ Տեսնելու և ցուցնելու այս ուժը Նարեկացիին կուտա կարողությունը նույն իսկ երևակայածը տեսնվածի պես կենդանի պատկերացնելու, իր կորստյան վրա սատանային ուրախանալը բացատրելու համար անոր հրճվանքի պարը կնկարագրե. «Կաքաւս կայթից և ցոյցս վաղից խաղալիկացն դիւաց գարշելեաց ճարտար խաբողաց ծուլութեամբս իմով շնորհեցի»։ Այդ իրապաշտի հանգուգն լեզուն է, որ իր բառարանը լույսի բառերեն մինչև աղբի բառերը կընդգրկակե, որ թարախը, փսխելը, պալարը լավագույն պատկերները կհամարե իր մեղքը բացատրելու, և որ ԲԱՆ Կ.-ին մեջ կուռքերուն մերկությունը խայտառակելու համար արիստոփանյան բառերու գործածությենեն իսկ չի խրտչիր։

Իր պատկերներուն մեջ, վերջապես, եթե չունի միշտ «Աստվածաշունչ»-ին պատկերներուն կուրացնող փայլը, հաճախ իր բացատրության մեջ այնպիսի անհուն հեռանկարներ կբանա զգացման, այնպիսի նրբության և փափկության կտանի զանիկա, որ գրեթե հիմնապես կտարբերի «Աստվածաշունչ»-են ու նորեն ինքնություն մը կառնե։ Այդ պատկերները կբխին շափազանց նրբացած, գրեթե հիվանդ զգայությենե մը, որուն համարժեքը դեկադան բանաստեղծներու մեջ կգտնենք, և որ երբեմն զգայության տարօրինակ նրբությամբ երազներու ըմբռնումին կհասնի։ Ու այդ խուսափուկ զգայությանց տարտամությունը սևեռելու համար, Նարեկացին ունի գործիք մը հրաշալի կերպով սրված, ճկուն ու մանրարվեստ. իր լեզո՛ւն։ Այդ լեզուն «Աստվածաշունչ»-ին թարգմանության մեծ վայելուչ ու պայծառ հայերենը չէ, ոչ իսկ Ագաթանգեղոսինը, որ արդեն տեղ-տեղ խրթին է և շատ նուրբ. Նարեկացիին մեջ հայերենը կերպարանափոխ եղած է. քերականական կազմվածքը՝ ներշնչման սանձարձակությամբը՝ շատ անգամ ծայրահեղ անկանոնությամբ մը կխառնաշփոթվի, երբեմն պարբերություններ ամբողջ՝ առանց կապի՝ օդին մեջ առկախ թողլով, երբեմն ալ գերագույն սեղմության իղձով անլուծելի մթություններ առաջ բերելով, բայց շատ անգամ իր այդ ծածանուտ անհաստակությամբն իսկ հրապույր մը ավելցնելով ոճին, որ իր այդ շարժագծերու կնճռոտությամբ այնքան կնմանի գոթական ճարտարապետության, ամբողջությանը մեջ տարօրինակ ու խորհրդավոր, մանրամասնության մեջ նուրբ ու թանկագին։ Նույն նորի, նուրբի, ստեղծվածի ձգտումն է, որ Նարեկացիին լեզվին բառակազմությանն ալ այնչափ ինքնատիպ հանգամանք մը կուտա. իր անհուն զգայնությունը բացատրելու համար, չեն բավեր հայերեն լեզվի բոլոր բառերը՝ զոր գիտե, և նորեր դարբնած է, արտակարգ հանդգնությամբ մը բարդությանց, բառեր, որոնք հաճախ սքանչելի կերպով խտացած զգայություններ են։ Ատով Նարեկացին Հայոց առաջին սիմբոլիստն է, և ամենեն մեծը՝ նորեն։ Տեսեք սա կտորին մեջ, ուր ինքզինքը հորդած գետի մեջ խեղդվողի կնմանցնե, այդ հեղձումի տպավորությունը ի՛նչպես կարտահայտե բառերով, որոնք տարբեր զգայություններ կզուգորդեն և որոնք նկարագրող նախադասությունների տեղ կբռնեն. «Ընկեցեալ ի վտակն վայրենական ողողիչ, առ որս զմատունս ձեռացս այսր անդր տարուբերեալ, իբր ի հոսանաց բըռնութեանց գարնանազայր գետոց արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման, ջրակուլ ոգեսպառ պղտորարբութեամբ, տաժանահոտ սկախառն մամռարմատ խառնախոր մահաբեր երկամբք վանեալ, ըստ որոյ յուղխիցն հեղեղին հեղձուցեալ»։ Երբեմն ալ, ինչպես հետևյալ հատվածին մեջ, բացատրությունը բնախոսական ճշտություն մը կառնե, միշտ բանաստեղծության շեշտն ու գույնը պահելով. «Ի թառանչ սրտին հագագին դուռն հետեւեալ, եւ խոնաւ զորութիւն ֆմացն ամենայն ուրեք տոչորեալ, եւ անարեւ միգով յամենայն մասանց պարփակեալ...»։ Բայց ահա ամենանուրբ, ամենահիվանդ զգայությունները, որոնք դալկահար ծաղիկներու պես տեղ-տեղ կբացվին իր էջերուն մեջ. «Ի լուսանի մտացս ամփոփման», «օժանդակ լեր տկարութեան բազմատխուրս տարտամութեան», «պահեա՛... ի խաբեբայ շար ձանձրութեանց», «ի կափման աչացս հայեցուած սրտիս մի՛ ստուերասցի», և դեռ այնչափ ուրիշներ, զոր ափերով կարելի է քաղել «Նարեկ»-են։

Զգայության ու ձևի այս ծայրագույն նրբությունները ամենեն ավելի Նարեկացիին տաղերուն մեջ կգտնենք իրենց վերջին զարգացման հասած. այդ տաղերը, քանի մը գեղեցիկ շարականներու և գողթան երգերու հատակտորներուն հետ, մեր հին բանաստեղծության գանձն են։ Երբեք հայ միտքը ինքզինքը այնչափ նրբորեն բանաստեղծ, այնչափ էականապես արվեստագետ չէր հայտնած, որչափ այդ տաղերուն քանի մը տողին մեջ։ Վերցուցեք այն անհավասարությունները, խրթնությունները, ավելորդ, տգեղ կամ օտար բառերը, որ տեղ-տեղ կավրեն զանոնք, ընտրեցեք մաքուր ներշնչումե ելած տողերը, և պիտի տեսնեք, որ ատոնք

մարդկային մեծ բանաստեղծության տողեր են, որոնցմե Շեքսպիրներն ու Վեռլենները միայն գտած են։ Այն ի՞նչ վրձին է, որ անբաղդատելի տողի մը մեջ, հովին տակ ծովին սարսուռը մեզի կնկարե. «Ծաւալ ծով ծիծաղ՝ քաղցր օդով շարժենայր». այն ի՞նչ շեշտ է, որ Աստվածածնին ավետիսը կերգե. «Ավետիս բեզ, Տիրամայրդ...— Մանրաքեղեղ գաղտնի շավիղ — անծանօթի ճանապարհին», և ի՞նչ երգող գույներու ներդաշնակություն մըն է, որով ամբողջ կանացի շնորհը կտարփողե.

«Աչքըն ծով ի ծով ծիծաղախիտ.
Ծաւալանայր յառաւօտուն.
Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթեր,
Վարսիցն երամից զարդ, երամից զարդ,
Ոլորս են առեալ եռահիւսակն բոլորեալ այտիւք,
Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,
Ծղիքըն ծիրանի, մանիշակի հոյլք,
Խնկեալ ի կնդրկե բուրվառ հրով աստուածայնով լցեալ»,

և ահա քմածին զյուսք մը երաժշտական խաղերու— որոնք պատկերներ են միանգամայն.

«Գոհար վարդն վար առեալ,
Ի վեհից վարսիցն արփենից.
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալեր ծաղիկ ծովային...»

Եվ այս վառ պատկերները, ծաղիկներու, արևի և բուրմանց այս ուրախությունը, վանկերու այս լուսավոր երաժշտությունը, որոնք «Նարեկ»-ին ողբերուն տառապագին մթութենեն հետո հանկարծ գարնան գույներու բողբոջում մը կծածանեն բառերուն մեջ, ասիկա դարձ մը չէ՞ արդյոք դեպի բուն հայ բանաստեղծությունը, դեպի լույսի, փափկության, խրոխտ գեղեցկության ու հրեղեն քնարերգության բանաստեղծությունը մեր գողթան երգերուն, անգիտակից, բնազդական՝ թեպետ հազվադեպ՝ դարձ մը որ, այդ քրիստոնեական վանականության տրտմությամբը մթնցած հոգիին մեջ՝ հեռավոր առհավության ձայներուն զարթնումովը, զանի կմխե նորեն իր ցեղին պայծառ ներշնչումին մեջ, զանի կտանի նորեն ծովուն ու երկնքին մեծ արևոտ բանաստեղծության. «Երկնէր երկին եւ երկիր, երկնէր եւ ծիրանի ծով...»

Դ.

Հպարտությամբ, ուրախությամբ և հիացմամբ ողջունենք զանիկա։ Մեր հին գրականության տիտանը, մեր ցեղին է՛ն ուժով արտահայտությունեներեն մեկն է ան։ Հանենք զանիկա աղոթք գրողի կրոնական գույ

Թերևս զանիկա հասկնալու համար, պետք է իր բույնն իսկ տեսնել, այդ խորհրդավոր Նարեկա վանքը, ուր ողբաց ու երգեց, և այդ գեղեցիկ Նարեկա գյուղը, ուր իր աչքերը բնության զվարթությունն ըմպեցին։ Սրվանձտյանց եպիսկոպոսին նկարագրության մեջ կտեսնենք երկուքն ալ, գյուղը՝ «իր հոտաղի և մացառաց բյուլբյուլի ձայներով ու քաղցրախառն ներդաշնակությամբ կլնուն այդ դրախտին բլուրը» և աղոթատեղին՝ «փորված քարասենյակներ ինն թվով, և երկնահարկ, դժվարին ելք, սեղաններ, խաչեր, և մի լուսամուտ միայն»։ Այս քարերու մեջ դժնդակ փակումը կնպաստե իր ողբին վայրագ սաստկությունը բացատրելու և սոխակներու, հոտաղի երգերու բոլոր այդ գողտրիկ հովվերգությունը, որուն մեջ ծովն ալ հեռվեն իր երազանքը կխառնե, Նարեկացիի երանգապնակին պայծառ գույներուն մեկնությունը կդյուրացնեն։ Ու այս կրկնակ պատկերներուն մեջտեղը, իր բանաստեղծությունը թղթատած ատենս, իր դեմքը ինձի կներկայանա՝ Ռիպեռայի ահեղ վանականներեն մեկուն տիպարով, որ սակայն Վինչիի նայվածք մը ունենա։

ՖՐԻԿ

Ա.

Միջնադարյան այս բանաստեղծին վրա առաջին անգամ մեր հասարակության ուշադրությունը հրավիրեցի տարիներ առաջ Անահիտ ամսագրին մեջ հրատարակված հոդվածով մը, ուր կմեկնաբանեի իր Գանգատ տիտղոսով ուշագրավ քերթվածը, զոր Արբստակես Վ. Տեվկանցի Հայերգ հավաքածուեն առնելով արտատպած էի այդ թերթին նույն թիվին մեջ։ Հիշյալ հոդվածը գրած ատենս, այն տպավորության տակ էի, որ Գանգատը իր խիզախ ոգվով և իր պարզ, բայց ուժեղ ոճով՝ բացառիկ էջ մըն էր այդ գրքին արտադրությանց մեջ. մյուս վեց կտորները, որ հրատարակված են նույնպես Հայերգին մեջ, առաջին ընթերցմամբ ինձի թված էին տափակ ու միօրինակ։ Հետո, ավելի ուշադրությամբ վերընթեռնելով այդ կտորները, ինչպես և քանի մը տաղեր, զոր Կոստանյան հրատարակած է իր Միջնադարյան երգերի և Տաղերի հավաքածուներուն մեջ, նկատեցի որ այդ բոլոր վարդապետական, խրատական, կրոնական բանաստեղծությանց մեջ կային՝ կրկնությանց, երկարաբանությանց ու տկարությանց հետ՝ շահեկան և խորիմաստ հատվածներ, և ոմանք ամբողջությամբ գեղեցիկ ու ինքնատիպ էին՝ ինչպես «Ֆալաքի» (բախտի) մասին քերթվածը, և այն զգացումն ունեցա, որ այդ ամենուն մեջ հայ

բանաստեղծության մեկ կարևոր դեմքը կգտնվեր, անծանոթ մնացած, չգնահատված։ Փափագեցա հավաքել այդ հեղինակին անտիպ էջերը ձեռագիրներու մեջեն, և հրատարակել ամբողջական գործը հատորի մը մեջ։ Իմացած ըլլալով, որ Երուսաղեմի մեր վանքին քանի մը ձեռագրաց մեջ կային բաղմաթիվ կտորներ Ֆրիկեն, խնդրեցի մատենադարանապետ Տ. Մեսրոպ Վարդապետ Նշանյանեն, որ հաճի անոնց ընդօրինակությունը ինձի ղրկել, ինչ որ ըրավ մեծ ազնվությամբ. ես ինքս ալ Վենետիկի և Փարիզի ձեռագիրներեն օրինակած էի քանի մը կտորներ. կուզեի սակայն ունենալ նաև Լոնտոնի, Օքսֆորտի, Մանչեսթրի ձեռագիրներուն մեջ գտնված կտորներուն օրինակությունը. որովհետև այդ միջոցին էջմիածնա միաբան Տիրայր վարդապետ (այժմ ժիրայր Եպիսկոպոս) Փարիզեն Անգլիա մեկնելու վրա էր և մտադրություն ուներ Լոնտոնի և Մանչեսթրի հայերեն ձեռագրող մանրամասն ցուցակը կազմել, խնդրեցի իրմե, որ Ֆրիկի կտորները հաճի օրինակել ինձի համար։ Դարձին Տիրայր վարդապետ հայտնեց ինձի, թե այդ ձեռագիրներուն մեջ գտած իր բազմաթիվ էջեր Ֆրիկեն, մեծ մասամբ անտիպ և շատ գեղեցիկ. օրինակած էր զանոնք և զգացի որ այնքան խանդավառված էր այդ բանաստեղծին անձովն ու գործովը, որ իրեն հաճելի պիտի ըլլար ինքն իսկ հրատարակել անոր բանաստեղծությանց ամբողջական հավաքածուն, ես ինքս առաջարկեցի, որ այդ աշխատանքը հանձն առնե և տվի իրեն այն օրինակությունները զոր ունեի. ատոնց վրա ինք ավելցուց հետո օրինակություններ, զոր ըրավ Վենետիկի ինչպես և Վիեննայի Մխիթարյան վանքերուն և էջմիածնա Մայր Աթոռի ձեռագիրներին, և պատրաստեց ամբողջ հատորը, մանր մունր ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով, զոր չկրցավ սակայն հրատարակել պատերազմը վրա գալուն պատճառով։ Հիմա որ Տիրայր եպիսկոպոս առաջնորդ է Ամերիկայի ստվար և կարևոր հայ գաղութին, փափագելի է և հուսալի է, որ կարելիություն գտնե ի լույս ընծայելու այդ աշխատությունը, որ մեր հին բանաստեղծներեն մեկուն գործին ամենեն լիակատար ու խնամյալ հրատարակություններեն մին պիտի ըլլա և մեր ազգային քերթության մատենադարանը պիտի ճոխացնե մեծարժեք հատորով մը։

Սպասելով հայտնած այս փափագիս իրականացման, կուզեմ Կոշնակի ընթերցողներուն ամփոփ գաղափար մը տալ կյանքին ու գործին վրա այս բանաստեղծին, որուն մեկ շահեկան քերթվածը իրենց ներկայացուցի քիչ առաջ։

***

Ֆրիկի անձին ու կյանքին վրա ինչ որ գիտեմ, կպարտիմ այն տեղեկությանց, զոր Տիրայր վարդապետ ինձի հաղորդեց՝ քաղելով զանոնք բանաստեղծին ինչ-ինչ տաղերեն զոր գտած է Օքսֆորտի և Մանչեսթրի ձեռագրաց մեջ։ Les Trouveres Armeniens (Հայ Աշուղներ) հատորիս մեջ, Ֆրիկի խրատական ոտանավորներու մեկ շարքին թարգմանության սկիզբը դրած էր հակիրճ ծանոթություն մը, ուր կըսեի թե այդ «Ֆրիկ» անունը, որ Հայոց մեջ բոլորովին անսովոր է, ստանուն ըլլալու էր Խաչատուր Կեչառեցիին. այս տեղեկությունը ինձի տված էր Հ. Մ. Պոտուրյան, Վենետիկի ծանոթ Մխիթարյանը, որ մեր միջնադարյան բանաստեղծներու գործերով մասնավորապես կզբաղեր և հրատարակեց անոնցմե ոմանց քերթվածներուն հավաքածուները. Հ. Պոտուրյան նամակով մը ինձի հաղորդած էր զայն, առանց սակայն այդ հաստատումը փաստով մը ապացուցանելու։ Ուրիշ կողմե որեէ կենսագրական տեղեկություն կրցած չըլլալով գտնել, ո՛չ Ֆրիկի բավական թվով հրատարակված կամ անտիպ բանաստեղծությանց մեջ, որ ինձի ծանոթ էին, ո՛չ հին հիշատակարաններու, ո՛չ ալ հայ գրականության պատմության վրա գոյություն ունեցող գրքերուն և ուսումնասիրությանց մեջ, շատացած էի Հ. Պոտուրյանի այդ կարծիքը հիշատակելով։ Ըստ այն մանրամասնությանց զոր Տիրայր վարդապետ գտած է Օքսֆորտի ձեռագիրներեն քաղած ոտանավորներուն մեջ, Ֆրիկ ապրած է նույն շրջանին, ուր ապրած է նաև Խաչատուր Կեչառեցի, բայց տարբեր անձ մըն է։ Խաչատուր եկեղեցական մըն էր և գիտնական մը, որ արտադրած է այլազան գործերու բավական ստվար շարք մը, մեծ մասամբ դասական հայերենով ու մասամբ ռամկական լեզվով գրված, և միշտ իր անունով ստորագրված։ Ֆրիկ աշխարհական մը եղած է, որ ոչ մեկ տեղ լուրջ ուսում ստացած չըլլալով, անձնական ընթերցումներով ինքնիրեն նախնական կրթություն մը միայն կրցած է տալ. իր տաղերեն մեկու մեջ ինքն իր վրա խոսելով կըսե «վարդապետի մը քով չեմ աշխատած, ուսմունք չեմ առած»։ Նկատի ունենալով քանի մը մանրամասնություններ, զոր գտած է ժամանակակից դեպքերու ակնարկություններ պարունակող անտիպ տաղերեն ոմանց մեջ, քննելով նաև իր լեզվին ինչ-ինչ դարձվածքներն և բառերը, որ Ղարաբաղի բարբառին հատուկ են, Տիրայր վարդապետ այն եզրակացության եկած է, որ այդ Ֆրիկը Սյունյաց աշխարհի զավակ մըն էր, հավանորեն ծնած 1230-ի և 1240-ի մեջտեղը ու մեռած 1310-ի մոտ։

Ականատես եղած է այն հարստահարությանց և խժդժությանց, զոր թաթարները գործեցին Հայաստանի մեջ այդ շրջանին, ու ատոնցմե անձնապես տառապած է։ Իր տաղերեն մեկուն մեջ կըսե՝ «Մեր վիճակը հիմա ավելի դժնդակ դարձավ, քանի որ թաթարը կիշխե մեր վրա. մեր բոլոր երկիրն ավերեց, և գողեր տվավ մեզի իբր կառավարիչ»։

Իր հայրը — ինչպես կիմանանք իր մեկ տաղեն,— կուզեր վանական կյանքի նվիրել զինքը. ի հորե զայս լըսեցի, թե Քրիստոսի ըզքեզ կուտամ։ Չէ կատարած իր հորը փափաքը, ամուսնացած ու զավակներ ունեցած է, աշխարհի հաճույքները ճանչցած է. տեղ մը կըսե «բավական տարիներ, ո՜վ Ֆրիկ, աշխարհս վայելեցիր»։

Բայց աչքովը տեսած է աղետները, որ թաթարներու խուժման տակ՝ իր երկիրը հարվածած են, և այդ աղետները իր միտքը ընդմիշտ մթնցուցած, տխրեցուցած են։ Իր սոսկական կյանքին մեջ ալ՝ դժբախտություններ շատ ունեցած է. հաճախ կգանգատի չար բախտեն որ հալածած է զինքը. ձախորդություններու ենթարկված, չքավորության մատնված է։

Իր տաղերեն մեկուն մեջ կաղաչե Աստծո, որ զինքը ազատե պարտքերեն որոնց բեռը զինքը կճզմե. «Շատ ցավեր ունիմ սրտիս մեջ, բայց կա ցավ մը որ զիս կչարչարե,— կվախնամ, որ առանց պարտքերս վճարելու կմեռնիմ.— ինչպես նավ մը ծովուն վրա օրն ի բուն կտատանիմ ու կտանջվիմ.— կաղաչեմ, Աստվա՜ծ, օգնե ինձի որ ազատիմ,— մի՛ լքեր զիս՝ իմ բազմաթիվ մեղքերուս պատճառով.— ուժ տուր որ վճարեմ պարտքերը որով բեռնավորված եմ.— այն ատեն հանգիստ պիտի մեռնիմ, քանի որ մահը մեր օրենքն է»։

Ատկից զատ, վիշտն ունեցած է կորսնցնելու իր որդին, որ անհետացած է, թերևս թաթարներեն հափշտակված կամ անոնց ձեռքը չիյնալու համար փախած։ Տարիներով նահանգ նահանգ, երկիրե երկիր պտտած է զայն գտնելու համար, առանց հաջողելու։ Ինքն իսկ, ինչպես կըսե իր տաղերեն մեկուն մեջ, իր տերերեն խոշտանգված, հալածված է՝ անոնց ծանր պատասխան մը տված ըլլալուն համար։ Ազգակիցներե, բարեկամներե ալ վիրավորանքներ կամ վնասներ կրած, դավաճանված, խաբված, անարգված է, և սակավաթիվ չեն այն տաղերը, ուր կհայտնե այդ մասին իր դառնությունը, որ զինքը մերթ կտանի մինչև մռայլ մարդատեցություն մը։ Իր անկեղծ ու համարձակախոս բնավորությունը իրեն թույլ չի տար սակայն ամեն մեղք ուրիշներուն վրա բեռցնելու և ինքզինքը բացառություն մը նկատելու. Ֆրիկ իր մեջ ալ կտեսնե ու կխոստովանի միևնույն տկարությունները ու պակասությունները, և կքարկոծե ինքզինքը այնքան խստությամբ որքան ուրիշները։ Կյանքին վերջին մասը հավանորեն անցուցած է գիտուն վանականներու մենաստանի մը մեջ, ըստ Հ. Ղևոնդ Ալիշանի, որ այս մանրամասնությունը կհիշատակե առանց աղբյուրը ցույց տալու։

Ֆրիկի ամբողջ գործը կազմված է տաղերե. ամենքն ալ միջնադարյան ռամկական հայերենով գրված։ Ինքը ուրեմն, Կոնստանդին Երզնկացիի հետ, մեր հին հեղինակներուն մեջ առաջիններեն մին եղած է, որ իրենց բոլոր գործերը ժողովրդական լեզվով գրած են։ Իր լեզուն նույնիսկ ավելի ժողովրդական է, ավելի մոտ խոսված լեզվին, քան Կոնստանդին Երզնկացվույնը, բազմաթիվ բառեր և ասույթներ կգտնվին դասական հայերենե կամ գրական պարսկերենե փոխ առնված։ Քուչակի տաղերեն և անանուն հին երգերեն հետո, այս բանաստեղծությունները, լեզվի՝ և կարգ մը էջերու մեջ՝ ոճի տեսակետով, ցեղային ամենեն հարազատ արտադրությունն են միջնադարյան հայ քերթության մեջ։

Ֆրիկ ինքնաբուխ երգիչ մըն է, բնազդական մը, ինչպես Քուչակ և ինչպես Կոնստանդին, բայց նվազ այլազան է քան այդ երկու բանաստեղծները, և հաճախ՝ նվազ մաքուր, նվազ կատարյալ։ Մեծապես անհավասար է. իր տաղերեն շատերը լեցուն են երկարաբանություններով, կրկնություններով, հասարակ տեղիքներով. վանականե մը ավելի աշխարհատյաց, կրոնական ոգվով տոգորված, անիկա ոչինչ չունի Քուչակի ազատ քմայքեն, լուսավոր զգայականությենեն. իր մուսան երբեք չերգեր երկրավոր կյանքը և անոր հաճույքները, սերը և անոր քաղցր տանջանքը, ամբողջապես նվիրված է Աստծո և հոգեկան բաներուն, և իր միստիկականությունը քիչ անգամ ի հայտ կբերե այն ծաղկյալ, պայծառ, գրեթե հեշտական նկարագիրը, զոր ան ունի Կոնստանդինի մոտ. իր մեջ հաճախ կտիրե մռայլ ու ցավագին շեշտ մը։

Ֆրիկ կյանքի մեջ ուրիշ բան չէ նկատած, բայց եթե կույր բաղդին անարդար իշխանությունը, տկարներու ջախջախումը, բիրտ ուժին հաղթանակը, չարին տիրապետությունը, տեսած է, որ ամեն ինչ այս աշխարհիս մեջ շաղփաղփուն է և վաղանցուկ, թե առաքինությունն իսկ հաճախ անկայուն ու դանդաչկոտ է, չար բնազդներեն, «մեղք»-են պարտվելու վտանգին ենթարկված, և թե բիրտ ուժին հաղթանակն ալ ժամանակավոր է. մահը կըզգետնե ուժեղն ու տկարը, բախտը ոչ մեկուն հավատարիմ է, վաղը կտապալե անոնք, զոր երեկ բարձրացուցած էր։ «Հայրենիքը ավերող» Թաթարին նվիրված տողերուն զոր վերև հիշեցի, կհաջորդեն սա երկու տողերը՝ «Բայց աս ալ պիտի չտևե, որովհետև բախտը ոչ մեկուն բարեկամ է. ան ամենքը կհարվածե ու ոչ մեկը իբր տեր չընդունիր»։

Աշխարհի և կյանքի այս հուսահատեցուցիչ տեսարանեն ընկճված, Ֆրիկ Աստծո կապաստանի և իր միակ կազդուրանքը կգտնե հույսին մեջ հանդերձյալ կյանքի մը, ուր՝ բացարձակ արդարության մը տիրապետության մեջ՝ չարերը պիտի պատժվին և բարիները վարձատրվին։ Բացի

երկու երեք տաղերե, ուր ժամանակակից դեպքերու վրա կխոսի և որոնք նույնպես Աստծո ամենակարող կամքը, անքննելի և անվրեպ արդարությունը փառաբանող տողերով կվերջանան, Ֆրիկի գործը ամբողջապես կբաղկանա միստիկական խոհերգներե և խրատական տաղերե։ Ոտանավորներու այս ստվար դանգվածին մեջ կանջատվին քանի մը էջեր՝ խորունկ ներշնչումով, համեղ ու կենդանի ձևով, անձնական շեշտով, և որոնք միջնադարյան հայ քերթության գեղեցկագույններեն են։

Բ.

Ժամանակակից դեպքերու նվիրված տաղերեն մին արդեն ներկայացուցի Կոչնակի ընթերցողներուն։ Մեկ ուրիշը, ավելի տեղական ու մասնավոր բնույթ ունեցող, բայց իբր պատմական վավերաթուղթ որոշ շահեկանությամբ լի, կնկարագրե Բուղա Թաթար հարկահավաքին Հայաստանի մեջ գործած չարիքները, իր պետին Արղու Խանին դեմ նյութած մեքենայությունները և կրած պատիժը. ավելի՝ տաղաչափված քրոնիկ քան ճշմարիտ բանաստեղծություն, այդ կտորը գրական մեծ արժեք մը չունի իր ամբողջության մեջ, բայց ինչքա՜ն աղեխարշ են այն տողերը, ուր Ֆրիկ թաթարներեն խոշտանգված, կեղեքված իր հայրենակիցներուն տառապանքը կողբա և դժբախտությանց տակ ընկճված իր ազգին համար Աստծո գոյությունը կհայցե.

Զմնաց աղբյուր, չմնաց ջուր*
Որ մեր արցունքը խմած չըլլա.
Զմնաց լեռ, չմնաց դաշտ,
Զոր թաթարները կոխոտած չըլլան։

Զմեռը, ջսլով կերթայինք ձմեռվան հավաքավայրը,
Ամառը՝ կխաշեինք անվերջ քալելով**,
Քսան տարի չարաչար տանջվեցանք,
Ինչքան որ մեր ոսկորն ու մորթը հալեցավ։

Ավ ոչ խելք ոչ միտք մնաց վրանիս,
Շունչը միայն կմնա մեր մեջ կենդանի.

---

* Չափածո մեջբերումները պահպանված են ըստ Ջոպանյանի տեքստի։

** Թաթարները կստիպեին ժողովրդին մեկ մասը, որ իբր ծառա իրենց բանակին հետևեին։

Աստվա՜ծ, մեզ մի՛ պատժեր
Մեր չար գործերուն համար,
Դուն միայն անմեղ ես և անսխալ,
Հոգե արարածը կրնա՞ չսխալիլ,

Մեր օրերը կանցնին Թաթարին լուծին տակ.
Ոչ ափունք մը կտեսնենք, ոչ հուն մը կերևա.
Ջարիքը կերկարաձգվի և մեր ոսկորներուն խորը կթափանցե,
Եվ ալ ճար չունինք համբերելու։

Փութա՛, Տե՛ր հանուն աստվածությանդ,
Հասի՛ր մեզի օգնության,
Աղատե՛ մեզ այս տառապանքներեն,
Երեսդ մեզի երևցուր*։

* * *

Կրոնական, վարդապետական, խրատական տաղերը բազմաթիվ են, և մեծապես անհավասար։ Հաճախ ատոնց մեջ կկրկնե ծանոթ հանկերգներ, երկարորեն ընդլայնելով զանոնք. բայց մերթ անձնական շեշտը կերևա, ինքնատիպ մտածումներ, պատկերալից սիրուն ոճով հատվածներ, լավ դարձված սեղմ ու կուռ տողեր կհայտնվին.

...Այլ քան ըզգանձ և ըզգակ բարություն է խիստ պիտյան։
...Կովո ժամն է երկաթն է լավ քան զոսկի ակունք պատվական։
...Ջայն ձին ոչ գովեն աղեկ որ ոսկով է կազմե ի լման,
Այլ ըզքաջասիրտ ուժեղ օժանդակ ձին է գովական.
Մի՛ գովեր ըզկերպ մարդուն կամ ըզգանձ անթիվ անցական,
Այլ զխելքն և զիմաստություն և զհանճարն և զգործքն ի լման։

(գանձերե ու հարստություններե ավելի բարությունն է արժեքավոր ...կռիվի ատեն երկաթը ավելի հարգի է, քան ոսկին ու պատվական քարերը... այն ձին չէ գովելի, որ ամբողջ ոսկիե կազմվածք ունի, այլ քաջասիրտ ուժեղ օգնական ձին է գովելի. մի գովեր մարդուն տեսքը կամ անթիվ գանձը՝ որ անցական է, այլ խելքը, իմաստությունը, հանճարը և գործերը)։

---

* Այս և նախորդ քանի մը մեջ բերված կտորներուն բնագիրը՝ զոր Տիրայր Վարդապետ ինծի ղրկած էր՝ չունենալով ձեռքիս տակ, դրած եմ արդի հայերենի վերածումը, զոր բնագրին վրայեն ըրած ֆրանսերեն թարգմանությանս հետևելով կատարեցի։

Այս է համասփյուռ ծաղիկն որ թափե ըզմարդն ի մահու,
Գիտես թե զինքն որ ուզես՝ սա կենա ի լեռըն սիրու.
Ջայս ով ուզել կամի՝ թող զուգե յուր սիրտն առյուծու.
Շահ լերդ և լեղի ուտե ու ապա նա զայս գրտընու։

(Այդ համասփյուռ ծաղիկը, որ մարդը մահվընե կազատե (այսինքն հավատքը, իտեալը), եթե կուզես գտնել՝ անիկա սիրո լեռան վրա կբուսնի, ով որ այդ դեղը կուզե ունենալ, առյուծասիրտ պետք է ըլլա, շատ լյարդ ու լեղի պետք է ուտե, որպեսզի զայն գտնե)։

* * *

Ֆրիկի ամենեն արժեքավոր կտորները, մտածման զորությամբ ու ձևի գեղեցկությամբ, իր քերթվածներն են Մահվան ու Բախտի վրա, և իր քանի մը միստիկական երգերը։

Բախտին անարդարությանց դեմ դառն ու հանդուգն բողոք մը կբարձրացնեն իր երկու տաղերը, որ Ընդդեմ ֆալլաքին և Գանգատ տիտղոսները կկրեն, բողոք, որ հազվադեպ, կարելի է ըսել նույնիսկ անօրինակ երևույթ մըն է մեր ամբողջ հին գրաբար թե ռամկաբարբառ բանաստեղծության մեջ։

Առաջին տաղը պատկերացում մըն է ընդհանուր մարդկային կյանքին մեջ տիրող անիրավությանց, բարբարության, իշխանության, համբավի անիմաստ ու դիպվածական բաշխումներու, և ամենեն ամուր կարծված դիրքերուն ու զորություններուն ալ անկայուն, անհասատատ վաղանցկության. տաղը դիմառնություն մըն է ուղղված բախտին, զոր բանաստեղծը կանվանե Ֆալաք կամ Ջարխ այլազգի բառերով։

Է՜յ Ջարխ, ըզվատին տունըն կուլեցնես ակով դու բոլոր.
Ջաղեկն ի երկիր ի վար վտարես որ ժողվե կտոր.
Ջայն որ խոզարած չվայլե՝ կու զուգես ահեղ ձիավոր.
Եվ զըզորդ մարդկաց ըզտունըն քակես առանց բահավոր։
Ֆալաք, թե քեզ վատ ասեմ նա կասես թե մարդն է մոլոր,
Թե չէ ի գիտուն մա՞րդն էր նային երակ դու բոլոր,
Ջանգետ ու ըզնաքաս մարդն հաստնվորս առնես մեծավոր.
Ջիմաստուն մարդկաց ըզհացն կու ձրգես ի սար կամ ի ձոր։

Է՜յ Ջարխ, ես քեզ ո՜նց հավատամ երբ չունիս ոչ զոք կարևոր.
Ո՛չ զավլ և ո՛չ երդում ունիս և ոչ հավատ, ո՜վ դու նենգավոր.
Ջով որ կու սիրես այսօր՝ կու դընես ի ոսկի աթոռ,
Վաղիվն երբ ձրգես հաչաց՝ հավասարես հողվույն մոխրավոր։

(Ո՜վ Բախտ, գեշ մարդուն տունը թանկագին քարերով կլիցընես, բարին կդատապարտես երկրե երկիր վտարվելու՝ որպեսզի կտոր մը գըտնե. ան որ խոզարած ըլլալու արժանի չէ՝ ահեղ ձիավորի պես կըզգեստավորես, ուղղամիտ մարդոց տունը առանց բահ գործածելու կբակես։ Բա՜խտ, եթե քու մասիդ գեշ խոսիմ, կըսես թե այս մարդը խելքը կորսընցուցեր է, բայց գիտուն մարդուն դուն միշտ ծուռ կնայիս, տգետ ու գձուձ մարդը այս աշխարհիս մեջ մեծավոր կդարձընես, իմաստուն մարդիկը կստիպես իրենց հացը սար ու ձոր փնտրելու։ Ո՜վ բախտ, ես քեզի ինչպե՜ս հավատամ, երբ մեկը չունիս բարեկամ։ Ո՜չ դաշինք, ո՜չ երդում, ո՜չ հավատք կճանչնաս, ա՜յ նենգավոր. ով որ այսօր կսիրես ոսկի աթոռի վրա կդնես, վաղը՝ երբ աչքեդ ձրգես, զայն հող ու մոխիրի մեջ կթավալես)։

Գանգատ վերնագրով տաղին մեջ բանաստեղծը նախ իր վիշտն ու դառնությունը կաղաղակե այն ողբալիր թշվառության հանդեպ, որուն իր ազգը դատապարտված կգտնե, իր շվարումը, վրդովմունքը կհայտնե ի տես այդ հավատացյալ աստվածավախ ժողովրդին, որ այլազգիներուն, մահմեդականներուն ձեռքը գերի ինկած կշարշարվի՝ առանց որ անոր դավանած ու պաշտած Աստվածը օգնության հասնի, ազատե զայն.

...Մնունդ սրբո ավազանի,
Հավատացյալ Հայր և Որդի,
Ի Երկրպագու քո սուրբ խաչի
Եվ դավանող սրբո Կուսի
Մարիամու Աստվածածնի,
Խոստովանող երբյակ և մի
Հայր ու Որդի և Սուրբ Հոգի,

Այլ կամք ի ձեռս անօրինի,
Որ կու վարեն անգին գերի,
Որ դան քաջեն եկեղեցի,
Քանի՞ շինեն պիղծ մզկիթնի.

Քանի՞ կանայս առնեն այրի
Եվ որքա՜ն որբ քրիստանեի
Որքա՜ն արյուն հեզուն երկրի,
Քանի՞ առնեն քան խոտելի։

Որքա՜ն տանջեն զմեզ աշխարհի,
Եվ կեղեքեն զկյանս մեր հայտնի.
Եվ դու ներե՜ս համենայնի,
Եվ անտես առնես զմեզ ի վշտի։

Տե՛ր, ոչ խնդրես վրեժ հայանի,
Եվ ոչ ցուցանես ակն ամենի.

Գիտե՜ս մարմին եմք մրսեղի,
Գէմ աչձան չեմք ինչ երկաթի.

Եղեգըն չեմք կամ խոտ վայրի,
Որ խանձ արկյալ ես կրակի,
Կամ զանգատանս փրշարերի,
Կամ մացառաց ինչ պըրաքի։

Որ բարկացար Հայոց ազգի,
Որպես Հրեիցն Իսրայելի.
Ջինչ բարկություն ի քեն թափի,
Նա ի վերա մեր գա կուտիս։

Արդ եթե չենք ինչ պիտանի
Եվ կամ չունինք գործ ինչ բարի,
Կամ քո սրտիդ եմք ատելի,
Որ չարարաք ըստ հրամանի,

Նա՜ դու ջնջե զմեզ մեկ հետի,
Որ քո բարի սիրտըդ հանգչի.
Թե այս կամոքդ քո կու լինի
Ամենակալ Աստվա՜ծ բարի։

Նա՜ մեք տանեմք որչա՜փ պիտի
Եվ համբերեմք ամենայնի,
Այլ որ վատուժն է թող կորի՜,
Եվ զոր կամիս թող այն լինի.

Ինչքա՜ն հուսիչ են այս տողերը իրենց անկեղծ ու խիզախ դառնության շեշտին, իրենց ցավի, զայրույթի ու շվարման աղաղակներուն մեջ. և ինչքան ավելի խորունկ կդառնա մեզի համար հուշմունքը, զոր անոնք կազդեն երբ կմտածենք, որ ավելի քան յոթը դար առաջ գրված այս քերթվածը մեր ազգին այսօրվան կացության կպատշաճի, և թե նույնիսկ՝ աղետներ, որ մեր սերունդին օրով հարվածեցին մեր ազգը և Արևելքի ամբողջ քրիստոնեությունը, ավելի մեծատարած և քսաներորդի համեմատություններ առին, քան անոնք, որոնց ականատես եղավ Ֆրիկ։

Սուրբ Ավազանին ծնունդ ենք, կըսե բանաստեղծը, կհավատանք Հորը և Որդվույն, քու սուրբ խաչիդ կերկրպագենք, կդավանինք սուրբ կույս Մարիամ Աստվածածինը, կխոստովանինք միասնական երրորդությունը, Հայրն ու Որդին ու Սուրբ Հոգին, և սակայն անօրեններուն ձեռքն ենք ինկած, որոնք մեզ գերի կտանին, եկեղեցիները կկործանեն ու անոնց տեղ պիղծ մզկիթներ կշինեն։ Որքա՜ն քրիստոնյա կիներ կայրիացնեն և երեխաներ կորբայնեն. որքա՜ն մեզ կտանջեն աշխարհիս վրա և մեր կյանքը բացե՛ ի բաց կկեղեքեն. ու դուն կներե՜ս այս ամենուն, ու մեզ

անտես կընես մեր ցավերուն մեջ։ Տե՜ր, մեր վրեժը որոշապես չես լուծեր, ինքզինքդ չես ցուցներ ամենուն։ Գիտես որ մենք միսե շինված էակներ ենք, երկաթե արձան չենք վերջապես. եղեգ չենք կամ վայրի խոտ, որ կրակին տվեր ես ու կայրես՝ ինչպես անդաստան մը փշալից կամ պուրակ մը մացառներու։ Բարկացեր ես Հայոց ազգին, ինչպես երբեմն Իսրայելի հրեաներուն, բոլոր բարկությունը, որ քենե կթափի կուգա մեր վրա կկուտակվի։ Արդ, եթե բանի մը պիտանի չենք և կամ բարի գործ մը չունինք բնավ, կամ եթե քու սրտիդ ատելի ենք, որովհետև չհետևեցանք քու հրամանիդ, գոնե մեկ անգամեն մեզ ջնջե, որ քու բարի սիրտդ հանգչի, եթե քու կամքովդ է որ այս բոլորը կըլլա, ամենակալ բարի Աստված. մինչև ե՞րբ հանդուրժենք ու համբերենք ամեն բանի, ան որ տկար է թող կորչի, և ինչպես կկամիս թող այնպես ըլլա»։

Ֆրիկ եթե արթննար այսօր իր դարավոր քունեն, պիտի տեսներ, որ իր ազգը, թեպետ նորանոր աղետներու ենթարկված, չէ կորած սակայն։ Ան չի կրնար կորչիլ, որովհետև «տկար» մը չէ, այլ ուժ մը, որ իր տեղը չէ, իր բուն շրջանակին մեջ չէ, և այդ պատճառով ենթակա է շարունակական հարվածներու, բարոյական ուժ մը՝ որ չունի իրեն համապատասխան նյութական զորություն և պաշարված է մեծ բիրտ ուժերով, որոնց մղիչ ազդակները հիմնովին տարբեր են զինքը ոգևորող գաղափարականեն։ Այսօրվան Ֆրիկ մը հայկական բազմամյա ողբերգության այս հիմնական պատճառը ըմբռնելով, զուր տեղ իր գանգատներով Աստված պիտի չնեղացներ, այլ պիտի մտածեր գտնել անվհատ ու անխոնջ ճիգով՝ ա՛յն իմաստուն միջոցները, որ հայ ցեղին ներկայացուցած բարոյական ուժին պիտի տան զայն պաշտպանող ու պահպանող նյութական զորության նեցուկը, առանց որուն ան նորեն միշտ կենդանի, բայց միշտ ալ նահատակ պիտի մնա։

Քերթվածին շարունակության մեջ, Ֆրիկ կանցնի մարդկային կյանքի մեջ տեսնվող բոլոր անհավասարությանց, անարդարությանց մասին գանգատելու.

...է ա՞յս էր բան քո հրամանի,
Արդար իրավ դատավորի,

Որ մեկն ապրի տասըն տարի,
Մեկըն հարյուր այլ ավելի.
Մեկն ոչ իր տասըն հասնի,
Երկու երեք ամսոց մեռնի.

...Մեկն ի պապանց պարոնորդի,
Մեկն ի հարանց մուրող լինի,

Մեկին հազար ձի և ջորի,
Մեկին ոչ ուլ մի, ոչ մաքի.

...Մեկն ի զրկանացն հարբստի,
Մեկն յուրայնոցն աղքատասցի,
Մեկն է ուժով զարմանալի,
Մեկն է վախկոտ սարսափելի։

Մեկին բռախը և զբրեհնի,
Ճոխով նըստի ի պիտավ ձի,
Մեկըն բոբիկ և անվարտի,
Հետեակին առաջ փպիշի։

Անբազդըն ճորտ է ավագի
Եվ անհաչող զերդ ըզգերի,
Քան զմոմն առջին ի վառ լինի,
Եվ ծառայե քան զՔրիստոսի.

...Եվ բաղդավորըն մեծարի
Բազում հարկինք նա ընդունի,
Որ թե կույր է միականի
Կամ խեղ և ծուռ միոտանի։

...Մեկն է ձեռոք աննըմանի,
Հասյալ ուսման և արհեստի,
Հիմն արկանե հատակ ծովի,
Կամուրջ կապե վերա գետի։

Մեկն է կերպիվ տնազելի,
է աղտերես և աղտեղի,
Մեկի ձեռվին է զերդ գոտի
Որ ոչ կարե կորցվել ջորի,

...Մեկն է ճնշող և անճոռնի,
Կոպիտ, փալիտ, երկայն աքուի,
Մեկըն նըման է հրեշտակի
Եվ շատ ունի նա գործ բարի.

. . . . . .

(Ա՞յս էր քու հրամանդ իրոք, ո՞վ արդար դատավոր, որ մեկը տասը տարի ապրի, մյուսը հարյուրեն ավելի, մեկը տասը տարեկանին ալ չհասնի ու երկու երեք ամսու եղած ատեն մեռնի... Մեկը գերդաստանով ազնվական է, մյուսը՝ մուրացկան հոր մուրացկան զավակ. մեկը կունենա հազար ձի կամ ջորի, մյուսը ոչ խակ ուլ մը կամ մաքի մը... Մեկը

ուրիշներ զրկելով կհարստանա, մյուսը իր ունեցածը կկորսնցնե. մեկը տարօրինակ ուժով է, մյուսը չափազանց վախկոտ։ Մեկը ունի զեն ու զարդ և զրահ, ու արաբական ձիու վրա սիգալով կնստի, մյուսը բոպիկ ու անվարտի հետևակի առջևն իսկ կփախչի... Անբախտը ճորտ է մեծավորին, և գերիեն ավելի թշվառ, մոմի պես կվառի անոր առջև և անոր կծառայե ինչպես Քրիստոսի։ Բախտավորը կմեծարվի, շատ-շատ հարկինք կընդունի, նույնիսկ եթե կույր ըլլա կամ միականի և կամ խեղանդամ, ծուռ, միոտանի։... Մեկը ունի ճարտար ձեռքեր, ուսման և արհեստի կտիրանա, ծովուն հատակը հիմք կդնե շենքերու, գետերուն վրա կամուրջ կկապե։ Մեկը ունի տեսք մ'անշնորհք, ախտերես է և աղտեղի, մյուսը կարկամած ձեռքեր ունի, ջորի մ'անգամ թամբել չի գիտեր... Մեկը ճչող է և անճոռնի, կոպիտ, զազիր, երկայն հոնքերով. մյուսը նման է հրեշտակի, և շատ բարի գործ ունի ըրած...)։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

(Հատված «Հայրեններու բուրաստանը» գրքի առաջաբանից)

Քուչակյան տաղաշարքերը, զոր կգտնենք հին ձեռագիրներուն մեջ, շատ քիչ անգամ տաղիկներու նույն կարգն ունին և տաղիկներն ալ քիչ անգամ նույն ձևով կներկայանան։ Այդ տաղիկները՝ ամենամեծ մասամբ — բացի ժողովրդական անանուն երգերու բնույթն ունեցողներեն,— ապահովաբար հեղինակող աշուղին ձեռքով գրավորապես հորինված են և ոչ թե անգիր հղացված։ Բայց սկզբնական հեղինակն ոևէ ձեռագիր չէ հասած մեզի. այդ երգերը, ժողովուրդին սիրելի դարձած, հեղինակին կողմե հանրային հավաքույթներու մեջ երգվելե՝ հետո ուրիշ աշուղներու և երգասեր անհատներու կողմե բերնով սորվված, գյուղե գյուղ, քաղաքե քաղաք կրկնված ու տարածված են. և այդ աշուղներեն ոմանք, կամ գրչագրողներ, որ այդ երգերը լսած են անոնցմե, այդ տաղերեն շարքեր գրի առած են տաղարաններու մեջ։ Շատ քիչ կարելի է գտնել քուչակյան տաղաշարք մը, որ երկու ձեռագրի մեջ գրեթե նույն կարգն ու նույն բնագիրն ունենա, ինչ որ՝ այդ սակավաթիվ պարագաներուն մեջ՝ մեկ ձեռագրին ուրիշ ձեռագրե մը օրինակված ըլլալը ցույց կուտա։ Մեծ մասամբ, այդ տաղաշարքերը գրի առնված են հիշողաբար, և տաղիկները տաղաշարքերուն մեծագույն մասին մեջ տարբեր կարգով մը կհաջորդեն իրարու, և յուրաքանչյուր ձեռագրի մեջ բնագրի տարբերություններ ի հայտ կբերեն։ Կան տաղիկներ, որ հինգ կամ ավելի ձեռագրի տաղաշարքերուն

մեջ կերևան, տարբեր տեղ գրված, և բնագրով ալ բավական տարբեր։ Կան տաղիկներ, որ միայն այս կամ այն տաղաշարքին մեջ կտեսնվին։ Հայտնի է, որ սկզբնական տաղիկը, բերանացի տարածվելով տեղե տեղ, տարիներու ընթացքին ենթարկվեր է փոփոխությանց, մերթ նույնիսկ լեզվի ու ոճի նոր երանգներ ստանալով տեղին ու երգողին համեմատ։ Օրիկան բովանդակությամբ գրաբար կամ գրաբարախառն քառյակներ՝ սիրային ցանկատոչոր տաղիկներե անմիջապես հետո, քրիստոնեաշունչ խրատական ծանրախոհ երգեր, պանդուխտի սրտաուչ ողբեր, տարփատենչ կատակաբանություններ ու եկեղեցիի և կրոնավորներու հանգեպ անպատկառ հեգնություններ պարունակող քառյակներ՝ իրարու հետևե։

Հրատարակել նույնությամբ այդ տաղաշարքերը, ատոնց յուրաքանչյուրը համարելով տաղ մը, ինչպես ըրած են Տեկանց և Կոստանյանց, դիտելի բան չէր. մանավանդ որ անոնցմե ի վեր նմանօրինակ ուրիշ տաղաշարքեր ալ մեջտեղ ելած ըլլալով և միևնույն տաղիկը բազմաթիվ փոփոխակներով անոնց մեջ երևալով, այդ տեսակետով ալ՝ անիմաստ և անհատ պիտի ըլլար նույնությամբ հրատարակումը։ Ահա ինչու «Նահապետ Քուչակի Դիվան» հատորը կազմած ատենս, այն ատեն ինձի ծանոթ եղած տաղաշարքերու տաղիկներուն զանազան փոփոխակներեն լավագույն ձևով պահվածները զատեցի և կամ մեկ քանի փոփոխակներու համեմատությամբ այս կամ այն տաղիկին սկզբնական հարազատ ձևը վերահաստատել ջանացի,— ծանոթագրությանց մեջ նշանակելով փոփոխակները՝ ինչպես անոնք կան ձեռագիրներուն մեջ, և այդ տաղիկները նյութին համեմատ երեք դասի բաժնեցի,— սիրո երգեր, պանդուխտի երգեր, խրատական և այլաբանական երգեր, և այդ ձևով հրատարակեցի։

Այս անգամ, ներկա հավաքածուն կազմելու համար, նորեն տաղիկները նույն երեք դասերուն բաժնեցի, բայց սիրային տաղիկները շատ բազմաթիվ ըլլալուն համար, փոխանակ զանոնք քմահաճ կարգով մը ետևե ետև միակ ընդարձակ շարքի մը մեջ խմբելու,— ինչպես ըրած էի «Նահապետ Քուչակի Դիվան»ին մեջ,— պահպանեցի յուրաքանչյուր տաղաշարքի ուրույն խմբավորումը տաղիկներու այն կարգով, զոր կգտնենք ձեռագիրներուն մեջ, դուրս ձգելով այս կամ այն տաղիկին նվազ հաջող փոփոխակները՝ եթե անոնք լավագույն ձևով մը կգտնվին ուրիշ տաղաշարքի մը մեջ և նվազ հաջող փոփոխակներուն բնագիրը — երբ տարբեր ու շահեկան տողեր կպարունակե — դնելով ծանոթագրությանց մեջ, և այն պարագային, ուր տաղիկի մը բոլոր փոփոխակները պակասավոր կթվին՝ զանազան փոփոխակներու համեմատությամբ անոր սկզբնական հարազատ բնագիրը վերակազմել ջանալով։

Այսպես ըրի, քիչ շատ պահելու համար այն ձևը, որով սկզբնական աշուղը, ինչպես և իր հետևորդները, այդ տաղիկները ներկայացուցած են ժողովուրդին։ Անոնք շատ կարճ երգեր ըլլալով, միշտ անոնցմե խումբ մըն է, որ միասին երգած են։ Այս խմբավորումները իրենցմե յուրաքանչյուրն է, որ կազմած է քմահաճ կերպով, շատ քիչ անգամ նույն կարգով, շատ ավելի հաճախ տաղիկներուն կարգը փոխելով, տաղիկներ ավելցնելով կամ պակսեցնելով։ Կտեսնվի սակայն ձեռագիրներով մեզի հասած տաղաշարքերեն, թե այդ կարգը կազմելու համար, ինչպես Արեղյան ալ նկատած է (էջ 110—115),— թեև հասնելով եզրակացությանց, որոնց մասամբ միայն համաձայն եմ,— անոնք հետևած են մերթ հանգերու նույնության. օրինակ՝ Ս. Ղազարու թիվ 1371 ձեռագրի այն տաղաշարքը, որ կսկսի «Ժամ զիմ զարիպությունս» պանդուխտի երգով, ունի նախ երկու տաղիկ ամ հանգով (լամ, գնամ, և այլն), հետո ինը տաղիկ ել կամ եր հանգով, հետո հինգ տաղիկ ան հանգով, հետո երեք տաղիկ ուն կամ ու հանգով, հետո երկու տաղիկ ուր կամ ուլ հանգով, հետո մեկ տաղիկ եմ և մեկ տաղիկ ես հանգով։

Ս. Ղազարու թիվ 1330 ձեռագրի այն տաղաշարքը որ «Ծառ նարընջենի ես դուն» տաղիկով կսկսի, ունի տասնևութ տաղիկ, որոնց բոլոր տողերը ի և ին հանգով կվերջանան. նույն ձեռագրի մեկ ուրիշ տաղաշարքը, որ կսկսի «Ժամիկ մ'աչերուդ ի զատ» տաղիկով, ունի հինգ տաղիկ ար, ալ, կամ ատ հանգով, հետո մինչև վերջը՝ ութսունվեց տող՝ է կամ էն հանգով։ Կան և տաղաշարքեր, որոնց տաղիկները՝ մասամբ՝ այլազան հանգեր ունին. այդպես՝ Ս. Ղազարու թիվ 1371 ձեռագրի առաջին տաղիկը աս հանգը ունի, հետո յոթ տաղիկ՝ ած կամ աց հանգով, հետո տաղիկ մը ով հանգով, հետո տաղիկ մը անկանոն հանգերով, ավելի ճիշտ՝ անհանգ, «կանգնած, արեգական, կու փայլիս, աստնվորս, արի, իրար, չի մնամ (այս յոթնտողյան տաղիկը ունի մեկ քանի տողերու մեջ ներքին հանգեր), հետո երկու տող՝ ան հանգով, երկու տող՝ ուշ հանգով, տասը տող՝ աց հանգով, երկու տող՝ ուշ հանգով, երկու տող՝ անկանոն (ին և իս), և երկու տող՝ ամ հանգով։ Նույն ձեռագրի այն տաղաշարքը, որ կսկսի «Տեսա իմ հոգուս հոգին զարդարած» տաղիկով, ունի վեց տող ամ և ան հանգով, հետո երեք տաղիկ այ հանգով, հետո տաղիկ մը, որուն երկու տողը այ և երկուքը ու հանգ ունին, հետո երկու տաղիկ ել և եր հանգով, հետո քառյակ մը ով հանգով, հետո հինգ տաղիկ իս հանգով, հետո յոթ տող է հանգով։

Մերթ յուրաքանչյուր տաղիկի առաջին կիսատողին նույնությունը կամ հանգիտությունն է եղած պատճառ այդ կարգի տաղիկներ իրարու հաջորդեցնելու. օրինակ՝ Ս. Ղազարու թիվ 1371 ձեռագրի այն տաղաշարքին մեջ, որ կսկսի «Ա՜յ իմ գեղեցիկ պատկեր, որ աչերդ է ծով տերինտաս» տողով, ինը տաղիկներ, որոնք նյութով բավական տարբեր են իրարմե, իրարու կհաջորդեն՝ որովհետև ամենքն ալ կսկսին «Մահալոքս ի վար կուգի» կիսատողով. Ս. Ղազարու թ. 160 ձեռագրի այն տաղաշարքի մեջ, որ կսկսի «Այդոյ չեմ ի գար ի քեզ» տողով, երկու տաղիկ, որ կսկսի «Ճրագ, քեզ երնեկ կուտամ» կիսատողով, իրարու կհաջորդեն. Ս. Ղազարու թ. 1331 ձեռագրի այն տաղաշարքին մեջ, որ կսկսի «Ժամիկ մ'աչերուդ» տողով, երկու տաղիկ, որ իրարու կհաջորդեն, կսկսին «Աչերըդ դու հանց ունիս՝ աչն էրե ձախըն խորովե» տողով։ Նույն տաղաշարքին մեջ՝ երկու տաղիկ, որ կսկսին «Աղվոր, քեզ աստված ստեղծել, մարըդ օրհնյալ, որ զքեզ բերել է» տողով, իրարու կհաջորդեն։ «Հայերգ»ի տաղաշարքերուն մեջ կգտնենք իրարու հաջորդող երեք տաղիկ, որ կըսկսին «Իմ բարձրագնա լուսին» կիսատողով. նույն տաղաշարքերու մեկ ուրիշ մասին կնկատենք իրարու հաջորդող երեք տաղիկ, որոնց առաջին երկուքը կվերջանան «մինչ որ գա լույսն առավոտուն» և երրորդը «որ ծագե լույսն առավոտուն» կիսատողով։

Անցողակի ըսեմ հոս, որ տաղիկներու իրը սկզբնավորություն՝ սիրված ու մեկն ավելի անգամ կրկնված բանաձևեր են — ժողովրդական երգի և կամ աշուղական տաղի հին, տարածված, դասական դարձած ասություններ հավանորեն —հետևյալները (առանց որ այդ սկզբնավորություններն ունեցող տաղիկները միշտ իրարու հաջորդեն), Այս աստընվորիս վերա..., Քանի՜ ու քանի՜ ասեմ..., Եկին ու բերին խապար..., Գիշերս ես ի քուն էի..., Հաշիարնս ես ի ժուռ եկի..., Տեսա իմ հոգուս հոգին..., Տարին տասներկու ամիս..., Քանի մարըն զիս բերել..., Գիշերս ես ի դուրս ելա..., Ան առավոտուն լուսուն..., Թուխ աչք ու թուխ ունք ունիս..., Կարմիր ու ճերմակ երես..., Մանկտիք, ձեր արևն ասեմ..., և այլն։ Տաղիկներու հաջորդության մեջ երբեմն դեր կկատարե նաև անոնց վերջին տողին մեկ պատկերը կամ բառը, զոր պարունակող տաղիկ մը— նյութով ավելի կամ նվազ տարբեր — կհաջորդե նույնը պարունակող ուրիշ տաղիկի մը. Ս. Ղազարու թ. 1371 ձեռագրի այն տաղաշարքը, որ «Ծառ նարնջենի ես դուն» տաղիկով կսկսի, ունի է՛ն առաջ այդ «Ծառ նարնջենի ես դուն» սիրերգը, անմիջապես հետո՝ «Ծառըն տերևովն աղեկ» և «Ծառին ճյուղքն, որ չոր լինի» խրատական երկու քառյակները, որոնք նեսեն նեսե դրված են պարզապես, որովհետև ծառ պատկերը կա երեքին ալ մեջ, թեև երեք տաղիկները իմաստով բոլորովին տարբեր են իրարմե. երբեմն ալ,— քիչ անգամ,— իսկապես նյութի մոտությունն է, որ երկու տաղիկ իրարու հաջորդել տված է։

Բացատրելու համար տաղիկներու այդ հաջորդությունները (հաճախ քմահաճ կամ ձևական), և որ ձեռագրե ձեռագիր փոփոխություններ կկրեն, ու նաև բացատրելու համար այն բազմատեսակ ու մերթ կարևոր, հիմնական փոփոխությունները, զոր տաղիկները իրենք իսկ կրած են, մեկնաբանելու համար այն բազմաթիվ տարբերակները, որոնց մեջ շատ մը տաղիկներ ճյուղավորված են, Արեղյան կհայտնե կարծիքներ, որոնք մասամբ ճիշտ, բայց և մասամբ անճիշտ են. «Ենթադրել թե այս բազմազան փոփոխությունները, որ հատուկ են ժողովրդական երգին, ձեռագրական ծագում ունին, այսինքն արտագրողների ձեռքով են առաջ եկել, այդ ընդունելի չի կարող լինել։ Ոչ մի անհատական գրական երկ, որ հորինվել է գրվելով և պահվել է գրավոր կերպով, նույնիսկ մեր հին հայտնի բանաստեղծների այն տաղերը, որոնք մի ժամանակ սիրված և երգված են եղել, ուրեմն և մասամբ բերանացի ավանդված, այդպիսի և այդքան փոփոխություններ չեն ունեցել ձեռագիրների մեջ ...Կարելի չէ ընդունել և մի այնպիսի ենթադրություն, թե մի բանաստեղծ միջին հայերեն լեզվով հորինած լինի այդ երեք հարյուրի չափ մանր երգերը... և ապա հետագայում մի ուրիշ բանաստեղծ հավաքած լինի այդ բազմաթիվ երգերը և տարբեր ձևերով վերամշակելով վարիանտներ առաջ բերած լինի, այն էլ երբեմն մի երգի համար մի քանիսը, ու տողեր և քառյակներ անջատելով մի տաղից՝ մի ուրիշին, երբեմն մի քանի ուրիշին, միացրած լինի, մերթ իմաստալից կերպով, մերթ մեքենաբար, միևնույն տաղի մեջ և միջին և նոր հայրենների և բարբառային լեզվական ձևերով...»։ Ասենք գրելե ետքն է որ կբանաձևե իր հետևյալ եզրակացությունը զոր արդեն հիշատակած եմ. «Հայերենների այս բոլոր հատկությունները մեզ բերում են այն հետևության, որ դրանք բերանացի ավանդված տաղեր են եղել և մեկ ժամանակի ու մեկ անհատի ստեղծագործություն չեն, այլ ընդհակառակն, դրանց վրա աշխատել են բազմաթիվ սերունդներ, և դրանք փոփոխություն, վերամշակություն ու զարդացում կրել են բնականաբար, երգիչների բերանին, երգվելու ժամանակ, այն էլ դարերի ընթացքում։ Ուրիշ խոսքով, այդ փոքրիկ տաղերն ապրել են ժողովրդական երգերի կյանքով և իբրև ժողովրդական երգեր գրի են առնված զանազան ժամանակներում ու տեղերում և զանազան մարդկանց ձեռքով, ուստի և մեկմեկուց տարբեր տաղաշարքերով ու բազմազան վարիանտներով, ճիշտ ինչպես մեր ժամանակի ժողովրդական երգերի ժողովածուներն են»։

Ոչ ոք ենթադրած է թե քուչակյան տաղերու փոփոխությունները ձեռագիրներն արտագրողներուն գործն եղած կրնան ըլլալ, ու ոչ ոք մեջտեղ դրած է այնպիսի վարկած մը թե մեկ բանաստեղծ մը հորինած ըլլա քուչակյան շարքերու բոլոր տաղիկները և թե ժամանակ մը հետո մեկ ուրիշ

բանաստեղծ մը հավաքած ըլլա այդ բոլորը և զանոնք վերամշակելով կամ իրարու խառնելով տարբերակներ հառաջ բերած ըլլա։ Հերքել իսկ չարժեր այդ երկու վարկածները, զոր ոչ ոք քանաձևած ու պաշտպանած է։ Բայց ճիշտ չէ նաև այս քուչակյան տաղիկները ժողովրդական անունն երգերուն հետ նույնացնելը՝ ոչ միայն իբր տարածում և դարե դար, տեղե տեղ՝ փոփոխում, ընդլայնում կամ աղճատում,— ինչ որ ընդունելի է,— այլև իբրև ստեղծում։ Ժողովրդական երգերը անշուշտ կունենան իրենց հեղինակները, որոնց անունները կմոռցվին և արտագրությունները կդառնան ավանդաբար բոլոր երգիչներուն ու երգող ժողովուրդին ստացվածքը և կկրեն մեծ փոփոխություններ, կենթարկվին հավաքական խորունկ աշխատության մը։ Քուչակյան տաղերուն մեջ կան որ ժողովրդական երգի բնույթ ունին, ինչ որ արդեն դիտել ավի, և անոնք արդարև ժողովրդական երգի պես ծնած, անոր կյանքով ապրած ու մեծ փոփոխությանց ենթարկված են։ Բայց և կան հոն — ու ստվար թիվով, ու լավագույնները, որ հանճարեղ աշուղի մը անհատական ստեղծագործության բնորոշ հանգամանքն ունին՝ գաղափարի ու ոճի նրբությամբ և անձնականությամբ, արվեստի բարձրությամբ։ Այդ բոլոր տաղերն ալ ավանդաբար, բերանացի կերպով տարածված են տեղե տեղ, դարե դար, որովհետև կերգվեին — մինչ Ֆրիկի կամ Կոստանդին Երզնկացիի, կամ Գրիգոր Աղթամարցիի ու Հովհաննես Թլկուրանցիի տաղերը հեղինակին ձեռքով գրված էին, չէին երգվեր և ձեռագրական օրինակումներով միայն տարածված ու պահպանված են։ Քուչակյան տաղերեն ալ անոնք որ անձնական դրոշմ ունին, կրնան շատ լավ զանոնք ստեղծող աշուղին ձեռքով թուղթին հանձնված ըլլալ, բայց անոնք որովհետև կերգվեին, ավելի ավանդաբար տարածված են քան արտագրումներով, և արտագրողներն ալ եթե մերթ ուրիշ ձեռագրե մը օրինակած են այս կամ այն տաղաշարքը գրեթե նույնությամբ, մերթ ալ օրինակվածին վրա հիշողաբար ուրիշ նմանօրինակ տաղիկներ կցած կամ իրենք իսկ նմանողաբար տաղիկներ ավելցուցած են։ Այս բոլորը չեն խախտեր իմ տեսությունս քուչակյան տաղիկներու մասին։ Որոշ թվականի մը, հավանորեն ԺԶ դարուն առաջին կեսին, մեծ աշուղ մը, իրմե առաջ գտնված գուսանական տաղերեն ու ժողովրդական երգերեն օգտվելով, անոնցմե ալ մաս մը կոկելով և իր տաղաշարքին մեջ մտցնելով, կստեղծե հայ աշուղական բանահյուսության նոր դպրոց մը՝ հակիրճ ու խիտ տաղիկներու շարքի մը մեջ, հայրեններու չափով գրված ամենքն ալ, և ամենամեծ մասամբ չորս, հինգ կամ վեց տողե բաղկացած. այդ աշուղին հորինած տաղերը բերանացի տարածված են գավառե գավառ, և որոշ փոփոխությանց ենթարկված, հետո արտագրված են օրինակիչներու կողմե որ այդ փոփոխությունն-

ները պահպանած ու ընդլայնած են՝ կա՛մ հիշողաբար արտագրելով զանոնք և կամ ձեռագրե մը օրինակելով և հավելումներ ընելով։ Կարելի է այդ բոլոր տաղերուն մեջ — թե՛ սիրային, թե՛ խրատական և թե՛ պանդրխտական — անջատել մեծ մասամբ անոնք, որ այդ սկզբնական ստեղծագործ աշուղին արտադրությունն են։ Ատոնք, եթե նույնիսկ ունեին տարբերակներ, քիչ փոփոխություն կրած են, և կամ գրեթե անփոփոխ կգտնվին մեկ քանի ձեռագիրներու մեջ և կամ մեկ տաղաշարքի մեջ միայն կերևան, մերթ բոլորովին հարազատ, անեղծ ձևով պահպանված։

Ձեռագիրներու պարունակած տաղաշարքերուն նույնությամբ օրինակումը, զոր կատարած եմ և որ առանձին հատորով պիտի երևա՝ բանասերներուն համար հատկապես՝ գրողներու և գրասեր հասարակության համար պատրաստված ներկա հավաքածուի հրատարակումեն հետո, ցույց պիտի տա տաղիկներու կրած բազմաձև փոփոխությանց ամբողջական պատկերը և պիտի ունենա իր շահեկանությունը բանասիրական ու լեզվաբանական ուսումնասիրությանց համար։

Ներկա հավաքածուին ծանոթագրությանց մեջ արդեն դրած եմ տաղիկներու ամբողջական տարբերակներուն, ինչպես և որոշ տողերու տարբերակներուն, ամենեն կարևորները։

Այն սիստեմով, որով կազմած եմ ներկա հավաքածուն, տաղիկներու հաջորդության այն ձևական մասնահատկություններն ալ զոր վերև մատնանշեցի, որոշ չափով պահպանված են սիրային երգերուն, ինչպես և խրատական տաղերուն համար։

Պանդուխտի երգերը, որ շատ անգամ ամբողջ տաղաշարքի մը մեջ մեկ-երկու հատ միայն կգտնվին, հավաքեցի միակ խումբի մը մեջ։

Ձեռագիրներուն մեջ տաղիկներուն տողերը իրարմե չեն անջատված, իրարու կցված են՝ արձակի պես, միայն ոմանց մեջ՝ յուրաքանչյուր տողի կամ երկու տողի առաջին գիրը գլխատառ. ես ոտանավորի ձևով տող առ տող բաժնված օրինակած եմ այդ տաղիկները։ Ձեռագիրներուն մեջ տաղիկները կարգաթիվ (Ա. Բ. Գ.) չունին, ես ավելցուցած եմ։ Կետադրություն ձեռագիրներուն մեջ շատ անբավական ու անկանոն ձևով մը գոյություն ունի, ես լրացուցած եմ կամ ուղղած։ Տաղիկներեն ոմանց այս կամ այն տողին մեջ պակաս վանկեր գտնված պարագային, երբ լավագույն փոփոխակ մը չեմ գտած, ենթադրաբար մերթ լրացուցած եմ պակաս վանկերը։ Պահած եմ անկանոն, կաղ տողերը նույնությամբ՝ երբ անհնար եղած է գուշակել ինչ որ կպակսի։ Այդ ուղղումի աշխատանքին հարկը Աբեղյան ալ զգացած և իր գրքին մեջ ատոր նվիրված է մեկ քանի էջեր, ուր ինքն իսկ կառաջարկե՝ մերթ լավագույն օրինակնե-

րու համեմատությամբ՝ մերթ ալ ենթադրաբար՝ ուղղումներ և լրացումներ, որ մեծ մասամբ ճիշտ են. «...Տպված է՝ «թե ընտանի», մեկ վանկ ավելի է, պետք է ուղղել սղումով՝ «թ' ընտանի» (էջ 36)։ Տպված է՝ «համրով», մի վանկ պակաս է, պետք է լինի՝ կամ «համարով» կամ «համբրով» (էջ 36)։ «Լույս կուտամ աստընվորիս», մի վանկ պակաս է, պետք է ուղղել՝ «Լույս կուտամ այս աստընվորիս» (էջ 37)։ ...«Կորել է իմ հոգուս հոգին», մի վանկ ավելի, վարիանտը ճիշտ՝ «ելեր իմ հոգվույս հոգին»։ ...«Այդ ո՞վ է որ երդիքս եկել...» էջ 40)։ Բերեմ մի քանի օրինակ էլ այնպիսի ուղղումների, որ կարելի է առանց վարիանտների անել. «Ծովերուդ ալ ի դուրս ելնում», ոչ թե հոգնակի՝ ծովերուդ, այլ եզակի՝ «ծովուդ ալ ի դուրս ելնում», որով և ռիթմը կանոնավոր է։ ...«Կամ առ զիս ծոցդ ի քուն»... մի վանկ պակաս է, պետք է ուղղել՝ «կամ առ զիս ի ծոցդ ի քուն» (էջ 41), և այլն, և այլն։

Ուղղումներու ուրիշ քանի մը շարք ալ ունեցած եմ կատարելու. կան ձեռագիրներու մեջ նկատվող օրինականության հայտնի սխալներ, բառեր սխալ ըմբռնված, խաթարյալ, աղավաղյալ, աղճատված ձևով օրինակված, կամ բառեր, որ միջնադարյան հայերենի սովորական ուղղագրությենեն իսկ տարբեր եղանակով մը գրված են. ընթերցման սխալներ ու տպագրական սխալներ կան Տեկանցի հրատարակած տաղաշարքին, Կոստանյանցի, Տրդատ վարդապետ Պալյանի ի լույս ընծայած տաղաշարքերուն և կամ «Նահապետ Քուչակի Դիվան»-ին մեջ. այդ բոլոր սխալները շտկած եմ ներկա հավաքածուին մեջ։

Այս սիստեմը զոր որդեգրած եմ գրագետներու և գրասեր հասարակության ներկայացնելու համար քուչակյան տաղաշարքերու հրապուրիչ գանձը, լավագույնն էր անշուշտ, բայց անհրաժեշտ էր նաև առանձին հատորի մը մեջ՝ բանասերներու համար, տալ այդ բոլոր տաղաշարքերը, նույնությամբ օրինակված, իրենց բոլոր այլազան փոփոխակներով, իրենց օրինակության սխալներով, իրենց պակասավոր, աղավաղված կտրատված տողերով, կամ զանազան կտորվանքներու խառնուրդեն կազմված տաղիկներով։

Քուչակյան տաղիկները գրված են միջնադարյան ռամկահայերենով, բայց անոնց մեջ՝ այն տաղիկները, որ սկզբնական մեծ աշուղին անհատական կնիքը կկրեն, իրենց լեզվով կմոտենան Ակնա տեղական բարբառին, առանց իհարկե անոր հետ նույնանալու, լեզվական ավելի սերտ հանգիտություն մը ցույց կուտան Ակնա հին անտունիներուն հետ, որոնք հորինված են միջին հայերենով, բայց որ Ակնա շրջանի մասնահատկություններով երանգավորված է։ Տաղիկներուն մեջ կան այնպիսիներ, որ հայտնապես Հայաստանի ուրիշ շրջաններուն փոխանցվելով կամ

ուրիշ շրջաններու հետևորդ աշուղներու կողմե շարադրված ըլլալով՝ լեզուն որոշ փոփոխություններու ենթարկված է, կա նաև խրատականներուն մեկ ստվար մասին մեջ գրաբարի խառնուրդին գերակշռությունը, որ, ինչպես արդեն նկատեցի Ներածությանս նախորդ բաժիններուն մեջ, աշուղաձև տաղերգող հմուտ եկեղեցական կամ աշխարհական գրողներուն լեզվին հատկանիշն է։ Այս բոլորին վրա Աբեղյան շահեկան դիտողությանց շարք մը ունի իր գրքին մեջ (էջ 43—75), և այդ նյութը կրնա դեռ ուսումնասիրության բեղուն դաշտ մը կազմել մասնագետ լեզվաբաններու համար։

Գանք քուչակյան երգերու տաղաչափության «հայրեն»ի չափին։ «Հայրեն»ը հայոց հատուկ տաղաչափական ձև մըն է, և շատ հին։ Մենք ունեցեր ենք անցյալի մեջ անհանգ և հանգավոր զանազան տաղաչափական ձևեր, ոմանք օտարեն փոխ առնված, ոմանք մերոնցմե հորինված, բայց ատոնց մեջ՝ իբր հարազատ «հայկական չափ» ճանչված երկու գլխավոր տաղաչափություն ունեցեր ենք, մին այն է զոր Հ. Արսեն Բագրատունի նկատեց Շարականներեն ոմանց մեջ (ինչպես Խորենացիի վերագրված «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ» ծննդեան շարականը կամ Շնորհալիի «Նորահրաշ պրսակաւոր և զօրագլուխ առաքինեաց» Վարդանանց շարականը), որոնց համեմատ տողը չորս մասի կբաժնվի, առաջին մասը 1, 2, 3 կամ 4 վանկ, երկրորդը 3 կամ 4, երրորդը միշտ 4, չորրորդը 3 կամ 4. այլազան ու ալետատան կշռությամբ սքանչելի չափ մըն է, զոր Հ. Արսեն Բագրատունի հոյակապորեն կիրարկած է իր Հոմերի, Վիրգիլի, Սոփոկլի, Միլտոնի, Ռասինի թարգմանությանց և իր «Հայկ Դյուցազն»ին մեջ և զոր չեմ գիտեր ինչու մեր նոր բանաստեղծներն ու թարգմանիչներ չեն որդեգրած, քանի որ միմիայն Հովհաննես Սեթյանն ու այս տողերը գրողն են, որ զայն կիրարկած են մերթ, ու նույնիսկ Հ. Արսեն Ղազիկյան իր թարգմանությունները կատարած է ոչ այդ չափով, այլ մետասանոտնյան տողերով։ Մյուս հայկական չափն է «հայրեն»ի տաղաչափությունը, նույնպես մեզի հատուկ, այնքան մեզի հատուկ, որ մերոնք անունը դրեր են «հայրեն» («հայերեն» բառի սղումը և այդ անունը դրեր են — ինչպես արդեն գրած եմ «Նահապետ Քուչակի Դիվան»ի ծանոթագրությանս մեջ,— ոչ միայն տաղաչափության, այլև եղանակին զուտ հայկական դրոշմ ունենալուն պատճառով։ Այս հայրենի չափն ալ հին է. անոր առաջին նմուշները կգտնենք Ժ. դարուն Գրիգոր Նարեկացիի տաղերեն ոմանց մեջ.

«Գոհար վարդըն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից»...

կամ

«Ես ձայն զառիւծուն ասեմ որ գոչէր ի քառաթևին...»

Հետո կգտնենք այդ չափը Ներսես Շնորհալիի մեջ. Աբեղյան կոչեշատակ «Հիսուս որդի» հեղինակին մեկ «Մեղեդի աւետեացը, որ այդ չափով գրված է և որ կսկսի «Բարբառ աւետեաց ձայնիւ Գաբրիել գոչէր Սրբուհւոյն» տողով։ Նույն չափով գրված են հայկական Կիլիկիո թագավոր Հեթում Ա.ի որդի Լևոնի 1366ին եգիպտացվոց դեմ մղված կռվին մեջ անոնց ձեռքը գերի իյնալուն առթիվ հորինված ժողովրդական երգը («Ա՜խ ղ ըզ Լեւոնն ասեմ որ Տաճկաց դուռն ընկեր գերի»...), ինչպես և այդ Լևոն իշխանին գերութենե ազատվելե և Կիլիկիո թագավոր դառնալե հետո Տաթեւու վանքին միաբան գրվելով ընծաներու հետ հոն դրված տաղաչափյալ ոտները («Մարդիկ որ հոգւոյ աչօք յանվախճան կեանքս հայեցան»...)։ Հետո, հայրենի չափով քերթվածներ կգտնենք Ֆրիկի, Հովհաննես Գլուզի, խաչատուր Կեչառեցիի, Առաքել Սյունեցիի, Հովհաննես Թլկուրանցիի, Գրիգոր Աղթամարցիի, Զաքարիա Գնունցիի, Մկրտիչ Նաղաշի, Հովհաննես Սեբաստացիի բանաստեղծությանց մեջ. նույն չափը կգտնենք նաև «Աղեքսանդրի պատմության» և «Պղնձե քաղաքի» թարգմանությանց էջերուն մեծ մասին մեջ, ու վերջապես քուչակյան տաղիկներուն ու Ակնա «անտունի»-ներուն մեջ։ Նարեկացիի ու Շնորհալիի հայրենները անհանգ են, մնացյալները բոլորն ալ հանգավոր, բայց չափը նույնն է և այդ չափն է՝ ըստ իս՝ տասնևհինգ ոտքով տող մը, որ ունի երեք մաս, առաջինը՝ յոթը վանկ, երկրորդը՝ երեք վանկ, երրորդը՝ հինգ վանկ բաղկացած։ Հ. Ներսես Ակինյան «Արևգ» հանդեսին «Տաղասեր» ստորագրությամբ իր տված հոդվածին մեջ այն կարծիքը կհայտներ, թե հայրենի չափին է տասնևհինգ ոտքով տող մը, որ կբաժնվի երկու մասի, առաջինը յոթ և երկրորդը ութ վանկ, բայց առաջինն ալ միշտ 2—5 վանկով և երկրորդը 3—5 վանկով։ Եվ երբ Վիեննայի վանքի թիվ 671 ձեռագրի երեք տաղաշարքերը հրատարակեց «Անահիտ»ի մեջ, տասնևհինգ ոտքով տողերու ձևով հրատարակեց զանոնք, ինչպես ըրած էր է՛ն առաջ Տեկանց Արիստակես վարդապետը իր «Հայերգ»ին մեջ՝ թե՛ քուչակյան տաղերուն և թե՛ խաչատուր Կեչառեցիի և Գրիգոր Աղթամարցիի քերթվածներուն համար, ինչպես ըրած էի ես ինքս «Նահապետ Քուչակի Դիվան»-ին մեջ, ինչպես ըրավ Հ. Մ. Պոտուրյան երբ ի լույս ընծայեց Առաքել Սյունեցիի քերթվածները։ Կոստանյանց քուչակյան խրատական տաղաշարքը (ժողովածու, Ա. պրակ) և սիրային տաղաշարքը (Գ. պրակ) ու «Յարոջ երգը», «Ասի թե սիրեմ» տաղաշարքերը և «Ա՜յ իմ մարգրտե շարոց» տաղը (Բ. պրակ) հրատարակեց տասնևհինգ վանկով, տողերը երկու մասի բաժնելով, մին յոթավանկ, մյուսը ութավանկ, և զանոնք տակե տակ դնելով իբր երկու տող. բայց նույն

Կոստանյանցը Մկրտիչ Նաղաշի, Գր. Աղթամարցիի և Հովհ. Թլկուրանցիի հայրենի չափով գրված քերթվածները իր հավաքածուներուն մեջ հրատարակեց հնգհատասնոտնյան երկար տողերով։

Ես ալ է՛ն սկիզբը այդ հայրենի չափով տողին մեջ երկու մաս միայն կտեսնեի, 7—8, երկու մասին յուրաքանչյուրը ինք իր մեջ բազմաձև ազատ բաժանումներով վանկերու։ Այդպես կտեսներ նաև հանգուցյալ Ս. Գաբրիելյան Ակնա անտունիներուն չափը։ Հետո, Հ. Մ. Պոտուրյան նկատեց, որ քուչակյան տաղերուն, ինչպես և Ֆրիկի և Առաքել Սյունեցիի քերթվածներեն ոմանց տողերուն չափն է 5—5—5. և արդարև այդ քերթվածներու տողերուն մեկ մեծ բաժինը այդ չափն ունի, բայց ո՛չ բոլորը։ Աբեղյան այս հարցին կհատկացնե ամբողջ գլուխ մը, ուր հույն ու պարսիկ տաղաչափությանց իր հմտությունը զինք մոլորեցուցած է և մղած է անափեսք, յամպ, պեյթ, պայաթի, ղազել տեսնելու չափի մը մեջ, որ զուտ հայկական է, այնքան հայկական, որ մեր հին գուսանները զայն հայրեն անվաներ են։ Ահա վերջաբանն ու եզրակացությունը իր քրտնաջան (և՝ ինչպես ֆրանսացիք կըսեն՝ կեսօրը ժամը 14-ին փնտռող) հետախուզության. «Հայրենները, ինչպես տեսանք, կարճ բեյթերով (տուներով) հորինված ղազելներ ու քառյակներ են, կամ քառյակների միացումներ, կամ թե մի շարք նույնահանգ կամ տողընդմեջ նույնահանգ բեյթեր։ Այս ոտանավորը կազմվում է երկվանկ և եռավանկ ոտքերի կանոնավոր փոփոխակի հաջորդությամբ տան մեջ։ Տողերը, տարբեր ռիթմական պարզ ոտքերի դրության պատճառով — քանի որ մեկն սկսվում և վերջանում է երկվանկ ոտքերով, մյուսը՝ եռավանկ,— ունին տարբեր բնավորություն, որով զգալի է լինում յուրաքանչյուր տողի ամբողջությունն ու ռիթմը։ Տունը 2—3—2/3—2—3 կազմությամբ ստանում է 5—5—5 անդամավոր ոտանավորի ռիթմ. բայց սրա միակերպությունը փարատվում է նրանով, որ 7-րդ վանկից հետո կա զորեղ հաստատուն հատած, որով թերի և առկախ է մնում երկրորդ 5 վանկանի անդամը և քիչ հետո մեյմկ լրանում է հաջորդ տողի առաջին ոտքով։ Այսպիսով ոտանավորի ռիթմն ավարտ է ստանում տան վերջում։ Ապա երկու և ավելի երկտող տների կրկնությամբ զգալի է դառնում նաև տների ռիթմն իբրև ռիթմական մեծ միություններ։ Կնշանակե «Հայրենի կարգ»ի մեջ հնչում է չորս տեսակ ռիթմ,— տների, տողերի, անդամների և պարզ ոտքերի. բայց միանգամայն և ռիթմի միակերպությունը վերացվում է՝ պարզ ոտքերի նկատմամբ՝ մեկ-մեկ շեշտերի տեղափոխությամբ և անշեշտ վանկերի գրվելովը և ռիթմորեն շեշտելի վանկերի տեղ, տողերի նկատմամբ երկու տողի տարբեր կազմությամբ, իսկ անդամների նկատմամբ, ինչպես վերևում ասվեց, երկրորդ անդամի առկախ մնալով։ «Հայրենի կարգ»ն իր այս առանձին հորինվածքի պատճառով ունի իր առանձնահատուկ ռիթմը, որով բնորոշվում է դա։ «Հայրեն ասել» «հայրեն ասել» նշանակում է, ուրեմն, «տունե տուն» երգել, բեյթեր-բայաթի ասել, միայն առանձնահատուկ ռիթմով, ոտանավորով»։

Չեմ կանգ առներ այդ խնդրույն վրա, որ կզարմացնե զիս երբ Աբեղյանի պես լուրջ բանասեր մը է գրողը և նյութն է քուչակյան ոտանավորը, լավագույն տաղիկներուն մեջ այնքան հստակ, պարզ, հոսուն՝ ինչպես ակունքի ջուր մը վճիտ, որ արևուն տակ կվազե։ Պիտի ըսեմ միայն, որ համաձայն չեմ իրեն երբ կպնդե, որ հնգհատասնոտնյան տողը երկու տողի բաժնվի, և այդ երկտողը կազմե պեյթ մը, տուն մը, և այդ երկու տունը՝ քառյակ մը։ Շատ քիչ կան քուչակյան տաղաշարքին մեջ այդպիսի կարճ չորս տողեր, որոնց մեջ իմաստ մը, գաղափար մը իր լրացումը գտնե և որոնք այդպիսով կարենան քառյակ մը ձևացնել. ատոնք ալ ընդհանրապես բուն տաղիկին կեսն են, օրինակիը մոռցած ըլլալով մյուս կեսը, և կամ ուրիշ տաղիկի մը կեսին կցած ըլլալով այդ կեսը։ Քուչակյան բուն քառյակները, հնգհատասնոտնյան տողերով սիրային զմայլելի քառյակները, որ նայամի աշխարհահռչակ քառյակներուն հետ կմրցին ձևի գեղեցկությամբ, Աբեղյանի հաշվով ությակ պիտի դառնան ուրեմն։ Պարսիկ քառյակներուն և հայ քառյակներուն տաղաչափական տարբերությունը անոր մեջ , որ առաջիններուն յուրաքանչյուր տողը, երկու հատածով՝ ինչպես մեր հայրենը, մերթ 9, մերթ 10, մերթ 11 կամ 12 վանկե կբաղկանա, մինչ հայրեններու տողը՝ միշտ ոտանը-հինգ վանկե։ Պարսկականին առաջին, երկրորդ ու չորրորդ տողերը նույնահանգ են և երկրորդն անհանգ (ինչպես մեր ջանգյուլումի էլգերը և ժողովրդական կարգ մը սիրերգներ ու պարերգներ), մինչ քուչակյան քառյակներուն չորս տողն ալ նույն հանգն ունին ընդհանրապես, երբ անեղծ պահպանված քառյակներ են։ Երբեմն ալ — առաջին երկու տողը և վերջին երկու տողը տարբեր հանգ ունին։ Կան ալ տաղիկներ որ չորս տողեն ավելի ունին, հինգ, վեց, ութ և՝ քիչ անգամ՝ մինչև տասը կամ տասերկու տող. ատոնք ալ ընդհանրապես նույնահանգ են, ու մերթ այլազան հանգերով։ Կան ալ որոնց կիսատողերեն շատերը հանգ ունին, և ատիկա ալ Աբեղյանին կարծել տված է որ 7 և 8 վանկնոց կիսատողերը իսկապես տող են և ոչ թե կիսատող. բայց այդ կիսատողի ծայրը կըրկնվող հանգը երբ տաղիկին բոլոր տողերուն մեջ չի տեսնվիր, այլ մեկ քանի տեղ միայն, ատիկա «ներքին հանգ» ըսված դարդն է, ներդաշնակությունը ավելցնելու միջոց մը։

Ատիկա պատճառ մը չէ, որ հայրենի հնգհատասնոտնյան մեծաշուք ու օրորուն տողը որ միակտուր սլացք մը ունի, երկուքի կտրենք։ Կան

տաղիկներ — քիչ Դիվով — ուր բոլոր կիսատողերը նույն հանգն ունին. օրինակ՝ «Կարմիր ու սպիտակ երես» քառյակը (երես, աչքերես, ի ներս, կ'էրես, այնես ցուցանես, հանես, շքլրսես), կամ «Շիրին է լեզուդ անուշ» երկատողը (անուշ, նուշ, անուշ, ֆուշ) կամ՝ «Իմ յարն ի հիսնն գնաց» երկատողը (գնաց, լաց, բնդաց, մնաց), կամ «Իմ յարն ի պաղչան ի քուն» քառյակը (ի քուն, ի գլխուն, ի քուն, պատրսխուն, ի քուն, պատրսխուն, վերջին տողն է միայն որ մեկ հանգ ունի՝ առավրտուն):

Այս տաղիկները ժողովրդական երգեր են, որ սկզբնաբար արդարև հղացված են 7 և 8 վանկնոց տողերով որ իրարու կհաջորդեն և հետո այս կամ այն աշուղին ձեռքով քուչակյան տաղաշարքին մեջ մտցված են։ Ատոնց և իսկական քուչակյան տաղերուն միջև թե՛ իմաստի, թե՛ ձևի, թե՛ տաղաչափության զգալի տարբերություն կա։

Ճիշտ չէ դարձյալ Աբեղյան, երբ կգրե թե մեր հին բանաստեղծության մեջ գործածված բոլոր չափերը «կան նաև ուրիշ լեզուների մեջ և ամենայն հավանականությամբ ուրիշներից են անցել մեր գրականությանը» և թե միայն այս «հայրենի կարգ»ն է որ հայկական բնիկ ստանավոր է, և թե ան ալ սակայն հայկական բայարի (?) է և եթե ատոր ալ ծագումը օտար է, մեր գուսաններեն ու ժողովրդական երգիչներեն շատ սիրված ըլլալուն համար հայկական է համարվեր, հայրեն է կոչվեր... Մեր հին ու նոր տաղաչափական ձևերուն մեջ կան որ օտարեն առած ենք, ինչպես ուրիշ ազգեր ալ իրարմե այդպիսի փոխառություններ ըրած են հաճախ, բայց կան տաղաչափական ձևեր որ հայ մտքի, հայ ճաշակի ծնունդ են, և ատոնց գլխավորներն են, ինչպես ըսի վերև, Հ. Արսեն Բագրատունիի շարականներու մեջ գտած ու զարգացուցած հայկական չափը և այս հայրեններու և անտուններու չափը։ Այդ հայրենի չափով գրված բոլոր քերթվածներն աչքե անցուցեք, Նարեկացիի տաղերեն մինչև Հովասափ Սեբաստացիի «Աշխարհիս սահմանն է հանց»ը, քուչակյան տաղերեն մինչև Ակնա անտուններ, և պիտի տեսնեք որ ոչ 5—5—5 չափը, ոչ 2—5—3—5 չափը կպատշաճին անոնց բոլորին, ոչ ալ անապեստ-ի, յամպ-ի, պայաթի-ի և դազել-ի, այլ 7—3—5 չափն է, որ բոլորին մեջ պիտի գտնեք կանոնավորապես, բացի այն տողերեն որ օրինակիչներու կողմե հայտնապես աղճատված, կրճատված են (և ատոնց իսկ ճիշտ չափը կգտնվի հաճախ՝ երբ լավագույն փոփոխակներ երևան կելլեն ավելի հարազատ օրինակներու մեջ)։

Հայրենի չափով շարադրված այն քերթվածները, որոնց հեղինակները հմուտ եկեղեցական կամ աշխարհական գրողներ են եղած, տուներու բաժանված բանաստեղծություններ են, բայց քուչակյան տաղերը, ինչպես նաև Ակնա անտուններ, շատ սակավաթիվ բացառություններե զատ,

տուն չունին, չորս տողով, կամ է՛ն շատը՝ տասը — տասներկու տողով տաղիկներ են։ Եվ ինչպես արդեն գրեցի վերև, անտունի բառին տրված երեք մեկնություններեն ճշտագույնը թերևս այն է, որ այդ բառին կուտա տուներու չբաժնվող, միակտուր, հակիրճ տաղի իմաստ։

Ես հակառակ պիտի չըլլայի, որ քուչակյան տաղիկները կամ Ակնա անտուններ տպվին՝ յուրաքանչյուր տողը երկուքի բաժնված, պայմանով սակայն որ յուրաքանչյուր տողի առաջին մասը (7 վանկ) գլխագրով սկսի և երկրորդ մասը (8 վանկ) հասարակ գրով, որպեսզի որոշ զգացվի թե այդ երկու մասերը միասին կկազմեն մեկ տող. այդպես ըրած է Ճանիկյան։ Բայց ատ ալ զուր տեղ տպագրության կրկնապատկել պիտի ըլլար. լավագույնը նորեն այդ տաղերը հնգետասնոտնյան տողերով տպելն է։

Այդ քուչակյան հայրեններուն ու Ակնա անտուններուն չափը և անոր կիրարկման վարպետ ձևը, երբ մարդ ոտանավոր գրել գիտցողի իրազեկ և ուշադիր նայվածքով մը քննե, կնկատե հոն անմիակերպ, մշտափոփոխ նուրբ ու ծփուն ներդաշնակություն մը գոյացնելու ճիգ մը, գրեթե միշտ զմայլելիորեն հաջողած։ Յուրաքանչյուր առաջին կիսատողի յոթ վանկերը տարբեր դասավորում ունին, մերթ 2—3—2, մերթ 1—4—2, 3—2—2 և այլն, և այլն, մյուս երկու մասերը՝ միշտ 3 և 5, բայց այդ 3-ը և 5-ն ալ իրենց միշտ տարբեր ստորաբաժանումն ունին, և այդ մանրամասնության նրբությունները կարելի չէ մեքենական ու մշտանույն կանոնի մը մեջ սահմանափակել։ Ինչ որ մասնավորապես նկատելի է, այդ տաղիկներու և անտուններու հեղինակներուն տիրական մտահոգությունն է կարճ բառեր գործածելու. հինգ վանկով բառ գրեթե բաղվ չեք գտներ հոն, ու չորս վանկով բառերն ալ հազվագեպ են. տողերը կազմված են ամենամեծ մասամբ մեկ, երկու, երեք վանկ ունեցող բառերով, և դասավորված այնպիսի բնական ընտանի կարգով մը և իրենց հաջորդության մեջ այնպիսի հեշտալուր ձևով մը, որ կհրճվեցնեն ունկնդրին կամ ընթերցողին միտքը, սիրտը և լսելիքը։ Զարմանալի և ցավալի է, որ մեր նոր բանաստեղծներեն — որոնք ինքնատպության իմ ինդիր՝ «աղատ ոտանավոր»ի մառախուղներուն մեջ կտուզվին կկորավին մերթ,— ոչ որ դեռ խորհած է օգտվիլ այդ հայրեններու տաղաչափության այնքան նուրբ որքան հայեցի արվեստեն։

«Նահապետ Քուչակի Դիվան»ին երևումը զգայացուցց դեպք մը եղավ բովանդակ գրասեր հայության համար։ Անիկա արտակարգ ընդունելություն մը գտավ թե՛ Կովկասի և թե՛ արտասահմանի հայ մամուլին մեջ. տասնհինգեն ավելի հոդվածներ, խանդավառ գովեստներով լի՝ դարավոր մոռացման մը ստվերեն հանկարծ դուրս բերված այդ հրաշալի քնար-

երգության համար, երևցան ամեն հոսանքի թերթերու մեջ։ Ատոնց գլխավորներն էին Հովհաննես Թումանյանի, Երվանդ Արմաքեշխանլյանի հոդվածները, որոնց տարիներ հետո եկան միանալ Արտաշես Հարությունյանի հիացական արտահայտությունները։

Քուչակյան բանաստեղծությունը, երբ թարգմանվեցավ, օտար հասարակության մեջ ալ խանդավառ ընդունելություն գտավ։ Երբ այդ տաղերեն փունջի մը թարգմանությունը ղրկեցի Փարիզի հանրածանոթ գրական ամսագիր «Ռըվյու Պլանշ»ին, խմբագրությունը, խորապես գնահատելով այդ տաղիկներուն գեղեցկությունը, փութաց գրել ինծի, որ այդ թարգմանություններս իրենց հանդեսին մեջ երևալեն առաջ ուրիշ ոևէ թերթի մեջ Քուչակեն ոչինչ հրատարակեմ։ Երբ Les Trouvères Arméniens հատորս խմբագրեցի, մեծանուն բանաստեղծ Հանրի դը Ռենիեեն խնդրեցի, որ անոր համար հաճեր հառաջաբան մը գրել. ան սիրուն նամակով մը պատասխանեց, որ այդ հատորը այնքան լեցուն էր ինքնատիպ գեղեցկություններով, որ հառաջաբանով մը ներկայացվելու պետք չուներ։ «Դեռ նոր ավարտեցի, կդրեր, ձեր Աշուղներու հավաքածուին ընթերցումը։ Ատոնց մեջ կան սքանչելի բանաստեղծներ, որոնցմե է այդ Քուչակը, և իր այն տաղերը զոր կուտաք հոդ, ամենաշահեկան ամբողջություն մը կկազմեն»։ Այդ հատորին երևումեն հետո, հռչակավոր քերթող ժան Մորեաս «Կալեթ դը Ֆրանս» օրագրին մեջ կնվիրեր ամբողջ թերթոն մը, ուր կըսեր. «Քուչակ թողած է վառ գույներով տաղիկներ և խրատական քառյակներ... Նահապետ Քուչակի սիրային քառյակները կխտացնեն Արևելքի ամբողջ հրապույրն ու ամբողջ տկարությունը... բանաստեղծը թող կուտա, որ թռչնիկներուն դայլայլը զինք օրորե, և իր հափշտակությունը ավելի հոգեզմայլ կդառնա, երբ սոխակը կպոռթկա... Սոխակին ձայնն է որ դարձյալ զինք կհրավիրե ծառերու շուքին տակ երթալ խմելու... Սիրված էակին պատկերը գծելու համար Քուչակին պետք են ամենեն աղվոր ծաղիկները և ամենեն ախորժահամ պտուղները, պետք է ամենեն հազվալուր երգը և ատ ալ բավական չէ, ան կուզե նվաստացնել երկինքն ու ծովը և ամեն ինչ՝ որ մարդոց ճարտարվեստը հնարած է ամենեն ավելի քնքուշ ու անուշահոտ։ Այս բոլորը լի է տաղանդով, ըստ այն բանաստեղծական եղանակին, որ արևելցվոց հատուկ է...»։

Նույն հատորին նվիրված ընդարձակ հոդվածի մը մեջ, զոր հրատարակեց «Մերքյուր դը Ֆրանս» հանրածանոթ ամսագիրը, Էմոն Ֆազի, երիտասարդ տաղանդավոր գրագետը, որ՝ Փիեր Քիյարի հետ Պոլիս եկած՝ անոր պես հայ վարժարաններու մեջ ուսուցիչ եղավ ու ջերմ բարեկամ մըն էր մեր ժողովուրդին, Քուչակի և Խայամի միջև զուգակշիռ մ'ընելով Խայամի նկատմամբ անարդար հանդիսանալու աստիճանին կհասցներ

իր զմայլանքը Քուչակի հանդեպ. «...կհասնինք վերջապես Նահապետ Քուչակին, պ. Արշակ Չոպանյանի մեղի ծանոթացուցած բանաստեղծներուն ամենեն աստվածայինին։ Խորհրդավոր անձնավորություն մըն է, իր կյանքին վրա ոչինչ գիտենք, կկարծեն միայն թե ան եղավ «արհեստով աշուղ մը, աշխարհական մը»։ Նահապետ Քուչակ ինծի շատ բարձր կթվի Օմար Խայամեն, որուն հետ կրաղդատե զայն պ. Արշակ Չոպանյան։ Նիշափուրի ալճեպրագետ-աստղաբաշխը տիպարն է չափազանցյալ համբավով բանաստեղծին. հեղգորեն շնորհալի՝ Ֆիցճերըլտի նմանողության մեջ, մելանվագ ու նուրբ՝ Պոտենշդետի հետևողության մեջ, կոմս Շաքի ազատ թարգմանության մեջ՝ ներդաշնակ ու գեղեցիկ, այդ պարսկին տաղիկները բառական թարգմանություններուն մեջ կերևան միօրինակ, արվեստակյալ, հաճախ ցուրտ, իմաստով ու պատկերներով աղքատ։ Նահապետ Քուչակ, ընդհակառակն, ճոխությունը, ջերմությունը, բնականությունն իսկ է։ Համակ սեր է ան։ Անոր տաղիկները երբեք չեն ձանձրացներ։ Ու պատկերներն իրմե կծնին ինչպես ծաղիկները վարդենիեն»։

1902 մայիս 20-ի հայկական երեկույթին, հայ բանաստեղծության ու արվեստի վրա իր բանախոսության մեջ, զոր հոն կարդաց նրբաճաշակ գրագետ ու գեղարվեստական քննադատ Կապրիել Մուրե, Նահապետ Քուչակի մասին կըսեր հետևյալը. «Հաճույքով պիտի ունկնդրեք Նահապետ Քուչակի սիրային քերթվածները, ցողով համակ թաթավուն, թարմ պատկերներով պսպղուն, տոգորված բնության զգացումով մը որ ճշմարտապես զմայլելի է։ Հաճույքով պիտի ունկնդրեք այդ գորովագին տաղերը, այդ տարփավառ շաղփաղփանքը, թռչուններու գեղգեղմանց մեջ Վանա գեղեցիկ այգեստաններուն հովանվույն տակ, ու թերևս դուք ալ անոնց մեջ պիտի գտնեք տպավորությունը արևելյան «Ինթերմեձձո»ի մը, Հանրի Հայնեեն հինգ-վեց դար առաջ գրված։ Այդ տաղերը Սողոմոնի «Երգ երգոց»-ին մեծվայելչությունը չունին, բայց ավելի սրտաբուխ են, ավելի խանդակաթորեն տարփոտ»։

Կովկասահայ ծանոթ գրող մը, որ աշխատակիցներեն մին եղած է Վալերի Բրյուսովի՝ կազմելու համար «Հայ բանաստեղծության» հատընտիր էջերու անոր ճոխ հավաքածուն, կըսեր ինծի քանի մը տարի առաջ թե ռուս բանաստեղծը Les Trouvères Arméniens հատորը կարդալեն ետքն է որ վճռապես որոշեր է այդպիսի գրքի մը շարադրության նվիրվիլ, և այդ գրքի հառաջաբանին մեջ, ուր հին ու նոր հայ քնարերգության մասին կարտահայտվի ամենախոր հարգանքով, մասնավոր սքանչացմամբ մըն է որ կխոսի քուչակյան բանաստեղծության վրա։

«...Ա. Չոպանյան, որմե փոխ կառնենք Քուչակը հատկանշող գիծերն մեկ քանին, բաղդատության կդնե Քուչակի և Արևելքի ամենեն համ-

բավավոր բանաստեղծներուն տաղերը։ Սաատիի, Հաֆըզի և նույնիսկ Օմար Խայամի քնարը կծառայե թագավորներուն և ավագանիին. այդ բանաստեղծները պալատական էին, և իրենց գերթվածները տոգորված են արքունիքով, արքունական շուքով կշողշողան։ Այդ բանը գոյություն չունի Նահապետ Քուչակի պարզուկ բանաստեղծության մեջ։ Ան իր զգացմանց արտահայտության մեջ անկախ է. ան ավելի մոտ է փողոցի ամբոխին, քան պալատական սանդուխներուն. անոր ձայնը հնչեց ոչ թե «աշխարհի հզորներուն» համար, այլ ժողովրդական հավաքույթներուն մեջ։ Միակ սուլթանը, որուն առջև Քուչակ գլուխ ծռեց, իր հավիտենական և ամենազոր դիցուհին եղավ,— սերը։ Ա. Զոպանյան կնախընտրե Նահապետ Քուչակը համեմատել 19-րդ դարու բանաստեղծներուն, Հայնեի և Վերլենի հետ, և ատիկա ճիշտ է։ ԺԶ դարուն, Քուչակ հայ բանաստեղծության մեջ տվավ օրինակներ ճշմարիտ քնարերգության, այն իմաստով, որով մենք այսօր կհասկնանք այս բառը,— բանաստեղծություն մտերմական, ազատ և անձնական, որ մեկ նպատակ միայն ունի իր առջև, այն է՝ արտահայտել տրված բոպեին բանաստեղծին տիրապետող զգացումը»։

Կարդալե հետո Les Trovères Arméniens հատորը, Հանս Պեթկե գերման բանաստեղծը, որ իր անձնական արժեքավոր քերթողական արտադրություններեն զատ, իր երկրին մեջ ծանոթ էր իր Հաֆըզի տաղաչափված թարգմանություններով, որ մեծ տարածում գտած են, ինծի ուղղեց խանդավառ նամակ մը, ուր կըսեր. «Քուչակ այն բանաստեղծն է, զոր զեյ խանդավառ նամակ մը, ուր կըսեր. «Քուչակ այն բանաստեղծն է, զոր կփնտռեի և գտա...» և արտոնություն կխնդրեր իմ ֆրանսերեն թարգմանություններես օգտվելով այդ տաղերուն ամենեն գեղեցիկները տաղաչափյալ գերման թարգմանությամբ մը հրատարակելու. սիրով տվի իրեն այդ արտոնությունը, հաղորդելով նաև իրեն թարգմանություններ Քուչակի խումբ մը ուրիշ ընտիր տաղիկներու, և 1924-ին երևցավ իր գեղատիպ հատորը, Die Armenische Nachtigall (Հայ սոխակը) տիտղոսով, և որ կպարունակե Նահապետ Քուչակի սիրային տաղերու թարգմանությունը։ Ահա հատված մը անոր հառաջաբանեն.

«Այս հատորով առաջին անգամ Գերմանիո մեջ կներկայացվի Արևելքի ամենեն փայլուն սիրերգուներեն մեկը, Նահապետ Քուչակ, որ այս գրքի խորագրին մեջ կանվանվի Հայ սոխակը։ ...Արևելքի ամենեն կախարդիչ քերթողական դեմքերեն մեկն է այս երգիչը։ Սեր նվագող իր տավիղին արբեցուցիչ դաշնակության մեջ տեղ ունի թե՛ բուռն կիրքը և թե՛ քնքուշ հեզությունը։

«...Աշուղ էր Հայաստանի ամենանշանավոր բանաստեղծը ևս, Նահապետ Քուչակ։ Մենք ուրիշ բան չենք գիտեր իր մասին, ոչ իսկ իր ապրած դարը հայտնի է որոշապես, հավանորեն տասնվեցերորդ դարը։

«Քուչակի բանաստեղծությունները բաղկացած են մեկ քանի հարյուր տաղիկներե, որոնք մեծ մասամբ քառյակներ են։ Արտահայտության այդ ձևը, զոր «Արևելքի հնչյակը» կարելի է անվանել, ան փոխ է առեր պարսիկներեն, որ իրենք ալ զայն արաբներեն առած են։ Պարսիկները, և է՛ն առաջ՝ Օմար Խայամը, Առաջավոր Ասիո քնարերգության ամենեն ժողովրդական ձևին հասցուցած են քառյակը։ Քուչակ փոխ առած է այդ ձևը և բոլորովին ինքնատիպ եղանակով և հաճախ հափշտակիչ կերպով լեցուցած է զայն երջանիկ ու ապերջանիկ սիրող մարդոց բոլոր հույզերով։ Առաջավոր Ասիո մեջ թերևս կան ավելի մշակված, ավելի ոգեկան սիրային երգեր,— աչքի առջև բերենք՝ օրինակ՝ Հաֆըզը,— բայց ավելի բոցավառ ու ավելի բարձրաթռիչ երգեր գտնել կարելի չէ։ Արևելյան են ատոնք մինչև իրենց ամենանուրբ թելերը. հաճախ չափեն ավելի զեղուն են իրենց պատկերներն ու նմանությունները և տոգորված՝ ոչ քիչ անգամ՝ զգայականության փոլփոլուն մոլեգնությամբ։ Սրանություն և անեծք, սիրո նախանձ, հափշտակություն, կարոտ ու բաղձանքներու իրականացում, հավատք ու կասկած, մեկ խոսքով՝ սիրող սրտի ամեն տեսակ ցանկություններ ու տանջանքներ վետ ի վետ կծփան զգացմանց այս հավետ փոթորկահույզ ծովին մեջ։ Ինչ որ հասարակաց է այդ բոլոր տաղերուն, կշռույթի հրաշալիորեն կենդանի շունչն է, այլև այնպե՛ս բնական, բանականության ոչ մեկ խոչընդոտե չկասեցվող՝ քաղցրանվագ առատությունը, հեղեղը խոսքերու։ Ավելի արվեստաշատ են պարսիկները, և ավելի գրական, պարփակված հին ու մեծ պայմանագրականության մը շրջանակին մեջ։ Եվ սակայն Քուչակի մոտ՝ եթերին մեջ հորդահոս վազող ամենավճիտ հնչյուններն են սրտի, որ մեր վրա կցողեն սիրուն անտառի առատաբուխ աղբյուրի և կամ վայրի աղավնիի կանչերու նման։ Այդ երգերը կնմանին այն փոքրիկ, վայրի ու փարթամորեն աճող վարդերուն, որ անտառներու եզերքը կաճին ծիրանեգույն և որոնց վրա լուսաշող ցողը կնստի։ Գեղջուկ աղջիկները կտիրցնեն այդ վարդերը իրենց ճոխ վարսերն անոնցմով պճնելու համար»։

Այդ հատորի երևման առթիվ գերման մամուլի մեջ անոր մասին լույս տեսան ներքողալից հոդվածներ։ Ահա ինչ որ կգրեր Taeglische Rundschau (Ամենօրյա տեսություն) օրաթերթի գրական քննադատը. «Այս գիրքը մեզի առաջին անգամ կծանոթացնե Արևելքի շողշողուն սիրերգուներեն մին, Նահապետ Քուչակ, զոր կանվանեն «Հայ սոխակը»։ ...Աշուղ մըն էր ան, որ ապրած էր հավանորեն ԺԶ դարուն. իր մասին ուրիշ բան չենք գիտեր։ Անոր ոտանավորները մեծ մասամբ քառյակներ են։ Ատոնցմե ծանոթ են քանի մը հարյուր հատ. Պեթկե ընտրեր է հար-

յուր տասներկու կտոր։ Քառյակներու այս ձևը մենք ճանչցանք Խայամի միջոցով։ Քուչակ այդ ձևը կկիրարկե նույնքան վարպետությամբ։ Բայց իր տողերը սիրո արտահայտությանց ջերմությամբ, բուռն զգացումներով ու կրքով կգերազանցեն արևելյան ուրիշ բոլոր բանաստեղծները, նույնիսկ փափկազգած, նրբարվեստ Հաֆիզը։ Քուչակ՝ անմիջական Արևելքն է, ծայրահեղ, չափազանց՝ մինչև կատաղություն, մինչև խենթություն։ Սիրո այս մոլեգնությունը այդ տաղերուն կշռույթին ու պատկերներուն մեջ դրեր է իր զարմանալի արտահայտությունը. այդպիսով ան արբեցնող, կախարդող տպավորություն մը կգործե»։

Քուչակյան խումբ մը տաղեր ունեցած են անգլիերեն, հունարեն, դանիմարքերեն թարգմանություններ։

Պատրաստած եմ քուչակյան լավագույն տաղիկներու ֆրանսերեն թարգմանությանց հավաքածու մը, որ կհուսամ լույս պիտի տեսնե մոտիկ ապագայի մը մեջ։

Այս ներածությունը կուզեմ վերջացնել արտատպելով այստեղ ինչ որ կգրեի «Հատընտիր էջեր քուչակյան տաղաշարքեն» գրքույկիս հառաջաբանին իբր եզրակացություն։

«Քուչակի անունը այժմ ծանոթ է ամեն գրասեր հայու, բայց ինծի կթվի, որ հայ գրասերներուն և նույնիսկ մեր գրագետներուն ու բանաստեղծներուն մեծ մասը դեռ մոտիկ ու խորունկ ծանոթություն չունին անոր գործին։ Անոր լեզուն, միջնադարյան հայ բարբառին ընտել չեղողներուն համար, կիսով միայն հասկնալի է, և ոմանց միամիտ ու տհաս կամ նույնիսկ կոպիտ ու խորթ կթվի, ինչ որ հետևանք է անիրազեկության և անհասկացողության։ Միջնադարյան հայ լեզուն, իր գրաբար, ռամկահայ և օտար բառերու խառնուրդով, իրեն հատուկ քերականությամբ ու ֆրազաշինությամբ, իր ուրույն գեղեցկությունն ունի, որ անշուշտ գրաբարին հասուն ու օծուն կամ լիալիր ու մեծվայելուչ պերճությունը չէ, բայց զարնանավերջին վառ գույներով թարմ պտուղի երիտասարդ ու կանանչ գույնն ու սուր զորեղ համն ունի։ Սիրո այդ երգերը այդ լեզվով է որ փրենց բուն հարազատ կենդանի արտահայտությունը գտած են. գրաբարով անհնար պիտի ըլլար անոնց տալ այդ բնական ու ընտանի շեշտը. իսկ անոնց տաղաչափական ճարտարությունը, տողերուն ներդաշնակ թավալումը, կարճ ու հեշտալուր բառերու վարպետ ընտրությունը և երաժշտական նուրբ դասավորումը (լավագույն էջերուն մեջ անշուշտ) իրենց հավասարը չունին հայ հին ու նոր բանաստեղծության մեջ։

Քուչակյան շարքեն շատ բան պիտի ունենան սորվելիք ու քաղելիք՝ մեր բանաստեղծները, այսօր ու վաղը, երկար ատեն։ Անոնց մեջ կգտնենք թե՛ դասական արվեստ, թե՛ խորհրդապաշտ միտումներ, թե՛ զորեղ (մերթ անպատկառության հասնելու աստիճան) իրապաշտ ձգտում, թե՛ տեսիլի, մտածման, ձևի նուրբ հանդգնություններ, բայց այդ ամենը բնազդական, ինքնեկ ներշնչումով մը իրականացած, այդ «դպրոցներուն մեծ մասին Արևելքի մեջ կազմվելեն շատ առաջ՝ հայ մտքեն բնականորեն ծնած, և գրեթե միշտ արտահայտության մեջ չափի զգացումեն, գեղեցկության ու ներդաշնակության ձգտումեն առաջնորդված, որ հանդգնությունները բնական ու հրապուրիչ կդարձնեն ու մերթ գոհհկության, շնականության մոտեցող տողերն իսկ՝ ամբողջության մեջ տիրող մաքուր, քնքուշ, ազնիվ զգացումին խորը հալեցնելով՝ կգեղեցկացնեն։

Քուչակյան շարքը այսօր արդեն կարևոր տեղ մը կգրավե հայ գրականության պատմության մեջ. բայց դեռ շատ քիչ բանաստեղծներ օգտված են այդ ոսկեհանքեն (միայն Թումանյան, Իսահակյան, Տերյան, և անոնք ալ՝ շատ քիչ)։ Քուչակյան տաղարանը պետք է բարձի գիրքերեն մեկն ըլլա ամեն հայ բանաստեղծի և ամեն հայ գրասեր պատանիի։ Հայ դեռատի սիրտերը որ սիրո քաղցրությունը կամ տառապանքը կզգան առաջին անգամ, ավելի թանկագին թարգման չեն կրնար գտնել իրենց զգացման քան Քուչակյան տաղիկները, որոնց յուրաքանչյուրը հոգեկան որոշ վիճակ մը կպատկերացնե, որոնց ոմանք ամբողջ սիրավեպ մըն են խտացած։ Մեր աղջիկներն ու պատանիները գոց գիտնալու են այդ շարքին գեղեցկագույն տողերը։ Անոնց մեջ սերը վերլուծված նկարված, երգված, ողբացված, փառաբանված, կատակաբանված է իր բոլոր երևույթներով, սերը ցավագին կամ երանավետ, միամիտ կամ խորամանկ, մաքուր կամ ցոփ, դյուցազնական կամ վայելամոլ, զուտ սրտալից կամ զուտ տռփական, երազուն կամ իրապաշտ, պարզ ու բնական կամ տեսակ մը զգայական միստիկականությամբ խառն»։

Պետք է ավելցնեմ թե քուչակյան տաղաշարքերու մյուս բաժիններն ալ — պանդուխտի երգերն ու խրատական տաղերը,— ոչ նվազ գեղեցիկ են ու թանկագին։ Պանդուխտի երգերը այդ ցավագին նյութեն ներշնչված հայերեն ամենեն խոր ու հուզիչ և ամենեն կատարելաձև բանաստեղծություններն են. իսկ խրատական տաղերուն մեջ, որոնց հեղինակները հայտնապես մեկե ավելի են, հայ ցեղի հոգին, բարքերը, ճակատագիրը կպատկերանան և «հայ ժողովրդական իմաստությունը» կգտնանա։

ՄԽԻԹԱՐ

Ա.

Կյանքը զոր վարեց Մխիթար, նկարագրի ուժը զոր ցույց տվավ իր նպատակին հասնելուն համար, այնքան մեծ են ու գեղեցիկ, որքան Գործը որ, իրմե հիմնված, ի կատար հանվեցավ իր հանճարեղ հաջորդներուն ձեռքովը։ Այդ կյանքը մին է մարդկությունը պատվող այն հոյակապ դյուցազներգություններեն, ուր կտեսնենք մարդ մը, որ միս մինակ, իր հոգեկան կորովեն ուրիշ որևէ միջոց ու զենք չունենալով, ընկերական, քաղաքական, բնական բոլոր ուժերուն ընդդիմադրությունը կնվաճե և կհաջողի ոչնչեն աշխարհ մը ստեղծել։

Վհատության օրերու մեջ, այնպիսի պահու մը ուր մեր նորագույն սերունդեն իսկ կլսենք ձայներ, որ մեր ժողովուրդը կուզեն իր ծայրահեղորեն «տկար» տարր մը ըլլալուն համոզել, որ չեն վարանիր Հայը ներկայացնել իբրև թույլ ու լիսկած տիպար մը, «գործի սկսելեն առաջ իսկ վհատած», «անվնաս սահմանավորության մը մեջ կծկտած», «անձեռներեց», «խանութպան», «ստրուկ», «նախապաշարյալ», տիրացու», և այլն, օգտակար է որ մեր ժողովրդին աչքին առջև դնենք պատկերը իրմե բխած այն հզոր դեմքերեն մեկուն, որոնց գոյությունը ինքնին կբավե ապացուցանելու թե Հայը՝ մեր նորածիլ հոռետեսներուն կարծածին ճիշտ հակառակը՝ մեր երկրագունդին ամենեն ուժեղ ցեղերեն մեկն է, քանի որ ուժերուն ամենեն թանկագինը, բարոյական ուժը ունեցած է։

Ջեմ սիրեր անշուշտ այն վնասակար ինքնախաբեությունը որով կարգ մը անհատներ կամ ժողովուրդներ իրենց կվերագրեն հատկություններ, զոր չունին ու չեն տեսներ թերությունները որոնցմով բեռնավոր են. բայց նույնչափ անախորժ կթվի ինծի և ավելի վնասակար, ինքզինքը միշտ և ամեն բանի մեջ գեշ տեսնելու ունակությունը. մենք հայերս սովոր ենք մեկ ծայրահեղությենեն մյուսը ցատկելու, կա՛մ տղայական միամտությամբ մը մեր ժողովուրդը աշխարհիս ամենեն հին, ամենեն խելացի, ամենեն ազնիվ, ամենեն փառավոր ժողովուրդը կկարծենք, և կա՛մ թեթև ինքնատելությամբ մը մեզ մարդկության մրուրն ու աղբը կփութանք նկատել։

Ճշմարիտ է որ ազգերու կյանքին մեջ կան վայրկյաններ ընդհանուր անկումի, մեծ ճգնաժամերու, եղերական հեղաշրջության, վիթխարի աղետքներու հետևանքով առաջ եկած անբարոյացումի պահեր, ուր ազնիվ անհատականություններ, դառնացած զիրենք պաշարող վատությենեն, իրենց զայրույթին ու զզվանքին ձաղկը կճոճեն իրենց ազգին գլխուն վե-

րև, և իրավունք կունենան այդպես ընելու։ Հրեա մարգարեները արհամարհանքի և ցասումի ամենեն անգութ բառերը նետած են իրենց ազգին երեսին։ Նույն սրտմտությունն է, որ մեր Խորենացիին ներշնչեց այն ահարկու էջն, ուր իր ատենին ինկած հայությունը հրաշեկ բառերով կխարանե։ Բայց այդ դառնացածները երբեք իրենց ամբողջ ցեղը չեն պարուրեր համատարած արհամարհանքի մը մեջ, անոր վայրկյանի մը ընկումը մը կողբան՝ միևնույն ատեն անցյալին մեջ անոր ունեցած մեծությունը հիշեցնելով իրեն, ու զայն այդ անցյալ գեղեցկությանը վերադառնալու բաղձանքեն միայն մղված։ Եբրայեցի բանաստեղծները պաշտելի քնարերգություններ ունին իրենց Սիոնին հինավուրց փառքը տարփողելու համար, և իրենց ժամանակակից «պոռնկացած» Երուսաղեմին վրա թափած անեծքներուն մեջեն միշտ կընդնշմարեն ապագա Սիոնը՝ վերակենդանացած ու ավելի գեղեցկացած։ Խորենացին իր այդ էջը կգրե, ոչ թե «Հայը մատնիչներու ժողովուրդ մը եղած է միշտ և պիտի ըլլա միշտ» ըսելու համար, ինչպես ըրավ ատենով Արփիարյան իր հոդվածներուն մեկուն մեջ, ոչ ալ Հայը ներկայացնելու համար իբրև ի ծնե և հավիտենապես «վախկոտ, դեռհիկ, սահմանափակ, անպատկառ, ցածոգի», ինչպես ըրած էր վերջերս Պ. Վարսամյան «Ժողովրդին համար»-ին մեջ՝ տարօրինակ գաղափարն ունենալով հազար տարիե ի վեր գերության մեջ կքած խեղճ հայեն, աշխարհիս ամենեն ուժեղ ու առողջ ցեղին՝ անգլիացուն, արժանիքները պահանջելու։ Խորենացին իր զզվանքը «կժայթքիացուն, արժանիքները պահանջելու։ Խորենացին իր զզվանքը «կժայթքեք» իր ժամանակի տարրալուծված հայության վրա, և իր ցեղը խորապես սիրելուն և հարգելուն համար է, որ այդ ցեղին անկման փուլի մը մեջ մտնելը կսկիծով ու ցասումով կնկատե։ Այդ էջը արդեն միակն է ամբողջ գրքի մը մեջ, որ գրված է Հայուն մեծ ազգ մը ըլլալը ապացուցանելու համար,— «Սակայն բազում գործք արության գտանին գործյալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոց հիշատակի։ Ու այդ էջն իսկ կսկսի սա ազնիվ տողերով, «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, Հանուրց Հյուսիսականացդ վեհագույն»։

Այո՛, մեր ազգին մեջ ալ «գրոց հիշատակությանը արժանի արության գործեր» կատարված են. և այսօր իսկ, հակառակ վիթխարի քայքայումներե անխուսափելի կերպով առաջ եկած անբարոյացումի մը որով մեր ժողովուրդին մեկ ստվար մասը վարակված է, մեր ժողովուրդը ցույց կուտա հավաքական և անհատական զորության ու ազնվության նշաններ, զոր աններելի է անտեսել։ Մանավանդ այսպիսի շրջանի մը, ուր մեր ժողովրդին վրա ծանրացած դժբախտությունը շատ ավելի մեծ է և անգութ, քան իր բարոյական տկարացումներուն գումարը, ոչ միայն սխալ այլև անազնիվ կնկատեմ ամբողջ հայությունն անարգող բառեր

նետել այս խեղճ ժողովուրդին երեսին, որուն քով թերություններ գտնելիը չէ որ զարմանալի է, ինչպես կգրե Լինչ, այլ հակառակ այդքան երկարատև ծանր գերության մը՝ ազնիվ ու առողջ հատկություններու իր մեջ մնացած ըլլալն է որ զարմանքի արժանի է։

Հայ ժողովուրդը «տկար տարր մը» չէ եղած երբեք, ոչ ալ «գռեհիկ ու տգեղ տարր մը», երբ զայն նկատենք իր ամբողջ գոյությանը մեջ։ Աշխարհակալ ազգի մը մեծազոր առնականությունը չէ ունեցած, ինչպես հռոմեացին, պարսիկը, արաբը կամ թուրքը. գեղեցկագիտություն մը չէ հղացած ու աշխարհիս մեջ տարածած, ինչպես հույնը. կրոնք մը, փիլիսոփայություն մը չէ ստեղծած ու մարդկության փոխանցած, ինչպես հրեան. բայց, թեպետ դժնդակ ու ցավագին ճակատագրի մը սահմանված, Հայը ցույց տված է բարոյական կորով, ինչպես քիչ ազգ ցույց է տված. պահպանած է իր լեզուն, համառած է մնալ իր հողին վրա, իր վանքերուն շուրջը, իր մաճին կամ դազկահին կպած, մինչդեռ հրեան կորսնցուցած է հայրենի լեզուն ու հողը. պահպանած է իր ազգայնությունը, մինչդեռ իրմե շատ ավելի խոշոր ու հզոր ազգեր, ինչպես ասորեստանցիները կամ պարթևները, իսպառ ջնջված անհետացած են։ Ասիո ու Եվրոպայի բազմազարյան ահեղ պայքարին մեջ, ան իր նյութական շահերն արհամարհելով, իր հոգեկան ձգտումներուն հպատակելու համար՝ Եվրոպայի կողմը հակած է միշտ ու ատով միշտ շարշարված։ Հակառակ իր անընդհատական կռիվով ու աղետքով մրրկահույզ կյանքին, ան կրցած է ցույց տալ ստեղծագործ և գեղեցկածին ոգի մը՝ իր հոյակապ լեզվին, իր եկեղեցվույն սիրույն ինքնատպությանը, իր մեկ քանի գրական ու ճարտարապետական հրաշակերտներուն ու իր կրոնական վսեմ երաժշտությանը մեջ, որոնք հայուն պիտի տան շատ ավելի բարձր դիրք մը մարդկության մեջ, քան այն զոր ունի՝ երբ դուրս ելլեն այն անարդար ստվերեն, ուր մնացած են մինչև հիմա, և որոնք կնախահաստատեն այն շատ ավելի կարևոր դերը, զոր հայը պիտի կարենա կատարել, մարդկային քաղաքակրթության մեջ, երբ իր ազատ զարգացմանը հարկավոր եղող պայմաններուն տիրանա։ Ու հայը վերջապես՝ արտադրած է շարք մը մարդեր, որոնք իրենց մեջ խտացուցած են ցեղին ամենեն ազնիվ ու ամուր հատկությունները, և որոնք թեև մարդկային պատմության մեջ շատ քիչ ծանոթ կամ բոլորովին անծանոթ, իրենց ցույց տված հոգեկան ուժովն ավելի շահեկան են և ավելի գեղեցիկ, քան ուրիշ ազգերու ինչ-ինչ մեծահռչակ հերոսներ, որոնք միջավայրի ու ժամանակի անհուն առավելություններով նպաստավորված, շատ նվազ զոհաբերության, ճարտարության ու մաքառումի պետք են ունեցած իրենց գործն

իրականացնելու համար։ Արշակ Բ., Վահան Մամիկոնյան, Աշոտ Ողորմած, Աշոտ Երկաթ, Լևոն Բ., Դավիթ Բեկ, ու մանավանդ՝ Սահակ, Մեսրոպ, Խորենացի, Շնորհալի եղած են այնպիսի տիպարներ, որ փառքը պիտի կազմեին որևէ ազգի պատմության։ Անոնք ի վեր կհանեն՝ իբր պիտի կազմեին որևէ ազգի պատմության։ Անոնք ի վեր կհանեն՝ իբր ցեղին խորունկ հատկությունները մարմնացնող խորհրդանշանական դեմքեր՝ բուն գեղեցկությունը հայ նկարագրին, որ կկայանա վիթխարի թշնամիներու դեմ ազգային ինքնությունը և անոր ծոցը ծրարված հատուկ քաղաքակրթության մը բարերար գանձը պաշտպանել ձգտող վիթխարի ճիգի մը մեջ։ Թուրքերը աշխարհիս ամենեն հզոր պատերազմական ցեղերեն մեկը եղած են և ահեղ աշխարհակալներ արտադրած են, որ սակայն քաղաքակրթության համար բան մը չեն ըրած, նյութական տիրապետության մեջ մեծ եղած են և քանդումի մեջ հզոր. չեմ գիտեր թե որ թուրք աշխարհակալը կրնա ավելի իրապես մեծ նկատվիլ քան մեր Մխիթարը, արժանավոր հաջորդ Սահակի և Մեսրոպի, անոնց պես հերոս մը՝ ինք ալ՝ հոգեկան քաջության և մտավոր կորովի, անոնց պես հիմնադիր ամբողջ լույսով շինված գործի մը որ անջնջելի է։

***

Մխիթար կծնի 1676-ին Սեբաստիո մեջ։ Մահմեդական բռնապետության ապուշցնող, փտեցնող լուծին տակ, հայը, այդ միջոցին, համատարած տգիտության մեջ թաղված է, ուր մեկ քանի վանքեր հազիվ պղտոր լույս մը կպահեն։ Նյութական գերության վրա կավելնա, հայուն մեջը; բարոյական գերությունը, արդյունք տգիտության։ Մխիթար տղա հասակեն կզգա պետքը այդ անկումին դեմ մարտնչելու. կըմբռնե, որ ազգ մը այն ատեն միայն վերջնապես կդատապարտվի ջնջվելու՝ երբ քաղաքական կենդանությենեն հետո մտավորական կենսունակությունն ալ կկորսնցնե։ Կուզե վերանորոգել իր ազգը՝ մտավոր կյանքը վերարծարծելով անոր մեջ։ Բայց դժվարությունները շատ խոշոր են. ոչ միայն արտաքին, այլև ներքին են անոնք. ստրկացած հայը, գերության ու տգիտության բերած բոլոր թերություններովը բևեռավոր, ինքն իսկ է մեծագույն արգելքներեն մին իր ուրույն զարգացման։ Ոչ միայն ուսուցանելը դժվար է այդ պայմաններուն մեջ, այլև նախ՝ լրջորեն ուսանիլը։ Եվ Մխիթար անոնցմե չէ, որ պիտի ուզեին ուսուցանել՝ ուսանելե առաջ։ Իր ազգը կրթելե առաջ, կըզձա ինքն իսկ գիտակից, ամուր, ամբողջական կրթություն մը ստանալ։ Բայց չուշանար նշմարելու որ իր ազգը, իր տեղական միջավայրը անկարող են տալու իրեն պես մտքի մը այն ամբողջ սնունդը որուն պետք ունի։ Կմտնե Սեբաստիո Ս. Նշան վանքը, ուր սար-

կավագության աստիճանը կընդունի, և ինքզինքը կնվիրե կրոնական ու բանասիրական ուսումնասիրությանց։ Բայց շուտով այդ վանքը իրեն նեղ կուգա. կուզե գիտության ավելի մեծ վառարանի մը դիմել. կբաղձանրթալ էջմիածին. էջմիածնա նվիրակ Միքայել արքեպիսկոպոսը Սեբաստիա հասնելով, կընդունի Մխիթարի խնդրանքը և կհաճի զայն հետը տանիլ էջմիածին. բայց էջմիածնա վանքին մեջ փոխանակ զարգացման միջոցներ գտնելու, Մխիթար հոն կտեսնե ծառայի մը կյանքը իրեն վիճակված ու տգետ, բռնակալ կղերականներ որ զինքը կպաշարեն. Միքայել արքեպիսկոպոսը, նշմարելով անոր արտասովոր ուշիմությունն ու աշխատասիրությունը, վախնալով որ ան՝ չափազանց զարգանալով, զինքը կգերազանցե, անոր կարգիլե կարդալ բարձր գաղափարներ պարունակող գրքեր, զայն կբռնադատե ցորեկն իբրև մշակ արտը աշխատելու և գիշերն իբրև սպասավոր իր քովը ամուլ և ապուշ տքնություններով անցընելու։

Զզված ու հուսահատ, էջմիածնեն կփախչի ու կերթա Սևանա վանքը, հուսալով այնտեղ ձեռք ձգել ինչ որ կփնտրեր։ Սևանա վանքին միաբանության մեջ ալ ուրիշ բան մը չի նշմարեր, բայց եթե նույն տգիտությունը, նույն նախանձոտ ու չար ոգին։

Այդտեղ, սակայն, ըստ սիրուն ու հուզիչ ավանդության մը, Մխիթար կգտնե կազդուրիչ ձայն մը, որ կուգա ոչ թե իր հայրենակիցներեն, այլ երկնավոր, մտացածին էակե մը, Աստվածածնեն։ Օր մը, որ վհատ հոգվով, կերթա իր ցավը թափել Սևանա Տիրամոր պատկերին առջև, կկարծե լսել Աստվածածնին ձայնը որ իրեն կըսե՝ «Ուղածդ թող ըլլա»։ Այսօրինակ ավանդությունները պետք չէ իմաստակ ժպիտով մը նկատել. անտարակուսելի է, որ անոնց մեջ ճշմարտության խորունկ բաժին մը կգտնվի. Մխիթարի պես արտասովոր ջղայնությամբ խառնվածք մը, հուսահատության գերագրգռված վայրկյանի մը մեջ, բնական է որ իրոք կարծած ըլլա «լսել» Աստվածածինը,— ինչպես Նարեկացին կարծեց «տեսնել»՝ հափշտակության վերացման մը մեջ՝ Հիսուսն իր մորը գիրկը,— և այնպիսի բոպեի մը ուր երկրի բոլոր ձայները զինքը կպախչախեին, ապաստանած ըլլա կազդուրումին մեջ գերերկրավոր գաղափարական ձայնի մը, որ, իր հոգիեն իսկ բխած, եթերին մեջ՝ իր ցնորազգաց ջիղերուն համար՝ վայրկյան մը նյութականացեր է։

Այս վեհ տեսիլքին ցնցումեն ոգևորված, Մխիթար կորոշե Սևանն ալ թողուլ, ու երթալ դեպի անծանոթը, չգիտնալով ո՞ւր և ինչպես պիտի իրագործե իր իդեալը, բայց վստահ թե պիտի զայն իրագործե։ Կմեկնի՝ Սեբաստիա վերադառնալու համար։ Ճամփան, Բասենի վանքը կհանդիպի, ուր կջանա կրթել աբեղաները մտքով ու հոգվով, բայց տարրը, որուն

վրա կաշխատի, ամուլ ու խեռ կհանդիսանա, միջավայրը թանձր է և թշնամի. իր ցանած սերմերը պտուղ չեն տար։ Ինձգե Բասենն ալ, ու կդառնա Սեբաստիա։ Ֆիզիկապես շատ վատուժցած է. էջմիածնա մեջ վարած իր գերբի կյանքը հյուծած էր իր մարմինը, և աչքերը մանավանդ՝ իր երկայն անքնություններեն ալ մաշված՝ վերջին ծայր տկարացուցած. գրեթե կուր է, և ահավոր տանջանքն ունի ուսումնասիրությունները շարունակել չկարենալու։ Դարձյալ, սակայն, կհամառի իր գործը հառաջ տանիլ. Ս. Նշան վանքը կմտնե իբրև ուսուցիչ. կջանա իր աշակերտները փոխանցել իր հոգին և իր ուսումնասիրությանց արդյունքը. կհորինե կրոնական երգեր, զոր կարտասանե անոնց և զոր անոնք ի գիր առնելով եկեղեցիին մեջ կերգեն իբրև ժամացասության երգեր։ Բայց ան գոհ չէ ատով. ավելի մեծ արդյունք մըն է, որ կերազե ձեռք բերել. ամիսներով տառապելե հետո իր կուրությենեն, կհաջողի վերջապես բուժվիլ և կորոշե հեռանալ Սեբաստիայեն, բարձրագույն միջավայրի մը մեջ ցանկանալով կատարելագործել իր զարգացումը, ու կարող դառնալ իր գործը կատարելու այնպես ինչպես կբաղձար։

Կերթա Բերիա (Հալեպ), ուր կգտնե լատին կրոնավորներ, որոնցմե մեկուն, Հիսուսյան Անտոն քահանային հետ կմտերմանա։ Այդ եվրոպացիները Մխիթարին արժանիքներն ու բաղձանքները կգնահատեն, իրեն կընծայեն այն բոլոր օգնությունները, որոնց պետք ունի զարգանալու համար։ Դառնացած իր ազգակիցներուն կողմե գտած բոլոր արգելքներեն ու չարությունեներեն, և իր ուսումնասիրությանց մեջ արդեն ըմբռնած այն մեծ նշանակությունը, զոր ունի Հռոմ իբրև եկեղեցական ու մտավորական կեդրոն, փափաղ կզգա Հռոմ երթալու։ Որպեսզի կարենա ստանալ այն բարձր զարգացումը, որուն ծարավ է, և որպեսզի իր երազած գործը կարենա ի գլուխ հանել՝ եվրոպական մեծ ուժի մը վրա կռթնած։ Լատին կրոնավորները կհակառակին, խորհելով որ Մխիթար իր երկրին մեջ մնալով ավելի մեծ ծառայություններ կրնար մատուցանել իր ազգին. բայց անիկա անդրդվելի է որոշմանը մեջ, որովհետև համոզված է, որ իր ազգը վերանորոգելու համար պետք է շատ հզոր կովան մը հիմնել, և թե իր երկրին մեջ՝ գոյություն ունեցող պայմաններով՝ ատի անկարելի է. կստանա Հիսուսյան Անտոնեն երկու վկայագիր, մին Հռոմ Հիսուսյանց ընդհանուր աբբահոր ցույց տալու և մյուսն իր քով պահելու և հարկ եղած ատեն գործածելու համար, ու կհեռանա Բերիայեն, Աղեքսանդրիո նավահանգստեն նավ նստելով կմեկնի դեպի Հռոմ։ Ճամփան կհանդիպի Կիպրոս, ուր կստիպվի մնալ, ջերմե բռնված։ Այս բնական խոչընդոտը զինքը կբռնադատե հապաղելու իր ծրագրին իրականացումը։ Կմտնե Սաղամինայի հայ վանատունը, խնամվելու համար։ Իմանալով որ ան կա-

Թոլիկ եկեղեցվույն համակիր է, վանականները շատ պաղ, նույնիսկ անգութ կերպով կվարվին իրեն հետ. խարխուլ սենյակ մը կուտան իրեն առանց կարասիի, առանց անկողնի. ոչ մեկ դրման չեն տանիր իրեն, քովն այցելության իսկ չեն գար, կաթիլ մը ջուր անգամ չեն տար՝ ջերմեն պապակած խեղճին, որ կստիպվի՝ հազիվ քալելու կարող՝ պարտեզ իջնել ջուր խմելու համար, ու ինքզինքը դրմանելու համար ուրիշ բան չի գտներ ընելու բայց եթե պարտեզին ավազանին մեջ լողանալ։ Վանականները չոր հաց մը և քանի մը ձիթապտուղ միայն կուտան իրեն իբրև ամեն ուտեստ։ Եվ սակայն հակառակ այդ վայրենիներուն ամբողջ ջանքին, Մխիթար կհաջողի չմեռնիլ։

Ուժը քիչ մը վրան գալուն, զուրկ որևէ միջոցե՝ կարենալու համար Հռոմ ուղևորությունը շարունակել, կորոշե հայրենիք դառնալ, որպեսզի նորեն միջոցներ հայթայթե իր նպատակն իրագործելու։ Շատ մը նեղություններե հետո, ճամփու ծաղք մը կճարե, նավ կնստի, ու կհասնի Սելևկիա, ուր կմնա քիչ մը ատեն, դրամի պակասեն անշարժացած. այդտեղ, իր մյուս հիվանդությանց վրա որոնք դեռ բոլորովին չեն բուժված, կերցավն ալ կավելնա, որ, խանգարելով իր ստամոքսը և որևէ սնունդի մարսումն անհնար դարձնելով, իր արդեն ուժասպառ առողջությունը ալ ավելի կթայթայե։ Այդ ողորմելի վիճակին մեջ գտնվելով հանդերձ, Մխիթար դեպի Բերիա ճամփա կելլե, քալելով, որովհետև դրաստ մը վարձելու համար պետք եղած դրամը կպակսի իրեն։ Հոն, կերցավը կբուժվի, բայց տենդը կմնա վրան։ Բերիայեն մինչև Սեբաստիա ճամփորդությունը շատ երկար է, և վայրկյան մը կվարանի զայն ոտքով կատարելու. բայց ուրիշ ճար չկա. կշալկե ճերմակեղենները, և Սեբաստիա գացող հեծյալ ուղևորներու հետ ճամփա կիյնա։ Հեծյալ ուղևորները կձգեն զինքը ու կերթան։ Այլազգի մը, որ նույն ճամփեն կանցնի բեռնաթափ գրաստներով, կմեղքնա անոր, և զայն իր գրաստներեն մեկուն վրա հեծցընելով կտանի կհասցնե իր նախկին ուղեկիցներուն, որոնց հետ՝ հետիոտն կշարունակե ճամփորդությունը մինչև Սեբաստիա։

Ծնողական տան մեջ խնամվելով քիչ մը իր առողջությունը կազդուրվելուն պես, ան կվերսկսի գործել. հայրենի երկրին տեսքը, ազգակիցներու հետ կենակցությունը զինքը կմղեն Հռոմ երթալու ծրագիրը մեկդի դնել, և նորեն իր հողին վրա, իրեններուն հետ և անոնց մեջ աշխատելու փորձությունը կունենա։ Ս. Նշան վանքը կմտնե դարձյալ, և ինքզինքը կնվիրե գրական ու կրոնական աշխատությանց։ Բայց իր մտավորական գերազանցությունը վանքին միաբաններն իրեն թշնամի կդարձնե, և անոնցմե մին, Ծառուկ անունով, ոչ միայն կհալածե ու կնախատե զայն ամեն առիթով, այլև օր մը անոր սենյակը կմտնե և բոլոր ձեռագիր աշխատությունները կայրե։

Մխիթարի հմտության և առաքինի վարքին համբավը քաղաքին մեջ կտարածվի՝ հակառակ իր թշնամիներուն չարախոսությանց. ժողովուրդը կուզե որ անիկա վարդապետական պաշտոնն ընդունի և իրեն հոգևոր առաջնորդն ըլլա։ Մխիթար, որ ինքզինքը դեռ անարժան կնկատեր այդ պաշտոնին զոր ամենաբարձրը և ամենադժվարը կհամարեր, երկայն ատեն դիմադրելե հետո՝ կհավանի վերջապես, և վարդապետ կձեռնադրվի քսան տարեկան հասակին մեջ (1696)։

Այդ վայրկյանեն Մխիթար կուզե սկսիլ իր ըմբռնած միաբանություն մը հիմնելու ծրագիրը գործադրելու։ Կուզե հասցնել լրջորեն զարգացած, բարձր իդեալի մը նվիրված եկեղեցականներ, և անոնցմե կազմել խումբ մը, որ տգիտության, մոլեռանդության և անոնցմե ծագած տգեղ, անճոռնի բարքերուն դեմ պայքարի ու միանգամայն ջանա հայ եկեղեցին մոտեցնել ու միացնել Հռոմա աթոռին (Ինչ որ Մխիթար հայ ժողովրդին բարոյական ու նյութական բարորության համար օգտակար կնկատեր)։ Իր դասերուն հետևողներեն մին, Հովհաննես անուն պատանի մը, փափագ կզգա գործակցել իր վարպետին, և կորոշե հոգևորական կյանքի նվիրվիլ։ Բայց Հովհաննեսի ծնողքը կհակառակին իրենց որդուն որոշմանը, և կատաղի հալածանք մը կսկսին Մխիթարի դեմ, իրենց աջակից ունենալով անոր բոլոր մյուս թշնամիներն ալ։ Անիկա կզգա, որ իր գործը ամուր հիմերու վրա դնելու համար, պետք է որ հանրածանոթ ու հեղինակավոր անձնավորություն մը զայն իր հովանավորության տակ առնե, կմտածե որ լավագույն պիտի ըլլար Սեբաստիայեն ավելի հարմար ու նպաստավոր կեդրոնի մը մեջ հաստատել իր միաբանությունը։ Կերթա Պոլիս, և այնտեղ գտնվող խաչատուր անվանի վարդապետին կառաջարկե գլուխն անցնիլ իր գործին, բայց ան չի հավանիր։ Միևնույն ատեն, Ս. Լուսավորիչ եկեղեցվույն մեջ իր արտասանած իմաստալից ու ճարտասան քարոզներով կբազմապատկե իր անունին շուրջ արդեն կազմվիլ սկսող հռչակը։ Սեբաստիայեն Հովհաննես աշակերտը կփախչի ծնողքին քովեն ու կուգա միանալ Մխիթարին. Պոլսեն Հովհան անունով պատանի մը հանձն կառնե նմանապես ինքզինքը անոր գործին նվիրել։ Բայց Պոլսո մեջ ալ իր ծրագիրը մեծ արգելքներու կբախի. Մխիթար իր երկու աշակերտները կառնե ու կմեկնի դեպի Տրապիզոն։ Ճամփան ահավոր ալեկոծության մը կհանդիպին, և քիչ կմնա որ ծովամույն ըլլան. հազիվ կրնան զիրենք Սինոպ նետել. անկից Տրապիզոն երթալու դժվարությունը տեսնելով, Մխիթար դեպի Կարին կուղևորի ուր քիչ մը ատեն

կմնա, կքարոզե, կգործե, բայց այնտեղ ալ չհաջողելով հասնիլ իր նպատակին, նորեն Պոլիս կդառնա։

Այդ միջոցին կաթոլիկներու և լուսավորչականներու միջև մոլեգին ատելություն մը սկսած է բռնկիլ. կաթոլիկները կնախատեն ու կարհամարհեն լուսավորչականները, իսկ լուսավորչականները կուզեն զանոնք իբրև խռովարար ու դավաճան տաճիկ կառավարության պատիժներուն ենթարկել։ Մխիթար, կաթոլիկ դավանանքին հարած, բայց սրտով միշտ հայ, ամեն ճիգ կթափե խաղաղարարի, հաշտարարի դեր մը խաղալու համար, այն գեղեցիկ դերը, զոր իր հաջորդներուն աշակերտներեն մին՝ պաշտելի Պեշիկթաշլյանը, այնքան փայլուն կերպով պիտի կատարեր իր-մե դար ու կես հետո։ Իմանալով որ լուսավորչականները որոշած են կաթոլիկները կառավարության մատնել, Մխիթար Ս. Լուսավորիչ եկեղեցվույն խորանեն խաչը կառնե ու ժամուն մեջ հավաքված լուսավորչականներուն մեջտեղը կնետվի. «Եթե մտադիր եք՝ կգոչե՝ կաթոլիկ հայերը մատնելու, նախ զիս մատնեցեք, ես ալ անոնցմե եմ»։ Անիկա, ծանոթ իր հմտությամբը, աշխատասիրությամբը, ազգասիրությամբը և ազնիվ հոգվովը, հարգանք կվայելեր թե լուսավորչականաց և թե կաթոլիկներու քով։ Կառավարության դիմել ուզող լուսավորչականները իրեն կպատասխանեն. «Մենք քեզի հետ գործ չունինք. մեր խնդիրը անոնց հետ է, որոնք մեր վարդապետները խախամ կանվանեն և մեզ կնախատեն. դուն ի՞նչ գործ ունիս անոնց հետ»։ Մխիթար կշարունակե զանոնք համոզել որ եղբայրասպան կռիվը դադրեցնեն, մեկ քանի կոպիտ ու անազնիվ կաթոլիկներու համար ամբողջ հայ-կաթոլիկ հասարակությունը չկործանեն, և վեճին մեջ տաճիկը չմտցնեն. կհայտնե որ եթե համառին տաճիկին դիմել, ինքն ալ խաչը ձեռքը կառավարության ատյանը պիտի երթա և անմեղները պիտի պաշտպանե, ու եթե հարկ ըլլա՝ հանձն պիտի առնե որ իր գլուխն ալ սուրի տակ դրվի. կառաջարկե, որ զայրացած լուսավորչականները խնդիրը Հայոց Պատրիարքարանին ներկայացնեն՝ փոխանակ տաճկին ձեռքը հանձնելու։ Մխիթարի անկեղծ ու արի միջամտությունը ապարդյուն չի մնար. լուսավորչականները խնդիրը կներկայացնեն Պատրիարքին, որ կհաջողի հաշտեցնել իրարու դեմ գրգռված երկու տարրերը։

Մխիթարի համբավը կմեծնա հետզհետե։ Իր քարոզներն ունկնդրողներուն թիվը օրեօր կբազմանա. իր աշակերտները կշատնան և միաբանության մը կազմությունը օրեօր ավելի անհրաժեշտ կթվի իրեն և ավելի ալ իրագործելի կսկսի դառնալ։ Այդ մասին իր մտածումները կհայտնե իր մտերիմներուն, իր գործին նվիրված հավատարիմ աշակերտներուն, մեկայն, վախնալով որ իր ծրագիրը՝ տարաձայնվելով մոլեռանդ ընդդիմություններու և զայն արմատեն քանդող թշնամություններու չընդհարի։

Բայց, այնքան ճարպիկ մարդ որքան խանդավառ, ինչպես որևէ մեծ գործիչ, վարպետ միջոցներ ձեռք կառնե իր նորահաստատ վանատունը վտանգե զերծ պահելու համար։ Մենաստանին կազմատունի մը արտաքին երևույթը կուտա և իր աշակերտներուն կազմել կուտա կրոնական գրքեր զոր ինքն իսկ տպագրած է։ Երբ այցելու մը դա, աշակերտները միմիայն կազմարարական աշխատություններով զբաղած կգտնե. և ամեն իրիկուն անոնք իրենց տունը կդառնան իբրև գործավորներ, որ օրվան աշխատութենեն հետո տուներնին կերթան. մինակ մնացած ատենին, Մխիթար և իր աշակերտները իրենց բուն գործովը կպարապին, և հոդ այդ խոնարհ անկյունին մեջ է, որ առաջին քարը կդրվի շենքին, որ հետո պիտի կանգնվի, ընդարձակվի, Հյուղավորվի Վենետիկի ու Վիեննայի վանքերուն մեջ։

Քիչ ատենեն, կաթոլիկ հայերու դեմ հալածանքը կվերսկսի, այս անգամ ավելի կատաղի քան երբեք։ Հիմա Պատրիարքն իսկ է որ հալածանքին գլուխը կանցնի։ Եփրեմ, նոր Պատրիարքը, թուրք կառավարության դիմելով, բանտ դնել, թիարանները ղրկել, կախաղան բարձրացնել կուտա շատ մը կաթոլիկ հայեր. ի վերջո, հրաման հանել կուտա որ Մխիթարն ալ ձերբակալվի։ Մխիթար կիմանա վտանգը որ իրեն կսպառնա աշակերտները իրենց տուներ կճամփե, տանը կարասիներն ու գործիքները դրացիներուն կհանձնե, կփակե ուսումնարանը, և Ղալաթիա՝ Հիսուսյանց վանատունը կապաստանի, ու անկից, վանականներուն խորհրդով, կանցնի Բերայի Քաբուչիներուն վանքը որ ֆրանսական դեսպանին ուղղակի հովանավորության տակ կգտնվի. հոն բավական ատեն կմնա, գաղտնի շարունակելով իր գործը՝ իր անձնվեր աշակերտներուն հետ։

Եփրեմին կհաջորդե Ավետիք, որ ավելի կսաստկացնե կաթոլիկներու դեմ հալածանքը. Պոլսո, ինչպես գավառներու մեջ, կաթոլիկները հարյուրներով բանտ կնետվին, իրենց ինչքերեն կզրկվին, կգլխատվին։ Մխիթար կըմբռնե, որ Տաճկաստանի մեջ իրեն անհնար պիտի ըլլա իր գործն ի գլուխ հանել. կդառնա նորեն Եվրոպա երթալու իր առաջին գաղափարին, այժմ ոչ թե ինչպես առաջ՝ իր անձնական զարգացման գլխավոր նպատակովը, այլ իր միաբանությունը եվրոպական ազատ միջավայրի մը մեջ հաստատելու և իր ծրագիրն անկաշկանդորեն իրականացնելու համար։ Պոլիս կկանչե իր այն աշակերտները զոր գավառները ղրկած էր՝ քարոզելու, ուսուցանելու, աշակերտներ հասցնելու, և որոնք՝ այդ հալածանքի օրերուն՝ չէին կրցած որևէ նշանակալից արդյունքի հասնիլ, կժողվե ամենքը Քաբուչիներուն վանատան մեջ և կհայտարարե անոնց թե որոշած է Եվրոպա փոխադրել իրենց միաբանությունը, որ իրեն

նպատակ պիտի ունենար հայ ժողովրդին մտավոր զարգացմանը նպաստել և հայ եկեղեցին մոտեցնել հռոմեական եկեղեցվույն. ու բոլոր իրողությունները կմղեն մտածելու թե Մխիթար իր ծրագրին երկրորդ կետին մեջ հաջողության սատարե մը, դիվանագիտական միջոցե մը ավելին կտեսներ, և թե անկեղծորեն համոզված էր, որ հայ եկեղեցվույն Հռոմա աթոռին միացումը հայոց համար օգտակար բան մը պիտի ըլլար։ Անշուշտ վեճի կարելի է ենթարկել սա խնդիրը թե Մխիթար ճիշտ տեսա՞ծ ու աղեկ ըրա՞ծ է կաթոլիկությունը նախընտրելով ազգային եկեղեցիեն և նախամեծար համարելով Եվրոպայի մեջ հիմնել իր միաբանությունը, քան իր երկրին մեջ, սակայն բնավ վեճի կարելի չէ ենթարկել անոր ազնվությունն ու անկեղծությունը այդ որոշման մեջ. շատ բնական կգտնեմ, որ Մխիթար, հատընտիր միտք մը՝ բարձր զարգացման ձգտող, իր օրերու ազգային շրջանակին մեջ տգիտություն ու գռեհկություն միայն գտած, բարձրագույն քաղաքակրթություն մը ներկայացնող Հիսուսյաններուն հետ շփման մեջ մտնելովը՝ այդ անձերուն զարգացած մտավորականությանն համար զգացած իր հիացումեն մղված ըլլա բնազդական համակրություն մը ունենալու այն եկեղեցիին, որուն անոնք կվերաբերեին, և այդ համակրությունը հետզհետե իր մեջ համոզում մը դարձած ըլլա հռոմեական եկեղեցվույն իրական գերազանցությանը։ Հավանական է որ իր այդ համոզմանը մեջ զինքն ամրացուցած ըլլա նաև քաղաքական այն տեսությունն ալ, թե հռովմեական եկեղեցվույն հարումը հայոց դատը սերտորեն պիտի կապե կաթոլիկ Եվրոպային հետ (որ այն միջոցին ամենահզոր մասն էր արևմուտքի) և հայոց քաղաքական վերակենդանացումն ալ պիտի դյուրացնե։ Այս բոլոր տեսակետներուն ճիշտ կամ անճիշտ ըլլալուն մասին կարելի է կարծիքի տարբերություններ ունենալ, բայց այդ բոլորը ոչ մեկ կերպով իրավունք կուտա, որ Մխիթարին որոշումը «ազգադավ» արարք մը համարվի (ինչպես ընել չվարանեցան ոմանք). իր ազգին բարձրացման, այդպեսով ավելի օգտակար ըլլալու համոզումն է, որ Մխիթարը մղած է կաթոլիկությունն ընդունելու, ինչպես որ այժմ իսկ կճանչնամ կաթոլիկ հայեր, որոնք նույնչափ ազգասեր գիտեմ որչափ ամենեն ազգասեր լուսավորչական հայերը և որոնք խորապես համոզված են թե հայ ժողովուրդը մինչև հիմա ազատած կըլլար իր գերությենեն, եթե ամբողջությամբ կաթոլիկ եկեղեցվույն հարած ըլլար։ Այդ գաղափարին դեմ ըսելիքներ կան, և սա մանավանդ թե իր եկեղեցին իր հայրենիքին մեջ անխախտ պահած ըլլալը հայուն ազգային ինքնության պահպանումին գլխավոր սատարը եղած է, և թե անխելք բան մը ըրած պիտի ըլլար հայը, եթե Եվրոպայի ենթադրական օգնությանը հույսին համար ինքնապահպանության դրական ուժ մը կորսնցնել հանձնառու եղած ըլլար։ Միայն՝ աններելի է այդ գաղափարին հարած հայերը ազգադավ համարել, երբ այդ հայերը, օտար եկեղեցիի մը հարելով հանդերձ — զոր ար

չերթա։ Մխիթար կոստիպվի գիշերանց փախչիլ և Ֆրանսացիի մը տունը ապաստանիլ, անկից ալ իր մտերիմներեն մեկուն տունը կպահվտի տասնուհինգ օրի չափ ու վերջապես, վաճառականի զգեստ հագած, իր երեք աշակերտներուն հետ՝ որոնք նմանապես ծպտված են՝ կմեկնի Իզմիր և անկից Մորեա, գրպանը ունենալով չորս հարյուր դահեկան միայն՝ իբրև ամբողջ դրամագլուխ՝ իր միաբանությունն ապրեցնելու համար։

Կդիմե Մորեայի իշխաններուն և անոնցմե ապաստանարան կխնդրե իր միաբանության համար։ Իշխանները Մեթոնի մեջ իրեն հող կշնորհեն և թույլտվություն եկեղեցի և մենաստան մը կանգնելու. արքունի տուներեն մին ալ իբրև առժամանակյա մենաստան իր տրամադրությանը տակ կդնեն։ Այսպես, Մխիթար որ մինչև այդ վայրկյանը արգելք ու հալածանք միայն ընդունած էր իր ազգակիցներեն, աջակցություն ու խրախույս կգտնե եվրոպացիներեն, առաջին անգամն իսկ որ անոնց կդիմե. գործը այլևս պիտի կարենա ուրեմն արմատ կապել և ուռճանալ, քանի որ գտած է իր նպաստավոր միջավայրը։ Ս. Անտոն անապատականին հետևողությամբ՝ վանական սահմանադրություն մը կհաստատե, և իր միաբանության անդամները կհրավիրե զայն կետ առ կետ գործադրելու։ Կշանա եղբայրական ոգին անխախտ հիմերու վրա դնել անոնց մեջ, բացարձակ կարգապահության մը կվարժեցնե զանոնք, նյութական, ուսումնական ու առաքելական գործերու համար զատ-զատ անձեր կորոշե։ Հետո իր այդ հաստատած կանոնադրությանը բարձր հեղինակություն մը տալու և միանգամայն իր միաբանությունը Եվրոպայի կրոնական բարձրագույն իշխանության հովանույն տակ դնելու համար, կանոնադրությունը կհանձնե իր աշակերտներեն Հ. Եղիային և Հ. Հովհաննեսին, որ Հռոմ տանին և Կղեմես ԺԱ. պապեն զայն վավերացնել տան։ Երկու միաբանները կներկայանան պապին, շատ սիրալիր ընդունելություն կգտնեն, և կանոնադրությունը կհանձնվի կարտինալներու քննության, թեպետ անոր վավերացումը հուսացածեն ավելի ուշ ու դժվար ձեռք կձգվի՝ «հայկական» էնթրիկներու պատճառով որոնք դեռ չեն դադրած Մխիթարը պաշարելեն։

Դժվարություններն արդեն դեռ բազմադիմի են Մխիթարի շուրջը. անիկա պարտավոր է առանց դրամի ամբողջ միաբանություն մը ապրեցնելու հրաշքը գործել։ Իրեն նվիրված հողը մշակելով ու բերքերը ծախելով տարեկան փոքր եկամուտ մը կգոյացնե. Պոլսո և գավառներու հայերեն օգնություն կխնդրե, և ոչինչ կընդունի. լուսավորչականները զինքը հերձվածող մը կնկատեն, և կաթոլիկները՝ հալածանքի ենթակված՝ անոր վանքին օգնելու վիճակին մեջ չեն. կհաջողի գործակալներ գտնել մեկ քանի գավառներու և մանավանդ Եվդոկիո մեջ, որոնք ամեն ջանք կդնեն դրամ հավաքելու և իրեն հասցնելու համար, բայց շատ քիչ արդյունք ձեռք կձգեն։ Կոստիպվի տոկոսով դրամ փոխ առնել օտարներե, և պարտքերու տակ կճզմվի. ու այս բոլոր նեղություններեն իր առողջությունը դարձյալ քայքայվելով, քիչ կմնա նորեն որ կյանքը վրա տա։ Կբուժվի, և կվերսկսի գործել։ Հակառակ այդ բոլոր տանջանքներուն ու զրկանքներուն, կհաջողի մենաստան մը կառուցանել, իր գծած մեկ հատակագծին համեմատ։ Փափագելով եկեղեցի մըն ալ շինել, կդիմե վերջապես տեղվույն իշխան Անճելո Էմոյին, որ իմանալով այն ազնիվ նպատակը որուն համար հեռավոր երկրե եկած այդտեղ ինկած այդ օտարականները կոգորին և թե հաճախ օրերով անոթի մնալով ու ցնցոտիներով պտտելու չափ խորունկ աղքատության մը մեջ կգալարվին, անոնց ցերեն, պաքսիմատ կղրկե, դրամական օգնություն կհասցնե, և կաջակցի եկեղեցիին կառուցման. նույնիսկ կորոշե որ եկեղեցիին հիմնադրությունը զինվորական հանդեսով կատարվի. խուռն բազմության առջև, Մխիթար ու իշխանը միասին կզետեղեն եկեղեցվույն հիմնաքարը, ու նույն միջոցին դղյակեն զինվորական փողեր կհնչեն և թնդանոթի հարվածներ կարձակվին։ Քիչ ատենեն շինությունը կավարտի եկեղեցվույն, որ նույնպես Մխիթարի հորինած հատակագծին համեմատ կկառուցվի։

Բայց մինչդեռ օտարները թե թիկունք կըլլան Մխիթարին, իր հայրենակիցները կշարունակեն զինքը և իր գործը կատաղաբար հալածել։ Եվ նույնիսկ կաթոլիկ հայերն են հիմա որ զինքը կհալածեն, նախանձոտ գարշելի հոգիներ, որ չեն հանդուրժեր որ իրենցմե մեկը արտասովոր հռչակ մը ստանա, եզական գործի մը գլուխն անցնի, և կցանկան անոր անունը մրոտել ու գործը կործանել։ Եվդոկիո մեջ խումբ մը հայ կաթոլիկներ անոր գործին դեմ փրոփականտ կընեն, զանիկա ներկայացնելով իբրև բախտախնդիր մը, կհալածեն անոր գործակալը, կարգիլեն որ ոչ ոք օգնե անոր, սուտ լուրեր հանելով, թե անոր միաբանությունն արդեն լուծված է, և ինքն ալ անհայտացած։ Եվ այդ հրեշներուն պարագլուխ կըլլա նույնիսկ Մխիթարի նախկին աշակերտներեն մին... Հռոմի մեջ գտնվող կաթոլիկ հայերը, այն զզվելի տիպարներեն որոնք «կաթոլիկ ըլլալու էական պայմանը կնկատեն «հայ ըլլալե դադրիլ», Մխիթարի մասին այլանդակ զրպարտություններ կհաղորդեն կարտինալներու ժողովին, անոր ազգասիրությունը կներկայացնեն իբրև ըմբոստացում մը հռոմեական իշխանության դեմ, զայն ցույց կուտան իբրև վտանգ մը հայոց մեջ կաթոլիկության տարածման համար, և կհաջողին միտքը պղտորել կարտինալներուն, որ չեն վավերացներ կանոնադրությունը։ Բարեբախտաբար, ազնիվ օտար մը կգտնվի ու կպաշտպանե Մխիթարը. Կորընթոսի Քարլին արքեպիսկոպոսը, որ անոր հիմնած միաբանությունը մոտեն ճանչցած էր և կգնահատեր անոր արժանիքն ու օգտակարությունը,

կՀերքե Մխիթարի թշնամիներուն զրպարտությունները և կՀամոզե կարտինալները, որ անոր միաբանությունն իրենց հովանավորության տակն առնեն։ Կարտինալները կառաջարկեն Մխիթարի որ հռովմեական եկեղեցվո կողմե ճանչցված միաբանական կանոնադրություններեն մեկն ընդունի։ Մխիթար կընտրե Ս. Բենեդիկտոսի կանոնադրությունը, որովհետև այն մեր նախնյաց ձեռքով մասամբ թարգմանված և հայոց ծանոթ էր և կպարունակեր տղոց դաստիարակության պարտքը՝ որ իր ամենեն սիրած գործերեն մեկն էր։ 1712-ին Մխիթարյան միաբանության կանոնադրությունը վավերացված կղրկվի Հռոմեն Մխիթարին։

Հազիվ այս հաջողությունը ձեռք ձգված, շատ ավելի մեծ դժբախտություն մը կՀասնի միաբաններուն գլխուն։ Տաճիկները Մեթոնը կպաշարեն. իտալացիք, անկարող դիմադրելու, անձնատուր կըլլան. Մխիթար կստիպվի այնչափ ճիգով ու տանջանքով կանգնած վանատունն ու եկեղեցին ձգել, և տասնումեկ միաբանի հետ փախչիլ, Մեթոն թողլով մյուս յոթը միաբանները՝ որպեսզի իբրև քահանա ծառայեն պաշարված իտալացիներուն։

Ամեն միջոցե զուրկ, բայց անվհատ, կվերսկսի ճգնիլ՝ կործանած շենքը վերականգնելու համար։ Քիչ մը ատեն Սան-Մարթինո թաղին եկեղեցվույն մոտ տուն մը կվարձե, և հոն կպատսպարե իր միաբանները. կդիմե Հովհաննես, Էմո, Սեպաստիանո Մոչենինո վենետիկյան սեպուհներուն, որոնք իրենց աջակցությունը կխոստանան, թեպետ ժամանակն աննպաստ էր. Մերակույտին հաստատած օրենքը չէր թույլատրեր որ Վենետիկի մեջ այլևս կրոնական նոր միաբանություն մը հաստատվի. ատով հանդերձ Մխիթարի խնդիրքը չի մերժվիր, միայն իրեն կառաջարկեն կամ քաղաքեն դուրս տեղ մը շնորհել վանքը հաստատելու համար, կամ նույնիսկ քաղաքին մեջ՝ պայմանով որ Մխիթարի մահվընեն ետքը տրված տեղը նորեն տերության դառնար։ Մխիթար կուզեր մշտաթև տուն մը հիմնել, և որչափ ալ անպատեհ ըլլար քաղաքեն հեռու բնակվիլը, որով և պատարագներով քիչ մը դրամ գտնելու միջոցեն զուրկ մնալը, կնախընտրե որ նվիրվելիք հողը քաղաքեն դուրս ըլլա. կորոշե Ս. Ղազար կղզին, որ լքված վայրենի տեղ մըն էր ուր բորոտները կքաշվեին, և կառաջարկե որ զայն իրեն շնորհեն։ Մերակույտը Մխիթարի կանոնադրությունը երկու աստվածաբաններու քննության կհանձնե, որոշում մը տալե առաջ. դարձյալ անոր հակառակորդները ջանք կթափեն որ անոր խնդրանքը մերժվի, բայց չեն հաջողիր. Մերակույտը կորոշե Մխիթարին շնորհել Ս. Ղազար կղզին, 1717-ին հրովարտակ մը կհանե որով այդ կղզին Մխիթարյանց մշտնջենական մենաստանը կնշանակվի։ Մխիթար և իրենները կփութան կանգնել իրենց վանատունը, որ այլևս իրենց

հավերժական բույնը պիտի ըլլա և իրենց հաջորդներուն ձեռքով պիտի ընդարձակվի մեծապես։

Անգամ մըն ալ, հակառակորդները Հռոմեա մեջ կամբաստանեն Մխիթարը, և պապը զայն Հռոմ կկանչե բացատրություն տալու. Մխիթար կերթա, խիստ քննությենե մը կանցնի, ամեն հարցմանց կուտա գոհացուցիչ ու ճարպիկ պատասխաններ, և մեծ համակրություն կշահի պապին ու կարտինալներուն քով։

Այդ շատ փափուկ կացությունը ուր կգտնվի՝ իր ազգասիրական անխախտ զգացմանց և Հռոմի առջև կասկածելի երևալու վտանգին միջև, չարգելեր Մխիթարը իր միաբանությանը տալու դրոշմ մը, ոգի մը, և մեկ քանի մը էական կանոններ — ինչպես միաբանության մեջ որևէ օտարազգի չընդունելու կանոնը, որոնք զայն կպահեն խորապես ու հավիտենապես «հայ»։

Այլևս արգելքները, դժվարությունները, նեղությունները հարթված են մեծ մասամբ, հակառակորդները ջախջախված են, եվրոպական բարձրը համակրություններ ամրապես ապահովված են, շենքը վերջնապես հիմնված է. Մխիթար և իրենները, թեպետ և դեռ անձուկ միջոցներով, որոնք անհամեմատական են կատարվելիք գործին բաղդատմամբ, ուրիշ բան չեն ունենար այլևս ընելու բայց եթե բարձրացումը շարունակել մտավորական Շենքին զոր կբաղձային կանգնել։

Հոս ալ, Մխիթար ամեն բան իր ձեռքովն ըրած է։ Այնքան հզոր ու բարձր միտք որքան ամուր ու ազնիվ նկարագիր, անիկա ինքն իսկ իր անձնական աշխատություններովը զետեղած է առաջին քարերը մտավոր հիշատակարանին, զոր Չամչյանները, Բագրատունիները, Ալիշաններն ավարտեցին։ Մխիթար շարադրած է հայերեն լեզվի բառարան մը (նախատիպը Հայկազյան բառարանին, հայերենի քերականություն մը, Աստվածաշունչի տպագրություն մը (ամենեն կատարյալը, կոկիկը մինչև այն ատեն երևցածներեն), մեկնաբանական աշխատություններ՝ հրմտությամբ լեցուն, պարզ, գեղեցիկ ոճով, մեկնություն ժողովրդի, մեկնություն Մատթեի. թարգմանություններ եվրոպական գրքերու (դեռ միայն կրոնական), Ալպերտ մեծի համառոտ Աստվածաբանություն, Ռոտրիկվեցի Հաղագս երից ուխտից են — և կրոնական բանաստեղծություններ, մաքուր, շնորհալի և ազնիվ ներշնչումով։

Ըսել չեմ ուզեր անշուշտ թե Մխիթար իր մտքին մեջ «ամբողջությամբ» նախածրագրած էր ինչ որ երկու դարու մեջ իր վանքը պիտի արտադրեր, և թե ինքն իսկ կազմավորած էր այն «բոլոր» տարրերը որ պիտի հորինեին իր հաջորդներուն բովանդակ գործունեությունը։ Մխիթարի մտահոգություններուն մեջ կրոնական տարրը շատ մեծ տեղ կբռնե-

ներ, տիրապետող տարրն էր. «կրոնական մտահոգություն» ըսելով կաթոլիկությունը հայոց մեջ տարածելու տարամերժ ձգտում մը չեմ հասկընար, այլ զուտ կրոնական «միստիկական» մղումը. Մխիթար «վանական» մըն էր ամեն բանե առաջ, «Աստծո նվիրված մը», «ճգնավոր մը». իր հաջորդները «արվեստագետ-հայրենասերներ» եղան ամեն բանե առաջ, կամ գիտուններ։ Մխիթարյան միաբանությունը այդ բանը կպարտի, ոչ այնչափ Մխիթարին, որչափ միջավայրին ուր դիպվածը զիրենք նետեց. Վենետիկի գեղարվեստական ու հայրենասիրական մթնոլորտն է, որ հասցուց Չամչյանները, Բագրատունիները Հյուրմյուզները, Ալիշանները, Նարպեյները, Վիեննայի գիտական մթնոլորտն է որ կազմեց Քաթրմյաններ-ը, Այտնյանները, Քարաքաշյանները. եթե Մխիթարի վանքը Պոլիս տեվեր կամ Մեթոն մնար, անհավանական է, որ ինքնին այդ գեղարվեստական կամ գիտական մեծ զարգացմանը հասներ։ Բայց եթե Մխիթարի կարելի չէ վերագրել ինքն իսկ Վենետիկն իր միաբանության իբր հարմարագույն կրոնավայր ընտրելու և ատով իր հաջորդներուն կատարելիք գործն ամբողջապես նախատեսած ըլլալու արժանիքը, կարելի է սակայն հաստատել թե այն հոգին որ ի հայտ պիտի գար իր հաջորդներուն գործին մեջ՝ իտալական միջավայրին ազդեցությամբ, արդեն իր սաղմն ուներ, սակայն Մխիթարի մտքին մեջ՝ բնազդաբար կազմավորված։ Մխիթար, «ամեն բանե առաջ՝ վանական մըն էր», բայց կրոնքի ստրուկ մը չէր, քանի որ «ոչ ազգս կրոնքիս կզոհեմ, ոչ կրոնքս ազգիս» խոսքը գրած է, խոսք մը որ կապացուցանե թե իր բոլոր միստիկականությունը զինքը չէր արգիլեր ազգին և կրոնքին «տարբեր բաներ» ըլլալն ըմբռնելե, և թե ինքն արդեն ուներ խորապես այն «ազգի սերը» որ իր վանքին նշանաբանը պիտի ըլլար. ատկից զատ, իր այդ կրոնասիրությունը, հեռու զինքը որևէ գեղեցկատեցության առաջնորդելե, իրեն արգելք չէր եղած որ գեղեցկին, ճաշակավորին, վայելուչին զորությունն ըմբռներ գաղափարի մը տարածման իբրև միջոց—Աստվածաշունչը հրատարակված է մաքուր, կոկիկ տպագրությամբ, ու «պատկերազարդ» (առաջին պատկերազարդ Աստվածաշունչը զոր հայերը կունենային). վերջապես, իր «վանականությունը» զինքը չէ արգիլած աշխատության եղանակին մեջ գիտական լրջություն մտցնելու և «մեթոտի սերը», որ իր հաջորդներուն մոտ այնքան պիտի զարգանար. հասկցված է, որ որևէ գաղափար տարածելու համար, նախ պատրաստելու, հղկելու է արտադրության գործիքը, և հորինած է հայերեն լեզվի բառարան մը և քերականություն մը։ Արվեստագետ ալ է եղած, քանի որ հորինած է տաղեր որոնց մեջ «շունչ» կա։ Իր հաջորդները ուրիշ բան չեն ըրած, եթե ընդարձակել» իր գործը, արտադրելով տաղեր, քերթվածներ, դյուցազներգություններ, ողբերգություններ, որոնք

այլևս չեն սահմանափակվիր կրոնական զգացումներու արտահայտության մեջ (ինչպես ըրած է Մխիթար), այլ կհնչեցնեն մարդկային զգացմանց ամբողջ աստեղնաշարը, կթարգմանեն եվրոպական գրականութենեն՝ ոչ թե աստվածաբանական գրքեր այլ բոլոր այն հրաշակերտները որոնք սրբազան են քանի որ գեղեցիկ են։

***

Ազգ մը որ Մխիթարի պես «նկարագիր» մը արտադրած է, իրավունք չունի ինքիրմե հուսահատելու։

Մխիթար, միայնակ, կատարեց հսկա գործ մը, որ իր ժամանակին համար ամենեն անհրաժեշտը, անմիջականորեն կարևորն էր։ Հայ ժողովուրդը, որ այսօր կմաքառի իր ամբողջական ազատագրումը ձեռք ձգելու համար և ատով ուրիշ բան չըներ, բայց եթե Մխիթարի գործը լրացնել (ինչպես այս դարուն իտալացիները լրացուցին Փեթրարքաներուն, Ալֆիերիներուն, Մոնթիներուն գործը), պետք չէ որ վհատի իր սկսած պայքարին ահավոր դժվարություններեն և անոր մեջ իր մինչև ցարդ կրած աղետավոր անհաջողություններեն։ Պետք է որ ան ամեն վայրկյան իր աչքին առջև ունենա իր մեծ Մխիթարին օրինակը. պետք է որ համոզվի թե ամենեն անիրականալի կարծված ծրագիրներն իսկ կիրականանան, երբ մարդ գիտե ինք իր վրա հավատք ունենալ, զոհողություն հանձն առնել ու մաքառիլ։ Պետք է որ հայ ժողովուրդը ամբողջությամբ ցույց տա այն կամքը, ինքնավստահությունն ու անվկանդ հարատևությունը զոր Մխիթար ի հայտ բերավ իր գործունեության մեկ ծայրին մյուսը, և ան ալ պիտի հասնի իր ծրագիրն իրականացնելու, ինչպես Մխիթար հաջողեցավ իր երազը մարմնավորել։

ՄԽԻԹԱՐՅԱՆՑ ԳՈՐԾԸ

Այն հանդիսությանց առթիվ, որով Վենետիկի Մխիթարյանները երկու հարյուրամյակը կտոնեն իրենց տանը հիմնադրին, կուզեմ ի վեր հանել, ավելի մանրախույզ քննությունով մը քան ինչ որ կրցած եմ ընել ասկից առաջ երևցած ուրիշ հոդվածներուս մեջ, բուն իսկ նկարագիրը ճիգին զոր փորձեց և հաջողցուց մտքի ու կամքի այդ հերոսը։

Մխիթարի և իր հաջորդներուն գործը կբաժնվի երկու հատվածներու, որոնց առաջինը կկայանա արդի հայությունն իր անցյալին ոգումովը վե-

ռականգնելու, և երկրորդը՝ հայ միտքն արևմտյան քաղաքակրթության հետ անմիջականորեն ու մշտապես հաղորդակից ընելու մեջ. գործունեության այդ երկու ճյուղի մեջ ալ, Մխիթարի տունը կատարած է անգնահատելի դեր մը, բայց երկրորդին մեջ է մանավանդ որ պետք է տեսնել Մխիթարյանց ճշմարիտ փառքի տիտղոսը։ Մխիթար և իր հաջորդներն ամենեն մեծ սատարը եղած են արդի հայության «եվրոպացումին»։

Արդարև, հայ միտքին հինավուրց հիշատակարանները փոշիներու տակեն արթնցնելու և անոնց լույսի մեջ դրվելովը հայ ժողովուրդն իր բարոյական քունեն ցնցելու գործը՝ Մխիթարի միաբանության հետ, եթե ոչ անոր չափ և անոր պես, կատարած են ուրիշ կեդրոններ ալ,— Երուսաղեմի, Էջմիածնա միաբանությունները, ևն.,— բայց ոչ մեկ հայկական հաստատություն այնքան ինքնատիպ, այնքան խորունկ ու տևական ազդեցություն մը չէ ունեցած հայոց վրա՝ արևմտյան ոգիին, ճաշակին, բարքերուն մեր մեջ տարածման տեսակետով՝ որքան Մխիթարի տունը։

Սկիզբեն ի վեր հայ ժողովուրդը բնազդական ձգտում մը ցույց տված է արևմուտքի գաղափարներն յուրացնելու. Տիգրան Բ. իր մայրաքաղաքը հույն արվեստին և հույն մտածման գեղեցկություններովն ուզեց զարդարել. Վռամշապուհ և Սահակ հայ պատանության ծաղիկը Հունաստան զրկեցին՝ արևմտյան մշակույթի արևուն տակ զայն զարգացնելու և զորացնելու համար. Խորենացին, Նարեկացին, Լամբրոնացին, Շնորհալին իրենց գործին արևելյան մկանուտ ու թանձր խորքին վրա արևմուտքի ոգովը ճկած ու հղկված մտքի մը շնորհը երևան բերին. բայց երբեք հայ ժողովուրդը չէր ունեցած մշտական կեդրոն մը արևմուտքի մեջ, որ մեթոդով և տևականորեն միության գիծը կազմեր արևմուտքին և իր միջև։ Այդ կեդրոնը Մխիթարն է որ հիմնեց։ Եվ անոր բարիքը ավելի մեծ եղած է մեզի համար, քան ինչ որ շատերը կկարծեն։

Մեթոդի, հստակության, կարգավորության պակասը ամենեն զգալի և ամենեն ծանր թերությունն է, որ ի հայտ կուգա քաղաքականությանն ինչպես և գրականությանը մեջ մեր ժողովրդին, որ, ինչքան ալ միշտ մղված ըլլա դեպի արևմուտք, Ասիացիի տարտամութենեն ու թանձրութենեն շատ բան պահած է միշտ։ Սերտ շփումը, զոր Մխիթար և իր հաջորդներն ունեցան եվրոպական աշխարհին հետ, իրենց փոխանցեց այն մեծ հատկությունը, որով արևմուտքը հաղթեց արևելքին,— մեթոդիկ գործունեության հատկությունը։ Բառարանները, կրոնական ու պատմական գրքերը, հնախոսական ու աշխարհագրական ուսումնասիրությունները, եվրոպական հրաշակերտներու խնամոտ թարգմանությունները, ճաշակավոր ու հմտալից ինքնագիր հեղինակությունները, հայոց հին մատենագիրներու գործերուն կոկիկ տպագրությունը, մեր մեջ կմտցնեին՝ կարելի է ըսել առաջին անգամն ըլլալով՝ այդ մեծ ու բեղուն նորությունը կանոնավոր, գիտակից, ներհուն աշխատության, զոր արևմուտքը սորվեցուց Մխիթարյաններուն և, զոր անոնք իրենց հայրենիքի եղբայրներուն սորվեցուցին։

Մեթոդիկ գործունեության, կանոնավոր, գիտակից աշխատության այդ ձգտումն է որ Մխիթարի և հաջորդներուն գործը ավելի կատարյալ և հստակ կկացուցանե քան Ե. դարու և ԺԲ դարու հայ մտավորականներուն գործը. Հայր Արսեն և Հ. Էդվարդ Հյուրմյուզ շատ ավելի լայն չափով մը արևմտյան մտածումն ու գեղեցկությունը ներմուծած են հայ մատենագրության մեջ, քան Ե. դարու բոլոր թարգմանիչները մեկանց, որոնց ճիգը, կրոնական մտահոգութենեն տիրապետված, միակողմանի և սահմանափակ է եղած հարկավորաբար, մինչդեռ Մխիթարյաններն ամբողջ Արևմուտք բացին. հայ մտքին առջև՝ իր հին ու նոր ամեն տեսակ ճոխություններովը։ Զամչյան, որ միևնույն հայրենասիրական ձգտումով ու ծրագրով վերսկսած է Խորենացիին գործը, անշուշտ շատ ավելի ընդարձակ, բազմատարր ու լիալիր ձևով մը կատարած է զայն, և արդի հայությունը եթե խրոխտ անցյալի մը զավակն ըլլալուն գիտակցությունն ունեցած է՝ ատի կպարտի ոչ թե ուղղակի Խորենացիին, որուն պատմությունը վերջին ժամանակներու մեջ բանասերներու ուսումնասիրության նյութ ընծայած է ավելի՝ քան ժողովրդին մեջ ուղղակի կարդացված, այլ Զամչյանի գործին և անկից ծնած բազմաթիվ հայոց պատմության դասագրքերուն։ Գալով «ուսումնասիրություններու», մեր բոլոր հին գրականության մեջ հազիվ քանի մը հատ կարելի է գտնել, որ այդ անունին կարենան արժանանալ. Մխիթար Հերացիին, Անանիա Շիրակացիին գիտական աշխատություններեն, Մխիթար Գոշի դատաստանագրքեն, Երզնկացվույն Քերականութենեն, և կարգ մը բժշկարաններե ու սրբազան գրքերու մեկնություններե զատ, ուրիշ ոչինչ թողած են մեր նախնիք, բայց եթե բանաստեղծական ներշնչմամբ մերթ վսեմին հասնող, բայց հաճախ ձևով անկարգ և անկատար արտադրություններ, պատմական քրոնիկներ՝ մեծ մասամբ խառնափնթոր, տարտամ ու ճոռոմ։ Մխիթարյանները, ուղղակի ազդեցությունը կրելով հույն-լատին աշխարհին ոգվույն, ամեն ճյուղի մեջ լույս ու կարգ մտցուցին. Մխիթար, Զամչյան, Ինճիճյան, Ավգեր, Սոմալ, Բագրատունի, Հյուրմյուզ, Ալիշան հորինեցին առաջին կանոնավոր քերականությունը, բառարանը, պատմությունը, աշխարհագրությունը, զոր հայերն ունեցած ըլլան երբեք, հաստատեցին ամենեն կատարելագործյալ տպարանը, հրատարակեցին նախնյաց գործերը ամենեն խնամյալ տպագրությամբ որ կարելի ըլլար իրենց ատենը, Եվրոպայի դասական հրաշակերտները Հայոց ծանոթացնելու և ինքնագիր

արտադրություններով Հայոց մեջ բանաստեղծական վերածնունդ մը հառաջ բերելու գործը կատարեցին հստակ ու լայն ծրագրով մը որուն պես ոչ մեկ մտավորական խումբ դեռ չէր ունեցած Հայոց մեջ՝ Հայկեն ի վեր։ Մխիթարի տան երկճղումովը՝ աշխատությունը բաժնվելով, Վենետիկի Մխիթարյանք գեղեցկագիտական գործունեությունը շարունակեցին ծաղկեցնել նույն ճամփով, իսկ Վիեննայինները, գերման միջավայրին ազդեցությամբ տոգորված, պատմական, լեզվագիտական, հնախոսական ուսումնասիրությանց կատարմանը մեջ դրին այն ամբողջ գիտական խրոնճմտությունն ու ճշգրտությունը զոր որևէ եվրոպացի գիտուն պիտի դներ։ Բագրատունիի և Հյուրմյուզի թարգմանությունները առանց շովինության որևէ մեղադրանքի արժանանալու կարելի է Պոտլերի և Լքոնտ տը Լիլի հանճարեղ թարգմանություններուն հավասար սեպել. Ալիշանի բանաստեղծությանց մեջ կան էջեր որ, մտածումին խորությամբն ու ձևին բարդ ու նուրբ գեղեցկությամբը, Հյուկոյի կամ Պայրընի հավաքածուի մը մեջ պիտի կրնային տեղ ունենալ. Զամչյանի հիշատակարանը վար չի մնար Տիտոս-Լիվիոսի մը գործեն. ու որևէ եվրոպացի գիտնական պիտի չվարաներ ստորագրել Ինճիճյանի, Քաթրճյանի, Այտնյանի, Քարաքաշյանի, Տաշյանի աշխատությունները։— Այդ հստակ ու մեթոդավոր ոգիին շնորհիվն է որ Մխիթարի հիմնած շենքը մնացած է և պիտի մնա միշտ կանգուն, ամուր և կենդանի, հակառակ միջակության փակագիծներու, որոնք չեն կրնար երկար տևել այդքան վեհ ավանդություններով հարուստ տան մը մեջ։

Այդ գործը կատարած են Մխիթարյանք ոչ միայն իրենց հրատարակած գրքերով, այլև ավելի ընդարձակ ու կենսունակ ձևի մը մեջ,— իրենց հասուցած աշակերտներովը։ Պետք չունիմ հոս մանրամասնորեն բացատրելու դերը, զոր կատարած են արդի հայության կազմակերպումին մեջ՝ Պեշիկթաշլյան, Հեքիմյան, Թերզյան, Ծերենց, Մամուրյան, և այլն։ Անոնք հիմնած են հայ թատրոնը, անոնք գրած են ամենեն հղկված ու նրբացած, ամենեն «արվեստագետ» ձևով բանաստեղծությունները, զոր հայերեն լեզուն ունեցած ըլլար մինչև իրենց օրը, զարդացուցած են վեպը ու լրագրական քրոնիկը, ռոմանթիկ գրականությունը ծանոթացուցած են հայոց՝ գեղեցիկ թարգմանություններով։ Մխիթարյանց աշակերտներն են դարձյալ, որ գլխավոր նախաձեռնությունն ունեցած են Միացյալ Ընկերության՝ այսինքն մերօրյա ամենեն կարևոր հայ կազմակերպություններեն մեկուն՝ հիմնարկությանը։ Եվ իրենց դերը անհուն է թրքահայ հասարակության բարքերուն եվրոպացման մեջ. եվրոպացիներե անջատ ապրող հայոց զանգվածին մեջ, Եվրոպայեն հասնող, դաստիարակությամբ ու հոգվով բոլորովին եվրոպացած այդ երիտասարդները, իրենց կաթոլիկությանը պատճառովն ալ սերտ հարաբերության մեջ՝ եվրոպացի տարրին հետ, մեծապես նպաստած են, իրենց հանրային գործունեությամբն ինչպես անձնական կյանքովը, եվրոպական ձգտումներու, կենցաղավարության և ճաշակի տարածմանը։

«Արվեստագետ», ու «եվրոպացի», ահա ինչ որ եղած են Մխիթարյաններն ու իրենց աշակերտները։ Մեր թրքախառն բարքերուն — մանավանդ պոլսահայոց բարքերուն — թանձր գռեհկությանը մեջ, անոնք ազատության և գեղարվեստի մթնոլորտի մը մեջ զարգացող ազգերու հոգին, ոճը, ձևերը բերած են։ «Դյուցազնական» տարրը մտցուցած են անոնք մեր մեջ։ Մեր հին մատենագրությունը մեծ մասամբ ողբ մըն է. նոր ժամանակներու մեջ, ԺԹ. դարու սկիզբը, հայերը, Մխիթարյաններեն դուրս, թթ. դարու ոգիզբը, հայերը, Մխիթարյաններեն դուրս, գրեթե ուրիշ բան չէին արտադրած, բայց եթե ծթռած բանակռիվներ, վարներ ու նոց ծաղրածություններ ու տափակ վիպասանություններ. Մխիթարյանք, առաջին անգամ ըլլալով, հնչեցուցին՝ հայ լեզվով՝ այն առնական շեշտերը զոր Հոմեր, Վիրգիլ, Սոփոկլես արձակած են արևմուտքի մեջ. Մխիթարյանք առաջին հայերը եղած են, որ դյուցազներգությունն ու ողբերգությունը մտցուցած են հայ մատենագրության մեջ, այսինքն գրականության երկու ազնվագույն ու վեհագույն ձևերը. լալկան հայերենը իրենց մատներուն տակ շեփորի գոչյուններ, սլաքի շկահյուններ, սուրի շաչյուններ արձակած է. Զամչյան, իր հոյակապ գրովը, ցույց տված է մեր նախահայրերը հոոմեացիներու հոգին ու լեզուն զգեցած. Բագրատունին «Հայկ դուցազն»-ով ուզած է մեր նախնիքը մեզի պատկերացնել «Իլիական»-ին քաջերուն համանման. Ալիշան՝ Վարդանը, Տրդատը, Աշոտ Երկան»-ին քաջերուն համանման. Ալիշան՝ Վարդանը, Տրդատը, Աշոտ Երկաթը երգած է պողպատե տողերու մեջ. Պեշիկթաշլյան, Թերզյան, Հեքիմյան իրենց դյուցազնական խաղերովը՝ մեր ժողովուրդը ընտելացուցած են այն արի զգացումներուն, այն խրոխտ լեզվին, այն հանդուգն արարքներուն, որոնք Ալֆիերական, Քորնեյլական կամ Հուկոյական անձնավորություններուն հատուկ են։ Եվ ի՞նչ սիրուն նորություն դարձյալ, անկաշկանդ ու բացարձակ գեղեցկամոլությունը զոր սիգաբար դրոշած են Բագրատունիներն ու Հյուրմյուզները. մեր պարկեշտամոլ, կրոնամոլ, ավելի ճիշտ կեղծամոլ բարքերուն մեջ, անոնք Վերածնության արվեստագետ-կրոնավորի իրենց հոյակապ տիպարը կանգնեցուցած են։ Այդ վեղարավորները, որ առանց տող մը ջնջելու մեզի տված են Հոմերոսն ու Վիրգիլն ու Միլտոնն ու Ովրատիոսը՝ իրենց խոհական ինչպես և հեշտական էջերովը, որ սերն ինչպես Հայրենիքը, աստված ինչպես և անոր արարածներուն գեղեցկագույնը՝ կինը՝ երգած են առանց որևէ հիմար ամոթխածության, ըմբռնելով որ գեղեցկին պաշտամունքը ամեն նյութ

կարբաղործե, այդ իրենց սքեմին տակ արևոտ ու վարդափայլ հոգի մը սնուցանող երգիչները՝ վերանորոգ երիտասարդություն, քաջություն ու շնորհ են բերած մեր քիչ մը պառված ու կքած ժողովրդին։

Մխիթարյաններու «կաթոլիկության» հանգամանքը հիշեցի. անհրաժեշտ կնկատեմ ծանրանալ ատոր վրա և ատոր բաժինը ճշտել Մխիթարյանց ճիգերուն բեղմնավորմանը մեջ։

Մխիթարյանց մասին խոսող հայերեն—լուսավորչական հայերեն—շատերը, նույնիսկ զանոնք ներբողած ատեններին՝ ծամածռություն մը կպահեն միշտ անոնց կաթոլիկությանը համար. պետք չէ մոռնալ այն Պալսո տեսակ մը վայրենիները, որոնք Պեշիկթաշլյանին իսկ գործը պաշտպանելու համար Մխիթարյանց դեմ գրեցին։ Ինչպես ասացի, Մխիթարյանց մասին խոսող հայերեն—լուսավորչական հայերեն—շատերը, նույնիսկ զանոնք ներբողած ատեններին՝ ծամածռություն մը կպահեն միշտ անոնց կաթոլիկությանը համար. պետք չէ մոռնալ այն Պալսո տեսակ մը վայրենիները, որոնք Պեշիկթաշլյանին իսկ գործը պաշտպանելու համար

***

Անշուշտ, ըսել չեմ ուզեր թե Մխիթարյանք ամեն բան ըրած են արդի հայության վերակենդանացման մեջ, և թե առանց իրենց՝ հայ ժողովուրդն այսօր բացարձակ խավարի մեջ պիտի թավալեր՝ իր անցյալին անգիտակ և իր լեզուն կորսնցուցած։ Ոչինչ ավելի անախորժ է արդեն քան փքուն ինքնահիացումը որով կարգ մը արդի պզտիկ Մխիթարյաններ հայ ազգության տարամերժ ազատարարի և վերածնիչի դերն իրենց տանը կվերագրեն. հայ ժողովուրդը, տարօրինապես ճկուն, դիմացկուն և մշտակենդան, որ դարերե ի վեր իր ինքնությունը պահած է՝ առանց Եվրոպայի մեջ կեդրոն մը ունենալու, անտարակույս պիտի կարենար նորեն, նույնիսկ առանց Մխիթարյաններուն, ուղղակի ազդվելով եվրոպական հոսանքեն, որ այս դարուս ողողեց ամբողջ արևելքը, արթննալ իր բարոյական թմրութենեն, վերականգնել իր լեզուն և իր գրականությունը. բայց այդ զարթումը առանց Մխիթարյաններուն՝ ավելի դանդաղ պիտի ըլլար, վերականգնումի ճիգը ավելի խարխափուն, անստույգ ու տաժանելի։ Մխիթարի տունը դյուրացուց ու կանոնավորեց հայ ազգին ճիգը,— և հոտ է իր արժանիքը։

Մխիթարյանց գործը շատ մեծ է, բայց ամբողջ գործը չէ, անոնց հետ զուգահեռաբար, Պոլիս-Իզմիրի հայ լուսավորչական մտավորականներու գործունեությունը, և մանավանդ ռուսահայ գործիչներու դերը, ահագին տեղ ունի արդի հայության բարոյական վերականգնման մեջ։ Զամուրճյան, Միսաքյան, Գրիգոր Օտյան, Ոսկանյան, Հարությունն Սվաճյան, Պարոնյան, Դուրյան, Չիլինկիրյան, Կոստանյան, Տետեյան Պոլսո և Իզմիրի մեջ, Աբովյան, Նազարյան, Նալբանդյան, Բարխուդարյան, Ռաֆֆի, Արծրունի, Քամառ-Քաթիպա, Քերոբե Պատկանյան, Մկրտիչ Էմին՝ Մոսկվայի և Թիֆլիսի մեջ, կատարած են գործ մը, որ ոչ նվազ կարևոր է, քան Մխիթարյանց գործը, և ուրիշ տեսակետով մը ավելի իսկ կարևոր։ Մխիթարյանք, վանքի մարդիկ, գրքի մարդիկ, ժողովրդեն և անոր եռուն, բաբախուն կյանքեն անջատ, հարկավորաբար պիտի ունենային՝ գլխավորապես՝ «գրքի» գործունեություն մը. Մոսկվայի, Պոլսո, Թիֆլիսի և Իզմիրի գործիչները, ժողովրդին մեջ ապրած, կրոնական կամ վարդապետական որևէ կապե զերծ, եվրոպական քաղաքակրթությունն ընդունած՝ ոչ թե կղերական, գիտական, աշխատանոցական սահմանի մը մեջ լոկ, այլ իր ամենեն կենսախայտ ու «նոր» ձևին մեջ, կատարած են գործ մը ավելի կենդանի, ժողովրդին ամբողջական պետքերուն ավելի գոհացում տվող. Մխիթարյաններուն[1] գործը ընդհանրապես՝ «գիրք» կհոտի, և բնականաբար կձգտի միշտ դեպի հինը, դեպի դասականը, և երբեմն նույնիսկ, ինչ որ միևնույն բանը չէ, դեպի սնամեջ հռետորականը. Բագրատունիները, Հյուրմյուզները, Ինճիճյանները, Ալիշանները Հայաստանը երգած են՝ առանց զայն տեսած ըլլալու, առանց մտահոգություն ունեցած ըլլալու երթալ անձամբ զայն ճանչնալու, և պետք չէ մոռնալ որ աշխարհաբարին անխուսափելի տիրապետումը չեն ըմբռնած. Ալիշան՝ իր այնքան սիրուն «Հուշիկները» գրելու ատեն՝ «աղտոտ քուրջի կտոր» անվանած է աշխարհաբարը, և «չուզելով» է որ աշխարհաբարով գրած է այդ էջերը, որ սակայն, «Նահապետի երգեր»-ուն հետ, իր ամենեն կենդանի ու հրապուրիչ արտադրություններեն են։ Թիֆլիսի, Մոսկվայի, Պոլսո և Իզմիրի մտավորականներուն գործը «կյանք» կհոտի. անոնք հաստատած են բուն կապը, կենդանի կապը, ժողովրդին ու գրագետներուն միջև, անոնք կազմակերպած են մեր արդի լեզուն, մեր արդի գրականությունը՝ իր արդի ձևին մեջ—վեպը Ռաֆֆիով, լրագրությունը՝ Արծրունիով, Հարություն Սվաճյանով, երգիծանքը՝ Պարոնյանով, իմաստասիրական գրականությունը՝ Միսաքյանով, «նոր» բանաստեղծությունը Դուրյանով և Քամառ-Քաթիպայով և այլն։

Բայց Մխիթարի տունը միշտ կպահե իր «առաջնության» արժանիքը։ Ան է որ առաջին ջահը բարձրացուցած է, ԺԸ. դարու սկիզբեն իսկ, հայ ժողովրդին վրա համատարած ծավալող խավարին մեջ, երբ մեռելություն կտիրեր Մոսկվա ինչպես Պոլիս, Թիֆլիս ինչպես Իզմիր։ Բոլոր մյուս կեդրոններն այդ ջահին սրսկած պայծառութենեն ազդված են իրենց առաջին սթափմանը մեջ. Աբովյան, հմայված Մխիթարի տանը հրապույրեն, քիչ էր մնացած որ Ս. Ղազարու վանքն երթար՝ միաբան ըլլալու. Մեր բոլոր այն բանաստեղծները որ հայ անցյալը երգեցին, Զամչյանեն ազդված են՝ ուղղակի կամ անուղղակի կերպով. Միսաքյան պաշտող մըն էր և հետևող մը Հյուրմյուզներուն և բագրատունիներուն։ Զամուրճյան պատկառանքով կարտասաներ Մխիթարյանց անունը. Դուրյան իր վարպետները կանվաներ Ալիշանն ու Պեշիկթաշլյանը և իր Վարագի վանքին խորեն, Խրիմյան Հայրիկն իր գրական առաջին փորձերը «Բազմավեպին»

---

1 Հոս Մխիթարյան ըսելով կակնկարկեմ միայն «վանական» գործիչներուն. իրենց Մուրատ Ռափաելյան վարժարանին մեջ հասուցած աշակերտներուն գործը, թեպետ միշտ «դասական», «գրական» երանգ մը կպահե, արդի կյանքին, ժողովրդական գործունեության հետ սերտ կապեր ունեցած է հաճախ, և նույնչափ արդյունքն է Պոլիս-Իզմիրի Միջավայրին ու տեղական գործիչներու ազդեցությանը որչափ Մխիթարյան վանքին ներգործությանը։

կղրկեր իր սքանչացումին հետ, ու «Հրավիրակ Այրարատյան երկրին»-ն ու «Հրավիրակ արքայության երկնից»-ը կգրեր՝ հետևելով Վենետիկեն բխած դյուցազներգական մատենագրության։

Ով հետո, Մխիթարյանք ունեցած են արվեստի սերը, կատարյալին, ւրբացյալին, հղկվածին ձգտումը, ճաշակի մտահոգությունը,— այնպիսի աստիճանով մը և ձևով մը, զոր հայ ժողովուրդը միշտ շատ հզորապես ներշնչված ու խորազգաց, բայց միշտ քիչ մը «պաշը-պոզուք»՝ արտահայտությանը մեջ, երբեք չէր ունեցած, բացի մեկ քանի ոսկի բացառություններե, ինչպես Եզնիկը, Եղիշեն, Լամբրոնացին, և այն մեծ արվեստագետները, որ Աստվածաշունչին և Ոսկեբերանին գործերուն հայերեն թարգմանության հրաշակերտը արտադրեցին։ Մինչև ԺԹ. դարու կեսը, հայերեն լեզվով (հին հայերենով) երևցած ամենեն անթերի և խնամված աշխատությունները, Մխիթարյանց գործերն են եղած. ռուսահայ ու թրքահայ գրագետներու գործերը, հաճախ կգերազանցեն Մխիթարյանց արտադրությունները՝ կենդանության, նորության, ինքնատպության կամ անմիջական օգտակարության տեսակետով, բայց ոչինչ կարելի է գտնել անոնց մեջ, որ այնքան «կատարյալ» ըլլա և այնքան նուրբ, այնքան «Եվրոպական», որքան Բագրատունիի և Հյուրմյուզի թարգմանությունները, Ալիշանի «Հարսներգ»-ը, Պեշիկթաշլյանի գրաբար եղերերգները։

Այն պահուն ուր Վենետիկի միաբանությունը կտոնե իր մեծ հիմնադրին հոբելյանը, այդ միաբանությունը դժբախտաբար չունի այլևս այն դիրքը, այն հեղինակությունը, զոր ուներ ասկից հիսուն տարի առաջ. այսօր, Մխիթարյաններեն դուրս կատարվող հայկական գործունեությունը՝ իր ամեն ճյուղերուն մեջ՝ ավելի կենսունակ, ավելի շահեկան և ավելի հզոր է, քան այն զոր Մխիթարյանք կշարունակեն կատարել. հայությունը Եվրոպային ծանոթացնելու, Հայոց անցյալը հետզհետե ավելի մանրամասն ու ճշգրիտ կերպով հայոց ճանչցնելու, եվրոպական քաղաքակրթությունը հայոց մեջ տարածելու, և հայ մատենագրությունն ու լեզուն կատարելագույն ու նրբագույն ձևի մը հասցնելու ճիգը այսօր ավելի տեղի կունենա Մխիթարյաններեն դուրս քան անոնց ձեռքով. և Մխիթարյաններն իրենք են, որ այսօր կկրեն իրենցմե դուրս կատարված այդ գործունեության ազդեցությունը։

Բայց այս բոլորը բնավ երբեք արգելք մը պիտի չըլլա անշուշտ որպեսզի հայ ժողովուրդը ամբողջությամբ իր սրտին բովանդակ երախտագիտությունն ու գորովը բերե թափե Ս. Ղազարու վանքին գողտ՝ սեմին վրա, այս հուզիչ ու մեծ հոբելյանին առթիվ, որուն մեջ կտոնվի երկու դարու հսկա գործ մը և այդ գործին վսեմ հեղինակը, հայ ցեղին ամենեն հզոր զավակներեն մեկը, Մխիթար։

Խրիմյան Հայրիկը որոշեր է էջմիածնա միաբանության կողմեն Եվրոպայի Հայոց առաջնորդ Յուսիկյանի Գևորգ եպիսկոպոսը դրկել Վենետիկ՝ իր ձեռագիր մեկ կոնդակովը, և ըսվեցավ նույնիսկ թե հավանած է եղեր Ս. Ղազարու միաբանության հայտնած փափագին գոհացում տալով՝ հոն դրկել, հոբելյանի հանդեսին համար՝ Սեանա վանքին Աստվածածնա հինավուրց պատկերը, որուն առջև Մխիթար աստենով աղոթեր է և, ըստ սրտաշարժ ավանդության մը, Աստվածածնին խրախուսիչ ձայնն է լսեր։ «Նոր Դարը»—խստիվ քննադատած էր Հայրիկը՝ նվիրական պատկեր մը Հայաստանի մեկ վանքեն հանելու և փոսթայով կաթոլիկ միաբանության մը ոտքը դրկելու որոշումը տված ըլլալուն համար. եկեղեցական պատշաճության տեսակետով, «Նոր Դար»-ին դիտողությունը իրավացի էր, և Հայրիկը ետ կեցավ իր որոշումը գործադրելե։ Բայց ամենայն Հայոց կաթողիկոսին կողմեն Մխիթարի հոգվույն հաճույք պատճառելու այս բուռն ձգտումը, որքան ալ ծայրահեղ ձև մը զգեցած ըլլա, աղվոր է և հուզիչ, և մեծապես պատվաբեր կաթողիկոսին ազատ և գորովալից սրտին։ Սուգի ու դառնության այս օրերուն մեջ, պետք է ուրախաբեր ձայնի մը պես ողջունել էջմիածնեն եկող այդ հայրական հզոր խանդաղատանքի ողջույնը, ազգայնության մեծ գաղափարին ներքև այլևս բացարձակապես ջախջախվող կաթոլիկ ու լուսավորչականի անիմաստ ու զզվելի վեճին վերևեն, դեպի Վենետիկի տունը, որուն բովանդակ հայ ժողովուրդը հավիտյան շնորհապարտ պիտի ըլլա, որովհետև այն դարավոր ստրկության մը մեջ լցրճված մեր ցեղին վրա գեղեցկություն սփռեց։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Ա.

Ազգերը հավաքական էակներ են. իրենց ընդարձակ ու կնճռոտ կյանքը ունին. կծնին, կաճին, կկռվին, կերազեն, կգինովնան, կթմրին ու հանկարծ նորեն կարթննան, կմեռնին իսկ ու վերստին կծնին։ Այդ խորին ու բազմադիմի կյանքը ուսումնասիրելու համար, պետք է ամենեն ավելի նայվածքը սևեռել այն էական բջիջներուն վրա, որոնք ազգերուն շինվածքին գերագույն մասը կկազմեն, անոր ուղեղը,— այսինքն մտքի մարդերուն։ Անոնց կենդանության կամ ընդարմացման համեմատ՝ ազգը կկայտառանա կամ կլխկի. անոնք կկատարեն հարությունները խորհրդ-

դավոր գործը, անոնք կուտան ազգին իր կենսունակության գիտակցությունը, և երբ անոնք լռեն, ազգը կչքանա։

Ազգին բոլոր անգիտակից սկզբնական խլրտումը դեպի կյանք, հողը պաշտպանող հերոսներուն ճիգերը, արվեստը ուրվագծող, օրենքը հիմնարկող, ճարտարագործությունը հաստատող մարդոց փորձերը այն ատեն իրականություն կստանան և ճշմարիտ ամբողջություն մը կկազմեն, երբ կբարձրանա ձայնը, որ ազգին հոգին կերգե և երգելովը անոր ձև մը, մարմին մը, վերջնական կերպարանք մը կուտա։ Լատին աշխարհին քայքայումեն հետո, երկայն ու տաժանելի վերակենդանացում մը սկսավ. այն մեծ էակը, որ հռոմեական պետությունը եղած էր՝ կբաժնվեր, մեկ քանի նոր անհատականություններու ծնունդ կուտար, որոնք Ֆրանսիան, Սպանիան և Իտալիան եղան։ Այդ նորածին ազգերը այն օրն իրենց գոյության զգացումն ունեցան, երբ «Շանսոն տը Ռոլան»ը Ֆրանսացի քաջերուն ներբողը հնչեցուց, երբ սպանիացի երգիչներուն Ռոմանսներն կաստիլյան արությունը պանծացուց, երբ մանավանդ Դանթե մը և Փեթրարքա մը, անկերպարան թոթովումներեն հանելով, մեկ հարվածով կատարելության հասցուցին լեզուն, արվեստը, հայրենիքի գաղափարը, Իտալիան ամբողջ։ Հակառակ ամենամեծ ջախջախումներու և կազմալուծմանց, պետք չէ հուսահատիլ ազգի մը գոյութենեն, երբ աղետքեն հետո, տաք մոխիրներուն մեջեն անցնիլը կտեսնվի աշուղին, իր քնարին հետ, որ հին քաջությունները կհամառի մրմնջել։

Մեր մեջ, Աբովյան գլխավոր հիմնադիրներեն մեկը եղավ նոր հայության։ Տոնելով Աբովյանի մահվան հիսնամյակը, հայ ժողովուրդը իր բարոյական զարթնումին մեկ մեծ թվականը տոնած կըլլա։

Մխիթար (Աբբա) առաջին քարը դրավ, եվրոպական հողի վրա հաստատելով բազմարդյուն միաբանությունը, որ ստրկության մեջ թուլցած ժողովուրդ մը սթափեցուց, գեղեցիկ և ազատ անցյալը վերակենդանացուց, գրականությունը վերսկսավ, Եվրոպան ճանչցուց հայուն և հայը Եվրոպային։ Մխիթարյանց գործը ավելի արևմտյան հայոց մեջ տարածվեցավ, թեև արևելյան հայոց ալ առաջին շարժումը այդ կեդրոնական մղումեն կբխի։ Ռուսահայոց առաջին գրողները, ուսուցիչները, անոնք որ գրաբար մատենագրություն մը վերսկսան էջմիածնի շուրջն ու մինչև Պարսկաստան ու Հնդկաստան, Վենետիկի մեծ վառարանեն կստանային իրենց կրակը։ Նույն ինքն Աբովյան, ինչպես կգրե իր նամակներեն մեկուն մեջ, Մխիթարի կենսագրությունը կարդալով է, որ հրայրքն ունեցած է մարդ մը, գործիչ մը ըլլալու. մինչև անգամ փափագած է Վենետիկ երթալ և միաբանության մեջ մտնել. որոշած էր Տաճկաստանեն երևվան եկած քահանայի մը հետ Պոլիս մեկնիլ և անկից Վենետիկ. չնչին

դիպված մը զինքը արգիլեց, դերձակը ժամանակին հագուստները չհասցուց։ Այդ դիպվածին կպարտինք Աբովյանը։ Վենետիկի վանքը մեծ միաբան մը պակաս ունեցավ. բայց հայությունը վաստկեցավ նոր գեղեցկություն մը, ռուսահայ գրականության հիմնադիրը։ Եվ աղեկ եղավ։ Աբովյան լրացուց ինչ որ Մխիթար պակաս թողուցած էր։ Մխիթար և Մխիթարյանք գրաբարը զարգացուցած էին, հին պատմությունը ուսումնասիրած էին, Եվրոպայի հին ու նոր մեծ գրականությունները ազգին ծանոթացուցած էին և դասական ոճով հայ գրականություն մը սկսած էին, ձևով ավելի եվրոպական քան զուտ բնիկ հայկական, ինչ որ արևմտյան հայք, Պոլսո ու Իզմիրի մեջ, շարունակեցին հետո։ Աբովյան ժողովուրդին ձայնը եղավ. ուզեց լույսը տանիլ խոնարհ խավերուն մեջ, որոնք հեռու մնացած էին բարձր գրականութենեն՝ սակավաթիվ զարգացյալ դասակարգի մը միայն մատչելի, Աբովյան ժողովրդին, ամբողջ ժողովրդին խոսեցավ, ժողովրդին լեզվովը, ժողովրդին վրա։ Ինքը նոր հայերենին կյանքը հաստատեց, և առջի փորձեն իսկ հաղթանակը տարավ, որովհետև իր գործը կատարեց գրական հրաշակերտով մը, մինչդեռ Թրքահայոց մեջ հաղթանակը ուշացավ, որովհետև առաջ վիճաբանություններն սկսան և ճշմարիտ աշխարհաբար կենդանի գրականություն ետքը եկավ։ Ասոր համար է, որ Աբովյան արժանի է ոչ միայն մեր երախտագիտությանը՝ այդ դժվարին գործը առաջին անգամ կատարած ըլլալուն (1), այլ մեր հիացմանը միանգամայն, որովհետև զայն կատարեց շատ հանճարով և շատ սրտով։

Աբովյանի գործը անոնցմե է, զոր անկարելի է ամբողջապես և իրապես հասկնալ առանց արտադրողին կյանքը մոտեն ճանչնալու։ Գործը բացատրելու համար անհրաժեշտ պայման մըն է մանրամասնաբար ուսումնասիրել կյանքը, որ անոր ծնունդ տվավ, և որ ինքն իսկ արդեն ապրված քերթված մըն է։

Բ.

Աբովյան ծնած է 1804 ին, Երևանի նահանգի Քանաքեռ գյուղը, այն շրջանին՝ երբ արդի ռուսական Հայաստանը պարսկական լուծին տակ էր։

[1] Այդ գործը կվերագրեմ Աբովյանին, գիտնալով հանդերձ թե Ս. Նազարյան և Մ. Նալբանդյանց որքան կարևոր մաս մը ունեցած են անոր մեջ, նույնիսկ այդ երկու գրագետներն են, որ ռուսահայ ճշմարիտ աշխարհաբարը կազմակերպած են, քանի որ Աբովյան ռամկախառն հայերեն մը գործած է իր արտադրության մեծ մասին մեջ, բայց առաջին քարը Աբովյանն է դրած, ամենեն կարծր ու կենսական ճիգը ան է կատարած, և վերջնականապես հաջողած։ Մյուսներուն ըրածը լրացուցիչ աշխատություն մը եղավ։

Զավակն էր նահապետական մեծ տան մը, ուր հայ ընտանիքը տոհմական հինավուրց ավանդությունները պահպանած էր։ Բացարձակապես հայ մթնոլորտի մը մեջ է, որ կկազմվի Աբովյանի զգայնության առաջին խավը։ Բայց անմիջապես շուրջը ավանդության, գորովի, հավատքի այդ մթնոլորտին, դուրսը, ամբողջ հայ երկրին մեջ, Պարսկին թաթը կծանրանա։ Քմահաճ ու վայրագ սարդարներու ձեռքը խաղալիք դարձած, հայ ժողովուրդը, արհամարհված, նախատված, կեղեքվա՛ծ տիրող ցեղեն, քուրջի պես կկոխոտվի ու կբզկտվի։ Աբովյանի մանկությունը քստմնելի հիշատակներով սարսռացած է։ Իր ծայրահեղորեն զգայուն խառնվածքը, այդ կրկին ապավորությամբ տոգորված, կանուխեն ամբարեց այդ մեծ գորովն ու այդ մեծ ատելությունը, որոնց երգիչը պիտի ըլլար։

Աբովյան կբաղձար եկեղեցական ասպարեզին նվիրել ինքզինքը։ Մխիթարին պես, որ իր իդեալն էր, կամ Ներսես Աշտարակեցիին պես՝ որուն ժամանակակիցն էր ու հիացողը։ Հինգ-վեց տարի էջմիածին, վանքը ուսում առավ։ Հետո Թիֆլիս եկավ, ուր Ներսես այդ միջոցին հիմնած էր Ներսիսյան դպրանոցը, որ ռուսահայոց բարոյական զարգացման մեջ այնքան կարևոր դեր մը խաղացած է։ Քանի մը տարի մնաց հոն։ Այդ միջոցին (1826) պարսկա-ռուսական պատերազմը կսկսեր։ Պարսիկները զարհուրելի կոտորածներ կընեին հայ գյուղերուն մեջ, լեռներն ապաստանած հայ քաջեր կկռվեին հայ զորապետներով առաջնորդված, ռուսական բանակը կջախջախեր պարսից զորությունը և Երևանա նահանգը կգրավեր։

Աբովյան այդ օրերուն իր ծննդավայրը գնաց վայրկյան մը, և ականատես եղավ ահեղ տեսարաններու, զորոնք հետո պիտի նկարագրեր։ Թիֆլիս դառնալուն, տեսավ այնտեղ հաղթական մուտքը Աղասիին, այն արի գյուղացիին, որ երկար ատեն լեռնե լեռ թափառելով սարսափ ձգած էր պարսիկներուն մեջ — և զոր իր վեպին դյուցազնը պիտի ըներ. Աղասի անձամբ պատմած էր անոր իր կյանքն ու արկածները, և ցույց տված էր իր ոսկորները, որոնք կռիվներու մեջ կոտրտած էին և զոր ծրարով կպահեր։

Աբովյան բարձրագույն կրթություն մը առնելու կմտածեր միշտ. միջոցները գտնել կուզեր հզոր ու բարձրորեն գիտակից գործիք մը դառնալու, որպեսզի կարենար սկսիլ բարոյական ընդարձակ ու ամուր գործունեություն մը։ Պատերազմը ավարտած էր։ Հայրենիքը խաղաղած էր ռուսական զորության տիրապետմամբ։ Բարեպատեհ հանդիպում մը իր երազին իրագործումն ապահովեց։ Գերմանացի դասախոս մը, Բարրոդ, Տորբատի մեծ համալսարանեն Կովկաս եկավ, Արարատ լեռան կատարը վերելք մը փորձելու մտքով։ Ուղեցույց մը կփնտրեր. Աբովյան ներկայացավ, մեկտեղ գացին Հայաստան ճամփորդել և Արարատի վերելքն ըրին. Աբովյան հիացուց Բարրոդը հայրենի հողին իր ունեցած մանրակրկիտ հմտությամբը, և անոր ներշնչեց ամենախորին համակրություն մը։ Դարձին Թիֆլիս, հայտնեց անոր իր փափագը։ Բարրոդ հանձն առավ Աբովյանին ծրագիրը հաջողցնել. Ս. Պետերբուրգ երթալուն, հանրային կրթության նախարար Լևինին դիմեց, և քանի մը տարվան ամսաթոշակ կապել տալու խոստումը ընդունեցավ։ Եվ Աբովյան մեկնեցավ Տորբատ (1830) անսահման ուրախությամբ և խանդավառությամբ։

Հինգ տարի անցուցած է հոն, և այդ գերմանական միջավայրին մեջ, ասիացի կրակոտ շինականին կյանքը տեսակ մը սրտաշարժ վիպասանություն է։ Բարրոդ որդեգրած էր Աբովյանը, իր տունը կպահեր զայն, և ամբողջ ընտանիքը կգուրգուրար անոր վրա. համալսարանին բոլոր ուսուցիչները խանդաղատանքով կպաշարեին զինքը. հետաքրքրական առարկա մըն էր այդ արևելցին, իր հրապուրիչ, կրակոտ դեմքովը, իր խանդավառ հոգիովը, իր կես վայրենի ու ջղուտ բնավորությամբ։ Այդ անհատին մեջեն գերմանացիները ամբողջ ազգ մը կտեսնեին։ Աբովյան անտաշ, բայց չափազանց ուշիմ և եռանդուն էր. արագորեն սորվեցավ գերմաներեն ու գերմանացոց պես խոսիլ սկսավ քիչ ատենեն։ Ամեն բան լավ կըմբռներ, և վերին աստիճանի հզոր զգայնություն մը կցուցներ, անհուն եռանդ մը զարգանալու, պատրաստվելու ապագա գործին համար։ Գերմանացիները Աբովյանին վրայեն հայությունը սիրեցին. կըմբռնեին, որ Ասիո մեջ խրած այդ տարրը եվրոպական տարր մըն է, քաղաքակրթության կարող։ Եվ Աբովյանին կրթությունը խնամած ատեններին, ամբողջ ազգ մը ձեռվընուն մեջ կաղապարել կզգային։ Եվ հայ ցեղին համար իրական հիացումով համակված, ամեն ջանք կընեին, որ Աբովյան հայ մնար, կպնդեին, որ երբեք չլքաներ իր ազգային եկեղեցին ու լեզուն, իրեն միմիայն նպատակ ըներ զանոնք ավելի պայծառացնել։ Անոր ամեն բան սորվեցուցին, կերակուր ուտելու, շարժելու, վարվելու արտաքին մանրամասնություններեն սկսյալ մինչև ուսումը ընդհանուր պատմության, եվրոպական գրականության, արվեստի և գիտության։ Նույնիսկ հուզիչ մանրամասնություն. թույլ տվին որ Աբովյան մտերմանա ընտանիքին երիտասարդ աղջիկներուն հետ, որոնցմե մեկուն արդեն սիրահարվեցավ մեր ազգությունն հայը, քաջալերեցին անոր տարփանքը, որպես կնոջ ազդեցությունը մեղմացնե անոր բարքերը, անոր նրբություն բերե, անոր արևելցիի կոշտությունը ողորկե. «Զի առաւել մեծաւոր գոլով քաղցր օրիորդին,— կգրե նամակի մը մեջ,— մեղմացին բիրտ բարք իմ, եւ յիրավի այս միայն է միջոց, զի թէ ոք կամի մեղմացուցանել զբարս, որքան մեծանայ նա ծանոթութեամբ և բարեկամութեամբ ընդ կանացի սե-

ոից, այնքան կրքին, պատվականանան բարք նորա»: Հակառակ այս ամբողջ գորովալից միջավայրին, Աբովյան կարոտով կհալեր իր հայրենիքը, իր տունը, իր ազգը հիշելով, բազմաթիվ նամակներու մեջ, զոր գրաբար կգրեր, օր առ օր իր հուզումները, խանդերը, տխրությունները, հավատքներն ու վհատությունները արձանագրած է: Եվ ահա օր մը պարսկաստանցի հայ մը պատահմամբ Տորբաղ կիյնա. գերմանացիները կառնեն զայն խսկույն և տուն կբերեն, Աբովյանին անակնկալ մը ընելու համար. և իրոք հանկարծ արենակից մը տեսնելով հայ տարազով, հայ դիմագծությամբ, Աբովյան ուրախությենեն խելահեղ կըլլա, մարելիք կուգա վրան, անոր վիզը կնետվի, ու կսկսի լալ. «Հուր ջեռու ի փորի իմում,— կգրե,— լսելիք իմ չճաւատացին այսմ, ո՞վ այս նորատեղծ արարած, ո՞վ բերե զիրեշտակս զայս յերկնից ասա...»:

Հոն, գերմանական միջավայրին մեջ է որ Աբովյան կսկսի աշխարհաբարով գրելու կարևորությունը զգալ: Դասախոսներեն մեկը, Վալթեր, կբացատրե իրեն թե ինչու «Աստվածաշունչը» պետք է աշխարհաբար թարգմանված տարածել ժողովրդի մեջ, և Աբովյան այդ օրեն լրջա կատարվելիք գործը:

Տորբաղ անցուցած չորրորդ տարին, Աբովյան Լեհանդիպի ժուքովսքիին, այն ռուս գրագետին, որ ռուսական նոր գրականության, բուն ժողովրդական, ազգային, կենդանի ռուս գրականության կարապետներեն մեկը եղավ: Ժուքովսքիի տեսակցությունը Աբովյանի հետ՝ խորին տպավորություն կթողու մեր բանաստեղծին վրա: Այդ վայրկյանին կնշմարե հայ ժողովրդական գրականությունը սկսելու գաղափարը: Աբովյան կսորվի ֆրանսերեն, գերմաներեն, կփորձե թարգմանություններ ընել Շիլլերեն, կպաշտե Փեթրարքան, կհետևի երաժշտության, կսորվի նույնիսկ արհեստներ, կերակուր եփելու, հաց թխելու եղանակը: Կուզե ամբողջապես պատրաստված մարդ մը ըլլալ, ամեն կերպով ծառայելու համար իր ազգին:

Եվ այսպես հինգ տարիներ կանցնին Տորբաղի մեջ, աշխատության, հուզման, երազանքի, խանդի տարիներ. Աբովյան հիացումով ու գորովով կընդունի իր գերմանացի ուսուցիչներուն, բարեկամներուն ձեռքեն՝ քաղաքակրթության սնունդը. իր երազն է զայն փոխադրել իր ազգին. «Ա՞յսպես քաղցր են գերմանացիք,— կգրե իր հիշատակարանին մեջ,— ո՞հ, երանի թէ և այսպես քաղցրասցին ազգք մեր, եւ ես ոչ մեռայց, մինչև տեսից զայս...»: Տխուր չէ մտածել այսօր, թե դարուս սկզբին այդ վսեմ Գերմանիան, որ այսքան ազնիվ խանդաղատանքով հայ ցեղին զարգացումը պատրաստեց, հիմա, այլափոխված, հրեշային խանութպանության եսական հոգի մը զգեցած, թողուց անտարբեր՝ հազարներով

հայու կառորվիլը, և հիմա կգրկե իր քայլերը, ավերակներուն մեջեն, Քրիստոսի գերեզմանին ուխտագնացության կատակերգություն մը խաղալու:

Հայրենիք դառնալով (1836), Աբովյան իսկույն կդիմե Էջմիածին. որոշած է կրոնավոր ըլլալ, և այդ ճամփով, զոր լավագույնը կնկատե, ուսում ու քաղաքակրթություն տարածել ազգին մեջ: Կուզե նոր, եվրոպական ոգվով գպրոց մը հաստատել Էջմիածնա վանքին մեջ, ուր լուսավորյալ եկեղեցականներ և ուսուցիչներ պատրաստվին:

Առաջին քայլին խսկ, խեղճ աղան կբախի զզվելի նախապաշարումներուն, ավանդական արգելքներուն, իր ազգությանը մեջ ամբացած ժողովրդի մը ամբողջ համառ չար կամեցողությանը: Աբովյանի բերած նոր ուժին դեմ կգավակցին բոլոր հնամոլ, բորբոս, խավարշտին մտքերը, կաթողիկոսն ալ կանսա զրպարտություններուն, և Աբովյան մերժում կգտնե, որովհետև զինքը կհամարին ապականված, օտարացած հայ մը, գերմանացած, բողոքական դարձած հայ մը:

Սիրտը ճմլված, Թիֆլիս կդառնա:

Հոն կհանդիպի նույն ատելությանց, նույն հալածանքներուն. իր սուր ու ցավագին զգայնությունը, հայրենի բարքերուն հետ այս առաջին ու բիրտ բախումեն՝ վտանգավոր գրգռության մը կհասնի և մահացու տխրության մը մեջ կձգե զինքը: Կհիշե պարսից լուծին տակ գեռ երեկ իր ցեղին քաշած տանջանքները, և աղիքները կգալարվին. կտեսնե թե ռուսին զորությամբը փրկվելով, ազգը հիմա որքան լայն ասպարեզ ունի զարգանալու, և անոր ցուցուցած դանդաղությունը, թանձրությունը, խավարամոլությունը զինքը կխոցոտե: Ինքզինքը միս-մինակ կզգա զարհուրելի դժվարությանց հանդեպ: Բայց չի հուսահատիր: Թիֆլիս կճգնի պաշտոն մը գտնել. ազգային վարժարանին մեջ իրեն գործ տալ չեն ուզեր, միշտ նույն տիմար առարկությամբ: Ցավով կստիպվի ընդունիլ կառավարական դպրոցին, նահանգային վարժարանի մը մեջ, ուսուցչի պաշտոն, զոր կառավարությունը սիրով կհանձնե իրեն իբրև կարող անձի մը: Կառավարությունը նույնիսկ կմիջամտե կաթողիկոսին մոտ և կառաջարկե, որ եկեղեցական ձեռնադրվի այդ հմուտ, եվրոպացի՝ հայը. առաջարկությունը չընդունվիր:

Բայց չբավականանալով կառավարական դպրոցին մեջ տեսչի և ուսուցչի պաշտոնով, Աբովյան կուզե անպատճառ ուղղակի շփում ունենալ իր ազգին հետ, հայ, զուտ հայ գործունեություն մը սկսիլ. Թիֆլիսի մեջ մասնավոր բանսիան մը կբանա, և կընդունի բազմաթիվ հայ տղաքներ, իր բոլոր աշակերտները, որոնցմե շատերը կարևոր մարդիկ եղած են հետո, աբանչացմամբ կպատմեն անոր եղբայրական, գորովալից,

խանդավառ ուսուցչությունը. Աբովյան հոգին պատրաստած է իր տղոցը, իր անձը անոնց հաղորդած է։ Օտարներ, ինչպես Վակներ ճամփորդը, կամ Պոտենշդետ, զմայլված կվկայեն այն հառաջադիմությունը, զոր տեսած են այն տղոց վրա, այն դյուրությունը, որով անոնք կխոսեին ու կգրեին ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, թաթարերեն, վրացերեն և հայերեն. նորագույն մանկավարժական մեթոդները ի գործ կդներ. անոնց մարմինք, միտքը և հոգին միանգամայն կրթել կջանար։

Աբովյան, ուսուցչի գործունեության հետ հայ երկիրը և հայ ցեղը Եվրոպացոց ճանչցնելու գործն ալ շարունակեց կատարել. Վակներ, Հակոդհաուզեն ճամփորդները առաջնորդեց Հայաստանի մեջեն դեպի Արարատ, և Պոտենշդետ գերման քնքուշ բանաստեղծին, որ Կովկաս եկած էր արևելյան ժողովրդական երգեր հավաքելու, տվավ Երևանի նահանգին հայկական, վրացական, չերքեսական երգերեն լավագույնները, որոնցմե օգտվելով է, որ ան գրեց իր զմայլելի արևելյան բալլադները։

1839ին, Թիֆլիսի գերմանական գաղութին մեջ, Աբովյան ճանչցավ աղջիկ մը, Էմիլիա Լոոզե, սիրեց զայն, և որոշեց ամուսնանալ։ Դժվարությունները, և կղերականներուն մեջ տեսած թույլ ու հետադեմ ոգին զինքը պաղեցուցած էին եկեղեցական ասպարեզեն, և կուզեր հիմա ազատ ապրիլ և իբր ազատ մարդ ծառայել ազգին։ Գերմանուհին խորապես սիրեց Աբովյանը, և կարգվեցան։

Աշխատությունները, ամուսնութենեն հետո, բազմապատկվեցան։ Աբովյան կուզեր ամեն բան փորձել, ամեն բան ձեռնարկել։ Դպրոցական գրության մեջ, արդեն գրաբարին տիրապետությունը սկսած էր խախտիլ, իր տղոցը համար աշխարհաբար քերականություն մը պատրաստեց. ընթերցման համար շարադրեց ռամիկ լեզվով առակներ, զրույցներ, հանելուկներ, աղոթքներ։ Կիսափագեր տպագրել այդ բոլորը, որպեսզի ժողովուրդն ալ կարդալու բան մը ունենա, ընթերցման սեր ստանա, իր թմրութենեն ելլե։ Փափագը չկրցավ իրականացնել։ Զքաջալերեցին իր ձեռնարկը։ Ոչ ոք պետք եղած շնչին գումարը տվավ տպագրելու համար։ Ընդհակառակը, գեշ աչքով կտեսնեին այդ նորության փորձերը։ Աշխարհաբարը՝ այդ ատենի հայերուն համար բողոքականի լեզու էր, հայերեն չէր։

Խորին թախծություն մը կուգար կծանրանար Աբովյանին վրա։ Ինքզինքը մխիթարելու համար, և իրականացնելու համար միանգամայն իր տենչանքներուն ամենեն սիրականը, կքաշվեր պարապ ժամերուն, ու կգրեր իր հրաշակերտը, «Վերք Հայաստանի»-ն, որով հիմը կդներ ռուսահայոց, և թերևս ամբողջ հայոց նոր գրականության։ Իր դառնացած, գրգրված, բռնկած հոգին կհովահարվեր մենության մեջ հղացված այդ էջերով, ուր հայուն տառապանքը կնկարագրվեր ամենեն կսկծալի շեշտովը, որ լսված ըլլար երբեք, և ուր կերգվեին հայ քաջերուն սխրագործություններն ու ներբողը զանոնք ծնող հինավուրց ցեղին։

Իր մեկ մեծ սփոփանքն ալ իր աշակերտներն էին, որոնք զինքը կպաշտեին, հակառակ դուրսը տիրող հակակրություններուն։

Հակակրությունները սաստկացան, թշնամիներու ոտնձգությունները, նախանձորդներու դավերը զինքը զզվեցուցին։ Տրտմությունը աճեցավ իր հոգիին մեջ, զինքը խեղդելու չափ.— «էսպես բաները մտածելով,— կգրե «Վերք Հայաստանի»-ին հառաջաբանին մեջ,— օրս ու ումբրս մաշվել էր։ Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մաճու տամ։ Թող լսողը չհավատա, ամա էս ցավն էնպես էր սիրտս առել, որ շատ անգամ գժվածի պես ընկնում էի սար ու ձոր, ման գալիս՝ մտածում, էլ եդ լիքը սիրտս տուն գալիս»։

Ստիպվեցավ Թիֆլիսը թողուլ ու հեռանալ։

Անգամ մըն ալ գնաց իր ծննդավայրը, Քանաքեռ, քիչ մը ատեն հոն անցուց, հետո եկավ հաստատվեցավ Երևան քաղաքը, ուր նահանգական դպրոցին տեսուչ կարգվեցավ,— նորեն կառավարական վարժարանի մը մեջ գտնելով հյուրասիրություն, նորեն ամեն ազգե ուսանողներ ունենալով դիմացը,— քանի որ, հակառակ իր սրտի բաղձանքին, իր ազգը չէր տված հարկավոր շրջանակը այդ մեծ առաջնորդին՝ որպեսզի զուտ հայ գործունեություն մը ունենար։

Երևանի նահանգային դպրոցին մեջ ալ, Աբովյան իր մանկավարժական սիրուն մեթոդովը, իր քաղցր, աղնիվ բնավորությամբը, իր հմտությամբն ու Գոգիներ վարելու կարողությամբը ջերմապես սիրվեցավ աշակերտներեն։ Հոս կուզեմ հիշել. պ. Տեր-Կարապետյանի հեղինակած Աբովյանի կենսագրությենեն մեկ քանի տողեր, որոնք գողտրիկ մանրամասնություններով կպատկերացնեն մեզի Աբովյանն իբրև ուսուցիչ։

«Հանդիսավոր օրերին, տոներին, հավաքում էր աշակերտներին դրպրոց, բացատրում էր օրվա նշանակությունը, ապա փող էր տալիս հատակավորներից մի քանիսին որ գնան միրգ առնեն, իսկ ինքը մյուս աշակերտների հետ միասին դպրոցական ճանապարհորդություն էր կատարում դեպի մոտիկ այգիները կամ կարկաչահոս Զանգուի գեղեցիկ ափերը... Այգիների մեջ փոքրիկ ծառեր տեսնելիս — բույսեր նկատելիս, անմիջապես դրանց մասին էր խոսում, գյուղատնտեսական զանազան հարցեր էր շոշափում և ապա պատվիրում էր, որ յուրաքանչյուրը մի հատ ճանե, որպեսզի ուսումնարանի բակում իրենց մարգերի մեջ տնկեն։ Աշակերտները բաժանված էին խմբերի, յուրաքանչյուր խումբ մի մարգ ուներ,

որտեղ ծաղիկներ էին ցանում և ծառեր տնկում: Աբովյանը սովորեցնում էր պահելու եղանակը, խնամելու միջոցները, որոնք ինքը գիտեր և լսել էր ուսուցիչներից:

Ավելի հարմարավոր և գեղեցիկ օրերին տանում էր աշակերտներին Զանգուի մեջ լողանալու, նախօրոք տրված պատվերներով: Աշխատում էր, որ սպարտացիների նման յուր բոլոր աշակերտները լողանալ սովորեն:

Զմեռ ժամանակ, տոներին, նույնպես չէր թողնում որ աշակերտները պարապ անցկացնեն. հավաքում էր զպրոց և կրկին միրգ բերել տալով ուրախացնում էր. ապա զանազան զվարճալի պատմություններ էր պատմում, խրատներ կտար հեռու կենալ մոլությունից, շռայլությունից: Բոլորը հափշտակված լսում էին նրան:

Եվ կերևակայեք այս ամենուն հրապույրն ու ազդեցությունը այնպիսի շրջանի մը, ուր մեր ազգային վարժարաններուն մեջ ֆալախան միահեծան կթագավորեր։

Ամբողջ Երևան քաղաքին մեջ Աբովյան գտավ ջերմ համակրություն և հարգանք։ Ամեն խնջույքներու զինքը կհրավիրեին իբր բանգետ և ազնիվ մարդ և կխնդրեին որ խոսի։ Այդ միջոցին է, որ գերմանացի նշանավոր ճամփորդ Աբիխը եկավ Երևան և Հայաստան ճամփորդեց, Աբովյանի հետ, ինչպես նաև Պոտենշդեռը, զոր Աբովյան իր հորենական տունը ալ տարավ և որ ատով առիթ ունեցավ մոտեն ճանչնալ հայ նահապետական տան պարզ ու մաքուր բարքերը, զոր նկարագրած է խորին զմայլումով։

Աբովյանը, այսպես, միջազգային շրջանակներու, աշխարհաքաղաքացիական դպրոցներու մեջ գործելով, ավելի ընդարձակ դեր մը կատարած եղավ, մանկավարժության առաջին մեծ վերանորոգիչը դարձավ ամբողջ Կովկասի մեջ. իր ռուս, վրացի, չերքեզ, թաթար, ինչպես հայ աշակերտները հավասար պաշտումով կսիրեին զինքը և կհարգեին։

1844ին, Ներսես Աշտարակեցի կաթողիկոս կընտրվի ու Պետարքիայեն էջմիածին կերթա։ Աբովյան, որ սքանչացողն էր այդ մեծ հոգվո ու նկարագրի մարդուն, ուրախությամբ լեցվեցավ այդ լուրն առնելով և իր առաջին բաղձանքը նորեն արթնցավ։

Ատենն մը ի վեր պզտիկ կգաներ իր շրջանակը, կնեղվեր, կուզեր ավելի մեծ, ավելի վեհ գործունեություն մը ունենալ, իր անձը ամբողջ նվիրել ազգին, նորեն իր առջի ձգտումին կդառնար. կուզեր կրոնավոր ըլլալ։ Ներսեսի կաթողիկոս ընտրվելովը, պահ մը կարծեց որ իր փափագը ապահովապես պիտի կատարվեր։ Դիմեց անոր, և խնդրեց, որ իրեն ներվի ամուսինը թողուլ և եկեղեցուն ու ազգին նվիրվի։ Ներսես, որ Աբովյանի ուսուցչական գործը կճանչնար և կգնահատեր, չուզեց զանի հանել իր տեղեն, և մերժեց անոր առաջարկը։ Ատոր վրա, մելամաղձոտությունը, որ միշտ տիրող հանդամանքը եղած էր Աբովյանին, ծայրագույն սաստկացման մը հասավ։ Դյուրագրգիռ, ջլախտավոր, տխրամած մարդ մը դարձավ։ Տարօրինակություններ սկսավ ընել, երբեմն կերթար կառանձնանար երկար ատեն, երբեմն հանկարծ լացը կբռներ, իրեններուն հետ եղած ատեն ժամերով լուռ կմնար, գիշերները կլուսցրներ. առաու մըն ալ զինքը անհայտացած գտան։

Կարծողներ եղած են, թե կառավարությունը, Աբովյանը վտանգավոր գործիչ մը նկատելով, անհայտացուցած էր զայն։ Աբովյանի մահվան այդ բացատրությունը, որ տարածված է մասնավորապես թրքահայոց մեջ, անտարակույս սխալ է. ռուս կառավարությունը այդ շրջանին՝ հայերը սիրաշահելու ետևե էր, և երբեք մտքեն պիտի չանցներ անհայտացնել մարդ մը, որուն ուղղակի համակրություն ցուցուցած էր միշտ և որ արդեն անվնաս էր իրեն համար, որովհետև բարոյական վերանորոգիչ մըն էր միայն, և նույնիսկ օգտակար, որովհետև խանդավառ ռուսասեր էր, հավատացող թե Ռուսիո վահանին տակ հայությունը պիտի կենդանանա և բարգավաճի։ Երևանի թուրքերեն մեկի կնոջը հետ հարաբերություն ունենալն իմացված էր։ Ասի ձրի ենթադրություն մըն է, շատ մը տարակուսական մանրամասնությանց վրա հաստատված։ Եվ կուզեի, որ ադ մեկնությունը վերջնապես ջնջվեր, որոհետև Աբովյանի կյանքին ամբողջ հոյակապ միություն ունեցող գույնը պիտի ավրվեր, պիտի գտնվկանար այդպիսի վախճանով մը։ Ամենեն հավանականը այն է,— և իրեն ժամանակակից Ս. Նազարյանցն ալ այդ մեկնության կհանգի,—որ Աբովյան իր անհագ ու վիթխարի տենչանքներուն տակ ճզմված, տգիտության ու նախապաշարման մեջ թաթխված ամբողջ ազգ մը միմիայն իր բազուկով վերանորոգելու ճիգեն ջախջախված, հայրենասիրական միստիկականության տագնապի մը մեջ՝ գացած վերջ ալած ըլլա իր կյանքին, խորխորատի մը մեջ, կամ նույնիսկ Զանգի գետին մեջ՝ զոր անմահացուցած էր իր ամենեն կրակոտ էջերով։

Իր ամբողջ կյանքին ջղային ընթացքը, իր վերջին օրերուն մթին դյուրագրգռությունը և կասկածելի առանձնացումները այդ բացատրությունը կհաստատեն։ Եվ այդ ցավագին ու վսեմ վախճանը ամենեն տրամաբանական ու ներդաշնակ ավարտումը կըլլա սևեռված գաղափարի մը հիվանդությամբը շարունակաբար ցնցված այդ տրտնջավոր կյանքին։

Գ.

Աբովյանի կյանքեն թերևս կարելի ըլլա ինքնին գուշակել անոր գրական գործը, նախատեսել այն ոգին, որ զայն կլեցնե։ Ինչ որ կարելի չէ գուշակել, այն ջեշտը, այն գույնը, այն ջերմությունն է, զոր այդ հրաբուխ-մարդը դրած է իր էջերուն մեջ, և որ իրն է, ի՛րը միայն։

Այդ գործը ընդարձակ է. կան այնտեղ գրաբար ոտանավորներ ու ճառեր, դյուցազնական բանաստեղծություններ, ռամկական լեզվով առակներ, վեպիկներ, նամակներ, երգեր, վեպեր, ցեղագրական աշխատություններ, բայց գործին սիրտը իր մեծ վեպն է. «Վերք Հայաստանի»-ն։ Թող ինծի չվերագրեն որևէ շովենություն՝ զոր անկարող եմ ունենալու, եթե ըսեմ, որ այդ վեպը, իր տեսակին մեջ, իր նմանը քիչ ունի՝ ամեն ազգի, ամեն ժամանակի գրականություններուն մեջ։ Ժողովրդական դյուցազներգություն մըն է ան, ուր ժողովրդին կյանքը կբաբախե, ու կտառապի ու կհնա, արտահայտված այնպես, ինչպես ժողովուրդը կխոսի, բայց արտահայտված այնպիսի հոգիի մը մեջեն, որ ինքը միանակը ավելի հզոր ու ընդարձակ կզգա, քան ամբողջ ժողովուրդ մը մեկեն։

Վեպը ծայրե ծայր ամբոխ կհոտի. անոր մեծ ալեկոծումներն ունի, անոր մթին վայրագություններն ու անոր վիթխարի խեղճությունը, անոր միամտությունը, թանձրությունն ու զեռումը, անոր վսեմությունն ու անոր գռեհկությունն ալ, անոր մրրիկներն ու անոր շեղջակուտված դանդաղությունն ալ։ Ամբոխին երգն է ան, և գյուղի ամբոխին, ու արևելքի գյուղին։ Տարօրինապես շահեկան երևույթ մըն է արդեն տեսնել թե, ինչպես հինգ տարվան եվրոպական կյանքե ու համալսարանական ուսումնասիրություններե հետո, Աբովյան իր վեպին մեջ կմնա գեղջուկ մը, որուն արձակը ուրիշ բան մը չէ, բայց եթե կուտակումն ու խտացումը հայ հողին բոլոր աշուղի երգերուն, ու նույնիսկ հողին բոլոր աղաղակներուն ու մրմունջներուն։ Բայց ճիշտ անոր համար, այդ գեղջուկը գրագետ և մեծ գրագետ է, որովհետև գիտցած է խտացնել իր էջերուն մեջ, և հզոր համադրությամբ մը ներկայացնել գյուղը, ամբողջ գյուղը։ Անկից ոչինչ պակսեցուցած է, ոչ իսկ հետքերը դարավոր ստրկության, որոնք կմնան իր արտահայտելու, նույնիսկ զգալու եղանակին մեջ. «երեսս ոտքիդ քսեմ», «ոտքիդ փոշին դառնամ», «զուրբան ըլեմ» բացատրությունները ամենեն սովորական ու սիրված դարձվածքներն են այդ ոճին։ Սակայն ազատության ցանկությունը, քաջության տարփանքը հիմարական զորությամբ մը կթոթվեն այդ ողբացող, ճիտը ծուռ, ճակատը հողին քսող բացատրությունները. և հետաքրքրականը այդ աղվոր հակասությունն է

տեսակ մը մինչև վիզը ստրկացման մեջ թաթախված հոգիի, որ վարակված է, բայց չընդունիր, և ազատությունը կբաղձա։

Աբովյանի ոճը բացարձակապես անձնական է, մոլեգնաբար արևելյան ու հայադրոշմ։ Անոնք, որ կկարծեն թե «հայ ոճ մը» գոյություն չունի, թող Աբովյանը մոտեն ուսումնասիրեն։ Գրիգոր Նարեկացվույն հետ Աբովյան ամենեն զուտ ու հզոր ներկայացուցիչն է հայ զգայնության, հայ քնարերգության, հայ բացատրության։ Բառական կուտակումը, կրկնությանց ու անհագ ընդլայնմանց ձգտումը, զգացման ծայրահեղ ջղայնությունը, բացատրությանց վայրենի ուժգնությունը, կոշտության ու փափկության տարօրինակ խառնուրդը, ծանր ու դանդաղ երկարաբանությունը և միանգամայն՝ երբեմն փայլակնահանգույն արագությունն ու փայլը, ահավասիկ ինչ որ կգտնենք Նարեկացիին «Ողբերգության մատյան»ին ու Աբովյանի «Հայրենասերի ողբ»ին մեջ, երկու ամենեն հայ գրքերը, որ ունինք, և որոնցմե միայն պիտի կրնա ծնիլ հայ ճշմարիտ բանաստեղծություն մը։ Անշուշտ Նարեկացվույն ոճը ավելի նուրբ, ավելի կատարյալ է, մինչդեռ Աբովյանինը, օտար բառերով աղարտված, ռամիկ ոգվով տոգորված, նվազ մաքուր է և նվազ ազնիվ, բայց ի փոխարեն Աբովյանի գործը ավելի նյութ, ավելի հույզ, ավելի կենդանություն կպարունակե, ավելի կնճռոտ, ավելի ընդարձակ, ավելի իրական պատկերներով կբռնկի։ Երկուքն ալ հիմարության մոտեցող հուզման մը մեջ գրած են. երկուքն ալ կայրին իրենց նյութովը. «Կենարարին յիշատակու միշտ ճենճերիմ», կաղաղակե հին աղոթողը. և Աբովյան իր «խորովիլը» կկրկնե՝ իր մեջ փրփրող զգացմանց կրակեն։ Երկուքն ալ տեսակ մը ցնորազգացության մեջ երկնած են իրենց գործը. Նարեկացին աստված կարծեց տեսնել օր մը հափշտակության պահու մը մեջ. և Աբովյան— վերջին նախաբանին մեջ կգրե՝ «Հայաստան հրեշտակի պես առաջիս կանգնել՝ ինձ թև էր տալիս»։ Երկուքն ալ իրենց ցեղին զգայնության բարձրագույն արտահայտությունը կներկայացնեն, և այդ արտակարգ խտացման զորությամբը՝ մարդկության մեծ երգողներուն կարգը կրնան մտնել։ Նարեկացին «Աստվածաշունչ»ի քնարերգակներուն կմոտենա, ավելի վրդովիչ, ավելի մրրկոտ, նվազ ստեղծագործ ու նվազ հոծ. Աբովյանի քերթվածը՝ իր լավագույն էջերուն մեջ՝ «Իլիականն» ու «Ծահնամեն» կհիշեցնե, անոնց սկզբնական վեհությունը, անոնց խորին մարդկայնությունը, անոնց երիտասարդ պայթումն ունի հսկա կրքերու. և իր թերություններեն ոմանք իսկ, երկարություններ, կրկնություններ ու խճողում, խնամություն ունին այդ հրաշակերտներուն հետ, «ասիական» թերություններ են, որոնք կնկատվին «Շահնամե»ին մեջ ալ, որոնցմե բոլորովին զերծ չէ, հակառակ Պիսիստրատյանց ձեռքով սրբագրված, հղկված

ելլալուն, նույնիսկ հոյակապ «Իլիականը», որ ասիական հողին վրա երկընված է։ Նարեկացվույն ոճը կհորձանապտուտքի տիեզերավերջի հայտնութենական փոթորկի մը նման, ուր մռայլ ամպեր, գերագույն անձկության մը կուտակումներ, արյունոտ փայլատակներով կպատռտվին, և ուր սասանած մարգկություններուն գետնատարած պապանձումին վերև՝ որոտաձայն կսավառնի սարսափը հավիտենական պատուհասին։ Աբովյանի ոճը իրական մրրիկն իսկ է, ինչպես արևելքի ամառներուն կտեսնենք վրանիս հեղակարծ խուժելը կարմրած երկնքեն, գորշ ու կանանչ ու մանչող անհունածավալ առաձգական գալարատանջ էակը, որ հազար երախներով կպոռա, հազար աչվընեներով կփայլատակ, հազար ոնգունքե փոշի, ծուխ, քար, կայծակ ու արհավիրք կսփռե, աղաղակելով երկինքն ի վեր ցավ մը հսկայական ու մոլեգին, և սակայն իր ամեհի անցքեն անմիջապես հետո, գեռ չփարատած ամպերուն մեջեն կախելով ծիածաններ անուշության, ու հողին վրա, օդին մեջ ձգելով զովություն մը, զոր ճնշողական ու բարբարոս տաքության սպանիչ քամին միայն կրնա ծնուցանել։

«Վերք Հայաստանի»ին նյութը շատ պարզ է։ Գործողությունը կանցնի ռուսո-պարսկական պատերազմին առենը։ Ամբողջ Երևանի գավառը կհեծե ահավոր բարբարոսության տակ, զոր ռուսին առաջխաղացութենեն կատաղած պարսիկները կտեղացնեն հայերուն վրա. առևանգություն, ջարդ, շարշարանքներով սպանումներ, հրդեհում, ավարառություն, եկեղեցիներու պղծում, ամբողջ քամնելի շարքը հրեշություններուն, զոր մահմեդական մոլեռանդությունը կթափե իր գրգռման վայրկյաններուն՝ քրիստոնյա զոհերու վրա։

Մեկ քանի հոյակապ էջերուն մեջ, ուր կնկարագրե Երևանի բերդը՝ իբրև ճիվաղային խորհրդանշանը բռնապետ գազանության, Աբովյան հայ ժողովրդին մարտիրոսությունը կերգե անբաղդատելի ուժգնությամբ.— «Երևանու բերդն, Երևանու բերդն, ա՜խ, որ առավոտը բացվելիս նրա էն լայտան գլուխը մարդի աչքով չէր ընկնում, հենց իմանաս թե դժոխքն ա իր բերանը բաց անում, ատամները դրճտացնում ու իր տպականյալ, թունավոր դառը շունչը շորս կողմը փրփրալով փչում, ցրվում, փոնչացնում, որ կարենա իր ճոտած ադիքների կերած, լափած արգար չանը մարսի, էլի չանգերը դուքարա էցի, էլի հազար ամեղ, արդար հոգի՝ անծամ կուլ տա, իր անկուշտ փորին մատաղ անի։ Աբեզուկը մտնելիս, հենց իմանաս թե Սադայելի ոդիքն ու զավակները, նրա զորքն ու զորապետները ըլին իրանց դիվական խաղը խաղում, իրանց դժոխային ֆեֆն անում ու բրջերի գլխին՝ մեկ կտրած գլուխ էսաեղ էին ոտի տակ տալիս, մեկ անգլուխ լաշ էնտեղ էին կտոր կտոր անում, վրեն թքում,*

ծափ տալիս, ծիծաղում, հռհռում, քրքռում, ու քրով, մզրախով, յա փեռով մեկ մեռած մարմին էս կողմ գլորում, էցի տալիս ու ներքն էցում։ Ճաշվա ժամանակին հենց իմանաս մեկ կրակի սար ըլեր էնտեղ կանգնած. փառ, ծոց՝ տաք քուքուրքով, բոցով լիքը՝ ծխում բորբոքում էր, որ բիրդանքիր հոնչա, բացվի, տրաքի ու ինչ կա չկա տակովն անի, լափի։ Ամեն մեկ բուրջը, ամեն մեկ բաղանը ռանոռով, ջամդաքով, յա անմեղ զոհաստաղներով լիքը, քած խոզի պես՝ հենց իմանաս ծանրացել, փորներն էլ չէին կարում քաշի, էնպես ուտել էին որ բիրադի նաքին, պատռին, կտոր կտոր ըլին։ Մեջդների ոսկեվարաղ գլխներին արեգակի շողքը դիպչելիս, պլպլալիս, հենց իմանաս էն իրանց միջի անսիրտ նամազ անողների անիրենմատնք հոգու շնչով փքված, ուզում էին Աստծուն փառաբանություն, աղոթք անելու տեղը՝ որ երկրին խաղաղություն, դինջություն տա, Սոդոմական կրակն ըլեին, ուզում երկնքիցը վեր ածիլ տան, որ սար, ձոր էրեն, խորովեն, տանով անեն... Երևանու բերդը, Երևանու բերդը, ա՜խ, աչքս դուս գա, քանի քանի ոդոքանելի հայի միս ա կերել, քանի քանի անմեղ հոգի տարիներով շարշարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլելուց, կրակի, բոցի, երկաթե շամփրի, թոխմախի, կրակած քարփշի տաքելուց, համբերելուց ետը, կամ թոփի գյուլլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարաղաչի (1) վրա ա՝ գոռալով, երկինք երկիր աղաչելով, իր միսն ատամներովը կրծելով, աչքերը դուրս տրաքելով, փոթոթվելով, հոգին ավանդել, երկինքը գնացել որ պրծնի էս դառն աշխարքիցը, էն կատաղի գազանների ձեռքից»։

Սանձարձակ ու խուսնամբոխ բանավորին կոխոտմանը տակ, հայ ժողովուրդը, անդեն, սանչավարիվ, անպաշտպան, սարսափին մեջ, կփրոփի գետնամած, մահվան սպասելով։ Բայց կան անոնք, որ չեն ուզեր ոչխարի մահվանը մեռնիլ. անոնք կդիմադրեն, մահու դեմ մա՜ կուտան, լեռները կքաշվին, կմարտնչին. անոնք կհոգնեցնեն պարսիկ ուժը, անոնք կպատրաստեն, կդյուրացնեն ռուս բանակին գործը, որ ան ալ առաջնորդված է հայ զորապետներով, ինչպես Մատաթով, մղված է հայ գործիչներով, ինչպես Աշտարակեցին։ Այդ ապստամբ հողիներեն մեկն ալ Աղասին է, Քանաքեռցի հերոսը։

Բարեկենդանի օր մը, ճիրիտին, պարերուն, խաղերուն մեջտեղը, հանկարծ սերտարին ծառաները կուգան աղջիկ առևանգելու. գյուղին քընքուշ գեղեցկուհիներեն մեկը, Թագուհին կհափշտակեն։ Աղասի, որ ճիրիտ խաղալու վրա է, ճիչերը կիմանա, կվազե, կհասնի, կտեսնի խուժ-

1 Կախաղան։

դուժ տեսարանը, կհարձակի պարսիկներու վրա, սրովը անոնց գլուխը կթռցնե և կազատե Թագուհին։ Բայց այդ վայրկենական հաղթանակը ահռելի աղետքի մը շարժառիթը պիտի ըլլա։ Աղասիին կստիպեն հեռանալ. և նույն իրիկունն իսկ գյուղը արյունը կփաթթվի։ Ամբողջ գյուղը կբզքտվի արդեն սա դժնդակ երկսայրաբանության մեջ, որով խեղճ, խաղաղ, արվեստագործ ժողովուրդ մը ստիպված է ընտրել երկուքեն մեկը, կա՛մ անճոռնի բռնավորներու գարշապարին տակ հլու կքիլ ու լռել կյանքը պահպանելու համար, կա՛մ ափ մը քաջերով դիմադրել և կոտորած առաջ բերել անպաշտպան գյուղերուն վրա,— մինչև գալուստը քաղաքակրթության մեծ ուժերուն, որոնց հետ պիտի հասնի վերջնական փրկությունը։

Աղասին լեռները կքաշվի, կգտնե համաբախտ ընկերներ, և երկայն ատեն սարե սար, ձորե ձոր կթափառի պայքարելով, ահարկու անուն մը կշինե, որմե պարսիկը կդողա, և կմնա անձերբակալելի, անպարտելի։ Արովյան ուզած է Աղասիին մեջ պատկերել իսկական հայ հոգին, այնպես ինչպես ինքը կտեսներ զայն։ Խրոխտ, անձնազոհ, անշահախնդիր, վեհանձն, քաջ տղան է ան, որ զայրույթն ունի, բայց ոչ անգթությունը, որ անվեհեր է, բայց երբեք վայրագ։ Գեղեցիկ է. «նրա սուրաթի բոյը, նրա թուխ թուխ աչքերը, նրա դալամով քաշած ունքերը, նրա անեման, գեղեցիկ պատկերը, նրա գեղեցիկ լեզուն, քաղցր ձենը, նրա լեն թիկունքը, բարձր նակատը և ոսկեթել ճալվերը մարդի խելք էին տանում, տեսնողն մաթ էր մնում, չէր կշտանում։ Սազը ձեռն առածին պես, քարին, փետին շունչ, հոգի, լեզու էր տալիս։ Ղորդ ա, արևն երեսն էրել, քունը փախցրել է, աչա ծիծաղելիս՝ որ աչք ու ունքը չէր բաց անում, ենենց իմանաս վարդ է բաց ըլում, երեսիցը լիս վեր թափում»։ Այնքան ազնիվ է որքան ուժեղ. «Գեղեցիկը բոլոր նրա արևովն էին խնդում, նրա գլխով օրդում ուտում։ Ամենի աչքը նրա վրա էր, նրան էր զովում, նրան օրհնում։ Մեկին մեկ փորձանք դիպչելիս, կամ մեկ դարդ ունենալիս, նա իր գլուխը եդ էր դնում, նրա մուրազին հասնում, բերնի թիրեն հասնում էր, ուրիշին ուտացնում...։ Սիրտն էնքան բարի էր, որ նեղաղ տեղը դուշ էլ չէր սպանիլ, մրջիմը չէր կոխիլ...։ Էնքան ղվարով էր՝ որ ձեռը մեկ տղամարդի գոտիքը չէր գցում, ճավի ճուտի պես բարձրացնում, գլխի ծերն էր հանում, պտիտ տալիս, էլ եդ վեր բերում։ Ձին նի ըլելիս որ ձեռը չէ՛ր բարձրացնում, ասլան ձին կգանում էր, մեջքը դեմ անում, ճինգ մարդ վրա թափեին, բուանց ձեռը կոլորեին։ Դոմշի կամ եզան բողազը մեկ բուռ խփելով էնպես դուրս կտրում, որ թրի ծերը գետինն էր խրվում»։ Գյուղին աղջիկներուն սերը, հպարտությունը, իդեալն է ան, անոնց ամենեն անուշ երգը Աղասիի գովքն է.

Աղասի ջա՛ն, գլխիդ դուրբան,
Դու ես մեր թագն ու պարծանքը,
Աշխարքըս որ բոլոր ման գան,
Ո՞վ կըլի հատդ, դու մեր կյանքը։

Բայց այդ առյուծը իր ծերուկ ծնողքին առջև գառնուկի պես հեզ է, իր գյուղին աղջիկներուն դիմացը կշիկնի ամոթխած։ Թագուհին ազատելեն հետո, երբ կմոտենա աղջկան, որ մարած գետին ինկած է, չի համարձակիր ձեռք դպցնել անոր, «նա ձեռները խաչել, ինքն էլ փետացել՝ մնացել էր կանգնած։ Մոտենար, սիրտ չէր անում, խտտել, ձեռները ճրմռել, աչկաջումը ձեն տալ, երեսին ձեռը խփել, բոլոր, բոլո՛ր չէր կարելի, չունի՞ Թագուհին դեռ կույս էր, ուրիշ մարդի աղջիկ»։ Ու վսեմ տեսարանի մը մեջ, կտեսնենք զինքը, որ հաղթելե հետո պարսիկ պետի մը, արյունռուշտ Հասան-խանին գունդին, Հասան-խանն իսկ բռնելե հետո, զանի իր դաստակին տակը կքամե գետինը, կցուցնե անոր պարտված ըլլալը և թե որչափ ողորմելի է, երբ որ մինակ է, ու հետո կարձակե զայն, չուզելով տկար մարդ մը խողխրդելու վատությունը գործել։ Պետք կա՞ սակայն ավելցնել թե Հասան-խանը Աղասիին վեհանձնությունը կփոխարինե՝ իր ազատումեն անմիջապես հետո քանի մը հայ գյուղ կոտորել տալով։

Լեռներու կարծր կյանքին մեջ իր ըմբոստ աստանդումի օրերուն, Աղասին ճիշտ նույն ազնիվ ու անվախ կորիզը կմնա, որուն պողպատե կուրծքին մեջ ամենեն քնքուշ սիրտը կպահվըտի։ Իր զենքի ու թափառման ընկերներուն համար իր սերն ու անձնվիրությունը սահման չունին. զգալով, որ իր ընկերներեն մեկը, Մուսան, կտառապի սիրովը հեռուն մնացած աղջկան մը, Աղասի իր բոլոր զորգությանքովը կփղձկի. «Ա՛խ, աչքի լի՛ս, որ սրտումդ էդպես դարդ ունիս, ենենց իմանում ես քա՞ր եմ, որ ինձանից բան ես թաքցնում։ Չէ՛ էնպես ես կարծում թե էս իմ խորոված ջիգյարը, որ էլ սաղ տեղ չունի, քո դարդի համար էլ տեղ չի՞ գըտնիլ, քո ցավը չի՞ քաշիլ, էլած շունչս ումբրես քեզ չե՞մ տալ... ե՞րբ կթողամ ձեր մեկի աչքը ցավի, ձեր մեկ մազը թեքվի։ Մինչև ես մեռնեմ ոչ, մինչև ինձ թիքա թիքա չանեն, ձեզ կթողա՞մ որ մեկ դուշ անցնի կենա գլխքներիդ վրա...։ Հազար սար ու ծով մեր մեջն ըլի, նրան կհանեմ, կբերեմ, թաք ըլի՝ դու դարդ չանես, երեսի՛դ մեռնեմ...»։

Հմուտ չէ Աղասին. իր ազգին պատմությունը չի գիտեր՝ բացի քանի մը տարտամ ավանդություններե. բայց այդ ավանդությունները կբավեն, որ ան հասկնա ամբողջ գերազանցությունը իր ցեղին և թե ան արժանի է լավագույն բախտի մը. կատե ու կարհամարհե բռնակալ տիրողները։ Պարսիկ թե Թուրք, այդ «դժոխք, ժանգ, մրրած, կեղտոտ երեսով մարդիկը», որոնք վատ են ուժին դեմ, վայրագ են անզորին առջև։

Իր ցեղին համար ունեցած բնազդական հպարտությունը կաճի, կլուսավորվի և կամրանա, երբ իր թափառումներուն մեջ Անիի ավերակները կտեսնե առաջին անգամ։ Անին, հայուն անցած մեծության սրբազան վկան, իր կուրծքը հուզմունքով կուռեցնե, այդ պալատի ու տաճարի նըշխարներուն առջև պարզմիա գյուղացին հայրենիքի, անկախության գաղափարներուն հայտնությունը կունենա։ Հին թագավորներուն սավերները կելլեն իրեն կիսոին, հին եկեղեցիներուն զանգակները կկարծե լսել... ու մինարեներ կան հիմա ու ավերակները կմնան միայն...

Վտանգե վտանգ, հուզմունքե հուզմունք, այսպես ամիսներ կանցընե Աղասին։ Ոչ մեկ անգամ մահվան գաղափարը գինքը կկասեցնե իր հանգգնություններուն մեջ. կրակին բերանը կնետվի միշտ. բայց երբեմն իր արությունը կթուլանա ուրիշ մտածման մը առջև... շարունակող մտածումը իր խեղճ ալեոր հորը, որ զնդանի մը խորը կփտի, կարոտը իր սիրելի գյուղին, ուր չի կրնար դառնալ, ու կարոտը իր մոր ու իր եղբոր Նազլուին, որոնք հեռուն իրեն ապառելով կհուսին... կարելի չէ երևակայել որտե փրթած էջեր, ինչպես անոնք, ուր կերևան նամակները Նազլուին ու մորը հեռվեն Աղասին ձեռքը հասած... «Աղասի՛ ջան,— կհեծկլտա մայրը գիտվդ փերվան ըլիմ, Աղասի՛։ Ընչի՞ չեմ էս սհաթին կրակ դառնում ինձ էրում, ընչի՞ չի լեզուս չարանում, աչքս խավարում, ընչի՞ չեմ թոզ դառնում որ թալֆի թե քամին բերի, գամ ոտիդ տակին ցրվեմ, սարե սար ընկնեմ, քարե քար, որ իմ երեսը կոխես, օրտեղ որ մտնե գաս, որ իմ աչքը ճանես, որտեղ որ նստես, որ ինձ վրա գլուխ դնես, որտեղ որ քանի մանես, ճանն ըմբրիդ մեռնի, իմ թազավո՛ր, իմ ջա՛ն Աղասի...»։

Ռուսերը կհաղթեն վերջապես և արևելյան Հայաստանին ամենեն կարևոր մասը կփրկվի պարսկական լուծեն։ Բայց Աղասին բախտը չունենար վայելել ուրախությունը հաղթանակին, որուն այնքան նպաստեց. իր ազնիվ զգացումներուն զոհ կերթա, անհամբեր կդիմե, առաջ, գնալի զնդանը, ուր իր հայրը կհեծե շղթաներու տակ, որպեսզի զայն իր ձեռքովը ազատե. ինքը միս-մինակ, պարսիկներու բազմության մը ձեռքը կիյնա, որոնք ճանչնալով իրենցմե շատերը սուգը փաթթող կարիքը, զնդանին մեջ, հոր գիրկը, կխողխողեն։

«Վերք Հայաստանի»ն միմիայն եղերգություն մը ու գյուղացիներգություն մը չէ։ Նոր բարոյական մը, նոր ուղղություն մը, նոր կյանք մը մատնանիշ ընող գիրքն է ան։ Հեղինակը կողքա ժողովրդին հետ, բայց իր եզրակացությունը, զոր տեղ տեղ խոսվբատուքի ձևով կհայտնե ընթերցողին, հուսատու է։ Իրավ, գրքին ենթատիտղոսն է «Ազգ Հայրենասերի», և կարծի ու թշվառության ազիողորմ պատկերներեն հետո, ազգը անհուն վհատության շեշտերով կհնչի երբեմն.

Վա՜յ էն ազգին որ աշխարքումս անտեր ա...

բայց երկու ողբի մեջտեղ, Աբովյան իր հիացումը կերգե—թեպետ կրոնամոլ ձևով մը—հայ ցեղին համառ կենսունակության վրա. «էս սիրտը, էս հավատը, էս հոգին, էս սերն ուներ հայ ազգը, որ բշնամու, զազանի ձեռի՝ երկիր, աշխարհ, ազատություն, թագավորություն, մեծություն, բոլորը, բոլորը կորցրեց, իր հավատին մտադ ավեց, ազգասություն, նոմարություն, գերություն, զարիպություն, տանջանք, չարչարանք, սով, մահ հանձն առավ, որ իր սուրբ եկեղեցին, իր լեզ, լուսավորչադավանությունը ամուր, հաստատ ու անխախտ պահի։ Էս ա հսկայություն, սրտապնդություն, մեծահոգություն, քաջություն, կամաց հաստատություն, հոգու կարողություն ու զորություն, որ աշխարհիս վրա ջրհեղեղիցը դեսը էլա մեկ ազգ մինչև էսօր չի կարաց ու չի էլ կարող ցույց տալ։ Սար ըլեր՝ փուլ կգար, երկաթ ըլեր՝ կհալչեր, կմաշվեր, ծով ըլեր՝ կպակսեր, կցամաքեր, բայց աստվածասեր հայ ազգը մինչև էսօր գերօրինակ հնկայությամբ տարավ բոլորը ու իր անունը պահեց»։

Եվ որքան զարհուրանքով կնկարագրե պարսկին ձեռքեն հայոց կրած տառապանքները, այնքան իր ուրախությունը մեծ է, երբ ռուսին գալուստը կավետե. ռուսին գալուստը Աբովյանի համար վերակենդանացման թվականի մը բացումն է։ «Օրհնվի, կգրե, էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհիը մտավ, ոզլպաշի անիծած չար չանչը մեր երկրիցը հալածեց։ Քանի որ բերեռումը չանչ կա, պետք է գիշեր ցերեկ մեր հաշած օրերը մաքեռնիս բերենք, ու ռսի երեսը տեսնելիս, երեսներիս խաչ հանենք, Աստծուն փառք տանք...»։ *Եվ իրոք ալ, այդ շրջանին, ռուս կառավարությունը ոչ միայն փրկեց հայերը հրեշային կացութենե մը, այլ ամեն ազատություն շնորհեց անոնց նյութապես ու բարոյապես զարգանալու։ Աբովյան կցանկա թոթվել իր ժողովուրդը, իր այդ նոր պայմաններուն, նոր միջավայրին ամբողջ առավելությունն ըզգա, ելլե անմիջապես իր թմրութենեն ու անկումեն, մասնակցի քաղաքակրթության մեծ շարժումին, որուն ահա միջոցներն ունի հիմա հասարդ ըլլալու։ Մատնանիշ կընե վտանգներն ու խոչընդոտները. հակառակ իր խորին կրոնասիրության, կհանդգնի նույնիսկ նշավակել այն մահացուցիչ ազդեցությունը, զոր իր պաշտոնին գիտակցությունը չունեցող կղերը կունենա ժողովրդին վրա, որ երեկ զայն կմղեր պարսկին լուծին տակ անխոսուկ համակերպիլ, և որ հիմա կարգիլե ազգային խոյանքը դեպ ի եվրոպական ոգին։ Եվ Աբովյան ցույց կուտա ճամփան, զոր պետք է բռնել։*

«Անբանացնիլ թուրը կժանգոտի, նամ տեղ ցորենը կրորբոսի... Առաջ մեկ վարիր, նամփեն ֆցիր, մեկ ազգի աշխը բաց արա, դուզ նամ-փեն որն ա, էն նամփովը տար, սար ու ձոր մի՛ ֆցիր, դու նրան ֆո սերը ցույց տուր, տեսնեմ թե նա ֆեզ չի՞ սիրիլ: Ուրիշները մեզ բամբասում են՝ ֆերիֆ չի, մենք էլ ենք մեր ոտիցը մեզ ու մեզ ճոլոլակ ըլում, ֆո բան չի դառնալ, ֆայոց ազգի ջանին դուրբան, մեկ նրա երեխին ուսում տուր, ֆրա էն լուսաթաթախ ֆոգին կրթիր... տեսնեմ թե ջան կտա՞ ֆեզ թե չէ...

«Ձեզ եմ ասում, ձեզ, ֆայոց ֆորահաս երիտասարդ, ձեր անումին մեռնեմ, ձեր արեին դուրբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր ֆավատը դայիմ բռնեցեք: Մեկ դատարկ լեզուն ի՞նչ ա որ մարդ չկարե-նա սովորել: Բաս չէ՞ֆ ուզիր որ դուք էլ գրքեր գրեք, ազգին միջումն անուն թողաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը ֆավիտյանս ֆավիտենից մնա անմահ»:

Պահպանում ու զարգացում հայ ցեղին, հայ լեզվին, հայ գրականության,— մուտքը հայ տարրին եվրոպական քաղաքակրթության մեջ, ահա նամփան, զոր Աբովյանը կցուցներ։ Իրմե ի վեր հայ ժողովուրդը քալեց այդ նամփեն, ու բավական առաջացավ։ Եվ Աբովյան անդին արժանիքն ունի այդ նամփան առաջին ու դժնդակ ճիգով մը բացողներեն մին եղած ըլլալու։ Ռուսահայոց կրթական գործը իրմե կսկսի, և իր քերթվածին մեջ ամբողջությամբ կգտնվին սերմերը անոնց գրականության, որովհետև Պռոշյանց, որ արդեն աշակերտն էր Աբովյանին, Բաֆֆի, Գամառ-Քաթիպա, Արծրունի, ամենքն ալ յուրաքանչյուրն իր ճյուղին մեջ Աբովյանի ուրվագծածն ընդլայնած են։ Եվ եթե ռուսահայ գրականությունը ավելի հայ գույն, ավելի բնիկ շեշտ ունի, ավելի զերծ է հռետորութենե և դասական ազդեցութենե, ատի կպարտի Աբովյանին, որ առաջին հարվածով ճշմարիտ հայ գրականությունը հիմնեց և իրականացուց։

Արևմտյան հայերուն մեջ դժբախտաբար անունով միայն ծանոթ է Աբովյան։ Բաֆֆին, Գամառ-Քաթիպան ու Արծրունին մեր մեջ բավական տարածված են, մինչդեռ Աբովյան կարդացողները մատով կհամրվին։ Ճշմարիտ է, որ լեզվին տեղական հանգամանքը խրթին դարձուցած է այդ գործը մեզի։ Մեր արևմտահայ գրականությունը, ուր ձևը շատ ավելի զարգացած է, քան ռուսահայոց մեջ, ուր եվրոպացումը շատ ավելի առաջ գացած է, բայց ուր հայկական դրոշմը գրողներուն ամենամեծ մասին մեջ քիչ զգալի է, պիտի ճոխանար ու հայանար, եթե Աբովյան մեր մեջ ժողովրդական դառնար։

Այդ ընդհանրացման համար ես անհրաժեշտ կնկատեմ, որ Աբովյանի քերթվածը մեր կանոնավոր աշխարհաբարին թարգմանվի, որպեսզի բնական ու ընդարձակ տարածում գտնե գործը,— ինչպես ֆրանսացիք

ըրած են գավառական բանաստեղծ Միսթրալին քերթվածներուն համար, որոնց փրովանսական բնագիրը քիչերու ծանոթ է, մինչդեռ ֆրանսերեն թարգմանությամբ է, որ ամբողջ Ֆրանսայի և ամբողջ աշխարհիս շրջանն ըրած էն։ Ատով, Աբովյանի ոճը թերևս իր տեղական մասնավոր գույնը քիչ մը կորսնցնե, բայց կշահի ընդհանրանալով։ Այս բոլոր աշխատությունները կսպասեն անձնվեր ու գիտակից ձեռքերու։

Պետք է տարածել այդ գործը, և կյանքն ալ անոր հեղինակին, որ նույնչափ գեղեցիկ է։ Այդ մեծ անձնվերին, այդ անմահ ռահվիրային դեմքը պետք է ընտանի դարձնել ընդհանուր հայության։ Այն կիներուն, որոնք մայր պիտի ըլլան, գեղեցիկ պատկերներ կցուցնեն, որպեսզի նորածինը գեղեցիկության ցոլքին տակ գեղեցիկ ծնի։ Իր մեծ մարդոցը դեմքը պետք է միշտ ներկա ըլլա ազգի մը աչքին, որպեսզի նոր սերունդները, անոնց ճանաչումին տակ, ցեղին շնորհը անկորուստ պահեն։ Ու չեմ գիտեր ավելի գեղեցիկ ու գեղեցկացնող դեմք, քան դեմքն այս դյուցազնական գեղջուկին, որ ամբողջ կյանքին մեջ կաղապարի մը սիրույն մաշեցավ, և որ, հայրենի երկրին ծոցեն տաք տաք ժայթքած, շղթաներեն դեռ կաս-կապույտ ձեռվընները արյունով շաղախված հողին մեջը խրեց ու անով, այդ ցավի ու կորովի հողովը, կանգնեց իր անմոռանալի հիշատակարանը։

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԵՆ ԱՌԹԻՎ[1]

Ռուսահայք որոշած են— եթե անշուշտ Կովկասի մեջ այժմ տիրող երերական պայմանները ներեն—հանդիսավորապես տոնել Աբովյանի հարյուրամյակը։ Այս առթիվ կուզեմ հետագա մեկ քանի նկատողություններով «Վերք Հայաստանի»ի երգչին անզուգական դեմքին վրա անգամ մը ես հրավիրել մեր ժողովրդին հիացական ուշադրությունը։

Այն ուսումնասիրության մեջ, զոր ութ տարի առաջ նվիրած էի Աբովյանին, ջանացած էի իր ուսուցչի, գրագետի և հայրենասերի գործին համայնապատկերը լայն գծերով նկարել և անոր նշանակությունը բացատրել, ու իր գրական արտադրություններեն մասնավորապես «Վերք Հայաստանի»ին վրա ծանրացած էի։ Այսօր պիտի զբաղիմ միայն իր գրականությամբը, որուն դառնալ այնքան քաղցր է, որքան վերայցելելը հրաշագեղ բնանկարի մը։

«Բնանկար» մըն է իրոք Աբովյանի գործը, բնանկար մը տարօրինա-

[1] Տպագրվում է որոշ հապավումներով։

պես ճոխ, հզոր ու երփներանգ, անսպառ աղբյուր բյուրապան տպավորության ու խորհրդածության։ «Վերք Հայաստանի»ն հոն կկազմե տիրական տարրը,— լեռը, ամպերու մեջ կորսված իր ձյունապսակ ու վեհ կատարներով, իր արհավիրքներով լեցուն գահավեժներովը, իր կանաչագեղ ծաղկալից կողերովը, իրմե բխող արծաթափայլ առվակներովը, բոլորը թանձր խավարի մը մեջեն ծագող նոր արևի մը արյունովը գունավորված։ Բայց «Վերք Հայաստանի»ն, որքան ալ ամենեն կարևորը Աբովյանի գործերուն, միակ նշանակալիցը չէ անոնց մեջ. բազմաթիվ, բազմաձև են անոնք, և անոնց ամենեն աննշանին մեջ իսկ հանճարի նշույլ մը կարելի է գտնել. լեռան շուրջը կտեսնես անհուն դաշտավայր մը, հոս՝ արոտ մը քաղցր ու հանգարտիկ, ուր հոտերը կարածին հովվի սրինգով, անդին՝ անտառ մը խորհրդաստվեր, ուր գազաններ կթափառին, հոս՝ ուրվականը հին փլած քաղաքի մը նշխարներուն, այնտեղ՝ պարտեզ մը, ուր մանուկներ կխաղան, անդին՝ հորիզոնին մոտ, բերդի մը շարագուշակ կմախքը։

Ժողովածուն, զոր պ. Տեր-Սարգսյանց հրատարակած է, կպարունակե մեկ երրորդը միայն Աբովյանի երկերուն. մեծագույն մասը կմնա անտիպ, և կամ միայն «Կռունկ Հայոց Աշխարհի» հին ամսագրին մեջ (որ այժմ անգտանելի է) 45 տարի առաջ հրատարակված և արդի սերունդներուն անծանոթ մնացած։ Ասոնցմե է «Զանգի»ն, զոր պ. Տեր-Սարգսյանց կանվանե «Աբովյանի բոլոր գրվածքների թագն ու պսակը». գովեստը ծայրահեղ է (որովհետև «Վերք Հայաստանի»ի մեջ կա ամեն ինչ, որ կգտնենք «Զանգի»ին մեջ և ավելին ալ) բայց կտորը հոյակապ է արդարև, անոր մեջ կտեսնենք խտացած Աբովյանի բոլոր հատկությունները. այդ էջը միայն պիտի բավեր ապահովելու Աբովյանի անմահությունը։ Ռուսական տիրապետությենեն առաջ մահմեդական լուծի տակ ճզմված, խեղդված, զահանդած, սահմռկած հայության սարսափահար ու ցավագին հոգին է, որ կպատկերանա անոր առաջին մասին մեջ սարսռեցուցիչ զորությամբ մը ներշնչման և մրրկաձև ուժով մը արտահայտության։ Երկրորդ մասը կոգե հին ազատ օրերու փառավոր, մխիթարիչ ու վերանորոգիչ հիշատակը ներկային աղջամուղջին մեջ ծիածանի մը պես հանկարծ նշուլող, և վերջին մասը կվառարանե ռուսական զորության գալուստը իբրև փրկության առավոտին ծագումը։

Հետաքրքրական մասնահատկություն մը՝ այդ կտորին երեքձևյան այլազանությունն է, անոր լեզվին առաջին մասը գրված է Քանաքեռի բարբառով, երկրորդ մասը գրաբարախառն աշխարհաբարով, երրորդ մասը զուտ գրաբար. հայտնի է, թե Աբովյանն առաջինն եղած է հայ ազգին մեջ գրաբարի անիմաստ տիրապետության դեմ մարտնչող, աշ-

խարհաբարի իրավունքը պաշտպանող և իր գործերովն իսկ անոր գոյությունն ապահովող, մեր Դանթեն է ան։ Ճիշտ է որ հայերն այնքան դյուրությամբ չընդգրկեցին Աբովյանի բերած նորությունը, ինչպես իտալացիք Դանթեինը. պետք եղավ, որ Նազարյան և Նալբանդյան, Աբովյանեն հետո, բավական ատեն պայքար մղեին վերջնապես հաստատելու համար ինչ որ հիմնած էր Աբովյան (իսկ տաճկահայոց մեջ պայքարը կես դարեն ավելի տևած է, և դեռ հազիվ տասնհինգ տարիե ի վեր է, որ այդ արդյունքը վճռապես ձեռք ձգված է), գործին հիմնադիրը կմնա միշտ Աբովյան։ Բայց որքան ալ զգացած և պաշտպանած ըլլար աշխարհաբարին անհերքելի իրավունքներուն արդարությունը, Աբովյան ապրելով շրջանի մը մեջ, ուր գրաբարը դեռ բացարձակ կտիրապետեր, ինքն իսկ սնած գրաբարով, անոր անդիմադրելի հրապույրովը, տոգորված, կպաշտեր այդ լեզուն, և չէ կրցած ինքզինքն արգիլել զայն հաճախ գործածելե. իր գործերուն գրեթե կեսը գրաբար է գրած, թեպետ պետք է խոստովանիլ՝ բավական անճարակ, անտաշ գրաբար մը, որ այնքան թույլ է, խառն ու անկենդան, որքան իր աշխարհաբարը ուժեղ, կենսախայտ ու բնական։ «Զանգի»ին ամենեն գեղեցիկ մասը թե՛ լեզվական և թե՛ գրական տեսակետով առաջինն է, թեպետ մյուս երկու մասերն ալ զուրկ չըլլան ուժեղ պատկերներե, սեղմ ու տաք բացատրություններե, և այն հրեղեն ներշնչումեն, որ կտորին ամբողջությունը կլեցնե։ Նկատելի է, որ երրորդ մասը «Զանգի՛ իմ Երա՛սխ. Մասի՛ս, Ալագյա՛զ» բառերեն սկսյալ ոտանավոր է գրված, թեպետ «Կռունկ»ին մեջ արձակի պես տպված։

Աբովյան, որ ամեն բանե առաջ բանաստեղծ մըն է, կսիրե, ինչպես արևելքցի աշուղներն իրենց երգախառն քերթվածներուն մեջ, իր վիպական կամ նկարագրական գործերուն արձակը (որ արդեն իսկ էապես բանաստեղծություն է) տաղաչափյալ կտորներով կիտվածազարդել։ Ասոնցմե զատ, ունի նաև բազմաթիվ անջատ քերթվածներ, առակներ, պատմություններ, երգեր ոտանավոր գրված, աշխարհաբար ու գրաբար։ Ասոնց մեջ կցայտեն միշտ երկու հատկություն, որ արդեն Աբովյանի բովանդակ գործին բնորոշ ու տիրական հիմնագծերն են,— այն է՝ պարզուկ բայց սուր, նկարուն ու համեղ երգիծանք մը, և քնարերգական այն հզոր թռիչքը — զոր ոչ ոք հայոց մեջ, բացի Նարեկացիեն և մերթ Ալիշանեն, հավասար չափով ունեցած է։ Քնարերգական զորությունը շատերը տեսած և ներբողած են Աբովյանի մեջ. բայց երգիծական ուժը կարծեմ թե դեռ ըստ արժանվույն նկատված ու գնահատված չէ։

Այդ երգիծական տաղանդը կհայտնվի բազմաթիվ առակներուն, զվարճալի պատմություններուն մեջ, որոնք մեծագույն մասը կկազմեն իր «Պարապ վախտի խաղալիք» և «Նախաշավիղ կրթութեան ի պէտս նո-

բավարժից» տիտղոսներով հավաքածուներուն, ինչպես և «Վերք Հայաստանի»ին խել մը հատվածներուն մեջ։ Առակներուն ու պատմություններուն նյութը հաճախ փոխ առնված է Լաֆոնթենեն կամ ուրիշ օտար առասպելներե, Նասրեդտինի պատմություններե, ժողովրդական ավանդություններե ու զրույցներե, մերթ ալ հնարված է հեղինակեն. անոնց և ոչ մեկը սակայն կարելի է պարզ նմանողությանց կարգը դնել. անոնք այնքան «ստեղծագործություն» են, որքան նույնիսկ Լաֆոնթենի այն առակները, որոնց նյութը Եզոբոսեն կամ Փեդրոսեն առնված է. կբավե օրինակի համար կարդալ «Կաթնի կճուճ»ը որ Լաֆոնթենի «Le pot au lait»ն է, Աբովյան զայն այնքան հայացուցած, այնքան յուրացուցած է, որ մենք կարող ենք հայ գրականության հարազատ և ինքնատիպ մեկ էջն համարել։ Բոլոր կտորներուն մեջ գտնվի խոր դիտողություն, կյանքի հարազատ ըմբռնողություն, տիպարներու կենդանի պատկերացում, և արտահայտելու սիրուն, կրակոտ, սրամիտ ձև մը, լեզու մը ժողովրդական բարբառին ամբողջ կենսավառ հարստություններովը բեռնավոր, տաղաչափություն մը ոչ միշտ ներդաշնակ, բայց հաճախ աշխույժ, թեթև, գողտրիկ։ Ահա սկզբնավորությունը «Պարապ վախտի խաղալիք»ի առաջաբանին.

Գնա՛, իմ խեղճ գիրք, գնա՛ մարդամեջ,
Գլուխը քաշ գցիր, մի՛ նեղանար հեչ։
Ականջդ փակիր, սիրտդ լե՛ն բռնիր,
Ինչ ասեն, խոսեն, տա՛ր ու համբերիր։

Ճամփորդի գլխին շատ փորձանք կգա,
Անձրև, ձին, կարկուտ հազիր համեշա,
Դուման ու կայծակ, շոգ, բուք ու կրակ
Ամեն տեղ կըլին ամեն ժամանակ։

Էսպես բանիցը ով շուտ վախենա
Ու ճամփու կիսիցն վեր կենա ետ գա,
Ոչինչ չի շահվիլ, դատարկ կմնա,
Փորձանքից մարդը՝ լավ չի՛ նեղանա։

Ի՞նչ ես դարդ անում որ վրեդ խոսեն,
Ցա քեզ ծաղր անեն, յա աչքից գցեն։
Ամենքի սրտին դուր գալ չի ըլիլ.
Ամենքի խաթրը ո՞վ կարա առնիլ։

Աշխարքի բերանն ջվալի բերան։
Առակ է ասած՝ ո՞ւմ ասես քո բանն.
Հալբաթ մեկ օր էլ արև դուրս կգա,
Էն վախտ կիմանան թե ուզածդ ի՞նչ ա։

Ավելի ուժեղ և ավելի սուր գծերով կներկայանա Աբովյանի երգիծանքը «Վերք Հայաստանի»ին մեջ։ Նկարագրված բարքերուն ու գծված տիպարներուն ծիծաղելի կողմերը հզորապես, թեպետ անցողակի, արտահայտված են հոն. ամբողջ գործին մեջ հարյուր տեղ կարելի է գտնել ֆրազներ, տողեր, բառեր, որ ի վեր կհանեն դավեշտականին այդ մեծ զգացումը. բայց գրքին առաջին մասին մեջ է որ կգտնվին ամբողջ ընդարձակ հատվածներ, ուր հեղինակին հեգնական հատկությունը տիրականորեն կփայլի. կարելի չէ երևակայել ավելի սիրուն և ավելի ուժեղ երգիծանք մը այդ ատենվան տգետ քահանաներուն, ստրկամիտ գյուղացի տանուտերներուն, քան ինչ որ կգտնենք Աբովյանի վեպին առաջին մասին մեջ։ Տեսեք՝ օրինակի համար՝ սա հատվածը, ուր կարդալ իսկ հպիվ գիտցող քահանաներուն դիմանկարը կգծե. «...Կոպիտ գեղացու վրա ի՞նչ եմ զարմանում կամ ծիծաղում։ Գրի սևն ու սպիտակը ճո՛ էսպես տեղը տեռտերներն էլ բռանց էին ջոկում, ավետարան կարդալիս ճազար անգամ յա շեշմակը (ակնոցը) դզում, յա տիրացուի, մղղսու վրա լարկանում, յա գրակալը դոշներին քաշում, յա գլուխ երես գրքի մեջնումը կորցնում, մեկ պզտիկ մոմ էլ ձեռներն առնում, յա մոնքի գլխին խփում, որ մոմը դուզ բռնի։ Շատ անգամ էլ ո՛ղիանոց ո՛ղի մեկ փիս. անմարս, դժարատամ, գլուխ կտտրող բառ էլ որ չէր ասստ գալի, հենց գիտես թե սատանի թամքը կորավ, շատ կռանալուցը, մոմը մոտ բռնելուցը, յա գիրքն էր էրվում, յա ճրա միրուքը։ Ամա էսպես բառեր վարավուրդ էին արել, մոտանալիս կամ գլխովն էին պատում, կամ մեկ գիրք ասում, մյուսը կուլ տալիս, յա թե չէ սը-ը «աուբ ես» կարդալու տեղ սոխ կամ սխտոր ասում, սը-ը սաղմոս ասելու տեղ դարախ, ու ժամ օրհնողն էլ յա չոռ էր ասում, յա չէր լսում... Թե մեկ վարդապետ էլ պատահում էր էսպես վախտը, աստված հեռու տանի, էշը մնում էր ցեխումը խրված, կարդացողի ոտն ու ձեռը դող էր ընկնում, լեզուն կապվում։ Չէ՛ զարմանալու, ի՞նչ անեն խեղճերը, գեղերումը վարժատուն չունին, քաղաքներումը օրինավոր վարժապետ, ու շատի փորում հինգ օր մանվաս, մեկ այբի կտոր չես գտնիլ»։

Տեսե՛ք նաև սա ծաղրանկարը Քանաքեռի «քեսխուտա»-ներուն (երևելի), որ կիրակի առտու մը եկեղեցիեն տուն կդառնան. «Քեսխուտեմը գալիս ենք, տո՛, տեղ արեք, դրաղ կացեք, ճամփա բաց արեք», ձեն տվեց զգիր Կոստանը, մեկ աչքը բոռ, դունչը ծուռը, էնպես որ միրուքի կես փայը մնացել էր երեսի վրա ցից էլած, խենված, կես փայն էլ բոզազին, չանին կպել, շորացել՝ էնքան խոսացել էր ու հարա տվել։ Թազավորն էլ էնպես ուռած ուռած իր բոշք ու սարեն չէր մտնիլ, ինչպես մեր գեղի իշխանքը իրանց տամ գոմը, թեև շատի հագին այնքան շոր

չկար, որ երկու մանեթի գին ունենա: Ո՛րը մեկ տասը տարվան կտրտված, ֆրֆրված հին յափունջում կոլոլված, որը մեկ հազար տեղ կարկատած, մաշված ֆրդի աբա էնպես էր ուսերին ֆաշել, որ զորդ ա, բերանն ու միրուքը ծածկած ուներ, բայց գոտկի տակից դենը՝ գլուխը ապրի՛, պատրաստած ֆոբաշի շոխի ծլանկները (կտորները) հազար տեղից էնպես էին ճոլոլակ էլած ու ֆամու ձեռին եսիր մնացել, որ փչելիս ուզում էր՝ թե իրանց էլ հետը տանի: Գլխներին հո՛ էնպես գիտես՝ թե ամեն մեկը մեկ սաղ ոչխար ըլեր դրած: էն որ մի ֆիչ շաղ էր և եղալի (հարուստ), ոտն ու գլուխը էլի մի ֆիչ ֆոֆ (կոկ) էր, ու Աստծու տվածիցը շորի հոտ էր գալիս վրներիցը: Սրանց ամեն բանն էլ կարգին էր. լաբշինը թազա, մուֆ մավի դադաֆ փոխանի դրաղները ասղարուր. մավի ֆոբաշի շալ շոխա, կամ եզդու դադաֆ կապա, սիպտակ կտավե կամ շալե գոտիկ, շապկերների յախեն՝ ոռինը մով, ոռինը ֆաբան, արխալղները, զարդ, ա, կարկա-տած էր, ամա շատ որ ըլեր, մեկ տասը, ֆասն տեղ, ավելի չէ, էն էլ ռանգ ռանգ կտորներով, որը կարմիր, որը դեղին, որը զոլ զոլ, էնպես որ շատի արխալուղը հեռվանց հենց իմանաս շալ դաշարի ըլեր, կամ շալ կտավի պոչ: Ամենից գլուխը նրանց բոռանի ֆուրֆն էր, երեսը կարմիր ներկած ինչպես մեկ թուրֆի հինա դրած միրում, նրեսֆ շուներ, ջանումն էլ բաց տեղ չէր մնում, բոլորը ծածկում էր: Փեշերը ու նեղ թևերը բոլորը իշի նոխտի պես ուսներիցը կախ ընկած, գետինն էին հասնում ու դիպած տեղը թամուզ ավելում, հալի շինում. ամեն մեկ ֆուրֆ մեկ թզաչափ մազ ուներ, բայց ա՜խ, շատ արևի ու անձրևի ձեռիցը էն հալն էր ընկել, ներկն ու երեսի ջուրը գնացել, որ հենց գիտես ֆոսոտ ձիու սաղրի ըլեր: Շատի վրա տասը տարվան բոզ ու կեղտ կար: Շատի ուսերն ու ֆամակը էնպես էր ծակծկվել, բուրդն ու մազը դուրս թափել, որ տեսնողը հենց կիմանար թե զարունեվան բրդահան էլած ուղտի կաշի ըլեր: Բազրնի փափախի մորթին էլ հո՛ էնպես էր շալ ընկել ու ծերիցը դուրս թափել, որ մեկ բարակ ֆամի կամ հով փչելիս էլ ամեն մեկ մազը թև էր առնում ու գլխներին պար գալիս: Բայց էլի էնպես մարդի ֆեֆը գալիս էր տեսնելով թե ինչպես տանուտերն ու ֆետխուդեմանց շատը գտակները կոտրել՝ աջու ականջի վրա թեֆել, իրենց հինգ ոչխարանի ֆուրֆը ֆեֆով մեկ էս ուսին էին ֆաշում, մեկ էն, ու բազի անգամ գլխներն էլ հետը տմբացնում էին որ գտակները գժություն չանեն, իրանց շափը ճանաչեն ու դուզ կանգնեն: Բազի անգամ էլ իրար բռնոքի թավազա անելով, կամ մեկ ձեռը մյուսի գոտիկը կամ ճտավը զցած իրանց երեխությունը մտֆերն էին բերել ու շախա անում, իրար բոբրոթում, շվացնում, գոթկացնում, փոթկացնում, ճոթկացնում, մոթկացնում, ու բազի վախտ էլ հրհռում, ֆրֆռում, բրբռում-գրգռում, շատը հո՛ ծիծաղու մեջքի իլիկը

կոտրել էր, էնպես որ ժամիցը ընչանֆ տուն կգային, հենց բոնիր՝ տարի ֆաշեց, էնֆան էին էստեղ, էնտեղ կանգնել ու զրից արել»:

Այս բոլորը մեզի իրավունք կուտան հայկական երգիծանության ալ հայրը նկատելու այդ արտասովոր ստեղծագործը, որ մտավոր գործունեության այնքան բազմաթիվ ճյուղերու մեջ ռահվիրա եղած է հայոց համար։

Կալով քնարերգական զորությանը, որ կարտացոլա Աբովյանի մեջ, ավելորդ կհամարեմ անոր ներբողը անգամ մը ևս հյուսել, այդ մասին զգացած ամբողջ հիացումս արտահայտած ըլլալով նախորդ ուսումնասիրության մեջ։ Այն բազմաթիվ ու այլազան հատկություններուն մեջ, որով օժտված է Աբովյան, քնարերգական ձիրքը ամենեն ուժեղն ու տիրականն է, ան կբոցավառի իր բոլոր գրվածքներուն մեջ, արձակ թե ոտանավոր, բայց մասնավորապես «Վերք Հայաստանի»ին, «Զանգի»ին և իր կարգ մը ոտանավորներուն մեջ։ Այդ ոտանավորները շատ անհավասար են անշուշտ, կան կտորներ, որ պարզապես տկար են։ Ձեմ սիրեր օրինակի համար իր «բայաթի» անվանած քառյակները, որոնք բացի վերջինեն անիմաստ բաներ են՝ ավելի երգվելու համար գրված։ Բայց զմայլելի «աշուղական գրվածքներ» են, թեպետ տկար տողերե և կրկնություններե ոչ զերծ, «Վերք»ին ողբերը մեծ մասամբ, ինչպես և իր մյուս հավաքածուներուն մեջ քանի մը կտորներ, «Աղգասեր մարդը իր մեռնելու վախտը», «Աղասու սրտի տխրությունը». ահա՛ այս վերջինը.

Լուսինն ամպերի միջով լեղ տալով,
Սարերի ծերին շողեր գցելով,
Հազար տերևի, թփի արանքով,
Ոսկու պես ֆոֆռում, փայլում է լուսով։

Մեկ մութը ձորում քաշվել եմ նստել,
Սիրուն աղբերի ջրին ականջ գրել.
Ջորս կողմս հովացել, անուշ հոտ բռնել,
Իմ սիրտն ա միայն խավար մնացել։

Յա՜րաբ, էս սհաթին ո՞ր բարի հրեշտակն
Թևերը փռած երեսիդ, ու փակ
Աչքերդ իր լիսը աշխարքից ծածկել,
Հոգիդ անուշ քուն մտել գինջացել։

Կամ թե չէ դու էլ կանգնել ես դռան,
Ինձ միտքդ բերում, նազու հրեշտակ ջան։
Ի՞նչ կըլեր՝ մեկ հով շունչդ էլա բերեր,
Նրեսովդա տաք ու հոգիս տաներ։

Առավոտն էլի լիսը կբացվի,
Բայց թե արևն էս օր մեր մտնի,
Թող էս չոր քարը գերեզմանս ըլի.
Նազլո՛ւ ջան, մեկ օր է՛լա վրես արի։

Աբովյանի գրաբար գրվածքները, ինչպես ըսի արդեն, ընդհանրապես նվազ ուժեղ են, քան աշխարհաբար գրածները։ Գրաբարը հայտնապես խնամքով ուսումնասիրած է, բայց չի գիտեր զայն վարպետի պես գործածել. գեշ հագնված հագուստի մը պես է իր վրա. «ժողովրդական» մարմինը տակեն կզգացվի, կճմրթկե պատմուճանց։ Ասով հանդերձ, գրաբար ոտանավորներուն մեջ կան աղվոր կտորներ, ձևով ոչ անթերի, բայց շքեղ ներշնչմամբ, ինչպես «Մտածմունք ի տեսիլ Հայրենեաց» քերթվածը։

Բուռն ժամանակին բարձեալ զիր կռան՝
Անխիղճ խստությամբ ի ձեռն ըզմահակ՝
Մանրէ չախչախէ, ի սուղ այս վայրկեան,
Զփափուկ երեսաց երկրի մեր փշացանկ։

Կրկէսք, ամբարտակք, բրգունք հաստարմատք,
Վերի մատիննն, կամ ձեռագործք մարդկան,
Բարձունք երկնահրոսք, լերինք յաղթանդամք
Ի շանթ նորա դառն սուղանին անձայն։

...Ազգաց քաջապանծ հսկայից կաճառք,
Զաւակք-զարմք, ժառանգք ի մոխիր ցնդեալ,
Ցանսանձ նորա մրրիկ մատնեալ ի յաւար
Միոյ վայրկենի կեր լիցին վատնեալ։

Դու միայն տածես նազելի մատամբ
Ի քոյդ գիրկ քնքուշ, ի քոյդ ծոց փափկիկ,
Փնչեալ, բոլորեալ հողածնոյն քրտամբ
Զանզօր ճիռ շնչին՝ Մուսայդ իմ գողտրիկ,

Զինչ այս ձորավայր, այս սուղ կենաց լար,
Մթին, դառնաբնակ, խրզուն, դիւրաբեկ,
Թէ քո սուրբ շնչոյ զեփիւռ կենսարար
Ոչ գորովեսցի զծաղկունս մահաներկ։

Եվ դեռ շատերն իր բանաստեղծություններեն կմնան անտիպ կամ «Կռունկ Հայոց Աշխարհի»ին մեջ հրատարակված։

Պ. Տեր-Սարգսյանց իր Աբովյանի երկերու հառաջաբանի մեջ և պ. Ներսես Տեր-Կարապետյան Աբովյանի մասին իր ուսումնասիրության մեջ («Լումայ» 1897) կհիշեն շատ մը գործեր, ու վերջապես բազմաթիվ նա-

մակներ, ճանապարհորդական նկարագրություններ, տեղագրական և ֆոլքլորական գրվածքներ։

Պ. Տեր-Սարգսյանի հատորին մեջ Աբովյանի ճանապարհորդական նկարագրություններեն միայն փոքրիկ հատված մը կա՝ «Արարատայ վերելքի մը տպաւորութիւնները» գրաբար շարադրված ու մեծապես շահեկան թե՛ կրական, և թե՛ տեղագրական տեսակետով։

Այդ հատորին երկրորդական կտորներուն մեջ իսկ ինչպես են «Խաղարկութիւն մանկանց»ը և «Ֆեոդորայ» միաբար երգախաղը, արժանիքի կայծ մը կնկատվի. «Խաղարկութիւն մանկանց»ը մանկական գրականության առաջին փորձն է, շատ սիրուն կերպով կատարված. ատով Աբովյան ճամփան կհարթեր Աղայանին, որ հետո այդ ճյուղը զարգացուց։ «Ֆեոդորա»ն, որ Աբովյանի միակ թատերական փորձն է (նյութը ռուսական կյանքե առնված և հավանականաբար նմանություն տիկին Քոթենի «Աքսորականք ի Սիպերիա» վեպին), լավ դարձված մելոդրամ մըն է, ժողովրդական անուշ լեզվով մը գրված, և հայ թատերգության նախափորձերուն մեջ արժանի է որոշ տեղ մը բռնելու։

Աբովյանի բազմաձև և ընդարձակ գործին ամենեն հզոր մասը նորեն վիպական արտադրություններն են անշուշտ, որոնցմե մեզի ծանոթ են «Վերք Հայաստանի»ն, «Զանգի»ն, (որ տեսակ մը հավելված է «Վերք»ին և «Օվսաննայ» վիպակը։

«Օվսաննա»ն դեռ չի գնահատված մեր մեջ, ինչպես որ արժանի է։ Որքան ալ նյութով նվազ կարևոր և ավելի սահմանափակ ըլլա քան «Վերք»ը, «Օվսաննա»ն իր տեսակին մեջ հրաշակերտ մըն է. տպավորություն, զոր կրեցի այս օրերս վերընթեռնելով զայն, անխառն ու խոր զմայլանք մը եղավ. կրնամ ըսել, որ այդ վիպակը մին է ամենեն աղվոր տասը նոթավեպերեն, որ գրված ըլլան հայերեն լեզվով և մին ամենեն սիրուն «ռոմանտիք» նորավեպերեն, որ գրված ըլլան ոևէ լեզվով. ամեն պարագայի մեջ Աբովյանի մեզի ծանոթ գործերուն մեջ ամենեն «կատարյալն» է. այն թերությունները, որ իր մյուս գրվածքներուն մեջ կնկատվին, հոս բացակա են. դեպքերուն հյուսքը ոլորված է մեծ ճարպկությամբ, տիպարները գծված են վարպետի ձեռքով, բարքերը նկարված են ուժեղ, ժուժկալ և ցայտուն գծերով. ոճը, միշտ համեղ ու նկարագեղ, սեղմ է. ո՛չ մեկ մանրամասնություն, ո՛չ մեկ բառ կա ավելորդ. գյուղական տարփանքներու այդ քնքուշ ու սրադեմ պատկերացումը անթերի գոհար մըն է, որ ոևէ լեզվի թարգմանված նույնությամբ կարող է սքանչացում պատճառել։

«Վերք Հայաստանի»ն Աբովյանի ամենեն կարևոր գործն է, բայց և ամենեն լեցունը թերություններով։ Նախորդ ուսումնասիրության մեջ ծանրանալով հատկություններուն վրա, սքողած էի թերությունները, նույնիսկ ջանալով զանոնք չքմեղացնել։ Դժբախտաբար, մեծ են այդ թերությունները։ Ամենամեծ թերությունն այն է, որ վեպը որոշ հատակագիծ մը չունի. Աբովյան գրած է մղված իր հուզմունքեն, և ոչ թե վարելով իր հուզմունքը։ Աղասիին փախուստեն հետո, հեղինակը Երևանի բերդին հոյակապ նկարագրությունը կհյուսե, մոռնալով սակայն զայն սառթող էական կետը, այն է՝ Աղասիի հոր հոն բանտարկվիլը, և կանցնի իսկույն «Մահարրամ»ի տոնին նկարագրության, և հետո Խլղարաքիլիսայի պայքարին, ուր Աղասիի դյուցազնությունը կպատկերացնե, առանց ցույց տալու այն բոլոր դեպքերը, որոնցմե անցած էր Աղասին մինչև այդ պայքարին օրը. գործին վերջին մասին մեջ է, որ կպատմե և հապճեպով ու շփոթ կերպով այդ բոլոր մանրամասնությունները, զոր երկրորդ մասին սկիզբը պետք էր պատմել։ Տեղ տեղ միջադեպ մը, զոր սկսած է վիպել, անավարտ կթողու և կանցնի ընդհանուր նյութին։ Աղասիեն զատ վեպին մյուս դերակատարները շատ հարևանցի կերպով նկարված են. Նազլուն, Աղասիի կինը, իր նամակներովը և Աղասիի սիրերգներովը միայն կերևա։ Գործը զուրկ է նաև ձևի միութենե, մերթ վեպ է, մերթ պատմական քրոնիկ, մերթ խրատաբանական քարոզ, մերթ նույնիսկ գրականութենե դուրս կելլե, նամակի, անձնական հուշագրի երևույթ մը կառնե։

Հայտնի է որ Աբովյանի գլխավոր մտահոգությունը եղած է ոչ թե գեղարվեստական գործ մը արտադրել, այլ իր հայրենակիցներուն օգտակար ըլլալ կարգ մը զգացումներ տարածելով, խել մը թերություններ քննադատելով, կարևոր շրջանի մը պատկերը գծելով, քաջի մը հիշատակն անմահացնելով։ Ցավալի է, որ երկուքը մեկանց ընելու կարելիությունը և անհրաժեշտությունը նկատի ունեցած չըլլա։

Իր հերոսները շատ երկայն կխոսին, ողբերը անվերջանալի են, միօրինակ. Թագուհիին մոր ողբը հրաշալի պիտի ըլլար, եթե երեք քառորդը չնջվեր. ջարդի, հալածանքի նկարագրությունները հոյակապ են, բայց շատ հաճախ կրկնված, և ի վերջո կհոգնեցնեն ընթերցողը։ Ոճը մեծապես անհավասար է, դյուցազներգական ամենավսեմ բարձունքներեն կիյնա հասարակ խոսակցության ամենեն տափակ գռեհկությանց։

Այս բոլոր թերությունները չեն արգիլեր «Վերք Հայաստանի»-ն հայ գրականության ամենեն կարևոր հիշատակարաններեն մին ըլլալե, ինչ որ կա հոն գեղեցիկ, այնքա՜ն բարձրորեն գեղեցիկ է, այնքա՜ն անզուգականորեն հզոր, որ գործին ամբողջական ընթերցումեն մնացած տիրական տպավորությունը կըլլա անխուսափելիորեն ընկճող հիացումը,— խառնված միայն նրբաճաշակներուն համար ավաղանքով մը, որ Աբովյան երկրորդ ընթերցմամբ մը մաքրած չըլլա վեպն իր պակասություններեն։ Անխառնորեն ճաշակելու համար այդ վեպին հրապույրը, լավագույն է գեղեցիկ հատվածները զատ զատ կարդալ. այդ ձևով տպավորությունը ջախջախիչ է։ Քիչ բան կա ոևէ գրականության մեջ այնքան հզոր, այնքան ջղուտ, այնքան ինքնատիպ ու ցեղադրոշմ, այնքան խոր զգացված և ուժեղ արտահայտված, որքան «Վերք Հայաստանի»ին կարգ մը կտորները։

Աբովյան եզավ մին այն հայերեն, որ ամենեն ավելի խանդով, հավատքով ու հանճարով երազեցին, ցանկացան ու պատրաստեցին ազատագրումը հայ մտքին, և իր գործը, որքան ալ միջավայրի խաթարիչ ազդեցությունները և տխուր առհավությանց բռնական ներգործությունը մերթ մղտացուցած ըլլան անոր մաքրությունը, հայկական պանթեոնին մեջ պիտի կանգնի հավիտենապես կենդանի ու հաղթական՝ իբրև մեծագույն հիշատակարաններեն մին հայ հանճարի բարձրության ու հայ սրտի գեղեցկության։

Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ա.

Գործը զոր կթողու Ալիշան, հսկա հիշատակարան մըն է անխոնջ աշխատասիրության, մշտավառ ու բեղմնավոր հետաքրքրության, կաթոգին ու խանդաղ ջղայնության, զորեղ ու թեավոր երևակայության,— գործ հայրենասերի, կրոնավորի, հմուտի, ընդհանրացուցչի, թարգմանչի, բայց ամեն բանե առաջ՝ «բանաստեղծ»-ի նույնիսկ տեղագրական, պատմական երկարությունները «գիտական» հանգամանք չունին՝ այդ բառին որոշ առումով, «բանաստեղծություն» են միշտ՝ այնչափ, որչափ իր «Ավագներ»-ը։ Համակ խանդ ու երևակայություն, Ալիշան չուներ վերլուծումի կարողությունը, անհրաժեշտ պայմանը «գիտական» աշխատության։ Բացի հին Հայաստանի աշխարհագրության նվիրված իր աշխատություններեն, որոնք հեղինակություն կրնան համարվիլ՝ գիտական տեսակետով, իր մյուս գործերն ավելի սրտով, քան մտքով խորհող մարդու մը արտադրություններն են։ Կատարյալ գիտունը պետք է անշուշտ մտքին հետ ունենա և սիրտը, վերլուծման հետ և երևակայությունը,— ոչովհետև առանց ատոր գիտունը կըլլա պարզ գործավոր մը, անեարող՝

լայն հայացքներու և մեծ հետևություններու։ Բայց միմիայն սրտով՝ մարդ գիտուն չի կրնար ըլլալ։ Բանաստեղծության մեջ, սիրտը կրավե հաճախ, կարևորագույն տարրն է գոնե, (թեպետև ամենեն վեհ ներկայացուցիչները մարդկային բանաստեղծության ամենեն բարձր տեսակին, անոնք են որ կրցած են սիրտը մտքին միացնել, ինչպես Սոփոկլես, Լուկրետիոս, Շեքսբիր, Գյոթե, Շելի, Լեոբարտի, Պոտլեր, Լրքոնթ տը Լիլ)։

Ալիշան սիրտ մըն էր, բայց շատ մեծ սիրտ մը։

Այդ սիրտը ամբողջապես լեցված էր երկու պարզ ու մեծ զգացումներով, Աստծո սերն և ազգին սերը,— սեր որ խորհրդածության արդյունք չէր, քննադատության չէր ենթարկած ինքզինքը, կհիմնվեր միմիայն ավանդության վրա։ Բոլոր հավատալիքները, բոլոր զրույցները զոր նախահայրերն իրեն թողած էին, գաղափարը, զոր կազմել տված էին պապենական ավանդությունները՝ Աստծո, աշխարհի, կյանքի և հայկական պատմության վրա, անվիճելի իրականություններ էին, միակ իրականությունն էին՝ իրեն համար. ամեն ինչ որ գրած էին բոլոր հայ պատմագիրներն ու քրոնիկագիրները, վերջնական ճշմարտություններ էին՝ իր աչքին. գերագույն գրքերը իրեն համար Աստվածաշունչն ու Խորենացին էին, զիրենք մեկնող, լուսաբանող, պատկերազարդող, երգաբանող, շարունակող բոլոր գրքերով մեկտեղ. այդ երկու գրքերուն ամեն մեկ էջը սրբազան, ամեն մեկ բառը հավիտենականորեն ճիշտ էր ըստ իրեն. «Կատառպեր, կըսեն զինքը մոտեն ճանչցողները, երբ կտեսներ եվրոպացի կամ հայ քննադատները, որ Խորենացվույն կառուցած շենքը կքայքայեին»։

Եվ այդ երկու սերերը Ալիշանի հոգվույն մեջ սերտորեն իրարու կապված էին, կամ ավելի ճիշտ՝ իրարու խառնված, իրարու հետ ներքնապես. ընդելուզված ու դրեթե միակ զգացում մը դարձած էին, առանց սակայն իրենց ուրույն անհատականությունը բոլորովին կորսցնելու, քիչ մը նման այն երկու բնություններուն որ՝ ըստ աստվածաբաններուն՝ Քրիստոսի մեջ անշփոթորեն միանալով միակ անձ մը կկազմեն։ Իր աշխարհայեցողությունը, այս պարզ հիմունքին վրա հիմնված, շատ պարզ էր.—Հայաստանը աշխարհիս կեդրոնն էր իրեն համար, օրհնյալ «բնագավառը», ուր Աստված բնակեցուց առաջին մարդը, Հայկի նախահայրը, Ադամը, որ արդեն հայ էր, և կխոսեր լեզու մը, որ հայերենին նախահայրն էր.

Մեր տերն ի երկնուց ծայրեն երբ իջավ,
Երկրիս հիման քարն Արարատ դրրավ.
...Ի հայոց հողեն կազմեցավ Ադամ,

Զոդն հայոց նվան ծծեց քաղցրահամ.
...Այս մեր սարերու ծերուկ արձագանք
Աստծո ձայնին տվին պատասխանք։

Այդ «բնագավառին» մեջ է որ կկանգնի Արարատը՝ վեհագույնը երկրագնդիս բոլոր լեռներուն.

Ո՜հ կենսաբուխ, ո՜հ սիրունակդ ինձ Մասիս,
Ալեորյալդ արծաթհյուսակ բյուրեղյա,
Որ հավերժիվք հիշատակոքդ նաղիս,
Ջլերինս համայն գրելով մանկունս առօրյա,
Ըսպասավոր՝ զտերնաշարժն Ոլիմպիոս,
Գարշապարիդ՝ Քծնող՝ թռուցիկ Պառնասոս,
Ուր երկրածինք դից կառուցին օթարան,
Ի քեզ Աստվածն հանուրց ըզնախերն կայան։

Արարատին ուղղված այս գերագույն ներբողը, որ Հելլեն լեռներուն իմացական անբաղդատելի գեղեցկությունն ըմբռնող ազատ մտքերուն տեսակ մը անբարշտություն պիտի թվի, Ալիշանի համար ամենապարզ, անվիճելի ճշմարտության մը արտահայտությունն է. Արարատը գերի վեր է՝ ըստ իրեն՝ Պառնասեն և Ոլիմպիոսեն, որովհետև ատոնք երկնավոր (ու հույն) աստվածներե բնակվեցան, մինչդեռ Արարատը հավիտենական ու միակ Աստծուն, «Հայ» աստծուն պատվանդանը եղավ, և խանձարուրքը «հայ» ցեղին։ Արարատի վրա է դարձյալ, որ Նոյի տապանը, այսինքն արդի բովանդակ մարդկությունը պահպանող բջիջը, կանգ առավ.

Երբ գոռաց և կենդն ու գետին սարսեց,
Ամպերն ի ծով, ծովն ի ամպեր վազեց.
Այն սարին ծայրեն Նոյ մտավ ի տապան,
Ջրագունդ երկրիս շուրջն եկավ մանուման,
Զաղու աղավնին զրկեց ավետիս.
Երկիրս էր դատարկ անապատ ահեղ,
Լուսի ի Հայաստան կայր մարդկության տեղ։

Հայ ազգը ամենեն հին, ամենեն քաջ, ամենեն ազնիվ ազգն է. Հայկը, որ «փառք որդվոցն տվավ, ազատություն, աշխարհի», Արամը, Տիգրանը որ «Հնկայից հաղթեցին», «լեռնանման կտրիճներն ի ձորն Հայոց թափեցին», անպարտելի թագավորներ են եղած, որ աշխարհ դողացու-

[1] Հայրունի

ցած են, ինչպես և Տրդատը, «մեծն հսկայից և թագավորաց». Աբգար Իրիստոսին հետ թղթակցած և անոր հավատացող առաջին թագավորը եղած է, ևն, ևն։ Հայ ազգը դժբախտությանց մատնված է, Աստծո հրամանով, որովհետև մեղանչեց Աստծո, իր նախկին սրբությունը չպահեց. բայց օր մը պիտի գա անպատճառ, ուր այդ դժբախտությունները վերջ պիտի գտնեն, և հայությունը նորեն պիտի վերականգնացնե հին Եդեմը։ Այս ամենուն վերև հավիտենական Աստվածը կծածանի, ալեոր և ահավոր, բայց և կաթողին հայրը, երկնքի կապույտ ալքերուն մեջ իր ոսկի գահուն վրա բազմած, գորովով ու ցավով լեցուն աչվրները Հայաստանի վրա հառած.

Իսկ հայրն հանուրց անժամանակ քաղցր Աստված
Ակնարկյալ հաշտ յօնօք յԱթոռն Մասյաց...

Եվ բնությունը իր բոլոր պերճություններովն ու հրապույրներովը, ուրիշ նպատակ չունի, բայց եթե Աստված փառաբանել կամ հայության ցավերը ողբալ. արեր Արարչին մեծությունը կերգե, և լուսինը Հայոց գերեզմանները վրա կուլա։

Եվ այս բոլորը համապատկերը, որ տեսակ մը Հակոբի սանդուխ կներկայացնե՝ Աստուծմե սկսելով մինչև Հայաստան իջնող, իր անթիվ աստիճաններուն վրա կրելով վար եկող ճերմակ հրեշտակներ և վեր սլացող կարմիր նահատակներ (ամենքն ալ հայ), Ալիշանի համար քմածին նկար մը, պայմանագրական տեսիլք մը, արվեստի խաղ մը չէր, այլ իրականություն մը,— որովհետև ոչ ոք «անկեղծ» եղած է ինչպես «Հուշիկներ»-ու երգիչը։ Իր ադամանդե երազին մեջ փակված այդ մաքուր ու մանկական հոգին ԺԹ. դարու ըմբոստ մրրիկի, մեջեն անցած է, առանց իր լուսեղեն պատմուճանին վրա ամենափոքր ցայտք մը ընդունելու. երկվայրկյան մը չէ տարակուսած իր հավատքներուն ճշմարտությանը մասին, խորապես համոզված, որ երկրավոր ուղին ուրկից կքալեր կանցներ, զինքը կառաջնորդեր դեպի ի վերին Եդեմը, ուր հայրը թևաբաց կսպասեր իրեն։ Երեք տարիի չափ առաջ, էտկար Շահին զինքը կտեսներ վանքին մեջ, օրհասական պատանիի մը սնարին մոտ, դվարթ ժպիտով մը դեմքը շողարձակ, մահամերձին պաղ ճակատը շոյել գորովագին, «Երանի քեզի, ըսելով անոր, հիմա դուն հրեշտակ մը պիտի ըլլաս ու երկընքին մեջ լուսեղեն աթոռի մը վրա պիտի բազմիս, քու հիմա արձակած ամեն մի հառաչիդ տեղ մեկ-մեկ վարդ պիտի բուսնի քեզի համար Արքայության մեջ...»։

Մարդ մը որ այսպես կղգար, այսպես կմտածեր, այսպես կտեսներ, այսպես կապրեր, չէր կրնար բնականաբար մանրադետով աշխատելու

համակերպիլ. ամեն ինչ որ կհավատար, իրեն համար գերագույն ստուգություն էր. այսպիսի մտավոր ու հոգեկան տրամադրության մեջ հղացված գործեր «գիտական» հանգամանք չէին կրնար ունենալ անշուշտ։ Բայց ոչ ոք պիտի մտաբերե մեղադրել ատի Ալիշանին. անձնիվեր գործիչ պետք է դատել իր ուրույն արժանիքին համեմատ, իր մասնավոր գործին մեջ. Ալիշան հոյակապորեն կատարած է այն գործը զոր ուղած է կատարել, և որ, շարունակելով Խորենացվույն ու Ջամչյանին գործը, իրեն գլխավոր նպատակ ուներ հայ ժողովրդին ներշնչել ու կազդուրիչ ու ազնվացուցիչ հպարտությունը մեծ ու փառավոր անցյալ մը ունեցած ըլլալու. «Սիսվան»-ը, «Սիսական»-ը, «Շիրակ»-ը, «Արարատ»-ը մանրակրկիտ և ուղղակի քննության արդյունք չեն. Ալիշան զանոնք հորինած է գործածելով այն բոլոր տեղեկությունները, նկարագրությունները, տոքյումանները, զոր գտած է հայ և օտար հեղինակներու մեջ կամ զոր Հայաստանեն իրեն ղրկած են առավել կամ նվազ ճշգրտագետ թղթակիցներ, առանց կարենալու ատոնց հարազատությունը ստուգել, քանի որ երբեք ոտք չէր կոխած Հայաստան և թղթերու մեջեն կճանչնար երկիր, զոր կնկարագրեր։ Պատմական ամենեն կնճռոտ ու մութ հարցերը բանաստեղծական ենթադրություններով լուծած է հաճախ, երբ ավանդական մեկնություն մը պակսած է։ «Հին հավատք Հայոց»-ին մեջ, ուր քրիստոնեությունեն առաջ հայոց կրոնքը ուզած է ուսումնասիրել, իր ճիգը կծգտի, ոչ թե դարերու մթության մեջեն ճշմարտությունը զանազանելու, այլ ապացուցանելու թե Հայկազյան թագավորներու օրով հայերը միաստվածյան էին, թե կռապաշտությունը օտարներու ձեռքով ժամանակավորապես Հայաստան մտած երևույթ մըն էր և քրիստոնեության առջև ամենայն դյուրությամբ տեղի տվավ։ Զգացումը կտիրապետե հոն. Ալիշան առիթ չի փախցներ այդ «չաստվածներու հաացեին անախորժ բաներ ըսելու. Աստվածածնին քով Անահիտին նստումությունը ցույց կուտա, և Հիսուսի դեմքին առջև Վահագնին նվաղումը, (թեպետ և իր հակահեթանոսական ամբողջ ատելությունը զինքը չարգիլեր մերթ խանդաղատանքի նշույլ մը երևան բերելե այդ բոլոր մեռած աստվածություններուն համար, որոնք նորեն մինչև աստիճան մը «սիրելի» են իրեն քանի որ հայ են)։ «Հայբուսակ»—ին մեջ իսկ, որ բառարան մըն է բույսերու հայկական անուններու, Ալիշան միջոց կգտնե իր զգայնությունն ամեն վայրկյան ի տես դնելու. ծաղիկներու միջև ազնվության ու պատվո աստիճանավորում մը կհաստատե՝ իր հայ-քրիստոնյայի դատումին համեմատ. ինչպես՝ օրինակի համար՝ վարդի և շուշանի համբավավոր բաղդատությունը.

Շուշան ծաղիկը գրեթե անկարող է ծանոթության, տեսնողին և լսողին միտքը կենտրոնակ, և որչափ ալ նյութական բույս մը ըլլա ուրիշներու նման, բարոյական կամ անմնյութական գաղափար մալ կազդե. ի հնուց ի վեր վարդի հետ ծաղկանց գլխավորությունը ժառանգած է, իբրև թագավոր և թագուհի. բայց ո՞րն այս, ո՞րն այն. զի ըստ այլ և այլ լեզվաց՝ ոմանք զվարդ թագավոր գրեն և զշուշան թագուհի, այլք ընդհակառակն, մինչ առաջին հարմարագույն զա:— Իսկ ո՞րն ավելի գեղեցիկ, մինչ առաջին հարմարագույն զա: Հասարակաց վարկն վարդի տված է այս առավելությունը, սակայն երբ հիշվի, որ հիմքն Աստղկան կմատուցանեին զայն՝ տոփանաց դիցուհվույն, իր հարգն ու վարկը կկորսնցնե Frիստոնյա մտաց առջև, որ աստոր փոխարեն զշուշանն համարեն օրինակ ողջախոհության և կուսության:

Նույնիսկ երբեք Հայաստան գացած չըլլալը,— որ տարօրինակ կթըվի Հայաստանը երգելով ու նկարագրելով իր ամբողջ կյանքն անցնող մարդու մը կողմեն և զոր «Նոր Դար» անիրավաբար ի վեր կհաներ իբրև Ալիշանի հայրենասիրության անկեղծության մասին տարակուսիլ տվող իրողություն մը,— շատ լուսավոր կերպով կբացատրվի, երբ մարդ թափանցե Ալիշանի այդ մասնավոր հոգեբանությանը. «Ալիշան,— կըսեր օր մը ինծի՝ ծանոթ բանաստեղծ մը, որ իր աշակերտն է եղած, հիվանդ պիտի ըլալը, եթե այսօրվան ողբալի, քայքայված, մոխրապատ Հայաստանը աչքովը տեսներ. ան իր մտքին մեջ միշտ կենդանի ու կանգուն կնշմարե հին, շքեղ, ազատ Հայաստանը, և այդ տեսիլը չէ ուզած երբեք քանդել իրականության բիրտ բախումովը»։

Ալիշանի այդ բոլոր պատմական, բանասիրական, տեղագրական աշխատությունները պետք է նկատել ուրեմն բանաստեղծ-հավաքչի, հայրենասեր-ընդհանրացուցչի գործեր,— և իբրև այդ՝ զմայլելի գործեր են անոնք։

Քննադատական ոգիի պակասը անոնց մեջ կփոխարինվի բազմաթիվ ուրիշ հատկություններով որ զանոնք տարօրինակապես կենդանի և շահեկան կկացուցնանեն,— հատկություններ որոնց գլխավորներն են ընդարձակ ու բեղուն հմտություն, անխոնջ խուզարկության ձգտում, և արտահայտության արտասովոր զորություն։ Սնամեջ հռետորությամբ մը թարգմանվող ուռուցիկ զգայնություն մը չէ, որ կլեցնե այդ գործերը. համբերատար ու կաթոգին տաժանքով, հազար ձեռագրի գրքի ստուգաբանի, քարի, փայտի, շենքի, ավերակի, արձանի, պատկերի վրայեն հավաքված «իրողություններու շեղջակույտ մըն են անոնք, որ կներդաշնակվի, կոգևորվի, սիրուն կենսախայտ ամբողջություն մը կկազմե՝ հավաքողին) լայն ու տաք շունչին տակ։ Այս «Հայարձան»-ին մեջ, զոր կանգնած է, ամեն բան կա, ամեն ինչ, որ հայերուն անցյալ կամ ներկա, քաղաքական կամ կրոնական, գրական կամ ուսումնական կյանքին կվերաբերի. «Արարատ»-ը, «Շիրակ»-ը, «Սիսվան»-ը, «Սիսական»-ը կպարունակեն անհամար ծանոթություններ Հայաստանի գլխավոր նահանգներուն աշխարհագրությանը, պատմությանը, բարքերուն, բուսականությանը, տիպարներուն, սովորություններուն վրա։ «Աշխարհագրություն Հայաստանի»-ն, «Երկրագիտություն Հայկական»-ը ամենեն խնամոտ աշխատություններն են այդ ճյուղին մեջ, զոր հայ մը մինչև այսօր արտադրած ըլլա։ «Հայրուսակ»-ը կբովանդակե բույսերու հայկական անուններու ընդարձակ ցուցակ մը բազմաթիվ ծանոթություններով։ «Հայ-Վենետ»-ը կամփոփե պատմությունը այն հարաբերություններուն, զոր Կիլիկյան հայությունը ունեցավ Վենետիկյան Հանրապետության հետ և այն նշանավոր անհատներուն, զոր արտադրեց Վենետիկ հաստատված հայ գաղթականությունը։ «Հին Հավատք Հայոց»-ը հավաքումն է այն բոլոր տեղեկություններուն, զոր հայ և օտար պատմագիրներու մեջ կարելի է գտնել հայոց հին հեթանոսական կրոնքին վրա։ «Շնորհալի և պարագա յուր»-ը կներկայացնե Հռոմկլայի սոխակին զմայլելի կյանքը՝ իր ամբողջ շրջանին համապատկերովը։ «Արշալույս քրիստոնեության ի Հայս»-ը կպարունակե այն բոլոր ծանոթությունները, զոր ազգային և օտար աղբյուրները կուտան քրիստոնեության հայոց մեջ մուտքի առաջին շրջանին վրա։ Եվ դեռ իրմե կմնան անտիպ, տասնեն ավելի հատորներ, որոնք նույն գործը կշարունակեն, («Պատմություն Հայ վանորեից Իտալիա և Եվրոպա», «Հայաստան նախքան զՀայաստան մինչև ց Մեծն Տիգրան», «Հիշատակարանք Հայ գրչագրաց», «Կոնդակք Ս. Քահանայապետաց առ Հայս և Կաթողիկոսաց առ Քահանայապետս», «Սնացորդք տեղագրության Հայաստանի», «Հայկականք», 8 Հատոր, «Հավաքումն և աղբերք հայ պատմության և մատենագրության» են)։ Ասոնց հետ, Ալիշան ատեն գտած է ծանոթագրություններով հրատարակելու նախնյաց ձեռագիր գործերեն՝ «Աբուսահլի Պատմություն եկեղեցյաց և վանորեից Եգիպտոսի»-ն, «Գիրք վաստակոց»-ը, Խոսրով Անձևացվո «Մեկնություն պատարագի»-ն, Կիրակոսի «Պատմություն»-ը, «Սոփերք Հայկականք»-ը (22 հատոր), որոնք կպարունակեն նախնեացմե մնացած անտիպ գործեր, Վարդան վարդապետի «Հավաքումն պատմության»-ը, Կամենիցի «Լեհաստանի և Ռումինիո Հայոց տարեգիրք»-ը, «Նշմարք և նշխարք Հայաստանին»՝ ուր Հայաստանի ամենեն գեղեցիկ բնակարաններուն, շենքերուն պատկերներն ամփոփած է՝ ծանոթագրություններով ու վերջապես՝ Հայոց անցյալ ու ներկա կյանքը եվրոպացվոց ծանոթացնելու համար

հրատարակած է հայոց ռամկական երգերու հավաքածու մը՝ անգլերեն թարգմանությամբ, երկու ֆրանսերեն բանախոսություններ՝ այնքան վառվռուն որքան հմտալից՝ Հայոց պատմության վրա, և «Սիսվան»-ին ֆրանսերեն թարգմանությունը։

Ոչ մեկ հայ, կարելի է ըսել, չէ ցույց տված այդքան վիթխարի աշխատասիրություն մը՝ այդքան հարուստ ու փայլուն արդյունքով մը պսակված։ Քսան հոգիի գործ կատարած է Ալիշան իր կյանքի ընթացքին մեջ, ամբողջ մատենադարան մը, ամբողջ աշխարհ մը թողած է մեզի ու հրապուրիչ մատենադարան, քան այն, զոր Ալիշան կանգնած է։ կազմվիլ, և որոնք պետք ունին իրենց ազգին ու հայրենիքին վրա իրենց խոսող տաք ու ազնիվ ձայնի մը, չկա ավելի կազդուրիչ, ավելի հրահանգիչ ու հրապուրիչ մատենադարան, քան այն, զոր Ալիշան կանգնած է։ Մասնագետները պիտի վերսկսին այդ աշխատություններեն յուրաքանչյուրը, պիտի զատեն անոնց մեջ ճշգրիտը սխալեն, պիտի հասնին ավելի կուռ ու ճիշտ եզրակացություններու,— բայց Ալիշանի գործը միշտ պիտի պահե իր օգտակարությունը՝ իբրև նյութեղեններու ամենեն փարթամ հավաքածուն, զոր կարելի է գտնել, և իր անթառամ կենդանությունը—երբ մանավանդ անոր բոլոր գրաբարով խմբագրված մասերը աշխարհաբարի վերածվին—իբրև երգ մը բյուրերանգ ի պատիվ հայ ցեղին, իբրև անհուն մուսյոն մը հայ պատմության։

Ամենեն աղվոր հնչյուններեն մին՝ այդ երգին մեջ՝ ամենեն հանկուցիչ զարդը այդ մուսեոնին, այն պաշտելի գիրքն է, որ կկոչվի «Հուշիկք Հայրենյաց Հայոց»։ Տեսակ մը անբիծ, խանդակաթ ու դյուցազնական «Հազար ու մեկ գիշեր», ուր հեղինակը հիշատակներով բեռնավոր ծերունիի մը դիմակն զգեցած, հայրենի սուրբ կրակարանին անկյունը կրծկրտած, ձմեռվան գիշերներուն երկայն մթությունը կլուսավորե՝ իր Հայկակ թոռնիկին, այսինքն իր առջև ծնրադիր բոլոր հայ պատանեության, պատմելով հայկական պատմության ամենեն փառավոր դրվագները, հայ մտքին ամեն տեսակ ճիգերը, ամենեն վեհապանծներեն մինչև ամենեն անշուքներն ու մոռացվածները. հոն ետևե ետև կտողանցին շատ մը մեծ հայ դեմքեր, յուրաքանչյուրն իր ուրույն հրապույրովը,— «Կարմիր» Վարդանը, և Սահակ Պարթևը, Զապել թագուհին և Թեոդորոս Սալհունի նահատակը, Աշոտ Ա-ը և Ստեփանոս Սյունեցին, Վարդանի դուստր Շուշանիկը և Վահան Գողթնացին, Պոլիքտոսն և Նեարքոսը, Սոփեստեն Սարկավագն ու Հովհան Երզնկացին, Լևոն «վերջին»-ը և Խուլ Խաչիկը, հետո՝ Աբգար դպիրը, հայկական տպագրության առաջին հիմնադիրներեն մին, հայացեղ բյուզանդական կայսր Վարդան Բ-ը, հայ ժողովրդական բանաստեղծներ, Հայոց Հին տոմարը, Հայաստանի բնախոսությունը, հայկական

տոները՝ Նավասարդը, Ծննդյան տոնը, Ոսկեբերանի բնակությունն ի Հայաստան, Քսենոփանի անցքը Հայաստանեն, ևն, ևն։ Եվ այս բոլոր դեմքերը, դեպքերը, հիշատակները կոգևորին, կհառնեն անցյալին փոշիեն, կվերապրին՝ տարօրինակ ներուժ կյանքով մը, շնորհիվ այն թրթռուն շունչին, զոր պատմողը անոնց վրա կփչե, պատմողը, որ քաղցր պապիկի միամիտ շաղփաղանքներեն դյուցազներգակ բանաստեղծի հոյակապ շեշտերու դանցնի առ փոխ, միշտ անկեղծ, միշտ հուզված, միշտ կենդանի, միշտ սիրուն, ու միշտ տոգորված՝ ազնիվ, արի, գողտրիկ, մաքուր խմաստասիրությամբ մը, որուն մեջ տիրապետող կրոնական զգացումը ոչինչ ունի թուլացուցիչ և ջլատիչ, այլ ընդհակառակն դրդիչ մը կդառնա աշխատասիրության, քաջության, առողջ հայրենասիրության.

«Արարչագործ մատանց բարձրագույն կերտվածք, չեն Այրարատյան կատարքն կամ գագաթն Եմավոնի, այլ ուսերուդ վերեր կանգնած իմաստից ասեար՝ գլուխդ, բարձր և բարակ բանված։ Չկա ծաղիկ արժանավոր այդոր պսակ ըլլալու, ոչ ոսկին, և արծաթ, որ ճոդի կելնեն, ոչ ծիրանի ծովերե խպսած բուստ և մարգարիտք։ Ո՞հ, գեղեցիկ են մայիսի առավոտուն ցոդակաթ վարդակարմիր փնջիկքն այլ՝ դալար ճակտի մը բոլորած, սակայն շատ ավելի պայծառ է ամոթխածությամբ խածյալ երեսին, և ավելի ազնիվ՝ անոր վրա շարված աշխատության կայլակներն։

«...Լալով կու ծնանիմք, խաղալով կու մեծնամք, աշխատությամբ պետք է մարդ ըլլամք. մեկ ձեռքով մեզի, մեկ ձեռքով մեր նմանյաց օգնենք. սիրով կենակցինք, պատվով ապրինք, ճուսով ծերանանք, գոհությամբ մեռնինք։

«.. Սնա ազգք և ազինք, մեզի մոտ և հեռի, Հայկակ, ամենքն զբաղած են իրենց հայրենի ազարակը շենցնելու, և անդրանիկն ազգաց՝ մեր ազգն՝ կրնա՞ ըլլալ եռամնաց։

« ..Ան դու ուրեմն, ո՞վ Հայկակ, քու վիճակիդ հարմար աշխատության գործիդ, վերցուր երկինք, օրհնել տուր և աշխատե երկրի, միտքդ երկինս, սիրտդ հայրենյացդ վրա։

«...Ճշմարիտ հայրենասիրությունն չէ ասուպ կամ փայլակ մը հանկարծ երևցող և անցնող, ոչ հուր մոլի և թափառիկ, և ոչ կայծակն այրող լափող, այլ հանդարտ ջերմություն մը, հստակ լույսով, անսպյուռ խղճով...

«Ո՞վ անձնուրաց ոգի, բարեխնդիր հայրենասիրություն, դու պատրաստե վառե, արբե՛ զսիրտ հայկակա։ Քեզմով վառված սիրտն՝ անխայթ և անմոխ լույս կարձակե, և եթե խարկի մրկի սիրտն և անցնի երկրա-

վոր մասամբն, երկնունակ մասն մնա ի վերա հայրենյաց, որպես հոտ մշկի և կնդրկի»:

Ալիշանի գործին ամենեն թանկագին, ամենեն բարձր մասը սակայն՝ գեղեցկագիտական տեսակետով, իր «Նվագներ»-ն են. հոդ այլևս իր բուն տարրին մեջ է Ալիշան, զուտ բանաստեղծության մեջ։ Միշտ միևնույն նյութերն են, որ զինքը կներշնչեն հոդ ալ,— կրոնք և հայրենիք,— բայց թվականները, պատմական կամ կրոնական առեղծվածները, բանասիրական կնճիռները այլևս չեն ծանրաբեռներ իր թռիչը. հոդ այլևս ակնոց չունի, գրքերու, ձեռագրերու փոշին թոթափած է, աշխատանոցի մթնոլորտեն դուրս է ելած, ու թևերն այլևս ազատ ամեն ավելորդ բեռե՝ կթռչի իր երևակայությանը երկնքին մեջ և կերգե։ Իր երգը ամենեն վեհը, ամենեն ճոխը, ամենեն հզորն է, զոր նոր ժամանակներու հայ քնարը արձակած է, և ամենեն բազմազանը։ Շնորհալին ու Նարեկացին, Խորենացին ու Թլկուրանցին, Եղիշեն ու Պլուզը իրենց ձայները միացուցած են անոր մեջ, եղբայրակցելով Բեթարքայի, Լամարթինի, Միլտոնի, Հյուկոյի, Պայրընի մեծ տավիղներեն ինկած մեկ քանի լայն հնչյուններու հետ, խառնված այն խորունկ, սիրուն, տարօրինապես կրակոտ, միամիտ ու միանգամայն դյուցազնական, քնքուշ ու միանգամայն վսեմ ձայնին, որ Ալիշանի հոգիին ինքնուրույն բխումն է։ Այդ երգը տարապայմանորեն անհավասար է. «Մանկունի»-ն դպրոցականի շարադրության հավաքածուի մը տպավորությունը կթողու, և «Տերունի»-ին մեջ հազիվ կարելի է գտնել երեք չորս քերթված, ինչպես «Աստվածային մենամարտություն»-ը, «Ի Հիսուս պատանի կրելով զգործիս «չարչարանաց»-ը, ևն, որոնք անձնական գույն մը ունին և այն մեծ շունչը, որ Ալիշանի գեղեցկագույն էջերը կուռցնե. Բայց «Հայրունի»-ին, «Բնունի»-ին և «Տխրունի»-ին մեջ,— ուր քրիստոնեական իմաստասիրությամբ ներշնչված համամարդկային լայն բանաստեղծության մը շեշտերը կհնչեն հոյակապորեն,— կգտնենք բազմաթիվ քերթվածներ, որոնք շատ մեծ ու շատ ինքնատիպ բանաստեղծի մը գործն են։ Բոլորովին տարբեր Բագրատունիեն և Հյուրմյուզեն, որոնք հույն-լատին գրականության աշակերտներ էին և հեթանոսական գեղեցկագիտությամբ տոգորված, Ալիշան քրիստոնյա է մինչև ոսկորներուն ծուծը և եվրոպական ռոմանթիկ բանաստեղծության ազդեցությունն է կրած։ Արևմուտքի գրականությունները շատ մոտեն ճանչցած և յուրացուցած այդ բանաստեղծը՝ խորապես արևելցի մնացած է սակայն, խորապես «հայ», մանավանդ անժուժկալ, անսանձ, անհամեմատական է, և կպաշտե հարուստ ու մեծաշռինդ բառերու կուտակումը, ալիքներու պես շառաչաձայն վրայե վրա թավալող տողերը, շողշողուն, բայց խառնափնթոր իրարու վրա դիզվող պատկերներու շեղջշեղջումը.

Արփն այգածին վարսագիտակ ծիրանավարդ,
Շաղ մարգրտայեռ ցողելով շուշանազարդ,
Ցականողիս շափիղայ
Լույս կարկառեր Արեզա.
Ծողնայր ճոխաճեմ արեգակն ոսկեփնջիկ,
Շուրջ առյալ շողայր շամանդաղն օդապարիկ։

Կսիրե նմանաձայնությունը,

Հայկյան փանդռանց որոտընդոստ դրընչեն բարբարք մարտագոռ,

Կսիրե տառակրկնությունը,

Եվ հաղ ընդ հաղ հառաչեր հեղեղն հեռավոր.—

Կսիրե մինչև իսկ բառախաղերը,

Որ հանց բերավ բույս կուսան
Ուսկից հազար կույս բուսան.

Բայց և ունի էջեր Լամարթինյան պարզությամբ և դաշնակավորությամբ—ինչպես «Բնունի»-ին սիրուն, փափուկ, թավշենի քերթվածները կամ այն զմայլելի «Խորհրդածությունք ընդ եղեվնյավ»-ը, գրված բյուրեղե ոճով մը, զոր Շաթոպրիան պիտի հոժարակամ ստորագրեր։ Լեզուն, գրաբար քերթվածներուն մեջ, Հյուրմյուզին ողորկ ու միշտ վայելուչ ու դաշն հայերենը չէ, խիզախ, ըմբոստ, անհանդարտ, փրփրոտ հայերեն մըն է, ուր Նարեկացիին ազդեցությունը կզգացվի։ «Նահապետի երգեր»-ուն, ինչպեսև «Մաղթունի»-ին մեկ քանի ռամկերեն քերթվածներուն մեջ միջնադարյան հայ աշուղներուն լեզուն է որ գործածած է Ալիշան, և այդ երգերը զինքը կկապցուցանեն մեծագույնը հայ աշուղներուն՝ Նահապետ Քուչակին և Սայաթ-Նովային հետ։ Այդ բանաստեղծությանց ամբողջությունը, հակառակ անոնց մեջ նկատվող թերությանց, որոնք բազմաթիվ են—ճաշակի պակաս՝ երբեմն, համեմատության պակաս՝ հաճախ, մերթ ծայրահեղ ճոռոմություն, ու ստեպ՝ տղայաբանությունը վսեմին, լափալիսը Պայրընին զուգակցորդ,— կներկայանա իբրև քերթողական ամենեն հզոր ճիգը, որ ցարդ երևցած ըլլա Հայոց մեջ։ Ոչ մեկ հայ բանաստեղծ այնքան եռանդ, այնքան ուժգին թռիչ և այդպիսի այլաղան, պատկերաշող, գունագեղ ու փարթամ ձև ունեցած է, որքան Ալիշան։ Հոմերական շողյուններ, աստվածաշնչական փայլակներ, Հյուկոյական հրաբխու-

թյուններ կան անոր մեջ, ու ատոնց հետ՝ մինչեւիսկ անկապաշտ բանաստեղծության տենդոտ ցոլքեր, արար քերթության արշավասույր սլացքներու և հայկական շարականի գողտր մեղեդիներու խառնված։ Փոխանակ հայ ազգին պատկանելու և վանքի կյանքին մեջ իր միտքը կաղապարելու, եթե Ալիշան եվրոպական մեծ ազգի մը ծոցը ծնած և ազատ կյանքի մը մեջ զարգացուցած ըլլար իր մտավորական կարողությունները, եթեմանավանդ՝ տասը մարդու գործ կատարելու, քան սեռ մշակելու տեղ՝ ինքզինքը նվիրած ըլլար միմիայն բանաստեղծության, այն հրեղեն խառնվածքը, որ կզգացվի իր գործին մեջ՝ հառաջ պիտի բերեր թերևս Հյուկոյի կամ Պայրընի հավասար արվեստագետ մը։ Այդպիսի խոշոր ուժի մը հանդեպ ինչպես էր, անվիճելի կերպով, Ալիշան, աններելի պիտի ըլլար թերությունները միայն տեսնել, մանավանդ որ այդ թերությունները կրացատրվին միջավայրովը, ինչպես որ փոխադարձաբար աններելի և անիմաստ պիտի ըլլար զանոնք քողարկել և ապուշ ու անգիտակից ներբողով մը ներկել իր ամբողջ գործը։ Քննադատության դերն է գրողի մը մեջ ամեն բանե առաջ գեղեցկությունը գտնել և ի վեր հանել՝ եթե կա. և երբ գեղեցկություն կա գրողի մը մեջ, ան է որ գոյություն ունի, և ան միայն, զայն պետք է մատնանիշ ընել ամեն բանե առաջ. ու երբ ան ունի արտասովոր փայլ մը, կմոռցնե բոլոր թերությունները։ Բրեվո աբբան երեք հարյուր վեպ գրած է բացարձակ միջակությամբ,— բայց գրած է և «Մանոն Լեսքո»-ն, որ ամենեն զմայլելի գործերեն մեկն է զոր մարդկությունն արտադրած ըլլա, ու աբբա Բրեվոյին վրա խոսած ատեն՝ մարդ «Մանոն Լեսքո»-ն կհիշե միայն և երեք հարյուր վեպերուն խոսքը չըներ։ Ալիշան գրած է անզուգական «Հարսներգ»-ը, «Հուսկ բան առ ոգին նվագաց»-ը, «Ցայգախոհք ի տապան մանկան Մոնազին»-ը, «Ի Սոմնացին»-ը, «Հիշատակ մահու և մեռելոց»-ը, «Բնունի»-ին, «Խոհունի»-ին, «Խորհրդածություն ընդ եղևնյավ»-ին, ինչպես և «Հուշիկներ»-ուն և «Նահապետի երգեր»-ուն մեկ քանի զմայլելի հատվածները, որոնք հրաշալիքներ են մաքուր ու բարձր ներշնչման և հոգեթռիչ ոճի. և ատոնք կբավեն, որպեսզի զինքը համարինք Հայոց մեծագույն բանաստեղծը, որովհետև որքան ալ Աբովյան, Պեշիկթաշլյան, Դուրյան կգերազանցեն Ալիշանը գրական այս կամ այն սեռին մեջ ուր իրենք մասնավոր ուժ մը ցույց կուտան, Ալիշան զանոնք ամենքն ալ կգերազանցե իր տաղանդին անհուն բազմազանությամբը, լեզվին հարստությամբն ճապկությամբը, տաղաչափության անվերջ պեսպիսությամբը։

Ալիշանի այդ բարձրագույն էջերուն համարժեքը ժամանակակից որևէ հայ բանաստեղծի մեջ չենք գտներ, էջեր գերագույն բանաստեղծության, ուր զգացումն ու ձևը, հավասարապես ազնիվ, բարձր ու հզոր, լսելի կը-

նեն շեշտ մը, որ եբրաեցի մարգարեները կամ ռոմանտիկ մեծագույն բանաստեղծները կհիշեցնե։

Ա՜հ, ժամ է, ժամ՝ որում փառք, շնորհք, տուրք բախտի
Հանգուցանել զանձն ոչ բավեն.
Հորժամ նստյալ սիրտ իբր երկիր անջրգի՝
Ջվարթագեմ ինչ որ տեսանեն.
Ժամ է որ բյուրք զարմանայաց աշխարհի
Թվի ստվար մատյան հնակարկատ,
Եվ բնություն, ծո՜վ ըսքանչելյաց առ երի,
Ունայն իմն և լուռ մագաղաթ.
Ժամ հորժամ ոչ հեշտ զորե շունչ խնգության
Գարգել ըզկրնճիռն անպատճառ,
Ոչ մբտերմին ըսփոփական ազդե ձայն
Հանաշխարհիկ սիրտ՝ խուլ համառ.
Ժամ հորժամ ոչինչ նշմարի բաց հանձնե,
Եվ անձն իրրև սյոն մը ավերակ
Ի վերա բյուր հիշատակացն արկանե
Զյուր ևեթ ըսավեր տխրորակ.
Ժամ՝ որ հանգույն եաին վանգից քընարին
Կամ ողբերգական ավաշոյ,
Որ մահագույժ լռությամբ առ սիրտ մտերմին
Խորագույն մբխե զվերս ազգոյ,
Հանմխիթարն հայն անհանգիստն այդ պահու
Իբրև հաշխարհե հեռաստան
Ժամանյալ գայ 'Նդոստացիչ ձայներն մահու,
Եվ խոնարհի սիրտ ի տապան...[1]

Ալիշան ոչ մեկ ժամանակակից հայ գրագետ կամ բանաստեղծ ազդեցություն կրած է, ոչ Մխիթարյան գրողներե, ոչ ալ ռուսահայ ու թրքահայ գրողներեն, մինչդեռ ընդհակառակն իր ազդեցությունը մեծապես զգալի է ԺԹ. դարու հայ գրագետներեն շատերուն վրա։ «Նահապետի երգեր»-ուն ցոլքը կերևա Դամառ-Քաթիպայի կարգ մը քերթվածներուն, ինչպես և Աղայանցի ոտանավոր ու արձակ գրությանց մեջ. Պեշիկթաշլյան և Դուրյան, թեպետ բոլորովին տարբեր խառնվածքով, «Նվագներ»-ու հնոցեն կայծեր ընդունած են իրենց հոգվույն մեջ. և «Հուշիկներ»-են ետքն է որ Ծերենց, Մամուրյան ու Բաֆֆի Հայոց հին կյանքը վերակենդանացնող իրենց վեպերը հղացած են ու Սրվանձտյանց Հայ աշուղի երգերը, ժողովրդական ավանդությունները, հեքիաթներն ու բարքերը հավաքելու մղումն ունեցած է։

[1] «Տխրունի».— Հիշատակ մահու և մեռելոց.

Իսկ ազգային շարժումին մեջ, Ալիշանի գործին ազդեցությունը նվազ մեծ ու անմիջական է եղած քան այն, զոր ունեցած է Նալբանդյանի, Գամառ-Քաթիպայի, Պեշիկթաշլյանի, Ծերենցի, Դուրյանի, Արծրունիի, Բաֆֆիի գործը։ Եվ ասի երկու պատճառով։ Նախ՝ Ալիշանի գործը, վայելելով տիեզերական հարգանք մը բովանդակ հայ ժողովրդին մեջ՝ շատ սակավաթիվ հայերու ծանոթ է եղած իր ամբողջությանը մեջ. ժողովրդին ամենաստվար մեծամասնությունը Ալիշանեն ուրիշ բան չէ ճանչցած, բայց եթե «Նահապետ»-ի երգերեն քանի մը հատված, «Հուշիկներ»-են քանի մը էջ. «Նվագներ»-ը, «Խորհրդածություն ընդ եղեռնյավը, տեղագրական և աշխարհագրական գրքերը իրեն անմատչելի են՝ մնացած՝ գրաբար լեզվով—ու շատ խրթին գրաբարով մը—գրված ըլլալնուն համար։ Նույնիսկ մեր գրագետներեն կամ գրահմուտներեն չափազանց փոքր մաս մը լրջորեն ծանոթացած են Ալիշանի բովանդակ գործին։ Նալբանդյանի, Գամառ-Քաթիպայի, Արծրունիի, Բաֆֆիի, Պեշիկթաշլյանի, Դուրյանի, Ծերենցի, Մամուրյանի գրվածքները շատ ավելի ընդարձակ տարածում ունեցած են հայ ժողովրդին մեջ, որովհետև շարադրված են ժողովրդին խոսած լեզվովը։ Ատկից զատ, մինչդեռ այդ բոլոր ռուսահայ ու թրքահայ գրագետները ժողովրդին մեջ կապրեին ու կգործեին, հանրային բոլոր խնդիրներու վրա իրենց կարծիքը կհայտնեին, բարքերու կերպարանափոխությանը համար կկռվեին, օրվան դեպքերն իրենց գրչին կամ քնարին նյութ կառնեին, մինչդեռ Նաղարյան, Նալբանդյան, Ոսկանյան, Սվաճյան, Արծրունի՝ հաղարավոր ընթերցողներու հետ ամենօրյա հաղորդակցության մեջ՝ անոնց հոգիին մեջ ազատական գաղափարներու հոսանքը կթափեին, մինչդեռ Պեշիկթաշլյան հայկական թատրոնը կհիմներ, կրթական հաստատությանց զարգացմանը կաշխատեր, կաթոլիկներու և լուսավորչականներու մինչև եղբայրություն կքարոզեր, մինչդեռ Ծերենց, Մամուրյան, Բաֆֆի հայության ապագային կառուցումը կպատրաստեին, Ալիշան իր վանականի կյանքին ու գործին մեջ փակված, հեռու ամբոխեն, օրվան խնդիրներեն անջատ, ու իր աղվոր ու անհուն երազին, իր գրեթե միստիկական ազգասիրության մեջ թաղված, կշատանար իր երգողի, հավաքողի դերը կատարելով, և իր ամբողջ ճիգը կուղղեր ավելի հայ ժողովրդի անցյալը վերակենդանացնելու քան ներկան քննելու կամ ապագան հանդերձելու. Հայոց ներկային վրա Ալիշանի գործին մեջ ուրիշ բան չենք գտներ, բայց եթե այն մեկ քանի ողբերը, որ «Նահապետի երգեր»-ուն մեջ կհնչեն (Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, Լուսնակն գերեզմանաց Հայոց) ողբեր, որոնք սքանչելի են իրենց շեշտին անկեղծությամբը և արտահայտության քնքշությամբը, բայց որոնք որոշ ձգտում մը չեն պարունակեր՝ ավերակներն իրականապես վե-

բակենդանացնելու ճամփան ցույց տվող այն շատ հազվագյուտ էջերը, ուր Ալիշան գործունեության ուղի մը ուղած է մատնանիշ ընել հայ երիտասարդության, ուրիշ բան չեն բովանդակեր, բայց եթե հորդոր մը «մտավորական զբաղացումը» ընդարձակելու. Ալիշան, որ՝ հին հայ քաջերուն սխրագործությունները երգած ատեն՝ դյուցազնության, զենքի, կռվի պանծացումը կտարփուլե պողպատե տողերով,

Զայն բարձին կարկառք կանգարաց, ձայն արձակյաց Կուր.
Վիրք, Հոնք և Աղվանք ակնարկեցին առ Հայաստան.
Զարթի՛ք, վենացունք, զարթի՛ք, զայրույթք իմ բոցահուր.

Վասակն եմ սեպուհ Մամգուն, փառաց ածեմ ձեզ ձայն.
Հայոց մանկտի, ձի կալեք ընթացեք,
Արյամբ ժանտից զսուսերս քամեցեք...

Նույն Ալիշանը տարօրինակես զգույշ ու խոհեմ կդառնա, երբ խոսքը կուղղե արդի հայ սերունդին և անոր ճիգին թիբախ մը կուզե ցույց տալ. «Ծերգ Հայրենիի»-ին մեջ, կհրավիրե հայ երիտասարդությունը վերակենդանել հին հայությունը, բայց իբր միջոց ցույց կուտա ճանչնալ հայ անցյալը, ճանչցնել զայն օտարին, զարգացնել հայ լեզուն, հայ գրականությունը, ազնվացնել հայ բարքերը.

Սիրտ ի սիրտ, ձեռն ի ձեռն, եղբարք պնդեսցին.
Առ մի նպատակ լեալ ուշ ի կուրծ.
Շրթունք հրաշունչք համախոհ միտրս ծընեցին.
Մի բարբարյուն ի լանջս հանուրց.
Բազուկք հանդուրք ի շիրմաց ու ի հյանձավաց,

Ջժառանգությունս հարց անմահ պարծանաց,—
Ցուցանել ազանց զնախնիս անվանիս.
Օ՜ն և օ՜ն, եղբարք եռանդուն,
Կառուցուք մեզ սիրտ հայկազուն։

Ավագ Մասիսը, «Նահապետի երգերուն մեջ, կըսե թե «Հին փառքերը նորին պիտի գան», եթե հայերը՝

...Սիրով, հանդարտ ու խելոք
Ջանք դնեն բարվույն ու չըլնին անհոգ։

«Հուշիկներ-ուն մեջ Ալիշան իր այդ տեսությունը ավելի որոշ կերպով արտահայտած է.

«Ես չեմ վախնար ըսելու թէ Հայաստան մեկ ուրոշյալ վիճակ մը կամ նպատակ մ'ունեցեր է հառաջ քան այլ ազգեր, և որ ավելի հարկավոր է գիտնալու, դեռ այդ վիճակն լմնցած չէ: Գաղտնիք մը չի, ըսածս և ոչ խորհրդավոր բան մը, այլ հնացյա հավանություն մի հայ մտաց, թէ դեռ գործ մը ունի կատարելու երկրիս վրա, բարեբաստիկ գործ մը: Ամեն բան լմնցած չէ իրեն համար. դուռ մը պիտի բացվի իրեն համար ատեն մը... որ շատ այլ հեռու, չէ, ինչպես որ կարծեմ. այդ դուռն երկար ժամանակ կրկին և կրկին կղպած փակած չմնա պիտի. արդեն զորավոր բանալիներ կտեսնեմ, և համարձակությամբ կուզեմ ցուցնել չըլլա թէ վախնաս, մեր երջանկության ապագա բանալիին, այդ այնքան երկար ժամանակե ի վեր բաղձացյալ բանալիին, այդ բանալիին է դաստիարակությունը: Դաստիարակություն հայրենասիրական. հայրենասիրություն հեցիալ ի վերա իմաստասիրության, և ստ հիմնյալ ի վերա սուրբ կրոնից:

«...Ո՞վ Հայկակ, ո՞վ հայ պատանիք. աղեկ քաղաքացի ըլլալու համար՝ պետք է ճանչնալ սորվիլ զհայրենիս... Քննեցեք և սորվեցեք ուրեմն այդ ազնիվ և բարեբեր Հայաստանը, իբրև հայրենիք ձեր և դայակ ամենայն աշխարհի, քննեցեք այդոր բարոյականը, քննեցեք այդոր բարգավաճումն ի հարուստ լեզվին, որ ապահով գրավական մ'է բազմատեսակ հարվածներով հնձված գրականությանը. քննեցեք զայն վերջապես իր կրոնից զտությանը և իր ծիսից վայելչությանը մեջ: Այդ քննությունդ, այդ ուսումնդ, հորդոր ըլլան ձեզի ավելի քան զավելի հարգելու զհայրենիս և մշակելու զայն ըստ ամենայն նշանակության բանիս»:

Այս հակասությունը շատ հասկանալի է սակայն և շատ արդարանալի: Այն շրջանին, ուր Ալիշանի միտքը և քնարը կազմվեցան, հայ ժողովուրդը, թանձր տգիտութենե մը հազիվ սթափիլ սկսած, ստրկական բարքերը թոթափելու դեռ նոր մղված, նյութապես ու բարոյապես շատ տկար՝ հարաբերաբար դեռ շատ զորավոր թուրքին լուծին տակ, անկարող էր վերսկսելու Մամիկոնյանց կամ Ռուբինյանց առնական ճիգը. Ալիշան, ինչպես և այդ շրջանի հայ գրողներուն մեծամասնությունը, կմբռներ թէ նախ պետք էր բարոյապես, մտավորապես ամրացնել հայ տարրը, և չմղել զինքը վազաժամ հանգգնություններու, որոնք աղետաբեր կրնային ըլլալ: Ժամանակը քալեց, կրթության տարածումը և հայ անցյալին ծանոթացումը կերպարանափոխեցին հայոց նոր սերունդները, անոնց մեջ փչեցին խիզախ ու անհամբեր շունչ մը. ելան գրագետներ, ժողովուրդին ցավերը մոտեն տեսած, զանոնք անձամբ զգացած, ու միանգամայն Արևմուտքի հեղափոխական գաղափարներովը տոգորված, որոնք այլևս անբավական համարեցան անցյալին ոգումովը հայուն արդի ցավերն օրորելը և անգործնական նկատեցին միմյանց կրթության տարածմանը մեջ անոնց դարմանը փնտրելը. անոնք ցնցեցին ժողովուրդը գաղափարով մը, զոր Ալիշան,— փափուկ, կաթոգին ու խղճահար վանականի հոգի մը՝ հակառակ իր ռազմագոռ երգերուն—չէր համարձակած արտահայտել: Բայց եթե «ուղղակի» ոչ մեկ դեր կատարած չէ Ալիշան՝ հայկական շարժումին ծագմանն ու արյունոտ հառաջխաղացությանը մեջ, եթե նույնիսկ հայկական հարցը տիեզերական ուշադրության առարկա եղող խնդիր մը դարձած ատեն՝ ինքը շարունակեց, ներկայանն միշտ դուրս, անցյալին պատկերը գծելով զբաղիլ, ոչ ոք պիտի հանդգնի հայտարարել թէ Ալիշանի գործը տեղ ունեցած չըլլա հայկական շարժումին ծնունդ չ պատճառներուն մեջ. ընդհակառակն, ամենակարևորը տեղ մը կբռնե ան՝ այդ շարժառիթներու շարքին մեջ. այդ գործը որ ծայրե ծայր ուրիշ բան չէ, բայց եթե երգ մը ի պատիվ դյուցազնության և որ ուրիշ բանի չի ձգտիր, բայց եթե ապացուցանելու որ հայ ազգը մեծ, հզոր, ազնիվ, ազատ, քաջ է եղած անցյալին մեջ, անուղղակի կերպով, բայց շատ հզորապես նպաստած է հայ ազատագրական պայքարի շարժման ծնունդյանն ու աճմանը արդի հայ մտքին մեջ, որովհետև ժողովուրդ մը, երբ գիտակցությունը կունենա անցյալին մեջ մեծ ու ազատ եղած, ըլլալուն, չի կրնար երկարորեն հանդուրժել ստրկական անարգ կացության մը մեջ կապկպված մնալու, և կշտապե ամեն զոհողություն թափել՝ այդ գեղեցիկ անցյալը դրականապես վերանորոգելու համար: Ալիշանի գործը՝ սթափեցնող, ազնվացնող, ներշնչող մեծ ձայնն է եղած, որ պատրաստած և դյուրացուցած է Բաֆֆիի գործը:

Բ.

Կյանքը, զոր Ալիշան ապրած է, այնքան սիրուն է և ազնիվ, որքան իր գործը: Այդ կյանքը ամբողջությամբ ներկայացնելու համար պետք եղած ծանոթությունները ամենամեծ մասամբ դեռ կպակսին մեզի. Ալիշանի մահվան առթիվ Հ. Թորոսյանի հրատարակած կենսագրականը շատ ավելի բանաստեղծություն կպարունակե քան մանրամասնություններ, շատ ավելի կձգտի այդ անսահման կորուստեն զգացված ցավը թարգմանելու, քան այդ անհետացած կյանքին ամբողջական պատկերացումը մեզի տալու: Որո՞նք եղած են այն օտար և հայ գրագետները, որ ամենեն ավելի ազդած են Ալիշանի վրա. Փարիզի և Լոնտոնի մեջ ի՞նչ էին գործերը զոր կատարած է. ո՞ր օտարազգի անձնավորությանց հետ հարաբերություն ունեցած է. ի՞նչ եղած է իր դերը վանքին մեջ իբրև խորհրդատու, Ռափայելյան և Մուրատյան վարժարաններուն մեջ իբրև ուսու-

ցիչ և իբրև տնօրեն. որո՞նք են այն աշակերտները, զոր հասուցած է. ի՞նչ էին իր կարծիքները ազգային կամ համամարդկային այլևայլ խնդիրներու վրա. որո՞նք էին իր նախասիրությունները։ Նախապաշարումները, ատելությունները (եթե ուներ), ցավերը, հաճույքները, երազները,— այս բոլորի մասին ոչինչ, կամ շատ քիչ բան կա Հ. Թորոսյանի հոդվածին մեջ, և այդ բոլորը պետք է որ Վենետիկի միաբաններեն անոնք որ Ալիշանը մոտեն ճանչցան՝ ճանչցնեն հայ ժողովրդին, որովհետև աններելի կըլլար, որ Մխիթարյան միաբանությունը կորստյան մատներ այդ պաշտելի կյանքին մանրամասնությունները, որոնք թանկագին են հայության համար՝ իբրև լրացուցիչ, մեկնիչ անոր գործին։

Ինչ որ գիտենք այդ կյանքեն, կբավե սակայն հաստատելու համար որ այն կյանքերեն ան մեկն էր, որոնք բացարձակապես ներդաշնակ են գործին հետ, անոր հետ խառնված նույնացած են, անոր մայրն ու զավակն են միանգամայն։ Կյանք մը ամբողջ հոգեկան ու մտավորական տքնության, կյանք մը ամբողջ գաղափարի մը զոհված, կյանք մը ծայրե ծայր բացարձակ անկեղծության մը կնիքով դրոշմված։ Կյանք մը ամբողջ վանքի ու դպրոցի մեջ անցած, գրքերու վրա հակած՝ անոնցմե վերակենդանացնելու համար նվաղած անցյալին պատկերը, թարմ հոգիներու վրա ծռած՝ անոնց մեջ ցանելու համար աշխատասիրության, հայրենասիրության, գեղեցկասիրության սերմերը։ Իր բոլոր աշակրտները—և անոնցմե ոմանք փափուկ բանաստեղծներ ու հզոր գրագետներ են եղած—խանդավառ պաշտումով մը կպահեն հիշատակն այդ անզուգական ուսուցչին, որ սիրել, ապրիլ, գործել, գրել սորվեցուցած է իրենց։ Եվ իր բոլոր միաբանակիցները գուրգուրանքով խառն երկյուղածությամբ մը արտասանած են միշտ անունն այդ այնքան սիրուն, որքան մեծ մարդուն, որ ամբողջ կյանքին մեջ իր ընկերներեն ոչ մեկը չէ վշտացուցած և գիտցած է ամենուն ներշնչել անհուն սեր և անհուն հարգանք, ունենալով համեստություն մը այնքան անսահման որքան իր արժանիքը։ Այդ համեստությունը տարապայման էր. իր արհամարհանքը՝ բացարձակ, ամեն շողշողուն տիտղոսներու, պաշտոնական պատիվներու որևէ ցույցի համար։ Գեր. Հյուրմյուզի մահվընեն հետո շատ դյուրավ կրնար աբբահայր ընտրվիլ. բոլոր ուժովը հակառակած է այդպիսի ընտրության մը։ Գեղագույն աթոռը, գահերուն գահը՝ իրեն համար՝ իր աշխատողի խոնարհ աթոռիկն էր։ Բնավ չէ ախորժած որ զինքը լուսանակրեն, և գրեթե միշտ իրմե գաղտնի է որ իր լուսանկարը հանած են։ Իր հիացողներեն մեկուն, որ մտադիր ըլլալով իր կենսագրությունը պատրաստել, իրեն հարցուցած էր թե ի՞նչ տիտղոսներ ուներ և ի՞նչ շքանշաններ, Ալիշան հետևյալ պատասխանը տված է՝ «Տիտղոսնե՞րս.— հայ և քահանա. շքանշաններս.— կապաս և գոտիս». Ալիշանի ամբողջ հոգին այս երկու բառին մեջ է։

Տպավորությունը, զոր իր անձը վրաս թողուց՝ երբ երեք տարիի չափ առաջ զինքը տեսա Վենետիկի վանքին մեջ, շվարումի, խանդաղատանքի և զմայլման բուռն խառնուրդ մը եղավ. պարթև հասակով. թիկնեղ և վեհաշուք ծերունի մը կսպասեի գտնել, և տեսա փոքրիկ, թեթև, գրեթե անյուժ էակ մը, որ գետնին վրայեն կսահեր ավելի քան կքալեր, և որ իր թուչնակի վզին վրա կկրեր երկրպագելի գլուխ մը ալևոր մանուկի—ծերացած հրեշտակ մը կարծես որ երկնքեն փախեր մեր մեջն էր եկեր իր բյուրեղե երգովը պահ մը մեր ցավերն անուշցնելու համար և որ կարտորար սակայն վայրկյան մը առաջ վերաթռիլ դեպի իր հեռավոր օդակառույց կապույտ բույնը, որուն կարոտն ուներ միշտ։

Ես փափագած էի երթալ վայրկյան մը զինքն իր խուցին մեջ տեսնել՝ հարգանքս ու հիացումս հայտնելու համար իրեն. և ահա՝ առանց բոպե մը սպասցնելու՝ ինքն իսկ էր որ եկավ այն սրահն ուր կդտնվեի և առաջարկեց զիս պտըտցնել վանքին ամեն կողմերը. բոլոր աղաչանքս, բոլոր պնդումս՝ զինքը համոզելու համար որ այդ նեղությունը, այդ հոգնությունը հանձն չառնե, ապարդյուն եղան. ու ստիպվեցա. ամոթահար, շվարած, բայց բռնադատված իր անդիմադրելի ժպիտեն, ընդունիլ որ ինքը «նահապետ»-ը, առաջնորդեր ինծի սրահե սրահ. քիչ հետո, նշմարեցի սակայն, որ հոգնությունը զոր կվախնայի պատճառել իրեն, գոյություն չունեցող բան մըն էր իրեն համար. նրբանցքներեն կանցներ այնպես արագ ու թեթև քայլով մը, որ դժվարություն կկրեի իրեն հասնելու։ Այդ սեկուցած թվող լապտերը իր բոլոր բոցը դեռ պահած էր, նույնքան անրիծ ու պայծառ որքան առաջին օրերուն, միայն ճերմակ սիրուն քողով մը հիմա պատած, որ զայն մեղմացած ցույց կուտար արտաքուստ, մինչդեռ ներքնապես անփոփոխ էր ան։ Այդ ամբողջ կրակով շինված մարդը, որ իր երիտասարդության ամենեն հրեղեն օրերուն մեջ հրաժարած էր աշխարհի բոլոր հաճույքներեն ու ինքզինքը նվիրած էր վանական, «ծերունական» կյանքի մը, այդ բուռն ու փրփրահույզ խառնվածքը, որ արդեն քսան և չորս տարեկան հասակին մեջ «Հուշիկներ»-ուն և «աշուղի երգեր»-ուն, «Նահապետ»-ին, այդ հայության մեծ-հայրիկի, հայ հին փառքերուն ոսկին արդի ավերակներուն մոխիրին մեջեն փընտրող, հայ ազգին բոլոր պարծանքները, ցավերը, հույսերը երգող, ողբացող, օրհնող ծերունիի տիպարը կստեղծեր ու կհագներ, մինչև իր կյանքին վերջը, այդ տրտում ու տարտամ օրերուն մեջ իսկ, երբ հույզը երակներուն մեջ ցամքիլ և մարմինը կծկվիլ, կարկամիլ, հատնիլ ու գլուխը ձմեռնոտիլ սկսած էր մահ փայլող ճերմակներովը, երբ վերջապես ութ-

սուն տարիներու բեռը զինքը իրոք դարձուցած էր «նահապետ», իր մտքի ու սրտի երիտասարդությունը պահած էր։ Ու այդ հոգեկան զորությունը, որ անկեղծ կմնար, այնպես մեծ էր, որ կէլեկտրականացներ խարխըլած, արդեն մահեն ըմբռնված մարմնիկը և դեռ զայն կգործածեր՝ ժիր ու առույգ՝ գրելով, խոսելով, ապրելով իր բոցն արտացոլացնելու։ Մինչև վերջին օրը, Ալիշան իր գրասեղանին փակած մնաց՝ անընդհատ շարունակելով իր գործը։ Իր կյանքը վերջացեր է երբ այլևս մարմինը, հյուծված, սպառած, չէ կրցեր բավել վեր վերցնելու այդ մշտատենդ համայնածախ միտքը։ Մահվանը նախորդ օրը, վանականները՝ ինչպես կնկարագրե Հ. Թորոսյան՝ զինքը տեսեր են զվարթ ու աշխույժ. առավոտյան պատարագին և իրիկվան ժամերգության ներկա է գտնվեր, հետո խոսակցեր է միաբաններեն ոմանց հետ և «Հայապատում»-ն ու «Արշալույս քրիստոնեության ի Հայս»-ը, իր երկու վերջին մեծ աշխատությունները՝ ավարտած ըլլալուն համար գոհունակությունը հայտներ է. բայց գիշերը, հանկարծ շնչարգելություն է ունեցեր՝ ինչպես անցյալ ձմեռ ալ ունեցած էր քանի մը անգամ. բայց կրցած էր հաղթել մահվան այդ առաջին հարձակումներուն։ Այս անգամ մահն է որ կհաղթե։ Բժիշկը կհայտնե, որ վիճակը շատ ծանր է այս անգամ և խորհուրդ կուտա «Հոգևոր պատրաստությունները տեսնել» կես գիշերին մոտ տեսակ մը ժամանակավոր հանգիստ կունենա մահամերձը և կրնա քնանալ քանի մը ժամ, բայց հպիվ արշալույսը կծագի, ներքին հզոր մղում մը զինքը անկողնեն դուրս կնետե. կուզե, զգալով թերևս որ վերջին պահը մոտեցած է, իր շունչը ավանդել խաչին ոտքը, Քրիստոսի ու բոլոր հայ նահատակներու խաչին, որ իր ամբողջ կյանքին գրոշը եղավ,— մեռնիլ՝ լսելով սուրբ մեղեդիները, զոր իր հայրերը երկնեցին։ «Ժամը վեց կհնչե, կպատմե Հ. Թորոսյան,— հիվանդն աչք կբանա, կնայի շուրջը և կհարցնե. «Ժամը քանի՞ է».— «Ժամը վեց է» կպատասխանվի։ «Ո՞ւր հասավ առավոտյան ժամերգությունը», կըսե.— «Հիմակ սկսավ՝ անմիջապես կպատասխանվի։ Կզարմանա և կարգե դուրս նայվածք մը կձգե. և իբր թե աճապարանք մ՚ունենար ժամերգության հասնելու, կուզե կապան հագնիլ և անկողնեն դուրս ելլել։ Մոտը կանգնող վարդապետը կդժվարի հնազանդելու, հասկցնելով իրեն, որ կարողություն չուներ ելլելու։ Նա կկրկնե խընդիրքը և իրեն ձեռքով և ուրիշներին օգնությամբ կհագնի կապան, անկողնեն կելլե, և դողդոջուն քայլերով կուղղվի դեպի աղոթարանը, կխաչակնքե ինքզինքը և բազկատարած, եռանդագին կհամբուրե խաչելությունը. հազիվ թե կզատվի անկե, սաստիկ սարսուռ մը կբռնե զինքը, և բերնեն արյուն և սև հյութ մը դուրս տալով՝ կմարի առկայծ ճրագը,— կավանդե մաքուր հոգին իր հոգեսուն որդվոց թևերուն մեջ»։

Մահ մը, որ քերթված մըն է ամբողջ, քերթված մի ուր այդ մեծ խանդավառության, մեծ հավատքի, մեծ անկեղծության ու մեծ մաքրության կյանքը վերջին կտրուկ, բայց վեհապայծառ պատկերի մը մեջ կհամառոտվի։

Բայց մահը անիմաստ բառ մըն է՝ Ալիշանի պես մարդու մը հանդեպ։ Որքան ատեն որ հայ ազգը գոյություն ունենա, Ալիշանի գործը պիտի կենդանի մնա, և անոր հոգին պիտի հավիտենապես շողա՝ միշտ ներկա, միշտ վառ, միշտ սիրուն, միշտ տաք, ետևե եռև եկող բոլոր հայ սերունդներուն սրտին վերև, ինչպես իր երգած «Լուսնակը գեղնցիկ, լապտե՞ր աստվածավառ»։

ԳԵՐ. ԱՐՍԵՆ ԱՅՏՆՅԱՆ

Ա.

Ալիշանեն հետո, Այտնյանն ալ կկորսնցնենք. մեծ բանաստեղծեն հետո, ահա մեծ գիտունը, որ մենե իսպառ կբաժնվի. հայկական երկինքը, արդեն ահռելի ամպերով խավարոտած, կորբանա հետզհետե այն մեկ քանի խոշոր աստղերեն, որոնք իր գեղեցկագույն զարդերը ու մեր մխիթարությունը կկազմեին։ Ճշմարիտ է որ Այտնյանն ալ, ինչպես Ալիշան, կմեկնի խոր ծերության մեջ իր գործը ավարտելե հետո. բայց իր մահվան գույժը մեր սիրտը կճմլե՝ որպես թե դեռատի տաղանդի մը մագաղումն իմանալինք. Այտնյանի պես դեմքեր, որքան ալ բեռնավոր ըլլան տարիներուն դեզովը, միշտ թարմ ու կենսունակ կթվին այն ազգին, որուն բարոյական ուժը բազմապատկեցին իրենց մտավոր ճառագայթումովը, և մարդ ըմբոստացումի, սուր կսկիծի տպավորություն մը կունենա՝ անոնց վերջնական ընկլուզումն իմանալով անառավոտ խավարին մեջ։ Անոնց համար մանավանդ որ բախտն ունեցած էին այդ վեհաշուք ու միանգամայն այնքան սիրուն ծերունին մոտեն ճանչնալու, կսկիծը կրկնապես սաստիկ պիտի ըլլա։ Աչքիս առջև է միշտ իր ալևոր արծիվի վսեմ գլուխը, մազերուն ու մորուքին անհուն ձյուներուն մեջեն՝ աչքերուն երկու սև ու խորունկ ու մշտաշարժ բոցերովը լուսավորված և պարթև հասակի մը կատարը խրոխտորեն կանգուն. կհիշեմ իր պարզ, սրամիտ ու խոհական խոսակցությունը, ու այն ամբողջ անսեթևեթ ու հայրական ընդունելությունը, որով զիս պատվեց՝ երբ չորս տարի առաջ վանքին ձեռագիրներն ուսումնասիրելու համար մեկ ու կես ամիս անցուցի Վիեննա. ու այն մտածումը թե այդ հաղվագյուտ ազնվության էակը՝ որուն մեջ

այնքան պայծառ և այնքան հզոր միտք մը կվառեր՝ այլևս ափ մը մոխիր է հիմա, զիս կլեցնե անդարմանելի ցավերուն մեծ տխրությունովը։

Այտնյան ամբողջ մատենադարան մը չի թողուր մեզի՝ Ալիշանի պես, այլ մեկ գիրք մը միայն, «Աշխարհաբարի քննական քերականությունը»-ը, բայց այդ միակ գիրքը կբավե անկորուստ պահելու իր անունը, որովհետև գործ մըն է գերազանցապես ամուր ու կատարյալ, հավիտենապես կենսունակ, գործ մը, որ ոչ միայն կապացուցանե զայն իրականացնողին հզոր, պայծառ ու լրջորեն կազմված միտքը, այլև զայն հղացողին հանդուգն ու կանխատես ոգին։ Արդարև, մեծ կանխատեսություն պետք էր ու մեծ հանդգնություն՝ որպեսզի Մխիթարյան վանական մը, այսինքն գրաբարին տարամերժ պաշտումովը և աշխարհաբարին ատելությամբը տոգորված միտք մը, ելլեր աշխարհաբարին կյանքի իրավունքը հռչակեր, գրաբարի վերակենդանացման «յութոփի»-ին ու գրաբարախառն աշխարհաբարին անիմաստությանը դեմ հարձակեր, այնպիսի միջոցի մը, երբ գրաբարին դավանանքը միահեծան կտիրեր Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյաններուն մեջ (Քաթրճյան գրաբար գրած էր իր տիեզերական պատմությունը»-ը, Գարագաշյան նմանապես գրաբար՝ իր «Նկարագիր ուսմանց»-ը և գրաբարախառն այլանդակ աշխարհաբարով մը՝ իր «Քննական Հայոց Պատմություն»-ը), երբ նույնիսկ Պոլսո մեջ, բացի աշխարհաբարին դատը պաշտպանող քանի մը գրագետներ՝ գրաբարին մոլեռանդները մեծամասնությունը կկազմեին։

Եվ քաջությունը, զոր ցույց տված է Այտնյան, ավելի մեծ է անով, որ ոչ միայն ուրիշներուն այլ ինքն իրեն դեմ իսկ ստիպված էր ի գործ դնել զայն, որովհետև ինքն իսկ, ոչ միայն գիտուն, այլև արվեստագետ միտք, գեղեցկության զգացումն ունեցող, գրաբարին սիրահար էր ջերմորեն։ Բայց գերմանական լուրջ կրթությամբ մը կազմված իր միտքը գիտցած էր բանաստեղծական նախասիրությունները զոհել գիտական սկզբունքներուն անողոք ու նվիրական բագինին վրա։ Այն քննող, անաչառ, աննախապաշար ոգին, որով Քաթրճյան ու Գարագաշյան Հայոց պատմությունը վերլուծած էին, Այտնյան անոր ենթարկեց հայոց լեզուն, և տրված ըլլալով մեթոդը որուն կհետևեր եզրակացությունը, որուն հասավ՝ անխուսափելիորեն միակ եզրակացությունն էր, որուն կրնար հասնիլ. իրեն պես հստակ միտք մը չէր կրնար շնշմարիլ որ հայերը չէին կրնար բացառություն կազմել լեզուներու պատմության մեջ հաճախ կրկնված և օրենք դարձած երևույթի մը դեմ. գրաբարը, որքան ալ գեղեցիկ ըլլար, մեռած էր այլևս, ու մեռելները հանգիստ պետք է թողուլ. աշխարհաբարը գրաբարին կենդանի հաջորդն էր, և իր կենդանությունը բավական էր՝

իր գերազանցությունն արդարացնելու համար. անհրաժեշտ էր աշխարհաբարն ընդունիլ իբր գրական լեզու, և աշխարհաբարը՝ իր ինքնուրույն կազմվածքով, իր որոշ քերականությամբ ու ոճով՝ այնպես ինչպես ժողովուրդը զայն շինած էր։ Եվ Այտնյան ոչ միայն աշխարհաբարին իրավունքը պաշտպանած է, այլև անոր կազմության մանրամասն պատմությունը գծած է և այդ պատմական հիմունքներուն վրա հենելով ճշտած է աշխարհաբարի քերականությունը։

Այտնյան մեծ եղած է նաև իբրև աբբահայր։ Իր ուշիմ, եռանդուն ու ազատամիտ վարչությանը շնորհիվ է որ Վիեննայի վանքը հասած է այն բարձր գիրքին զոր կվայելե այսօր հայ ու եվրոպացի բանասերներու հարգանքին մեջ. միաբանության նորագույն գործիչները, Տաշյան, Գալեմքարյան, Մենևիշյան և այլն. իրեն՝ շատ բան կպարտին իրենց մտքին կազմությանը, իրենց գործունեության դյուրացմանը տեսակետով։ Այտընյան ամեն ազատություն տված է անոնց իրենց սիրած ճյուղերուն մեջ ուզած ձևովին հետազոտություններ, քննական ուղևորություններ ընելու. ամեն զոհողություն հանձն առած է՝ լույսի մեջ դնելու համար Տաշյանի մը տաղանդը, հրատարակելով, հակառակ հարկ եղած մեծ ծախքերուն, անոր ստվար աշխատությունները, որ քիչ ծախվելու սահմանված էին և գիտության միայն ծառայություն մատուցանելու բնույթն ունեին։ Երբ այդ երիտասարդներու խումբը «Հանդես ամսօրյա»-ն հրատարակելու գաղափարը հղացավ, վանքին «հին»-երը հակառակեցան՝ անօգուտ և իրենց պյուտճեին համար վնասակար նկատելով այդպիսի ձեռնարկ մը. Այտնյան երիտասարդներուն կողմը բռնեց, ըմբռնելով անոնց գաղափարին օգտակարությունը, և «Հանդես ամսօրյա»-ն, որ հայոց առաջին բանասիրական լուրջ թերթը եղավ, կրցավ հիմնվիլ՝ իր շնորհիվ։ Այտնյան, իբր աբբահայր, վնասակար եղած է մեկ անձի մը միայն,— իրեն. իր բոլոր ուժերը, իր բոլոր ժամանակը նվիրելով վարչական պաշտոնին, կասեցուցած է իր գիտնականի գործունեությունը, որ եթե շարունակած ըլլար խցիկի մը անդորրությանը մեջ, անշուշտ «Քննական քերականության» պես քանի մը ուրիշ գործեր կունենայինք այսօր՝ իրմե ստորագրված։ Այտնյան խորհած է որ Վիեննայի վանքին պես հաստատության մը վարչությունն ալ «գործ» մըն է, այնքան շահեկան ու գեղեցիկ որքան գրքի մը հորինումը, և սիրով զոհած է այդ գործին իր հեղինակի փառասիրությունները։ Եվ արդեն եթե դադրած է գրելե՝ աբբահայր կարգվելեն ի վեր, անշուշտ չէ դադրած երբեք մտածելե, բռնելե, խուզարկելե, և «նոր»-երը անոր մեջ հաճախ գտած են անշուշտ թանկագին թելադրիչ մը և խորհրդատու մը, և անոնց գործերուն մեջ ան՝ այսպես՝ իր աշխատակցության բաժինն ունեցած է։ Կար միայն նյութ մը

որուն համար իր վարչական զբաղմանց հատկացուցած ժամանակեն քիչ մը կգողնար երբեմն՝ անոր վրա անձնական ուսումնասիրություններ կատարելու համար, այն է հայկական եկեղեցական երաժշտությունը։ Ճըշտիվ չեմ գիտեր թե ի՞նչ ուղղության, ի՞նչ հատակագծի վրա էին այդ ուսումնասիրությունները. եթե նոթեր կամ արդեն խմբագրված էջեր թողած է նույնիսկ կիսավարտ, միաբանությունը անշուշտ զանոնք պիտի հրատարակե։ Գիտեմ միայն, որ իր այդ աշխատությանց մեկ մասը նվիրած էր հայկական պատարագը, գերման երաժշտի մը աջակցությամբ, եվրոպական երաժշտության վերածելու. անկեղծորեն պիտի խոստովանիմ սակայն, որ Վիեննա գտնված միջոցիս առիթ ունենալով ունկնդրել այդ պատարագը՝ նվագախմբի ընկերակցությամբ՝ եվրոպացի երգիչներե երգված, անախորժ տպավորություն մը կրեցի. մեր պարզ, սրտաբուխ ու մելանուշ երաժշտությունը՝ մերօրյա օպերաներու շռնդալից թատերականությունն ստացած էր այդ նոր տարազին մեջ։

Բ.

Այտնյան իր մտավոր հատկություններուն կմիացներ շատ ազնիվ սիրտ մը. անոր մեկ գեղեցիկ ապացույցը տվավ դեպքի մը մեջ զոր գաղտնի պահելու պարտքեն այլևս զերծ ենք, զոր նույնիսկ պարտավոր ենք այժմ ճանչցնել հասարակության, որովհետև այդ դեպքին մեջ Այտընյանի ցույց տված ընթացքը մին է իր կյանքին գեղեցիկ գծերեն։

Երեք տարիի չափ առաջ, Կիլիկիո ղանազան քաղաքներու մեջ, և մանավանդ Մերսին, բազմաթիվ հայեր ձերբակալվեցան՝ կարգ մը թղթեր բռնված ըլլալու պատրվակով. միևնույն պատրվակով Թուրք կառավարությունը Մերսին հաստատված ավստրիական հպատակ մը ստիպեց իսկույն երկրեն հեռանալ. ավստրական կառավարությունը, իր հպատակին դեմ եղած նախատական վարմունքին և անոր հասցված վնասին փոխարինություն պահանջեց, և նույնիսկ զրահավոր մը ղրկեց Մերսին. Թուրք կառավարությունը իսկույն համակերպեցավ Ավստրիո պահանջքին, բայց հայ բանտարկյալները մնացին բանտերուն մեջ, ու հալածանքը ավելի սաստկացավ Կիլիկիո մեջ. իրերու այդ վիճակը հաղորդեցի Այտնյանին և խնդրեցի որ Ֆրանց-Յոզեֆ կայսեր Հաճի դիմել՝ որպեսզի Թուրք կառավարության վրա ազդեցություն բանեցնե՝ «Ավստրացիի մը պատճառով» նեղվող հայերուն շարշարանքին վերջ դնելու համար. ազնիվ ծերունին չվարանեցավ կատարելու իրեն եղած այդ խնդրանքը. դիմեց կայսեր՝ որ իր անձին համար մեծ հարգանք կտածեր, և ամիս մը չանցած բոլոր բանտարկյալներն արձակված էին։

Ն. Վ. ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ

Ա.

Այնտեղ, Հայաստանի սրբավայրին՝ էջմիածնա դարավոր հովանյաց տակ, մարդ մը կա որուն կյանքը մին եղավ ժամանակակից պատմության ամենեն ողբերգական ու ամենեն բարձրորեն գեղեցիկ կյանքերեն։ Դեռ կանգուն՝ անխոնջ կորովով մը, հակառակ իր անհուն ցավերով ծանրացած ութսունվեց տարիներուն բեռանը, Ն. Վ. Մկրտիչ Ա., Հայ Եկեղեցվո Հայրապետը, ժողովրդյան պետի իր դերը կշարունակե կատարել։

Հայերու պատգամավորության մը, որ 1896-ին կերթար երախտագիտության զգացումներ հայտնել Կլատսթոնին, «մեծ ծերունին» խանդաղատանքով լուր կհարցներ հռչակավոր եկեղեցականին մասին, որուն հետ տեսակցություն մը ունեցած էր Լոնտոն, 1878-ին Պերլինի Վեհաժողովեն առաջ, և կավելցներ՝ «Մեծ մարդ մըն է անիկա»։

Այդ «մեծ մարդ»-ուն կյանքը և գործը կարժե որ ծանոթացվին, իրենց ամբողջական գծերով, բովանդակ քաղաքակիրթ աշխարհին։

Բ.

Մկրտիչ Խրիմյան ծնած է Վան, 1820-ին, աղքատ ծնողքներե։ Այդ թվականին Թրքական Հայաստանը ընկղմած կգտնվեր ստրկության ու տգիտության թանձր խավարի մը մեջ։ Թուրք բռնապետությունը, որ իր բարբարոսության ամբողջ արհավիրքովը կճնշեր պետության բոլոր ազգաբնակությանց վրա, մասնավորապես կջախջախեր հպատակ քրիստոնյա ժողովուրդները։

Այն կացությունը որուն Թուրքերը ենթարկեցին իրենց նվաճած քրիստոնյա ժողովուրդները, առերևույթ և հաշվված թույլատվության մը բոզին տակ՝ ամենագարշելին է որ կարելի ըլլա երևակայել։ Կացություն մըն էր ստրուկներու, որոնք պարտականություններ միայն ունեին և ոչ իրավունքներ, որոնք ոչ մեկ ապահովություն կվայելեին իրենց կյանքին, ինչքերուն և ընտանեկան հարկի պատվույն համար, և որոնց նկատմամբ տիրապետող «քասթ»-ին քմահաճույքը արդարության տեղ կբռներ։ Թուրքը «թույլ կուտար» որ բայան գլուխն ուսերուն վրա կրեր, և բայան պարտավոր էր, բացի մյուս տուրքերեն, երախտագիտության մասնավոր հարկ մը մատուցանել այդ գերագույն շնորհին համար։ Բացարձակապես զի-

նաթափ, զինվորական ու վարչական կյանքեն վտարված, բայան նկատված էր ինչպես փարիա մը, որ պետք էր աշխատեր իր տերերուն ծառայելու համար։ Եվ որպեսզի անջրպետը միշտ մնար տերերուն և ստրուկներուն միջև, Թուրքը «Թույլ կուտար» դարձյալ որ հպատակ ցեղերը իրենց լեզուն, կրոնքը, սովորությունները պահպանեին։ Բայաները մինչև իսկ պարտավոր էին զգեստ մը կրել որ զիրենք զանազաներ տիրապետող ցեղեն, տեսակ մը համազգեստ ստրկության. իրավունք չունեին ձի հեծնելու։ Կարող էին եկեղեցիներ կառուցանել, բայց պայմանով, որ անոնց տային համեստ բարձրություն մը, պարզ ու աղքատիկ երևույթ մը։ Այդ թույլատվությունն իսկ ոչինչ ուներ կայուն. երբ քեֆն ուզեր, Թուրքը քրիստոնյա ուսերը կզրկեր թույլատրված գլուխներեն և կամ այդ գլուխները կբռնադատեր փաթթոց կապելու. արդեն բայաները պետք էր որ ամեն տարի տային իրենց զավակներուն 100-ին 5-ը, որոնք կիսլամացվեին և կերթային կայսերական զորագունդներուն թիվն ստվարացնելու։ Թուրքերու հաստատած այս ահռելի ռեժիմին վրա կավելնար, Հայաստանի մեջ, մասնավոր բռնությունը քյուրտերուն, որոնք, մահմետական ըլլալուն համար՝ վայելելով առանձնաշնորհումներ, որոնցմե քրիստոնյաները զուրկ էին, իրենք ալ իրենց կարգին կկեղեբեին զանոնք և անոնցմե կկորզեին հարկեր, այնքան ապօրինի, որքան վայրագորեն գանձված։

Չափազանց տկար՝ թոթվել փորձելու համար այսքան անհանդուրժելի լուծ մը, չախչախված՝ զինվորական ահագին զորությանը տակ Թուրքին, որմե Եվրոպան իսկ կսոսկար, հայերը, տանելով հանդերձ գոյության այս ամոթալի պայմանները, որոնք զիրենք բռնի կմղեին դեպի բարոյական և մտավորական անկում, անեղծ պահած էին, դժբախտության մոխիրներուն տակ, քանի մը կայծ «սրբազան կրակ»-են։ Զեյթունի, Սասունի և այլ քանի մը լեռնոտ տեղերու մեջ, հաջողած էին պահպանել իրենց զենքերը և պահել գոյություն մը գրեթե անկախ։ Մտավորական կյանքի քանի մը նշույլներ կպլլային հոս ու հոն, վանքերուն խորը, սակավաթիվ դպրոցներուն մեջ՝ ուր մանչերը միայն կերթային, և ժողովրդական բանաստեղծներու հոգվույն մեջ։ Ուժեղ խառնվածքով անհատներ, եվրոպական մտածման հետ շփման մեջ մտած և հին քրոնիկներուն մեջ իրենց ժողովրդյան անցյալն ուսումնասիրած, կջանային պատրաստել ազգային զարթումը։

Ամենեն կարևորը մտավորական առողջության այս վառարաններուն, Վենետիկի Մխիթարյանց Հմուտ Միաբանությունն էր։ Այդ մեծանուն վանականները կվերակազմեին Հին Հայաստանի պատմությունը, կհրատարակեին մեկ ստվար մասը Հայ դասական գրականության գործերուն, որ թաղված կմնային ձեռագիրներու փոշվույն մեջ, հայերենի կթարգմանեին

Արևմուտքի գրական հրաշակերտներեն շատերը, և հիմը կդնեին հայկական նոր գրականության մը՝ եվրոպական ձգտումներով տոգորված, ազատության, գեղեցկության, ներդաշնակության խանդավառ սիրով մը թրթռուն, մարդկային արժանապատվության պաշտամունքը փառաբանող։

Օժտված՝ ճոխ և ուժեղ բնությամբ մը, կրակոտ ու անկախ խառնվածքով մը, Մկրտիչ Խրիմյան, իր պատանության օրերեն իսկ, ուսանելու անդիմադրելի պետք մը զգաց՝ շրջակա անկումեն վեր բարձրանալու և իր շրթայակից եղբայրներուն բարձրացման նպաստել կարենալու համար։ Չգոհանալով այն նիհար կրթությամբը զոր ինքզինքին տված էր ընթերցմամբն այն բոլոր գրքերուն, զոր կրցած էր ձեռք անցընել, փափագելով ընդլայնել իր ծանոթությանց դաշտը և մասնավորապես ուսումնասիրել հայ ժողովրդին ներկա պայմանները Արևելքի ամեն մասերուն մեջ, քսան տարեկանին մոտ՝ ձգեց իր հայրենի քաղաքը, իր կինն ու մեկ հատիկ զավակը, և մեկնեցավ երկայն ճամփորդության մը համար։ Անցավ պարսկական Հայաստանեն, ռուսական Հայաստանեն, և եկավ Պոլիս ուր բավական ատեն մնաց։ Այդ միջոցին, նշանակելի փոփոխություն մը հառաջ եկած էր Թուրք կառավարության վարմունքին մեջ դեպ ի բայաները։

1827-ի ռուսո-Թուրք պատերազմը, հունական ապստամբության բարեհաջող ելքը, տկարացուցած էին թրքական զորությունը և օսմանյան Պետության մեջ Եվրոպայի ազդեցությունը զորացուցած։ Թրքական Հայաստանին և պարսկական Հայաստանին մեկ մասը անցած էր ռուսական տիրապետության տակ, և հայերը, այս նոր կացության մեջ, գտած էին կյանքի ապահովություն, օրենքի առջև հավասարություն, և որոշ չափով ազատություն՝ ցեղին վերանորոգման նպաստավոր։ Գալով Թուրքիո հպատակ մնացած հայոց, ատոնք կտեսնեին մեծ խրամատ մը բացված, որմե ազատության շունչը, Եվրոպայեն գալով, կմտներ օսմանյան անհուն Պասթիլլին գարշահոտ ու հեղձուցիչ մթնոլորտին մեջ։

Կյուլհանեի խաթթը, զոր Սուլթան Մեճիտ արձակեց 1839-ին՝ այնքան Եվրոպայի ճնշման տակ, որքան Մեծ Եպարքոս Բեշիտ փաշայի անկեղծորեն վերանորոգչական ներշնչմամբ, առաջին անգամ ըլլալով կճանչընար պետության բոլոր հպատակներուն՝ առանց կրոնքի ու ցեղի խտրության՝ օրենքի առջև հավասարության սկզբունքը, կձգտեր եվրոպացնել վարչությունն ու դատարանական կարգուսարքը, կանոնավորել տուրքերու գանձումը և զինվորական ծառայությունը, հաստատել ամենուն համար՝ կյանքի, ինչքերու և պատվո ապահովությունը։ Այս խաթթին մեջ հայտնված սկզբունքները ճշտապես ու ամբողջապես չգործադրվեցան, որովհետև մահմետական զանգվածները դեռ պատրաստ չէին այսպիսի

հիմնական բարեկորոգումներ ընդունելու և կենսունակ դարձնելու համար, բայց ատոր հետևանքով բայաներու կացությունը բավական զգալի բարվոքում մը կրեց, մանավանդ մեծ քաղաքներուն մեջ (գավառներուն մեջ, պայմանները գրեթե անփոփոխ կմնային). քրիստոնյաները կարողացան այնուհետև, կեդրոններու մեջ՝ ինչպես Պոլիս, Իզմիր, եվն. բավական մեծ ազատություն մը վայելել դպրոցներ հիմնելու, գրական շարժում մը զարգացնելու համար. Եվրոպայի համալսարաններու կամ Մխիթարյանց դպրոցին մեջ կազմված հայեր այդ մտավոր վերականգնման ջանքերուն նախաձեռնարկներն եղան, շարունակելով, ընդլայնելով և հանրայնացնելով գործը որուն հիմը իրենք իսկ Մխիթարյանները դրած էին։

Խրիմյան հարաբերության մտավ Պոլսո հայ մտավորական դասին հետ։ Այդ հմուտ մարդոց շրջանակին մեջ իր կրթությունն ընդլայնեց, իր գրական մշակումը ճոխացուց. մասնավոր խնամքով մը կարդաց և ուսումնասիրեց մանավանդ Մխիթարյանց հրատարակած պատմական, բանաստեղծական, բանասիրական արտադրությունները։

Այդ թվականին հրատարակեց իր առաջին գործը, Հրավիրակ այրարատյան։ Քերթված մըն է՝ յոթ զրվագով, դասական հայերենով գրված և Հայկական հին տաղաչափությամբ։ Հեղինակն այնտեղ կներկայանա իբրև Հայրենիքի պատվիրակ մը, որ օտար երկինքներու տակ ծնած հայերը կհրավիրե երթալ իրեն հետ այցելել նախահարց երկիրը, սքանչացմամբ դիտել անոր բնական գեղեցկություններն ու հինավուրց հիշատակարաններու պատկառելի ավերակները որ հոն կքնանան մոռացության մոխիրներուն տակ։ Խանդավառ առաջնորդը իր պանդուխտներու կարավանը կտանի նախ Արարատ և շրջակայքը, կվերակենդանացնե հին զրույցներն ու ավանդությունները, բնանկարներու շքեղություններն ու հողին հարստությունները, կերգե, երկրագործներու և հովիվներու կյանքը կպատկերացնե, կփառաբանե ազատ անցյալը և ներկա ինկածությունը կողբա, հետո կանցնի Վաղարշապատ, բնակավայր Արշակունի թագավորներուն, հետո ավերակներն Անիի, Բագրատունյաց մայրաքաղաքին, այդ հոյակապ ոստանին, ուր հայկական ճարտարապետությունը իր բարձրագույն զարգացմանը հասավ, հետո հաջորդաբար կերթա Սեպուհ լեռը, ուր կանգ կառնե բարոյախոս բանաստեղծ Հովհաննես Պլուզի դերեզմանին վրա, Օշական՝ ուր կխոնարհի շիրմին առջև Մեսրոպի, մեծ վարդապետին որ Ե. դարուն հնարեց հայկական այբուբենը և ազգային գրականությունը հիմնեց. հետո կանցնի Ավարայրի դաշտը, ուր Վարդան Մամիկոնյան, Հայոց սպարապետը, կռվեցավ Ե. դարուն՝ Պարսից դեմ, որոնք կուզեին գրադաշտական կրոնքը բռնի ընդունիլ տալ Հայոց. հետո՝

Վան, Վարագ, Արտամետ, Հոգվոց վանքը, ուր կհանգչի Մեծն Տրդատ, որ, Դ. դարուն սկիզբը, քրիստոնեությունը Հայաստանի պաշտոնական կրոնքը դարձուց և այդպեսով հայ միտքը վերջնականապես ուղղեց դեպի արևմտյան քաղաքակրթությունը. հետո՝ Նարեկա վանքը, ուր ապրեցավ, Ժ. դարուն, Գրիգոր Նարեկացի, հանճարեղ միստիկական բանաստեղծը. ուղևորություն կավարտե այցելելով Տարոնը, ծննդավայր Մամիկոնյանց, հետո Աշտիշատը, ուր գահեց Սահակ, Մեծ Կաթողիկոսը, որ, Ե. դարուն, խումբ մը դեռատի հայեր Բյուզանդիոն ղրկեց որպեսզի հոն ուսանին, և անոնց վերադարձին՝ այդ Արևմուտքի ոգվով տոգորված հայերու աջակցությամբ՝ եվրոպական քաղաքակրթության մը հիմերը դրավ Հայաստանի մեջ. կանգ առնելե հետո Հայաստանի մեծ պատմագրին Մովսես Խորենացվո գերեզմանին առջև, կվերադառնա Բյուրակնյան լեռները, ուր իր քերթվածը կփակե խոսքը տալով նույն ինքն Հայաստանին որ, Մորմ մը դեմքով անձնավորված, օտար երկիրներու մեջ ցրված իր զավակները կհրավիրե հիշել զինքը, գալ խմբվիլ իր շուրջը և վերականգնել զինքը այն թշվառությենեն ուր կմնա գետնամած։

Կարելի չէ անշուշտ նկատել այս քերթվածը, ինչպես բոլոր գրքերը, զոր Խրիմյան հրատարակած է հետո, իբրև գեղեցկագիտական տեսակետով անթերի գործ։ Խրիմյան երբեք չէ ձգտած դեպի զուտ արվեստը. գրականությունը իրեն համար, ամեն բանե առաջ՝ գործունեության միջոց մը եղած է. բայց իր մեջ կա ճշմարիտ բանաստեղծ մը, որ կհայտնվի արդեն, ու փայլով, այս առաջին երկին մեջ, բանաստեղծ մը քնքուշ ու տաք զգայնությամբ, բնական ու պարզ ներշնչմամբ, որ ինքզինքը կարտահայտե ոճով մը համեղ, թեպետ անհավասար, քնարերգությամբ ու սրամտությամբ լեցուն, մերթ հզոր, միշտ տոգորված՝ տոհմային շեշտված նկարագրով մը. գեղջկական կյանքի տեսարանները, զոր այս քերթվածին մեջ նկարած է, զմայլելի են գունագեղությամբ ու կենդանությամբ. վեհ տրտմություն մը կարտաշնչվի այն հատվածներեն ուր վաղընջուց ավերակները կխուզարկե և հին հերոսներու ստվերները կոգե, ինչպես հետևյալ կտորին մեջ.

Այլ արդ ո՞ւր մեր քաջահավատ իշխանք փառաց և զորության,
Այս ամեն քաջաց որդիք այսպես մեռան արիապանծ։
Մրշեցի մարք ծնան ըզնոսին և զոհ եղուն վասն հայրենյաց.
Եվ արդ չի՞ք հայնց ի միջի ոչ հարք ոչ մարք առաքինիք,
Որ դարձյալ ըստ առաջնուն ծնանին մանուկ դյուցազն և քաջ։
Մեք որդիք եմք այն քաջաց, այլ հույժ ետնյալ և հեղգացյալ,
Որ սովորույթ ունիմք միայն պարծիլ զնախնյոք մեր քաջագործ,
Կամ իբրու գլայկան մանուկ նըստիլ ողբալ զաղետքս մեր.

Արիական հոգին ի մեզ, ա՜հ մեռյալ է, և չէ ի կյանս.
Ո՞վ զոգի նախնի քաջաց նոր դարձուսցե հորդիս ետին։
Աստվա՜ծ միայն, որ ի քարանց գիտես հանել ըզմարդ հրաշիվք,
Հրամա՜ն տուր Մըշո քարանց, թող նոր հառնեն Մուշեղք, Վահանք,
Հրամա՜ն տուր Աշտիշատա, թող ի շիրմեն ելցե Սահակ,
Հրամա՜ն տուր Հացիկ գյուղին, թող բուսանի Մեսրոպա հասկն։

Այս գրքին երևումեն քիչ հետո, Խրիմյան մեկնեցավ Պոլսեն ու գնաց Կիլիկիա, հետո Երուսաղեմ, ուր մնաց ատեն մը՝ Ս. Հակոբյանց հայկական վանքին մեջ. այնտեղ շարադրեց և ի լույս ընծայեց իր երկրորդ մեծ երկասիրությունը, քերթված մը՝ Հրավիրակ երկրին ավետյաց տիտղոսով, նմանապես դասական հայերենով գրված, (այդ միջոցին հայ գրագետները դեռ կկարծեին թե արդի հայերենը անկարող էր իբր գործիք ծառայել բարձր գրականության)։ Այս քերթվածին մեջ, հեղինակը կհարատև և կմեկնաբանե, ջերմ ու երփնագեղ քնարերգությամբ մը, Քրիստոսի կյանքը, մահ և գործը, նկարված՝ բնական «տեքոր»-ին մեջ, իսկ այն վայրերուն, որ շրջանակեցին Վեհաշուք Դեմքին երևումը։

1853-ին, Խրիմյան դարձավ Վան։ Իր կինն ու դուստրը մեռած ըլլալով, որոշեց եկեղեցական ասպարեզն ընդգրկել՝ ամբողջապես անձնատուր ըլլալու համար հանրային գործին, և Աղթամարի վանքին մեջ վարդապետ ձեռնադրվեցավ։

Այնուհետև, իր բոլոր ուժերով սկսավ աշխատիլ իր Հայաստանի հայրենակիցներուն մտավոր ու բարոյական վերականգնմանը. ջանաց մասնավորապես թոթվել թմրությունը որ կտիրեր վանքերուն մեջ, գրնթե բոլոր եկեղեցականներուն մոտ. հիշեցուց անոնց քաղաքակրթիչի ու դաստիարակչի դերը, զոր կատարած էին անոնց փառավոր նախորդները՝ Դ. և Ե. դարերեն սկսյալ, հրավիրեց զանոնք հետևիլ նախահարց օրինակին, վանքերուն մեջ հիմնել դպրոցներ՝ հմուտ կղեր մը պատրաստելու համար, հանրային վարժարաններու թիվը բազմապատկել և տալ անոնց անհրաժեշտ կատարելագործումները, ի վեր հանեց մասնավոր կարիքը աղջկանց վարժարաններ հիմնելու, ինչ որ բոլորովին կպակսեր՝ ազդեցությամբ մահմետական բարքերու, որ մինչև աստիճան մը թափանցած էին հայոց մեջ։ Այդ կոչն արձագանք չգտավ. նույնիսկ Խրիմյանի դեմ հարույց, տգիտութենե ու նախապաշարումներե կուրացած կղերական շրջանակներուն մեջ, խուլ թշնամություն մը։

Խրիմյան չվհատեցավ. հասկցավ միայն, թե ամեն բան իր ձեռքովն ընելու էր, և թե ատոր համար հարկավոր էր որ ունենար նյութական ու բարոյական աջակցությունը Պոլսո հայոց, որ այդ պահուն Թուրքիո հայ

հասարակության ուղեղը կկազմեին։ Ճամփա ելավ ուրեմն դեպի մայրաքաղաքը։

Գրկաբաց ընդունվեցավ այնտեղ։ Իր համբավն արդեն մեծցած էր Պոլսո հայ գաղութին մեջ։ Հոն կգնահատեին իր այնքան լուսամիտ որքան կրակոտ հայրենասիրությունը, ուժն ու գեղեցկությունն իր նկարագրին, որուն բաղկացուցիչ տարրերն էին խանդավառություն, անձնվիրություն, անշահախնդրություն և անսահման բարություն մը. իր երկու քերթվածները իրեն գրաված էին գրահմուտներուն համակրությունն ու հարգանքը. քարոզները զոր հաճախ արտասանեց քաղաքին բոլոր եկեղեցիներուն մեջ և զոր խուռնամբոխ կերթային ունկնդրել, կհրապուրեին, կհուզեին, կէլեկտրականացնեին ժողովուրդը. այդ քարոզները, որոնց մտերիմ ազդվությանը ոչ մեկ հայ քարոզիչ կրցած է հասնիլ, խոսվրտուքներ էին ավելի, պարզ, ինքնեկ գնացքով մը, բնական ու թափանցող շեշտով մը. ուր սրտե բխած արցունքներ՝ և որ կփոխանցվեին ունկնդիրներուն՝ պարզուկ «յումուր»-ի մը սիրուն ցայթքերուն կխառնըվեին. մարդ կկարծեր լսել նույն ինքն հոգին հինավուրց հայրենիքին որ կխոսեր այդ անձնեղ ու գեղեցիկ եկեղեցականին բերնով։

Մտավորական վերածնության շարժումը կերազեր ու կզորանար այդ միջոցին. շատ մը ամսաթերթներ ու լրագիրներ, Պոլիս ու Իզմիր տրպված, կտարածեին ազատագրական գաղափարներ, հայ հասարակության կծանոթացնեին արևմտյան ձգտումները, գիտության հառաջադիմությունները, անոր կճանչցնեին իր անցյալը, զայն կհրավիրեին վեր կանգնիլ այն անկումեն ուր ստրկությունը հասուցած էր զինքը։ Դպրոցներու թիվը կբազմապատկվեր. կսկսեին ազգային թատրոն մը հիմնել։ Խրիմյան Պոլսո հայոց մտավորական շարժման պարագլուխներուն բացատրեց որ, եթե կուզեին լրջորեն վերականգնել հայ ժողովուրդը, ամեն բանե առաջ պետք էր ցեղին բնավայրին մեջ իսկ ուսում տարածել, «Եթե կուզեք, կըսեր իր պատկերավոր լեզվով, ծառը զորացնել, պետք էր արմատին հոգ տանիլ»։ Պոլսո հայերը ջերմորեն պատասխանեցին այս կոչին։ Խրիմյան նորեն մեկնեցավ Վան, իր առաքելությունը լիովին կատարած ըլլալով. այնտեղ կերթար, վանահայր կարգված Վարագա վանքին, քանի մը խանդավառ ու օժտված աշակերտներով ընկերացած, և հետը տանելով տպարանի մը ամբողջ կազմածը և գումար մը իր ձեռնարկելիք գործին սահմանված։

Վան հասնելուն պես, հիմնեց դպրանոց մը Վարագա վանքին մեջ, հոն հաստատեց փոքրիկ տպարան մը, և սկսավ հրատարակել գրական ամսաթերթ մը Արծվի Վասպուրական տիտղոսով։ Այդ ամսաթերթը կպարունակեր պատմական, տեղագրական ուսումնասիրություններ,

քերթվածներ, բարոյական խորհրդածություններ, քրոնիկներ. իրեն նպատակ ուներ հայ ժողովրդին ճանչցնել իր անցյալը և անոր մեր արթընցընել ազգային արժանապատվության զգացումը, իր իրավունքներուն գիտակցությունը, հառաջադիմության սերը։ Շատ տարածված էր Թրքական Հայաստանին մեջ, Պոլիս, և նույնիսկ Կովկաս ու պարսկական Հայաստան, և իր բարոյական ազդեցությունը շատ մեծ եղավ։ Դպրանոցը, ուր Խրիմյան իբր աշակերտ ընդունեցավ բազմաթիվ պատանիներ Վանեն, Շատախեն, Մոկաց երկրեն, Մուշեն, պարսկական Հայաստանեն ու ռուսական Հայաստանեն, արտադրեց քանի մը սերունդներ գիտակից հայրենասիրությամբ մը համակված ուսյալ եկեղեցականներու, որոնցմե ոմանք հետո եղան մեծարժեք գրագետներ, ֆոլքլորագետներ, բեմասացներ ու գործիչներ, ինչպես Գարեգին Սրվանձտյանց եպիսկոպոսը, Արսեն Թոխմախյան, Արիստակես Տեր-Սարգիսյան, Եղիշե Տեր-Մարգարյանց վարդապետները, ևն։ Նույն ինքն Բաֆֆի, Հայոց ազգային մեծ վիպասանը, որ ծագմամբ պարսկահայ, հետո՝ Թիֆլիս հաստատվեցավ և արտադրեց ամենակարևոր գործեր՝ ազատության ուժեղ շնչով մը համակ, Թրթռուն, քանի մը ամիս անցուց՝ իր ասպարեզին սկիզբը՝ Վարագա վանքին մեջ, և Խրիմյանի կրակոտ ու լուսամիտ հոգվույն բեղմնավոր ազդեցությունը կրեց։

Քանի մը տարի ետքը, Խրիմյան Մուշի մեջ հիմնեց Վարագա գործունեության մասնաճյուղ մը. դպրանոց մը և տպարան մը իր խնամքով հաստատվեցան Ս. Կարապետի վանքը, և ամսաթերթ մը, Արծվիկ Տարոն տիտղոսով, սկսավ լույս տեսնել հոն՝ խմբագրապետությամբ Վարագա վարպետին ամենեն փայլուն աշակերտին՝ Գարեգին Սրվանձտյանցի։

Վերանորոգման այս բոլոր գործունեությունը մեծ դժվարությանց մեջ է որ կատարվեցավ, զոր կհարուցանեին՝ մեկ կողմե՝ Թուրք իշխանությունները, և՝ մյուս կողմե՝ հայ կղերամոլ ու խավարյալ միջավայրները. Թուրքերը գեշ աչքով կդիտեին այդ լուսավորության ու հայրենասիրության վառարանին զարգացումը Հայաստանի սրտին մեջ. և սակայն, Խրիմյանի գործը ո՛չ Թուրքիո դեմ ուղղված էր ո՛չ մահմետական կրոնքին դեմ. ան ուղղված էր տգիտության, բռնության և մոլեռանդության դեմ. շատ լավ հասկնալով տգետ ու ավազակությամբ ապրող ցեղերով պաշարված ըլլալու անպատեհությունը որուն ենթարկված էին հայերը, Խրիմյան պատվական գաղափարն ունեցած էր քյուրտերը հրավիրելու, որ իրենց զավակները հայոց դպրոցները ղրկեն, և իր կոչը ապարդյուն չէր մնացած։ Թուրք կառավարությունը խոչընդոտները բազմապատկեց Խրիմյանի գործունեության դեմ, այնպես որ քիչ հետո ան ինքզինքը ստիպված տեսավ Վարագա վանքը ձգել ու նորեն Պոլիս երթալ։ Այնտեղ ինքզինքը

պաշտպանեց, հաջողությամբ, Բ. Դրան մոտ, այն ամբաստանությանց դեմ, զոր իր վրա ծանրացուցած էին, ինքզինքը Մուշի Ս. Կարապետ վանքին վանահայր անվանել տվավ, և գնաց հոն՝ իր գործունեությունը վերսկսելու, շարունակելով հանդերձ Վարագա գործին վերին ղեկավարությունն իր ձեռքն ունենալ։

Մուշ, գրած է անգլիացի հյուպատոս մը, որ հոն պաշտոն վարած է, Թուրքիո ամենեն հոռի վարչությունն ունեցող քաղաքն է. հասկանալի է թե որքան ահռելի պետք է ըլլա բայաներու կացությունը ամենեն հոռի վարչությունն ունեցող քաղաքին մեջ պետության մը, ուր ամենուրեք անճոռնի է վարչությունը։ Խրիմյան մոտանց տեսավ այն ողբալի պայմաններն, ուր կգտնվեին հայերը՝ ձգված Թուրքերու և քյուրտերու քմահաճույքին, որ զանոնք իբր իրենց ճորտերը կնկատեին, կկեղեքեին, կշահագործեին, կվիրավորեին իրենց կրոնական զգացմանց մեջ՝ փողոցներեն պտրտցնելով շուներ, սկիհ մը վզներուն կախված, առանց երբեք պատժվելու պաշտոնյաներեն, որոնք, ընդհակառակն՝ անոնց հարստահարությանց կօժանդակեին տուրքերը հավաքելու իրենց կամայական ու ելուզակային եղանակով։ Սկսավ մանրամասն տեղեկագիրներ ուղղել Պոլսո Պատրիարքարանին և Դռան, բողոքելով իրերու այս զզվելի դրության դեմ, թվելով անհամար և ամրապես ապացուցված իրողություններ կեղեքմանց, անարդարությանց, վայրագությանց. հուսկ ապա՝ ինքն իսկ գնաց Պոլիս, այս տաժանելի կացությունը կառավարության անձնապես պարզելու և Դռան աղերսելու համար, որ միջոցներ ձեռք առնե անոր վերջ մը տալու։

Դուռը ոչ մեկ միջոց ձեռք առավ։ Ան միշտ կշնորհեր բավական մեծ ազատություն մը Պոլսո, Իզմիրի հայոց, ինչպես բոլոր մեծ քաղաքներուն, ուր կտիրապետե Եվրոպայի ազդեցությունը, բայց կկարծեր ճարպիկ քաղաքականության մը հետևել՝ ձգելով որ քյուրտերն ու պաշտոնատարները քամեին, տկարացնեին, ջախջախեին ժողովուրդը Հայաստանի մեջ։ Խորապես խաղաղասեր, աշխատասեր ու պետության օգտակար տարր մը՝ այդպեսով հուսահատության մղվելով, ըմբոստացման տարրի կփոխարկվեր։ Մուշի տպարանը, ինչպես և Վարագինը, քիչ հետո խափանվեցան, և Դուռը որոշեց որ այլևս որևէ տպարանի մը հաստատումը չարտոնվեր Հայաստանի մեջ։

1869-ին, Պոլսո հայոց պատրիարք ընտրվեցավ։ Այդ պաշտոնին գլուխն անցնելով՝ ան ավելի ուժգնությամբ շարունակեց իր բողոքները, Բ. Դռան մոտ, «Հայկական խնդրույն» նկատմամբ, որ միջազգային հարց մը դառնալե առաջ երկայն ատեն ծեծվեցավ Թուրք կառավարության և հայոց միջև։ Թուրք կառավարությունը ոչինչ ըրավ գոհացում տալու հա-

մար Հայոց արդար և տարրական պահանջներուն, որ ուրիշ բանի մեջ չէին կայանար, բայց եթե ուզելու օրենքի առջև հավասարությունը, քյուրտերու զինաթափումը, տուրքերու կանոնավոր գանձումը։ 1873-ին, շատ մը դժվարությանց հետևանքով, զոր Թուրք կառավարությունը կհարուցաներ իրեն դեմ, Խրիմյան ստիպվեցավ հրաժարիլ Պատրիարքութենե։ Իրեն հաջորդեց Ներսես Վարժապետյան արքեպիսկոպոսը, որ կորովի կերպով շարունակեց Խրիմյանի սկսած գործը։ Այս վերջինը ատեն մը գրական գործունեության մեջ ամփոփվեցավ, հաջորդաբար հրատարակեց հետևյալ երկերը, «Մարգարիտ Արքայության երկնից», «Դրախտի ընտանիք», «Խաչի ճառ», «Սիրաք և Սամվել», «Պապիկ ու թոռնիկ», են։ Այս գործերեն — որ բոլորն ալ արդի հայերենով և արձակ գրված են — առաջնին մեջ, Ավետարանի գլխավոր պատվերները կընդլայնե և կմեկնե։ «Դրախտի ընտանիք»-ը կպարունակե նկատողություններ ու խրատներ ամուսնական կյանքի, այր և կնոջ, զավակներու և ծնողաց փոխադարձ պարտականության վրա։ «Խաչի ճառ»-ը տեսակ մը արձակ քերթված է, որ հաճախ կելլե մինչև բարձր քնարերգություն մը, երգելով ու մեկնաբանելով Քրիստոսի չարչարանքը։ «Սիրաք և Սամվել»-ը խրատներու շարք մըն է՝ երիտասարդներու ուղղված՝ բնական և ընկերական օրենքներու, մարդկային պայմաններու անհավասարության, ժողովուրդներու և կառավարություններու հարաբերությանց, աշխատության, հառաջադիմության, ազգերու զարգացման և անկման, «Հանճարի դուստր, և հառաջադիմության մայր» գիտության մասին։ «Պապիկ ու թոռնիկ»-ը զմայլելի գիրք մըն է, որ հուզված վրձինով մը կնկարե հայ գյուղացիներու կյանքը, բարքը, աշխատանքը, սովորությունները, հանդեսները, և դեռատի գեղջուկներուն խրատներ կուտա՝ իրենց սիրցնելու համար դաշտերու պարզ ու առողջ կյանքը, անոնց բացատրելու համար ինչ որ կա գեղեցիկ ու հավիտենական՝ հայրենի ավանդության մեջ, և հորդորելու համար զանոնք որ առաքինության և հառաջադիմության ճամփեն ընթանան։

Գ.

1877-ին, երբ Միտհաթ փաշայի «պետական հարված»-ին հետևանքով՝ Սուլթան Համիտ արձակեց համբավավոր ֆերմանը, որ օսմանյան կայսրության Սահմանադրություն կշնորհեր, Խրիմյան, խանդավառված այս դեպքեն, զոր Արևելքի համար նոր թվականի մը բացումը կնկատեր, հրատարակեց գրքույկ մը «Ժամանակ և խորհուրդք յուր» տիտղոսով։

Անոնք որ ենկարծին թե հայերը մղված են եսական հայրենասիրությամբ մը և թե անտարբեր են զիրենք շրջապատող ժողովուրդներուն հառաջադիմության, կբավե, որ կարդան այդ աղնիվ գրվածքին հետևյալ կտորները։

«...Հասավ, հասավ այն ազատաբեր ժամանակ. քեզ ավետիս կուտամ, ժողովո՛ւրդ, լռած լեզուդ և փակված բերանդ բա՛ց այսուհետև, խոսի՛ր և գրե՛ որչափ սահմանադիր օրենք քեզ ազատություն կուտա. խոսի՛ր երբ կզրկվիս, խոսի՛ր դատավորաց առաջ, երբ ապերախտ ձեռք զքեզ կապտակեն. խոսի՛ր և իրավունք խնդրե՛։

«...Ո՜վ բարեգուշակ ժամանակ, դու բարի եկիր մեր աշխարհ. քեզ կակնկալեր և կսպասեր Թուրքաստանի հինավուրց մայր՝ որ ամուլ էր և հրաշյուք հղացավ. ցավ, երկունք կալավ. զինքն իրրև ծննդականի. երկնեց երկնեց և այսօր ծնավ մեզ համար մի նոր մանուկ՝ Սահմանադրություն։ Ցնծացեք, ստրո՛ւկ ժողովուրդ, ցնծացեք և ողջունեցեք այս նորածին մանուկ և միանգամայն աղոթեցեք որ կայտառ մնա, ապրի, զորանա և զարգանա ի կատարյալ հասակ։

«...Ո՜վ դուք որ նորածին «Մանուկ Սահմանադրության» իբրև իմաստուն դայակ կհանդիսանաք աշխարհի առաջ, ավագ աչքով հսկեցեք այդ մանկան վրա, պինդ բռնեցեք և գուրգուրալով պատսպարեցեք զինքն... Եվ գիտե՞ք ու կտեսնե՞ք քաջ, որ թե օտար, թե՛ նույնիսկ մեր աշխարհին մեջ դորա թշնամիներ շատ կան, որ կշրջին ամենուրեք։ Գուցե դարան գործեն տգետ ու խավարագնաց մարդիկ, անտեսանելի մթության մեջ զողնան այդ մեր սիրական մանուկ և կամ անդեն յուր խանձարուրին մեջ ճնշելով ու նեղելով խեղդեն։ Եվ ի՞նչ կլինի այն ժամ, գիտե՞ք դուք, ո՜հ, եաին չար քան զառաջինն։

«Տքնեցեք ուրեմն, տքնեցեք, որպես անքուն պահապան, հզոր կամքով զինվեցեք ամեն դարանագործ թշնամյաց դեմ, շուրջանակի պատնեշ փակելով՝ մանուկ Սահմանադրություն ընդ մեջ առնելով, ողջ պահեցեք, որ երթալով աճի ու զորանա, յուր օրենքով տիրե և ուղղե Թուրքաստանի աշխարհավարության ուղին։

«Ահավասիկ այս զարգացած մանուկն է, որ Եվրոպիո բարգաքակրթություն կներմուծե մեր հին աշխարհ. հին ժողովուրդ նոր օրենքով կվերանորոգի...

«Շատ անագան մնացինք, ափսո՜ս. խելամտի՛նք այսուհետև. հին աշխարհի ժամանակն յուր օրենքովն անցավ, նոր ժամանակ նոր օրենք կուտա մեզ, զի նոր մարդիկ նոր օրենք կխնդրեն. հին դարերու նախա-

պաշարումնք այլևս ծերացավ ու զառամեցավ, պետք է մեռնի և աշխարհեն բարձվի յուր հիշատակ, որ եղծեց ու ապականեց արևելյան մեր կայտառ աշխարհ։ Այսուհետև մեր փրկություն, մեր կյանք և մեր շահն այն է միակ, որ ընդունինք արևմտյան ապգաց լույսն, օրենք և քաղաքակրթություն և այն ամեն հառաջադիմության ճանապարհ, հորում նոքա հառաջացան քան զմեզ, և մեք հետս մնալով, ո՜հ կթափառինք այսպես խոտորյալ և մոլորյալ անհետ ու անել բավիղներու մեջ»։

Խրիմյանի արտահայտած այս իանդգվառությունը՝ բոլոր հայերուն զգացումն էր։ Անոնք կկարծեին թե սահմանադրական ռեժիմը պետությունը ճշմարտապես պիտի կերպարանափոխեր, լրջորեն պիտի իրականացներ մահմետական և քրիստոնյա հպատակներու օրենքի առջև հավասարությունը. մեծարժեք Հայ մը, Գրիգոր Օտյան, արդեն, խորհրդականն ու աշխատակիցը եղած էր օսմանյան սահմանադրության հայր Միտհատ փաշային։ Բայց այդ հույսերը շուտով ցնդեցան։ Խրիմյանի պերճախոս դիմառությունը իզուր մսխված քնարերգություն էր։ 1877-ի սահմանադրությունը, զայն շնորհող Սուլթան Համիտին մտքին մեջ, ուրիշ բան չեղավ, բայց եթե խաղ մը՝ պուլկարական հարցը խեղդելու համար. հայտնի է թե ինչպես, և ինչ դյուրությամբ, ջնջվեցավ ան՝ Պերլինի Վեհաժողովեն հետո՝ այն ձեռքովն իսկ որ զայն շնորհած էր. բայց իր հապճեպ մահվընեն ալ առաջ, այդ շատ կարճատև սահմանադրական ռեժիմը երևան հանեց, թե պետության մահմետականները դեռ որ աստիճան անպատրաստ էին իրենց ու ռայաներուն միջև իրական հավասարություն ընելու. Խրիմյան իրավունք ունեցած էր իր ուրախության թռիչներուն մեջ տարակույսի և մտահոգության քանի մը հարցանշան դնելու. նոր ռեժիմին հաստատումը հոչակող ֆերմանին արձակումեն քիչ հետո, Վանա թուրքերը հայոց շուկային վրա հարձակեցան, թալեցին ու կրակի տվին զայն, բոլորովին սնանկացնելու համար քաղաքին հայ ազգաբնակությունը։ Ատի գործադրությունն էր Պոլսո մեջ կազմված ծրագրի մը. այդ դեպքեն առաջ մայրաքաղաքին թուրք լրագիրներեն մին բացե ի բաց հայտարարած էր, թե Թորքիա կարող էր իր բոլոր ուժը Պալքաններու կողմը կեդրոնացնել, քանի որ հայերը որևէ վտանգ չէին ներկայացներ՝ բացի Վանա քաղաքեն, ուր հարկավոր էր զսպել կասկածելի տարրերը. «զսպումը» կատարվեցավ հրդեհումովն ու թալանումովը խաղաղ ազգաբնակության մը որ ոչ մեկ ապստամբական կամեցություն ցույց տված էր։

Խորապես հուզված այդ աղետքեն որ կհարվածեր իր ծննդավայր քաղաքը, Խրիմյան հրատարակեց գրքույկ մը՝ Վանգուժ տիտղոսով, աբձակ քերթված՝ աստվածաշնչական ոճով, ուր կնկարագրեր այդ եղեռնական հրդեհեն առաջ եկած ահավոր թշվառությունը և չարագործները կխարաներ.

«...Պատահար քո՝ երկնից պատահար չէր, այլ նույնիսկ քո երկրեն և մեջեն. հին դրացի քաղաքացիներդ դավեցին զքեզ. նոքա որ քեզ հետ կուտեին հայրենի սեղանեն, որ քու ճակատին քրտանց վաստակով լիապես կհագենային, ո՜հ անխնայաբար ոտնակոխեցին բարելից հացի սեղանդ։

«... Միթե նա, որ հափշտակեց ընկերին հաց, նա հա՞շտ պիտի ուտե։ «Ո՜չ, ոչ. զրկանաց ու հափշտակության հաց առավոտեն մինչև իրիկուն չի տևեր, շուտով կսպառի. զի ան հացն է միայն արդար ու անսպառ՝ որ մարդոց ճակատին քրտանց արդար վաստակն է...

«...Ի՜նչ խորհրդավոր օր էր հրափորձությանդ օր, ո՜վ անբախտդ Վան. միթե այն օր քեզ համար սև օր էր, երբ Թուրքաստանի պայծառ օր կսկսեր, երբ Բյուզանդիոնի Վսպորեն հրանոթներ կորոտային, և Օսմանյան միապետ ինքնակալ կայսր սահմանադրություն կկնքեր այն ուրախ օրերում, ո՜հ, մոլեգնության հուրն զքեզ լափեց, ծուխով ու մոխրով խեղդեց քո խնդության ձայն ու շունչ։

«...Թուրքաստանի վերանորոգ սահմանագրության տոնին անշուշտ զոհ մը պետք էր, և այն փառավոր զոհ դու մատուցիր, ժողովուրդ հայոց...

Ռուսո-Թուրք պատերազմը պայթեցավ. ռուս բանակները խոյացան մեկ կողմե Պալքաններու մեջ, մյուս կողմե՝ Թրքական Հայաստանի մեջ, ուր կտիրեին սիստեմականորեն կազմակերպված թալանն ու հրդեհը։ Պատերազմը իր գերագույն սաստկությանը հասցուց մահմետականներու կատաղությունը Հայաստանի քրիստոնեից դեմ. Թրքական իշխանությանց հրամանով, գյուղերը, որպես թե երկիրը ռուսերուն դեմ պաշտպանելու համար, հայ քաղաքներուն ու գյուղերուն վրա թափեցան, հազարավոր անզեն մարդիկ կոտորեցին, կիներ բռնաբարեցին ու կոշկոճեցին, ամբողջ գյուղեր այրեցին՝ բովանդակ Վասպուրականի նահանգին, Բասենի ու Բագրեվանդա գավառներուն և Մշո դաշտին մեջ։

Խրիմյան այդ միջոցին հրատարակեց երկրորդ գրքույկ մը՝ «Հայգուժ տիտղոսով, ուր կառավարությունը կամբաստաներ իբր դրդիչ այդ գազանական վայրագությանց.

«Մարախի ու թրթուրի նման թափեցան, հայոց գյուղեր և դաշտեր ծածկեցին, մի խուռն ժամանակի մեջ ամեն կանանչություն կերան ու չորցուցին, այն շեն-շեն գյուղեր և ավաններ անապատ դարձուցին։

«Եվ ո՞յք էին քյուրտերու անկարգ հրոսակներու վարիչ և առաջնորդ.— նոցա մոլեկրոն դենպետներն էին, որոնց ոգիներն ի բնե անտի

ոխությամբ լցված կղզյրանային հայոց ժողովրդին դեմ. մանավանդ, երբ կլսեին և կհավատային իսկ թե այս պատերազմ հանուն քրիստոնեից ազատության կմղե հյուսիսային պետությունն։

«...Այո՛, դենպետներու կրոնամոլության հուր կվառեր զիրենք, այլ ի՞նչ հուր էր այն, որ իր ներքուստ զդենպետներ կվառեր։

«Ո՜հ, մի՛ կրկտեր, այդ հուրը, գրի՜չ իմ, գրի՜չ իմ, կբորբոքի և զքեզ կայրե. թող այրե, թող այրե, և աճյունս երթա խառնվի հայոց այրած ժողովուրդի աճյունին հետ»։

Դ.

1878-ին, ռուս բանակին հաղթանակեն հետո, Ներսես Պատրիարքը Սան-սթեֆանո գնաց՝ ռուսաց բանակատեղը՝ խնդրել մեծ դուքս Նիկոլայեն, որ հայկական գանգտիքը նկատողության առնե խմբագրվելու վրա եղող դաշնագրին մեջ։

Թուրք կառավարության ապուշ ընթացքն էր, որ հայերը կստիպեր այս խիզախ, բայց բացարձակապես անհրաժեշտ դարձած դիմումն ընելու։ Հակառակ այն տխուր պայմաններուն, ուր թուրք բեժիմը կպահեր հայերը թրքական Հայաստանի մեջ, ասոնք ամենամեծ մասամբ համոզված էին որ, իրենց ազգային գոյությունը պահպանելու համար, նախընտրելի էր կապված մնալ Թուրքիո հետ։ Բայց այն կույր համառությունը որով թուրք կառավարությունը կթողուր զզվելի կեղեքման մը շարունակվիլը Հայաստանի մեջ՝ ճարահատության մղեց հայերը, որ զայրացած էին, տեսնելով պետության ամենեն աշխատասեր, ամենեն անձնվեր ու խաղաղ տարրը՝ վայրագ պաշտոնատարներու և ավազակությամբ ապրող ու տուրք վճարել չուզող քյուրտերու քմահաճույքին ձգված։ Սահմանադրությունը, որմե պահ մը հուսացած էին փրկությունը, դառնապես հուսախաբ ըրած էր զիրենք, ուրիշ բան չէր տված իրենց, բայց եթե հրդեհը Վանա և ջարդերը ամբողջ Հայաստանի մեջ. օր մը, հայ երեսփոխանը Պ. Պալարյան, Պոլսո խորհրդարանին մեջ, հայկական խնդրույն վրա խոսելով, հիշեց մեկ բառը էրզրումին վալիին, որուն հարցուցեր էր թե ինչո՞ւ թուրք կառավարությունը թույլ կուտար որ քյուրտ ելուզակներ հայոց պես օգտակար տարր մը ջախջախեին, և որ պատասխաներ էր, թե ատիկա հիքմեթի հյուքյումեթ (կառավարական գաղտնիք) մըն էր. բոլոր թուրք նախարարները, որ ներկա էին այդ նստին, լսեցին վալիին այդ շնչան բառը և նշանակալից լռություն մը պահեցին[1]։

[1] Մինաս Չերազ, Լ«Արմենիա», սեպտ. 1894

Անհրաժեշտ էր լուծել այդ անհանդուրժելի «կառավարական գաղտնիքը», վերջ դնել իրերու վիճակի մը, որ ամենեն անսանձ կամայականության ու անարդարության վրա էր հաստատված. անհրաժեշտ էր ազատել այդ «ստրուկ»-ի կացութենեն, զոր թուրք բեժիմը կպարտադրեր բայաներուն. հայերը դիմեցին ուրեմն Եվրոպային, զոր կներկայացներ Ռուսիան։ Ճշմարիտ է, որ նույնիսկ այդ դիմումին մեջ, Թուրքիայեն բաժնվիլ չէ որ կպահանջեին, լուրջ պաշտպանություն մը միայն կպահանջեին իրենց անձեռնմխելի իրավանց, պաշտպանություն, զոր թուրք կառավարությունը կմերժեր իրենց շնորհել և զոր այլևս Եվրոպայեն միայն կրնային հուսալ. Ներսես Պատրիարքը հաջողեցավ ստանալ Սան-Ստեֆանոյի դաշնագրին 16-րդ հոդվածը, որու շնորհիվ Հայկական հարցը միջազգային հարց մը կդառնար։ Քիչ հետո. Խրիմյան Ներսես Պատրիարքեն պաշտոն ստացավ երթալ, Խորեն Նարպեյ արքեպիսկոպոսին հետ, Հայկական դատը ներկայացնել Պերլինի Վեհաժողովին. Պերլին երթալե առաջ, երկու արքեպիսկոպոսները, ընկերակցությամբ Պ. Չերազի, այցելեցին Եվրոպայի մայրաքաղաքները՝ Պետությանց նախարարներուն պարզելու համար Հայկական Հարցին իսկությունը և անոնց աջակցությունը խնդրելու անոր լուծմանը։ Պատգամավորությունը կուզեր վարչական ինքնավարություն մը՝ Պետությանց վերահսկողության տակ, Լիբանանու մեջ հաստատված բեժիմին նման բան մը. ան ստացավ 61-րդ հոդվածը, որով Բ. Դուռը հանձն կառներ «Հայաբնակ նահանգներուն մեջ անհապաղ մտցնել տեղական պետքերուն պահանջած բարոքումներն ու բարենորոգումները և հայոց գոյության ապահովությունը երաշխավորել չերքեզներու և քյուրտերու դեմ», և պետությունները հանձն կառնեին «այդ բարենորոգումներուն գործադրության վրա հսկել»։

Թուրքերուն տարրական շահը կպահանջեր ուղղամտորեն գործադրել այդ հոդվածը, ամեն պատրվակ ջնջելու համար Հայաստանի կողմեն ռուսական նոր գարձակման մը։ Թուրք կառավարությունը ճիշտ հակառակն ըրավ իր գանդիսավորապես Եվրոպային խոստացածին. փոխանակ քյուրտերը զսպելու, պաշտոնապես զինեց զանոնք՝ համբավավոր «Համիտիյե հեծելագունդերը» կազմելով, քաջալերեց զանոնք կեղեքելու, տկարացնելու և կամաց-կամաց ջնջելու հայ տարրը. Եվրոպան անշարժ մնաց, գրեթե բացարձակ անտարբերությամբ մը։

Ե.

1879-ին Խրիմյան դարձավ Վան։ Խորապես տխրած էր այն վատ արդյունքեն, զոր տված էր Պերլինի Վեհաժողովը։ Իր հայրենակիցներուն,

որ իրմե կխնդրեին միջոց ցույց տալ դարմանելու համար կացություն մը, որ ևս քան զեվս անտանելի կդառնար, կկրկներ ինչ որ Պերլինի Վեհաժողովին լիազորներեն մին հայ պատգամավորներուն ըսած էր մասնավոր տեսակցության մը մեջ. «Երբ քյուրտերը հայոց վրա կհարձակին, ասոնք ուրիշ բան չունին ընելու, բայց եթե զենքով պատասխանել»։ Թուրք կառավարությունը հետո ամբաստանեց Խրիմյանը իբր գրդիչ հայ հեղափոխական շարժման. ան ուրիշ բան չէր ըրած, բայց եթե քարոզել իր հայրենակիցներուն, որոնց կյանքն, ինչքերն ու պատիվը զազիր ավազակներու ձեռքը մատնված էին, օրինավոր ինքնապաշտպանության տիեզերականորեն հարգված սկզբունքը։

Իր հակահայ քաղաքականության համար վտանգավոր նկատելով Խրիմյանի ներկայությունը Հայաստանի մեջ, Թուրք կառավարությունը զայն Պոլիս բերել տվավ 1885-ին։ Այդ թվականին հեղափոխական խմբում մը կսկսեր արդեն հայտնվիլ քանի մը խմբակներու մեջ՝ դեռ շատ սակավաթիվ երիտասարդ հայերու, որ քոմիթեներ կկազմեին և բուռն միջոցներով գործունեության կձեռնարկեին՝ Եվրոպայի ուշադրությունը Հայկական խնդրույն վրա հրավիրելու և 61-րդ հոդվածին գործադրությունը ստանալու նպատակով։

1890-ին, Երզրումի խռովության և Քում-Քափուի ցույցին հետևանքով, Խրիմյան Բ. Դոնեն հրավիրվեցավ երթալ երկարատև ուխտագնացություն մը ընել Երուսաղեմ։ Դիմակավորյալ աքսոր մըն էր։

Զ.

1892-ին Խրիմյան միաձայնությամբ ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեցավ։ Թուրք Կառավարությունը սրտնեղեցավ այդ ընտրությենեն, զոր նկատեց իբր ապստամբական ցույց մը, և մրմռալով հավանություն տվավ Խրիմյանի մեկնումին։ Այս վերջինը, իմաստուն և բարեշնորհ ընթացքով մը, Սուլթանեն ունկնդրություն խնդրեց էջմիածին երթալու համար Թուրքիայեն բաժնվելե առաջ։ Սուլթանը մերժեց զայն ընդունիլ։

Կովկասի հայերը հաղթական ընդունելություն մը ըրին Խրիմյանին։ Շատոնց ի վեր հայ ժողովուրդը անոր տված էր «Հայոց Հայրիկ» տիտղոսը։ Իբր ճշմարիտ հայ ազգին՝ բարձրացավ Գրիգոր լուսավորչի աթոռը։

Իր Հայրապետության շրջանը հայոց պատմության ամենեն հուզյալ, ամենեն ողբերգական վայրկյաններեն մեկ եղավ։

Ռուս կառավարությունը, Աղեքսանդր Բ.-ի մահեն ի վեր՝ հետադիմական ու հեռալից քաղաքականության մը մեջ մոլորած, սկսած էր հայոց նկատմամբ բռնել որոշ թշնամական դիրք մը. քիչ հետո, Անդրկովկասի բոլոր հայ դպրոցները փակել տվավ. Կալիցին իշխանը, Կովկասի ընդհանուր կուսակալ, իբր միակ պաշտոն ունենալ կթվեր, ջախջախումը հայ տարրին։

Թրքական Հայաստանի մեջ սիստեմատիկորեն կազմակերպված հալածանքները երթալով կբազմապատկվեին։

Հայ հեղափոխական շարժումը իր կողմեն հետզհետե կսաստկանար։

Մուսա-Պեյի դատը, որ մեծ աղմուկ հանեց, արդեն կրակը տված էր վառոդին։ Այդ քյուրդ ավազակապետը իր անունը նշանավոր էր դարձուցած այն բազմաթիվ ու ահռելի ոճիրներովը, զոր գործած էր Հայաստանի մեջ. հայերը զայն դատի քաշեցին Պոլիս, անոր պատժվիլը պահանջելով. Թուրք դատարանը, հակառակ անթիվ ու ակնհայտ փաստերու, որ ելուզակին հանցավորությունը կհաստատեին, անպարտ արձակեց զայն. ոչ մեկ թրքական բողոք բարձրացավ, նույնիսկ ազատական ընտիր դասին կարգերեն. Եվրոպական դեսպանատուներն են, որ, այդ ծայրահեղ անարգարությենեն զզված, պահանջեցին և ստացան ոճրագործին պատժվիլը, իրավ է որ իր պատիժը ուրիշ բան չեղավ, բայց եթե խարդախված ու հանգստավետ աքսոր մը։ Այսքան հրեշային անիրավություն մը՝ միայն խրախուսել ու արդարացնել կարող էր գործունեությունը հեղափոխական քոմիթեներուն, որոնց ուժն ու ազդեցությունը հետզհետե շատցավ։ Եթե քանի մը սահմանափակ տարրեր, այդ գաղտնի ընկերությանց մեջ, կձգտեին երբեմն զեղեցիկ երազներու վրա հիմնված ծրագիրներու, կվող խումբերուն մեծամասնությունը տրամաբանական ու բանավոր պահանջմանց գերազանցապես գործնական հողի մը վրա կմնար։ 1893-ին, Մարզվանի քոմիթեն կարձակեր Թրքերեն լեզվով մանիֆեստ մը՝ ուզելով կոչ մը, որ հայ պայքարողներուն մեծամասնության ճշմարիտ զգացումներ կարտահայտեր.

«Դուք մեր թշնամիներն եք դարձած, կըսեր այդ մանիֆեսթը Թուրքերուն, որովհետև կկարծեք թե հայկական հեղափոխությունը մահմետականներուն դեմ է ուղղված... Դուք ձեզ զոհերը կդարձնեք կառավարության մը, որ փայփայելով հոշոտող անարգ պաշտոնյաներե բաղկացած է, և հավատարի՞մ կմնաք այդպիսի կառավարության մը։ Մենք գող ու լափող պաշտոնյաներուն դեմ ենք և ոչ թե մահմետականներուն կամ մահմետականության։ Անհրաժեշտ է վերջ դնել այս անգութ պայ-

մաներուն. առանց թուլնալու պետք է հիմնեն քանդել այդ փտած ու սնանկացած կառավարությունը։ Կրնանք մեր նպատակին հասնիլ, եթե ամենքս միացած ըլլանք հասարակաց թշնամույն դեմ, մեզի նշանաբան ունենալով՝ «Արդարություն, օրենք և իրավունք, Մզկիթը մահմեդականներուն և եկեղեցին քրիստոնյաներուն»։

Այս կոչը լսելի չեղավ. և որովհետև կառավարության կողմե սարքված հալածանքները օրեօր կշատնային, մահմեդականներու և հայերու միջև փորված անդունդը երթալով կլայնար։ 1894-ին պայթեցավ դեպքը Սասունի, որու քաջ լեռնականները պաշարվեցան, ծուղակը ձգվեցան և կոտորվեցան կանոնավոր զորքի և պաշտպանքներու քանի մը զորագնդերե, որովհետև փորձած էին զենքով դիմադրել քյուրտերու հարձակման մը։ Հետևանքովն այդ եղելության, որ ահագին իրարանցում առաջ բերավ Եվրոպայի մեջ, մանավանդ Անգլիա, Հայկական Հարցը պահ մը օրվան խնդիրը դարձավ. Անգլիա, զգալով հայոց հանդեպ իր մասնավոր պատասխանատվությունը՝ Պերլինի Վեհաժողովին մեջ իր դիվանագիտության բռնած դիրքին պատճառով, ուժգնապես ձեռք առավ Հայկական դատը, ու Եվրոպայի մյուս տերությունները հրավիրեց իրեն միանալ՝ արդար լուծում մը տալու համար անոր։ Բայց Լոպանոֆ, Հանոթո և Վիլհելմ Բ. ընդդիմացան անգլիական ծրագրին իրագործման և թույլ տվին «մեծ մարդասպանին», որ գործադրե իր ծրագիրը, ծրագիր մահու և քանդման։ Երեք հարյուր հազար անզեն ու խաղաղ մարդկային արարածներ խողխողվեցան Սուլթանին հրամանով, հրաման, որ կետ առ կետ գործադրվեցավ ոչ միայն քյուրտերեն ու կանոնավոր զինվորներեն, այլև նույն ինքն թուրք ժողովուրդեն. գտնվեցան՝ անշուշտ, ազնիվ բացառություններ թուրքերուն մեջ. տեսնվեցան նույնիսկ պաշտոնատարներ և յուլեմաներ, որ իրենց դիրքը վտանգեցին անզգամ հրամանին գործադրությանն ընդդիմանալով կամ ջարդողներեն հալածված հայեր ազատելով. անոնց կհայտնենք ամբողջ հարգանքը, որուն արժանի են։ Բայց ատոնք բացառություններ էին. թուրք ժողովուրդին ստվար մեծամասնությունը (մանավանդ գավառներուն մեջ), նշանակված զոհերուն վրա խուժեց, թալանեն օգտվեցավ, ձեռքերը անմեղ արյունին մեջ թաթխեց. տեսնվեցան թուրքեր, որ խողխողեցին իրենց դրացիները, իրենց մանկության բարեկամները՝ որ իրենց տունը ապաստանած էին։ Ուրֆայի մեջ, ուր ոչ մեկ հեղափոխական գոյություն ուներ, թուրքերը հարձակեցան հայոց թաղին վրա, կողոպտեցին ու ջարդեցին բոլորովին խաղաղ ազգաբնակություն մը և վերջ ի վերջո կրակ տվին եկեղեցվույն, ուր ապաստանած էին երեք հազար հոգի, այր, կին ու մանուկ, որոնք հոն գտան մահ մը զարհուրելի։ Թուրք ցեղը այսպես կվարձատրեր հայերը՝ այն ամենակարևոր ծառայության համար, զոր անոնք մատուցած էին իրեն՝ ոչ միայն այն ամեն բանով, զոր ըրած էին ամբողջ Տաճկաստանի մեջ երկրագործությունը, ճարտարարվեստը, արվեստները զարգացնելու համար, այլև այն անձնվեր ջանքերով, զոր թափած էին եվրոպական քաղաքակրթությունը թուրք աշխարհին մեջ մտցնելու համար[1]։

Արյունի և ավերի այս ամբողջ շրջանին մեջ Խրիմյան ատատպետցավ, գործեց և մաքառեցավ իր ժողովրդին հետ։

Է.

Խրիմյան բողոքեց այդ կապտիչ արարքին դեմ, և երբեք չհավանեցավ, հակառակ կառավարության բոլոր ճնշումին, այդ անարդար որոշումը իր ստորագրությամբ վավերացնելու։ Կովկասի հայերը իրենց իրավունքները պաշտպանեցին բուռն կորովով։ Միահաղույն ոտքի կանգնեցան դիմադրելու համար այդ բիրտ ավարառման փորձերուն, բռնավորական կամայականության, քստմնելի կեղեքման այդ ամբողջ սիստեմին։ Կառավարությունը վերջ ի վերջո մոլեգնած թաթարներն արձակեց հայոց դեմ։

Մռայլ օրեր եղան ատոնք վեհաշուք ծերունույն համար, որ ինքզինքն իր ժողովուրդին հետ խաչված կզգար։ Եվ սակայն չկորսնցուց ո՛չ քաջությունը մաքառելու, ո՛չ արդարության վերջնական հաղթանակին վրա հավատքը։ Եվրոպայի հայերուն, որ իր ծննդյան 85-րդ տարեդարձին առթիվ, անոր նվիրված էին իր կիսանդրին Պ. Տեր-Մարուքյանե բանդակված, հետևյալ խոսքերով կպատասխաներ. «...Այլ սակայն, ըստ Դավ-

[1] Հայերը թուրքերու մեջ մտցուցին եվրոպական թատրոնը և տպագրությունը. նպաստեցին թրքական լրագրության մը կազմությանը. փորձեցին անոնց մեջ տարածել մերօրյա ձգտումները, քննադատական զգացումը. որմեհետև թրքական համալսարաններ կան Պոլիս, մեծ մասամբ հայեր են որ այնտեղ ուսուցած են ֆրանսերեն լեզուն ու գրականությունը, մաթեմատիկական և ֆիզիկական գիտությունները, քաղաքական տնտեսագիտությունը, են։ Օսմանյան սահմանադրությունը իբր հայր ունի այնքան հայազգի Օտյանը որքան թուրք Միտհաթը։ Նույնիսկ Կովկասի մեջ՝ միևնույն դերը խաղացած են. այն ժամանակ երբ դեռ Կովկասի թուրքերը կամ թաթարները ոչ մեկ գրական շարժում ունեին, Արծրունին էր. հայ մեծ հրապարակագիրը, որ իր Մշակին մեջ զանոնք հրավիրեց լրագիրներ հիմնել ու մամուլի միջոցով ազատական եվրոպայի ձգտումները տարածել մահմեդական գանգվածներուն մեջ։ Իր հրավերին վրա է, որ լույս տեսավ Կովկասի առաջին թրքերեն լրագիրը, բայց դժբախտաբար իր հիմնված օրեն իսկ՝ մոլեռանդորեն մահմեդական ձգտումներե ներշնչվեցան։

2 Տպագրվում է մասնակի կրճատումներով (Ս. Կ.)։

թի ես համբերելով համբերի Տեառն և համբերից մինչև Հայեսցն յիս ի վշտացյալս և ողորմեսցի ինձ ըստ մեծի ողորմության յորում, զի հավատամ բոլորով սրտիվ՝զի ոչ ի սպառ անտես առնե Տէր զազգն մեր և զհայրենի աշխարհն։ Հույսն ապագա պայծառ և փառավոր ավուրցն մխիթարե զիս տակավին, և ես կամ մնամ իբրև զծերունին այն տաճարին, որ ակնկալեր Երկնային լուսոյն մեծավ անձկանոք, որ ետես և ընկալավ ի գիրկս յուր և գոհ սրտիվ օրհնյաց զԱստված ասելով՝ «Արդ արձակյա՛ զծառայս քո, Տէ՛ր, ի խաղաղություն»։

Զարը հուսկ, ուրեմն դարմանեց գործված սխալը, Հայ եկեղեցին դարձնելով իր ինքնավարությունը, հրամայելով հայոց դպրոցներուն վերաբացումը և լուծված ընկերությանց վերահաստատումը։

Ը.

Այն պահուն, ուր ռուս բանակները Մանչուրիո մեջ պարտություն պարտության վրա կկրեին, Ս. Փեթերսպուրկի կարգ մը կրոնամոլ շրջանակներու մեջ զրույց մը պտրտեցավ, որ այդ ձախողվածները կվերագրեր անեծքին, զոր Հայոց Հայրապետը, որպես թե, արձակած ըլլար Զարին դեմ՝ ռուս պաշտոնատարներու ձեռքով էջմիածնա գանձարանին կողոպտման միջոցին։ Զարը ինքն իսկ ազդված ըլլալու է այդ զրույցեն, քանի որ մեկե ավելի անգամներ Կաթողիկոսին դիմեց՝ անոր աղոթքը խնդրելու համար ի նպաստ ռուս բանակին։ Այս պատմությունը ապահովապես գերագրգռված միստիկական երևակայություններու հնարք մըն էր. Խրիմյան ճշմարիտ աշակերտ մը Քրիստոսի, չի դիտեր անիծել. թերևս խնդրած է Աստուծմե, որ ազատե Ռուսիան այն Զարի զորություններե. որ զայն կխեղդեին իրենց ծանր աղչամուղներուն տակ։ Այդ բաղձանքը, զոր շատ հավանականաբար հայտնած է իր սրտին խորեն, իրականանալու վրա է՝ շնորհիվ ազատագրության սքանչելի ճիգին, զոր կկատարե ռուս ժողովուրդը։ Ռուսիան ազատության ու հառաջադիմության մեծ երկրի մը փոխվելու մոտ է։ Առաջին գործերեն մին այդ ազատական Ռուսիային, որուն հաղթանակը անտարակուսելի է՝ հակառակ այն քառասային վիճակին, որ հոկ. 30-ի ձարական մանիֆեսթին հաջորդեց, պիտի ըլլա ապահովապես՝ համաձայնիլ արևմտյան պատմությանց հետ, արդար ու վերջնական լուծում մը տալու համար Հայկական Հարցին։ Կարելի է հավատալ, թե իր աչքերը փակելե առաջ, հայ Սիմեոնը ազատության և արդարության սավառնիլը պիտի տեսնե իր հայրենիքին սգավոր լեռներուն վրա։ Այսպես, այդ երկար ու պատկառելի կյանքը Հայ Առաքյալին,

կյանք ծանր աշխատանքի, մեծ ցավերու, ազնիվ երազներու և հրավառ հավատքի, պիտի ավարտեր իրականացած արդարության գեղեցիկ վերջալույսով մը։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

1893-ին Պոլսո «Հայրենիք»-ին մեջ հետևյալը կգրեի մեր եկեղեցական երգերուն մասին.

«...Ի՜նչ խոր շեշտ հավատքի, ի՜նչ հզոր թռիչ կրոնական զգացման, ի՜նչ բարձր վերացում աստվածային խոկմանց, ի՜նչ ճոխություն վեհ մտածմանց, պերճ պատկերներու և վսեմ բացատրությանց, և ի՜նչ լեզվի անբաղդատելի ներդաշնակություն՝ այդ երգերուն մեջ, որ դեռ այնչափ երիտասարդ են դարավոր կյանքե մը հետո. և այդ ամենուն հետ, այն ի՜նչ անուշ, անբացատրելի կերպով անուշ երաժշտություն է, որ նյութին ու բառին համեմատ, երբեմն տրտում, մելամաղձության արցունքներով կթավալի, երբեմն զվարթ, վերին հրճվանքի լայն հորդումով մը կժայթքի, Աստուծո զգացմամբ առլցված հոգիին բոլոր սլացքներն ամենեն խորին արտահայտությամբ թարգմանելով։ Ի՜նչ դյուցազներգություն, ի՜նչ ընդարձակ և ամբողջական դյուցազներգություն է այն, զոր աստվածային մարտիրոսին վերջին շաբաթեն ներշնչվելով, մաս առ մաս հորիներ են մեր հայրապետները. ինչպե՜ս ամեն բան մեկ աղբյուրե, լուսեղեն աղբյուրե մը, կբղխի հոն, և ինչպես ամեն բան հրաշալի ներդաշնակությամբ մը կկապվի, մարմին մը կկազմե, յուրաքանչյուր մասն իր հատուկ ձևն ու գույնն ունենալով, և այդ մասերը ամբողջություն մը կազմելով։ Եվ նյութին ու արտահայտության այդ համագոյությունն ալ այն պարզ պատճառովը չէ՞, որ հեղինակները իրենք իսկ եղած են անոնց ոչ միայն հղացողն ու գրողը, այլև եղանակողը, ճիշտ ինչպես անոնցմե այնչափ հետո ըրավ Վակներ, որ յուրաքանչյուր բառի համապատասխան խազ մը գտնել ուզելով, ինքը գրեց իր երաժշտության խոսքերը։ Եվ ինչքան սխալ է այն դատաստանը, որով միօրինակ գտած են մեր եկեղեցական երաժշտությունը։ Միօրինա՞կ. բայց հոն անձնյուր եղանակ այնպե՜ս իր անհատականությունն ունի, որ մարդ անոր գույնը կտեսնե ունկընդրած ատեն. ճերմակ ստվերներու։ ծածանիլը չե՞ք զգար Ավագ Հինգշաբթի սրբասացության խաղաղ ու լայն դաշնակությանը մեջ, սև թախծության մը թանձրանալը չե՞ք իմանար «լացի գիշերվան» սարսռազդեցիկ ողբերուն մեջ, և կարմիր ցնծության բոց մը՝ Զատկի առտվան մեծագոռ երգերուն մեջ, որ Քրիստոսի հաղթանակը կտարփողեն։

«Պետք էր որ ավելի ընդարձակ և ավելի բազմակողմանի գնահատումով մը հարգեինք այդ պատվական նշխարները մեր հին քաղաքակրթության։ Պետք էր որ քերթվածներն իրենց զուտ կրոնական գույնին հետ սկսեին գեղարվեստական գույնն ալ ստանալ, այնպես, որ զանոնք միայն եկեղեցիին մեջ չլսեինք, այլ մեր տունը, մեր գրադարաններուն մեջ ունենայինք անոնց հավաքածուն՝ Աստվածաշունչին, Ս. Հայրերուն, «Հիսուսի Նմանության», Տանթեին և Միլտոնին քով։ Պետք էր, որ ամեն հայ գրող պարտք համարեր ուսումնասիրել զանոնք և անոնց ճշմարտապես տոհմային ոգիովը թափանցվեր։ Պետք էր, որ քննադատությունը զանոնք իր մեկնություններովը լուսավորեր, անոնց գեղեցկություններն ի վեր հաներ, անոնց տեղը որոշեր ընդհանուր գրական պատմության մեջ։ Պետք էր որ մեր երաժշտագետները ավելի ուշադրություն դարձնեին այդ եղանակներուն վրա, ճշտեին զանոնք և վերջնականապես արգիլեին եղծվելե, ինչ որ կսկսին ըլլալ քմահաճ ու տգետ երգողներու բերնին մեջ, և նույնիսկ անոնց ուղղակի ներշնչման տակ երաժշտական գործեր արտադրեին, ինչպես Չուհաճյան ըրած է թրքական եղանակներու համար»։

Այս հոդվածը քմծիծաղ մը արթնցուց գրական պաշտոնակիցներես ոմանց դեմքին վրա. չպակսեցան անձեր, որոնք վրաս խնդացին այս «տիրացության» անիմաստ հարումիս, «ծիծաղած ու անարվեստ լալկանություններու» նկատմամբ այս ետադարձ հիացումիս համար։ Քնացուցիչ շարականներու վրա զմայլի՞լ, Պեթովընի ու Վակների դարուն մեջ... և «մոտերնիզմ»-ով տոգորված, որևէ ասիականության հանդեպ անհաշտ արհամարհանքի որոշում տված այդ «եվրոպացիալ»-ները իմ սքանչացմանս մեջ հանենտեությամբ ու ժամասիրությամբ շաղախված ցեղի մը առհավական վերազարթումը կկարծեին տեսնել և կարգահատեին վրաս։ Այդ պարոններուն արհամարհանքը իմաստակ և արգահատանքը անիմաստ էր բնականաբար. ճիշտ Պեթովենն ու Վակները խորապես սիրելուս համար էր, որ ես սքանչացում կունենայի մեր հին երաժիշտներուն վրա, որոնք շատ ավելի պարզ ու նախնական ոլորտի մը մեջ, կրցեր էին, ըստ իս, ուրվագծել՝ անկեղծ հոգեբուխ ու վսեմ երգերով՝ ինչ որ այդ տիեզերական հանճարները հսկա սահմանի մը մեջ պիտի իրագործեին մեր դարուն։ «Նոր»-ին սերը երբեք պետք չէ փակե քննադատին ու գեղասերին առջև հինին գեղեցկության ըմբռնումը. Վակներ ու Պեթովընն իրենք իսկ, անտարակույս, պիտի զմայլեին մեր եկեղեցական երաժշտության վրա, եթե զայն ճանչցած ըլլային. մեր կրոնական երգերը, մերկացած իրենց օտարամուտ կեղևեն, ամենեն պանծալի արտադրությունն են մեր ցեղին՝ Նարեկացիին քնարերգության ու մեր ժողովրդական բանաստեղծության փափուկ ներշնչմանը հետ։

Կըմբռնեք ուրեմն որքա՜ն մեծ եղավ ուրախությունս՝ ճանչնալով Կոմիտաս վարդապետը, այսինքն սպասված, երազված մարդը, հայկական երաժշտությունը վերակազմելու, ինչպես և զայն Եվրոպային ծանոթացնելու համար։ Կոմիտաս Վարդապետը, որուն անունը «Անահիտ»-ի մեջ հիշված է արդեն՝ Պերլինի մեջ տարի մը առաջ իր տված մեկ արևելյան նվագահանդեսին առթիվ, այս օրերս Փարիզ եկավ և մեր մատուռին մեջ պատարագի ժամերգության կարևորագույն հատվածներեն մեկ քանին երգեց։ Հուզումը, զոր զգացի իմանալով այդ վեհ ու սրտաբուխ մեղեդիներն ու «Տեր ողորմիա»-ին վսեմ ողբը, երգված, պարզ, վճիտ, հզոր, «հայ» ոճով մը իր արվեստը խորապես գիտցող ու իր ցեղին գեղեցկագիտական ոգվույն լիակատար ըմբռնումն ունեցող անձե մը, կյանքիս ամենեն խորին ու ամենեն քաղցր հուզումներեն մին պիտի մնա։ Իրեն հետ ունեցած մեկ քանի տեսակցությանս մեջ, վարդապետը հաճեցավ ինձի պարզել իր տեսություններն ու այն ծրագիրը զոր կուզե իրագործել. և ինձը կթվի, որ ինքը այն մարդն է, որ անհրաժեշտ էր որպեսզի հայ երաժշտությունը արմատապես վերանորոգվի իր աղավաղումեն ու անկումեն և որպեսզի ան ծանոթ դառնա եվրոպացի երաժշտագետներուն և համաշխարհային երաժշտության մեջ սկսի գրավել այն տեղը, որուն արժանի է և զոր չունի դեռ։

Այսպիսի ձեռնարկ մը լիովին ի գլուխ հանելու համար անհրաժեշտեն երկու պայմաններ,— եվրոպական երաժշտագիտության հիմնական հմտություն և հայկական երաժշտության Հայաստանի հողին վրա իսկ մանրախույզ ուսումնասիրություն։ Կոմիտաս վարդապետը, որ Պերլինի քոնսերվաթուարեն շրջանավարտ է եղած և արևելյան Հայաստանին բոլոր գյուղերը պտըտած է՝ ամենեն հին անկյուններուն, ամենեն անշուք խորշերուն մեջ նախկին երգեցողության հետքերը փնտրելով, պիտի կարենա այդ գործն ի կատար հանել ամբողջական և անթերի ձևով մը։

Գործը մին է ամենեն բեղուններեն ու գեղեցիկներեն, բայց և մին ամենեն դժվարներեն։ Վերակենդանացնելու համար մեր եկեղեցական երաժշտությունը այն անխառն ու հայադրոշմ ձևին մեջ, որով ան իր կատարելությանը հասավ մեծ Շնորհալիին օրովը, պետք է մանրակրկիտ կերպով ուսումնասիրել երաժշտությունը այն բոլոր ժողովուրդներուն որոնք ազդած են հայ ցեղին վրա,— բյուզանդականը, պարսկականը, արաբականը, ասորականը, թրքականը,— փնտրել մեր եկեղեցական երաժշտության մեջ այն բոլոր տարրերը, որ այդ օտար երաժշտություններուն կվերաբերին, և ի վեր հանել ինչ որ կա հոն զուտ հայկական, ինչ որ ինքնաբուխ ստեղծագործությունն է մեր ցեղին. իսկ այդ «Հայկական» նվագայնությունը եվրոպական տարազի մեջ արևմտյան աշխարհին ծանո-

թացնելու համար, պետք է խորապես ճանչնալ արևմտյան երաժշտական գիտությունը։ Եվ այս բարդ, այս վիթխարի գործին համար անհրաժեշտ է ունենալ, հմտությենե զատ, բանաստեղծի հոգի և ստեղծագործ երաժշտի տաղանդ։ Ինձի կթվի որ Կոմիտաս վարդապետը ունի այդ բոլորը։ Ազգումով թրքահայ, և հիմնովին ծանոթ տաճկական երաժշտության, Կոմիտաս վարդապետ իր ուսումն ստացել է Գևորգյան ճեմարանին մեջ և հոն մոտեն ճանչցած է արևելյան հայության եկեղեցական ու ժողովրդական երգեցողությունը, և հետո գացած է Պերլին արմատապես ուսումնասիրելու եվրոպական երաժշտությունը։ Խորապես կապված իր ցեղին ու հողին, իր սիրտը Պեթովընին կամ Շոբենին թովչութենեն չէ գերված մինչև իր ցեղին անշուք բայց թաքուն գեղեցկություններով հուռթի արվեստը արհամարհելու իմաստակությանն հասնելու աստիճան. ընդհակառակն, արևմուտքի գիտությունեվն ամրացած իր միտքը իրեն նպատակակետ ըրած է իր ամբարած հմտությունը կիրարկել իր ցեղին արվեստը վերակենդանացնելու։ Կոմիտաս վարդապետ Պերլինի համալսարանին մեջ երաժշտական դասախոսության մը առաջարկը մերժած է՝ իր երկիրը վերադառնալու, ինքզինքն իր տոհմային արվեստին վերանորոգմանը նվիրելու համար. արևմտյան գիտության հետախուզումի, վերլուծումի ու համադրության ապահով մեթոտովը զինված, գացած է մտնել ժողովրդին մեջ և փնտրել հիմքը «Հայ» երաժշտության, ամենեն խոնարհ գյուղակներու եկեղեցիները մտած է մտիկ ընելու անուս քահանաներու երգեցողությունը, որ ամենեն անեղծ ձևովը կպահպանե հին հայ արվեստը, ունկնդրած է հայ աշուղներու, հարսներու կամ մահերգակ հայ գեղջուհիներու, հովիվներու կամ վիճակի խաղեր կանչող աղջիկներու մեղեդիները, և հողեն ժայթքած այդ բնատիպ ձայներուն մեջ ջանացած է գտնել ինչ որ խորքը կկազմե «Հայ» երաժշտության, ճգնած է զայն փնտրել հայ եկեղեցական երաժշտության այն մասին մեջ, որ օտար երաժշտություններուն հետ որևէ առնչություն չունի, և գտած է կապը զոր կորոնեք. իր այդ հետազոտությանց շնորհիվ, այսօր գիտակցաբար կրնանք հաստատել թե կա «Հայ երաժշտություն մը, անկախ՝ հայ ցեղին վրա ազդեցություն գործող մեծ ազգերուն երաժշտութենեն, երաժշտություն մը, որ ծնունդն է միմիայն մեր ցեղին հոգվույն և որ, թերևս կազմավորված հեթանոսական ամենահին շրջանին, անցած մնացած է եկեղեցական երգեցողություններուն մեջ ու տևած է ժողովրդական խաղերուն ավանդական շնորհին մեջ[1]։ Հայ արվեստի այդ խորքը գտնելու ջանքերեն հետո,

1 Կոմիտաս վարդապետը մտադիր է մոտ հասարակության ծանոթացնել իր ուսումնասիրության արդյունքը՝ հայ ժողովրդական երգերու ընդարձակ շարք մը պրակ առ պրակ հրատարակելով։

Կոմիտաս վարդապետը թևակոխած է արդեն իր գործին երկրորդ փուլը. ամբողջ պատարագը շարադրած է քառաձայն, եվրոպական արվեստի համաձայն, մեղեդիներուն հայկական կնիքը անվթար պահելով ու կմտածե հորինել «սենֆոնիներ», «Օրաթորիո»-ներ, ցայգերգներ, մահաքայլերգներ, մեր եկեղեցական ու ժողովրդական երաժշտության մեկ քանի կարևորագույն հատվածներեն ներշնչվելով. իր այդ շարադրությունները, որոնցմե ոմանք էջմիածնա մայր-եկեղեցվույն մեջ սկսած են երգվիլ արարողության ժամանակ, անշուշտ, ընդհուպ Եվրոպայի կրոնական նվագահանդեսներուն մեջ իրենց տեղը պիտի ունենան։ Ֆրանսացի վարպետ երաժիշտներ և երաժշտագետներ, Սեն Սանս, Շարլ Գորտ, Տյուվալ, Օպրի, Կոմիտաս վարդապետին հետ տեսնվելով և իր ծրագրին ծանոթանալով, զինքը հիացմամբ խրախուսած են իր գործը շարունակել։ Փափագելի է որ հայ ժողովուրդը գիտնա գնահատել այսպիսի արվեստագետ մը և տա իրեն բոլոր միջոցները, որ հարկավոր են, որպեսզի ան ամբողջապես ի գլուխ հանե այն հսկա գործը, որ զինքը քսաներորդ դարու Շնորհալին պիտի կացուցանե։

•

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՎ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտաս վարդապետի ծննդյան վաթսունամյակի հանդիսավոր տոնախմբությենեն հետո, որ յոթ-ութ ամիս առաջ կատարվեցավ Երևան, հարգանքի նույն ցույցը՝ նախաձեռնությամբ «Կոմիտաս Վարդապետի բարեկամներու Հանձնաժողով»-ին՝ առնի ունեցավ Փարիզ։

Խորհրդային Հայաստանի «անառավաճառ» մայրաքաղաքին մեջ, կառավարություն, մտավորականություն և ժողովուրդ, միացան փառաբանելու համար դործը «վարդապետ»-ի մը, որ էն առաջ արվեստին նվիրված մըն էր և ժողովրդական հոգվույն արտահայտիչ մը։ Փարիզի հայությունը իր բոլոր հատվածներով ու բոլոր խավերով խառներամ եկավ համախմբվիլ, ազգային արվեստի սրբության շուրջ, անքան հոմերաշխությամբ և այնքան ջերմ որքան խմաստուն ոգևորությամբ մը վառված, մեր մշակույթին մեկ առաջյան ու մեկ բաղմակողմանի վաստակավորը մեծարել ձգտող վեհաշուք հանդեսի մը մեջ։ Այս երևույթը գեղեցիկ էր, այնքան պատվաբեր զայն իրականացնող ժողովուրդին, որքան անոր առարկա եղող անձնավորության։ Եվ ան զարմանալի ոչինչ ուներ. արվեստը վեր է բոլոր քաղաքական ու ընկերական վեճերեն, կուսակցական ու հարանվանական տարաձայնություններեն։ Ան մեծագույն կապերեն մին է, որ, քաղաքակիրթ բարձր ազգերու մեջ, գաղափարներով իրարմե

տարբեր բոլոր մարդիկը կմիացնե, և հայ ժողովուրդը՝ իր բոլոր թերություններով հանդերձ՝ էն առաջ քաղաքակիրթ տարր է, արվեստի ծնունցիչ ցեղ է, և ան՝ հակառակ հինարային գործունեության այլ մարզերու մեջ իր հատվածական հակաձառությանց հաճախ չափազանց կրքոտ ու բուռն ձև տալուն, միշտ միացած է եղեր իր հարգանքին մեջ—ինչքան ալ այդ հարգանքը շատ անգամ զուտ պղատոնական եղած ըլլա—դեպի իր ազգային մշակույթը, դեպի մանավանդ իր արվեստը, ուր որեէ քաղաքականություն չի մտներ, ու պետք չէ մտնե, քանի որ ան իր իսկական էությամբ, իր ամենեն կարևոր, ամենեն մնայուն արտադրությանց մեջ, ցեղի մը հոգվույն արտահայտությունն է, և ոչ անոր այս կամ այն դասակարգին, կուսակցության կամ անհատին։

Կոմիտաս Վարդապետին կատարած գործին վրա ես մեկե ավելի անգամներ արտահայտված եմ զանազան թերթերու մեջ։ Ա ն ա հ ի տ-ի մեջ իսկ է որ (1901, հունիս-հուլիս) գրած եմ իր մասին առաջին հոդվածս, որ և այդ մեծ հայուն նվիրված առաջին հոդվածս եղած է մեր մամուլին մեջ։ Բայց այս վաթսունամյակի հանդիսությանց առթիվ կ'ուզեմ— ու նույնիսկ պարտք կհամարիմ, անգամ մը ևս, այս թերթին մեջ՝ ուր տարիներ առաջ մեր ազգին վերև ծագող այդ մեծ ուժին ավետիսը տվի մեկնաբանել այն հրաշալի դերը, զոր ան կատարեց մեր ազգային երաժշտության և նույնիսկ մեր ազգային կյանքին համար, և ոգել մեկ քանին այն բազմաթիվ ու թանկագին հիշատակներեն, զոր ունիմ իրմե։

Իմ կյանքիս ամենեն հզոր, ամենեն անմոռանալի տպավորություններեն մին կմնա միշտ ա՛յն, զոր ունեցա Կոմիտաս Վարդապետը առաջին անգամ տեսած ու լսած օրս։ Իր անունը կարդացեր էի կովկասահայ թերթերու այն քանի մը տողերուն մեջ, ուր հիշատակված էր այդ երիտասարդ վարդապետին երաժշտական ուսմանց շրջանը ավարտելե հետո՝ էջմիածին դառնալե առաջ, Պերլինի մեջ սարքած մեկ արևելյան համերգին և հայ եկեղեցական երաժշտության վրա արտասանած գերմաներեն բանախոսության մասին, որոնք ուշադրություն գրավեր էին զինք լսող գերման երաժշտագետ հասարակության մեջ, ուրիշ բան չէի գիտեր իր մասին։ Այդ լուրը կարդալես տարի մը հետո, 1901-ին, լսեցի որ էջմիածնա այդ միաբանը Փարիզ էր եկած քանի մը շաբաթ մնալու և ֆրանսական ոստանին երաժշտական շարժման վրա մոտեն գաղափար կազմելու։ Եկավ ինծի այցելության, ժամերով խոսեցավ իր ծրագիրներուն վրա, երգեց ժողովրդական զմայլելի երգեր, որոնց նմանը՝ այդ սրտաբուխ շեշտով ու այդ նուրբ արվեստով՝ երբեք չէի լսած, բացատրեց իր տեսությունները, պարզեց իր արդեն իսկ ըրած գյուտերը։ Հայտնություն մը էր։ Քիչ օր հետո, Ռիվ տը Վիենի մեր փոքրիկ մատուռին մեջ (այն ատեն

դեռ Ժան Կուժոն փողոցի մեր եկեղեցին չունեինք) լսեցի շարականներու և տաղերու իր վսեմ երգեցողությունը, որ ավելի ևս խորացուց զմայլանքս մեր ժողովրդի այդ հոյակապ ստեղծագործությանց և զանոնք հայտնաբերող, զանոնք հարազատորեն ու բարձրորեն արտահայտող արվեստագետին համար։ Առաջին անգամ ըլլալով կջոշափեի իսկական հայ գույն ունեցող և մեծապես գեղեցիկ երաժշտություն մը, և դիմացս կտեսնեի արտակարգ անձնավորություն մը, որ հայտնապես կոչված էր մեր ազգային մշակույթը մարզին մեջ խոշոր դեր մը կատարելու։ Հրճվանքը, զոր այդ հայտնությունն ինծի հայտնեց, կրնամ միայն բաղդատել նույնօրինակ ուրիշ մեծ հրճվանքի մը, զոր զգացեր էի քանի մը տարի առաջ, 1898-ին, Սուրբ Ղազարու վանքը, երբ հին ձեռագրի մը մեջ հանդիպեր էի «հայրեն»-ներու (Քուչակյան տաղեր) քանի մը ճոխ շարքերու, որ իսկույն զիս գրաված ու հափշտակած էին իրր նմուշներ բանաստեղծության մը, որուն չափ հմայիչ, ինքնատիպ և հայադրոշմ ոչինչ կհիշեի մեր հին ու նոր քերթության մեջ։ Այդ խորազգաց և շնորհալի, խիտ, ուժեղ ու փափուկ, ազնվական ու սրտաբուխ քնարերգության համապատասխանող երաժշտություն մըն էր, մեզի անծանոթ մնացած, որ ահա կհայտնվեր ինծի այդ մոգական կրոնավորի շնորհիվ։ Հայրենի գեղեցկագիտության լքված մոռցված քողարկված աշխարհին մեկ ամենակարևոր գավառն էր, որ երևան կ'ելլեր այդ նախասահմանյալ հայուն ձեռքով։ Եվ դեռ իր ձեռնարկած աշխատանքին սկիզբն էր ան. ինչե՞ր կըրնար տալ մեզի, եթե լրջորեն ըմբռնվեր, խրախուսվեր, օժանդակվեր իր ճիգը։ Եվ ի՞նչ անզուգական երգիչ, ի՞նչ հազվադեպ արվեստագետ՝ այդ հմտության, հետազոտության թափանցամիտ ու տքնաջան մարդուն մեջ։ Անհուն զորություն մը՝ մեր մշակույթին համար, օրհնություն մը մեր ազգին համար։ Այդ տպավորությանց տակ էր որ գրեցի Անահիտ-ի հոդվածը, մին ամենեն խանդավառ հոդվածներեն, զոր գրած ըլլամ կյանքիս մեջ։ Եվ Կոմիտաս Վարդապետ, այն բազմագիտի ու մեծ գործովը, զոր կատարեց այն օրերեն մինչև իր աղետալի հիվանդությունը, լիովին նպաստեց ինչքան իմ խանդավառությունս հիմնավոր էր և արդարացի։

***

Ինչի՞ մեջ կկայանա գործը, զոր Կոմիտաս Վարդապետ կատարեց։

1. Կոմիտասի առաջին և կարևորագույն գործը՝ հայ երաժշտական ոճը վերագտած ըլլալն է։

Բոլոր արտադրությունները որ մեր նախնիքներեն մեզի հասած են շինքեր, բանաստեղծություն, արվեստի զանազան առարկաներ, երգեր, մանրանկար, քանդակ, և այլն.— ցեղային գեղեցկագիտության կնիքը չունին. անոնցմե սովոր մաս մը օտար ազդեցությանց ծայրահեղ տիրապետությունը ցույց կուտան իրենց մեջ, և կան, որ զուտ օտար են, նույնությամբ փոխ առնված, մեքենականորեն ընդօրինակված։ Պետք էր զանազանել, պետք էր ջոկել ինչ որ հատուկ է հայ հանճարին, հայ ճաշակին։

Այն որ ցեղային գեղեցկագիտություն կանվանենք, դարձյալ ավելի կամ նվազ խառնուրդ է, որևէ ազգի մեջ, օտար ու բնիկ տարրերու։ Չէ եղած որևէ ազգ, որ արվեստ մը իր բոլոր տարրերով միմիայն իր ուղղեն ու սրտեն հանած ըլլա. ամենեն ինքնատիպ «ազգային արվեստ»-ները կազմված են ավելի հին օտար արվեստներե տարրեր առնելով. բայց իրապես «ազգային» արվեստ մը արտադրած են ա՛յն ցեղերը որ գիտցած են փոխառիկ տարրերը իրենց հատուկ ճաշակով կերպարանափոխել, իրենց սեփական ոգվույն համեմատ զանոնք զուգորդել, ու զանոնք միացնելով իրենցմե իսկ ստեղծված տարրերու, հառաջ բերել խառնուրդ մը, որ ինքնուրույն բնույթ ստացած է, իրենց ստեղծագործությունը եղած է և իրենց հատուկ գեղեցկագիտությունը կներկայացնե։

Ունեի՞նք մենք ալ մեր ցեղային գեղեցկագիտությունը։ Հիսուն տարի առաջ այս հարցման ճշգրիտ պատասխանը տվող գրեթե չկար մեր մեջ։ Ոմանք հարազատ հայկական կնկատեին ամեն ինչ որ մեր նախահայրերեն մեզի հասած էր, և այդ բոլորը կդտնեին գեղեցիկ, հոյակապ, անթերի, քանի որ հայերե արտադրված... ատիկա շովինական մոլեռանդ կուրացումն էր. այլը, մեր ունեցածին մեջ, ամեն ինչ օտարին հետևողություն կնկատեին և իրենց ցեղը անկարող կկարծեին ինքնատիպ արվեստ մը և գրականություն մը ստեղծելու, ատ ալ դարավոր ստրկության հառաջ բերած ինքնարհամարհանքի մտայնությունն էր, որ անկողմնակալության, ճշմարտասիրության տեղ կառնվեր։ Քննադատական առողջ, գիտակից, առարկայական աշխատանքը դեռ չէր կատարված։ Վերջին 30—40 տարվան ընթացքին է, որ այդ աշխատանքը, զոր մեր ժողովրդի հին պատմության համար ավելի կանուխեն արդեն ձեռնարկողներ եղած էին, սկսավ մեր արվեստին ու գրականության համար։ Թորոմանյան առաջինը եղավ ջանացող մեր հին ճարտարապետության մեջ որոշելու ինչ որ մեր ցեղին հատուկ է, և Ստչիգովսկի շարունակեց ու ընդլայնեց անոր ուրվագծած գործը։ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան մեր մանրանկարչության, քանդակագործության, ոսկերչության և այլ արվեստներու համար նույն քննական խոր ուսումնասիրությունը կատարեց։ Շատեր

նույն ոգով աշխատեցան—ոմանք իբր հավաքիչ, այլք իբր ուսումնասիրող,— մեր ժողովրդի ֆոլքլորական այլազան արտադրությանց նկատմամբ, աշխատանք որուն հիմք դրած էր արդեն Աբովյան և զոր շարունակեցին Գարեգին Սրվանձտյանց, Երվանդ Լալայան, Մ. Աբեղյան, Ս. Կանայան, Չիթունի և այլք։ Ուրիշներ փորձեցին մեր հին բանաստեղծության ինչպես և մեր ժողովրդական բանահյուսության մեջ ի վեր հանել ինչ որ ամենեն ավելի մեր ցեղին դրոշմը կկրե և մասնանիշ ընել այդ ինքնատիպ տարրին բնորոշ հոգեկան ու գեղեցկագիտական գծերը։ Այդ նույն աշխատանքը մեր երաժշտության համար կատարեց, է՛ն առաջ, Կոմիտաս Վարդապետը։

Ի ծնե երաժիշտ, օժտված խորունկ ու անվրեպ բնազդով մը, ան նպաստավորվեցավ նաև դիպվածեն, որ զինք, բարեբախտաբար, ղրկեց Կովկաս՝ իր նախնական ու երկրորդական կրթություն ստանալու և հետո Գերմանիա՝ երաժշտության բարձրագույն մասնագիտական ուսումն առնելու։ Գերմանացիք են որ նոր ժամանակներու մեջ ժողովրդական բանաստեղծության և երաժշտության, բովանդակ ֆոլքլորին արժեքը ամենեն ավելի խորապես ըմբռնած են, ֆոլքլորային արտադրությանց ուսումնասիրության մեթոդիկ ու մանրակրկիտ աշխատանքին առաջին օրինակները տված են. և իրենց բանաստեղծներն ու երաժիշտները գիտցած են լայնորեն օգտվիլ մարդկային խոր ու բնական ներշնչման ու ցեղային ինքնատպության այն անհուն գանձարանեն որ է ֆոլքլորը։ Անոնք ազդած են ռուսերուն վրա, որ նույն ուղղությունն ընդգրկած են։ Այդ ուղղությունն անցած է նաև Կովկաս։ Աշուղյանի, Պարոյանցի, Նշանյանի, Գամառ-Քաթիպայի, Հովհաննիսյանի, Թումանյանի վեպերուն ու բանաստեղծությանց մեջ ֆոլքլորը կտիրեր։ Արևմտահայոց մտավոր կեդրոն Պոլիսը ավելի լատին ազգերու մշակույթին ազդեցության տակ էր, ուրեմն և գրեթե տարամերժորեն ոստանական հմուտ արվեստի ու գրականության հետամուտ, իսկ ժողովրդական ու եկեղեցական երգերուն մեջ թրքահայությունը բյուզանդական-հույն մանավանդ թուրք ազդեցության ներքև կգտնվեր։ Ալիշանի աշուղական ոճով նամակագրության սրգերը, և հին ժողովրդական լեզվով տաղերի հրատարակումը [illegible] ու կարճատև երևույթ մըն էին, ինչպես և Սրվանձտյանցի սքանչելի և ավելի հարատև ու բազմատարր աշխատանքը՝ բացառիկ դեպք մըն էր այդ ժամանակաշրջանի թրքահայության մեջ (և Սրվանձտյանցի գործը ավելի խորապես ըմբռնված ու գնահատված է ռուսահայոցմե քան թրքահայ մտավորականությունենն, որ հայ նոր բանաստեղծության ու գրականության համար անոր կատարած գործեն բնավ չէ օգտված այդ շրջանին)։ Այնուհանդերձ, մեր երաժշտության համար, նույնիսկ Կովկասի մեջ, կատարվելիք գոր-

ծին դեռ ոչ ոք ձեռք զարկած էր։ Ռուսահայաստան լի էր հայ աշուղներով, և նույնիսկ Կովկասի մայրաքաղաքը՝ Թիֆլիս, իր աշուղներն ուներ դեռ։ Բայց այդ աշուղները կերգեին երգեր իրենց նախորդներեն ժառանգված կամ իրենցմե ստեղծված — ուր զուտ հայկականին հետ խառնիխուռն կհնչեին պարսկական, թրքական, վրացական, արաբական, քրդական եղանակներ։ Կարա-Մուրզա սկսած էր իր կազմած խումբերուն երգել տալ, եվրոպական եղանակով «ազգային» երգերու հետ, հայ ժողովրդական երգեր ալ, բայց այդ ժողովրդական երգերը հայկական չէին հաճախ, այլ արևելյան օտար երաժշտություններեն փոխառիկ կամ անոնց ազդեցությամբ չափազանց ծանրաբեռն։ Իբր ուսանող Պերլին երթալե առաջ, Կոմիտաս վարդապետ, Գևորգյան ճեմարանի աշակերտ եղած միջոցին, արդեն տեսած էր, որոշ ու գրեթե ամբողջ գործը, որ կար կատարելու, և սկսած էր անոր պատրաստվիլ։ Ուսումնասիրած էր արևելյան երաժշտությունները և ռուսական Հայաստանի գյուղերը պտտելով փնտրած ու հավաքած էր հայ ժողովրդական երգերուն մեջ անոնք, որ օտար ոճերեն տարբեր ոճ մը, գնացք մը, նկարագիր մը ունեին, անոնց երգելու ձևն իսկ—հայ շինականին սրտին, ճաշակին, կոկորդին հատուկ, նկատած և սքանչելի կերպով յուրացուցած էր։ Եվ այդ գործը կատարելու համար իրեն մեծապես օգնած էր նաև իր կրոնավորի, Սուրբ Էջմիածնա միաբանի հանգամանքը,— ինչպես ինքն իսկ օր մը կըսեր ինծի. ամենեն նախնական գյուղերուն մեջ, ուր նահապետական խիստ բարքեր դեռ կտիրեին, ան ամենքեն ընդունված էր իբր «Աստուծո մարդ», և ամենքը անտրտունջ և հոժարակամ իր հետաքրքրությանը գոհացում տված էին. աղբյուրին մոտիկ, կամ վիճակի տոնին, աղջիկները իրեն համար երգած էին, ի Գարկին կրկնելով, իրենց էն աղվոր երգերը. հարսընթերքի բազմատարբ ու նկարագեղ հանդիսությանց ընթացքին, հարսընքույրերը իրեն երգած էին այն բոլոր երգերը, զոր կ'երգեին հարսը հագվեցնելու ատեն կամ այդ մեծ հանդիսությանց այլ կարևոր վայրկյաններուն,— ինչ-որ աշխարհիկ ֆոլքլորագետի մը կամ պրոֆեսորի մը համար պիտի չընեին՝ այդ օրերուն։ Հայ հարազատ երգերու էական հատկանիշները գտնելե հետո, Կոմիտաս Վարդապետ աշխատած էր այդ գյուտը մեր եկեղեցական երաժշտության կիրարկել և անոր մեջ ևս անջատել ինչ-որ հայկական է՝ օտար բազմադիմի ազդեցություններեն, որ անոր բնիկ դեմքը կ'եղծանեին (Պոլիս՝ բյուզանդական ու թրքական ազդեցություններ, Կովկաս՝ պարսկական ու մասամբ նաև թրքական ու ռուսական)։ Ատոր համար, էջմիածնա և կովկասյան Հայաստանի այլ վանքերու ծերունի եկեղեցականներու գիտցած հին (և հաճախ՝ լքված, անտեսված, քամահրված) եղանակները ուզած էր լսել և ուշադրությամբ

նոթագրած էր ինչ-որ անոնց մեջ գտած էր շահեկան և ինքնատիպ, դացած էր ետ ընկած գյուղեր, տգետ քահանաներու երգել տված էր եկեղեցական երգեր ինչպես ավանդաբար կ'երգեին, և իրեն միշտ գլխավոր առաջնորդ ունենալով հայ ժողովրդական հարազատ երգին բնորոշ ոճը, ջոկած ու մեջտեղ հանած էր ինչ որ հայկական է իրապես։ Այս գործն ամբողջ արդեն իսկ իր գլխավոր գծերուն մեջ կատարել սկսելե ետքն է, որ ան գացած էր Պերլին՝ Մանթաշյանի ծախքով, հիմնովին սորվելու եվրոպական բազմաձայն երաժշտական գիտությունը իր բարդություններով ու նրբություններով, ինչպես և համաշխարհային երաժշտության պատմությունն ու իմաստասիրությունն ստանալու։ Այդ սկսված գործը ավելի հզորապես կատարել կարենալու միջոցներն է որ վաստակած է Պերլինի մեջ,— և իր արձակուրդներուն արդեն էջմիածին դառնալով՝ ան կշարունակեր իր հայրենի հողին վրա ժողովուրդին մեջ իր հետախուզական պտույտները, իր հավաքումներն ու տեղվույն վրա ուսումնասիրությունները։ Պերլին իր մեջ պատրաստած է մանավանդ դաշնակողը, հայ երկը մերօրյա բազմաձայն երաժշտությամբ ճոխացնողը, նաև՝ խումբ կազմելու և վարելու արվեստին հմուտ վարպետը, և հայ ժողովրդական ու եկեղեցական երգերու կազմին և հայ երաժշտության պատմության գիտական մեթոդով ուսումնասիրողը։ Ու զարմանալի չէ, որ իր գործն այդ ձևով տեսնող և անոր այդ կերպով պատրաստված այդպիսի մարդ մը, երբ իր ուսումը ավարտելե հետո, հայ երաժշտության վրա բանախոսություն մը ըրած է Պերլինի մեջ, զինք ունկնդրող երաժշտագետ կամ երաժշտասեր հասարակությունը, սիրուն անակնկալի մը հաճույքն զգացած է, անոր մեջ գտնելով մեկը, որ Գերմանիայեն սորված էր եվրոպական երաժշտության գաղտնիքները և կրաժշտագիտության մեթոդները, բայց որ իր կարգին կարող կհանդիսանար գերման ընտրանիին հայտնաբերել հին ազգի մը անծանոթ մնացած երաժշտական գեղեցիկ և ինքնատիպ արվեստը։

Այնուհետև, իր մեծ ծրագրին գործադրության բոլոր մտավոր միջոցներուն տիրացած, Կոմիտաս գիտակից վարպետի մը հեղինակությամբ տարիներով շարունակեց այն գործը, զոր սկսած էր Գևորգյան ճեմարանի աշակերտության օրերեն։

2. Կոմիտաս Վարդապետ եղավ առաջին հարազատ հայագույն դաշնակողը հայ երգին, և ատիկա իր կատարած գործին երկրորդ կարևոր կետն է։

Հայտնի է, որ հայը բազմաձայն երաժշտություն չէ ունեցած երբեք,— ինչ որ հույնը, օրինակի համար, շատ հին ժամանակներե սկսյալ հղացած ու գործադրած է։ ԺԹ. դարուն է որ օտար մեծ քաղաքներու մեջ

հաստատված գաղթական հայեր եվրոպական մշակույթի հետ շփվելով բազմաձայն երաժշտության ճաշակն ստացած են, երգելով ու նվագելով եվրոպական կտորներ (կամ հայերեն երգեր եվրոպական կամ եվրոպական եղանակներով)։ Զուհաճյան իր թրքական օպերեթներուն հետ հորինած է և օպերա մը՝ Թոմաս Թերզյանի Արշակ Բ. թատերախաղին վրա (գրված իտալերեն և հայերեն), շարադրած է նաև եղանակներ քանի մը հայ ազգասիրական բանաստեղծությանց համար (կկարծվի թե Պեշիկթաշլյանի «Ո՞ հ ինչ անուշ»-ին և Նարպեյի «Եվ ասացին՝ ըզհայրենեաց ասա մեզ բան»-ին եղանակները իրն են). բայց Զուհաճյանի այդ կտորներուն երաժշտությունը հայու մը ձեռքով հորինված եվրոպական արվեստ են, ուր ոչինչ կա հայ գույն ունեցող,— մինչ իր թրքական օպերեթներուն մեջ արևելյան մոթիֆներ մերթ օգտագործված են։ Կարա-Մուրզա առաջինը եղած է՝ «ազգային» երգերու հետ հայ ժողովրդական երգեր ալ բազմաձայն դաշնակելով, իր կազմած խումբերուն երգել տվող. բայց ան. ինչպես ընտրել չէր գիտցած զուտ հայադրոշմ ժողովրդական երգերը, անոնց հարազատ դաշնակում տալու ո՛չ մտահոգությունը և ո՛չ կարողությունը ունեցած է, դաշնակած է եվրոպական (իտալական) ոճով։ Եկմալյան մեզի տված է հայ բազմաձայն երաժշտության առաջին լուրջ ստեղծագործությունը, այն է իր դաշնակած հայկական պատարագը՝ եկեղեցական քանի մը տաղերու և շարականներու իր դաշնակման հետ։ Կոմիտաս Վարդապետը, որ խոր հարգանքով կգնահատեր Եկմալյանի հմտությունն ու տաղանդը, կնկատեր սակայն, թե ան իր մոթիֆներն առած է անխտիր թե էջմիածնա հին եղանակներե, որոնց շատերուն մեջ կա հայկական գույն, և թե՛ Թաշճյանի ձայնագրած թրքա-բյուզանդական ազդեցությամբ եղանակներեն, և՝ աշակերտ ռուս երաժշտական դպրոցին, դաշնակած է ռուս արվեստի ոգվով՝ ու ոճով։ Արժանավորապես «մեծագործ» կոչված Գևորգ Դ. Կաթողիկոսի նախաձեռնությունը՝ պոլսահայ նշանավոր երաժշտագետ Թաշճյանը հրավիրելու, որ ձայնագրե հայկական պատարագն ու եկեղեցական այլ երգերը, և խնամյալ հրատարակությամբ մը զանոնք տպելու, Կոմիտաս Վարդապետ, իբր հղացում, շատ գովելի կդտներ, բայց գործադրության մեջ պակասավոր և նույնիսկ վնասակար, քանի որ, Պոլսո բյուզանդական ու մանավանդ թրքական ազդեցությամբ խաթարված եղանակներն էին, որ այդպիսով՝ մայր աթոռի պաշտոնական հրատարակությամբ՝ ամեն կողմ կտարածվեին և ավելի հին, ավելի հարազատ, ավելի հայկական շեշտ ունեցող եղանակներուն անտեսվելուն, մոռցվելուն, կորչելուն պատճառ կրնային դառնալ։ Կոմիտաս Վարդապետ առաջինն է, որ ուզեց և հաջողեցավ հայ եկեղեցական ու ժողովրդական երգը դաշնակել հայ ոճով։ Ատոր չհասավ անմիջապես Գերմա-

նիայեն Կոմիտաս դարձին. առաջին համերգը զոր տված էր Թիֆլիս, այն տպավորությունը ձգած էր (ինչպես տեսանք լրագրաց մեջ երևցած հոդվածներեն) որ հայ երգերը ծայրահեղորեն բարդ, չափազանց գերմանական (Պախյան և Վակներյան) բազմաձայնությամբ դաշնակված էին, այնպես որ բուն մեղեդին մերթ կխեղդվեր այդ բազմաձայնական կնճռոտ ցանցին մեջ։ Այդ ծայրահեղությունը ան թոթափեց իր Փարիզ անցուցած տարվան ընթացքին, շփման մեջ մտնելով—Բաբայան ընտանիքին միջոցով, որ վինք պաշարեց այնքա՛ն սիրալիր բարեկամությամբ և սրտագին աջակցությամբ,— ֆրանսական լավագույն երաժիշտներու և երաժշտագետներու միջավայրի մը հետ։ Իր դաշնակած երգերը ինչպես կգտնենք Հայ ֆնարին, Լայփցիկ հրատարակված երկու տետրերուն և իրմե մեզի հասած անտիպ ձեռագիրներուն մեջ, ինչպես և իր պատարագին մեջ, զոր լսած ենք մեկե ավելի անգամներ, ունին դաշնակում մը, որ մերթ նորեն բավական բարդ (Պախի արվեստին ձգտող), բայց ավելի հաճախ պարզ է ու բնական, ու միշտ բուն եղանակեն իսկ կծնի, անոր արտաշնչումը, անոր հարազատ մթնոլորտը կկազմե, և ոչ միայն եղանակը չի ճնշեր, չ՝եղծաներ, այլ զայն կշեշտե, դուրս կցատքցնե, կզարդացնե։ Ատոր համար է որ իր դաշնակումները այնքան սիրելի և խանդավառիչ են հայոց համար, և իրենց նորությամբ, ինքնատիպությամբ՝ այնքան հրապուրիչ օտարներուն համար[1]։

---

[1] Կոմիտասի առաջին երգատետրեն, Հայ Քնարեն, առաջ՝ լույս տեսած են Փարիզի մեջ Լևոն Եղիազարյանի և Տ. Պոյաճյանի կողմե հրատարակված երկու հավաքածուներ «Հայ ժողովրդական երգերու»։ Եղիազարյան թենորի գեղեցիկ ձայն ունեցող երգիչ մըն էր, որ հեռու էր երաժշտագետ ըլլալե և հշմարիտ հայ շինական երաժշտության վրա գաղափար չուներ. իր հավաքածուին մեջ դրած է Ծիծեռնակի, Արի իմ Սոխակի, Մայր Արամի-ի պես «ազգային» երգեր, որոնց եղանակը ոչինչ ունի ժողովրդական, ոչ ալ որևէ շափով հայկական։ Դաշնակումները հաջողած է շարադրել տալ Ռեյերի, Վենսան ա՝ էնտիի պես ֆրանսացի մեծանուն երաժիշտներու, որոնց հորինած ընկերացումը այնքան եվրոպական է, որքան եղանակներն իսկ։ Պոյաճյան որ Պաիթոնի ձայնով երգիչ մըն էր, Պաթումի մեջ թրքահայ գաղթականներե իր լսած երգերը ձայնագրած էր, և իր տետրը ավելի իրավունք ուներ «հայ ժող. երգերու հավաքածու» կոչվելու, որովհետև անոր մեջ «Գացեք տեսեք ո՞վ է կերեր»-ի, Հաբրբան-ի պես իսկապես ժողովրդական հայ երգեր կային. ընկերացումը գրած էր Վենսան ա՝ էնտիի աշակերտներեն մին, Սերիեքս, բավական պարզ և եղանակներուն մոտիկ. բայց այդ տետրն ալ, թեև արժեքն ոչ զուրկ՝ իրր ճիշտ ճամփուն մեջ առաջին փորձ, հեռու էր ունենալու այն կատարելությունը, զոր Կոմիտաս դրավ իր գործին մեջ։ Պոյաճյանի հավաքած երգերուն մեջ կային նաև, որ զուտ ժողովրդական չէին, և իր ընտրած վարիանթները լավագույնները չէին, ձայնագրումը՝ ոչ անթերի, դաշնակումը՝ պարզ, բայց դարձյալ եվրոպական։

3. Կոմիտաս Վարդապետ հայ երաժշտական ֆոլքլորի, նույնիսկ արևելյան ֆոլքլորի բանասեր հավաքիչ մըն ալ եղած է. բացի նոր հայ երաժշտության մը ռահվիրայի իր մեծ դերեն։ Հարյուրավոր հայ ժողովրդական եղանակներ իրենց խոսքերով, հավաքած ու ձայնագրած է, և ատոր համար Կովկասի հայ գյուղացվոց և Կովկաս գաղթած թրքահայոց մեջ երկար աշխատած է. գտած է նաև, ինչպես ըսի արդեն, հայ եկեղեցական հին եղանակներ. հավաքած է վերջապես քուրդ և թուրք եղանակներ։

Դժբախտաբար իր հավաքածներեն շատ քիչ կրցած է հրատարակել, անոնք միայն, որ իր լույս ընծայած երեք տետրերուն մեջ կգտնվին կամ, զոր այս կամ այն թերթին կամ տարեգրքին մեջ հրատարակած է. խումբ մը հին Ակնա երգեր տպած է (առանց դաշնակումի) Ճանիկյանի «Հնություն «Ակնա» գրքին իբր հավելված։ Իր հավաքած հայ ժող. երգերեն հարյուր հատին խոսքերը (ու միայն խոսքերը) հրատարակած է էջմիածին, երկու գրքույկի մեջ, Մ. Աբեղյանի աշխատակցությամբ։ Ատոնցմե կան նաև որոշ թվով (եղանակ, խոսք և դաշնակում միասին), որ 1906-ի Փարիզի մեծ համերգին համար իր բազմագրել տված տետրերուն մեջ պահպանված են, կամ զոր ինքն իսկ ձեռքովը օրինակած և հանձնած է բարեկամներու կամ աշակերտներու,— և ատոնց մեկ մասը վերջին 6—7 տարվան ընթացքին հրատարակվեցան «Կոմիտաս Վարդապետի բարեկամներու Հանձնաժողով»-ին խնամքով։

Հանգուցյալ Փիեր Օպրի, ֆրանսացի երաժշտագետը, որ մեծապես կգնահատեր Կոմիտասի գործը, այս վերջնուն Փարիզ գտնված միջոցին՝ առաջարկեց իր ծախքով տպագրել իբր գիտական հրատարակություն, անոր հավաքած ժողովրդական երգերեն հարյուր հատին հայերեն բնագիրը (ֆրանսերեն թարգմանությամբ հանդերձ) և եղանակը՝ առանց դաշնակման, Կոմիտասի կողմե հայ ժողովրդական երաժշտության վրա ընդարձակ քննական ուսումնասիրության մը հետ։ Կոմիտաս հավանեցավ, որոշեց Օպրիին տալ հարյուր հայ ժողովրդական երգեր (անոնք որոնց խոսքերը հրատարակված են «Հազար ու մի խաղ»-ի երկու գրքույկներուն մեջ) և սկսավ գրել իր ուսումնասիրությունը, իսկ ես փութացի թարգմանել երգերը և ուսումնասիրությենեն ինչ-որ արդեն պատրաստ էր։ Բայց Օպրի, որ այդ ծրագիրը հղացած էր իբր հրատարակիչ և ոչ իբր մեկենաս, պայման դրավ վաճառված օրինակներուն վրա 5000 հեղինակի իրավունք տալ Վարդապետին՝ տպագրության ծախքը հանելե հետո։ Կոմիտաս բարկացավ, Օպրիի պայմանները վաշխառուական գտավ և մերժեց։ Անարդար էր Կոմիտաս. Օպրի կ'առաջարկեր ինչ որ որևէ éditeur պիտի առաջարկեր։ Դժվար է սակայն մեղադրել զինք. իր նյութական

կացությունը հեռու էր փայլուն ըլլալե, և տարիներ հետո իր ձեռքը հասնելիք գումար մը (այն ալ ըստ իրեն շատ կրճատված) իրեն անշահեկան կ'երևար. Օպրի գեթ ավանս՝ մ'ընելու տրամադրություն ալ չցուցուց, որով ծրագիրը ջուրն ինկավ. բոլոր ջանքերը զոր թափեցի Կոմիտասը համոզելու համար, որ չմերժեր այդ առաջարկը, ապարդյուն մնացին. համառեցավ իր մերժումին մեջ, և այդ գործը, որ Կոմիտասի էական աշխատությունեներեն մին էր. մնաց անտիպ։ Միայն թե Օպրի ատով պատճառ եղավ, որ Կոմիտաս գրեր այդ թանկագին ուսումնասիրությունը (որուն վերջին գլուխները հետո շարադրեց թե ոչ՝ չեմ գիտեր)։ Այս ուսումնասիրությենեն մեկ գլուխ միայն հրատարակված է Անահիտ-ի մեջ, և անոր ֆրանսերեն թարգմանությունը Le Mercure Musical-ի մեջ։ Երբ Վարդապետին ձեռագիրներու ծրարները, որ Պոլիս Պատրիարքարանը կպահվեին, Զավեն Պատրիարքի մոտ եղած դիմումի վրա՝ Փարիզ Կոմիտասյան Հանձնաժողովին դրկվեցան, և երբ Հանձնաժողովին անդամները՝ հավաքված լիակատար նիստի մը մեջ, որուն հրավիրված էր և Պ. Վարդան Սարգսյանը, կնքված ծրարները բացին և անոնց մեջ գտնվող թղթերն աչքի անցուցին, այդ ուսումնասիրությունը չգտան հոն, ինչպես և չգտան այն շարք մը տետրակները, ուր Կոմիտաս իր ձեռքով մաքուր օրինակած էր քանի մը հարյուր ժողովրդական երգեր (խոսք ու եղանակ) տետրակներ, զոր իր սաները մեկե ավելի անգամ տեսած էին իր մոտ։ Կային նաև ուրիշ պակասներ, որոնց վրա հետո պիտի խոսիմ։ Ինչո՞ւ այդ պակասները՝ ծրարներուն մեջ, ոչ ոք դեռ կրցած է բացատրել. արդյոք իր ձեռագիրներուն մեկ մասը էջմիածի՞ն ձգած էր կամ Թիֆլիս, կամ Պոլիս՝ աշակերտներո՞ւ, բարեկամներո՞ւ մոտ։ Վերջերս մեծ ուրախությամբ իմացանք որ Խ. Հայաստանի կառավարության ծախքով և Պ. Սպիրիդոն Մելիքյանի խնամքով ու բացատրական նոթերով ի մոտո պիտի հրատարակվին (թերևս այս տողերը գրած ատենս հրատարակված են արդեն)։ Կոմիտասի հավաքած քանի մը հարյուր ժողովրդական երգերը, ինչ որ ցույց կուտա թե այդ ձեռագիր հավաքածուները (կամ անոնց մեկ կրկնակ օրինակությունը) Կոմիտաս թողած էր Վարդապետը։ Ինչքան ուրախ պիտի ըլլայինք, եթե ատոնց հետ Կովկաս մնացած ըլլար և այդ լույս տեսնելիք հրատարակության մեջ երևար նաև հայ շինական երաժշտության վրա իր ուսումնասիրությունը՝ որուն վերջին գլուխները նվիրված պիտի ըլլային այդ երաժշտության հատկանիշները ի վեր հանելու, անոր բնորոշ կանոնները բանաձևելու, անոր ինքնահատուկ ոճին գիտական պարզաբանումն ընելու։

Կոմիտաս վարդապետեն մենք լսած ենք նաև Փարիզ, եկեղեցվույն մեջ, Տիրամայրը, Հավիկը. Նարեկացվո Աչքն Ծով և Սայլն այն Իշաներ

տաղերը՝ մոգիչ եղանակներով, զոր ինք կ՚երգեր Թաշճյանի ձայնագրածներն տարբեր ձևով, ավելի վեհ, պարզ ու գեղեցիկ. ինք կըսեր թե այդ եղանակները լսած է Էջմիածնա ծերունի եկեղեցականներե և Կովկասյան Հայաստանի գյուղական քահանաներե։ Երուսաղեմ գտնված միջոցիս, Մեսրոպ եպիսկոպոս Նշանյան, որ Էջմիածին Կոմիտաս Վարդապետեն լսած ու սորված էր Ոտնլվայի արարողության շարականները, զանոնք սորվեցուց Ս. Հակոբա տաճարի դպիրներուն և 1921-ի Ավագ հինգշաբթի օրը երգել տվավ, ի ներկայության քաղաքի անգլիացի եպիսկոպոսին, Բարձր Քոմիսերի ներկայացուցչին, կառավարչին և երեսունե ավելի անգլիացի և ուրիշ օտար ազգերե անձնավորությանց և հայ հավատացյալներու խուռն բազմության, հրաշալի քաղցրությամբ ու վեհությամբ եղանակներ էին, ավելի գեղեցիկ ու մաքուր քան մեր Պոլիս լսածները, որ աղվոր են, անուշ, բայց թրքական մեղկությամբ տոգորված։ Այդ բոլորը գրի առնված կհուսայինք գտնել իր թղթերու ծրարներուն մեջ, բայց չգտանք։ Երանի թե Կովկասին մեջ իր այդ ձեռագիրներն ալ մեջտեղ ելլեին։ Բայց գեթ Մեսրոպ եպիսկոպոս Նշանյան, ինչպես և Շահ-Մուրատյան, որ իր հոյակապ ձայնով ու հզոր երգեցողությամբ այնքա՛ն հեղ, այնքա՛ն գեղեցիկ կերպով երգած է Տիրամայրը, և որ ինք ալ, հայ երգին արվեստագետ առաքյալ, աշխարհիս բոլոր մասերուն մեջ գնաց ճանչցնել ու սիրցնել մեր ազգային երաժշտությունը, գրի առնեին կամ երաժշտագետի մը ձայնագրել տային այդ եղանակները, զոր հիշողությամբ միտք պահած են, որպեսզի անոնք չկորչին։ Կոմիտասի սաներեն Պ. Վարդան Սարգսյան, հիշողությամբ միտքը պահած ունի Վարդապետին երգած եկեղեցական ու ժողովրդական երգերեն ամբողջ խումբ մը, զոր գրի առնելու է՝ եթե արդեն իսկ չէ ըրած։ Ատոնք բոլորն ալ, թեև հիշողությամբ միայն պահպանված, պետք է հրատարակվին, որովհետև ատոնց մեջ մեծ դեղեցկություններ կան, որ պետք չէ փճանան։

Կոմիտաս ոչ միայն գիտեր ընտրել հայ եղանակներու ամենեն հարազատները. բնորոշներն ու սիրունները, այլև կարծեմ, մերթ կկոկեր զանոնք՝ ձայնագրելու ատեն. երգի մը ամեն մեկ փոփոխակը արդեն, քանի մը սերունդի հաղար բերաններեն անցնելե հետո, իր սկզբնական մաքուր ձևին մեջ չէ, որ մեզի կհասնի. ատկեց զատ, երգիչ կա, որ ճիշտ ու ամբողջ կերգե, կա որ պակասավոր կամ խաթարված. Կոմիտաս (ենթադրություն մըն է, որ կընեմ, ան այդ մասին իր գաղտնիքը ոչ մեկուն չէր հայտներ) ոչինչ կավելցներ ապահովապես, ոչինչ կփոփոխեր, բայց հավանորեն կվերցներ ինչ-որ ավելորդ հավելում, բիծ, եղծում կնկատեր. օրինակի համար, Հապրպան-ը ուրիշեն ձայնագրված ալ լսած եմ, իր

ձայնագրած եղանակը նույնն է խորքին մեջ, բայց որոշ տարբերություն ունի, ավելի գեղեցիկ է։ 1914-ին երբ Փարիզ եկավ ամսվան մը համար, խոսակցության մը մեջ անգամ մը հետևյալն ըսավ ինծի. Պոլիս թուրք մտավորականներ եղան, որ իմ կատարած գործովս շատ հետաքրքրվեցան և փափաք հայտնեցին, որ նույն աշխատանքը կատարեմ նաև թուրք ժողովրդական երգերուն համար. և իրոք կան անոնց մեջ որ գեղեցիկ են. և եթե ինչ-ինչ մասեր հանեմ, որոշ կոկումներ ընեմ, շատ սիրուն բան դուրս կուգա։ Բայց չպիտի ընեմ...»։ Իր «չպիտի ընեմ»-ն ալ հատկանշական է, և այդ խոսքը կարժեր որ արձանագրվեր ու մնար իբր հիշատակ մը մեր մեծ հայրենակցին կյանքեն։ Կոմիտաս ջերմ ազգասեր էր՝ առանց ազգամոլ ըլլալու. հետաքրքրված էր Արևելքի և Կովկասի շատ մը ցեղերու երաժշտությամբ. եթե ջարդերը բարբարական ահավոր խրամատ մը բացած չըլլային Հայուն ու թուրքին միջև, ան թուրք եղանակներուն վրա ալ որոշ չափով աշխատել պիտի չմերժեր. բայց այդ բարի Հայը, այդ ազնիվ մարդը իր ցեղը կոտորողներուն երգին հղկիչն ու փրփականտիսթը չէր կրնար դառնալ։ Ու մտածե՛լ, որ այդ մարդուն համար, խալիտե էտիպ հանեմ, որ պատերազմի ատեն տեղի ունեցած զարհուրելի տեղահանությանց միջոցին գերված հայ զմայլելի աղջիկներ թրքացնելու համար դիվային աշխատանք մը կատարած է, Ամերիկա և այլուր իր բանախոսությանց մեջ ըսած էր, թե ան ցեղով թուրք մըն է, որ քրիստոնյա դարձած և կղերական եղած է, բայց թե իր երգած երգերուն երաժշտությունն ու արվեստը թրքական են։

Կոմիտաս Վարդապետի հավաքած եկեղեցական տաղերուն, ժողովրդական երգերուն ու պարի եղանակներուն մեջ ամեն ինչ զուտ հայկակա՞ն է։ Մասնագետներ միայն կրնան, մանրակրկիտ հետազոտությունեն հետո, այս հարցման վճռական պատասխանը տալ։ Պ. Ն. Ալիքսանյան, այն լուրջ ու շահեկան ուսումնասիրության մեջ, որ Անահիտ-ի ընթերցողներեն մեծապես գնահատվեցավ, Կոմիտասի ժողովրդական երգերուն մեծագույն մասին հարազատ դրոշմը և ցեղային լիալիր ինքնատպությունը հաստատելով և մեկնաբանելով հանդերձ, անոնցմե ոմանց թրքական ինչ-ինչ եղանակներու մոտիկությունը և պարի եղանակներուն մեջ պարոկական որոշ ազդեցության գոյությունը կտեսներ։ Ինչքան ալ անծանոթ ըլլամ երաժշտական գիտության, պիտի ըսեմ — որովհետև նույն բանն է բանաստեղծության ալ համար,— թե դժվար է սպասել, երբ խնդիրը ցեղի մը վրա է, որ դարերով անմիջական ու մշտական շփում ունեցեր է օտար հզոր ու տիրապետող ցեղերու հետ, որ իր գեղեցկագիտական, նույնիսկ հարազատ արտադրությանց գեթ մեկ մասին մեջ օտար ազդեցության որոշ բաժին մը սպրդած չմնա։ Ինծի կթվի սակայն, որ Կո-

միտասի ընտրած ու հավաքած եղանակները ոչ միայն թրքական և այլ արևելյան երաժշտություններեն էապես տարբեր պետք է ըլլան ընդհանրապես, այլև նույնիսկ, եթե այդ եղանակներուն մեջ կան քանի մը հատուր օտար ազդեցություն կնշմարվի, ատիկա մասնաբան է և հայ տարրերու հետ խառնված, անոնցմե տիրապետված,— ինչպես է նաև, մերթ քուչակյան հայրեններու այնքան խորապես հայկական բանաստեղծությունը։

4. Կոմիտաս արտակարգ երգիչ էր, հայ երգին մեր օրով մեծագույն արտահայտիչը։ Անոնց համար, որ զինքը չեն լսած, որևէ նկարագրություն գաղափար չի կրնար տալ անոր երգեցողական հանճարին վրա։

Ծնած ծոցը Քեոթահիայի նուրբ հայ գաղութին, որմե ելած են հրուշակավոր հախճապակիներուն արվեստագետ հորինողները, զավակ հոր մը, որու նախնիքները մեր հնագույն գուսաններուն բնավայրեն, Դողթան գավառեն, գաղթեր են հոտ (ըստ իր ինքնակենսագրության) հայրն ու մայրը ձայնեղ երգիչներ եղած ու իրենց նախահայրերուն մեջ երգիչներ ունեցած, Կոմիտաս իր երգիչի ձայնն ու բնազդը իր արյունին մեջ իսկ ժառանգած էր։ Դեռահաս պատանի, էջմիածին զրկված, ան Գևորգ Դ. հսկա ալևոր կաթողիկոսը կլացնե եղեր իր երգեցողությամբ։ Ժողովրդական երգերը ան կերգեր հայ գյուղացիի մը պես պարզ, վճիտ, խոր, սրտաբուխ, արևելյան քնքուշ, կակուղ, թավշային կոկորդի խաղերով և այնպիսի հզոր զգացումով մը. ձայնի այնպիսի դաշն էլևէջներով, քաղցրը նվաղումներով կամ թարմ ու վառ սլացքներով, որ բոլոր հայ գյուղացիներուն հոգին՝ կարծես միացած իր կոկորդին մեջ։ Գյուղին բանաստեղծությունը կերգեր իր թավ, անուշ, ճկուն, թրթռուն պառիթոնի ձայնովը,— որ վերջերը, տարիներով զայն շարաշար գործածած ըլլալուն համար, քիչ մը խոպոտած էր, բայց իր Լական հատկությունները պահած։ Իսկ ինչպես արտահայտել վսեմությունն իր երգեցողության, երբ կրոնական տաղեր կամ շարականներ կ՚երգեր։ Բարեկամական շրջանակի մեջ կատակասեր, տղու պես զվարթ, միմոսություններ ընող այդ զմայլելի ընկերը, զոր կարճատես դիտողները և զինք մոտեն չճանչցողները սկեպտիկ մը կկարծեին, հավատացյալ մըն էր. իր հոգին մեջ միստիկ խորություն մը կար։ Տաճարին մեջ, երբ՝ խորանին դիմացը, դասին մեջտեղը կ՚երգեր ան՝ իր սևասքող վեղարին տակ գլուխը թաքուն, իսկապես ինքզինքը Աստուծո հետ մինակ կզգար. աշխարհ անհետացած, և ինք դարձած Արարչին մեկ սերովբեն, անոր գահույքին առջև տիեզերքի գեղեցկությունը փառաբանող կամ մարդկության աղերսանքները, երազները, տրտունջները անոր թարգմանող. Օ՜հ, իր Տիրամա՜յր-ը, իր Տեր Ողորմյա՜ն, իր ի Վերին Երուսաղեմ-ը, ի՜նչ ազնվական քաղցրություն, ի՜նչ անհուն խորություն ողբի, իր Հավի՜կ-ը, Աշխն Ծով-ը, Սայլն այն-ը, աստվածային էջեր մեր հին քերթության՝ աստվածային երաժշտությամբ մը լուսավորված, Աստուծմե ուղղակի ներշնչված երգիչ մը հոգեդայլայլված... Գեղարվեստական շատ քիչ զգայություն կհիշեմ կրած ըլլալ կյանքիս մեջ— ուր սակայն շատ մեծ արվեստագետներ լսած ըլլալու բախտն ունեցած եմ — այնքան բարձրորեն հուզիչ, որքան այդ միստիկ տաղերու կոմիտասյան երգեցողության պահուն զգացված հոգեկան անհուն ու ցավագինորեն երանավետ սարսուռը։ Անհնար էր չարտասվել։ Եվ ես Փարիզի եկեղեցվույն մեջ տեսեր եմ նույնիսկ Մանթաշովյանի, Համբարձում Մելիքյանի պես դրական մտքով ու հուժկու կազմով մարդիկ, որ զայն լսելու ատեն կուլային։

Ան միշտ հավասար չէր ինքզինքին՝ իբր երգիչ։ Ինքիրմե վար էր, ուրիշ էր, այն օրերը, երբ հանկարծ իր եվրոպական կրթությունը կհիշեր, օպերաներու երգեցողությունը մտքը կուգար, ու ձայնը կուրծքեն հանելով և ուռեցնելով՝ կդոռար, ինչպես թատերաբեմի մը վրա. շահեկան էր նորեն, ու հզոր, բայց այդ օրերու Կոմիտասը համեմատության չէր մտներ բուն Կոմիտաս երգչին հետ, երբ Եվրոպան և իր երաժշտությունը մոռնալով, զուտ արևելքցի ու հայ կմնար, ու կ՚երգեր մեղմ, գլխավորապես կոկորդովը, ամբողջ քաղցրություն, ամբողջ հմայք ու սիրտ։

Օր մը, տանս մեջ. զինքը հրավիրեր էի նախաճաշի՝ քանի մը եվրոպացի ու հայ բարեկամներու հետ, որոնց մեջ կային Անտրեոթթի իտալացի տաղանդավոր արձանագործը և մեր Տիրան Ալեքսանյանը։ Կոմիտաս երգեց ի մեջ այլոց. «Արի, արի, քե մատաղ» Կալի երգը, աննման կատարելությամբ։ Անտրեոթթի ինքնիրմեն ելած էր, «Դուք՝ հայերդ, կգոչեր, այսպիսի երաժշտություն ունիք և մայրաքաղաքե մայրաքաղաք չէ՞ք երթար ամբողջ մարդկության զայն հայտնելու...»։— «Ես այս երգը բազմաձայն դաշնակած եմ, ըսավ Կոմիտաս, եթե զայն խումբե մը իմանաք, ավելի խոր տպավորություն կկրեք»։—«Ո՜չ, ըսավ Անտրեոթթի, պետք չկա ո՜չ դաշնակումի, ո՜չ խումբի, կբավե որ դուք մինակ բեմ ելնեք և այդ հրաշալի երգը, ձեր այդ հրաշալի կերպովը երգեք»։ Իսկ Ալեքսանյան օր մը հետո կըսեր ինծի. «Աշխարհի առաջին երգիչն է այս մարդը. այս տեսակ երգիչ ես դեռ չեմ լսած. կենդանի նվագարան մըն է»։ Եվ արդարև, Կոմիտաս, երգած ատեն՝ բերանը որոշ ձևով մը քիչ մը ծուռ կեր բանար, և երգին ելևէջներուն համեմատ բերանին բացվածքը կլայնցներ կամ կնեղցներ։ Իսկապես՝ Փասքալի «մտածող եղեգ»-ն էր, ան, ճոխացած, մտածող, զգացող, եղեգ։

5. Կոմիտաս եղավ հայ երաժշտության մեծ փրոփականտիսթը, առաքյալը օտարներուն մոտ և հայոց իսկ համար։ Պերլին, Թիֆլիս, Փարիզ, Ժնև, Լոզան, Յյուրիխ, Պոլիս, Իզմիր, Գահիրե, Աղեքսանդրիա, Ֆիլիպե, ան առաջին անգամ օտար ազգերու ճանչցուց հայ երգը ու հաղթանակներ տանիլ տվավ անոր։ Փարիզի իր մեծ համերգը 1906-ին, ուր ինքն իսկ առաջին անգամ իր բազմալար տաղանդին ամբողջ մեծությամբն ու ընդարձակությամբը հայտնվեցավ աշխարհի, պատմական իրիկուն մըն էր հայ մշակույթին համար. Փարիզի երաժշտական թերթերը խանդավառ ներբողներով գնահատեցին հայ երգը և անոր մեծ ներկայացուցիչը. հոս կարտատպեմ հատված մը այն նշանավոր էջին, զոր Լուի Լալուա, Ֆրանսայի ամենեն հմուտ ու նրբաճաշակ երաժշտագետներեն մին, Փարիզի Մեծ օփերայի վարչության ընդհանուր քարտուղարը, Le Mercure Musical-ի մեջ այդ համերգին նվիրեց.

«Մեր նախորդ թիվին մեջ հրատարակված հայկական եղանակները և Պ. Ջ.-ի պերճաբան ճառը այնքան բարձրորեն արդեն ներբողը կընեն հայ երաժշտության, որ ոչ ոք չափազանցության մեղադրանքը պիտի ընե ինձի, եթե հայտարարեմ, թե այս համերգը հայտնություն մը և զմայլանք (emerveillement) մը եղավ։ Մեզմե ոչ մեկը, կարծեմ, բացի շատ սակավաթիվ իրազեկներե. կրնար մտքեն անցընել գեղեցկություններն այդ արվեստին, որ իրապես ոչ եվրոպական և ոչ արևելյան, այլ ունի նկարագիր մը՝ աշխարհիս մեկ հատիկ՝ շնորհալի քաղցրության, խորաթափանց հուզման և աղնվական գորովի։ Փափուկ և սակայն որոշ ոլորումներով մեղեդիներ, ճապուկ ու կենդանի կշռություններ, երաժշտություն մը, որ ամբողջովին սրտեն կբխի և կհոսի ինչպես ջուր մը զով, թափանցիկ ու պայծառ։ Արև կա այդ երգերուն մեջ, բայց ոչ Արաբիո և Գարսկաստանի անապատներուն հրատոչոր արևը, այլ ոսկեզօծ լույս մը, համակ երկնային, որուն ջերմությունը փայփայանք մըն է սարերու սպիտակության, անտառներու կանանչին և քաղցրակարկաչ առուներու ցոլքերուն։ Թերևս չեն սխալիր անոնք, որ Եղեմի դրախտը Հայաստանի մեջ՝ Արարատ լեռան ոտքը՝ կզետեղեն։ Որովհետև այդ երկիրը, որուն պատմությունը այնքան դժբախտ է եղած, արդարև ընտրյալ աշխարհ մըն է, ուր բնությունը՝ հուռթի ու բարյացակամ՝ իր բարիքները կշնորհե մարդուն։ Երկարատև հովվերգություն մը, խաղաղ, սիրուն, ժպտուն,— այդ պետք էր ըլլար, այդ եղած է իրոք հայ գյուղերու կյանքը, հակառակ այն բոլոր պատուհասներուն, որ անոնց վրայեն անցած են։ Մարդոց հոգին արժանի մնացած է այդ երջանիկ հողին[1]։ Ան իր ինքնության խորքին մեջ՝ շահած է իր բնիկ ճաքրությունը, իրերու բարության վրա իր հավատքը, լույսի և կյանքի իր սերը։ Եվ պարզասրտության այդ թանկագին գանձը, զոր ո՛չ թուրքերը, ո՛չ քյուրտերը, ո՛չ ալ ռուսները, ավելի ևս բարբարոս[1] կրցած են ո՛չ ըմբռնել ո՛չ հափշտակել, անեղծ փոխանցված է մեզի այդ գեղագիծ երգերուն մեջ, որ գունավառ ու անուշահոտ ծաղիկներ են։ Ահա՛ երգեր, մելամաղձիկ ու հրայրքոտ՝ ինչպես աշխարհի ամեն երկիրներուն մեջ, բայց գեղեցկության հանդեպ գորովագին հուզմունքի մասնահատուկ երանգով մը։ Աշխատանքի երգեր, ճոխ ոլորումներով երկարաձիգ կանչեր, որ եղած են մեկ լեռնեն մյուսն արձագանքելու և աշխատանքի մղելու համար «եզ ջան»-ը, բարեկամը, եղբայրը, գրեթե սրտակիցը հայ երկրագործին։ Ու դարձյալ՝ ողբերգներ, ուր ազատորեն կարտաշնչվի ամբողջ տրտմությունը լքված սիրույն կամ պանդխտության, և որոնց մեջ ո՛չ մեղադրանք, ո՛չ ընդվզում կխառնվի։ Եկեղեցական երգերը, որ նույնպես ժողովրդական նկարագիր ունին, չեն ներկայացներ այն քիչ մը երկչոտ հարգանքը, որ Գրիգորյան երգը կապված կպահե միշտ՝ նույնիսկ իր հույսի ու վստահության բոպեներուն. զեղումներն են հոգիի մը, որ լիովին կբացվի իր Աստուծոյն և, սիրո խոյանքի մը մեջ, անոր կհանձնե իր բոլոր մտածումներն ու իր կյանքն ամբողջ. հոն կզգանք թրթռալը հրավառ ու միստիկ հավատքի մը, որ առանց ճիգի կհասնի հափշտակության կատարներուն, որոնց մեր Արևմուտքին մեջ՝ սակավաթիվ ընտրյալներ միայն կրցած են բարձրանալ։ Վերջապես պարի եղանակները չունին մերիններուն գահավեժ գնացքը, ոչ ալ կշռական կարծրությունները. մերթ ծանր ու կրոնաշունչ, մերթ մեղմ իբրև երգ մը սիրո, կամ թերթ՝ անմեղ հրճվանքով մը, անոնք միշտ խորապես արտահայտական են, ճշմարիտ երաժշտություն ներդաշնակ ու ազատ գեղեցիկ մարմիններու... Սքանչելի՛ երկիր, ուր պարը ամենուն համար բնական լեզու մըն է, ուր յուրաքանչյուր ոք կըրնա անձնատուր ըլլալ ազգոր իրիկնամուտի մը ներշնչման, և իր ամբողջ անձը ուրախության, վշտի կամ տենչանքի կենդանի պատկեր մը դարձնել...։ Հ. Կոմիտաս, որ քաջությունն ունեցավ գալ վարել երգչախումբը և ինքն իսկ երգել եկեղեցական տաղեր մեր Stabat Mater-ին համապատասխանող կտորին մեջ (Տիրամայր), բարձրացավ հուզմունքի ներուժության մը, որ գրեթե մինչև արցունք բերելու աստիճանին կհասներ, և հասարակությունը Օվասիոն մը ըրավ իրեն...։ Հ. Կոմիտաս, որուն կպատկանի պատիվը այս եղանակները հավաքած և անոր գեղեցկություններն առաջին անգամ զգացած ըլլալու, հայտնվեցավ նաև հնարա-

1 Մեր երգերուն հրաշալի քաղցրության մեջեն Պ. Լալուա մեր հայրենիքը կտեսներ՝ բնութենեն շատ ավելի շռայլորեն նպաստավորված քան ինչ որ է։

1 Ռուսներուն, թուրքերեն ու քյուրդերեն ավելի բարբարոս նկատվելը տարօրինակ է։

միտ ու փափուկ նվագահարդար մը, որովհետև այդ եղանակներեն շատերուն միացուցած էր դաշնակի կամ խումբի համար գրված ընկերացում մը, ուր ազգային «Թոնալիթե»-ին ու գույնին ամենաճիշտ և ամենանուրբ զգացում մը երևան կուգա»։

Ժնև ու Լոզան, ուր իր հետն էի՝ ֆրանսերեն բանախոսությամբ մը հայ երաժշտության ու բանաստեղծության ու Կոմիտասի կատարած գործին վրա բացատրություններ տալու և երգվելիք կտորներուն թարգմանությունն արտասանելու համար, ան ապշեցուց զվիցերիական հասարակությունը. Ժնևի և Լոզանի թերթերը հիացական հոդվածներ հրատարակեցին «Կազետ ար Լոզան»-ը ընդարձակ ու խանդավառ հոդվածի մը մեջ կգրեր. «Պ. Ջ. առաջադրած էր ցույց տալ, թե իր երկիրը, զոր մեծ դժբախտություններ համակրության արժանի կցուցանեն, համակրության արժանի էր մանավանդ իբր քաղաքակրթական տարր մը։ Ան իր նպատակին հասավ և նույնիսկ ավելի անդին անցավ. դժվարություն չրաշեց ցույց տալու, թե հայերը իրենց պարտեզը մշակել գիտեն։ Բայց անոնք, որ ըսած են թե այդ պարտեզը ատենով եդեմի դրախտը եղած է, եթե գային այսօր զայդ կրկնել, այլևս բնավ պատճառ պիտի չունենայի այդ մասին տարակուսելու։ Երաժշտական տեսակետով, ուրբաթ օրվան երեկույթը հայանություն մը և դյութանք մը (enchantement) եղավ։ Հայ երաժշտությունը ոչ միայն մարդկային երաժշտության մեկ որոշ տարրն է, այլև այնքան գեղեցիկ է ան, որ կրնա նախանձը շարժել փարթամ Գերմանիային և խրոխտ Ֆրանսային. ան կրնա մեզի համար առաջնորդ մը ու իտեալ մը հանդիսանալ։

«...Այդպիսի գործերու երաժշտական ընթերցումը բավականաչափ որոշ գաղափար մը չի կրնար տալ անոնց մասին. պետք է զանոնք լսել Հ. Կոմիտասի պես արվեստագետե մը արտահայտված, որ զանոնք կերգե դաշնակի վրա, ինքն իսկ իրեն ընկերանելով, մեր բազմաձայնական ճաշակին գոհացում տալու համար ու նաև ոգելու համար այն գործիական ընկերացումները, զոր իրենց երկրին մեջ մերթ կուտան անոնց։ Ինչ դաս մեր երաժիշտներուն համար, գործը այդ արվեստագետին, գրեթե անանուն, քանի որ աշխատեր է ավելի իր երկրի արվեստին քան իր անձնական արվեստին համար և որուն ձայնով ամբողջ ցեղ մըն է որ կարտահայտվի։

«Բայց մանավանդ ի՞նչ դաս գեղեցկության։ Այն կտորները, զոր երգեց, չեն կարգավորված իրենց ներշնչումեն դուրս գտնվող գեղեցկագիտությամբ մը (ներդաշնակային օրենք կամ կշռական օրենք)։ Իրենց միությունը, զգացման միություն մըն է։ Ի՞նչ անփութություն «Թոնալիթե»-ի ու «բառյուռ»-ի հանդեպ։

«Հաճույք մըն էր տեսնել այն հրճվանքը, որով հասարակությունը կհետևեր այդ գեղեցկությանց քմահաճ թելին և սրտաբուխ խանդավառությունը, որով զանոնք կծափահարեր։ Այդ երգերեն ամեն մեկը իր հատուկ գեղեցկությունն ուներ։ Եվ արդեն հայ արվեստին բնորոշ գծերեն մին այն է, որ իր այլազանությունը կհավասարի իր գեղեցկության։

«Ահա թե ինչպիսի՞ երգերով հայերը կլեցնեն իրենց կյանքն ու իրենց երգերը։ Ահա թե ինչե՞ր քաղած են այն բնութենեն, ուր Աստված զիրենք տեղավորեր է։ Իսկ մե՞նք, ի՞նչ ենք քաղեր այն բնութենեն որուն ծոցին մեջ կապրինք...»։

Պոլսեցվոց ծանոթ կոմս Օսթրորոկը, որ հայասեր մը չէր, բայց լսած էր Կոմիտասի համերգները, պատերազմի ատեն փարիզյան թերթի մը իր տված մեկ հոդվածաշարքին մեջ (Արևելյան խնդրո մասին) կխոստովաներ՝ «Հայերը սքանչելի ժողովրդական երաժշտություն մը ունին»։

Արդեն իսկ Պերլին իր ուսումն ավարտելե հետո, արտասանած առաջին հրապարակային դասախոսության առթիվ, Պերլինի համալսարանի երաժշտության ուսուցիչ պրոֆ. Օսքար Ֆլայշըր կգրեր՝ «1899-ին Պերլինի երաժշ. Ընկերության Միջ. սրահին մեջ Կոմիտասին կարդացած դասախոսությունը հայ հոգևորը երաժշտության մասին պիտի՛ մնա անմոռանալի»։ Տարիներ հետո, Վիեննայի համալսարանի երաժշտության դասախոս պրոֆ. Վիլեզ Ետոն կգրեր. «Կզարմանամ Կոմիտասի արտակարգ ընդունակության վրա։ Շատ լավ ըմբռնելով ժողովրդական երգը, ան դաշնակած է երգերը հազվադեպ ճաշակով և ճշգրտությամբ։ Այն բոլոր երգերը զոր անձամբ լսած եմ Կոմիտասեն. կամ ուսումնասիրած եմ, կ՚պացուցանեն, որ Կոմիտաս եզական դեմք է՝ իբր դաշնակող և իբր փոլիֆոնիսթ»։ Իսկ գերման հայտնի երաժշտագետ և խմբապետ Ալոիս Մելիշար, կոմիտասյան հանձնաժողովի հրատարակած հինգերորդ տետրը ստանալե հետո, օրիորդ Մ. Բաբայանին ուղարկված նամակի մը մեջ կ՚ըսեր՝ «...Կոմիտաս աննման վարպետ է։ անոր դաշնակումը (harmonie) աներևակայելի դժվար ու գունավոր է, անոր մեներգի ու խմբերգներու շարահյուսումները անկարել է գերազանցել»...

Կրնայի դեռ երկարել հեղինակավոր օտարներու կողմե հիացման այսպիսի արտահայտությանց շարքը։

Իսկ իր դերը, հայ երգը Հայոց մեջ իսկ տարածելու և սիրցնելու համար, ամբողջ հեղափոխություն մըն է մեր բարքերուն մեջ։ Իրմե առաջ, հայ ժողովրդական երգը անծանոթ էր հայության մեկ ստվար մասին, և կամ արհամարհված։ Հայաստանի գյուղացին, որ զայն ավանդաբար կպահպաներ և իր նորանոր աշուղներով այդ հինավուրց գանձարանը կճոխացներ, կսիրեր զայն անշուշտ իբր իր կյանքին զարդը, իբր իր հոգ-

վույն սփոփանքը, իբր իր ուրախ ու տխուր օրերուն քաղցր ընկերը, բայց անոր արժեքը իր ամբողջ չափով հեռու էր գիտնալե։ Հայաստանեն դուրս, գաղութներու մեջ, նույնիսկ հայ մտավորական կյանքի կեդրոն հանդիսացող քաղաքներու մեջ (Պոլիս, Թիֆլիս, Իզմիր, Վենետիկ, Վիեննա, Մոսկվա, Բաքու և այլն), հայ ժողովրդական երգը (Կոմունկ-ին պես քանի մը տարածված կտորներե զատ) շատ քիչ ծանոթ էր. կ'երգվեին «ազգային» երգեր, որոնց բառերն ու զգացումները հայկական էին (ընդհանրապես հայրենասիրական), բայց որոնց եղանակը գրեթե միշտ (բացի Տեր կեցոե մը, Հայաստան Երկիր Դրախտավայրե մը կամ Ո՞վ մեծասքանչ դու լեզուե մը, որոնց եղանակը դարձյալ եվրոպաձև է, բայց հայկական շեշտ ունի) արևմտյան օփերայի կտորներե կամ ծանոթ եվրոպական երգերե փոխառնված էր պարզապես և կամ հետևողություն էր անոնց. Քամառ-Քաթիպայի արի իմ սոխակին եղանակը ռուսական է, ծիծեռնակին եղանակը օտարե, խոսքերն ալ թարգմանած, Մեր Հայրենիքին եղանակը հավանորեն իտալական, Բամ փորոտանին եղանակը իտալական օփերայի երգերու նմանողություն է, և այլն, և այլն)։ Ատոնց մեջ դուրս մեր երիտասարդությունը մեծ մեծ քաղաքներու մեջ կ'երգեր կա՛մ թրքական, վրացական, հունական, ռուսական երգեր, և կա՛մ եվրոպական երաժշտության անձնատուր կ'ըլլար, «հայկական երաժշտության գոյությունն իսկ անգիտանալով։ Իր անձին ու գործին հմայքով, իր հրատարակություններով, իր կազմած խումբերով, եվրոպական մեծ կեդրոններու մեջ իր տված համերգներով և արտասանած բանախոսություններով և ատոնց գտած հաջողության, Հայոց վրա գործած ազդեցությամբ Կոմիտաս Վարդապետ ջնջեց հայ ժողովրդի այդ անգիտությունն ու անտարբերությունն իր սեփական երգին հանդեպ։ Այսօր մեր գաղութներուն մեջ հանդես մը տեղի չունենար, որուն հայտագրին գլխավոր զարդերեն մին չկազմե հայ ժողովրդական երգը։ Պատերազմեն հետո ես եղա Եգիպտոս, Սուրիա, Պաղեստին, Ամերիկա, ամեն տեղ լսեցի, հայ որբանոցին, հայ դպրոցին, հայ տան, հայ ամեն տեսակի հավաքման մեջ, հայ երգը, ու մասնավորապես Կոմիտասի հավաքած ու դաշնակած հայ երգը, երիտասարդ հայերու բերանին վրա թրթռուն։ Ան Հայաստանը իր կենդանի գույնովն ու բուրմունքովը տարածեց օտար երկինքներու տակ ծնած և հայրենիքի մասին վերացական գաղափար մը միայն ունեցող նոր սերունդներուն, հայրենիքեն շատոնց հեռացած և օտարամոլ դառնալ սկըսած գաղթականներու հոգվույն մեջ, տոհմային երգին մոգությամբ վերանորոգեց հայրենի հողին սերը, և Հայաստանի գյուղացիին ալ տվավ գիտակցությունը իր սեփական երաժշտության և անոր ներկայացուցած արժեքին։ Սքանչելի՛ գործ, անհունապես բեղմնավոր։

5. Կոմիտաս եղած է խանդավառ ուսուցիչ մը և արտակարգ խումբ կազմող ու վարող մը։ Այս կետին վրա ավելորդ է ծանրանալ. ամեն ոք գիտե այն պաշտումը, զոր ունեին իրեն համար քանի մը սաները, որոնցմով մասնավորապես զբաղած է էջմիածին և Պոլիս՝ որպեսզի իր գործին շարունակողներն ըլլան. ամեն ոք գիտե այն անդիմադրելի ձգողությունը, զոր ան կներշնչեր, ուր որ երթար՝ հայ երիտասարդության, այն ճարտար ու հմայիչ կերպը, որով իր շուրջ և հայ երգին շուրջ կհամախմբեր հարյուրավոր պատանիներ ու պատանուհիներ, կմարզեր շարունակ, կընտելացներ՝ զարմանալի արագությամբ՝ հայ երաժշտական ոճին, ու անոնցմով կկազմեր խումբեր ինչպես իրմե առաջ մեր մեջ չէր տեսնված երբեք, և կուտար անոնցմով համերգներ ինչպես մեր ժողովուրդը չէր ունեցած իրմե առաջ։

6. Կոմիտասի Հոխ անձնավորության մեջ ամենակարևոր տեղերեն մին կբռնե գիտուն ուսումնասիրողը։ Հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության կազմության, հատկանիշներուն, ճյուղավորումներուն անոր պատմության և այլ հարակից հարցերու վրա ան երկար տարիներ ի վեր հետազոտություններ կկատարեր։ Ատիկա մեծապես շահեկան քննության մարզ մըն էր, ուր գրեթե ոչինչ եղած էր իրմե առաջ։ Ան կջանար որոշ ցույց տալ փուլերը որոնցմե անցած էին հին ատեն հայ եկեղեցական երաժշտությունը, կ'ուզեր ճշտել դերը, զոր կատարած էին Խաչատուր Տարոնեցի մը, Ներսես Շնորհալի մը, և ասոնց պես ուրիշ մեծ հայ երաժիշտներ, կարդացած ու նոթագրած էր ինչ որ այդ մասին կարելի է գտնել մեր պատմագիրներուն, քրոնիկագիրներուն և այլ հեղինակներու մեջ, հին ձեռագիրներու անտիպ գրվածքներուն մեջ անվերջ պրպտումներ ըրած էր և հավաքած էր ինչ որ կվերաբերի երաժշտության։ Ան մասնավորապես կճգներ բանալին գտնելու մեր հին խազագրության, որուն բազմաթիվ նմուշները կտեսնենք հին ձեռագիր շարականներե և տաղարաններե ոմանց մեջ,— հաճախ եղանակին էական կետերը հիշեցնող, շեշտերը մատնացույց ընող նշաններ, բայց մերթ ալ մեկե ավելի տողեր բռնող մանրամասն երաժշտական նոթագրություն, որ հավանորեն եղանակը ամբողջությամբ կցուցադրե։ Այդ բանալիին գյուտը մեզի թույլ պիտի տար որոշ գիտնալ թե ԺԴ. և ԺԵ. դարերուն (ու ավելի իսկ առաջ) ինչպե՞ս կերգվեին այսինչ շարականն ու այնինչ տաղը։

Այս աշխատանքներուն արդյունքը փոքր մասով մը միայն հրատարակած էր իր հայերեն ու գերմաներեն հոդվածներուն մեջ։ Թե իր հիվանդանալեն առաջ մինչև ուր հասցուցած էր իր ուսումնասիրությունը խազագրության մասին, հայտնի չէ։ Իր ձեռագրաց ծրարներուն մեջ, կցկտուր

նոթեր միայն գտանք այդ նյութին վրա. ոչինչ՝ շարադրված։ 1908-ին իր ուրվագծած ինքնակենսագրության մեջ, ինք իրը «անտիպ գործ» կհիշատակ՝ «ուսումնասիրություն հայ ժողովրդական երաժշտության», «ուսումնասիրություն հայ եկեղեցական երաժշտության», «խազաբանություն», «զանազան դասագրքեր երաժշտության»։ Ասոնցմե միայն հայ ժողովրդական երաժշտության վրա իր ուսումնասիրությունը գիտեմ, որ, ինչպես ըսի արդեն, մեծ մասամբ շարադրված էր։ Իր հիշած մյուս «անտիպ գործեր»-ը գրա՞ծ էր ամբողջապես, թե ծրագրած լոկ, նոթեր հավաքած ու մասամբ գրած,— հայտնի չէ ինծի։

Կոմիտաս հատուկ ուշադրություն դարձուցած էր նաև բառերու շեշտավորման վրա։ Ես չեմ լսած եկեղեցական մը, որ իրեն պես ավետարան կարդար. վանկերը, հստակ, որոշ կ'անջատվեին իր անթերի առոգանության մեջ, շեշտերը ճիշտ կհնչեին ուր որ պետք էր։ Նույն հոգածությունը ցույց կուտար և երգեցողության մեջ, կծաղրեր այն տիրացուները, որ շեշտ կդնեն այն վանկերուն վրա ուր շեշտի պետք ու կարելիությունը չկա (զոր օրինակ՝ Տեր ողորմիա-ին ո-ին վրա կկոխեն ու կանգ կ'առնեն երկար, մինչ «Տե՛ր»-ն է շեշտված վանկը և «ողորմնա»-ին ան։ Մեր երգին զտման աշխատանքին մեջ, եղանակին ելևէջմանց և բառերու բուն շեշտվելիք վանկերուն ներդաշնակմանը մեծ տեղ տված էր, և ամենայն իրավամբ։

7. Կոմիտաս, վերջապես, ստեղծագործ երաժիշտ էր, և ոչ թե միայն հավաքող ու դաշնակող, ինչպես ոմանք կկարծեն։ Սիփանա քաջերը՝ որոշ եղանակի մը օգտագործումով անձնական շարադրություն է, և գեղեցիկ գործ մը, դյուցազնական շունչով։ Հայ պարի եղանակներու շարքը, զոր դաշնակի համար գրած է (և որուն կարևորագույն կտորը, Սշո շուրարը, դժբախտաբար հայտնի չէ թե ո՛ւր է մնացած) ժողովրդական մոթիֆներու վրա անձնադրոշմ երաժշտական հյուսվածաշարք մըն է, այնքան նուրբ ու գունագեղ։ Տեր Կեցոն, Ո՞վ մեծասքանչը և մանավանդ Կալի երգը, այնպես ինչպես ինք, զանոնք դաշնակած է տրված եղանակի մը վրա, գրեթե անձնական ստեղծագործություն են։ Ինչքա՞ն ծրագիրներ ուներ այդ մարդին մեջ։ Էջմիածին, է՞ն առաջ խորհած է գրել Օփերա մը Դավիթ և Մհերի դյուցազնավեպեն քաղված խաղի մը վրա, խաղը գրող չէ գտնված, և ինք ալ երբեք ձեռք չէ զարկած իր այդ ծրագրին գործադրության։ Հետո մտածած է նույնպես գրել բեմական երաժշտություն Թումանյանի Անուշեն քաղված թատերախաղի մը համար, տարիներով սպասած է, որ Թումանյան այդ խաղը ինքն իսկ հանե իր քերթվածեն, Թումանյան խոստացած էր (առանց համոզման) և երբեք ալ չէր գրած։

Թիֆլիս գտնված միջոցիս, Կոմիտասի հետ Թումանյանի տունն էինք օրմը, Կոմիտաս նորեն խնդրեց, որ փութացնե Լիպրեթթոին խմբագրումը. Թումանյան զգացուց, որ ատիկա իր ընելիք բանը չէր, «ես պոեմը գրել եմ, ըսավ խնդալով, լիպրեթթոն էլ թող ուրիշը հանե»։ Սպասելով այդ լիպրեթթոյին, Կոմիտաս արդեն Անուշի քանի մը մեներգներու և խմբերգներու եղանակը հորինած էր (ինքնահնար եղանակներ՝ ժողովրդական երգերու ոճով), ատոնք ինծի երգեց Էջմիածին, և շատ սիրուն գտա (մանավանդ Ասել են ուրին սիրո ողբերգին եղանակը). բարեբախտաբար իր ձեռագրաց մեջ գտանք Անուշի համար գրած այդ եղանակներ, որոնք (թեև անոնց դաշնակումը դեռ չէ շարադրած) նույնությամբ հրատարակվիլ կ'արժեն։

Դեռ ինչե՞ր պիտի ըներ, ինչ հարաճուն թափով պիտի շարունակած ու ընդլայնած ըլլար իր գործը, եթե անողորմ ճակատագիրը զայն հանկարծ իր հոյակապ տաղանդին, հմտության, կորովին, փորձառության լռությանը մեջ հարվածած և իր մեղեդավոր բերանը լռության դատապարտած, իր հրաշագործ ձեռքը կասեցուցած չըլլար։ Դժբախտություններով հարուստ մեր ժողովրդին մեծագույն դժբախտություններեն մեկն է այդ մտավոր անգին ուժին երկար տարիներե ի վեր անշարժացումը։ Իբր երգիչ, իբր հավաքիչ, իբր դաշնակող, իբր գտիչ հայ երաժշտական ոճին, իբր ուսուցիչ ու խումբ կազմող, իբր հայ երգի փրոփականտիսթ. ան՝ կարելի է ըսել՝ տված է իր ամբողջ չափը, և ինչ որ ըրած է՝ կարող է իր անունը հավիտյան անմահ պահել. բայց իբր հետախուզող բանասեր և իբր ստեղծագործ երաժիշտ ան դեռ շատ բան ուներ ընելու, ու խորին ցավ ու մեծ կորուստ է մեզի համար, որ ան կասեցավ այդ մարզերուն մեջ իր բոլոր կրցածը դեռ չտված։ Ատոր մեջ ինք զոհն է նաև իր ժողովրդասեր, անձնվեր բնավորության, ինչպես և մեր մեջ՝ իր երևան եկած ատեն, այդ բազմաձև գործին համար հարկավոր զանազան հատուկ ուժերու չգոյության։ Իրեն պես հմուտ արվեստագետ մը, եթե եսական ու փառասեր խառնվածք ունենար, գտնելե հետո այդ ոսկեհանքը, փոխանակ իր ուժերը նորանոր կտորներու հավաքման ու դաշնակման, ուսուցչական գործունեության, խումբերու կազմության ու ղեկավարման սպառիչ աշխատանքներուն մեջ տարիներով մաշեցնելու, գեթ անոնց մեծ մասը պիտի նվիրեր անձնական ստեղծագործության կերտման և քննական ուսումնասիրության լիակատար հորինման։ Բայց ան «նվիրված» մարդ էր զիրաքանչյուրս, «ծառայելու» հրայրքեն բռնված. ան կղզարորնախապատրաստական դժվար և անհրաժեշտ գործ մը կար կատարելու, և այդ գործին միշտ առաջնություն տված է իր անձնական երկերուն

վրա։ Այդ բոլորը միասին լիովին իրագործել անհնար էր. քննական մեծ աշխատությունները և գեղարվեստական երկերու հորինումը կպահանջեն, որ հեղինակը ամբողջապես անոնց նվիրվի։ Կոմիտաս, իր բարդ ու բազմադիմի գործունեության մեջ, չէր կրնար այդպիսի ծանր աշխատանքներու տալ այն բոլոր ժամանակը, որ հարկավոր էր և ինքնամփոփումն ալ, որ անհրաժեշտ էր։ Պատերազմեն քիչ առաջ, ան կձգտեր նաև Պոլիս հայ երաժշտանոց մը հիմնել, հանրօգուտ զմայլելի՜ գաղափար, որ սակայն եթե իրականանար, իրեն համար ավելի ևս դժվար պիտի դառնար իր ուսումնասիրությանց և անձնական ստեղծագործությանց ժամանակ և ուժ գտնել նվիրելու։

***

Առաջին օրեն իսկ ուր զինք տեսա ես զգացի այդ անսովոր ուժը որ կար իր մեջ, ես անսահման սիրով մը կապվեցա իրեն, և այդ սերս, ավա՜ղ, թերևս անուղղակի պատճառներեն մեկն եղավ այն տխուր վիճակին ուր ան այժմ կգտնվի։

Ե՛ս եղա զինք դրդող որ 1906-ին գար Փարիզ ու մնար հոն, ես եղա զինք մղող որ 1910-ին Պոլիս երթար։ 1901-ին զինք Փարիզ տեսնելես հետո, թղթակցության մեջ մնացի իրեն հետ, և գիտեի որ ինքը, էջմիածնա մեջ պաշարված ըլլալով հանդերձ, զինք խորապես սիրող քանի մը ընկերներով, չուներ հարկ եղած բոլոր պայմանները լիովին կատարելու համար այն բազմակողմանի գործը, որուն կոչված էր։ Ստանալով իրմե նամակ մը Պերլինեն, ուր եկած էր քանի մի շաբաթվան համար, գրեցի իրեն գալ Փարիզ և գեթ ատեն մը մնալ ու գործել այստեղ։ Իբր եկամուտ ուրիշ բան չուներ, բայց եթե էջմիածնա միաբանի իր փոքրիկ ամսականը, որ հեռու էր Փարիզի պես տեղ մը իր պետքերուն բավելե. հույս ունեի սակայն, որ Փարիզի հայ գաղութը պիտի ուզեր այդպիսի վարպետ ու հմայիչ երաժիշտ մը իր եկեղեցվույն իբր դպրապետ պահել և անոր ապրուստը վայելչորեն ապահովել։ Այդպես կմտածեի, և դեպքերը ցույց տվին, որ կսխալեի։ Հետևեցավ Թելադրությանս և եկավ Փարիզ. շատ բան ըրավ հայ արվեստին. հայ անվանի վարկին համար, բայց Փարիզի հայերը չըրին ինչ որ պետք էր զինքը իրենց մեջ պահելու համար, և տարի մը ետքը սրտաբեկ ու դառնացած ելավ դարձավ էջմիածին։

1908-ի վերջերը տեսա զինքը էջմիածին, երբ գացի հոն մասնակցելու կաթողիկոսական ընտրության իբր Մշո և Շապին-Գարահիսարի պատգամավոր։ Ավելի որոշ գացի հոն ինքան շրջապատը նեղ էր իրեն համար. անթիվ ընելիք ուներ, միջավայր չկար, հարկ եղած օգնությունը

չկար։ Տարօրինակ բան է, որ Մայր Աթոռը, որ Զարին կարծածին պես մեծահարուստ չէր, բայց հեռու էր աղքատ ըլլալե, թե՛ Խրիմյանի, թե՛ Իզմիրլյանի, թե՛ Սուրենյանի հայրապետության օրով, որևէ գումար չէ տրամադրած այդ մեծարժեք արվեստագետին, որ իր երաժշտական գործերը հրատարակե գեթ իր գաշնակած պատարագը տպագրե։ Կնեղվեր հոն, մանավանդ Փարիզի մեջ ունեցած գործունեության լայն ու փայլուն ասպարեզեն հետո։

Անցողակի պատմեմ հոս դեպք մը, որ տեղի ունեցավ Թիֆլիս այդ օրերուն և որ նույնպես զինք վշտացուց։ Կաթողիկոսական ընտրութենեն հետո Կոմիտաս Թիֆլիս եկավ մեզի հետ քանի մը շաբաթ մնալու, կփափագեր համերգ մը տալ, և կսպասեր որ իրեն օգնողներ ըլլային զայն կազմակերպելու համար։ Այն մեծ հացկերույթին զոր Թիֆլիսի հայությունը տվավ ի պատիվ թրքահայ քառասուն պատգամավորներուն, բախտն ունեցանք լսել ծերունի Ջիվանին, մեծ ժողովրդական բանաստեղծը, որ իր հոգնած, խռպոտած ձայնով ու իր ավանդական սազով իր գեղեցիկ տաղերեն մեկ քանին երգելով մեր սրտերը թունդ հանեց, իսկ Կոմիտաս զմայլեցուց ամենքը իր բազմաթիվ բազմազան, հրաշալի երգերով։ Քիչ հետո, Կովկասի Բարեգործական Ընկերության տարեկան երեկույթին, ուր փոխարքա Վորոնցոֆ-Տաշքոֆ և իր ամուսինը կուգային առաջին անգամ ըլլալով անձամբ ներկա գտնվիլ, Կոմիտաս իր երգեցողությամբ փայլ տվավ ու փոխարքային ներկայացվելով անոր ջերմ շնորհավորություններն ընդունեցավ, սակայն իր ծրագրած համերգին համար օգնողներ, կարգադիր քոմիթե մը կազմելու տրամադիր անձեր գտնելու իր հույսը իրականություն չելավ։ Խոսեցանք քանի մը «ջոջ»-երու. «Թող ինք սարքե համերգը, ըսին, մենք կաշխատինք տոմսերը տարածել...»։ Ինքը միջոցներն իսկ չուներ սրահ մը վարձելու. վշտացած, հրաժարեցավ իր ծրագրեն և դարձավ էջմիածին։

1910-ին կգրեր ինձ թե Պոլսեն փափաք հայտնողներ եղած էին, որ հոն երթար, հույս տալով որ իր գործունեության համար լավ պայմաններ պիտի գտներ հոն. նույն ատեն Մեսրոպ եպիսկոպոս Տեր Մովսիսյան, որ Թիֆլիսի առաջնորդ էր այդ միջոցին, իրեն առաջարկած էր գալ Ներսիսյան դպրանոցի երաժշտության ուսուցչությունը, և կարծեմ նաև, քաղաքին ավագ եկեղեցվույն դպրապետությունը ստանձնել։ Երկուքեն ո՞րը նախընտրել, կվարաներ որոշում տալ, և ինձի խորհուրդ կհարցներ։ Մղեցի զինքը Պոլիսը նախընտրել։ Ժեռն-Թյուրք բեժիմին հանդեպ որևէ համակրություն ու վստահություն չունեի և մեր բոլոր քաղաքական գործիչներուն հոն գառնալու փութալը և Իթթիհատի կասկածելի «վերանորոգիչնե-

ռուն» հետ ձեռք ձեռքի գործել ուզելը անիմաստուն գտած էի ու մեր դատին համար վնասակար, և իմ մասիս՝ համառած էի դուրսը մնալը նախընտրել։ Բայց երաժիշտի մը համար՝ Պոլիս անպատեհություններ չկային, և կային, այդ շրջանին, որոշ առավելություններ։ Ո՞վ կրնար երևակայել, որ քանի մը տարի հետո, համաշխարհային ահավոր պատերազմը տեղի պիտի ունենար։ Գեղարվեստական գործունեության հաշվեր լայն ասպարեզ կար այդ միջոցին Պոլիս, նոր բեմիմ դրաքննությունը ջնջած էր, երթևեկի ազատություն տված էր, Պոլսո և Թրքահայաստանի միջև հաղորդակցությունները դյուրացած էին, Պոլսո մեր մեծ համայնքին մեջ հայ մտավոր և ազգային կյանքի վերազարդում մը սկսած էր, Կոմիտաս հոն պիտի լիովին ըմբռնվեր, խրախուսվեր և օժանդակվեր իր գործը լայնորեն կատարելու։ Լսեց անգամ մը ես իմ բարեկամական խորհուրդիս ու գնաց Պոլիս։ Թե ինչ հրաշալի գործ կատարեց հոն, թե ինչպես հայ և օտար հասարակությունները հոն գնահատեցին զինքը, հայտնի է ամենուն։ Բայց եկավ մեծ պատերազմը և պատահեցան այն դեպքերը, որ իր ուղեղը ցնցեցին և զինք դրին այն ցավագին կացության մեջ, ուր կմնա մինչ ցարդ...։

Մերթ կմղվիմ մտածել, հիմա, թե լավագույն էր թերևս, որ ան երբեք հեռացած չըլլար Կովկասեն։ Էջմիածին և Թիֆլիս, ան պիտի շարունակեր աշակերտներ հասցնել, խումբեր պիտի կազմեր, իր ուսումնասիրությունները հառաջ պիտի տաներ և այդ խաղաղ ու նվաղ ծանրաբեռն կյանքին մեջ թերևս պիտի լրացներ զանոնք. թերևս իսկ, նույն հանդարտ պայմաններով, իրեն ավելի հեշտ ըլլար իր երաժշտական անձնական ծրագիրները գեթ մասամբ իրագործել։

Իր Պոլիս քանի մը տարի գործելովը, սակայն, աղեն է որ շահեցավ, ինչպես որ աղը շահեցավ նաև մեծապես անոր տարի մը Փարիզ մնալովը։ Կովկասի մեջ չէր կրնար այդքան ընդարձակությամբ, ներուժությամբ ու փայլով, և այդպիսի միջազգային լայն հասարակության մը առջև, կատարել գործը, զոր ան Փարիզ ու Պոլիս կատարեց։

Իտեալ լուծումը, անշուշտ, իր Փարիզ մնալն էր։ Այնտեղ, թե՛ իր ամբողջ ծրագիրը կրնար իրագործել և թե՛ իր գեղարվեստական ու հմտական պաշարը ճոխացնել, ինչ որ ըրավ մասամբ այն մեկ տարվան ընթացքին զոր անցուց հոս։ Փարիզի հայ եկեղեցվո իրեն դպրապետ՝ իր կյանքն ապահոված, ան հոյակապ հայկական երգչախումբ մը պիտի կազմեր, որ Փարիզի մեր գաղութին փառքը պիտի ըլլար։ Մեր եկեղեցին այդպիսի խումբով մը շենցնելի և զայն Փարիզի երաժշտասեր օտարներուն իսկ համար ջահեկան ու սիրելի վայր մը դարձնելի զատ, այդ խումբով

ան պիտի տար քաղաքին մեջ պարբերաբար համերգներ և այդպիսով հայ դատին ու հայ մշակույթին գեղեցկագույն ձևով փրոփականտին ամենաթանկագին նպաստ մը պիտի բերեր։ Ու իր պարապ ժամերը պիտի հատկացներ իր հավաքած երգերը դաշնակելու, իր քննական ուսումնասիրությանց եզրակացությունները շարադրելու և անձնական երաժշտական երկեր հորինելու։ Երկու տարին անգամ մը կրնար արձակուրդի շրջանին դառնալ Կովկաս, նորեն շփման մեջ մտնել հայրենի հողին ու ժողովուրդին հետ, նոր նյութեր հավաքել, կրնար մերթ այցելել ուրիշ մոտիկ գաղութներ, բանախոսել ու համերգներ տալ, բայց իր կենտրոնատեղին Փարիզ ըլլալու էր։ Այս էր որ կփափագեի ես, ու կկարծեի թե այդ փափագս պուրավ իրականանալի բան մըն էր, որ ամսական քանի մը հարյուր ֆրանքի վրա էր խնդիրը։ Թիլադրեցի զայդ այն ատենվան Փարիզի հայ եկեղեցվո Հոգաբարձության ատենապետ հանգուցյալ Միհրան Հովակիմյանին, որ խորապես կսիրեր և լրջորեն կգնահատեր Կոմիտաս Վարդապետը և շատերն անգամ մը զայն կհրավիրեր իր տունը քանի մը մտերիմ բարեկամներու հետ եղբայրաբար մեկ քանի ժամ անցընել. Հովակիմյան բոլորովին համաձայն, այդ առաջարկը դրավ հոգաբարձության սեղանին վրա, և պնդեց ինչքան կրցավ, բայց առանց հաջողության. իր ընկերները հայտարարած էին, թե իրենք ալ կգնահատեին Կոմիտաս Վարդապետը, բայց կկարծեին թե եկեղեցվույն միջոցները թույլ չէին տար դպրապետ ու խումբ պահելու... Հոգաբարձությունը եկեղեցվո երիցատան մեջ սենյակ մը հատկացուցած էր Կոմիտաս Վարդապետին՝ որպեսզի պանդոկի ծախք չունենա, ատիկա բավական կհամարեին իրենց համակրությունը հայտնելու համար։

Դացի եկեղեցվո վարչության նախագահ հանգուցյալ Ա. Եգնայանը տեսնելու և ջանալի զինք համոզել. անկարելի եղավ. գովեստով խոսեցավ Վարդապետին վրա, բայց ըսավ, տարեկան ինչ հասույթ որ ունի եկեղեցին՝ պարտավոր ենք անոր ավելցուքը ամբողջությամբ պանքան դնել՝ եկեղեցվույն ապագան ապահովելու համար։ Մեր այժմյան պայմաններուն մեջ, դպրապետ ու խումբ՝ մեզի համար լյուքս են, որուն միջոցները չունինք...». Տեսություն որ ամեն կերպով սխալ էր։ Իրենք իսկ կնկատեին թե ինչպես ամեն կիրակի եկեղեցին լեփ լեցուն կըլլար-նույն իսկ այն ատեն, երբ մեր գաղութը հիմիկվան պես ստվարացած չէր— Կոմիտասի դյութիչ երգեցողությունը լսելու եկող խուռն բազմությամբ. իրենց ընելիք «զոհողությունը» դյուրավ կրնար փոխարինվիլ, նույնիսկ նյութապես։ Ցեսած էին նաև, թե մեր ազգային վարկին համար ի՞նչ արժեք ուներ Կոմիտասի ներկայությունը Փարիզի մեջ, թե «Փարիզի Հայ-

կական Միության[1] նախաձեռնությամբ և օգնությամբ Կոմիտասի տված մեծ համերգը ինչքա՜ն խոր սքանչացում պատճառեց Փարիզի ֆրանսական երաժշտասեր հասարակության և ինչպիսի ուրախություն ու հպարտություն հայ գաղութին։ Ոչ միայն եկեղեցվո հոգաբարձությունը չըրավ այդ իմաստուն ու ազնիվ ժեսթը, այլ գեթ մեկենաս մը չգտնվեցավ, որ ինք ըներ ինչ որ հոգաբարձությունը անկարելի կկարծեր. նույնիսկ «հայ քնար»-ին երևումեն հետո, Կոմիտասի առաջին դաշնակած երգարանին, որ տպվեցավ «Հայկական Միության» օգնությամբ, չգտնվեցավ գաղութին մեջ, որ շատ հարուստ էր արվեստասեր ունևոր մը, որ ատոր պես մեկ քանի ուրիշ տետրերու հրատարակության ծախքը հանձն առներ։ Եվ օր մը այդ անօրոշ կացութենեն ձանձրացած, Կոմիտաս դարձավ էջմիածին։

Այո՜, Պոլիս երթալը, ի վերջո, աղետաբեր եղավ իրեն, բայց հոն է նորեն, որ իր կյանքին ամենեն փայլուն ու բեղուն շրջանն ունեցավ։ Ահագին եղած է հոն իր կատարած դերը։ Հոն ալ «մեկենաս» չգտավ, բառին լուրջ իմաստովը։ Բայց գտավ զինք գուրգուրանքով ու խանդավառությամբ պաշարող հոծ ու ջերմ համայնք մը, գտավ զինք գիտակցորեն գնահատող ու իրեն սրտագինորեն աջակցող բարեկամներու հույլ մը, կազմեց հսկա խումբեր, հասցուց աշակերտներ, տվավ բազմաթիվ համերգներ, հրատարակեց երկու երգատետր, կատարելագործեց իր պատարագը, դաշնակեց բազմաթիվ հայ երգեր, հառաջ տարավ իր քննական ուսումնասիրությունները, հայ թերթերու մեջ հրատարակեց մերթ հոդվածներ մեր երաժշտության վրա, հայության պարծանքը եղավ այդ քաղաքին մեջ, Պոլսեցին հոգեպես հայաստանցի դարձնող մոգիչ ուժ մը հանգիսացավ, հայ երաժշտության արժեքը և իր գործին նշանակությունը այդ հայկական մեծ կեդրոնավայրեն տարածեց ու ճանչցուց աշխարհի չորս կողմը հանուր հայության, մեր ցեղին վարկը բարձրացուց Արևելքի և Արևմուտքի բոլոր ազգերուն առջև։ 1914-ի գարնան, եկավ Փարիզ Երաժշտության Միջազգային Ընկերության Քոնկրեին մասնակցելու։ Իր ֆրանսերեն բանախոսությունը Քոնկրեին մեջ, հայ ժողովրդական երաժշտության մասին (որուն ձեռագիրը նույնպես չգտանք իր թղթերու ծրարներուն մեջ) և Հայոց եկեղեցվույն մեջ Ավագ հինգշաբթի գիշերը իր կազմած հայ եկեղեցական երաժշտության հոյակապ համերգը, ուր ինք, օր. Բաբայան և

[1] Այդ միությունը ազգասիրական կազմակերպություն մըն էր. որուն վարիչ մարմնույն անդամներն էին՝ Շիրվանզադե, Տոքթ. Ա. Բաբայան, Մ. Հովսեփյան, Յ. Իսկենտեր, Ներսես Խան Ներսեսյան, Համբարձում Մելիքյան և այս տողերը գրողը, և որ չորս հինգ տարի իր կրցածն ըրավ հայ դատին և հայ մշակույթին ծառայելու համար։

Շահ-Մուրատյան իրենց երգեցողության հմայքով և մեր եկեղեցական երգերու աննման գեղեցկությամբ զմայլեցուցին ունկնդիրները, անմոռանալի թվականներ կմնան մեր երաժշտության պատմության մեջ։ Փարիզի հայերը ատ ալ տեսան, և նորեն մղում մը չունեցան այդ հրաշալի մարդը իրենց մեջ պահելու (վստահ եմ, որ եթե լուրջ կարգադրություն մը ըներ այդ միջոցին Փարիզի Հայոց եկեղեցվո հոգաբարձությունը, ան կհրաժարեր Պոլիս դառնալե ու կմնար հոս)։ Դարձավ Պոլիս, ու քանի մը տարի հետո եկավ հոս (ավելի ճիշտ բերին զինք) այլևս ոչ իբր երաժիշտ, այլ իբր հիվանդ...

* * *

Պիտի չբուժվի՞... Պիտի զինքը նորեն չտեսնե՞նք բեմին վրա... Պիտի չլսե՞նք այլևս իր երգեցողությունը... Պիտի չկարենա՞ լրացնել իր գործին այն կարևոր մասը, զոր կիսատ թողուց...

Այս հարցմանց, զոր մեզի հաճախ կուղղեն հեռուեն ու մոտեն հայրենակիցներ, և զոր մենք իսկ այնքան անգամ ուղղած ենք մենք մեզի կամ մանավանդ զինք դարմանող բժիշկներուն, դժբախտաբար չենք կըրնար տալ այն վճռականորեն դրական պատասխանը, զոր կցանկանք։ Մասնագետ բժիշկներուն վճիռը անողորմ է։ Հույսը, զոր ինծի պես բանաստեղծներ դեռ կպահեն, բացառիկ երևույթի մը, հրաշքի մը վրա է զոր գթած ու գեղասեր աստվածություն մը թերևս թույլ տա, որ տեղի ունենա,— հանկարծական սթափում մը այդ երկարատև թմրութենեն, խաղաղության ու լռության այդ կյանքին մեջ, զոր ան կվարե և ուր իր հին ծանոթները, իրեն ամենեն ավելի սիրելի եղած անձերը՝ երբ կ'այցելեն իրեն՝ ամենեն ավելի կվրդովեն ու կխոցեն զինքը։

Եթե այդ հրաշքը պատահի,— և ամբողջ հայ ազգը կցանկանա, որ ան պատահի — մեր բազմավաստակ Վարպետը պիտի տեսնե որ իր հիվանդության երկար շրջանին իր բարեկամները ու զինք հարգող հայրենակիցները եղբայրաբար հոգ տարած են իր հանգստության, կրցածնին ըրած են Փարիզ բերելով խնամքով պահելու. ինչ որ կմնար Պոլիս իր ձեռագիրներեն ու հինգ տետրակ հրատարակած են անտիպ գործերեն։ Այդ հրատարակությանց համար ան նախ պիտի բարկանա,— այդ բծախնդիր արվեստագետը հարյուր անգամ սրբագրելե, բարեփոխելե առաջ որևէ բան չէր հրատարակեր,— պիտի փրփրի ու պոռա կանչե՝ տեսնելով, որ մենք տպեր ենք իր ձեռագիրները ինչպես որ զանոնք գտեր ենք, բայց իր բարկությունը շուտ պիտի իջնե մտածելով, որ Հանձնաժողովը երկյուղած պարտականություն մըն է որ ուզած է կատարել, կորուստե փրկելու և

հանուր հայության, բովանդակ երաժշտական աշխարհին ներկայացնելու համար իր անտիպ մնացած այն աշխատությունները զոր ինքն իսկ որոշ բոպեի մը արդեն համերգներու մեջ հանրության ներկայացուցած էր։

***

Կոմիտասի սկսած գործը, ուրախությամբ պետք է հաստատել, կշարունակվի ու կզարգանա այսօր Խորհրդային Հայաստանի մեջ։ Արդեն իսկ իր գործունեության սկզբնավորութենեն քանի մը տարի հետո, Կովկասի մեջ, անոր օրինակին հետևելով, նորահայտ տաղանդավոր հայ երաժիշտներ, Գրիգոր Սյունի, Մեհրապյան, Ռ. Մելիքյան և այլք, մեր ժողովրդական երգերը սկսան ձայնագրել և դաշնակել։ Ամեն մը ետքը, Արմեն Տիգրանյան, գտնելով մեկը, Թումանյանի Անուշեն լիսլրեթթո մը հաներ (թեև բավական ձախավեր), ժողովրդական մոթիֆներու նմանությամբ երաժշտություն մը շարադրեց անոր համար։ Այս վերջերս, Խորհ. Հայաստանի կառավարության օգնությամբ, հայ կարող երաժիշտներ, որոնցմե ամբողջ հույլ մը ունինք այժմ Երևան համախմբված, Անուշավան Տեր-Ղևոնդյան, Սպիրիդոն Մելիքյան, Նիկ. Տիգրանյան, Ռոմանոս Մելիքյան, ժողովրդական երգեր հավաքելու և ուսումնասիրելու գործին մեծ մղում տվին և այդ երգերեն մաս մը դաշնակեցին, կազմեցին լուրջ երգչախումբեր և պարբերաբար համերգներ կուտան, հիմնեցին Հայ Ազգային Երաշտանոց, որ՝ կառավարության օգնությամբ հետզհետե կզարգանա, հորինեցին երաժշտական բազմաթիվ կտորներ, մերթ՝ բոլորովին ինքնահնար, զրեթե միշտ որոշապես արևելյան գույնով, հայ ժողովրդական երգերու ոճով։ Ժամանակակից հայ ստեղծագործ երաժիշտներու մեծագույնը, Սպենդիարյան, զոր դժբախտությունն ունեցանք վերջերս կորսընցնելու, և որ պատերազմեն առաջ, ռուսական դպրոցի աշակերտ, ռուս երաժշտական աշխարհին մեջ փայլած էր իր հեղինակություններով (որոնց մեկ մասին մեջ Խրիմի ժողովրդին արևելյան մոթիֆներն օգտագործած էր) և նույնիսկ իր ինչ-ինչ կտորներով միջազգային համբավի մը տիրացած էր, եկավ Հայաստան Խորհրդային ռեժիմին հաստատումեն հետո, մոտեցավ հայ ժողովրդական երգին և օգտվելով մեր տոհմային երաժշտության մոթիֆներեն ինչպես և իր հնարող ճոխ մըտքին ներշնչումներեն, Թումանյանի Թմբկաբերդի առումը քերթվածեն հանված լիպրեթթոյի մը վրա շարադրեց Ալֆաստ օփերան, որ քանի մը ամիս առաջ Մոսկվա ներկայացվեցավ շքեղ հաջողությամբ։ Կլսենք, թե Տեր-Ղևոնդյան ևս, որ Սպենդիարյանեն հետո մեծագույն երաժշտական տաղանդը կհամարվի Հայաստանի մեջ, գրած է՝ ի միջի այլ ստեղծագործ-

ծությանց օփերա մը Շանթի Հին Աստվածներեն քաղված լիպրեթթոյի մը վրա։ Հայ երաժշտությունը մտած է ուրեմն իր գերագույն փուլին մեջ, հայ գույնով և արդիական բոլոր նրբություններով երաժշտական արվեստ մը կսկսի ծաղկիլ մեր հայրենիքին մեջ։ Նույնպես հոն մեր երաժիշտները հառաջ կտանին հայ երգի գիտական քննության աշխատանքը և ժողովրդական երգերու հավաքածուներ ուսումնասիրություններով հրատարակելու կարևոր գործը։ Կոմիտասի ծրագրին այդ երկու վերջին կետերը, զոր ինք կիսատ թողած էր, իր եղբայրակիցները ուրեմն Հայաստանի մեջ զանոնք ձեռք առած են և լայն ու հզոր թափով կզարգացնեն։ Ցանկալի է միայն, որ Հայաստանի մեջ արտադրված երաժշտական գործերը և հայ երաժշտության վրա հրատարակված աշխատանքները և ժողովրդական երգերու նոր հավաքածուները Գաղութներու հայության մեջ տարածելու լուրջ ջանք մը կատարվեր, ինչ որ դեռ բնավ գոյություն չունի[1]։

Հայ նոր երաժշտության մը զարգացումը արտասահմանի հայության մեջ ևս կտեսնվի, բայց նվազ ծավալուն ու նվազ ուժեղ կերպով։ Ունինք մեր գաղութներուն մեջ մեծատաղանդ երգիչներ ու երգչուհիներ (այդ մարզին մեջ գաղութահայությունը նույնիսկ ավելի հարուստ է, քան Հայաստան)։ Ունինք համակրելի երգչախումբեր. Փարիզ՝ «Սիփան» և «Կոմիտաս» խումբերը, Կոմիտասի երկու աշակերտներու՝ Պ. Պ. Սաքո Հակոբյանի և Նշան Սարգսյանի ղեկավարությամբ, երկուքն ալ անհատական զոհողությանց ու մեծ խանդավառության մը շնորհիվ կազմված ու պահպանված, և որոնց առաջինը տարիներե ի վեր գաղութին ազգային հանդեսներե ոմանց կմասնակցի և երկրորդը Լեհեղեցվույն մեջ Կոմիտասի կամ Եկմալյանի պատարագը կ'երգե. ասոնց վրա ավելցան վերջերս Դպրոցասերի Տիկնանց վարժարանի և Սևրի Մուրատյան վարժարանի աշակերտական սիրուն խումբերը. Նյու-Յորք՝ երկու խումբ, մին տարիներե ի վեր գոյություն ունեցող և Կոմիտասի աշակերտ Թումաճյանի ղեկավարությամբ ստեղծված ու պահպանված, մյուսը՝ վերջերս կազմված արժեքավոր երաժիշտ Մեհրապյանի նախաձեռնությամբ, և որոնց երկուքն ալ մեկե ավելի համերգներ տված են քաղաքին հայ և ամերիկյան հասարակության ծանոթացնելով մեր ժողովրդական, եկեղեցական և արդի երաժշտությունը. թերևս դեռ կան, այլուր ևս, ուրիշ խումբեր, զոր հոս կմոռնամ հիշատակել։ Բայց երաժշտական ինքնատիպ արտադրությունը, հակառակ արևմտյան մեծ կեդրոններու բարձր միջավայրին ընձեռած առա-

[1] Կովկասի մեջ մեր այժմ ունեցած բոլոր հին ու նոր երաժիշտներուն վրա բավական մանրամասն ծանոթություն տվող շահեկան և օգտակար գործ մըն է Արամ Երեմյանի «Սևան. հայ նորագույն կոմպոզիտորներ» հատորը (Վենետիկ Ս. Ղազար. 1927)։

վելությանց ու դյուրությանց, և հայ երաժշտության մասին ուսումնասիրությունները, սահմանափակ են։ Իբր ուսումնասիրություն, ուրիշ ոչինչ կհիշեմ Կոմիտաս Վարդապետի լռելեն ի վեր, բայց եթե Պ. Նուպար Ալեքսանյանի կարևոր աշխատությունը (որ երևցավ Անահիտի մեջ) և Պ. Պատմագրյանի անտիպ ընդարձակ երկասիրության շահեկան մեկ գլուխը (որ նույնպես այստեղ լույս տեսավ)։

Կոմիտաս Պոլիս ունևր վեց սաներ, որոնց harmonie-ի դասեր կուտար իր տան մեջ՝ զանոնց ոչ միայն իբր երգիչ, այլ և իբր երաժշտագետ պատրաստելու համար, որպեսզի օր մը իր գործը շարունակեն. ատոնցմե մին, Արտաշես Ապաճյան, որ Կալկաթայի եկեղեցվույն մեջ դպրապետ էր, վախճանած է պատերազմի շրջանին Պոլսո մեջ։ Հայկ Սեմերճյան, Վարդան Սարգսյան և Վաղարշ. Սրվանձտյանց, պատերազմեն հետո Փարիզ գալով, ատեն մը իրենց սուղ միջոցներով ջանացած են իրենց երաժշտական ուսումը շարունակել ֆրանսացի ծերունի հայտնի երաժիշտ և Հայոց ջերմ բարեկամ Ռընե Լընորմանի մոտ, բայց հետո Սեմերճյան իր ապրուստը ճարելու համար ստիպված է երաժշտությունը ձգել և լուսափորագրության գործին նվիրվիլ, թեև Կոմիտասի Բարեկամներու Հանձնաժողով»-ին սկիզբեն ի վեր անդամ՝ անոր միշտ կգործակցի ամենայն անձնվիրությամբ։ Միհրան Թումաճյան Նյու Յորք հաստատված է, երաժշտական հեղինակություններ չեմ կարծեր որ ունենա, բայց խումբ մը կազմված է և հայ երգը մեր, Նյու-Յորքի գաղութին մեջ տարածելու կ'աշխատի տարիներե ի վեր։ Սրվանձտյանց Պ. Ա. Համբարձումյանի օգնությամբ կրցավ Գերմանիա երթալ և շարունակել իր ուսումը, ու հետո Եգիպտոս և այժմ Ամերիկա սկսած է աշխատիլ, Կոմիտասի բացած ճամփեն ընթանալով, ժողովրդական երգեր դաշնակելու և իր աշխատություններեն մաս մը հրատարակած է քանի մը տետրերով։ Կանաչյան, որուն համար լսած եմ թե օժտված է երաժշտական ձիրքերով, քանի մը տարիներե ի վեր Կիպրոս Մելգոնյան որբանոցներուն մեջ ուսուցիչ է, բայց չեմ գիտեր թե ունի՞ արտադրություններ, ամեն պարագայի մեջ, չեմ հիշեր, որ որեէ գործ հրատարակած ըլլա ցարդ։ Վարդան Սարգսյան, որ ամենեն հմուտն ու տաղանդավորն է այդ վեց սաներուն, և որ, թե Փարիզ և թե՛ Պրյուսել՝ Պ. Վահան Խորասանճյանի օգնությամբ՝ տարիներով շարունակեց իր ուսումը, գիտեմ որ ունի արտադրություններ, բայց դեռ ոչինչ կրցած է հրատարակել։ Տարիներ առաջ, Պ. Խորասանճյանի աջակցությամբ ան պելճիքացի և հայ սիրող երգիչներով խումբ մը կազմած էր և Պրյուսելի մեջ տվավ հայ երաժշտության քանի մը համերգներ ինչպես և համերգ մը Փարիզի մեջ, որոնք մեծ հաջողություն գտան. բայց վերջերս, գրասենյակի քարտուղարության աշխատանքի մը մեջ թաղված,

բոլորովին անգործության մատնված կթվի, ապահովապես՝ իր սկսած գործը շարունակելու նյութական միջոցներեն զուրկ ըլլալուն համար. ցավալի է որ Պ. Խորասանճյան, Մարսելյի գաղութին համար հայկական ոճով գեղեցիկ եկեղեցի մը կառուցանելու գովելի նախաձեռնությունն ունենալե հետո, հայ երաժշտության զարգացման ու փրոփականտին նույնքան կարևոր գործին սատարելն այլևս ավելորդ նկատելու սխալը գործեց (ան նույնիսկ չոր մերժողական պատասխան տվավ Կոմիտասյան Հանձնաժողովին որ Վարպետին անտիպ գործերը հրատարակելու համար անոր աջակցության դիմած էր)։ Փրոֆ Գալֆայան, պատերազմեն առաջ Փարիզ Սքոլա Քանթորումի մեջ Վենսան տ'Ենտիի աշակերտելով կազմված, հրատարակած է որոշ թվով երաժշտական արտադրություններ որոնց մեջ կան շահեկան էջեր (առանց հայ ժողովրդական երգին հետ կապ ունենալու), ան ատենով՝ պատերազմեն առաջ՝ նույնիսկ պատարագ մը շարադրեց, մասամբ ինքնահնար եղանակներով և մասամբ մեր եկեղեցական եղանակներեն օգտվելով (դժբախտաբար իրեն հիմք առնելով Պոլսո պատարագին Թբքերանց մոթիֆները). այժմ տարիներե ի վեր Քալիֆորնիա հաստատված է և կշարունակե մերթ արտադրություններ հրապարակ հանել, որոնք ավելի եվրոպական երաժշտության հետևողություններ են։ Պ. Պատմագրյան, որ Պերլին ուսած է երաժշտական գիտությունը, նվագախումբը և երգչախումբի համար դաշնակեց շարք մը հայ ժողովրդական երգեր, հաճելի ու փայլուն ընդլայնումներով. իր աշխատությունները, զոր հանդեսներու մեջ լսեցինք իրմե ղեկավարված խումբերե, դեռ անտիպ կմնան։ Արտասահմանի հայության այժմյան երաժշտական մեծագույն դեմքը, Տիրան Ալեքսանյան, որ Վիոլոնսելի վարպետներեն մին է Փարիզի մեջ և այդ նվագարանի արվեստին վրա մեծապես գնահատված տեսական կարևոր աշխատություն մը հրատարակած է Գերմաներեն ու Ֆրանսերեն, ճարտար ու հմուտ երգահանի տաղանդ ալ ի հայտ բերավ՝ դաշնակելով շատ նուրբ, ու թերևս քիչ մը չափազանց եվրոպական, արվեստով, Խորինը, ինչպես և Ալազյազը, Հով աբեբը, Ակնա օրորը (ասոնք հրատարակած է տետրի մը մեջ) ինչպես և Աշխն ծովը (եղանակն առնելով Եկմալյանի գրքեն), նաև շարադրեց, երկու թատերախաղի համար զոր ինքս սկսա գրել և այս խճողված ալեծուփ կյանքիս մեջ չկրցա ավարտել և հատակագիծը միայն իրեն հանձնեցի, բեմական երաժշտության ինքնատեղծ հոյակապ կտորներ՝ Կոմիտասի հավաքած հայ ժողովրդական մոթիֆներեն օգտվելով այդ կտորները որ երկու հանդեսներու մեջ գործադրվեցան, դեռ անտիպ կմընան, և Ալեքսանյան, իր դասերու մեջ թաղված, դժբախտաբար չի շարունակեր իր երգահանի մեծարժեք աշխատանքը։ Վերջապես ունինք քանի մը տարիե ի վեր հայտ-

նրված երիտասարդ ու փափուկ տաղանդ մը, հանձին Պ. Արա Պարթևյանի, որ Փարիզի բոնսերվաթուարին մեջ հինգ վեց տարի լրջորեն ուսավ երաժշտական գիտությունը իր բոլոր ճյուղերով և որ իր հրատարակած «Նոր Երգեր»-ու շարքերով, որոնք հայ ժամանակակից բանաստեղծներե ոմանց (և մերի դժբախտաբար բանաստեղծ բնավ չեղող անձերու ալ) տաղերուն վրա հարմարված ինքնահնար եղանակներ են, ի հայտ բերավ երաժշտական նորը անձնավորություն մը։ Դժբախտաբար, Պարթևյան հայ ժողովրդական երգին դանձարանը իր արվեստեն բոլորովին հեռու պահած է։ Անհրաժեշտ չեմ նկատեր անշուշտ, որ հայ երաժիշտ մը իր ամեն արտադրության մեջ մեր ժողովրդական կամ եկեղեցական երգերեն ներշնչվի, ու հեռու եմ մտածել, մանավանդ, որ ան ժողովուրդին ստեղծած մոթիֆները դաշնակելով պետք է շատանա. ինքնահնար եղանակներով հայ արդիական երաժշտություն մը, երբ անհատական հզոր կնիք ունի և նորաբեր տաղանդի մը բոցը, մեծարժեք գործ է, ամենեն մեծարժեքը նույնիսկ։ Բայց երբ Մուսորկսքիի պես հանճարեղ երաժիշտ մը, ռուս ժողովրդական երգերեն օգտվելով այնպիսի հսկա հրաշակերտներ արտադրեր է, որոնք թե՛ շատ հզորապես անձնադրոշմ են, և թե՛ ռուսական ցեղային ինքնատպություն ունին, և ատով եվրոպական արդի երաժշտության մեջ մասնահատուկ տեղ մը կգրավեն, երբ Կրիկի պես համաշխարհային մեծ համբավի տիրացած զմայլելի տաղանդ մը նույն ձևվով գիտցեր է օգտվիլ նորվեկյան ժողովրդական մոթիֆներեն, ինչո՞ւ Պարթևյան, իր անձնական ստեղծագործությունները շարունակելով հանդերձ, չօգտագործե նաև մեր ժողովրդական ու եկեղեցական երաժշտության ոսկեհանքը, որմե օր մը, վստահ եմ, ամբողջ մարդկությունը սքանչացնող հզոր, խոր, անհատականորեն և ցեղայնորեն ինքնատիպ, անմահ գործեր պիտի հանեն մեծատաղանդ հայ երաժիշտներ։

Այս է մեր երաժշտության այժմյան պատկերը. և զայն բաղդատելով այն պատկերին հետ, զոր ան 20—30 տարի առաջ կներկայացներ, կրնանք հաճույքով հաստատել թե հայ երաժշտական արվեստն ու գիտությունը զգալի հառաջադիմության մեջ են. և այդ հառաջադիմության մեծագույն ոգեշունչն ու մղիչը Գոմիտաս Վարդապետը եղավ։

* * *

Երանի՜ թե Կոմիտասյան Հանձնաժողովին սարքած վերջին համերգին— որ հայտնված ընդհանուր փափագի մը համաձայն, հավանորեն, այսուհետև ամեն տարի կրկնվի,— մեծ հաջողությունը, ուրիշ գաղութներու մեջ գտնվող Կոմիտասի բարեկամները, աշակերտները, և հարգողները մղե պարբերաբար կազմել նմանօրինակ համերգներ ի պատիվ Կոմիտասի և հօգուտ Կոմիտասյան գործին։ Մեր մեծ հայրենակցին անտիպ մնացած երկերուն շարքին մեջ դեռ կան թանկարժեք էջեր (օրինակ՝ իր դաշնակած պատարագը, զոր գտանք իր ձեռագրաց մեջ, Անուշի համար գրած մեներգներն ու խմբերգները եկեղեցական ու ժողովրդական երգեր՝ դաշնակված, և այն, զոր անհրաժեշտ է հրատարակել, ինչպես և անհրաժեշտ է հատորի մը մեջ ամփոփել հայ երաժշտության նվիրված բոլոր հոդվածները, զոր ինք հրատարակած է զանազան թերթերու և տարեգրքերու մեջ։ Ամեն անոնք որ անկեղծորեն կգնահատեն արժեքը այս բազմերախտ հայուն գործին, պետք է համերգներ կազմելով, հրատարակված երգատետրերը տարածելով՝ գործակցին լիալիր կատարմանն այն պարտականության, զոր ունինք հանդեպ Վարպետին և հանդեպ մեր ազգային երաժշտության

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

ՀԱՌԱՋԱԲԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

Պետրոս Դուրյանի կյանքին ու գործին նվիրված այս ուսումնասիրությունս ես պատրաստած եմ 1891—93 տարիներու ընթացքին։ Ատիկա եղած է մին այն աշխատություններեն, զոր կատարած եմ ամենեն ավելի հաճույքով ու խանդավառությամբ, որովհետև Դուրյան այն հայ բանաստեղծն է, զոր պաշտած եմ պատանությանս շրջանին, Պեշիկթաշլյանին ու Ալիշանին հետ, և անոնցմե ալ ավելի; որովհետև անոր բանաստեղծությունը երիտասարդ է, երիտասարդության բանաստեղծությունն է գերազանցապես, թարմ, սրտաբուխ, բաբախուն, թարմ՝ նույնիսկ, երբ ցավը կերգե, երբ տառապանքը կաղաղակե, պարզ ու կենդանի իր խորքով, իր ոճով, ինչպես և իր լեզվով, որ, գրեթե զուտ աշխարհաբար, լի է ուժեղ ու բնական հույզով մը։

Հավաքելու համար նյութեղեններն այն կենսագրությանը, զոր կուզեի հորինել, հայ լրագիրներե ոմանց հին հավաքածուներ թղթատած եմ, ու մանավանդ թափառած եմ Պոլսո մեջ թաղե թաղ, որպեսզի տեղեկություններ քաղեմ Դուրյանի մտերիմ բարեկամներեն անոնցմե, որ ողջ

էին, ինչպես և անոր մորմեն. հարցումներու ամբողջ ցուցակ մը ղրկած եմ Պետրոսին եղբորը՝ Եղիշե Դուրյան վարդապետին, որ այդ միջոցին Արմաշ կգտնվեր իբր դպրեվանքին փոխ-տեսուչ։ Պետրոսի բարեկամներեն տեսած եմ Հ. Ճանֆեսճյանը, որուն ձոնած է իր ամենեն սիրուն տաղերեն մին, հայ թատրոնի հուշարար Տիգրան Գալեմճյանը, Արմեն Լուսինյանը, գրական ընկեր, որուն ուղղած է իր կյանքի վերջին ցավագին տարվան ամենեն աղեխարշ նամակներեն մեկ քանին։ Մտքիս մեջ անմոռանալի կմնա Պետրոսի մոր հետ ունեցած տեսակցությունս Յուսկյուտարի փոքրիկ տան մեջ, ուր կբնակեր։ Այդ տարվոք կինը զմայլելի փափկությամբ ու նրբությամբ դեմք մը ուներ, իր միամիտ ու մաքուր շնորհը պահած էր հառաջացյալ տարիքին մեջ. իր վաղամեռիկ որդվույն վրա կխոսեր շեշտով մը, որ լի էր անսահման աղապատանքով և հպարտությամբ ու նաև անջնջելի վիշտով։ Սրբուհիի մը առջև գտնվելու տպավորությունն ունեի, սրբուհիի մը, որ Քնարի հերոս մը տված էր ազգին։ Այդ թանկագին հայ մայրը,— ճիշտ ինչպես և մայրն Ատոմ Յարճանյանին,— անշուշտ մեծ բաժին մը ունեցած էր իր որդվույն երգին զգացման ու ձևի ազնվության ու հրապույրին կազմավորման մեջ։ Ինչ որ իմացած եմ այդ մոր և այդ բարեկամներուն բերնեն և ինչ որ գտած եմ այն մանրամասն պատասխանին մեջ, զոր Դուրյան Եղիշե վարդապետը տվավ իրեն ուղղած հարցումներուս, օգտագործած եմ ուսումնասիրությանս մեջ։

Ես դիմած էի նաև Կեդրոնականի իմ սիրելի դասընկերներես մեկուն, Մաքսուտ Միհրդատյանցին, որ այդ միջոցին Արմաշի դպրեվանքին մեջ մաթեմատիքի ուսուցիչ էր, և անկից խնդրած էի, որ Պետրոսի կենսագրության դեռ ինծի անծանոթ կամ անորոշ մնացած մանրամասնություններ Եղիշե վարդապետեն քաղելով ինծի հաղորդեր, ինչպես և մատնանիշ ըներ Պետրոսի բանաստեղծությանց մեջ Սիմոն Ֆելեկյանի մտցուցած ձախավեր «սրբագրություն»ները և շարադրեր ինծի համար ամփոփում մը Պետրոսի անտիպ մնացած թատերգությանց, որոնց ձեռագիրը լսած էի, թե կգտնվեր Եղիշե վարդապետին մոտ։ Միհրդատյանց մեծ անձնվիրությամբ կատարեց բավական ծանր աշխատանքը, զոր իրմե խնդրած էի, և ուսումնասիրությանս մեջ կան մասեր,— ինչպես՝ օրինակի համար՝ «Դուրյանի մահը» տիտղոսված գլուխը,— ուր իր այդ աշխատակցությունը ինծի շատ օգտակար եղած է։ Միհրդատյանց ինծի համար նշանակած է այն բոլոր փոփոխությունները, զոր Ֆելեկյան Պետրոսի տաղերուն մեջ մտցուցած է (և այդ եղծված ձևով է, որ անոնք ներկայացված են բանաստեղծին գործերուն առաջին տպագրության մեջ), այլև նշանակած է այն սրբագրությունները, զոր ինքն իսկ Պետրոսը կատարած է իր տաղերուն վրա, երբ դանոնք առաջին տետրե մը ընդօրինակած է երկրորդ

տետրի մը մեջ, ուր իր տաղերուն տված է վերջնական ձև մը։ Ատոնցմե օգտված եմ աշխատությանս երկրորդ մասին մեջ, զոր շարադրած ատենս պ. Բարսեղ Էքսերճյան, հետո՝ քահանա, դեռ հրապարակ չէր հանած Դուրյանի տաղերուն երկրորդ հրատարակությունը՝ անոր նամակներուն և թատերգություններեն երկուքին հետ, և ուր Ֆելեկյանի շարփոխություններեն մաքրված կերևային Պետրոսի տաղերը,— թեև հոդ ալ տպագրական կարևոր սխալներ և այլ անկանոնություններ չէին պակսեր։ Իսկ «Արտաշես Աշխարհակալ» և «Տիգրան Բ» թատերգության ամփոփումեն չեմ կրցած օգտվիլ ու հայոց հին պատմութենեն Պետրոսի քաղած մյուս խաղերուն ալ վրա հարկ եղածին պես չեմ կրցած խոսիլ, որովհետև ատիկա անհնար պիտի դարձներ այդ գործիս տարածումը Թուրքիո մեջ։

Երբ 1893-ի աշնան վերջերը Պոլսեն Փարիզ մեկնեցա ատեն մը հոն մնալու և գրական զարգացումս ճոխացնելու համար, հետս տարի Դուրյանի նվիրված աշխատությանս ձեռագիրը, հոն անոր տվի շարադրության վերջնական ձևը, մաքուրի առի ու ղրկեցի Թիֆլիս՝ Հրատարակչական ընկերության վարչություն, խնդրելով, որ հաճին զայն հրատարակել և հարցնելով, թե ի՞նչ պատվագին սովոր էին վճարել այդպիսի գործի մը համար։ «Մութ խավեր» կամ «Բամբասանք» թատերգությանս շորս ներկայացմանց ինծի բերած գումարով է, որ մեկնած էի Փարիզ, և ատիկա, հաշվելով նաև ինչ որ հետո երկու բարեկամներ ինծի ղրկեցին իբր փոխատվություն և Պոլսո «Հայրենիք» օրագրին ղրկած հոդվածներուս համար այդ թերթի հիմնադիր-տնօրեն Հովհաննես Շահնազարեն ստացած գումարս, հազիվ կրավեր 10—11 ամիս Փարիզի մեջ՝ նույնիսկ շատ համեստ պայմաններով, ապրելու։ Կհուսայի, որ այդ գրքին պատվագինը ստանալով պիտի կարենայի գեթ երկու ամիս ավելի մնալ հոն։ Հրատարակչական ընկերության վարչությունը պատասխանեց ինծի, թե սիրով պիտի հրատարակեր իմ աշխատությունս և պատվագինն ալ յուրաքանչյուր ֆորմային սաչափ ռուբլի պիտի ղրկեր ինծի կարելի եղածին չափ շուտ։ Այս պատմության մնացյալ մասը բավական տխուր է և տգեղ, բայց հոս առիթն է զայն քանի մը տողով հրապարակելու։ Երեք-չորս ամիս անցավ Հրատարակչական ընկերության պատասխանն ստանալես հետո, և սակայն ո՞չ գիրքես օրինակ մը ղրկված էր ինծի, ոչ ալ ոևէ գումար (թեև գրած էի այդ պարոններուն, թե մեծապես շնորհապարտ պիտի ըլլայի իրենց, եթե պատվագինին ուղարկումը փութացնեին, վասնզի ատիկա ինծի կարևորություն պիտի տար քանի մը ամիս ավելի Փարիզ մնալու)։

1894-ի ամառան վերջը, Թիֆլիսեն ոևէ բան ստանալե հուսահատ, դարձա Պոլիս։ Գիրքս լույս տեսած էր քանի մը ամիս առաջ և անկից

օրինակներ գրկած էին Պոլսո հայ գրավաճառներուն։ Հրատարակությունը վերջին ծայր անխնամ էր, լի տպագրական այլանդակ սխալներով, աղավաղված բառերով արևմտահայ բարբառի մեջ արևելահայերենի քմահաճ ներմուծումներով, և Դուրյանի «Սիրեցի քեզ» տաղին առաջին և երկրորդ շարադրությունները, զոր ես դեմ դիմաց դրած էի բաղդատության համար, իրարու խառնված էին և իրը միակ բանաստեղծություն մը հրատարակված։ Գրեցի Թիֆլիս՝ Հրատարակչականի վարչության և խնդրեցի, որ հաճին ինծի գրկել գիրքես քանի մը օրինակ և պատվագինս. ամիսներ անցան ու ոչէ պատասխան չառի։ Ստիպվեցա դիմել Մկրտիչ Ճահնաղար քարեկամիս, որ Պոլսո գլխավոր հայ գրավաճառներեն մին էր ու նաև ծանոթ հրապարակագիր մը. Թիֆլիսի Հրատարակչականին գիրքերեն անիկա մեծ քանակությամբ ստանալով, Թրքահայ հասարակության մեջ կտարածեր։ Իրմե գնած ըլլալով շատ մը հայերեն ու ֆրանսերեն գրքեր, պարտք ունեի. անիկա ազնվորեն ոչ միայն ինծի տվավ այդ գիրքես քանի մը օրինակ, այլև կարգ մը ֆրանսերեն գրքեր, որոնց պետք ունեի, և իրեն ունեցած ամբողջ պարտքս անցուց Թիֆլիսի Հրատարակչականին հաշվույն, որով այս անուղղակի միջոցով մասամբ ստացած եղա Հրատարակչականեն առնելիքս։ Հրատարակչականի վարչության այդ անհասկանալի և աններելի անտարբերությունն ու անպարտաճանաչությունը ավելորդ չեմ նկատեր, հրապարակավ պախարակել երկրորդ տպագրությանն առթիվ Պետրոս Գուրյանին նվիրված ուսումնասիրությանս, որովհետև ատիկա տեսակ մը զուգյակ կկազմե Պետրոսին հանդեպ դերասանապետ Վարդովյանի վերաբերմունքին։

***

Գործիս առաջին տպագրության բնագրին մեջ Դուրյանի թատերգությանց հատկացված գլուխը կրճատած էի, Արտաշես Աշխարհիակալ, Ասպատակությունք Պարսից ի Հայս, Անկումն Արշակունի Հարստության ատիտղոսները վերածած էի և Արտաշես Աշխարհիակալին, Տիգրան Բ-ին, ինչպես մյուս պատմական խաղերուն վրա նույնիսկ համառոտ կերպով գրածս հապաված էի, որովհետև թեև այդ գիրքը Թիֆլիս պիտի լույս տեսներ, բայց ես կփափագեի, որ ան տարածվեր նաև թրքահայոց մեջ և Համիտյան գրաքննությունը այդ թատերգությանց նվիրված գլուխ մը պարունակող գիրքի մը մուտքը Թուրքիո մեջ ապահովապես պիտի արգիլեր։ Այս երկրորդ տպագրության մեջ, Դուրյանի թատերգությանց հատկացված գլուխը կերևա շատ ավելի ստվար, քան առաջին տպագրության մեջ և զայն լրացնելու համար ոչ միայն օգտված եմ այդ հին օրերու շարադրած գրվածքես, այլև բազմաթիվ էջեր նոր գրած եմ և հարկավոր նկատած եմ նաև թե՛ անտիպ թատերգություններեն և թե՛ տրպվածներեն շատ ավելի առատ մեջբերումներ ընել։

Արդեն իսկ, եթե մեկը բաղդատե առաջին տպագրության բնագիրը այս երկրորդ տպագրության բնագրին հետ, պիտի նկատե տեղ տեղ բավական կարևոր տարբերություններ՝ հավելումներ, հապավումներ, փոփոխություններ, ավելի բազմաթիվ՝ քննադատական բաժնին, քան կենսագրականին մեջ։ Դուրյանի ազդասիրական քերթվածներուն համար անարդար եղած էի գործիս այդ առաջին խմբագրության մեջ, նույնպես և անոր թատերգությանց համար։ «Իղձք առ Հայաստան»-ը միայն դատած էի արժեքավոր, այն ալ որոշ վերապահումով մը, և մյուսները ուռուցիկ ու բռնազբոսիկ գտած էի. ճիշտ չէր ատիկա. մյուս ազդասիրական տաղերեն ոմանք արդարև աննշան են, բայց և կան մեկ քանիները, որոնք, եթե Իղձ՝ին կամ Իմ ցավրին և կամ սիրային տաղերուն չափ անխառնորեն գեղեցիկ չեն, ձևի բիծեր, թույլ մասեր ունենալով հանդերձ՝ իրենց ամբողջության մեջ անկեղծ ավյուն և ոճի ինքնատիպություն իհայտ կբերեն։ Նույնպես և թատերգությունները բացի Վարդ և Շուշանի, Թատրոնի կամ Արտաշեսի որոշ արժանիքներեն ու մյուս խաղերեն ոմանց մեկ քանի տեսարանները «տղայական» գտած ըլլալս ես այսօր կհամարիմ անճիշտ։ Անշուշտ, տասնվեցեն քսան տարեկանին՝ մարդ չունենար կյանքի բավականաչափ փորձառություն և թատերագրական դժվար արվեստին լիակատար հմտություն, կարենալու համար արտադրել կենդանի և անթերի գործեր։ Դուրյանի խաղերը վերընթեռնելով, ես նկատեցի, որ անոնց մեջ եթե կան արդարև անփորձության արդյունք թերություններ, հոն կգտնվի սակայն նաև ավելի մեծ չափով արժանիք, քան ինչ որ ցույց տված էի գործիս առաջին խմբագրության մեջ։ Հոգեբանության պակասը հոն հաճախ կզգացվի, անձերը մեծ մասամբ միակտուր են, գործողության հյուսքը իրական կյանքի երևույթներուն հետ քիչ անգամ հաշտ է, բայց այդ պատանին գիտե արդեն գործողություն մը հյուսել, ներհակ տիպարներ իրարու դեմ հանել, արագ և աշխույժ խոսակցություններ շարադրել։ Թատերագրի ձիրք ուներ ան, և եթե ավելի երկար ապրեր, կյանքի փորձառություն ստանար և իր գրական զարգացումն ալ ավելի զորացներ, անշուշտ պիտի կարենար իր թերությունները սրբագրել և արտադրել Թատրոնին պես գործեր, ժամանակակից կյանքի առնված, ռոմանտիկ շունչով տոգորուն, բայց ավելի մոտ իրականին ու ձևով ավելի կատարյալ։ Այդ թատերգությանց լեզուն շատ սիրուն է և պարզ, հարազատ, գրեթե անխառն աշխարհաբար, ինչ որ այդ ատենվան արևմտահայ թատերգությանց մեջ դեռ չէր տեսնված։ Կան հոն տեղ-տեղ սխալ կիրարկված բառեր կամ դեշ հյուսված ֆրազներ, կան մերթ պարբերու-

թյուններ, ուր բան մը կպակսի, բայց ատոնք արդյունք են հաճախ այն աճապարանքին, որով Դուրյան կգրեր այդ խաղերը. և շարադրությունն ավարտելուն պես, առանց ձեռագիրն անգամ մը աչքե անցնելու և սրբագրության ու հղման անհրաժեշտ աշխատանքը կատարելու՝ կփութար տանիլ հանձնել թատերապետի մը, քիչ մը դրամ ձեռք ձգելու համար։ Հապճեպ շարադրության մը հետևանք եղող այդ թերությանց վրա ավելացած են նաև տպագրական սխալներ։ Դուրյանի գործերու երկրորդ հրատարակության մը մեջ, պետք է ոչ միայն տպագրական վրիպակները ուղղել, այլև անիմաստություններեն կարևորագույնները սրբագրել, ծանոթագրությանց մեջ նշանակելով կատարված փոփոխությունները, զոր Դուրյան ինքն իսկ անշուշտ պիտի կատարեր, եթե իր ձեռագիրն անգամ մը աչքե անցուցած ըլլար։

Դուրյանի տաղերուն վրա գրածներս, լի խորին զմայլանքով, անշուշտ պահած եմ անփոփոխ, ինչ ինչ լրացումներ ու ճշտումներ մտցնելով անոնց քանի մը հատվածներուն մեջ։

Պեշիկթաշլյանի և Դուրյանի զուգակշռին մեջ անարդար եղած էի առաջինին հանդեպ։ Այն շրջանին, ուր կգրեի այդ աշխատությունս, Դուրյանը ավելի կսիրեի, քան Պեշիկթաշլյանը՝ այս վերջինին համար ունենալով հանդերձ խոր հարգանք և հիացում։ Հետո, կյանքի մեջ հառաջանալով, հետզհետե ավելի լավ ըմբռնեցի այդ բանաստեղծության բարձր արժեքը և ավելի սիրեցի զայն։ Պեշիկթաշլյանի հանդեպ անարդարությունը, զոր Դուրյանի նվիրված գրքիս մեջ գործած էի, լիովին դարմանեցի Պեշիկթաշլյանի կյանքին ու գործին հատկացված ընդարձակ աշխատությանս մեջ։ Այսօր, երկուքն ալ կը պաշտեմ, երկուքն ալ, թեև խառնվածքով և արվեստով շատ տարբեր, արևմտահայ ժամանակակից քնարերգության առաջին մեծ վարպետներեն. երկուքեն որը որ կարգամ՝ այդ պահուն անով կտարվիմ, զայն կնախընտրեմ։ Անշուշտ Դուրյան ավելի սուր ինքնատպություն մը ունի, ավելի թարմ է ու սեղմ, ավելի ջղուտ, ու լեզուն, գրեթե զուտ աշխարհաբար, ավելի բնական ու կենդանի. բայց Պեշիկթաշլյան ավելի փորձառություն ունի կյանքի, ավելի հարուստ գրական հմտություն, ավելի հասունություն մտածման ու կատարելություն ձևի, և անիկա, բոլոր Հայոց համար սիրելի է ու մեծարելի իբր հայ քնարի թանկագին արվեստագետ մը, այլ նաև իբր վաստակավոր ու պատկառելի ազգային գործիչ։ Երկուքն ալ ունին զմայլելիորեն նուրբ զգայնություն մը, թեև տեսակով ու արտահայտությամբ տարբեր, աղնիվ ու փափուկ զգայնություն մը, տառապանքեն ավելի նրբացած, և որ անոնց տաղերուն կուտա անթառամ թարմություն մը, հավերժական կենդանություն մը։

Աշխատությանս այս երկրորդ տպագրության մեջ պահեցի սակայն առաջին խմբագրությանս հիմնական մասերը, ջնջելով կամ բարեփոխելով անիրավությունները Պեշիկթաշլյանի հանդեպ, լրացնելով պակասները, ճշտելով ինչ որ տարտամ մնացեր էր առաջին խմբագրությանս մեջ։

***

Այս երկրորդ տպագրության մեջ, կենսագրական ու քննադատական ուսումնասիրությանս կցեցի իբր հավելված Դուրյան Եղիշե վարդապետին ընդարձակ նամակը, զոր ան ինծի ղրկեց ի պատասխան իմ՝ իրեն ուղղած հարցարանիս և որ, թեև աշխատությանս մեջ օգտագործված, արժանի է իբր շահեկան ու թանկագին վավերաթուղթ մը՝ նույնությամբ հրատարակվելու, ինչպես և Դուրյանի մահվան առթիվ ժամանակին հայ լրագիրներուն մեջ երևցած հայտարարություններեն և հոդվածներեն մեկ քանին, այն գեղեցիկ հոդվածը, զոր Լևոն Բաշալյան Պոլսո «Հայրենիք» օրաթերթին մեջ հրատարակեց գրքիս երևումեն քիչ հետո, և Դուրյանի մահվան հիսնամյակին առթիվ Փարիզ՝ գրական հանդեսի մը մեջ, այդ երեկույթին նախագահող Բաշալյանի արտասանած ճառը և իմ կարդացած բանախոսությունս։

Այս հատորին մեջ ուրիշ տեղ չեմ տար այն շինծու և անկենդան դիմանկարին զոր պ. Էքսերճյան Դուրյանի ազգականներեն ու բարեկամներեն տեղեկություններ հավաքելով շինել տվավ գծագրիչի մը և զոր ուրիշներ ալ՝ հետևելով անոր օրինակին, գրական հատընտիր էջերու հավաքածուներու մեջ արտատպեցին այդ անհոգի պաղ դեմքը, որուն դեմ Մելքոն Կյուրճյան «Մասիս» հանդեսին մեջ հրատարակված հոդվածով մը՝ հարկ եղած ձևով բողոքեց և որ, ո՛ևէ կապ չունի հրավառ քնարերգակին հետ, որուն դեմքը լավագույն է, որ անոր լավագույն տաղերուն ընթերցման ատեն երևակայությամբ իրենք իրենց համար գծին անոր քնարը սիրողները։

Կմաղթեմ, փակելու համար այս առաջաբանը, որ ներկա հրատարակությունը մղե Երուսաղեմի հայ միաբանությունը, որուն մոտ կգտնվին Պետրոս Դուրյանի բոլոր ձեռագիրները, վերջապես իրագործելու՝ օգնությամբ գրասեր մեկենասի մը՝ Դուրյանի տպված և անտիպ երկերու ամբողջական ու խնամյալ հրատարակություն մը, որուն մեր ժողովուրդը երկար ատենե ի վեր կսպասե։

Ա. Ջոպանյան

ՆԱԽԱԲԱՆ

Պետրոս Դուրյանի վրա այս ուսումնասիրությունը գրելով սրտի պարտք մը կատարած եմ։ Ինծի համար՝ Տրտունջքի հեղինակը սիրո քաղցրության ու սիրո ցավին առաջին հայտնիչը եղած է. իր տաղերուն մըրմունջին մեջ զգացած եմ է՛ն առջի ուժով ու խորհրդավոր բաբախումները, և իր տողերն են, որ ինձմե խլած են առաջին արցունքներս տարտամ և անհուն հուզման մը։ Ասոր համար է, որ իր տաղանդին վրա ունեցած հիացմանս մեջ գորովի տաքություն մը կզգամ։ Այս գիրքը, որով կփորձեմ իր ծածանուտ դեմքը կիսաստվերեն դուրս հանել, երախտագիտության ցույց մըն ալ է։

Ձեռնարկը դժվարին էր, կիսաստվանիմ։ Նկարել պատկերը կյանքի մը, որ քսան տարի առաջ տրոփեր է, որուն ամենեն մտերիմ վկաներեն շատերը մեռած են և որուն շփվողներեն դեռ ողջ մնացածներն ալ շատ բան մոռցած են անկից, կյանքի մը, որ առանց աղմուկի, անցեր է և մեծ մասամբ ստվերի և լռության մեջ,— հուսահատեցնող բան մըն է։ Ու երբեք հավակնությունը չունիմ կարծելու, որ հաջողած եմ։ Բանաստեղծին աղգականներեն ու բարեկամներեն ժողված ծանոթությանցս, իր գործերուն ուսումնասիրության և իմ ենթադրությանցս մեկ արտադրությունն է այս գործը, թերևս ոչ այնչափ ճիշտ, որչափ կուզեի, բայց անկեղծ։ Ահավասի՛կ Դուրյանը, ինչպես կարծեցի զայն տեսնել իր կյանքին շատ հաղվագյուտ բեկորներուն և իր տաղերուն տարտամության մեջ։ Գիտեմ, որ պատկերը շատ համառոտ է և քիչ մըն ալ վարկածային, ուրիշ կերպ չէի կրնար ընել։ Դուրյանի հոգիին ճշգրիտ և ամբողջական պատկերը, որուն գույներեն շատերը բանաստեղծն իր հետը տարած է, ինքը միայն պիտի կրնար գծել, կամ գոնե Լուիֆյանը՝ իր հոգեկիցը։

Իսկ իր գործին քննադատության մեջ ջանացած եմ անկողմնակալ ըլլալ։ Իրեն համար ունեցած խանդաղատանքս և սքանչացումս զիս չեն կուրացուցած իր թերությունները աչք դոցելու աստիճան։ Գոհ եմ միայն, որ ցույց տրվի, թե ի՞նչպես իր գործին էական մասերուն արժեքը, իր ատենը ա՞յնչափ քիչ ճանչցված, հետզհետե հաղթած է նախապաշարումներուն, ցրած է պատվելիներուն արհամարհանքը և սիրտերուն տիրելով բոլոր վավերական գրագետներուն ու գրասերներուն հիացումը գրված է։ Այն պահուն, ուր այս գործը հրապարակ կելլե, ոչ ոք այլև կրնա ուրանալ, թե Պետրոս Դուրյան արևմտյան հայոց ազգի աջխարհաբար բանաստեղծության հայրն է և նոր ժամանակներու մեր ամենեն ճշմարիտ բանաստեղծը։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ, ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Պետրոս Դուրյանը ծնած է 1851 մայիս 20-ին, Յուսկյուտարի Ենի-Մահալլե թաղին մեջ։ Ազգատ ընտանիքե մըն էր։ Իր հայրը, Աբրահամ աղա, նախ ջրհանկիրներու պետ ու հետո երկաթագործ էր եղած։

Իր մականունը պզտիկ պատմություն մը ունի։ Աբրահամ աղայի հայրը, Սարգիս, երկաթագործ, օր մը Հաճախորդի մը հետ խոսակցած ատեն, այս վերջինը կհարցնե իրեն՝ «պարզունակին ծակերը ինչո՞վ կբատեն, այս վերջինը կհարցնե իրեն՝ «պարզունակին ծակերը ինչո՞վ կբատեն»։— «Զըմպայով»,— կպատասխանե երկաթագործը։— «Վա՛յ Զըմպա, վա՛յ»,— կըսե հաճախորդը, և ատկից Սարգիսի անունը Զըմպա Սարգիս կմնա, և ատիկա ընտանիքի անուն մը կդառնա։ Պետրոս, իր տղայության ատեն Զըմպայան ստորագրելե հետո, օր մը շատ անախորժ կգտնե այդ թուրքերեն բառը (հայ բանաստեղծի անունի մը համար մանավանդ), բառարանի մը մեջ կփնտռե Զըմպային հայերենը, կգտնե Դուր բառը և իր մականունը կփոխե Դուրյանի։

Պետրոս ուներ երկու հորեղբայր, Մկրտիչ, որ մեռած է, և Կարապետ, որ կապրի դեռ։ Իր մորաքույրը, Էֆտիկ, զոր բանաստեղծը գուրգուրանքով սիրած է և որ առաջին օրեն մինչև վերջինը սրտագին խնամածությամբ մը պաշարած է զայն, ինչպես և տիկին Արուսյակ Դուրյան, քերթողին մայրը, նմանապես ողջ են տակավին։*

Պետրոս ունեցած է երկու քույր, որոնց մեկը, Էլպիս, իրմե առաջ (1848-ին) ծնած ու մեռած է. մյուսը, Արտեմ, ծնած 1854-ին, բանաստեղծին մանկության սիրական ընկերուհին եղած, վաղահաս ուշիմության մը նշանները ցույց տված է և 1862-ին մեռած։

*Ունեցած է երեց եղբայր մը, Հարություն, որ իրմե տարի մը ետքը մեռած է, և երկու կրտսեր եղբայր, Ագրիպպաս, որ փաստաբանությամբ կզբաղի հիմա, և Մինրան, որ հանրածանոթ է Եղիշե վարդապետ Դուրյան անունով**։*

---

* *Այս գրքի երկրորդ տպագրության լույս տեսնելեն շատ տարիներ առաջ այդ երեքն ալ վախճանած են։*

** *Երկուքն ալ վախճանած են տարիներ առաջ։*

Պետրոս Դուրյանի մանկության վրա հետաքրքրական մանրամասնություն մը չկա։ Աղքատ տղու մը մանկությունը, հանդարտ, անշուք ու միօրինակ կյանքի մը մեջ, ընտանեկան մանր մուներ դեպքերով միայն լեցված։ Խելացի և աշխույժ տղա մը եղած է, գիրուկ կարմիր այտերով, ու «հրեշտակի պես աղվոր», ինչպես կըսե իր մայրը։

Չորս տարեկանեն զինքը «Վարպետ տուտու»-ի քով կդնեն, որպեսզի կարդալ-գրել սորվի. ու վեց տարեկան եղածին պես Յուսկյուտարի ճեմարանը կդրկեն զայն։ Այն ինը-տասը տարիներու միջոցին, զոր Պետրոս հոն կանցնե, իր մատաղ միտքը մեկ կողմե կհարկադրվի կրել շարշարանքն այն կրթական սխալ դրության, որ կտիրեր այն ատեն,— նարեկ, գրաբար քերականություն, վերլուծում, ֆրանսերենե գրաբար թարգմանություն և ամեն ինչ, որ կար «պատվելի»ներուն մանկավարժությանը մեջ, բայց և, մյուս կողմե, ան հոն կունենա Եղիազար Մուրատյանի և Սրապիոն Թղլյանի պես բանգետ ու խանդավառ ուսուցիչներ, որոնք նաև արժեքավոր գրագետներ էին և ֆրանսերենի ու գրագիտության դասեր տալով իրեն՝ անշուշտ նպաստած են* անոր մտավոր զարգացման ու մատենագրական հմտության որոշ չափով ամբարման, ինչպես և ճեմարանին տեսուչ մեծանուն գրագետ Հակոբ Պարոնյանը, որուն սիրական աշակերտներեն մին եղած է, և որ Պետրոսի գրական առաջին փորձերուն իսկ մեջ նշմարելով ու գնահատելով անոր տաղանդը, իր Թատրոն պարբերաթերթին մեջ անոր բանաստեղծություններեն մեկ քանին հրատարակած է։

Պետրոսի դասակիցները եղած են Խաչիկ Ուղուրիկյան, Մարտիրոս Պողիկյան, Տիգրան Ադամյան (որոնց առաջին երկուքը հետո գավառական հայ ազգային վարժարաններու մեջ ուսուցիչ եղած են և երրորդը՝ Ճերիտեի Նարեն հայատառ թրքաբարբառ օրաթերթի խմբագիր), ինչպես և իր երեց եղբայրը՝ Հարություն ու Վարդան Լութֆյան՝ իր ամենեն մտերիմ բարեկամը։

Պետրոս Դուրյան դպրոցասեր և կրոնասեր եղած է իր ամբողջ մանկության ընթացքին։ Օր մը օրանց չէ դժկամած դպրոց երթալու և ընթերցումը խանդաղատանքով սիրած է։ Իր բարեպաշտությունն ալ, զոր իր ընտանիքեն ժառանգած էր, ամուր մնացած է իր մեջ, մինչև պատանության վերջին շրջանը, երբ կյանքի դառնություններն ու վտանգավոր ընթերցումներ տարակույսի ամպ մը անցուցած են երբեմն իր հավատքին վրայեն։ Դպրոցական եղած միջոցին, հաճախ տեսած են զինքը, որ առտուն վարժարան երթալե առաջ եկեղեցին հանդիպած, մոմ մը վառած և աղոթք մը ըրած է։

Թե դպրոցին մեջ ո՞ր աստիճան ցույց տված է իր մտավոր կարողությունը, իր բնածին տաղանդին նշանները, այս մասին հակասական են զինք անձամբ ճանչցողներուն կողմե տրված տեղեկությունները։ Տիգրան Ադամյանի ըսածին նայելով, Պետրոս ամեն դասի տակար էր և գրեթե հետինը իր կարգին, որուն մեջ ամենեն ավելի կփայլեին Խաչիկ Ուղուրիկյան և Հարություն Դուրյան։ Սրապիոն Թղլյան, խոստովանելով հանդերձ, թե դպրոցին մեջ Պետրոսին վրա արտասովոր բան մը տեսած չէր, կըսե, թե մտացի էր ան և աշխատասեր։ Բայց ոտանավոր մը, որ իր առաջին փորձը կկարծվի և զոր գրած է տասներեք տարեկանին, ուրիշ մը զոր նույնպես դպրոցը գտնված միջոցին շարադրած է (և երկուքն ալ հասած են մեզի), կցկտուր ուրվագիծ մը վիպակի, զոր շարադրած է ըստ իր շնկերներեն ոմանց և որ կորսված է, և մանավանդ Վարդ և Շուշան ու Սև նողեր թատերգությունները զոր իր ուսանողության վերջին տարիներուն գրած է, կապացուցանեն, թե Պետրոսին մեջ բանաստեղծը դպրոցական շրջանեն արդեն ինքզինքը հայտնած էր։ Երբ կըսվի թե տակար էր իր կարգին մեջ, դժվար չէ գուշակել, թե ո՞ր դասերուն ըլալու էր այդ անհաջողությունը, այսինքն գիտության ու մասնավորապես չափական գիտության։ Գաբրիել Ներշապուհ, իր ուսողության դասատուն, կերևա թե հուսահատած իր այդ աշակերտեն, օր մը կըսե անոր՝ «Զգե՛ սա բանաստեղծական տքնություններդ»։ Բայց Պետրոս, որուն մեջ «սրբազան կրակը» արթնցած էր արդեն, կպատասխանե. «Ա՜խ, էֆենդի, չե՛ս գիտեր, շա՜տ կսիրեմ բանաստեղծությունը»։ Այս պատմությունը, զոր ժամանակակից մը հաղորդած է ինծի, կցուցնե, թե փոքրիկ Պետրոսը արդեն սկըսեր էր բանաստեղծի հովեր առնել, «տքնություն»ներ ունենալ։

Թերևս գրաբարի դասին ալ ինքը չէր ամենեն հաջողակը։ Գրաբարի դասը գրագիտության դաս ըսել չէ, և այն ատենը,— դեռ հիմակ ալ շատ տեղ,— երկուքը մեկտեղ կավանդվեին։ Սրապիոն Թղլյան կըսե, թե Շաթոպրյանի Մարտիրոսը ֆրանսերենե գրաբարի թարգմանել կուտար աշակերտներուն ու անոնց կատարել կուտար նաև նմանօրինակ ուրիշ հրահանգներ, ուր գրաբարը միահեծան կիշխեր։ Հարություն Դուրյան լեզուներու մեջ, մանավանդ ֆրանսերենի և թուրքերենի, շատ զորավոր, Խաչիկ Ուղուրիկյան, քաջահմուտ դասական հայերենի, կհաջողին այդ թարգմանությանց մեջ. Պետրոս Դուրյան, որ կաշխատի սակայն ու կսորվի գրաբարը,— իրմե գրաբար նամակ մը տեսած եմ Իզմիրյան Սրբազանին ուղղված,— ինքնիրենը լուելյայն, ավելի կաշխատի բարձրացնելու, կազմակերպելու այն ներքին շենքը, որուն հիմքը պարիկ մը դրած

* Ես ինքս ալ Պեշիկթաշի Մաքրուհյան վարժարանին մեջ իբր ուսուցիչ ունեցած եմ այդ երկուքը և օգտված եմ իրենցմե։

էր իր հոգիին մեջ։ Ինք, որ հետո՝ հանճարի բնազդով մը, պիտի թոթափե գրաբարի լուծը, որ հայ նոր բանաստեղծությունը կխեղդեր և առաջին զուտ աշխարհաբար ոտանավորները պիտի գրե, բնական է, որ ամբողջ ջանքն ու եռանդը չհատեցներ գրաբարի դասերուն և զանոնք իր «բանաստեղծական տքնությանց» վերապահեր։ Բայց կերևա, թե իր դպրոցական շրջանին վերջերը Դուրյան քիչ մը փոխված ու ամեն դասի մեջ ալ հաջողականություն ցույց տված է։ 1865-ին, դպրոցեն ելլելեն երկու տարի առաջ, տարեկան քննության մը, ուր բոլոր պատվելիներեն ու նշանավոր անձերեն շատերը ներկա էին, Դուրյան փայլուն պատասխաններ կուտա ոչ միայն գրաբարի, այլև... թվաբանության ու աշխարհագրության մասին իրեն ուղղված հարցումներուն։ Եվ այդ վերջին երկու առարկաներուն է, որ իր ընկերներն և ուսուցիչները,— ինչպես իր դասընկերներեն ոմանք կհավաստեն,— որոնք առաջ սովորական ազգ մը կհամարեին զայն, կսկսին կարևորություն տալ անոր։ Կարգին «բանաստեղծը» կդառնա։ Դպրոցին ճաշարանին մեջ կանգնված ամպիոնին վրա, ուր բարձրագույն կարգին աշակերտները ճառախոսելու վարժություններ կընեին, իր ատենաբանությունները ուշադրություն կդրավեն, դպրոցական հանդեսներուն մեջ իր ճառերն ընդունելություն կգտնին։ Այդպիսով է, որ համակրությունը կշահի Գեորգ Չոպանյանին, որ իր վրա մասնավոր խնամք մը կտանի։ Այդ անձը, որ իր շրջանին ամենեն ազնիվ դեմքերեն մեկն է եղած, և որուն անունը կգտնենք այդ ատենվան բոլոր կրթական, գրական և բարեգործական ձեռնարկներուն մեջ, դպրոցին ազգատ տղոց պիտույքները հոգալու համար գանձանակ մը ձեռքը թաղե թաղ կպտտեր, դրամ և նվերներ կժողվեր. տեսակ մը նախախնամություն վարժարանին չքավոր աշակերտներուն համար։ Ինքն է, որ Ավետիս Գոռանյանի հետ, անխոնջ աշխատությամբ ամրապնդած ու ծաղկեցուցած է Նպաստամատույց ընկերությունը, որուն ատենապետն էր Քրիստոսատուր Ղազարոսյան։ Պետրոս Դուրյան, իրեն նման ուրիշ շատ մը ձրիավարժ աշակերտներու հետ, կերթար անկից ստանալ իր դպրոցական պիտույքները, և ան է, որ բանաստեղծին մահվենեն հետո անոր շիրիմ մը կանգնելու և անոր գործերը հրատարակելու ամենեն ավելի նպաստած է։

Պետրոս Դուրյանի գրական գործունեությունը շատ կանուխեն կսկսի։ Նույնիսկ իր դպրոցական կյանքին առաջին տարիներուն, երբ դեռ իր կարգին մեջ աննշան խլեզ մը կնկատվեր ան, իր մենության պահերուն սկսած է ոտանավորներ ուրվագծել։ Իր մեկ բանաստեղծությունը, զոր գտած եմ Հ. Ճանֆեսճյանի մոտ, և զոր այս վերջինը կըսե, թե Պետրոս գրած է տասներեք տարեկան եղած ատեն և թե իր գրած առաջին ոտանավորն է կամ գեթ առաջիններեն մին, շահեկան է նախ անով, որ արդեն

գրեթե զուտ աշխարհաբարով է շարադրված, ու հետո անով, որ, դպրոցականի անփորձ ու տկար տողեր ունենալով հանդերձ, ան քանի մը նոր դարձվածքներ կպարունակե և հանդուգն դաղափար մը, ըմբոստացող ոգի մը, որ Տրոունջֆի Դուրյանը կավետե արդեն։ Ահա այդ տաղիկը.

Գարնանային կենացս մեջ
Սիրո ծաղկունք մինչ փթթեին,
Սիրտս վառված սիրովն անշեջ
Առաքինվույն և գեղեցկին,

Մահագուշակ խորշակն անդեն
Հասավ տիրեց սրտիս բոլոր,
Թառամեցան ծաղկունք ամեն
Ծալած փթթած սրտիս մեջ նոր։

Այն որ տրվավ երիտասարդն,
Ծաղկունք, մարգերն ալ զարդ նորին,
Եվ մարդկային վեհ սրտերուն
Ուսուց սիրել գեղն ու բարին,

Ինչո՞ւ արդյոք խորշակահար
Կ՚ընե ծաղկունք դեռափթթիթ,
Ինչո՞ւ արդյոք նա սիրահար
Սրտերն զեղու արտասվոք միշտ։

Ահա կիջնեմ ո՞հ ես այժմեն
Առջևս բացված գերեզման խոր,
Բայց սա տրխուր տեսարանեն
Ի՞նչ կա արդյոք հաճույք մ՚Անոր։

Թերություններե զերծ չըլլալով հանդերձ, այս բանաստեղծությունը մտածման ու ձևի նորություններ կպարունակե և բավական ընթերցում ենթադրել կուտա։ Հոն կուրվագծվի արդեն այն տխուր տեսիլը, զոր Դուրյան պիտի ունենար կյանքի մասին և որ իր տաղերուն էական նոթը պիտի կազմեր։ Հոն արդեն կգտնենք փթթիլ բառին համար բանաստեղծին նախասիրությունը, զոր ան մինչև իր վերջին տաղը պահած է։ Այդ առաջին փորձով քերթողն իր հարմար տաղաչափությունը գտած է՝ կարճ տողերով, կարճ ու խիտ ֆրազներով. և այդ առաջին փորձով, ան իր ձեռքը, իր նոթը գտած է։ Վերջին երկու տունները, ուր կընդվզի մարդկային ցավերու տեսարանով, կարծես թե զվարճացող Աստուծո մը դաղափարին դեմ, ճշմարիտ հանդգնություն մըն են, տասներեք տարեկան դպրոցականի մը քով մանավանդ։ Կպատմվի, թե Ստեփան Փափազյան, հայտնի

ազգային գործիչը, որուն ձեռքն անցեր է այս տաղը, սաստկորեն հանգիմաներ է փոքրիկ Դուրյանը այդպիսի ամբարիշտ բան մը գրած ըլլալուն համար և խստիվ պատվիրեր է այդ մեղքն անգամ մըն ալ չգործելու Սիրուն չէ՞ այս սկզբնավորությունը։

Երկրորդ ոտանավորը, որ այդ դպրոցական շրջանեն մեզի հասած է, աննշան գրվածք մըն է, եթե նշանակություն մը ունենալ չէ զուտ աշխարհաբար լեզվով շարադրված ըլլալը։ Թէոֆիլին է տիտղոսը, բայց քերթվածը հեռավոր բաղդատություն մը անգամ չի վերցներ Դուրյանի նույն տիտղոսով հրաշակերտին հետ։ Կօրինակեմ մեկ տունը միայն, որ սովորականեն քիչ մը բարձր է.

Ո՞հ, կարծես թե նե երկնային
Զըվարթուն մ'էր, երկրի վրա
Լույս սփռելու, սեր բուրելու,
Հուր ցայտելու էր իջած։

Սեր բուրելուն գյուտ մըն է փոքրիկ Դուրյանին համար։

Բանաստեղծին մտերիմ բարեկամ Հ. Ճանֆեսճյանի մոտ գտա նաև պզտիկ ծրար մը թուղթերու, որոնց վրա օրինակված է անավարտ մնացած վիպակ մը, զոր Ճանֆեսճյան Դուրյանի կվերագրե։ Տափակ արձակով, դպրոցականի շարադրությամբ, տղայական սիրավեպի մը առաջին մասն է, զուրկ արժանիքի հետին նշույլեն, այն աստիճան, որ կտարակուսիմ Դուրյանեն գրված ըլլալուն։

Դուրյանի դպրոցական շրջանին ամենեն կարևոր արտադրությունները, սակայն, իր առաջին երկու թատերգություններն են՝ Վարդ և Շուշան ու Սև հողեր, որոնց առաջինը, հակառակ միամիտ հյուսվածքի մը, տաք ու թրթռուն շեշտ մը կպարունակե և Դուրյանի գրական ճշմարիտ սկզբնավորությունն է։

Կտեսնվի, որ Դուրյան անգործ չէ մնացած վարժարանին մեջ, և ապահովապես՝ դպրոցական գրասեղաններուն վրա դեռ արտադրած ուներ ուրիշ բաներ ալ, որ մեզի չեն հասած։ Իր ինքնագիր գործերեն զատ, գիտենք, որ թարգմանություններ ալ ունի կատարած։

Դպրոցական շրջանի իր վերջին երկու տարիներուն, Վարդովյանի խումբին համար քանի մը թատերգություններ թարգմանած է։ Կըսվի, թե Հյուկոյի Արման կզբոսնու-ն ինք ալ թարգմանած է և նախորդ թարգմանութենեն ավելի հաջող կերպով։ Իր թարգմանությանց մեջ ալ ջանադիր եղած է ժողովուրդին խոսած լեզուն դնել անձնավորությանց բերանը. և երբ եթքեն դեր մը ստանձնած է ճեյն Կրեյ խաղին մեջ, զոր Ֆ.

Ուղուրիկյան թարգմանած էր, լեզուն շատ գրաբարախառն գտնելով՝ զայն սրբագրած ու պարզ աշխարհաբարի վերածած է։

Ասոնք կցուցնեն, թե Պետրոս Դուրյան, թերևս ոչ հաջողը իր բոլոր դասերուն մեջ, առաջինն էր բանաստեղծության մեջ, որ դաս մը չէ և չի կրնար ըլլալ։ Սրապիոն Թղլյան կըսե, թե իր աշակերտներուն Բագրատունիի, Հյուրմյուզի թարգմանություններեն կտորներ, Ալիշանեն քերթվածներ և իր թատերգություններեն ամբողջ տեսարաններ կկարդա եղեր։ Եթե սովորություն ըլլար նիշ տալ ընթերցմանց լավ հասկացողության, անտարակույս Դուրյանն է, որ պիտի ստանար բարձրագույն նիշը։ Անիկա այդ ընթերցումները ծծած, այդ քերթվածներուն հոգիին թափանցած է, և զանոնք լսելով, իր բանաստեղծի բնածին կոչումը արթնցած է իր մեջ։

Ուսումներուն մեջ Դուրյանի առավել կամ նվազ հաջողականության մասին հայտնված կարծիքներուն հակասականությունը գոյություն չունի անոր վարքին ու նկարագրին վրա հայտնված կարծիքներուն մեջ։ Զինքը ճանչցողները ամենքն ալ կվկային, թե Պետրոս պատվական տղա մըն էր, վերջին ծայր ազնիվ ու սիրուն։

Մենք ամենքս, որ Դուրյանը լսած ենք դպրոցին մեջ, որ մեր առաջին սիրած աղջիկներուն չափ և անոնց հետ պաշտած ենք զայն, որովհետև անոնց պես մեզ կփայփայեր ու կլացներ միանգամայն, բոլորովին երևակայական Դուրյան մը երազած ենք, տեսակ մը մատաղատարիք տրբտմության ու հիվանդության, որմե դուրս ոևէ պատկեր մեզի անբնական պիտի թվեր. սև երկայն մազեր, լայն դժգույն ճակատ մը, նիհար դեղնած այտեր, գերեղմանի չափ տխուր աչքեր, նուրբ գունատ բերան մը՝ դառնության անհրաժեշտ ծալքովը, և այդ մեղրամոմե գլուխը՝ հինումին զգեստներով ծածկված վտիտ մարմնի մը վրա։ Այդ դեմքը երևակայելե հետո, տրամաբանորեն շարունակած ենք հետևցնել, թե լուությունն ու սուգն իսկ պիտի ըլլար անիկա և կարծած ենք տեսնել վշտահար տղա մը, կյանքեն խոցված, տրտմություն արտաշնչող, որ խոսքը կատեր կամ երբեմն միայն տնոր կդիմեր՝ իր ցավը պոռթկալու համար, և որ ինքն իր մեջ միշտ ամփոփված, մահվան վրա կխորհեր և իր սքանչելի բացատրությամբ՝ գաղտուկ «կմխար»։

Այս Դուրյանը գոյություն ունեցած է, բայց ասիկա այն Դուրյանն է, զոր կյանքի շարչարանքը շինած է, վերջին տարվան Դուրյանը։ Ճշմարիտ Դուրյանը, այն, զոր բնությունը կերտած էր, այնչափ տարբեր է այս պատկերեն, որչափ երազ մը իրականությենեն։ Ահավասիկ ինչպես կնկարագրեն Դուրյանը իր մայրն ու իր բարեկամները. շագանակագույն, խիտ ու շիտակ մազեր, միշտ դեպի ի վեր սանդրված և աղջկան մազերու պես՝ մեջտեղեն ճեղքված. սև ու լայն կորագծեր ձևացնող հոնքերու տակ, որոնք

կմիանան բավական ընդարձակ ճակտի մը ներքև, մեծ կոպերով գեղեցիկ սև աչքեր, որոնց պայծառ ու հորդ նայվածքը երկայն սև թարթիչներու մեջեն կմաղվի. թրթռորեն արծռունգն քիթի մը. կլոր դեմք մը՝ շատ քիչ մազոտ ու շատ թարմ մորթով. նուրբ շրթունքներ. կատարյալ տիպար մը աղվոր տղու, կանացի փափուկ գեղեցկությամբ մը։ Իր ընկերները կատակով կըսեն եղեր իրեն «սա քիթիդ տակի քանի մը թել մազը կտրե՛, քեզ իբր աղջիկ ծախենք»։

Իր գեղեցկության հետ, Պետրոս ուներ զեղուն առողջություն մը, որ կյանքի առատ հույզ մը կպտտցներ այդ գեղահասակ, անձնյա և առույգ պարմանիին մեջ։

Իր նկարագրին գալով շատ զվարթ էր, զվարճաբան, կատակասեր, միշտ շրթունքին վրա երգ մը, երբեք երեսը կախած։ «Երբ սենյակին դուռը աղմուկով բանալով ներս մտներ,— կըսե իր մայրը,— ուրախություն կբերեր հետը, կ՚երգեր, կխնդար, ասոր, անոր հետ կիյնար, սիրտերնիս կբացվեր զինքը տեսնելով»։

Դպրոցին մեջ իր կարգին զվարթությունն էր. ինք էր կատակասեր, չարաճճի աշակերտը, որուն կատակները թունալից չեն, սակայն որուն չարաճճիություններն անմեղ են։ Իր բոլոր բարեկամները, որոնք կհավատեն նաև իր անսպառ զվարթությունը, կհաստատեն նաև իր աննման բարությունը, հեզությունը, համբույր ու շնորհալի վարքը։ Մեկը վշտացուցած չէ երբեք. ատելությունը, ոխը, նախանձը, բամբասանքը անծանոթ մնացած են իրեն, ինչպես և ամբարտավանությունը, հանձնապատանությունը։ Համեստ, խոնարհ, սիրող ու ներող հոգի մը, զերծ ամեն գիժությենե, ոսկի քնար, որուն կույս թելերուն վրա միայն կրնային թրթռալ այն մաքուր երգերը։

Պիտի տեսնենք, որ իր կյանքին շարունակությանը մեջ աղքատությունը պիտի ավելորդ, պիտի քայքայե, պիտի փոտեցնե այդ առողջությունը, այդ գեղեցկությունը և այդ զվարթությունը, առանց կարենալու դպչիլ բնածին մեծությանն այդ հոգիին, որ իր տառապանքներուն մեջ հետզհետե ավելի պիտի բարձրանա և աղնվանա։

Դպրոցին մեջ Դուրյանի կյանքեն շատ բան չի գիտցվիր։ Իր դասընկերները սա կշեշտեն, թե զիրենք շատ կխնդացներ։ Մասնավորապես Ուղուրիկյանին հետ շատ կիյնա եղեր, բանասերի չոր մտքով այդ լուրջ և համառ տղուն հետ, որ կատակ, զվարճություններ չախորժիր, անոր ձեռը կկապկե, անոր ծանրությունը կծաղրե եղեր։ Անոր վրա խոսք մըն ալ ունի, որ հեգնություններ ավելի դատաստան մըն է. «Ամբողջ բառարանը գոց գիտե, բայց բառերը քովե քով շարել չի գիտեր»։ Ասիկա թերևս նույնիսկ պատասխան մըն է հանձարեղ ուսանողին կողմե ուղղված հմուտ ուսանողին, որմե չի հասկցված. որուն արհամարհանքը միայն վայելած է ապահովապես։

Դուրյան պզտիկ հասակեն թատրոնը կսիրեր։ Այդ թվականին Պոլիս ապրող հայու մը համար կարելի չէր թատրոնը չսիրել, երբ օդին մեջ իսկ թատրոնի բուրմունք մը կծածաներ։ Իր երազն էր ամեն իրիկուն երթալ թատրոնը անկյուն մը կծկտիլ և իր բանաստեղծի հոգիին բոլոր ծակտիքներեն ծծել այն գունագեղ ու հորդ հեշտությունը, որ դյուցազնական խրոխտ խաղերեն կամ սիրային մելամաղձիկ տառամներեն կհոսի։ Այդ երազը շատ քիչ կիրականանար, որովհետև իր հայրը, բարի, բայց անուս մարդ, թատրոնը նկատելով իբր վառարան մը անբարոյականության, անոր խստիվ արգիլած էր այդպիսի հանրային դրոսավայրեր երթալ։ Պետրոս երբեմն փախցունք ընել կհաջողեր, արգելված պտուղի մը կրկնապատկված երանությունը վայելելով։ Իրիկուն մը, սակայն, Աբրահամ աղա տուն կդառնա, գլուխը օդին քիչ մը տարցած և իմանալով որ Պետրոսը թատրոն գացեր է, լապտերը կվառե, կերթա շիտակ հոն. ահագին աղմուկ կհանե, հայհոյություններ կնետե դերասաններուն, որ «իր զավակը գլխե կհանեն»։ Պետրոս ահաբեկ, հետևի դռնեն տուն կդարձի և մորը պաշտպանությանը կապավինի. հայրը տուն կդառնա և փառավոր ծեծ մը կքաշե Պետրոսին։ Այս միամիտ անգթության պատմությունեն, զոր կհիշատակեմ՝ Պետրոսի կյանքեն ոչ բնորոշ մանրամասնություն զանց չառնելու համար, պետք չէ հետևցնել, թե անսիրտ վայրենի մը եղած է այդ հայրը, որ, մեկդի դնելով իր նախապաշարումները և իր խստիրու գեշ սովորությունը, ուրիշ պարագաներու մեջ շատ բարի սիրտ մը ցուցուցած է։ Բայց ահավասիկ ամենեն զվարճալի միջադեպը, որ կպատմվի Դուրյանի դպրոցական կյանքեն։ Սրապիոն Թղլյան Պետրոսին ամբողջ կարգը կհրավիրե իր էլեոնորա խաղին ներկայացման, որ տեղի պիտի ունենար Բերա։ Չեմ գիտեր ինչպես իր հորը ծայրահեղ խստությունը այս անգամ մեղմացեր է՝ իր որդվույն ամբողջ գիշեր մը Բերա անցընել թույլ տալու աստիճան. բայց ուսուցչի մը հրավերը կար, և շատ մը անուս հայրերու համար ուսուցիչը մեծ նշանակություն ունի։ Արդ, մեր դեռատի պարոնները, աղքատ պատանիներ ամենքն ալ, գրպաններին հաղիվ յուրաքանչյուրը 2—3 դրուշ ունենալով, ճամբա կելլեն, նոր և ամեն կերպով տարօրինակ հանձնյքի մը գաղափարով լեցված։ Անոնք, որ աղքատ եղած և զեղարվեստ սիրած են, անոնք, որ թատերական ներկայացման մը համար հանձն առած են գիշեր մը ամբողջ սալահատակներու վրա քալելով կամ սրճարանի մը անկյունը կծկտած լուսցնել, անոնք միայն պիտի ճաշակին պոեմի կյանքի այս միամիտ ու սիրուն դրվագը։ Սրապիոն Թղլյան, որուն այդ գործնական գրագիտության դասին սրտանց կծափահարեմ,— օթյակ

մը կուտա իր աշակերտներուն, որոնք աղած ձուկերու պես վրայէ վրա կդիզվին հոն։ Ներկայացման ավարտին, Դուրյան և իր ընկերները, հանդիսատեսներուն պերճ արդուզարդերեն ու թատերական տեսարաններուն փայլեն բերանին բաց մնացած, թատրոնեն կմեկնին, առանց գիտնալու, թե ո՛ւր պիտի երթան։ Կսկսին փողոցը սլքտալ, գրպաններին շատ քիչ դրամ ունենալով, առանց երթալիք տեղ մը գիտնալու։ Ամեն ալ է, այնպես որ ամենեն քաջասիրտը չի կրնար դիմանալ օդին խստության։ Ամբողջ խումբը աժաններց սրճարան մը կմտնե, քսանական փարայի խահվեով գիշերը հոն լուսցնելու համար։ Խնդալով, կատակելով,— ու Պետրոսն է կատակողներուն պարագլուխը,— առտվան ծագիլը կտեսնին։ Վերջապե՛ս։ Բայց հիմակ ալ սոսկալի կերպով անոթի են, ու քովերնին մնացած դրամը շոգենավի ծախքին հազիվ կբավե։ Գլուխնին կախ, գորշ և անձրևոտ օդով մը անշուշտ, քնացած մեծ տուներուն առջևեն, մայթը կչափեն ու կչափեն։ Ի՞նչ ընեն։ Հանկարծ իրենցմե մեկը Ս. Երրորդության եկեղեցիին փողոցին մեջ նոր բացված իշկեմպեճիի (քաղրթավաճառ) խանութ մը կտեսնե, ուր այդ արվեստի մարդիկ, ըստ իրենց սովորության, իրենց գործի առաջին օրը ձրի կբաժնեն իրենց հյութեղ կերակուրը։ Առանց սպասելու, որ երկայն-բարակ զիրենք հրավիրեն, խնդալով, պոռչրտալով, ամենքը մեկ խանութը կլեցվին, իշկեմպեճիներուն վրա կհարձակվին և որկրամոլության խրախճանքով մը կավարտեն այդ արտասովոր գիշերը։

Բ

ԴՈՒՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԴՊՐՈՑԵՆ ԴՈՒՐՍ

Պետրոս Դուրյանի դպրոցական շրջանը անգամ մը մեկ քանի օրվան ընդմիջում մը կունենա։ Իր ծնողքը աղքատութենե միշտ նեղվելով կուզեն, որ ալ ստակ շահել սկսի իրենց զավակը, ուստի 1866-ին դպրոցեն կհանեն զայն և դեղագործի մը քով կդնեն։

Բայց դեղերու աշխարհին մեջ հազիվ երեք օր կրնա մնալ բանաստեղծը, կմեկնի՝ առանց, անշուշտ, ցավ պատճառելու իր վարպետին։ Նորեն դպրոց կտրվի, ուր դեռ տարի մըն ալ կմնա։

1867-ին, երբ Պետրոս վարժարանեն վերջնականապես կելլե, ծնողքը վճռականորեն կորոշեն գործի մարդ դարձնել զայն, և հազիվ հեռացած դպրոցին երազալից մթնոլորտեն՝ զինքը կդնեն ակնցի սեղանավոր Մարտիկ աղային քով։ Տարի մը ամբողջ կմնա հոն, ճգնելով զսպել իր

խանդերն ու թռիչները և վարժվիլ գործնական կյանքի տափակության։ Ու նույնիսկ զարմանալի, անհավատալի չէ՞, որ տարի մը հաշիվներով կրցած ըլլա զբաղիլ այդ վերացական տղան, որուն միտքը բանաստեղծությամբ թաթավված է, որուն գաղափարներն ու զգացումները երազի տարտամ բովով մը պաշարված են։ Կերևա, թե Մարտիկ աղան, Պետրոսի ընտանիքին բարեկամ ըլլալով և անոնց կարոտ վիճակը գիտնալով, աչք գոցած է իր պաշտոնյային շատ մը թերությանց։ Կցավիմ, որ ոչէ միջադեպ չկրցա գտնել այդ մեկ տարվան անբանաստեղծական կյանքեն. բայց կգուշակեմ այն բոլոր անհարակություններն ու մտացրությունները, զոր Դուրյան ունեցած ըլլալու է. սխալ հաշիվները, մոռացումները, գեշ կատարված հանձնարարությունները, ու երկու գործի մեջ՝ առևտրական թուղթի վրա ափհափո գրված ոտանավորները։ Այս վերջին մանրամասնության դրական ապացույց մը ունիմ, նամակի կապույտ բարակ թուղթ մը ձեռքս անցավ ծայրերը փեթոտված, որուն վրա Պետրոսի մեկ ոտանավորին երկուքուկես տունը մնացած էր, գրված «Ի Մեծ Նոր Խան», ինչպես նշանակված էր տակը։

Բնական է, որ տարիե մը ավելի պիտի չկարենար դիմանալ սեղանավորի մը ծառայող բանաստեղծ գրագիր մը։ Է, օրին մեկը, Պետրոս Դուրյան, իր վերացումներն ու երազները շալկած, քնարն ալ գիրկը, ճամբա կելլե «Մեծ Նոր Խանեն» իր տունը դառնալու համար։ Չվարձալի մանրամասնություն մըն ալ դեռատի քերթողին այս շուկայի կյանքեն, այն է, որ ան իր վարպետին գավառացիի խոսելու ձևը շատ հաջող կերպով կկապկե եղեր։

Բավական ատեն անգործ կմնա։ Ծնողքը կհորդորեն դինքը, որ զբաղում մը գտնե, Դուրյան, հուսահատ, կկրկնե անոնց՝ «Ի՞նչ գործ գըտնեմ, ցուցուցեք գործ մը որ աշխատիմ»։ Կառաջարկեն, որ Զայյան Իլիաս սեյին քով մտնե։ «Ի՞նչ կրնամ ընել անոր մոտ,— կըսե,— այդ անձը էֆենտի մըն է, բանաստեղծությունը անոր քով արժեք չունի»։ Մանավանդ երբ կիմանա, որ ծառայի պաշտոն մըն է առաջարկվածը, այսինքն էֆենտիին պայուսակը բռնել ու ձիուն հետևեն մինչև պաշտոնատունը երթալ, կդայրանա և կըսե՝ «Ասանկ ստորին գործեր կատարելո՞ւ համար է, որ դպրոցին մեջ այնչափ ատեն միտքս հոգնեցուցի»։

Իր անգործությունը, սակայն, մեծ ցավ կըլլա Պետրոսի սրտին։ Չափազանց ընտանեսեր բնավորությամբը, կուզեր միշտ կրցածին չափ օգնել իր ծնողքին, թեև իր մեծ եղբայրը՝ Հարություն, փաստաբանի մը մոտ քարտուղար, Մանգումէ, Մեհմուա օրաթերթերու աշխատակից, արդեն սկսած էր քիչ շատ դրամ շահել։ Պետրոս իր աղքատութենեն և իր աղքատությանը համար տառապած է միշտ, իր ծնողքին կարոտությունը տես-

նելով, կտանջվեր անոնց օգտակար դառնալ չկարենալուն։ Իրենց պըզտիկ տանը մեկ մասը վարձու տված էին. գործի եղած ժամանակը, Պետրոս վարձվորները Գանել կուտա, որպեսզի ծնողքը հանգիստ ընեն։ Եվ շահած միջոցին, ձեռքն անցած ամբողջ դրամը տուն կբերեր միշտ, առանց երբեք իր հաճույքին Համար լումա մը ծախսելու. իր հուսահատության վայրկյաններեն մեկուն մեջ է, որ գրած է սա տողերը Օրագիր թերթին մեջ, որուն օգնական խմբագիրն եղած է ատեն մը. «Ո՜վ գիտե քանի՜ քանի՜ անկյուններ զանազան տաղանդներ քաջալերության պակասութենեն անգործ ու վհատյալ կկենան միանգամայն և իրենց աղքատ ընտանյացը բեռ ըլլալու զգացումովը կտանջվին»։

Խրիմյան Հայրիկի պատրիարք ընտրվելուն առիթով Դուրյանի գրած երգը շատ Գաճելի տպավորություն մը ձգած ըլլալով Խորեն Նարպեյ սըրբազանին վրա, Ստվերք Հայկականի հեղինակը համակրություն կզգա դեռատի բանաստեղծին Համար, զայն իր տունը կկանչե և սիրալիր տեսակցություն մը կունենա անոր Հետ, որու միջոցին կխոստանա գործ մը գտնել անոր և հրատարակել անոր քերթվածներու հավաքածուն։ Երկրորդ խոստումը չի գործադրեր, բայց առաջինը կկատարե։ Քիչ ատեն ետքը կհաջողի Քեմհաճյան Որդիկ պեյի որդվույն՝ Սիրուն Քեմհաճյանին իբր ուսուցիչ հրավիրել տալ Դուրյանը, որ երեք ոսկի ամսականով ութ ամիս կվարե այդ պաշտոնը, մինչև որ ամսականը պակաս վճարվելուն պատճառով կդադրեցնե իր դասերը։ Այդ ուսուցչության միջոցին, միանգամայն Որդիկ պեյի հանրածանոթ գործարանին համար մեքենաբանական քանի մը գրքեր ֆրանսերենե հայերենի կթարգմանե, կարգ մը արհեստագիտական բառերը դարբնելով։ Այդ թարգմանությունները կորսված են։

Անգործությունը նորեն կսկսի։ Այն ատեն, Դուրյան կխորհի նույնիսկ գրականությամբ դրամ շահիլ։ Իր թատերական գրվածքներով ու թարգմանություններով մինչև այն ատեն շատ նիհար հասույթներ ունեցած էր երբեմն։ Տիգրան Գալեմճյան, հայ թատրոնի հուշարար, որ Դուրյանին Համբավը լսած էր, կուգա ինքն իսկ անոր կառաջարկե, որ այնուհետև գրելիք խաղերն իրեն հանձնե՝ խոստանալով ինքն իսկ վճարել պատվագինը, և առաջին անգամվան համար կխնդրե Արտաշես Ա-ի վրա թատերգություն մը գրել։ Պետրոս կգրե խաղը և կհանձնե. Գալեմճյան կվճարե 15 ոսկի, զոր Դուրյան կհատկացնե իր կրտսեր եղբայրներուն հագուստ գնելու և տնական ուրիշ պետքեր հոգալու։ Յուսկյուտարի Ազգիե թատրոնին մեջ մեծ պատրաստությամբ կներկայացվի այդ «մեծահանդես թատերգությունը» և հանդիսատեսներուն բազմությունը այնքան ստվար կըլլա, որ հարյուր ոսկիեն ավելի եղած ծախքը հանելե հետո

շահ ալ կընեն։ Բայց այս դրամական հաջողությունը միակը կըլլա Դուրյանի համար. ատկից հետո գրած խաղերը առանց վճարման կամ շատ չնչին գիներով ձեռքեն կխլեն, և իր աշխատություններով թատերապետներ մեծկակ գումարներ կշահին։ Տիգրան Ադամյանին ուղղած մեկ նամակին մեջ կըսե՝ «Տեսնենք, քանի մը թատերախաղեր ունիմ, կրնա՞մ քանի մը ստակով կամ ծափով փոխանակել»։ Այս տողերեն կտեսնվի, թե իր խաղերը կամ շատ քիչ բանով կհանձներ՝ «քանի մը ստակով» կամ ոչինչով, փառքի համար միայն՝ «քանի մը ծափով»։

Այն ատեն, նեղը մնացած, չուզելով մակաբույծ մ' ըլլալ իր ընտանիքին մեջ, մանավանդ որ իր երեց եղբայրը օր մը կըսե իրեն՝ «Պետրոս, գրելով բան չի լմննար, գործ մը գտի՛ր»։ Դուրյան ամենամեծ զոհողությունը հանձն կառնե. ժամանակին նախապաշարումներուն դիմադրելով և հորը բարկությանը ենթարկվիլ աչքն առնելով, կհավանի դերասանություն ընել՝ ստակ շահելու համար. կերևա թե հակառակ թատրոնի նկատմամբ իր ոգացած բուռն սիրույն, ինք ալ քիչ մը վարակված էր տիրող նախապաշարումներեն, որոնք դերասանությունը իբր ստորին, անբարոյական, անպատիվ բան մը նկատել կուտային, որովհետև Տիգրան Ադամյանին ուղղած նույն նամակին մեջ կավելացնե. «Ամիսի մը չափ մինչև անգամ խոնարհեցա դերասանություն ընել, ընտանիքիս կարոտը լցնելու համար. այս ալ ըրի ապրելու համար, անգործությունը թոթվելու համար»։ Դերասանություն բառը նամակագիրն է, որ ստորագծած է, շեշտելու համար անոր ամբողջ անպատվաբեր ստորնությունը և ի վեր հանելու համար իր զոհողության մեծությունը։ Եվ իր դերասանության պատմությունն ալ, անհրավություններով ու նախատինքներով լեցուն, սրտաճմլիկ բան մըն է։ Թատերապետ Հակոբ Վարդովյան անոր 300 դրուշ ամսական կհատկացնե, որ նախ գեշ կվճարվի, հետո բնավ չի վճարվիր։ Հակառակ իր նամակին մեջ գրածին, Դուրյան մեկ ամիսեն ավելի դերասանություն ըրած է, ինչպես կհավաստեն ժամանակակից դերասանները, երկրորդական դերեր ստանձնելով ընդհանրապես։ Պ. Սիսակ և Պ. Պենկըլյան ծանոթ դերասանները, որոնք մոտեն ճանչցած են Դուրյանը, կըսեն, թե դերասանության համար պետք եղած բոլոր ձիրքերը չուներ, բայց խնամքով կսորվեր իր դերը և եռանդով կխաղար։ Միայն անգամ մը, ձեյն Կրեյ թատերգության մեջ, Էդվարդ Զ-ի դերը կառնե, որ հիվանդ արքայի մը դերն է, և սքանչելի կերպով կխաղա զայն, իր թրթռուն հոգիին ամբողջ անկեղծությունն ու տրտմությունը դնելով անոր մեջ. հանդիսատեսները կհուզվին, և Դուրյան, որ քանի մը անգամ ի տես կկոչվի, մեծ հաջողություն մը կունենա։

Բայց Վարդովյան կշարունակե անախորժ կերպով վարվիլ Դուրյա-

նին հետ. ոչ միայն անոր ամսականը չի վճարեր, այլ կնախատե զայն, և Պետրոսի փափուկ հոգին խորապես կվիրավորվի այդ թշնամանքներեն։ Խուլ ատելություն մը կծնի երկուքին միջև, որ կպայթի վերջապես. օր մը Պետրոս իր թոշակը կպահանջե, Վարդովյան անարգանքով մը կպատասխանե. այն ատեն Պետրոս իր սովորական խոնարհ լռությունը մեկդի կդնե, ու կռիվ մըն է կփրթի. Վարդովյան, շատ մը ծանր խոսքերու մեջ, «Տիրացո՛ւ»,— կպոռա Դուրյանի երեսն ի վեր. Դուրյան, ինքիրմե ելած, «Դուն իրավ,— կպատասխանե,— Սրապիոն Հեքիմյանին ըսածն ես եղեր»*։ Դուրյանի այս խոսքին վրա Վարդովյան, կատաղած, կապտակե Դուրյանը, որ կսկսի լալ։ Այդ օրեն սկսյալ, Պետրոս կձգե դերասանությունը։ Տիգրան Ադամյանին ուղղված իր նամակին մեջ, ահա՛ ինչ որ կա հիշված այդ մասին. «Հիմակվան գործատերերը կով կուզեն գործածելու և աշխատցնելու, ոչ թե մարդ։ Վարդովյանի (հին արկածներե մնացած ատելության կրակովը բորբոքած) նախատինքներուն չկրնալով հանդուրժել, աղտոտ անկողինս թատրոնեն տուն փոխադրեցի։ Ինծի ըրած նախատանաց պատմությունը սոսկալի է, և ես ավետարանական անհիշաչարությամբ ներեցի... Հիմա այդ անցքը հոս պատմելը անպատեհ է...»։

Մեղք, որ ինքն իսկ չէ պատմած այդ դեպքը. շատ ավելի ճիշտ, մանրամասն ու տաք պիտի ըլլար, քան ինչ որ ես կրցա հավաքել ու վերակազմել քանի մը դերասաններու քսան տարվան մոռացության մեջեն. վերոհիշյալ նամակը իր մահվան մոտ գրված է, 1871-ի դեկտեմբերին։ Դուրյան իր վեհ նկարագրովը կերևա հոն, ինչպես իր բոլոր գրվածքներուն մեջ։ Իր ազնվությունն է պատճառ, որ չուզեր պատմել գձձություն մը, որուն կներե իսկ «ավետարանական անհիշաչարությամբ»։

Որպեսզի ընթերցողներս որոշ գիտնան, թե ի՞նչ կնշանակե այդ փակագիծը՝ «հին արկածներե մնացած ատելության կրակովը բորբոքած», պետք է հիշեմ հոս դեպք մը, որ սկզբնապատճառն եղած ըլլալու է Դուրյանի հանդեպ թատերապետին ունեցած հակակրության։ Դպրոցը եղած ատեն Պետրոս չարաճճի գաղափար մը կհղանա, այն է Վարդովյանի ծաղրանկարը գծել և անոր ճամբուն երկայնքը, փողոցը պատերուն վրա փակցնել։ Իր գաղափարը կհայտնե ընկերներուն, որոնք շատ զվարճալի կգտնեն այդ գաղափարը և կմղեն զինքը, որ գործադրե զայն։ Պետրոս, որ նկարելու բավական հարմարություն ուներ, երեք-չորս թուղթի վրա

* Սրապիոն Հեքիմյան, հայ թատրոնի հիմնարկության շրջանին, երիտասարդներ կժողվե, դերեր կբաժնե և կսկսի սորվեցնել. երբ Վարդովյան ալ դեր մը կուզե, «Դուն,— կըսե,— հատալի դեր միայն կրնաս կատարել»։

Վարդովյանի ծաղրանկարը կշինե իր շպարարի հագուստներով, խոշոր գեղդիր մը ձեռքը (Վարդովյան դերասանությենե առաջ շպարար-սրվաճի եղած է) հետո՝ գիշերանց քանի մը ընկերներու հետ, լապտեր մը ձեռքն առած, կտանի ատոնք փակցնել պատերուն վրա այն փողոցներուն, որոնցմե Վարդովյան ամենեն հաճախ կանցներ։ Դժվար չէ գուշակել թե ծանոթ թատերապետը ինչքա՜ն ախորժած ըլլալու էր այս կատակեն։

Բայց կատակներու շրջանը անցած էր հիմա։ Ամեն կողմե լքված, աղքատությենեն ընկճված, կրած հոգնություններեն առողջությունը քայքայված, Դուրյան արդեն մտած էր հիվանդի դառն վիճակին մեջ։ Աղքատությունը, որ առաջին օրեն իր կյանքին որդը եղած էր, այդ վերջին տարիներուն զինք խեղդելու աստիճան ծանրացավ իր վրա։ Բանաստեղծը իր պերճ երևակայության թևատվիլն և իր հրավառ իղձերուն թոշնիլն զգաց թշվառության ճնշումին տակ։ Իր թախծագին երաղանքի ժամերուն մեջ, ան հաճախ խորհած է, թե լավագույն կյանքով մը ինչքա՜ն ավելի ինք կարող եղած պիտի ըլլար իր տաղանդը մշակել, ինչքա՜ն ավելի մեծ ու գեղեցիկ գործեր արտադրել, ու չքավորության մեջ իր կարողությանց աստիճանական փտումը օրեօր հաստատելը մահու չափ տխրեցուցած է զինքը։ Իր տաղերուն, իր նամակներուն, իր թատերգությանց (մասնավորապես Թատրոնին) մեջ, հաճախ կխոսի աղքատության չարիքին վրա, և ինչքա՜ն խոր կսկիծի, դառնության և ընդվզման շեշտով մը։

Խորեն Նարպեյ սրբազանին ուղղած իր նամակին մեջ՝ կգրե.

«Ի՜նչ, ի՜նչ հանճարներ հյուղին այն քառասային սերմին վրա խամրեցան կամ մարեցան։ Հասարակաց գերեզմաններու մեջ հողակույտեր կան, որոնք հրաբուխներ պիտի ըլլային. բայց կայծը սրտի թանձր խավարին մեջ առանց երբեք հրահրելու թաղված է... հանճարը վհին մեջ գանկ մը եղավ՝ առանց մարդկության եթերին մեջ գիսավոր մը ըլլալու»։

Նույն ցավագին շեշտը կհնչե իր գեղեցկագույն տաղերեն մեկուն սա տողերուն մեջ՝

Հագնի՛լ հյուղին մոր-անունը,
Ոչ ծնի՛լ նորա մորուր-օդն հար,
Մինչ ցավիլը միանգամայն.

Այդ սեռեյալ մտածումը — թշվառության ցուրտ ու մութ ոլորտին մեջ կյանքը քաշկոտելու դատապարտված ըլլալու մորմոքեցուցիչ մտածումը, աղքատության հետևանք եղող զրկանքները, քիչ մը ստակ ձեռք բերելու համար կրած հոգնություններն ու նեղությունները, դերասանության շրջանին իր վարած անառողջապահիկ ու տաժանելի կյանքը, իր մտավոր մշտական ու արագ աշխատությունը (տասնեն ավելի թատեր-

գությունն երեք տարվան մեջ գրված, թարգմանություններեն զատ), մաշեցուցին իր առողջությունը և ծնուցին ու սնուցին իր մեջ այն ահավոր հիվանդությունը, որ զինքը հալեցուց ու սպառեց։ «Եթե,— ըսավ ինծի Տիգրան Գալեմճյան,— այդ տղան աղքատ չըլլար ու դերասանության տաժանքին չենթարկվեր, այդպիսի վաղաժամ մահ չէր ունենար»։

1871 տարվան սկիզբներն է, որ թոքախտի հազը կսկսի Դուրյանի կուրծքը սկրդել. բանաստեղծը ամբողջ տարի մը կքաշկռտե իր հիվանդությունը, մինչև 1872 հունվարի 20-ի գիշերը, ուր կմեռնի։

Գ

ԻՐ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՀՈԳԻՆ

Դուրյանի հիվանդության ու մահվան աղեխարշ մանրամասնություններուն գալե առաջ պետք է դեռ խոսիմ անոր կյանքին վրա, որ եղավ կարճ ու տառապագին, այլև իսկատիպ ու եղական և պետք է ցույց տամ իր նկարագրին ամեն կողմերը և ամբողջացնեմ գծագրումը այդ մեծ ու մաքուր հոգվույն պատկերին։

Պետրոս Դուրյան այն պարզ հոգիներեն էր, որոնց հատակը մեկ ակնարկով կտեսնվի, առանց մանվածի, առանց թաքուն խորշերու, մերկ՝ իր բարության, ազնվության ու միամտության մեջ։ Միակ խառնուրդը զոր կնկատենք իր մեջ, հազվադեպ զուգորդությունն է զվարթության և թախծության, զուգորդություն, որ այնքան բնականորեն ի հայտ եկած է, որքան հազվադեպ է իբր երևույթ, և որ տևած է մինչև թախծության միահեծան տիրապետումը։ Բնությունը զվարթությունը տված էր իրեն, կյանքը թախծությունը տվավ։ Իր գեղեցկությամբ, իր առողջ ու բարեձև կազմվածքով, իր հմայիչ տաղանդով, իր զվարթ և աշխույժ բնավորությամբ, այդ երիտասարդը, ուրիշ միջավայրի մը և ուրիշ պայմաններու մեջ փայլուն արվեստագետ մը պիտի ըլլար, վայելուչ, հրապուրիչ, ամենուն համակրության տիրացած, կիներեն սիրված, ամենքեն գնահատված, երջանիկ։ Այնպես պատահեցավ, որ աղքատ տնակի մը մեջ ծնավ ան, ողորմելի կյանք մը ունեցավ, և այդ հեղձուցիչ մթնոլորտին մեջ կամացկամաց թառամիլն ու չորնալն զգաց իր մտքին ու նկարագրին շենշող ու պայծառ գիծերուն։ Իրավ է, թե ինչ որ իր կյանքը կորսնցուց, իր բանաստեղծական գործը շահեցավ այդ աղքատության մեջ. տառապանքը իր զգացումներուն խորություն տվավ, իր մտածումներուն՝ սաստկություն, իր բացատրությանց՝ կորով։ Առանց տառապանքի բանաստեղծ մը

չի կրնար զգացման խորություն ունենալ։ Հեշտին կյանքը մտավոր կարողությունները կզարգացնե, բայց զգացումները կբթացնե՝ չափազանց փայփայելով ու գոհացնելով զանոնք։ Դյուրակեցիկ արվեստագետները մտածումով հասուն, ձևով կատարյալ գործեր կարտադրեն, բայց հաճախ ցուրտ։ Արցունքոտ ու սարսռուն գործերու ծնունդ կուտան անոնք միայն, որ իրենք ալ լացած ու սարսռացած են։ Եվ արցունքներուն ամենեն դառնը չքավորության արցունքն է, ինչպես անօթության սարսուռը ամենեն սուրը սարսուռներուն։ Դուրյան իր աղքատության ու բնածին երկչոտության պատճառով աշխարհի մեջ չմտավ, ընկերութենե հեռու մնաց, մենիկ, անշուք, անհամ կյանքով մը ապրեցավ և անհուն տրտմությունն ունեցավ հեռուեն դիտելու կյանքի մեծ խնջույքին լույսերը։ Իր երազներուն մեջ կղղիացած, թերևս նախանձի աչքերով տեսավ ուրիշներուն շոշափելի երջանկությունը, ու թերևս ունեցավ վհատության վայրկյաններ, որոնց մեջ տաղանդին արժեքին վրա տարակուսեցավ ու սալոնի մարդ մը եղած չըլլալուն ցավեցավ։

Պետրոս Դուրյան միշտ տղա մնացած է՝ մեծ հոգիներուն հատուկ այն միամտությամբ, որ անհրաժեշտ է ճշմարիտ բանաստեղծներուն։ Տղոց պես սիրած է—իր հիվանդանալեն առաջ—կատակն ու ծիծաղը։ Իր կատակելու սերը առջի ատենները այնչափ զորավոր եղած է իր մեջ, որ եթե աղքատությունը չըլլար, թերևս Դուրյան երգիծական գործեր ալ արտադրեր։ Ըսի, թե դպրոցին մեջ իր կարգին ամենեն զվարթն էր և չարաճճիություններեն մեկ քանին հիշեցի։ Ահավասիկ ուրիշներ ալ։

Պետրոսի ընկերներեն բժշկական ուսանող մը աղջկան մը սիրահարված է եղեր։ Պետրոս իր մյուս ընկերները զվարճացնելու համար այդ սիրահարին բերնեն ֆրանսերեն նամակներ կգրե աղջկանը ուղղված, շարադրության և ուղղագրության սխալներով դիտմամբ լեցնելով զանոնք, և կկարդա իր բարեկամներուն։ Եղիշե վարդապետ Դուրյան կհիշե նամակ մը որուն մեջ Պետրոս իրենց տան դրացի քանի մը աղջիկներու վրա սիրուն զվարճաբանություններ ըրած է։ Տիգրան Ադամյան ունի Դուրյանի մեկ նամակը, որ՝ մեջտեղեն երկուքի ծալելով, կեսը ուրիշ իմաստ կուտա, խեղկատակ ու ծիծաղաշարժ իմաստ մը։ Ճանֆեսճյան կհիշե զավեշտական ոտանավոր մը, զոր Դուրյան գրած էր Յուսկյուտարի տերտերներուն վրա և որ դժբախտաբար կորսված է։ Նույնիսկ իր գրական գործերուն մեջ կան հատվածներ,— սակավաթիվ,— ուր բանաստեղծին երգիծական լարը բոպե մը կհնչե, ինչպես Թատրոնին առաջին արարվածի քանի մը տեսարանները։

Կատակելուն չափ, և անշուշտ շատ ավելի, Դուրյան սիրած է երգերը։ Փայլուն ձայն մը ուներ ու հաճելի կերպով կերգեր հայերեն, ֆրանսե-

բեն ու թուրքերեն երգեր։ Դպրոցը եղած ատեն, ամենեն սիրված «ձայնավոր»ներեն մեկն էր, և ամենքը կհավաստեն, թե շատ քաղցրությամբ կերգեր մեր մելամաղձիկ շարականները։ Իր տունը, հաճախ, հյուր ունեցած ատեննին մանավանդ, Դուրյան շարականներ կամ թրքական երգեր կերգեր։ Այս վերջիններն ալ ան սիրած ըլլալու է իրենց սիրաթաթավ տրտմության և թախծագին անուշության համար։

Այնչափ լավ կերգեր, որ իրենց տան վերի հարկը բնակող եվրոպացի վարձակալ մը, գիշեր մը, զմայլած վար կուգա և, չհամարձակվելով ներս մտնել, դուրսեն մտիկ կընե՝ երկրորդ օրը խնդրելով, որ ուրիշ անգամ իրեն ալ թույլատրեն անոր երգած ատեն գալ մտիկ ընել։

Պետք էր լսել այդ համակ քնարերգություն պատանին՝ երբ կերգեր։ Կերևակայեմ այն շեշտը, փափկությունը, հուզումը, քաղցրությունը, զոր կդներ իր երգվածքին մեջ։ Երաժշտական արվեստին անտեղյակ ըլլալով, եվրոպական երաժշտության քիչ ծանոթություն ունենալով հանդերձ, Դուրյան հոգին կզգար երաժշտության, ինչ որ միմիայն ուսումնասիրությամբ կարելի չէ ստանալ։ Իր ամբողջ կյանքին մեջ պաշտամունք մը ունեցած է երգերու համար, ինչպես կգրե Արմեն Լուսինյանին ուղղած իր մեկ նամակին մեջ.

«Ես աշխարհի մեջ միայն երգերը սիրեցի. կուզեմ որ իմ վերջին շունչս ալ երգ մ'ըլլա... Ո՛վ որ երգ չունի կամ երգել չգիտեր՝ չունի զգացման ներդաշնակության, գեղեցկին ու սիրունին իտեալանը շոշափելու քաղցրությունը... մարդուս էն առաջին ձայնը երգն է... բնությունն ամբողջ երգ մ'է...

Երիտասարդ ըլլալ և երգել
Ծեր ըլլալ և աղոթել»։

Եվ իր տաղերը երգեր են, թռուցիկ, թեթև տողերով, որոնք թեի արագ բախումով մը կսլանան, փափուկ զգացումներով, այերային խոհերով, որոնք խունկի ոլորներու պես կվերանան մեղմօրոր, և բացատրություններով, որոնք նվագածության անուշությունն ունին։

Պետրոս նկարելու ալ հարմարություն ուներ,— բնութենեն առատաձեռնորեն օժտված արվեստագետի հոգնաձիր խառնվածք, որուն ձիրքերը սակայն մեծ մասամբ իրենց նախնական վիճակին մեջ մնացած են։ Իր մորաքրոջը համար մարքայի սիրուն զարդանկար գիրեր կընդելուզեր։ Իր բանաստեղծությանց ինքնագիր տետրակին սկիզբը, խորհրդանշանական պզտիկ պատկերներ գծած է, շատ միամիտ, բայց բավական՝ նկարչության համար իր ունեցած ճաշակը ցուցնելու։ Ուսանողությանը միջոցին, անգամ մը յուակյուտարցի երկու անձերու անունը, մականունը և

տարիին թվականը ծաղկեզարդ շրջանակներու մեջ կգեղագրե և անոնց ղրկելով երկու ոսկի նվեր կստանա։

Պետրոս Դուրյանի նկարագրին գլխավոր հատկանիշներեն մեկն ալ երկչոտությունն էր։ Ընկերության մեջ մտած չըլլալով, իր ընտանիքին ու քանի մը մտերիմ բարեկամներու անձուկ շրջանակին մեջ սահմանափակված անցընելով իր կյանքը, կանացի ամոթխածություն մը և պզտիկ տղու անհամարձակություն մը ստացած էր, զոր պահեց մինչև իր մահը։ Այն անձերը, որ զինքը չէին ճանչցած և որոնք անոր գրվածքները կարդալով կերևակայեին վառվռուն, լեզվանի երիտասարդ մը, հուսախաբ կըլլային՝ երբ իրեն հանդիպելով, կտեսնեին շիկնոտ տղա մը, որ, երբ անծանոթներու ներկայացվեր, աչքերը վեր առնելու կվարաներ ու բերնեն բառ մը հանելու կդժվարանար։ Անգամ մը, Օրթաքյոյ, Եվգինե տուտուին տունը,— գրասեր պառավ մը, որ գրական մարդիկ իր տունը ընդունիլ կսիրեր,— շատ մը աղջիկներ, որոնք քանի մը տաղ կարդացեր էին Դուրյանեն, իմանալով, որ ան հրավիրված էր Եվգինե տուտուին տունը, կփութան գալ հոն, որպեսզի զայն տեսնեն, բայց ապշած կմնան իրենց երևակայած պերճախոս ու փայլուն երիտասարդին տեղ անխոսուկ, խպնոտ տղա մը գտնելով։ Ուրիշ անգամ մը, տիկին Արուսյակ, ծանոթ դերասանուհին, Դուրյանի գրվածքներեն հրապուրվելով, կուզե զայն անձամբ ճանչնալ։ Մ. Պողիկյան կառնե Դուրյանը և Բերա արվեստագետուհիին տունը կտանի։ Այդ տեսակցության մեջ Դուրյան անչափ երեսը կախած, լուռ ու անշարժ կմնա, այնպես կկարմրի՝ պզտիկ բառ մ'ը իսկ արտասանելուն, որ տիկին Արուսյակ կզարմանա, թե ինչպես այդ անճարակ պատանիեն կրնան ելլել ա՜յնքան գեղեցիկ գործեր։ Արմեն Լուսինյան նույն հուսախաբությունը կունենա՝ Սահմանադրության տարեդարձի հանդեսի մը զայն առաջին անգամ տեսնելով, և նույնիսկ այդ մասին դիտողություն կընե իրեն։ Ու ատոր վրա է, որ Դուրյան կգրե իր ամենեն զմայլելի տաղերեն մեկը, Ի՞նչ կըսեն:

Ինծի կըսեն,— կրակոտ չես,
Լճակի մը պես ես մեռած

Որչափ երկչոտ, այնչափ ալ խոնարհ և համեստ էր։ Երբեք իր վրա ամբարտավորություն, ինքնագովություն, հպարտություն տեսնված չէ։ Իր վրա մեծ համարում մը չուներ. իր գրվածքները կնկատեր խանդավառ սրտի մը ճիչերը, թախծագին կյանքի մը զեղումները, առանց խորհելու, թե հայ քնարերգության ամենեն թանկագին էջերեն էին իր տաղերը և թե անոնցմե կսկսեր նոր քերթություն մը մեր մեջ։ Խոր հիացում ուներ Ալիշանի, Պեշիկթաշլյանի և քանի մը ուրիշ ժամանակակից հայ բա-

նաստեղծներու համար։ Իր մտքին մեջ և ոչ իսկ բաղդատության կդներ ինքզինքը անոնց հետ։ Անոնք վարպետներ էին՝ ըստ իրեն, և ինքը աշակերտ մը, փորձող մը։ Կզգար, թե իր հոգին սովորական հոգի մը չէր, միայն թե կկարծեր, որ աղքատությունն ու անմշակությունը իր կարողությունները չքացուցած էին։ Իր նամակներեն մեկուն մեջ ինքզինքը «մանուկ հանճար» կանվանե, ցույց տալով իր ամբողջ անկեղծ միամտության մեջ գաղափարը, զոր ինք իր վրա ուներ։ Այդ երկու բառերուն մեջ, ապահովապես մանուկ բառն է, որ շեշտած է ինքը՝ առանց հանճար բառին տալ ուզելու այն մեծ իմաստը, զոր ան ունի։

Արմեն Լուսինյանին ուղղած իր մեկ նամակին մեջ, որուն հետևյալ շահեկան հատվածը իր թատերգությանց մասին՝ այստեղ կարտատպեմ իր քանի մը տեսակետով շահեկանության համար, նույն բառը կկրկնե.

«Ինե մեկ քանի թատերգություններ կուզեք. բայց ես միայն նոցա ծրագիրներն ունիմ, որոնք անընթեռնելի ըլլալե զատ՝ թղթի կտորվանքներու վրա գրված են։ Մաքուր ըլլալով Վարդ և Շուշան անուն սիրային թատերգության խաղատետրն ունիմ քովս։ Ասի տասն և հինգ տարեկան հասակի սիրո և հանճարի հանդուգն փթթում մ'է. եթե կը հաճիք, սա Ձեզի կրնամ հուղարկել. իսկ մյուս Ձեր մասնավոր խնդրածներուն գալով, անոնցմե մեկ երկուքին համար կըխոստանամ, որ Վարդովյանը տեսնելով քիչ մը միջոցի համար ուզեմ. եթե տալու հաճի, ուրախությամբ Ձեզ կհուղարկեմ. բայց նոքա, ո՜ւր երթալնին չգիտցող փոթորիկներ են։

Եղբա՜յր իմ, ինչ պիտի ընեք զանոնք, Ձեր գրության ձևը ոչ հետաքրքրության մեջ ձգեց. պետք է որ առանց ատեն կորսնցնելու հետաքրքրությունը հագեցնեք. ինձ մի քանի զվարճալի վայրկյաններ պիտի հավելուք. ուրեմն պիտի աշխատիմ զանոնք Ձեր հուղարկելու ջանալ»։

Անշուք կյանքի մը դատապարտված, գնահատման ծարավն ունեցող, իր արժեքն զգացող, բայց անոր ամբողջ մեծությունը տեսնել չկրցող, կամ չհամարձակող բանաստեղծի մը նամակն է աս, որ հրճվառիթ անակընկալ մը կհամարի իր թատերգությանց մասին գրական եղբայրակցի մը ցույց տված շահագրգռությունը։ Ու հանճար բառին այդտեղ ալ կըրկնված ըլլալը չի հակասեր իր նկարագրին մեջ տիրող համեստության, ամչկոտության, երկչոտության գծին։ Հանճար ըսելով ինք բանաստեղծական ավյուն, հոգիի կրակ կհասկնար հավանորեն, և ոչ թե մտավոր բարձր կարողություն, որովհետև ուրիշ նամակի մեջ կգրե, գերագույն համեստությամբ մը՝ «բանաստեղծ չեմ, բայց բանաստեղծությունը կսիրեմ»։ Ուրիշ տեղ մըն ալ՝ «Հիրավի բռնի թատերագիր կամ բանաստեղծ ըլլալ կուզեմ,— տենչ մը, որ աղքատիկ հյուղի մը անկյունը քաղցի և ցուրտի սև վերմակներուն տակ վերջապես ակամա կմարի»։

Այնչափ կտարակուսեր իր գործերուն արժանիքին վրա, որ կփափաքեր հրապարակին վրա հանրածանոթ դարձած վարպետներեն մեկուն կարծիքն ունենալ անոնց մասին, մանավանդ Պեշիկթաշլյանինը. բայց չկրնալով իր ամչկոտությունը զսպել, երբեք չէր համարձակած իր գրվածքներեն մեկը ձեռքով տանել մեծանուն բանաստեղծին ցուցնել։ Վերջապես, օր մը Տիգրան Ադամյանի հետ կերթա կգտնե Պեշիկթաշլյանը, որ այդ միջոցին Յուսկյուտար Գրիգոր Օտյանի տունը հյուր էր, կներկայանա անոր, գրեթե դողդողալով, և կհանձնե անոր իր Սև հողեր թատերգությունը, խնդրելով որ հաճի իր կարծիքը հայտնել. Պեշիկթաշլյան քանի մը օր հետո ետ կդարձնե ձեռագիրը, ըսելով, թե բավական լավ է և թե այդ գործին հեղինակը փայլուն ապագա կխոստանա։ Պեշիկթաշլյան ուրիշ կերպ ալ չէր կրնար խոսիլ, քանի որ Դուրյան սխալը գործած էր իր թատերգություններեն մեկը—և ամենեն թույլը անոր ներկայացնելու, փոխանակ անոր տանելու իր տաղերուն լավագույններեն մեկ քանին, որոնց մեջ Պեշիկթաշլյան անշուշտ պիտի գտներ ոչ թե «փայլուն ապագա», այլ զմայլելի ներկա մը։

Բնական էր, սակայն, որ Դուրյան իր վրա այդքան համեստ գաղափար մը կազմեր, որովհետև գրական լուրջ քննադատություն մը մեր մեջ գոյություն չունենալով այդ շրջանին, իր գրվածքները, չգնահատված ու մեծ մասամբ արդեն անտիպ մնացած, անծանոթ էին հասարակության ստվար զանգվածին։ Բացի քանի մը բարեկամներե և քանի մըն ալ գրասեր անձերե, քիչեր կարդացած էին իր տաղերը, և կարդացողներեն շատերն ալ անոնց արժեքին որոշ գիտակցությունը չունեին։ Քերթողին մահեն իսկ հետո՝ այդ բարեկամները անոր վրա իրենց գրածներուն մեջ միշտ վերապահությամբ խոսած են, վախնալով շատ խոշոր բառեր գործածելու, գովեստ մը հետո անմիջապես քշելով անոր անուս ըլլալը։ Դուրյան ավելի ծանոթ էր (ան ալ գրեթե միայն Յուսկյուտարի մեջ) իր թատերգություններով, որոնք իր անունը ժողովրդական դարձուցած էին Պոլսո այդ արվարձանին մեջ և քիչ մըն ալ անկից դուրս։ Թատրոնի մեջ է, որ ան ունեցած է իր փառքի հազվադեպ վայրկյանները. քանի մը անգամ, իր խաղերուն ներկայացման ավարտին, զինքը ծափերով բեմ կոչած են, թեև իր անհաղթելի ամչկոտությամբ մեկ անգամ միայն բեմ ելած է։

Մինչդեռ Պեշիկթաշլյան ունեցած է բարոյական ամեն հաջողություն «վարպետ»ի անունով լուսապսակված իր խաղերուն ներկայացմանց մեջ (որոնք տեղի ունեցած են Պոլսո ամեն կողմը և Պոլսեն դուրս), հաճախ բուռն ծափերով ի տես կոչված, իր տաղերեն շատերուն ժողովրդական երգի փոխվիլը տեսած է, մինչդեռ ան, ամենքեն հարգված ու հիացված, բոլոր «մեծ»երուն տունը գրկաբաց ընդունված ու մեծարված մինչև մա-

հը, ու մանավանդ մահվանը մոտ գուրգուրանքով ու ակնածալից հոգածությամբ պաշարված է,— և լիովին արդար է, որ այդպես ըլլար։ Դուրյան գրեթե միմիայն իր արվարձանին մեջ, ուր ծնավ ու ապրեցավ, վայելած է ջերմ, բայց սահմանափակ համակրություն մը և համեստ համբավ մը, ինչ որ անարդար էր, վասնզի Պետրոս Դուրյան իր ժամանակի մեր ամենեն ինքնատիպ և ամենեն հուզիչ քնարերգակն էր։

Դուրյանի մեծագույն ցավերեն մեկը եղած է իր գրածներուն հրատարակվիլը չտեսնելը։ Քանի՞ քանի՞ անգամ բերանացի ու գրավոր կրկնած է այդ տենչը։ Արմեն Լուսինյանին ուղղված նամակի մը մեջ կգրե. «Մեկ քանի պատառ թուղթերու վրա արցունքոտ տողեր դրեր եմ. անշուշտ բարեկամքս զանոնք պիտի պատվեն և անոնց արև պիտի տեսցնեն»։ Շատերու դիմում ըրած է խնդրելով, որ հրատարակեն իր քերթվածները, գրեթե միշտ չհաջողելով։ Միայն Պարոնյան այդ քերթվածներեն քանի մը հատ հաճած է հրատարակել իր Թատրոնին մեջ։ Անգամ մը Խորեն Նարպեյ սրբազանի դիմած է նույն խնդրանքն ընելով, բայց այդտեղ ալ իր հույսն ի դերև է ելած։ Կերևա, թե ատեն մը հույս ունեցեր է իր Թատրոն կամ թշվառները տպելու, ինչպես կտեսնվի անոր հառաջաբանեն, բայց չէ հաջողած, և այդ թատերախաղը հեղինակին կենդանությանը ոչ միայն չէ հրատարակված, այլ, հակառակ զայն բեմ հանելու իր ջերմ բաղձանքին, չէ իսկ ներկայացված։

Իր գործերը հրատարակված տեսնելու փափաքը հիվանդությանը միջոցին՝ ավելի սաստկացած, սևեռյալ գաղափար մը դարձած էր։ Ամեն առիթով իր բարեկամներուն կկրկներ իր այդ իղձը։ Եվ օր մը հորն ալ կըսե՝ «Հայրի՛կ, թե որ փարա ունեցող ըլլայիր և գործերս քերականի պես տպագրեինք, ստակ կշահեիր»։ Խեղճ ծերունին, որ շատ բարի անձ մը եղած է, հին գլխով, բայց ազնիվ սրտով, անուս, բայց բավական ուսումնասեր (անգամ մը յոթանասուն դրուշ, ամբողջ հարստություն մը, կուտա իր զավկին բառարան մը գնելու համար), գինեմոլ, բայց ընտանեսեր, գլուխը կծռե տղուն այս խոսքին, «իբր թե,— ինչպես կգրե Եղիշե վարդապետ Դուրյան՝ նամակի մը մեջ,— ամոթ մը կամ պատասխանատվություն կը զգար աղքատ ըլլալու համար»։

Բնական է, որ այս պայմաններուն մեջ մարդ ստիպվի համեստ ըլլալու, իր վրա պզտիկ գաղափար մը կազմելու, բան մը, որ միշտ օգտակար չէ, որ մինչև իսկ վնասակար է ընդարձակ տաղանդներու ամբողջական փթթումին, որովհետև գովեստը կարողությունները կսնուցանե և հպարտությունը մեծության զգացում մը և դեպի մեծություն ձգտում մը։

Դուրյանի համեստության հավասար եղած է իր հեզությունը։ Փափուկ ու մեղմ բնավորությամբ, ամենուն վրա տարածելով անհուն գուրգուրանք մը, չճանչնալով բարկությունն ու ոխը, այդ երիտասարդը երևույթի մը տպավորությունը թողած է իր ծանոթներուն վրա, կարճառև ու գերբնական երևույթ մը։

Ահավասի՛կ իր հեզությունն ու ներողամտությունն ապացուցանող միջադեպ մը, զոր Եղիշե վարդապետ Դուրյան կպատմե նամակի մը մեջ. «...Ինքն շատ համբույր բնավորություն մ'ուներ. անգամ մը աշխարհագրական քարտեզ մը պատրաստած էր,— գեղարվեստի մասներ ուներ,— դեռ վերջին ձեռքն չէր դրած յայն, ծովամիջի կոհակատիպ գծերն կը մնային. հետաքրքրությամբ մոտեցա, գրիչն առի՝ լրացնելու նպատակով։ Բերին և քանի մը անշնորհ գիծեր ձգբռատեցի. ամբողջ աշխատությունն հարկավ ի դերև ելավ. երևակայե՛, թե որչա՞փ զայրույթ կրնար զգալ այն պահուն, բայց երբեք ձեռք չվերցուց յիս»։ Իր այս անուշ բնավորության համար զինքը շատ կսիրեին։ Ու պզտիկ շրջանակի մը մեջ գորով և հիացում չէր պակսեր Դուրյանին։ Յուսկյուտարի երիտասարդությունը, ձեռքե ձեռք կարդալով Պետրոսին տաղերը և մանավանդ անոր թատերգությանց ներկայացումը տեսնելով, կսիրեր իր բանաստեղծը և կհպարտանար անով, ինչպես շքեղորեն ցույց տվավ անոր թաղման օրը։ Նույնիսկ փողոցի տղեկները կճանչնային Դուրյանը և կհարգեին զայն։ Երբ բանաստեղծը կանցներ իրենց տան փողոցեն, փոքրիկ բզեզները պահ մը կդադրեցնեին իրենց կուկուճի կամ ատրմի խաղերը ըսելով իրարու. «նայե՛, ծ՛ո, նայե՛, Դուրյա՛նն է»։ Ու Դուրյան քայլերը կ'երագիր կարմըրելով, աչքերը վար առած։

Դ

ԴՈՒՐՅԱՆԻ ՏԱՐՓԱՆՔՆԵՐԸ

Դուրյանի կյանքին ամենեն մութ մնացած մասը իր տարփանքներուն պատմությունն է։ Կա՛մ այն է, որ ան երբեք որոշ կին մը չէ սիրած և իր գորովն ու պաշտումը ամբողջ կին-էակին վրա տարածած է կա՛մ այն է, որ իրեն հատուկ ծայրահեղ ամչկոտությամբ իր սրտին գաղտնիքները ծածկած է նույնիսկ իր ընկերներեն։ Ըստ Մ. Պողիկյանի, Դուրյանի սերերը պղատոնական զգացումներ եղած են, անորոշ իղձեր, ստվերի մեջ ծնած ու մեռած՝ առանց արև տեսնելու։ Ճանֆեսճյան, որ մինչև մահը ամեն օրվան ընկերն եղած է բանաստեղծին, ոևէ աղջկան անուն չի հիշեր, որուն ան նախասիրություն ցուցուցած ըլլա, ոևէ էակ չի գտեր՝ որուն վրա գրած ըլլա իր սիրերգները։ Նույնը կըսե նաև Տիգրան Ադամ-

յան։ Հուսահատեցուցիչ չէ՞ ասիկա անոնց համար, որ կուզեին անունը գիտնալ այն երջանիկ էակին, որ ծնունդ տված է այդ արցունք-տաղերուն, ճանչնալ էլվիրը մեր բանաստեղծին։ Ի՞նչ, ուրեմն այն ջերմագին բանաստեղծությունները, որոնց մեջ զգացման այնքա՜ն ճշմարիտ ու խոր շեշտ մը կհնչէ, որոնք կսարսռան տարփանքի և տանջանքի այնքա՜ն անկեղծ սարսուռով մը, այդ ամենքը օդի մեջ ճիչե՞ր են, և այդ տրտում երգերը, որ այնքա՜ն ընթերցողներ ու ընթերցողուհիներ լացուցած են, արցունք չե՞ն խլած հեղինակեն։ Երբ ընթերցողներն իսկ, զանոնք կարդացած ատեն, պաշտված դեմք մը կտեսնեն աչքերնուն առջև, ինք հեղինակը զանոնք երկնած միջոցին մեկուն չէ՞ խորհած։ Դժվար է ասոր հավատալ։ Կըմբռնեմ, որ այդ երկչոտ պատանին, որ օրիորդի մը երեսը նայած ատեն կկարմրեր, սիրո հայտարարության մը հանդգնությունն ունեցած չըլլա երբեք, համարձակ չըլլա դարպաս ընել աղջկան մը, հարաբերություններ, ժամադրություններ ունեցած չըլլա, նույնիսկ սիրահարական նամակ մը գրած չըլլա. բայց թե բնա՞վ սիրած չըլլա, ատ անկարելի է։ Կրավե կարդալ Ներա հետը, Սև՞, սև՞ը, Հծծյունքը, Ձնե պաշտեմը, ինչպես և Վարդ և Շուշանի առաջին արարվածի Դ ու Զ տեսարանները համոզվելու համար, թե այդ հրեղեն էջերը միմիայն երևակայությամբ չէին կրնար գրվիլ։ Դեթ երազ մը, ապրված երազ մը, իր սրտին մեջ թաքուն՝ պարտեր այրել զայն։ Արդեն իր տաղերեն կարելի չէ հետևեցնել, թե Դուրյանի աղջիկ մը նյութականորեն սիրած ըլլա. իր սիրերգները պաշտումի խունկի մը անուշահոտ ճենճերումներն են հեռավոր սիրելուհիի մը առջև, հուսահատ երկրպագության ու երկչոտ երազի թոթովումներ։ Եվ եթե իր կյանքին, իր նկարագրին, իր քերթվածներուն ուսումնասիրությունեն օգտվելով, ուզենք վերակազմել կնոջ վրա իր ունեցած գաղափարը, ահավասիկ ինչ որ կգտնենք մոտավորապես. կինը, իրեն համար, ինչպես արդեն ռոմանթիկ բանաստեղծներուն մեծ մասին համար, գերաղանց, գրեթե գերբնական էակ մըն է, տեսակ մը հրեշտակ-ծաղիկ, որուն առջև պետք է երկրպագել, տեսակ մը աստվածություն, զոր պետք է պաշտել, իսկությունն իսկ կյանքին։ Միշտ դուրսեն, միշտ հեռվեն տեսնելով կինը, անոր արտաքին ճաճանչումեն շլացած, չէ թափանցած անոր հոգվույն ու չէ տեսած ինչ որ կա մերթ մութ ու զազիր այդ «էակ-փունջ»ին մեջ։ Չէ՞, ինքը զմայլանքի աչքերով ու կույր հավատքի միամտությամբ, ինչպես բոլոր ճշմարիտ հավատացյալները, տիրած է այդ այնչա՜փ փափուկ արարածները, որոնց գեղեցկությունը զինք կտառապեցներ. դիտած է զանոնք, ինչպես մարդ արշալույսը կդիտե կամ լուսինը ծովուն վրա հիացումով ու հափշտակությամբ, և այն սերը, որով զանոնք սիրած է, այնչափ մաքուր, այնչափ թափանցիկ,

այնչափ այերային եղած է, որչափ այն ճերմակ ամպերը, որոնց շուշան-փոշիին մեջեն աստղերը կերևան իրենց ամբողջ պայծառությամբ։ Միշտ ծանրադիր, աչքը լեցված անոնց մարմնույն գեղեցիկ ձևերովն ու անոնց միսին թարմ գույներովը, հոգին թրթռալով այն լկիչ ու քաղցր սարսուռովը, որ անոնց մազերեն, աչքերեն ու լանջքեն կհոսի, իր ամբողջ էությունը պարուրված զգալով մոգության ցանցովը, որով կնոջ մը տեսքը ամբողջ կյանք մը կկապկպե, Դուրյան լսելի ըրած է արտահայտելու համար իր զգացումները, զոր պահել այլևս անհանդուրժելի տանջանք մը պիտի ըլլար՝ միանգամայն ամենեն տարտամ ու ամենեն կենսալից երգերը, որոնք լսված են մեր մեջ։ Իր սիրային տաղերը ստրուկի իղձեր են առ անմատչելի Դշխոն, հավատացյալի իղձեր առ Ամենակալը, աննման ծաղկի իղձեր առ Արևը։ Աղաչանքի ամենասրտաշարժ շեշտով մը, բանաստեղծը ամեն վայրկյան ճակատը հողին կքսե այդ կուռքին առջև, ու կուլա, և իր արցունքները լավա են ու մեղր են։

Իր տաղերեն, Ներա հետը կգտնենք միայն, որուն մեջ համբույրի խոսք կա.

> Համբույր մ'առի ներանե,
> Համբույր մ'անհուն գորովի,

Մյուս բոլոր քերթվածներուն մեջ սերը իր աննյութական տոչորումի նկարագիրը կպահե՝ առանց երբեք մսեղեն տանջանքի ձևն առնելու։ Եվ Ներա հետի այդ տողերն ալ երևակայական են, որովհետև իր ուրիշ շատ մը էջերուն մեջ որոշապես հակառակն ըսած է բանաստեղծը։ Ահավասիկ հատված մը մահվանը մոտ իր գրած մեկ նամակեն.

«Մեռնի՞լ թարմ և երազուտ, մեռնի՞լ առանց մարմարյա ճակտի վրա խորշոմ մը ձգելու, առանց շուրթեր համբույրով մը բորբոքելու, առանց հոգին ժպիտով մը հրդեհելու...»։

Նույն գաղափարը անուղղակի կերպով կրկնած է Իմ ցավը տաղին մեջ։

> Ջերմ համբույրով մը դեռ չայրած՝
> Սա ցուրտ ճակատս դալկահար՝
> Հանգչեցունել հողե բարձին.
> Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար։

> Դեռ չըգրկած էակ-փունջ մը
> Ժըպտե, գեղե, հուրե շաղյալ,
> Գրկել սա ցուրտ հողակոյտը.
> Ո՜հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար,

Ու Տրուանջքին մեջ իր աղեկեղ ճիշն ալ նույն կարոտագին կսկիծը կմատնե՝

Ի՞նչ երազե վերջ գըրկել ցուրտ շիրի՞մ...

Երա՜զ... իր բոլոր սերերը երազ են եղած։ Բայց երազը իսկությունն իսկ է սիրո, անոր անշոշափելի, բայց ոչ նվազ գոյացական ոգին. և երազողը տարբեր կերպով կսիրե, սիրով մը այնչափ ավելի սաստիկ ու տառապագին, որքան ավելի թաքուն է և տարտամ։ Բայց թե այդ սիրույն վրա բառ մը արտասանած չըլլա իր մտերմագույն բարեկամներուն, ինք որ սրտազեղումի բնավորություն մը ունեցած է, ասիկա զարմանալի կթվի ինծի։ Իր նամակներուն մեջ ոևէ աղջկան մը անուն չենք գտներ, ոչ ալ ոևէ ակնարկություն սիրային դեպքի մը. և իր նամակներեն շատերը գրած է հեռու տեղ գտնվող բարեկամներու, որոնց անշուշտ պիտի խորհրդապահաբար հաղորդեր իր սիրային արկածները՝ եթե ունեցած «ըլլար»։ Միայն մեկ նամակի մեջ, որ ուղղված է Արմեն Լուսինյանին, կա տող մը, մեկ հատիկ, ուր կնոջ մը վրա կխոսի, բայց ան ալ շատ անորոշ է.

«Ներա հետ ի՞նչ ունեցաք մինչև հիմա. կաղաչեմ, տեղեկություն»։

Ատ Նեն Լուսինյանի սիրած մեկ աղջիկն ըլլալ կթվի։ Եվ ատիկա մթության վրա մթություն մըն ալ կավելցնե։

Նմանապես, իր քերթվածներուն մեջ միակ անգամ մը աղջկան մը անունը հիշված կա,

Ես կըպաշտեմ զիմ Պիստոս.

Բայց այդ անունը վավերական չէ. Դուրյանի ձեռագրին մեջ Պ. սկզբնատառը կա միայն, իսառոսը վերջեն ավելցված է՝ ուրիշի մը, չի գիտցվեր որո՛ւ ձեռքով։

Այս անորոշությանց հետ, կան նաև քանի մը հակասական և անփաստացի պատմություններ, զոր կուզեմ հիշատակել հոս՝ հետաքրքրության համար, առանց որ ատոնցմե կարելի ըլլա եզրակացություն մը հանել։

Դուրյանի բարեկամներեն մին, տոք. Սարգիս Ֆինճանճյան, որ Պուլկարիա կգտնվի և որմե խնդրած էի տեղեկություններ տալ բանաստեղծին կյանքին վրա, ինծի ուղղեց հետևյալ լակոնական պատասխանը.

«Իբր կենսագիր Պետրոս Դուրյանի, գուցե ավելորդ չըլլա Ձեզ հայտնել թե Պ. Դուրյան կսիրեր Ս... անուն օրիորդ մը, որ այժմ ամուսնացած և մեռած է. յուր ոտանավորներուն մեջ շատ տեղ անոր ակնարկություններ ունի. այս սերը բանաստեղծական և փտեական էր միայն, և աղջիկը տեղեկություն իսկ չուներ, որչափ որ կկարծեմ գիտնալ, թե այս մեծ բանաստեղծեն կսիրվի»։

Ասիկա հստակ է, բայց շատ անբավական։ Կրնա ճիշտ ըլլալ, որովհետև Դուրյանի տաղերուն կհարմարի թաքուն մնացած ու չփոխանակված սեր մը։ Բայց մանրամասնությանց կատարյալ երաժշտություն մը կպաշարե այդ Ս... սկզբնատառը։ Եվ ահավասիկ հակասությունները. ըստ Արմեն Լուսինյանի ինծի անձնապես տված տեղեկության, այդ աղջիկը կկոչվի Սաթենիկ ու կապրի տակավին։

Իսկ այն պատմությունը, որ ամենեն տարօրինակն է, ամենեն վիպասանականը, ամենեն անվավերն ու անբնականը, հետևյալն է, զոր տոքթոր Կոզմա, Դուրյանի բարեկամներեն կպատմե, որպես թե Դուրյան դպրոցն եղած ատեն սիրահարված ըլլա ծանոթ ընտանիքի մը աղջկան, որ նույն դպրոցին կաշակերտեր, սիրված ըլլա անկից, անոր հետ ժամադրություններ ունեցած ու նամակներ փոխանակած ըլլա։ Դպրոցեն ելլելեն ետքը, այդ սերը կշարունակե վառ մնալ Դուրյանի սրտին մեջ և այն աստիճան կսաստկանա, որ բանաստեղծը կհանդգնի ամուսնության խնդրել աղջիկը։ Մնողքը արհամարհանքով կմերժեն զայն իր աղքատության համար և այնուհետև ամեն տեսակցություն անկարելի կդարձնեն երկու սիրահարներուն միջև։ Աղջիկը սրտին ցավեն կհիվանդանա։ Բժիշկը կպատվիրե, որ թույլ տան Դուրյանին, որ գոնե երբեմն գա զայն տեսնել։ Քանի մը տեսակցություն կունենան։ Բայց աղջիկը տեսնելով, որ Պետրոսը երբեք իրը պիտի չըլլա, չի կրնար իր վիշտին սփոփանք գտնել ու վերջապես կմեռնի իր հիվանդութենեն, ճիշտ այն հիվանդութենեն, որ Դուրյանն ալ պիտի առներ տաներ անոր մահեն վեց ամիս հետո։

Այս չափազանց բանաստեղծական պատմությունը ոևէ ապացույց չունի իրականության։ Կցավիմ, որ տոքթոր Կոզմա, որ Պոլսեն հեռու կըգտնվի, հակառակ իրեն ուղղած քանի մը նամակներուս, չտվավ ինծի լուսաբանություններն ու փաստերը, զոր խնդրեցի։ Մյուս կողմե, Դուրյանի մտերիմ բարեկամները ու մասնավորապես Ճանֆեսճյան, բացարձակապես կհերքեն այդպիսի վիպական պատմության մը գոյությունը։

Այսքան է ինչ որ կրցա հավաքել Պետրոս Դուրյանի սրտի կյանքին վրա։ Չեմ գիտեր, թե ո՞վ պիտի կրնա օր մը լուծել այդ հանելուկը։ Կկարծեմ, թե միակ անձը, որ այդ պատմությունը ճիշտ ու ամբողջ գիտեր, Վարդան Լութֆյանն էր, և ան ալ իր գիտցածեն ոչինչ թողած է դժբախտաբար։

Ե

ԴՈՒՐՅԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ. ԼՈՒԹՖՅԱՆ

Վարդան Լութֆյանի հետ Պետրոս Դուրյանի մտերմությունը սովորական բարեկամության մը չի նմանիր, հոգիի ու մտքի տեսակ մը եղբայրություն է, եզական ու սրտաշարժ։ Իր բոլոր բարեկամներուն համար սեր ուներ Դուրյան, բայց Վարդանը, ինչպես կտեսնվի անոր մահվան վրա ոտանավոր ու արձակ գրածներեն, հոգիի ընկերոջ մը, գրեթե սիրուհիի մը պես կսիրեր։ Ու քանի հառաջացավ կյանքի մեջ, քանի մահվան մոտեցավ, այնքան ավելի սիրեց զայն. ինչո՞ւ, որովհետև ամենեն ավելի անիկա զինքը կհասկնար։ Լութֆյան գրող մըն էր, և Լութֆյան հիվանդ մըն էր։ Հոգի մը, որ նույն խմորեն շինված էր և նույն կաղապարին մեջ թափված։ Հոգի մը, որուն մեջ Դուրյան կրնար իրը հեղուլ։ Եվ արդարև, այդ երկու պատանիները, ամեն օր իրարու հետ՝ դրպրոցական գրասեղաններեն մինչև մահվան դուռը, մեկտեղ ապրելով, մեկտեղ շնչելով, մեկտեղ ղգալով ու խորհելով, մեկտեղ երազելով ու լալով, իրար թափանցած էին։ Վարդան ավելի ուսյալ էր, քան Պետրոսը։ Բժշկական վարժարանի աշակերտ էր, ավելի տեղյակ գիտությանց ու ֆրանսերեն լեզվի։ Շատ ավելի բան կարդացած էր։ Միջադեպ մը բավական է ասիկա ապացուցանելու համար։ Ազգային Սահմանադրության տարեդարձի հանդեսի մը, Դուրյան շատ կհավնի երգի մը հանկերգին և կգովե անոր հեղինակը. Լութֆյան կըսե անոր. «Այդ տողերը ֆրանսացի բանաստեղծե մը փոխ առնված են. ինչո՞ւ ամեն լսածիդ կհավնիս. ֆրանսերեն շատ չես կարդար, որ գիտնաս, թե որչա՜փ բանագողություն կա մեր մեջ»։ Բայց, որովհետև երկուքին կյանքերը իրարու մեջ ձուլված էին, մեկուն գրական ընթերցումները մյուսինն ալ կըլլային և սովոր էին իրենց տպավորություններն իրարու հաղորդելու։ Դուրյան ավելի թափանցող մը եղած է, քան աշխատող մը. ավելի ստեղծող մը, քան փնտռող մը, ավելի գուշակող մը, քան սորվող մը։ Իր սակավաթիվ ընթերցման մեջ տեսած, զգացած, ըմբռնած է այնչափ բան, որչափ ուրիշներ չեն գտած ամբողջ մատենադարանի մը մեջ։ Լութֆյան զուրկ իր ընկերոջ հանճարեն, աշխատող մը եղած է, ուշիմ միտք մը, որ կընդունի։ Թերևս իր գրածները ավելի իմաստալից էին, այլև հավանորեն նվազ ջերմ։ Լութֆյան քերթվածներ, թատերգություններ, նամակներ գրած է, որոնց ամենքն ալ հրդեհի մը մեջ փճացած են։

Պետք էր տեսնել երկու բանաստեղծները, երկուքն ալ բռնված «երկընքի հիվանդությենեն», երբ կերթային թև թևի պտըտիլ նկարագեղ մե-

նությանց մեջ, Ջամլըճայի բարձունքին վրա առանձնացած դիտել Վոսփորը կամ մելամաղձիկ թրքուհիները։ Պետք էր լսել անոնց խոսակցությունները, տրտում խորհրդածություններով լեցուն, սև գաղափարներով սարսռուն, երկու հրդեհներ, որ իրար գրկելով բոցահեղեղի մը ծնունդ կուտային։ Ու հետո, երբ ավելի թանձրացավ թախիծը, պետք էր լսել անոնց կրկին լռությունները, որոնք անխոս բոցերու պես «իրարու մեջ կայրեին»։ Երբ երկուքն ալ գիտցան իրենց ախտին անբուժելիությունը, երբ երկուքն ալ իմացան մահվան դանդաղ, բայց հարատև ոտնաձայնը, որ կմոտենար, այդ բախտակից հոգիները ավելի սերտիվ իրարու փարեցան ու մեկ հոգի կազմեցին։ Դուրյան իր գեղեցկագույն տողերեն մեկ քանին գրած է այդ երկու հոգիով մենության ժամերը երգելու համար.

Ո՜հ, կը հիշե՞ս, Ջամլըճայի
Սարը նստած լուռ մրխայինք,
Ու շուք տային մեզի նոճիք՝
Սև հովանոցք վշտահարի։
. . . . . .
. . . . . .

Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տրտում,
Սև՜ ծրծեինք, սո՜ւզ անհատնում,
Նայեինք միշտ երկրես հեռու։

Բայց Լութֆյան՝ Պետրոսը կանխեց մահվան մեջ։ Ավելի շուտ տկարացավ և ախտեն ավելի շուտ հաղթվեցավ։ Իր ընտանիքը մեծ կոնողություններով եգիպտոս ղրկեց զայն, որպեսզի գոնե դեռ քիչ մը ատեն տևէ կյանքը։ Քանի մը ամիս մնաց հոն, միշտ Դուրյանին վրա խորհելով ու խորհելով նաև, որ երբ երկունքն ալ իրենց աչքը փակեին, այլևս ոչ մեկ տեղ մը, ոչ մեկ ատեն իրար պիտի նորեն տեսնեին, որովհետև Լութֆյան չուներ Դուրյանի խանդավառ հոգին, որ կրնա տարակուսիլ, բողոքել, անիծել, բայց որ չի կրնար ուրանալ։ Լութֆյան անհավատ էր և առանց հաղորդություն առնելու մեռած է։ Ամեն թղթատարով երկու բարեկամները կգրեին իրարու։ Այդ թրթռուն թղթակցությունը, զոր երկու հիվանդները իրարու հետ ունեին, ամենեն ճիշտ ու ամենեն տաք կենսագրությունը պարտ էր պարունակել այդ երկու տառապող հոգիներուն։ Դժբախտություն մըն է, որ այդ բոլոր նամակները հրդեհի մեջ կորած են։

Հիվանդությունը կասստկանա, և Լութֆյանի ծնողքը իրենց զավակը Պոլիս դարձնել կուտան որչափ ատեն որ դեռ կապրի հիվանդը, Դուրյան

անոր քով կանցնե իր օրերը, անոր հետ խոսելով, անոր հետ լալով, երբեմն ալ աչքերն անոր աչքերուն հառած լուռ խոհանքի ժամեր անցնելով, անոր հիվանդ շունչը ծծելով, ինք ալ արդեն հիվանդ՝ ատով իր հիվանդությունն ավելի ծանրացնելով ու, սրտաշարժ մանրամասնություն, անոր ապուրեն ուտելով, «որպեսզի ինք ալ անոր հետ մեռնի»։

1871-ի օգոստոսին է, որ Վարդան կմեռնի, Պետրոսեն վեց ամիս առաջ։

Տխուր՝ ինչպես մարմին մը, որմե խույս տված է հոգին, Դուրյան իր բարեկամին մահվան վրա սրտաճմլիկ էջեր կգրե։

«Փտեցան նորա ոսկերքն հիմա, հարթ և անհայտ եղավ նորա հողակույտը։ Չէի ուզեր հավատալ, թե պիտի մեռնի՝ մինչև այն ժամանակ, երբ իր վերջին նվաղյալ նայվածքներեն մին արձակած ատեն, դեռ ինձ չհասած, երկուքիս մեջտեղ ինկավ մարեցա՜վ, մինչև ա՛յն ատեն, երբ տխուր ձայնը խղճուկ «մնաս բարով»-ի մը մեջ կմարեր։ Ա՜հ, հիշատակներ կան, որոնք իրենց շարունակության մեջ շանթեր են... Սրտիս ծալուցը մեջ միայն մեկ կորովի խորշ մը կրցի պահել իր տխուր դամբանականը արտասանելու համար»։

Այդ դամբանականին մեջ ոչ միայն իր ամենասիրելի բարեկամը ողբացած է, այլև վաղաժամորեն վաճխանած արժեքավոր մտավորականը պանծացուցած է.

«...Այս սգալի հանդիսին մեջ բան մը զիս կզարմացնե. ցավելով կտեսնեմ, որ մեռելաթաղներ բրիչ ի ձեռին անհամբեր կըսպասեն, որ սիրելվույն սև փոսն վայրկյան մ՝ առաջ գոցեն։ Անոնք կըկարծեն, թե այն մարդոցմե մեկը կըթաղեն, որոնց գերեզմանը անդունդ մ՝է, որոնք իրենց հիշատակին վրա կըմեռնին։ Ըսեք իրենց, դուք, որ Վարդանը կըճանչեք, ըսեք, որ ասի այն մարդոցմեն չէ, ասի լուսո զինվոր մ՝է և չը թաղվիր, որչափ ալ ցուրտ հող թափին իր դիակին վրա. ասի տասնեվեներորդ դարու լուսո ճառագայթներեն մին է։

Միթե կթաղվի՞ ճառագայթը...»։

Երբ վեց ամիս հետո, Պետրոս ինքն ալ մեռավ, վերջին վայրկյաններուն իսկ դեռ Լուիֆյանի անունը կհիշեր։ Չեմ գիտեր ինչո՞ւ զանոնք քովե քով չեն թաղած։ Թերևս հողին տակ ալ շարունակեին մեկտեղ մնալ։

Զ.

ԴՈՒՐՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆ

Լուիֆյանեն զատ, Դուրյան ունեցած է իբր գրական բարեկամ Արմեն Լուսինյանը, զոր իր կյանքին վերջին տարիներուն ճանչցած է, որուն հետ երկայն պտույտներ, բանաստեղծական խոսակցություններ և բավական ընդարձակ թղթակցություն մը ունեցած է։ Բայց Լուիֆյանեն հետո իր ամենեն մտերիմ բարեկամը, և այն որ մինչև անոր մահը քովը գտնված է, Հովհաննես Ճանֆեսճյանն է, որուն հետ ևս գացած է հաճախ պտտիլ իր սիրական տեղվանքը, Ջամլըճա, Պաղլարպաշի, Մեհյուրտար։ Անոր է, որ ձոնած է իր ամենեն ողբագին տաղերեն մեկը.

Տխուր կոչնակ մ՝երբ հնչե,
Մտերմիդ մահը հիշե։

Իր սիրած բարեկամներեն մեկն ալ Մարտիրոս Պողիկյանն եղած է, որ նույնպես իր պտույտներուն կընկերակցեր երբեմն, ինչպես և Տիգրան Ադամյան, որ սակայն այդ վերջին տարվան միջոցին անկից հեռու՝ թղթակցությամբ միայն պահած է իր մտերմությունը։

Այս բարեկամներեն մեկուն հետ կամ միս-մինակ Դուրյան, ծայրահեղորեն մենասեր, լուր օրերը կընտրեր կամ կիրակի առտուները կանուխ, երբ դեռ մարդ չկար դուրսը, պտույտի երթալու համար։ Ու հոն, բնության հետ առանձին, կդիտեր, կիսոկար ու երբեմն ալ կխոսեր։ Իր խոսակցության գլխավոր նյութը՝ այդ վերջին տարվան, դեպ ի մահ ընդքարշ վայրէջքի այդ տարվան ընթացքին, մահն էր։ Բարեկամներուն, ծանոթներուն, դեմը ելլողին կըսեր իր անհուն ցավը կյանքեն կանուխ բաժանվելուն, կյանքե մը, որ, այդ վերջին շրջանին՝ այնքան ցուրտ և անարև, արդեն մահվան կնմաներ սակայն։ Երբեմն ինքզինքը կմխիթարեր ժողովուրդին միամիտ իմաստասիրությամբ՝ «օր մը չէ, օր մը պիտի մեռնիմ. կանուխ կամ ուշ, նույն բանն է»։ Ճանֆեսճյանի ուղղած մեկ նամակին մեջ կգրե՝ «Երբեք մի՛ մտաբերեր, որ ես հուսահատ եմ. բնա՜վ բանաստեղծ մը մահվընե չը սոսկար։ Այն ատեն իրավունք ունեի ցավելու, երբ ամենքը անմահ ըլլային, և ես միայն մահկանացու»։ Երբեմն նույնիսկ կտենչա մահվան. աշխարհիս մեջ ամեն բան խոցեց զինը, անիկա մեծ սպեղանին պիտի ըլլար...

Խո՜րշ մը կար, որ զիս չը ծաղրեր,
Այն՝ լուռ փոսն էր գերեզմանիս...

Բայց անոնք ինքնախաբության ճիգեր են, որոնց տակ դյուրավ կնշմարվի մեծ տրտմությունը հավերժական բաժանումին։ Այդ վայրկենական կեղծ անտարբերությանց ետև մահվան երկյուղը կա և կյանքի տենչը.

Ո՜հ, տրվե՛ք հոգվույս կրակի մի կաթիլ,
Սիրե՛լ կուզեմ դեռ վ՚ապրի՛լ ու ապրի՛լ.

Զամլըճայի կատարը ծերուկ հայ խահվեճի (սրճարանատեր) մը կար, բարի մարդուկ մը, որ Դուրյանը կճանչնար ու կսիրեր։ Ամեն կիրակի, երբ տեսներ, որ բանաստեղծը կուգա, կվազեր փսիաթը կփռեր գետինը, խահվեն կեփեր կբերեր անոր ու քովը կնստեր, մտիկ ընելու համար — անշուշտ առանց շատ բան հասկանալու—Դուրյանին խոսքերը։ Եվ շատ անուշ, շատ աղվոր կխոսեր Դուրյան, ինչպես կվկային իր բարեկամները։ Իր երկայն ու խորհրդավոր լռություններեն հետո՝ երբ սկսեր խոսել, առատ էր իր խոսակցությունը, սահուն ու համեղ, առաջները՝ զբոսուցիչ ու զանազանյալ, վերջերը՝ միօրինակ ու թախծագին։

«Ճիգ չուներ,— կըսե Ճանֆեսճյան,— խոսած ատենը. բառերը կբըխեին իրմե՝ հորդ, ու կվազեին բերնեն աղբյուրի ցայտքով ու դյուրությամբ, բայց կզգայինք, որ այդպես առատ խոսած ատեն ամեն մեկ բառին ուժ կսպառեր»։

1871 հունիսին կսկսի բերնեն արյուն հոսիլ. ախտը մեծ քայլերով կհառաջանա։ Հուլիսին պզտիկ դադար մը կունենա, ժամանակավոր բարվոքում մը, բայց քիչ հետո հյուծումը կվերսկսի ավելի արագ.

«...Մշտնջենավոր վերքս դարձյալ շունչ առավ կուրծքիս տակ...»։

Նույն տարվույն աշնան Ավետիս Գոռանյանի մայրը անգամ մը Դուրյանը շատ տխուր տեսնելով, կհարցնե անոր. «Ի՞նչ ունիս, Պետրո՛ս»։ Դուրյան ձեռքը կուրծքին կտանի և կըսե. «Հոս կրակ մը կա, անանկ կրակ մը, որ չմարիր և պիտի չմարի, մինչև որ զիս հատցնե»։

Ա՛լ դպրոցին Պետրոսը չէր հիմա՝ անառակ, կատակասեր Պետրոսը։ Իր բնածին զվարթությունը տեղի տված էր անըմբերելի տառապանքներուն առջև, որոնք չորցուցած էին իր առողջության հետ անոր ծաղիկն ալ՝ ծիծաղը։

Արմեն Լուսինյանին ուղղված նամակի մը մեջ հուզիչ տրտմությամբ մը կհիշե այդ առաջին օրերու զվարթությունը. «...Սիրտս ցամքած է, չեմ կրնար զգացումներս ուզածիս պես դուրս տալ... ո՜հ, ցամա՛ք սիրտ, ե՞րբ պիտի թարմանաս, երբ առաջվան պես խնդումներ պիտի անձրևեմ»։

Առաջին շրջանի խանդերուն նույն տրտում հիշատակն է, որ կվառե Սև՜, սև՜ տաղին առաջին զմայլելի տունը.

Երբեմն հոգիս աստղի մը բոց
Ու թիթեռնի մ՚ուներ թևեր.
Վերջալույսի նման ամպոց
Երազնե՞ր հո՞ւր ճակատս վառեր։

Բայց նորեն, նույնիսկ իր այդ թանձր ցավի վերջին օրերուն, երբ զվարթության վաղանցուկ կայծ մը վառեր հոգիին մեջ, երբ կատակի նշույլ մը մտքեն անցներ, չէր ծածկեր զայն՝ իր հիվանդի դերը լավ խաղալու համար։ Եթե կա թերություն մը, զոր Դուրյան բնավ չէ ունեցած՝ ցուցամոլությունն է, որովհետև ցավի ցուցամոլությունն ալ կա։ Ինք, որ դերասան եղած է թատրոնի մեջ, կյանքի մեջ երբեք չէ եղած դերասան։ Երբեք իր վիշտը ամենուն առջև փռած չէ, երբեք զայն զգեստի պես հագած չէ, որպեսզի ամենքը տեսնեն, երբեք տրտմություն չէ կեղծած արգահատանք շարժելու և համակրություն շահելու համար։ Իսկ վերքերը, երբեմն, իր մտերիմներուն միայն ցույց տված է.

«Վերքիս մոտեցիր, եղբա՛յր իմ, սա ահարկու անդունդին... սակայն սև ժայռը և երկնքի աստղերը հոն կրնան նայիլ լոկ»։

Անոնց գիրկը միայն թափած է իր արցունքն ու իր հեծկլտանքը և այն ալ, երբ զգացած է, որ ա՛լ անկարող պիտի ըլլա զանոնք պահել իր տկարացած կուրծքին ետև՝ պոռթկացող հուզման վայրկյաններուն։

Իր մեծագույն ցավերեն մեկը այդ տառապանքի օրերուն՝ քույր մը ունեցած չըլլալն է եղած։ Եվ որչա՜փ սրտաշարժ է այդ իղձին հոգեբանությունը։ Քո՜ւյր մը, այսինքն գութն իսկ, խնամքն իսկ, սփոփանքն իսկ. քո՜ւյր մը, այսինքն դեռատի մայրիկ մը, ավելի ինքուշ ու խանդավառ, որուն սիրտը ավելի մտերիմ ընդունարան մը կրնա ըլլալ տրտում գաղտնիքներուն և որուն ծոցը մարդ ավելի համարձակորեն կթափե իր արցունքը։ Եվ Դուրյան անշուշտ կերազեր զինքը հասկցող քույր մը, անոր միայն ցույց տալու համար իր ցավերը, կույս պահելով զանոնք բոլոր մարդոց աչքեն։ Հետո, քույրը կին մըն է, ու կնոջմե այնքա՜ն զուրկ կյանքով մը ապրող այդ պատանին կուզեր կինը գեթ քրոջ ձևով իր մոտ ունենալ, ամենեն մաքուր, ամենեն հրեշտակային ձևը կնոջ։

Իր մարմնույն հիվանդության մեջ, որ հոգիին ալ կփոխանցվեր, բանաստեղծությունն ալ իրեն համար տեսակ մը հիվանդություն կդառնար։ Երբեք չէր նկատեր զայն պաշտոն մը, այլ վիճակ մը։ Ինք բանաստեղծության մոլի էր, ինչպես ուրիշ մը՝ գինիի, ուրիշ մը՝ կնոջ։ Կքերթեր, որովհետև ատիկա պետք մըն էր իրեն համար, ինչպես խոկալն ու արտասվելը։ Կքերթեր, որովհետև առանց ատոր կրկնապես պիտի տանջվեր՝ իսկ ներսիդին զգալով դիզվիլը ծանր վիշտերու, որոնց բառերու ձևով իրմե դուրս թափիլը կթեթևցներ իր շարչարանքը։ Միշտ իր սփոփանքը

եղավ բանաստեղծությունը, իր աղքատության, ինչպես իր հիվանդության մեջ. «...Գրիչը կը սիրեմ,— կգրե նամակի մը մեջ,— սփոփ մ'է ինձ այս անձուկ կացության մեջ...»։

Թերևս կնկատեր զայն գինովություն մը, կամ անոր համանման բան մը։ Միջադեպ մը կհաստատե ասիկա։ Մեկը կհարցնե անգամ մը իրեն՝ «Բան մը գրել կուզեմ, չեմ հաջողիր կոր, ի՞նչ ընեմ»։— Քանի մը հատ ճնկե՛, կպատասխանե բանաստեղծը իր պայծառ օրերու լեզվովը։ Մարդուկը կճնկե, բայց քերթելու տեղ կխռկա։ Դուրյան այդ խրատը կուտար անշուշտ՝ խորհելով, թե գրելու, երգելու համար արբեցություն մը, մտքի ու մարմնի գերագրգռություն մը հարկավոր է, ըլլա գինիի, ըլլա վշտի արբեցություն։

Աստուծո վրա Դուրյանի մտածումը մութ է և տատամսոտ՝ այդ վերջին տարվան մեջ։ Առանց իր Լուիֆյան բարեկամին պես անհավատ մ'ըլլալու, իր պատանության առաջին շրջանի խորին բարեպաշտությունը իր կյանքի այդ վերջին ամիսներուն քիչ մը խախտած էր։ Տարակույսի ու բողոքի վայրկյաններ ունեցած է ֆիզիկական ու բարոյական տառապանքի անդիմադրելի ճնշումին տակ։ Իր նամակներեն մեկուն մեջ միամիտ հիացումով մը հիշած է Տիգրան Ադամյանի սա ֆրազը, որ ուռուցիկ բացագանչություն մըն է՝ «Մեր անիծից ահավորությունը օր մը պիտի սարսե հարկավ այն Գերագույն Անգութ էակը, զոր ռամիկք Աստված կը կոչեն»։ «Սա խոսքդ,— կավելցնե Դուրյան,— զքեզ ահավոր բանաստեղծ մը նկարեց իմ առջև»։ Որովհետև զինքն ալ կլլկե այն գաղափարը, թե շատ անողորմ և անարդար ըլլալու է այն Աստվածը, որ այսչափ ցավեր անտարբեր աչքով մը կդիտե, այդ «ոխերիմ» Աստվածը, որուն կնետե հուսկ ապա իր հոգեցունց սպառնալիքը.

> Իսկ թե կորընչի պիտի իմ հուսկ շունչ
> Հոս մառախուղի մեջ համր անշրջունջ,
> Այժմեն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
> Ոլորվիմ անվանդ, մրոընչեմ անդադար,
> Թո՛ղ անեծք մ'ըլլամ ու կողդ խրրիմ,

Այս տողերը ուրացում չեն սակայն, այլ հուսահատության գալարումներ, և ասոնց մեջ կա միշտ հավատքը գերագույն էակին, որ անգութ է, բայց որ գոյություն ունի։

Եվ իր վերջին օրերուն այդ տարակույսները կփարատին, և մահամերձը իր մանկության հավատքին կդառնա նորեն։ Քանի մը տեղ, իր մահվան մոտ գրած նամակներուն մեջ, կշեշտե իր հավատքն Աստուծո.

«...Մահվան սպանդ մ'եմ, կերթամ առաջին կարչի, կը հավատամ

Աստուծո, կը հավատամ այն հանդերձյալ Ապառնիին. ով որ կը հավատա, երջանիկ է»։

Ուրիշ տեղ մը՝

«Աշխարհիս մեջ միայն անհավատն ապերջանիկ, հուսահատ և թըշվառէ»։

Միջադեպով աղքատ ու հուզմունքով առատ իր կյանքովը, իր պարզ ոգ միամիտ հոգիին նախնական դիմագծերովը, իր անսահման տրտմությամբը, որով կտառապի, բայց զոր կսիրե ալ կարծես, Պետրոս Դուրյան ինծի կթվի կենդանի խորհրդանշան մը եղած ըլլալ ավելի, քան ապրած մարդ մը, ավելի գաղափարի մը կամ մանավանդ զգացման մը մարմնավորումը, քան մսեղեն գործարանավորություն մը, ինքն իսկ մահվընեն ամիս մը առաջ Արմեն Լուսինյանին ուղղած ընդարձակ ու աղեխարշ նամակին մեջ կգրե. «Թերևս բարեկամք գիս միստիկական կամ այլաբանական գտնեն տողերուս մեջ. արդեն ես ալ այլաբանություն մ'եմ, խորհուրդ մ'եմ»։

Անհուն ու անհագ սրտի մը բեռն ունենալով իր Ֆյանքին վրա ճնշող ու բազմադիմի զրկանքներով անոր հետզհետե սպառումը տեսնելով, աղքատ, անշուք, դժբախտ, իր ուզածին և արժածին պես չսիրված, չհասկըցված, չգնահատված, իր ուժերուն օրեօր փճացումը և իր հույսերուն ընդմիշտ ցնդումը զգալով, այդ «նոճյաց տղան», այդ «դաշնակաց բույնըն», ինչպես ինքն իսկ կանվանե ինքզինքը, կթվի մարմնացում մը ցավի. տեսակ մը շերամ, որ իր հոգիեն կհանե հյութ մը, աղջամուղջի հյութ և անով իր շուրջ կհյուսե, կթանձրացնե նեղ ու մութ բանտ մը, որ ա՛լ իր տիեզերքը պիտի ըլլա։

Եվ օրեօր դժգունելով ու նվազելով, խեղճ մեծ բանաստեղծը, դեռ մաքառելով մահվան գաղափարին դեմ, իր դողդոջ բազուկներով դեռ փարելով կյանքի ստվերին, որ կխուսափի, կամաց-կամաց մոտենալը կտեսնե անտես ու անխուսափելի Այցելուին։

Իր կյանքին վերջին ամիսներուն պատմությունը, պատմությունը այդ ոգեասումի ահեղ օրերուն, կգտնենք կցկտուր, սրտաճմլիկ, իր նամակներուն մեջ, որոնց որչափ թվականը հառաջանա, այնչափ շեշտը կմթննա, կարցունքոտի։

Ահավասիկ քանի մը նամակներ՝ մահապարտի այդ սև օրագրութենեն.

«Աղնիվ բարեկամ, ձմեռը քեզ կը գրեի, թե կը մսիմ, արդ կը դողդոջեմ, բերնես արյուն կը հոսի, կը հյուծիմ, ճակտիս վրա կենաց շիկնոտ ժպիտը կը տժգունի, անդուլ կերպով քնարս կը թոթվեմ անհուն, «մնաք բարով»-ի մը համար՝ անոնց, որոնք իրենց ծալքերը չբացին ինձ, այլ միայն դուրսեն ճաճանչեցին. նախ՝ կնոջ, երևակայությանս տիրուհ-

վույն... երազի այն երփներանգ աստղին կամ ճաճանչոտ ծաղկին... ո՜չ... ավելի՜ն, շողերու և բույրերու թագուհվույն...։

«...Իմ վիճակս հուսահատական է, եղբայր իմ. սակայն ես հանդարտ եմ և հարկավ քիչ մը տխուր. թոշնեցավ ամեն մարդկային տենչ սրտիս մեջ, տենչ՝ աշխարհի այդ ոսկեզօծումը. ամեն հույսերս մոխիր դարձան, իբրև մեքենա կապրիմ գրեթե, իմացական հրահրումս կորուսի, մտածումներս կարճ են ու մութ...»։

«...Ա՜հ, որչափ մթագնած է երևակայությունս. ո՜հ, ո՞ւր եք, կրակք իմ, մարեցաք... մարեցա՜ք և ալ չը պիտի վերադառնաք. անցավ ձեր վրայեն ալ ա՜յն շունչն, որ աստղերը կարող է մարել... դեռ կուզեմ դրել. բայց կը տեսնեմ, թե այնչափ ուժաթափ են այս խոսքերս, որքան գունաթափ է զանոնք ներշնչող հոգին...»։

«...Չորեքշաբթի օր Ձեզ սպասեցի, տխուր վերջալույս մ՚ունեցա։ Տեսնվիմք, եղբայր իմ, գոնե Ձեզ հետ քանի մը կվարթ ժամեր ծծեմ։ Կը թվի, որ քիչ մը տաղտկալի կըլլամ Ձեզ տժգույն շրթանցս թափթփուքներովը։ Երեկվընե ի՞վեր վիճակս վատթարացավ. կաղաչեմ, մի՜ տրտմիր։ Ես տրտում ժամերուս աստղերուն կը հառիմ. Աստուծո՜ այդ կրակները զիս փոքր ինչ կսփոփեն»։

«...Շնորհակալ եմ, որ զիս կը մխիթարես. սակայն ես արդեն ըսած եմ, թե բնավ մահվընե վախ չունիմ, վասնզի տքնեցա ինքզինքս զզվեցնել աշխարհեն։ Եթե ցավ մը ունիմ. այն է, թե զքեզ վերջին անգամ չպիտի կարենամ տեսնել, վասնզի յանկողնի եմ, ալ դուրս ելնելու կարողություն չը մնաց վրաս, սանդուխեն վար իջնելու համար պետք է, որ հենարանին կրթնիմ. ա՜լ բոլորովին հայտնի եղավ (թեպետ առաջին օրեն գիտեի, և միշտ, մինչև անգամ բան մը չունեցած ատենս, անդրդվելի պահեցի այն գաղափարս), թե ես երկնքի հիվանդությունն ունիմ։

Ափսո՜ս, շա՜տ հեռու կերևի ինձ փթթինազարդ գարունը. ձմրան ձյուներն իմ սիրած վայրերուս հետ (ուր միատեղ շատ անգամ իրարու սիրա կը ծծեինք), զիս ալ պատենավորել կսպառնան։

...Կաղաչեմ, եթե ժամանակ ունենաս, նամակներդ ստեպ և երկար ըրե. որչա՜փ սիրելի են ինձ անոնք։ Մնաս բարյավ։ (Զըլլա՜ հավերժական...)։

(Գթա՜, ո՜վ Աստված)»։

Այս բոլոր տողերը ցույց կուտան, թե այդ վերջին շրջանին Դուրյան ինքզինքն ամբողջովին իր բարեկամներուն տված էր, անոնց սիրույն կաչելով, անոնց մխիթարիչ խոսքերեն ու վարմունքեն կազդուրվելով։ Որքան ատեն որ դեռ ոտքի էր, գրեթե ամեն օր հազալով, արյուն թքնելով, դողդողալով կերթար անոնցմե մեկուն տունը, քանի մը վայրկյան

անոնց տեսքովն ու խոսակցությամբը սփոփվելու։ Անոնցմե հեռու եղած ատեն՝ նամակ կգրեր անոնց։ Երբ վերջնապես գամվեցավ անկողնին մեջ, այդ վերջին միջոցը մնաց միայն։ Եվ այն ատեն, հազիվ կարենալով ինքզինքն անկողնին վրա շիտակ բռնել, անընդհատ թուղթ ու գրիչ կուզեր և կգրեր, կգրեր։ Այդ վերջին նամակները, որոնց մեջ այլևս հոգեվարքի հնչ մը կգտնենք, զինքը այնքան կհոգնեցնեին, ուժասպառ կդարձնեին, որ հաճախ մայրը կամ եղբայրներեն մին թուղթը ձեռքեն կհափշտակեին։

Այդ վերջին ամիսներուն Պետրոս Դուրյան միմիայն նամակներ ու քերթվածներ գրած է՝ դադրեցնելով իր թատերախաղերուն երկար շարքը։ Ա՛լ կարողություն չուներ ընդարձակ աշխատություններով զբաղելու, մանավանդ որ այդ աշխատությունները հարմար չէին իր տաղանդին. մեծ մասամբ՝ դրամ շահելու համար էին գրված։ Հիմա, մահվան մոտ, դրամի գաղափարը խույս կուտար ու բանաստեղծը մենակ կմնար իր հոգիին հետ։ Եվ այդ վերջին տարվան ընթացքին Դուրյան իր հոգին միայն թարգմանած է նամակներով ու տաղերով։ Եվ մահով ստվերազօծված այդ էջերը իր ամենեն անձնական, հետևաբար և ամենեն գեղեցիկ արտադրություններն են։ Բանաստեղծության չափ, որ իր մեծագույն մխիթարությունը եղավ մինչև վերջին օրը, երգն ալ իր բերնեն չբաժնվեցավ մինչև վերջին շունչը։ Ինք, որ պատանության զվարթությունները հաճախ երգելով էր արտահայտած՝ երգով պատմեց իր մահվան ցավն ալ։ Իր բարեկամները կըսեն, թե իր վրա ողբերգներ շինած, անոնց եղանակ մը հարմարցուցած էր և կերգեր ինքնիրենը կամ իր ընկերներուն։ Ահա անոնցմե մեկուն հանկերգը, զոր Ճանֆեսճյան կհիշե.

Ես մեռնիմ նե, մի՜ գար, մի՜ լար իմ տապան,
Հողը, լեռը, սարը, ձորը զիս կողբան։

Եվ ահավասիկ ուրիշ նմանօրինակ երգի մը մեկ մասը, զոր տիկին Զապել Տոնելյանի (Սիպիլ) քով գտած եմ.

Սիրելիքս բոլոր խույս տըվին քովես,
պիտի մեռնի՜մ ես.
Ինչո՞ւ մըոընչեք նոճիք սևագես,
պիտի մեռնի՜մ ես.
Տըխո՜ւր գերեզման, որչա՜փ ինձ մոտ ես,
պիտի մեռնի՜մ ես.

Այն օրերուն, երբ դեռ ոտքի վրա էր և կյանքի հույսին ու մահվան վախին մեջ կտատաներ, Դուրյան երբեմն Բերա տոքթոր Քյաթիպյանին կերթար՝ իբրև այցագին մեկ մեճիտիե տալով։ Անգամ մը, Սարգիս Ֆինճանճյան կընկերանա անոր, խնդրելու համար տոքթորեն, որ մասնավոր

խնամքով դարմանե զայն. բժիշկը կգնե զայն, դեղագիրը, կգրե, և երբ Դուրյան սենյակեն դուրս կելլե, Ֆինճանճյան պահ մը կուշանա հոն և տոքթորին ականջն ի վար կհայտնե, թե այդ հիվանդը տաղանդավոր բանաստեղծ մըն է, մեծ ապագա խոստացող, դժբախտաբար չքավոր ծնողքի զավակ։ Տոքթորը տխուր ժպիտ մը կունենա ապագա բառին, բայց ա՛լ ստակ չառներ Դուրյանեն, նույնիսկ կխոստանա ինք անձամբ այցելության երթալ անոր։ Իր խոստումը կկատարե, և այն պարագաներուն, ուր ինք չի կրնար երթալ, իր ծանոթներեն տոքթոր Աղասյանն ու տոքթոր Դալիլյան կղրկե, որոնք մինչև վերջը կխնամեն Դուրյանը առանց որևէ վճարման։

Բայց հիվանդությունը, հակառակ այս բոլոր խնամքներուն, արագ քայլերով կհառաջանա։ Հազը կսաստկանա։ Դուրյան հետզհետե ավելի շատ արյուն կթքնե. տառապանքները կծու կդառնան։ Վերջերը, երբ հազը կուգար իր կուրծքը թխմել ու թոքերը պատռել, խեղճ միամիտ տղան տասնոց մը կսահեցներ իր պզտիկ եղբորը՝ Միհրանին ձեռքը, որպեսզի երթա ախտերեն ետեպեք շեֆերի (Sucri candi) առնե իրեն համար։ Ու երեսը պատուհանին փակցուցած, պետք էր տեսնել դալկահար օրհասականը, որ կսպասեր եղբորը վերադարձին և տղայական ու սրտաշարժուրեն ծիծաղելի այդ դեղին։

Անգամ մը հիվանդը շապիկի օձիք մը կուզե դնել, բայց իր վտիտ վիզին շուրջը օձիքը, շատ լայն, կերերա. Դուրյան օձիքը կնետե և կուլա. «Վա՜խ, ես ասա՞նկ պիտի ըլլայի»։

Մահեն ամիս մը առաջ, իր բարեկամ Պողոս Դելփյանեն, որ իրեն այցելության եկած էր, կխնդրե իր դամբանականը գրել։ Դելփյան սոսկումով կմերժե։ Բայց Դուրյան կպնդե, գրեթե պաղատելով։ Իր սևեռյալ մտածումը որոշ է, մինչև վերջին վայրկյանը կուզե, որ մահեն հետո զինքը չմոռնան, գոնե լան իր վրա.

Եվ մահամերձն ալ կուզե երկու բան.
Նախ կյա՜նքը, վերջը՝ լացող մ'իր վրան։

Եվ ի՜նչ ավելի մեծ սփոփանք քան առաջուց գիտնալ, թե բարեկամ մը պիտի լա դագաղիդ վրա և անոր արցունքները մեռնելեդ առաջ աչքովդ տեսնել թուղթի մը վրա բառերու փոխված։ Եվ Դուրյան այնչափ կաղաչե, որ Դելփյան կգրե դամբանականը. Դուրյան ոչ միայն կկարդա զայն, այլև կսրբագրե։

Այդ վերջին ամիսներուն, ամեն անոնց զոր կտեսներ՝ «մնա՜ք բարով» կըսեր. նույնիսկ երբեմն, մենակ մնացած ատենը, աչքերը հառած ձեղունին մեկ կետին, պաղած նայվածքով մը շարք մը «մնա՜ք բարով»-

ներ կմրթմրթար, այն եղանակով, որով քահանաները եկեղեցիին մեջ իրենց «Տէր ողորմեա»-ներու շարքը կերկարաձգեն։

Իր կյանքին շատ վերջերը, օր մը, խռովյալ քունե մը արթնցած ատեն, մայրը կտեսնե, որ իր կմախացյալ դեմքին դալկությանը վրա հակած, կդիտե իր մահատիպ քունը և կուլա... մինչև ծուծը հուզված, Դուրյան կելլե կնստի անկողնին վրա ու մորը երեսը նայելով կգրե այն անհանգ, կցկտուր ու կսկծեցուցիչ պզտիկ տաղը, որուն տիտղոս դրած է Զղջում.

Ո՜հ, ներե ինձ, Աստվա՜ծ իմ,
Մորըս արտո՜սրը տեսի...

Մահվանը մոտ նորեն տեսակ մը զվարթություն կուգա վրան, հոգիի վերին խաղաղություն մը, և այն ալ՝ Աստուծո գաղափարին զորացմամբն անշուշտ։ Իր վերջին օրերուն կատարյալ հավատացյալ մը դարձած է Դուրյան. ինք իր բերնով փափաք կհայտնե հաղորդություն առնելու. «Ես Վարդանին պես պիտի չընեմ,— կըսե,— ես պիտի մասնակցիմ»։ Ու բերել կուտա Ենի-Մահալլեի Տեր Հովհաննես քահանան և երկար խոստովանանք մը կընե անոր։ Քահանան հետո հաճախ կկրկնե եղեր Եղիշե վարդապետ Դուրյանին. «Եղբայրդ այնպիսի խոստովանանք մ'ըրավ, որ կյանքիս մեջ ատոր նմանը չէի լսած»։ Բայց ինչ որ Դուրյան ըսած է հոգիի մերկացման այդ վսեմ պահուն, բարի քահանան իր հետը գերեզման տարած է։ Խոստովանանքեն հետո Պետրոս հաղորդությունը կընդունի անհուն հուզմունքով, ծունկի եկած, գրեթե աչքերը լցված, կարծես իրավցընե ինքզինքը մեծ Տառապողին՝ Հիսուսին հետ դեմ առ դեմ զգալով։

Մահեն վեց օր առաջ նորեն կուզե հաղորդվիլ։ Այս անգամ Տ. Խորեն Փեհլիվանյան քահանան է, որ կուգա զինքը խոստովանցնելու։ Աստուծո գոյության, կրոնքի, մարդկային հավատալիքներու վրա երկար ու սրտաշարժ խոսակցություն մը կունենան։ Հետո քահանան անոր վրա քանի մը գլուխ Ավետարան կկարդա, խաչահանգիստ կընե և հաղորդություն կուտա։

Վերջին օրերուն Տիգրան Գալեմճյան, հայ թատրոնի հուշարարը, քանի մը անգամ կայցելե անոր։ Եվ ահա ինչպես, այդ այցելությանց տպավորությունը պատմած ատեն՝ ան կնկարագրե այն տունը, ուր Դուրյան ապրեցավ ու մեռավ. «Ներս մտած ատենդ դոնեն, հոդե բակ մը. մեկ քովը դետնահարկի սենյակ մը, զոր իբր ճաշարան կամ նստելու սենյակ կգործածեին. ձախ կողմեն՝ սանդուխ մը հինգ ոտքով. վերը, սուֆա մը ու երկու սենյակ. ձախ կողմի սենյակին մեջ կպառկեր Դուրյան։ Սուֆան Վոսփորի վրա կնայեր, և իր առողջ եղած ատեն, բանաստեղծը հոն է, որ

կաշխատեր, փայտե սեղանի մը վրա, դուրսի դյութական պատկերը դիտելով ու գրելով։ Ննջասենյակը, մերկ ամեն զարդե ու կահե, գետնի ցած բազմոցով մը միայն, որուն վրայի կերպասը պատռտած ու հարդերը դուրս թափած էին. անկողնին մոտ, որ անկյունը զետեղված էր քառակուսի աթոռակ-սեղան մը, որուն վրա դեղեր, գիրքեր, թուղթեր ցրված էին. պատին մեջ բացված մեռնիւապ մը և պզտիկ պահարան մը գրադարանի տեղ կծառայեին. վարագույրները գոց էին»։

Գալեմճյան կշանա իր այցելությանց միջոցին հիվանդը մխիթարել։ Բայց անիկա անմխիթար է։ Մոտալուտ մահեն ավելի իր տխուր կյանքին վրա կխորհի. ինք չապրա՞ծ կմեկնի աշխարհեն։ Եվ իր դառնությունը այնչափ մեծ է այս զրկումին համար, որ հիմա չուզեր մեռնիլ։ Նայվածք մը կնետե իր ամբողջ գոյության վրա, և հոն ուրիշ բան չի տեսներ՝ բայց եթե աղքատությունը, որ իր թռիչները խեղդած է, ժամանակակիցներուն անբմբռնողությունը, որ զինք ըստ արժանվույն չէ գնահատած ու մեկ քանիին վայրենությունը, որ զինք խոցոտած է, կատարյալ բացակայությունը պաշտված գեղուհիի մը համբույրին, որ իրեն պարգևած ըլլար երանության իր արդար բաժինը,— կյանք մը բոլորովին դատարկ ու ցուրտ։ Ու խեղճ զրկյալը աչքը բաց պիտի մեռնի, մարդոց դեմ, աշխարհի դեմ, նույնիսկ մերթ Աստուծո դեմ դառնացած։ «Հարգս չգիտցան,— կկրկնե հաճախ Գալեմճյանին,— բայց պիտի փնտռեն զիս»։ Ու հանգերգի մը պես, միշտ կավելցնե. «Ա՜խ, գոնե գրածներս տպեցեք, չմոռցվիմ»։

Մահվանը նախորդ օրը Գալեմճյան կերթա նորեն զայն տեսնելու.

— Բանի մը պետք ունի՞ս,— կհարցնե։

— Ի՞նչ բանի պետք ունենամ,— կպատասխանե հիվանդը տրտում հեգնությամբ մը,— անկողինս միայն ունիմ, զիս անով պիտի տանին։

Ու նորեն կավելցնե, գլուխը երերցնելով.

— Պիտի փնտռե՞ն, պիտի փնտռե՞ն զիս։

Է

ԴՈՒՐՅԱՆԻ ՄԱՀԸ

1872 հունվար 21-ին հինգշաբթիե ուրբաթ լուսնալու գիշերը Պետրոս Դուրյան կմեռնի, արտասովոր զմայլելի մահով մը, միշտ իբր մարմնացած խորհրդանշան մը, իբր գերազանց իսկությամբ արարած մը, իբր կենդանի քերթված մը։

Այդ աղետալի գիշերեն երեք օր առաջ երազ մը կտեսնե։ Երեք քահանաներ կերևան իրեն, որոնք զինքը հաբսնիքի կհրավիրեն։ Ու մահվան անկողնին մեջ, հիվանդը տխուր ժպիտով մը կմեկնե այդ հաբսնիքը, որ «վերը պիտի կատարվի»։ Տարօրինակ զուգադիպությամբ մը իր հուղարկավորությանը երեք քահանաներ ներկա կգտնվին։

Պզտիկ Միհրանն ալ իր եղբորը մահվան գիշերը երազ մը կունենա, ոչ նվազ խորհրդավոր. կտեսնե Պետրոսը, որ, իր պարսկական շալը ուսերուն առած, դանդաչելով դեպի տուն կուգա։ Միհրան քար մը կնետե անոր ու կսե՝ «Ինչո՞ւ գինովի պես կքալես»։ Եվ ահա Պետրոսը կապույտ աչքերով կնոջ մը կփոխվի, որ վերմակներու առջև կերկրպագե։

Առջի իրիկվնե ծնողքը, ազգականները, բարեկամները, որոնց մեջ է Ճանֆեսճյանը, հավաքված են հիվանդին շուրջը։ Դուրյան բավական հանգիստ է. հանդարտորեն կխոսի, առանց տանջվելու։ Ծնողքը կկարծեն, թե հիվանդությունը թեթևնալ սկսած է և նույնիսկ խոսք կընեն, որ «գարնան ինչ ընեն չընեն Պետրոսը քիչ մը ատենուն համար Ալեմտաղի տանին»։

Անկյուն մը, երկու փոքրիկները, Միհրանն ու Ագրիպպասը, թուղթի վրա մինարեի պատկերներ գծելով զբաղած են, խոսելով իրարու հետ.

— Մյուեզզինը ի՞նչ կըսե,— կհարցնե մեկը մյուսին։ Դուրյան կլսե հարցումը և կրոնական խանդավառությամբ մը հանկարծ բորբոքված երկարորեն կպատասխանե անոնց. «Անիկա Աստուծո հավիտենական փառքը կերգե, այն Աստուծույն որ...» և բանաստեղծը անգամ մըն ալ կթափե իր երևակայության գանձերն ու իր հրավառ բառերը, փառաբանելու և օրհնելու համար Ամենակալը։

Գիշերը բավական ատեն այդպես հիվանդին շուրջ նստած մնալե հետո ամենքը վար կիջնեն, Ճանֆեսճյան իր տունը կերթա։ Պետրոս կաղաչե հորը, որ իր սենյակը պառկի։ Բայց իր կրտսեր եղբայրները, որոնց քով կպառկեր հայրիկը սովորաբար, թող չեն տար, ըսելով, թե «կվախնան գիշերը մինակ պառկելու»։

Գիշերվան ժամը 9-ին Դուրյան ձայն կբարձրացնե՝ «Հայրի՜կ, եկո՜ւր»։ Հայրը վեր կվազե։ «Դարձո՜ւր զիս»,— կմրմնջե հիվանդը։ Եվ երբ հայրը կդարձընե զայն մյուս կողմին վրա, Պետրոսը գոհունակության հառաչ մը կարձակե. «Օ՜խ, կարծես արքայություն գացի եկա»։

Հետո, ուրիշ փափաք մը կհայտնե։ «Հաճին թող վեր գա»։ Հաճին իր Հարություն եղբայրն է, որ տղայությանը Երուսաղեմ գացած էր հորը հետ. բայց մորաքույրը, որ դեռ նոր դարձած էր Ս. Քաղաքեն, կլսե և կռահելով, որ հիվանդին վիճակը ծանր է, չուզեր Հարությունը արթնցնել և ինքը կփութա Պետրոսին քով։ Պետրոս անոր երեսը կնայի և կըսե. «Ես եղբայրս կուզեի, բայց դուն ալ Երուսաղեմ գացած ես։ Մտիկ ըրե՛։ Դուն

Երուսաղեմ գացիր, ես վերին Երուսաղեմ պիտի երթամ. դուն Փրկչին պտտած տեղերը տեսար, ես ինքն իսկ Փրկիչը պիտի տեսնեմ»։

Կամաց-կամաց բոլոր տնեցիները կարթննան և շրջանակ մը կուգան կազմել հիվանդին անկողնին բոլորտիքը։ Պետրոս ամենուն վրա կպըտրտցնե իր մարած նայվածքը և Հարութիւնը նշմարելով, կըսե անոր. «Եղբա՜յրս, քանի մը կտոր բան գրեր եմ, ջանա՛, որ հրատարակվին, չեմ ուզեր, որ հիշատակս կորսվի»։ Հետո, խնդալով կավելցնե. «Կարգվե, եղբա՜յր, թոմպուլ թոմպուլ զավակներ ունեցի՛ր, անոնց ըսե՛, որ մեկ ասանկ հորեղբայր մը ունեցան, ես ալ երկնքեն ձեր վրա նայիմ և ուրախանամ»։

Քիչ մը լռութենե հետո հիվանդը փափաք կհայտնե, որ Ճանֆեսճյանը կանչեն։ Գիշերանց, Միհրանն ու Ազրիպասը լապտեր կվառեն ու կերթան տունեն կարթնցնեն կբերեն Ճանֆեսճյանը։ Ջայն տեսածին պես, հիվանդը կժպտի և կըսե. «Եկո՛ւր, քեզի կսպասեի կոր մեռնելու համար։ Գիտե՞ս, վրաս յոթը գլուխ Ավետարան կարդալ տվի, դուն ալ պիտի խնդաս»։ Ապա, տրտմությամբ կավելցնե. «Ես չէի կարծեր, որ մահը ասանկ շուտ պիտի գա»։

Հետո, դառնալով ամենուն. «Ա՛լ Պետրոս չկա,— կըսե,— Պետրոսը ասիկա՛ է ասկե ետքը» և Ճանֆեսճյանը կցուցնե։ Այնուհետև կըսե. «Մեկը պիտի գա, բարեներս տվեք անոր»։ Այդ մեկը հավանորեն Տիգրան Ադամյանն էր, զոր հիվանդը երկու տարիե ի վեր չէր տեսած և որ Պետրոսի թաղման իրիկունը հասավ։

«Թաղումս,— կըսե հիվանդը,— փառավոր հանդեսով ըլլա, անանկ կուզեմ։ Բոլոր բարեկամներս գա՜ն զիս տեսնեն։ Մինչև կիրակի հոս պահեցեք մարմինս։ Մի վախնաք, չի հոտիր, ոսկոր մը, տերի մը մնացեր է։ Իրա՛վ, ես բան մը պիտի չիմանամ, բայց անանկ կուզեմ որ ըլլա»։ Իր չգոհացված փառասիրությունն ու իր մոռցվելու վախն էին, որ մինչև վերջին վայրկյանը դեռ կտանջեին զինքը։

Մորաքույրը, մահվան գաղափարը անոր մտքեն վանելու համար, մրգեղեններ կբերե անոր։ «Առե՛ք, առե՛ք» կհծծե Դուրյան։ Քովինները կկարծեն, թե մրգեղեններուն համար է. իր հոգի՛ն համար էր։

Հետո նորեն նայվածքը կպտտցնե ամենուն վրա և կըսե. «Ամենքդ ալ աչքիս աղվոր կերևաք կոր, շատ աղվոր կերևաք կոր»։

Այդ միջոցին մորաքույրը Երուսաղեմեն բերած կնդրուկեն քիչ մը կրակը կնետե։ Դուրյան, բուրմունքն զգալով, «Ատ ի՜նչ անուշ հոտ է,— կըսե,— ո՞վ ձգեց այդ հոտերը. ձգեցե՛ք, ձգեցե՛ք, ես կսիրեմ այդ հոտերը»։

Եվ այսպես կիսոսի անընդհատ, գրեթե չորս-հինգ ժամ՝ արտահայ-

տելով ամեն գաղափար կամ տպավորություն, զոր կունենա այդ գերագույն վայրկյանին, իր անկողնին վրայեն, ինչպես եռոտանիի մը վրայեն։ Եվ երբ կզգա, որ ուժերը հատած են՝ կլռե։

Առտվան մոտ հորեղբայրը կուգա։ Ներս մտած ատեն, դռան ճռընչյունեն, Պետրոս գլուխը այն կողմ կդարձնե ու ծուռ, արդեն պաղած նայվածքով մը, կնայի ներս մտնողին։ Չի ճանչնար զայն։ Հորեղբայրը կուգա քովը կնստի։ Պետրոս, միշտ անձայն, նորեն կնայի անոր. այս անգամ զայն կճանչնա ու կժպտի։

— Ինչո՞ւ չի խոսիր,— կհարցնե հորեղբայրը։

— Չխոսի՞ս, Պետրո՛ս, հորեղբայրդ եկավ,— կկրկնե մայրը։

— Ժամանակ չունիմ,— կմմռա հոգեվարն ակռաներուն մեջեն, և ատիկա կըլլա անոր վերջին խոսքը։

Աչքերը կփակվին։ Գլուխը, զոր հորեղբայրը եկած ատեն քիչ մը վեր առած էր, բարձին վրա կիյնա։ Ա՛լ կատարելապես սպառած, խոսելու անկարող, նայելու անկարող՝ Պետրոս շարժումով մըն է, որ կըսե իր վերջին «մնա՜ք բարով»՝ ձեռքը երեք անգամ ճակտին տանելով հանդարտոթեն։ Երրորդ հեղուն՝ ձեռքն օդին մեջ առկախ կմնա։

Ը

ԴՈՒՐՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Պետրոս Դուրյանի մահը ցնցում առաջ կբերե Յուսկյուտարի մեջ։ Այն խուլ, բայց զորավոր համակրությունը, որ այդ արվարձանին ամբողջ երիտասարդության սրտին մեջ դիզված էր, կպոռթկա ցավի ահագին արտահայտությամբ մը։ Շատեր կուգան բանաստեղծին անշունչ մարմինը տեսնելու, կուլան անոր վրա ու կըսեն. «Երանի՜ իրեն, մենք ալ այսպե՜ս մեռնեինք»։ Սուգ՝ ամբողջ այդ ափունքին վրա, ուր հնչած էր Դուրյանի քնարը, ուր երգած էր Դուրյանի հոգին և ուր օդին մեջ դեռ կծածաներ անոր անհուն հառաչը։

Իր կամքին համեմատ, մարմինը մինչև կիրակի կպահեն։ Կիրակի օրը կկատարեն հուղարկավորության հանդեսը՝ ջանալով, որ ան ամեն կերպով շքեղ ըլլա։ Բայց արգելքներ կելլեն։ Դժբախտ օրհասականին վերջին փափագն իսկ խոչընդոտներու կհանդիպի։ Երիտասարդությունը, մասնավորապես ընթերցասիրաց ընկերությունը, կուզե, որ նվագածությամբ վերցվի մեռելը։ Յուսկյուտարի եկեղեցիին պաշտոնյաները չեն թույլատրեր, հայ եկեղեցիին ոգվույն հակառակ նկատելով նվագարանով

հուղարկավորությունը։ Տաներեցն իսկ, Տ. Գրիգոր քահանան, կընդդիմանա։ Երիտասարդները չեն համոզվիր, հանդեսը կհետաձգեն, և իրենց-մե մեկը Ավետիս Գոռանյան, Դուրյանն ամենեն ավելի սիրողներեն մին, կերթա իսկույն Պոլիս՝ պատրիարքեն հրաման առնելու։ Բայց Խրիմյան Հայրիկ պատրիարքարանը չէ. Գոռանյան պատրիարքական տեղապահ Արիստակես սրբազանին կդիմե և անկից արտոնություն կխնդրե. ան ալ կվախնա ինք իր գլխուն որոշում տալ և կթելադրե պատրիարքին դիմել։ Գոռանյան կերթա Օրթաքյո կյումյուշճի Գասպար աղային տունը, ուր հարսնիքի հանդես մը տեղի կունենար պատրիարքին նախագահության տակ, կմոտենա Խրիմյանին և խնդիրքը կներկայացնե։ Խրիմյան, որ հայրական խանդաղատանք մը ուներ Դուրյանին համար, խորապես կհուզվի անոր մահն իմանալով. հետո, իրեն ներկայացված խնդիրքին հետևյալ սիրուն պատասխանը կուտա. «Արտոնություն չեմ տար, բայց կներեմ»։ Սակայն մինչև որ այս բոլոր բաները կկատարվին, ատենը կանցնի և երբ Գոռանյան Յուսկյուտար կդառնա, ժամը 11-ը եկած է։ Բարեբախտաբար Քուզկունճուքի քարոզիչ Սեթյան Հովհաննես եպիսկոպոսը, հմուտ ու բարի մարդ մը, առանց սպասելու, որ արտոնությունը գա, ժամը 9-ին «Տղա՛ք,— կըսե,— քալեցեք ետևես»։ Նվագարանները հնչեցնել կուտա և կառաջնորդե դագաղը մինչև գերեզմանատուն։ Կուզեն, որ ոևէ զարդ չպակսի դագաղին վրա, և ատոր համար կռիվ ալ կծագի։ Ս. Խաչ եկեղեցիին շապկապետը՝ Էսմերյան, կընդդիմանա առաջին կարգի ծածկոցը տալու՝ վախնալով, որ կավրվի, որովհետև օդը քիչ մը անձրևոտ էր։ Բայց կպնդեն ու կառնեն զայն։ Այսպես, այդ չքավոր բանաստեղծը ճշմարիտ հարուստի հուղարկավորություն մը կունենա։ Եվ ինչ որ շատ հարուստներ չեն ունենար հաճախ, ինչ որ մեր մեջ շատ քիչերու դագաղը վայելած է, չորս հազար հոգիե ավելի բազմություն մը, մեծ մասամբ երիտասարդներե բաղկացած, բանաստեղծին մարմնույն կհետևի հակառակ անձրևոտ օդին։ Եկեղեցին, արարողությունեն հետո, Սեթյան եպիսկոպոսը դամբանական քարոզ մը կարտասանե Դուրյանին վրա. գերեզմանատունը՝ դամբանական ճառեր կկարդան Պողոս Դելփյան, Արմեն Լուսինյան, Մ. Մելիքյան և Խորեն քահանա Փեհլիվանյան։

Այդ օրն է, որ կսկսի Դուրյանի փառքը։ Այն ազդեցությունը, որ կաթիլ կաթիլ իր տաղերեն, թարգմանություններեն և նամակներեն, իր խոսակցություններեն ու իր անձեն հոսած էր այդ բոլոր թարմ հոգիներուն մեջ, այդ օրը դուրս ելլելով իր թաքստոցեն, կուտակվելով այդ դագաղին շուրջ և անկից ալ անդին՝ ավելի հեռուները համարձակորեն տարածվելով, ծով կդառնա։ Գաղափար մը կազմելու համար այն բուռն սիրույն ու խանդավառության վրա, զոր այդ երիտասարդներն ունեին Դուրյանին

հանդեպ, կբավե կարդալ Օրագիր թերթին 1872 հունվար 26-ի թիվին մեջ հրատարակված երկու նամակներ, ուր հակառակ ուռուցիկ ոճին, որ այդ շրջանին հաճախադեպ էր, զորավոր ու անկեղծ համակրություն մը և հիացում մը կտեսնվի բանաստեղծին ու բանաստեղծության համար։

Այդչափ շքեղությամբ Դուրյանը թաղելե հետո, այդ երիտասարդները կխորհին անոր գործերը հատորի մը մեջ ամփոփել և այդ հատորին վաճառման հասույթով հուշարձան մը կանգնել անոր գերեզմանին վրա։ Գևորգ Չոպանյան, Ավետիս Գոռանյան և ուրիշներ հանգանակություն մը կկատարեն, բաժանորդագրություն մը կբանան, հանգուցյալին գործերուն մեկ մասը կհավաքեն ու պրակ առ պրակ կհրատարակեն։ Մասիս օրաթերթը 1872 փետրվար 12-ի թիվին մեջ կգտնվի Գևորգ Չոպանյանի մեկ հոդվածը, որ Դուրյանի ջերմ ներբող մըն է և անոր գործերուն հրատարակումը դյուրացնելու հրավեր մը։

Տպագրության հանձնելե առաջ Դուրյանի երկերը, հրատարակիչ հանձնաժողովը, սխալ մտածումով մը (որ կցուցնե, թե Դուրյանի գործերը նույնիսկ իր հիացողներեն որչափ գեշ կգնահատվեին), կարծելով, որ այդ գրվածքները քերականական սխալներ և այլ ձևական թերություններ կպարունակեն, կուզե զանոնք սրբագրել տալ «ձեռնհաս» անձերու. թարերգությունները կհանձնվին Հակոբ Պարոնյանին և ոտանավորները՝ Սիմոն Ֆելեկյանին։ Պարոնյան, ճշմարիտ գրագետ, որ երիտասարդ Դուրյանին արժանիքը ըմբռնած ու գնահատած էր, անեղծ ետ կդարձնե ձեռագիրը։ Ֆելեկյան, անտաղանդ տաղաչափող, կարծելով սրբագրել՝ կընդարձե բանաստեղին բնագիրը, և ցավալի է, որ այդ եղծումներով կհրատարակեն անոր տաղերը։

Այդ գրքին հասույթովն է, որ կշինեն փոքրիկ կոկիկ շիրիմը, որ Պաղլարպաշիի գերեզմաննոցին պատին քով կցցվի և որ կմնա հոն մինչև հիմա, երկյուղած այցելուներու մատիտով կամ մելանով գրած հիացման խոսքերով ծածկված։ Շիրիմին վրա քանդակված է հետևյալ գրաբար տաղաչափյալ տապանագիրը, զոր Միհրան Դուրյան շարադրած և խաչատուր Միսաքյան սրբագրած է։

ՔԵՐԹՈՂ

Ասա հանգչի մարմին Պետրոս Դուրեան,
Որ քըսանամեայ էջ ի գերեզման.
Երկաթագործի սա ծընաւ որդի,
Բանաստեղծ թըռեաւ ի կենաց աստի.
Ի տարաժամու յունվար քըսանի
Հազար ութ հարիւր եօթանասներկի.

Արեւն խր էր դեռ առաւօտին,
Օրհասին սեաւ ամպք ըզնա ծածկեցին.
Մահ նորա բնաւից իւրոց սիրելեաց
Սուգ անմրմիթիթար ի կրսկիծ էած.
Վշտրմբեր կենաց իւրոց տուն վրիայ
Կրնեայ մահարձանս աւարի առա կա։

Բանաստեղծին մահեն ամիս մը հետո Յուսկիւտարի Ազիզիէ թատրոնին մեջ անոր հիշատակին նվիրված մեծահանդես երեկույթ մը կատարքեն, ուր անոր Արտաշես Աշխարհակալ թատերգությանը կնեբկայացվի։ Տարի մը ետքը նույնպես Դուրյանի հիշատակին ձոնված նվագահանդես մը կկազմակերպեն Յուսկյուտարի երիտասարդները։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ա

ՍՐՏԱՎԵՇՏՈՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Պետրոս Դուրյանի գործը խոր ազդեցությանը կրած է իր ժամանակին, իր միջավայրին և իր կյանքին։ Իր ժամանակը հավատքի, խանդավառության, միամիտ ու ազնիվ ավյունի շրջան մը եղած է։ Այն միջավայրը, ուր ապրած է ինքը, անշուք, խոնարհ, սահմանափակ եղած է, մեկուսացման, երազանքի ու խոկման առաջնորդող։ Եվ իր կյանքը ծայրեծայր՝ աղքատի ու վերջին մասին մեջ հիվանդի կյանք մը եղած է։ Ասոնք են այն երեք պայմանները, որոնց մեջ զարգացած են իր բնածին վառ տաղանդն ու ջերմ ներշնչումը։

Թրքահայ սերունդը, որ ասկից 25—30 տարի առաջ կխորհեր, կզգար, կգրեր, կգործեր, տարբեր էր այսօրվանին, ինչպես և այն հանրային կյանքը, զոր այդ սերունդը կազմեր։ Բարոյական տաքություն մը մթնոլորտը կլեցներ, մթնոլորտեն սիրտերուն կանցներ։ Արտաքին ազդակներու հետևանք եղող համատարած տգիտության նախկին շրջանե մը հետո, բավական տարածուն մտավոր զարթման մը շրջանն

էր, և այդ շրջանին ալ գագաթնակետի օրերը, ուր ոգևորությունը մերթ կհասներ նույնիսկ տենդագին ծայրահեղությանց, որոնց պիտի հանդիպինք դիշ հետո, արտաքին ու ներքին պատճառներով, անվման նոր շրջան մը։ Գրական այն մեծ շարժումը, զոր ԺԹ դարու առաջին կեսին ամենամեծ մասամբ պատվելիական անհամ գրքերե բաղկացած ազգատ մատենագրության մեջ առաջ բերին Մխիթարյաններու գրաբար և աշխարհաբար գործերը, Պոլսո մեջ հայտնված գրագետներու հեղինակությունները ու լրագրությանը և որուն վերջին բառը Թզմիրի Տետեյան տպագրանն արտասանեց, իր ամենեն փայլուն օրերուն մեջ էր։ Ժողովուրդին ճաշակը մտքի ու արտի բաներու համար արթնցած, զարգացած ու հետզհետե զարգացող էր։ Ընթերցասիրությունը սովորությունեն մը հետո պետք մը դարձած էր. բանաստեղծության հավաքածուները մատի վրա չէին հաշվվիր, ինչպես հիմա։ Մեծ վարպետներեն հետո ամեն ոք իր փորձերը հրապարակ կնետեր գրքույկի մը մեջ։ Եվրոպական վեպերու և թատերգությունների թարգմանությունները անձրևի պես կտեղային, գրեթե ամենքն ալ մեծ հեղինակներու գործեր, հաճախ՝ զավ թարգմանիչներով, ու կատաղաբար կկարդացվեին հասարակությունեն, որուն ճաշակները կբարեփոխեին, նկարագիրը կամրացնեին ու ու ճաշակը կկրթեին։

Նույն ատեն, մտքի ուրիշ վառարան մը՝ թատրոնը, իր ազդեցությունը կթափեր ժողովուրդին վրա։ Նույն ոճը, նույն գրականությունը՝ թատրոնին մեջ, խանդավառության ու հավատքի գրականությունը, եվրոպացի մեծ թատերգակներու գործեր, ինչպես և հայ հեղինակներու ողբերգություններ, տոմամներ ու կատակերգություններ փայլ կուտային մեր բեմին, որուն վրա կերևային ու կծաղկեին առաջնակարգ դերասաններ ու գերասանուհիներ։

Ինչ որ քերթվածները, վեպն ու թատերգությունը սկսած էին ընել հոգիներուն մեջ, երգը կամբողջացներ, կամարտեր ե՛րգը ամենեն ժամանակ, ամենեն ընդհանրացած, ամենեն սիրված բանը, և որ մերթ նույնիսկ թատերասենեն ժողովուրդին մեջ անցած կամ նշանավոր դեպքի մը, ազգային հանդեսի մը առիթով հորինված, կվառեր, կփայլիայեր, կհուզեր, կղվարճացներ բոլոր հոգիները։ Այսպես,— ինչ որ ամենեն կարևորն է դիտելու,— բանաստեղծությունը անջատ չէր ժողովուրդեն, իր մեկ որոշ մասով՝ անոր համար և անոր մեջ կերկնվեր, անուշ կապրեր, անորն էր. բանաստեղծներն իրենց տաղերեն մեկ քանին ամեն շրթունքներու վրա տարածված տեսնելու երջանկությունն ունեին։ Սակայն կծաղայեր հզոր կապ մը հաստատելու, նախ արտադրողներուն միջև,— բանաստեղծ, գերասան, երգիչ, երգահան,— և երկրորդ՝ արտադրողին և

ժողովուրդին միջև, որ դիրար կճանչնային ու կլրացնեին։ Անհրաժեշտ տարր մըն էր երգը ամեն բանի մեջ, ամեն տեղ էր ան՝ թատրոնը, փողոցը, զբոսարանը, սալոնի մեջ, սեղանի վրա, երեկոյթներուն. կարելի չէր զգալ, կարելի չէր ապրիլ առանց անոր։

Այս գլխավոր ազդակներուն հետ, իր համեստ, բայց մեծապես օգտակար դերը կկատարեր նաև լսարանը։ Ոչ միայն տաղեր կքերթեին, խաղեր կներկայացնեին, այլև կբանախոսեին։ Պարգևաբաշխությանց և ուրիշ հանդեսներու մեջ արտասանված ճառերը բավական չհամարելով, մասնավոր երեկոյթներ կամ ցերեկոյթներ ալ կսարքեին, ուր ազգային մեծագույն դեմքերը կուգային իրենց մտածումը կենդանի բարբառով հաղորդել հասարակության։

Ասոնցմե զատ, այն ատեն խոսակցություն կար, բան մը, որ իր որոշ արժեքն ունի։ Սալոններուն մեջ վերջին ներկայացումը, վերջին բանախոսությունը կամ վերջին հրատարակությունը խոսքի նյութ կըլլային, կարծիքներու փոխանակման առարկա կդառնային, և ասիկա ոչ միայն ժողովուրդին մեջ, այլև ու մանավանդ բարձր դասուն մեջ, ուր գրագետներ, գրասերներ ու մեկենասներ կային։ Կրնանք անվանել Գրիգոր Օտյանն ու Պալյան Հակոբ պէյը, որոնց բնակարանը Պոլսո գրական ու գեղարվեստական կյանքին գլխավոր վառարաններեն եղան։ Առաջնույն տունը կեդրոնավայր մըն էր գրական մարդոց, որոնք հոն ուղեցույց միտք մը, քաջատիրող ոգի մը, համակրության շունչ մը կդտնեին։ Երկրորդը՝ պահապան հրեշտակը եղած է մեկէ ավելի գրողներու և արվեստագետներու, իր անձնական վարմունքով և իր դրամով խրախուսելով զանոնք, իր ջերմ համակրությամբ բարձրացնելով գրականության ու արվեստի վարկը, ջնջելով պաշտոնական մարդու, հարուստ մարդու և գրագետի կամ դերասանի միջև եղած ամոթալի անջրպետը։ Պալյան հայ թատրոնի բարգավաճման նպաստողներեն եղած է, Ադամյանի ու տիկին Հրաչյայի պես դերասանական մեծ տաղանդներու՝ իրենց սկզբնավորության շրջանին, լայնորեն օգնած է, ինչպես և իր առատաձեռն օժանդակությունն ընծայած է Թովմաս Թերզյանի, Սրապիոն Թղլյանի պես գրագետներու՝ իրենց գործունեության առաջին օրերուն։ Օտյան, ոչ միայն Պեշիկթաշլյանին ամենեն ջերմ հիացողն ու ամենեն սրտագին բարեկամն եղած է, այլ իր շուրջը համախմբած է երիտասարդ հուսատու գրողներ, իր թելադրություններով ու հորդորներով զանոնք առաջնորդած և սրտապընդած է, անոնց դիրքի ու համբավի հասնելուն իր որոշ օժանդակությունը բերած է։ Այս երկու մեծ անուններուն քով, կգտնենք ուրիշներ ալ՝ Նիկողոս Պալյան, Գրիգոր Աղաթոն, Տատյան գերդաստանեն մեկէ ավելի անձնավորություններ, Մերյեմ-Գուլի եղբայրներ, տոքթոր

Սերվիչեն, տոքթոր Ռուսինյան, դիրքի տեր մարդիկ, որ գրականության սիրող ու խրախուսող եղած են։

Այս մեծ օրինակներեն մղված, ժողովուրդն ալ ամեն տեղ, ամեն վայրկյան հայ գրականության ու արվեստի գործերու հանդիպելով, սիրած է զանոնք, թերևս ավելի բնազդորեն կամ սովորությամբ, քան խորթափանց հասկացողությամբ, բայց անկեղծ ու ջերմ ոգևորությամբ։ Բարձրաստիճան անձերու չափ, և անոնցմե իսկ ավելի, մեր եկեղեցականներն ալ սիրած են գրականությունը և անոր զարգացման իրենց կարևոր բաժինը բերած են։ Ալիշան, Բագրատունի, Եղվարդ Հյուրմյուզ, Խրիմյան, Սրվանձտյանց, Նարպեյ, Գաբրիել Այվազովսքի իրենց տաղաչափյալ և արձակ գեղեցիկ երկերով ու թանկագին թարգմանություններով առաջնակարգ դեր կատարած են ԺԹ դարու հայ գրական ու ազգասիրական վերածնության շարժման մեջ։ Ալիշան, Խրիմյան և Սրվանձտյանց իրենց հոգեշունչ գրվածքներով խանդավառած են ամբողջ Հայությունը։ Բագրատունի մեզի տված է դասական հայերենով ու դասական ոճով շքեղ դյուցազներգություն մը և Հյուրմյուզի հետ՝ հույն, լատին, ֆրանսական և անգլիական գրականությանց գլխավոր դասական հրաշակերտներուն հոյակապ թարգմանություններ։ Սրվանձտյանց իր անձնական զմայլելի գրվածքներեն զատ, հայ ժողովրդական բանաստեղծություններ ու հեքիաթներ հավաքելու և հրատարակելու և Սասնա ծռեր հայ հին ժողովրդական դյուցազնավեպին առաջին գտիչն ըլլալու արժանիքն ունեցած է։ Բազմավեպին հիմնադիր Գաբրիել Այվազովսքի, բացի շարք մը իր հմտալից գրվածքներեն, Քոռիլովի առակներուն աշխարհաբար համեղ թարգմանությունը տված է մեզի, ու Նարպեյ՝ իր քերթվածներեն զատ կատակերգություն մը և ողբերգություն մը գրած է։

Լրագրությունն ալ այդ շրջանին կներկայանա իբր նշանակելի ազդակներեն մին այդ ընդհանուր ոգևորության։ Ամեն տեսակ թերթեր, պարզ լրագիրը, զավեշտականը, բանասիրականը, բանաստեղծականը, ամենքն ալ կան, թերևս պետք եղածեն ավելի։ Ատոնք միշտ ճըշմարիտ գրականություն չէ որ կպարունակեն, բայց գրեթե միշտ լեցուն են մտավոր կյանքով, կրակոտ ու մերթ կրքոտ վեճերու մեջ են հաճախ իրարու հետ, վեճեր, որոնք ժողովուրդը կզբաղեցնեն, կհետաքրքրեն ազգային կամ մշակութային հարցերով և որոնք, նույն թերթերուն մեջ երևցած հոդվածներու, բանաստեղծությանց կամ երգիծական էջերու հետ, շինիչ գաղափարներ կցանեն հասարակության մեջ, ազնիվ զգացումներ կներշնչեն անոր, կզբոսցնեն կամ կհրահանգեն զայն, անոր սիրտը կտաքցնեն գրականության ու արվեստի հանդեպ։

Բոլոր այս շարժումը արդեն իսկ դպրոցներուն մեջ ունի իր սաղմը։ Տղաք մեծ գաղափարներով կսնանին. իրենց դասարաններուն մեջ, կեսօրվան դադարին միջոցին, կերգեն, կգրեն, կբանաստեղծեն։ Վաճառական, դրական մարդ, սակայն մարդ դառնալու բաղձանքն ամբողջ անանց մեջ կտիրե բանաստեղծ, ուսուցիչ, եկեղեցական, քարոզիչ, հանրային մարդ ըլլալու ձգտումը։ Դպրոցին մեջ գրական կրթություն մը է որ կպերիշխե. գրագիտության ու հայերենի դասերը ամենեն սիրվածներն են, և բանաստեղծ աշակերտը ամենեն նախանձվածը։ Ուսանողները ազգային գործերու վրա կխոսին, գրքի մը, ներիմացման մը, անձի մը կամ գաղափարի մը վրա կվիճաբանին, կուսումնասիրություններ կկատարեն, թեր ու դեմ կարտահայտվին, գրական ամբողջ կյանք մը ունին տարեն։ Այդ պատանիները կկարդան ամեն ինչ, որ դուրսը կհրատարակվի, ազգային կամ ընկերական, գրական կամ գեղարվեստական հարցերու վրա կվիճեն իրարու հետ ու պարզաբանություն հանդիսի ճառերու մեջ բացագանչություններով, «վանմ» բացատրություններով իրենց գաղափարը կհայտնեն։

Եվ այս ընդհանուր ծայրահեղ ոգևորության գլխավոր պատճառներեն մեկն ալ այն է, որ ամեն բան նոր կստեղծվի կամ կվերաստեղծվի։ Քանի մը զարգացած ու նախաձեռնակ մտքեր արարչի ահագին դերն առած են իրենց ուսերուն վրա, կվերակազմեն ազգային գրականությունն ու դպրոցը, ոչինչեն երևան կբերեն ու կձևակերպեն թատրոն, լրագրություն, լսարան։ Ռահվիրայի հոգի ունեցող այդ գործիչներեն յուրաքանչյուրը կշանա առաջին սկսողն ըլլալ այսինչ կամ այնինչ գործին, անծանոթ ճամբա մը առաջին բացողը կամ լքված արտ մը վերստին հերկողն ու ծաղկեցնողը։ Եվ նորության այս հրապույրը, առաջնության եռանդը ծնունդ կուտան աշխատության ու արտադրության այդ տենդոտ տագնապին։

Ժողովուրդը, մանավանդ երիտասարդությունը, ոչ միայն կսիրե գրականությունը, այլև գրագետները։ Անոնց հանդեպ հարգանք, գորով ու հիացում ունի։ Անոնց հաջողություններուն սրտանց կծափահարե և անոնց դագաղին թաղծագին պատկառանքով մը կհետևի։ Երբ Պեշիկթաշլյան կհիվանդանա, ազգին ամենեն բարձրաստիճան անձնավորություններն ու ամենեն ազնվազարմ տիկինները կուգան անոր այցելելու և նույնիսկ զայն խնամելու. անոր մահը համատարած սուգ մը կբերա և անոր շիրմին վրա ուխտի կերթան քանի մը տարի։ Պետրոս Դուրյանի թաղումը չորս հազար հուղարկավոր կհավաքե, անոր վրա հուշարձան մը կանգնելու գաղափարը կունենան, անոր գործերը կհրատարակեն, անոր հիշատակին նվիրված թատերական ներկայացում ու նվագահանդես կատարեն։

Ոգևորության այս պատճառներուն վրա պետք է ավելցնել ամենեն կարևորները մեկը, որ թերևս ազդյուրն իսկ է այդ բոլորին,— այսինքն այն գրականությունը, որով մտքերը կռանին, ոսմանտիկ գրականությունը՝ համակ ավյուռ ու հափշտակություն։ Կարդալով ամեն օր այն հրեղեն զգացումներով լեցուն վեպերն ու արծվային սլացքով բանաստեղծությունները, հանախ հանգիստաբեր ըլլալով հուզմամբ ու եռանդով բաբախուն ոգևորությանց ու տագնապներուն, հոգիները ահեղագին չեմարություն մը և արբեցում թեր ստացած էին։ Եվ այդ գրականությունը, ընդհանուր մտավոր այդ վիճակին պատճառ ըլլալե հետո, անոր արդյունքն ալ եղավ։ Այդ բարբարյալ հոգիներեն բացավառ գրվածքներ, ալեբռալաց քերթվածներ ելան, մերթ ուռուցիկ ու սնամեջ, բայց հանախ ցնորաշունչ, ու երբեմ գանգաղ, երբեմ ցատաս։

Պետրոս Դուրյան քանի ունեցավ այդ խանգավառության շրջանին հայտնվելու*, և այդ շրջանին ալ վերջերը, ամենեն բարբարյալ օրերուն, այդ թեզուն շրջանին մեջ, ուր նոր ժամանակներու մեր մեծագույն քնարերգվենին ունեցած ենք՝ Ալիշանը, Պեշիկթաշլյանը, Թերլյանը, Սահմյանը։ Դուրյան եկավ այն միջոցին, երբ հոգիները լեցված էին վառեմ բաներով, հուզման ճիչերով, աղցանքով, աղյունով, ճախրանքով։ Ինք, ազնվազգի մեծաբ, ընաթենեն մեծապես օժտված, անավ այդ հրեղեն մթնոլորտով, ու այդ զգացումի գրականության ամենեն հոծ ու ամենեն տաք ներկայացուցիչը եղավ։ Այն գործը, զոր արտադրած է, իր ժամանակի ազգին խառնվածքն է, անոր փքոցուտուց հանարարական տարրը կպարունակե (թատերգությանց մեծ մասը), ինչպես և անոր ավյունը, հափշտակությունը և լարված զգայնությունը (տաղերը, նամակները և թատերգությանց հրաշ մասը)։ Բայց ինչ որ Դուրյանի գործին լավագույն բաժինը կհատկանիշե, գրեթե կկազմացնե իր ժամանակակիցներուն արտադրությանց մեջ, իր զգացման բացարձակ անկեղծությունն է և իր շեշտին հազվագիպ ինքնիկությունն ու խորությունն է և առանց հետևանքով իր ամեն ծայրահեղ խկատությունը. ու առանց բացատրությունը ոչ միայն իր խառնվածքին, այլև իր անձնական կյանքին մեջ կրնանք գտնել։ Դուրյան շատ աղքատ և ռամիկ ընտանիքի մը զավակ էր. թշվառությունը, որուն հետ միշտ դեմ առ դեմ գտնվեցավ և որուն վերջ ի վերջո զոհ տվավ իր առողջությունը, իր երիտասարդու-

* Խանգավառության շրջան, որ ազատորեն կրցավ զարգանալ և իր արդյունքները տալ, որովհետև Փարք գրաքննության խոշընդոտը այդ օրերուն գոյություն չուներ։

թյունը, իր կյանքը, տառապանքի ներքին կրակովն ավելի ևս տաքցուց անոր արդեն ի ծնե տաք սիրտը։ Բարձր ընկերության մեջ մտնելու առիթ չունենալով, ինչպես մեր մյուս վերոհիշյալ բոլոր բանաստեղծները, անոնցմե ավելի եղավ սիրահար մեկուսացման, հետևաբար և խոկման ու երազի, ավելի երկչոտ, ամոթխած, ավելի նախնական, ավելի բնական, ավելի ինքնաբերաբար բանաստեղծ։

Պետրոս Դուրյան տխուր բարեբախտությունն ալ ունեցավ հիվանդ ըլլալու և կանուխ մեռնելու։ Զինք կրծող ախտին տենդը տարօրինապես հուզիչ թրթռում մը տվավ իր երգին, ինչպես և իր մոտալուտ մահվան սևեռյալ մտածման ստվերը խորհուրդի ու ցավի մռայլ ջրդեղով մը օծեց զայն։

Հետո, մյուսներուն պես, դասական ընդարձակ կրթություն մը չընտացավ ինքը։ Կույս պահեց իր հանճարը պայմանագրական ազդեցություններե։ Ազգային վարժարանի մը մեջ հին գրականության վրա իր ստացած ընդհանուր ծանոթություններովը բավականանալով ու, իր հզոր բնազդին մղմամբ, չհարելով այդ հին դպրոցներուն, ամբողջ հոգիովը փարեցավ ռոմանտիկ գրականության, որ իրեն ուղղակի կխոսեր և զոր թերևս ինք պիտի ստեղծեր, եթե արդեն իսկ գոյություն չունենար։ Եվրոպացի ռոմանտիկ հեղինակներուն գլխավորները և հայ ռոմանտիկ թատերգություններն ու բանաստեղծությունները շատ ավելի կարդաց ու սիրեց, քան դասական հրաշակերտներու գրաբար հայերենով թարգմանությունները և դասական ոճով հայ բանաստեղծներու գործերը, խորշեցավ նմանողութենե, որ դասականներուն գրական միջոցներեն մին էր, գաղափար ու բացատրություն իր սրտին մեջ միայն փնտռեց։

Եվ ան իր լավագույն էջերուն մեջ ոչ թե մեծաժխոր բառեր ժայթքեցուց ոմանց պես, այլ իր հոգիին պատմությունը երգեց ու ողբաց, ոչ թե գրաբար գրեց շատերուն պես, կամ գրաբարախառն աշխարհաբար ամենուն պես, այլ գրեթե զուտ աշխարհաբար մը, շատ մոտիկ ժողովուրդին կենդանի խոսվածքին՝ համոզված ըլլալով, թե այդ լեզվով է, որ իր զգացումներն իրենց բնական շեշտը պիտի գտնեին։

Բ

ԴՈՒՐՅԱՆԻ ԳՈՐԾԸ

Պետրոս Դուրյանի գործը կբաղկանա թատերգություններե, նամակներե և տաղերե։ Թատերգությունները, ծավալով ամենեն ստվար,

բայց իրենց մեծ մասին մեջ՝ արժեքով ամենեն նվազ կարևոր արտադրություններն են հեղինակին. նամակները, որոնք կարծես տաղեր են՝ արձակով գրված, բանաստեղծին հոգիեն փրթած էջեր են. իսկ տաղերը ամբողջ Դուրյանն են։

Հետևելով ուրեմն այս վերելական աստիճանավորության, պիտի քննենք նախ Դուրյանի արձակն ու հետո իր ոտանավորները։

ԴՈՒՐՅԱՆ ԱՐՁԱԿԱԳԻՐ

Դուրյանի արձակը իր ժամանակակից գրողներու արձակեն զգալի կերպով կտարբերի։ Գյուտերով լի ինքնատիպ արձակ մըն է, հակիրճ, ջղուտ ու գունագեղ։

Բայց այդ արձակը միշտ նույնը չէ իր թատերգությանց ու իր նամակներուն մեջ։ Առաջիններուն մեջ կգտնենք ընդհանրապես այդ ժամանակաշրջանի գրողներեն շատերուն արձակը, հաճախ ուռուցիկ, առանց գրոշմի, հարյուր անգամ կրկնված նմանություններով։ Զգացումները, մտածումները, որ այդ խաղերուն մեջ կարտահայտվին, բացատրությունները, որոնցմով անոնք կթարգմանվին, նյութերը, որոնց շուրջ կդառնան այդ խաղերը, այդ ատենվան մերոնց գրած թատերգություններեն շատերուն մեջ գտնվածին պես են,— բացի Թատրոն կամ Թշվառներեն, որուն նյութն ու ոգին մեծ նորություն մըն են մեր թատերական գրականության մեջ, և բացի նաև լեզուեն, որ պարզ աշխարհաբար է, մինչ նույն շրջանի բոլոր մյուս հայ թատերագիրներուն լեզուն գրաբարախառն աշխարհաբար է։ Կան սակայն այդ թատերգության մեջ հատվածներ, մերթ ամբողջ տեսարաններ, ուր—ինչպես քիչ հետո ցույց պիտի տամ— բանաստեղծ Դուրյանը կերևա իր զգացմանց ջերմությամբ, իր անձնադրոշմ, պատկերալից ու տաք ոճով։

Իսկ նամակներուն մեջ, ուր բանաստեղծը, ոևէ հետևողութենե հեռու, ինքզինքն իր հանճարին ու հոգիին լոկ հանձնած՝ իր կյանքին տոմարը կպատմե, իր արձակը ծայրե ծայր բոլորովին նոր ու անձնական է և տարիներ հետո երևան եկող գրական նոր-նոր սերունդի մը արձակին նախատիպարը կհանդիսանա։

ԹԱՏՐԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետրոս Դուրյան գրականության մեջ այս սեռով մտած է։ Իր առաջին գործը, որ ունի որոշ արժեք, Վարդ և Շուշանն է։ Իր թատերական գործերը ինը հատ են, և հետևյալ կարգով գրված.

1 Վարդ և Շուշան կամ Հովիվի Մասյաց (1867). 2 Սև հողեր կամ Հեթին գիշեր Արարատյան (1868). 3 Առաքել Աշխարհակալ (1869). 4 Անկումն Արշակունի Հարստության (1870). 5 Ապստամբությունք Պարսկաց ի Հայս կամ Ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց (1870). 6 Կարծանումն Հռոմմա (?). 7 Շուշանիկ (?). 8 Տիգրան Բ (?). Թատրոն կամ Թշվառներ:

Այս խաղերուն առաջինը, երկրորդը, չորրորդը, հինգերորդն ու իններորդն է միայն, որ հրատարակված են Դուրյանի գործերու առաջին տպագրության մեջ. մյուս թատերգությանց ձեռագիրները կորսված են. միայն Առաքել Աշխարհակալին ամբողջության և Տիգրան Բ.-ի հինգ «երեկույթ»-ներեն երկուքին օրինակություն մը պահպանված է մենա բանաստեղծին գրասեր եղբոր՝ Եղիշե վարպետի մոտ, հանգուցյալին ուրիշ գրվածքներու ձեռագիրներուն հետ և առանց տեսությունների ամփոփումը և քանի մը հատվածներու ընդօրինակությունը Մաքսուտ Միհրդատյանցն է, որ ինծի ղրկած է։ Իսկ թե ի՞նչ եղած են, ո՞ւր են մնացած՝ Տիգրան Բ-ի երեք «երեկույթ»-ներուն և Շուշանիկի ու Կարծանումն Հռոմմայի ձեռագիրները, չենք գիտեր։

Այս վերջին երկու խաղերուն գոյությունը իմացած եմ Միհրդատյանցեն, ու ինքն ալ ատիկա իմացած է Եղիշե վարպետեն։

Այս թատերգությունները Պեշիկթաշլյանի, Ս. Հեքիմյանի, Թերզյանի ողբերգություններեն այն գլխավոր տարբերությունն ունին, որ այս վերջինները հետևողություն են դասական ողբերգությանց. Թերզյանիները՝ ռոմանտիկ տաղամի երանգ մը առնելով տեղ-տեղ, մինչդեռ Դուրյանինները միմիայն ռոմանտիկ են։ Եվ ասիկա ոչ միայն արդյունք է Դուրյանի խառնվածքին, այլև ազդեցության իր դասատու Սրապիոն Թղլյանին, որ մեր մեջ առաջին ռոմանտիկ թատերգությունները գրած է՝ հետանալով Քորնեյլեն, Թատենեն, Ալֆիերիեն, մասնավորապես Շեքսպիրի, Շիլլերի, Տյումա Հոր, Հյուգոյի. իր կայրն Տիրանը՝ Հյուգոյի Արքայն կզբաղեցնի հետևողությունն է, իր էլեոնորան՝ Շեքսպիրի Ռոմեո և Ճուլեթը կհիշեցնեն։ Դուրյան կարդացած է իր ուսուցչին թատերգությանց ձեռագիրը, անոնց ներկայացմանցը հանգիստես եղած է, ինչպես և ներկայացմանցը Տյումայի, Հյուգոյի, Շիլլերի խաղերու, որոնք այդ միջոցին սկսած էին տիրել մեր բեմին վրա ավելի ջերմ ընդունելություն գտնելով, քան դասական խաղերը. և իր հազիին ու ճաշակին ավելի մոտիկ զգալով զանոնք, հարած է անոնց և իր առաջին փորձեն մինչև վերջին տոմը այդ արվեստով ու այդ ոճով գրած է։

Արդ, մեկդի դնելով անստհման Շեքսպիրը, որ թե՛ դասական է և թե՛ ռոմանտիկ, որ թե՛ հազբանական խորությամբ և թե՛ քնարերգական զորությամբն կլանքի հարազատ արտահայտիչ, իրականության հոյակապ թարգման է, Հյուգոյի, Տյումայի, Շիլլերի թատերգությանց արվեստն ու ոճը ամենեն վտանգավորն են անոնց համար, որ հանճարի փայլակը չեն փրկեր կարգ մը չափազանցություններ ու անբնականություններ։ Երբ մարդ Շիլլերի բարձր մտածողությունն ու ազնվաշունչ քնարերգությունը, Տյումայի թատերական ճարտարությունը և Հյուգոյի հզոր թռիչն ու ձևական կորովը չունի, կրնա ծիծաղելի բան մը արտադրել՝ կատկորեն հետևելով այդ արվեստին ու ոճին։ Եվ Դուրյանի թատերգություններու, իրենց ասվարտգույն մասին մեջ, այդպես են։ Պետք չէ հոն փնտռել բարքերու, ժամանակի և նկարագրերու մանրակրկիտ ուսումնասիրություն։ Հանգամանքը, պատմությունն է խառակցությանց վերածված, բացատրություններով, հնչուն բառերով ծանրաբեռնված։ Հաղիվ տեղ տեղ պերճախոս հատված մը՝ պատասխանությանց մեջ կարված, կամ զգացմամբ բաբախուն խառակցություն մը՝ սնամեջ գոռում-գոչումներու տակ թաղված։ Այդ բոլոր խաղերն ալ, ռոմանտիկ թատերգությանց ավանդական բանաձևին համաձայն, երկու տիրոջս կերեն կամով մը միացած (Վարդ և Շուշան կամ Հովիվի Մասյաց, Թատրոն կամ թշվառներ, ևն), բազմաթիվ բանաստեղծներ ունին (Սև հողեր, Թատերգություն երգախառն, յերկու թվականս, ի հինգ արարս, յերիս պատկերս և ի մի վերջաբան)։ Բոլորն ալ լեցուն են անհրաժեշտ դավաճանություններով, առևանգումներով, թունավորումներով, հանկարծական հայտնություններով, տեսարանի բոլոր ծանոթ անակնկալները, ելքերն ու մուտքերը, որոնք դրան սեմին վրա իրարու կրաղխին միշտ, և բոլոր անձնավորությունները, որոնք մինույն ծաղկապաճույճ լեզվով կխոսին, ու երգերն ու տեսարանի շողշողումները, որոնք զվարճության հանդեսի մը կերպարանքը կուտան ներկայացման. ու միշտ ամեն աբարվածի վերջը այն «շանթահարիչ» բառը, որուն վրա վարագույրը կիջնե (նախատիպար՝ Հյուգոյի Լուքրեցիա Պորնիայի վերջաբանը՝ «Զարկի՞ր զիս, Ճենարո, ես քու մա՛յրդ եմ»)։

Դժբախտություն մըն է, որ Պետրոս Դուրյան թատերգություններ գրելու հետամուտ ըլլալով շատ բան փճացուցած է իր տաղանդեն, որ ճշմարիտ զգացման տաղանդ մըն է և քնարերգության մեջ միայն կրնար գտնել ու գտած է իր հարազատ արտահայտությունը, «Մե՜ղք,— կըսե եղեր Սրապիոն Հեքիմյան,— որ այդ տղան թատերգություն կգրե, անիկա բանաստեղծ ծնած է»։

Թատերգությունները շատ ժամանակ գողցած են իր արդեն խակ

կարճատև կյանքեն և իր զմայլելի տաղերուն ավելի բազմաթիվ չըլլալուն պատճառ եղած են։

Վարդ և Շուշանը սիրային հովվերգության արձակ քերթված մըն է թատերգության ձևով շարադրված։ Պատանության արշալույսին գըրված այս գործին նյութը տղայական հղացում մըն է, բայց իր միամտության մեջ՝ սիրուն։ Անձերն ու դեպքերը կշարժին, կապրին, կանցնին հեքիաթներու աշխարհին մեջ, ուր միաձույլ չարերն ու միաձույլ բարիներն իրարու հետ կմրցին, դեպքեր՝ տարբեր մեր տեսածներեն, անձեր, որոնք մեզի պես չեն։ Առաջին սիրույն անմեղ ու թափանցիկ շողերովը տոգորված գործ մըն է, առաջին երիտասարդության կոկոնին փթթումը իր կուսական մեղմ ու մաքուր բուրումովը, բանաստեղծին կյանքին ու տաղանդին առաջին զարթումն է, որ ներշնչած է այդ գործը, որ ծաղկի հոտ մը, զեփյուռի սույլեր ու լուսնի պայծառություն մը կզգացվի։ Քանի կարդաս զայն, կմոռնաս իրականությունը, կմոռնաս արվեստն ու իր պահանջները և անձնատուր կըլլաս այն թեթև հրապույրին, որ կարտաշնչվի էջերեն և եթե ուզես պահ մը տղայանալ, պիտի տեսնես, որ խաղին հերոսներուն արցունքը քու աչքերդ ալ պիտի թրջե։ Ու ի՞նչ քնքուշ գաղափար, Վարդ և Շուշան կոչել խաղին հերոսն ու հերոսուհին, երկու ծաղիկներ, և ծաղիկներուն ամենեն փափուկները, որ իրար կսիրեն և խաղին գործողության մեջ, իրեց խոսքերուն մեջ, իրոք ծաղիկներ են այդ երկու սիրահարները, որոնք կբուրեն ավելի, քան կհառաչեն, որոնք կթոռմին ավելի, քան կտառապին։

Գալով ոճին, սիրային տեսարաններուն մեջ՝ բավական նոր է ու մերթ շատ գեղեցիկ, թեև տկարություններով ու կրկնություններով խառն. մյուս տեսարաններուն մեջ միջակությունն է, կամ ավելի ճիշտ՝ խակությունը, որ կգերակշռե։ Տեղ տեղ մտածման ու բացատրության նորությամբ լի հատվածներ կգտնենք, որ կատարյալ մարգարիտներ են.

«Ի՞նչ է եղեր ուրեմն հեշտությունը. զեփյուռ մը, որ հրատապ սիրտ մը զովացնելով և իր հետքին վրա արցունք սփռելով կը սահի, որուն զովությունը մանրերկրորդ մը կը տևե...» (Վարդ և Շուշան, Ա արար, տեսիլ Ա)։

Ահա՛ մտածում մը, որ հասուն է տասնհինգ տարեկան պատանիի մը համար, մտածում մը, որուն մեջ վաղազարթուց սիրտ մը և լավ հասկցված ընթերցումներ կզգացվին։

Վարդի և Շուշանի երկանվագը (Ա արար, տեսիլ Դ) զեղուն է փափուկ ու տաք զգացումով մը։ Գաղափարները լուսնակ գիշերի մը թափանցկությունն ու բացատրություններն առաջին համբույրի մը թարմությունն ունին։

Շուշան.— Սերը կենաց գարունն է, որ մեր սրտին մեջ կը փթթի և համբույրն անոր զեփյուռ է, որ մեր սիրաբորբոք սրտերը կը զովացնե... Տե՛ս, Վարդ, բոլոր բնությունը սիրով կը խայտա... լուսինը սեր կը ցողե, ծաղիկը սեր կը բուրե, հողմիկը սեր կը շնչե, թռչունը սեր կը գեղգեղե, տերևը սեր կը սոսափե, առվակը սեր կը մրմնջե...

Վարդ.— ...Քու սրտիդ ծալքերը շուշանա թերթերուն պես անբիծ են. քու նայվածքդ արշալույսույն առաջին ճառագայթին նման քաղցր է, քու շունչդ առավոտյան զեփյուռին չափ հեշտալի է...

Շուշան.— ...Հիմա սեր կը շնչենք միատեղ, այնպես չէ՞, Վարդ, միշտ պիտի սիրենք զիրար, ինչպես որ ծաղիկն ու զեփյուռը միշտ զիրար կը սիրեն... ո՜հ, տե՛ս, ինչպե՞ս ուժգին կը բաբախե սիրտս, կարծես թե կուրծքս ծակելով քու սրտիդ քով թռչիլ կուզե։

...Այն բաբախուն սիրտը, զոր դու իմ լանջքես մոռեցուցիր, սիրտ քնար մ'էր այն, որ սրտիս խորը նորափթիթ սերն արթնցուց...»։

Կզգացվի, որ սկսնակի անփորձությանցը մեջ ապագա վարպետ մը ծնած է, մտածումներ գտնելու, զգացումներ խտացնելու և զանոնք բուն բառերովն արտահայտելու արդեն կարող։

Գ արարի Զ տեսիլին մեջ սքանչելի խորությամբ ու կորովով խոսք մը կա՝ զգացման ու բացատրության հազվագյուտ խտությամբ։ Հուսահատ սիրահարն է, որ մահը կանչելով, կգոչե.

«...Գերեզմա՛ն, թող հատակդ խոր ըլլա, որպեսզի գիշերվան լռության մեջ աշխարհիս երեսին սլացող սիրո խոսքերուն և համբույրներուն մրմունջը չըլլա, որ թափանցե և իմ վշտահար սավերս յուր խոր քունեն արթնցնելով՝ աչքերեն արցունքի սառած կաթիլներ հոսեցնե...»։

Վերջին արարին Ա տեսիլին մեջ Սուրմակ, Շուշանն առևանգողը, պաշտումի հզոր շեշտով մը լեցուն հետևյալ պատկերալի խոսքերը կըսե անոր.

«...Գիտցի՛ր, որ երբ սիրո անկեղծ ժպիտ մը ծագի այտերուդ վրա, այս խավարչտին քարայրն ալ պիտի լուսավորվի, այն ժպիտը արև մը պիտի ըլլա ինծի և քեզի համար... երբ զիս սիրես, այս քարայրը դրախտ մը պիտի ըլլա... երբ ժպտիս, այս սև կամարները պիտի ոսկեզօծին. երբ աչքեդ ուրախության կայլակներ հոսին, յուրաքանչյուրն իբրև ծաղիկ պիտի փթթի հոս. իսկ երբ շրթունքներդ համբույր տան, անոնց մրմունջն իբրև քնարի քաղցրաձայն նվագներ պիտի դրոսցնեն զմեզ»։

Սրտաշարժ հատվածներ կան վերջին արարի Գ տեսիլին մեջ. Սուրմակ ավազակը Շուշանն առևանգած ու բերած փակած է իր քարայրին մեջ և գիտնալով, որ ան չի սիրե զինք և անձնատուր ըլլալ երբեք

պիտի չուզե, անոր իսկ քնացած միջոցին կբռնաբարե զայն։ Շուշան, ամոթահար ու հուսահատ, ինքզինքը կզարնե գաշույնով մը, զոր քարայրին մեկ անկյունը կգտնե. այդ պահուն է, որ Վարդ, անհետ կորսված Շուշանը փնտռելու ելած, պատահմամբ այդ քարայրը կմտնե, և երկու սիրահարները իրար կգտնեն, բայց հավերժական հրաժեշտը իրենց տալու համար.

Վարդ.— ...շատ գժվարությամբ հոս մտա, և ահա քու քովդ եմ... բայց ինչո՞ւ չես աճապարեր, երթա՛նք... բայց այս ի՞նչ խռնավություն է... այս ի՞նչ գաշույն է... (ասկմամբ նիշ մը կարձակե) Ասված իմ, կը զարհուրեցնես զիս, Շուշան... հեծկլտա՞նք, ո՜հ, ըսե՛, ի՞նչ կա, ի՞նչ եղար... կը խենթանամ... կը սարսափիմ. ա՜հ, արյուն կը վազե սրտեդ... ի՞նչ ըրիր Շուշան. օգնությո՜ւն, օգնությո՜ւն...

Շուշան.— Ամեն ճիգ ընդունայն է, Վարդ, հարվածը սրտիս վրա է...

Վարդ.— Ա՜հ զոնե այդ գաշույնը տուր, որ ես ալ քեզի հետ մեռնիմ...

Շուշան.— Ո՜չ, ո՜չ, դու պիտի ապրիս...

Վարդ.— Եվ ինչո՞ւ համար...

Շուշան.— Վրեժս լուծելու համար...

Վարդ.— Մի՞թե Սուրմակ... այն հրեշը...

Շուշան.— Նենգությամբ հափշտակեց ինձնե զանձ մը, զոր քեզի կը պատեի...

Վարդ.— Ի՞նչ կը խոսիս, Շուշան, մի՞թե զիս ողջ ողջ գերեզմա՞ն գնել կուզես... այդ խոսքը մահվանե ավելի սարսափեցուցիր ... սառեցուցիր զիս...

Շուշան.— Եվ ահա ասոր համար մեռնիլ ուզեցի, վասնզի պիտեի, որ քո սիրտդ ապժանի շպիտի ըլլայի, պիտեի, որ զիս այսպես պիտի նախատես... Բայց եթե գիտնայիր, Վա՜րդ, որչափ ցավ քաշեցի քեզնե հեռու... առանց արևու նշույլ մը տեսնելու... առանց անուշիկ զեփյուռ մը շնչելու... ասրեմն կատե՞ս զիս, Վարդ... չե՞ս գթար... չե՞ս նեղեր ինձ...

Վարդ.— Ո՜չ, ո՜չ, չեմ կրնար ատել զքեզ Շուշա՜ն, այլ միայն կանիծեմ այն անձը, որ զքեզ և զիս թշվառ ըրավ... ա՜հ, եթե դու մեռնիս, ի՞նչ պիտի ընեմ, ես մենակ աշխարհիս վրա... ես ալ կուզեմ մեռնիլ...

Շուշան.— Չէ՛, չէ՛, Վարդ, դու ինչվան մահդ լերանց վրա մենավոր պիտի ապրիս դու և իմ հոգվույս համար... արդեսպի ցերկինս երկուքս ալ երջանիկ ըլլանք հավիտյան... բնավ մի՛ վար ինձի համար... ապրիս դիտցիր, որ երբ ցերկինս թռչինք, երկինքի հրեշտակք իրենց փափկիկ թևերովք պիտի սրբեն մեր աչյունքը, հոն միշտ պիտի ժպտինք և պիտի հարցնենք իրարու, թե ի՞նչ է արտասուքը... ծաղկանց մեջ պիտի ննջենք հանդիստ, զի հոն չկա մեկը, որ մեր մեջ սուր նետե...

Վարդ.— Բայց կենացս օրերն առանց քեզի իրրև մեն մի արցունք պիտի սահին. դու յերկինս երջանիկ պիտի ըլլաս, իսկ ես երկրի վրա թշվառ... միշտ թշվառ։

Շուշան.— Ես պիտի աղոթեմ Հանապազ Ամենակալին աթոռին առջև ծունր դրած, որ զքեզ շուտով իմ գերկս դարձնե, միշտ պիտի երազիդ մեջ գամ զքեզ մխիթարելու, և դրախտին ծաղիկներովը արցունքդ սրբելով՝ այն արտասվաթորմ փունջն Ամենակալին պիտի ներկայացնեմ...

Վարդ.— Բայց այն քաղցրիկ երազոցդ արթնությունք խիստ դառն պիտի ըլլա ինձ. ուրեմն ես ալ միշտ ննջեմ, որ անդադար զքեզ երազեմ...

Շուշան.— Ի՞նչպես պիտի զատվիմ քեզնե Վա՜րդ, ահավասիկ կենացս հետին վայրկյանը կը մոտենա. այս արյունոտ ու բաբախուն սիրտը վերջին անգամ սեղմե կուրծքիդ վրա, վասնզի քիչ ատենեն պիտի սառի նա, մուռեցուք ճակատդ շրթանցս, որոնք քիչ ատենեն պիտի թառամին... վերջին համբույրը մը, սիրելի Վարդս, վայրկյան մը անգամ զիս մոռեդ մի՛ հաներ, եթե ոչ, այն վայրկյանը ինձ համար ախրության գիշեր մը պիտի ըլլա. միշտ քու գերկդ երեսակայե զիս, շրթունք շրթունքի, աչք աչքի, ինչպես երբեմն կը ննջեինք միատեղ... մի՛ թողուր զիս, Վա՜րդ, դեռ գրկե՛ զիս... մնա՛ս բարյավ (Կը մեռնի):

Բայց գրեթե այսչափ է ամենը. ասոնցմե դուրս ինչ որ կա, շատ քիչ անգամ միջակեն վեր կելլե։ Երգերը մասնավորապես,— ինչպես Դուրյանի թատերգությանց բոլոր երգերը,— որոնք հատուկ անխնամությամբ մը գրված են, տարօրինակ կերպով տկար են և զարմանալի կերպով գրաբարախառն, Ներքեմն մինչև իսկ հայր— Աբսենական հավեր առնելով.

Համբույր հազար հոգվոյն ընդդեմ,
Եվ անդանոր սգել ըզքեր,
Ի շուրթն ի սիրտ և ի հոգի
Ուխտել ըզսեր հավերժական։

Այս թատերգության արձակ մասերը գրեթե զուտ աշխարհաբար են, խոսակցության լեզուն՝ իր սեփական ձևերով ու բառերով, երբեմն գրաբարի թեթև բիծերով այլայլված, բիծեր, որոնք հաջորդ թատերգությանց մեջ պիտի անհետանան հետզհետե, նամակներուն մեջ բո-

լորովին պիտի ջնջվին, տաղերուն մեջ շատ քիչ պիտի մնան՝ հանգի կամ ոտքի համար։

Սև Հողերը, հակառակ վսեմին հասնելու ձգտող ճիգերու, շատ վար է Վարդ և Շուշանեն։ Թատերգություն իսկ դժվար է կոչել զայն, որովհետև որոշ գործողություն մը չկա, որ այդ հինգ արարներուն մեջ հյուսվի ու լուծվի։ Լանկթիմուրի արշավանքն է, որ պատմութենեն ընդօրինակված է, խոսակցությանց շարքի մը վերածված։ Նկարագիրները թույլ են և աննշան։ Վաղենակ, Վահրամ ու Նորայր, ինչպես և Նազենիկ ու Երանյակ, հայրենասերի դերն առած են, ու Վաչե՝ մատնիչինը, զոր Դուրյան ցավալի սխալով մը իր բոլոր պատմական խաղերուն մեջ ի հանդես կբերե և իբր հայ ժողովուրդի աղետներու գլխավոր ու մշտական պատճառ և հայ ցեղին հատուկ ու ավանդական անբուժելի ախտ մը կներկայացնե այս խաղի Վերջաբանին ինչպես և Ասպատակությունք պարսկաց ի Հայսին և Անկումն Արշակունի Հարստությանին մեջ։ Ամենքն ալ գոց սորվածի պես կարտասանեն անվերջ ճառեր ուռուցիկ ոճով, բացագանչություններով լեցուն, ըստ այդ ժամանակաշրջանին հեղինակներեն շատերուն գրելու եղանակին։ Ամենքն ալ կարծես դպրոցե ելած ու հռետորական կանոնները խորապես ուսումնասիրած մարդիկ են։ Ծայրե ծայր՝ անամեջ աղաղակներ, «կեցցե՜», «անկցի՜», «հաղթությո՜ւն», «օգնությո՜ւն», «անե՜ծք» և դեռ բոլոր տեսակները։ Տեսարաններ կան, ուր անձերը դեզադեզ տխուր խոսքեր կթափեն, սրտաճմլիկ ըլլալ ուզող խոսքեր, ծայրահեղ բացատրություններ, որոնք չեն ազդեր, որովհետև սովորության համեմատ շարադրված են և ոչ թե անձնապես ու ջերմորեն զգացված։ Լանկթիմուրը, որ խաղին մեջ կուգա աղվոր բառեր շարել, փիլիսոփա Լանկթիմուր մըն է, գրագիտության համալսարանե վկայական առած, որ կխորհրդածե, կբանաստեղծե, տեսլական մըն ունի, հայ մատնիչները կպատժե և գերագույն փափկությամբ մը, գրեթե չուզելով, կասպատակե Հայաստանը։

Թե Դուրյան խորապես անկեղծ ու խոր հայրենասիրությամբ լեղուն սիրտ մը ուներ, ատիկա ցույց տված է արդեն իր գեղեցիկ քերթվածներե ոմանց, ինչպես և Անկումն Արշակունի Հարստության խաղին մեկ քանի էջերուն մեջ. բայց այն հայրենասիրությունը, որ այս Սև Հողեր թատերգությունը կլեցնե ծայրե ծայր, պայմանադրական է, բառերու մեջ է ամբողջ, ավանդական բառերու, որ այդ շրջանին հասարակաց դրամագլուխ էին։ Խոսակցությունները բնական ընթացք չունին, յուրաքանչյուր խոսող կարծես թե պարգևաբաշխության հանդեսի ճառ մը կարտասանե։ Արարները կսկսին «Մի՜ ծագիր արշալո՜ւյս»ի պես խոսքերով և կվերջանան սապես բացագանչություններով՝

— Հա՜յր իմ...

— Անե՜ծք, անե՜ծք...

— Ա՜հ...

Ամբողջ այդ թատերգության մեջ միակ կտորը, որ գրական որոշ արժեք մը ունի, Լանկթիմուրի մեկ մենախոսությունն է (Բ արար, տեսիլ Ե), բավական պերճախոս ու փայլուն՝ հակառակ ճակատագիր ու այդ «Աստուծո պատուհաս»-ին բերնին մեջ անբնական ըլլալուն։

Թատերգության վերջին արարը կավարտի սապես.

Նորայր.— Եվ ես կերեզմաններու և փլատակա՞ց պիտի տիրեմ։

Նազենիկ.— Կը բավե, որ շղթա չունինք, հա՜յր իմ, ազատ ենք...

Նորայր.— Ա՜լ չմնաց հայ մը։

Նազենիկ.— Մե՜նք հայ ենք։

Իսկ խաղին Վերջաբանը, ուր վերացական անձնավորություններ, Սեր, Հույս, Անմոռություն, են կխոսակցին, կխորհրդակցին կամ կվիճին իրարու հետ՝ Հայաստանի բախտին վրա ճառելով, չեմ սիրեր բնավ։ Հղացումը տղայական է և գործադրությունը ճոռոմաբանական, դիմառնություններով, բացագանչություններով, անեծքներով լեցուն, հեռու խորհրդանշանական քերթվածի մը, զոր կհավակնի ըլլալ՝ ծանրությունն ու խորությունն ունենալե։

Երրորդ խաղը Արտաշես Աշխարհակալ, լավագույնն է Դուրյանի թատերական գործերուն։ Չեմ կարդացած անոր ձեռագիրը, բայց անոր մանրամասն ամփոփումը և քանի մը ուշագրավ հատվածներուն օրինակությունը, զոր Միհրդատյանց ինծի ղրկած է, իմ վրաս գործեցին այն նպաստավոր տպավորությունը, զոր ինքն իսկ Միհրդատյանց, խաղն իր ամբողջության մեջ կարդալով ունեցած է։ Դուրյանի մյուս պատմական թատերգությանց թերությունները հոս ալ կգտնենք, բայց նվազ շեշտված, և այստեղ կհանդիպինք իրական հատկություններու։ Ասիկա ճշմարիտ ողբերգություն մըն է կամ ավելի ճիշտ՝ տոմ մը ռոմանտիկ հղացումով, բայց որուն մեջ կա գործողություն մը, որ առաջին արարին մեջ կհայտնվի, հաջորդ արարներուն մեջ կկնճռոտի ու վերջինին մեջ կլուծվի։ Նյութը բանաստեղծն իր երևակայությենեն հանած է, Խորենացիի պատմութենեն քանի մը ընդհանուր գիծեր միայն առնելով և զանոնք ալ իր քմայքին համեմատ հարդարելով։ Եվ այդ նյութին խորհրդավոր, վիպական, հուզումնալից ջերմության կհավասարի հաճախ ոճն ալ, տեղ-տեղ՝ լավ վիպված միջադեպերով, արագ ու սեղմ խոսակցություններով, իսկապես վսեմ հատվածներով։ Ցավալի է, որ իր գործերու հրատարակիչները այդ խաղին ալ տեղ չեն տված անոր մահվենեն քիչ հետո լույս տեսած հատորին մեջ։ Հոս կար-

տատպեմ էական մասերը այն ամփոփումեն, զոր Միհրդատյանց ինծի համար շարադրած է և քանի մը գեղեցիկ հատվածներ, որոնց օրինակությունն ինծի ղրկած է։

Խաղին տիտղոսն է՝ Արտաշես Աշխարհակալ, թատերգություն երգախառն ի հինգ արարս և ի մի պատկեր։ Շարադրությունն ավարտած է 1 հուլիս 1869-ին։ Անձինքն են Արտաշես Ա՝ արքա Հայոց, Տիգրան Բ՝ արքա Հայոց, Կրյուսոս՝ արքա Լյուդացվոց, Միհրդատ՝ բդեաշխ վրաց, փեսա Արտաշիսի, Վրույր՝ սպարապետ Հայոց, Վարաժ՝ զինավարժ Տիգրանա, Արշեզ՝ զինակիր Արտաշեսի, Խոսրով՝ դեսպան Հայոց, Վահրամ Վահունի՝ քրմապետ Հայոց, Կամադրոս՝ մտերիմ Կրյուսոսի, Պյութոս՝ քրմապետ Լյուդացվոց, Որմզդուխտ՝ սիրուհի Արտաշեսի, թիկնապահք, զորապետք, զինվորք, պահապանք, պալատականք, դահիճք, քուրմք, նավաստիք։

Առարկած Ա. Պալատ։

Տեսիլ Ա. Երգ մը՝ երկու տունե բաղկացած։ Արտաշես մտադիր է երթալ Արեմուտք՝ աշխարհակալության, ուստի Տիգրանը, համախմբված նախարարներուն ներկայությանը, թագավոր կկարգե Հայաստանի, Միհրդատն ալ Պոնտոսի իշխան կկարգե և Վարաժը՝ որսապետ։ Իր ճառին մեջ, տեղ մը ազգայնամոլության ծայրահեղությենե մը բռնված կգոչե՝ «Հայաստանի երկինքը ազգերու պատանքը, Հայաստանի ձորերը օտար թագավորաց գերեզմանը և Հայաստան փառաց խանձարուրք մը պիտի ըլլա։ Հայաստան տիեզերք և տիեզերք Հայաստան պիտի ըլլա»։ Հետո կգառնա Տիգրանին ու տնոր կուղղե խոսքեր, որ ազնիվ են ու գեղեցիկ. «Որդյա՛կ իմ, ահա կը թողում ես Հայաստանը իր փառացն համար, կը թողում այս գեղեցիկ հայրենիքը՝ ուր թագավոր ծնա և կերթամ օվկիանոսի կոհակաց հետ մոնչելու, թագը մեկդի ձգելով՝ սաղավարտ կրելու. թագը սաղավարտեն ավելի ծանր է և դժվարակիր. գիտցի՛ր, որ այս լեռները, ժայռերը, ձորերը և գերեզմանները ձայն ունին թագավորի մը դեմ, որ անիրավություն կը գործե. գահիդ ոտքերը պիտի ըլլան Հայրենիք և Իրավունք, Պատիվ և Արիություն. ասոնցմե զուրկ տեղը անդունդ կա. նայե՛, որ սուրդ չի ժանգոտի իր պատյանին մեջ. թագավոր ու միանգամայն զինվոր եղիր. զարկ, մի՛ զարնվիր. մեռի՛ր, մի՛ հաղթվիր. ջանա՛, որ թշնամիք հոկա Մասիսի կնճռոտ ճակտին չի թքնեն. այն պիտի մնա դարերով Հայուն արձան և հիշատակ, այն պիտի լա Հայկազն դյուցազանց դամբարաններուն վրա։ Գիտցիր, որ Արտաշես երբ խմանա, թե Տիգրան պատերազմի դաշտին վրա հաղթվեր է, սուրը պիտի փշրե իր փառաց ու հույսերուն վրա։

Քիչ մը վերջը՝ կգառնա Վրույրին ու կըսե՝ «Կը հրամայեմ, քա՛ջդ Վրույր, օ՜ն, պատրաստվե՛ փութով, զարնենք ելլագան»։ (Վրույր կմեկնի)։

Տեսիլ Բ.— Արտաշես Խոսրովը դեսպան կղրկե առ Կրյուսոս՝ թագավոր Լյուդվո, իմացնելու համար, թե նեռաձգությամբ արքը մթագնեցնող արտաշիսյան բանակը դեպի Լյուդիա պիտի արշավե, կա՛մ անձնատուր ըլլա, կա՛մ հաղթվի, կա՛մ գահն ընտրե և կա՛մ մահը, են. հետո կերթան մեհյան՝ աստվածներուն փառաբանություն մատուցանելու։

Տեսիլ Գ.— Արշեզ (Որմզդուխտ կերևա և մոտիկ կրնե). Արտաշես աշխարհակալելու կերթա, Տիգրան թագավոր կելլա և պաշտոնատյաց շնորհքներ կը բաշխվին, իսկ ես այսչափ առեն Արտաշեսի հետ կը պատերազմեմ. ազգիկը, սիրեցի, իր ամուսնությունը մերժեց և զայն վրացի Միհրդատին տվավ, վերջապես ամենուն երկրներ շնորհեց և ինձ ափ մը հող չի տվավ, որ խոնջյալ ճակատս հանգչեցնեմ։ Շատ անգամ կըսե՝ «Արշե՛զ, դու քաջ ես, և պետք է որ քովս գտնվիս»։ Այո՛, քաջ եմ, բայց վատ պիտի ըլլամ, եթե վրեժ չառնեմ. հեռն ու ոխը սիրտս կը կրծեն, քենախնդիր սրբ մ'եմ... ա՜հ, երանի՜, թե գեղջուկ մ'ըլլայի և հայր ու մայր ունենայի, արտ մը՝ պատերազմի դաշտի առեզ, ծառի մը շուք՝ մեծաշուք հազթանակաց տեղ, խրճիթ մը՝ պալատի տեղ... զիս այս գժտիքը արդյոք ո՞ր անգութը նետեց, որուն բոցերն են փառք, երազ, նախանձ և վրեժ։

Որմզդուխտ (մեկուսի).— Ե՜ս... որ Արտաշեսը սպանեմ։

Արշեզ.— Ա՜հ, ոչ թագավոր ըլլալ, այլ վրեժ առնել կուզեմ... (Որմզդուխտը տեսնելով) Ուրվակա՜ն...

Որմզդուխտ (ճառաչանալով).— Վրեժդ պիտի առնես։

Արշեզ (մեկուսի).— Կի՜ն մը... մատնվեցա (բարձր), ո՜վ ես դու՝ չո՜ւհի, որ թագավորին պալատը մտնելու կը համարձակիս։

Որմզդուխտ (անոր ավելի մոտենալով).— Մի՛ անարգեր զիս... պիտի ճանչնաս...

Արշեզ.— Բայց ինչու կը մոտենաս ինծի... գնա՛, կորսվե։

Որմզդուխտ.— Հանդեսեն առաջ եկած գաղտագողի քեզ կապասեի։

Արշեզ.— Ես քեզ չեմ ճանչնար... պահա՜...

Որմզդուխտ (ընդմիջելով).— Արշե՜զ...

Արշեզ (մեկուսի, ապշած).— Անունս ալ գիտե... (բարձր) ո՜վ ես դու, ի՞նչ կուզես ինձմե։

Որմզդուխտ.— Ես քեզի վրեժխնդրության սուրը կը բերեմ։

Արշեզ.— Ի՞նչ վրեժխնդրության։

Ռոմզդուխտ.— Վատ ես, եթե քիչ մը հառաջ ըրած ուխտդ մոռցար։

Արշեզ.— Բայց ես ի՞նչպես կրնամ արի Արտաշեսե մը վրեժ առնել, որուն շորս կողմը կը հսկեն հսկայներու խուռն բանակ մը։

Ռոմզդուխտ.— Եվ այն հսկայներեն մեկն ալ դու ես... կին մը քեզի իր թևը կուտա... կը վստահի՞ս... տո՛ւր ձեռքդ։

Արշեզ.— Առանց զքեզ ճանչնալու չեմ կրնար ձեռքս տալ. գուցե այդ ձեռքը, որուն հետ պիտի միավորի իմս ալ, անիրավ և կաշառաբեկ սրտի մը սուրն եղած ըլլա։

Ռոմզդուխտ.— Եթե մորդ անրիծ և վրեժխնդիր ձե՞ռքն եղած ըլլար։

Արշեզ.— Մայր չունիմ ես։

Ռոմզդուխտ.— Եթե ունենայիր, զինքը շատ կը սիրեի՞ր։

Արշեզ.— Հոգիես ավելի. ես հիմա իրեն հետ գեղջկական կյանք մը կը վարեի... ալ զզվեցա պատերազմիկ գերի ըլլալե. զա՛րկ, որ թագավորդ պարծի, մեռի՛ր, որ թագավորդ ապրի։

Ռոմզդուխտ.— Եվ մորդ համար թագավորդ կը զոհեի՞ր։

Արշեզ.— Բայց ի՞նչ հարաբերություն ունիս դուն թագավորին հետ, դու գեղջկուհվո մը կը նմանիս... պալատը նոր կը տեսնես։

Ռոմզդուխտ.— Այո՛, պալատը նոր կը տեսնեմ, բայց Արտաշեսը առջես ծունր եկած պաղատալիս տեսեր եմ... ի՞նչ, միթե դեռ գեղեցիկ չե՞մ. Արտաշես երբեմն գերիս էր, մի՛ զարմանար, պիտի ճանչնաս զիս։

Արշեզ.— Չեմ կարծեր, որ հիմար եղած ըլլաս։

Ռոմզդուխտ.— Ես ալ զքեզ քիչ մը հառաջ հիմար կարծեցի, վրեժխնդիր մը հիմարի մը պես կը խորհի ու կը խոսի, բայց հիմարի մը պես ուժգին է հարվածը. զիս կը ծաղրես, բայց ես ալ զքեզ պիտի ծաղրեմ, երբ սուրը ձեռքիդ մեջ դողդջի... Արտաշես իր աղջիկը քեզմե խլեց և ուրիշ աղջիկ մ'ալ աշխարհքեն... երկուքնիս ալ վրեժխնդիր ենք... տո՛ւր ձեռքդ։

Արշեզ.— Չեմ ճանչնար զքեզ։

Ռոմզդուխտ.— Ուրեմն մտիկ ըրե... Արտաշես դեռ թագավոր չեղած օր մը որսի ելած ատենը գեղանի պարսիկ աղջիկ մը կը տեսնե, որ իր տնակին առջև կաղոթեր. Արտաշես վայրկյան մը կը կենա և զայն զմայլած կը դիտե, և աղջիկը տնակը փախած ատենը՝ մտրակելով ձին սրարշավ կանցնի կերթա. հետևյալ օրը որսի ելած ատենը նույնպես աղջիկը տնակին առջևը կը գտնե և ձեռքի մատանին անոր կը նետե. աղջիկը՝ աղքատ, բայց չընդունիր. վերջապես ամեն օր հաճախելով, Արտաշես աղջկան սիրտը կը գրավե. աղջիկը վերջապես ա՛լ անկե չի փախչիր, երկու շունչեր իրարու կը մոտենան, երկու թևեր զիրար կը գրկեն... Աղջիկը հոգվույն չափ սեր կուտա արքաորդվույն. բավական

ժամանակ կանցնի այսպես. աղջկան ծնողքը անտեղյակ կըլլան այս անցքին. Արտաշես կը խոստանա զայն իրեն թագուհին ընել, երբ թագավոր ըլլա, բայց քիչ քիչ կսկսի իր տեսությունը ընդհատել և վերջապես դադրեցնել։ Թագավոր կըլլա, տարի կանցնի՝ չերևար. շատ օրեր խեղճ կինը Արտաշեսի ճամբուն վրա կսպասե, բայց իզո՞ւր... դեռ կսիրե... օր մ'ալ Արտաշեսի որսի ելած ատենը, հեռվեն կին մը կուգա փութաքայլ՝ դժգույն ու հերարձակ, և գրկի տղան Արտաշեսի երիվարին առջև դնելով, «Ա՛ռ այս տղան,— կաղաղակե,— Արշեզ է անունը, քու զավակդ է, ասոր համար ծնողքես հեռու կը թափառիմ, չունիմ հաց, որ իրեն տամ...» (Արշեզ զարմացական շարժումներ կընե): Արտաշես երեսը դարձուցած՝ թիկնապահաց կը հրամայե, որ տղան առնեն և՝ կսկսի սրընթաց հեռանալ. կինը հուսահատ կիյնա. վայրկյան մը արտասվալից կաղոթե... ալ այնուհետև կատե, և վրեժխնդրության ասուպ մը կըլլա իր սիրտը։ Վերջապես կը մեռնին հայրն ու մայրը, կը գտնե աբիթ, կը գոտեպնդի և ահա այսօր կը հասնի պալատը, կը հարցնե Արշեզը, կը գտնե իր վահանը, կը ճանչնա իր զավակը... այն կինը ես եմ, այն կինը քու մայրդ է...

Արշեզ.— Մա՛յրս (կը գրկվին): Բայց Արտաշես... իմ հա՛յրս...

Ռոմզդուխտ.— Բայց դու իրեն գերին... Տիգրանն է թագավորը, դու չես թագավոր։ Տո՛ւր ձեռքդ...

Արշեզ.— Չեմ ուզեր թագավոր ըլլալ...

Ռոմզդուխտ.— Դահիճ եղիր... մայր ունիս... տո՛ւր ձեռքդ...

Արշեզ.— Ահավասի՛կ։

Ռոմզդուխտ.— Երդվի՛ր...

Արշեզ.— Սրուս վրա։

Առաջին արարի այս վերջին տեսիլը ամբողջությամբ արտատպեցի, որովհետև ռոմանտիկ թատերագրության իսկապես հաջող հատված մըն է Հյուկոյի արժանի։

Երկրորդ արարվածին մեջ բանաստեղծը մեզ կփոխադրե Կրյուսոսի պալատը։

Կրյուսոս զարհուրած տեսարան կուգա և իր մենախոսության մեջ կհայտնե իր սարսափը, աստվածները օգնության կկանչե. կկարծե, թե անոնք իրմե երես դարձուցած են, կբարկանա, կծնրադրե, կվախնա, որ Լյուդիան իր ձեռքեն պիտի ելլե, և ինք իր թագն ու փառքն պիտի կորսնցնե։ Կամաղրոս կուգա, թագավորն այլայլած տեսնելուն կզարմանա, կհարցնե, թե ի՞նչ ունի. Կրյուսոս կշարունակե իր վրդովյալ հոգեվիճակին արտահայտությունները։

Կամադրոս.— *Տե՛ր արքա, հանդարտե՛. դուցե Աստվածները փոքձել կուզեն զքեզ։*

Կրյուսոս.— *Բայց խիստ սոսկալի է, երբ փառասեր սիրտ մը հուզե հզոր ձևով մը... կը կարծե՞ս, որ փառասերը հանդիստ ըլլա երբեք... միշտ տղու մը պես արքունն կեթազե նա, կը հառաչե սիրատարփի մը պես, ամեն բոպե անդունդե անդունդ կը թավալի... առողջ ասաղ կը թռչի... միշտ աչացն առջև տեսիլք... գահը կը շրջապատեն խումբ մը ճիվաղներ, էանայք ծիբանին կուզեն պատռել... վերջապես զինքը կը պատեն աղմուկ, երկյուղ, երազ, ճաճանչ... փառքը՝ այն անհագ հրեշը, միշտ աշխարհի ճախճախուտ անդամանդները արյունաներկ ծաղիկներով կը ծածկե... փառասերին համար գեղեցիկ ասպարեզ մը... մեղկ ձեռքովը հառաջ կը մղե, քալե՛, քալե՛, մինչև որ ոտքդ տայթաքի. բայց զգուշենե, մբռկե մը բռնված ես, մ՛շտ պիտի քալես... Մինչդեռ երեկ գիշեր Արևելքը կեթազեի, ահա այս գիշեր Արևելքեն գիշերվան մեջ սպառնացյալ նետի մը գանչյունը կը լսվի։*

Վերջապես կհայտնե, թե սոսկալի երազ մը տեսած է գիշերը և կպատմե երազը (և այդ հատվածը խաղին ամենեն գեղեցիկներեն մին է, հին ողբերգությանց նմանօրինակ մենախոսությանց կամ խորհնացիի Ամդահակա երազին դյուցազներգաշունչ վիպմանը հետ համեմատվելու արժանի)։

Կրյուսոս.— *Մտիկ ըրե՛... գիշեր էր. լուսինը Ալյուս գետին վճիտ ալեացը մեջ կը լողար .ես այն ատեն գետեզերին վրա կը շրջագայեի, սիրտս ուրախությամբ զեղված, մտիկ կընեի փառաց ներդաշնակավոր դրվատիքները, որոնք սիրտս կօրորեին... ահռելի կամ դիցուհյաց ձայներ էին... որոնց մեջեն երբեմն Կրյուսոս անունը մրմնջող հաղթական եղանակ մը կը լսեի. սիրտս այն ձայներուն հետ կը թրթռար... հանկարծ դափնեզարդ քեռար մը տեսա քովս, ուզեցի փառքս ինքնին ալ դրվատել և այնպիսի բուռն եռանդով մը կը հնչեցնեի, որ լարերը խորտակեցան, լռեցին այն անծանոթ մրմունջներն ու և խոր լռություն մը տիրեց, ակամա դողացի՛... դառն ծիծաղ մը տյս լռությունը խանգարեց և զիս սարսռեցուց. դարձա այն կողմը, տեսա, որ հաղթահռչակ ռազմիկ մը գետին դիմացի եզերքը արձանացած՝ հեգնական ժպիտով մը զիս կը դիտեր... վրաս ծիծաղողն այն էր... զայրույթես աչքերս բոց կը ցայտեին... «Ճանչցա՞ր զիս,— քսավ այն մարդը,— ես Արտաշեսն եմ...». այս անունը լսելուս՝ սուրս քաշեցի... նա ալ ակընթարթի մը մեջ սուրը քաշեց, գետին ասդիի կողմը ցատկեց... սուրերնիս շառաչեցին... բավական ժամանակ տևեց... ույժս սպառեցավ... հարվածն ընդուներ էի... հոգեսպառ՝ գետը ինկա... նա հաղթական*

նայվածք մը նետեց վրաս... «Լյուդիա, դու իմս ես», ըսավ և սլացավ... հետո աղեկտուր հեծեծանքներ լսեցի... գետին մեջեն վերջը՝ հյուծյալ աչքերով Սոզոնը տեսա, որ զիս կոզբար... աչքերս գոցեցի, հավիտենական կոհակ մը վրաս թավալեցավ... և զգացի, որ գետին հոսանքը զիս քշեց տարավ...

Ասոր վրա, Կամադրոսի խորհրդով աստվածներուն ողջակեզներ կզոհվին՝ անոնց բարկությունն խլեցնելու համար, և ահա քրմապետը կավետե. «Երբա, Աստվածներն հաշտվեցան», և խրատներ կուտա Կրյուսոսին՝ աստվածները շրջապատելու համար։ Հազիվ թե խոսքը լմնցուցած է, կուգա Խոսրով ու խրոխտաբար կը խոսի. Կրյուսոսի հետ կառնեն կուտան.

Կրյուսոս.— *Ջեմ կրնար հանդուրժել... երկինք և երկիր...*

Կամադրոս.— *Ո՞վ կատաղությանս...*

Քրմապետ.— *Սրբար դեր...*

Խոսրով.— *Ծ՛ն, պատանեան մը... գահ կամ մահ... խորհեցեք թագ կամ դագաղ...*

Կրյուսոս կհրամայե պալատականներուն, որ Խոսրովը պատվեն հատուկ սենյակի մը մեջ. քրմերք կխորհրդակցին ու կոչեն պատերազմ հռչակել. Կրյուսոս Խոսրովը նորա կանչել կուտա։

Խոսրով.— *Ի՞նչ ըրիր, ո՛ր ապրա. ես խոնարհ ճակատ մը տեսնել կուզեի և խրոխտ ու խաժան գեմք մը կը տեսնեմ... Ի՞նչ վճռեցիր, մեանի՞լ թե խորհիլ...*

Կրյուսոս.— *Հաղթել...*

Խոսրով.— *Կը գթամ, Կրյուսոս, եթե սաղդ փշրի... Արտաշես չը գթար...*

. . . . . .

. . . . . .

Խոսրով.— *Ուրեմն մեռնիլ և Լյուդիան կորսնցունե՞լ կուզեք...*

Կրյուսոս.— *Այո՛, հաղթել և Լյուդիան հավերժացնել։*

Խոսրով.— *Դու չես ճանչնար Հայն ու Արտաշեսը։*

Կրյուսոս.— *Ալ բավական է, սուրս պատյանին մեջ կը խայտա։*

Խոսրով.— *Զղջա՛, Կրյուսոս...*

Կրյուսոս.— *Պատերազմը կ՛սկսինք։*

Խոսրով.— *Ուրեմն մեռի՛ք...* (կը մեկնի):

Գ արարվածին Ա տեսիլին մեջ կտեսնենք Արտաշեսը, որ իր վրանին մեջ մենակ կմրափե, մինչ իր զորքերը վրանեն շուրջ ցիր ու ցան կքնանան։

Արտաշես (կարթնա ու վրանեն դուրս կելնե).— *Դեռ առավոտը*

չէ ծագեր... ահա լուսինը և աստղերը որ կը փայլին ու կը փայլփլին... Ես չեմ կրնար ննջել, այնպիսի բոց մը կը վառի կուրծքիս տակ, որուն կայծերը այս աստղերեն ավելի բյուրավոր են, որոնց յուրաքանչյուրը մեկ մեկ գահ հաճյուն պիտի փոխեն...։ Ո՞վ գիշեր, հեշտ և տխուր, ամպ և երազ, փախի՛ր... դու որ այս նսեմաստվեր անտառին խորը՝ թագս, սուրս և սաղավարտս չես ցոլացներ, չես վառեր զիս ճաճանչներով, չունիս հաղթության ձայներ, զինուց շառաչներ, ծափեր և թագեր, կը ծածկես սև թևերուդ տակ Արտաշեսն ու յուր փառքը... գերեզմանական ստվեր մը ունիս... այս հովը, ալին ու տերևն ալ թող մահվան մրմունջ մը ունենան... բայց ես չեմ ուզեր մեռնիլ ցուրտ քարի մը վրա, այլ փառաց հեղեղի մեջ խեղդվիլ. պիտի իյնամ շնչասպառ գահերու աճյունին վրա միայն, և վերջին շունչս մառախուղ մը, փոթորիկ մը, սուգ մը, սարսուռ մը պիտի տարածե համայն աշխարհ... ես եմ Արտաշեսը, իշխանության ժանտախտը, բռնավորաց սարսափը, դյուցազանց նախանձը, Հայաստանի փառքը... դեռ չեմ մեռնիր, ճերմակ մորուքի մը տակ կուզեմ փառս երիտասարդ տեսնել (Որմզդուխտ կ'երևա, որ կամաց-կամաց Արտաշեսի կը մոտենա)։

Բ տեսիլը խաղին ամենեն հզոր ու հուզիչ մասերեն է, շնքսփիրյան շունչով մը կարծես բոպե մը տոգորված, և անոր այն հատվածը, ուր Արտաշեսեն սիրված ու հետո լքված Որմզդուխտը փառքերով բեռնավորված աշխարհակալին երեսին կպոռա աշխարհի փառքերուն ու մեծության ունայնությունը, մեր դրականության վսեմագույն էջերեն մեկն է։

Որմզդուխտ (մեկուսի).— Ինքն է...

Արտաշես.— Գեղեցիկ է փառքը, միայնության մեջ՝ երազ, բայց աղմուկի մեջ՝ ճաճանչ։

Որմզդուխտ.— Կանցնի փառքը և կմախք մը կմնա... կը սխալիս, ո՞վ թագավոր։

Արտաշես.— Ո՞վ ես դու։

Որմզդուխտ.— Նախ կին մը... երիտասարդություն, սեր, ստվեր, հիշատակ և...

Արտաշես.— Չեմ հասկնար...

Որմզդուխտ.— Մի՛ խոովիր, մահվան հրեշտակ մը չեմ և եթե ըլլայի ալ, կը գթայի քու վրա՛դ...

Արտաշես.— Ուրեմն ի՞նչ կուզես ինձմե...

Որմզդուխտ.— Վասնզի կուզեմ քեզ փառաց երազներու մեջ տեսնել միշտ։

Արտաշես.— Դու, որ այդպես հանդուգն կը խոսիս, կամ խելագար մ'ես և կամ չես գիտեր որու դեմ ըլլալդ։

Որմզդուխտ.— Անշուշտ... վասնզի դուն ալ զիս չես ճանչնար։

Արտաշես.— Ես ոչ քեզի պես կնոջ մը հետ պատերազմ ըրած և ոչ ալ երբեք ճանչցած ունիմ... Ես Արտաշեսն եմ...

Որմզդուխտ.— Երիտասարդության վրա խոսինք, Արտաշես (Արտաշես կսարսռի). կը տեսնես, որ առջի պես գեղեցիկ չեմ... երբ բնության գեղեցիկ ավանդ մը խորշոմներու և ալեխառն մազերու տակ կնվազի, շունչ մը կարող չէ՞ դիպվածի ավանդ մը տապալել... սերը դեպ յանմեղություն և փառքը դեպ յարունհեղություն կը քալե... արյան մեջ ձայն մը կա. դու, որ սիրույդ մեջ սխալեցար՝ փառքիդ մեջ պիտի տուժես. ճանչցա՞ր զիս հիմա...

Արտաշես (մեկուսի).— ...Կը ճանչնամ... (բարձր) Երբեք...

Որմզդուխտ.— Ա՜հ, չե՞ս ճանչնար...

Արտաշես.— Բայց պիտի ըսե՞ս վերջապես, ի՞նչ կուզես ինձմե։

Որմզդուխտ.— Թագուհի ըլլալ կուզեմ։

Արտաշես.— Ա՜հ, բոլորովին հաստատեցիր՝ թե խենթ ես։

Որմզդուխտ.— Դարձյա՞լ խենթ։

Արտաշես.— Միայն շղթա մը չեն կապեր պարանոցդ։

Որմզդուխտ.— Կը տեսնեմ, որ թագը շղթայով փոխանակել կուզես։

Արտաշես.— Միշտ թա՜գ... թագը դատարկ ձեռքով չստացվիր, թագը հզոր սուրի ծայրն է, հիմար կին։

Որմզդուխտ.— Երբեմն ալ համբույրի մը կամ լեզվի մը ծայրն էր։ Կը տեսնեմ, որ սիրտդ լայն է, Արտաշես, պատիր խոստումով մը անբիծ լանջք մը պղծեցիր... ա՜հ, ես թագե մ' ավելի գեղեցիկ էի։

Արտաշես.— Կը զառանցե՞ս կին դու։

Որմզդուխտ.— Անունս տո՛ւր։

Արտաշես.— Բայց...

Որմզդուխտ.— Որմզդուխտն եմ։

Արտաշես.— Ատանկ անուն մը չեմ հիշեր։

Որմզդուխտ.— Սիրտդ ժայռ է, սառ է, Արտաշես, ի՞նչպես կը կոխկրտաս արմատեն թափած ծաղիկ մը։

Արտաշես.— Բայց բավակա՛ն է, ալ գնա, գիշեր ատեն անհանգիստ մի՛ ըներ զիս։ Ուրվականի մը պես պաղ ես։

Որմզդուխտ.— Սակայն միտքդ բեր երիտասարդության որսերդ... կը հիշե՞ս... գյուղը, իմ տնակս, մեր հովանին ու ծաղկե կանաչ անկողինը, այն արցունքները, զոր լանջքիս վրա կը թափեիր, և ես կը

համբերի քաջանամդ, որ դիա սառեցուց, հանդիպումնիս՝ վերջին անգամ, որ Արշեղը քեզի տվի, կը հիշե՞ս։

Արտաշես.— Բայց երբեք չեմ հանչնար քեզ, բան մ'ալ չեմ հիշեր՝ ըսի. պիտի մեկնի՞ս։

Որմզդուխտ.— Հպարտ ես, Արտաշես...

Արտաշես.— Եվ դու ալ համբերություն կսպառես։

Որմզդուխտ.— Թագավո՛ր, դոզա՝ պարսկուհվո մը վրեժխնդրությենեն կամ մեռցուր զիս և կամ մեռիր։

Արտաշես.— Եթե կնաջմա մը դոզայի, Արտաշե՞ս չէի ըլլար, վատ կըլլայի, թագավոր չէի ըլլար, ցահիճ կըլլայի... բայց ես իմ դահճուհվույս կըսեմ՝ «Միշտ ապատ ես»։

Որմզդուխտ.— Մի վստահի՛ր... ամբը հորիզոն մը և վյանքը գերեզման մը, ասողը անկում մը և քախտը անիվ մը ունի... ծաղկին ծոցը ապրյունք, տեղեկին մեջ հառաչ, կոհակին մեջ մահ, խոտի մը մեջ թույն և ափ մը հողին մեջ գանձ մը կամ թագ մը կա... Մի՛ վստահիր, կըսեմ, փառքիդ և զորությանդ վրա եթե առանձին գտնես ինքզինքդ, քու գոռող հրամանդ ու հնչակդ կսպառի վիհերու և լեռներու, անտառներու և դաշտերու անհունության մեջ և ձայնիդ արձագանքն իսկ զքեզ կը ծաղրե... ես ալ գեղեցիկ էի և կը խրոխտայի, գեղեցկությունս անցավ, կուզեմ տեսնել քու փառացդ ցոլմունքն ալ...։ Արտաշե՞ս, ծերությենես ավելի կատեմ զքեզ. շատ անգամ գեղեցիկ ծաղիկները թույն ունին... սրտերը խունկի կը նմանին, որ չայրած՝ անուշ ու հեշտ հոտ չեն ունենար հետ, ոխ, ջրեժ, ատոնք են, որ սիրտս կը վառեն, ատոնք սիրո վերջին բոցերն են, կը մարեն, բայց ամյուն մը կը թողուն... կնոջ արյունը կոհակ կոհակ կեռա, կնոջ դաշույնը կոթիլ կաթիլ արյուն կը քամե... օձի մը պես կը սողա, առյուծը կը կողա։

Արտաշես (սուրը նետելով).— Ա՛ռ Արտաշեսի սուրը, որ մեկ հարված մը ունի, և տեսնե՛մ պարսիկ ու վրեժխնդիր կնոջ մը հարվածը... գիտես որ առյուծը օձեն վախ չունի, թեև թույնը կը գերազանցյե։

Որմզդուխտ.— Ե՛տ առ սուրդ, ես գաշույն ունիմ. կինը սիրության մեջ կապանված, որպեսզի արհամարհան ստոխին միայն իր աշխատան փաղփյունը ցցունե... կը մարի կիյնա, բայց հարվածը հարգված է։

Արտաշես.— Ահա գիրքդ, ահա խավար։

Որմզդուխտ.— Քու աչքդ լույս ունին։

Արտաշես.— Ա՛հ, հանգարտ ա՛յդ կուզես հարվածել։

Որմզդուխտ.— Կինը չը հեշտանար թշնամվույն վերջին հեծեծանքներովը... միայն անոր թարմինը՝ սառած, աչքերը՝ գոց, սիրտը՝ դադրած և վրեժը մարած տեսնել կուզե... կնոջ մը սերը խիստ քաղցր է և ոխը խիստ դառն։

Արտաշես.— Ուրեմն զիս սպանե՞լ թե երդվել կուզես։

Որմզդուխտ.— Զքեզ սպանե՞մ... խոցե՞մ այն սիրտը, որ երբեմն իմ լանջքիս վրա կը բաբախեր, ո՛չ, սիրտ հիշատակը արցունք մը ունի, արցունք մը կինը կուժաթափե, կը հարթե... մի՛ խռովիր, Արտաշես, ահա կը բաժնվիմ քեզմե, փառք կսպասե քեզի, խակ մահ՝ ինծի։

Արտաշես.— Ճիշտ հիմար մ'է (բարձր): Այն որ չը վախնար, կը վախցնե։

Որմզդուխտ.— Թագավորին և գեղջկահվույն մեջ տարբերություն մը, թագ մը կամ գլխ մը կա, ուրիշ արքա. քիչ մը հատաջ գիտենալիք մ'էի, հիմա կին մ'եմ... թագուհի չեմ, դարձյալ գեղջկուհի մ'եմ... մնաս բարյա՛վ։ (Մեկուսի) Կը տեսնվինք... գոցի քիչ մը հարը... Արշեղ կամ ե՛ս... (կը մեկնի)։

Տեսիլ Գ.— Արտաշես (միանգամ).— Վայրկյան մը դադարցի. կնոջ մը աչերուն փաղփյունը սոսկալի է... Թրամպոխան է. կը սիրեի զինքը... վեհանձնությունս կը փրկեր, երբ կին մը զարնեմ, տկար ու գոգար արարած մը... և ինչո՞ւ պիտի կասկածիմ, ապեկ գիտեմ, որ խենթեցած է, սիրո հիմար մը. կը խոսի, այլ չը խորհիր... բայց դեռ առավոտ չըլլար և ես չեմ կրնար ննջել... խորտով դեռ չերեցած... գուցե հիմա բանակը եկած ըլլա... (կը մեկնի)։

Ասկից հետո, մինչև վերջին արարի վերջին տեսարը, թատերական Դուրյանի թերությունները են, որ կերևան այս խաղին մեջ և կգերակշռեն։

Տեսիլ Դ-ին մեջ, Արշեղ մենախոսությունն ալ արտասանելի հետո, Արտաշեսի փրանը կմտնե, զարն սպանելու համար։ Վայրկյան մը լուռ կդիտե շորս կողմը, հետո բաղմոցի մը վրա կիյնա, գլուխը ձեռքերովը կծածկե ու կընկողմանի։ Բոլոր մը տեսարանը պարապ կմնա, և ահա Որմզդուխտ կերևա. «Մեղք է Արշեղ, թող մարդասպան չըլլա» կըսե. կմոտենա վրանին ու մտիկ կրնե. «Քնոտ շնչառությունն մը կը լսեմ... վերջինը պիտի ըլլա...»։ Որմզդուխտ կիպարծե, թե Արտաշեսն է վրանին մեջ քնացողը (զգուշությամբ ներս կսպրդի վրանեն) «Ահա՛ կը քնանա... ի՞նքն է, Արտաշե՞ս... (հարված մը կը զարնե)։

Արշեղ.— Ա՞հ... (կսթափի և խոժոռ՝ մայրը կը դիտե) անիծյա՛լ (կը մեռնի)։

Որմզդուխտ.— Արշե՞ղ, զավա՛կս... ան... բայց դեռ կյանք և վրեժ կը շնչեմ... դեռ կրնամ սպաննել... Արտաշեսը (կը մեկնի)։

Զ և է տեսիլներուն մեջ կտեսնենք Արտաշես, Խոսրով, Վրույթ, զո-

բականք են, որոնք կպատրաստվին Կրյուսոսի վրա հարձակվելու, և ուռուցիկ խոսքերու տարափ մը կթափեն՝ «...Նեցուկ է մեզի բախտը, մեր թշնամյաց գլխուն կսպառնա իր լախտը» են. ու վերջին տեսիլը կավարտի զորքերուն արձակած «Հաղթե՛նք, հաղթե՛նք» աղաղակով և Արտաշեսի սա խոսքերով՝ «Սուր ու հարված, սիրտ ու քաջություն... օ՜ն անդր հառաջ, կորյունք Երարատա...», որմե հետո վարագույրը կիջնե պատերազմի խմբերգի մը վրա։

Դ արարվածը կսկսի երգով մը։ Կրյուսոս, Կամադրոս, են կտեսնեն, որ Արտաշեսի նավերը կհառաջանան, զորքերը կխրախուսեն ճամարտակություններով։ Հանկարծ ալիքներուն մեջ կտեսնեն նավակ մը, որուն մեջ կին մը կա։ Նավակը կընկղմի. կինը լողալով դեպի եզերք կհառաջանա. լյուդացիք օգնության կփութան ու կազատեն զայն. Որմզդուխտն է։ Ան կհայտնե իր վրեժխնդրության ծրագիրը և կխնդրե, որ զինքը իբր զինվոր ընդունին. Կրյուսոս իր սուրն անոր կուտա։

Որմզդուխտ.— ...Տե՛ս, այս սրույս հարվածին մեջ փայլ մը կա և այն փայլին մեջ թագ մը կա և թագին մեջ դժգույն ճակատ մը պիտի ըլլա... թագը քեզի, դիակը ինծի... կը զարմանաս կնոջ այս հարվածին վրա, սակայն կին մը եղիր, սիրե՛ և ատե՛, սիրո մեջ կյանքդ և ատելության մեջ թագդ կուտաս... են։

Կրյուսոս.— Այսօր չհաղթվինք Հայեն, վաղը մեռնի՛նք։

Որմզդուխտ.— Արտաշեսի գերեզմանին փառաց առկայծյալ ջահերուն հետ թավալիլ... կը սիրեմ։

Հայերուն մեկ խմբերգը կը լսվի ու վարագույրը կիջնե։

Ե արարված.— Արտաշես, հաղթական, Կրյուսոսի պալատին մեջ է ու կմենախոսե՝ «...Զարհուրեցա՞ք և դուք, ստվերք թագավորաց Լյուդիո, որ հոդ սպառազեն քանդակված արձանացեր եք... կործանեցե՛ք՝ եթե ամոթ կզգաք, լացեք՝ եթե արցունք ունիք, հեծեցեք՝ եթե շունչ ունիք... դեռ երեկ թագավորներ ձեր ստվերին տակեն կանցնեին պատկառանոք, այսօր խրոխտ ճակատ մը կը խնդա ձեր վրա...»։

Արշեզի մասին լուր կուգե. անոր մահը կիմացնեն իրեն։

Գերիները կբերեն իր առջև, և անոնց մեջ են Կրյուսոս և Որմզդուխտ։

Կրյուսոս գիտե, որ դատապարտված է մեռնելու և կուզե մեռնիլ, բայց Արտաշես կըսե անոր. «Չի պիտի մեռնիս»։ Որմզդուխտ սիրտ կուտա Կրյուսոսի, զոր ստորերկրյա բանտ մը կտանին։

Արտաշես.— Քակեցեք այդ կնոջ շղթաները և ազատ թողեք, նախատինք է մեզի կնոջմե մը վրեժ առնել...։ Որմզդուխտ կմեկնի։ Արտաշես իր զորքերուն կհրամայե երթալ հանգչիլ. «Գիշերները երկնքին

երեսեն թռչող ու ինկնող աստղերը ազգերու բախտերն են, որ Հայաստանի գոգը կը թավալին»։

Արտաշես (միենակ).— ...Սողոնի խոսքը և Կրյուսոսի անկումը գրեթե զարհուրեցուցին զիս... գիշերվան խավարին մեջ կը կենդրոնանան մտքերը, աշխարհային սոսկումները... գիշերը իր լռությանը մեջ կարծես թե ձայն մ'ունի, որ կը հծծե. «Կանցնի մարդը, կանհետի վարդի շուքի մը պես... կանցնի փառքը, կը մարի գերեզմանի կանթեղի մը պես... կը սահի կանհետանա արյան հեղեղներուն հետ... կը նվաղին օր մը մարդկային փայլերը, կը նսեմանա գեղեցկությունը վշտին մեջ, փառքը՝ պարտության մեջ, ծերությունը բախտին մեջ...»։ ...Ի՞նչու կը ծանրանաս սրտիս վրա, ո՜վ գիշեր, ունայնության պատանքով, նախանձու կայծերով, անցավորության կոհակներով, եղերգության հծծանքով և գերեզմանական ստվերով... դու դահիճ մը միայնությունը տապար առած՝ կուզես դողացնել, կուզես, որ հառաչ մը թռի Արտաշեսի շրթներեն...»։ Քունը կուգա ու կքնանա։

Որմզդուխտ կմտնե գաղտնի դռնե մը, կզարնե Արտաշեսը, որ սուրը կքաշե, այլ ուժասպառ է, չի կրնար ոտքի ելլել։ Ճարտար խոսակցություն մը կա երկուքին միջև։ Որմզդուխտ կծաղրե Արտաշեսը. «Ի՞նչ կըսես, Արտաշե՛ս. թագուհի պիտի ըլլա՞մ»։

Արտաշեսի հոգեվարքն ավելի դառնացնելու համար, կպատմե, թե մթության մեջ երկու հայ բանակներ իրարու թշնամի ձեացուցած է և հիմա անոնք իրար կջարդեն. ինք ալ Կրյուսոսի բանտը պիտի երթա ու անոր շղթաները պիտի քակե։

Արտաշես.— Ա՜հ, անեծք, կայծա՜կ...

Որմզդուխտ.— Օ՜ն, մեռի՛ր, որ վայրկյան մը առաջ թագուհի ըլլամ, ա՛լ հերիք գալարիս, ոտքերուս տակ...

Որմզդուխտ կկարծե, որ մեռած է Արտաշես և ուրիշ գաղտնի դռնե մը կերթա Կրյուսոսի մոտ։ Արտաշես «օգնությո՜ւն» կպոռա, կ'ասենին։

Արտաշես.— Կի՜ն մը... այս գաղտնի դո՜ւռը... Կրյուսոսի բա՜նտը... շուտ վրե՜ժս... «Ավա՜ղ փառաց անցավորի»։

Մինչդեռ Կրյուսոս և Որմզդուխտ կփութան փախչիլ, Վրույր, խոսքով և զորք կդիմավորեն զանոնք և կբռնեն։

Որմզդուխտ.— ...Մեռա՜վ Արտաշես։

Վրույր.— Այո՛, ես եմ վրեժխնդիրը։

Որմզդուխտ.— Մեռա՜վ... Ուրեմն ի՜նչ հոգ եթե սպաննեք զիս... Հոգ չէ, եթե թագուհի չեղա, թագավորի մը դահիճը եղա։

Ծունկի կիյնա ու այն րոպեին, ուր Վրույր զայն զարնելու վրա է,

Գրյու

նակություն է այդ գործը։ Միհրդատյանց կմտածե, և ես ալ համաձայն եմ իրեն, թե ատիկա Պետրոսին գործն է, բայց գործ մը, ուր Դուրյանի մյուս թատերգություններուն բոլոր թերությունները կերևան, կկուտակվեն ու կշեշտվին, մինչ անոնց լավ հատվածները կպակսին հոս (գեթ այդ երեկույթներուն մեջ)։

Հառաջաբանին մեջ Դուրյանի գործերու առաջին հրատարակության, որ անոր մահվանեն քիչ հետո լույս տեսած է, իբր անտիպ մնացած երկեր, կհիշատակվին ոչ միայն «Տիգրան Բ մեծահանդես ողբերգությունը՝ հինգ երեկույթի բաժնված, Արտաշես Աշխարհակալ, Կործանումն Հռովմա, ողբերգությունք հնգական արարված», այլև Շահատակությունք Հայոց տիտղոսով ողբերգություն մը, ավելի ճիշտ՝ տոմմ մը, նույնպես հինգ արարվածով։ Ատոր ալ ձեռագրին ուր մնացած ըլլալը հայտնի չէ։

Ասպատակությունք Պարսկաց ի Հայս կամ Ավերումն Անի Մայրաքաղաքի Բագրատունյաց և Անկումն Արշակունի Հարստության թատերգությունները Հայոց պատմութենեն քաղված տոմմեր են, Արտաշես Աշխարհակալի, Տիգրան Բ-ին և Սև Հողերին պես, և անոնց նման՝ զուտ ռոմանտիկ տարազով խաղեր են, Տյումա հոր կամ անոր հետևորդներուն բարդ էնթրիկներով հյուսված տոմմերուն նմանողությամբ, ոճի մեջ (շատ հաճախ՝ քնարերգական) Հյուկոյի տոմմերուն ազդեցությունն ի հայտ բերելով։ Երկուքն ալ զերծ չեն այս հիմնական թերություններեն զոր կգտնենք Դուրյանի, ինչպես և այդ շրջանի հայ հեղինակներու գրեթե բոլոր թատերգությանց մեջ,— այն է՝ անձնավորությանց միակտուր նկարագիրը, տիպարներուն ու տեսարաններուն կազմության մեջ հոգեբանական ճշգրտության հաճախակի թերացում, պատմական շրջաններուն, որոնցմե քաղված են նյութերը, լուրջ ծանոթության և քննական ըմբռնումի պակաս, բնականեն ու ճշմարիտեն ստեպ հեռանալու երևակայամոլ ու միամիտ ձգտում ու մանավանդ, իբր մասնավորապես Դուրյանի պատմական խաղերու մեկ մասին տեսակ մը հանկերգ, հայ ժողովուրդի դարավոր դժբախտության միակ պատճառը իր անմիաբանության, իր ծոցեն ելած մատնիչներուն ու դավաճաններուն մեջ տեսնելու սխալ ու ջղայնացուցիչ հակումը։ Բայց այս երկու խաղերը գրական տեսակետով ավելի արժեք ունին, քան Տիգրան Բ-ը և Սև Հողերը, կպարունակեն քանի մը ողբերգական տեսարաններ, որոնք իրապես ազդեցիկ ու գեղեցիկ են, ու մանավանդ թրթռուն զգայնությամբ լի քնարերգական հատվածներ ու հուզիչ տրամախոսություններ, ուր բանաստեղծ Դուրյանը կերևա իր իրական խառնվածքով ու իր նորաբեր, անձնադրող, հրապուրիչ ոճով։

Այսպես, Ասպատակությունք-ին առաջին արարվածին մեջ շահեկան են Հայաստանի վրա հարձակող Տուղրիլին բերանը դրված խոսքերը, որոնք «հայկական անմիաբանության ու դավաճանության» պարսավը հեղհեղող հատվածներեն տարբեր, մեծարանք մըն են օտարի մը և հայահալած բռնավորի մը բերնով հայ ցեղին մշտանորոգ կենսունակության ուղղված։

Տուղրիլ.— Ես արյունախանձ սրտիս խորը գրած եմ բոլոր Հայաստան ավերակ դարձնել, Հայությունը ջնջել առանց ավերակաց մեծ հեծող հայկական շունչ մը թողելու և այնպես հաղթական Պարսկաստան՝ իմ շքեղապանծ գահս դառնալ, և անկե զվարթ նայվածքով իմ դրացի երկրիս փլատակները դիտել, որոնց վրա կսավառնի պարսկական սոսկումը, ալ վախ չունենալ Հայաստանեն, որ միշտ կիյնա ու կը կանգնի և կանգնած ատենը իր դրացի ազգերուն գահերը կը սարսե։ Զինքը խեղդելու համար պատեհ առիթ մ'է իր անտերունջ վիճակը։ Կուզեմ Հայությունը ջնջել երկրիս երեսեն։ Լսե՛ երկնից բարձրերեն, և դու Արև, և ծիծաղե՛ քու Աստվածությունդ արհամարհող ազգի մը գերեզմանին վրա... Ավա՜ղ, որ գրեթե ծեր եմ. եթե չը կրնամ կարճ կյանքիս հետ Հայաստանը վերջացնել, թագիս հետ ժառանգություն պիտի ձգեմ Ալփասլան եղբորս, որ քաջերու մեջ քաջ է, հայկական ատելությունը և Հայության ջնջումը, չթողուլ որ Հայը չորրորդ անգամ հոգի առնե։ Հայը այնպիսի ազգ մ'է, որ իր վերքերեն քաջ կը ծնի։

Գեղեցիկ են հայրենասեր մանկամարդ հայուհիի տիպար Զարմուհիին խոսքերը՝ ուղղված Ապրսամին (Բ արարված, Բ տեսիլ)։ Զարմուհի սիրած է քաջ Թաթուլը, որ հայրենիքը պաշտպանող հայ պայքարին արիաբար մասնակցելով, Արսուրան ամիրային որդին սպանելե հետո՝ սելճուքյանց ձեռքն ինկած ու Տուղրիլի հրամանով գլխատված էր. այդ տեսարանին մեջ ետ կհրե սիրո հայտարարությունը, զոր իրեն կուղղե Ապրսամ հայ իշխանը։

Զարմուհի.— Ես սիրեցի և դեռ կը սիրեմ, զորապե՛տ... մի՛ ջանար մեր սիրո դրախտին թովիչ օձն ըլլալ։ Դու, որ քու քաջագործություններովդ հարգելի ես ինձ, մի՛ ջանար քո սիրովդ ատելի ըլլալ... Ես երկնքի այն ջահալից խորանին առջև ուխտեցի Թաթուլը սիրել. մեռա՜վ, կը հարգեմ իր հիշատակը, ինչպես կը հարգե քաջ մը իր հաղթական սրուն բեկորը։ Երբ հիշեմ՝ դառն է իր մահը, երբ լամ՝ քաղցր է իր հիշատակը։ Զորապե՛տ, մի՛ խոովեր սև ամպի մը պես կնոջ մը երազը։ Ես առի մնաս բարյավ սերեն, առի մնաս բարյավ աշխարհեն և մտա այն մենաստանը, ուր հիշատակները կը փսփսան... ես ալ միայն հիշատակի մը և հայրենիքի մը համար կապրիմ։

Նույն արարվածի Դ տեսիլին մեջ վեհությամբ տոգորված է Զարմուհիի խոսակցությունն իր հոր՝ Անիի իշխան Բագարատին հետ։

Զարմուհի.— Իրավունք ունիս, հա՛յր իմ... ա՜հ, երա՜նի թե ես ալ, փոխանակ տկար և վախկոտ կին մը ըլլալու, հողի վրա պառկող և սուրին կրթնող զինվոր մը ըլլայի և թուրս լոկ ընկեր առած, խոյանայի արծվո մը պես պատերազմի դաշտը, թափեի թշնամյաց սև կառափներ, ազատություն պոռայի և զարնեի, իսկ երբ սուրս խորտակեր, անոր բեկորին վրա ինկած տայի շունչս հայրենյաց խոցյալ սրտին վրա։ Ավա՜ղ, երբ զինվորի մը գոնե բախտակիցը պիտի ըլլայի, բախտը խլեց զայն ինձմե, թող չը տվավ, որ գոնե ինքը պատերազմի դաշտեն դարձած առենը ճակտին քրտինքը սրբեի և վերքը կապեի։

Բագարատը.— Թաթո՜ւլը...

Զարմուհի.— Այո՛ (կուլա)։

Բագարատ.— Մի՛ լար, Զարուհի, հանցանք է հայրենյաց նահատակի մը վրա լալը։

Զարմուհի.— Գոնե իր վերջին մնաս բարովը լսեի իր բերանեն, համբուրեի իր վերքը, սրտիս վրա տար իր վերջին շունչը, փոխանակ անարգ թշնամյաց ոստնակոխ ըլլալու. գոնե գերեզման մը ունենար, որ արցունքովս թրջեի։

Բագարատ.— Մի՛ լար անոր վրա՝ մինչդեռ հայրենիք ժպտեցավ. միմիայն հարգե իր հիշատակը։

Սիրուն է Բ արարվածի Ե տեսիլը։

Լևոն.— Վեհա՜ղն իշխան։

Բագարատ.— Ի՞նչ կը խնդրես, ո՛վ պատանի։

Լևոն.— Դու քաղաքացվոց մեջ քարոզ հանեցիր գտնելու համար մեկը, որ հանդգնի ի սեր հայրենյաց՝ պարսից մեր քաղաքին դիմաց կանգնած և մեծ վտանգ սպառնացող այն ահագին բաբանն այրել։

Բագարատ.— Այո՛, և ձեռնարկողին մեծամեծ շնորհքներ խոստացա, և եթե ինքը մեռնի՝ իր ընտանյաց։

Լևոն.— Ես շնորհքներ չեմ ուզեր և ոչ ալ ընտանիք ունիմ։

Բագարատ.— Դո՜ւ։

Զարմուհի.— Աստվա՜ծ իմ։

Տեր Վահրամ.— Քաջասի՜րտ տղա։

Լևոն.— Այո՛, ես որբ եմ, ո՛չ հայր, ո՛չ մայր և ո՛չ եղբայր ունիմ, այլ միայն թշվառ հայրենիք մը. ահա՛ այն է հայրս, մայրս ու եղբայրս. հայրենիք մը ունիմ միայն, որ կսիրեմ, և զայն սիրելու համար կզգամ, որ պետք է մեռնիլ, մեռնի՜լ, խառնել իմ երակացս արյունը այն դյուցազանց թափած արյան հեղեղներուն, որք իրենց աշխարհեն քշեցին տարին գերության ահագին շղթաները և անդունդը թափեցին։

Տեր Վահրամ.— Եկուր գրկեմ զքեզ սրտիս վրա, ո՛վ նորատի դյուցազն։

Զարմուհի.— Հայաստանի հրեշտա՜կը։

Բագարատ.— Անիի հաղթական քուրդը։

Տեր Վահրամ.— Պիտի կրնա՞ս հաջողիլ։

Լևոն.— Եթե Հայաստան դեռ պիտի ապրի։

Բագարատ.— Կապրի Հայաստան, եթե քեզի պես քաջեր ըլլան։

Տեր Վահրամ.— Երանի՜ քեզի, որ այդ նորատի հասակիդ մեջ հայրենյաց փրկարար մը պիտի հանդիսանաս...

Զարմուհի.— Ո՜հ, հայրենասիրությունն ինչ գեղեցիկ ճառագայթ մ'է վեհ և անմեղ ճակտի մը վրա (ահագին բոմբյուն մը կը լսվի խորեն)։ Աստվա՜ծ իմ։

Բագարատ.— Ահա՛ առաջին հարվածը։

Տեր Վահրամ.— Սիրտս ա՜ռ, քաջասի՜րտ տղա։

Լևոն.— Թանի մը պետք չունիմ. օրհնությո՛ւնդ, զինվո՛րդ Աստուծո։

Տեր Վահրամ.— Օրհնյա՛լ ըլլաս. զավակս... (Զեռքերը գլխուն կը դնե)։

Բագարատ.— Պատրաստ ըլլանք (Տեր Վահրամի) Դու գնա՛ եկեղեցի. տեր Հայր, աղոթելու. ես ալ երթամ քաղաքացիքը քաջալերելու։ (Զարմուհիին) Իսկ դո՞ւ։

Զարմուհի.— Հայրենակցաց վերքերը կապելու (ամենքը կը մեկնին.— Պատկերը կը փոխվի)։

Ավելի բազմաթիվ են և ավելի կարևոր գեղեցիկ հատվածները Անկումն Արշակունի Հարստության խաղին մեջ։

Թաքել ձեր զինվորին գուստրը՝ Շահանդուխտ, սիրահարված է արքայորդի Հրաշյային, բայց ոչ մեկուն, ոչ իսկ իր հոր, չի համարձակիր հայտնել իր սրտին գաղտնիքը. հայրը կնկատե անոր մշտահույզ մելancholոտ վիճակը, և ահա Ա արարվածի Ա տեսիլին մեջ կհարցաքննե զայն.

Բաբել.— Աղջիկս... դուն գաղտնիք մ'ունիս, որ ինձմե կը ծածկես... ժամանակե մը ի վեր է, որ միայնությունը և մթությունը հորդ շուքեն ավելի կը սիրես և հորդ համբույրեն ավելի հառաչանքեդ կախորժիս... միշտ ձեռքդ ձեռքիս մեջ գոզդոջ, ճակատդ թալկահար, սիրտդ միշտ բեկբեկ... դուն առաջները վարդե ավելի զվարթ էիր, թիթեռնիկե ավելի աշխույժ և շունչե ավելի թեթև, իսկ հիմա մանիշակի պես կորագլուխ, ձմեռվան ասաղի պես տխուր, շուքի պես խափուսիկ կը

տեսնեմ զքեզ... աղջի՛կս, բա՛ց սիրտդ, ինչպես կը բանա վարդն իր թերթերը առտվան դուրգուրացող ցողին... խոսե... ի՞նչ ունիս։

Շահանդուխտ կծածկե ճշմարտությունը՝ տրտմությունը սիրող հոգի մ'ունենալը հայտնելով։

Շահանդուխտ.— ...Եթե իմ առջև խաչ մը և թագ մը դնեն, ուրախությամբ խաչը կգրկեմ... եթե պատան* մը և ծիրանի մը դնեն, պատանը կընդունիմ. կը սիրեմ այն, որ արցունք ունի** և տխուր է. կը սիրեմ այն, որ երկինք կը տանի... կը սիրեմ այն, որ գեղեցիկ և բարձր է հրեշտակի նման, ճաճանչի նման, շուքի նման, շունչի նման. կը սիրեմ այդ ալևոր մազերդ, որ գեղեցիկ և բարի են...

Երբ հայրը կմեկնի. Շահանդուխտ, առանձին, իր սիրտը կբանա՝ մենախոսության մը մեջ, որ զմայելի քերթված մըն է։

Շահանդուխտ.— Գնա՛, հայր... այլ մի՛ դատապարտեր աղջիկդ... ի՞նչ ընեմ, բնությունը սիրտ մը տվավ սիրելու համար։ Միթե չը՞ սիրվիր երկինքը, չը՞ սիրվիր այն, որ հուր աչեր, բարի սիրտ, գութ, գորով և անմեղություն ունի... երանի՜ թե բոլոր օրերը գիշեր ըլլային և ես երկընքի փայլփլուն աստղերուն հետ միշտ լայի։ Կը սիրեմ, այլ կարտասվեմ, երջանիկ եմ, սակայն կուլամ. կուրծիս տակ բոց մը կա, որ անուշ խունկի մը նման սիրտս կը վառե և անոր բույրին մեջեն կը սահին ոսկեթև երազներ, միշտ ամպերու նման կը սահին և արցունք կը սրսկեն... ո՜հ, Հրաչյա, քու առաջին նայվածքդ կենացս արշալույսն է, ես անկե առաջ նոճիի ստվեր մը, թշվառի ժպիտ մը, առկայծյալ ջահ մը և անդգա պաճուճապարանք մ'էի հորս գիրկը. դու գթացիր ինծի, շունչ տվիր ինծի, «երբ կսիրեմ զքեզ» ըսին շրթներդ ու աչերդ, երբ ձեռքս քու դողդոջ ձեռացդ մեջ դողաց...

Նույն արարվածի Ե տեսիլին մեջ, Հրաչյա կը հանդիմանե գեղ քահանա Սուրմակը, ամեն վատություն ատակ տիպար մը, որ Շահանդուխտը գլխե հանելու փորձ մը կընե. տեսարանը խկապես ուժեղ է և հյուկոյական շունչով մը բաբախուն.

Հրաչյա (հառաջ գալով).— Կեցի՛ր, մի՛ սրբապղծեր անմեղ աղջիկ մը։

Սուրմակ (սարսափած).— Ա՜հ...

Շահանդուխտ (ապշած).— Հրաչյա՜...

Սուրմակ.— Ո՞վ ես դու, անօրե՛ն, որ խոստովանության մը սրբազան կապը կը խզես հանդուգն սպառնալյոք։

Հրաչյա.— Ես քեզ հոն մտիկ կընեի, այդ խոստովանությունը...

Սուրմակ.— Լռե՛...

Հրաչյա.— Կը տժգունի սև ճակատդ ալ, և լռության տակ ծածկել կուզես ամոթդ ու ոճիրդ։

Շահանդուխտ.— Լռե՛, Հրաչյա... ներե՛ իրեն, հա՛յր, խնայե՛ իրեն և ինծի, մի՛ պատուհասեր...

Սուրմակ.— Շահանդուխտ, անիծյալ ես, մինչդեռ այս անօրենը կը պաշտպանես և...

Շահանդուխտ.— Ա՜հ, գթությո՜ւն, հա՛յր, թողություն...

Հրաչյա.— Շահանդուխտ... այս սրբազան և սև փիլոնը իր սև սիրտը քեզնե կը ծածկե. այդ մարդը խաչին տակ դարանակալ սադայել մ'է։

Շահանդուխտ.— Ո՜վ, աստված իմ...

Սուրմակ.— Կը համարձակի՞ս...

Հրաչյա.— Այս մարդը Քրիստոսի հոտին գայլն է... այս մարդը վատ մ'է։

Սուրմակ.— Դողա՜...

Հրաչյա.— Ուսկի՞ց... քեզնե՞, որ մութին մեջ խաչը տապար կընես. քեզնե՞, որ աղավնիները միայն ճանկերուդ մեջ կրնաս առնել և չես վախնար, որ խաչն ալ, փայտի կտորն ալ հարված մ'ունի. դու՝ որ մարդուն երակացը արյունը ծծելով զայն կամակատար դիակ մ'ընել կը ջանաս, դու՝ որ չես դողար Աստուծմե, ես՞, ես՞, դողամ քեզնե։

Սուրմակ.— Գթա՛ իրեն, Աստվա՜ծ իմ, և քեզի դարձո՛ւր...

Հրաչյա.— Ա՜հ, հարվածդ չը հաջողիր, դիմակդ կը դնես... ծածկել կուզես շառագունող ճակատդ... դու չես նեռվիր, չես թափեր թույնդ, տեսնելով որ ոսոխդ ազատ կը թռչի արծվո մը նման և կրնա քու ապաստանած ժայռերուդ վրա գլուխդ ջախջախել։

Շահանդուխտ.— Հայր սուրբ, դու աղոթե՛ իրեն համար... ներե՛ իրեն։

Հրաչյա.— Բայց դու չես սթափիր, Շահանդուխտ. եթե ես վրա չը հասնեի...

Սուրմակ.— Պիտի լռե՞ս վերջապես... Օ՜ն, դուրս ել այստեղեն... ալ բավական եղավ, հանդգնությանդ չափն անցուցիր։

Հրաչյա.— Շահանդուխտ, այս մարդը խաչը կը կոխկռտե և ուրիշին պաշտել կուտա, այս մարդը սիրտ չունի և ուրիշներուն սիրտ կը քարոզե, այս մարդը փիլոնին տակ դաշույն ունի և կոչնակին գանգյունին մեջ սպանելուն վերջին հեծեծանքը կը խեղդե... բարեպաշտ և գեղեցիկ աղջիկները կը սիրես, պարոն երեց, խիստ լավ կընես, եթե այդչափ չսիրես։

* Այսինքն պատանը։

** Տպագրության մեջ ունի բառը մոռցված է։

Սուրմակ (մեկուսի).— *Ո՜վ կատաղությա՜նս...* (բարձր) *Աստվա՜ծ իմ, այս մարդը դիվահար մ' է եղեր, ներե՜ եթե ակամա իրեն դեմ զայրացա։*

Հրաչյա.— *Այնչափ ապահով եղիր, թե ես հիմար չեմ, որչափ որ ապահով ես քու վատ մը ըլլալուդ։ Շահանդո՛ւխտ, խորշե՛ այս փիլոնեն, որ դիակի պատանք, դագաղի ծածկոց և ոճիրներ քողարկող վարագույր մ'է, ա՛յս մարդը եկեղեցին գերեզմանի կը կերպարանափոխե, կը կեղծե, կը խոնարհի, կսպանե միմիայն իշխելու համար... ապառաժ է այս մարդուն սիրտը, միթե կարելի՞ է ապառաժին վրա խաչ տնկել... նայվածքը գորովալի է, բայց թույնը կը թափե. սիրով կը սեղմե ձեռքը, այլ նա կը սառի... ինչպես օձն իր զոհը անուշահոտության մեջ կը թմրեցնե, նույնպես ասոր սփռած անուշահոտությունը աստվածային մրմունջներեն են... եթե սիրելի մը ունի աշխարհի մեջ, այն է արյունարբու փառքը, եթե ատելի մը՝ այն է ժողովուրդը... ասիկա գժոխքեն փախած սև ուրվական մ'է...* (Սուրմակ շարագույժ նայվածք մը կարձակե անոնց վրա)։

Շահանդուխտ (սարսափած ճիչ մը կարձակե).— *Ա՜հ։*

Սուրմակ.— *Ո՜վ հանդուգն, չե՞ս մտաբերեր, որ կղերն իր արդար բարկությանը մեջ կայծակ կամ անեծք ունի... կուզես որ տարածեմ թևերս։*

Հրաչյա.— *Ապո՞ւշ կը խաբես. ավելի օրհնենքեդ կը վախնամ, քան թե անեծքեդ։*

Մասնավորապես գեղեցիկ է նույն արարվածի Զ տեսիլին մեջ Հրաչյայի և Շահանդուխտի սիրային երկանվագը, ուր երկու երիտասարդ ու ազնիվ էակներ իրարու համար իրենց զգացած բոլորանվեր սերը կարտահայտեն քնարերգական պատկերալից ու երգեցիկ արձակի մը մեջ։

Շահանդուխտ.— *Սակայն ինչ հոգ եթե բոլոր աշխարհ անիծե և նախատե զմեզ... ես քու գիրկդ՝, դու իմ գիրկս, ես քու նայվածքդ՝ դու իմ նայվածքս, ես քու շունչդ, դու իմ շունչս, սիրույս մեջ այնպիսի հեշտ կաթիլ մը կզգամ, զոր վարդը երբեք ունեցած չէ, այնպիսի ճաճանչ մը, զոր Արտաշեսի թագը չուներ, այնպիսի երազ մը, զոր քերթողը վերջալույսին հետին ճառագայթներուն մեջ չերևակայեր... սե՜ր, սե՜ր, չի կրնար գրվիլ երկնի բոցավառ աստղերուն նման. բայց ի՞նչ է սերը՝ եթե ոչ՝ դուն...*

Հրաչյա.— *Բայց ի՞նչ ունիս, Շահանդուխտս... կուլա՞ս...*

Շահանդուխտ.— *Միթե կարելի՞ է առանց արցունքի սիրել... միթե*

դու չե՞ս լար, Հրաչյա՛, ահա երկնագույն աչքերդ օքողված են... միթե չե՞ս ուզեր մեռնիլ...

Հրաչյա.— *Այո՛, մեր սրտերը մեկ արձագանք մը ունին... բայց եթե կոհակի մը մեջ նետվինք, մեր վրա ծավալող կոհակին վերջին ծալքը մրմունջ մը ունի. եթե դաշույնով մեռնինք, մեր կսկիծը տրտունջ մ'ունի, մեր արյունը գարձյալ ձայն մ'ունի.— չը գիտե՞ս, որ ամեն ձայն ալ երկնի մեջ արձագանք մը ունի... միթե կարելի՞ է, որ երկու հովերու պես մարինք առանց ձայնի և կորչինք փլատակի, մառախուղի և ամպերու մեջ։*

. . . . . .

Շահանդուխտ.— *Ես չեմ կրնար ժպտիլ, մինչդեռ կը սիրեմ, Հրաչյա... ես մեռնելու համար կը սիրեմ, կը մեռնեմ սիրելու համար. սիրո մեջ կյանքը մահ է, իսկ մահը անմահություն. մենք չունինք պալատ, ոսկի, ծառա, այլ հովեն տատանող խարխուլ տնակի մը մեջ կը սիրենք, եթե սա բլրակին վրա, սա ծառին հովանիին տակ, լուսնի շաղին մեջ իրարու քով վախկոտ նստած տեսնե մեզ ազնվականը, և երբ մեր շառագույն ճակատը մեզ մատնե, թե զիրար կը սիրենք, կը խնդա մեր վրա այն անսիրտը... Աղքատը սիրտ կունենա... ո՞վ շուքի մը շունչ և հիշատակ պիտի տա... Հրաչյա, եթե չըսեիր առաջին օրը, թե պարզ զինվոր մ'էիր, եթե իմ հորս բախտակիցը չըլլայիր, չէի կրնար զքեզ սիրել... բայց ինչո՞ւ կարմրեցար...*

Հրաչյա.— *Մեր վիճակին վրա կը կարմրիմ։*

Շահանդուխտ.— *Իրավունք ունին խեղճ զինվորները. իրենց արյամբը թագավորին և ազնվականաց երջանիկ ապագայն կը գնեն, բայց դարձյալ անոնցմե կը նախատվին, վասնզի ձայն չունին, վասնզի ցընցոտին մարդը անարգության կը դատապարտե... աղքատն իր տնակին մեջ շոր և նեխոտ հացով կը գոհանա, իսկ հարուստին ապարանը նոր խորտիկներ կը հնարվին... զինվորը պատերազմի փողին գոռումեն կը սարսռի, վասնզի իր սիրելիեն պիտի բաժնվի, թագավորը անդին կուլա աղջիկ մը կառնանգե մորը գրկեն... ի՜նչ սոսկալի են ասոնք։ Ա՜հ, որչա՜փ երջանիկ եմ, որ աղքատ ծնա, աղքատության մեջ սիրտը չը կորսվիր... այս խաչյալն ալ աղքատ էր, բայց ոչ նվաստ... նա՝ թեպետ Աստված կոխկռտեց ոսկին ու ծիրանին և միայն սեր ու ցնցոտի հագավ... որչա՜փ կը սիրեմ այն Քրիստոսը, որ քեզ ալ ինծի տվավ։*

Հրաչյա.— *Ա՜հ, որչա՜փ գեղեցիկ է մարը մտնող արևուն ճառագայթը քու սիրահար ճակտիդ վրա... որչա՜փ փառազարդ է այս տնակը, ուր քու շրթունքդ եղբայր կը կոչեն զիս։*

Գեղեցիկ է, և հեզափոխական հյուսկոյաշունչ բոցով մը վառ, ինչ

որ մոլի, ցոփ, անօրեն Արտաշիր թագավորին կինը՝ ազնիվ ու դժբախտ Հերանույշը, կարտասանե Բ արարվածի Բ տեսիլի իր որդույն՝ Հրաչյայի հետ ունեցած խոսակցության և Դ տեսիլի իր մենախոսության մեջ։

Հերանույշ.— Անսիրտ ալ է (Արտաշիր— Ա. Զ.), վասնզի իմ աչաց առջև ուրիշներ կը սիրե... Խե՜ղճ աղջիկներ, որոնք քանի մը օր թագավորին հետ կենակցելու համար կը թողուն հավիտյան իրենց անմեղ ու խաղաղ տնակը, կը նետվին պալատին ցոփության մեջ, կը խամրի իրենց կուսության ծաղիկը, որուն վրա կը շողային երկնից անմեղ արցունքները. զանոնք կը թափեն ոտքերու տակ՝ մարգարիտներ ստանալու համար...

...Ի՞նչ է թագը... սիրո արցունքներով շողացող վարդե պսակ մը անկե գեղեցիկ է. սիրո ժպիտ մը տիեզերքն իր մեջ կամփոփե... այս մեծաշուք պալատին տեղ ծառի մը շուք բավ է սիրելու համար. և անոր տերևներուն մեջ սուլող զեփյուռը փառաց երգերե ավելի փառավոր է... Ի՞նչ է թագը՝ թռչուն աստղ մը. ի՞նչ է ծիրանին՝ ժողովրդյան արյամբ կարմրած պատանքի կտոր մը, զոր դարձյալ ժողովուրդը կը կարկտե. ի՞նչ է պալատը՝ վիրապ մը, ուր մարդիկ շղթա և տապար կը կուեն իրենց նմանները հարվածելու. ի՞նչ է թագավորը՝ թագ կրող չոր գանկ մը, որ մութին մեջ կը հարվածե...»։

Հայ ռոմանտիկ թատերագրության մեծարժեք հատվածներ են նույն խաղի Դ արարվածի Բ տեսիլին մեջ Արտաշիրի և Շահանդուխտի հուզիչ ու տռամաթիքական խոսակցությունը և Դ տեսիլին մեջ, մոլություններով ծանրաբեռն Արտաշիրին և գերագույն ազնվության տիպար Սահակ կաթողիկոսին հոյակապ խոսակցությունը։

Դուրյանի վերջին թատերգությունը՝ Թատրոն կամ Թշվառներ, մասնավոր ուշադրության մը արժանի է, ոչ միայն որովհետև կպարունակե մասեր, որոնք ինքնատիպ են ու գեղեցիկ, այլ մանավանդ, որովհետև ան նոր շրջան մը կսկսի հայ թատերագրության համար։ Այս խաղը դարագլուխ մը կրանա մեր գրականության մեջ, իրապաշտ թատրոնի դարագլուխը։ Պետրոս Դուրյան, որ նորության հակամետ, էապես ինքնատիպ միտք մըն էր, ժամանակին տիրական ազդեցության տակ՝ հին պատմութենեն քաղված շարք մը խաղեր գրելե հետո, անցյալի կյանքը պատկերացնել փորձող այդ գրականության կեղծությունը կնշմարե և մեզ շրջապատող, մեզի դպչող ժամանակակից կյանքին ուսումնասիրությունն սկսիլ կառաջարկե այդ խաղի հառաջաբանին մեջ, զոր գրած է հուսալով, թե միջոցներ պիտի գտնե այդ գործը

հրատարակելու (մինչդեռ խեղճը ո՛չ հրատարակել, ո՛չ իսկ ներկայացնել հաջողած է այդ խաղը)։

Կարտատպեմ հոս այդ հառաջաբանը, որ մեծապես շահեկան է իր նորաբեր ոգիով (պետք է նկատել, որ Դուրյան այդ հառաջաբանն ու այդ խաղը կգրեր այնպիսի ատեն մը, երբ Սունդուկյանց դեռ չէր երևցած ու դասական և ռոմանտիկ թատերագրությունը կտիրեր մեր մեջ), այլ շահեկան է նաև ու հատկանշական այն զմայլելի համեստությամբ, որով այդ հանճարեղ պատանին կառնե այդպիսի հանդուգն քայլ մը։

«Մեկ քանի տարիե ի վեր հղացած երկոցս մեջ սույն ժամանակակից թատերախաղն ահա կը համարձակիմ ի լույս ընծայել իբր առաջին պտուղ իմ ճգնաց, զոր կուզեմ նվիրել ազգիս։ Սույն հրատարակումըն ինձ համար նոր է. ուստի դողդողալով կիջնեմ յասպարեզ առաջնորդող աստիճանները՝ ներողամիտ ժպտումներ ակնկալելով։ Արդարև թատերագրությունը դժվարին արհեստ մ՝ ըլլալը ամեն ոք կը խոստովանի. ես ալ արդեն խիստ բարձր գտած եմ զայն իմ փանաքի կարողության և մանավանդ հասակին քով, սակայն զայս ալ պետք է խոստովանիլ, թե դժվարին գործ մ՝ առանց հանդուգն ձեռաց օժանդակության՝ չկրնար դյուրավ կատարիլ, և թե երկ մը բանադատության բովեն չանցած՝ չկրնար զտվիլ։

Թատերախաղիս նյութը թեպետև ճշմարիտ դեպքեր կը պարունակե, սակայն այսու ամենայնիվ, ինչպես որ հեղինակ մը կստիպվի ընել, պահանջված հավելադրությունք չեն զլացված։

Զայս երկասիրելով, իմ մասնավոր դիտումն է իմ աննշանությամբ օրինակ ըլլալ ուրիշ թատերագրաց, որ ավելի արդի ընտանեկան անցքերը պարունակող բարոյալից թատերախաղեր հորինելու աշխատին, որով ավելի օգուտ կրնան ընծայել հայ հասարակության, քան թե ազգային հին դյուցազնությունքը ողբերգության վերածելով, որք միշտ միակերպութենե վրիպած չեն, վասնզի նյութոց հարուստ աղբյուրներ չունին և հետևաբար ունկնդիր թատերատեսներու տաղտկալի կրնան ըլլալ իրենց միակերպ և անընդհատ ներկայացումներովը։

Որչափ որ կարելի է, սույն թատերախաղիս լեզուն թատերական կամ պարզ ըրի։

Իմ այս թատերախաղը տեսարանի վրա հանդիսացնելե առաջ տպագրության տալուս վրա գուցե զարմանան ոմանք, սակայն այս մասին այնպիսի պատճառներ կան, զորս լուսաբանելու համար Հատուկ ժամանակի կսպասեմ։

Իրավ է, որ սույն թատերախաղը Վիքթոր Հյուկոյի Էռնանի թատերահանդեսին պես չի պիտի հեղափոխե հասարակության գաղափարքն

ու զգացմունքը, սակայն և այնպես սորա փոշիները թոթվելով և* գրաբարակեն դուրս հանելով թերևս դույզն ծառայություն մ'ըրած համարիմ։

Անհերկբա եմ, որ փուշեր չի պիտի պակեն սույն հանդուգն և մթանգամայն դողդոջ քայլափոխս, և այն, ակամա թերության նկատմամբ, որք հարկավ սպրդած են երկասիրության մեջ՝ ներողամտություն և հետևաբար քաջալերություն գտնելով, պիտի փութամ հուսալից՝ նորանոր քերթության ձեռնարկել և այս գրական արհեստը քիչ շատ կատարելագործելու աշխատիլ»։

Ճիշտ չէ անշուշտ, թե ազգային կամ օտար հին պատմութենեն քաղված նյութերու շուրջ դարձող ողբերգությունները կամ տռամները միակերպ են միշտ ու տաղտկալի։ Ոևէ նյութով, հին թե արդի կյանքե առնված, թատերագրի իսկական տաղանդ ունեցող գրագետ մը կարող է կենդանի ու տևական գործ մը հորինել։ Կբավե, որ ունենա դիտողություն ու հոգեբանական վերլուծման ձիրք, հարազատ տիպարներ կյանքով լի գործողության մը մեջ շարժեցնելու կարողություն։ Դասական, ռոմանտիկ և իրապաշտ գործերը ունին արհեստի, կառուցվածքի, ճաշակի, ոճի տարբերություններ, բայց այդ անունները կրող երեք դրպրոցներուն կամ շրջաններուն մեջ ալ երևան եկած են գործեր, որ կենդանի են և անմահ մնալու սահմանված, ինչպես և արվեստական արտադրություններ, որոնք մերթ բոլորովին անկենդան են և որոշ բոպեի մը շինծու հաջողություն մը ունենալե հետո՝ մոռացության մատնված են և կամ շարունակած են կարդացվել ու հաճույք պատճառել՝ զիրենք ոգևորող ավյունին ու իրենց քնարերգական կամ դյուցազներգական շքեղ ոճին շնորհիվ (ինչպես Հյուկոյի խաղերը՝ հաճախ երևակայական, անճշմարտանման կամ չափազանցյալ խորքով, բայց ձևով հոյակապ ու միշտ հրապուրիչ)։ Կբավե աչքի առջև բերել դասական Սոփոկլին կամ Ռասինին խաղերը կամ ռոմանտիկ Վիկտորին Ջերարդինը խաղերը և ռոմանտիկ Մյուսեին թատերգությունները, որոնք շատ ավելի լեցուն են կյանքով ու ճշմարտությամբ, քան շատ մը ժամանակակից անտաղանդ իրապաշտ խաղեր. պետք է մանավանդ հիշել Շեքսպիրը, մեծագույնը թատերգակներուն, որուն մոտ դասականը, ռոմանթիկն ու իրապաշտը իրարու կմիանան՝ ինչպես կյանքի մեջ, որուն մոտ դիտողություն, հոգեբանություն, քնարերգություն, գործողություն, հյուսքի բնականություն և ճարտարություն կզուգորդվին՝ արտադրելու համար գործ մը, որուն նյութերը մեծ մասամբ հին պատմութենե առնված են,

* Տպագրության մեջ հավանորեն գրաշարական վրիպակով մը ևը փոշիները բառեն առաջ տրված է։

բայց որ կյանքի հարազատ ու խորունկ պատկերացում մը կամ մեկնաբանություն մըն է միշտ։

Դուրյանի առաջարկը, սակայն, այն միջավայրին մեջ և այն շրջանին, ուր մեջտեղ կնետվիր՝ նորեն արժեքավոր էր և նշանակալից։

Պատմական նյութերով թատերգությունները, այն ձևով, որով կգրվեին իր ատենը, արդարև մթոքինակ էին ընդհանրապես, շատ հաճախ ճառախոսական ու փքոցուռուց, իսկ ժամանակակից կյանքեն խաղեր հանելու գաղափարը դեռ ոչ ոք ունեցած էր մեր մեջ։ Արևմուտքի մեծ ազգերու դասական ու ռոմանտիկ հրաշակերտները մեր մեջ նմանողներ գտած էին, բայց իրապաշտ դպրոցը դեռ հետևող չէր ունեցած։ Դուրյան առաջինը եղավ այդ ճամփան ալ մեր գրականության առջև բացող։

Թատրոն կամ թշվառները հեռու է զուտ իրապաշտ գործ մ'ըլլալե, ինչքան ալ որ նյութը, ինչպես կգրե Դուրյան իր հառաջաբանին մեջ, մեծ մասամբ իրական կյանքե առնված ըլլա։ Դուրյան, որ մինչև եղունգներուն ծայրը բանաստեղծ էր, և խանդի, հափշտակության, քնարերգության բանաստեղծ, երազով նեթկված իր աչքերուն մեջեն չէր կրնար իրականությունը տեսնել իբ մերկ, ճշգրիտ գույներով։ Տիպարները հոգ ալ մեծ մասամբ միակտուր են, գործողության հյուսքին մեջ անբնականություններ, չափազանցություններ, միամտություններ կնկատվին. իրական կյանքե քաղված այդ նյութը, քնարերգակ բանաստեղծի իր խառնվածքին մեջեն անցնելով, ռոմանտիկ թատերագրության շունչովը տոգորվելով, նորեն, իր ստվարագույն մասին մեջ, երևակայական, երազային հանգամանք մը ստացած է։ Կան հոն քանի մը տիպարներ, որ ճիշտ են, կան տեղ տեղ տեսարաններ, որոնք իրական կյանքի մոտիկ են. ատոնք իրապաշտ արվեստի առաջին արտահայտությունն են մեր մեջ, Աբովյանեն հետո, որ նույնպես ռոմանտիկ մեծ գրագետ մը և բանաստեղծ մըն է, բայց որ իր գործերուն մեջ իրապաշտ համեղ և ուժեղ տարր մըն ալ ի հայտ բերած է։ Նորեն, սակայն, այդ խաղին ամենեն գեղեցիկ մասերը այն տեսարաններն են, ուր ռոմանտիկ հով մը կփչե. ամենեն հուզիչ ու մշտապես գեղեցիկ տեսարանները հոն առաջին արարվածի Բ տեսիլն ու Դ արարվածի Ա տեսիլն ու նույն արարվածի Գ պատկերի Բ տեսիլն են, այսինքն Եդուարդի ու Վարդուհիի միջև սիրո ու տառապանքի արտահայտությանց տեսարանները, որոնք Դուրյանի ուրիշ քանի մը խաղերու նմանօրինակ տեսարաններուն հետ, այդ պաշտելի բանաստեղծին ամենեն աղվոր տաղերուն քով դրվելու արժանի են,— հակառակ անոնցմե ոմանց մեջ գտնվող թույլ հատվածներուն,— և անոնց պես անմահ պիտի մնան։

Թատրոնին այդ երեք տեսարաններու վերջինը ճշմարիտ քերթված մըն է, զոր ստորև ամբողջությամբ արտատպելու հաճույքը չեմ կրնար ինքզինքիս արգիլել։

Եդուարդ երիտասարդ աղքատ բանաստեղծ մըն է, որ կսիրե չքավոր աղջիկ մը՝ Վարդուհի։ Այս վերջնույն հայրը, ժամանակավ հարուստ եղած, բայց հետո ծայրագույն թշվառության մատնված, որուն մեջ կգալարվի իր ամբողջ ընտանիքին հետ, սոսկալի— և բիչ բնական— տեսարանի մը մեջ կհաղորդե իր աղջկան զաղիր միջնորդի մը առաջարկը, այն է, որ 50 ոսկիի գումար մը նվեր պիտի տրվի իրեն, եթե անձնատուր ըլլա Նահապետոֆ անուն վավաշոտ, տարվոր վաճառականի մը. իր հայրն ու իր սիրականը թշվառության արհավիրքեն ազատելու համար, Վարդուհի կընդունի միջնորդին առաջարկը, բայց միջնորդ Մակարը, որ հրեշ մըն է, 50 կեղծ ոսկի է, որ կհանձնե ոճիրին գործադրելեն հետո դժբախտ զոհին հորը։ Եդուարդ, ավելի քան երբեք աղքատ, ու Վարդուհի, թշվառության և ամոթի կրկնակ բեռին տակ ընկճված, կորոշեն դերասանական խումբին մը մեջ մտնել համեստ օրապահիկ մը ճարելու համար։ Վարդուհի Եդուարդին կխոստովանի իր գլխուն եկած դժբախտությունը, և կորոշեն միասին անձնասպան ըլլալ՝ թույն առնելով. բայց կուզեն այդ մոայլ ծրագիրը գործադրել թատրոնի բեմին իսկ վրա՝ խաղալով դերը երկու սիրահարներու, որոնք Եդուարդի, որպես թե ռուսերեն թարգմանած մեկ խաղին մեջ, նույն ձևով թույն առնելով՝ իրենց վերջին խոսքերը կփոխանակեն բեմին վրա ու գիրկ գրկի իրապես կմեռնին։

Տեսիլ Բ.— Վարագույրը կը բացվի և անա նկարչական վայր մը կերևի լեռան մը ծոցը, ծառերով և ծաղիկներով զարդարված առվակ մը կը սահի կերթա տեսարանին դեպ ի խորը։

ՆՈՒՅՆՔ* ԵԴՈՒԱՐԴ և ՎԱՐԴՈՒՀԻ (ձևացյալ Թատեր տեսարանին վրա— տեսարանին մինչև վերջ անընդհատ ծափահարություն).

Վարդուհի.— Հեռո՜ւ մեզնե այդ տոները, այդ շենքերը... հեռո՜ւ մեզնե այդ ամպերն անգամ... միմիայն այս ծառերուն տերևները թող պարածածկեն մեզ, միայն սա զեփյուռը թող մոտենա և միայն սա առվակը նայի մեզ... ա՜հ, սա տերևները, զեփյուռը և առվակը իրենց շշունջներովը բավական կրնան աղոթել մեր հոգվույն փրկության համար։

Եդուարդ.— Եվ դու կը կարծե՞ս, որ մեր հոգիները փրկելի՞ հոգիներ են, Վարդուհի... պետք է մեռնինք... այո՛, մեռնինք, վասնզի աշխարհս անհուն սև ամպ մ'է, որ մեր սիրո արևը կը պարփակե զայն խեղդելու չափ... անկարելի է սիրել հոս... սերը ծաղիկ մ'է, որ միայն երկնքին մեջ կը գտնվի, և մենք հոս միմիայն անոր բուրումը կրնանք զգալ... ա՜հ, տեսնենք ի՞նչ է այն սերը, որուն լոկ ցավերը կզգանք հոս միանգամայն։

Վարդուհի.— Պիտի տեսնենք, Եդուարդ, պիտի թողունք այս աշխարհը, յորում մարդիկ իրարու հավասար և եղբայր չեն, յորում միայն տկար արարածներն ամոթ, խիղճ և ցավ ունին. անգութ է այս աշխարհիս վերատեսուչը, քաղաքականությունն ըսել կուզեմ, որ չը ներե անոթիին կտոր մը հաց գողնալ՝ հարկավ ունեցողե մը, չը ներեր խեղճ աղջկան մը, որ իր սիրույն մեջ խաբված է անոթի չմնալու համար, կամ ստիպված է իր երկնային լումայն ապօրինավորապես ծախսել... սիրելի մը և ալևոր հայր մը անոթի չը ձգելու համար (սույն միջոցին Թովմա նստարանին վրա կը սարսռի)։

Եդուարդ.— Կաղաչեմ, Վարդուհի, այս ցավերը հոգվույդ մեջ մի՛ խորասուզեր, հիմա պիտի փշրին զանոնք, երկնքի ալիները մեր հոգիները կոծելով... հանդարտ ըլլանք, թողունք, որ մեր օրհասին մեջ մեր հոգիները երկրի բուրումը* վայելեն... դեռ ժամանակ կա թույնը ներգործելու... նստինք սա առվակին քով, սա աթոռաձև ժայռին վրա և առվակին հայելվույն մեջ մեր դալկությունը դիտենք... (դեպ ժայռը կերթան իրարու կրթնած, Վարդուհի նստած ատեն կը դողդոջե)։ Կը դողդոջե՞ս, Վարդուհի։

Վարդուհի.— Անշուշտ թույնի ներգործությունն է, որ կզգամ։

Եդուարդ.— Ուրեմն ինչո՞ւ չը փութար ինձ ալ ներգործելու այդ թույնը. անկարելի է, որ վայրկյան մը իրարմե անջատյալ մնանք... ա՜հ, կը հասկնամ քեզ շուտ ներգործելուն պատճառը... ագա՜հ, դու ինձնե առաջ և քու բաժինդ ավելի խմեցիր։

Վարդուհի.— Վասնզի քեզնե ավելի ծարավի էի մահվան։

Եդուարդ.— Ի՞նչ կզգաս, Վարդուհի՛։

Վարդուհի.— Երակներուս մեջ թմրեցուցիչ հյութ մը կը հոսի... ա՜հ, որչա՜փ թեթև և երջանիկ կըլլա եղեր դողդոջ էակ մը։

Եդուարդ (ինքզինքը զննելով, հանկարծ).— Վարդուհի՛, ես ալ բան մը կզգամ. ա՜հ, միատեղ պիտի մեռնինք... (կընդգրկե զՎարդուհի)։

Վարդուհի.— Կուրծքդ ավելի մոտեցուր կուրծքիս, Եդուարդ, թող մեր սրտից տրոփյուններն իրարու խառնված աղոթք մ'ըլլան առ Բարձրյալն... վասնզի սրտերը շուրթերեն ավելի մաքուր կըլլան։

* Այսինքն հանդիսականք (Ա և Բ)։

* Գրքի մեջ այս բառը սխալմամբ բարումը տպված է.

Եդուարդ.— *Այո՛...* (Վարդուհին դիտելով) *ա՜հ... որչա՜փ գեղեցկացեր ես, Վարդուհի, մինչև հիմա այսչափ ճառագայթալից տեսած չէի քեզ... միթե երկնքի առաջին ալինե՞րն են այդ ճառագայթները, ուր կը բարձրանան մեր հոգիները...*

Վարդուհի.— *Եվ միթե Աստուծո աթոռին նայելու համար աղամանդյա աչե՞ր պետք են... այն ահավոր փառաց ցոլմունքին չը շլանալու և չը փշրվելու համար...* (դողդոջուն Եդուարդի վրա կը ընկնի):

Եդուարդ.— *Ի՞նչ կըլլաս։*

Վարդուհի.— *Կայրիմ։*

Եդուարդ.— *Երկնքի բո՜ց, իշար վերջապես...*

Վարդուհի.— *Ինձ փարե...*

Եդուարդ.— *Այո՛, իրարու մեջ այրինք...*

Վարդուհի (մթագնած աչերը հորիզոնին վրա հառելով).— *Տե՛ս, որչափ սև է եղեր աշխարհը, կը տեսնե՞ս Եդուարդ...*

Եդուարդ (նույնպես).— *Այո՛, ես ալ նույնպես սև կը տեսնեմ, Վարդուհի... բայց մեր գերեզմանը չըլլա...*

Վարդուհի.— *Ա՜հ, ի՞նչ կըլլամ... մնաս բարով, Եդուարդ...*

Եդուարդ.— *Կեցիր... ես ալ...*

Վարդուհի.— *Միատեղ...*

Եդուարդ.— *Երթանք բարո՜վ...* (իրարու փարած կարձանանան— վարագույրը կիջնե):

Հանդիսատեսք (անընդհատ և ուժգին ծափահարելով...).— *Ի տե՜ս... ի տե՜ս.. ի տե՜ս...* (սույն աղմուկը մեկ քանի վայրկյան կը տևե):

Տեսիլ Գ.— Հանդիսատեսք և Պողյանց:

Պողյանց (վարագուրիկը բանալով՝ շփոթած և այլայլուած).— *Մեծարգո հանդիսականք...*

Հանդիսատեսք (խոսքն ընդմիջելով և ծափահարելով, անտարբերությամբ).— *Ի տե՜ս... ի տե՜ս...*

Պողյանց (նույնպես).— *Բայց...*

Հանդիսատեսք (նույնպես).— *Ի տե՜ս... ի տե՜ս...*

Պողյանց վարագուրիկեն ներս կը մտնե և հանդիսատեսաց աղմուկին և ծափահարության միջոցին վարագույրը նորեն կը բացվի և միևնույն տեղը Եդուարդ և Վարդուհի դիակնացած կերևին).

Հանդիսատեսք (սարսափած).— *Մեռա՜ծ...*

Թոմա (կայծակնահար).— *Զավակնե՜ր...*

Պետրոս Դուրյանի նամակները հայերեն լեզվով գրված ամենեն բանաստեղծական ու սրտաշարժ վեպը կկազմեն, վեպը՝ զգացմամբ զեղուն սրտի մը, որ անգութ պայմաններու ճնշումեն համրաբար խեղդվելով, թափուր կյանքի մը մեջ չգտնելով իրեն պետք եղած սնունդն ու ջերմությունը, օրը օրին իր ներքին տրտունջը կմրմնջե բարեկամներու ականջին, իր հարատև սպառումին մանրամասն վերլուծումը կպատմե, առաջին ըմբոստացումներեն, զայրույթներեն, անեծքներեն մինչև վհատությունը, իրերու տխուր վիճակին անձնատվությունը, մինչև վերջնական նվաղումը՝ բոլոր ուժերուն ու բոլոր խանդերուն առհավետ ցնդումին մեջ։ Ցավագին օրագիր մըն է, ուր մենավոր երազողը, կյանքեն ջախջախված, տեսնելով իր ճամփան, որ առանց ոեէ ծաղկի, շիտակ դեպի մահը կտանի, կնշանակե իր թաքուն տրտմությունները, կերգե իր տարփանքները, որոնց ո՛չ մեկը մտիկ ըրավ, և իր արցունքները, զորս ո՛չ մեկ ձեռք սրբեց։

Ոճը նամակի պարզ, ընտանի, թեթև ոճը չէ. որովհետև ատո՛նք, իրապես, նամակներ չեն, այլ հաճախ՝ ճշմարիտ քերթվածներ։ Միշտ դեպի իսկատիպը ձգտող ոճ մըն է, երբեմն անբնականին և ուռուցիկին մեջ իյնալով, երբ ամենեն պարզ բաներուն վրա խոսած ատենն իսկ քնարերգության ձևը չի թողուր։ Տեսեք, զոր օրինակ, ինչ դարձվածքներ կգործածե բարեկամի մը ըսելու համար թե՝ «Տունդ եկա, բայց հոն չէիր»։

«Դողդոջ քայլերս կարգի դրի ձեր տունը գալու, զքեզ հարցուցի և հարցնելուս հետ անմիջապես կոշիկներուդ տեղը նետեցի ակնարկս. մայրդ և դատարկությունը տխուր պատասխան մը տվին ինձ.— Հոս չէ՞»։

Չեմ ուզեր բազմապատկել այս տեսակ նմուշները, որոնք սակավաթիվ չեն։ Առաջին նամակներուն մեջ Դուրյան դեռ քիչ մը պահած է պատանության զվարթությունը. ընտանի բացատրություններ, մտերմական կատակաբանություններ կգտնենք դեռ անոնց մեջ, բայց իր վերջի տարվան նամակներուն մեջ, որ ամենեն գեղեցիկներն են, նամակի ոճը կանհետանա վերջապես քնարերգական ոճ մըն է, որ կտիրե հիմա. ծանր, հանդիսավոր, վսեմ հառնելու միշտ հակամետ։ Իր վիշտեն լըրջացած, բանաստեղծը կարծես անազնիվ բան մը կհամարե թեթև բացատրություն մը գործածել իր հոգիին պատմությունն ընելու համար. կարելի՞ է կատակել վիշտին հետ, որ ամենեն սրբազան բանն է։ Բայց այն ատեն պետք էր զգուշանալ գռեհիկ մանրամասնություններեն, սովորական իրողություններեն, որոնք այդ եղերական ոճին մեջ արատ-

ներու պես կերևան։ Տարրերու հավասարակշռությունը պահել գիտնալ, բացատրության ու նյութին միջև ճշգրիտ ներդաշնակություն իրականացնել,— ասիկա հաճախ պակսած է Դուրյանին քով, որ իր ըրածը գիտցող արվեստագետ մ'ըլլալե ավելի՝ բնազդական երգող մը եղած է։

Այս քանի մը թերությունները մեկդի դնելով, այդ նամակները հրաշալի գեղեցկություններ կպարունակեն։ Այդ էջերուն լավագույն հատվածները ամենաանկեղծ զգացումով մը գրված են։ Հայտնի է, որ ատոնք գրողը իր սրտին ձայնը միայն մտիկ ըրած է բառերը շարած ատենը։ Գալով ձևին, այն լեզուն, զոր կգործածե բանաստեղծը, վերածնություն մըն է մեր աշխարհաբարին համար. փոխանակ բառերն իրենց ավանդական առումին մեջ անշարժացած պահելու, Դուրյան անոնց նոր իմաստներ կուտա, անոնցմե նոր արդյունքներ կհանե, զանոնք նոր գույներով կներկե.

«Որչա՜փ հաճոյական է քեզ առընթերակաց լինելով, դալկահար վերջալույսի փողփողումովը քանի մը ժամեր ծծել»։

«Դարձյալ սիրտս ցամաքած է, իմ հոգիս հառած է դալկահար և անհուն աշխարհի մը, զոր երկինք կը կոչեն»։

«Չեմ կրնար զգացումներս ուզածիս պես դուրս տալ... Ո՜հ, ցամա՜ք սիրտս, ե՞րբ պիտի թարմանաս, ե՞րբ առաջվան պես խնդումներ պիտի անձրևես»։

Պատկերներն իր արձակին մեջ զարմանալի նորություն մը և սեղմություն մը ունին. կան, որ կաթիլի մը մեջ պարունակված աշխարհներ են.

«Չեմ գիտեր ի՞նչ գրեմ. դժվար է խոսիլ անհունի մը համար. անհունը շուրթեր չի կրնար ունենալ, անհունը ինք իր մեջ կը թաղվի, ինք իր մեջ կը փողփողե»։

«...Թողնք, որ հոգեբուխ հառաչով մը զԱստված դղրդեմ. անհունության մեջ եմ ընկեր. հարկ է որ լռեմ»։

«Երևակայությանս մեջ ցուրտ մշուշ մը կա թանձրացած»։

«Ես գրեթե խաղաղ կը նիրհեի, երբ մայիս 26-ի գիշերը կը բրռաներ, երբ հոգի մը սրտերու և գերեզմանի մեջտեղ կը կողկողեր»։

«Մահվան դալուկը իմ ճակտիս վրա կը պլպլա, իբրև մելամաղձոտ ժպիտ մը, դալկահար ժպիտ մը, որ զիս երկնքի հետ կը միավորե»։

Կզգացվի, թե ի՞նչ ճշմարիտ ու խորին հուզում մը թելադրած է այս բացատրությունները, որոնք գյուտեր են։ Այս բառերուն մեջ սարսուռ մը կա, սարսուռ, զոր կթափեր մահվան գաղափարը Դուրյանի հոգիին մեջ։ Իր տառապանքեն թռած են այս էջերը. այս բացատրություններն իր էության խորեն ելած են։ Իր հոգիին մեջ հնչող ձայներն արտահայտելու համար բառերը հանդուգն փոխաբերություններով կերպարանափոխելե, տարօրինակ զուգադրություններով ուժովցնելե զատ, երբեմն ալ, երբ պատրաստ բառերը չեն բավեր, չէ վարանած նոր բառեր դարբնելու.

«Համոզվե՛, որ քու եղբայրդ գերեզմանի տեղ Նոյան տապանը կը մտնե, աշխարհի արյունահեղեղեն փրկվելու համար»։

Ու տեղ տեղ, այս հատկապես եղերերգին մեջ հստակ և հզոր կերպով բացատրված մտածումներ կերևան.

«Աչքերը կսկիծի մեջ արցունքի օվկիաններ են, անոնք, որ հաճույքի մեջ աստղեր են»։

«Եթե ճակտիս վրա վարդ ունենայի, կիները զիս պիտի սիրեին. ա՜հ, ավելի լա՜վ է, որ դալուկն ունենամ, և բանաստեղծները զիս սիրեն»։

Իր ժամանակին արձակներուն մեջ, ուր հռետորական ու պայմանադրական նախադասությունները այնքան հաճախ կփռվին, այս գունավոր ու ստեղծված ոճը և այս զուտ աշխարհաբար ու անձնական ոյուտերով լի լեզուն նախատիպարն են այն ինքնադրոշմ ոճերուն և գրական մաքուր աշխարհաբարին, զոր հետո պիտի շարունակեն ու զարգացնեն Պոլսո խումբ մը երիտասարդ գրողներ*։

Բ.

ԴՈՒՐՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ

1

Կհասնինք Պետրոս Դուրյանի գործին ամենեն մեծարժեք մասին՝ իր բանաստեղծությանց։ Ինչ որ թատերգությանց մեջ տեղ տեղ միայն կրցած է պոռթկացնել, ինչ որ նամակներուն մեջ կցկտուր կերպով է հայտնաբերած, Դուրյան իր տաղերուն մեջ լիակատարորեն արտահայտած է։ Նյութը հոն ուղղակի կբխի իր հոգիեն, ու ձևը իր տաղանդին ամենեն հարմար, ամենեն բնական ձևն է։ Հին պատմության դեմքերն ու դեպքերը չկան հոդ այլևս, որ ծանրաբեռնեն ու այլակերպեն իր ներշնչումը, ոչ ալ իր անձնական առօրյա կյանքին պզտիկ ու երբեմն գռեհիկ մանրամասնությունները, որ պղտորեն զայն այդտեղ։ Իր հոգիին ձայնն է, որ կյանքին տրտմության վրա սավառնելով, ամեն մանրամասնութենե վեր, միս-մինակ ու մաքուր, կերգե։

* Դուրյանի արձակին վրա խոսված ատեն, պետք է հիշել նաև արձակ մեծ վեպ մը, զոր բանաստեղծը մասամբ գրած էր, Վոսփորյան գիշերներ տիտղոսով և որ ինքնակենսագրության պես բան մը պիտի ըլլար։ Այդ կիսավարտ գործին ձեռագիրը կորսված է։

Այդ բանաստեղծությունները ոչ դիտողի մը, ոչ խորհողի մը գործն են։ Դուրյան չէ ապրած։ Այդ բանաստեղծը երազող մը եղած է լոկ, ոչ միայն իր տաղերուն, այլև իր կյանքին մեջ։ Ընկերական, բնական գիտություններն իր միտքը չեն զբաղեցուցած, բնության ստեղծվածներն ու համամարդկային մեծ հարցերը այնքան ցոլացած ու արտահայտված են իր մեջ՝ որքան իր բնազդը թույլ է տված։ Զգացող էակ՝ ամեն բանե առաջ, աշխարհի մեջեն անցած է առանց իրերը շոշափելու և մարդոց մեջեն՝ առանց անոնց հոգին մոտեն քննելու։ Իր հոգին, միամիտ ու բաբախուն, չէ եղած այն հայելին, ուր կյանքի իրողությունները խորհրդածություններ կանդրադարձնեն, այլ քնար մը, որ ամեն հպման դողդղացած է։ Գործնական կյանքն ընդհանրապես հեռու, գոյության մարտը շատ քիչ մղած է և իրականությունը իրեն համար գրեթե անծանոթ աշխարհ մը մնացած է։ Բնությունը իր աչքին ուժերու, զսպանակներու և օրենքներու անհուն ներդաշնակությունը չէ եղած, այլ հրաշազան պատկեր մը կամ անսահման քերթված մը։ Ընկերությունը նկատած չէ իբր վիթխարի կյանքով մը ապրող և իր հատուկ հոգեբանությունն ունեցող հավաքական էակ մը, այլ իբր համախմբում մը հոգիներու, որոնք իրարու քսվելով կանցնին ժպտուն կամ արցունքոտ։ Այդ թռչունի հոգին վերլուծումը չէ ճանչցած։

Եվ այս իսկ է թերևս, որ իր բանաստեղծության գերագույն հրապույրը կկազմե։ Ոչ մեկ մասնավորություն կա հոն, ոչ մեկ հաստատուն կետ, ոչ մեկ դիտողություն, որ ծանրացնե խանդին սլացքը։ Ամեն բան տարտամ է և ընդհանուր, կարծես երգը աշխարհի մեջ նոր աչքը բացող առաջին մարդուն, որ դեռ ոչինչ գիտե և որ իր տպավորությունը կհայտնե իր տեսածներեն։ Իր բանաստեղծության իսկությունը կարելի է երկու բառով բացատրել,— դյուրազգաց ու փափուկ հոգի մը, որ կյանքի տափակություններեն կույս մնացած է և որ, սակայն, անոր անգթությենեն խոցոտված, իր տրտմությունը կողբերգե։

Այս ողբերգը ա՛յն չէ, զոր կյանքը իրապես ճանչցած, անոր բացած բոլոր վերքերը գիտակցաբար շոշափած, անոր սփռած դառնություններն ուսումնասիրած անձ մը պիտի գրե։ Ասիկա մանուկի ճիչ մըն է այն ցավին տակ, զոր կյանքը իրեն տված է, բնական ձայն մը, գրեթե լոկ բնազդական։ Իր սիրո երգերը անոնցմե չեն, ուր բանաստեղծը, սերը վերեն վար ճանչցած, անոր անդամազնությունը կրնե։ Դուրյան, ինչպես տեսանք իր կենսագրության մեջ, սերն ալ լիովին չէ ճանչցած, իր տարփանքները մենության մեջ երկչոտ հոգիի մը լռիկ երազները եղած են։ Իր տաղերուն մեջ կինը միս ու ջիղեր ունեցող էակ մը չէ, այլ տեսիլք մը, գրեթե անգո, գեղեցիկ ու գրեթե գերմարդկային։ Այդ տաղերուն մեջ տարված զգացումներու չերմությունը չկա։ Ոչ մեկ անգամ դեպք մը, սիրո տրված մը կպատմվի հոն, ոչ մեկ կնոջ դեմքը հատակորեն կնկարվի։ Անշոշափելի երևույթ մըն է միշտ, որ տաղերուն տակ և ծաղիկներու մեջեն կանցնի գեղեցկությամբ լուսապսակված, որ «երազներ կվառե», և բանաստեղծը, այդ գիշերվին աչքն մշտական երկրրպագության մը մեջ, անոր բազինը կենկարկե՝ իր սիրտը վառելով անոր դիմացը։ Անորոշ եղերերգ մըն է դժբախտ հոգիի մը, որ կյանքեն բան չէ հասկցեր, որ երազներ միայն ունեցեր է, որ ոչինչ վայելեր է և որ անհուն մելամաղձությամբ մը համակված, իր ուժերուն ապառամը տեսնելով ստվերոտ անձնավորության մը մեջ, իր թախիծը հառաչեր է կյանքի տանեն բաժին մը չունենալուն։ Այդ տաղերը հառաչներ են, անոնց պես թեթև ու անրմբռնելի, անոնց չափ տարտամ, անշոշափելի և անուշ։

2

Դուրյանի քնարերգական գործը կբաղկանա երեսունվեց տաղերե։ Ասոնցմե յոթը ազգասիրական բանաստեղծություններ են, մյուսները՝ բնության տեսիլներու պատկերացում, բարեկամության ձոնված գեղոն, ընկերական անարդարության դեմ բողոքի ճիչ ու մանավանդ սիրային տենչերու և երազներու, անձնական կյանքի հույսերու և պատրանքներու, խանդավառության և հուսահատության, հրճվանքներու և մանավանդ տառապանքներու արտահայտություն։

Ազգասիրական քերթվածներեն ոմանք գրեթե ա՛յնքան թույլ են, որքան իր թատերգության «երգ»-երը։ Այդպես են Երգ մարտին Վարդանանցը, որ գրաբարյան ուռուցիկ շարադրություն մը կթվի, իսկ Հայրիկն Հայոց անհամ բառախաղ-հանգերու շինծու ծաղիկներով բեռնավորված բանաստեղծական արտադրություն մըն է (Եկո՛, ճովվե՛ մեզ, սիրածդ, ազգասե՛ր— Ապ ա՛ռ էր, են)։ այդ երկու ոտանավորները նույնիսկ արժանի չեն Դուրյանի բանաստեղծության շարքին մեջ գրվելու և ապագա հրատարակիչներ լավագույն է, որ զանոնք դնեն հատորին վերջը՝ ծանոթագրության մեջ, ինչպես և Հայուհին տիտղոսով տղայական ոտանավորը, կամ բանաստեղծին տաղերեն ոմանց առաջին շարադրությունները, զոր պ. Բարսեղ էքսերճյան Դուրյանի գործերե ոմանց իր ձեռքով կատարված երկրորդ ապագրության մեջ մացուցած էր և որ նույնպես ծանոթագրության մեջ միայն, իբր շահեկան վավերաթուղթեր, կրնան դրվիլ։ Մյուս ազգասիրական բանաստեղծություններեն չորսը (Վիշտ Հայուն, Ի պատրիարքական թնարություն Ամենապատիվ Հայրիկին, Ի դիմավորություն Ամենապատիվ Հայրիկին, Նոր սև օրեր),

հակառակ որ տկար կամ միջակ մասեր և բաղաձայններով խճողված աններդաշնակ տողերու բավական ստվար թիվ մը կպարունակեն, ունին ամբողջ հատվածներ, որ գեղեցիկ են, ուժեղ ու վեհ ներշնչումով մը տոգորված, խիտ, սուր, ինքնատիպ ոճով մը գրված։ Իսկ Իղձ առ Հայաստան և Իմ ցավը Դուրյանի քնարերգական գլուխ-գործոցներեն են և մեր հայրենասիրական բանաստեղծության— որ հայ գրականության ամենեն մեծարժեք բաժիններեն մին կկազմե— ամենեն թանկագին գոհարներուն կարգը կրնան դրվիլ։ Առաջինը, թեև տեղ տեղ ոչ զերծ ձևի թերություններե, ջղուտ գնացք մը ունի և կպարունակե ուժեղ պատկերներ, սրտառուչ ճիչեր և Դուրյանին միայն պատկանող սրտալից, ջերմ ոճ մը, որ զայն անմահ էջ մը կկացուցանեն։ Իսկ Իմ ցավը, խորքով վեհաշունչ և միանգամայն ցավատանջ ու ձևով կատարյալ, պաշտելի հրաշակերտ մըն է, անսպյուտ պալլատ մը, զոր կարծես Դուրյան շարադրած է իբր զուգյակ մը այն մյուս հրաշակերտին, որ է Իմ մահը։ Իմ ցավը տաղին մեջ կմիանան Դուրյանի քնարին բոլոր լարերը, սիրո կարոտ ու կյանքի այդ արևեն զուրկ մնացած իր սրտին հառաչը, աղքատության որդեն կրծված իր թշվառ կյանքին մռայլ տեսիլը և իր շրջթայակապ տարաբախտ հայրենիքին համար իր գորովագին սերն ու անոր ծառայություն մատուցանել չկարենալուն կսկիծը։

Անցնելե առաջ ազգասիրական բանաստեղծություններեն Դուրյանի անձնական կյանքի ճիչերուն ու սիրո մեղեդիներուն կամ ողբերուն, որոնք իր քնարերգական գործին կարևորագույն մասը կկազմեն և որոնց ու ազգասիրական քերթվածներուն միջև ոսկի ճարմանդ մըն է Իմ ցավը տաղը, պետք է բոպե մը կանգ առնել Սիրեցեք զմիմյանս քերթվածին վրա։ Հյուկոյի գործեն, ինչպես և իր անձնական չքավոր կյանքի տառապանքեն ներշնչված էջ մըն է ատ, ուր խոր և ուժեղ շեշտով մը հայ բանաստեղծը կբողոքե մարդկային ընկերության անողորմ և անարդար անհավասարությանց դեմ, կխարանե անոնք, որ կկեղեքեն, կշահագործեն, կջախջախեն, խարույկի վրա կհանեն իրենց տկար և անպաշտպան եղբայրները և կավաղե Հիսուսի գերազնիվ վարդապետության մարդոց մեջ այնքան քիչ ու դեղ հասկցված, քիչ տարածված ու գործադրված ըլլալը՝

Կայծակնաթև թե մրոնչեն մրրիկներ
Թե՝ «Սիրեցե՛ք զիրար», հեքն հոս չեն սիրեր։

«Հեք» բառով Դուրյան կհասկնա աղքատը, կյանքի զրկյալը, անրախտ անիրավվածը։ Ինք իսկ ի՞նչ է՝ եթե ոչ հեք մը, չքավոր մը,

ժառանգազուրկ մը և ատոր անսահման դառնությունը, որ և իր գործին կիսատ մնալուն, իր երիտասարդ կյանքին վաղաժամ շիջման պատճառ է եղած, խորապես զգացած և արտահայտած է այդ նույն քերթվածին չորրորդ տունին մեջ.

Տնանկին դամբանը կանհետի ոտնակոխ,
Տնակին մեջ մարի առկայծ կանթեղն հող,
Այն մութին մեջ նոթի տրղեկք կը հեծեն,
Դրդյակն խրախ մինչև լույս պահք կը հյուծեն,
Հարուստին կառք ժխորով կանցնի սրբարշավ,
Հեքին դագաղն յուր գերեզմանն լուռ իջավ...

Նույն նոթը կհնչե Դուրյանի վերջին անտիտղոս և անավարտ քերթվածին մեջ, որ շատ մը տեսակետներով ուշագրավ ու թանկարժեք էջ մըն է և ցույց կուտա բանաստեղծին տաղանդին դեպի ընդլայնում, դեպի նրբացում հառաջանալու ճիգն ու կարողությունը, որոնք դժբախտաբար թշվառության և անոր հետևանք մահվան գարշապարներուն տակ ճզմվեցան ու չքացան։ Հոս կուզեմ արտատպել այդ ամբողջ հատվածը, որ ինքնին ամբողջ քերթված մըն է, գեղեցկագույններեն մին Պետրոս Դուրյանի և որ, Սիրեցեք զմիմյանսին հետ, հայ բանաստեղծության առաջին էջն է, ուր աղքատության ցավը, ընկերական անհավասարության չարիքը այդքան աղեխարշ շեշտով մը և այդքան սրտառուչ պատկերներով երգված ըլլան.

Լուսի՛ն, գրտի՛ր լույս ցողելու ցածուն հյուղ,
Ուր գեթ ցամքած է կանթեղին առկայծ յուղ։
Մի՛, մի՛ սորվիր գաղջ արևեն ձրմեռվան՝
Մոռնալ հյուղն, ուր ամայի է վառարանն
Եվ լոկ սրտերն հոն կը մխան հուսահա՜տ...
Ծագե՛ հյուղին այն բանաստեղծն ուր աղքատ
Ինք՝ լույս, կրակ, ո՛չ մեկն ունի գրբելու,
Սարն իր աստեղց թո՛ղ, դղյակն ալ չահերու,
Գրնա՛ ցողել լույս տնակին այն ցածուկ՝
Ուր մայր մը գիրկն առած կայտառ մի մանուկ՝
Ցույց տալ կուզե քեզ Աստուծո զերթ պատկեր,
Դու որ միայն սիրահարաց ես լապտեր։

Սիրային տաղերը, անձնական կյանքի գեղոնները կամ եղերերգները քերթողին սրտեն ծլած ծաղիկներ են, որոնց ոևէ արվեստականություն չէ դպած և որոնց գույները միշտ թարմ ու բուրմունքն առհավետ կենդանի ու քաղցր պիտի մնան։

Չեմ գիտեր մեր գրականության մեջ բանաստեղծություն մը անհատական կյանքե մը այնչափ ուղղակի բղխած, որչափ Դուրյանինը, և միանգամայն այնչափ ընդհանուր, այնչափ անորոշ, այնչափ կարող մասնավոր եսի մը արտահայտությունն ըլլալե զատ՝ համամարդկային տեսակ մը տիպարի եսին ալ արտահայտությունն ըլլալու։ Եվ հոդ է այդ բանաստեղծության մեծագույն արժանիքներեն, անոր հմայքին գլխավոր պատճառներեն մին։

Դուրյան իր տենչերն ու երազները, իր պատրանքներն ու տառապանքը կերգե անընդհատ, բայց իր երգը այնքան քիչ որոշ է, տեղական մանրամասնություններով այնքան քիչ սահմանափակված, իրական դեպքերով այնքան քիչ պզտիկցած, իր խորունկ և ուժեղ անկեղծության մեջ այնքան տարտամ, որ ամբողջ մարդկության անբախտ ու տառապող մեկ հատվածին երգը կդառնա։ Ո՞ւր կանցնի այդ մեկ անձով եղերախաղը, ուր, ամայի դաշտերու մեջ իր վերքեն շարշարվող դժգույն պատանի մը հեծկլտալով կթափառի երևակայական հուրիի մը ետևեն։ Ո՞վ է այդ պատանին։ Մեկ կամ երկու հեղ, բանաստեղծը տեղն անվանած է (Պաղլարպաշի, Զամլճա, իր պտույտի վայրերը). առանց այդ հիշատակված տեղերն իսկ իրենց հատուկ գիծերով ու գույներով նկարագրելու, կարելի է անոնց անունը փոխել թատերաբեմը միշտ նույնն է, որովհետև աշխարհն է թատերաբեմը՝ իրեն իբրև տեսարանի զարդ ունենալով բնության գլխավոր քանի մը պատկերները, դալարիք, նոճիներ, ծաղիկները, արևը, լուսինը, ծովը, երկինքը իր աստղերով և բլուր մը իր մենությամբ։ Բայց ինքը՝ այդ «նոճյաց որդեգիրը», այդ «դալկահար» տղան, ո՞վ է։ Երբեք Դուրյան իր անհատական կենդանագիրը գծած չէ իր տաղերուն մեջ, երբեք իր հոգիին մասնավոր պատկերը դրած չէ։ Հոգի՛ մըն է, և այդչա՛փ։ Մարդկային հոգի մըն է, միամիտ, որ մարդկային էակին մեկ քանի ընդհանուր հիմնական և հավիտենական զգացումները կերգե՝ Սերը և Ցավը։

Իր նկարները գիծ չունին։ Իր վրձինը օդեղեն փետուրի փափկությամբ շոգետեսիլ գույներու ծածանք մը կխաղցնե իր քերթվածներուն կտավին վրա։ Բայց զարմանալի հակադրությամբ մը, այդ տարտամությունը տարօրինակ ուժգնությամբ կվառի, այդ ծածանուտ գույները ամենեն հոծ կերպով բնությունն ու հոգին կխորհրդապատկերեն, որովհետև բանաստեղծին անորոշ տեսողության տակ խորին զգայնություն մը կթրթռա և որովհետև մանրամասնությունները տեսնելու այդ անկարողությունը կամ դժկամությունը կնպաստե իրերուն իսկությանը թափանցելու։

Ահավասիկ բնության պատկերներ։ Արշալույս մը նկարագրելու համար ամպերուն ձևը և լեռներուն շրջագիծները պիտի չնկարե, լույսին ժայթքումներն ու խավարին փախուստը պիտի ցույց չտա. չորս տող, չորս հակիրճ ու տարտամ պատկեր, և արշալույսին քերթվածն է ամբողջ, որ դուրս պիտի ցատկե.

Շաղի, շողի ժամք էին,
Վարդից հրդեհ կայր յերկին.
Փոխան ամպոց հուր հյուսքի,
Տեղար մարգրիտ, ոսկի։

Երբ զեփյուռը երգել ուզե, նյութական նմանություններով զայն պիտի չծանրացնե, այլ վերացական բացատրություններով օդին զգվանքին զգայնությունը պիտի տա.

Ես ուզեցի սիրել զեփյուռ,
Որ երկնքեն թրռչի բեկբեկ.
Նա չը՝սիրեր խոցել երբեք,
Հոգի մ'որս զաղտնիքն է քույր,
Գիտե շոյել երազներ բյուր,
Երկնի բույրն հուշ կածե առ հեր։

Նույն տարտամությունը, երբ իր պաշտելին կնկարագրե. չենք տեսներ զայն երբեք այդ տաղերուն մեջ, կզգանք զայն՝ զմայլանքով օծված տողերուն մեջեն.

Ո՜հ, ի՞նչ ես դու, սե՞ր, երկնի հո՞ւր
կամ ժրպի՞տ...
. . . . . .
...Թավուտքի մը մեջ ծաղկոտ
Ընկողմանած նրվաղկոտ՝
Կհնայիր դու տժգույն
Ամբան սյուքի մը հանգույն։

Աչերդ սիրո ատրուշան...
. . . . . .
...Ո՜հ, ի՞նչ է նե,— ձյունով շաղված մի անդրի.
Վսեմ ճակտին վրա զույգ մը աստղեր վառ,
Ինքն սիրե՝ հալի. Թ'ատե— կորի սառ...
. . . . . .
...Էակ չէր նե, այլ սեր, հուր, շունչ, ժրպիտ, ցավ.
Գոհար աչեր, վարդ այտ, այլ ինքն էր թախիծ...
. . . . . .

Ո՞վ է, ի՞նչպես է այդ կույսը,

...Ոյր դեմքեն կը փթթին
Լուսնի գալուկն ու ժըպիտ։

և որ

...եղեմ մը կը բուրե,
Վառե երկինք մը երազ։

Ձենք գիտեր, կերևակայենք զայն բանաստեղծին հիացման ու տառապանքի բառերուն մեջեն. և այսպես, հատուկ դեմք մը ըլլալու տեղ, այդ Երևույթը՝ մեզի համար կդառնա անհուն էակ մը, Կինը։

3

Պետրոս Դուրյանի գործերուն ուսումնասիրության մեջ ամենեն հետաքրքրական ու կարևոր կետերեն մեկն է՝ որոշ գիտնալ, թե ո՛ր աստիճան և ի՛նչ ուղղությամբ զարգացած էր իր միտքը, գրական ինչ դաստիարակություն ուներ։ Մեր մեջ շատ են կարծողները, թե Դուրյան տգետ էր, քիչ բան կարդացած, գրական արվեստին քիչ ծանոթ և թե ինչ որ արտադրած է՝ իր բնածին տաղանդին շնորհիվ միայն կրցած է արտադրել, և անիկա թերի ու չհղկված արտադրություն մըն է, լեզվական ու գրագիտական սխալներով լեցուն։

Ասիկա ճիշտ չէ, ու կբավե քիչ մը քննադատի աչք ունենալ բանաստեղծին գործերուն իսկ մեջ ասոր հակառակը տեսնելու համար։ Դուրյանի գործերը, իրա՛վ, անոնցմե չեն, որոնք հղացված են հստակ, հանդարտ, հմուտ, կարարելության սիրահար մտքերե, այն գործերեն, որոնց վրա արվեստագետն իր փորձառության ու ճաշակին բովանդակ գիտակից ճիգը կթափե և զոր դարերու քննադատությունը անսգյուտ պիտի գտնե։ Ու չեմ գիտեր, թե ճշմարիտ քնարերգական բանաստեղծությունը կրնա՞ այդպես ըլլալ, այդ գերազանցապես ավյունի բանաստեղծությունը, որուն անկարգությունն իսկ է բուն հրապույրը, որ պարտի ոչ թե մաս առ մաս՝ խորհրդածությամբ կազմվիլ, այլ սրտեն ժայթքել և որ պարտի վառիլ, ոչ թե փողփողիլ։ Դուրյանի տաղերը կրակի կտորվանքներ են, մշտավառ, ո՛չ գոհարներ, կանոնավոր, շողուն ու ցուրտ։ Գալով լեզվին, ո՞վ է ըսեր, թե Դուրյան հայերեն չէր գիտեր։ Կընդունիմ, որ խորին գրաբարագետ մը եղած չըլլա, և ատիկա գրեթե առավելություն մըն է իրեն համար։ Բայց շատ մը գրաբարագետներե ավելի լեզվի հասկացողություն ունեցած և բաբելային աշխարհաբարով մը շարադրված գրվածքներու մեջ ինքը գրեթե զուտ աշխարհաբարով մը արտահայտված է։ Բացի քանի մը բառերե, որոնք իրենց իմաստեն շեղված ձևով կերևան իր էջերեն ոմանց մեջ, ինչպես վեսը սեգի տեղ գործածված,— և քանի մը անճաշակություններե, զոր մարդ նոր կազմվելու վրա եղող լեզվի մը կներե,— Դուրյանի աշխարհաբարին մեջ հայերենի ոևէ տգիտություն չի տեսնվիր. իր աշխարհաբարին միակ թերությունը դեռ գրաբարի հետքեր ունենալն է, մերթ թեթև, մերթ շափազանց. բայերուն սահմանական ներկային անհրաժեշտ կրն երբեմն ջնջված կտեսնենք, գրաբար հոլովներ դեռ կգտնենք հոն (ի դրանց ոսկի աւրեալիին, աստեղց, շողից, ճոնից), գրաբար դերանուններ գործածված են բավական հաճախ։ Բայց պետք է նկատել, որ ատոնք ավելի բազմաթիվ են երկրորդական կտորներուն մեջ, մինչ ճշմարիտ զգացման հարազատ ներշնչման էջերուն մեջ հազվադեպ են։ Ու լեզվին ընդհանուր գնացքը աշխարհաբարի գնացքն է, իսկ եթե տգետ եղած է Դուրյան գրագիտական կանոններու և պայմանադրությանց՝ ավելի՛ լավ. իր տաղերուն մեծագույն արժանիքն է ոևէ կանոն, ոևէ հռետորության չհիշեցնելը, հուզումեն ուղղակի բղխած ըլլալը՝ փոխանակ գրքերե ծնած ըլլալու։ Անկարելի է ուրանալ, որ իր ոճը զերծ չէ թերություններե. բացատրության անհավասարություններ ունի, որոնք կկաղացնեն մերթ բանաստեղծության սլացքը, կրկնություններ, որոնք՝ կտկարացնեն գաղափարը (Ներա հետին մեջ վեց անգամ աստղի խոսք եղած է), բացատրության անորոշություններ, նմանության անճշտություններ ու մանավանդ տաղաչափության մեջ աննկարդաշնակություններ (Քեզ սիրելու համար հարկ յոկ զոյ շիրիմ, Լճակի մը պես ես մեռած, Քաղցր երազով մ'հրդի մրափ մը, Որք ծաղիկներ են սուտ սոսկ, Հրաշեկ սրյաffկշողան, Արտոսր ու fիրտդ թող փալփլին, Ձէինք խոսեր, խոսfն մեր հոգվոց)։

Բայց ասոնք ճաշակի թերություններ են, զոր սրբագրելու համար գրագիտական կանոնները գոց սորվիլը չէ, որ անհրաժեշտ է, այլ փորձառությունն ու վարպետ հեղինակներու գործերուն ուշադիր ընթերցումը։ Պետք է նաև գիտնալ, թե այդ անճաշակությանց մեկ մասն ալ արդյունք է տպագրական սխալներու* և մանավանդ այն սրբապիղծ «սրբ-

* Առաջին տպագրության վրիպակներեն մաս մը իբր նմուշ կդնեմ հոս։ Սիրեցի fեզ տաղին մեջ՝ զորս ութ օրն է նա գրծեր, բնագիր՝ Նա գրծեր. լուսինը ոչ ներա վարfն, բնագիր՝ վարսն։ Կոկոն-ծաղիկf կույսին տաղին մեջ՝ ի՞նչպես արդյոք կերտեց նա, բնագիր՝ կերտեց Նա։ Կույսն լfյալ տաղին մեջ՝ Այիք սիրո ցույց տան ձայն՝ նետ, բնագիր՝ կայծ՝ նետ։ Վիշտf Հայուն քերթվածին մեջ՝ թույլ թույլ՝ բյուր բյուր ոգիր թրոան տրրտմալիք, բնագիր՝ բույլ բույլ...։ Լճակ տաղին մեջ՝ որք նրմանին փրփուրիդ, բնագիր՝

բագրություններ»-ուն, որոնց Սիմոն Ֆելեկյան ենթարկած է Դուրյանի տաղերը։ Հոս կուզեմ հիշատակել այդ փոփոխությունները, զոր Միհրդատյանց ինծի ղրկած է՝ օրինակելով Դուրյանի տաղերու հեղինակին ձեռքով սրբագրված և մաքուրի առնված հավաքածուեն, որու վրա Ֆելեկյան կատարած է իր «սրբագրություն»-ները։ Էքսերճյան Դուրյանի գործերու մեկ մասին երկրորդ տպագրության մեջ ֆելեկյանական շարափոխությանց մեծ մասեն, բայց ոչ բոլորեն, մաքրած է այդ տողերը։

Սիրված էակին ստինքներուն վրա գրված տաղի մը մեջ (Կոկոնծաղիկի կուսին) ամբողջ պատկեր մը ավրված է բառի մը փոփոխությամբ. Դուրյան ծիծերը կնմանեցնե երկու աշխարհներու, որպնք առանց արևի մը լուսավորվելու՝ իրենք իրենցմե լույս կարձակեն.

Լուսափրթիթ 'ւ անարև
Ջույգ մ'աշխարհներ ես տեսի

Ֆելեկյանը չէ հասկցած և անարատի փոխած է անարևք։
Կոյսն լիյալ քերթվածին մեջ Դուրյան գրած էր՝

Ի դրանց ոսկի արևելքին՝
Թրոչրտելով սյուքեր հեշտին,
Ծագկանց՝ աղոց թերթից համբո՛ւյր
Ճալով տահին թոզով համ, բուրբ։

Ֆելեկյան երկրորդ տողը փոխած է սապես՝

Իշներ զեփյուռ ցողիկ հեշտին...

Հծծյունք տաղին մեջ Դուրյան գրած է՝

Դիսաստղի պես հեռուն կ'նազիս...
. . . . . .
Երբ աստղալույց գիշեր է զով,
Շրջագայիս Պաղարպաշի,

փրփուրիդ։ Տրառնքք քերթվածին մեջ՝ ատնգուքքն սնալի, բնաքիր՝ անուշի. ալվայն ու վանիին, բնագիր՝ վանկին։ Մանուկն առ խաշ տաղին մեջ,

Սորվիմ աղոթք
Դառնալ քեզի՝

բնագիր՝ քառնալ։

Այս բոլոր վրիպակները բանաստեղծությանց մեջ է. որ գտած եմ, և դեռ բոլորը չեմ նշանակած հոս։ Թատերգությանց մեջ անոնք ավելի բազմաթիվ են. Էքսերճյան իր հրատարակության մեջ սրբագրած է այդ վիպակներուն մեկ մասը, բայց ոչ բոլորը, իսկ Ֆ-քն ալ շարք մը նոր վրիպակներ ավելցուցած է։

Դիտե՞ս թե սիրտս որչա՞փ մաշի
Շրջազգեստիդ լոկ շրշյունով։
Գա սյուքն ազատ քեզ այցելու։
. . . . . .
Ես կը վախնամ քեզ մոտելու
. . . . . .
Մեջ նայվածքիդ կրակ ու բոց։
. . . . . .
Գեհեզմանոցին ցուրտ ծառեր
Կը փրսփրսան մեռելոց հետ,
Շրջազգեստիդ շրշյունին զեր
Ինձ արձագանք՝ մահահրավեր։
. . . . . .
Դադրած շրշյունք կանանց անմոռուշ...
. . . . . .
Շրջազգեստիդ խշշրտուքն հար
Կը փրսփրսա դեռ ականջիս...

Ֆելեկյան «սրբագրած» է հետևյալ ձախավեր ձևով.

Դիսաստղի պես բաց կ'նազիս...
. . . . . .
Շրջագայիս, օ՜, սիրելի,
. . . . . .
Քո նրմայող նայեցվածով։
Գա սյուքն զով քեզ այցելու,
. . . . . .
Ես կը դողամ քեզ մոտելու...
. . . . . .
Քու նայվածքիդ մեջ կրակուրց...
. . . . . .
Շիրմաց մեջի ցուրտ ցուրտ ծառեր
. . . . . .
Սրտիս թելերն իմ դառնաղետ
. . . . . .
Տան արձագանք մահահրավեր։
. . . . . .
Դադրած շրշյունք սրտերս մուրջ
. . . . . .
Քո քայլերուդ խշրտուքն հար
Կը մրմնջե դեռ ականջիս։

Դրժել տաղին մեջ, Դուրյան գրած է՝

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
. . . . . .

Խոզացած կուրծս, մառն իմ աչքին...

Խորշ մը կար որ զիս չը ծաղրեր...,

Ցելեկյան փոխած է սապես՝

Խումբ մը կնճիռ, բուռ մը կայծակ՝
Կուրծքս զոզած՝ մառն իմ աչքին,
Խորշ մը կար, որ զիս կը ծաղրեր,

Իցի՞վ թե *տաղին մեջ Դուրյան գրած է՝*

Բոռմեի գիրգ ձեռքդ տայի կյանքիս վերջ,

Ցելեկյան փոխած է սապես՝

Վերջին շնչիկս ի գիրկդ առներ ելևէջ:

Պետք է մեռնիլ *տաղին մեջ Դուրյան գրած է՝*

Դողդոջ ու գիրգ պաղ ձեռք մ'ըզգաց ձեռքըս սոսկ,

Ցելեկյան գիրգ *ածականը* գիրկ *գոյականին փոխած է։*
Իրմ առ Հայաստանին մեջ, *Դուրյան գրած է՝*

Բնության դաշնակք, ո՞հ, չեն կրնար նրվաճեր
Ըզձեղ հառաչք, որով մրոնչեն նոճիներ
Թերևս ժրպտին Մասյաց մրրիկ սարերը
Կամ արտասվին Սիպիրիս սառերը,
Բայց սև հոգիք ու սև ճանկեր չեն կրնար
Խեղդել իմ ձայնս, փրշրել փրշտ իմ քրնար.

Վայրկյան մ'ինձ նետ դեռ իրավունք չթոթվեց
Հայն զիս ծաղրեց, և ձայն մը զիս չը թողեց.
. . . . . .
Դեռ կը գոչեմ ձեզ, Հայե՛ր,
Որ դամբանիս մեջ չը լրսեմ ձեր վայեր.
. . . . . .
Թե լուսո դարն երկնե «Ազատ զավակներ»,
. . . . . .
Թեև ըլլամ ես մեռել,
Դամբանես դուրս կ'նետվիմ ազատ Հայն տեսնել՝

Ցելեկյան չարափոխած է հետևյալ ձևով.

Բնության դաշնակք, ո՛չ, չե՛ն կրնար նրվաճեր
. . . . . .

Թերևս ժպտին Հայոց մրրիկ սարերը,
Կամ շունչ ծխեն Սիպիրիս սառերը,
Բայց սև հոգիք ու սև ճանկեր անոդոք
Խեղդել կուզան ազատ նոզվույս իմ բողոք,
Բնավ ինձ հետ իրավունք ոչ թոթովեց,
«Հայր չեմ» ծաղրեց, և ձայնը զիս չը թողեց։
. . . . . .
Հա՛յ ու շղթա, ձեզ մոռնա՛լ,
Երբե՛ք, այլ շունչ մ'ըլլալ ու ձեզ ոգի տալ:
. . . . . .
Թե նայությունն երկնե «Ազատ զավակներ»,
. . . . . .
Քնարդ իմ, զքեզ մոռանալ
Ոչ, նետ շիրմիս քեզ ձայն ըլլալ ու նայ լալ,

Վիշտ Հայուն *քերթվածին մեջ, Դուրյան գրած է՝*

Եվ նակատրդ կրես պրսակ,
Ալ չըկա վառ թագդ առջի
. . . . . .
Սիրատրոփ *լանջք կուսից տեսավ երբ սրախոց*
Թողուցին պսակ և քընար.

Ցելեկյան սրբագրած է՝

Ի գլուխ *կրես դու պսակ*
Ալ չըկա վառ թագդ նախնի.
Սիրազեղ *լանջք կուսից տեսավ* երբ ի խոց
Թողին պրսակ և քընար

Անավարտ մնացած անվերնագիր մեծ քերթվածին մեջ (Երեկոյան բալն կը սողար... են) *Դուրյան գրած է՝*

Զոր գրկեցին շուտ վոսփորյան ջիջ ալիք:
. . . . . .
Սառնամանուտ սարերու *վրա քայլ առ քայլ,*
Անոր համար ի՞նչ է ծաղիկ փթթեցնել,

Ցելեկյան սրբագրած է՝

Զոր գրկեցին շուտ վոսփորյան խոնջ ալիք,
Սառնամանուտ բլրոց *վրա քայլ առ քայլ,*
Անոր համար ի՞նչ է ծաղիկը ծաղկել,

Զոյզում *տաղիկին (որուն առաջին տիտղոսն է՝* Վերոգյալ տաղեն or մը վերջը) *Դուրյան գրած է.*

Սև մըրափ մը կառնեի,

. . . . . .

Եվ թոշնած զույգ մը վարդեր
Այտերուս վրա կայրեին,
Անշուշտ ճակտիս վրա մահու
Դալկություն մը կը պլպլար
Եվ մանու բոիշ մ'ունեի,
Լրսեցի մուս հեծեծում...
Բացի աչերրս խոնջած,
Մորս արտասրը տեսի՞...
Ո՞ն եբշմարիտ գորովի
Մարգարիտներ սուտ ու կեղծ...

. . . . . .

Մայրս անհուն ցավ մ'ուներ,
Այն սև ցավը ե՞ս էի...

Ֆելեկյան այս աղեխարշ տողերը, որուն ամեն մեկ բառը սրտի արյունով գրված է, լրացած է սա ձևով.

Յուրտ մըրափ մը կ'առնեի,
Զույգ մը վարդից ելեէջ
Այտերուս վրա այրեի,
Վերա ճակտիս իմ մահու
Դալկություն մը պրլպլար,
Վերա հոգվույս* սիրարկու,
Անկավ շունչ մուս որ կպպար...
Բացի աչերրս խոնջած,
Գրրույն արտասրը տեսի՞...
Համբույրն յերեսս հանգչած
Սուրբ հիշատակ մի վերջի...
Յար մայրս անհուն ցավ մ'ուներ**։

Գալով Դուրյանի ընթերցումներուն, սխալ մըն է կարծել է, թե Տրտունջի հեղինակը շատ քիչ բան կարդացած է։ Անշուշտ, բոլոր գրականության շրջանը չէ լրած, ու շատ հեռու է ատկից. բայց կարդացած է ամենեն փափուկ, ամենեն հզոր և ամենեն տաք հեղինակներն այն գրականության, որ ամենեն տաքն է բոլոր գրականության, այսինքն գլխավոր վարպետները ռոմանտիկ գրականության։ Ռոմանտիզմի մեծագույն նախակարապետ Շեքսպիրին քանի մը հրաշակերտներուն ծանոթ եղած է, կարդացած ու ջերմորեն սիրած է Հյուկոն (առաջին շրջանի բանաստեղծությունները, Թշվառները և թատերգությունները), Լամարթինը (բանաստեղծությունները, Ժոսլենը, Ռաֆայելը, Կրամիելլան), Աղեքսանդր Տյուման (գլխավոր վեպերն ու թատերգությունները)։ Թերևս Պայրընեն քանի մը գործերու, Կեոթեի Վեոթերին թարգմանություններ կարդացած ու էոժեն Սյուի Թափառական հրեային ու Գաղտնիք Փարիզին ալ ծանոթ եղած ըլլա։ Հայ բանաստեղծներեն ամենեն ավելի կարդացած է Ալիշանը, Պեշիկթաշլյանը, Նարպեյը, Խրիմյանի գործերը, Հ. Սրսեն Բագրատունիի Հայկը և թարգմանությունները, հավանորեն նաև Խաչատուր Միսաքյանի գրվածքներեն մեկ քանին ու ներկա եղած է Պեշիկթաշլյանի, Թերզյանի թատերգության (ինչպես և Շեքսպիրի, Շիլլերի, Հյուկոյի, Տյումայի խաղերու) ներկայացմանց։ Ապահովապես, վերոհիշյալ անուններեն զատ ուրիշ անուններ ալ ճանչցած է, բայց դժբախտությունը մըն է, որ իր բարեկամները չեն հիշեր անոր կարդացած գիրքերը։ Եղիշե վարդապետ Դուրյան կըսե, թե Պետրոսը զինք հաճախ կղրկեր Ընթերցասիրաց ընկերության մատենադարանը և ցուցակը բերել տալով՝ 10—15 գիրք կընտրեր, կկարդար ու հետո ետ կդարձներ։ Նմանապես Եղիշե վարդապետ կպատմե, թե իր եղբորը մահվենեն ետքը անոր սենյակեն երկու սնդուկ գիրք ելավ, որոնց պարունակությունը չի հիշեր և զոր, դրամական նեղության մեջ ըլլալով, ծախեր են իսկույն։ Ասոնք կցուցնեն, թե Պետրոսը, առանց գիրքերու կատաղի լափող մ'ըլլալու, հեռու էր ընթերցման անոթի մնացած ըլլալե։

Արդեն, պետք է դիտել, թե մշտական ու առատ ընթերցումները, որոնք քննադատին, բանասերին, պատմաբանին համար անհրաժեշտ են, բանաստեղծին համար վնասակար իսկ կդառնան հաճախ, անոր մտքին թարմությունը, ներշնչման ու ձևի ինքնիսկությունն ու իսկատիպությունը կ'եղծանեն։ Երբ ուսումնասիրությունն ու խորհրդածությունը չափազանց զգացվին, տողերուն ետև փիլիսոփայական, պատմական կամ նկարագրական, թատերական իր վիպական բանաստեղծությունն կրնա մեջտեղ ելլել ու նույնիսկ լավագույն որակով, բայց ոչ ճշմարիտ քնարերգակ բանաստեղծություն։ Այդ բանաստեղծությունը միամտության, հավատքի, թռիչի պետք ունի, բնազդական ձիրքերու և զգայական ազդակներու ծնունդ պետք է ըլլա. բազմաթիվ ընթերցումները կխամրեցնեն ասոնք։

Ատկից զատ, Դուրյանի պես բացառիկ հատկություններով օժտված մտքի մը համար քանի մը մեծ գործերու ընթերցումը ամբողջ տիեզեր-

* Տպագրական վրիպակով ձը տպված է հոգվոցս։

** Ֆելեկյանի այս անպատկառ «արարագրություն»-ներուն մեկ զույգը կարելի է համարել այն ձախավեր փոփոխությունները, զոր Հովհաննես Թումանյանի բանաստեղծության հավաքածուն հրատարակող Պաքվի գրասերներու հանձնաժողովը (1908-ին) իրեն թույլ տված էր մտցնել անոր քերթվածներեն ոմանց մեջ։ «Գոքա իմ հրատարակիչները չեն,— կ'ըսեր ինծի Թումանյան,— իմ խայտառակիչներն են»։

քի մը բացումն է արդեն։ Բանաստեղծը մեծապես շահած է՝ երկրորդական տաղանդներուն անհատնում շարքը չճանչնալով և իր միտքը հաղորդակցության դնելով քանի մը հանճարեղ քերթողներու հետ միայն, և անոնք ալ՝ գրեթե ամենքը նույն ընտանիքեն, խանդավառներու ընտանիքեն, որ ի՛րն ալ է։ Այդ քանի մը մեծ բանաստեղծներուն մեջ ինք ամբողջ բանաստեղծությունն տեսած ու ըմբռնած է, որովհետև սովորական ընթերցողն մը տարբեր կերպով է կարդացած, ավելի խորապես հասկնալով կարդացած գործը, անոր ներքևույթներն ու կողմանոցները տեսնելով, անոր լռությունները լսելով, անոր կախման կետերն ամբողջացնելով, անոր զգացումներն ինք ալ վերզգալով և ինք ալ վերխորհելով անոր մտածումները։

Կրավե կարդալ իր մեկ տաղը համոզվելու համար, թե այդ միտքը անմշակ չէ։ Իր ոտանավորի ձևերը ինչպես և կշռությունները բավական զանազանություն ունին, և ուրիշ կերպ ընել անկարելի է. Հյուկոն կարդալն ու սիրելն հետո իր բացատրությունները շատ հաճախ նոր են, նուրբ և անձնադրոշմ։ Այլև կան իր մոտ նմանություններ, ձևեր, որոնք ռոմանտիկ գրվածքներու սովորական տարազին համեմատ հորինված են, և կան, որ ակամա կրկնություններ են, անգիտակից վերհուշումներ։

Ավելի ճիշտ պիտի ըլլար միակողմանի միտք մը կոչել Դուրյանը, քան տգետ։ Դասական գրականության քիչ ծանոթ էր, նույնպես և իրապաշտ գրականության, որ այդ շրջանին Եվրոպայի մեջ ալ նոր երևան գալ սկսած էր. պատմական, իմաստասիրական, քննադատական գործեր շատ քիչ կարդացած էր։ Իր գրական դաստիարակությունը կազմված էր գրեթե միայն ռոմանտիկ բանաստեղծներու, և մեծ մասամբ ֆրանսացի ռոմանտիկներու, գործերուն ընթերցումով։

Դուրյանի ընթերցումներուն վրա խոսված ատեն կարևոր ու բնական հարցում մը կներկայանա՝ ո՞ր բանաստեղծներն էին իր նախասիրածները։ Պատասխանը իր գործերու մեջ մասամբ կգտնենք. այն հեղինակները, որոնց անունը կամ գործը կհիշատակե իր գրվածքներեն ոմանց մեջ՝ Հյուկոն ու Լամարթինն են։

Հավանական է, որ ամենեն ավելի զանոնք կարդացած է, արդեն անոնք են, որ ամենեն ավելի մեր մեջ ծանոթ, թարգմանություններով ալ տարածված էին։ Մյուսեին անունը երբեք չէ հիշված իր ամբողջ գործին մեջ, ուր անոր ազդեցությունը չի զգացվիր արդեն։ Թերևս Դուրյան բնավ չէ ճանչցած Մյուսեն կամ թերևս ճանչցած է ու այնչափ չէ սիրած, ինչչափ Հյուկոն ու Լամարթինը, որովհետև հակառակ իր քերթվածներե ոմանց մեջ հնչող տառապանքի շեշտին՝ Ռոլայի և Նամունայի տարակուսող ու հեգնող հեղինակը խանդավառ հոգիներուն հաճելի չի թվիր. հետո՝ Դուրյան զայն անմաքուր և կնոջ նկատմամբ անպատկառ պիտի գտներ, և ատ միայն կբավեր, որպեսզի զայն չսիրեր։

Հակառակ խորին սիրույն ու հիացման, զոր հայտնապես ունեցած է Հյուկոյի և Լամարթինի, ինչպես Ալիշանի ու Պեշիկթաշլյանի համար, Դուրյան իր գեղեցկագիտությամբ ու ոճով, ինչպես և հաճախ իր աշխարհայացքով, մեծապես տարբեր է անոնցմե։ Դուրյան մին է ամենեն ինքնատիպ,— ի ծնե ինքնատիպ— քնարերգակներեն, որ հայտնված ըլլան ոևէ ազգի մեջ։

4

Իր արտադրելու եղանակն ալ Պետրոս Դուրյան ռոմանտիկ է։ Լամարթինին պես, որ միացյալ արտադրությունը կսիրեր և սրբագրությունը եղծում մը կնկատեր, Դուրյան ալ իր կյանքի առաջին ու երկարագույն շրջանին իր տպավորությունները մեկ անգամեն թափած է թուղթի վրա։ Արտասովոր կերպով դյուրազգաց ըլլալով, ինքն ալ մեկը այն հոգիներեն, զորոնք իրավամբ նմանցուցած են մորթազերծ մարմնի մը, որուն համար ամեն հպում ցավ է, ամեն ազդեցության տակ սարսռացած է և իր սարսուռն անմիջապես արտահայտելու մարմաջն զգացած է։ Իր բոլոր տաղերը մեկ ժայթքումով եյած են գրիչեն, զգացման մը տիրական մղումին տակ։ Իր քերթողական գործերը փիլիսոփայական կամ վիպական չեն եղած, որպեսզի առաջուց խորհեր անոնց վրա, մտքին մեջ երկար աշխատությամբ զանոնք պատրաստեր ու հետո հանձներ թուղթին։ Երգեր եղած են ամենքն ալ, երգեր, զոր արձակած է որոշ հուզման մը մագնիսացման մեջ։ Երգ մը թռցուցած է, ինչպես ուրիշ մը արցունք մը պիտի կաթեցներ կամ հառաչ մը պիտի արձակեր։ Իր բարեկամները զմայլմամբ դեռ կհիշեն այն արագությունը, որով կգրեր։ Ուր որ ըլլար, կրսեն, հազիվ թե զգար կայծը, որ կվառեր իր մեջ, իսկույն կառներ թուղթն ու մատիտը և կգրեր։ Իր տաղերուն սևագրություններեն մեկ քանին տեսած եմ. գրեթե ամենքը մատիտով գրված են, թերևս դաշտը, կամ բլուրի մը վրա, կամ զբոսավայր մը, եկող անցնող տպավորությունը կամ սիրտը արոփեցնող հիշատակ մը իր թռիչին մեջ բռնելով ու թուղթին վրա սևեռելով։ Սրբագրությունները հազվագյուտ են այդ ձեռագիրներուն մեջ։ Կան, որ անարատ են, օրինակվածի պես, իրենց վերջնական ձևով խորհված ու գրված։

Կան իր տաղերուն մեջ այնպիսիներ, որոնց մեջ ինքն իսկ փոփոխություններ մտցուցած է, բայց ատեն անցնելե ետքը, քննական աչ-

քով վերընթերցումն մը հետո, ինչպես կտեսնենք իր տաղերուն երկրորդ օրինակության մեջ, զոր ինքն իսկ կատարած է*։

---

* Շահեկան կնկատեմ դնել այստեղ Դուրյանի բանաստեղծությանց յուրաքանչյուրին արտադրության թվականը և այն կարգը, զոր բանաստեղծը նշանակած է, երբ զանոնք մաքուրի առած է 1871 տարվան ընթացքին՝ տետրակի մը մեջ։ Այդ տետրակը կմնա եղիշե վարդապետին քով և անկից քաղելով է, որ այս ցուցակն ինձի ղրկեց ինքն իսկ։

1 Խղճք առ Հայաստան (1869)
2 Պետք է մեռնի՞լ (1869)
3 Պետք է մեռնի՞լ (1869)
4 Ի պատրիարքական ընտրություն Ամեն. [ապատիվ] Հայրիկին (1869)
5 Ի դիմավորության Ամեն. [ապատիվ] Հայրիկին (1869)
6 Հայրիկն Հայոց (1869)
7 Երգ մարտին Վարդանանց (1869)
8 Նե (1871)
9 Առ կույսն (1871)
10 Վիշտք Հայուն (1868)
11 Կույսն լքյալ (1870)
12 Նայվածք մը (1871)
13 Նվագ ժ-րդ տարեդարձի Ազգ. Սահմանադրության (անտիպ) (1870)
14 Հծծյունք (1871)
15 Զոնիկք (1871)
16 Մանուկ առ խաչ (1871)
17 Իցի՞վ թե (1867)
18 Սիրեցի քեզ (1869)
19 Սիրել (1871)
20 Դրժել (1871)
21 Լճակ (1871)
22 Թրքուհի (1871)
23 Ներա հետ (1871)
24 Տրտունջք (Առաջին կասկած՝ ըստ Դուրյանի վերջընթեր ձեռագրին «Մերձ ի մահ գրված» վերնագրին մասը քերթողին ձեռքով չէ որ գրված է հոն)։
25 Զղջում (Օր մը վերջը) (1871)
26 Ջնե պաշտեմ (1871)
27 Կոկոն-ծաղիկք կույսին (1871)
28 Սև՜, սև՜ (1871)
29 Առ մայիս (1871)
30 Մանիշակ (1871)
31 Իմ հանգիստը (1871)
32 Նոր սև օրեր (1871)
33 Իմ ցավք (1871)
34 Նվեր հիշատակի առ պ. Հ. Ճանֆեսեյան, ՀՈՒՇՔ (1871)
35 Ի գերեզման [ամենասիրելւոյ] Վ. Լուքֆյան. ՀԵՇԵՄՈՒՆՔ (1871)
36 Իմ մահը (1871)
37 Ինչ կրսեն (1871)

Դուրյանի տաղերու իր ձեռքով գրված առաջին հավաքածուին և օրինակությանց երկրորդ տետրակին համեմատությունը Միհրդատյանց կատարած ու բանաստեղծին մտցուցած փոփոխությունները նշանակելով ինծի հաղորդած է. քիչ տողեր կան, զոր Դուրյան ամբողջապես փոխած ըլլա. մեծ մասամբ բառեր են, որոնց տեղ ուրիշներ դրած է ներդաշնակության կամ ուժգնության համար։ Այդ սրբագրությունները վստահ ճաշակի մը արդյունք չեն միշտ. երբեմն կհանդիպինք տողերու, որոնք լավագույն էին սրբագրութենեն առաջ։

Օրինակ՝

Ու գեթ ցամքած է կանթեղին առկայծ յուղ,

Դուրյան ցամքածը փոխած է մարածի։ Յուղին ցամքիլը ավելի ճիշտ չէ՞, քան մարիլը։

Հուր հորիզոնը սեցավ,

Դուրյան փոխած է այս տողը և գրած՝

Հուր հորիզոնն մարեցավ,

Նախկին տողը ավելի պատկերալից է և ավելի ներդաշնակ։

Ո՛չ ես չեմ կրնար ապրիլ պանդուխտ քո գրկեդ։

Դուրյան այս գեղեցիկ տողը ավրած է՝ անոր տալով հետևյալ ձևը.

Ո՛չ- ես չեմ կրնար ապրիլ զուրկ գրկեդ։

Բայց բազմաթիվ սրբագրություններ ալ կան, որոնք հաջող են և բանաստեղծին ճիգը կցուցընեն դեպի կատարելություն.

Օրինակ՝ Ներա հետ տաղին մեջ՝

Դիցը մեջ թաղեցա,
Կարտասվեի անդադար։

Այս անգույն տողերուն տեղ, Դուրյան իր գեղեցկագույն պատկերներեն մեկը գտած ու դրած է.

Թաղեցա գիրկն ես իրեն
Համբույր մ'անհուն գալկանար։

---

38 Անտիտղոս քերթվածի մը Ա մասը (Երևկոյան բալե կը սողար բարդիլ խավ). ներքևը բանաստեղծին ձեռքով գրված՝ Հիվանդությանս պատճառով ընդհատված, անթվական (անշուշտ՝ 1871-ի վերջերը)։

Նույն տաղին մեջ՝

Բազմոցի վրա դալարյա,
Հուսկ ճաճանչ մը երշուլեր

Հետո փոխած է սապես՝

Գորգի վրա դալարյա,
Հուսկ ճաճանչ մը պլպլար:

Տրուանչֆին իբր տիտղոս նախ գրած է՝ Առաջին կասկածմ. անշուշտ Տրուանչֆը լավագույն է։ Այդ քերթվածին մեջ, Դուրյան նախ գրած է՝

Սիրտս բորբոքի դըժոխքի մ'հանգույն...

Հետո փոխած է հետևյալ ձևով, որ ավելի ուժեղ է՝

Ներսս փրփրի դըժոխքի մ'հանգույն...

Իղձ առ Հայաստանին նախկին տիտղոսն է Իղձ Հայրենասիրի, երկրորդ ձևը լավագույն է։ Այդ քերթվածին երրորդ տան վերջին երկու տողերը նախ գրած է սապես՝

Բայց սև ձեռքեր, մատնիչ շուրթեր չեն կրնար
Խեղդել իմ ձայնս, փշրել փլշոտ իմ քընար.

Հետո փոխած է սապես՝

Բայց սև հոգիք ու սև ճանկեր չեն կրնար

Նույն քերթվածին վերջին տան վերջին երկու տողերը նախ գրած է սապես՝

Զեզ չեմ մոռնար դեռ Հայեր,
Դամբանես դուրս կը նետվիմ ազատ Հայն տեսնել։

Այս երկու տողերուն առաջինը բարեփոխած է սապես՝

Թեև ըլլամ ես մեռել

Դրժել տիտղոսով տաղին մեջ նախ գրած է.

Բույլ մը արցունք, փունջ մը ճառաչ,

Հետո բարեփոխած է՝

Գիշեր մը սուգ, անդունդ մ'ճառաչ...

Նույն քերթվածին մեջ նախ հետևյալ կերպով շարադրած է երրորդ տունը.

Ես ուզեցի ըլլալ քընար
Ներա ոտքին տակը նիրհող,
Ներա հոգվույն խորը լրտող
Թեթև պատկեր մ'ըլլալ, մոռնալ
Զիս, միմիայն ըզնե խոկալ,
Վառե երազ մ'որուն մեկ շող։

Հետո նույն տունը շարադրած է հետևյալ լավագույն ձևով.

Ես ուզեցի քընար մ'ըլլալ
Ներա ձեռքին տակ ճնացող,
Ներա հոգվույն խորն ճիացող
Թեթև պատկեր մ'ըլլալ շարժյալ,
Մոռնալ զիս, լոկ ըզնե խոկալ,
Վառե երազ մ'որուն մեկ շող։

Սիրեցեք զմիմյանս քերթվածին վերջին տան մեջ նախ գրած է՝

Անեղասատ թե մըռընչեն մրրիկներ,

հետո՝ անեղասատ պատվելիական բառին տեղ դրած է կայծակնաթև բառը, որ ավելի պատկերալից է։

• Պետք է մեռնի՞լ քերթվածին մեջ նախ գրած է՝

Ո՜հ, ի՞նչ է նե. ձյունով շինված մի անդրի...

հետո շինվածը փոխած է շաղվածի, որ լավագույն է։

Առ Մայիս տաղին մեջ, նախ գրած է՝

Նա գտնըվի վերև գլխու

Հետո ջնջած է գտնըվի բառը և տեղը դրած է՝ փողփոդե։

Լճակին մեջ, նախ գրած է՝

Միայն թե զգըդ ալ թափին
Թե բույլքն աստեղց երկնքին՝
. . . . . .
Հոդ ամպերը չեն թրջիր,
Հոդ աստղերը չեն մեռնի՛ր...
Լըճակ, դու ես թագուհիս,
Զի քու ներսդ գտնեմ զիս:
. . . . . .
Մեկը չըսավ հե՞ք տըղա
. . . . . .
Զի անդունդիդ մեջ անձկավ...

Հետո, առաջին չորս տողը փոխած, ընդլայնած և երկու տուն շարադրած է

Հոդ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկներն հոդ չե՛ն թառմիր,
Ամպերը չե՛ն թրջեր հոգ,
Երբ խաղաղ եմ դու և օդ:
Լրճա՛կ, դու ես թագուհիս,
Չի բ'նովն մ'ալ խորշոմիս,
Դարձյալ խորհիդ մեջ խրոով
Ձիս կը պահես դողդղալով:

Վերև մեջ բերված վերջին երկու տողերն ալ փոխած է սապես՝

Ոչ ոք ըլավ «Հե՞ք տըղա,
. . . . . .
Չի՛ ֆու խորհիդ մեջ անձկով...

Նե տաղին մեջ նախ գրած է՝

Վարդը գարնանի
Թե կուսին շըլար
Այտերուն տիպար,
Ո՞վ հարգեր զանի:
. . . . . .
Երկնից ո՞վ ճանչեր:

Հետո փոխած է՝

Թե կուսին տիպար
Այտերուն շըլար
Ո՞վ կ'հարգեր զանի:
. . . . . .
Երկինք ո՞վ կ'նայեր:

Վիշտ Հայուն (որուն առաջին տիտղոսն է Վիշտ նժդեհին) քերթվածին մեջ, նախ գրած է՝

Աղոտ աչերս արտասվալից լույս տեսան:
. . . . . .
Փառաց դարեր ծընող՝ իյնող հայրենի՛ք,
. . . . . .
Մոխրով պատած, արյունաներկ սև հողեր,
. . . . . .
Ալ ծոցեդ բռեր են հուսո քաղցր հրեշտակք,

Որուն ականց տեղ անգին
Աղի աղի արտասվաց
Կսքիլներ ցուրտ ու սառած
Կնճռոտ ճակատդ պճնեցին:

Հետո հետևյալ փոփոխությունները մտցուցած է այս տողերուն մեջ.

Աչերս տեսան արցունքներու լոկ երկինք:
. . . . . .
Փառաց դարեր ծընող՝ ընկնող հայրենի՛ք,
. . . . . .
Մոխիր հագած, արյուն ծրծած սև հողեր,
. . . . . .
Ա՛լ բռեր են ծոցեդ հուսո քաղցր հրեշտակք,
. . . . . .

Որուն ականց տեղ անգին
Դառնաթախիծ մրտածմանց
Քրտունքներ՝ սառ քար կտրած՝
Կնճռոտ ճակատդ պճնեցին:

Բայց ասոնք, ինչպես ըսի, գրված ատենն իսկ եղած սրբագրություններ չեն, այլ երկրորդ ընդօրինակության մեջ մտցված փոփոխություններ:

Դուրյան «արտադրելու շարշարանքը», «արտահայտության երկունքը» չէ ճանչցած: Ամեն տողի համար միտքը պրկել, յուրաքանչյուր բառին վարանիլ, տասն անգամ ավրել, փոխել և վերջացնելե հետո, կատարելության խինդությամբ բռնված, նորեն դժգոհ մնալ գործեն,— Դուրյան չէ գիտցած ասիկա կամ՝ շատ քիչ: Դյուրին արտադրության երջանկությունն ունեցած է: Իր տաղերն իրմե ելած են, ինչպես պտուղներ՝ շատ հասուն, որոնք ինքնին կթափին ծառեն: Ունի միայն քանի մը տաղեր, որոնք շատ մեծ փոփոխություն մը կրած են երկրորդ օրինակին մեջ, ինչպես՝ Սիրեցի քեզ, Պետք է մեռնիլ, Զոնիկի, Իցի՞վ թե, բայց հոս ալ, երկու օրինակները բաղդատելով, կնկատենք, որ սրբագրված չէ քերթվածը, այլ նորեն գրված: Բանաստեղծը անգամ մըն ալ զգացած է իր նույն զգացումը, և զայն արտահայտած է տարբեր կերպով, ավելի կատարյալ ձևով:

Ահա՝ Զոնիկին առաջին շարադրությունը.

Մինակ էր.
Մեկ վարդ մի
Ներա ձոն
Մատուցի:

Թարմ այտերն
Շիկնեցան,
Երբ առավ
Իմ վարդն այն,

Հոն տեսի
Թե որչա՜փ
Անշուք էր
Մաղկանց պապ։

Եվ նրվերս
Ալ որքա՜ն
Ներա քով
Աննշան։

Եվ ահա երկրորդ շարադրությունը, որ անհունապես լավագույն է.

Մինակ էր
Վարդ մ'ըզգոն,
Մատուցի
Ներա ձոն։

Շիկնեցավ
Նե զրվարթ՝
Կ'ընդուներ
Երբ իմ վարդ։

Ներա քով
Վարդս որչա՜փ
Էր անշուք,
Գունաթափ,

Նույնպես ձոնս
Համբույրին,
Զոր տրվավ՝
Չէր բնավ գին։

Ահավասիկ Սիրեցի ֆեզ տաղին առաջին խմբագրությունը.

ՄՆԱՍ ԲԱՐՑԱ՜Վ

Առտու մը դեռ մթնշաղ
Կը ծավալեր շող ու շաղ,
Մաղկանց մեջ քեզ տեսա ես,
Կը ժպտեիր լուսնո պես։

Աչերդ սիրո ատրուշան,
Մատներդ էին գիրգ շուշան,

Այտերդ վարդի նոր թերթեր,
Նայվածքդ ծներ նոր եթեր։

Սիրտդս թռա՜վ ոտքիդ տակ,
Սիրեցի քեզ, իմս հրեշտակ...
Սիրով եղան ձյուն մաղեր,
Ըսին՝ կյանքը երազ էր։

Մինչդեռ դու չե՛ս սիրեր զիս,
Մ'իշխեր գոնե տկար սրտիս.
Ուր որ երթամ, դեմքդ ինձ հետ՝
Նայվածք չէ այդ... մահո՜ւ նետ։

Երբ անտառին խորն նըստեմ
Կերթամ լալ՝ լուռ մենաճեմ,
Դարձյալ հոն կը գտնես զիս,
Տերևներեն կը խոսիս։

Երբ առավոտին եղերքը
Նըստիմ սփոփել իմ վերքը՝
Դարձյալ դու կը գտնես զիս,
Ալյաց մեջեն կը ժպտիս։

Երբ լեռները կը փախչիմ,
Որ չըտեսնեմ քեզ՝ հանգչիմ,
Հողմույն մեջեն կը խոսիս,
Թե՝ դու բնավ չե՛ս սիրեր զիս։

Լուսնի լուսով գիշերը
Երբ ցողեն իմ աչերը,
Դարձյալ դու կը գտնես զիս,
Աստղերուն մեջ կը ժպտիս։

Իսկ գերեզման երբ մտնեմ,
Քեզ հոն պիտի չը գտնեմ...
Մնաս բարյա՜վ... Հայուհի՛ս,
Անգո՜ւթ, արցո՞ւնք մ'ալ չունիս։

Եվ ահա նույն տաղին երկրորդ ու վերջնական շարադրությունը.

ՍԻՐԵՑԻ ՔԵԶ

Շաղի շողի ժամք էին,
Վարդից հրդեհ կար յերկին.
Փոխան ամպոց հուր հյուսքի,
Տեղար մարգրիտ և ոսկի։

Թավուտքի մը խոր ծաղկոտ
Ընկողմանած նրվաղկոտ՝
Կը հևայիր դու տժգույն,
Ամրան սյուքի մը հանգույն։

Աչերդ սիրո ատրուշան...
Եվ մատներովդ զերթ շուշան՝
Կը փետտեիր ծաղիկ մի,
Հառած շողիդ աչքդ երկնի։

Հիանայի, թե ինչպե՞ս
Փետտել թերթեր վարդին վես
Եվ թափթփել ի քո գիրկ՝
Կը զորեին մատներդ գիրգ,

Եվ նրվաղկոտ այդ աչեր
Նրշուլեին նո՞ր եթեր,
Եթեր մ՝աստեղց, ուր փոխան
Հրաշեկ սրլաքք կը շողան։

Ըրիր աչացդ մեկ կայծին
Եվ մեկ վանկիդ զիս գերին,
Շղթայեցիր զիս, անգո՛ւթ,
Նրշույլներովն վեհ հոգվույդ։

Թո՛ղ սիրտս, ինձմե գնա՛ հեռի,
Ցուզեմ հոգվույս թագուհի՝
Քեզ, որո կուրծն վարդի թերթ
Այլ կըրանիտ սիրտն է գեթ։

Դու որ գիտես լոկ բուրել,
Գիրգ սրտերու վերք փորել,
Եվ կը սիրես, երբ կարի
Քեզ պաշտող սիրտն արյունի։

Թավուտքի մը շուք նըստեմ,
Երբոր մենիկ արտասվեմ,
Հոն ես դու, կը գտնես զիս,
Տերևներեն կը խոսիս։

Երբ առավկին մեջ փաղփուն՝
Կուզեմ մոռնալ դեմքդդ, դուն
Դարձյալ հոն կը գտնես զիս,
Ալիներեն կը ժպտիս։

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Ջախջախել սիրտս և քընար,
Հովին մեջեն միշտ մընչես
Թև բընավ զիս սիրած չես։

Դրրկեմ սրրտովս արդ ցուրտ հող
Վ՝ալ չը դիպիմ քեզի թող.
Կույս մ՝է նաև գերեզման...
Կա՞ խորունկ սիրտ մ՝անոր նման։

Ահա Պետք է մեռնի՞լ քերթվածին առաջին խմբագրությունը.

Ամրան տժգույն գիշեր մըն էր ձմբահուպ,
Կը ցոլային երկինքն աստղեր բյուր՝ ասուպ՝
Ցոր թերթերուն խորերն լուսինն իր բեկբեկ
Շաղն կը ցողեր ամրան վարսիցն ազեբեկ.
Շամբին մեջ թարմ կը թավալեր վրտակը,
Փաղփուն աստղեր կը շողային հատակը,
Վ՝ անոր ալյացն հեշտիկ մրմունջը մինչն
Սիրտ բնարին վերջին լարին էր ոչք՝ ձայն...
Սյուքը կ՝սուլեր տերևներուն մեջ թեթև.
Դեմքիս վրա կը սահեցներ շղաբշե թև.
Նա իր շնչովն զիս գոհ ընել կը կարծեր,
Բայց կ՝արծարծեր սրտիս սիրույն վառ կայծեր։
Ոգի մ՝անցավ սրրտես, չթողուց հոն բոտվերն՝
Հիշատակ մը... միայն գիտին այս ատաղերն...
Համբուրից տխուր հիշատակ մ՝էր սյուքին շունչն,
Իր դողդոջ ձայն՝ տերևներուն այս շրշունչն,
Անույշ ժրպիտն ու վեհ նայվածքն՝ այս ալիին.
Մետաքս վարսերն սև հոգին տակ կը հալին...
Տրժգույն ճակտին տրխուր պատկերն՝ այս լուսին...
Ո՜հ, կյանք պետք է տալ՝ սիրտ տրրվի թե կուսին
Կը սիրե նա, նայվածքին մեջ կը թոշնի...
Ոխի մեջ՝ բար, սիրտ մեջ՝ վարգ սիրտ մ՝ունի...
Անույշ աչեր, ժրպիտ, արցունք տեսա լոկ,
Կուրծքս վարսեր, լանջ մը բզգաց սիրատքափ.
Սիրտ մրմունջ, հառաչ լսեցի, բեկբեկ խոսք,
Դողդոջ ու գիրգ պաղ ձեռք մ՝բզգաց ձեռքս սոսկ.
Թևերուս մեջ լույս մը, հով մը մաթեցավ...
Էակ չէր նա, այլ սեր, հուր, շունչ, ժրպիտ, ցավ...
Ըստվեր մ՝էր նա, որ սահեցավ զերթ թախիծ,
Բայց կանգ առավ, փոս մը, քար մը ցրցուց ինձ,
Հիշատակ մը, գերեզման մը, սուրբ սափոր...
Ուր կը հածի հեկեկով սիրտս ցողաթոր...
Երանի թե ըլլամ ես շիթ մ՝արտասուք
Վ՝ անհետանամ դամբանիդ քով սիրասուգ,
Եվ կամ թե խոտ մ՝ըլլամ ու հոն ես ցամքիմ...
Ո՜հ, կյանք պետք է տալ սիրտ տրրվի թե կուսին.
Դարեր անցնին, շուքդդ պիտի չը մեռնի,
Արցունքներով կյանքս պիտ ուշ թոռմի,

Շիրմիդ վարդերն դեռ չը թոշնած գրկեմ քեզ,
«Կյանք կուտաս սիրտ թե տաս» ըսին ետևես...

Եվ ահա՛ նույն քիրթվածին երկրորդ խմբագրությունը.

ՊԵՏՔ Է ՄԵՌՆԻ՞Ղ

Տժգույն գիշեր մ'էր քաղցրաբույր աշնային.
Երկինքն աստղեր զերթ «սիրո վերք» ցոլային
Դեղնած ու չոր թերթեց՝ լուսինն յուր բեկբեկ
Շողքը ցողեր ամրան վարսիցն աղեբեկ.
Շամբերուն մեջ կը սողոսկեր ուղխ մ'անհետ,
Կայծեր, աստղեր կը խաղային այլաց հետ,
Սյուքը խաղար տերևներուն հետ թեթև,
Կը շոյեր գլուխս՝ այրած ճակատս՝ վառե թեև.
Նա յուր շնչովն իս գոհ ընել կը կարծեր,
Բայց կ'արծարծեր, ո՜հ, իմ սիրուն բյուր կայծեր...
Ոգի մ'անցավ սրտես, թողուց հոն ըսավեր,
Աստեղց բույլ մը... միայն գիտեն դայս աստղեր...
Համբույրի մը հիշատակն էր սյուդին շունչ.
Իր դողդոջ ձայնն՝ տերևներուն սա շշշունչ,
Գունատ ճակտին տխրիկ պատկերն՝ այս լուսին.
Ո՜հ, կյանք պետք է տալ՝ սիրտ տրրվի թե կուսին։
Կը սիրե նե, նայվածքին մեջ կը թոռմի.
Ո՜հ, ի՞նչ է նե.— ձյունով շաղված մի անդրի,
Վրսեմ ճակտին վրա զույգ մը աստղեր վառ,
Եթե սիրե՝ հալի, թ'ատե՝ կրտրի սառ...
Լոկ հուր աչեր, ժրպիտ, արցունք տեսի նախ,
Կուրծս ուռուցիկ լանջ մը ըզգաց սիրաբախ.
Սիրո մրմունջ, հառաչ լսեցի, բեկբեկ խոսք,
Դողդոջ ու գիրգ պաղ ձեռք մ'ըզգաց ձեռքս սոսկ,
Թևերուս մեջ լույս մը, հով մը մարեցավ.
Էակ չէր նե, այլ սեր, հուր, շունչ, ժպիտ, ցավ.
Գոհար աչեր, վարդ այտ, այլ ինքն էր թախիծ.
Այն գիսավոր աստղեն «քար մը» մընաց ինձ...
Հիշատակ մը, գերեզման մը... սուրբ սափոր՝
Ուր հեկեկով սիրտըս կ'ընե միշտ թափոր...
Երանի՜ թե ըլլամ ես շիթ մ'արտասուք
Եվ անհետիմ դամբանիդ քով սիրասուգ.
Իցի՜վ թե խոտ մ'ըլլամ ու ես ցամքիմ հոդ.
Ծաղիկ կ'ըլլամ, բայց առանց քեզ չունիմ հոտ։
Լույս թե մութ, քուն՝ շուքդդ պիտի չանհետի։
Հառաչելով ուշ պիտ ըլլամ ոսկր ու դի.
Շիրմիդ վարդը չը թոռմած քեզ գրկեմ ես...
«Կյանք կուտաս սիրտ թե տաս» ըսին ետևես։

Ահա Իցի՜վ թե տաղին առաջին խմբագրությունը.

ԿԸ ՍԻՐԵՄ ՁՁԵՁ

Ո՜հ, ո՞վ ես դու սե՞ր, երկնային շո՞ւնչ կամ հո՞ւր,
Քու սև անույշ աչերդ չունի գիշերը,
Վարդը չունի քու լանջդ անբիծ ձյունաթույր,
Լուսինն չունի քու վարդագույն այտերը։

Ցայգն՝ աստղերուն փաղփուն, լուսնույն սիրագեմ,
Ցերեկն՝ ալյաց՝ ծաղկանց ժրպտիս, մեկուն... գեթ.
Իսկ քեզ համար ես արցունքով կ'աղոթեմ,
Դու չես շնորհեր նայվածք մ'ինձ սև աչերդ։

Արդյոք էա՞կ մ'ես թե երկնից զրվարթուն.
Կը նախանձին գեղույդ վրա վարդ՝ լուսնակ,
Ջայնիկդ ապշած լսելով քաղցր ու թրթռուն,
Նոճյաց խորերն կ'սգա լրտիկ լուսնյակ։

Ա՜յլ ի՞նչ քաղցր է եթե ըլլամ ես զեփյուռ
Եվ գրգվելով մազերդ խարտյաշ ու անոսր՝
Տամ շունչս հուշիկ այտերուդ վրա վարդասփյուռ,
Սրրբեմ եթե կա աչերուդ մեջ արտոսր։

Պարտեզիդ մեջ Իցի՜վ թե վարդ մ'ըլլամ ես,
Եվ երբ դու գաս առավոտուն ժրպտով պերճ՝
Որ քու այտերդ կարմիր գունովըս ներկես,
Թոռմիմ... փափկիկ ձեռքիդ մեջ տամ կյանքիս վերջ։

Երանի թե վտակ մ'ըլլամ ես վըճիտ,
Եվ երբ հուշիկ նըստած մոտ իմ եզերքին՝
Պատկերանա հայելվույս մեջ քու ժրպիտ,
Պղտորելով կապույտ ալիքս ցամքին։

Այլ ո՜չ, անգութ, եթե ունիս սիրահար,
Իցի՜վ թ'անոր գերեզմանին վեմն ըլլամ
Եվ հոն թափած դառն արցունքներ ծծեմ յար,
Ըզգամ դեմքդ... այլ ո՜չ, թեպետ վեմ, այլ կ'ուլամ։

Ո՜հ, դու սիրե՛, գգվե՛, ժպտե՛, Հայ աղջիկ.
Քեզի համար պիտի մեռնեմ, թող պլպլուն
Արցունք մ'հեղու դագաղիս վրա սև ալիկդ,
Տխուր շիրմիս վերև երգե թող պլպուն։

Եվ ահա նույն տաղին երկրորդ խմբագրությունը.

ԻՑԻ՞Վ ԹԵ

Ո՜հ, ի՞նչ ես դու, սեր, երկնի հո՞ւր, կամ ժլպի՞տ.
Ջունի երկին աչացդ կայծերն ու կապույտ,
Վարդը չունի քու լանջդ անբիծ՝ լուսափթիթ,
Ջունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ։

Դիշերն՝ երկնի կայծից, լուսնույն սիրադեմ,
Ցերեկն՝ ալյաց, ծաղկանց ժլպիս... մեկո՞ւն զեթ,
Իսկ քեզ համար ես արցունքով կ'աղոթեմ,
Դու չե՞ս շնորհեր նայվածք մ'ինձ հուր աչերդ։

Արդյոք էա՞կ մ'ես, թե՞ երկնի զվարթուն,
Կը նախանձին փայլիդ վրա վարդ, լուսնակ,
Ջայնիկդ ապշած լըսելով քաղցր ու թրթռուն,
Նոճերու մեջ սրգա լըռիկ լուսինյակ։

Ծնեի իցի՞վ թ'հևացող հով մ'անուշիկ.
Եվ գգվելով երազք ճակտիդ այդ անշուք,
Տայի շունչս շուրթերուդ մեջ ես հուշիկ,
Լոկ սրբելով թե շողար աչքդ արտասուք։

Պարտեզդ իցի՞վ թե փըթթեի վարդ լացող,
Եվ երբ գայիր այգուն շաղին՝ ժլպտով պերճ,
Գունովս ներկել, այտերդ, թափել գոգդ իմ ցող,
Վերջին շնչիկս ի գիրկդ առներ ելեէջ։

Բղխեի ես իցի՞վ թ'առու մը վճիտ,
Եվ երբ հուշիկ գայիր մոտ իմ եզերքին,
Ցոլանար իմ հայելվույն մեջ քու ժպիտ,
Պղտորելով կապույտ ալիքս ցամքեին։

Ա՜հ, իցի՞վ թե լինեի ես ճառագայթ,
Շողշողայի դեմքիդ վրա վայրիկ մի,
Խաբեի քեզ թ'ես ավելի գեղազարդ,
Վ'անուշաբույր մազերուդ մեջ մարեի։

Այլ ո՛չ, անգո՛ւթ, եթե տրրվիր մեկուն սեր,
Իցի՞վ թ'անոր գերեզմանին քարն լինիմ,
Եվ դու թոշնած գաս շնչել շուրջս... արտասվե՛լ...
Քեզ հրպելու համար հարկ լոկ գոլ շիրիմ...

Պ. Բ. Էքսերճյան, որ արժանիքն ունեցավ Դուրյանի բանաստեղծությունները Ֆելեկյանի շարափոխություններեն մաքրելով իրենց հարազատ բնագրով հրատարակելու Դուրյանի գործերու մասնական հա-

վաքածուի մը երկրորդ տպագրության իր ձեռնարկին մեջ, դժբախտաբար այդ մաքրագործումը լիակատար կերպով չէ ըրած և տպագրական նոր վրիպակներու շարք մը ավելցուցած է առաջին տպագրության վրիպակներուն վրա։ Ատկից զատ սխալը գործած է Դուրյանի բանաստեղծությանց վերջին մասին մեջ դնելու բանաստեղծին գպրոցականի առաջին փորձերեն մեկ քանին Անա սրանայ օրն երջանիկ, որ գրաբար քերթված մըն է, և Հայուհին, աշխարհաբար տաղ մը, երկուքն ալ խակ արտադրություններ, ինչպես և Սիրեցի քեզ, Պետք է մեռնի՞լ, Ջոնիկի և Իցի՞վ թե տաղերուն առաջին ու երկրորդ խմբագրությունները միանգամայն։ Այդ երկու պատանեական թույլ նախափորձերը, երգ Մարտին Վարդանանց անհամ ոտանավորին և Հայրիկն Հայոց բառախաղային անիմաստ ոտանավորին հետ, ինչպես և վերոհիշյալ չորս տաղերուն առաջին խմբագրությունները պետք է դնել, ինչպես ըսի արդեն, Դուրյանի գործերու ապագա լիակատար հրատարակության մը վերջին մասին, ծանոթագրությանց բաժնին մեջ։

Դուրյանի այն բանաստեղծությունները, որ բազմաթիվ սրբագրություններ կրած են իր ձեռքով, ու մանավանդ անոնք, զոր երկրորդ անգամ խմբագրած է, սակավաթիվ են։ Ընդհանրապես, մեկ ցայտքով կ'արտադրեր։

Դուրյանի բարեկամները անոր արագ արտադրումի սովորությունը մեկե ավելի օրինակներով կհաստատեն։

Դուրյան, որ Լուիֆյանի թաղման օրը որոշած էր դամբանական մը կարդալ անոր գերեզմանին վրա, նույն օրն իսկ սրճարան մը կմտնե, թուղթ գրիչ կ'ուզե և քանի մը վայրկյանի մեջ կգրե այն սրտառուչ դամբանականը, որ պահված է և երևցավ էքսերճյանի հրատարակության մեջ։ Իր հիվանդության վերջերը, անգամ մը Ճանֆեսճյանին տուն կ'երթա՝ անոր «մնաս բարով» ըսելու, որովհետև կզգա, որ մահը մոտ է. հոն չի գտներ զայն, ու տանը բակը, ոտքի վրա, մատիտով կգրե Ճանֆեսճյանին ուղղված նամակ մը, և այդ ափհափո գրված նամակը իր ամենեն սքանչելի էջերեն մեկն է։ Ուրիշ անգամ մը, Պաղլարպաշիի գերեզմաննոցն է, քանի մը բարեկամի հետ. թրքուհի մը կ'անցնի կառքով՝ վերջալույսի հիվանդ կարմրության տակ իր շղարշին ճերմակ ամպին մեջեն իր նայվածքին ջուխտակ աստղերը պսպղացնելով։ Դուրյան, շլացած, հուզված, կնստի իսկույն կգրե Թրքուհին, որ իր ամենեն գեղեցիկ քերթվածներե մեկն է։ Անգամ մը, արդեն ծանրապես հիվանդ, Ջամլըճա կ'երթա վերջին պտույտ մ'ընելու. ետ դարձած ատեն, կհանդիպի գինովի մը, որ անոր դժգույն դեմքը և դանդաղկոտ քայլ-

վածքը տեսնելով կ'ըսե՝ «Աս ալ երթալոց է»։ Դուրյան, այդ խոսքին տպավորության տակ, տուն դառնալուն պես՝ կնստե ու կգրե իր զմայլելի Լճակը, որ հայ բանաստեղծության գերագույն գոհարներեն մեկն է՝

Մին՝ «Դողդոջ է, գույն չունի»,—
Մյուսն ալ ըսավ.— «Կը մեռնի»*։

Իր թատերգությունները անհավատալի արագությամբ գրած է, ըստ իր բարեկամներուն վկայության։ Անոնց վերջինը, Թատրոն կամ Դշվառներ, սկսված 1870 դեկտեմբերի 18-ին, ավարտած է 1871 հունվար 3-ին, հինգ արարված՝ տասնհինգ օրվան մեջ շարադրված։ Այս թվականները վավերական են. անոր համար է, որ միայն ատոնք հիշատակեցի։ Ապահովապես մյուս թատերգություններուն ալ նույքան կարճ ժամանակամիջոցի մեջ գրված ըլլալուն փաստերը պիտի ունենայինք, եթե անոնց ամենուն ալ մանրամասն պատմությունը պահված ըլլար։

---

* Տիկին Հրաչյա, հանգուցյալ մեծանուն հայ դերասանուհին, իր Հիշողություններուն մեջ, զոր հրատարակեցի 1909-ի Անահիտի մեջ, ուրիշ կերպով կպատմեր Լճակին այդ տողերուն շարժառիթը։ Մեջ կբերեմ հոս այդ ամբողջ հատվածը, որ շահեկան է և Դուրյանի կենսագրության մը մեջ իր տեղն ունենալու արժանի.

«...Ամառվան եղանակի առաջին փորձը տեղի պիտի ունենար Յուսկյուտար, նույն Ազիզիե թատրոնի մեջ։ Նշանակված էր փորձ՝ ժամը 3-ին (ըստ եվր. [ոպացվոց] 9-ին)։ Բայց արդեն ամբողջ խումբը 2,5-ին հավաքվեր էր։

...Այդ միջոցին ներս մտավ պատանի մը, երկար հասակով ու երկար վզով. ուներ երկայն քիթ, գունատ էր։ Մոխրագույն ու շատ մաշած զգեստ էր հագած։ Թևին տակ տետրակ մը։ Երբ երևցավ, դերասանուհիները սկսան ծիծաղիլ, ըսելով «Քա՛ Թերեզա, քուկինդ եկավ»։ Իսկ Թերեզան պատասխանեց. «Այնքան գունատ է, որ ինձի պետք չէ. շուտով կը մեռնի»։ Ես լսեցի այդ խոսքերը, բայց չէի կարծեր, թե պատանին ալ լսած էր։

Այդ ցնցոտիներ հագած ու գերեզմանին մոտեցած պատանին Դուրյանն էր, մեր բոլորիս սիրելի բանաստեղծը։ Իսկ իր թևի տակի տետրակն էր «Թատրոն» խաղը, զոր կ'ուզեր կարդալ Վարդովյանին և ընդունել տալ խաղացուցակին մեջ։

Երբ իր մահեն հետո կարդացի անոր բանաստեղծությունները, այն ատեն իմացա, թե ան լսած էր Թերեզա Չուհաճյանի խոսքերը, քանի որ գրեր էր.

Շատերը զիս մերժեցին,
«Քընար մ'ունի սոսկ»— ըսին.
Մին՝ «Դողդոջ է, գույն չունի»—
Մյուսն ալ ըսավ.— «Կը մեռնի»։

Պատմված երկու միջադեպերն ալ անշուշտ ճիշտ են և հավանական է, որ Դուրյան դերասանուհիին խոսքը լսելեն հետո, Ջամլըճային գինովին խոսքն ալ լսև, տուն դարձին կգրե «Լճակ»ը։

Ե

Մեր մեջ Դուրյանի անունը միշտ կկցվի Պեշիկթաշլյանի անունին։ Երկու բանաստեղծները եղբայր տաղանդներ կհամարվին, և իրենց զուգակշիռը շատերն ըրած են։ Ինձի համար այդ երկու եղերգականերուն միջև նմանությունը սեռի ու նյութի նմանություն մըն է միայն, մինչդեռ ներշնչման ու արտահայտության տեսակետով շատ տարբեր են իրարմե։ Երկուքն ալ կյանքի վիրավորյալներ են. երկուքն ալ բնության հավերժական գեղեցկության մեջ մարդուն հավերժական ցավը տեսած են, երկուքին ալ երգը՝ իրենց գործին ամենեն անձնական, ուրեմն և ամենեն ինքնատիպ բաժինին մեջ, դժբախտ սիրո հեծկլտանքն է։ Ճակատագրի այս հանգիտությունն ու աշխարհայացքի այս խնամությունն ընդունելե հետո, պիտի տեսնենք սակայն, թե երկուքին խառնվածքները որչա՞փ աննման են։ Պեշիկթաշլյան մեղմ, փափուկ հոգի մըն է, որ ցավին ճնշման տակ գլուխը կ'կքե և որ արցունքով կթրջե ճակատագրին ձեռքերը, որոնք իր սիրտը կրգքտեն։ Անոր մելամաղձությունը հանդարտ, լայն ու անուշ նվագով մըն է, որ կարտահայտվի։

Կարծեցի մոռանալ, ոչ գիտացի չափել ըստոյգ
Ջանդունդ խորայատակ սրտիս որ լի էր երազօք.
. . . . . .

Ընթացա՛յց մենաւոր ըզճանապարհն ամայութեան.
. . . . . .
Հեծե՛ց զերդ սօսափիւն գիշերական պաղեալ հողմոց,
Տո՛ւր ձայնիս ծաւալանալ հանգոյն շայլից գուժաւորաց։

Այս տրտմության մեջ համակերպության քաղցրությունը կա և բառերը, երկար, խաղաղ ու ներդաշնակ, զայն զմայլելի կերպով կթարգմանեն։

Պեշիկթաշլյանի գրական դաստիարակությունը, ընդարձակ ու կանոնավոր, նուրբ ու հմուտ արվեստագետի տեսողություն մը և ճաշակ մը տված է իրեն։ Եվ եթե իր պատկերներն ալ աղուտ են հաճախ, պատճառը իր ներշնչման տարտամությունը չէ՝ ինչպես Դուրյանին մեջ, այլ ազդեցությունը դասական արվեստի, որ կսիրե ամեն բան ընդհանուր գիծերուն մեջ ցույց տալ՝ առանց մանրամասնությանց նրբակրկիտ հետապնդումի։ Դուրյան բնությունն ու կինը կտեսներ իր երազին մեջեն. Պեշիկթաշլյան իր զգայնության, այլև մանավանդ իր ընթերցանումներուն մեջեն կտեսներ զանոնք, և իր բանաստեղծության մեջ ալ անոնք հրատակորեն չեն ցոլանար։ Իր սիրած կնոջ վրա ալ ուրիշ բան չենք գիտեր

իր տաղերեն, բայց սա միայն, թե գեղեցիկ, շատ գեղեցիկ և շատ քաղցրը արարած մըն էր ան, այնչափ գեղեցիկ, որ բանաստեղծը «կյանքի հիշատակը կարծեց զայն, մինչդեռ մահվան հրեշտակն էր»։

Պեշիկթաշլյան, ընթերցումներով միտքը խճողած, ստեղծելու կարողություն քիչ ունի։ Իր քերթվածներեն ոմանք նմանողություններ են, և իր բանաստեղծությանց մեջ քիչերը խսկատիպ կնիք մը ունին։ Իր ձայնին մեջ հզոր հոգիի մը շեշտը չկա և իր լեզուն կամ խառնակ աշխարհաբար մը կամ անմաքուր գրաբար մըն է։ Բայց այս թերությանց հակառակ, ինչ որ իր մնայուն ու խորին հրապույրը կկազմե և որ մանավանդ իր սիրային տաղերուն մեջ կզգացվի, իր երգին խաղաղ ու վեհ տրտմությունն է և իր ոտանավորին ծավալուն ներդաշնակությունը, որուն մեջ ծովափին վրա մարող ալիքներու մրմունջը կարծես կհառաչե։

Դուրյան ավելի կույս մնացած միտք մըն է։ Իր ընթերցումները, ինչպես ըսի արդեն, սահմանափակ ու գրեթե ամբողջապես նույնատեսակ ըլլալով, իր խառնվածքն ավելի զորացուցած են՝ առանց իր անձնականությունը հազար ու մեկ ազդեցություններով փսոր փսոր ընելու։ Եվ ավելի հանդուգն, ավելի արու, ավելի մաքառող հոգի մը եղած է։ Իր բանաստեղծությունը արյունով լեցուն սրտի մը պես տաք է ու բաբախուն։ Ինչ որ Պեշիկթաշլյան համբաալացիկ խունկի ոլորներու մեջ հեղ ու մելանուշ հառաչներով արտաշնչած է, Դուրյան ճիչերով, հեծեծանքներով ու անեծքներով արտահայտած է։ Պեշիկթաշլյանի համակերպության տեղ, Դուրյան խրոխտ ընդվզում մը ունի, ըմբոստացում մը կյանքի ցավերուն, ընկերության անարդարությանց, սիրո անգութ դառնությանց և Աստուծո անտարբեր լռության դեմ։ Իր ձայնը, շատ երիտասարդ, շատ անկեղծ և շատ անձնական, հարափոփոխ ելևէջ մը ունի հուսահատութենեն մինչև բողոքը, կատաղի գալարումեն մինչև անխոսուկ արցունք։ Ասոր համար է, որ Դուրյան ավելի այլազան, ավելի կենդանի և ջղուտ է։ Իր թախիծը Պեշիկթաշլյանի մելամաղձության պես նվաղկոտ ու միակերպ ըլլալու տեղ, մշտաբորբոք է, բազմաձև ու միշտ բուռն։

Ինքն է որ լճակի մը առջև, անոր մեջ իր հոգիին պատկերը տեսնելով, ամենեն զորեղ բացատրությունները պիտի գտնե իր վիշտը պատմելու համար.

Որքա՜ն ունիս դու ալի՝
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքա՜ն ունիս դու փրփուր,
Սիրտս այնքա՜ն խոց ունի բյուր։

Այլ եթե գոգդ ալ թափին
Բույլքն աստեղաց երկընքին՝
Նըմանիլ չե՛ս կրնար դուն
Հոգվույս, որ բոց է անհուն։

Իր սիրտը գեղաքանդակ, ոսկի խնկամանը չէ, ուր կնդրուկը հուշիկ կվառի անուշ բուրմունք մը տարածելով իր շուրջ,— ինչպես է սիրտը Պեշիկթաշլյանին,— այլ վառարան մը ամբողջ, ուր կրակները կճարճատեն և ուր բոցը սպառնալից լեզուներով կցցվի.

— Հոն հրդեհ կա, ո՜չ մատյան։

Բայց ինք գիտե նաև խոհարբշիռ լռություններուն քաղցրությունը, ցավի կամ սիրո թմրության մեջ հոգիին հեշտավետ ընկլուզումները.

Աչերու բոցն երբ մարի,
Դաղրի տըրոփն երբ սրտին,
Լոկ այն ատեն հարկ է որ
Անզոր շուրթերն խոսին։
. . . . . .
Ջէինք խոսիր, խոսքն մեր հոգվոց
Անհունությունը կը պղծեր.

Եվ ո՞վ, վշտահար մարդեն կյանքի չարշարանքեն ազատող գերեզմանին ապաստանարանը իրեն չափ ուժով երգած է.

Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներս յիս,
Ճակատագիրս խնծոց ի վեր.
Խո՜րշ մը կար, որ զիս չը ծաղրեր,
Այն՝ լուռ փոսն էր գերեզմանիս...

Ամփոփման վայրկյաններու մեջ իր աչքերը դեպի անցյալը կդառնան, և այն ատեն անպատում քաղցրությամբ մը կ'երգե բանաստեղծը իր պատանության առաջին թարմ ու վառ շրջանին կարճ, բայց անուշ հիշատակները, որոնք իր կյանքի վերջին մասի մռայլ ու սառուցիկ թշվառության մեջ ավելի ևս անուշ կ'երևան.

Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եվ թիթեռի մ'ուներ թևեր.
Վերջալույսի նման ամպոց,
Երազնե՜ր, հո՜ւր ճակատս վառեր։

Արդ սառույցներ դառն արտասրի
Կը քարանան կուրծիս ներքև,

Եվ բարդք ամպոց սևաթորմի
Կ'ուզեն խեղդել սիրտս և արև։

Երբեմն իր ցավը թեթև է սյուքի պես, իր տրտմությունը վախկոտ թռչնիկի պես, և այն ատեն՝ իր երգը պաղատանքի մրմունջ մը, հոգիի փսփսուք մը կդառնա, արցունքի մը չափ հուզիչ.

Գա սյուքն ազատ քեզ այցելու,
Նային քեզի աստղերն ազատ,
Ըստվերին մեջ, մինակ ու զատ,
Ես կը դողամ քեզ մոտելու։
. . . . . .
Շրջազգեստիդ խշշրտուքն հար
Կը փլսփլսա դեռ ականջիս,
Հեծկլտալով կ'իջնե հոգիս
Արտոսրալից անդունդ մ'ի վար։

Բայց կուգան վայրկյաններն, ուր տրտմության տենդը կանգ առնել կթվի. բանաստեղծը կթվի մոռնալ իր ողորմելի կյանքը, պաշտված էակին քաղցրությանը միայն կխորհի, և զայն կ'երգե զմայլանքի տողերով, այնչափ անուշ, որ երջանիկ սիրահարի մը սրտեն ելած ըլլային կարծես.

Վարդը գարնանի
Թե կույսին տիպար
Այտերուն շըլլար,
Ո՞վ հարգեր զանի։

Թե չը նմաներ
Կապույտն եթերաց
Կույսին աչերաց,
Երկինք ո՞վ նայեր։
. . . . . .

Նայիլ կ'ուզե, բայց ավելի կը նվաղի,
Սիրտը խունկի պես կը մխա սիրավառ,
Նե շողերու, բույրերու է թագուհի,
Նոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրե ծաղկե թառ.

Եթե շարժի,
Կ'ըսես.— «Հի՛մա կը թռչի»։
Լանջն է հուզյալ օվկեանի մը նման.
Կ'ուզե սիրե՛լ... համբույրի մ'հետ նվաղիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,

Քամել սիրտ կրակե բաժկին հուսկ կաթիլ.
Եթե շիկնի,
Կ'ըսես.— «Հիմա կը բորբկի»։

Կարճատև են հափշտակության այս պահերը, ուր բանաստեղծն իր տառապանքը մոռնալով, զինքը տառապեցնող էակին գեղեցկությունը միայն կտեսնե և զայն իր երգով պանծացնելուն մեջ սփոփարար հրճվանք մը կզգա։ Անոնցմե հետո ավելի թանձր և ավելի ծանր է թախիծը, որ կուգա գրկել իր հոգին, և այն ատեն ամենեն դժգույն վհատությունն էր, որ կհեծեծե իր երգին մեջ։ Այս հոգեկան վիճակին ամենեն հոծ արտահայտությունն է Ինչ կ'ըսեն տաղը, որ Դուրյանի հրաշակերտներեն մին է.

Ինձի կ'ըսեն.— Ինչո՞ւ լուռ ես».—
Ո՜հ, միթե բառ կամ խոսք ունի՞
Արշալույսը, որ կը բորբկի,
Չի անհուն է այն ալ ինձ պես։

Ինձի կ'ըսեն.— «Միշտ տխուր ես».—
— Ինչպե՞ս չըլլամ. մեկիկ մեկիկ
Թոթափեցան գլխուս աստղիկք...
Արշալույս մը չանցա՞վ սրտես։

Ինձի կ'ըսեն.— «Կըրակոտ չես,
Լճակի մը պես ես մեռած,
Դալկահար՝ դեմքդ ու հայեցված»։—
Ո՜հ, հատակն են իմ փրփուրներս։

Ես ինձ կ'ըսեմ.— «Ժամդ է հասեր,
Քու երկրորդ սև մորդ գընա՛ գոգ.
Գերեզմա՛ն, հոն գտնես դու գոգ,
Վարդեր թրթռում, թռիչ ու աստղեր...»։

Եվ այդ ամեն բանե զզվանքը, ամեն ժպիտե հուսախաբումը չէ՞, որ թունավոր մեղրի դառն քաղցրությամբ մը կլցնե Հեծեծմունքին անմոռանալի տողերը.

Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տրտում.
Ա՜խ ծրծեինք, սո՜ւգ անհատնում,
Նայեինք միշտ երկրես հեռու։
Անհուսությո՞ւն, գերեզմանի
Այդ սև կաթը շատ ըմպեցինք,

Ու հուսկ ապա վշտին ծայրահեղութենեն գերագրգռված հոգիին կատաղի զայրույթը, աշխարհի չարության դեմ վրդոված մտածումին ըմբոստացումը, դեռ չապրած իր մեջ կյանքի դալկացումը ղգացող դրժբախտին բուռն հուսահատությունն է, որ կպայթի ժամանակակից հայ քնարերգության ամենեն վսեմ քերթվածին՝ Տրտունջքին մեջ, ուր կրակե բառերը, արենավառ պատկերները, տենդասաթսուռ բացատրությունները, անհուն հուզման մը հրաբխային ժայթքումին մեջ կյանքեն ընկճված հոգիին երգը կթնդացնեն.

...Աստղերն ի՞նչ են որ, եթե ոչ անբիծ
Եվ թըշվառ հոգվոց անե՛ծք ողբագին,
Որք թըռին այրել ճակատն երկընքին.
. . . . . .
Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մեջ համր անշշունջ,
Այժմեն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պըլվիմ անվանդ, մըրընչեմ անգադար,
Թո՛ղ անեծք մ'ըլլամ ու կողդ խըրիմ,
Թո՛ղ հորջորջեմ քեզ. «Աստվա՛ծ ոխերիմ»։
. . . . . .
Փըրփըրի ներսըս գրժոխքի մ'հանգուն...
. . . . . .
Ո՜հ կայծ տըվեք ինձ, կա՛յծ տըվեք, ապրի՜մ...
Ի՞նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՜մ...
. . . . . .
Երկնքի աստղեր, հոգվույս մեջ ընկե՛ք,

Այս տողերեն հետո ի՞նչ կարելի է ավելցնել բացատրելու համար բանաստեղծին մեծությունը։ Այն անբաղդատելի ջերմությունը, որ անոնց մեջեն կ'ելլե, այն արյուն լացող վերջալույսի կարմիր տրտմությունը, որ զանոնք կլուսավորե և այն անպատում տառապանքը, որ կդողդղա անոնց մեջ, ինքնին կբավեն ապացուցանելու համար իրենց անմահ գեղեցկությունը։

Անոնցմե է, որ կկրկնեմ, կսկսի հայոց նոր բանաստեղծությունը։

Եվ անոնց մեջ ճիշեր ու պատկերներ կան, որ ամենեն ուժովներեն են բոլոր գրականության մեջ։

Ինչ ձև ալ առնե վաղը հայ բանաստեղծությունը, ինչ զարգացման ալ հասնի, այդ միամիտ երգերը, իրենց անհավասարություններով ու անկատարություններով հանդերձ, պիտի միշտ պահեն իրենց անթառամ երիտասարդությունը, որովհետև անկեղծ ներշնչման մը ծնունդ են և որովհետև հանճարի կնիքը կկրեն։ Ապագան վերջնապես պիտի նվի-

բագործե բանաստեղծին անունը, զոր իր ժամանակակիցները չգիտցան ըստ արժանվույն հարգել։ Տաղերու այդ փոքրիկ հավաքածուն, բոլոր մտքերուն մեջ քանդակված, բոլոր բերաններուն վրա սևեռված, ազգային իր մը պիտի դառնա, և ամենեն ավելի սիրվածներեն մին։ Ու սերունդները, որոնք պիտի գան սերունդներեն հետո, իրենց երազանքի ու տրտմության ժամերուն, նոճիներու սուգին մեջեն ու վերջալույսի տրտմության տակ այդ դալկահար ստվերին թափառիլը պիտի տեսնեն միշտ, պաշարված երամով մը ցավով սարսռացող տողերու, որոնք մենության մեջ թևաբաց՝ իրենց անհուն բաղցրությամբ ողբը կ'երգեն։

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

(Իր առաջին շրջանին)

Վ. Թեքեյանի առաջին հատորը,— «Հոգեր»— բուրաստան մըն է, ուր վառ ու պերճ գույներով շքեղ, խրախտաձիգ ծաղիկներ չեն, որ կժայթքին ցողալից ու հարուստ հողե մը, այլ խորհրդապահ ու փափուկ կեսթույրերով, հազվագյուտ բուրումներով նուրբ ծաղիկներ, որոնց հրապույրին կազմավորմանը մեջ պարտիզպանին գիտությունը մեծ բաժին մը ունի։ Այդ գողտր ու թանկագին բուսականությունը, որուն սերմը նորեն սրտեն է որ կխբի, և որ, մտքի երկայն ոռոգումով մը զարգացած ըլլալուն հակառակ, «բնական» արտադրություններուն կենդանի հրապույրը կպահե միշտ, պ. Թեքեյանի հատորին մեջ կկազմե ինչ որ անխառն ու հարազատ ծնունդն իսկ հեղինակին խառնվածքին, բայց ամբողջ բուրաստանը անով չէ որ կլեցվի. անոր մեջը խառնված կտեսնենք տունկեր, որ ուրիշ պարտեզներե, օտար մեծ պարտեզներե փոխ են առնված, և մեկ քանի ալ թուփեր, որ ջերմոցի մեջ հասած են և բնավ հոտ չունին, ու նույնիսկ քանի մը ծաղիկներ, որ թղթե են շինված։ Ինչ որ սակայն այդ ծաղկանոցին մեջ ուղղակի պտուղն է պարտիզպանին անձնական ստեղծագործության, բավական է, որպեսզի շնորհակալ ըլլանք իրեն մեզի նոր տեսակ բուրում մը և երանգ մը վայելել տալ կըրցած ըլլալուն համար։

Ածուն, զոր պ. Թեքեյան կբերե հայ բանաստեղծության արտին ավելցնել, կհատկանշվի նախ խնամքի, կրթության ծայրահեղ մտահոգությամբ մը, որ հեռու է հաճախադեպ երևույթ մը ըլլալե մեր գրական բարքերուն մեջ։ Պ. Թեքեյանը ֆրակ հագած պարտիզպան մըն է, որ

գրական բուսաբանության արևմտյան վարպետներու դասերուն երկարորեն ունկնդրած է, և որ իր հունդերը ցանելէ առաջ մանրացույցի տակ զանոնք կզննե ու զանոնք ձեռնոցված մատներով կցրցքնե իր հողին մեջ, զոր նախ հոգ տարած է մաքրել ամեն մացառե ու աղբախուղբե։ Այդ ածուն կբնորոշվի նաև,— ու հո՛տ է անոր բուն արժանիքը,— իր բերքին մասնավոր ինքնաբուխ շնորհովը։ Պ. Թեքեյանն երգիչն է պատանեկան զգայնության, զգայնություն մը, որ ամենեն քիչ և ամենեն գեշ թարգմանվածն է, քանի որ պատանիները կաճապարեն միշտ հասուն հասակի երգը հնչեցնել, այնպես ինչպես ուսած են իրենց նախորդներեն, դեռ զայն անձնական փորձառությամբը չըմբռնած, և կարհամարհեն արտահայտել ինչ որ իրենց տարիքին բնական տպավորություններն իրենց կներշնչեն։ Պ. Թեքեյան կերգե պատանության տարտամ անձկությունները, բուռն բայց անորոշ խանդավառությունները, տենդոտ հետաքրքրությունն ու ամեհի ծարավը կյանքին, խուսափուկ ու երազկոտ գորովները և մեծ, աննպատակ ու վաղանցուկ տխրությունները, ու այն քիչ համոզված հուսահատությունները, որոնք արդյունք են ոչ թե կյանքի փորձառությենեն առաջ եկած հուսախաբությունները, այլ դեռ հագուրդ չգտած իղձերու փոթորկումին հաջորդող կարճատև թուլացումներուն։

«Ծովեզերքին վրա» տիտղոսով արձակ քերթվածը, որով պ. Թեքեյանն իր սկզբնավորությունն ըրավ Պոլսո «Ծաղիկին» մեջ, այդ դեռ չապրած ու իր տենչանքին ինքն իր մեջ այրելեն մաղձոտված հոգիին պատկերը կներկայացներ.

«Ամայի երկար դաշտ մըն է ծովեզերքը. թարմ ու դալար խոտերուն մեջեն ցցված մամռապատ ժայռեր, արևին տակ, կարծես կիսկան ձանձրույթը իրենց անփոփոխ կյանքին...

Ծովեզերքին վրա հարթ ավազ մը կփռվի։ Մամռապատ ժայռերուն մեջտեղ, խրճիթ մը՝ խոռոչանման մերկ պատուհաններով՝ ժայռե գերեզմանատարերու մեջ հողեն դուրս ելած գանկի մը պես՝ կիսկա ոչընչությունը կյանքին...

Եղրևանիի բարակ ծառ մը տունին երեսը կպատե։ Պատուհաններեն մեկուն մեջ աղջիկ մըն է նստեր, ձեռքը ծնոտին ու կուրծքը բաց, միս-միանակ հորիզոնին գիրկընդխառնումին դիմաց կիսկա առանձնությունն իր կյանքին...»։

«Տունս»-ին մեջ, այդ առաջին երգեն հինգ վեց տարի հետո գրված, պ. Թեքեյան կբացատրե պատանիին հոգվույն մեծագույն տագնապը, զոր կկրե ան, երբ հանկարծ բուն կյանքին, գործունեության, կռիվի, ցավի կյանքին առջև կգտնե ինքզինքը՝ երազանքի շրջանին ավարտին մոտիկ.

«Իմ տունս լեռան մը ստորոտն է ու գահավեժի մը վրա, երկուքն ալ հավասարապես մթին անտառներով ծածկված։

Տո՞ւն է թե վրան,— այնչափ անգամ տեսարանը փոխվեցավ աչքիս առջև. բարձրանալու տենդով ամեն անգամ քիչ մը ավելի վար գտա ինքզինքս խորխորատին ճամփուն վրա։

Նավապետի մը պես՝ վտանգի մեջ իր նավուն կամրջակին վրա, տունիս մեջ ետև ու առաջ կվազեմ հիմա, փոխն ի փոխ քննելու երկու հեռանկարները։

Երկուքն ալ իրենց հավասարապես մթին անտառներով իմ վրաս կխուժեն ու շվարած անոնց մեջտեղ խեղդվիլ, անհետանալ կկարծեմ։

Բայց մինչեռ կհանչնամ այն անտառը, որ տունիս ետեր կտարածվի, գիտեմ անոր թանձրահոծ մթությունները ու հազվադեպ լուսահետերը, անոր շատ թունավոր սունկերը ու սակավ անուշաբույր ծաղիկները։

Կդողամ մտածելով անծանոթ արահետներուն անոր, որ առջիս գիսախոիվ կգահավիժի, կիջնե, հանգելով անվերջ աննատակ անդունդին։

Տո՞ւն թե դժոխք, կհարցնեմ ինքզինքիս ու կտենչամ ոչինչով մը զայն հիմեն օդը հանել ու թաղվիլ անոր փլատակներուն տակ, չիջնելու համար ավելի վար, անդունդին ճամփուն վրա...»։

Բայց պատանությունն իսկ իր վերացական ամբողջության մեջ չէ որ կերգե պ. Թեքեյան, այլ այն մասնավոր պատանությունը, որ իրենն է, և որ իր հատուկ դրոշմն ունի, փափուկ, երկչոտ, ինքնամփոփ բայց և հեշտասեր ու ջղուտ խառնվածքի մը դրոշմը։ Պ. Թեքեյան այն պատանիներեն չէ եղած, որ հազիվ ոտքերնին կյանքի սեմին վրա դրած, արդեն աշխարհիս տիրապետելու փառասիրությունովը կգինովնան, կամ մարդկության հորիզոնն ընդլայնելու, տիեզերքին խորհուրդը լուսավորելու ճիգեր կխիզախեն։ Ինքը մարդկությունով շատ քիչ կզբաղի, տիեզերքեն կտեսնե՝ ինչ որ կնմանի իր հոգիին այս կամ այն երևույթին, և ուրիշ բանի տիրապետել չըզձար, բայց եթե գեղեցկության այն ցոլքին, որով կտառապի։ «Մութին մեջ» ոտանավորը որոշապես կարտահայտե այդ խպնոտ, համեստ, ինքն իր երազներուն մեջ ամփոփված հոգին.

Մութին մեջ կուզեմ որ կեանքս անցնի,
Երազի մը պես մեղմ ու կարճատև,
Անձայն, անշըշուկ, ամենեն գաղտնի,

Լայն համփուն մեջեն քայլով մը թեթև,
Առանց ստվերիս շղթային բրոնի։

Չեմ ուզեր տեսնել աստղերը երկնի,
Որոնք կբացվին հոն՝ ժպիտ իրրև՝
Ժպիտներ իրրև մարդոց ծերունի
Մութին մեջ։

Ինչպես որ ցցված վիզե մը ծխանի
Մուխը ելլելով կերթա համարձակ
Ցեղիլ օդին մեջ և իրեն եռև
Չրթողուր ոչ մեկ հետք հիշատակի,
Այնպես թող իմ կյանքս հալի, ապրագնի
Մութին մեջ։

Մութը կսիրե, որովհետև ան զինքը կանջատե աղմուկեն, զոր կատե, որովհետև գործող մը, կռվող մը չէ, և մարդոց մրջնակույտեն, որուն հետ դեռ կապ չունի, քանի որ չէ սկսած կյանքի պայքարը։ Իր բոլոր երգերը՝ մութեն ներշնչված՝ շատ սիրուն են ատոր համար, որովհետև զգածված են, և մասնավոր հոգեկան վիճակի մը արտահայտիչ.

«Երբոր երկնքի վրա գիշերը կծաղկի՝ իր սև թավիշե անսահման թևերով, որոնց զգվանքներ ու երազներ կպահվտին գոգին մեջ, ծաղիկ, որուն դեղին առեշները երկնքին կգպին ու կսարսռան այդ բարձրությանց մեջ անցնող զեփյուռներուն շունչեն։

Այդ պահուն ճիշտ հոգիս կիջնե իր փղոսկրե աշտարակեն և համբարեն կսահի նամփոներեն, որոնք իմ բացավ և իմ միայն կճանչնա, հետապնդելով երազ մը, զոր ստեղծեց և որ խույս կուտա այդ պահուն իր առջևեն։

— Ո՜վ ասուշ նամփորդություն ասելուս գիշեր մը բնացողներուն ներդաշնակ շունչին մեջեն և մեռելներուն վսեմ անշարժությանը վրայեն։

Քանզի հազարավորներ մահը բարացուց այս գիշեր—

Ո՜վ գերբնական վայելքը հոգիս ասուռնձին և բազմաթիվ, բնության մեջը հալած՝ մինչև այն վայրկյանեն, ուր արևին փայլուն մանգաղը կուգա իր ցողուներեն հնձել գիշերվան սև ծաղիկը, որ կիյնա նորեն երկրի անդունդներուն խորը»։

Բնության մեջ՝ պերճաշող, մեծաշռինդ տեսարանները չեն, որ զինքը կգրավեն. աստղացան երկնքին վեհությունը, արևուն դյուցազնական մահը, լուսնին անսահման շնորհը իր քնարը չեն սարսռացներ. ասուպներն են, որ կհուզեն զինքը, կներշնչեն զինքը, ասուպները, այսինքն ինչ

որ ինքն երկնքին մեջ ամենեն ավելի խուսափուկ՝ ու երազային, լույսը, որ հազիվ նշուլած կշտապե թաղվի խավարին ծոցը։ Սիրո մեջ ամենեն է, որ ավելի թանկագին կերևա իրեն, քան վայելումը.

Մանիշակները թող երբեք չթոշնին,
Թող նվագին գիս հմայող չի գա վերջ.
Չբրգրքտի արշալույսին ծիրանին,
Եվ տենչանքներն չհասունանան սրտիս մեջ։
...Խնայե՜ ինձ հազեցումին անխնա
Խոնջենքը գրան. ինծի, ո՜վ տեր, մի՜ թույլ տար
Բանել փաղփուն երազիս գունատ օճառ։

Իր սիրո երգերը՝ մեծ մասամբ կնոջ հրապույրեն վրդովված, անով տառապող, բայց և իր տառապանքն ինքն իր մեջ թաղելով ինքզինքը կրծող պատանիին հուզիչ ու սիրուն քերթված են.

Բազմությանն մեջ, սրտիս խորեն ցած, շատ ցած
Կմրմնջեմ անունն անոր և լեռան
Վերա, մինակ, զայն կպոռամ գինովցած,
Վախով, թեթև՝ հանկարծ թոշնո մը նման։

... Անցավ գնաց ու կապասեմ իր դարձին՝
Ինչպես մոմ մը հովին դեմը գողալով...
... Հիմա ցորենի խիտ արտի մը պես՝
Երբոր իրիկվան կփրչե զեփյուռ՝
Կդողամ ամբողջ մարմինովս երբոր
Հեռուեն կանցնիս...

... Կհետևիմ վախով թեթև քայլերուդ
Երվագավոր, ինչպես քնար մը, որուն
Կճրմլե սիրտս արձագանքը անգութ,
Ո՜հ, գիպվածով դարձուր գլուխդ սիրուն
Եվ չըհատած ժոզվե աչքիս մեջ Սեթին
Գանձը անհուն, գանձը չքեղ, հորդահոս...

Այս գիշեր թո՛ղ իմ տենչանքս հարսի պես
Շվարելով սպլրդի ներս քու խուցեդ,
Քնացընող երգեր երգել և անտես
Մնարիդ շուրջ արբավառել խունկ ու ձեթ...

«Խպնոտ սեր» տիտղոսված արձակ քերթվածը,— հատորին գոհարներեն մեկը,— այդ հոգեկան վիճակին ամենեն ամբողջական պատկերացումն է.

«Իմ սերս ջինջ առվակ մըն է, որ հուշիկ կհոսի խառներուն տակեն, ընդարձակ դաշտին մեջ.

Այնչափ հուշիկ, որ ոչ իսկ իր դղչյունը կլսվի, և դուն, որ քանի մը քայլ անդին կպտրտիս, անոր գոյությունը չես գիտեր:

Կտենչամ, որ տղու թեթև քայլերդ պատահմամբ անոր մոտը բերեն քեզ և անոր պայծառ ջուրերուն մեջ հանկարծ սրունքներդ բրջին, քանի որ անիկա, բնությենեն իր նամփան գծված, չպիտի կրնա գալ ու քու ոտքերդ համբուրել»:

Այս նոթը հնչեցնող դեռ բավական թվով կտորներ կան հատորին մեջ, որոնց բոլորն ալ ավելորդ պիտի ըլլար հիշել այստեղ։ Հոն կգտնենք նաև մեկ քանի էջեր («Հոտաղ», «Հովվերգություն»), ուր զգայնության նույն խորքն է, որ ի հայտ կուգա, բայց որ իրենց մասնավոր երանգով ավելի։ «Հովվերգականք»-ի Վիրգիլին հեթանոս հուզմունքը կհիշեցնեն։

Նույն այդ զգայնիկի ոգին է, որ կերևա դարձյալ այն քմայքներուն մեջ, զոր Վ. Թեքեյան հորինած է բնական էակներու հոգին բացատրելու համար. Մանիշակը,— սիրուն արձակ քերթվածի մը մեջ,— իր կյանքը կպատմե. կրսե իրեն՝ թե ինքն ալ ատենով ուրիշ ծաղիկներու պես բարձրագլուխ կկանգներ, բայց հաճույքն ունենալու համար հպումն զգալու իշխանուհիի մը, որ եկավ բուրաստանին մեջ, ուր ինքը ծներ էր, օր մը վար իջավ իր բարձունքեն և խոտերուն մեջ ծածկվեցավ որպեսզի գեղուհիին ոտքերը անգիտակցաբար զինքը կոխոտեին.

... «Ինկա՜ հողին վրա, անբույր գանան խոտերուն քով ու անոնց հավասար արմատներս նետեցի:

Եվ առտու մը, ծածանուն ճերմակ պարեգոտով իշխանուհին, իր դանդաղ հեշտական պտույտին մեջ, գիս իր թեթև ոտքերուն տակ կոխոտեց, մինչ ես այդ զգվանքին փոխարեն իմ հոգիս կուտայի:

Առտվան զովության մեջ, իշխանուհին, զարմացած, ծծեց իմ անծանոթ բուրումս և աչքերը թաղվեցան անուշին խորը:

Այդպես ես իմ երազս գրկեցի, երջանիկ ու գոհ մութին մեջեն ծավալեցնելուս սիրո խունկը, որ կհեշտացներ վերը, լույսին մեջ շարժվող էակը...»:

Այս էջերեն դուրս, որ այդ հոգեկան վիճակը կթարգմանեն, Վ. Թեքեյանի հատորին մյուս հատվածները նմանություններ են,— երբեմն հաջող, մերթ ձախողած,— ուրիշ հոգիներու, մասնավորապես Պոտլերի և Վերլենի երգին։ Այն էջերը, որ արդեն կյանքը ճանչցած, սիրո բաժակը մինչև մրուրը քամած, ու զզված, հոգնած, ձանձրացած մարդու՝ խոսքեր կրսեն, փոխ առնված էջեր են, Վ. Թեքեյանի բուն երգին հետ կապ չունեցող, մինչդեռ մյուս էջերը, զոր վերլուծեցի, իր մսին ու արյունին

զավակներն են և ատոր համար գեղեցկագույնները, կամ ավելի ճիշտ՝ միակ գեղեցիկները.

Թեքեյանի հատորը կավարտի վերջաբանով մը, որ պատանեկան փուլին փակումը կծանուցանե և անցքը առնական մտածումներու շեփորումին.

Հիմա նման պարտիզպանին այն խոհեմ,
Որ կհանե ածուներեն տունկերն հին՝
Անեղանակ, հոգնած սերերս կխրլեմ,
Հարդարելու համար հողը նոր բերքին
Ամառներուն, աշուններուն բարերար,
Հոգվույս քաղցին, ուրիշներուն ալ համար։

Դեռատի հոգիի մը ինքնարբշիռ երազանքներեն հետո անոր այս տենչը հանրային կյանքովը բաբախելու, իր ձայնը հավաքական ցավերուն ի նպաստ դնելու՝ շատ հասկնալի է և շատ ազնիվ, մանավանդ բանաստեղծի մը համար, որ կպատկանի ծայրահեղ դժբախտությունով մը բեռնավոր ազգի մը։ Անշուշտ իմաստակ և անարդար պիտի ըլլար պահանջել ամեն քնարե հանրային գործը երգել և միմիայն, միշտ անով թրթռալ. ամեն հոգի իր ինքնությունը պետք է ձգտի արտահայտել, և բանաստեղծությունը պետք է անկեղծ ըլլա և ինքնաբուխ, և օգտակարին չզոհե երբեք գեղեցիկը, որովհետև գեղեցիկը ինքնին շատ բարձր տեսակի օգտակարություն մըն է։ Բայց կարելի է պահանջել ամեն անհատե, ի՜նչ ալ ըլլա իր խառնվածքը, որ անտարբեր չմնա մեծ հուզումներուն իր ազգին, ու ամբողջ մարդկության, որուն մեկ օղակն է իր ազգը։ Ամեն անհատ պարտավոր է, իր չափովը և իր կրցած եղանակովը, հետաքրքրվիլ հանրային գործին, ու աջակցիլ անոր։ Փղոսկրե աշտարակին մեջ կամ անձնական ցավերուն երգին մեջ կղզիացած մնալու համառիլը ոչ միայն դատապարտելի է բարոյական տեսակետով, այլև գեղեցկագիտական տեսակետով, որովհետև «տգեղ» է տեսնել հոգի մը, որ, գեղեցկություն արտադրելու կարող, բարոյական հուզում ստեղծելու ատակ ըլլալով հանդերձ, իր մտավոր հնոցեն ոչ մեկ կայծ չի նետեր մարդկային պայքարին սրբազան վառարանին մեջ։ Այսպես, Շենիե, Ֆրանսայի ամենեն զմայլելի ու մաքուր արվեստագետներեն մին, որ, մինչդեռ Վոլթերներն ու Ռուսոները հեղափոխությունը կպատրաստեին, նոր Թեոկրիտի մը սրինգը հնչեցնելով կշատանար, և ատով իր երկրին գեղեցկագիտական ճոխությունները բազմապատկողի շատ ազնիվ դերը կկատարեր, ինքն իսկ ցնցվեցավ հանրային կյանքին մրրիկեն, երբ հեղափոխությունը գաղափարի վիճակեն իրականության վիճակին անցնիլ

ակաւ, մասնակցեցաւ, արտով, գրչով ու գործով, հաւաքական պայքարին, և եթե տխմար ու ոճրագործ վճիռ մը զինքը տարաժամ չընացուցած չըլլար, Ֆրանսացի Թեոֆրեթը պիտի թողուր գործ մը, որ զինքը երկրորդ Լուիքեսիոս մը պիտի կացուցաներ և ոչուն նաթերն ու մեկ քանի գրված հատվածները կմնան միայն։ Թեքեյան արդեն սկսած ալ է արտահայտել էջեր, որ իր մտքին այդ նոր փուլին ազդեցության արդյունք են. անոնց մեջ կան, ինչպես «Խաբուլկ»-ը որ «Անահիտ»-ի մեջ հրատարակվեցավ, ու մեկ քանի քերթվածներ, «Ժող. համար»-ի մեջ երևցած, որոնք այդ զգացման արտահայտությունը հաջողած են հաշտեցնել բանաստեղծին խառնվածքին հետ. բայց և տեսանք Թեքեյանեն հրապարագրական հոդվածներ, որոնք, բատ խ, սկսալ մըն են իր կողմե գործված իր տաղանդին ու իր խառնվածքին դեմ, և ճիշտ ատոր համար թույլ, և իրեն անարժան։ Շենքի, արքեպին տեղ Լուիքեսիոսի պղնձե քանդն առնելով, իր հոգին բարոքվին չէր հեռանար,— ինչպես ըրած պիտի ըլլար, եթե վերջերը քրիստը փոքրիկ հնչեցնել. ի ծնե «գրաստակոս» ու ամեն բանե առաջ «արվեստագետ» իր բնությանը միշտ հավատարիմ կմնար՝ գրաստակոս առնելուշարին մեկ խարդն մյուսին անցնելով, կամ, ամերի ճիշտ, երկու խարդերը փոխն ի փոխ հնչեցնելով։ Թեքեյան, իր բնաշրջության ուսումնասիրությամբ մեջ, լավագույն օրինակ մը չի կրնար առնուլ քան Շենքեն։

Զեր Թեքեյանին հատորին մեջ շատ խնամված է, երբեմն նույնիսկ չափազանց նրբամաս, բայց այն հատվածները, որ արվեստանոցություն կզգացվի, գրքին նամանդական բաժնին կդատականին. Թեքեյանի անձնական դրոշմը կրող էջերը վնիտ են ու պարզ։ Մերթ, ասկայն, այդ պարզությունը ուղղակիությունի կհասնի, և այն ատեն քերթվածը լաբորատորիայեն տրտատրության մը ձև կառնե, ինչպես «Գյուտ»-ը, որ բնավ պետք չէր տեղ առնեներ այդ հատորին մեջ.

«Քեզ պիտեղեա՛ ի վեր ամեն օր նոր գյուտ մը ի՞նչեմ։ Գիտեի՞ր թե ինչու քեզ կսիրեմ։— Ոչնոր համար չէ՛, որ ամենեն գեղեցիկ ես, այլ ամոր համար, որ քու գեղեցկությունդ ամենեն ավելի կսիրեմ։

Եվ քու գեղեցկությունդ ամենեն ավելի կսիրեմ այն օրեն ի վեր, ուր ասես քեզ»։

Կան ալ կատարներ որոնց «թան»-ի անհերքելիությունը կվնասի ամբողջության կատարելությանը. այսպես՝ «Հովվերգությունը»-ը, որ վիրգիլյան ոճով մը պետք էր գրված ըլլար ամբողջ և կձգտի ալ այդպես ըլլալու, մարտանոցական այժմեական բացատրություններով կեղծվի («սկսան ավելի որոշ տեսնել իրենց մեջ, լուսինը՝ նոխ ոսկի կետ, հետո՝ մահիկ, երևցավ բլուրին ետեն, կես սկավառակ՝ գծվեցավ երկնքին

վրա» և այլն։ Մերթ ալ քերթվածին քնարերգական ազնվությունը կապականվի արձակունակ պարբերություններով, որոնք իմաստը զարգացնելու արդարացումն ալ չունին. այսպես. «Ցնորք»-ին սա առաջերը.

Երազը անունդ մըն է,
Որուն խորը նայելով
Ամենեն ամուր խառնվածքները
Գլխու պտույտ կստանին

Կգտնենք հոն մերթ պատկերներ, որ ազնիվ են և անհարգամաբ.

Ինչպես աղրուկ մը սրվակի մեջ թեթև՝
Սերս կկծկի, կպզտիկնա, կիջնե վար...
Իմ մարմինիս թաց ոսկանին
Քամված կյանքը երբոր ցամքի...

և էջեր, որ կերգեն շատ հասարակ, զավեշտական ըլլալու չափ ռամիկ կյանքի պարագաներ, առանց անոնց տալու բանաստեղծական ազնվացման մը բարձրացնող խորհրդանշանական լայնություններ. այսպես այն քերթվածը, ուր պ. Թեքեյան կհայտնե ձանձրույթը պարանին, որ կոպաս փողոցին մեջ իր սիրուհին, որ չի գար...

Կդիտե հեռուն, պահ մը կիսկա,
Ու կմրմնչե. «Գիտեմ, չպիտի գա»...

Վերջապես չեմ կրնար ինքզինքս արգիլել Թեքեյանին մեղադրելե Նարկիսի հին ազվոր այլաբանությունը խաթարած ըլլալը։ Հույները ջրերու եզրը բուսնող Նարկիզ ծաղկին ծնունդը բանաստեղծորեն բացատրելու համար՝ երևակայած էին շնորհալի պատմությունը Նարկիս գեղանի պատանվույն, որ Կեփիս գետի որդին էր, և արհամարհելով բոլոր ազջիկները, որ իրեն համար կհառաչեին, գետի մը մեջ իր պատկերը տեսնելով՝ ինքն իրեն սիրահարեցավ, ու իր դեմքին հայեցողությանը մեջ անշարժացավ, հոգին գամվեցավ ծաղկի փոխված, ծաղկի մը, որ իր պատկերը ջրին մեջ դիտելով համրոթեն կթոշնի։

Թեքեյանի Նարկիսը պատանի մըն է, որ սիրով կտառապի և որ, մերժված, բայց իր սիրածին պատկերն իր մեջ ծծած ու հուսկ ապա նույնացած անոր հետ, օր մը ջրի մը վրա հակելով իր դեմքը դիտած ատեն կկարծե իր սիրականին դեմքը տեսնել և զայն դիտելով կհյուծվի ու մեռած կիյնա ջրերուն վրա։ Հին հեքիաթ մը անշուշտ կարելի է նորոգել, ընդլայնել, փոփոխել, բայց պայմանով, որ անոր ոգին չեղծվի և փոփոխությունները նոր գեղեցկություն մը ավելցնեն սվանդական պատկե-

ին. Թեքեյանի քմայքը բնավ չէ՛ պահած հունական հեքիաթին իմաստը, որ, այդ նոր ձևին մեջ, քաշքռտուկ է, անբնական և պաղ։

Թեքեյանի բանաստեղծական արձակը լավագույն է, քան ոտանավորը, որ, թեպետ տաղերուն մեկ մասին մեջ շատ գեղեցիկ է ու ճարտար, ընդհանրապես ոտանավորի վերածված արձակի տպավորությունը կթողու։

Լեզուն, զոր Թեքեյան կգործածե, մաքուր ու նուրբ աշխարհաբար մըն է, և որ հայկական դրոշմ կկրե, թեպետ զուրկ չէ անճահ և չհալած ֆրանսաբանություններե, ինչպես և քերականական մեկ քանի տձևություններե («Արթնությունը իր», փոխանակ «իր արթնություն»ի, «Օղակներու մեջ իր», փոխանակ «իր օղակներուն մեջ»)։

Ոտանավորներուն տաղաչափությունը, բացի հոն հաճախ երևցող արձակաձև ընթացքեն, որ կրնա հարմարիլ վիպողական քերթվածներու, բայց ոչ քնարական բանաստեղծության, կներկայացնե մեկ քանի կանոնազանցություններ. տողերուն հատածները հաճախ անշեշտ վանկով մը (ըս, ըդ, ըն) վերջացած բառերու վրա կիյնան, սխալ մը, զոր ռուսահայ բանաստեղծները կանոնի կարգ անցուցած են, և որմե ջանալու է խուսափիլ, մանավանդ բարձր բանաստեղծության մեջ[1]. նմանապես կնկատվին հոն բաղաձայնի խճողումներ, որ տողն անընթեռնելի կդարձնեն («կերթա քալվածքն գետնի փոշին համբուրող», «քալվածքըն»ին նեն հետո եկող բառը պետք էր ձայնավորով սկսեր, որպեսզի տողը իրապես տասնմեկ վանկ ունենար, մինչդեռ հոս տասներկու վանկ ունի. նույնպես «ճառագայթումն լուսաշող», «անոր աճյունն քաղցրահոտ», «մարդուն հույսերն ու բաղձանքներն սեռերու», և այլն). կնբրահոտ», «մարդուն հույսերն ու բաղձանքներն սեռերու», և այլն). կնբրակատվին նաև նման վանկերու զուգադրությենե հառաջ եկած խժությունները («հոգիս այսպես զարկը կրեց շնորհքիդ», «սրտիդ պարտեզին մեջը չբուսավ»)[2]։

---

1 Բացառաբար կարելի է, իբր սակավադեպ զարուուղություն, իբր licence poétique, ժողովրդական երգերու տաղաչափության այդ ձևն ընդգրկել, տողին ընտանի գնացք մը տալու համար։

2 Թեքեյան, որ իր այդ առաջին հավաքածուին զմայլելի արձակ բանաստեղծություններով և շարք մը փափկագաց ու նրբաձև ոտանավորներով՝ ի հայտ կուգար իբր մեր նոր քերթության ամենեն անձնագրոշմ ու շնորհալի արվեստագետներեն մին, անկից ի վեր արձակի, ինչպես և ոտանավորի մեջ մեր լավագույն վարպետներեն մին հանդիսացավ։ Իր արձակը, որ առաջին հրապարակագրական փորձերուն մեջ թույլ էր արդարև, այլազան գրությանց մեջ՝ մնալով հանդերձ բանաստեղծի արձակ՝ հասավ լիությունն ու աստիճանությունը նրբության միացնելու։ Իր ոտանավորը, որ այդ առաջին հատորին տաղերեն շատերուն մեջ՝ հետևելով Վերլենի ինչ-ինչ, ո՛չ լավագույն էջերուն՝ չափազանցության կտաներ ֆրազներուն տուն տուն երկարածավալ մանվածապատ ձգձգումը և տաղաչափված արձակի տպավորությունը կթողուր իրոք, գտավ այն բարձր հավասարակշռությունը, ուր՝ ճապուկ, ազատ ու օրորուն ըլլալով հանդերձ՝ կպահե իսկական ոտանավորին հատուկ դաշնաթավալ կշռությունը. այսօր, և շատոնց ի վեր, ոտանավորն է Թեքեյանի մտքին արտահայտության լավագույն գործիքը։ Ու պատանության երգն այնքան փափուկ ու հանկուցիչ շեշտով մը երգելե հետո, իր ներշնչմանց առաջին շրջանին հրաժեշտի ողջույնն ուղղող բանաստեղծը գիտցավ անկից ի վեր Հայ Սամենի մի հոգեվերից հրապույրովը թարգմանել կյանքը իր բոլոր ժպիտներուն ու մանավանդ բոլոր դառնություններուն մեջ, արտահայտել մարդկային սրտին բավղային ներքնաշխարհը, ճակատագրին մռայլ խորհուրդը, սիրո տառապանքին քաղցր արբեցությունը, աստուծո գաղափարին անսահման ու անվախճան, աներևույթ ու տիրական, վրդովիչ ու սփոփիչ լույսը, ինչպես և իրեն հատուկ սրտառուչ եղանակով մի երգել հույսն ու ցավը իր ցեղին։ Քերթողական գործը, որով ան ճոխացուց մեր ազգային մշակույթը, մեր հին ու նոր բանաստեղծության ամենեն թանկագին ու ամենեն կատարյալ արտադրություններեն մին է։

1 Թեքեյանի գրական գործունեության հոբելյանը տոնախմբվեցավ Փարիզ՝ Սալ Կավոյի մեջ՝ 1934 փետրվար 10-ի իրիկունը։

ՃԱՌ՝ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՆ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ[1]

Սիրելի հայրենակիցներ,

Ինչ որ այս իրիկուն հայ ժողովուրդը կտոնե՝ պայծառ ու խրոխտ հրճվանքով մը, մեր ազգային բանաստեղծությունն է՝ անոր ամենեն բարձր ու մաքուր արտահայտություններեն մեկուն մեջ, որ քերթողական գործն է Վահան Թեքեյանի։

Մեր ազգային բանաստեղծությունը, մեր հին արվեստին հետ, գեղագույն հարստությունն է մեր ժողովուրդին։ Հազարավոր տարիներ առաջ աստվածներ ու դյուցազներ երգող մեր գուսաններուն հրեղեն ավյունով ստեղծված, դարերու ընթացքին՝ ցեղին հոգվույն ամենեն հանճարեղ թարգմաններուն, Եղիշեներու, Խորենացիներու, Նարեկացիներու, Շնորհալիներու, Քուչակներու, Աբովյաններու, Բագրատունիներու, Ալիշաններու, Պեշիկթաշլյաններու, Դուրյաններու, Թերզյաններու, Պատկանյաններու, Թումանյաններու, Տեմիրճիպաշյաններու, վաստակով ճոխացած ու ընդլայնված, ան եղած է խորհրդավոր ու հրաշագործ այն ուժը, որ մեր ժողովուրդին ինքնավստահությունը զորացուցած է, անոր փառքերը լուսավորած ու ցավերն ամոքած է, անոր անմահության գրավականը կազմած է։ Ան անպարտելի զենքն է ու մոգական գանձը, որ մեր ժողովուրդը կարող դարձուցած է մեծագույն դժբախտություններեն հետո անվհատ ու հավատավոր մնալու, ամենեն ահավոր փլուզումներեն հետո՝ վերականգնելու և իր քաղաքակրթական գործը շարունակելու։

Այդ օրհնյալ ուժին, զոր ճակատագրի ոչ մեկ հարված, թշնամի ոչ մեկ զորություն կրցած է մեզմե կապտել, դուք, սիրելի հոբելյար, կարևոր հավելում մը բերած եք։ Անդրանիկը՝ Տիրան Չրաքյանին հետ՝ մեր ժամանակակից բանաստեղծության մեջ խորհրդապաշտ լարը զարգացնող նուրբ սերունդին, դուք մեր գրականության տվիք քերթվածներու շարքեր, որոնք արդեն շատոնց՝ իրազեկ մտքերուն դատումին մեջ՝ ձեզ հայ քնարի ամենեն հմայիչ վարպետներուն հույլին մեջ դասած են։ Ձեր առաջին հավաքածուին պատանեկան քնքուշ ու երազուն երգերեն, որոնց մեջ արդեն իսկ կհայտնվեին նվագավոր հոգի մը և արվեստագետ խառնվածք մը, մինչև ձեր նորագույն հատորին խոհուն ու խորաթափանց բանաստեղծությունը, ուր մտածումով տոգորված, զսպված ու ղեկավարված փափուկ զգայնություն մը մարդկային սրտին ու տիեզերական հոգիին խորհուրդները վեհընթաց քնարերգությամբ մը կարտահայտե, դուք հայ դպրության շնորհեցիք մեծատարած ու բազմազան բուրաստան մը թովիչ բուրմունքով գաղափարական հազվագյուտ ծաղիկներու, որոնք կենդանի պիտի մնան ու սրտերն ու մտքերը պիտի դյութեն՝ ինչքան ատեն որ հայ լեզուն հնչե աշխարհիս վրա,— այսինքն մինչև վերջին օրը մեր երկրագունդին։

Արդիական ու դասական միանգամայն,— ինչպես եղավ ձեր այնքան սիրած մեծ Պոտլերը ինքն իսկ,— խորհրդապաշտ, այլև ներդաշնակապաշտ, նորություն սիրող ու ինքնատպության հետամուտ, այլև չափի զգացումով ի ծնե օժտված, ծայրահեղություններե խուսափող, կատարելության ձգտող, միանգամայն խոր ու վճիտ, հանդուգն ու ժուժկալ, դուք տվիք անսպյուռ քերթվածներ, որոնց մեջ դպրոցի մը ազդեցությունը կզգացվի անշուշտ, բայց ուր դպրոցներու և արվեստագետներու մեծագույնին, Բնության խորունկ դասերուն ըմբռնումը կտիրե մանավանդ, և որոնք իսկապես ամեն դպրոցե դուրս, ամեն նորաձևութենե վեր, զուտ բանաստեղծություն են, քանի մը էական ու հավիտենական զգացմանց ու խոկմանց անկեղծ ու ինքնադրոշմ թարգմանություն՝ անծերանալի գեղեցկությամբ ձևի մը մեջ կաղապարված։

Անհատական հոգիի մը ներքին տոամներուն գերազանց երգիչ եղաք դուք, զանոնք արտահայտելով սակայն այնպիսի խորությամբ ու ճշտությամբ, որ ձեր եսին թարգմանումովը հասաք մարդկային սրտի հիմնական հույզերը իրենց ընդհանրականության ու մշտականության մեջ նվագերգելու։

Ու դուք, որ ոչ միայն հայ խոսքի մեծ արվեստագետ մը, մարդկային հոգիի բարձրաքնար արտահայտիչ մըն եք, այլև հավատարիմ ու գորովագութ որդի մը մեր ալևոր Մայր Հայաստանին, դուք որ քերթողի ձեր

վաստակեն զատ, իբր ուսուցիչ, իբր հրապարակագիր, իբր ազգային գործիչ անձնվիրությամբ ու լրջությամբ ծառայած եք մեր ազգին, դուք, ապրելով այնպիսի օրերու մեջ, ուր մեր ժողովուրդը իր բազմադարյան պատմության ամենեն փոթորկալից մեկ շրջանը բոլորեց, չէիք կրնար չմղվիլ մեր ցեղին այդ մեծ տոամն ալ ձեր քնարով՝ ձեր խառնվածքին ու հայացքներուն համեմատ արտահայտելու. և մեր հայրենիքի տեսիլներեն, մեր պատմության հիշատակներեն, մեր ժամանակակից ազգային կյանքի պայքարներեն, երազներեն, հույսերեն, ջախջախումներեն ու վերականգնումներեն ներշնչված քերթվածներու շարքին, որով ճոխ ու զորեղ է մերօրյա հայ բանաստեղծությունը, դուք ավելցուցիք ազնըվաշունչ էջեր, որոնք վեհափառ Մասիսին ի տես ձեր աչքերուն ու սրտին հուզմունքն արտահայտող տաղեն մինչև արյունի ու հուսախաբության ջրհեղեղե մը հետո մեր ազգին ու մշակույթին գոյությունը իբրև նոր տապան մը իր ծոցին մեջ պահպանող և անոր ապագան ապահովող մեր այժմյան Հայաստանին ձոնված հնչյակը մասնահատուկ տեղ մը պիտի միշտ գրավեն հայրենիքի զգացումը իրական բանաստեղծության շեշտերով թարգմանող քնարերգական էջերու ոսկեմատյանին մեջ։

Սիրելի հոբելյար,

Դուք անդրանիկ հայտնություններեն մին եղաք, կըսեի, այն սերունդին, որուն ամենեն օժտված ներկայացուցիչները, ֆրանսացի ու պելժ խորհրդապաշտ մեծ վարպետներուն գործեն հմայված, անոնցմե առաջնորդվելով իրենց հայ բանաստեղծի կամ գրագետի տոհմայնորեն ու անհատականորեն ինքնուրույն ճամփան գտան։ Ձեր ընկերներեն ոմանք, Տիրան Չրաքյան և Ռուբեն Զարգարյան, որ ձեզի հետ նույն ատեն երևցան մեր գրական հորիզոնին վրա և քերթողական արձակի սխրալի էջեր տվին մեզի, Ատոմ Յարճանյան և Դանիել Վարուժան, որ ձեզմե քիչ հետո ի հայտ եկան ու մեր ազգային բանաստեղծությունը վսեմ բարձունքներու հասցուցին, ինչպես և այն մեծարժեք քննադատ-գրագետը և խոհուն բանաստեղծը, որ եղավ Արտաշես Հարությունյան, խուժդուժ բրնակալության մը սև ճիրաններուն տակ նահատակվեցան. ձեր կրտսեր ընկերներեն Միսաք Մեծարենց ու Վահան Տերյան, սերովբեական քնարերգակներ, Դուրյանն ու Ադամյանը մեզմե խլող անողոք ախտեն ծյուրելով՝ վաղաժամ մահացան. ձեր մտերմագույն գրական ընկերներեն մին, Սուրեն Պարթևյան, որ իր գեղեցիկ նորավեպերուն մեջ պերճ ու հզոր արձակի բանաստեղծ մը եղավ, ենթգավոր հիվանդությենե մը զգետնված՝ նույնպես կանխահասորեն անհետացավ։ Անոնք, թեև իրենց կենդանությանը՝ ավելի կամ նվազ գնահատված, ոմանք մեր ընտրա-

նիեն խորապես հարգված, այլ համատարած սիրով ու հիացումով պա-
շարված, չունեցան սակայն հոբելյանական մեծահանդես տոնախմբու-
թյան մը հրճվանքը, որուն արժանի էին։ Թույլ տվեք որ անոնց սիրելի
և անմահ անունները միացնեմ այս իրիկուն ձեր անունին, և թող մշտա-
կանանչ ճառագայթումը դափնիին, զոր այս բոպեին հայ ժողովուրդին
երախտագետ մեծարանքը կբոլորե ձեր ներշնչյալ քերթողի ճակտին,
տարածվի նաև ճակտին վրա ձեր այդ թանկագին ընկերներուն, որոնց
հոգիները ես կզգամ այս իրիկուն, խանդավառ, սփոփված, հպարտ,
այստեղ, ձեր շուրջ, այս մեծ հանդեսին մեջ, ուր կտոնվի ինչ որ իրենց
ու ձեր գերագույն հրայրքը, խորագույն կրոնքը եղավ,— բանաստեղծու-
թյունը։

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ԻՐ ԱՌԱՋԻՆ ԾՐՋԱՆԻՆ

(«Սարսուռներ» ճատուին երեսման առթիվ)

Դանիել Վարուժան մին է այն անձնավորություններեն, զոր Մուրատ-
Ռափայելյան վարժարանը կրնար հպարտանալ արտադրած ըլլալուն։
Վարուժանի պես դեմք մը անշուշտ ոևէ դպրոցի արդյունքը չէ, այլ է՛ն
առաջ իր բնածին ձիրքերուն. բայց միջավայրը միշտ իր ներգործությունն
ունի նույնիսկ ամենեն ուժեղ խառնվածքին վրա, կաչակցի— կամ կհա-
կառակի— անոր կազմավորման։ Ակնհայտ է, որ Վարուժան իր ուսա-
նողության իսկ շրջանին Մուրատ-Ռափայելյան վարժարանին հորիզոնեն
դուրս ալ նայած է հաճախ, ուշադիր և ուշիմ աչքով մը Հայոց արդի
գրական ու ազգային շարժման հետևած ու եվրոպական մտավոր աշ-
խարհին քանի մը մեծ երևույթներուն վրա իր նայվածքը երկարորեն
հառած է, բայց նույնքան հայտնի է, որ Մխիթարյան միջավայրին մեջ
ինչ որ կա լավ, իր վրա ազդած է բարերարորեն,— ու «Մխիթարյան մի-
ջավայր» ըսելով, կհասկնամ՝ ոչ որոշ վայրկյան մը Մխիթարյան տան
կյանքին, այլ ամբողջ ավանդական մթնոլորտն այդ հաստատության։
Վարուժան տեսած է հոն անցնիլն իր հոգիին առջևեն Բագրատունիներ-
ուն, Հյուրմյուզներուն, Պեշիկթաշլյաններուն ստվերին, Ալիշանը ճան-
չցած ու հասկցած է, խոկացած է օրինակին վրա մեծ նախորդներուն,
որոնք եկած են Մուրատ-Ռափայելյան վարժարանեն, ու թևերը, զոր բնու-
թյունն իրեն արդեն իսկ շնորհած էր, ուժեղացած են այդ հզոր թռիչնե-
րուն հպանցքեն։ Ազնիվ ու ճոխ հայերենը, զոր կգրե, տաղաչափական

հմտությունը, զոր ցույց կուտա, հստակ ու կուռ շարադրության, հա-
մաչափության ու կարգի դասական հատկությունները, զոր ի հայտ
կբերե, Մխիթարյան մթնոլորտին շատ բան կպարտին։ Ինչ որ ի՛րն է,
այն բուռն ու սուր զգայնությունն է, տաք ու քաղցր սրտի մը հզոր ու
խորունկ բաբախումը, ամենեն սովորական տեսիլներն ուրույն եղանա-
կով մը նկատելու, զգալու և արտահայտելու կարողությունը, որ կտիրե
իր քերթվածներուն մեջ։

Որոշ խնամություն մը կգտնեմ իր և Պետրոս Դուրյանին միջև։

Ահա, օրինակի համար, քանի մը տուն իր հատորին առաջին քերթ-
վածեն, որոնք «դուրյանական» բան մը ունին.

Երգել կուզեմ— թող սարսրռա բընությունն
Մատերուս տակ, ինչպես մոր ծիծն հոլանի
Մանկան առջի բնազդական դպչելուն.
Եվ կյանքը թող շուրթիս վրրա լուծանի։

Երգել կուզեմ— արտոնքերն ի՞նչ կըսեն մեզ։
Կառնե խոսք հովն ամպեն, հովեն ալ ջաղաց.
Բառ ունի աստղն,— երգել, երգել կուզեմ ես,
Չի՝ կխոսին երգով բնությունն ու աստված։

Կուզեմ ծովուն հետ սիրտ սրտի ես հարիլ,
Իմ անհունիս մեջ այդ անհունը թաղել,
Բուռն իղձ ունիմ մրրիկին հետ մաքառիլ
Եվ գլուխս էին գաղտնիքներուն դեմ բախել։

Գերված է սերն՝ վարդին, հավատքն առաղին վրա,
Ջանոնք երգել կուզեմ քնարի շրթունքով,
Կուզեմ բնությունն հորինել քող մը ծաղկյա
Մտածման ամեն ձև իր ներքև քողելով։

Նմանապես սա տողերը.

Օ՜հ, ինծի ի՞նչ՝ թե կփետտեմ վարդին թերթ,
Եվ փուշին կյանք կուտամ միշտ,
Թե գրկաբաց հորձանքին մեջ կնետվիմ,
Խինպս է ձանձրույթ, սերս է վիշտ։
Ամեն խայտանք չախչախեցի սրտիս մեջ,—
Չեմ վախնար սև ծծելե.
Վանք մտնող կույս մ՚եմ որ խրզված իր վարսեր,
Անխիղճ, անհոգ, կդիտե։

Ակներև է արդեն, որ Վարուժան հաճախ, ու մասնավոր գորովով մը,

կարդացած է Դուրյանը. մեկ ավելի անգամներ իր քերթվածներուն մեջ կհիշե խանդաղատանքով «Իսկյուտարի Սոխակը»։

Վարուժան չունի հոգեվարքի վարդերու այն անասելի դալկությունը, հատնող լույսի այն կսկծալի ու եղերական գեղեցկությունը, որ Դուրյանին մեջ արդյունք է ա՛յնքան մահվան սպառնալիքն իր կյանքին վրա ցցված տեսնող հիվանդի ճակատագրին, որքան անոր արդեն իսկ թրթռուն, ցավագին ու կույս հանճարին։

Բայց Վարուժան ունի Դուրյանին հանկարծական, սեզմ ու վառ պատկերները, անոր կտրուկ ու սրտե ուղղակի ժայթքող ճիշերը, և այն չեմ գիտեր ինչը, որ ժողովրդական է ի քնե ու «հայ» և որ Դուրյանին բնազդական խորքը կկազմե։ Վարուժան ավելի հմուտ է, ավելի գիտակից, ավելի բազմալար, ինք պիտի ըլլա ինչ որ Դուրյան եղած պիտի ըլլար, եթե ապրեր ու զինքը մաշող ախտը չունենար իր ներշնչմանց գըլխավոր աղբյուր։

Մանրամասն վերլուծում մը չէ, որ կուզեմ ընել հոս Վարուժանի հատորին, որ կպարունակե արդեն մեկ փոքր մասը միայն այն քերթվածներուն, զոր գրած է ցարդ և հրատարակած «Բազմավեպ»-ի մեջ և այլուր։

Շտապելու հարկ չկա, երբ մարդ Վարուժանի պես բեղուն բանաստեղծի մը դեմ կգտնվի։ Այս հատորիկը մինակ չպիտի մնա։ Վարուժան մեզի պիտի տա դեռ մեկ ավելի հատորներ, ամբողջ բանաստեղծություն մը, բազմագույն, կենսախայտ, ու հետզհետե ավելի հզոր ու հասուն։

Հատորիկը, այնպես ինչպես կուգա ներկայանալ հասարակության, ինքնին աղվոր ամբողջություն մըն է։ Դեռ անհավասար իր արտահայտության մեջ, պատանեկան անփորձություններն ու հազվեպն դեռ ոչ բոլորովին ազատագրված, Վարուժանի քնարը ամենամեծ հատկությունն ունի ինքնահատուկ հնչյունով մը օժտված ըլլալու, ու հոն ուր ուժեղ կթրթռա՝ ուժը կձգտի դեպի շատ վեհ բարձունքներ, ուր մերթ կհասնի շքեղ թռիչով մը։

«Մուսային», «Հայր, օրհնե՛», «Վշտին», «Հավերժության սեմին», «Հիվանդ է», «Արյունոտ ճյուղը», «Երազ և խոհ» տիտղոսված քերթվածները հոյակապ էջեր են, և գեղեցիկ բաներ կան «Հաշիշին», «Մեռածին համբույր մը»-ին մեջ։

«Արյունոտ ճյուղը» զմայլելի բալլադ մըն է, գոհար մը գրեթե անթերի այդ փափուկ ու թանկագին քերթողական սեռին, սրմե այնքան քիչ նշույլ ունի մեր գրականությունը։ «Հիվանդ է»-ին մեջ, Վարուժան կերգե զարիպության մեջ մեռնող Վանցի կորիճի մը եղերավեպը, հին

պատմություն, զոր անթիվ ժողովրդական երգեր ավաչած են արդեն, բայց զոր Վարուժան գիտցած է նույնքան խոր զգացմամբ և նոր շեշտով մը, թաքմ գույնով մը վերանորոգել.

Ծովերին մեջ, խանի մ՝անկյունը լքված,
Թշվա՞ռ պանդուխտ, հիվանդ է.
Խոնավությունն անոր մարմինը շիթ շիթ
Գերեզմանին կնետե։

... Մթնշաղի մեջ կմարմրի, կհյուծի,
Մթընշաղի մը նման,
Լռությունն հոն կարծես դագաղ մը կերկնե,—
Օրոցք՝ տունեն գերեզման։

Երիտասարդ է տակավին, և փեսա,
Պոլսեն մինչև Վան՝ հեռու.
Հոն հաց կուզեն հարսն ու ծնողք, զինք կուզեն,
Դեռ շատ շուտ է մեռնելու։

Ան իր արյունն իր քրտինքով կշահեր...
Տե՛ր, ի՞նչ սրտով կկոտրես
Թևն, որուն վրա կկրթընին մանուկներ
Եվ ծնողքներ ձյունագետ։

...Պիտի մեռնի, և իր բնիկ լուսնին տակ,
Հարսը սիրո ծարավով՝
Պիտի զուր տեղ անոր գալուն ըսպասե...
Խե՛ղճ Վանուհի, ապահով

Հույսի ամեն խոստումներու վայելքին՝
Կծիծաղիս ատոցին հետ,
Մինչդեռ կյանքի երկընքին վրա կգծվի
Շանթը շղին զուգահետ։

Որո՞ւն համար շուշան և վարդ փոխ կուտան
Իրենց միացումն այտերուդ.
Ինչո՞ւ Վանա լիճն աստղերով կվառի
Նախանձելով աչքերուդ.

Որո՞ւն համար հաշաղիդ տակ կպահես
Ըմբոստանքներն համբույրին...
Վաղն, հե՛ք ծաղիկ, պիտի ճամփորդ մը գուժե.
—«Մեկ աչքը բաց թաղեցին»։

«Երազ և խոհ»-ը (որուն տիտղոսը չեմ սիրեր) ուժեղ տեսիլքով մը

կգծե դեմքը սատանին, դայն չախչախելու համար աստուծո դեմքին ամենագեղ ճաճանչավորման տակ. Վարուժանի համար այդ երկու խորհրդանշաններն իրենց դասական նշանակությունը կպահեն. սատանը՝ չարը է, տգիտությունը, խավարը, աստված՝ բարին, գեղեցկությունը, լույսը։ Հյուկոյական շունչ մը կանցնի քերթվածին մեջեն. սքանչելի են տողերը, որ կպատկերացնեն սատանին երևումը.

Պառկած էի, խոր լռություն, գիշեր էր...
Ճրագս յուղե պատերն արյուն կներկեր։
Ծանրացավ մրափ մ՚աչքերուս,
Մտածումներս երազի մեջ սուզան,
Եվ բիբերս ամեն ճաճանչ լուսական՝
Կոպերուս վրա տվին խույս։

Սև դեմքի մ՚հետ ձեռք մը տեսա մահճիս քով—
Կուրծքիս դրավ մատները բոց եղունգով,
Սնդիկի պես խորամուխ։
Փայտ կտրեցավ լեզուս. վախցա շեկ աչքեն։
Ես ճանչցա զայն.— սատաններուն ամենեն
Կատաղին էր, և է՚ն թուխ։

Բացավ բերանն, որուն մէջ լինդ միայն կար,
Իր ակռաները խորտակված էին վար
Իյնալու օրն երկնքեն...
Ըսավ.— «Սրտեդ, սրտեդ քաշել ես եկա
Զայն, որուն տեղն իմ սերս պետք է ըլլա.
Տո՜ւր, ինձի տուր սերդ իրեն։

Հետո կուգա պայքարը բանաստեղծին հոգվույն ու սատանին միջև, որ կպարտվի. և երազողը արթնցած՝ հրճվանքով կզգա աստված իր սրտին մեջ, անխախտ.

Ա՜հ, արթնցա։— Եվ միտքս շուտ մ՚ըշտապեց
Սրտիս վրին, դեռ ան հոն տեղ էր, անեղծ,
Յոթն արևի նման ջերմ.
Դեն եղունգով լանջս շերտած էր տեղ տեղ.
Ուրախ էի, որ եղա զրահ մ՚արյունհեղ
Անոր համար, Անոր դեմ։

Տարօրինապես ազնիվ է ու օրտաշարժ զգացումը, որով տոգորված է «Հայր, օրհնե՛» քերթվածը. հոն, իր բյուրեղի մաքրությունովը, առտրվան արևու աղվոր ու թարմ ջերմությունով՝ ի հայտ կուգա «բարի մարդու» սիրտը, որ կբաբախե այդ բանաստեղծին մեջ.

Հա՛յր, ես կերթամ այն ճամփայեն, որ ճերմակ
Մաղերուդ զիս կտանի,
Վաստակաբեկ ոսկորներուդ, ծեր սրտիդ
Եվ սերերուդ կենդանի...

Բավական է... աշխատեցար, կրեցիր,
Ամեն նետի, հարվածի
Վահան եղար ինծի համար. հոգիդ է
Որ հոգվույս մեջ կհածի։

Իմ արյունս է գոյացած քու քրտինքդեդ,
Հոգնությանդ ծիլն եմ տխուր.
Հոգիդ, կաղնի, երբ կուրծք կուտար մրրիկին՝
Ես շուքիդ տակ, հանգիստ, լուռ

Կմեծնայի։— Հարկ է հիմա ա՛լ հանգչիս
Եվ ես քեզի հաջորդեմ...
Խոնջե՛նք, խոնջե՛նք։— Կուզեմ կռվիլ, աշխատիլ,
Իլլել կյանքին, կյանքին դեմ...

Հա՛յր իմ, օրհնե՛. դողդոջ ձեռքդ գլխուս դիր.
Թող մատներդ կաթի վար
Աղոթքդ՝ եկած հոգվույդ պայծառ խորանեն։
Վերջին ժամն է. օրհնե՛, հա՛յր։

Գեղեցիկ տողեր կան «Մուսային» տիտղոսված կտորին մեջ, որ կերպով մը բանաստեղծին քերթողական հավատո հանգանակն է— և հանգանակ մը մեծ ազնվությամբ ու արությամբ հղացված։ «Վշտին»-ը հատորին ամենեն խորունկ ու ամենեն աղվոր զգացված կտորներեն է.

Ինձմե հեռո՛ւ, ահավոր է տեսնել քեզ,
Գարնան ծաղիկն ուղխին կրնա՞ դեմ դնել,
Ո՜հ, քեզի հետ ի՞նչպես կրնամ չափվիլ ես,—
Դու արհեստիդ մեջ վարպետ ես և ընտել։

Դեռ նոր դրի մեծ հովտին մեջ իմ քայլեր
Ուրկե երկայն ճամփան կերթա նեղնալով,
Սայրն է շիրիմն, զոր հասակս այս չի տեսներ՝
Կամ կտեսնե միայն սոսկման մը դողով...

Քայլիս առջև մի՛ վերցներ այդ հովտեն
Ծաղկի, շողի և ցողերու պատմուճանն.
Թո՛ղ որ երկնի հորդ ալիքներն հրեղեն
Հոն կապուտակ իրենց ժպտով հաշտ իջնան։

Բայց, իր պարմանական հոգիին ամբողջ հասկնալի ու գեղեցիկ

զարհուրանքն ու սոսկումը նետելե հետո վշտին, բանաստեղծը կվերջացնե երգը ունկնդրելով անոնց, որ կըսեն,— և իրավունք ունին,— թե վիշտը մեծցնող, ազնվացնող, դեպի իդեալն առաջնորդող մեծագույն ուժն է.

Ճակտին վրա, ակոսներուն մեջ վշտի
Կցանվի սերմն իդեալին սեփական.
Օր մ՝ այն հոգին, որ ցավերով կռվայտի,
Պիտ՝ դառնա վարդը Անհունին խնդության։

«Հավերժության սեմին»-ը ամենեն հզոր կտորն է հատորին, և մին ամենեն շքեղ էջերեն հայ բանաստեղծության։ Մահվան խորհրդին հանդեպ այդ լայն ու սարսռագին խոկումը նորեն մտածել կուտա Հյուգոյին, ձևովը մանավանդ. եթե հայ բանաստեղծներեն Դուրյանը Վարուժանի վրա ազդած է ամենեն ավելի, հայտնի է, որ եվրոպացիներեն Հյուգոն ամենեն ավելի իր հոգիին խտած է և հոն իր մեծ արևեն քանի մը ճառագայթ ձգած։

Չեմ կրնար ինքզինքս արգիլել հաճույքը հիշատակելու քերթվածին գեթ սկզբնավորությունը, որ հրաշալի է.

Գերեզման մ՝ էր, լերան ոտքին, գետին մոտ.
Թափառական քայլերըս զայն գտան հոտ,
Երբ կերթայի երազուն,
Իրիկունն, հագած արևուն հուսկ շողը լալ,
Սիրտս հանձնած ծաղիկներուն, և միտքս ալ
Փթթելու մոտ աստղերուն։

Գերեզման մ՝ էր։— խաչ մը անտաշ, քար մ՝ անխոս,
Քարն անանուն, և խաչն ալ՝ անքրիստոս,
Հոն կհսկեն մենակյաց.
Մին զետեղված է ձեռքերով մտերիմ,
Եվ մյուսն, երկու մասրի ճյուղեր, սև մազի մ՝
Գիսակներովն հոն կապված,

Այս է բոլորն, ու ասոր հետ քնությունն
Որ կօրօրե այդ քունն իբրև մայր մ՝անքուն։
Տերևներու սոսափներ,
Գետին ողբանքն ու խոշոր բիբը լուսնին
Մոռացությունն հոն կսպաննեն, հոն երկինն
Իր նայվածքներն է թափեր։

Ի՞նչ լավ է հոտ. կարծես թե դա՞շտն է՝ հսկա
Ուխտավոր մ՝այդ գերեզմանին, զի տեսա
Անմեռուկներ ինքնաբույս,
Զոր կապած է բնական ոլոռ մը խաչին,

Եվ համբուրող շրթունքը բոց կակաչին՝
Քարին ծռած սիրահույզ։

Խոնարհեցա, և հոգիս լի աղմուկով
Դատարկեցի մեռածին լուռ սնարին քով,—
Գյուղի գիշեր մը երբեք
Ա՜ինքան լավ չի ծծեր ողողանչը զանգին՝
Որքան ծծեց մահվան այդ փոսը լռին
Հովզույս ճիչերն հուսաբեկ։

Խոնարհեցա, և կարծես ինձ հետ բոլոր
Թնությունը հոն խոնարհեցավ, ահավոր
Մտվերին մեջ ծնրադիր.
Եվ մթացավ երերուն սիրտը սրտիս՝
Խիզախորեն ընկղմելու համար դիս
Խորհուրդին մեջ սեածիր։

Վար, վար,— լա՛ռ, ճրպո՛ւռ, սյուքե՛ր, լռեցե՛ք.
Դագաղին խորը չի հասնիր ձայնն երբեք.
Գերեզմանին քարին տակ
Մայր-լռությունն է բանտարկված։— Վար, վար, վար,
Վի՜հ մութին պես անհատակ։
Կխարխափեն մտքիս թևերն. ո՞ւր է, ո՞ւր,

Վախճանողին գացած ճամփան. ո՜հ, ի զուր
Կփընտրեմ հոն իմ շուրջ.
Անոր անունն ի՞նչ է, կամ ի՞նչ է անունն
Անդրշիրմի եղածին, ո՞ւր է Անհունն,
Ո՞ւր է Խորհուրդն.— Աղջամո՞ւղջը...

Ըսի վերև, որ Վարուժանի հատորը անհավասար է։ Այն քերթվածներեն դուրս, զոր հիշատակեցի, մյուսները, առանց զուրկ ըլլալու մերթ գեղեցիկ իմաստներե ու սիրուն տողերե, թույլ են, երբեմն նույնիսկ տափակ։ Ու նույնիսկ այն քերթվածները, զոր հիշատակեցի հիացումով, զերծ չեն ձևի թերություններե։ Գրողի մը մեջ միայն և է՛ն առաջ թերություններ տեսնել և անոնց մեջեն նկատել անոր գործն ու տաղանդը, անոնցմով մրոտել և ուրանալ ինչ որ կա անոր մեջ գեղեցիկ և առողջ, գձուձ հոգիներու և կարճատես մտքերու վարմունք է։ Կան գրողներ, որ բազմաթիվ տկար արտադրությանց հետ տված են մեկ կամ երկու հզոր ու կատարյալ գործ. ճշմարիտ քննադատը կնկատե է՛ն առաջ այդ դրական տարրը գործին մեջ։ Հյուկոյի գործերուն, որոնց թիվը հարյուրը կանցնի, մեկ չորրորդ հազիվ պիտի ապրի, բայց այդ մեկ չորրորդը այնքան շքեղորեն ուժեղ է, որ մյուսներուն տկարությունը ոչ մեկ կերպով

չի կրնար վնասել անոր անմահութեանը։ Ժամանակը, որ մեծ ընտրողն է, կուգա, կավելի կտանի ինչ որ թույլ է, ու կպահպանե ինչ որ կարող է դիմանալ դարերու կրծումին։ Սակայն եթե սխալ է գրողի մը մեջ թերութիւնները միայն տեսնել, նույնքան սխալ պիտի ըլլար զանոնք բնավ չնկատել։ Երբ մանավանդ կգտնվինք հանդեպ նորածիլ տաղանդի մը, որ իր ճամփան դեռ նոր կբանա, անհրաժեշտ է իրեն ցույց տալ իր առաջին էջերուն մեջ գեղեցկութիւններուն հետ ինչ որ կա տկար, ատով իրեն օգնած կըլլանք ոչ միայն հզոր ներշնչումով ու խոր զգացողութիւամբ բանաստեղծ մը ըլլալու, ինչ որ Վարուժան է արդեն, այլև անթերի արվեստագետ մը, ինչ որ ըլլալու համար բոլոր ձիրքերն ունի։ Վարուժանի թերութեանց ամենեն աչքի զարնողը տեսակ մը «վարժապետական» նոթ է, որ հաճախ կուգա ավրել իր ներշնչմանց մաքրութիւնը, դանդաղեցնել իր թռիչքը նույնիսկ իր ամենեն գեղեցիկ քերթվածներեն ոմանց մեջ, արձակունակ ու հասարակ գույն մը կբերե կսահեցնե իր քերթողական երանգապնակի վրա.

Երիտասարդ, բայց շուտ ճանչցած շատ բաներ...
...Չի մարդս այնքան կշտապի մեջտեղեն
Վերցընելու իրեն նմանը արդեն.
...Ազրատութիւնը զմարդ կրնե ախտավոր.
Բյուր գինովին ինն հազարն են չքավոր.
...Ո՜հ, փոթորկե փոթորիկ մի՛ հուզեք զայն,
Այսինքն խոլ բարկութենե բարկութիւն։
...Սպիտակ էջ, որուն մյուս կողմն է գրված
Անպատճառ բան մը մահեն։

Հատորին մեջ կան քանի մը քերթվածներ, որ ամբողջապես վարժապետական են նյութի հղացմամբն ու արտահայտության ձևովը («Դաստիարակը», «Տղաք, ներեցեք», «Չորս տարեկանի մը նամակը»), ահա քանի մը տողեր, որ գաղափար կուտան.

Մի՛, մի՛ ծեծեք։— Ի՞նչ, խառնակե՞ց ձերին խաղ.
Կամ թե անգետ և դիպվածով, մտազբաղ,
Ձեր գնդակին զարկավ ոտքով մեկեն մեկ,
Թափեց մելանը թուղթերնուդ, ներեցեք,
Ո՜հ, ներեցե՛ք, զի հայ մըն է, մեր եղբայր։

(Դաստիարակը) թոք կսպառե, միտք կլլկե, շունչ կուտա,

Եվ չի խորհիր իր վերքերուն.
Մանկութեան դեմ դրած ամբողջ ծերութիւնն՝
Կբաժնե իր ծովը բազում լճի վրա...
Վսե՞մ կուլում... և այլն։

Ասոնք հրապարակագրություն են կամ ճառախոսություն, բայց ոչ բանաստեղծություն։ «Դաստիարակը» քերթվածը տասն անգամ արդեն ատենաբանված է մեր մեջ, ու շատ լավ կերպով, Ռեթեոս Պերպերյանեն։ Վարուժան մեզի ուրիշ բաներ ունի ըսելու, ավելի նոր, ավելի ուժեղ, իր բանաստեղծի սրտին խորեն ժայթքած, իր քնարը ատո՛նց միայն թող պահե։

Այդ նոթը Վարուժանին մեջ եկվոր է, իր բնության ու խառնվածքին զավակ չեմ կրնար ընդունիլ զայն։ Պետք է— ատ ալ — մտած ըլլա իր մեջ Մխիթարյան միջավայրեն, որուն գրականության ժխտական կողմերեն մին կազմած է ան և որմե Ալիշաններն իսկ չեն կրցած զերծանիլ։ Հյուկոյին ալ ներգործությունը կարելի է տեսնել հոս, որովհետև ոչ ոք այնքան «վարժապետ» է, նույնիսկ «տիրացու», որքան Հյուկոն ամեն անգամ, երբ թևերը հոգնած ըլլալով, աթոռի մը վրա նստած քարոզ տալու կելլե։ Արդ, ոչինչ ավելի անհաշտ է «բանաստեղծության» հետ քան «քարոզը». բանաստեղծությունը պետք է երգե, ոչ թե տրամաբանե, դատախոսե, ապացուցանե։ Ու ասով չեմ ուզեր սահմանափակել բանաստեղծության ոլորտը. ան այնքան լայն է, որքան տիեզերքը, ամեն բան, գիտությունը, փիլիսոփայությունը, ընկերական հարցերը, ինչպես բնության գեղեցկություններն ու սերը, ու նույնիսկ կաթիլ մը ցող կամ ճանճի մը բզզյունը կրնան նյութ ըլլալ բանաստեղծության, պայմանավ սակայն, որ քերթողին հոգին հաջողի հալեցնել, աննյութականացնել, թևավոր ու թրթռուն ու գեղեցիկ դարձնել այդ բոլորը։ Ոչինչ ավելի դյուրին պիտի ըլլա Վարուժանի համար, քան իրմե դուրս նետել այդ անախորժ տարրը, որովհետև իր հոգին թևեր ունի ի բնե իրեն շնորհված և շատ զորեղ, ու այդ թևերը՝ երբ կթրթռան՝ զմայլելի երաժշտություն մը կարձակեն։

Ուրիշ թերություն մը, պատկերներու և բառերու անճիշտ կամ անճաշակ ընտրությունն է, որ մերթ, նույնիսկ լավագույն կտորներուն մեջ, կնկատվի.

Կտրուփե մեջս երգերու սաղմն, կսպասեմ.
Ե՞րբ պիտ տրվի անոր ծնուցիչ քո համբույր։

Պատկերը ճիշտ չէ, քանի որ «սաղմ»-ը բնախոսապես արդյունք է «ծնուցիչ համբույր»-ին, և գոյություն առնելե հետո ա՛լ պետք չունի որևէ համբույրի սպասելու։

Անոր վրա պիտի սիրտս հար քրտընի.

«Սիրտ մը որ կքրտընի», աղվոր չէ, և բնական չէ պատկերը։

Կամբուեցի, կոփեցի...

Այս բառերը, գործածված՝ սատանին դեմ բանաստեղծին պայքարը նկարելու համար, գռեհիկ են, քմծիծաղ կարթնցնեն, պայքարին մեծության ու վեհության համապատասխան բառեր չեն։

Կան վերջապես Վարուժանի քերթվածներուն մեջ տաղաչափական անփութություններ. ըսի որ քաջ գիտե հայկական տաղաչափությունը, և զայդ կապացուցանեն իր տողերուն մեծամասնության կուռ շինվածքը, դաշնակավոր սահքը, շեշտերու գիտակից կիրարկումը. բայց դժբախտաբար Վարուժան մերթ անհոգության նշաններ կուտա, իմաստին լիալիր արտահայտմանը համար տաղաչափության պահանջները զանց կառնե։ Ատիկա արգեն գրեթե բոլոր հայ բանաստեղծներուն թերությունն է, Ֆրանսացի հետին բանաստեղծը տաղաչափական օրենքներուն կճգնի պատշաճեցնել իր ներշնչման թռիչը. ոտանավորը երաժշտություն է ամեն բանե առաջ, ու ոևէ մեղանչում երաժշտականության դեմ աններելի պետք է ըլլա բանաստեղծության մեջ. մեզ մոտ, բանաստեղծը՝ նեղը մնալուն պես՝ կզոհե երաժշտականությունը։ Հյուրմյուզն ու Պեշիկթաշլյանն են, որ ամենեն ավելի հարգած են այդ պայմանը իրենց տաղաչափված էջերուն մեջ. ու նույնիսկ Պեշիկթաշլյանին մոտ կգտնենք անկարելի տողեր, ինչպես հետևյալը...

Թե երգք թռչին սիրողաբար...

Վարուժանի քերթվածներուն մեջ բավական՝ բազմաթիվ տողեր կան աններդաշնակ, ուր բաղաձայնները կխճողվին, մերթ տողն անընթեռնելի դարձնելու աստիճան.

Երբ տվիր անոր թանգ ավարի մ'հղփություն.
Կծնանի,— չի կար. է
Լուռ ու տձև,

(Է-ն տողին ծայրը ստորոգելիներեն առաջ՝ խորթ է աշխարհաբարի մեջ)։

—Երգեհոնիկ մ'է միայն իր մեծ հարստություն,
...Դիակ մ'ըլլալուն համար սոսկ.

...Որ բաժանում մը մրխեց խոր, դժնդակ.
...Տրվելով կրոնն՝ մարդուն, բառին՝ ոտնավոր։

Այս թերությունները Վարուժան ինքն իսկ պիտի նկատե անշուշտ

և պիտի ուղղե իր ապագա արտադրության մեջ։ Իրմե մեծ բաներ, ու կատարյալ բաներ կհուսանք։ Իր սկզբնավորությունը մին է ամենեն շքեղներեն, որ հայոց մեջ հայտնված ըլլան։ Մեր այս ցավի ու սուգի օրերուն մեջ մխիթարություն մըն է տեսնել, իրմով, անգամ մը ևս, հոյակապ ապացուցումը հայ հանճարին հարանորոգ կենսունակության, հակառակ մեր վրա ծանրացող անողոք ճակատագրականության բոլոր խեղդիչ ու ջախջախիչ պայմաններուն։

ԱՏՈՄ ՅԱՐՃԱՆՅԱՆ

Ա. «ԴՅՈՒՑԱԶՆՈՐԵՆ»

Ոտանավոր ու արձակ գրությունները, զոր Յարճանյան հրատարակած էր արտասահմանի մեկ քանի թերթերուն մեջ, այս հատորին լույս տեսնելեն առաջ, ի հայտ բերած էին ջղուտ ու նուրբ արվեստագետ մը, որուն մեջ սակայն հզոր ու որոշ ինքնություն մը կպակսեր տակավին, այդ առաջին շրջանի բոլոր արտադրությանց մեջ Մեթերլինքի և Վերհարրնի ազդեցությունը ծայրահեղորեն տիրական էր. այս հատորին մեջ, Յարճանյան ի վեր կհանե ներշնչում մը բացարձակապես անձնական, և իր արտահայտության ձևին մեջ է միայն, որ իր երկու սիրած վարպետները կշարունակեն պահել իրենց խորունկ դրոշմը։

Յարճանյան կերգե սրբազան հուզումը, զոր բռնության դեմ ցցվող հայ ընդվզումը կազդե մտավորական երազանքներու մեջ գինովցած բայց և գործել չկրնալեն տառապող իր պատանի հոգիին։ Եվ չեմ գիտեր բան մը ավելի սրտաշարժ, քան այս հիացական ու ցավատանջ կարկառումը երազող հոգվույն դեպի գործին դժնդակ արորին լծված արյունոտ եղբայրներուն դյուցազնական տաժանքը։

Առաջին քերթվածին մեջ, անոնք, գործողները, «հսկայաձև ռահվիրաները մարմարեղեն հույսին, ըմբոստացումներու ապառաժներեն իրենց ճակատներն արյունած...» կհրավիրեն զինքը, երազողը, միանալու իրենց մռայլ ու եղերական կարավանին.

«Ու վայրկյան մը մթաստվերին մեջեն,
Եթե կրնաս, անհունորեն ետիդ դարձիր,
Ու տես մեռելներուն հողեն ժայթքումն հանկարծական
Որ գերեզմաններուն ու քանդված քաղաքներուն տակեն,
Մեկեն ի մեկ փրկության ոգումներեն շնչավորված՝
Մեր եռեռեն, այս իրիկուն, տենդոտորեն ոտքի,

Դեպի հույսին բացաստանները պիտի քալեն։
Ու անոնց հավատքին հրայրքը նայե՛ ու սիրտ ա՛ռ,
Տե՛ս իրենց ծանր քարերն ու սև խաչերը փայտե
Հողեն հոգնած ուսերնուն վրա։
Տե՛ս իրենց պատանդներեն իրարու արյունե կարմիր՝
Խավարներու հովերուն տարածած,
Ու տե՛ս, տե՛ս, բոլորն ալ մեկ մեկու առջև կարծես թե ծնրադիր, տե՛ս,
Իրարու համար անգամ մըն ալ մեռնելու երդումներ կընեն...
«Ու ամենքն ալ հոն պիտի ըլլան, այսօր, մեզի հետ,
Անոնք, որ կույր են ու անոնք, որ անկար,
Եվ անոնք, որ իրենց վիզերը խելահեղորեն
Մեկ մեկու հոգիի համար
Դեպի եղեռնը երկարեցին...
Ու անոնք ալ, որ մեր վարպետներն եղան ընդվզումի,
Որոնց խոսքերը մեր խոսքերն են, այս իրիկուն,
Ու իրենց հոգին մեր պաշտամունքը առ հավետ։
Ու տակավին ամբոխը կա անոնց՝ ոմոնց սարսափին
աղեկ որ չընդհարեցար դուն.
Միայն մենք գիտենք, թե անոնց մարմինները որչափ ամեհի են.
Ու իրենց աչքերն ու շարժումները որչափ ահարկու,
Ու այն արյունը, որ եղբայրներու գլխատումեն
իրենց մտքովը ըմպեցին,
Օ՜, անոնց գանկերուն մեջ՝ հաղթանակներու ծարավեն
գինով արծիվներու
Անսահման թևաբախումները բացավ...
«Ու դեռ մայրեր կան, արգասաբեր ու հերարձակ,
Որ վերը վրաններուն մեջը դաշտավայրին,
Իրենց հուռթի ու լուսավոր ու լայն կողերուն տակ,
Մեր վաղորդայնները նորեն փառավորելու համար
Մոլեգին դյուցազներու կարմիր երկունքը կապրին...։
Բայց հիմա, որ առավոտը պայծառորեն մոտեցավ,
Ու դուն մեր հոգիները ճանչցար,
Ո՞վ երազելեն ոգեվարող եղբայր,
Նկո՛ւր, որպեսզի մեր շրթունքները քու շրթունքներդ ընդունին
Վարկյանի մը ու հավիտենականության մը համար...։
Ու դեռ արյունին նվիրական պղծումեն չկարմրած
Սա՛ փայլակե սուրը կտրիճորեն ձեռքդ առ,
Ու անով մեր ամենուն սուրերը, սա աստղերուն կարմրությանը տակ,
Երդումներուն երդումը ընելեն խաչանե՛...
Երդումներուն երդումը ընելեն խաչանե՛...
Ու գեթ անգամի մը համար՝ ինքնիրմեդ դուրս գահավիժելեն՝
Եթե կրնաս, մեզի հետ քալե՛։ Ահավասիկ ճամփան։»

Երկրորդ քերթվածին մեջ կտեսնենք երազողը, որ կպատասխանե հրավիրին՝ կընկերանա հոգվով կովողներուն գումարտակին, և կերգե փառքն անոնց, որ «կործանումի ու փրկության ճգնաժամերուն,— շղթայազերծումներու ահազանգերը հնչեցուցին,— պատնեշներեն պատնեշները ու, ահեղապես, աշտարակե աշտարակ,— ու բանտերեն, բերդերեն ու թիարաններեն անդին,— դեպ ի քաղաքները ստրկության»։

Երրորդ քերթվածին մեջ, երազողը, որ պայքարողներուն հետ, առավոտին մեջեն, ընդվզումին զառիվերը կմագլցի, կլսե ընդերկրյա ձայնը անոնց, որ գործին համար մեռան, բայց որոնց ստվերները միշտ ակընդետ կհետևին իրենց հիգը շարունակողներուն քաղցր ոտնաձայնին.

«Մենք մեռելներս ձեզի հետ ենք այս առավոտ,
Այլևս մեր բաղուկի ոսկորներուն ճարճատյունները,
գիտե՛նք, դիվային,
Սրունքներնուս երկայնքն ի վար ու ձեր ականջին
Մահագուժորեն պիտի հնչեն...
Քանդի, մեր կմախքները՝ ա՛լ դագաղներեն ու ավերակներեն դուրս.
Սա՛ ծաղիկներուն նման, վերեն հորդող լույսերուն տակ,
Օ՜, ավետիս ձեզի, ա՛լ կսկսին պայծառորեն մսավորվիլ...

«Ու նորեն մեր այսչափ ատեն,
Խավարով ու հողով ու հուսահատությունով լեփլեցուն
Կոպերնուս տակը, այս պահուն,
Մեր նայվածքները լիճերու նման կբացվին
Ու մեր խեղճ շրթունքները մահեն տրորված,
Օ՜, գթացե՛ք, մայրականորեն, ձեր հրավառ ճակատներուն պետք ունին...։»

Բայց մեռելներուն ցնցիչ կոչին հետ, երազողը կլսե և անսպառ ժայթքումը մայրերուն արգանդին, որ վաղվան հերոսները կստեղծե գործին անընդհատական առաջխաղացությանը համար.

«Ու ես... տեսա որ, բյուրավոր ու բյուրավոր
ծննդաբեր մայրեր սևահեր,
Իրենց նորածին զավակները ձեռքերնուն մեջ ու խելահեղորեն
դեպի վեր՝
Արյունոտած հորիզոններուն ամբարձուցին՝
Զանոնք առավոտին ճառագայթներուն խորը մխրճելով,
Հավիտենականորեն մկրտելու համար...։»

Չորրորդ քերթվածը կպատկերացնե բախումը, և հոտ, պայքարին պայթումեն առաջ երազողը կերգե հառնումը, անհունորեն հուզիչ, հին պայքարներու հերոսի մը, վաղնջական հայ քաջի մը ուրվականին, որ թունդ ելած իր զավակներուն գերության ծոցեն վերականգնումեն, կուգա օրհնել զանոնք և սրտապնդել.

«Ու երբ լուսինը եղերականորեն դեպի երկինք կբարձրանար,
Խավարներուն անդունդները իր հրդեհներն անտառելեն՝
Հանկարծ հորիզոնին վրա, ուրվական մը, թերևս արքա մը մեր հին
փառքի օրերեն

Որ հողեն հառնած ըլլալու տաբօրինակ երևույթն ուներ,
Իր խույրը ձեռքը՝ գրահը արեգակի նման կուրծքին՝
Ու իր վահանը ամբոխին դիմացը բռնելեն,
Կույր աստվածի մը հանդիսավորությանը համեմատ, ծանրաղեմ ըսավ.
«Զավակնե՛ր, նախ սպասեք, որ սա աչվրներուս մեջեն դարերե ի վեր
Գերեզմաններեն լեցված դեղին հողը վար թափելեն ձեզ խոսիմ...

. . . . . .

«Ու ահավասի՛կ, ձեր հոգիները կճանչնամ ձեր ճակատներուն բոցեն
Ու ցեղիս արյունին ձեր մեջ եռալը երշանկորեն մտիկ ըրի...
Գիտեմ ձեր ցավը, որուն մոլեգին ծնունդն է ձեր ըմբոստացումն այսօրվան.
Իմացա, գլուխս ձեռքերուս մեջ ու դագաղիս տախտակներուն արմնկած,
Իմացա բոլոր ճիչերն ու հծծյունները անմեղներու անագորույն կոտորածին..
Ու սերունդներուս սրտերեն հոսած արյունը կրակե,
Ավա՜ղ, հողին մեջեն սուզվելով իջա՜վ, եկա՜վ իմ խեղճ ճակատս թրջելու...
«Բայց արշավելե առաջ, նախ՝ հորիզոններեն առագաստեցե՛ք
Սա՛ դրոշը, որ դրոշը եղավ մեր հայրերու հաղթանակին,
Ու ձեր քայլերը շտապելու ու հոգինիդ փոթորկելու համար
Պայծառատեսիս ունկնդրեցե՛ք, որ շունչիս մեջեն մեր վրեժը պիտի հնչե...»

Եվ այն ատեն, նույնիսկ կռիվն է որ կտեսնե, կերգե երազողը, կռիվը որ, իր ավյունով արբշիռ երևակայությանը մեջեն, արդեն կերևա վերջնական հաղթանակին ծիրանիով պսակված.

«Այսպես մեր արհավիրքի ամբոխները կամքի զորավորներուն
Պղնձե ու կապարե աննվաճելի դուռներն եղան,
Որոնց դիմաց եղեռնը իր մարմինը բախելեն պարտասած,
Օր մը, վախճանական անկումի շարաշուք օր,
Իր ձեռքներովն իր ոսկրակույտերը քաղաքներու նման,
Մեր փառքի պատվանդանին տակը ահավոր,
Գերիաբար ծունկի եկած՝ կնդրուկի տեղ հրկիզեց...»

Հինգերորդ քերթվածին մեջ, երազողը կերգե աղեխիվ խղճի խայթը, որ պիտի ցցվի կովողներուն սրտին մեջ, երբ, հաղթանակին վաղորդայնին, մտածեն՝ թե իրենք, ազատության ու եղբայրության զինվորները, ստիպվեցան կյանքեր փշրել՝ իրենց իդեալն իրագործել կարենալու համար. ձայն մը, «դարևանդին վրա», կդառնա գուպարահաղթ ամբոխին.

«...Ինձի հետևեցեք դեպի քավությունը սա մրրկոտ ջուրին՝
Որ ավա՜ղ, մեր հայրերուն դիակներովը բեռնավորված,
Իր արհավիրքեն զանոնք այնչափ ատեն սա ապառաժներուն դիմացը
կփշրեր...

Եկե՛ք ձեր արյունոտ դաստակներն հուժկու,
Իմ արյունոտ դաստակներուս հետ,
Անոր արբագործող ալիքներուն մեջը մաքրելու,
Քանզի այն իտեալը զոր մեր երիտասարդի մտածումը պայծառ
Մեր գարավոր հողին համար սրբորեն քանդակեց,
Երբե՛ք, և ճշմարիտ կրսեմ ձեզի,
Այլևս ո՛չ հաղթանակներու ազատաբեր սուրերուն
Ու ո՛չ արյունին ահագնությանը պետք ունի»

Այն ատեն, ա՛լ անպետ համարելով իրենց ձեռքը ծանրաբեռնյալ պահել մահու գործիքովը, պայքարողները մեկդի կնետեն իրենց սուրերը.

«...Ու մեր ձեռքերեն խելահեղաբար արձակված սուրերը բյուրավոր,
Հեռավոր հողին վրա շանթերու պես հանկարծորեն խորասուզվեցան»

Վեցերորդ քերթվածին մեջ մայրերուն անուշ տեսիլքն է, որ կվերթևա, այս անգամ ոչ թե դյուցազներ հղացող իրենց պողպատե ազգանդը առավոտին մեջ շողացնելու, այլ կռիվեն հաղթական դարձած իրենց զավակներն օրհնելու ու դափնեպսակելու համար.

«...Հանկարծ լայն ու արգավանդ առավոտի մը նման՝ մեր
մայրերուն ծագումը հայտնվեցավ,
Որոնք սնուցանող կուրծքերնին իրենց քոդերեն մերկացուցած՝
Արտավանդի ոստերով բեռնավոր, ճակատներնուս համար,
Մեր ապառումեն գինով ու մեր կարոտեն արբշիռ, երգեցին,—
«Զավակնե՛ր, նախ մեզի մոտեցեք, վասնզի գիտենք որ,
Ձեր հոգնած ու խռովյալ ու իմաստուն
Ճակատներն ազատաբեր հերոսի,
Այլևս հիմա՝ մեր մայրական լուսեղեն ծոցերուն
Հանգչեցնող քաղցրությանը պետք ունին...»

Յոթերորդ քերթվածը, որ հատորը կփակե, Պայքարին վերսկսումը, Ոգորումին հավերժությունը կերգե։ Հիմա որ բռնությունը խորտակեցին, կովողները դարձյալ կելլեն դեպի նոր Գործը,— որովհետև Գործը անվախճան է— դեպի Գործը «Արդարության, Եղբայրության և Լույսի գրանիտե անվկանդ և հավիտենական Ոստաններուն հիմնաքարերը անընկճելիորեն կրելու»։

Ամբողջ հատորը տոգորված է մեծ ազնվության ներշնչումով մը, և ձեր կլուսավորվի հուժկու պատկերներով, որոնք երբեմն Վետաներուն տեսահման պատկերները կհիշեցնեն։ «Դյուցազնորեն»-ը ամենեն հզոր

տեսիլքներեն մին է, զոր հայ միտք մը հղացած ու պղնձի մեջ քանդակած ըլլա։

Հղացումը ամբողջական է և ներդաշնակ, բայց արտահայտությունը կդադրի երբեմն հղացումին վեհությանը համազոր մնալե։ Ոճը, խրոխտ գեղեցկություններու մոտ, ունի նաև տեղ տեղ տափակություններ կամ բռնազբոսություններ։ Երգին հրեղեն խոյանքը մերթ կընդհատվի ու կպաղի փաստաբանական պերճախոսութենե կարծես քաղված սապես տողերով. «Ու հետո, ու մանավանդ, ըլլալու համար Ա՛ն, որ պետք է ըլլալ վերջապես»։ Մերթ ալ պատկերը զորության գագաթնակետին հասցնելու ձգտումը, անճիշտ զառիթափի մը վրայեն սահելով, ծիծաղելիության մեջ կսայթաքի, ինչպես երբ Յարճանյան ցույց կուտա իր հերոսները, որ իրենց դանակը, փոխանակ թշնամվույն կուրծը մխելով շատանալու, «ակռաներնուն տակը կտրորեն» (?) և նույնիսկ «սիրք»-ի թուր կլլողներու պես, «իրենց պողպատե սուրերը փայլակներու նման կլափեն» (?)։ Տեղ մը Յարճանյան «ողջակիզումներու ուխտված սպիտակ (ինչո՞ւ «սպիտակ») տղա» անվանել կուտա ինքզինքը «մարմարեղեն Հույսին հսկայաձև ռահվիրաներուն» կողմեն, ուրիշ տեղ մըն ալ ինքզինքը «կրանիտե աշտարակի» մը կնմանցնե.

«Ու ես բլուրներուն վերեն ու դաշտավայրին վրա,
Անսահմանորեն ոտքի, ինչպես աշտարակ մը կրանիտե...»

և ասի անխուսափելիորեն բոհաֆ է, որովհետև դժվար է ըմբռնել թե ինչո՞ւ Յարճանյան այդ հսկա երևույթը կընծայե ինքզինքին։ Աններդաշնակության տարր մը կներկայացնե վերջապես այն ծայրահեղ անհամեմատականությունը, որ երբեմն դուրս կցատքե բանաստեղծին պատկերացումին և իրականության միջև, և հոտ պակասությունը ձևին մեջ չէ միայն, այլև հղացումին մեջ։ Բանաստեղծը իր հերոսներուն ճիգը հազթանակով արդեն պսակված կտեսնե, և այդ երազված ապագային նախատեսիլքը գեղեցիկ է, բայց տարապայման զորությունը, զոր Յարճանյան կընծայե իր կովողներուն, հոմերական արդուզարդը, զոր անոնց կուտա, ծայրահեղ արագությունը, որով զանոնք մաքառումեն հաղթանակին կհասցնե, տարօրինապես անհանգույն ըլլալով հայ ընդվզումին իրական պատկերին, անախորժ տպավորություն կթողուն։ Հայ կովողները։ Յարճանյանի քերթվածին մեջ, «կարմիր քղամիդներով անհունորեն փաթթված են», ու «ռազմադաշտը նկատելու համար իրենց խոլական երիվարները թշնամիին բեկորներուն վրա փոթորկոտորեն ու քառարշավ բոլորը մեկ արձակելե հետո, դարևանդի մը գագաթը կբարձրանան...». արդ, գիտենք, ավա՜ղ, որ մեր մաքառողները քղամիդ չունին, հաճախ երիվար ալ չունին, ու հետու են «թշնամիին բեկորները դարևանդի մը կատարեն դիտելու» հաճույքին մոտեցած ըլլալե։ Հագիվ հագված, հագիվ զինված, ցավագինորեն սակավաթիվ՝ ջարդվողներու, սահմանակներու, փախչողներու, լացողներու ամբոխի մը մեջ, տիեզերական վատությունովը պաշարված, ոտքերնուն տակ գլուխներնուն վերև ունենալով իր փտությանը մեջ դեռ շատ հզոր բռնության մը որոգայթները, աքցաններն ու լախտերը, անոնք,— իրական հերոսները հայ ընդվզումին,— կքաշկռտվին հևիհև, խելահեղ, դանդաչկոտ, կատաղությունով ու հուսահատությունով ալ գինով, մութի մեջ, մառախուղի մեջ անձայն գալարվող խոնարհ ու տաժանելի ոգորումներով։ Ու խորտուբորտ, փուշերով ցցված, վիհերով պատված, ու երկա՜յն, երկա՜յն է ճամփան, որթե ատոնք կքալեն և որմե պիտի քալեն ո՜վ գիտե դեռ որքան ատեն, մինչև հանգրվան հասնիլը։ Յարճանյանի երգը շատ ավելի հուզիչ պիտի ըլլար այդ մասին մեջ, որ ամենեն տկարն է հատորին՝ ըլլալով ամենեն ակադեմականը, եթե ան մեզի պատկերացներ ոչ թե անգո «ճակատամարտը», այլ խեղճորեն վսեմ մաքառումը, երկարաձիգ ու աղջամղջին պայքարը այդ մինավորիկ կովողներուն, որ կրանիտե լեռներու կատարը բարձրանալե հետո, ամբողջ երկաթե լեռներ կկրեն ուսերնուն վրա՝ ճրգնելով զանոնք իրենց ցավոտ մկանունքին ուժովը միայն հորիզոնեն անդին նետել, անոնց մահաբեր ստվերեն ազատելու համար դժբախտ հովիտները։

Յարճանյանի լեզուն առողջ և հարուստ աշխարհաբար մըն է, ուրկից սակայն պիտի բաղձայի, որ վտարված ըլլային կարգ մը պոռոտ ֆրանսաբանություններ («քայկիդ վրա նորեն վերադարձիր») ու քերականական խորթ ձևեր («գիտես որ պետք է բաղխվիլ անկե»), ինչպես և ծայրահեղ գործածությունը մակբայաձև վերադիրներուն (անխոնջորեն, հանկարծորեն, տենդորեն, ևն), որոնք շատ ավելի բազմաթիվ են Յարճանյանի յուրաքանչյուր քերթվածին՝ քան Վերհարրնի ամբողջ հատորի մը մեջ։

«Դյուցազնորեն»-ը թեպետ ոտանավորի ձևով տպված, ոևէ տաղաչափական կանոնավորութենե զուրկ է, և առնչություն չունի Վերհարրնին, Հանրի տը Ռենիեին, Վիելե-Կրիֆենին «ազատ ոտանավորին» հետ, որ որոշ կշռություն մը կպահե և հանգը բոլորովին չի վտարեր։ Յարճանյանի քերթվածները ավելի կհիշեցնեն Մեթերլինքի մեկ քանի հատվածները,— ինչպես «Հիվանդանոցը»,— որոնք երգեցիկ արձակ են, քան տաղաչափյալ բանաստեղծություն։

Բ. «ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՁԱՀԵՐ»

Յարճանյանի նոր հատորը, մինչև ցարդ իր հրատարակածներուն մէջ ամենեն հարուստը և բազմազանը, սահմանված է փառավոր ու հավերժական կյանքի մը, իբր մեր ժամանակակից բանաստեղծության ամենեն շքեղ, ամենեն տոհմիկ և ամենեն ուժեղ էջերեն մեկը։ «Դյուցազնորեն»-ը և «Հայորդիներ»-ու շարքը երևան հանած էին ճշմարիտ դյուցազներգակ բանաստեղծ մը. այստեղ Յարճանյան կհայտնվի քնարերգակ. բայց գեղեցկագիտությունն ու ներշնչումը միշտ նույնը կմնան. ինչպես որ զուտ դյուցազներգական էջերուն մեջ քնարերգությունը կիշխեր, այս քնարերգական քերթվածներուն մեջ ալ դյուցազներգական շունչն է որ կտիրապետե։ Խառնվածքի կուռ միությունը Յարճանյանի հատկանիշներեն մին է արդեն, հատկանիշ մը, որ այդ քերթողին ուժը կկազմե, և կերպով մը՝ թերությունն ալ, որովհետև իր բոլոր էջերուն մեջ ներշնչումն ու ձևը միշտ ինքնանման մնալով՝ այդ բանաստեղծությունը ճապուկ այլազանության մը, անակնկալ հայտնության, հակապատկերներու հրապույրը չունի, բայց գեղեցկությունը, որ կա այդ միության մեջ, այնքան բարձր է ու հզոր, որ գանգատելու պատճառ մը չունինք անոր մշտանույն ինքնահայտումեն։ «Հոգի» մըն է ազնիվ, խրոխտ, մաքուր, որ կաղաղակե իր ցավը, զայրույթը, վրեժի ծարավը հանդեպ հայրենի աղետքին և իր հրճվանքը, զորովը, հիացումը անոնց համար, որ կպայքարին, և այդ աղաղակն այնքան զմայլելի է իր հնչյունի քաղցրությամբ, որքան զայն արձակող զգացման զորությամբ։ Ըսել չէ թե միությունը, զոր կնկատեմ Յարճանյանի մեջ, զերծ եղած ըլլա ամեն բնաշրջումե, առաջին օրեն իսկ վերջապես պատրաստ ցատքած ըլլա քերթողին մտքեն, ինչպես հին օրերու Աթենասը՝ համակ սպառազեն՝ ժայթքեց Արամազդին ուղեղեն։ Այս հատորը հայելին իսկ է այն բնաշրջության, որմե անցած է Յարճանյանի տաղանդը. ասոր մեջ կգտնենք կտորներ այլ և այլ ժամանակներու մեջ գրված, սկսյալ առաջին քերթվածեն («Կոտորած»), որով բանաստեղծին անունը հայտնվեցավ հայ հասարակության, մինչև վերջին անտիպ կտորը («Ասպետին երգը») դեռ քանի մը ամիս առաջ գրված։ Ակներև է այդ բնաշրջությունը, բայց և շատ պարզ. Յարճանյան իր ճամփան գտած է կարդալով Վերհարրնը, Մեթերլինքն ու Հանրի տը Ռենիեն, իր առաջին արտադրությունները այդ վարպետներու խորին ազդեցությունը՝ մերթ նմանողության, փոխառության հասնելու աստիճան՝ ցույց կուտային, անոնցմե մեկ քանին միայն Յարճանյան մատուցած է այս հատորին մեջ, «Կոտորած», «Ավերումի գիշեր», «Թաղումը», «Հոգնություն»։

...Ու մոտավոր ու հեռավոր քաղաքներուն բոլոր մահազանգերը նվիրական,
Երկպառորեն, մահագուժորեն ու բարեպաշտորեն,
Արևեն այրի ու ամայի գիշերին մեջ ըսին թե՝
Բարեկամ մը, անտառներու եղնիկներուն ու լիճերու կարապներուն
Ու երկայն ու ահավոր ծառերուն ու հովերուն հետ,
Երկյուղածությունով իր բարեկամը կթաղե...
Գիտեք թե հեռավոր ու մոտավոր քաղաքները բոլոր
Օրերուն ու մարդերուն ոճիրներեն քանդվեցան...
Կարապներն ու խարտյաշ եղնիկները հովերուն մեջ խեղդվեցան...

Այդ կարգի կտորներուն մեջ, զոր Յարճանյան ընտրած է այս հատորին մեջ մտցնելու համար, հիշյալ վարպետներուն ազդեցությունը միշտ զգալի է, բայց անոնց մեծ մասին մեջ այդ ազդեցությունն արդեն ազատ ու ինքնատիպ ձևով մը կրված կերևնա։ Հետո Յարճանյան բոլորովին յուրացուց ինչ որ առած էր այդ եվրոպացի վարպետներեն, և իր մյուս քերթվածները միմիայն իրն են, թեպետև միշտ պահելով խնամություն մը այդ մեծ բանաստեղծներու գեղեցկագիտության հետ, և ատիկա շատ հասկնալի է, որովհետև հակառակ իր զուտ եվրոպական զարգացման, Յարճանյան խորապես «արևելքցի» է երևակայությամբ և զգայնությամբ— եթե ոչ մտածմամբ և ճաշակով, զոր Արևմուտքի հետ շփմամբ է կերտած։ Իր հոգին ուղղակի կսերի այն հին երգիչներեն, որ Վեդաները կամ Աստվածաշունչը երգեցին։ Արդ, Մեթերլինք և Վերհարրն ու նույնիսկ, թեպետ նվազ չափով, տը Ռենիե, տարապայմանին, ծայրահեղին, խորհրդավորին ու հանդուգնին, գերագույն նրբության և գերագույն հուզման համար իրենց ունեցած տարփանքովը, շատ մոտ են Արևելքի հին պոետներուն. անոնց բանաստեղծության ներգործությունը Յարճանյանը կառաջնորդեր դեպի բուն աղբյուրն այդ բանաստեղծության, դեպի նույնիսկ հարազատ իսկությունն իր խառնվածքին մեջ թաղված արևելյան առհավությանց։ Այնպես որ Յարճանյանի այս հատորին այն հոյակապ էջերը, որ կտիտղոսվին «Արյուն», «Ափ մը մոխիր, հայրենի տուն», «Հիշատակ», «Գթություն», «Արյուն է որ կտեսնեմ», «Հայրենի աղբյուր», «Արցունքներս», «Խավար», «Ծարավ», «Ես երգելով կուզեմ մեռնիլ», «Սուրիս կայծերուն առջև», «Ասպետին երգը», ինչպես և «Դյուցազնորեն»-ին և «Հայորդիներ»-ուն գեղեցկագույն կտորները, Արևելքի քնարեգրության ուղն ու ծուծն իսկ կկրեն եվրոպական ճաշակի քուրային մեջ զտված, բայց իր ինքնությունը հզորապես պահպանելով։

Հերետիայի նվիրված հոդվածիս մեջ, ջանալով բանաձևել ինչ որ հիմնական տարբերությունը կկազմե ռոմանտիկ ու դասական գեղեցկագիտությանց, դիտել կուտայի, թե Արևելքի բանաստեղծությունն ընդհանրապես ռոմանտիկ է,— բացի պարսկականեն։ Յարճանյան, իբր ճըշ-

մարիտ արևելյան միտք, անխառնորեն ռոմանտիկ է. իրմե ավելի ռոմանտիկ բանաստեղծ չենք ունեցած, նույնիսկ անոնց մեջ, որ պատմականորեն «ռոմանտիկ» կոչված շրջանին ապրած են. իր արվեստը բացարձակ ներհակն է դասականին։ Մեր Ակնը կրնա պարծենալ, որ տված ըլլալե հետո այն հրաշալի դասականը, որ Քուչակն է, մեր օրերուն մեջ տվավ Հայության՝ այս հերարձակ, մրրկաշունչ ու փայլակնացայտ ռոմանթիկը, որ Ցարճանյանն է։

Ահա՛ քանի մը հատվածներ է՛ն աղվորներեն և որոնց մեջ սաղմոսերգուին ցավագին ու միանգամայն հրաշունչ քնարերգությունը կվերապրի կարծես.

Ավա՜ղ, առաջ արշալույս մը կար, որ քաղցրությամբ կծագեր,
Ու իմ հավիտենական երազս երջանկորեն
Անկեց ինծի մտածումիս համար ծաղկաղաշտեր կհորիներ
Եվ պսակներ իմ բաց ճակատիս և քնարիս մանկական.
Ավա՜ղ, արշալույս մը կար, որ բուրաստանի նման կծաղկեր,
Երբ անմեղության ավազանը հայելին էր իմ հոգիիս։
Երբ լիճերուն եղեգները իմ շունչիս մեջեն խաղաղությունը կերգեին...
Երբ մայրական հույսին ստինքները հափրացումն էին շրթունքներուս,
Երբ աղամանդե լուսնկան առաքյալն էր և մտածումս ահագին,
Եվ կապույտ խորությունը անրջային ջուրերուն
Աստվածային ապարանքն էր իմ դողդոջուն և պատանի ստվերիս...
Բայց այսօր, բայց այսօր, ես այդ ամենուն առջևեն
Սարսափահար ու աչքներես փակած կփախչիմ,
Վասնզի գիտեմ, որ բոլոր արշալույսները Նվիրական հողին
Տարիներե ի վեր մեր արյունե՜ն են կարմիր։
...Հայրենի տուն, հավատա՛, որ մահես հետո
Քու ավերակներուդ սևին վրա՝ իմ հոգիս
Պիտի գա, որպես տատրակ մը տարագիր,
Իր դժբախտի երգը և արցունքը լալու։
Բայց ո՞վ պիտի բերե, ո՞վ պիտի բերե, ըսե՛,
Քու սրբազան մոխիրեդ ափ մը մոխիր,
Մահվան օրը, իմ տրտում գագաղիս մեջ,
Հայրենիքս երգողի իմ աճյունին խառնելու...

Այդ հիշատակը մանկության ջինջ օրերուն Ակնա զվարթ հովիտներուն մեջ ծաղկած, այդ հիշատակը, որ կցցվի կեսիրական, գրեթե երազային և անով ավելի ևս հանկուցիչ, ու հրապույրով մը, որ անգութ է՝ որքան քաղցր, երբ կշողա աղջամուղջներուն վերև աղետքին, որ եկավ ծանրացավ հայրենիքին բոլոր ծաղիկներուն, աղբյուրներուն ու արշալույսներուն վրա, այդ հիշատակը հին օրերուն, որոնք, որքան ալ ջրլայլին օրեր ազատության, գեթ խաղաղորեն կթավալեին հայրենի հողին

գորովոտ քաղցրությանը մեջ, Ցարճանյան հաճախ կերգե զայն՝ զմայլելի շեշտերով, ինչպես «Արցունքներս» տաղին կամ մանավանդ «Հայրենի աղբյուրին» մեջ, հնդիկ քնարերգության ամբողջ մաքրությամբն ու քնքշությամբը տոգորուն.

...Ջեմ մոռցած զքեզ, ո՜վ հեռավոր ու եղբայրական աղբյուր.
Կհիշեմ, երբ կուգայի թրչել քու ջուրիդ խորհուրդներուն առջև
Իմ երջանիկ տղու աչքներս ու ճակատս պայծառ,
Եվ դուն, գորովագութ ազատության մտածումին նման,
Իմ արևս ու կյանքս ու հոգիս կքաղցրացնեիր...
Երբ իմ թևերս դեռ չէին կոտրած սա հուսահատության ապառաժներեն,
Երբ նայվածքներս ուրախությենե կփակեի
Երազված հաղթանակներու արեգակին ի տես...
Ջեմ մոռցած այն առավակը ոսկիե մամուռով,
Որ քու երգիդ հոսանքին առջև կակոսվեր.
Եվ ես մանկական քայլերովս՝ երազելեն՝
Իրեն ճամփեն տարփանքով ու գինովությամբ կերթայի,
Ինչպես կերթան անոնք, որ սպասված հույսին կուզեն հասնիլ.
Բայց դեռ կհոսի՞ս արդյոք, ո՜վ հայրենի աղբյուր,
Այնչափ հստակ, որչափ էր արշալույսն իմ անցյալիս։
Դեռ վե՞ի՞ն են արդյոք սա ջուրերդ հին օրերու,
Եվ քու ձայնդ դեռ ե՞րգ մըն է թե աղաղակ մը վրեժի...
Եվ չեկա՞ն արդյոք, ըսե՛, չեկա՞ն, մեր արհավիրքի օրերուն մեջ,
Դառնացնելու քու պայծառությունդ ադամանդե,
Իմիններուս անմեղ արյունեն՝ քանի մը կաթիլ արյուն...

Ու կարդացեք այն սքանչելի էջը, որ «Գթություն» տիտղոսը կկրե, անոր մեջ Խայամյան դառն հեգնության մեկ արձագանքը պիտի լսեք, Հոբի աղաղակն հիշեցնող շեշտի մը խառնված.

Տե՜ր, հիվանդներուն և լքվածներուն սնարեն
Ոճրագործներու ու իրենց սուրերուն սարսափը հեռացուր;
Եվ ջուրերդ Ցող քիչ մը իրենց կատաղությենեն հանդարտին,
Որպեսզի մահապարտները, աքսորանքի նավերուն մեջ,
Թեև քեզի անիծելով, բայց գոնե խաղաղությամբ ոգեվարին...
Ես թշվառներու անհամար տանիքներ գիտեմ,
Որոնց տակ ազնվական սերունդներ բազկատարած՝
Քու ավետարանական ու խարտյաշ ցորյանիդ
Ու սպիտակ ու երբեք չհասնող գթությանդ կսպասեն...
Ցարիքիդ ոգիները, ահավասիկ, դաշտերը հրդեհեցին,
Ու ահա արյունը Արարատին կատարները կարմրցուց...
Ու ահավասիկ որ դժոխային մանգաղներդ ոսկիե՝
Անմեղներու վիզերուն ի խնդիր հորիզոնին մեջ կգալարվին...

Բայց անոնք, որ Յալճանյանի ամբողջ գործը չեն ճանչնար, այդ կտորներեն պետք չէ ենթադրեն, թե այդ բանաստեղծը ներկային ցավը ողբալու կամ անցյալին հիշատակներուն քաղցրության ոգումովն ապտասվելու մեջ համեցող մըն է. իր երգին հիմքը՝ տարփողումն է պայքարին, ճիշն է վրեժին, ավետումն է անհրաժեշտ հաղթանակին,— ընդհակառակն հոս, այս հատորին մեջ առաջին անգամն է, որ քնարերգակը, մերթ խանդաղատած՝ երազանքի պահերուն սրտին խորերեն բարձրացող քնքուշ ձայներե, անձնատուր կըլլա այդ կաթոգին սրտազեղումներուն. դյուցազնական ռազմերգը շուշանար որոտալու, հո՞ս ալ, կազմելով միշտ գերագույն երգն այդ քնարին. չէ՞ որ ինքն իսկ բանաստեղծը, զմայլելի քերթվածի մը մեջ, կգոչե.

Մոռացումներու մոխիրին մեջն է, որ զքեզ պատանեցի,
Ո՜վ երկբայելի, եսանվեր ու անատաք Սեր,
...Ոչ ալ զքեզ երգեցի, ո՜վ երկինքներու անդորրասիան կապույտ,
...Ոչ ալ զքեզ, Աքիմ՝ քո, ասատվածներու և քարամներու ծնողավայր,
...Ոչ ալ զքեզ, Արևմուտքի խաղաղաշունչ ոստաններ, ուր Մեծերը կծնանին...
Ոչ ալ զքեզ, մեհենական անտառներ և փլատակվող
բարդությունք սարսափահար ծովերու...
...Ոտքերուս տակ ավերակներ եմ տեսած, և լուսաժուռտեա դուրս հաղարավոր
մեռցվածներ...
Եվ սուրբք շաղացին... ձգեցե՛ք զիս, ո՜վ տիարտության
կապանքներ, դեռ սուրբք կշողան...
Եվ բանաստեղծի աչվրներս արյո՜ւն, արյո՜ւն, արյո՜ւն է որ դիտեն...

Հոյակապ էջեր են՝ այդ շարքին մեջ՝ «Խավար»-ը, ուր երգիչ-մարտիկը, կարծելով մահը մոտալուտ, զինակցի մը կհանձնե, իր հրաժեշտի խոսքերուն հետ, իր վերարկուն, իր ցուպը, խաղողի ոդիդուլզն ու հայրը հայրենի հողեն բուսած, ու քնարը և սուրը,— «Ես երգելով կուզեմ մեռնիլ»-ը, ուր զինվոր մը երթալե առաջ նետվիլ կռվին մեջ թե ու փառավոր խորհուրդին մեջ՝ երգ մը կհայցե առաբ պայքարը երգող բանաստեղծեն, և մանավանդ «Սարիա կայծերուն առջևը»-ը, խրոխտ փառաբանություն մը անարդարության վրեժխնդիր սուրին.

...Նախնիքներես մինչև ինձ քու շողյուններդ ահա կերկարին.
Ո՜վ իշխանական, ահավոր, ճշմարիտ ու բարեկամ Սուր,
Ու սնարիս երազներուն ու կյանքիս երջանկությանը մեջեն
Միշտ մահավճիռը գտած եմ քեզ դարանակալ ոճիրին...
Եվ կսիրեմ զքեզ, դուն Արդարություն ու բարբարոս,
Դուն որուն կայծկլտուքը սոսկում մըն է և խրախույս մը մեքանգամայն,
Դուն, որուն ժանգը անքավելի պարտություն մը ամոթաբեր,
Դուն, որուն դաղարը ստրկացումն մըն է զքեզ պաշտող ձեռքերուն...
...Եվ այսպես մերկ ինչպես հիմա, իմ դողդոջուն և
զայրացկոտ ձեռքերուս մեջը հաճախ,
Քու լուսության կայծերովդ երգերուն է՛ն հաղթականը կերգես,
Եվ շարժումեդ և շունչեդ և շողյունեդ ահավասիկ որ դուրս կժայթքի
Կռիվին քարոզի, ազատության բուրմունքը և փառքը կորիճ մարդուն...

Այդ շարքին ամենեն հզոր ու տարօրինակ էջը— թեպետ և դժբախտաբար ամենեն անհավասարն ալ, որովհետև կան հոն ավելորդ կրկնություններ և քանի մը թույլ հատվածներ,— «Ասպետին երգն» է, ճապուկ, բացահայտ, հողմասլաց քերթված մը, ուր արաբ մոալլաքաթներուն կրակեն կայծ մը կա ինկած։ Երիվարը, որուն կուղղե բանաստեղծն իր երգը և որմե կհայցե զինքը թոցնել, տանիլ անցնիլ հայրենի հողին մեկ ծայրեն մյուսն ու հասցնել մինչև նպատակը, այդ երիվարը երգչին մտածումը խորհրդապատկել կթվի.

...Միշտ քառարշավ պիտի սուրաս, ո՜վ երիվար,
Եվ պղնձե պայտերդ կայծեր են որ պիտի ծաղկին,
Ու մեր վազքը թող զմեզ հերոսներու պես արթեցնե,
Ու հով խմենք, հովուն նման անհունորեն թևավոր։

...Քու կաթնաբույր մարմինդ կյանքիդ կրակեն կեռա,
Ու քու ագիդ ջրվեժ մըն է գավակեդ վար մրրկահոս,
Աչքերուդ մեջն երկու բռնկած աստղեր կշողան,
Ու պայտերուդ դռույթը զարհուրանք է որ կկռանե։

...Մտրակ չունիմ ձեռքերուս մեջ, ապատ ես դուն,
Ես միմիայն լանջքիդ վրան շուշանափայլ
Մատվընեներուս քաղցրությունն է որ կթափեմ,
Մեղրերու պես միսիդ վրա հորդահոս։

Ո՛չ սանձ ունիս, ո՛չ երասան երախիդ,
Առատ բաշեդ ալիք մը վարս ձեռքերուս մեջ կբավե,
Ոտվընեներս զքեզ գրկող ասպանդակի պետք չունին,
Միայն թամբդ է վրադ, արծաթե թամբդ մարգարտահեռ։

Ես հայրենի հողիտներուն կարոտն ունիմ, կարոտն ունիմ,
Հայց աստղածոր երկնքին տակ կանգ մի՛ առներ, երիվա՜ր,
Տարայրներու առջևեն ստվերի մը պես պետք է անցնիս,
Անտառներեն, հնձաններեն, այգիներեն ալ անդին։

...Ճամփուս վրա թերևս հին մեռելներ ոտքի ելլեն,
Իրենց պատանը ուսերնուն և ձեռքերնին ինձ երկարվող,
Ու մոտենան տառապյալիս՝ ականջս ի վար փսփսալու
Իրենց սերերն և վրեժին անմոռաց, բայց մի՛ կենար, երիվա՛ր։

...Ա՜հ, կպաշտեմ ես զքեզ, աշավասիկ որ աստղորեն կթռչիս,
Կայծակին չափ արագ ես և անոր չափ ալ ազատ.
Հովին մեջեն, հողմին հետ, արծիվներ ենք ճախրի մեջ,
Ես ասպետդ եմ ու գերիդ, նպատակի՛ս բարձրացուր զիս։

...Ես լսեցի քառասմբակ շքեղ մարմնիդ կատարեն
Որ կայծարձակ պայտերդ, մեր վազքին մեջ մինչև այսօր,
Քանի՞ անգամ, քանի՞ անգամ ոսկորներ էր որ փշրեցին,
Ու բաց կոպերը գանկերուն ինձ նայեցան. տեսա՞ր դուն։
Ես լսեցի կըսեմ՝ երկաթներդ ճարճատյունը կմախքներու,
Բայց լռեցի։ Ես անխոս եմ։ Կանգ մի՛ առներ, երիվա՛ր,
Հոգիիս մեջ հեծեծանքս ես կթաղեմ անդնդախոր,
Թող զայրույթս միայն ապրի, կանգ մի՛ առներ, երիվա՛ր։

...Լուսածագին, վազքիդ մեջ, լեռնադաշտի մը վրա,
Նոր ըմբոստներ պիտի տեսնենք, նոր հսկաներ, նոր հերոսներ,
Որդիները տառապանքին, որ թշնամության այս դարուն մեջ
Արյունին մեջ են ծնած, և անոր մեջ զայրացած, և արյունով կուզեն մեռնիլ։

Օ՜, արշալույսը ծաղկեցավ, ես ասպետդ եմ ու գերիդ.
Ձառիվերը դժվարին է, բայց հագագդ հողմաշունչ.
Պետք է թռչիլ, ճի՛գ մըն ալ, հուրերուն հետ առավոտին.
Կանգ մի՛ առներ, ես ծարավ եմ՝ ինչպես և դուն՝ հաղթության։

«Դյուցազնորեն»-ին առթիվ գրած հոդվածիս մեջ՝ ի վեր հանելէ հետո այդ քերթվածին մեծ արժանիքները, նկատած էի քանի մը մանրամասնության թերություններ։ Այս հատորին մեջ Յարճանյան ինքզինքը կհայտնե անհունապես ավելի կատարյալ։ Լեզուն ավելի մաքուր է, ավելի հարազատ ու ճոխ հայերեն, կարծես շարականներու լեզուն աշխարհաբարի մեջ իր ամբողջ ծիրանիովն ու ոսկիովը վերակենդանացած։ Պատկերները, նույնիսկ երբ տարօրինակ են, ճիշտ են գրեթե միշտ, տեղին հարմար, և ճաշակով արտահայտված։ Կարելի է նկատել մերթ փոքրիկ բիծեր, բայց այդ բիծերը շատ քիչ են և կհալին ամբողջովին լուսավառ գեղեցկությանը մեջ։

Տաղաչափության մասին՝ Յարճանյան պահպանած է իր նախասիրությունը այն տեսակ մը «ազատ ոտանավորին» համար, որ, ինչպես ըսած էի արդեն, ոտանավոր չէ, այլ քերթողական արձակ. բայց այստեղ լավագույն կտորներուն մեջ այդ արձակը շատ ավելի ներդաշնակ է, և զմայլելի կերպով կերգե այն ամբողջ թավալուն, լայն, անկաշկանդ, քմայքոտ երաժշտությամբ, զոր արձակը կարող է տալ. ոչ մեկ դանդաղություն, ոչ մեկ կարծրություն ու ոչ մեկ գռեհկություն կամ ռամկություն չեն խաթարեր տողերուն աղվոր գնացքը, որ կսահի ազատ բայց

դաշն շարժումով մը վրայե վրա գրոհ տվող ալիքներու պես։ Գնահատելով հանդերձ ինչ հրապույր որ ունի այս «արձակի երաժշտությունը», զոր արդեն Յարճանյանեն առաջ ուրիշներ փորձած են մեր գրականության մեջ առանց տողերուն ոտանավորի ձև տալու, չեմ կրնար սակայն ցավ չհայտնել, որ Յարճանյանն այդ ձևին մեջ սահմանափակած ըլլա իր ներշընչմանց արտահայտությունը։ Հանրի տը Ռենիեն իսկ, ազատ ոտանավորը պաշտող, հաճախ կգրե կանոնավոր ոտանավորով, իսկ Վերհարնին ազատ ոտանավորը արդեն չափազանց կմոտենա կանոնավոր ոտանավորի։ Ազատությունը ավելի թանկագին է և ավելի գեղեցիկ արդյունքներ կուտա, երբ գեղեցկության ու ներդաշնակության բարձրագույն աստիճանի մը հասնելու համար արվեստագետն ինքնակամորեն իր ներշընչումը կճկեցնե ոչ աստիճանով, բայց վերջապես գոյություն ունեցող համաչափություն մը։

Եթե Յարճանյան չի համակրիր ոտանավորի չափազանց կանոնավոր ձևերուն, թող գեթ փորձի այն ձևերը, որ միշտ ոտանավորի սահմանին կպատկանին, բայց ավելի ազատ կանոններու վրա հիմնված են. մեր հին հայկական— թե՛ գրաբար և թե՛ աշուղական— բանաստեղծությունն այնքան հարուստ է այդ կարգի տաղաչափական ձևերով, որոնցմե մեր նոր բանաստեղծությունը ցավալի է, որ բնավ չի օգտված կամ շատ քիչ. մեր հին բանաստեղծության մեջ տաղաչափության բոլոր ձևերը և աստիճանները կան, ամենականոնավորեն մինչև ամենաազատը, մինչև կշռավոր արձակի մոտեցողը, ու նույնիսկ այն ինչ որ կընե Յարճանյան, նույնիսկ ան, և հոյակապորեն ոլորված։ Արդեն ինչ որ կմեղադրեմ իրեն, այդ ձևը՝ որ իր լայն գեղեցկությունն ունի՝ գործածելը չէ, այլ անոր մեջ սահմանափակվիլն է, ատով իր տողերուն երաժշտությունը տեսակ մը միակերպության դատապարտելը։

Կա սակայն կետ մը, որ պետք է մեր բանաստեղծներուն ուշադրութենեն չվրիպի. արձակի մեջ, նույնիսկ քերթողական արձակի մեջ, երբեք պետք չէ խառնել կանոնավոր տաղաչափությունը. կհիշեմ կարդացած ըլլալը Ահարոնյանի և Վ. Փափազյանի արձակ քերթվածները, որոնք՝ թեպետ արձակի ձևով գրված՝ ծայրե ծայր գրեթե անխառնորեն հնգավանկ ֆրազներե կազմված են. քերթողական արձակին երաժշտությունը ուրիշ է, և այդ կուռ ու միակերպ համաչափութենեն չէ, որ կկազմվի, ընդհակառա՛կն. իսկ ավելի անախորժ է արդյունքը, երբ կանոնավոր ոտանավորով տողերե հետո՝ միևնույն քերթվածին, միևնույն տունին մեջ արձակին անկանոնության աներաժշտական անակնկալին կհանդիպի մարդ. այդ սխալը գործած է Յարճանյան «Ասպետին երգ»-ին մեջ, քերթ-

վածը կսկսի երեք տողով, որոնք կանոնավոր տաղաչափությամբ գրված են, թեև տարանման չափով.

Արևն ելավ, երիվա՛ր, և մեկնեմի ժա՛մն է այս, 4—3—4—3
Ըսպասե, որ ուրբս անցընեմ ապանդակիդ շողարձակ 4—4—4—3
Աչքերուդ մեջն իմաստուն նպատակս կկարդամ 4—3—4—3

Բայց ահա վարժվելե հետո նույն համաչափ տողերուն, կտեսնենք մեր դեմը չորրորդ տողը, որ ամեն չափե դուրս կցատքե ու «կավրե» տունին մինչև այդ կետն ընդգրկած կանոնավոր երաժշտությունը.

Օ՜հ, ի՜նչ ցնծություն ցնծությունս, օրհնյա՜լ ըլլաս, երիվա՛ր։

Այդ ամբողջ քերթվածին մեջ նույն սխալը կերևա ծայրե ծայր։ Եվ— անցողակի ըսեմ— կանոնավոր տաղաչափությամբ գրված տողերն այնքան գեղեցիկ են, որ ցավս ավելի կշեշտվի տեսնելով, որ Յարճանյան չի փորձեր իր քերթվածները, գեթ երբեմն, ամբողջապես հյուսել այդ կարգի տողերով. և, ինչո՞ւ մեղքս պահեմ, որքան ալ քերթողական արձակը, ազատ ոտանավորը կսիրեմ, ես համոզված եմ, որ քնարերգության ամենեն բարձր ձևը կանոնավոր ոտանավորն է, ճապուկ ու լայն ու քմայքոտ՝ որքան ուզեք, բայց միշտ կանոնի, համաչափության հնազանդ։ Եթե Յարճանյան համոզված չէ ասոր, թող իր իսկ այդ կարգի տողերը զատե, և ետևե ետև կարդա. անոնցմե մեկ քանին կհիշեմ ստորև, հատորին է՛ն ազվոր տողերն են, իբր «տող», իբր երաժշտական ֆրազ.

Հովին ձայնը շեփոր մըն է, որ կհնչե հեռուներեն,
Անտառները ոտքի ելան պատերազմի վաշտերու պես.

Տեսեք սա քառյակը.

Անշրջետն անծայրածիր թռիչքիդ առչև կժեռեի,
Ու քաղաքներն մեղավոր քայլերուդ տակը կխոնարհին,
Ագռավներու սև երամներ քու հոսանքիդ գոզահար,
Ամպերուն մեջ, ամպերուն մեջը կապաստանին։

Վերցուցեք վերջին տողին ավելորդ ու աններդաշնակ ը (մեջը), և երկրորդ տողին մեջ փոխեցեք երկու վանկ, «Ու քաղաքները մեղավոր քայլերուդ տակ կխոնարհին», կունենանք զմայլելի տողեր, և տուսկը կրկին աններդաշնակությունն ալ կանհետանա։

Այս նկատողությունն ըրած առենս, ինծի կթվի, որ Յարճանյան

արդեն ինքնին պիտի դիմե օր մը դեպի «բուն» ոտանավորը, դեպի ճըշմարիտ «լեզուն աստվածներուն». իրեն պես արվեստագետ մը չի կրնար չգտիլ դեպի գերագույն քաղցրությունն ու կատարելությունն իր «տող»-երուն։ «Ասպետին երգ»-ին «խառնուրդը» թելադրական է. նյութին բնությունը կարծես բնազդաբար մղած է բանաստեղծը, հակառակ քերթողական արձակով գրելու իր որոշման, ոտանավոր մտածելու։ Ու չէ՞ որ հոտ երգված ճախրասլաց նժույգն իսկ, գերադրական պատկեր թևավոր ազատության, իր «քառամբակ» արշավին մեջ կարձակե երաժշտություն մը հստակորեն «կշռավոր»։

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆ

Թրքահայոց մտավոր ու ազգային կյանքին ամենեն ազվոր ու լուսավոր շրջանին է՛ն պաշտելի դեմքերեն մեկն էր Թովմաս Թերզյան, զոր ահա մահը եկավ խլեց մենե։

Այն երջանիկ օրերուն, եվրոպական քաղաքականության՝ ինչպես քաղաքակրթության օսմանյան մայրաքաղաքին մեջ տիրական թափանցումին հետևանքով, Մեհմիտ ու Ազիզ սուլթաններուն ժամանակ, Թուրքիո հայությունը ուժեղ ու խանդոտ թափով մը թոթվելով բիրտ բռնապետության մը խավարին մեջ դարերե ի վեր իր վրա ծանրացող բարոյական թմրությունը, և նորածագ արևուն քաղցր ու կազդուրիչ լույսին մեջ նորոգելով իր հինավուրց ուժերը՝ առաջ բերավ մտավոր, գեղարվեստական ու ազգային ճոխ ու մաքուր փթթինազարդությունը։

Այդ պահուն է, որ կհիմնվի հառաջադիմասեր արի մամուլ մը. կրթական գործը մեկ թռիչ կստանա. հայկական թատրոն ու լսարան կստեղծվի, սահմանադրական կազմակերպություն մը կհաջորդե ամիրայականին. «սալոն»-ներ երևան կուգան, ուր հայկական կյանքը կնրբանա, ուր հայերեն լեզուն կհղկվի. եվրոպացի մեծ գրագետներուն հրաշակերտները հայ լեզվով կխոսին մեր ժողովուրդին, կլայնցնեն, կլուսավորեն անոր սրտին ու մտքին հորիզոնը. Եվրոպայի մեջ այդ շրջանին տիրապետող ռոմանտիկ ոգին, խանդավառ, ազնիվ, իդեալապաշտ, սավառնաթև, հավատալից, կուգա մեր մեջ ալ տարածվիլ, կարթնցնե ու կբեղմնավորե մեր ցեղին հոգեկան թաքուն ուժերը. թուրք ռեժիմը, ինչքան ալ դեռ իսկությամբ բռնապետական ու անկարգ, հայուն դեմ սիստեմական հալածանք չի ցցեր. մայրաքաղաքին ու ծովեզերյա մեծ քաղաքներուն մեջ մանավանդ, գրեթե բացարձակ ազատություն կվայելե

հայը տնտեսապես ու մտավորապես զարգանալու. դեռ գրաքննությունը իր խեղդիչ ճանկերը չէ սեղմած հայ մտքին շուրջ. ու հավատքով, ավյունով լեցուն, հայը կգործե, կստեղծե, կերգե. աննման արվեստագետներ կհառնեն, որ ցեղին տաղանդը փառապանծ կապացուցանեն բեմին վրա, Պոլիսը զարդարող հոյակապ շենքերու մեջ, երաժշտության մեջ, և մանավանդ բանաստեղծության մեջ. քերթողական համաստեղությունը, որ կհայտնվի այդ պահուն, տարօրինապես ճոխ է ու այլազան. Բագրատունի, Հյուրմյուզ. Ալիշան, Նարպեյ, Պեշիկթաշլյան, Հեքիմյան, Աճեմյան, Պետրոս Դուրյան աստղերն էին այդ բույլին. և այդպիսի բույլ մը պատիվ կարող է բերել ամենեն քաղաքակիրթ ազգերուն իսկ, և արդար հպարտությամբ մը կարող է մեզ լեցնել երբ մանավանդ կխորհինք, որ միևնույն ատեն, թրքահայ արձակին մեջ կերևային Միսաքյանի, Շեբենցի, Գրիգոր Օտյանի, Մամուրյանի, Պարոնյանի պես վարպետներ, և անդին՝ արևելյան հայության մեջ Աբովյանեն հետո Նալբանդյանի, Նազարյանի, Շահազիզի, Գամառ-Քաթիպայի, Պռոշյանցի, Սունդուկյանի, Բաֆֆիի նման գրական մեծ դեմքեր։

Այդ երանելի շրջանին ամենեն թանկագին երևույթներեն, այդ շքեղ բույլի ամենեն պայծառ աստղերեն մեկն էր Թերզյան։ Իր տեղը Պեշիկթաշլյանին ու Դուրյանին միջևն է։ Մեր երեք ամենաքնքուշ, ամենաքաղցրը քնարերգակներն են ատոնք։ Ու երեքն ալ, թեպետ գեղեցկագիտության ու խառնվածքի որոշ տարբերություններ ունենան, կեղբայրանան ինչ ինչ գծերով, որոնց մին ալ այն է, որ Պոլիս քաղաքին արբեցուցիչ գեղեցկության ամենեն հարազատ հայ թարգմաններն են— ինչպես Պարոնյանն մեծագույն արտահայտիչն է Պոլսո հայոց ինքնահատուկ համեղ սրամտության։

Պոլիսը, զոր մարդկային ապուշությունն ու վայրագությունը ընկերական տեսակետով անեծքի ու փտության ոստանը դարձուցին, ամենեն դյուցական հրաշակերտն է, զոր բնության սքանչելարվեստ ձեռքերը նեն դյուցական հրաշակերտն է, զոր բնության սքանչելարվեստ ձեռքերը կերտած ըլլան մեր երկրագունդին վրա։ Վոսփորն ու Մարմարան աստուծո Իլիականն ու Ոդիսականն են։ Լույսը, որ գարնան առտուները կխնդա Պոլսո երկնքին մեջ, շուշանաթույր բարակ մշուշները, որ Վոսփորի ջրերուն ճաճանչարձակ շափյուղային վրա կթրթռան, քաղցրությունը զեփյուռներուն, որ մեղրանուշ օդի մը մեջ կերգեն անպատում երգերը գիշերային երանության մը, ու ծառապսակ բլուրներուն դաշնակ տաղաշարքը, և լուսնյակ գիշերներուն դիցական հարսնիքը, որ խավարը կվարդավառե, ու Ոսկեզջյուրին հինավուրց մելամաղձության վերև՝ մայրամուտներուն փառքը եղերական, ու այն դրախտակերպ երազը մարմնացած՝ որ Կղզիներն են, այս բոլորը, և դեռ ա՞յնքան հրապույրներ, մոգություններ, ժպիտներ, տեսիլներ, գանձեր, հաղթություններ, նվաղումներ, արբեցություններ, որ հոն կպարզվին, կփռվին, կտիրեն, մարդկային արվեստը անկարող է զանոնք լրիվ արտահայտելու. միայն այդ բոլորին քաղցրութենեն, մաքրութենեն, վեհութենեն ու ճոխութենեն նշույլ մը ինկած, տարածված է՝ ավելի՛ քան ոեէ քերթողի՝ մեր երեք քնարերգակներուն մեջ, և կլուսավորե, կզորացնե. կթևավորե անոնց տաղերուն ներշնչումն ու ձևը։ Պեշիկթաշլյան կհիշեցնե մասնավորապես Կղզիները, և անոնց խաղաղ, վճիտ, կատարյալ գեղեցկությունը, գարնանավերջի գիշերներուն, երբ ամեն բան, աստվածությունով հրաշազգեստված, կանայութանա հոն, կպայծառակերպի, կերգե ու կերազե «Ջինջ ի նրշոյլ լուսնակին որ ծիծաղի յերեսըս ջուրց», և որ ամբեն օրերուն պերճ արևը ոսկեհուռ ծիրանիի կփոխարկե շուրջը դաշնաթավալ վետվետող Մարմարան, ու վեհ զվարթություն մը կկախե եղևիններուն մելամաղձիկ կանանչին մեջ.

Հուր հեր արփւոյն կծաւալի,
Ի դաշտ յարօտ գեղածպիտ.
Ծովն ի յերկինքս կզմայլի,
Երկինքն ի ծով ծիծաղախիտ։

Ու աշնան քաղցրորեն, մեծվայելչորեն ու խաղաղորեն տրտում իրիկուններուն ծովուն լայն կշռավոր ծփանքները, որ կուգան անոնց վրա հառաչել ցավը մը անհուն ու լուսավոր և մարիլ երգելով, կարձագանքվին քերթողին տողերուն քաղցրածավալ ներդաշնակության մեջ.

Ընթացայց մենաւոր ըզճանապարհն ամայութեան...

Դուրյան իր Սկյուտարին ցոլացումն է։ Իր բանաստեղծությունը շեշտ ու գույն կարծես փոխ առած է այդ դյութական բարձունքին տեսիլներեն. անոր մեջ կզգացվի հոծ ու լուռ տրտմությունը նոճիներուն, որ հոն կխոկան կարծես տառապելով ծայրահեղ գեղեցկութենեն Վոսփորի կապույտին.

Ո՜հ, կը հիշե՞ս Ջամլըճայի,
Սարը նստած լուռ մխայինք,
Ուր մեզի շուք տային նոճիք,
Սև հովանոցք վշտահարի։
Ըսթամբոլի կապույտ գոտվույն,
Վոսփորի ծուփը դիտեինք,
Ուսկից և մերթ զանամպ երկինք.

Ո՜ ախորժներ լուռ մեր հոգվույն։
... Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տրտում...

Անոր մեջ կցոլանան գերեզմաննոցները, որ կփռվին տուներուն մոտիկ, և

Երբ աստղալույց գիշեր է զով,

իրենց ծառերուն սոսափյունովը գիշերին մեջ մահվան խորհուրդը կթըվին պատմել,

Գերեզմաննոցին ցուրտ ծառեր
Կփսփսան իրարու մոտ...

ու անպատմելի վերջալույսները, որ կբռնկին հեռվեն՝ Սթամբոլի վերև քաղաքը այլափոխելով անուրջի ոստանի մը, ու արշալույսները, որ Վոսփորյան երկինքը հրեղեն դրախտի մը կփոխարկեն.

Շաղի, շաղի ժամք էին,
Վարդից հրեղեն կար յերկին.
Փոխան ամպոց հուր հյուսքի
Տեղար մարգրիտ ու ոսկի։

Թերզյան կոգե վերին Վոսփորը, թարմ ու զվարթ, իր գերագույն գեղեցկությանը մեջ ինքն իրմով իսկ գինով, իր ջրերուն գերբնական կապույտովը, իր բլուրներուն սիրահրավեր թևաբացումներովը իր վրա իջնող լույսին օրհնված քաղցրությամբը, իր գիշերներուն անլուր լուսնահոսությամբը.

Ա՜հ, գերեզմանս այնտեղ ըլլար
Ուր Վոսփորի դարեվանդներ,
Սաղարթագեղ և միշտ դալար
Թանան հալիս զյուրյանց պատկեր,
Եվ այն ծավի ծավի այլակը
Գային փշրիլ շիրմիս վրա.
Եվ հոն նոճյաց մեջեն կաթեր
Ճերմակ մահկին լույսն արծաթյա...

Թերզյան նվազ դասականորեն կատարյալ է, քան Պեշիկթաշլյան, ու նվազ ջղուտ քան Դուրյան, բայց ավելի այլազան է քան երկուքը, ավելի

ճոխ, ավելի լեցուն գաղափարով, ավելի հրապուրիչ իրեն հատուկ զմայլելի քնքշությամբ։ Իր քերթվածները երբեք հատորով հրատարակած չըլլալով՝ քիչերը ծանոթ են իր բանաստեղծական գործին ամբողջական անգին արժեքին։ Հայոց ընդհանրության մեջ Թերզյան ավելի ծանոթ ու ժողովրդական դարձած է իր թատերգություններով քան բանաստեղծություններով։ Այդ թատերգությունները, նմանողական գործեր, համեմատության իսկ չեն կրնար դրվիլ իր քերթվածներուն հետ։ Թերզյանի փառքը իր քերթվածներուն մեջ է։ Կարծվածեն ավելի բազմաթիվ են անոնք, մասամբ հին ու նոր թերթերու և հանդեսներու մեջ ցրված, և մասամբ անտիպ։ Գերազանցորեն փափուկ, նուրբ և ազնիվ զգայնությամբ օժտված, հարուստ ու գիտակից գրական ու գեղարվեստական մշակմամբ մը մարզված, այդ շքեղ հոգին ժպտուն, գորովի, բարձր ու մաքուր լավատեսության, ջինջ ոգեպաշտության, անդրդվելի հավատքի, լուսավոր իդեալականության, ազնվական գեղասիրության անթառամ երգ մը հնչեցուցած է, որ պիտի մնա մեր գրականության ու լեզվին գերագույն հարստություններեն մին։ Իր վերջին քերթվածը, հոյակապ տաղ մը «Ի մահ», զոր «Բազմավեպ» հրատարակեց, կամփոփեր կարծես այդ հատընտիր հոգվույն ամբողջ լուսատարր գեղեցկությունն ու իր արվեստին բովանդակ հրապույրը թևավոր, միևնույն ատեն ըլլալով, ավա՜ղ, իր հրաժեշտի երգը, իր իսկական վերջին խոսքը կյանքին, ու իր ողջույնը մահվան, զոր թերևս ինքն իսկ մոտ կզգար և որուն կնայեր այնքան արի և անայլայլ նայվածքով մը։

Թերզյանի բանաստեղծական գործին վերլուծումն ընել չէ, որ կհավակնիմ հոս։ Պաշտումի և երախտագիտության քանի մը խոսքեր են միայն, զոր կթափեմ ամենասիրելի վարպետիս գերեզմանին ոտքը, որդիական ցավի մը արյունքներուն հետ։ Այդ վերլուծումը կարելի պիտի ըլլա միայն արդեն, երբ հրատարակվի ամբողջական հավաքածուն Թերզյանի քերթվածներուն։ Ու կհուսամ, որ իր որդիներուն գորովն ու սքանչացողներու խնամքը պիտի փութացնեն այդ հրատարակումը։

Ուսուցիչը, որ եղավ Թերզյան, այնքան մեծ էր, որքան բանաստեղծը։ Այն դերը, զոր Պեշիկթաշլյան կատարեց ընտանիքներու մեջ, Թերզյան զայն բազմաթիվ տարիներ կատարած է մեր ազգային վարժարաններուն մեջ, նույնքան ձեռնհասությամբ և ավելի լայն արդյունավորությամբ։ Մեկե ավելի հայ սերունդներ իրմե սորված են սիրել, ըմբռնել, ճաշակել գեղարվեստն ու գրականությունը. ու ոչ միայն հայերը, այլև Պոլսո բոլոր ցեղերը օգտված են այդ ուսուցչեն. պետական վարժարաններուն, ուր Ֆրանսերեն լեզուն ու գրականությունը կու-

ուցաներ, ամենեն սիրված դասատուներեն մեկն է եղած. թուրք երիտասարդությունը, 4—5 տարի առաջ, խորին հարգանքի ու երախտագիտության ցույց մը բրավ իրեն՝ տոնելով անոր ուսուցչության երեսնամյակը։ Թրքահայ արվեստագետներեն, գրագետներեն շատերը իր աշակերտներեն եղած են։ Ես ինքս շատ բան կպարտիմ։ Երբեք պիտի չմոռնամ իր դասերը Կեդրոնականին մեջ։ «Դաս»-եր չէին անոնք (Թերզյան փրոֆեսորի ծանր ու հավակնոտ տիպարը չէր)։ արվեստագետի մի խոսվրոտուքներն էին. կառներ եվրոպացի մեծ բանաստեղծի էջ մը և կկարդար ու կմեկներ. կապրեր զայն, ու մեր հոգվույն ու մտքին մեջ թափանցել կուտար անոր գեղեցկությունը. ուսուցչութենե վեր բան մըն էր իր ըրածը, մեծ բանաստեղծ մըն էր, որ մեծ բանաստեղծներու հոգին մեզի կբանար։ Ա՜խ, անպատմելի գեղեցկությունը, զոր իր դեմքը, արդեն այնքան գեղեցիկ, կզգենուր այդ պահերուն. գանգուր մազերով պսակված լայն ճակատը ավելի կլայննար, դեմքին գծերը կայլափոխվեին, կլուսավառեին, ներքին անճառ բերկրությունով մը կծաղկեին. աչքերը գեղեցկին գինովությամբը ճաճանչավորված, ամբողջ դասարանն ընդգրկող սավառնագին նայվածքի մը մեջ տարածված, կխոսեր, մինչ իր ժեսթերը, այն նուրբ, բարեշնորհ մարդու աննման ժեսթերը, պարզ, փափուկ ու գողտր, կստորագծեին իր խանդոտ, սրամիտ, ընտանի ու խորաթափանց, հմայող համոզող ու սնուցանող խոսքը։ Մեր ամենեն քիչ գրասեր ընկերներն իսկ «բռնված» կզգային զիրենք այդ հրապույրեն, արբշիռ մտիկ կընեին ու կսորվեին սիրել գրականությունը։ Ու գրականությունենեն զատ, ինքը գիտեր նաև սիրցնել կյանքի գեղարվեստը, քաղաքավարությունը, որուն պակասը տեսակ մը ազգային ախտ է մեզի համար, և որուն անհրաժեշտությունը զգացնող ամենեն ազդեցիկ ուսուցիչն եղած է ինքը մեր մեջ։ Այո՜, ես շատ բան պարտական եմ իրեն։ Բացի Կեդրոնական դասերեն, ինքը հայրական համակրությամբ մը, զոր կյանքիս մեծագույն պատիվներեն մին կհամարեմ, իմ առաջին քայլերուս մեջ զիս քաջալերած, թերությունս ուղղած, ինծի առաջնորդ ու զորավիգ եղած է։ Իբր բանաստեղծ՝ զինքը միշտ պաշտած եմ, բայց բանաստեղծը չէ, որ զիս առաջնորդած է. իր քերթողական արվեստը, իր ուղղությունն ու աշխարհայացքը տարբեր էին անոնցմե, զոր ինծի տրվեցավ ունենալ. բայց իր վարպետ արվեստագետի խրատները, իր անթերի ճաշակով գրագետի ցուցմունքները, իր սերը, իր խրախուսանքը, և մանավանդ իր փափուկ ու ինծի այնքան սիրելի հեգնությունը նորընծա եռանդի մը չափազանցություններուն ու կաղումներուն հանդեպ՝ ինծի բարերար եղած են, և ես զինքը միշտ համարած եմ և այսօր իր գերեզմանին առջև կհամարեմ նորեն իր խոնարհ ու շնորհապարտ աշակերտը։

Օր պիտի գա, որ Արևելքի վրա դարերե ի վեր ծանրացող բարբարոսական մղձավանջը պիտի փարատի և Արևելքի մայրաքաղաքին՝ Պոլսո մեջ կյանք մը պիտի ծաղկի ազատ ու ազնիվ, լուսավոր ու ներդաշնակ՝ ինչպես բնությունը, որ հոն կճառագայթե։ Այն ատեն, այդ քաղաքին բոլոր գեղասերները, ամեն ցեղե, թափոր կազմած, պիտի երթան կանգնել ի պատիվ Պոլսո այդ լուսապայծառ Այետին, Վոսփորի «սաղարթագեղ ու միշտ դալար» ափերուն վրա, երկյուղած հարգանքի ճերմակ հիշատակարան մը՝ հայ հանճարին մատներովը կերտված։

ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖՅԱՆ

Մատթեոս Զարիֆյանի մահվամբ հայ բանաստեղծությունը կկորսընցնե իր ամենեն մաքուր ու խկատիպ քնարերգուներեն մին։

Արտադրությունները, որ կմնան այդ վաղամեռիկ երգիչեն, բազմաթիվ չեն. բայց անոնք իրենց խորազգաց ներշնչումով, իրենց փափուկ ձևին ինքնուրույն հրապույրով մեր ազգային քերթության մեկ աղվոր ու անկորուստ էջը կազմելու սահմանված են։

Պեյրութ գտնված միջոցիս՝ երեք տարի առաջ, Զարիֆյանի քույրը, տիկին Քյուփելյան, արվեստագետի ձիրքերով օժտված, զարգացած մըտքով նուրբ հայուհի մը, ինծի ղրկած էր օրինակ մը «Տրտմության և խաղաղության երգեր» գրքույկեն. անոր ընթերցումը իսկույն ինծի բերավ հայտնությունը բանաստեղծի մը, որ իր կարգին խորապես ազդված էր ֆրանսական խորհրդապաշտ դպրոցեն, բայց որ ինքնուրույն շեշտ մը ուներ, իր անձնական տեսիլն ուներ աշխարհի և կյանքի, և զայն կարտահայտեր իրեն հատուկ երգով մը, երգ, որուն ինքնեկ պարզության, ուղղակի բխումին, սրտագին բնականության մեջ հայկական նոթ մը կար, և որ օտարեն ներշնչված հռետորական ձևերու մեջեն խորունկ կապ մը կպահպաներ մեր աշուղական բնիկ բանաստեղծության հետ։ Ունեցա այն նույն տպավորությունը, զոր կրեր էի 1908-ին Պոլսեն անցած ատենս առաջին անգամ կարդալով քիչ օր առաջ վախճանած Միսաք Մեծարենցի երկու գրքույկները, նոր երգի մը, ինքնատիպ մեղեդիի մը անզին գանձովը բեռնավոր, այդ միջոցին, քիչեր կգնահատեին Մեծարենցը. կային նույնիսկ զայն քամահրողներ, ինչ որ զիս զարմացուց ու զարմանքս ավելի մեծ եղավ, երբ տեսա Ատոմ Յարճանյանի պես վարպետ քերթող մը, որ տարօրինակ բան մը չէր գտներ անոր տաղերուն մեջ և Տիրան Չրաքյանի պես սքանչելի գրագետ մը, որ անոր «Շողա՜, շողա՜,

բարի արև, հիվա՜նդ եմ» ոգբերգը միայն կհամարեր ինքնատիպ ու մնացյալը միջակ կամ թույլ։ Ինչքան գժվար է բանաստեղծությունը հասկնալը, մերթ նույնիսկ բանաստեղծներու համար (Վերլենն չէ հասկցած Մյուսեն). և սակայն Մեծարենցի ի հայտ բերած գեղեցկությունը շատ որոշ էր. շատ ճոխ, շատ ինքնահատուկ ու խորապես հմայիչ, ինչ որ Ակնա հին ու նոր բանաստեղծներու վրա Սկյուտար արտասանված բանաստեղծության մը մեջ ի վեր հանել ջանացի. մուսանեքեն սիրված Ակնա ցեղեն բխող վերջին երկու քերթողներուն՝ Յարճանյանի և Մեծարենցի ներբողը հյուսելով և անոնց կապը ցույց տալով՝ այդ սխրալի քաղաքին հին ժողովրդական ոսկի բանաստեղծության հետ։ Չեմ գիտեր, թե որքան բազմաթիվ էին Զարիֆյանի գործն ըստ արժանվույն գնահատողները անոր մահվընեն առաջ. ինծի համար անոր առաջին գրքույկին ընթերցումը բավական եղավ այդ նորահայտ տաղասացը դնելու Մեծարենցին քովիկը, զայն նկատելու իբր անոր մեկ կրտսեր եղբայրը, ավելի թեթև ու պարզ, ավելի պատանեկան, ավելի մթալար, նվազ բարդ ու ճոխ քան Մեծարենցը, բայց նույնքան ինքնատիպ, թրթռուն, անկեղծ ու հուզիչ։ Այժմ վերստին կարդալով այդ հատորիկը, լիակիր հաստատումը կգտնեմ իմ այդ տպավորության։ Զարիֆյան Ռաֆայել Զարդարյանին հետ, Մեծարենցեն ի վեր, Արևմտահայոց մեջ երևան ելած լավագույն բանաստեղծն է ապահովապես. ինչքան գեղեցիկ են «Խաղաղություն», «Գինովի երազ», «Եթե գար», «Ոսկի վտակ», «Մյուսին», «Գիշերամուտ», «Աշնան առավոտ», «Մահը կուգա», «Զմռան իրիկուն», «Խենթը», «Լեռան սրինգը», «Որոշում» տիտղոսված տաղերը, և դեռ ուրիշներ ալ, ինչպես Վերլենի արժանի սա զմայլելի տաղիկը.

Դեռ կհամենա
Բլուրին վրա
Լացը սրինգին...

Ու դեռ երկնքին
Ինչպէ կվախնան
Աստղերը աշնան...

Հատ-հատ կթափին
Այս լուռ ծովափին
Արցունքներ անտեր...

Իսկ ես չեմ գիտեր
Տանիմ դեպի ո՞ւր
Այս սիրտս թափուր...

Դեռ կհամենա
Բլուրին վրա
Լացը սրինգին...

Կամ սա հոգեթոիչ վերացման սաղմոսը.

Ի՜նչ գեղեցիկ կատար է այս,
Ցավ չունիմ, վիշտ չունիմ, հրճվանք չունիմ.
Անցեր եմ, հեռացեր եմ այս բոլորեն,
Վեր եմ ելեր...

Անդուլ, անվերջ ծլունի մեջեն կքաշեմ.
Ամայի, մութ բարձունքներու հալի մեջեն,
Ճակատս վեր.
Ու կարծես թե իմ այս հրշանդ մատներուս տակ
Ամեն բոլոր մանիշակներ կփաչփաչեմ...

Ի՜նչ գեղեցիկ կատաք է այս,
Այնպես սուզված կապույտին մեջ...

Ինձ կթվի՝ երկուսս ալ
Ես այս լեռնեն
Կարող կելլամ հոգիս ատոր համբուրել...

Վերլենն հատոր մը ունի իր սիրած քանի մը բանաստեղծներուն նվիրված (տիկին Տեպաքա-Վալմորին, Ռեմպոյին, Մալարմեին, Լաֆորկին, Վիլիե տը լ'Իլ Անատանին, ևն.). և այդ շարքը անվանած է «Անիծված բանաստեղծները», անոնց մեջ տեսնելով տառապելու և տառապանքը երգելու համար ծնած հոգիներ։ Մենք ունինք շարք մը բանաստեղծներ. զոր կրնանք «խոցված բանաստեղծները» անվանել. անոնք կանոխեն ունեցած են իրենց էության մեջ թաքուն խոց մը, հյուծախտը, որ զանոնք համբարեն կրծած, մաշեցուցած ու հուսկ ատա չքացուցած է, և որ սակայն իրենց զգայնությունը սուրցուցած, իրենց տաղանդը երբացուցած, իրենց երգին խորունկ, անկեղծ, ցավագին ու թովիչ շեշտ մը տված է,— Պեշիկթաշլյան, Դուրյան, Տերյան, Մեծարենց. Մահվան այդ գժգույն խոսեցյալներու ընտանիքին մեկ անդամն է նաև Զարիֆյան, որ երազանքի ու երգի կարմ ու մաքուր կյանք մը ապրելե հետո, ահա շիջեր է երիտասարդ հասակի մեջ, մեզի թողլով իրմե բխած երգերուն բոցը մշտավառ, ինչպես քուչակյան տաղերու այն զմայլելի սիրահարը, որ կմեռնի ու կթաղվի, բայց սրտեն կբարձրանա միշտ բոց մը ծիրանի։ Դուրյանեն ու Մեծարենցեն հետո, Զարիֆյան ինքն ալ երգած է— ու ինք միայն այդ է երգած— քնության գեղեցկությունները, Պոլսո ու Լիբանա-

նի բնանկարներուն հրաշալի դյուրությունը, սիրո տենչը, երազի մեջ ապրված կյանքի մը քաղցրությունն ու ցավը, ու դարանակալ ակնդետ մահվան ստվերը, որ իր բոլոր երգերուն վերև կտարածվի.

Հեքը կուրծքիս տակավ, տակավ կշատնա,
Մա՜հը կուգա իր արծաթե մանգաղով.
Եկո՛ւր, քնար, դեմ գանք անոր նոր տաղով,
Նա արքա՛ն է արքաներուն, մե՛ծ է նա...

Տե՛ս, իմ քնար, ոսկին շուտով կհալի
Սա իրիկվան երանգներուն. ահ, արդեն,
Տե՛ս, գիշերը կառաջանա համրորեն,
Հանդերձանքը հոգած իր է՛ն թախծալի...

Եկո՛ւր, նստինք սա ծառին տակ քեզի հետ,
Առ ան ճամփան է, ուրկե Սե՛րը կանցնի՝
Երբ արշալույսը նոր է որ կծնի,
Ու Մահը՝ երբ կրլլա երազը անհետ...

Գեղեցիկ հոգի մը, թրթռում ու ճերմակություն համակ, որ կթռչտի միստիկական հեշտավետ լուսնի լույսերու մեջ կամ արևմուտքի եղերական կարմրություններու տակ և կերգե իր իղձերը, հրճվանքները, արբեցությունները, կարոտները, վիշտերը, միշտ հալածված մահվան անվանելի մղձավանջեն, կերգե ձայնով մը միշտ թարմ ու վճիտ, որ նույնիսկ ցավի ու հուսահատության աղաղակներուն կուտա երիտասարդ լուսավոր զգայնության մը թեթևությունը, շնորհը, մաքուր ու թևավոր քնքշությունը,— այսպես կերևա ինծի Մատթեոս Զարիֆյան իր «խաղաղ տրտմությամբ» օծված մելանուշ բանաստեղծությանց մեջ։ Մեր ազգը այդ պաշտելի հոգիին թողած քնարերգական թանկագին ավանդը իր քերթողական ոսկեմատյանին հատուկ մեկ բաժնին մեջ ընդմիշտ պիտի պահպանե երկյուղած գորովով։

ՐԱՖՖԻ

Հակոբ Մելիք Հակոբյան, հանուր Հայության ծանոթ ու սիրելի՝ Բաֆֆի անունով, և որուն ծննդյան հարյուրամյակը կտոնենք այս ամիս, եղավ մեծագույն դեմքերեն մին մեր հին ու նոր գրականության, այն սակավաթիվ դեմքերեն, որոնց գործը իր էական մասերուն մեջ

մշտադալար կենդանության խորհրդավոր ու թանկագին զորությունը կպարունակե։

Կան գրագետներ կամ բանաստեղծներ, որ իրենց երկերուն մեջ չեն զբաղիր մասնավորապես իրենց ազգի ճակատագրով, բայց որոնցմով կպարծի իրենց ազգը, վասնզի անոնց անձնադրոշմ—կամ ցեղադրոշմ—մեծ տաղանդը ինքնատիպ գեղեցկությանց ստեղծիչ մը, մարդկային հոգիի, ինչպես և տիեզերական կյանքի՝ խորհուրդներուն, մարդկային ընկերության ցավերուն, տենչերուն, պայքարներուն վարպետ արտահայտիչ մը կամ մեկնիչ մը հանդիսացած է. այդպես՝ Ֆրանսայի մեջ Լաֆոնթեն մը, Բասին մը, Պոտլեր մը, Վինեի մը, Ֆլոպեր մը, Վերլեն մը, մեր մեջ Նարեկացի մը կամ քուչակյան սիրերգներու մեծ աշուղը, և կամ Սայաթ-Նովան, Ինտրան, Մեծարենցը։ Կան ալ գրական գործիչներ, որոնք արտահայտիչ կըլլան իրենց ազգը հուզող մեծ հարցերուն, որոնք թարգմանը կհանդիսանան իրենց ժողովուրդի անցյալի մեծությանց, ներկայի ձգտումներուն ու պայքարներուն և ապագայի երազներուն ու հույսերուն։ Այդպես եղան, Ֆրանսացվոց մեջ, Հյուկո մը, Լամարթին մը, Պարես մը։ Այս տեսակի հեղինակներ երևան կուգան մանավանդ այն ժողովուրդներուն մոտ, որ իրենց հայրենիքին մեջ անկախության, զորության նախկին շրջանե մը հետո՝ օտար թշնամի ցեղերու արշավանքին ենթարկված, անոնց լուծին տակ մնացած, իրենց աղատագրումի օրվան կսպասեն և ատոր կպատրաստվին։ Այդպես եղան հրեա մարգարեներեն ոմանք, որ արդարածարավ աղատատենչ հայրենասեր բանաստեղծներ էին, այդպես եղավ Միցքիեվիչ մը Լեհաց մեջ, այդպես եղավ Բաֆֆին Հայոց մեջ։ Բայց մինչ լեհ ժողովուրդը իր աղգային բերթող, իբր իր ճակատագիրը երգող մեծ բանաստեղծ Միցքիեվիչը միայն ունեցած է, հայը ունեցած է այդպիսի գրագետներու և բանաստեղծներու բույլ մը, որ կսկսի հին ժամանակներու Եղիշեեն, Խորենացիեն ու Ֆրիկեն և կուգա կհանգի Բաֆֆին կանխող Զամչյան վեհաշունչ պատմագրին, Արսեն Բագրատունի և Ղևոնդ Ալիշան դյուցազներգականներուն, Աբովյանին, Մերենցին։ Պեշիկթաշլյանին, Բաֆֆիի գործը իր օրովն իսկ ուրիշ ձևով կատարող Գամառ-Քաթիպային և այդ նույն գործը Բաֆֆիեն հետո շարունակող Թումանյանին, Իսահակյանին, Աշուղ Ջիվանիին, Սիամանթոյին, Վարուժանին և դեռ քանի մը ուրիշ նույնօրինակ հայրենաշունչ գրողներու։ Այդ շքեղ բույլին մեջ Բաֆֆին կգրավե առաջին տեղերեն մեկը, ու կմնա մեծագույնը՝ գրական այն սեռին մեջ, որուն ընդլայնողն ու զարգացնողը եղավ, ամենեն հզոր դեմքը հայ վեպին։

Ճիշտ չէ թե Բաֆֆին է որ, ինչպես ըսողներ եղան, մեր գրականության մեջ վիպական սեռը մտցուց։ Աբովյանն է հիմնադիրը մերօրյա

հայ վեպին՝ Վերէ Հայաստանի դարագլուխ բացող գործով, և նույնիսկ հայ նորավեպին կամ վիպակին՝ Օվսաննա համեղ, հուզիչ ու գրեթե իրապաշտ պատմվածքով։ Վերէ Հայաստանին թառնուրդ մըն է ժողովրդական դյուցազներգության քերթողական արձակով էջերու, ժամանակակից հայ պատմության դրվագներու պատկերացմանց ու մեկնաբանմանց, բարքերու քննադատության փորձերու, երգիծական հատվածներու, աղգագրական ու ֆոլքլորաբանական նկատողությանց, բայց այս բոլորը վեպի ուրվագծի մը շրջանակին մեջ համախմբված։ Աբովյանեն զատ, Բաֆֆիի իբր նախորդ կրնանք հիշատակել Մեսրոպ Թաղիադյանը որ շարադրած է երեք վեպ, հայ ազգային հարցի հետ որևէ կապ չունեցող, սիրային և արկածապատում երեք վեպ, Սոս և Ամոդիպի, Վեպ Վարսենիաճ և Վեպ Վարդգիսի, գրված գրաբար հայերենով, հետաքրքրական գործեր, որ սակայն գրական մեծ արժեք մը չունին և օտար վեպերու հետևողություն են։ Ատոնց հետ պետք է հիշատակել նաև Պերճ Պռոշյանը, որ Աբովյանի աշակերտ, տնոր Վերէին հետևողությամբ գրած է իր առաջին վեպը՝ Աշտարակի հայ գյուղացվոց կյանքը պատկերացնող և այդ գյուղի բարբառով շարադրված, վեպ որ գրված ու հրատարակված է Բաֆֆիի առաջին վեպի հրատարակումեն առաջ։ Պետք է հիշատակել վերջապես, ու մանավանդ, Հ. Արսեն Բագրատունիի Հայկը, գրաբար հայերենով և հայկական չափով շարադրված մեծ դյուցազնավեպ, ու Ալիշանի հերոսապատում Հուշիկներեն և գրաբար ու աշխարհաբար վիպերգային քերթվածներեն մեկ քանին, (չէ՞ որ հինավուրց դյուցազներգությունը արդիական վեպին հայրն է)։ Ու մեր անցյալին մեջ ավելի հեռուներն ալ ելլելով,— որովհետև սխալ է թե վեպի սերը բնավ գոյություն ունեցած չըլլա մեր նախնյաց գրական արտադրությանց մեջ,— պետք է հիշատակել, ըստ իս, իբր Բաֆֆիի՝ ինչպես Բագրատունիի և Ալիշանի՝ գործին նախապատրաստություն ու մերթ նույնիսկ իբր նախատիպ, Ջոջանց տուն, Սասնա Մոնր (կամ Գավիթ և Մոնր) ընդհանուր տիտղոսին տակ ծանոթ ժողովրդական մեծարժեք դյուցազնավեպերու շարքերը, ինչպես և Ճղիշեի միստիկական դյուցազներգությունը, Խորենացիի Հայոց Պատմության ինչ-ինչ գլուխները և «Հռիփսիմյանց Ճառը», կարգ մը հերոսաշունչ կամ արկածապատում հեքիաթներ, պատմական վիպերգներ, արձակ կամ ոտանավոր մարտիրոսագրություններ։

Բաֆֆիի՝ իբր հայ ազգային հարցին կամ հայ պատմությանեն քաղված նյութերու նվիրված վեպեր գրողի՝ անմիջական նախորդները, անոնք, որոնց ազդեցությունը որոշապես կրած է և որոնց գործը շարունակած է, էն՝ Աբովյանը զոր արդեն հիշեցի, և Մերենցը, որ իր Թորոս Լևոնի պատմական վեպը գրած ու հրատարակած էր Պոլիս՝ Բաֆֆիի Գավիթ-

Բեկեն, Պատուր Հայկազանն ու Սամվելեն առաջ, և որ Թիֆլիսի մեջ գրեց ու հրատարակեց Երկոտներ, Գավիթ-Բեկեն հետո, բայց Սամվելեն առաջ, Մերենց, որուն այդ գործերը արդեն արևմտյան վարպետներու արտադրած պատմական վեպերուն տարազով շարադրված՝ խնամյալ ու ինքնատիպ գրական արտադրություններ էին։ Բաֆֆիի արժանիքը արդիական վեպը, բուն վեպը, որ նորամուտ էր մեր մեջ և դեռ երկու երեք գործով միայն կներկայանար, մեծապես զարգացնելը, ընդլայնելը, ընդարձակ պեսպիսությամբ մը ճոխացնելը և իր անձնական հզոր շունչով անոր հուզականությունն ու ներգործականությունը սաստկացնելը եղավ։

Չեմ կրնար ըսել թե Բաֆֆի ավելի մեծ է քան Աբովյանը։ Աբովյան ամենեն մեծ դեմքերեն մեկն է, որ հայ ցեղեն բղխած ըլլան, ան հիմնադիրն է արևելյան Հայոց նոր գրականության գրեթե բոլոր սեռերուն, և իր լավագույն էջերուն մեջ՝ անոր ոճը ավելի ջղուտ, գունագեղ և ինքնատիպ է քան Բաֆֆիինը. բայց և ան, շատ տեսակ բանի ձեռնարկած ըլլալով, մեծապես անհավասար է իր արտադրության մեջ. Վերէն իսկ դարձակ է որոշ հատակագծե մը, ամեն ինչ կա հոն վեպի հետ, ու շատ տկար մասեր կգտնենք շատ զարեղ էջերու քով։ Բաֆֆի ավելի սիստեմավոր, ավելի զուսպ վիպագիր մըն է,— իսկական վիպագիր։ Եվ անիկա ավելի ընդարձակ, ավելի բազմատարր վիպագիր, ավելի մեծաքաշ ու ներուժ գրագետ է քան Մերենցը, իսկ Բագրատունիին և Ալիշանին վրա այն առավելությունը ունի, որ ատոնց առաջինը իր Հայկը և երկրորդը իր դյուցազներգական քերթվածներուն մեծ մասը գրաբար են գրած, և ատոր համար անոնց հանճարին արդյունք եղող այդ արտադրությունները շատ քիչերե կարդացված են, իսկ, այսօր դժբախտաբար գրեթե բնավ չեն կարդացվիր, մինչ Բաֆֆի իր բոլոր գործերը գրեց, ոչ իսկ Աբովյանի պես Քանաքեռի տեղական բարբառով, այլ Արարատյան նահանգի բարբառով, որ դարձավ արևելյան Հայոց գրական լեզուն, և որ, թեև Պոլսեցու հեղինակին առաջին գործերուն մեջ դեռ ինչ-ինչ թերություններե ոչ զերծ, այդ հանճարեղ գրագետին բնազդական ճաշակին շնորհիվ եղավ պարզ, հստակ, ճկուն, կորովի աշխարհաբար մը, արևելյան գրական նոր հայերենի առաջին գեղեցիկ ու հրդկյալ կիրարկումը, զոր հետո, ավելի շուտ իր գերագույն հղկմանը հասած արևմտյան աշխարհաբարեն ալ օգտվելով, իր կատարելությանը պիտի բարձրացնեին Թումանյան, Ահարոնյան, Խահակյան, Տերյան, Բակունց, Չարենց և այլք։

Բաֆֆի ռոմանտիկ մըն է էապես, բայց և ունի դիտելու կարողություն։ Հանրային մեծ հարցերը քննելու և անոնց մասին որոշ տեսություններ հայտնելու համար ունի հարկ եղած խուզարկու, ըմբռնող,

վերլուծող և լուծումներ երևակայող միտքը։ Ունի երգիծական ձիրք՝ շատ ընտիր որակով։ Այս բոլորեն առաջ, բանաստեղծ է, օժտված հզոր երևակայությամբ մը և խոր, փափուկ ու վեհ զգայնությամբ մը։ Այնպես որ բազմաձև ու ստվար գործը, նոր գաղափարներով ու տեսիլներով հարուստ, զոր արտադրած է— ինք մին է այն քանի մը ամենաբեղուն գրողներեն, զոր ունեցած ենք,— զինք արժանի կկացուցանե հայ մեծագույն վիպասանի տիտղոսին, «վիպասան» բառին հին (դյուցաղներգակ քերթող) և նոր (բարքերու պատկերահան և ապագա կյանքի գուշակ և դրդիչ) նշանակությամբ. ու քանի որ ան իր վեպերով հայ ազգային դատին հզորագույն արտահայտիչն եղավ ու խորապես ազդեց մեր ժողովրդի նկարագրին ու ճակատագրին վրա, ան իրավունք ունի Հայոց «ազգային վիպասանը» կոչվելու։

* * *

Կարգ մը բարեպատեհ ու հաղվադեպ հանգամանքներու համախմբումը նպաստած է կազմելու այն միտքը, որ պիտի արտադրեր այդ բացառիկ զորությամբ գործը։ Հակոբ Մելիք Հակոբյան ծնած է Պարսկահայաստանի մեջ, Սալմաստի Փայաճուկ գյուղը։ Զավակն էր Սալմաստ հաստատված զարաբաղցի ազնվատոհմ հարուստ վաճառականի մը. ուներ գորովալից մայր մը և ինը քնքուշ քույրեր. ընտանեկան տաք մթնոլորտի մը մեջ անցուցած է բարեկեցիկ ու երջանիկ մանկություն մը։ Վաղահաս արթուն իմացականությամբ մը օժտված, տեղական ազգային վարժարանին մեջ իր նախնական կրթությունը ստանալե հետո ղրկված է Թիֆլիս՝ գիմնազիոնի մը մեջ երկրորդական կրթության ընթացքին հետևելու. բայց հինգերորդ դասարանը հազիվ հասած, հորը գործերը ծանրորեն խանգարված ըլլալուն պատճառով, ստիպված է դառնալ Փայաճուկ և ինքն իսկ հորը օգնել անոր առևտուրին մեջ։ Մինչև քսաներեք տարեկանը ապրելով իր ծննդավայրին մեջ, անիկա Պարսկահայոց ու նաև Պարսից կյանքն ու բարքերը մոտեն ճանչցած է, որոշ չափով ծանոթություն ունեցած է նաև պարսիկ լեզվի ու գրականության, որով և ան եղավ հետո առաջին հայ գրագետը— ու ցարդ գրեթե դեռ միակը— որ Պարսկահայոց ու Պարսից կյանքեն պատկերներ շարադրեց, և որուն պատմելու ձևին մեջ, պարսիկ, և ընդհանրապես արևելյան, զրուցագիրներու և բանաստեղծներու եղանակին ազդեցությունը հաճախ կզգացվի։

Բայց այդ արտասովոր խառնվածքը Փայաճուկ գյուղի մեկ անկյունը իր ամբողջ կյանքն անցընելու համար ծնած չէր։ Մատաղ հասակեն անոր մեջ արդեն կխմորվեին ապագա խոշոր ու հոգնալար գործի մը ծրագիրները։ 1858-ին ան ճանապարհորդեց Թրքական Հայաստան, այցելեց Տարոնի, Բաղեշի ու Վասպուրականի շրջանները, ատեն մը մնաց Վարագա վանքին մեջ, ուր Մկրտիչ Խրիմյան վարդապետը վանահայր էր այն ատեն, արդեն ծանոթ «Վասպուրականի արծիվ» և «Հայրիկ» անուններով և հեղինակ Հրավիրակ Առարատյան քերթվածին, բոցաշունչ հայրենասեր քարոզիչ և Ավետարանի ժողովրդական ոգիովը տոգորված ազատամիտ հառաջադիմասեր եկեղեցական։ Բաֆֆի կրեց անոր ազդեցությունը (տեսնել Կայծերուն մեջ անոր նվիրված խանդավառ գլուխը ու նաև ատկից շատ առաջ իր հրատարակած Արծվի Վասպուրականի տիտղոսով մենագրությունը)։ Թրքահայաստանի այդ ամենեն հին, ամենեն կարևոր, ամենեն հայ շրջաններուն մեջ ան դիտեց, ուսումնասիրեց բնանկարները, տիպարները, բարքերը, նոթեր առավ իր ապագա գործերուն համար, մոտեն տեսավ ու ճանչցավ նաև այդ շրջաններու հայ գյուղական ազգարնակության ողբալի կացությունը թուրք ու քուրդ զույգ լուծին տակ։ Այդ միջոցին էր, որ Աղթամարա կղզիին մեջ շարադրեց իր Աղթամարա վանքը գրվածքը, իր առաջին արտադրություններեն մին, որուն մեջ կգտնվի և իր Ձայն տուր, ով ծովակ բանաստեղծությունը, և որ լույս տեսավ Մոսկվայի Հյուսիսափայլին մեջ։

Իր առևտրական գործերը հետզհետե ավելի գեշ երթալով, գրեթե բոլորովին սնանկացած, մյուս կողմե իր բոլոր ուժերը ազգային և գրական գործունեության նվիրելու տենչեն հալածված, ան այլևս չդարձավ Փայաճուկ, այլ գնաց Թիֆլիս, ուր հաստատվեց։ Քիչ մը ատեն հագուստ ծախողի մը քով իբր գործակատար աշխատելով, իր ապրուստը ճարելե հետո, Խաչեն Ստեփանեի Հայոց Աշխարհ ամսագրին հրավիրվեցավ աշխատակցիլ, հետո Գրիգոր Արծրունիի Մշակին աշխատակցեցավ տարիներով, և վերջ ի վերջո՝ Արգար Հովհաննիսյանի Արձագանքին, այդ երկու լրագիրներուն մեջ հրատարակելով բազմաթիվ հոդվածներ և իր ամենեն նշանավոր վեպերուն մեծ մասը։ Ապրեցավ նյութապես անստույգ ու անձուկ կացության մը մեջ, իբր օրապահիկ ունենալով իր գրքերուն վաճառման հասույթը և այս կամ այն թերթին իր աշխատակցության համար ստացած պատվագինը, որ արդեն անբավական, Մշակի շրջանին հաճախ անկանոն կվճարվեր և երբեմն բնավ չէր վճարվեր... Վախճանեցավ հիսունմեկ տարեկանին, և այդ հարաբերաբար կարճ ժամանակամիջոցի ընթացքին, նյութական այդպիսի դժնդակ պայմաններու մեջ գտնվելով հանդերձ, ան իր հոգեկան արտակարգ զորության շնորհիվ արտադրեց այն մեծատարած ու մեծարժեք գործը, որ մեր գրականության փառքերեն մեկն է։

Իր կյանքի այդ երկրորդ ու կարևորագույն կեսի ընթացքին ան այցելեց և ուսումնասիրեց Կովկասյան Հայաստանի բոլոր ուշագրավ շրջանները, ազդեցությունը կրեց ազատական, ազգասեր կորովի հրապարակագիր Գրիգոր Արծրունիին (թեև հետո ինչ-ինչ հարցերու մասին անկից տարբեր կարծիք հայտնեց և, իբր գրագետ ու նույնիսկ իբր հրապարակագիր անկից շատ ավելի բարձր, վերջերը ժողովրդին վրա շատ ավելի խորապես ներգործեց քան Արծրունին)։ Ազդեցությունը արդեն կրած էր Աբովյանին (որուն Վերքը դեռ չտպված կարդացած էր), Միքայել Նալբանդյանին և Ստեփանոս Նազարյանին. կրեց և ազդեցությունը Չամչյան, Արսեն Բագրատունի և Ալիշան Մխիթարյաններուն, Թորոս Լեոնիի հեղինակ Սերենցին, ու եվրոպացի վարպետներեն Թշվառներու Հյուգոյին, Թափառական Հրեայի և Գազոնիք Փարիզի էոժեն Սյուին, Երեք Հրանցանակիրի Տյումային, և Վալթեր Սքոթին, որոնց գլխավոր գործերուն իզմիրյան հայ թարգմանությունները մեծ հափշտակությամբ կարդացած էր, ու նաև ազդեցությունը քանի մը ռուս «ձգտումնավոր» հեղափոխաշունչ վիպասաններու, և այս բոլոր հայ և օտար ներգործություններով ճոխացած, երեք Հայաստաններեն կրված տպավորություններով, նոթագրված հիշատակներով զինված, իր ի ծնե հարուստ և ուժեղ իմացականությունը, գերզգայուն քնարերգական հրավառ խառնվածքի մը միացած, ընդունելով մանավանդ գերագույն ցնցումը, զոր իրեն տվին 1877—1878-ի ռուս-թուրք պատերազմի միջոցին և անկից անմիջապես հետո Թրքահայաստանի մեջ և հայկական հարցին շուրջ պատահած հոգեզորդ դեպքերը, ինքզինքը արտահայտեց գործերու երկար շարքի մը մեջ, որոնք հայ մտավորական երկինքը շքեղ ու կենսահորդ ճառագայթներով շողացող համաստեղության մը պես լուսավառվեցին։

* * *

Բաֆֆին իր գրական սկզբնավորությունն ըրավ՝ Ս. Նազարյանի և Մ. Նալբանդյանի Հյուսիսափայլին և Խրիմյան Հայրիկի Արծիվ Վասպուրականին մեջ հրատարակելով Պարսկահայաստանի և Պարսկաստանի վրա տեղագրական, բարքագրական հոդվածներ և Թրքահայաստանի մեջ իր պատյաններու տպավորությունները։ Առաջին վեպը, զոր արտադրեց, եղավ Սալբին, ամբողջությամբ պարսկահայկական կյանքի քաղված. այդ մեծածավալ վեպը, որ անտիպ մնաց իր կյանքի ընթացքին և որուն առաջին հատորը հեղինակին մահվենեն հետո իր այրին հրատարակեց, ըստ նույն ինքն Բաֆֆիի հառաջաբանին՝ սկսած էր գրվիլ

1885-ին, Թիֆլիս, հեղինակը գիմնազիոնի աշակերտ եղած միջոցին. «Մի վիպասանական գրվածք, կրսե, որ պատկերացնում էր Պարսկահայոց կյանքը յուր բոլոր ավերված և այլանդակված կերպարանքներով»։ Ու կավելցնե. «Եվ այդ հեղինակությունը մի փոքր ախորժելի կացուցանելու համար ծույլ և անդրասեր հասարակությանը, հորինեցիմ նրան ռոմանսի ձևով...)։ Նախ դրաբար էր շարադրված այդ վեպը, բայց 1858-ին, Հյուսիսափայլի երևումեն հետո, սույն թերթի ազդեցության տակ զայն աշխարհաբարի կվերածե (հավանորեն նաև վերամշակելով և լրացնելով), ինչպես կրսե հառաջաբանին հետևյալ շահեկան տողերուն մեջ. «Սալբին, մեր նույն ժամանակի գրականության հոգվույն համաձայն, գրված էր գրաբար լեզվով, բայց երբ 1858 թվին երևցավ պատվական Հյուսիսափայլը՝ տալով մեր լիտերատուրիային մի նոր հոգի, մի նոր կերպարանք, այն ժամանակ և մենք զգացինք մեր սխալը, մեր վեպի հին լեզուն դեպի նորը փոխելով»։ Այդ վեպը գրված է, ինչպես կտեսնվի մեջբերված այս հատվածեն, այդ շրջանի դեռ անկազմ, խառնակ աշխարհաբարով, և հրատարակիչը լավ բրած է՝ միայն հառաջաբանին լեզվական նախկին ձևը պահպանելով և վեպին լեզուն արևելյան կանոնավոր աշխարհաբարի վերածելով։ Սալբին, Աբովյանի Վերքին ինչպես և Հյուսիսափայլի երկու վարպետներուն, մասնավորապես Միքայել Նալբանդյանին, որուն և ձոնված է այդ գործը, գաղափարներուն ազդեցության տակ գրված, կներկայացնե, ինչպես Վերքը, պարսիկ խաներու մոլեռանդ ու գռեհիկ լուծին տակ ինքզինքն իր ազգային ազատությենեն զրկված և իր կրոնական տոհմային սրբություններն արհամարհված ու նախատված և իր ընտանեկան հարկի պատիվը անարգված տեսնելով տառապող ժողովուրդի ողբմելի կացությունը և կուրվագծե այդ կացության դեմ ընդվզումի շարժում մը փորձող դեմքեր։ Վեպը, սկսնակի մը գործ, ունի թերություններ, բայց արդեն այնտեղ կզգացվի, ինչ-ինչ անձնավորությանց՝ որ կենդանի ու ինքնատիպ են՝ պատկերացման և ինչ-ինչ հուզիչ տեսարաններու նկարագրության մեջ, մեծ վիպասանին լիովին չկազմված, բայց արդեն իսկ անձնադրոշմ տաղանդը։

Առաջին գործերը, զոր Բաֆֆի հրատարակած է գրքի ձևով, իր պատկերներն ու վիպակներն են պարսից, պարսկահայոց և Թիֆլիսի հայոց բարքերեն քաղված, և որոնք գրված են մեծ մասամբ Թիֆլիսի ուսանողական շրջանն ավարտելով Փայաճուկ դառնալեն հետո՝ այնտեղ իր անցուցած տարիներու ընթացքին, ու մասամբ՝ Թիֆլիս վերադառնալեն ու հոն հաստատվելեն հետո։ Այդ շարքերուն մեջ, որոնք հրատարակվեցան 1874-ին Փունջ տիտղոսված երկու հատորով, կգտնվին այն գրական գոհարները, որ են Բիբի Շարաբանի, ուր կպարզվին մոլեռանդ

մահմեդական դարձած պարսիկներեն արհամարհված փարսիներու կյանքեն տեսարաններ, Խազ-Փուշներ, ուր կեղեքիչ անսիրտ մեծատունն ու իշխանավորն ատող, ցավատանջ ու ըմբոստ չքավորներուն բարեկամ Հյուկոյի աշակերտ Բաֆֆին կերևա, և մանավանդ այն զմայելի վեպը, ոչ-ժբախտաբար անավարտ թողած, որուն տիտղոսն է Հարեմ, և ուր պարսիկ բարքերու ցայտուն ու գունագեղ պատկերացմանը մը հետ կգտնենք Հայկական ողբերգության սրտահույզ դրվագներու ճարտար ընդելուզում մը։ Բրտորեն առևանգված, գերի տարված, պարսիկ բռնակալ խաղամ մը։ Բրտորեն առևանգված, գերի տարված, պարսիկ բռնակալ խաղամ մը հարեմին մեջ փակված հայ աղջկան մը պատմությունն է, որ հետզհետե կեդրոնական նյութը կդառնա վեպին և որ շրջացած երկրորդ մասին մեջ՝ այդ Հայուհիին և անոր հայ սիրականին Թրքահայաստան գեր, եթե Բաֆֆի ավարտած ըլլար Փայաճուկի մեջ գրել սկսած այդ գործը։ Բայց գարշելի հայ մը, ծիծաղելի գլխով ու սև սրտով կրոնական մը, Հարեմի առաջին մասին հրատարակումեն հետո մատնած է Բաֆֆին պարսիկ կառավարության՝ իբր պարսիկ ժողովուրդին ու կառավարության մասին չարախոսական և ապստամբ բաներ գրող մարդ։ Մահմեդական հոգևորականությունը սոսկալի փոթորիկներ հարուցած է Բաֆֆիի դեմ, ինչպես կգրե Տիկին Բաֆֆի Սալբիի հրատարակության նյանքին իր նախաբանին մեջ, որով և հեղինակը ոչ միայն զգուշացած է Սալբին մեջ ըսելիքը ուրիշ և ավելի ընդարձակ ձևով արտահայտած է Ջալալեդդինին, Խենթին, Կայծերուն մեջ, հայ ազատագրական տոմարը լի լույս ընծայելե, այլև չէ լրացուցած Հարեմը (թեև անոր երկրորդ մասին մեջ ըսելիքը ուրիշ և ավելի ընդարձակ ձևով արտահայտած է Ջալալեդդինին, Խենթին, Կայծերուն մեջ, հայ ազատագրական տոմարը պարսկահայ շրջանակեն փոխադրելով թրքահայ շրջանակը)։ Հարեմին մեջ Բաֆֆիի ազատատենչ ու մարտասեր ոգին և վիպասանի հմայիչ տաղանդը լիովին կերևան արդեն, ու բոլորովին բնական կգտնեմ, որ Գամառ-Քաթիպայի պես Բաֆֆիի հոգվույն եղբայր հոգի մը, կարդալե հետո Հարեմը, անոր ուղղած ըլլա այն ազնիվ խանդավառությամբ լի նամակը, ուր կըսե. «Ձեր արձակը յուր սեռումը թե՛ ներքին և թե՛ արտաքին հյուսվածքի կերպով և թե՛ առարկայի ժամանակակցությամբ, միով բանիվ ամեն կողմանե նոր երևույթ է մեր նորածին գրականության մեջ... Դուք այն բանաստեղծներեն եք, որոնց մեջ մշտավառ կա հին մարգարեների աստվածաշունչ ոգին, որ մինչև այնքան կխլրտի ձեր մեջ մինչև ազգին ցույց կտա իր դրոշը և երթալու ուղիղ ճանապարհը...»։

Գրիգոր Արծրունիի պես ազգասեր ու հառաջադիմասեր հրապարակագրի երևումը, Մշակի հիմնարկությունը, Մշակի շուրջ հավաքված արժեքավոր մտավորականներու խումբ մը կազմությունը, խումբ, որուն

մեջ էր նորափետուր վիպասան Բաֆֆին, ուժգնորեն նպաստեցին անոր տաղանդին ու աշխարհայացքին զարգացման ու վերջնական կազմավորման։ 1877—78-ի ռուսո-թուրք պատերազմը, այդ պատերազմին հետևանքով՝ Պուլկարիո ազատագրումը (Հունաստանի, Սերպիո և թուրքին հպատակ ու գերի այլ քրիստոնյա ազգերու ավելի կանուխ իրականացած ազատագրումեն հետո), այդ պատերազմէն քիչ առաջ Վանա հայ թաղերու հրկիզումը, պատերազմի ընթացքին Թրքահայաստանի կարևորագույն շրջանին հայ զորավարներով ղեկավարված զորքի ձեռքով գրավումը, Պոլսո Հայոց Պատրիարքարանի կողմե Սան Սթեֆանո և հետո Պերլինի դիմումը՝ «Հայկական Հարց»-ի մասին (այսինքն ինքնավար Թրքահայաստանի մը կազմությունը խնդրելու համար), Պերլինի վեհաժողովին ձախող արդյունքեն հետո ռուս զորքին Թրքահայաստաներու ենթարկվիլը և անոնց մեկ բավական բազմաթիվ հատվածին Կովկասյան Հայաստան ապաստանիլը, էջմիածնա մեջ դիզված՝ սովի ու զանազան հիվանդության հարյուրավոր զոհեր տալը, խորապես հուզեցին Բաֆֆին, որ անձամբ էջմիածին ալ գնաց, այդ թշվառ փախստականները տեսավ, անոնցմե իմացավ Թրքահայաստանի մեջ անցած դարձած դժոխային դեպքերը և ահա այդ ատեն է, որ Բաֆֆի սկսավ գրել իր այն քանի մը վեպերը, որ իր գործին կեդրոնական, էական բաժինը պիտի կազմեին, Ջալալեդդին վիպակը, Խենթը վեպը և քանի մը տարի հետո՝ Կայծեր մեծ վեպի առաջին հատորը, և ալ ավելի ետքը այդ վեպի երկրորդ հատորը։

* * *

Ատոնցմով Բաֆֆի ուղղակի կշարունակեր, բայց մեծ ընդլայնումով մը և հոգեբանական կարևոր փոփոխություններով, Խաչատուր Աբովյանի Վերք Հայաստանիով սկսված գործը, այն է դարերե ի վեր իր անկախությունը կորսնցուցած հայ ժողովուրդին այժմեական ամենեն կարևոր հարցը, ազատագրության հարցը վեպի նյութ դարձնել։

Աբովյան Վերքին մեջ կնկարագրեր պարսիկ լուծին տակ հայ ժողովուրդի քաշկրտած սարկական ամոթալի ու տառապագին գոյությունը, կտարփողեր այդ լուծին դեմ ընդվզումի առաջին ճիգ մը ցցող Աղասին ու իր ընկերները և կ'օրհնաբաներ ռուս «փրկիչ» զորությունը, որ եկավ պարսիկ տիրապետությենեն ազատել Հայաստանի և հայ ժողովուրդի մեկ կարևոր մասը և գովել այն հայ ղեկավարները, որ ռուս զորության, Հայաստանի այդ շրջանին մեջ իր փրկարար դերը կատարե-

լուն օգնած էին։ Աբովյանի պատմածները իրոք տեղի ունեցած դեպքեր էին, Աղասին և իր ընկերները իսկապես գոյություն ունեցած էին, Աբովյան զարգացուցած կամ միկնաբանած, դյուցազներգած կամ պատկերագրած էր զանոնք, բայց չէր հնարած։ Ատկից զատ, Աբովյան ոչինչ ուներ հակակղերական. ընդհակառակն, ան խորապես կհարգեր քրիստոնեական կրոնքը, պաշտում ուներ հայ ազգային եկեղեցիին համար ու սեր անոր պաշտոնյաներուն հանդեպ, շատ լավ կզգար ու կ'արտահայտեր ինչ որ հայ ժողովուրդը իր ազգային գիտակցությունն ու մշակույթը զարգացնելու և գերության դարերի ընթացքին զանոնք պահպանելու գործին մեջ՝ կպարտի այդ ազգային եկեղեցիին։ Վերջապես ան կզգար, որ երկու մոլեռանդ ու զորեղ մահմեդական ժողովուրդներու (Թուրքին ու պարսիկին) լուծին տակ գտնվելով, և ատկից զատ զինված, բռնակալ ու ավազակաբարո քյուրտ աշիրեթներու փորձանքն ալ ունենալով իր գլխուն վրա, հայ ժողովուրդը չէր կրնար միմիայն իր ուժերովն ինքզինքը փրկել. ան կխորհեր թե այդ ազատագրման համար, հայուն բարոյական ու ֆիզիկական պայքարը անհրաժեշտ էր, բայց եվրոպական քրիստոնյա մեծ տերության մը (ըստ Աբովյանի՝ ռուս տերության ու միայն անոր) միջամտությունը նույնքան և ավելի անհրաժեշտ էր։ Հայտնի են Վերֆին այն բոլոր հատվածները, ուր Աբովյան իր երախտագիտությունը հայտնած էր Ռուսին՝ իր հայրենիքի և ազգի մեկ մասը պարսիկ լուծեն ազատած ըլլալուն համար, և ուր, մերթ իր այդ զգացման արտահայտությունը կհասնի նույնիսկ անգիտակցորեն ստրկամիտ ծայրահեղությանց։

Ջալալէդդինին ու Խենթին մեջ Բաֆֆի կմեկնի իրական դեպքերե ու դեմքերե, բայց երկուքին մեջ ալ ամենեն կարևոր տեսարաններն ու ամենեն էական դերակատարները հեղինակեն երևակայված են։ Իսկ Կայծերուն մեջ, վեպին երեք քառորդը հեղինակին երևակայությանը ծնունդ է։ Ատոնց մեջ պատմված դեպքերեն ոմանք, քյուրտ ցեղապետ Շեյխ Ջալալէդդինի արշավանքն ու հայերու կոտորածը 1878-ին, որ և Խրիմյան Հայրիկին թելադրած է Հայգուժ բողոքախառն եղերերգությունը, որ Բաֆֆիի վեպեն ալ առաջ լույս տեսած է (1), ռուս-Թուրք պատերազմի միջոցին Պայազիտի պաշարումը Թուրք բանակեն և Սամփսոն-Վարդանի հերոսական ու փրկարար քայլը, Պերլինի զվվելի Վեհաժողովին որոշմամբ ռուսական բանակի Թրքահայաստանեն քաշվելեն հետո՝ Ալաշկերտի շրջանի հայերու կոտորածի ենթարկվիլը և ողջ մնացողներուն խուճապահար փախուստը դեպի Կովկաս և անոնց մեկ մասին սովի ու հիվանդությանց զոհ երթալը էջմիածնի մեջ ու ասոնց նման դեռ քանի մը դեպքեր, ժամանակակից հայ պատմության էջեր են, զոր կենդանի, տպավորիչ, ուժեղ գույներով ներկայացուցած է մեր բանաստեղծ վիպասանը իր ջերմ ու հզոր վրձինով։ Կայծերուն ու Խենթին մեջ այդ օրերուն Թրքահայաստանի մեջ տիրող ընդհանուր կացության պատկերացումը, սովորական ու միշտ կրկնվող դեպքերու հիշատակումը, հայ վանքերու, դպրոցներու այդ ատենվան վիճակը, իրականեն առնված են, անոնց սևն ու ճերմակը մերթ հեղինակին գաղափարներուն համեմատ ավելի կամ նվազ շեշտված։ Ներկայացված տիպարներուն համեմատ ավելի կամ նվազ շեշտված։ Ներկայացված տիպարներեն մեկ քանին, Խենթին Թոմաս էֆենտին, որ Զարդարյանի Սև ճավը կանչեցի մռայլ խոճապարիին մեկ քստմնելի նախատիպարն է, հզորապես պատկերացված (բացի վերջին հանկարծական զղջման ու ինքնապատժման փուլեն, որ հարկ եղած չափով չէ բացատրված բնական երևալու համար), նույն վեպի խաչո տանուտերը, ազնիվ պետ նահապետական ընտանիքի մը, իր գորովալից ամուսինը Սառան, իր երկու որդիները, Հայրապետ և Աբո, և իր զմայլելի դստրիկը շնորհագեղ Լալան, զոր քյուրտ պեկերեն առևանգվելու վտանգեն զերծ պահելու համար՝ Ստեփանիկ անուն պատանիի մը ծպտումը տված են անոր, քյուրտ արյունարբու խորամանկ ցեղապետ Ֆաթթահ պեկը, անոր ամուսին Խուրշիդ հանըմը և այս վերջնույն բարի քուրդ աղախին Ջավոն ու Կայծերու համբավավոր Տեր Թոդիկը, հին գլխով, տգետ, բռնակալ, մոլեռանդ ու գձուձ վարժապետը, և Վանա Թուրք կուսակալ փաշայի տիպը և քյուրտ ցեղապետներուն մեղսակից, հայ ժողովուրդը կեղեքող վաշխառու տրզրուկ «երևելի» հայ վաճառական Քեռի Պետրոսը, ու հայ գյուղացի աղջիկան պաշտելի դեմքերը, քնքուշ, բարեսիրտ, անձնվեր Սոնան, բուռն, կովասեր ու ազնիվ Մարոն ու դեռ ուրիշներ ալ, նույնպես իրական կյանքեն առնված են, թերևս ոչ նույնությամբ օրինակված, այլ ոմանտիկ ձգտումով մը և ճաշակով մը քիչ մը չափազանցված, բայց միշտ հիմքին մեջ կենդանի։ Ատոնցմե դուրս, սակայն, այդ վեպերուն բոլոր ըմբոստ տիպարները, դավադրական վիպաձև ու խիզախ միջոցներով բռնության դեմ կռվող հեղափոխականի դեմքերը, Ջալալէդդինի Սարհատը, Դելի Քեշիշը, Քիթապ Դալիսին և քյուրտ ցեղապետ մռայլ ու զորեղ Ջալալէդդինը, և բարի ու թույլ Եղիազար վանահայրը, և ազնիվ Եղիտի Մստոն, Խենթին Վարդանը, իրական Սամփսոնով սկսած, բայց Բաֆֆիական ինքնաստեղծ հերոսի մը հանգած, ու փրոփականտիստ Գուդուկեֆյանը և վաճառականի ձև առած Մելիք-Մանսուրը, Կայծերուն

1 Վանա հրկիզման նվիրված Խրիմյանի Վանգուժը լույս տեսած է Պոլիս 1877-ին, Հայգուժը լույս տեսած է տարի մը հետո։

Կարոն, Ջալլադը, Սաքոն, հեղափոխության ուսուցիչ և առաջնորդ Ավո որսորդը իր հսկա ամեհի Մհե ծառան, և Համբը, Ասլանը կատաղի ու խորամանկ հեղափոխականի փոխված նախկին խաչագող Մուրատը և Հյուբբին՝ հանդուգն ու խորհրդավոր հայ աղջիկը, և դեռ ուրիշներ, ու այդ բոլորին կատարած գործերը, Բաֆֆիի հոգին ու մտքին ծնունդն են։ Ատոնք բաղձանքները, տեսիլները, երազներն են հայրենասեր և ազատասեր մեծ գրագետի մը։ Բաֆֆի տառապած է տեսնելով իր ցեղը, որ ատենով եղած էր զինվորական քաջ և ուժեղ ժողովուրդ մը, մարդկային արժանապատվությունն անարգող բռնակալությանց տակ կքած, և բացի Հայաստանի ու Կիլիկիո քանի մը լեռնական մասերեն (Ղարաբաղ, Սասուն, Զեյթուն, ևն), ուր այդ ցեղն իր մարտական հատկությունները պահած էր դեռ, գրեթե ամեն տեղ համակերպող, չհանդուրժվելիք բաներու հանդուրժող, նույնիսկ անհատապես բողոքելու, հակազդելու, ընդվզելու որևէ փորձ չընող, կամ այդ հանդգնությունը չափազանց քիչ ցույց տվող։ Տեսած է նաև ինչ որ միմիայն եվրոպական տերությանց միջամտության վրա դրված հույսը կուտա իրը արդյունք. Պերլինի վեհաժողովը և անոր դաշնագրին մեջի տված սնամեջ 61-րդ հոդվածը, այդ ժխտական արդյունքին որոշ ապացույցը հայթայթած էին իրեն. ռուս բանակը քաշված, Պերլինի դաշնագրով խոստացված բարենորոգումները չէին գործադրված, Թուրքը ավելի ևս մղած ու խրախուսած էր քյուրտերն ու իր պաշտոնատարները, որ հայերը կեղեքեն, ուրեմն և թրքահայոց կացությունը, Բարձր Հայքի շրջանին մեջ մասնավորապես, ավելի վատթար դարձած էր։ Բաֆֆի լսած ու խորապես ըմբռնած էր Խրիմյան Հայրիկի խորհրդավոր խոսքը Պերլինեն դարձին արտասանած. «Ուրիշները երկաթե շերեփով եկան Պերլինի վեհաժողովի որոշմանց կաթնային մոտ և հաջողեցան իրենց բաժինն առնել, մենք մեր թղթե շերեփով ոչինչ կրցանք ստանալ». Բաֆֆի իրավացի գտած է այդ խոսքը, որ իր հիմքին մեջ ճիշտ է իրոք, վասնզի, բռնակալության մը գերի եղող ոչ մեկ ժողովուրդ միմիայն օտար տերությանց միջամտության շնորհիվ չէ ազատած իր շղթաներեն և իր լիակատար անկախությունը վերստացած։ Բաֆֆի ոչ միայն ճիշտ գտած է Խրիմյան Հայրիկի խոսքը, այլև զգացած է, որ այդ խոսքը կհամապատասխաներ նաև «Բամփորոտան»-ը երգող Ալիշանին, Զեյթունի «քաջորդին» երգող Պեշիկթաշլյանին, Ազատն Աստված երգող և աղգասեր ու ազատապաշտ հեղափոխականի ամբողջ գրականություն մը հիմնող Նալբանդյանին, բռնության դեմ ապստամբներու նախատիպար, «Ազատության տիրագլուխ» և հայ հայրենիքի հիմնադիր Հայկը դյուցազներգող Բագրատունիին, Լևոնի որդի Թորոսին վրեժխնդիր ու ազատատենչ և հաղթական

պայքարը փառաբանող Ծերենցին, ինչպես և ժողովրդական քաջարի հերոս Աղասին երգող Աբովյանին և դեռ ատոնց պես քանի մը խրոխտ ու առնական սրտով հայրենասեր գրողներու գործերուն ներքին տիրական ոգին։ Եվ սակայն, իր բոլոր նախորդներեն տարբեր, փոխանակ անցյալի դեպքեր պատմելով կամ հին հայ հերոսներու դեմքեր տարփոդելով ժողովուրդը ոգևորելու և դեպի ազատագրական պայքար մղելու, այն ինքն իսկ ստեղծեց այն տիպարները, զոր կուզեր մարմնավորված տեսնել և անոնց գործել տվավ արարքներ, որոնց իրականացումը կ'երազեր։ Այդ նորանշան սիստեմը, զոր հայ գրականության մեջ դեռ ոչ մեկը չէր կիրարկած, եվրոպական գրականության մեջ ալ տակավին հազվադեպ էր այն ատեն։ Հյուկոյի Թշվառներուն ու ռուս մեծ վիպասաններու գործերեն ոմանց մեջ ատիկա կտեսնվեր, բայց տարբեր ձևով ու ոգիով,— համամարդկային ու ընկերական և ոչ զուտ աղգային իդեալի մը ձգտող ոգիով տոգորված. ավելի ետքը Ժյուլ Վերն, Ռոնի, Ուելս, Անաթոլ Ֆրանս (ձերմակ քարին վրա տիտղոսով իր վեպին մեջ), գիտական, ընկերական, հոգեբանական տեսակետով մարդկային ապագա կյանքի տեսիլներ և այդ ապագա կյանքին համապատասխանող տիպարներ հղացան ու գծեցին։ Իսկ ռուս վիպասանները ավելի շեշտված ձևով շարունակեցին ինչ որ իրենց մեծ նախորդներն սկսած էին արդեն։ Ջերնիշևսքի ռուս վիպասանին գործերեն մեկուն մեջ, կըսեր ինծի ռուսահայ բարեկամ մը, կա ընկերական ապագա կյանքի տեսիլ մը պատկերացնող գլուխ մը, որմե Բաֆֆի կթվի ուղղակի ներշնչված ըլլալ գրելու համար Խենթի վերջին գլուխը՝ Վարդանի երազը, ընկերվարական իդեալն իրագործած ապագա Ռուսաստանի մը երազանկարին տեղ, օտար լուծերեն ազատած ու ընկերական անհավասարություններեն ու կրոնական մոլեռանդության նախապաշարումներեն ալ զերծ ապագա Հայաստանի մը տեսիլը ներկայացնելով։

Երազի գաղափարը հին քերթողներու մեջ ալ կգտնենք. Միլտոնի Դրախտ կորուսյալին մեջ կա Ադամի երազը, ուր մեր նախահայրը իրմե սիրելիք մարդկության դարավոր կյանքին էական դեպքերուն ուրվագիծը կ'ընդնշմարե, և ատոր հետևողությամբ Հ. Արսեն Բագրատունի շարադրած է իր Հայկին գեղեցկագույն հատվածներեն մին. ուր կպարզե հայ ցեղին պատմական ճակատագիրը, որ երազի մը մեջ նախահոր կերևնա։ Տարբերությունը այն է, անշուշտ, որ Միլտոնի և Բագրատունիի նկարագրած երազին տարրերը արդեն գոյություն ունեցած դեպքեր էին, մինչ Բաֆֆի, ինչպես Ջերնիշևսքի կամ այն մյուս եվրոպացի քանի մը վիպասանները, զոր հիշեցի վերև, կնկարագրեն տեսիլներ ապագա կյանքի մը, որ իրենց ձգտումներուն և իղձերուն մեջ միայն գոյություն ունի

դեռ։ Բաֆֆիի նախաբեսական պատկերները, Վարդանի երազը, Կայծերու վերջին գլուխներու կանխագուշակ տեսիլները համամարդկային ընկերական, բարոյական բնույթ ունին մասամբ, բայց գլխավորապես հայ ցեղի ապագային մտահոգությամբը տոգորված են, հայ ժողովուրդի և հայ հայրենիքի այդ լավագույն ապագան է, որ հեղինակին բաղձանքներուն ու մտածումներուն համեմատ, որպես թե արդեն իսկ իրականացած ցույցը կուտան։

Բաֆֆի կցանկանար, որ մարտական արի ոգին, զոր պահած էին Սասունի, Զեյթունի, Ղարաբաղի բարձունքներու հայերը, Թրքահայաստանի, Ռուսահայաստանի, Պարսկահայաստանի բոլոր հայերուն փոխանցվեր, Հայը այլևս փրկվելու համար հույսը Եվրոպայի վրա չդներ, այլ ի՛ր վրա, չհանդուրժեր անհանդուրժելի անարգանքներու, իր ինքնապաշտպանությունը կազմակերպեր, ճարվածին հարվածով պատասխաներ, քյուրտին գեմ քյուրտ ու թուրքին դեմ թուրք ըլլար։ Տիպարները, զոր Բաֆֆի ստեղծեց, ա՛ռ է որ կքարոզեն, առ է որ ի՛րագործեն։ Եվ այդ տիպարները իրոք երևան եկան Բաֆֆիի մահեն քիչ հետո. հայ ժողովուրդը ամբողջությամբ չհետևեցավ Բաֆֆիի ցույց տված ճամփուն, փոքրաթիվ երիտասարդություն մը միայն խանդավառվեցավ այդ իդեալով ու ջանաց կետ առ կետ գործադրել ինչ որ Բաֆֆիի հերոսները կ'ըսեին ու կ'ընեին։ Հնչակյան, արմենական, դաշնակցական, վերակազմյալ, գրեթե բոլոր խիզախ ու հերոսական խառնվածքով երիտասարդները, որ հայ ազատագրական հինավուրց պայքարին այդ նոր փուլը ապրեցան 1890-են սկսյալ, միմիայն Բաֆֆիի գործերով չէ, որ ոգևորված ու պայքարի մղված էին, բայց անոնցմե շատերը գլխավորապես Բաֆֆիի հերոսներու հետևողներ եղան, ոմանք նույնիսկ այդ հերոսներու անունն առին իբր իրենց ստանուն կամ մարտանուն։ Սասունի առաջին ընդվզման շարժումը (1894-ին) սարքող երկու հնչակյան հեղափոխական գործիչները, Համբարձում Պոյաճյան և Միհրան Տամատյան, Մուրատ և Ֆարհատ կեղծանուններն առած էին և անոնցմե հետո հնչակյան, արմենական, դաշնակցական, վերակազմյալ՝ ինչքա՜ն գործիչներ Սաքո, Կարո, Ասլան, Համո, Որսորդ կոչվեցան։

Գրականությանց պատմության մեջ քիչ անգամ տեսնված է, որ գրագետ մը այդպիսի արագ և ուժեղ ազդեցություն ունեցած ըլլա իր ժողովուրդին մեկ կարևոր մասին նկարագրին և ամբողջության ճակատագրին վրա։ Մեր ժամանակներու ազատագրական շարժումը իբր ներշնչող ու պատրաստող ունեցած է խումբ մը հայ մեծ մտքեր, զոր արդեն հիշատակեցի՝ Մխիթար, Արովյան, Նալբանդյան, Բագրատունի, Ալիշան, Խրիմյան Հայրիկ, Պեշիկթաշլյան, Գամառ-Քաթիպա, Ներենց

ևն. բայց այն գրագետը, որ այդ նախապատրաստված էլեքտրականությունը պայթեցնել տվավ, կուտակված ու բորբոքած ուժերը գործի մղեց, Բաֆֆի վիպասանը եղավ։ Բաֆֆին ատով մեծագույն ապացույցներեն մին հանդիսացած է գրականության բարոյական ու քաղաքական խորունկ ու թանկագին զորություն մը ըլլալուն։ Իր ժողովուրդի թշվառ կացության պատճառներեն մեկը անոր բարոյական թուլացման մեջ տեսնելը և այդ ժողովուրդի թերությունները օտար թշնամի կամ բռնակալ տարրերուն չարագործությանց չափ խստությամբ դատելն ու դատապարտելը՝ անկեղծ, անողոք հայրենասերի մը, արմատական լուծման հասնիլ ուզող, ներքին և արտաքին ազատագրման հանգիլ ցանկացող մտավոր գործիչի մը արդար ու առողջ ջանքն են։

Այդ ջանքը մերթ չափազանցությանց և անարդարությանց մեջ կմոլորի, ինչպես, օրինակ՝ Ջալալեդդինին մեջ, ուր իր ստեղծած հեղափոխական տիպարները— որոնց մեկն ալ Դելի-Քեշիշ (խենթ քահանա) անունն առած սքեմաթող կրոնական մըն է. հայհոյանքներ կուղղեն մեր նախնյաց, մասնավորապես մեր հին կրոնական պետերուն, եկեղեցական գրողներուն, որոնք, իբր թե, եղած են հայ ժողովրդին մեջ ստրկամտությունը, համակերպող ոգին արմատացնողները։ Ճիշտ չէ ատիկա, որովհետև եթե ունեցեր ենք ստրկամիտ առաջնորդներ՝ եկեղեցական թե աշխարհական դասեն, հայ ազգային եկեղեցին՝ մեր քաղաքական անկախության կորուստեն հետո, եղեր է դարերով ազգապահպան մեծ ուժ մը, և ստրկամիտ եկեղեցականներուն քով մենք ունեցեր ենք հերոսական ոգիով ազգանվեր եկեղեցականներ, որոնք մեր ժողովուրդի ազգային գոյության պահպանման, ինքնուրույն մշակույթին զարգացման, քաղաքական ազատության վերականգնման ճիգերուն մեջ մեծ դեր, մերթ մեծագույնը կատարած են անցյալ դարերուն ու վերջին կես դարուն ալ։ Բայց այդտեղ Բաֆֆի կթվի իր լծակիր ժողովուրդին ստվար մեծամասնության իրավորական համակերպման չափազանցությունը կծռ խարանումի չափազանցությամբ մը բռնել ցանկացած ըլլալ, կամ հայ կրոնական դասուն հոգի տիպերուն թերությունները (որ իրական են) մատնանիշ ընելով, շեշտելով, նույնիսկ մերթ ընդհանրացնելով՝ այդ կարևոր դասը այդպիսի ծանր ու աղետաբեր թերություններեն ազատելու ձգտած ըլլալ։ Խենթին մեջ, որ զմայլելի գործ մըն է, գրեթե ամեն ինչ իր ճիշտ չափը պահած կներկայացվի. հոն գրեթե յուրաքանչյուր էջին, այսօր իսկ քեզ համազգաց կգտնես հեղինակին։ Կայծերուն մեջ ամեն բան կա. կարելի է ըսել թե ան հայ ազատագրական պայքարի, նույնիսկ հայ հայրենասիրության բոլոր հարցերուն վրա իր խոսքն ըսող

տեսակ մը ավետարան է։ Տարօրինա՜կ գործ, որ վեպ է և չէ, որ, որոշ տեսակետով մը, վեպ է ավելի բարձր երկ մըն է, և որ թեև ունի ինչ ինչ մասեր, որ քիչ մը չափազանց հրապարակագրական ու ընթացիկ են, կամ որ կրկնություն կկազմեն, երկար և ավելորդ հատվածներ կպարունակեն, մինչև այսօր կկարդացվի իր մեծ մասին մեջ հետաքրքրությամբ, հաճույքով և հաճախ հուզումով։ Ինչե՜ր, ինչե՜ր կան հոն,— ԺԹ. դարու կեսին և անկից քիչ հետո՝ Պարսկահայաստանի գյուղի մը մեջ մանրամասն պատկերը հայ դպրոցի մը և ընդհանրապես հայ տիպարներու և բարքերու, Թրքահայաստանի գլխ. շրջաններուն մեջ (Վան, Մուշ, Բաղեշ են.), բնության տեսարաններու գեղեցիկ նկարագրություններ, զանազան ցեղային տարբերու փոխհարաբերությանց մասին տեղեկություններ, թուրք և քուրդ կրկնակ լուծին տակ հայ ազգաբնակության ստրկական կացության պատկերացում, Վասպուրականի ու Տարոնի գլխավոր վանքերու և «անապատ»-ներու ներքին կյանքին մանրամասն ներկայացում (իրենց հոռի և լավ կողմերով), ակնարկներ Հայոց հին պատմության զանազան շրջաններուն և դեմքերուն վրա և անոնցմե ներկա հայության դասեր հանելու ջանքեր ու դեռ ասոնց պես շատ բաներ։ Եվ այդ բոլորին քով, Կայծերուն մեջ ավելի լայն շափով ու ավելի շեշտված ձևով, կգտնենք Բաֆֆիեն երազված, հղացված, ստեղծված տիպերը, տեսարանները, դեպքերը, հայ ժողովուրդի ազատագրության համար նոր ու հանդուգն միջոցներով մաքառող գործիչները, անոնց այլազան ձևերով մղած պայքարը, և վեպին վերջին մասին մեջ անոնց ճիգերուն իբր հանգումը երևակայված ապագա լավագույն կյանքի տեսլապատկերները։

* * *

Հայ ազատագրական պայքարի մասին Բաֆֆիի գաղափարաբանությունը, որ Ջալալեդդինին, Խենքին և Կայծերուն մեջ գլխավորապես և ամենացցուն կերպով կ'արտահայտվի, ուժեղ է, ազնիվ, խրոխտ, իր հիմքին մեջ ճիշտ, բայց իր ամբողջական արտահայտմանը մեջ՝ պարզ, չափազանց պարզ։ Ան կկայանա, ինչպես ըսի արդեն, քարոզելու մեջ ստրկական ամոթալի կացության մը անհանդուրժելի անարգանքին այլևս չհանդուրժելու պարտականությունը, բռնակալ ուժին դեմ ընդվզման ուժ մը ցցելու և փրկությունը օտարին միջամտությենեն սպասելու տեղ, միմիայն կեղեքյալ ժողովուրդին իր իսկ գոյացուցած ուժեն, ճիգեն, զոհաբերությենեն, հանդգնությենեն հուսալու անհրաժեշտությունը։ Ատիկա, որ «դուն քեզի օգնե, որ Աստված ալ քեզի օգնե» ֆրանսիական ծանոթ առածին տեսակ մը ընդլայնումն է, կյանքի առողջ իմաստասիրություն մը, պայքարի բեղմնավոր ուղեգիծ մըն է, բայց իր գործադրման մանրամասնությանց մեջ, ինչպես Բաֆֆի իր այդ վեպերով ատոնք ցույց է տված, կներկայանա անկատար, անորոշ, միամիտ ու «գրքական» ձևով մը պատկերացված։ Հայ ժողովուրդը և իր հայրենիքը երեք բռնակալ պետությանց լուծին տակ գտնվելով, ընդարձակ հողամասի մը վրա տարածված, ցրված, բավական ստվար մաս մըն ալ Կովկասի և Փոքր Ասիո մեջ, բուն Հայաստանեն դուրս եղող շրջաններու մեջ հաստատված, ու գրեթե ամեն տեղ փոքրամասնություն կազմելով՝ զանազան ցեղե մահմետական տարրերու հոծ, մոլեռանդ, հետամնաց ու հաճախ վայրագ զանգվածներու մեջ, իր ազատագրման գործը շատ կնճռոտ, շատ դժվար, կովող ուժի հետ հաշվող խելք պահանջող գործ մըն էր։ Բաֆֆի Հայաստանն ու Հայությունն իրենց մեջ բաժնող բռնակալ տերություններուն երեքին ալ հանդեպ ունի ատելություն— գրեթե հավասար չափով— և երկուքին դեմ այդ ատելությունը որոշապես կարտահայտե՝ երրորդին (Ռուսիո) հանդեպ իր զգացումները կ'արտահայտե՝ գրաքննական պատճառներով ստիպված, քողավոր, բայց նորեն հստակորեն զգալի ձևով։ Փափագելով հանդերձ, որ բոլոր Հայաստանները ազատագրվին օտար լուծերեն, ան համոզված է— ինչպես իր ժամանակի բոլոր հայ ղեկավար մտքերը կմտածեին և ինչպես բնականորեն կթելադրեր օսմանյան պետության այլ քրիստոնյա հպատակ ազգերու արդեն իսկ ազատագրված ըլլալու իրողությունը,— թե Թրքական Հայաստանին մեջ էր, որ հայ ազատագրական պայքարը պետք էր կազմակերպվեր, հոն էր որ այդ պայքարը հաջող ելքի մը հանգելու հավանականություն կներկայացներ, որովհետև հայ տարրը հարաբերաբար ավելի բազմաթիվ էր հոն (մասնավորապես Վան, Մուշ, Բաղեշ են. շրջանին մեջ), և որովհետև թուրք տերությունը տկարացած էր, ու եվրոպական տերությունները, երբ թուրքի հպատակ ժողովուրդը մը ապստամբած և ուժ ի հայտ բերած էր, միշտ այդ ժողովուրդին ազատագրմանը և օսմանյան մեծատարած պետության այս կամ այն այլացեղ մասին հաստատմանը նպաստած էին։ Ասոնք կզգացվին Բաֆֆիի այդ վեպերուն մեջ, բայց տարտամ կերպով ներկայացված։ Հայտնի է, որ Վարդանը, Դուդուկ-ճյանը, Ավոն, Կարոն և այլ մտացածին հերոսները կքարոզեն խոսքով, գրչով, գործով ընդվզում, դիմադրություն, ապստամբություն, կունենան բաղխումներ քուրդ բռնակալ ու կեղեքիչ ցեղապետներու և անոնց զինված գունդերուն հետ, բայց ի՞նչ է այդ ապստամբություններուն պայքարի ընդհանուր ծրագիրը, ի՞նչ թաքթիք է, որ գծած են իրենց ճիգը գրական արդյունքի հանգեցնելու համար, հայտնի չէ։ Հայը, կովելով

միևնույն ատեն թե՛ քուրդին, թե՛ թուրքին և թե ռուս տերության դեմ,— ինչպես և ըրավ հետո «գրքական» ղեկավարներու մղումով տարված իր հեղափոխության ընթացքին, դատապարտված էր անխուսափելի ջախջախումի հանգիլ, ինչպես և եղավ։ Բաֆֆիի այդ վեպերուն մեջ ամեն ինչ այնպես կանցնի, որպես թե հայն ու քուրդը ըլլային միայն պայքարի մեջ, թուրքը՝ խորամանկ, կաշառակեր ու թուլամորթ կուսակալներով միայն ներկայացված, երկրորդական, գրեթե անկարևոր տարր մը դարձած է հոն. թուրք բանակի, թուրք ոստիկանության գոյությունը հազիվ թե զգալի կըլլա այնտեղ, մինչ շղթայակապ հայուն վրա ճնշող բուն բռնակալ ուժը՝ քուրդին ավազակային լուծեն ավելի ծանր, ավելի ուժեղ, ավելի լրջորեն կազմակերպված, թուրք կառավարության ուժն էր։ Քուրդ զանգվածն ալ արդեն միագույն չէր, կբաժնվեր զանազան հատվածներու, որոնց շատերը բարեկամ էին հայոց, որոնց ամենքն ալ ավելի կատեին թուրքը քան հայը։ Ուրեմն և Թրքահայաստանի մեջ հայ ապստամբական շարժում մը ավելի հավանականության կանոնաբ հաջողելու, եթե հայը ջանար քուրդերի, մեկ կարևոր մասը իրեն հետ ունենալ և իր ընդվզման ճիգը թուրք բռնակալ կառավարության դեմ միայն ուղղել։ Մյուս կողմե, եթե ռուս ցարական կառավարությունը բռնակալ իշխանություն մըն էր անշուշտ և Հայաստանի մեկ մասը իր լուծին տակ կաշկանդված կպահեր (թեև թուրք ու պարսիկ լուծերուն տակ գտնվող հայության հատվածներուն վիճակված կացութենեն լավագույն կացություն մը տալով իր ձեռքին տակ եղած հայության). անիկա սահմանակից— ու Հայաստանի մեկ մասին տիրացած հզոր պետության մը կառավարությունն էր, առանց որուն հավանության ու այս կամ այն ձևով աջակցության Թրքահայաստանի ազատագրումը չէր կրնար իրականանալ. չէ՞ որ անոր կատարած դերը— իր շահերուն համար անշուշտ— ընդդեմ օսմանյան պետության և ի նպաստ հույն, սերպ, պուլկար թրքահպատակ ազգերուն՝ ատոնց ազատագրման նպաստած էր կարևոր չափով։ Թե գերի ազգ մը իր ազատագրման համար է՛ն առաջ իր հույսը, իր ընդվզման ու դիմադրության ուժին վրա պետք է դնե, ճիշդ է ադ, բայց ճիշդ է նաև թե միմիայն այդ ուժը չի բավեր,— մանավանդ, երբ այդ գերի ժողովուրդը կգտնվի իր ազատագրական ճիգերը մասնավորապես դժվարացնող այն կացության մեջ, որ կգտնվեր հայ ժողովուրդը,— պետք է նաև արտաքին միջամտության տարրը, շահագրգռվող և եվրոպական այս կամ այն տերության և կամ տերություններու խումբի կատարելիք դերը հաշվի դնել գիտցող, այդպիսի միջամտություններ դյուրացնող, հրավիրող, զանոնք իր բուն նպատակին

համար օգտագործել կրցող քաղաքագիտական տաղանդ մը միացնել ապստամբության քաջարի և զոհաբերող ոգիին։ Առավածաշունչի Դավիթ ու Գողիաթի մենամարտին պատմությունը խորիմաստ է և կհաստատե ինչ որ կըսեմ վերև։ Իր ազնիվ, բայց քաղաքականապես ու զինվորականապես հարաբերաբար տկար ցեղին պաշտպան երիտասարդ ու արիասիրտ Դավիթը, եթե բարբարոս ու վայրագ զորություն մը ներկայացնող վիթխարի Գողիաթին վրան նետվեր և անոր հետ գիրկընդգրկում մը հանդներ, հսկան զայն մեկ թաթի հարվածով կտոր-կտոր կրներ. ան պարսատիկ մը առավ ու հեռվեն քարը ճիշդ անոր ճակատին հասցուց, և այդպեսով, իր հայրենիքին թշնամին գետին փռեց։ Եթե Հունգարը, Ռումենը, Հույնը, Սերպը, Պուլկարն ու Ալպանացին ազատագրված են ԺԹ. դարու ընթացքին, եթե մեծ պատերազմի ավարտին դաշնակիցներու հաղթանակով Լեհն ու Չեխը, Սուրիացին, Լիբանանցին, Արաբը ազատագրվեցան, եթե Սերպն ու Հույնը և Ռումինացին իրենց դեռ չազատագրված հողերուն ալ ամբողջապես կամ մասամբ տիրացան, այդ երկու ուժերուն— մարտական ճիգին և քաղաքագիտական տաղանդին— միացման շնորհիվն է, որ հասան այդ արդյունքին։ Բաֆֆիի վեպերուն մեջ քաղաքագիտական այդ թանկագին ուժին ակնարկություն մը իսկ չենք գտներ։ Նկատելու է, որ եթե Բաֆֆի միմիայն քարոզած ըլլար անհատական դիմադրություն մարդկային կյանքի գերքարոզած ըլլար անհատական դիմադրություն մարդկային կյանքի գերագույն սրբություններն անարգող բռնակալ տարարքներու դեմ, անարկելիորեն ուղիղ ու բարերար քարոզ մըն է, որ կատարած պիտի ըլլար։ Եթե յուրաքանչյուր հայ բաֆֆիական այդպիսի ոգիով մը տոգորվելով, իր անձին ու ընտանեկան հարկին պատիվն ու ապահովությունը պաշտպանելու համար, անվախ հանդուգն ու դիմադրող ըլլալու վարժեցուցած ըլլար ինքզինքը, ատիկա հայ տարրը դյուրավ կեղեքելի և մանավանդ դյուրավ կոտորելի զանգված մը հանդիսանալն կգադրեցներ և յուրաքանչյուր անհատի անձնական ինքնապաշտպանության ատանկ ըլլալը, զանգվածային կոտորածները կդժվարացներ, թերևս իսկ կարգիլեր կամ շատ սակավադեպ կդարձներ։ Բայց խմբական ապրստամբության փորձերը, որ ըստ թուրք կառավարության հինավուրց սիստեմին զսպումի արյունռուշտ ու վայրագ միջոցներու պիտի հանդեին և հազարավոր անզեն մարդոց փճացումը պիտի հառաջ բերեին, պետք էր անշուշտ, որ կատարվեին երկար ու լուրջ նախապատրաստություններ հետո, արտաքին ու ներքին բոլոր հանգամանքները հաշվի դնելով, հայկական հողամասերեն ընտրելով ազատագրական պայքարին հաջող ելք ունենալուն համար ամենեն ավելի նպաստավոր պայմաններ ներկայացնող շրջանը, ընտրելով նաև հավաքական ապստամբե-

թյան մը համար հարմարագույն վայրկյանը։ Բաֆֆիի այդ վեպերու հերոսները այդպիսի մտահոգություններ չունին, անոնց սևեռյալ մտածումը կռիվն է, զենքին դեմ զենք, բռունցքին դեմ բռունցք։ Քաղաքագետ միտք մը չէ Բաֆֆի, այլ ռոմանտիկ բանաստեղծ մը, վիպական միտք մը, թելադրող մը, ոգևորող մը, ցնցող մը, կռվի մղող մը[1]։ Ան փառաբանեց մեր հին ու նոր պատմության դյուցազնական դեմքերը, ու հարույց հերոսներու շարք մը ամբողջ, իր ոգիովը վառված, հանդուգն, անձնազոհ, կտրիճ կռվողներու հույլ մը։ Իրը չէ մեղքը, եթե վեհ ու արի զգացումով մը միայն առաջնորդված այդ բանաստեղծ վիպասանին հաջորդող հայ ազատագր. պայքարի քաղաքագետ ղեկավարները չունեցանք, այլ ունեցանք բարեմիտ ու միամիտ վարիչներ որ, մեծ մասամբ Բաֆֆի վիպասանին մտացածին հերոսներուն խիզախ ու քաջ, բայց տարտամ ու անհաշիվ արարքները նույնությամբ օրինակելով, կարծեցին հայ ժողովրդին ազատագրումը ձեռք ձգել։ Ժողովուրդ մը իր մեկ վիպասանին, նույնիսկ մեծագույն վիպասանին, երևակայած հերոսներուն բսածն ու ըրածը կետ առ կետ օրինակելով չէ, որ իր կորած ապատությունը կվերստանա։ Գրական գործերը ներշնչարաններ, ոգեվորության աղբյուրներ, ընդհանուր ուղղություն մը քարոզող մեծ ձայներ են, գործունեության որոշ ուղեգիծ, պայքարի թաքթիք գծող առաջնորդ չեն։ Բաֆֆի և իրմե առաջ ու իր օրով երևցած ուրիշ հայ հայրենասեր գրագետներ ու բանաստեղծներ իրենց դերը յուրաքանչյուրը իր խառնվածքին ու կրթության համեմատ լավ կատարեցին։ Ու եթե 1894-են մինչև մեծ պատերազմը ու մինչև ներկա բոպեն, երևան եկան

---

1 Եթե Մերենցի և Բաֆֆիի, որ տարիներով նույն քաղաքին՝ Թիֆլիսի մեջ ապրած են, հարաբերությունները բարեկամական չեն եղած. պատճառ չեմ կարծեր, որ գրական նախանձը կամ որևէ անձնական թշնամություն եղած ըլլա, որովհետև երկուքն ալ ազնիվ մարդ. անշահախնդիր նվիրված հայրենասեր և հոգելից ներշնչյալ գրագետ էին, այլ խառնվածքի ու մտայնության տարբերությունը. Մերենց, իտալական ազդեցությամբ տոգորված. դիվանագիտական հեռատեսությունն ու շրջահայեցությունը մարտական խիզախության և կորովին միացնելու անհրաժեշտությունն զգացող մարդ էր. մինչ Բաֆֆի ռուս մոլեռանդ ու երազատես հեղափոխամիտ գրողներու և գործիչներու ազդեցությունն շատ բան ուներ իր մեջ, հաշիվը կարհամարհեր, հանդգնությունն ու կռվասիրությունը ամենբան վեր կդներ։ Մերենց շատ ավելի մոտեն գիտեր թուրք բռնակալ տերության ուժին և լծակիր ու ցրված. դարերե ի վեր մեծ մասամբ զենքի վարժությունը կորսնցուցած հայուն ուժին միջև գտնված անջրպետը, և եթե օր մը Բաֆֆիին պատահելով «Խենթը դուն ես» ըսեր է անոր, կոպիտ նախատինք մը չէ, որ ուղած է նետել անոր երեսին. այլ ըսել է թե անոր ցույց տված ձևով անհաշիվ ու հախուռն պայքար մը կրնա աղետի միայն առաջնորդել։

առանց որևէ դիմադրության ճիգի զանգվածային կոտորման կսկծալի ու բազմաթիվ համապատկերներու հետ՝ քանի մը հայ հուսահատ, կատաղի և հոյակապ դիմադրության պայթումներ, ապարդյուն, բայց վսեմ, ինչպես Սասունի և Մուշի, Շապին-Գարահիսարի և Ուրֆայի մեջ, փերբակարար ու հաղթական՝ շնորհիվ ռուս կամ ֆրանսական ուժերու օգնության, ինչպես Վանի կամ Ճեպել-Մուսայի մեջ, եթե ավելի ետքը Ղարաքիլիսայի ու Սարդարապատի բաղդորոշ կռիվներուն մեջ՝ արևելյան Հայաստանի ծոցն համախմբված հայությունն ամբողջությամբ ոտքի կանգնեցավ դիմադրելու թուրք բանակին որ կուգար կովկասահայությունն ալ բնաջինջ ընելու և այդ դիմադրությամբ մեր ազգին ֆիզիկական գոյությունն ազատեց մահվան վտանգեն և անոր կարելիություն տվավ ռուս հեղափոխության հետևանքով նոր վերահաստատված վրացական ու ատրպեճանյան պետությանց կողքին հայ ինքնավար պետություն մը վերահաստատելու, եթե հայ ազատագրական պայքարների ընթացքին հայտնվեցան երկտասարդ հեղափոխական մարտիկներ, որ կատարեցին արտակարգ հանդգնությամբ գործեր, ցույց տվին գաղափարապաշտ գերազնիվ անձնազոհության ամենագեղեցիկ առաքինություններ, այդ բոլորի մեջ, մեր հին պատմության դյուցազնական էջերուն ազդեցության հետ (որ արդեն միշտ ավանդաբար կենդանի մնացած էր Սասունի, Զեյթունի, Ղարաբաղի բարձունքներուն վրա), նոր ժամանակներու մեր խումբ մը հայրենասեր և ազատաշունչ քերթողներու և գրագետներու կարգին Բաֆֆիի վեպերուն գործած խոր ազդեցությունը պարտավոր ենք մատնանիշ ընել ու փառաբանել։

* * *

Այս երեք վեպերը, որոնց ազդեցությունը այնքա՛ն մեծ եղավ մեկ քանի հայ սերունդի վրա և զոր այսօր ալ անհնար է կարդալ առանց հուզմունքի— մանավանդ Խենթը և Կայծերու շատ մը մասերը— պիտի բավեին իրենց հեղինակին անունն անմահացնելու։ Բայց Բաֆֆի ուզեց նաև մրցիլ Մերենցին հետ պատմական վեպի սեթին մեջ, որուն առաջին նմուշը, Թորոս Լևոնի, ան տվեր էր Պոլսո մեջ և երկրորդը, Սրկու

չագոգի Հիշատակարանը, Սալմաստի հայ, «առավ-փախավ»-ներու բազդախնդրական կյանքեն պատկերներու շարք մը, Միհն այսպես մյուսն այնպես, Զաճրումար ու մանավանդ Ոսկի Ամաղաղ, Թիֆլիսի հայոց բարքերը ներկայացնող, և որոնց վերջինը, դրամամոլ հարուստ վաճառականի մը պատմություն, մնայուն արժեքով գործ մըն է։ Առանք արդեն առաջին փորձերն են հայ իրապաշտ վեպին, որ հետո, Շիրվանզադեի, Մուրացանի, Նար-Դոսի, Արփիարյանի, Զոհրապի այլոց գրչին տակ իր լիալիր զարգացումը պիտի ստանար։ Խաչագոգի Հիշատակարանը, հատորի ձևով տարածվելե առաջ թե՛ Թիֆլիսի և թե՛ Պոլիս լրագիրներու մեջ իբր թերթոն հրատարակված ըլլալով, հեղինակին անունը և այդ վեպի գլխավոր հերոս Քավոր Պետրոսին շատ մասնահատուկ ու կենդանի տիպարը ժողովրդական դարձուցած էր։

Այդ բոլորեն զատ, Բաֆֆի լրագրաց մեջ հրատարակած ունի հոդվածաշարքեր պատմական կամ այժմեական զանազան նյութերու վրա, ինչպես Խամսայի Մելիքությունները, իր իսկ ձեռքով հատորի մը մեջ ամփոփված, կամ Տանկանայի, 1877—78-ի ռուս-Թուրք պատերազմի և Պերլինի Վեհաժողովի առթիվ Թրքահայ հարցին վրա տեսություններ, և Հայ կինն ու երիտասարդությունը, հոդվածներու հավաքածու, երկու շարքն ալ այրի տիկին Բաֆֆիի ձեռքով մեկ-մեկ հատորի մեջ ամփոփված։ Թողած է նաև քանի մը ռուսերենե թարգմանություններ, ինչպես «Կայենի կտակը» և «Ղարաբաղի աստղագետը» պատմական վեպերուն, Ապրես Բեկնազարյանցի «Գաղտնիքն Ղարաբաղի» գործի հայերեն թարգմանության առթիվ այդ գործի մասին քննական ընդարձակ աշխատություն մը։ Վերջապես ունի զանազան թերթերու մեջ երևցած ու դեռ հատորներու մեջ չամփոփված հոդվածաշարքեր, ինչպես «Միրզա Մելքում խան, հայազգի լիազոր դեսպան Պարսից», «Մի քանի գծեր Խրիմյան Հայրիկի կյանքից», «Ֆիրտովսի, Պարսից մեծ բանաստեղծ», «Քրդեր, քրդական Միություն», «Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում», «Մարդը գոյության կռվի մեջ», ևն.։ Բաֆֆիեն դեռ կմնան նաև անտիպ գործեր, «Խվլլիկ, վեպ Պարսկահայոց և Ռուսահայոց կյանքեն», «Ուղևորություն Պարսկաստանում», «Սալբի»-ի Բ. և Գ. հատոր, «Ազգային համառոտ պատմություն՝ Հայկեն մինչև Լևոն Զ.», ևն.։ Ճոխ, այլազան, պատկառելի ամբողջություն մը, որուն նմանը շատ քիչ հայ գրագետի մոտ կարելի է գտնել։

Այդ ամբողջության մեջ, հայկական դատին ուղղակի նվիրված երեք վեպերն անմիջապես հետո կարևորագույն տեղը կբռնեն երեք պատմական վեպերը։ Այդ երեքն ալ նյութը դիտումնավոր կերպով ընտրված է հեղինակին հայրենասիրական գաղափարներն ու ձգտումները

անցյալի դեմքերու և դեպքերու ոգումի հրապուրիչ միջոցովն արտահայտելու նպատակով (ճիշտ ինչպես որ Ներենցին ալ երեք պատմական վեպերուն նյութն է, առաջունը՝ Ռուբինյանց ձեռքով հայ անկախության վերականգնումը, երկրորդինը՝ Բագրատունյան ինքնավար Հայաստանին հաստատման նախապատրաստությունը և երրորդինը՝ է. դարուն արաբական ահավոր աքշավանքին դեմ անտեր մնացած հայ ժողովուրդին ինքնապաշտպանության ճիգը)։ «Պարույր Հայկազն»-ը չեմ կարդացած և այսօր այդ հատորը արտասահմանի մեջ կարծեմ անգտանելի է. բայց կենթադրեմ, որ օտար երկրի մեջ հայ հանճարը շողացնող հայ մեծ մտավորականին փառաբանումը պետք է ըլլա. «Դավիթ Բեկ»-ը վեպի ձևով գունեղ ու ոգևորյալ մեկնաբանությունն է այն ուշագրավ թեզին, զոր Բաֆֆի կպաշտպանե Խամսայի Մելիքություններուն մեջ, թեզ, որով ցույց կուտա, թե Ղարաբաղի (Արցախի) Սյունյաց երկրի հայ մելիքները, մինչև ռուսական գրավումը կիսանկախ իշխաններ, մերթ գրեթե փոքրիկ թագավորներ էին Պարսից շահին գերիշխանության տակ և անոր հարկատու։ Մելիք Դավիթ Բեկը, Սյունյաց երկրի Օրբելյան հին ու մեծ գերդաստանեն, հզոր հայ հայրենասեր մարտիկի և գործիչի նշանավոր դեմք մը հանդիսացավ ԺԸ. դարուն։ Իր հողամասն ընդարձակեց՝ իր դրացի հողերուն տիրած օսմանցիներուն դեմ հաղթականորեն կռվելով, զանոնք վտարելով ու այդ հողերը գրավելով։ Անիկա հայ անկախ իշխանության ճշմարիտ վերականգնում մը իրականացուց անդրկովկասյան Հայաստանի մեկ մասին մեջ։ Եվ այս մեծ ու բնորոշ դեմքն է, որ Բաֆֆի իր վեպին մեջ— տեսակ մը արձակ դյուցազներգություն— պանծացուցած է և իր ամբողջ միջավայրով, ժամանակակից հայ և օտար լավ ու գեշ տիպարներով ճարտարորեն պատկերացուցած է։

Այդ թեզին, զոր Խամսայի Մելիքությունները հոդվածաշարքին, ինչպես և Դավիթ Բեկ վեպին մեջ Բաֆֆի գրած է և զոր ռուս գրաքննության արգելքին չբաղխելու համար անորոշ ձևով մը ներկայացուցած է, հակառակ թեզ մը պաշտպանած է Գրիգոր Արծրունի։ Բաֆֆիի ջատագոված թեզն այն է, որ հայ մելիքները պետք էր հավատարիմ մնային Պարսից Շահերուն, որոնց գերիշխանության տակ տեղական կես-անկախություն մը կպահպանեին, փոխանակ Ռուսիո Զարին անձնատուր ըլլալու ընդդեմ պարսիկին և օսմանցիին և այդ կես անկախությունն ալ կորսնցնելու։ Արծրունի կխորհեր, որ մելիքները և անոնց հետ հայոց կրոնական պետերն ու նույն ինքն կաթողիկոսը լավ էին ըրած ռուս զորության դիմելով և անոր դեպի Կովկաս հառաջխաղացությանն օգնելով, որովհետև հայ տարրը ատկից օգտված էր (այդ է նաև Աբովյանի Վերքին մեջ տիրող զգացումը)։ Եվ Արծրունի կցանկար— ու ատոր աշ-

խատած է— որ ռուսը գրավե նաև Թրքահայաստանը և Ռուսահայաստանին միացնե, որովհետև ատիկա հայ ժողովուրդին համար բարերար կնկատեր։ Բաֆֆիի, որ հայ մելիքներու քաջության և իմաստության շնորհիվ անդրկովկասյան Հայաստանի մեկ մասին մեջ հայ ինքնավար իշխանության մը մինչև ԺԹ. դարու սկիզբները պահպանման մոռցված պատմությունը իր անձնական հետազոտություններով մեջտեղ հանելու արժանիքն ունեցավ,— պաշտպանած թեզը ուշագրավ է և հարգելի, բայց և մեծապես վիճելի, ու ինծի կթվի թե այդ հարցին մեջ Արծրունին է որ իրավունք ուներ։ «Ռուսասիրական» զգացումով չէ որ ան այդ ուղղությունն ընդգրկած էր, այլ որովհետև այդ ուղղության հետևելով կհուսար, որ ձեռք պիտի ձգվեր այդ ժողովուրդի մեկ ստվար հատվածին կացության բարելավումը և ատոր մեջ կտեսներ նաև հայոց ազգային հարցի ապագա լիակատար լուծման նախապատրաստական առաջին փուլ մը։ Պետք է արդեն չմոռնալ, որ եթե հայ մելիքներն ու Հայոց կաթուղիկոսը դիմեցին Ռուսիո Զարին և անոր օգնեցին անդրկովկասյան Հայաստանը և ամբողջ Կովկասը գրավելու, խոստումի մը վրա հիմնված հույսն ունեին, թե գրավված անդրկովկասյան Հայաստանը ինքնավար պետություն մը պիտի դառնար ռուսական գերիշխանության և հովանավորության տակ։ Ռուս կառավարությունը խոստումնադրուժ եղավ, բայց ռուսական գրավումեն հայ տարրը անտարակույս օգտվեցավ, հայ ժողովրդի մեկ կարևոր մասը ազատեցավ գերիի կացութենեն, ուր կապրեր մահմեդական սարտարներու կամ փաշաներու և կամ քուրդ ցեղապետներու արհամարհանքով, մոլեռանդական ատելությամբ, բարբարոս կոպտությամբ լի բռնակալության տակ (տեսնել Աբովյանի Վերքին մեջ Պարսից իշխանության տակ հայ ժողովուրդի ունեցած աղեխարշ ու ամոթալի կացության պատկերացումը, տեսնել նույն իսկ Բաֆֆիի Հաբեմին և Ջալալէդդինին, Խենքին ու Կայծերուն մեջ նկարագրությունը կսկծալի վիճակին, զոր պարսիկ, թուրք ու քուրդ լուծերու տակ ուներ հայ ժողովուրդը, զուրկ իր ընտանեկան հարկի պատիվին, իր կյանքին ու ինչքին ապահովութենեն)։ Ատկից զատ, այդ նվաստացուցիչ պայմաններուն մեջ, զինվորական կյանքե հեռու, որևէ զենք գործածելու իրավունքեն զուրկ, ան իր երբեմնի քաջարի զինվորական ցեղի առաքինություններեն շատ բան կորսնցուցած էր, բացի Հայաստանի ինչ-ինչ լեռնային շրջաններեն— Զեյթուն, Սասուն, Ղարաբաղ, ևն— ուր ան այդ առնական հոգեբանությունը պահպանած էր՝ զենքի գործածությունը ձեռքն ձգած չըլլալով։ Մտավորապես ալ ան ետ մնացած էր, իր մշակույթը չէր կրցած իր պապենական այդ հողերուն իսկ ծոցին մեջ վերանորոգել, ճոխացնել և իր գաղթական զավակներն էին, որ ստիպված եղեր էին Պոլսո, Վենետիկի, Իզմիրի, Վիեննայի պես եվրոպական կամ Եվրոպայի մոտիկ օտար կեդրոններու մեջ այդ գործը կատարել։ Ռուսական գրավումով՝ հայության արևելյան հատվածը ազատեցավ այդ չարիքներեն, զորացավ, աճեցավ, զարգացավ, (Պարսկահայաստանեն ու Թրքահայաստանեն տասնյակ հազարավոր հայեր գացին ստվարացնել այդ հատվածը), և մեծ պատերազմի նախօրյակին ռուսական իշխանության տակ գտնվող հայությունը մեր ազգի ամենեն բազմաթիվ, ամենեն բարգավաճ ու հառաջադեմ մասը կներկայացներ։ Արդեն, եթե նույնիսկ մելիքներն ու կաթողիկոսը Ռուսին չդիմեին, ռուսական մեծազանգված զորությունը պիտի իջներ, ավելի դժվարությամբ, ավելի երկարատև ճիգով, բայց պիտի վերջ ի վերջո իջներ տարածվեր ամբողջ Կովկասի և Անդրկովկասի մեջ, և հայ մելիքներուն ուժերը պարսից ուժերուն միացած հավանական չէր, որ հաջողեին դիմադրել ատոր։ Մելիքները իրարու հետ հաշտ ալ չէին, հաճախ կկռվեին իրարու դեմ, պարսկին, թուրքին կամ մեկ ուրիշ օտար ուժի մը միանալով։ Դավիթ Բեկի հիմնած փոքրիկ ինքնավար Հայաստանը իր մահեն անմիջապես հետո քանդվեցավ հայ պետերու այդ ներքին իրերամարտ երկպառակության հետևանքով։ Դրացի Վրաստանն ալ, որ իր թագավորությունը պահած էր Պարսից Շահին գերիշխանության տակ, (թեև այդ թագավորները, որոնց շատերը մահմեդական կրոնքը ստիպված էին ընդունիլ՝ իրենց գահը պահպանելու համար, Ղարաբաղի մելիքներուն չափ իսկ իրական անկախություն չունեին), նույնպես ի վերջո ինքնաբերաբար անձնատուր եղավ ռուսական իշխանության և ինքզինքն անոր հովանավորության տակ դրավ։ Եվ եթե 1877-ի ռուսո-թուրք պատերազմեն հետո, ռուս բանակը՝ անգլիական եսամոլ դիվանագիտության պահանջով քաշված չըլլար թրքական Հայաստանի կարևոր շրջաններեն, զոր գրաված էր, մեծ պատերազմի ատենը չորս միլիոնի հասնող ռուսահայություն մը կունենայինք և թուրքը իր ձեռքը մնացած հայության հատվածները բնաջինջ ընելու հրեշային գաղափարը հավանորեն չէր համարձակեր ունենալ։ Եվ այսօր իսկ, ի՞նչ կմնա հայազգեն իբր իր հայրենի հողին վրա կամ անոր մոտիկ ապրող ժողովրդական կարևոր զանգված, եթե ոչ ռուս հովանավորության տակ մտած հայությունը, (այժմյան հայ ժողովուրդի երկու երրորդ մասը), մինչ Թրքահայաստանի և Կիլիկիո մեջ մեկ հատ հայ չէ մնացած, իսկ Պարսկահայաստանի փոքրաթիվ հայությունը իր դպրոցներն իսկ պահելու իրավունքեն զրկված։ Ու հոն, անդրկովկասյան Հայաստանին մեջ է որ— ինչքան ալ այնտեղ դիզված ըլլան մութ ամպեր, որոնք մշտատև չեն կրնար ըլլալ— հոն է որ վերահաստատված հայ պետականության ուրվագիծը

դեռ կմնա կենդանի, ու հոն է միայն, որ հայ ազգի, հայ դատի և հայ մշակույթի ապագա զարգացման կարելիությունները կգտնվին։

Սամվելը գլուխ-գործոցներեն մին է Բաֆֆիի և ամբողջ հայ գրականության։ Փավստոսի անզուգական գրքին մեջ, որ գանձարան մըն է Տիրան, Արշակ ու Պապ թագավորներու օրով բյուզանդական կայսրության Սասանյան պետության միջև կովադաշտ դարձած Հայաստանի պատմության քրոնիկագրական և դյուցազնավիպական հարազատ պատկերացմանց, դյուցազներգական հոգիով ժամանակակից մեծ հայ վիպասան մը միայն կրնար նկատել թանկագին նյութեղենները, որ կային օգտագործվելիք, և Բաֆֆի եղավ այդ բախտավոր ու արժանավոր վիպասանը։ Դրքույկ մը կարելի է գրել այն եղանակին վրա, որով Բաֆֆի կատարած է այդ օգտագործումը, ցույց տալու համար, թե ինչպես ան ճոխացուցած, լուսաբանած է Փավստոսի հակիրճ և ուժեղ պատկերներուն մեկ մասը, թե ինչպես ան ընդլայնած է քաջարի Արշակ Բ. թագավորին և անոր հավատարիմ հայ քրիստոնյա նախարարներուն, մանավանդ հոյակապ Մամիկոնյաններուն ու պարսկամերձ, հակաբյուզանդական, նույնիսկ կրակապաշտ դարձած «ուրացող» նախարարներու մոլեգին հակամարտությանց մասին Փավստոսի տված տեղեկությունները, թե ինչպես ան մեծատարած ու ողբերգաշունչ գլուխներու մեջ զարգացուցած է Փավստոսի քանի մը հակիրճ տողերը, որ իր ուրացող դավաճան հայրն ու անոր համախոհ ու մեղսակից իր մայրն իսկ իր ձեռքով սպանող հայրենասեր Սամվելին ահավոր պատմությունը կուրվագծեն, թե ինչպես ընդարձակած և որոշ դիտումով այլափոխած է Անհուշ բերդին մեջ շղթայակապ Արշակ Բ. թագավորին ու Դրաստամատի տեսարանը, և թե վերջապես որ հատվածներուն մեջ Բաֆֆի հավատարած է Փավստոսին կամ զայն գերազանցած և որ հատվածներուն մեջ ուժգնությամբ և ինքնատպությամբ՝ անկից վար մնացած։

* * *

Բաֆֆի իր աշխարհայացքին և իր արվեստին մեջ՝ ամեն բանե առաջ ռոմանտիկ մըն է (այդ բառին լավագույն իմաստով)։ Այս գիծը, զոր մատնանիշ ըրի արդեն, պետք է շեշտել և լուսաբանել։ Բաֆֆի ռոմանտիկ մըն է Հյուկոյի տեսակեն, որուն խանդավառ հոգին ու մեծաթռիչ միտքը ոչ միայն կարող են մերթ իրականությունը դիտել և գոյություն ունեցող մարդկային տիպարները ճշգրտությամբ ներկայացնել, այլև կարող են, ինչոր բարձրագույն արվեստի մը մեծագույն տաղանդի մը

ապացույցն է, երևակայությամբ հղացված գեմքեր կենդանի տիպարներու վերածել։

Ֆրանսացի և անգլիացի մեծ ռոմանտիկներեն ամենց պես (Հյուկո, Էժեն Սյու, Տյումա, Ուալթեր Սքոթ, Թերես իսկ Պայրքն), որոնցմե ազդված է Բաֆֆի, ինքն ալ իր գործերուն մեջ տիրապետող ցույց կուտա այդ ռոմանտիկներուն սիրելի գաղափարապաշտ, վեհոգի ավազակը, ժողովուրդի ծոցեն ելած ու մարդկային ընկերության անարդարություններեն զզված, ըմբոստ ու պայքարասեր մարդը (Հյուկոյի Էռնանին, Ֆյու Պլասը, Ժան Վալժանը, Պայրքնի Մազեպան), զայն սակայն ցույց տալով իր վեպերուն մեջ իբր ոչ միայն շքավոր ժողովուրդը կեղեքող ու շահագործող գեշ հովիվներուն դեմ կռվի ելած ազատասեր ու արդարատենչ հեղափոխական, այլև՝ ու մանավանդ՝ իբր քանի մը լուծի տակ կքած, շղթայակապ ցավատանջ հայ ժողովուրդին ազատագրման համար պայքարող հայրենասեր ապստամբ գործիչ։ Ինչպես Հյուկո իր Թշվառներուն մեջ գծած է տիպարներ, որ ցարդ կմնան կենդանի և որ սահմանված են անմահ մնալու,— Ժան Վալժանը, Ֆանթինը, Քոզեթը, Միրիել Էպիսկոպոսը, Կավռոշը— Բաֆֆի ալ գծած է տիպարներ, մերթ, իրականեն առնելով ու մեծ արվեստի մը պահանջած չափովը շեշտելով, ինչպես Խաչագողի Հիշատակարանին Քավոր Պետրոսը կամ Կայծերուն Տեր Թոդիկը, Խնձրին Թոմաս էֆենտին և դեռ ուրիշներ, այլև զարմանալի կենդանությամբ ներկայացուցած է տիպարներ, որ հայ իրականության մեջ գոյություն չունեին, զոր ինք իր երևակայությամբ ստեղծած է և որոնք իրմե հետո, ու գլխավորապես իր վեպերու ազդեցությամբ տակ, երևան եկած են իրար։

Ո՛չ մեկ հայ հեղինակ— ասիկա պետք է ըսել ու կրկնել— Եղիշեեն ու Խորենացիեն ի վեր, այնպիսի խոր ազդեցություն ունեցած է իր դարաշրջանի հայ երիտասարդության վրա, ինչպիսին ունեցած է Բաֆֆին։ Եվ ասիկա անոր համար, որ ան իր հայրենասիրական և ազատասիրական գաղափարները կտրաբաձեր ոչ թե հասարակ քարոզներով, այլ տաղանդավոր վիպասանի կենդանի տիպարներով ու պատկերներով։ Ճիշտ է որ անոր վեպերուն մեջ կան մասեր, որ զուտ հրապարակագրական են կամ պատմաքննական, թեև անոնք ալ շահեկան են հաճախ, (և հոդ ալ իր սիրած վարպետ Հյուկոյին է որ կնմանի ան, իր Սամվելին «Փակագիծը» և Կայծերուն շատ մը գլուխները Թշվառներու հրապարակագրական, պատմաքննական, ընկերաբանական, բարոյախոսական միջանկյալ գլուխներուն հետևողություն կթվին), բայց իր հերոսներուն սրտագրավ կենդանությունն ու իր նկարագրած տեսարաններու հուզիչ հանգամանքն է որ ազդած են հայ երիտասարդ ընթերցողներուն վրա

ավելի, քան իր հրապարակագրական հատվածները։ Իսկ երբ կուզե իր վիպասանի կարողությունը ցույց տալ, իր հայրենասեր գործիչի ներքին դիտումը պահելով հանդերձ, կտեսնենք, թե ինչպես կհաջողվի. Խեն-թը, Խաչագողի Հիշատակարանը, Ոսկի Ամաղաղը, Հարեմը, Խազփուշ-ները, Բիրի-Շարաբանին, Սամվելը, ինչպես և Կայծերը և Դավիթ Բեկը՝ իրենց որոշ էջերուն մեջ, զմայլելի պատմվածքներ են, ուր ոչինչ կա ավելորդ, ուր ամեն ինչ կծառայե գործողության ու ընթերցողը հևիհև կհետևի Հեղինակին՝ տեսնելու համար, թե պատմված դեպքերը ինչի՞ պիտի հանգին։ Խենթը ամենեն հուզիչ— ու շատ մը տեսակետներով հուզիչ— ու ամենեն ճարտարորեն հյուսված հայ վեպն է որ գիտեմ։ Սամվելը ամենեն լավ կազմված ու ամենեն գեղեցիկ կերպով գրված պատմական հայ վեպն է։

* * *

Բաֆֆիի ոճն ու լեզուն— մանավանդ իր առաջին շրջանի գործերուն մեջ— ունին թերություններ ու պակասներ։ Ոճը անհավասար է. հաճախ սեղմ ու վճիտ, բայց մերթ ալ ճապաղ, երկարաբան, շփոթ կամ անփույթ, անխնամ, հասարակ տեղիքներով լեցուն, պարունակելով բացատրություններ, որ անճիշտ են, բառեր, որ բուն պետք եղածը չեն։ Հարկ է սակայն նկատի ունենալ այն դժվար պայմանները, որոնց մեջ Բաֆֆի արտադրած է այդ մեծածավալ գործը, պայմաններ, որոնք շատ հաճախ իրեն թույլ չեն տված պետք եղածին չափ վերամշակել, կոկել իր շարադրած երկերը։ Նույնը կարելի է ըսել նաև ուրիշ հայ մեծ գրագետի մը, Պարոնյանի, գործերուն թույլ մասերուն համար։ Երկուքն ալ հաճախ իրենց գրվածքները հապճեպով շարադրած ու մաս առ մաս լրագրի մը կամ հանդեսի մը տված են հրատարակելու և հետո առեն չեն ունեցած իրենց առաջին ցայտքով շարադրածը զտելու և հղկելու։ Գալով լեզվին, հայտնի է, որ արևելահայք, շնորհիվ Աբովյանին, և հետո՝ Ս. Նազարյանին և Մ. Նալբանդյանին, շատոնց ըմբռնած էին, թե արդի հայոց գրական լեզուն պետք է որ հղկված, բայց հարազատ աշխարհաբարն ըլլա և ոչ թե գրաբարը կամ գրաբարախառն աշխարհաբարը։ Սակայն Աբովյան Քանաքեռի տեղական բարբառով է որ գրած է իր կարևոր գործերուն մեծ մասը. արարատյան աշխարհաբարով գրածները համեղ են ու կենդանի, բայց լեզուն դեռ կանոնավորված, զտված չէ։ Նույնպես, և ավելի, Նալբանդյանի և Նազարյանի լեզուն դեռ լի է սխալներով, անհարթ դարձվածքներով։ Թրքահայերը ավելի շատ ունեցան իրենց աշխարհաբարը հղկող վարպետներ. Պետրոս Դուրյանի, Գրիգոր

Օտյանի, Խաչատուր Միսաքյանի, Մատթեոս Մամուրյանի, Ծերենցի, Հ. Պարոնյանի աշխարհաբարը դեռ բիծեր ունի, գրաբարի ավելորդ տարրեր տակավին կպարունակե, և գրաբարի ու գրաբարախառն աշխարհաբարի մոլեռանդ պաշտպաններուն հրապարակին տիրելու նոր ու բավական զորեղ մեկ ճիգեն հետո Պոլսո Հայրենիք լրագրի խումբին շնորհիվ է որ աշխարհաբարի դատը վերջնականապես հաղթեց ու աշխարհաբարն իր ամենեն հարազատ ու կատարելագործված ձևն ստացավ, բայց վերև գրված թրքահայ վարպետներու ձեռքին տակ աշխարհաբարը արդեն զմայլելի գրական գործիքը մը դարձած և իր ինքնահատուկ գեղեցկությունները մեծ մասամբ արժեցուցած էր։ Արևելյան հայոց մեջ Բաֆֆին է որ, գրեթե մինակ, ավելի ճիշտը Ռաֆայել Պատկանյանի հետ, կատարեց այն դերը, զոր արևմտյան հայոց մեջ կատարեցին Դուրյան, Օտյան, Միսաքյան և այլք, այսինքն արարատյան բարբառը իր խառնակ ու պղտոր վիճակեն գրական լեզվի մը բարձրությանը հասցուց. ինչքան ալ այդ լեզուն դեռ ունենա թերություններ, արդեն իսկ Սամվելին մեջ ան մեծ չափով հղկված կներկայանա, և Բաֆֆիի այդ էական ճիգեն և ստացած արդյունքեն հետո՝ կդյուրանար հավելվածական ճիգը, զոր Հովհաննիսյան, Թումանյան, Ահարոնյան, Իսահակյան և այլք ունեցան կատարելու այդ լեզուն իր բարձրագույն հղկմանը հասցնելու համար։

* * *

Կսկծալի և ամոթալի բան մըն է ազգային արժանապատվության զգացումն ունեցող որևէ հայու համար մտածել, թե գրագետ մը, որ այսպիսի վիթխարի գործ մը կատարած է, նյութական նեղության մեջ իր կյանքը քաշկրտած և չքավորության մեջ մեռած ըլլա։ Բաֆֆիի մահվընեն հետո, Գամառ-Քաթիպա, Ռուբեն Բերբերյանի հորն այցելության գալով, անոր ըսել է հետևյալը. «Երեկ Թիֆլիսից նամակ ստացա Աբգարից և Պալասանյանից. գրում են, որ Բաֆֆին վախճանվել է։ Պալասանյանը ավելացնում է, որ վիպասանը մեռել է վերին աստիճանի չքավորության մեջ. և ավելացնում է որ թեև շատ չքավոր ընտանիքներ տեսել է կյանքումը, բայց ա՛յս աստիճան աղքատություն հայ գրողի տանը երբեք չի տեսել։ Հանգուցյալի մարմինը,— գրում է,— լվանալուց հետո ուզեցել են մաքուր շապիկ հագցնել, բայց տանը մաքուր շապիկ չի գտնվել»[1]։

---

1 Տե՛ս Ռուբեն Բերբերյանի հոդվածը Բաֆֆիի ծննդյան հարյուրամյակի կազմակերպիչ հանձնաժողովի հրատարակած հատորին մեջ։

Նմանօրինակ պայմաններու մեջ ապրեցավ և նույնպիսի ու թերևս հոռեգույն պայմաններու մեջ մեռավ նաև Պարոնյան, որ ամենաթշվառ վիճակի մեջ ձգեց իր կինն ու զավակները։ Ու Րաֆֆի գոնե սա առավելությունն ունեցավ Պարոնյանի վրա, որ իր կյանքի մեկ որոշ շրջանեն հետո մինչև մահը իր բոլոր ուժերը միմիայն գրական աշխատությանց կրցավ նվիրել և իր գրական աշխատությանց նյութական արդյունքով կարողացավ ծայրը ծայրին բերել, մինչդեռ Պարոնյան շատ հաճախ ստիպված եղավ իբր տոմարակալ այս կամ այն վաճառականին քով աշխատելով իր ապրուստն ապահովել և իր ժամանակին և ուժերուն մեկ մեծ մասը փճացնել, վասնզի իր հրատարակությանց վաճառման հասույթը հեռու էր իր և ընտանիքին պետքերուն բավելե։ Կարելի է նույնիսկ ըսել, թե Րաֆֆի առաջին հայ գրողը եղավ, որ զուտ գրական կյանք մը ունեցավ ու միմիայն իր գրական արտադրությանց եկամուտովն ապրեցավ, և իր բազմաթիվ հոդվածներուն իբր պատվագին ստացած գումարները— ինչքան ալ համեստ, ու մերթ անկանոն վճարված,— և իր գրքերուն իր օրով իսկ վաճառումեն գոյացած հասույթը եթե հաշվի դնենք, կունենանք գումար մը, որուն նմանը որևէ հայ գրող ստացած չէր մինչև Րաֆֆի և անկից ի վեր ալ քիչերն ստացած են։ Բայց Րաֆֆի ուներ մայր մը և ինը քույր՝ չքավոր, բացի իր կնոջմեն և երկու զավակներեն, և այդ բազմանդամ ընտանիքին ապրուստի ամբողջ բեռը իր վրա էր, իր գրչին հասույթեն կախյալ էր։ Այդ ալ ի նկատի ունենալու է բացատրելու համար Րաֆֆիի այդ աստիճան ծայրահեղ աղքատության մեջ մեռած ըլլալը։ Եվ սակայն Պարոնյան ու Րաֆֆի ամենեն ժողովրդական, ամենեն շատ կարդացված գրողները եղած են, որ հայերն ունեցած ըլլան։ Ատիկա ցույց կուտա, թե իսկապես գրասեր— այսինքն գիրք գնող, մատենադարան կազմող հայերուն թիվը որքան սահմանափակ էր այն ատեն։ Ու անկից ի վեր ալ, ինչքա՜ն ճղճիմ է հառաջադիմությունը որ կատարված է մեր մեջ,— բացի Խորհրդ. Հայաստանեն, ուր հավաքված մեկ միլիոն հայությունը, իրապես գրասեր դարձած, վերջին 10—12 տարիներու ընթացքին շատ բարձր համեմատությանց հասցուց գրքերու (նույնիսկ զուտ գրական հատորներու) ծախված օրինակներուն թիվը։

Պետք է հոս հարգալից գնահատման խոսք ըսեմ մեծ գրագետին մեծահոգի ամուսնույն մասին, որ ասորուհի մըն էր, խորապես հայացած և որ իր հանճարեղ կողակցին ըմբռնող ու անձնվեր ընկերուհին ըլլալե հետո անոր մահվընեն ետքը անոր արտադրությանց հանդեպ ցույց տված գործոն ու իմաստուն հոգածություն մը, զոր հայ որևէ կազմակերպություն կամ անհատ չէ շարունակած այդ ազնիվ կնոջ մահվընեն ի

վեր։ Ան է, որ նախ Թիֆլիսի մեջ ի լույս ընծայեց իր ամուսնույն տրված գործերեն ոմանց երկրորդ տպագրությունը և հատորի ձևով հրատարակեց լրագիրներու և հանդեսներու մեջ երևցած անոր վեպերուն, վիպակներուն ու հոդվածաշարքերուն մեկ մասը, և հետո, իր երկու զավակներուն հետ Լոնտոն քաշված՝ այդ նույն գեղեցիկ գերը շարունակեց կատարել՝ Վիեննայի Մխիթարյան տպարանին միջոցով հրատարակելով Րաֆֆիի արդեն տպված գործերուն երրորդ ու չորրորդ տպագրությունը, հատորներու մեջ ամփոփելով հանդեսներու և լրագիրներու մեջ երևցած վիպական կամ հրապարակագրական արտադրություններ ու նաև ի լույս ընծայելով գործեր, որ անտիպ մնացած էին, ինչպես Սալբի վեպի առաջին հատորը, Կայծերու վերջին մասը, «Մինն այսպես, մյուսն այնպես» և «Զահրումար» վեպերը, «Վեպիկներ և պատկերներ» (մասամբ՝ ձեռագրեն, առաջին տպագրություն, մասամբ՝ արտատպում), ևն.։ Կայծերու վերջին գլուխներու համար (Ամրոցի աղջիկը, Անհայտ ապագա) Վրթանես Փափազյան կսխալի իր «Հայ գրականության պատմություն» գործին մեջ այն կարծիքը հայտնելով, թե ատոնք Րաֆֆիի գրածը չեն, «կեղծիք են», ետքեն ուրիշի մը ձեռքով թխված բաներ են. այդ գլուխները ապահովապես Րաֆֆիի գրչեն ելած են, տիկին Րաֆֆի անկարող էր այդպիսի կեղծիք մը կատարելու. այդ գլուխները Րաֆֆիի մտայնության, ոգիին ու ոճին կնիքը կկրեն։ Ճիշտ է որ անոնք, բացի «Ամրոցի աղջիկը» գլուխեն, ուրվագծված ու լիովին չավարտած էջերու տպավորությունը կգործեն, և հավանական է որ այդպես ալ են և Րաֆֆի վերջին ձեռքը չէ դրած անոնց վրա, չէ լրացուցած զանոնք։ Պետք չէ մոռնալ, որ Զարական գրաքննությունն ու ոստիկանությունն ալ, որ Զալալէդդինի և Խենթի օրերուն՝ թույլատու էր դեպի Արծրունիի և Րաֆֆիի գրականությունը, խիստ վերաբերմունք ցույց կուտար երկուքին ալ հանդեպ ուշադրական թվականներուն, երբ Կայծերու երկրորդ հատորը կգրեր Րաֆֆի։ Կայծերու հեգինակը, ինչպես և Արծրունի ոստիկանական մշտական հետապնդման ենթակա էին, որով և Րաֆֆի Կայծերու վերջին մասը ուրվագծած է միայն և այդ ուրվագծված գլուխներն ալ չէ կրցած իր կենդանությանը հրատարակել, և իր այրին շատ լավ ըրած է սակայն զանոնք հրատարակելով, վասնզի անոնք իրենց այդ կիսավարտ ձևին մեջ շատ շահեկան են նորեն, ու Վարդանի երազին հետ կկազմեն Հայաստանի և հայ ազգի ապագա կյանքի մասին մեր բանաստեղծ վիպասանին տեսիլը։

Վարդանի երազով, Րաֆֆի կներկայացնե ապագա Հայաստանի մը (երկու հարյուր տարի հետո՝ ըստ երազին՝ գոյություն ունենալիք) ազատ

Հայաստան մը, ինչպես ինք զայն կերևակայէ, երջանիկ, խաղաղ, ուժեղ, ապահովված Հայաստան մը, Վան—Մուշ—Բաղեշ շրջանին մէջ, որ իր օրով ցավատանջ երկիր մըն էր, ուր հայը Թուրքեն ու քուրդեն կեղեքված ու շահագործված գերիի կյանք մը կապրեր։ Երաղողը կտեսնէ նորաշեն գեղեցիկ տուներու շարքերով ծառազարդ մաքուր լայն պողոտաներ ու սիրուն փողոցներ, առողջապահական պայմաններով կառուցված և լավագույն մեթոդներով ղեկավարված դպրոցներ, որոնց մեջ ղեռատի հայեր ուրախ զվարթ կուսանին ու իրենց երկրի լավ քաղաքացիներ դառնալու կպատրաստվին, գործարաններ՝ ամեն կողմ, ուր բանվորները կաշխատին երգելով և ուր մեքենան մարդուն լայնորեն կօգնե աշխատանքի մեջ։ Այդ բարեբաստիկ աշխարհին մեջ, «ճակտիդ քրտինքով հացդ պիտի ուտես» խոսքը այլևս անեծք չի համարվիր, այլ օրհնություն, վասնզի աշխատանքը կնկատվի հոն ամենեն սուրբ, ամենեն քաղցր բանը։ Եվ այլևս չկա հոն շահագործող ու շահագործվող. բոլորին կատարած աշխատանքի արդյունքը արդարորեն կբաժնվի բոլորին։ Անհատական սեփականություն չկա այլևս հոն. անտառները, արտերը, ինչպես գործարաններն ու բոլոր շինությունները կպատկանին համայնքին։ Ու դաշտերը, լեռնակողերը, որ առաջ չոր, լերկ, խոպան էին, հիմա ծածկված են բույսերով, ծաղիկներով, պտղատու ծառերով, նորատունկ անտառները աճած են, արտերը լի են բարիքներով։ Շոգեկառքը կսուրա ամեն կողմ, նոր ձևով առևտուրը սկսած է ծաղկիլ՝ ներուժ բարգավաճումով, երկրին ու ժողովուրդին համար հասութաբեր։

Ընկերավարական իտեալին հետ է, որ հաղթանակած է՝ հաղթանակած է նաև ազգային, նույնիսկ ազգայնական իտեալը (Բաֆֆի, հավատարիմ, հետևորդը իր վարպետ Մ. Նալբանդյանին, կսիրեր միացնել երկու իտեալները, ինչքան ալ անոնք այժմյան ինչ-ինչ թթու մարքսյաններու հակասական ու անհաշտելի թվին։ Թուրքին խոսքը չկա ինչպես գրեթե վեպին ալ մեջ, իսկ քուրդերը այլևս գոյություն չունին. անոնք քաղաքակրթության ուժին չեն կրցած դիմանալ, քրիստոնյա դարձած են և հայոց մեջ հալած։ Թուրքին ու քյուրտին սարսափին տակ ապրող ու վախկոտ, մտատանջ, ջղային հայը գոյություն չունի այլևս. ամենքը համարձակ, անվախ, կտրիճ մարդիկ են։ Զորանոց չկա, ամենքը զինվոր են։

Հոն կտեսնվին մշակութային մեծ հաստատություններ, զոր դարերե ի վեր հայերը կցանկային ու չունեին, ազգային համալսարան, մուսեոն, թատրոն, Մատենադարան, Գիտությանց ակադեմիա, հիվանդանոցներ, լրագիրներու մեծատարած խմբագրատուներ (գլխավոր լրագիրը 150000 օրինակ կտպվի...)։ Այդ շքեղ շենքերուն մոտ, հրապարակներուն վրա, կտեսնվին ազատությունը բերող հեղափոխության ժամանակ նշանավոր հանդիսացած հերոսներու արձաններ... կրոնքը չէ ջնջված, այլ պարզված։ Եկեղեցին ու իր արարողությունները, ինչպես Վարդանի երազին մեջ կտեսնենք, բանավարականացած են, շատ մոտեցած, գրեթե նույնացած բողոքական ժողովարանի հավաքույթներու։ Դրախտ մը, վերջապես, հոն ուր Բաֆֆի և իր Վարդանը դժողք մը տեսեր և անով տառապեր էին։

Այդ ամբողջ գլուխը գրված է միամիտ, սրտաշարժ, ազնիվ, ցնորատեսական ոգևորությամբ մը, սակայն այդ էջերը քնարերգական բարձրության մը վրա չեն մնար միշտ, իրական երազի մը տպավորությունը տալու չեն հաջողիր, ու չեն ալ ձգտիր արդեն։ Այդ գլուխը Բաֆֆի հրապարակագրին գործն է ավելի քան վիպասանին, բայց մեծապես շահեկան է նորեն, որովհետև հեղինակին գաղափարախոսությունը լիովին արտահայտող գրվածքներեն մեկն է, անոր հղացումը կբանաձևե ապագա տեսլական Հայաստանի մը մասին։

Կայծերու «վերջին մաս»-ը երկու բաժին ունի, առաջինը՝ «Ամրոցի աղջիկը տիտղոսով գլուխը, բանաստեղծական հզոր պատկեր մը. Բաֆֆիի դրականապես ամենեն ուժեղ ու թելադրական էջերեն մեկը. հին բռնակալ շարագործ, փտած բեժիմը քանդող, այրող, ջնջող և անոր տեղ նոր, թարմ լուսավոր կյանք մը բերող հեղափոխական ճիգն է որ հոն, խորհրդանշական պատկերացումով մը, բուռն ու վայրագ, գրեթե անիշխանական կատաղությամբ մը տոգորված ներշնչումով կնկարվի ու կտարփողվի։ Հաջորդ գլուխները (Անհայտ ապագա ընդհ. վերնագրին տակ) բացի քանի մը նկարագրական կամ քնարերգական գեղեցիկ հատվածներե,— չոր, արագ, արձակունակ ոճով մը գրված, ավելի ճիշդ՝ սևագրված, հրապարակագրական էջեր են, թեև պատմվածքի ձևով, ու կներկայացնեն հաջողությամբ պսակված եզրակացությունը Կայծերու հեղափոխական գլխավոր դերակատարներուն երկար ու արկածալի պայքարներուն. անոնցմե ոմանք, որ վեպին մեջ երիտասարդ էին, կերևան հոն հասուն տարիքի մեջ, կամ ծերացած, անոնք որ դեռ աղջիկ էին կամ ամուրի, կարգված՝ ընտանիքի տեր դարձած են։ Այդ գլուխներն ալ, ինչպես Վարդանին երազը, կպատկերացնեն վաղվան ազատ Հայաստանը, որ 200 տարի հետո (ինչպես Խենթին վերջին գլուխն մեջ), այլ Կայծերու մեջ պատմված դեպքերեն 10—20 տարի հետո։ Այնտեղ շատ մը բաներ կրկնություն են Վարդանի երազին մեջ տեսնվածներուն, կան և բաներ որ կտարբերին։ Հոդ ալ աշխատանքը զվարթության, երջանկության մեջ կտիրե. հոդ ալ անհատական սե-

փականութեան տեղ ամեն ինչ համայնապատկան է դարձած։ Թուրքը հոդ ալ չերեար... հազիվ տեղ մը քուրդին քով անոր անունն ալ կհիշատակվի, ըսելու համար թե քուրդն ու Թուրքը հիմա այդ նոր ազատագրված երկրին մեջ հայը հեռվեն հարգանքով կբարևեն, փոխանակ կյաղուր անարգական բառը անոր երեսին նետելու։ Քուրդերը մասամբ միայն մնացած են այդ Հայաստանին մեջ։ Մեծ մաս մը, չկրնալով հանդուրժել ազատության, գաղթած են օտար երկիրներ, հետամնաց շրջանները, մաս մը մնացած է և ձուլված է հայոց մեջ, մաս մըն ալ պահպանած է իր քուրդի կյանքը, բայց իբր հայոց բանվոր ու ծառա կգործակցի երկրին վերելքի աշխատությանց։ Նահանգապետը մահմեդական չէ այլևս, այլ քրիստոնյա (ազգայնական Բաֆֆին այս գլխաներուն մեջ անգամ մը ևս կընկերակցի ընկերվարական հակումներ ունեցող Բաֆֆիին ու նույնիսկ կգերակշռե զայն)։ Այդ նոր Հայաստանին մեջ արդիական մեթոդներով վաճառականներ ալ կան, ոչ այլևս միջնորդներ, ինչպես էին առաջ, այլ եվրոպական իմաստով իսկական մեծ վաճառականներ, (հոս ալ հայ տարրին ամեն մարդի մեջ հառաջադիմությունը ցանկացող ազգայնական Բաֆֆին՝ տրամադիր հայ վաճառականին հաջողությունները պանծացնելու՝ կգերակշռե ընկերվարական Բաֆֆին ու կհակասե իակ անոր)։ Տեղական ճարտարարվեստ մը ստեղծված է, երկրին բնական հարստությունները կշահագործվին հոգուտ այդ ճարտարարվեստին, ու հայ մեծ վաճառականները իրենց այդ տեղական ճարտարարվեստին արդյունքներն է որ կտարածեն օտար երկիրներ՝ հոգուտ իրենց երկրին անտեսության։ Գործարանները, արհեստանոցները բարգավաճած են, ու բանվորներն ու արհեստավորները շահակից են անոնց դրամատեր հիմնադիր ղեկավարներուն։ Կրոնական կյանքը ոչ թե վերանորոգված, արդիականացած է, ինչպես Վարգանի երազին մեջ, այլ տկարացած, հյուծած, կիսամեռ կհայանվի հոս, հրաբուխ

գործած էին,— անիկա իր ազգի ներկային ու ապագային տիրական մտահոգությամբը գրավված էր և իր մտավոր ուժերուն մեծագույն բաժինը, իր գրական գործին կարևորագույն մասը ատոր հատկացուցած էր։

* * *

Ոչ միայն ջերմ, այլ բուռն, կրքոտ հայրենասեր մըն էր Բաֆֆի։ Այն տարփանքի հասնող սերը, զոր ունի իր ժողովուրդին համար, այն ամենախոր վիշտը, զոր կզգա օտար բռնակալության տակ անոր տառապանքն ու նվաստացումն տեսնելով, իր մեջ կարթնցնեն զայրույթի և ատելության զգացումներ դեպի այն օտար ցեղերը, որ այդ բռնակալությունն իր երկրին ու ցեղին վրա կծանրացնեն։ Ոչ միայն Թուրքին ու քուրդին դեմ իր ցեղային ատելությունը պոռացող անարգական բառեր ունի, այլ նույնիսկ Պարսիկին դեմ (որուն սակայն անցյալին մեջ ինչպիսի բարձր քաղաքականություն մը ստեղծած ըլլալը շատ լավ գիտե), բոլոր «մահմետականներուն դեմ, զոր ընդհանուր առմամբ կորակեն արհամարհոտ ու հեռու բացասությունները, ոչ թե որովհետև կրոնական որևէ մոլեռանդություն անոնց դեմ զինքը կդրդռե, այլ որովհետև անոնք իր հայրենիքին ու ազգին վրա եկած նստած են ու զայն կկեղեքեն։ Ներքնապես ան ուզեն ալ, թեև քրիստոնյա գրեթե նույնքին կատե, որքան մահմետական բռնակալ ցեղերը, քանի որ ան ալ եկեր իր լուծը դրեր է իր հայրենիքին և ժողովուրդի մեկ մասին վրա, բայց գրաքննության արգելքն ու բանտի սպառնալիքը թույլ չեն տված, որ ատ ալ բացեի բաց արտահայտեր (Խամսայի Մելիքություններուն մեջ և այլուր ատիկա անուղղակի ու մանվածապատ ձևերով զգացուցած է)։

Բաֆֆի կրքոտ ու բուռն է նույնիսկ իր ցեղին հանդեպ։ Որքան քննադատ ու խանդաղատալից է, երբ անոր համար իր զգացած անհուն գորովը կերգե, այնքան ալ քրտորեն կծու, անգթորեն կարծր է, երբ անոր թերությունները կուզե ձաղկել, երբ անոր դարավոր գերությամբ հառաջեկած տգիտությունը, թուլությունը, համակերպամտությունը, ստրկամտությունը, ինչպես և կրոնամոլությունը երեսին կզարնե։ Այդպես չէի՞ն նաև Իսրայելի մարգարեները իրենց ժողովրդին հանդեպ, որում համար պաշտում ունեին՝ զայն Եհովային «ընտրյալ ժողովուրդ»-ը մարելու ատիճան, բայց որուն թերությունները, զարտուղումները, տկարացումները, մոլորումները կդատափետեին ամենադաժան խստությամբ զայն ուղղելու, մաքրելու, զորացնելու համար։

Սակայն և ինչքան Բաֆֆի ունի արդարության զգացում ու ճշմարտության սեր, իր իսկ չափազանցությունները դարմանելու ազնիվ տենչ։

Քուրդին դեմ հայհոյանքի, անեծքի հատվածները բազմաթիվ են իր գրվածքներուն մեջ, այլև ունի էջեր, ուր կգովաբանե այդ ցեղին քաջությունը, հանդգնությունը, անոր նկարագրին ասպետական կողմերը, ու մինչև իսկ իրեն սիրելի չափազանցություններեն մեկուն մղվելով՝ մերթ փափաքելի կգտնե, որ հայն ալ լքե երկրագործությունը (որ ըստ իրեն՝ ստրկացնող աշխատանք մըն է) քուրդին պես լեռնաբնակ, թափառական, ազատ, զինված խաշնարած ըլլա, ի հարկին կողոպտիչ մը դառնա փոխանակ կողոպտվող մը մնալու։ Թուրքին համար չունի որևէ բարյացակամ խոսք, որևէ գնահատական բառ։ Արդեն, ինչպես նկատել տվի, Թուրքը—ինչքան ալ տարօրինակ ըլլա ատիկա և իր գործին տկար կողմերեն մին կազմե,— քիչ կերևա իր վեպերուն մեջ, ամեն պարագայի մեջ՝ շատ ավելի քիչ, քան քուրդը, ու երբ երևա, խարդախ, կաշառակեր, ոկրամոլ, վավաշոտ ու հարստահարիչ պաշտոնատարի կամ ոստիկանի ձևովն է միայն։

Պարսիկին անցյալի մեջ մեծ քաղաքականություն ունեցած ըլլալը և ներկայիս ալ մերթ հարգանքի արժանի հատկություններ ի հայտ բերելը գիտե ու պարսիկ այս կամ այն շահին կամ սարտարին հայ ժողովուրդին հանդեպ ունեցած դաժան վարմունքին իրեն ազդած ցասումը զինքը չարգիլեր որ իր գործին այլ մասերուն մեջ պարսիկ բանաստեղծության ու արվեստի վրա իր խորին սքանչացումը հայտնե։

Ամենեն շահեկանը, սրտաշարժն ու նշանակալիցը, այս մարդին մեջ, իր այն հատվածներն են, ուր արդարություն կուզե ընել իր իսկ ցեղին կամ անոր մեկ դասուն, ուր կջանա դարմանել ծայրահեղ խստությունը, որով այդ ցեղը, կամ անոր մեկ խումբը ամբողջությամբ քարկոծած է իր գործերուն որոշ մասերուն մեջ։ Այդ ցեղը գերության մեջ այլասերած իր տարրերեն մաքրելու, զայն վերանորոգելու համար ամբողջ ցեղին դեմ ընդհանրացված կծու խոսքեր արտասանող այդ գրագետը իր գործին ուրիշ շատ մը մասերուն մեջ՝ ամենեն երկյուղած հարգանքով, ամենեն խոր աղապատանքով կխոսի այն պատմական դերին վրա, զոր այդ ցեղը անցյալին մեջ կատարած է, ինչպես և անոր հին օրերու հերոսներուն և ժամանակակից Զեյթունցի, Սասունցի, Շատախցի կամ Ղարաբաղցի քաջերուն վրա, մեծ հիացմունքով ի վեր կհանե արժանիքները հայ կնոջ, որ անեղծ պահած է ցեղին ավանդական լավագույն առաքինությունները։ Իր Սարհատը, Դելի-Քեշիշը և Քիթապ-Դելիսին՝ Ջալալէդդինին մեջ անսանձ կատաղությամբ կհայհոյեն հայ հին ու նոր վանքերուն ու կրոնավորներուն դեմ, անոնց վրա բեռցնելով պատասխանատվությունը հայ ցեղի համակերպող, թուլամորթ, ինքնապաշտպանության, ընդվզումի, պայքարի անկարող դարձած ըլ-

լալան։ Ինքն իսկ Ռաֆֆի, իր վեպերուն ինչ-ինչ էջերուն և իր հոդվածներեն ոմանց մեջ,— էժան Սյուլ, Հյուգոյի և Միքայել Նալբանդյանի հակակղերական ոգիով լեցված,— կարճակեաց խիստ և ծայրահեղ վճիռներ հայության այդ գասակարգի մասին, որ իր անպիտան տարրերն ունեցած է և ունի ցարդ անշուշտ, բայց որ իր ծոցեն հանած է նաև այնքա՜ն ազնիվ ու բեղմնավոր ուժեր, որ անցյալին ու ներկային թե՛ մշակութային և թե՛ ազգային տեսակետով այնքա՜ն խոշոր գեր կատարած է մեր ժողովուրդի հանրային կյանքին մեջ։ Արդ, ինքն իսկ Ռաֆֆի որքա՜ն էջեր ունի ուր, Երիցյան Հայրիկի մը գեմքը գծած առեն, իր վեպերուն մեջ՝ հայրենասեր, ժողովրդասեր, ազատասեր կրոնավորներու տիպեր (ինչպես Դավիթ Բեկի Ներսես եպիսկոպոսը կամ Կայծերու վերջին մասի Ալաշկերտի առաջնորդ Հովհաննես Հայր Սուրբը) ստեղծած միջոցին, կամ երբ կգրե Կայծերուն այն գլուխը, ուր հայոց հին վանքերուն և կրոնապետներուն կատարած մատավորական ու հայրենասիրական բազմարդյուն գերը կպանծացնե, և կամ երբ կշարադրե Սամվելի այն նշանավոր գլուխը, ուր գեռ երիտասարդ Սահակին ու Մեսրոպին իրենց ազգին և անոր մշակույթին ապագան ապահովելու համար ունեցած սիրտ սրտի խորհրդակցության տեսարան մը իր վեհ երևակայությամբ կհղանա ու կպատկերացնե, այս տեսակի բոլոր էջերուն մեջ ան լիովին կգրամանե մերթ մինչև անարդարություն հասնող ծայրահեղությունները (անանց ալ տեղուշտ՝ բուռն ազգասիրությենե մը բղխած) զոր գործած էր իր երկերեն ոմանց որոշ էջերուն մեջ։ Ան նույնիսկ գիտցած է նաև զարմանել անիրավություն մը, զոր գործած է հայերու այս կամ այն խումբին հանդեպ։ Օրինակ՝ Տանկանայի հոդվածաշարքին սկիզբները, ինչպես և Կայծերուն ու Խենթին մեջ տեղ մը, և իր այլ գործերուն մեկ քանի էջերուն մեջ ալ, Ռաֆֆի կքաջքշե պոլսահայերը, զանանք իբր «հա-հա», զեվզեկ, շատախոս, 16—61 թվերը հոլովող ցույց տալով, թրքահայությունը զեկավարելու, հայկական հարցը վարելու անկարող ներկայացնելով։ Պոլսահայության մեջ— որ Հայաստանի զանազան շրջաններեն այդ մեծ քաղաքը եկած հաստատված հայերու համայնք մըն է եղած և քանի մը գարու ընթացքին ամեն տեսակի կարևոր ու բազմօգուտ գործիչներ տված է հայ ժողովուրդին,— բացառություն կազմող և Հայաստանի որևէ շրջանին մեջ իր համարժեքն ունեցող թեթևսալիկ մարդու կամ հարևանցի հայու տիպարներն ընդհանրացնելու և պոլսեցի հայն ընդհանրապես հոտհոտ կամ լրվանթին հաշվելու սխալը երբեք չեն գործածած Մ. Նալբանդյանի, Գամառ-Քաթիպայի, Աբգար Հովհաննիսյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Հ. Թամանյանի, Ա. Ծատհակյանի պես ուսահայեր ու կարելի է ըսել արևելահայ մեծ մատավորականները

ամենամեծ մասամբ, բայց անոր մեջ մերթ թնկած են և գեռ մինչև ցարդ կիյնան կովկասահայ հայտնի դեմքեր։ Ռաֆֆի, որ այդ ունակությենեն վրակված կերևա իր գործերեն ոմանց մեջ, ինքն իսկ իր երկերու այլ մասերուն մեջ ավելորեն կսրբագրե այդ սխալը։ Տաճկահայի հոդվածաշարքին վերջին գլուխներուն մեջ, երբ կխոսի Պերլինի վեհաժողովին հայկական հարցը ներկայացնող Պոլսո Հայ Պատրիարքարանին և անոր պատգամավորության վրա, հարգանքով է որ կհիշատակե այդ դիմումը հղացող ու գործադրող պոլսեցի Ներսես Պատրիարքն ու իր գործակիցները։ Կայծերուն ջերմ ազգասեր հայ-կաթոլիկ Արփիարքը, Խենթին Դուդուկճյանը, որ երկուքն ալ Ռաֆֆիի երևակայությենեն ծնած հեղափոխական, զարգացած փրոփագանտիթի ամենեն համակրելի տիպարներեն են, Պոլսո հայեր են։ Ու իր կյանքին վերջերը գրած մեկ նամակեն կիմանանք թե ան մտադիր էր, եթե գտներ նյութական միջոցներ, երթալ Պոլիս, մոտեն ճանչնալ այնտեղի հայ համայնքը և անոր մեջ գտնվող հայ գործիչներն ու մատավորականները, խորհրդակցիլ անոնց հետ հայկական հարցի պայքարին տրվելիք ուղղության մասին և հետո երթալ նոր պտույտ մը ընել Թրքահայաստան ու այցելել նաև այն շրջանները, զոր դեռ չէր տեսած։ Նյութական միջոցներ շտեսնելուն և քիչ ետքն ալ մահը վրա գալուն պատճառով է որ Ռաֆֆի չկրցավ գործադրել իր այդ ծրագիրը։

Կայծերուն ամենեն ուշագրավ գլուխներեն երկուքը անանք են, որ հայ-բողոքականներուն և հայ-կաթոլիկներուն նվիրված են։ Ռաֆֆի կատե, իրավամբ, հայության այդ երկու հատվածներու այն տարրերը, որ «Մենք հայ չենք, ֆրենկ ենք կամ բողոքական ենք» կրսեին արհամարհելով և անարգելով իրենց ազգը, բայց ազգասեր հայ-կաթոլիկ Մխիթարին ու Մխիթարյանց և իրենց աշակերտներուն, մասնավորապես Ալիշանին ու Պեշիկթաշլյանին անունը գուրգուրանքով ու պատկառանքով կհիշատակե, և ինք է որ ստեղծած է թունդ հայրենասեր հայ-բողոքականի և հայ-կաթոլիկի այն երկու զմայլելի տիպարները, որ են Կայծերուն Ջալլադն ու Արփիարը։

* * *

Բաղդատելով Ռաֆֆիի հայրենասիրական վեպերը Սերենցի վեպերուն հետ, հետևյալ նկատողությունները կրնանք ընելու։

Սերենցը ոգևորող զգացումները հայրենասիրությունն ու ազատասիրությունն են։ Աշակերտ եվրոպական մեծ ռոմանտիկ վարպետներուն, ան ալ ռամկավարական ոգիով տոգորված է, բայց միշտ կմնա ամեն

բանե առաջ ազգասեր հայ մը, հայ ազգի քաղաքական ազատության վերականգնումը իր միակ իտյալն է, ընկերվարական որևէ հակում, դասակարգային պայքարի որևէ ձգտում իր գործին մեջ չի զգացվիր. ինք եղած է անոնցմե, որ կխորհին, թե հայ ժողովուրդը իր քաղաքական ազատությունը վերագտնելու համար պետք էր իր բոլոր դասերուն, բոլոր տարրերուն համերաշխ գործակցությամբը մղեր այդ նպատակին առաջնորդող ճիգը, թե ընկերական հարցը, դասակարգային պայքարը խառնել ազգային ազատության վերականգնման հարցին՝ սխալ մըն էր, որովհետև հայ ինքնավար հայրենիքի մը վերահաստատման համար անհրաժեշտ եղած ազգային համերաշխությունը կտկարացներ, թե ընկերական հարցը պետք էր ստորադասվեր ազգային հարցին և ազգային ազատության իտեալը իրագործվելեն հետո՝ դրվեր իր ամբողջ ուժգնությամբ ազատ Հայաստանին մեջ, ան ալ իբր հայ ժողովուրդին պատկանող ներքին հարց և ոչ թե իբր միջազգային պայքարի մը մեկ մասնիկը։

Բաֆֆիի մեջ նույնպես ազգասերն ու ռամկավարը գերակշիռ են. բայց ռուս վիպասաններու և Միքայել Նալբանդյանի ազդեցությունը կրած է ան հայտնապես և անոր Խենթին ու Կայծերուն մեջ դասակարգային պայքարի շունչը կզգացվի, ընկերական ոգին կխառնվի ազգանիրական զգացումին։

Ներենց ոչ մեկ գործ արտադրած է, որ Խենթին կամ Կայծերուն բնույթն ունենա։ Մերօրյա կյանքեն ներշնչված կամ ապագայի կանխագուշակության մը վրա հիմնված վեպեր անիկա չէ գրած։ Անոր երեք վեպերուն ալ նյութը հայոց հին պատմութենեն քաղված է, և անոնք ուրեմն Բաֆֆիի պատմական վեպերուն հետ է որ կրնան համեմատության դրվիլ։ Դավիթ Բեկն ու մանավանդ Սամվելը,— Պարույր Հայկազնը չեմ կարդացած, բայց կենթադրեմ, որ ան ալ մյուս երկուքին հատկությունները ներկայացնող գործ մըն է. կհայտնեմ գրական արվեստագետ մը ավելի բազմալար, ավելի մեծաշունչ քան Ներենցը։ Սակայն ինծի կթվի թե պատմական վեպի սեռը մեր գրականության մեջ առաջին անգամ մտցնողի իր արժանիքեն զատ, Ներենց, իբր քաղաքական տեսաբան, իբր բռնակալ լուծերու տակ մնացած հին ազգի մը ազատագրման ճամփան թելադրիչ և ոգևորիչ վեպերու միջոցով ցույց տվող գրագետ, ունի որոշ տեսակետով մը առավելություններ։ Իր երկու լավագույն վեպերուն, որ են Թորոս Լևոնի և Երկունք Թ. դարու. Ներենց նյութ ընտրած է հայոց հին պատմութենեն երկու շատ հատկանշական բոպեներ, ուր մեր ժողովուրդը, օտար հզոր ցեղերու տիրակալության տակ ինկած, գտած է այն ընտիր պետերը, որոնք իմաստությունը կորովին,

դիվանագիտական ճարտարապետությունը խիզախ ընդվզման միացնելով՝ պատրաստած, կազմակերպած և գործադրել սկսած են ապստամբական շարժում մը, որ պսակված է մեծ հաջողությամբ, հանգած է վերականգնմանը հայ ազգի քաղաքական ազատության, և եթե այդ ազատությունը չէ եղած լիակատար, համատարած ու մշտատև, գեթ քանի մը դար տևելու սահմանված էր, և իր սահմանափակության մեջ մեծարժեք էր, հայ ազգի և հայ մշակույթի պատմության մեջ կարևոր գլուխ մը կազմող ժամանակաշրջանի մը ծնունդ տվող։

Թորոս Լևոնին, որ Ներենցի առաջին վեպն է, Ալեքսանդր Տյումայի, Հյուկոյի, ու մանավանդ Ուալթեր Սքոթի և Մանձոնիի շունչով՝ դյուցազներգական վիպումն է Ռուբինյան Լևոն իշխանի որդվույն Թորոսի և իր ընկերներուն դեկավարության տակ բյուզանդական պետության բռնակալության դեմ Կիլիկիո հայության մղած ապստամբական պայքարի հարթանակին, ինչ որ իրեն հետևանք ունեցավ հաստատումը Կիլիկյան հայ իշխանապետության մը, որ քիչ հետո Արևելք եկող խաչակրաց օգնելով և ինք ալ անոնց վրա կրթնելով, զորացավ, ընդլայնեցավ, թագավորություն մը դարձավ ու երեք դար տևող հերոսական կռիվ մը մղեց մահմեդական աշխարհին դեմ, հայ քաղաքակրթության պատմության մեջ փայլուն էջ մը գրավեց և մարդկային պատմության այդ կարևոր շրջանին մեջ հայ ցեղին առաջնակարգ դեր մը կատարել տվավ։ Այդ վեպը, գրական հաջող գործ մը ըլլալեն զատ, Ներենցի և իրեն համամիտ խումբ մը հայ մեծանուն և հայրենասեր գործիչներու մեկ որոշ ու պատվական ծրագրին հող պատրաստող արարք մըն էր։ Հայտնի է, որ Զեյթունի 1862-ի կարևոր ապստամբության միջոցին՝ Ներենց, Պեշիկթաշլյան, Ռուսինյան, Օտյան և քանի մը ուրիշ պոլսահայ նշանավոր ազգասեր մտավորականներ, ու նաև Միքայել Նալբանդյանը, որ այդ միջոցին Պոլիս գտնված ու իրենց բոլորովին համակրած ու գործակից եղած է, գաղտնի ժողովներու մեջ ծրագրեցին ոչ միայն ապրստամբ Զեյթունին օգնել՝ Փարիզ Նափոլյոն Գ. կայսեր մոտ դիմումով և ուրիշ ձևերով, այլև շրջահայաց ու սքողյալ կերպով ամբողջ գործունեություն մը սկսիլ հայոց թիվը Կիլիկիո մեջ ստվարացնելու, այդ շրջանի հողերուն մեծ մասը հայոց ձեռքն անցընելու և հայ ազգային ազատության լուրջ ու տևական վերահաստատման մը գետինը հոն պատրաստելու համար, որպեսզի օր մը այնտեղ հայ ինքնավար Լիբանան մը երևան գար, հայ ուժերով վերակազմված Կիլիկյան հայ պետություն մը, որ զարգանար շահակից արևմտյան մեծ պետության մը հովանավորության տակ։ Այս ծրագրին իբր գրական նախապատրաստություն՝ Պեշիկթաշլյան շարադրեց Զեյթունցի, «քաջորդիին» ու «քաջուհիին»

նվիրված հանրածանոթ գեղեցիկ երգերը, Ռուսինյան ֆրանսական երգի մը նմանողությամբ գրեց իր «Ցանկամ սեսնել զիմ Կիլիկիան», կազմվեցավ «Երկրագործական ընկերությունը», որուն առերևույթ և պաշտոնապես հայտարարված նպատակն էր Կիլիկիո մեջ երկրագործությունը զարգացնել հայերու աշխատանքով, բայց որուն ներքին նպատակը այն էր, զոր վերև բանաձևեցի ու Ներենց ինքն իսկ այդ խմբակին կողմն ղրկվեցավ Կիլիկիա՝ տեղական պայմաններն ու կարելիություններն ուսումնասիրելու համար։ Կիլիկյան այդ քննական պտույտի միջոցին է և անկից հետո Պոլիս դարձին՝ որ Ներենց գրեց ու հրատարակեց իր Թորոս Լևոնի վեպը։ Այդ բոլորը ծրագրի վիճակին մեջ մնաց, և ատիկա մեծ դժբախտություն մը եղավ, ըստ իս՝ հայ ժողովուրդին համար, որովհետև Կիլիկիո մեջ հայ պետության վերահաստատումը՝ հայ ազգասիրական բոլոր գործոն ուժերու միացյալ ճիգով իրականացած, եթե դարման չէր կրնար բերել Կովկասեն մինչև Միջերկրական ցրված հայ ժողովուրդի մեծագույն մասին բոլոր ցավերուն, այդ Կիլիկյան ծրագիրը սակայն՝ հարաբերաբար նպաստավոր պայմաններու մեջ հայ քաղաքական ազատության վերահաստատման կարելիությունը կներկայացներ ու այդ շրջանակին մեջ վերաստեղծված հայ պետության տևական դառնալուն և ամեն կերպով զորանալու և ուռճանալու միջոցներ գտնելուն հավանականությունը և անոր մեջ հայ մշակույթի՝ արևմտյան ամենեն ազատամիտ ազգերուն հետ անմիջական շփումով՝ լիակատար ազատությամբ ու մեծ թափով զարգացման ապահովությունը։ Ու հին Հայաստանի թրքական ու ռուսական, ինչպես և պարսկական՝ բաժիններուն հայ ժողովուրդը, ազգային ոգին վառ պահելու, հայ մշակույթը պահպանելու և հառաջացնելու համար բարոյական մեծ նեցուկ մը պիտի գտներ ատոր մեջ և պիտի կարենար սպասել ու պատրաստվիլ լավագույն ապագա օրերու, ուր կարենար ինք ալ իրեն համար որևէ չափով ու ձևով ազգային ինքնավարության մը հասնելու ջանք ընել և դրական ու տևական արդյունքի մը հասնիլ։

77-ի ռուսո-թուրք պատերազմը, Ներսես պատրիարքի, Օտյանի ծրագիրներն ու դիմումները, 61-րդ հոդվածը, Խրիմյան Հայրիկի քարոզները, Գրիգոր Արծրունիի, Գամառ-Քաթիպայի, Բաֆֆիի գրվածքները հայության սիրտը, միտքն ու հույսը դարձուցին դեպի Թրքահայաստան, ուր վերջին Դարերուն ընթացքին կազմված պայմանները շատ ավելի դժվար— չըսելու համար անհնար— կդարձնեին տևական հայ պետություն մը հիմնելու ծրագիրը։ Կիլիկյան ծրագիրը լքվեցավ— գեթ ատենվան մը համար։ Ներենց ինքն իսկ գնաց Կովկաս,— ուր իր դուստրը ամուսնացավ Աղեքսանդր Մելիք Ազարյանցի հետ, և ինք հաստատվե-

ցավ Թիֆլիս, ուր Ներսիսյան վարժարանին մեջ Հայոց պատմության դասավանդությունը կատարեց ատեն մը. հոն գրեց ու հրատարակեց Երկուսի Թ. դարու վեպը, որ լույս տեսավ Բաֆֆիի Դավիթ-Բեկեն հետո, և նյութ ուներ արևելյան Հայաստանի հին պատմության մեկ մեծ դրվագը, բայց դրվագ մը դարձյալ, ուր հայ ազգային ազատության վերականգնման համար թափված ճիգը մեծարժեք հաջողությամբ մը կպսակվի, այն է Թ. դարու հայկական շարժումը, որով բյուզանդական և արաբական զույգ բռնապետությանց լուծին տակ կապկպված, կեղեքված հայ ժողովուրդը՝ ղեկավարությամբ Բագրատունի պետերու— որոնց Ներենց կմիացներ իր երևակայությամբը հղացված ժողովրդական հերոսներ— կպատրաստեր Բագրատունի հարստության հիմնարկումը քանի մը դարե ի վեր իր անկախությունը կորսնցուցած Հայաստանի մեկ կարևոր շրջանին մեջ, Բագրատունի Հարստության, որուն տիրապետությունը տևեց երկու դար և հայ քաղաքակրթության ամենեն փառավոր ժամանակաշրջաններեն մին եղավ։

Բաֆֆիի Դավիթ Բեկը գյուցազներգությունն է Սյունյաց աշխարհի մեծ Մելիքի մը, որ իր անձնական քաջության ու հանդգնության շնորհիվ հաջողեցավ իր սահմանափակ շրջանին մեջ կես-ինքնավար փոքրիկ Հայաստան մը ստեղծել, բայց որուն հիմնած տունը իր մահվան հետևյալ օրն իսկ քայքայվեցավ։ Իսկ Սամվելի մեջ Տիրան, Արշակ ու Պապ Արշակունի թագավորներու օրով «ուրացող», այսինքն պարսկամերձ, հակաքրիստոնեական և «հավատարիմ» այսինքն քրիստոնյասեր և բյուզանդացվոց մոտիկ երկու հայ կուսակցությանց հակամարտությունն է որ ցույց կտրվի, առանց որ վեպը հանգի հարազատ կուսակցության հաղթանակին։ Ըսի արդեն թե Բաֆֆի չէ կրցած ավարտել այդ վեպը. Սամվելի ձեռքով իր մոր սպանման քստմնելի տեսարանը, որ շարադրված գործին վերջին գլուխը կկազմե, հայտնի է որ վերջը չի կրնար ըլլալ այդ վեպին. և գիտենք արդեն, տիկին Բաֆֆի հայտնած է զայրույթ, թե Բաֆֆի գրած ունի նոթեր, ցարդ անտիպ մնացած, այդ վերջին մասին համար, բայց մահը վրա հասած է և ժամանակ չէ ունեցած այդ վերջին մասը շարադրելու։ Ոչ ոք որոշ տեղեկություն տված է այդ նոթերու մասին ու չենք գիտեր թե ի՞նչ էր անոնց պարունակությունը։ Ինչքան պիտի ուզեի, որ այդ վերջին մասը գրված ըլլար և պատկերացներ՝ հայ-քրիստոնյա կուսակցության— հարազատ հայերու, Սամվելներու կուսակցության հաղթանակը՝ «ուրացող»-ներուն վրա, հրաշալի իրականացումը հայ ազգային հոգին անպարտելի և անմահ դարձնող ծրագրին, զոր արդեն իսկ Բաֆֆի այդ վեպի «փակագիծ մը» տիտղոսված գլխուն մեջ՝ երիտասարդ Սահակի ու Մեսրոպի խորհրդակցու-

թյան տեսարանով՝ ուրվագծած է, ամենի ազգաբեր Մամիկոնյան Սամվելին հայրենասիրական երազին իրականացումը, որ երեք մեծ հայերուն ձեռքով մշակութային ու վարչական ձևով հոյակապորեն կատարվեցավ, և Վռամշապուհի մահվան հաջորդ զարիր պառակտումի, բարոյական ահավոր անկումի, ինքնաքանդումի ամենատխուր շրջանեն հետո, (հայ Արշակունյաց թագավորության իսպառ անհետացմանը հանգող), Վարդան ու Վահան մեծ Մամիկոնյաններուն ձեռքով դյուցազնական պայքարի ձևին տակ հայ ազգային քաղաքական ազատության որոշ չափով վերականգնումը հաջողցուց և հայ ազգային ինքնության և ինքնուրույն քաղաքակրթության գոյությունն առհավետ ապահովեց։

1895-ին Զեյթուն նորեն ապստամբեցավ, այդ անգամուն՝ հնչակյան կուսակցության դրդումով, քանի մը երիտասարդ հնչակյան գործիչներու (Աղասի, Ապահ, Մլեհ, Հրաչյա) ղեկավարությամբ։ Այդ ապըստամբությունը, որ չորս-հինգ ամիս տևեց, պատվավոր վախճան մը ունեցավ. Զեյթունցիք, Թուրք զորանոցը գրաված, անոր մեջ գտնվող զինվորները գերի բռնած, իրենց վրա ղրկված Թուրք զորքերուն հաջողությամբ դիմադրած ու զանոնք ետ մղած էին։ Պերլինի դաշնագիրն ստորագրող եվրոպական պետությանց հյուպատոսները միջամտեցին, որոնցմե երկուքը, ֆրանսացի Պարթելիմին և իտալացի Էնրիքո Վիթթոն (որ հետո Զեյթունի վրա ամբողջ գիրք մը հրատարակեց), մասնավորապես ջերմ համակրություն մը ցույց տվին, Թուրք կառավարության ու ապստամբներուն միջև հաշտություն կնքեցին՝ զեյթունցիներուն համար նպաստավոր պայմաններով։ Բայց նորեն հայ ժողովուրդը չգիտցավ այդ շրջանին մեջ կեղրոնացնել իր կարևորագույն գործոն ուժերը և իր ազատագրական պայքարին էական ճիգը։ Ընդհակառակն, հայ ազատագրական պայքարը կատարողներ, կփսորվեր՝ ցույցերու, հատվածական հարձակումներու ձևով, երևան կուգար մերթ Թրքահայաստան, մերթ Փոքր-Հայք, մերթ Փոքր-Ասիո ոչ հայկական շրջաններու մեջ, մերթ Կովկաս, մերթ նույնիսկ Պոլիս (Պապ Ալիի ցույց, Պանքայի գրավում), ինչ որ Բաֆֆի չէր թելադրած իր Խենթին կամ Կայծերուն մեջ, որոնց գործողությունը միշտ և միայն Թրքահայաստանի Վան—Մուշ—Բաղեշ շրջանին մեջ կանցնի։ Այդ ձևով ըմբռնված ու ղեկավարված ազատագրական շարժում մը, ուր պայքարը կուղղվեր օտար ցեղերով ողողված իր իսկ հինավուրց հայրենիքին մեջ փոքրամասնություն կազմող ու ցրված հայ ժողովուրդին մեկ սակավաթիվ հատվածին կողմե՝ թե՛ Թուրք կառավարության ու ժողովուրդին, թե՛ քուրդ զանգվածին և թե՛ սահմանակից ռուս ձարական կառավարության դեմ, դատապարտված էր ոչ միայն ձախողելու, այլև հալածանքներու ստրկացման և կոտորածներու հանգելու։ Այդպես ալ եղավ 1894—1896-ին համիտյան բռժիմի ամբողջ տևողությանը։ 1908-ին գործած ահավոր սխալը— զոր Բաֆֆի անշուշտ պիտի ուժգնորեն դատապարտեր— և որով հայ հեղ. դաշնակցությունը հայ ազգային դատին համար հին Թուրքերեն շատ ավելի վտանգավոր ժեոն Թուրքերուն հաղթանակին վճռական օգնություն մը բերավ (մինչ օսմ. պետության հպատակ մյուս բոլոր ցեղերը և մյուս հայ հեղ. բոլոր կուսակցությունները անհամաձայն կմնային այդպիսի գործակցության մը)։ Թրքահայաստանի մեջ ինքնավար պետություն մը հիմնելու արդեն իսկ դժվար ծրագիրը բոլորովին անհնար կդարձներ։ Ժեոն Թուրքերը տարի մը հետո Կիլիկիո կոտորածները կսարքեին, և ամբողջ Թրքահայաստանի մեջ ջարդը տարածելու իրենց ծրագրեն ետ կկենային Ֆրանսայի և այլ արևմտյան տերությանց միջամտության շնորհիվ, իսկ մեծ պատերազմի ատեն՝ Կովկասի ռուս բանակի հայ կամավորները պատրվակ բռնելով ամբողջ Թրքահայությունը բնաջինջ ընելու ճիվաղային ծրագիրը կհղանային (հայերը ջնջելով հայկական հարցին վերջ տալու համար) և զայն մեծ մասամբ կգործադրեին։ 1916-ին Ազգային Պատվիրակությունը ֆրանսական կառավարության հետ բանակցելով— անգլիական կառավարության ալ գիտությամբ և հավանությամբ. կգոյանար համաձայնություն մը, որով հայերը պիտի տային հազարավոր կամավորներ ֆրանսական դրոշակի տակ դաշնակիցներու Արևելքի բանակին մեջ կռվելու համար, և հաղթանակեն հետո Կիլիկիո մեջ ֆրանսական հովանավորության տակ ինքնավար Հայաստան մը պիտի վերակազմվեր. բայց երբ հաղթանակը եկավ, ռուս հեղափոխությունը, ձարական կառավարության անկումը, ռուս իշխանությանց ու զորքին ոչ միայն Թրքահայաստանեն, այլև Կովկասեն քաշվիլը, Վրաստանի, Ատրպեճանի և Հայաստանի ինքնավարության հռչակումը ինքնին պարտադրեցին այդ երեք դրացի երկիրներուն, և այնուհետև՝ Կիլիկիո մեջ սահմանափակվող փոքրիկ հայ պետություն մը այլևս ճշգիմ բան մը երևցավ հայոց, ֆրանսական պաշտպանությունը համարվեցավ ոչ ձեռնտու՝ ծովե ծով ընդարձակածավալ Հայաստանի մը վրա ծառայելու հրավիրված ամերիկյան հոգատարության ցնորքին քով. ատեն մը ետքը Ֆրանսան կքաշվեր Կիլիկիայեն, զոր գրաված էր, քեմալականությունը կզորանար ու վերստին գրավելով ամբողջ Թրքահպատակ Փոքր Ասիան՝ անկից դուրս կքշեր բովանդակ քրիստոնյա տարրը, հույնը և հայ. մյուս կողմե Ռուսաստանը, պոլշևիկ ձևի տակ, կվերադառնար Կովկաս, խախուտ ու անտեսական հիմերու վրա դրված երեք անվանապես անկախ պետությունները կբռնադատեր իր հիմնած նոր ռեժիմին ենթարկվելու, կպահպաներ անոնց յուրաքանչ-

յուրին «ազգային պետության» հանգամանքը, բայց զանոնք պետք է մաս կազմեին այն «պետություններու համադաշնակցության» որ է Խորհրդային Միությունը։

Այս պայմաններուն մեջ, այսօր, երբ ամբողջ Թրքահայաստանն ու Կիլիկիան բոլորովին թափուր են հայերեն,— ժխտական տհավոր իրականություն, որուն նմանը մեր անցյալ պատմության ամենեն մռայլ շրջաններուն իսկ երբեք չէ տեսնված, կարելի՞ է ըսել թե Բաֆֆիի Խենթին «Վարդանի երազը» կամ Կայծերու վերջին գլուխներուն «տեսիլ»-ները իրականացած են։ Ո՛չ և այո։ Ո՛չ, և տասն անգամ ո՛չ, եթե ի նկատի ունենանք, որ Բաֆֆիի երազն ու տեսիլը Թրքական Հայաստանին, ու գլխավորապես Վասպուրական—Տարոն—Բագրևանդ շրջանին համար էր, (հուսալով անշուշտ նաև որ այդտեղ հիմնվելիք հայ պետության օր մը կուգար, միանալ Արարատին մյուս կողմը գտնվող Կովկասյան Հայաստանը)։ Եվ այդ Թրքական Հայաստանը ոչ միայն այսօր չէ ազատագրված, այլ որևէ հայ կյանք ա՛լ գոյություն չունի հոն (ո՞վ գիտե ինչքան ատենվան համար), ու Թուրքը ավելի քան երբեք հաղթական կտիրե այնտեղ, ինչպես և ամբողջ Փոքր Ասիո մեջ ու անդրկովկասյան Հայաստանին ալ մեկ մասը գրաված կպահե։ Սակայն կրնանք ու պարտինք ըսել թե Վարդանի երազը, որ իր հիմքին մեջ բովանդակ հայ ազգին դարավոր երազն է՝ Կիլիկյան հայ թագավորության անկումեն ի վեր,— մասամբ և ուրիշ ձևով իրականացավ, 1918-ին անդրկովկասյան Հայաստանին մեջ ռուս հեղափոխության հետևանքով հայ պետության մը վերահաստատումով։ Մասամբ և ուրիշ ձևով կսեմ, որովհետև Բաֆֆիի նկարագրած երազին ու տեսիլներուն մեջ բռնակալ լուծերեն, ճընշող ու կեղեքող բոլոր ուժերեն ամբողջովին ազատած, զորեղ, ապահով, բարգավաճ, հառաջադեմ, երջանիկ Հայաստան մը կերևա, մինչ երեքուկես տարի տևող անվանապես անկախ հայ պետությունը սովեն, համաճարակներեն՝ բոպե մը շունչ առնել չկրցավ, ու այնքան դժբախտ էր, Թուրքին քանի մը քայլ ևս հառաջխաղացությամբ՝ այդ Հայաստանի մնացորդին մեջ համախմբված ստվար հայությունը այնքան բացարձակ բնաջնջումի վտանգին մեջ կգտնվեր, որ համայնավար Ռուսիո գալն ու այդ պետությունն իր բեժիմին՝ այլևս իր հովանավորության ենթարկելը՝ այդ փոքրիկ պետության և անոր մեջ հավաքված հայ ժողովուրդին ֆիզիկական գոյությունը փրկող դեպք մը հանդիսացավ։ Ու խորհրդային հայ պետությունը, ուր մեր ժողովուրդին ստվարագույն զանգվածը կապրի, կգործե, կաշխատի, կարտադրե՝ հայ լեզվով, հայ հողի վրա. Հայաստանի մեկ փոքր բայց կարևոր մասին մեջ՝ որ կշարունակե կոչվիլ Հայաստանի հանրապետություն, հակառակ բեժիմի մը, որուն հիմնական սկզբունքներեն շատերը համաձայն չեն մեր իններուն, հակառակ մտածման ու գործունեության ազատության պակասին, հակառակ նույնիսկ տարիե մը ի վեր ամբողջ Միության հետ Հայաստանին մեջ ալ տիրող մռայլ տագնապին, կմնա մինչև այսօր Վարդանի և հայության երազին մասամբ իրականացումը, քանի որ կա հոն հայ պետություն մը՝ ուր հայը ազգաբնակության ստվար մեծամասնությունը կկազմե և ունի հայ կառավարություն մը, որ որևէ չափով, ինչքան ալ համեստ, ինքնավար բնույթ մը կկրե։ Ու արտասահմանյան պանդուխտ հայրենասեր հայ մը երբեք պետք չէ մոռնա որ այդ Խորհրդային Հայաստանին մեջ է որ իրականացան ու զարգացան, և իրենց զարգացումը պիտի շարունակեն, ազգային մշակույթի այն մեծ հաստատությունները զոր Բաֆֆի Վարդանին երազին մեջ երկու հարյուր տարի հետո իրականանալի ցույց կուտար, հայ համալսարան, պետական թատրոն, մատենադարան, երաժշտանոց, գիտությանց կաճառ, դպրոցներ, հիվանդանոցներ, և այլն։ Ներկա պայմաններուն մեջ, ուրիշ ոչինչ ունին հայերը բացի այժմու Հայաստանեն, և Բաֆֆին ու Միքայել Նալբանդյանը ուրիշ բան պիտի չըսեին եթե ողջ ըլլային հիմա, ոչ միայն այդ գոյություն ունեցող հայ պետությունը թանկագին է մեզի համար, այլև հակառակ բոլոր գանգատներուն զոր կրնանք ունենալ Խորհրդային Միության վարչաձևին այս կամ այն սկզբունքներուն մասին, այդ Հայաստանին Խորհրդ. Միության մեջ մնալը, անոր վրա կրթընելով իր գոյությունն ապահովելը անվիճելի անհրաժեշտություն է։ Գոյություն ունեցող այդ փոքրիկ հայ պետությունն է, որ իր ապագա զարգացմամբ, զորացմամբ, ընդլայնմամբ, կառավարական սիստեմին, քաղաքական ու ընկերական բեժիմին՝ ընդհանուր Խորհրդ. Միության իսկ անխուսափելի բնաշրջման հետևանքով՝ բնականոն ձևի մը մեջ մտնելովը, Վարդանին երազը պիտի հետզհետե մոտեցնե իր ավելի լիալիր չափով իրականացման։

***

Իտալացիք, ուղղակի սերունդն ու ժառանգորդները հին Հռոմայեցվոց որ աշխարհի մեծագույն մասին տիրող պետություն մը ստեղծեցին, երկար ատեն եղան քաղաքականապես ու զինվորապես թույլ ժողովուրդ մը, իրենց երկիրը բաժնված էր զանազան իշխանապետություններու, որ իրարու հետ կռիվի մեջ էին հաճախ, և մեծագույն մասն ալ ի վերջո օտար լուծերու տակ ինկավ։ Հրաշալի արվեստագետներ, գրագետներ, բանաստեղծներ, գիտուններ արտադրած էին, բայց անկարող

հանդիսացած էին թոթափել օտարին լուծը և միացնել իտալական ինքնազլուխ նահանգները միակ հայրենիքի մը մեջ։ Ունեցան հոյակապ հայրենասեր բանաստեղծներ ու գրագետներ, Տանթեէն ու Փեթրարքայեն մինչև Լեոփարտի, Մաքիավելեն մինչև Ալֆիերի ու Մանձոնի, որ ազատ, միացյալ, զորեղ ու երջանիկ Իտալիո մը երազը երգեցին կամ տեսիլը քարոզեցին, բայց ի վերջո ունեցան Կարիպալտիի՝ ազատագրական պայքարի հերոսական մարտիկին՝ և իր անձնազոհ զինվորներուն հետ, իմասքարի հերոսական մարտիկին՝ և իր անձնազոհ զինվորներուն հետ, իմաստուն և արի քանի մը պետեր, Փիեմոնթեի վիքթոր Էմանուել Ա. արքան, առաքյալի հոգիով այլև քաղաքագետի մտքով Մացցինին ու հանճարեղ դիվանագետ Քավուրը, և իրականացուցին Ռիսորճիմենթոյի հոյակապ ու հաղթական շարժումով՝ իրենց ազգային իտեալը։

Մենք ունեցանք մեր քարոզող, ներշնչող, ոգեորող հայրենասեր բանաստեղծները, գրագետները, վիպասանները, մեր ազատագրական պայքարի առաքյալները, և Բաֆֆի եղավ անոնց մեծագույններեն մին, ամենեն ժողովրդականը, ամենեն խանդավառիչը։ Ունեցանք մեր Կարիպալտիները, բայց չունեցանք Քավուր ու Մացցինի։

Սիրենք, հարգենք, պատվենք Բաֆֆի գրագետը, որովհետև ան տվավ մեր ժողովուրդին գործեր, որոնք զայն հոգեպես զորացնելու և մաքրելու, ազնվացնելու կձգտին և այդ վեհ ու խնկելի դերը հավիտյան պիտի կատարեն։ Բայց մաղթենք, ու ջանանք, որ մեր ցեղը արտադրե, կազմե, հասունցնե Քավուրներ, ու գիտնա օգտագործել զանոնք՝ երբ երևան իր մեջ,— որպեսզի Վարդանին երազը, Բաֆֆիի տեսիլը, հայ ազգին դարավոր արդար տենչն ու պահանջը օր մը ավելի լայն, ավելի կատարյալ և ամուր ձևով իրականանա։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հովհաննես Թումանյանի մահը անսահման դժբախտություն մըն է հայ գրականության համար, հայ ազգին համար։

Ծանրապես հիվանդ՝ Թիֆլիսեն Մոսկվա բերված էր ան, և մտադրություն կար իր մոտ Պերլին փոխադրելու, վարպետ բժիշկներու ձեռքով գործողության մը ենթարկվելու համար։ Հայ կառավարությունը հակառակ իր նեղ միջոցներուն, մեծ բանաստեղծին դարմանման գործին նպաստելու համար՝ երկու հազար ոսկի ռուպլի գումար մը տրամադրած էր։ Արմատական բուժման մը հույսը դժվար էր ունենալ, բայց կկարծվեր թե ճարտար գործողություն մը հաջողեր քանի մը տարի երկարել

այդ թանկագին կյանքը։ Այդ հույսին իրականացումն է որ կմաղթեի ես ինքս իր մասին վերջերս արտասանած բանախոսությանս մեջ. բայց այդ իրիկունն իսկ, սրահեն մեկնած ատենիս Պ. Պապաջանյան, որ զայն տեսած էր Մոսկվա երեք ամիս առաջ, կքանդեր մեր մեջ հույսի ամեն նշույլ, ըսելով թե հիվանդությունը հասած էր այնպիսի ծանր վիճակի մը, որ փոխադրությունն իսկ անհնար դարձած էր։ Մահը, որ արդեն թաթը անոր վրա դրած էր, փութացուցած է իր գործը, և քանի օր մը հետո կստանայինք գուժաբեր հեռագիրը։

Սարա Պերնարի մը անհետացումը տիեզերական սուգհարույց, ու մեր ալ սրտերը խշխշացին, մտածելով որ այդ արտակարգ արվեստագիտուհույն ոսկի ձայնը պիտի չհնչե այլևս բեմի վրա. բայց ան ութսունի մոտ էր, վաղուց լրացուցած էր իր գործը, տված էր ամեն ինչ որ կարող էր։ Ինչ բառ գտնենք արտահայտելու համար անմխիթարելի կսկիծը, զոր Թումանյանի վաղաժամ կորուստը կազդի մեզի։ Հիսուներեք տարեկան հասակին մեջ աչքերը կփակե մեր ամենասիրելի բանաստեղծը, իր ուժերուն և տաղանդին լրության մեջ, երբ դեռ այնքան բան ուներ ընելիք իր քերթողական գործը ընդլայնելու և լրացնելու, մեր գրականությունը նոր նոր հրաշակերտներով ճոխացնելու համար։

Գործը զոր կթողու՝ հոյակապ ամբողջություն մըն է սակայն արդեն, որ պիտի որքան ապրի հայ ժողովուրդը։ Ան մին է ամենեն հարազատ, ամենեն ուժեղ ու գեղեցիկ արտահայտություններեն հայ հոգվույն։ Կարելի է ըսել թե նույն ինքն հայ ցեղն էր, որ անոր մեջ ինքզինքը կերգեր իր հատուկ զգայնությամբ ու մտայնությամբ, իր բնորոշ ոգվով ու ճաշակով։ Մեր ներկա բանաստեղծներուն ամենեն, «ազգայինն» էր Թումանյան, ամենեն «Հայը», ամենեն ավելի ցեղային համն ու հոտը բնականորեն և ճոխապես ունեցողը։

Այս փոքրածավալ թերթին էջերուն մեջ անհնար է ինծի համար տալ Թումանյանի գործին մանրամասն վերլուծումը։ Այս քանի մը տողերուն մեջ ուրիշ ոչինչ կարելի է ընել, եթե ոչ այդ աղետավոր մահվան ազդած ամենախոր ցավը աղաղակել, խոնարհիլ գորովի, հարգանքի և երախտագիտության բոլորանվեր զգացումով մը այդ հանկարծ փակված լուսափայլ կյանքին պաշտելի գեղեցկության առջև և մատնանշել էական գծերը գործին, զոր ան մեզի կտակեց։

Թումանյան լավագույն հաջորդն է և շարունակողը Աբովյանի՝ իբրև բանաստեղծ։ Անոր պես ինք ալ իր քերթությունը հիմնած է գլխավորապես ցեղային ֆոլքլորին վրա։ Ժողովրդական ավանդությանց, հեքիաթներու, առակներու, երգերու անսպառ մթերքին մեջեն քաղած էր

իր նյութերուն մեծ մասը, և իր երանգապնակն ալ հոբինած է այդ ոգեմային դարավոր անգիր բանաստեղծության հայթայթած տաք, կենդանի և ինքնատիպ գույներով։

Ստվար տեղ մը կբռնեն իր գործին մեջ հեքիաթներն ու առակները, զոր փոխ առած էր ժողովրդական գանձարանեն և իր անձնական խառնվածքին համեմատ վերաձուլած, իր ուրույն ըմբռնումովն ու ճաշակովը արտահայտած (Փարվանա Հսկան, Ջարի վերջը, Անիծված հարսը են.)։ Իր խառնվածքը ուժեղ, ճաշակը առույգ և մաքուր ըլլալով, մեր ֆոլքլորական ստեղծագործությունները, արդեն իսկ այնքան սիրուն և էլեգանի, ավելի զորեղ, պայծառ, հրապուրիչ դարձած են իր անհատական տաղանդին շունչին տակ. իսկ կան իրմե բազմաթիվ էջեր ալ, ուր ինքն իսկ հնարած է նյութն ու ձևը՝ հետևելով ժողովրդական գպրոցին (Շուշանն ու կատուն, Մի կաթիլ մեղրը, Անբախտ վաճառականներ, Պողոս Պետրոս են.)։

Մեր հին ու նոր հմուտ բանաստեղծության մեջ քնարական տարրը չափազանց տիրապետող է. սակավաթիվ են հոն էջեր, ուր գոբծողություն գոյություն ունենա։ Դյուցազներգություն, վիպերգ մեր հին գրականության մեջ գրեթե ամբողջապես բացակա են, ու քիչ տեղ կբռնեն նորին մեջ և օտար գործերու նմանություն են հաճախ։ Թումանյան մբտցուց գործողությունը մեր բանաստեղծության մեջ, զարգացուց վիպերգին կարևոր կյանքոտ ճյուղը, և անոր մեջ տվավ գլուխգործոցներ, նյութ առնելով պատմական դրվագներ (Թմբկաբերդի առումը) ժողովրդական ավանդություններ (Աղավնեվանք), կամ իր կողմե հնարված պատմություններ հայ գեղջկական կյանքե առնված, (Անուշ, Մարո, Լոռեցի Սաթոն), կամ ժամանակակից քրքահայ սղբերգությունեն տեսարաններ (Երկրում)։ Ինքն է որ մեր ժամանակակից բանաստեղծներու մեջ ոբևէ մեկեն ավելի կարող էր և արժանի էր «Սասնա Ծռեր»-ու հին հայակապ ժողովրդական դյուցազներգությունեն (որ հայ մտքի գերագույն արտահայտություններեն մին է) առնել մաս մը, Սասունցի Դավիթի զրվագը, և զայն արվեստական անթերի կառաբելությամբ շարադրել, զոբեզկուռ, ներդաշնակ տողերով վերարտադրել։

Մեր բանաստեղծության մեջ մելամաղձոտությանը, սղբը կտիրեն. Թումանյանի գործը փթթում մը է հոգեկան լուսավոր ու արու առողջության. անոր երգը ուժի, գվարթության, հավատքի. լավատեսության պոռթքում մըն է, պայծառ ու խրոխտ նույնիսկ ցավի արտահայտության մեջ։

Այդ անզուգական վիպերգուն, հայ մանուկներուն հրճվանքը կազմող այդ համեղ առակախոսն ու զրուցագիրը, այդ կոբովի դյուցազներ-

գակը զմայլելի քնարերգակ մըն էր նաև. ան երգած է հակիրճ, ազնիվ ու նուրբ շեշտերով՝ սիրո հեշտանքն ու տանջանքը, մահվան խորհուրդը, կյանքի գեղեցկությունն ու ցավերը, բնության (մասնավորապես հայրենի բնության) թովչություններբ, ու երգած մանավանդ հայ ազգի դարավոր եղերական ու հերոսական ճակատագիրբ, ժամանակակից հայ պայքարն ու ոգեբերգությունը՝ շարք մը սքանչելի էջերու մեջ, որոնք հզոր խտացումներ, համադրություններ են (Կանչ, Լուսավորչի կանթեղը, Հայրենիքիս հետ, Գիշեր, Հին օրհնություն, Հայոց լեռներում, ևն.)։

Վերջին տարիներու մեջ՝ այդ քնարական արտադրության ավելի սիրով նվիրված էր. դրած էր մանավանդ բազմաթիվ քառյակներ, Խայամի և Քուչակի մեծ օրինակին համեմատ, բայց բոլորովին անձնական հղացումով ու ոճով, և որոնց մեջ մարդկային կյանքի խորհուրդը կերգեր իր ընդլայնված, մեծցած, ավելի ևս երբացած, բարձրագույն բանաստեղծության ոլորտը վերացած քնարը.

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին։

Մարդը Թումանյանի մեջ այնքան հրապուրիչ ու սիրելի էր, որքան գործը։ Անիկա մեծ սիրտ մըն էր՝ իր ազգին բանաստեղծության և իր բարեկամներուն սիրով ամեն բոպե հզորապես բաբախող։ Իր ազնիվ, գորովոտ ընդունելությունը, զոր կշնորհեր իր մտերիմներուն՝ անմոռան էր։ Իր տունը հավաքավայրն էր Կովկասի լավագույն մտավորականներուն։ Զուտ բանաստեղծ էր ան կյանքի մեջ ալ, և իբր այդ՝ խորին սեր, համակրություն և հարգանք կներշնչեր ամենուն, ոչ միայն հայոց, այլ Կովկասի բոլոր ցեղերուն մեջ։

Ահա ինչու ինքն է, որ ամենուն միահազույն բաղձանքով նախագահեց Իզմիրլյանի կաթողիկոսական ընտրությունեն վերջ բազմահույլ Թբրքահայ պատգամավորներուն ի պատիվ Թիֆլիսի մեջ տրված մեծ հացկերույթին, ինքն էր որ նախագահ անվանվեցավ պատերազմեն անմիջապես առաջ մտավորականներու և դրաստեր հարուստներու կողմե Թիֆլիսի մեջ ստեղծված Հայկազյան ընկերության, և ինքն էր դարձյալ, որ երկու տարի առաջ ներկա հայ կառավարության կողմե ղրկվեցավ Կ. Պոլիս իբր առաքյալ Հայաստանի, արտասահմանի հայության օգնությունը ուղելու համար, և ամեն ոք կհիշե որ իր երևումը Կ. Պոլսո մեջ առաջ բերավ խանդավառություն, և ոչ միայն կազմվեցան Հայրենիքի օգնության Մարմիններ, որ գործնապես պատասխանեցին բանաստեղծին

կոչին, այլև անոր թելադրությամբ կազմվեցավ Երևանի Հայ արվեստի տան հետևողությամբ՝ Կ. Պոլսո Հայ արվեստի տունը, զոր վերջին դեպքերը դժբախտաբար քանդեցին։

Հայության բոլոր դասակարգերը, բոլոր տարրերը, բոլոր տարիքները դառնորեն կողբան այս պահուս այդ կորուստը։ Կովկասի բոլոր հայ մանուկները, որոնց համար՝ ի շատ մը մանկական ոտանավորներեն զատ, Ծանթի և Լյուիցյանի հետ հորինած է Լուսաբեր ընթերցարանները, իրապես լեցուն հայկական լույսով ու քմայքի ծաղիկներով, բոլոր պատանիներն ու մանկամարդ աղջիկները, որոնց սրտին էն խորունկ թրթռումները այնքան քաղցր ու հմայիչ կերպով երգած է, ինչպես հասուն հասակի մարդիկն ու ծերունիները, որոնց մտքին հայթայթած է ազգային ու մարդկային մեծ մտահոգությանց այնքան թելադրական արտահայտություններ, խոր սուգի մեջ են այսօր՝ իրենց հոգեկան մեծ բարեկամը, իրենց մտավոր աննման բարերարը կորսնցուցած ըլլալուն համար։

Ավա՜ղ, ինչքան գեղեցիկ գործեր պիտի արտադրեր ան տակավին, հետզհետե ավելի բարձր, ավելի նուրբ, ավելի խոր, եթե մահը այսպես շուտով չփակեր անոր դաշնակավոր բերանը. «Լեցուն կզգամ զիս, ըսեր բան ունիմ դեռ ըսելու, ինծի կթվի թե նոր պիտի սկսիմ գրելու...»։

Կենդանի զորություն մը, հրաշագործ ուժ մը. անգին հիշատակարան մըն էր ինք, որ ահա կքայքայվի, կանհետանա, և մեր այնքան աղետներեն զետո՝ այս վաղաժամ կորուստը իրական ազգային աղետ մըն է։

Իր արդեն կատարած գործին անմահ գեղեցկությունը միայն կրնա մեզ մխիթարել այս մեծ սուգին ու ցավին մեջ։ Այդ գործը դարե ի դար հայ սերունդներուն համար ցեղային մշակույթի լուսավոր առաջնորդ, հոգեկան մանանա, սրտի հրճվանք, մտավոր խնջույք պիտի ըլլա։ Անոր շիրիմին, որ Հայաստանի էն աղվոր գարնանագեղ վայրերեն մեկուն մեջ պիտի կանգնվի անշուշտ, ուխտի պիտի երթան դարե ի դար, հայրենի հողին էն աղվոր ծաղիկները ձեռքերնին բռնած, հայ աղջիկներն ու պատանիները, իրմե հոգեկան առողջության ու գեղեցկության ներշնչում առնելու և իր սիրելի անթառամ անունը երախտագիտությամբ փառաբանելու։

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ

Ա.

Ամառնային լուսապանծ օրերու վերջալույսը մերթ այնքան գեղեցիկ է, որքան արշալույս մը։ Մինչև իր վերջին րոպեն, լույսը, թեպետ աստիճանաբար դժգունելով ու կարծես հետզհետե աննյութանալով, կպահպանե մաքրություն մը, մեծվայելչություն մը, զոր ձմեռվան միջօրեի արևն անգամ չունի։ Ու նույնիսկ այդ վերջին րոպեն ալ տիրապետել եկող խավարին չէ որ կվերաբերի, այլ մահամերձ լույսին փառքովը դեռ կթրթռա։ Լույսը կթվի ոչ թե մեռնիլ խավարեն ընկլուզված, այլ ամբողջ օրվան մը իր դյուցազնական գնացքին երանավետ հպարտությամբը արբշիռ ու հեշտականորեն խոնջ, կարծես հանգչելու փափագով մը աչքերը կփակե, ու խավարը, կարծես ինքն իսկ զմայլած իր ծոցին մեջ քնացած ասավածին գեղեցկությենեն, իր մեջ կառնե լամփոփե, կպահե, իր մռայլ էությանը հետ կխառնե անոր վերջին նայվածքներուն նուրբ, ջինջ ու անհունորեն քաղցր նշուլումը, և կդառնա ինքն իսկ թափանցիկ ու պայծառ։

Ահա այս լուսաշող գեղեցկությամբը համակված է մահը Գաբրիել Սունդուկյանցին, որուն կյանքն արդեն ծայրե ծայր ճառագայթարձակ էր եղած ամառային գեղեցիկ օրվան մը պես։

Մեր սիրտը կճմլվի անշուշտ մտածելով, որ հայ գրական ընտանիքը այլևս առ հավետ որբացած է այդ նահապետական մեծաշուք դեմքեն. բայց աչքի առջև բերելով լիությունը, ներդաշնակությունը, կատարելությունը այդ կյանքին, և այն վճիտ ու բարձր գեղեցկությունը, որով այդ կյանքը կվերջանա, մեր արտմությունը կանուշնա, կպայծառանա, և ինչպես որ գորովոտ հիացումով մը հայ ժողովուրդը հետևեր էր վարպետին անոր գործունեության բոլոր փուլերուն մեջ, խանդաղատագին զմայլման զգացում մըն է դարձյալ, որ կտիրապետե հուսկ ուրեմն մեր մեջ այդ վեհափառ վախճանին հանդեպ։

Բ.

Գլխավոր հատկանիշներեն մեկը՝ «Քանդած օջախ»-ի հեղինակին նկարագրին ու տաղանդին, դիտողության կարողությունը եղավ, կյանքի սուր ու ճշգրիտ ըմբռնումին ձիրքը։ Ատիկա կարճատեսի մանրախուզ հատվածական դիտողությունը չէր, այլ թափանցող հայացքը, որ նկարագիրներու հիմքը, տիպարներու ներսիդին, կյանքի պատկերներու թաքուն նշանակությունը կնկատե ու կհասկնա։

Այդ դիտողության կարողությունը իր արվեստին մեջ ապացուցանելե առաջ, Սունդուկյանց զայն եբևան բերած էր իր կյանքին մեջ։ Տեսնելով և ըմբռնելով, որ հայ հասարակության մեջ գրականությամբ ապրուստը լրջարեն ուսահովելը անհնարինություն մըն է, նախ և առաջ չանգագիր եղավ գործ մը ճարել, որ իր հացի խնդիրը լուծեր, և շնորհիվ իր համալսարանական բարձր զարգացման՝ գտավ պաշտոն մը Կովկասի հարարարկցությանն ճանապարհներու վարչության մեջ, պաշտոն, որ վարեց հինգ տարի շարունակ, որմե հետո հանգստյան թոշակով բաշխեցավ։

Ելլալես, ապրուստի հարցը իր ամբողջ կյանքի ընթացքին մեջ կարգադրված ըլլալով, Սունդուկյանց կարողացավ հանգարտ մտքով իր պատրաստ ժամերը նվիրել գրական աշխատությանց, որոնք և է վիճակի եղավ գրականություն ընել առանց ոչ սենապարանքի, առանց ոչ նյութական շահու ակնկալության՝ միմիայն գեղարվեստին ծառայելու, կարելի եղածին չափ գեղեցիկ ու կատարյալ գործեր արտադրելու բաղձանքեն մղված։

Դիտողության այդ ձիրքը հիմնական ուժն է Սունդուկյանցի դրական գործին։ Սունդուկյանց ժամանակավորապես առաջինն է, որ հայոց մեջ ճշմարտապես «իրապաշտ» ուղղությամբ գրականության մը բնել սկսած է։ Իրմե ետքն է, որ կուգա Շիրվանզադե, որ հայ վեպին մեջ մացուց իրապաշտ ձգտումը, զոր Սունդուկյանց մացուցած էր հայ թատերգության մեջ։

Այդ ուղղությունը Սունդուկյանց անշուշտ եվրոպական, մասնավորապես ֆրանսական ու ռուս իրապաշտ վարպետներեն էր ստրված, բայց այնքան բնական էր իրեն այդ ուղղությունը, որ կարծես եթե օտար վարպետներն իրեն չտային ատոր օրինակը, ինքն իսկ պիտի հնարեր զայն։ Կյանքի հարազատ ցոլացումն ըլլալ ձգտող արվեստի մը ըմբռնումը իր խառնվածքին խակությունն իսկ է։ Եվ այդ նեբքին բնածին հակումն է որ, այնպիսի շրջանի մը, ուր հայոց մեջ ռոմանտիկ ուղղությունը միաս հեծան կտիրեր և ուր նույնիսկ Եվրոպայի մեջ իրապաշտությունը դեռ նոր սկսած էր կազմվիլ իբր դպրոց և պայքարի մեջ էր ռոմանտիզմին հետ, մղած է Սունդուկյանցը հարիլ այդ նոր դպրոցին և զայն ընդգրկելով հիմնել հայ իրապաշտ թատերական գրականություն մը։ Ու աշխարհիս մեջ քիչ գրագետ կա, որ Սունդուկյանցին չափ զուտ, անխառն իրապաշտ եղած ըլլա. իր մեջ ո՛չ մեկ հետք ռոմանտիզմի, ո՛չ մեկ ջանք իրականությունը շոկտելու, ոսկեզօծելու, ո՛չ մեկ փափագ տարօրինակ, խորհրդավոր կացություններ և էակներ ստեղծելու։ Սունդուկյանց նըստած է կյանքին դիմացը,— և կյանքի իրեն ծանոթ որոշ մասի մը, Կովկասյան հայոց, ավելի ճիշտ՝ Թիֆլիսի հայոց, կյանքին,— զայն դիտած ու տեսած է ինչպես որ է ան, և վերարտադրած է իր գրքին մեջ։

Գ.

Սունդուկյանցի մեկ ուրիշ կարևոր հատկանիշն է սրամտությունը։ Այդ սուր դիտողը սուր հեգնող մըն է նաև։ Համալ կեղծանունով հրատարակած ունի բավական թվով քրոնիկներ. ես շատ փոքր մաս մը տեսած եմ այդ քրոնիկներեն, բայց այդ քիչը բավական եղած է ինծի գաղափար մը տալու իր հյումորին մասին, որ ինքնահատուկ է և համեղ, իսկ իր խաղերուն մեջ ծայրե ծայր այդ սրամտությունը կզգացվի, կոգևորե զանոնք, անոնց աղը կկազմե, խոսակցությանց վառվռությանը կնպաստե, տիպարներուն շեշտյալ պատկերացումը կդյուրացնե։ Առանց երբեք երգիծարանի հովեր առնելու, առանց իր խաղերուն մեջ այդ հեգնության ձիրքին չափազանց տեղ տալու,— ինչ որ սխալ մը պիտի ըլլար,— Սունդուկյանց գիտցած է իր սրամտությունը ճիշտ հարկ եղած չափովն օգտագործել իր թատերգությանց բեմական ուժը բազմապատկելու համար։

Դ.

Սունդուկյանցի անձնավորության մեկ էական գիծն ալ այն է, որ անիկա գրական ընդարձակ և ամուր կրթություն ստացած մարդ էր, նուրբ ճաշակ ուներ։ Հանգուցյալը բախտն ունեցած էր պատանի հասակին մեջ իրեն դաստիարակ ունենալու Փարիզի Արևելյան լեզվաց վարժարանին մեջ հայերենի դասը հիմնող համբավավոր հայագետ Շահան Ջրպետն ու մանավանդ առոր ամուսինը, զարգացած ֆրանսուհի մը, որ առաջին օրեն ֆրանսական մշակույթը, ոգին, ճաշակը փոխանցած է

1 Մշակի աշխատակիցներեն մին, Ե. սկզբնատառով ստորագրված հոդվածի մը մեջ, կհիշատակե սա խոսքը, զոր օր մը իրեն ըսեր է Սունդուկյանց. «Իմ գրական գործերես ոչ մեկ նյութական օգուտ չեմ ունեցած, 45 տարի՝ որ կարտագրմ, 45 կոպեկ չեմ շահած իմ գրվածքներես»։ Թե իր խաղերուն տպագրությենեն ոչինչ վաստակած ըլլա, չեմ դատեր, հայերը գիրք գնել չեն սիրեր, նույնիսկ Սունդուկյանցի մը, նույնիսկ Գարոնյանի մը գրքեր. բայց տարօրինակ է որ նույնիսկ իր խաղերուն ներկայացումեն ալ օգուտ ունեցած չըլլա Սունդուկյանց— պետք է ենթադրել— և քան հավանական է.— որ այդ ներկայացմանց հասույթը վենանձնորեն կթոզուր դերասաններուն կամ կնվիրեր ազգօգուտ նպատակի մը։

իրեն, հետո Թիֆլիսի «Կլասիկական գիմնազիային» ընթացքը ավարտած և Փեթերպուրկի համալսարանին «Պատմական-ֆիզիոլոգիական ֆակուլտետ»-ի արևելյան բանասիրական ճյուղին հետևած է և սորված է արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հայերեն, վրացերեն, Արևելքի պատմություն և աշխարհագրություն, այնպես որ ուներ մեծ հմտություն, գիտեր բազմաթիվ լեզուներ և այդ լեզուներու մեծ հեղինակները կարդացած էր։ Ճշմարիտ «եվրոպացի գրահմուտ» մը կար իր մեջ։ Ու թեպետ քննադատական աշխատություններ երբեք փորձած չըլլա, ակներև է, որ իր մեջ կար պատվական քննադատ մը. այդ քննադատը միշտ աչալուրջ և ամենախիստ հսկողություն մը բանեցուցած է իր իսկ արտադրության վրա։ Այդ բոլոր խաղերը իրենց բնական գնացքով մեկ գրչե ելած ըլլալու ձևն ունին, բայց ընդհակառակն, իրականությունը այն է, որ հեղինակն անոնց վրա երկար բարակ աշխատած է, միշտ դժգոհ ինքզինքե, միշտ հետամուտ բացարձակ կատարյալին, միշտ սրբագրելով, բարեփոխելով, ավելցնելով, հապավելով։ Իր գրեթե բոլոր խաղերուն վերջին տպագրությունը «ուղղած» կամ «փոփոխած» բառը կկրե տիտղոսին ներքև, իր «Խաթաբալա» զմայլելի կատակերգությունը, ինչպես 1881 տպագրության մեջ նշանակված կտեսնենք, 1866-ին առաջին անգամ ներկայացված ատեն երկու արարված ունեցած է, 1867-ին հեղինակը ավելցուցած է արարված մը, իսկ 1879-ին արարված մը ևս ավելցնելով վերջնական ձևը տված է։ «Օսկան Պետրովիչն էն կինքումը» սիրուն «Ֆանթեզի»-ն 1899-ի տպագրության մեջ հետևյալ նոթն ունի՝ «Ավելացրած նոր տեսիլներով, խոսակցություններով և մենախոսություններով»։

«Պեպո»-ի 1901-ի տպագրության մեջ գրքին վերջը հեղինակը նույնիսկ մի առ մի կնշանակե կատարած փոփոխությունները։ Թե ինչքան բծախնդիր ու կատարելասեր արվեստագետ մըն էր Սունդուկյանց, այդ մասին ամենաստույգ գաղափար մը կազմելու համար կբավե կարդալ Գուլազյան դերասանին Սունդուկյանցի նվիրված մեկ շահեկան հոդվածին հետևյալ տողերը. նկարագրելե հետո, թե ի՛նչպես 1910-ին ինքը Սունդուկյանցի տունը գացեր է «Բաղնիսի բողչա» խաղին դերերն անոր հսկողության տակ օրինակելու, Գուլազյան կշարունակե. «Հետևյալ թվին նա գրել էր դարձյալ մի պիես «Սեր և ազատություն» անունով։ Խնդրել էր դրամատիկական ընկերության վարչությանը, որ դարձյալ ուղարկեն պիեսն՝ արտագրելու համար։ Այդ ժամանակ ես ցերեկներն էի աշխատում և տունը պարապելու ժամանակ չունեի։ Հայտնեցի այդ մասին հանգուցյալին և ասացի՝ եթե համաձայն կլիներ, որ վերցնեմ ձեռագիրն ու գիշերները իմ տանն արտագրեմ, ուրախությամբ պատրաստ եմ։ Նա բոլորովին հանգիստ կերպով հանձնեց ինձ ձեռագիրը և ասաց, որ բոլորովին վստահ է ինձ վրա և երկմտելու ոչինչ չունի։ Վերցրի ձեռագիրն ու եկա տուն։ Այն գիշեր մի քանի երես արտագրեցի, իսկ հետևյալ օրը դեռ գործի չգնացած, առավոտյան վաղ հանգուցյալը եկավ մեր տուն և ասաց, որ այսինչերորդ երեսում մի ինչ-որ բառ պիտի փոխվի, ուրիշ բառ պիտի դրվի...։ Ես իհարկե փոխեցի այդ բառը ինչպես ցանկանում էր, և հազար ու մի ներողություն խնդրելով, հանգուցյալը հեռացավ ինձանից։ Ես կարծում էի, թե դա մի դեպք էր, որ այլևս չէր կրկնվիլ և էլ նեղություն չի քաշի ծերունին, սակայն որչափ մեծ եղավ իմ զարմանքը և զգացած անհամ դրությունը, երբ երրորդ օրը նույնպես եկավ մեր տուն և նորից հազար ու մի ներողություն խնդրելով ասացեց, որ ամբողջ գիշերը չի կարողացել քնել։ Տեսնելով որ նմանօրինակ խոսքերը կարող են ամեն օր կրկնվել ու միշտ ծերունուն նեղություն պատճառել, մի կերպ ներողություն հաճախել իր տուն և այնտեղ արտագրել»։

Մահվանեն կես ժամ առաջ, Սունդուկյանցն կկանչե իր աղջիկն ու կխնդրե, որ իր վերջին գրվածքն եղող «Կտակ» տիտղոսով անտիպ թատերախաղին 54-րդ երեսին մեջ «Մի գիտուն մարդ գիտեմ վուր երկնքիցը աստղեր է վեր բերում» ֆրազին վրա ավելցնե հետևյալ բառերը. «վուր նրանց ափալը դիփունին քարողում, ամա իր ջրբի խաթեր» և ինքզինքը հանգիստ չի զգար մինչև որ աչքովը կտեսնե, որ իր աղջիկը մատիտ մը առնելով այդ բառերը թղթի մը վրա կնշանակե։

Զարգացած գրահմուտի այդ նուրբ, գիտակից, խստապահանջ, բծախնդիր ճաշակը կզգացվի Սունդուկյանցի գործին մեջ ծայրե ծայր։ Ոչ մեկ ավելորդություն կա հոն։ Այդքան հակիրճ, սեղմ, խիտ հեղինակ քիչ կարելի է գտնել։ Տիպարները գծված են մեծ, լայն գծերով։ Խոսակցությունները արագ են, կտրուկ, կենդանի, տեսարանները՝ աշխույժ, ամփոփ։ Հեղինակը իբր ճշմարիտ արվեստագետ ըմբռնած է, որ կյանքը ճիշտ նկարելու համար, պետք է ոչինչ ավելցնել, բայց և պետք է գիտնալ կրճատել ավելորդ մանրամասնությունները և ցույց տալ միայն էականները։ Այդ ճշմարիտ արվեստագետի բնազդն ու զարգացած գրահմուտի ճաշակն է դարձյալ, որ արգիլած է Սունդուկյանցը հրապարակախոսության վտանգին մեջ իյնալե։ Այդ վտանգը մասնավորապես կըսպառնար իրեն, որովհետև ինքը, ըլլալով հանդերձ բացարձակ իրապաշտ մը արվեստի մեջ, կյանքի առջև իբր մարդ անտարբեր և անգույն հանդիսատես մը չէր սակայն ուներ որոշ հակումներ, սկզբունքներ, շեշտված նախասիրություններ և ատելություններ, այդ բոլորն

ուզած է արտահայտել իր խաղերուն մեջ, և այդպիսի պարագաներու մեջ հրապարագրական բեմբասացության և միակողմանիության խուրթեն ազատիլ շատ դժվար է։ Բայց Սունդուկյանց բոլորովին զերծ մնացած է այդ վտանգեն։ Իր գործը ամբողջովին տոգորված է այն մոլեգին ատելությունովը, զոր այդ ազնիվ մարդը կտածեր անխիղճ ու գռեհիկ հարուստին, լիրբ փարիսեցիին, վայրագ եսականին դեմ, բոլոր տգրուկներուն և բոլոր թարթյուֆներուն դեմ, և ան համակ խնկավետված է նաև այն ջերմ գթությամբն ու աղապատանքովը, զոր այդ ոսկի սիրտը կզգար հալածված անմեղության, խորտակված տկարության համար և այն գորովագին զմայլմամբը, զոր ուներ պարզ, բարի, մաքուր, քաջ հոգիներուն համար. բայց այս ամենը երբեք քարոզի ձև չեն ստանար, ասոնք «կարտաշնչվին» իր գծած տեսարաններեն, իր նկարած տիպարներեն։ Ատոր համար է, որ Սունդուկյանց ոչ միայն հայկական ինքնատիպ թատերագրության հիմնադիրն է, այլև մեր գրականության ամենեն կատարյալ արվեստագետներեն մին։ Այդ ռահվիրան իր առաջին փորձերեն իսկ արտադրած է գործեր, որ գլուխգործոցներ են իրենց տեսակին մեջ։ Շիրվանզադե ճոխացուց ու ընդարձակեց հայ թատերական արվեստը, բայց կարծես թե Սունդուկյանց իր պարզության մեջ ավելի կատարյալ է։ Շիրվանզադեի կատարելագույն արտադրությունները իր վեպերուն ու վիպակներուն մեջ են։

Մինչև ցարդ «Պեպո»-ն կմնա ամենեն մաքուր գոհարը հայ թատրոնին, զմայլելի «Պեպո»-ն, ուր տարօրինապես հզոր բանաստեղծություն մը դուրս կցատքե, հակառակ քնարերգության բացարձակ պակասին, նույն ինքն իրականության ճիշտ ու սուր պատկերացումեն, թանկագին «Պեպո»-ն, ուր մեծ գրագետը պժգալի վաշխառու, վարնոց շաբագործ Արութին Զիմզիմովը ականջեն բռնած բերած է հավիտենականության առջև հոյակապորեն խաղք-խայտառակ ընելու, մինչ անոր քով Պեպոն, կինտո մը, թուլումպաճի մը, աղքատ, տգետ, անշուք, բայց շարիք գործելու անկարող, ազնիվ, տաք, մաքուր սիրտ մը, և որ զոհը կըլլա այդ զազիր մամուկին, կկանգնի իր վճիտ հոգիին աղբերափայլ գեղեցկությունովը ու մեզ կզովացնե, կսփոփե մարդկությունն անպատվող Զիմզիմովներուն գոյությենեն։ Բանաստեղծություն, նկարչություն, բարքերու ուսումնասիրություն, երգիծանք, ֆոլքլոր, ընկերական հարցեր, հոգեբանություն, ամեն բան կա «Պեպո»-ին,— ինչպես և Սունդուկյանցի մյուս գլխավոր գործերուն մեջ,— բայց այս ամենը հալած են արվեստի համայնաձույլ քուրային մեջ։ «Պեպո»-ն ամեն բանե առաջ արվեստի գործ մըն է, և մին այն գործերեն, որ կարդարացնեն այն հավատքը, թե արվեստը գերագույն բան է կյանքի մեջ, վասնզի ի՞նչպես

այլևս կարելի է այդ մասին տարակուսիլ, երբ կտեսնենք որ անիկա ոչ միայն հաճույքներու մեծագույնը, մտավոր հեշտությունը կշնորհե մեզի, այլև մարդկային հրեշությանց ամենեն հզոր պատուհասողը կհանդիսանա. Զիմզիմովի մը սև դեմքը, Սունդուկյանցի մը արդար ու հուժկու ձեռքովը դարուց ի դարս խայտառակության սյունին գամված,— ի՞նչ պաշտելի վրեժխնդրություն։

Ե.

Սունդուկյանցի կյանքը եղած է այնքան ազնիվ ու կատարյալ, որքան իր գործը։ Այդ կյանքին գերագույն հրայրքը, անոր միակ իդեալը ազգային գրականության ծառայություն մատուցանելու տենչն էր։ Գրական գործունեությենե դուրս, Սունդուկյանցը մերթ ուրիշ կարգի ազգօգուտ ձեռնարկներու ևս աջակցած է, գլխավորապես Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության, որուն հիմնադիրներեն մին եղած է։ Այդ մեծ ընկերության գլխավոր նախաձեռնարկ ու հիմնադիր ռուսահայ ծանոթ գործիչ բժշկապետ Բագրատ Նավասարդյան Սունդուկյանցի նվիրված հոդվածի մը մեջ կգրե. «Ես անձամբ երախտապարտ եմ ոչ այլ ոքի, քան միմիայն Սունդուկյանին, Կ. Հ. Բ. Ընկերության մարմնառության խնդրի վերաբերմամբ։ Նա մի ամբողջ շրջան, նախնական շրջանում, այնպես նվիրվեց Կ. Հ. Բ. Ընկերության շահերին, որպես մի կրոնամոլ ֆանատիկոս, որպես մի անձնվեր զինվոր, որպես անապատի մարգարե, մոռանալով ամեն ինչ, ինչպես ինքն էր գրում մի նամակի մեջ, և՛ կին, և՛ որդիք»։ Եվ իր կտակին մեջ Սունդուկյանց իր «Պեպո»-ին այսուհետև ունենալիք տպագրությանց և ներկայացմանց հասույթը կթողու Կ. Հ. Բ. Ընկերության։ Բայց ազգային այսպիսի բազմօգուտ հիմնարկությանց մերթ աջակցելով հանդերձ, Սունդուկյանց իր ուժերուն, եռանդին ու սիրույն էական բաժինը նվիրած է գրական գործին. ուզած է ըլլալ ամեն բանե առաջ գրական գործիչ, մայրենի գեղարվեստը ծաղկեցնելով ազգին օգտակար ըլլալ ձգտող աշխատավոր։ Այդքան բարձրորեն, ազնվորեն, ամբողջականորեն գրականության նվիրաբերված կյանք մը քիչ կարելի է գտնել թե՛ մեր և թե՛ օտարներուն մեջ։

Իբր մարդ, իր սոսկական կյանքին մեջ, Սունդուկյանց եղած է, զինքը մոտեն ճանչցող բոլոր անձերուն վկայությամբ, մին այն վերջին ծայր ազնվական, բարեկիրթ ու համակրելի տիպարներեն, որ իրենց հետ հարաբերություն ունեցողին միմիայն և անխուսափելիորեն սեր և հարգանք կներշնչեն։ Ամենքը համաձայն են անոր մեջ գովելու գորովոտ ամուսինը, քնքուշ հայրը, աննման բարեկամը, համեստ, փափկա-

նկատ, ուղղամիտ, անձնվեր ընկերական մարդը, խոնարհներուն համար խանդաղատանքով լեցուն, երիտասարդներուն, սկսնակներուն սիրալիր ու խրախուսող, տառապողներուն, զրկյալներուն, կարոտյալներուն օգտակար ըլլալու իղձովը տոգորված, ու իրեն որևէ ծառայություն մատուցանողին վեհորեն երախտագետ ըլլալ գիտցող. կարդացեք օրինակի համար «Պեպո»-ի երկրորդ տպագրության սկիզբը գրած ձոնը Գևորգ Չմշկյան դերասանին ուղղված. Սունդուկյանց «Պեպո»-ն մաս առ մաս, տեսիլ առ տեսիլ Չմշկյանին տուն տալով է հորինել, տեսեք թե այդ նեղությունն անոր պատճառած ըլլալուն համար ինչ սիրուն բաներ կգտնե անոր ըսելու, քիչ է մնացած, որ հեղինակությանը զայն մասնակից համարե։ Ես ինքս անգամ մը միայն բախտ ունեցա Սունդուկյանցը մոտեն տեսնելու և իրեն հետ երկու խոսք փոխանակելու, ու ատկից պահած եմ ամենեն քաղցր հիշատակը. «Պեպո»-ի ներկայացմանն էր, զոր Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերությունը տվավ ի պատիվ 1908-ի կաթողիկոսական ընտրության մասնակցող թրքահայ պատգամավորներուն. Սունդուկյանց սրահին մեջ էր. երկրորդ արարվածեն հետո գացի, իրեն ներկայացա և հայտնեցի իր անձին և գործին համար ունեցած ամենախոր հիացումս. զմայլելի ծերունին ամենեն համեստ, ամենեն սիրուն ու գողտրիկ բաներ գտավ ըսելու իր «շնորհակալությունները» հայտնելու համար։ Ավելորդ է ըսել, որ վերջին արարվածեն հետո ամենուն միահամուռ պահանջովը, Սունդուկյանց բեմ բարձրացավ հասարակության խանդավառ օվասիոնն ընդունելու։

Այդպիսի օվասիոններ Սունդուկյանց շատ է ընդունած իր կյանքին մեջ։ Իր մտավոր ու բարոյական հաղվագյուտ հատկությունները, իր գործին գեղեցկությունն ու իր անձին հրապույրը զինքը վերջին ծայր սիրելի դարձուցած էին բովանդակ ռուսահայ հասարակության՝ առանց կուսակցական խտրության, և նույնիսկ բովանդակ Կովկասին՝ առանց ցեղի և կրոնքի խտրության։ «Պեպո»-ն արդեն շատոնց թարգմանված և խաղացված էր վրացերեն, ռուսերեն, և կովկասյան թատրոնին ամենեն ժողովրդական խաղն էր դարձած։ Վրացիք Սունդուկյանցը կհարգեին որպես թե իրենց ազգային փառքերեն մին ըլլար։ Ռուսները, մահմեդականները պատկառանքով կարտասանեին անոր անունը։ Բոլոր դասակարգերը անոր համար սեր և ակնածանք ունեին, բայց մանավանդ ժողովրդական դասակարգը, որուն Սունդուկյանցի համար ունեցած զգացումը պաշտումի կհասներ. քանի քանի անգամ իր խաղերուն ներկայացումներեն հետո, կինտոներն Սունդուկյանցն իրենց ուսերուն և ձեռքերուն վրա օդին մեջ բարձրացուցած, հաղթանակով մինչև իր տունը տարած են։

Եվ ինքն ալ կսիրեր, անկեղծորեն կսիրեր այդ պարզ ժողովրդի զավակները։ Այդ սերն է, որ զինքը մղած է իբր ստանուն ընտրել Համալ բառը, ուզելով միանգամայն ըսել, թե ինքն ալ իր ազգին ծառայություն մատուցանելու համար իր ճակտին քրտինքը նվիրող, ամենածանր բեռները վերցնելու պատրաստ բեռնակիր մըն էր։

Սունդուկյանցը շատ երջանիկ եղած է, իր ընտանիքը, իր բարեկամները, իր ազգը, իր երկիրը, ամենքը զինքը խելահեղորեն սիրած են, և այդ մեծ հոգին արժանի էր այդքան երջանկության։

Զ.

Այս մեծապայծառ կյանքն է ահա, որ կավարտի իրեն վայել ճաճանչագնդ վերջալույսով մը։

Մինչև վերջին օրը այդ ութսունյոթամյա ծերունին անվթար պահած էր իր մտավոր կարողությունը։ Մահվընեն քանի մը օր առաջ, դեռ իր «Կտակ» թատերախաղին մեջ մանրամասնություններ ուղղելու կաշխատեր։ Վերջին երկու տարիներուն մեջ ֆիզիկական անկումն զգալի կերպով սկսած էր առաջանալ, սակայն ինչպես կնկարագրեն իր մահվան առթիվ Կովկասյան թերթերու մեջ մեկ քանի գրողներ. այն կանանչ ծերունիի աշխույժ ու վառվռուն ձևը, զոր պահած էր մինչև ութսունհինգ տարեկան հասակը, այն զվարթ արագ քայլվածքը, որով, գորշագույն գդակը գլուխը, կերթար հաճախ իր սիրական Թիֆլիսին մեջ առանց հոգնելու երկար պտույտներ ընել, սկսած էին տեղի տալ ակներև խոնջենքի մը և նվաղման մը. մարմինը արդեն կսկսեր լքանել հոգին, որ կմնար միշտ վառ ու փայլուն։ Վերջերը դեմքը սկսած էր դժգունիլ և կնճռոտիլ, հասակը կքած էր, քայլվածքը դանդաղած ու թուլացած, ձեռքերը կդողային։ Մահվընեն քանի մը օր առաջ պտույտ մը ընելու համար տունեն ելլելով քանի մը քայլ առնելե հետո ինքզինք գեշ կզգա ու այլևս առաջանալու անկարող՝ կմնա անշարժ, և բարեբախտաբար իր աղջիկը, այդ րոպեին այնտեղեն անցնելով՝ կտեսնե զինքը և կառնե տուն կտանի։

Մարտ 16—29-ի առտուն, Սունդուկյանց հանկարծ կարթննա շընչասպառութենե։ Կզգա, որ վիճակը աղեկ չէ, կկանչե իր կինը, և իսկույն տան բժշկին լուր կուտան. բժիշկը կուգա, կհաստատե, որ մահը մոտ է, բայց կշանա սրտապնդիչ խոսքերով խաբել օրհասականը. անիկա կզգա սակայն, որ իր վերջին րոպեներուն մեջ կգտնվի, կդառնա իր կնոջը ու կըսե. «Սոֆի ջան, վերջին անգամ ձեռքդ տուր, ես քո ամակդ ո՞նց վճարեմ»։ Հետո կդառնա աղջկանը ու կըսե. «Նունե՛, խնամի՛ր մայրդ ու պահիր, ես գիտեմ քո սիրտը, էնտուր հանգիստ մեռնում եմ...»։ Հետո

կհիշե և կօրհնե իր բոլոր զավակները։ Քիչ ետքը ավելի տկար կզգա ինքզինքը և կխնդրե, որ գլուխը բարձրացնեն և բարձը շտկեն. աղջիկը կկատարե հոր փափագը, և կառաջարկե, որ զինքը օգափոխութեան համար մոր ննջարանը փոխադրեն, բայց հիվանդը հազիվ լսելի ձայնով մը կմրմնջե.

— Թո՛ղ, Նո՛ւնե, ես ուզում եմ հանգստանալ։

Այս իր վերջին խոսքը կըլլա։

Պարզ և անուշ խոսք մը, այդ վեհաշուք վայրկյանին, խորհրդանշական իմաստ մը կառնե. իր օրը ծայրե ծայր լավ աշխատելով անցուցած, իր գործը ամբողջապես և անթերի կերպով կատարած և ա՛լ գիշերին վերահաս ստվերներուն տակ ինքզինքը հոգնած զգացող ու քնանալ ուզող մարդուն ձայնն է, որ կըսե՝ «Ատեն է, որ հանգչիմ»։

Է.

Եվ սակայն այդ խոսքը չէ Սունդուկյանցի բուն վերջին «խոսքը»։ Անոր ճշմարիտ վերջին խոսքը իր կտակն է, որ մահվընեն օր մը հետո բացվեցավ և հրապարակվեցավ ըստ իր որոշման «Մշակ»-ին և հետո ուրիշ լրագիրներուն մեջ։ Այդպիսի ինքնատիպ, սրտաշարժ, գեղեցիկ կտակ ես երբեք չէի կարդացած դեռ։ Ամբողջ ազնիվ մարդը և բծախնդիր, նրբաճաշակ արվեստագետը, որ Սունդուկյանցի մեջ կային, կցոլանան հավատարմորեն և հզորապես այդ կտակի մեջ, զոր գրեր է անցյալ ամառ (օգոստ. 14-ին) Բորժոմ ամառանոցը։

Նախ կպատվիրե, որ իր թաղմանը ոևէ «թանթանա» չըլլա, մեկ քահանա մը, տաներեցը և մեկ տիրացու մը կատարեն արարողությունը, տունեն մինչև եկեղեցի և մինչև գերեզմանատուն իր դագաղը տանին լուռ ու մունջ, իր ընտանիքի անդամները սև չհագնին, իր տանը մեջ ոևէ սև չերևա. ոչմեկ պսակ իր դագաղին վրա։ Կխնդրե, որ հեռավորներն ու անծանոթները նեղություն չկրեն գալ իր կինն ու զավակները «նորեն լացացնել», կհրավիրե զանոնք այցետոմսին ձգելով շատանալ։

Հետո սապես կշարունակե.

«Թանկագին Սոֆի ջան և թանկագին զավակներս, դուք միշտ խելոք եք եղել, այժմ էլ դուք գիտեք ի՛նչպես սրտներդ ամուր պիտի պահեք ինձ ճանապարհ ձգելիս։ Դիակառք և ուրիշ ձևականություններ ամենևին չլինեն, մանավանդ ձիաների գլխին սարքած այն փետուրի փունջերը, որ իմ աչքս են ծակում։ Հրավիրեցեք ութ համալ և ութ կինտո, նրանք հերթով ինձ թռչունի պես կթոցնեն։ Գուցե նրանց մեջ մի իսկական Պեպո կպատահի, սա մեծ պատիվ կլինի իմ «Պեպո»-ի համար։

«Ի վերջո թաղեցեք որտեղ ուզում եք։ Ես կուզեի իմ մոր մոտ թաղվել, բայց այնտեղ տեղ չկա, մի գուցե նրա մոտ թաղված երեխաներս անհանգիստ լինեն։

«Գերեզմանիս վրա ոչ մի արձան հարկավոր չէ. մի սև քար և իմ մարմինը։

«... Եթե սրտանց ուզում եք և արժանի եք համարում արձան դնել, ապա այդ արձանը իմ փոխանակ՝ Պեպոյի համար կանգնեցրեք, որտեղ որ հարմար լինի։

«Պեպոն ամբողջ հասակով կանգնած լինի բարձր պատվանդանի վրա իր հագուստով, գտակը գլխին, մի ձեռքին Արութինի մուրհակը, մյուս ձեռքով մուրհակի վրա գտնվածը ցույց տալիս լինի նրան, որ սյուրտուկով սևերես կանգնած է կողքին։

«Տակը, պատվանդանի վրա գրված լինեն սա խոսքերը.

ՊԵՊՈ.— Էս քու կոտրած ձեռքով չի՞ս գրի...

«Արձաններու պատվանդանը ձուլված լինի թունգից, վրան ոչ մի տեղ իմ անունը չհիշեք»։

Եվ ահա վերջաբանը.

— «... Մնաք բարով։

«Մնա՛ս բարով, իմ թանկագին Սոֆի ջան։

«Մնա՛ք բարով, իմ թանկագին զավակներս։

«Մնա՛ք բարով, սիրելի բարեկամներս։

«Մնա՛ք բարով, սիրելի մարդիկ, ինչ ազգի, ցեղի և հավատի էլ որ լինեք։

«Մնա՛ս բարով, իմ սիրած Թիֆլիս քաղաք։

«Մնաս բարով, իմ սիրելի ու պաշտելի ազգ, Աստված քեզ վաթսունիդ արժանի ընե...

«Բոլորիդ սերը սրտումս թաղած տանում եմ հետս։

«Մնաք բարով»[1]։

Ասոր չափ հուզիչ, վեհ, ամբողջ սիրտ բուրող ուրիշ էջ մը եթե կուզեք գտնել, բացեք Սրվանձտյանցի «Մանանա»-ն և վանեցի պառավ կանանց վսեմ աղոթքը կարդացեք, այս երկունքին մեջ ավելի ճշմարիտ բանաստեղծություն կա, քան շատ մը «քերթված»-ներու մեջ, և երկուքին մեջ ալ կա այն մաքուր, բարի, քնքուշ ոգին, որ մեր ցեղին բոլոր թերություններուն ու խոցերուն խորը կմնա անեղծ, վճիտ, ինչպես մար-

1 Այս հատվածը աշխարհաբարի վերածելով ժամանակին հրատարակել էր «Մշակ» օրաթերթը։ (Ս. Հ.).

գրիտ մը ցնցոտիներու տակ, և որ, պիտի համարձակիմ ըսել, իր պարզուկ քաղցրությամբը, իր միամիտ շնորհովը մեր ցեղին հատուկ է, մեր ցեղին, երբ զայն կնկատենք ո՛չ թե Զիմզիմովներու հրեշային դիմակին տակ, այլ զայն երբ կտեսնենք իր բուն դեմքով Պեպոներուն, Սունդուկյանցներուն և անման երգեր, աղոթքներ և հեքիաթներ մրմնջող մեր շաքարաբերան պառավներուն մեջ։

Հանգուցյալին ընտանիքն ու բարեկամները կետ առ կետ կատարեր են այս կտակին տրամադրությունները։ Պարզ անզարդ դագաղ, մեկ քահանա, մեկ տիրացու, ոչ մեկ պսակ, տասը կինտո դագաղակիր (և ամբողջ Թիֆլիսը հուղարկավոր)։ Բայց եթե պսակ չդնելու մասին իր կամքը հարգեր են, հանգուցյալին բարեկամները պատվական գաղափարն ունեցեր են դագաղին վրա թարմ ծաղիկներ սփռելու և դագաղին առջևեն երկու դեռատի աշակերտուհիներ ձեռքերնին զամբյուղներ բռնած տունեն մինչև եկեղեցին ծաղիկներ են նետեր ճամփու երկու կողմը կեցած խուռն բազմության վրա։

Ը.

Սունդուկյանցի գործը պետք է տարածել մեր ժողովրդին բոլոր խավերուն, բոլոր հատվածներուն մեջ։ Շատերը, մանավանդ թրքահայոց մեջ, անունը միայն գիտեն Սունդուկյանցին։ Անհրաժեշտ է նոր հրատարակություն մը ընել վարպետին գործերուն թրքահայ բարբառով թարգմանության մը հետ միասին, որովհետև Թիֆլիսի բարբառը գրեթե անհասկանալի է զայն մոտեն չգիտցողին համար։

Գալով այն հանգանակության, զոր «Մշակ»-ը փութաց բանալ Պեպոյի արձանը կանգնելու համար, ամբողջ Հայությունը պարտավոր է մասնակցիլ անոր։ Իբր ճշմարիտ իրապաշտ, մեր այժմյան թուլցած հոգեբանությունը լավ ուսումնասիրած ըլլալով, Սունդուկյանց իր կտակին մեջ Պեպոյին արձանին գաղափարը թելադրելե հետո կըսե.— «Պեպոյի արձանը հեռավոր ապագայի բան է, սրա համար ոչ ոք չնեղանա և իզուր ժամանակ չկորցնե»։ Երանի թե հայությունը, որ այնքան հանցապարտորեն գաղջ ու միջակ ընթացք մը ունեցավ Արովյանի պես հսկայի մը հուշարձանին հանգանակության հանդեպ (այնպես որ երեք տարիե ի վեր հարկ եղած գումարին մեկ հինգերորդն իսկ հաղիվ հավաքված է դեռ), գեթ այս առթիվ գիտնա վարվիլ ոչ թե Զիմզիմովյան կարծրասրտությամբ, այլ Պեպոյական վեհանձնությամբ։ Արովյաններն ու Սունդուկյանցներն են, որ «վաթաններ» ստեղծելու կամ վերահաստատելու ուժն ու հոգին կուտան ժողովրդի մը։ Որպեսզի ժողովուրդ մը «արժանի

ըլլա իր վաթանին», ինչպես պաշտելի սեղմությամբ մը կըսե Սունդուկյանց իր անման կտակին մեջ, պետք են շատ մը բաներ, բայց պետք է նախ և առաջ, որ այդ ժողովուրդը գիտնա իր գոյության սյուները եղող Արովյաններուն ու Սունդուկյանցներուն հիշատակը արժանավորապես մեծարել։

ՀԱՄԱՍՏԵՂ
ԵՎ
ԳՅՈՒՂԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գյուղը հիմնական բջիջն է ժողովրդի մը ազգային ինքնության, հո՛ն է, որ կկազմվին ազգի մը բարոյական դիմագծության գլխավոր հատկանիշները, որ հետո կզարգանան, կբարդանան, կընդլայնին, կնրբանան ու մերթ ալ կայլայլին, կշարափոխվին քաղաքին մեջ։

Նույնպես և արվեստի, գրականության համար, գյուղը՝ իր բնազդական ինքնաբուխ արտադրություններով— երգեր, հեքիաթներ, պարեր, սովորություններ, հավատալիքներ, զգեստներ, ձեռարվեստի գործեր— ազգային մշակույթին աղբյուրն է։ Այն ազդերը, որոնց մեջ քաղաքի կյանքն ու քաղաքի արվեստը իրենց կապը կխզեն գյուղին հետ և չափազանց կզարգանան իրենց ուրույն ճամփով, առանց գյուղեն օգտվելու և ներշնչվելու և ի վնաս գյուղին, անընականին ու արվեստականին մեջ կիյնան, կասլականին ու իրենց տոհմային նկարագրին հարազատությունը կեղծանեն։

Անգլիական ու գերմանական գրականությանց մեջ արժանիքներեն մին ա՛յն է, որ ատոնց վարպետները մեծ մասամբ միշտ ֆոլքլորական արտադրությանց ուշադիր և սիրող մնացած են և անոց հետ կապ պահպանած են, ֆրանսական գրականությունը միևնույն կապն ուներ ժողովրդական ներշնչմանց հետ մինչև ԺԶ դարու վերջը։ Ֆրանսուա Վիյոն, ԺԵ դարու Փարիզյան մեծ քերթողը, գերագույն ծաղիկն է միջնադարյան ժողովրդական բանաստեղծությանց։ ԺԶ դարու խոշոր դեմքերը, Ռաբլե, Մոնթեներ, և հոյակապ Ռոնսարը՝ զինք շրջապատող «բույլին» բանաստեղծներով, հմուտ գրողներ էին, հույն և լատին դասական դրպրությանց ուղեծուծովը սնած, և որ անով իրենց լեզուն և գրականությունը ճոխացուցին, բայց և ժողովրդական լեզվին, երգերուն, հեքիաթներուն, ավանդությանց և առակներուն խորապես ծանոթ կմնային և կօգտվեին անոնցմե։ ԺԷ ու ԺԸ դարուն, քաղաքի գրականությունը մեծապես զարգանալով ֆրանսացվոց մեջ՝ գրեթե ամբողջապես իր կա-

պերը խզեց գյուղին հետ, ժողովրդական ներշնչման հետ, ատով լեզուն ավելի կանոնավոր, հստակ ու կուռ դարձավ, գիտական ճշտություն ստացավ, բայց իր հրապույրեն, բնական շնորհեն բան մը կորսնցուց. բարձր քաղաքակրթության ծնունդ եղող գրական ճյուղերը ծաղկեցան, մեծ կատարելության հասան, իմաստասիրական, ճարտասանական, թատերական, վիպական գրականությունը իր մեծագույն վարպետներն ունեցավ, բայց քնարերգական բանաստեղծությունը և ժողովրդական պատմվածքը աղքատացան, նվազեցան, միմիայն Շարլ Փերրոն է ԺԷ դարու մեջ, որ իր սիրուն հեքիաթներով այդ կապը պահեց տոհմային ֆոլքլորին հետ, և Մոլիերն ու Լաֆոնթենը, որոնց առաջինը օգտվեցավ միջնադարյան ժողովրդական պատմվածքներեն ու զավեշտներեն, ու երկրորդը մշտական հաղորդակցության մեջ պահեց ինքզինքը ժողովրդական գրականության հետ. ատոր համար է, որ Լաֆոնթեն ամենեն ինքնատիպը, ամենեն հարազատը, ամենեն «ֆրանսացին» է ֆրանսական հեղինակներուն։ ԺԸ դարուն, ֆրանսական բարձր գրականությունը, քաղաքի գրականությունը, ավելի գերակշիռ դարձավ, Վոլթեր, Տիտրո, Մոնթեսքիեո մտածումի վարպետներ և արձակի մեծ արվեստագետներ եղան, բայց քնարերգությունը բոլորովին մեռավ, անթիվ ոտանավորներ կան գրված այդ շրջանին իրական բանաստեղծութենե բոլորովին զուրկ, մինչև որ եկավ Անտրե Շենիեն, որ, իր զմայլելի տաղանդին շնորհիվ, և շնորհիվ հելլեն դպրությանց իր ներքին ու խորաթափանց ծանոթության, արտադրեց բանաստեղծություն մը, որ ժողովրդական գրականության հետ կապ չունի, բայց կենդանի է ու հավիտենապես հմայիչ։ Ռուսո քաղաքի կյանքի ու մտայնության տարամերժ տիրապետումին, արվեստականը նախընտրող ուղղության դեմ շարժում մը հարույց, քարոզեց դարձը դեպի բնություն, դեպի գյուղական պարզություն, և իր տարածած սկզբունքներով, ինչպես և իր քնարերգական արձակով հիմնադիրն եղավ ռոմանտիզմին, զոր հետո Շաթոպրիան և իր հաջորդները, անգլիական ու գերմանական մեծ բանաստեղծներեն ալ ներշնչվելով, պիտի զարգացնեին այնքան շքեղ կերպով, ֆրանսական քնարերգության բարձրագույն էջերն արտադրելով։ Բայց ֆոլքլորական գրականության հետ կապին իրական վերահաստատումը ֆրանսական դպրության մեջ, ԺԹ դարուն կսկսի Մարսելին Տեպորտ-Վալմոռով, որուն քնարն այնքան մոտիկ է ժողովրդական երգերուն, ու մանավանդ Վերլենով, որ իր շարք մը էջերուն մեջ գիտակցաբար մոտեցավ ջինական երգերու պարզ, վճիտ, բնական ներշնչումին, (անոնց մեջ դնելով իր հոգին, իր ճաշակը,) ինչպես և Մեթերլինքով, Վերհարընով և խորհրդապաշտ ուրիշ քանի մը քերթողներով, ու Ալֆոնս Տոտեով, Փոլ

Արենով, Մոփասանով, որ իրենց պատմվածքներուն մեջ ֆրանսացի գյուղացին հարազատորեն նկարագրեին, միջնադարյան պատմվածքներուն ու հեքիաթներուն արվեստը վերակենդանացուցին, անոր տալով ավելի մանրակրկիտ ու իրապաշտ նկարագիր մը։

Մեր գրականության մեջ, գյուղը ԺԹ դարուն է միայն որ իր մուտքը կգործե։ Ժողովրդական բանաստեղծությունը, ֆոլքլորական անգիր բանահյուսությունը իր բոլոր ճյուղերով շատ ավելի կանուխ դարգացած են մեր մեջ և իրենց ազդեցությունը դասական գրականության վրա ավելի կամ նվազ չափով դարուն համեմատ՝ տարածված, բայց գյուղն իր բնանկարներով, հանդեսներով, սովորություններով, գյուղացին իր կյանքով, բարքերով, նկարագրով, գրեթե բնավ չեն երևար հոն ԺԹ դարեն առաջ։ Մեր գրաբար լեզվով մատենագրության մեջ, Ե դարեն մինչև ԺԳ, ժողովրդական բանահյուսությունը շատ քիչ անգամ կերևա (Խորենացիի մեջ Գողթան երգերու հատակտորներ, գուսանական դյուցազներգություններե քաղված Հայկի, Վահագնի, Արայի, Տիգրանի, Արտավազդի դրվագները, Փավստոսի մեջ նույնպես ժողովրդական դյուցազներգություններե առնված Արշակի, Գնելի ու Փառանձեմի, Մամիկոնյան Վասակի ու Մուշեղի, Շապուհի, Դրաստամատի պատմությունները, Նարեկացիի տաղերեն մեկ քանին, որ ժողովրդական երգերու գնացք ունին, Շնորհալիի ռամկախառն լեզվով հանելուկները, Մխիթար Գոշի առակները)։ ԺԳ դարեն սկսյալ, ժողովրդական բանաստեղծությունն ու լեզուն գերակշիռ կհանդիսանան, ձեռագիրները կսկսեն հետզհետե ավելի լայն տեղ տալ ժողովրդական անանուն երգերու, պատմվածքներու, առակներու, ծանոթ աղուղներու արտադրությանց, և այդ ռամկական քնարին խորին ազդեցությունը կկրեն նաև եկեղեցական ու աշխարհական հմուտ գրողներն ալ (Կոստանդին Երզնկացիեն մինչև Թլկուրանցի, Հովասափ Սեբաստացի, Երեմիա Քյոմուրճյան և այլն)։ Գյուղն ու գյուղացին իսկապես շատ քիչ կտեսնվին այդ բոլոր արտադրությանց մեջ։ ԺԳ դարեն առաջ մեծերու կյանքն է միայն, քաղաքի կյանքը, որ կերգվի ժողովրդական քնարին ձայնովը, բայց քաղաքի ժողովրդական քնարին. ԺԳ դարեն հետո, բնության գեղեցկությանց նկարագրությունը, աշխարհիկ կյանքի երևույթներու պատկերացումը կավելնան թագավորներու, պետերու, սուրբերու փառաբանություններուն, բայց նորեն քաղաքն է, որ կտիրապետե, բնությունը, սերը, թշվառությունը, որ կերգվին, ընդհանուր գույներով կներկայանան։ Բուն իսկ գյուղական կյանքի պատկերեն գծեր գտնելու համար, պետք է դիմել ժողովրդական անանուն երգերուն, հեքիաթներուն, առակներուն, հոն կգտնենք ջինական հարսնիքը նկարագրող երգերը, «վիճակի» երգերը, երկրագործին, տար-

հեստավորին, բանվորին երգերը, գեղջկական սերերու գեղգեղանքը, հեռուն գացած գյուղացի պանդուխտներու կիներուն ողբը, բռնության տակ ճնշված ժողովրդին հեծյունը, գեղջկական բարքերու նկարագրությունն և երգիծանքը, ինչպես և սուրբերու, ուխտավայրերու, քաջերու, նահատակներու նվիրված երգեր, աղետյալներու սոսկումն սրտահայտող էջեր, և այլն։

ԺԹ դարուն է որ մեր գրականության մեջ գյուղը կմտնե իրապես ու լրջորեն, և առաջինը, որ զայն մտցուցած է մեր գրականության մեջ, Քանաքեռի հանճարեղ գյուղացին է, Խաչատուր Աբովյան. անիկա՝ թեպետ համալսարանական կրթություն ստացած՝ պահեց իր գյուղացիի հոգին, ուղեց ամեն բանե առաջ գյուղացիին խոսիլ, անոր լեզվովն անոր կյանքը նկարագրել. «Վերք Հայաստանի» վեպը, «Օվսաննա» նորավեպը, «Պարապ վախքի խաղալիք» հավաքածուին առակներեն ոմանք, հայ գյուղական կյանքին առաջին հղոր ու կենդանի պատկերացումը կպարունակեն գրագետի մը ձեռքով կատարված (և ատիկա՝ Ֆրանսայի մեջ, նույն բանը Տոտեի, Մոփասանի, Արենի և Միսթրալի ձեռքով կատարվելեն առաջ)։ Աբովյան իր ինքնակիր գործերով հայ նոր գրականությունը գյուղի կյանքին, բարքերուն ու լեզվին վրա հիմնելեն զատ, ժողովրդական բանահյուսության այլազան նմուշները հավաքելու, ուսումնասիրելու, հրատարակելու ձեռնարկն ալ ուրվագծեց, հիմնադիրն եղավ նաև հայ ֆոլքլորագիտության։ Իր գործին անմիջական շարունակողներն եղան Պռոշյանց, որ իր վեպերեն ոմանց մեջ հայ գյուղը պատկերացուց մանրամասն և մերթ կենդանի ու սիրուն կերպով, և Աղայան, որ ժողովրդական հեքիաթներու և երգերու նմանողությամբ գյուղական շունչով լեցուն քանի մը համեղ էջեր արտադրեց։ Բաֆֆի, Մուրացան, Լեո, Ահարոնյան, Վ. Փափազյան, Շիրվանզադե քաղքենի[1] գրագետներ են, որոնց արվեստը եվրոպական ժամանակակից բարձր գրականության հետ ավելի կապ ունի, քան հայ ֆոլքլորական արտադրությանց, բայց անոնք իրենց գործերեն ոմանց մեջ նկարագրած են հայ գյուղացին, Բաֆֆի իր «Կայծեր»-ուն ու «Խենթ»-ին մեջ, Մուրացան իր նորավեպերեն մեկ քանիին մեջ, Շիրվանզադե իր սքանչելի «Ցավագար»-ին, մեջ, Ահարոնյան և Վ. Փափազյան Թրքահայաստանի կյանքին նվիրված իրենց հուզիչ պատկերներուն մեջ։ Գամառ-Քաթիպա և Հովհաննիսյան ժողովրդական բանաստեղծությանց նմանողությամբ երգեր գրած են. Թումանյան մեծ երգիչը եղած է հայ գյուղին, դասականացնողը հայ ժողովրդական հեքիաթին ու երգին, Իսահակյան ամենեն հարուստ փունջը տված

1 Ասվում է քաղաքի, քաղաքայինի իմաստով։ Ս. Հ.

է հայ գեղջկական քնարեն ներշնչված ցողաթուրմ, երփնագեղ, թրթռուն տաղիկներու։

Արևմտահայոց մեջ, է՛ն առաջ Ալիշանն է, որ ուշադրություն դարձուցած է ժողովրդական երգերուն, միջնադարյան աշուղաձև բանաստեղծությանց վրա, անոնցմե մաս մը հրատարակած է «Բազմավեպ»-ին մեջ, մաս մը անգլերեն թարգմանությամբ՝ գրքույկի ձևով, և անոնց նմանողությամբ գրած է իր սրտառուչ «Նահապետի երգերը»։ Խրիմյան Հայրիկ, որ Թրքահայաստանի ծոցին մեջ գրական շարժում մը վերարծարծելու նախաձեռնությունն առավ, իր գործերեն ոմանց, մասնավորապես «Պապիկ ու թոռնիկ» գողտրիկ հատորին մեջ, հայ գյուղին կյանքը նկարագրեց և մեկնաբանեց։ Իր աշակերտներուն մեծագույնը, Գարեգին եպիսկ. Սրվանձտյանց Թրքահայ ֆոլքլորագիտության հիմնադիրն եղավ, իր թանկագին հատորներուն մեջ ժողովրդական հեքիաթներու և երգերու ճոխ հավաքածու մը հրատարակեց, և նույն ատեն իր Թրքահայաստանի այլևայլ շրջաններուն մեջ պտույտներուն նկարագրություններով հայ գյուղին ու գյուղացիին ամենեն զմայլելի գրական արտահայտիչներեն մին հանդիսացավ։ Սրվանձտյանցի գործին ֆոլքլորական բաժինը շարունակեց ու մեծապես ճոխացուց Չիթունի, և գրական բաժինը շարունակեցին և ընդարձակեցին Հրանտ (Մելքոն Կյուրճյան), Գեղամ, Մշո երգիչը, և մանավանդ Թլկատինցին ու Թուրեն Զարդարյան, որոնց գործը, հայ գյուղական հոգվույն հարազատ ու զորեղ թարգմանություն, իր խորապես տոհմային նկարագրով և գրական բարձր արժեքով, Աբովյանի և Թումանյանի գործին քով դրվելու արժանի է։

Հայ գյուղին նվիրված գրականությունը մեր մեջ կարծվածեն շատ ավելի հարուստ է որեմն, և եթե ատոր հետ հաշվի դնենք նաև ազգագրական ու ֆոլքլորական հրատարակությունները, Հայկունիի մեծարժեք հավաքածուները, (Լալայանի «Ազգագրական հանդես»-ին հարուստ շարքը, Ճանիկյանի «Հնություն Ակնա»-ն, և ուրիշ նմանօրինակ բազմաթիվ հատորներ), կրնանք հաստատել, որ հայ գյուղն ու գյուղացին հեռու են անտես եղած ըլլալե մեր ժամանակակից գրականության ու բանաստեղծության մեջ։ Այդ բոլորին վրա է, որ ահա կուգան ավելնալ Համասեղի մեծարժեք հատորը՝ Պ. Գ. Մխայլյանի «Ժողովուրդի մը զավակի մը հիշատակները» գրքին հետ, որ նույն ատեն լույս տեսած է։

Բայց այս երկու գրքերուն վրա խոսելե առաջ, կուզեմ քանի մը բառ ալ ըսել այն սխալին վրա, զոր գործած են ոմանք մեր մեջ և զոր այլք կշարունակեն գործել գյուղի և քաղաքի գրականության միջև անհաշտ կռիվ մը ջանալով ստեղծել։ Օսմանյան սահմանադրության հռչակումեն առաջ, Պոլսո մամուլին մեջ տարիներով բանավեճ մը

տեղի ունեցած է Պոլսո և գավառի գրականության սիրոյանների երկու խումբի միջև։ Հիմակ ալ, այն պահուն, որ այս հոդվածս կգրեմ, կտեսնեմ Եգիպտոսի «Արև»-ին մեջ Օշականի մեկ արտառոց գրվածքը միևնույն սիրոյին վրա հիմնված։

Գիտեմ, որ այդ բանակռվին նախաձեռնարկներեն մին, պոլսահայ գրականությունը քամահրող ու գավառի գրականության գերակշռումին անհրաժեշտության խանդավառ ջատագովությունն ընողներեն մին և գլխավորը, գրագետ մըն էր, զոր մեծապես կհարգեմ, ողբացյալ Արտաշես Հարությունյանը. բայց այդ հմուտ ու երբաճաշակ քննադատը, որ բանաստեղծական քանի մը փափուկ էջեր ալ ունի արտադրած, այդ բանակռվին մեջ չափազանցության տանելով գաղափար մը, զոր իր ճշգրիտ ձևովն ու սահմանով «Հայրենիք»-ի և «Ծագիկ»-ի շրջանին մենք արդեն քարոզած էինք, սխիմատ և ամուլ պայքարի մը ծնունդ տված է։ Մեն քաղաքակիրթ ազգի մեջ, գյուղի գրականությունը և քաղաքի գրականությունը, այսինքն պարզ, բնազդական, ներշնչյալ արվեստը և բարձր մշակույթի բարդ, վերլուծական, գիտակից արվեստը կերեվան, կզարգանան քով քովի, իրար կլրացնեն։ Մարդկային միտքը կապելի չէ, և օգտակար ալ չէ, գյուղի գավառի ոլորտին մեջ սահմանափակելի։ Գյուղի կյանքը բնության ավելի մոտիկ է, հոն ամեն ինչ ավելի թարմ, առողջ, բնական է, բարքերն ու արվեստը հոն ունին ինքնաբխության մը, իսկատիպության մը ցեղային ու նույնիսկ տեղական որոշ նկարագիր մը, որ արվեստի թանկագին, հիմնական տարր մը կկազմեն. բայց մեծ քաղաքներու բարձր մշակույթը, պահպանելով հանդերձ որոշ չափով լայնագույն մասշտաբներուն մեջ այդ ինքնաբխության, բնականության, ներշնչման կենսական հատկությունները, կզարգացնե նաև դիտողության, խորհրդածության, վերլուծումի, մտածման խորացումի, զգացման նրբացումի, ծանոթության ճոխացումի հատկությունները, և այդ ամենուն ներգաշնակ խառնուրդեն է, որ ծնունդ առած են մարդկային մտքին գերագույն հրաշակերտները։ Գյուղի սահմանին մեջ մնալով, մարդկությունը պիտի չկրնար արտադրել ո՛չ Պարթենոնի հրաշալիքը, ո՛չ գոթական ճարտարապետության մոգությունը, ո՛չ Սոփոկլ, ո՛չ Վիրգիլ, ո՛չ Տանթե, ո՛չ Շեքսպիր, ո՛չ Կյոթե, ո՛չ Հյուգո, ո՛չ Բալզակ, ո՛չ Փալեստրինա, Պախ, կամ Պեթհովեն, ո՛չ ալ Արիստոտել, Սփինոզա, Փասքալ, Նյուտոն կամ Փասթեր, և տարակույս չկա, որ ասոնք են մարդկային հանճարին բարձրագույն արտահայտությունները։

Գեղարվեստի, գրականության մեջ, էական է անշուշտ, որ քաղաքի մշակույթը նեքին կապ մը պահե գյուղի նախնական, խորունկ ու կենդանի աղբյուրին հետ, վերլուծման ու հմտության տակ չխեղդե

բնազդականը, որ հիմնական տարր մըն է, և մեծագույն գրագետները, բանաստեղծները, արվեստագետները (Հոմեր, Փիդիաս, Շեքսպիր, Տանթե, Կյոթե, Պեթհովեն, Միքել-Անճելո) այդ կապը պահած են, և սակայն նույնիսկ այնպիսի գրագետներ ու բանաստեղծներ, որոնք, ինչպես Ռասին, Վոլթեր, Ֆլոպեր, Պոդեր, գեղջկական ներշնչումեն շատ հեռու մնացած են, զուտ քաղքենի մտայնություն ունեցած են, գրեթե տարտամերժորեն վերլուծական ու գիտակից արվեստ մը ի գործ դրած են, նորեն գեղեցիկ ու կենդանի գործ մը արտադրած են չնորհիվ իրենց մեծ տաղանդին, անկեղծության ու անաղարտ ճաշակին։

Մեր մեջ, անշուշտ, հարցը կենդանատ քիչ մը ուրիշ ձևով, քանի որ ԺԸ—ԺԹ դարերուն, երբ մեր նոր գրականությունը կազմվեցավ ու զարգացավ, այն «քաղաք»-ները ուր այդ գրականությունը կերկնվեր (Վենետիկ, Պոլիս, Մոսկվա, Թիֆլիս, Իզմիր), հայկական չէին, օտար էին։ Ատիկա անխուսափելի հետևանք եղած է այն պայմաններուն, ուր կգտնվեր մեր ժողովուրդը, և գրականությունը, որ զարգացած է այդ ոչ-հայ կենդրոններուն մեջ, անշուշտ մեծ մասամբ չէ եղած այնքան խորապես ու զուտ հայ, որքան պիտի ըլլար, եթե ազատ Հայաստանի մը քաղաքներուն ու գյուղերուն մեջ ծաղկեր։ Ասիկա ճիշտ է, բայց անոնք, որ կկարծեն, թե առոր համար Թիֆլիսի ու Պոլսո հայ գրականությունը ամբողջապես օտարախորթ է և արհեստական, կսխալին։ Հայը, անկախութենե զուրկ, չկրնալով իր թշվառ ու հետամնաց վիճակի մը մատնված հայրենիքին մեջ զարգացնել իր գրականությունն ու արվեստը, զայն զարգացուցած է այն օտար մեծ քաղաքներուն մեջ, ուր հզոր գաղութի մը գոյությունը կամ այլ նպաստավոր պայմաններ ատիկա իրեն թույլ տված են։ Օտարության մեջ հաստատված այդ հայկական կենդրոններեն Թիֆլիսն ու Պոլիսը իրենց ծոցին մեջ ամփոփած են այնպիսի բազմաթիվ հայ համայնք մը,— Հայաստանեն եկած ամենեն մտացի, տաղանդավոր ու ձեռներեց մարդոցմեն կազմված,— հոն կազմված է այնպիսի հոծ ու ներուժ հայ կյանք մը, օտարեն ազդված, բայց և իր ցեղային քանի մը էական գծերը պահպանելով, որ այդ պայմաններուն մեջ հորինված գրականությունը ունեցած է իր հիմքին մեջ հայկական հարազատ նկարագիր, եղած է «քաղաքի հայ գրականությունը». տեղական օտար միջավայրին ազդեցությունը (Թրքականը՝ Պոլսո մեջ, վրացականը՝ Թիֆլիսի մեջ), շատ չնչին եղած է հոն երևան եկած մեծ հայ գրագետներուն ու բանաստեղծներուն մոտ, իսկ եվրոպական բարձր գրականության ազդեցությունը (զոր Հայաստանի գյուղերուն կամ քաղաքներուն մեջ մնալով այդ շրջանին հայ մտավորականը շատ պակասավոր ու

տարտամ կերպով պիտի ստանար, մինչ Պոլսո և Թիֆլիսի, ինչպես և Վենետիկի ու Մոսկվայի մեջ խորապես ու ներքնապես կրած է զայն և յուրացուցած) ոչ թե խաթարած ու օտարացուցած է մեր գրականությունը, այլ ընդարձակած է մեր ազգային մշակույթին սահմանը, նրբացուցած, բարձրացուցած է անոր որակը։ Անմտություն պիտի ըլլար կարծել, թե Նալբանդյան, Բաֆֆի, Սունդուկյանց, Շիրվանզադե, որ «եվրոպական» ազդեցություններով կազմված գրագետներ են, օտար քաղաքի մեջ արտադրած ըլլալնուն և օտար մշակույթներու ներգործությունը կրած ըլլալնուն համար «հայ» չեն, հարազատ չեն. պատվական հայ գրագետներ են անոնք, որ եթե չեն ունեցած Աբովյանի մը աստիճանով տոհմային մտայնություն և ոճ, մեր գրականության բերած են, սակայն, եվրոպական մեծ գրականությանց շփումով բարերար ճոխացում մը ու զորացում մը,— բացի իրենց անհատական ուժեղ տաղանդին հրապույրեն, որ անվիճելի է։ Նույնիսկ Պոլսո, Իզմիրի ու Վենետիկի գրագետներուն, բանաստեղծներուն համար, որ ավելի հեռու եղած են Հայաստանի գյուղական միջավայրեն քան Թիֆլիսինները, և ավելի մոտիկ եվրոպական մշակույթին, աններելի պիտի ըլլար ըսել, թե խորթ են, արվեստական են, անկենդան են, հայ չեն. զարգացած հայեր են, որ մեծ քաղաքի հայու միջազգային բարձր մշակույթով տոգորված հայու դերը կատարած են։

Այն պահուն, ուր Արտաշես Հարությունյան ու իր համախոհները, պոլսական գեշ տեսակի գրականության մը տարածումին ազդած զզվանքեն ու զայրույթեն անարդար չափազանցությանց մղվելով կհարուցանեին բանակռիվ մը, որ այդ ծայրահեղ ձևով դրված՝ սխալ էր, Թրքահայաստանի գյուղական, տոհմային գրականությունը արդեն իսկ ուներ իր լավագույն վարպետը, Թլկատինցին. Պոլսո մեջ կշողար Տիրան Չրաքյանի ոստանիկ բարձր մշակույթի հոյակապ տաղանդը, արտասահմանի մեջ կփայլեր Սիամանթոյի, Վարուժանի, Միքայել Կյուրճյանի, Տիկին Զապել Եսայանի, Սուրեն Պարթևյանի, վ. Թեքեյանի, «Կարմիր ծաղիկ»-ի Արփիարյանին եվրոպական ձևով ճոխ գրականությունը, որ իր զգայնական հիմքին մեջ հայկական է, ոմանց մոտ ավելի, ոմանց մոտ նվազ չափով. Զարդարյան, թեպետ լրագրության մեջ թաղված, մերթ ընդ մերթ կուտար էջեր եվրոպացյալ Հայաստանցի ինքնատիպ գրագետի, և դարձյալ Պոլիս՝ Մեծարենց կհնչեցներ զմայլելի քնար մը, ուր ֆրանսական խորհրդապաշտ դպրոցին արձագանքը կլսվեր Ակնա երգերուն մրմունջին խառնված. արևմտահայ գրականությունը, այդ շրջանին, ուրեմն իր ամբողջության մեջ այնքան լիակատար էր և հայ, որքան հնարավոր էր Ռուսիկա, և այդ բնակռիվը մեկ հատ գավառացի

նոր գրագետ կամ բանաստեղծ մեջտեղ չէ հանած։ Օշական շատ ավելի այլանդակ, և կարելի է ըսել ամբարիշտ, չափազանցությանց կհասնի այն հոդվածին մեջ, զոր վերև հիշեցի և ուր, գովելու համար Համաստեղը, ամբողջ արևմտահայ գրականությունը կքամահրե. ինչպես ատենով փառաբանելու համար Վարուժան մը, որ պետք չուներ այդպիսի ավելորդ ու անհարկի դրվատիներու, կարեանար անոր բոլոր մեծ նախորդները՝ բացի Դուրյանեն ու Մեծարենցեն, ապուշ արհամարհանքի մը մեջ պարուրելով Բագրատունիի, Ալիշանի, Պեշիկթաշլյանի, Թերզյանի, Նարպեյի, Սեթյանի պես վարպետներ։

Ֆրանսական հոյակապ գրականությունը իր ամբողջությամբ կազմված ու զարգացած է ֆրանսական հողի վրա, և սակայն որքա՜ն օտար ազդեցություններ կրած է ան իր բնաշրջության զանազան փուլերուն։ Ռոնսար, որ ֆրանսական մեծ բանաստեղծությունը հիմնեց, հույն և լատին մշակույթով տոգորված էր. ժէ դարուն, Քորնեյլ ոչ միայն լատին գրականությենեն օգտված է, այլև սպանիացի թատերգակներեն, Լապրյուեր հելլեն դպրությանց աշակերտ մըն է. Ռասին հույն ողբերգակները և («Գոթոդիա»-ի ու «Եսթեր»-ի մեջ) «Աստվածաշունչ»-ը իրեն առաջնորդ կառնե. Պոսյուե, Մասիյոն «Ս. Գիրք»-են և եկեղեցվո հայրերեն կքաղեն իրենց պերճախոսության շատ մը տարրերը. նույնիսկ Մոլիեր ու Լաֆոնթեն, է՛ն զուտ ֆրանսացի հեղինակներ այդ դարուն, ինչքա՜ն պարտական են հունական, լատինական, իտալական դպրությանց. ԺԸ դարուն, Վոլթեր, Մոնթեսքիո, Տիտրո անգլիական իմաստասիրություններն ու գրականություններն օգտված են, ինչպես և սպանիացի վիպողներեն, Անտրե Շենիե թաթավված է հույն բանաստեղծության հույզով. ԺԹ դարուն, ֆրանսական մեծ ռոմանտիկները անգլիական ու գերմանական բանաստեղծության ազդեցությունը կրած են։ Այս շարքը կարելի է դեռ շատ երկարել, ու կարելի է նույն բանը նկատել նաև եվրոպական ուրիշ ազգերու գրականությանց մեջ, որ հին կամ նոր այս կամ այն գրականություններեն ազդված են։ Անշուշտ, մեծ գրագետի մը, իրական բանաստեղծի մը մոտ, օտար ազդեցությունները հեղինակին ազգային ոգվույն ու ճաշակին, անձնական խառնվածքին համեմատ կկերպարանափոխվին, նոր շեշտ մը կառնեն։ Սակավաթիվ են հեղինակները, որ ոչ մեկեն ազդված ըլլալ կթվին և ամեն ինչ իրենք իսկ ստեղծած ըլլալու տպավորությունը կգործեն. անոնք ալ անշուշտ ազդեցություններ կրած են, բայց իրենց տաղանդին սուր ինքնատպությունը զանոնք հալեցուցած, սքողած է. միայն միջակ և տկար միտքերն են, որ անանձնական հետևողներ, անհոգի ընդօրինակողներ կդառնան, և ատոնք՝ թեև լեգեոն են՝ իրապես անգո են գրականության պատմության մեջ։ Թիֆ-

լիսի և Պոլսո եվրոպաձև հայ գրագետներեն ու բանաստեղծներեն անոնք, որ ճշմարիտ տաղանդ ունեցած են, նույն բանն ըրած են,— համեմատությունները պահելով անշուշտ,— ինչ որ ըրած են ֆրանսացի մեծ հեղինակները, զոր վերև հիշեցի. անոնք հայ են մտայնությամբ, ոգվով, բայց օտար մեծ գրականությանց ազդեցության տակ հորինելով իրենց գործերը՝ հայ լեզուն, հայ ոճը, հայ ճաշակը նրբացուցած ու ճոխացուցած են։

Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ և իրենց աշակերտները, Հայաստանի ծոցին մեջ, Ե դարուն, միևնույն բանն ըրած են. եթե շատանային հայ գյուղը նկարագրելով կամ երգելով, այսօր հայ ազգը կացությունը պիտի ունենար քյուրդերուն. որ ունին շատ մը ժողովրդական երգեր ու հեքիաթներ, բայց ուրիշ բան չունին, և շատ աղքատ են ատոր համար, քաղաքակրթության պատմության մեջ տեղ մը չեն գրավեր։ Մեսրոպ մեր այբուբենը հորինած է հունականին նմանողությամբ. Սահակի հետ՝ «Աստվածաշունչ»-ը հունարենե թարգմանելով, հույն լեզվի ազդեցության տակ հայերենը զարգացուցած, կատարելագործած, հարստացուցած է։ Եզնիկ (Կողբ գյուղի զավակ, բայց որ քաղաքի հայկապ գրագետ մը եղած է) իր հրաշալի լեզուն, իր անստույգ ոճը պարտական է այնքան իր խորին հելլենագիտության, որքան իր անձնական բարձր տաղանդին։ Ինչ որ Ե դարու մեծ հայ գրագետներն ըրած են հունական դպրության ազդեցության տակ Հայաստանի մեջ հայ լեզվի ու գրականության համար, նույնը ԺԹ դարու հայ հեղինակները, տիրող պայմաններուն հետևանքով չկրնալով Հայաստանի մեջ իրականացնել, կատարած են Վենետիկ, Պոլիս կամ Թիֆլիս՝ եվրոպական գրականության ազդեցության տակ, Վենետիկ ու Պոլիս՝ գլխավորապես հույն-լատին ու իտալական, ֆրանսական ազդեցության տակ, Թիֆլիս՝ մասնավորապես ռուս ու գերման ազդեցության տակ։

Այս ամենը ի նկատի ունենալով, մարդ չի կրնար զզվելի չգտնել կարդալով Օշականի վերև հիշված հոդվածին մեջ սապես շոշորդություններ.

«Հիմա ատենն է, կարծեմ, անդրադառնալու այն անդարմանելի պարապին, որով մեր գյուղը կբացակայի մեր գրականութենեն, և ապիկա այնքան եղերական կորուստի մը ձևն ունի, քանի որ ազնտը տարած սրբած է անոր հետքը աշխարհեն, ու տարտամ գառնությամբ ես կնայիմ այն օրին, ուր մեր ժողովրդին այս խավարումին պիտի հետևի արևմտահայ գրականության անփառունակ շիջումը մոռացումին ծոցը, առանց պատմության հանձնել կարենալու երկու–երեք հատ մարդ, որ շարշի, վաճառական կամ տիրացու չըլլային։ Այսպիսով կկրկնվի մեր հին գրականության մեծ սխալը, որ ժողովուրդը հեռու կպահե իր էջերեն առհասարակ ու կանգնտանա գյուղը։ Հինին չափ մեր նոր գրականությունն ալ, մասնավանդ արևմտյան հատվածը, չի հետաքրքրվիր մեր ժողովրդին ամբողջ զանգվածը, գյուղացիովէ։ Մեր իրապաշները քաղաքների ու միջակ պատահարքի փոքրությունեներեն անդին չանցան։ Ազգագրական շարժումը ուռուցնատիրեց գյուղը անոր ամենեն վերացյալ և ամենն ժամանակ կարելի (?) արտահայտության՝ բանահյուսության մեջ»։

Ամեն ինչ սխալ է այս տողերուն մեջ։ Անիմաստ է ժողովրդական բանահյուսության կարևորությունը նվազեցնող, սահմանափակող բառերը. գեղջկական երգ մը, պատմվածք մը, առած մը, հեքիաթ մը «վերացական» չեն, ընդհակառակը գյուղին հոգվույն ամենեն նուրբ, ինքնատիպ ու թանկագին արտահայտությունն են, լի բարախուն կյանքով, ավելի խորապես տոգորված ցեղային ու տեղական դրոշմով, քան նույնքան առօրյա իրական կենցաղը շինականին. անոնք ավելի ճիշտ կթարգմանեն գյուղին հոգեբանությունը, ցեղի մը մտայնության հիմքը, քան գյուղացիին նիստուկացին մանրամասն նկարագրությունը, գյուղական կյանքը իր ցավերով և հրճվանքներով, հավատալիքներով ու երազներով, այդ նախնական ոգեկոտին հմայքովը խտացած ու շեշտված, ավելի խորունկ ու հաբազատ ձևով կարտահայտվի այդ բանաստեղծական արտադրության մեջ, քան ուրիշ ոևէ ձևով։ Եվ սխալ է, որ «ատոնք ամեն ժամանակ կարելի են, անոնցմե շատերը որոշ թվականի մը ծնունդ են, որոշ պայմաններու, որոշ միջավայրի, որոշ դեպքերու արդյունք։ Թողունք որ ճիշտ ալ չէ տրուեն, թե հայ ազգագրությունը գյուղին միմիայն բանահյուսությունը հավաքած է, ռուսահայ ու Թրքահայ ազգագրագետներն ու գյուղապատում գրագետները գյուղական կյանքի վերաբերյալ ամեն կարգի տեղեկություններ կուտան իրենց գործերու մեջ բանահյուսական արտադրության ամփոփումին հետ. ճիշտ է միայն, որ Թրքահայ ազգագրությունը նվազ ընդարձակ սահմանի մը մեջ կատարած է իր հավաքման գործը, քան ռուսահայը. ատիկա եթե շատ ցավալի է՝ Թրքահայկական գյուղերուն վերջին մեծ աղետին հետևանքով քայքայվելեն հետո, բայց հոդ ալ փոխանակ չափազանցելու այդ պակասավորության սահմանը, պետք է գեթ կորուստը մասամբ դարմանելու մտածել՝ հրավիրելով Թրքահայաստանի գավառական քաղաքներու, գյուղերու վերադրող զավակները, որ Մխալյանի պես իրենց հիշատակները պատմեն, Համամաստեղի պես իրենց գյուղին կյանքը պատկերացնեն, կամ նոր Ճանիկյաններ ու Սրվանձտյանցներ դառնալով՝ իրենց ողջ մնացող հայրենակիցներուն բերնեն հավաքեն իրենց գյուղին ավանդությունները, երգերը, հեքիաթները, առածները, բարբառու նկարագրությունը։

Բացարձակ սխալ է ըսել, թե «գյուղը կբացակայի մեր գրականութենեն», ընդհակառակն, ինչպես արդեն իսկ ցույց տվի վերև հիշատակված բազմաթիվ անուններով, հակառակ այն տարակարծոն կացության, որու մեջ կգտնվեր մեր ժողովուրդը և որ գինքը ստիպված է իր մտավոր կեդրոնները հայրենիքեն դուրս հաստատել, գյուղին նվիրված, գյուղեն ներշնչված էջերը նորեն բավական բազմաթիվ են մեր ռուսահայ թե թրքահայ գրականության մեջ, և անոնցմե ոմանք գեղեցկագույն էջերեն են մեր ժամանակակից մատենագրության. լկտիություն մըն է ըսել թե «արևմտահայ գրականությունը պիտի շիջանի անփառունակ կերպով մոռացումին ծոցը, առանց պատմության հանձնել կարենալու երկու-երեք հատ մարդ, որ չարչի, վաճառական կամ տիրացու չըլլային». արևմտահայ գրականությունը ամբողջ հույլ մը վարպետներ արտադրած է, որոնց գործը, ինքնատիպ ու գեղեցիկ, անմահ է և որոնց լավագույն էջերը մերինեն ավելի մեծ ու զարգացած ժողովուրդներու գրականության մեջ իսկ պատվավոր տեղ մը պիտի գրավեին։

Սխալ է, որ մեր հինին չափ մեր նոր գրականությունն ալ չէ հեռաբրբրված գյուղացիով։ Հին գրականություններեն, գրեթե բոլոր ազգերուն մեջ, գյուղական կյանքին քիչ տեղ տված են, ատոր մեջ մեր նախնիքը մասնավորապես մեղադրելի գտնելն անարդար է։ Իսկ մեր ժամանակակից գրականության մեջ, ժողովրդական տարրը, Հայաստանի գյուղացիին մասին հեռաբրբրությունը, անոր բարքերուն, ճակատագրին, մտավոր արտադրությանց համար խանդաղատանքը Օշականի կարծածեն շատ ավելի խոր ու հզոր եղած են. խոսքս անշուշտ իրական գրագետներուն, վարպետներուն վրա է, և ոչ թե բազմաթիվ միջակություններուն, որ քաղաքի կյանքն ալ կարող եղած չեն հարազատ ու կենդանի կերպով արտահայտելու և որոնք եթե Հայաստան ալ ծնած ու աղրած ըլլային, նորեն կեղծ ու անկենդան բաներ պիտի արտադրեին։

Աչք մը նետենք մեր «քաղաքի գրագետներուն», օտար քաղաքի մեջ հաստատված գրագետներուն վրա, ու պիտի տեսնենք, թե ինչքա՞ն անճիշտ է Օշականի թեթևսոլիկ վճիռը. Ռաֆֆիի, Ահարոնյանի, Վ. Փափազյանի վեպերուն, վիպակներուն մեկ մասին գլխավոր նյութը Հայաստանի գյուղացին է. Պեշիկթաշլյան երգած է Զեյթունը, հայ փառավոր գյուղաքաղաք մը. Պոլսո հայ մտավորականությունն է, որ թեև թիկունք եղած է Խրիմյանի, երբ ան ուզած է հիմնել Վարագա մտավոր բույնը. Սրվանձտյանց մը, Թլկատինցի մը, Զարդարյան մը, երբ հայտնված են, Պոլսո լավագույն գրողները զանոնք գրկաբաց ընդունած են, զանոնք խրախուսած, փառաբանած են, զանոնք մղած են այդ ճամփով շարունակել, հայ հողը երգել, հայ կյանքը պատմել, հայ ոճը զարգացնել։ Ու Պոլսո իրապաշտները հայ գյուղացին նկարագրած են հոժարակամ, ինչքան որ ատիկա կարելի էր իրենց, որ Հայաստան չէին ծնած, որ գյուղացին Հայաստանեն դուրս պանդուխտի ձևին տակ միայն տեսած էին. Արփիարյանի «Կարմիր ժամուց»-ին հերոսը հայաստանցի տիպար մըն է, գյուղացի մը, և ինչքա՞ն կենդանի նկարագրված։ Զոհրապի «Թեֆարիկ»-ը, «Փոթորիկ»-ը, «Այրին» հայ գեղջկուհիի կամ պանդուխտ գյուղացիի տիպարները կգծեն ճիշտ ու հզոր գույներով, Կամսարականի «Հարո»-ն պանդուխտ հայաստանցի մըն է, Բաշալյանի է՛ն աղվոր գրվածքներեն մին՝ Համիտյան ջարդերեն հետո «Նոր կյանք»-ին մեջ հրատարակած հոյակապ էջն է, Հայաստանի գյուղական կաղանդին ավանդական տոնախմբությունները ոգող ու կոտորածներեն հետո անոնց ավերն ու սուգը նկարագրող։

Այդպիսի օրինակներ դեռ կրնամ թվել։ Կարելի է նկատել, որ այդպիսի էջերը մեր ժամանակակից «քաղաքի» գրականության մեջ բազմաթիվ չեն, բայց ըսել, թե անոնք բացակա են բոլորովին, նյութական սխալ մը գործել է։ Պոլսո գրողներն ավելի հաճախ չեն արտադրած այդպիսի էջեր, որովհետև բնական է որ մարդ իր տեսածը, ճանչցածը, ապրածը ավելի տրամադիր և կարող է արտահայտելու, քան իրմե հեռուն գտնվածը, ինչքան ալ սիրելի ըլլա ան. ու իրենց տեսածը,— պոլսահայ կյանքը,— շատ ուժեղ ու կենդանի կերպով արտահայտած են. եթե ուղեին նմանիլ գավառացի գրողներուն, հայաստանցի ձևանալ, կեղծ էջեր պիտի արտադրեին՝ ինչպես կեղծ եղած են Միհրան Հովհաննեսյանի թխած «գեղջկական» երգերը։

Այսօր գոյություն ունի Հայաստան մը զուտ հայ բնակչությամբ և հայ կառավարությամբ. այսուհետև կարելիություն կա հայ մշակույթի կեդրոնն այդ Հայաստանի քաղաքներուն մեջ հաստատելու, և այդպես ալ պիտի ըլլա հետզհետե։ Ատոր աջակցելու ենք, բայց ատոր համար պետք չկա բնավ հայ տաղանդին թե՛ օտար և թե՛ հայկական միջավայրի մեջ՝ հակառակ դժվար պայմաններու՝ ցարդ երևան բերած արժանիքներն ուրանալ։ Ուրացումը գծուծ և ամուլ բան մըն է։

Դառնանք Համաստեղին և Մխալյանին, որոնք իրենց գրքերը համեստորեն, առանց աղմուկի և հավակնության մեր առջև դրած են, և փոխանակ հիմարաբար պոռալու թե մոռցված, արհամարհված հայ գյուղը պետք է ուսումնասիրել ու նկարագրել, նախընտրած են գրական գործ մը կատարել, նոր էջ մը ավելցնելով մեր հայ գյուղին նվիրված գրական ու բանասիրական այն շարքին, զոր իրենց նախորդներն արդեն արտադրած էին։ Տեսնենք թե ինչի՞ մեջ կկայանա իրենց բրած հավելումը, իրենց բերած նորությունը։

Մխալյանի գիրքը ավելի գյուղական կյանքի համբերատար ու անկեղծ պատկերացման տոքյուման մըն է, քան արվեստի գործ մը։ Գրական տեսակետով ան տկարություններ ունի, ոճն անհավասար է, մերթ աշխույժ ու սրամիտ, մերթ պարզ, բնական ու հստակ, բայց հաճախ ալ խառնված ավելորդ մանրամասնություններով, հասարակ խորհրդածություններով. ինքնատիպություն, արվեստագիտական նորություն, ամփոփումի, խտացումի կարողություն դժվար է հոն գտնել. նոր վերադիրներու, ստեղծված բացատրություններու, արտահայտելու անձնական եղանակի մը քիչ անգամ կհանդիպինք հոն։ Բայց իբր հավատարիմ պատկեր մը գյուղի մը բարքերուն՝ հոն ծնած ու իր պատանությունն անցուցած մեկու մը մանկական հիշատակներուն մեջեն ցույց տրված, այդ գիրքը շահեկան է ու հայ գյուղական կյանքին նվիրված գրականության մեջ պատվավոր տեղ մը բռնելու արժանի։

Մխալյան կպատմե իր մանկությունն ու պատանությունը գյուղին մեջ, կգծե պատկերն իր ընտանեկան շրջանակին և դպրոցին ուր իր առաջին կրթությունն ստացած է, կուտա նյութական ու բարոյական կենդանագիրն իր հորն ու մորը, իր ազգականներուն, դպրոցին գլխավոր ուսուցիչներուն և իրենց գյուղին ամենեն ուշագրավ տիպարներուն, կնկարագրե բարքերը, սովորությունները, նիստ ու կացը, աղխատանքներն ու զբոսանքները գյուղին մարդոց, կգծե անոր բնանկարները, կոգե նաև այդ գեղջուկներուն ամենօրյա ընկերներն եղող ընտանի անասուններուն կյանքն ու շարժումները։ Դժբախտաբար չէ հիշած անունը գյուղին, որուն կերպով մը ազգագրական ու բարացուցական մենագրությունը հորինած է. հայտնի է, որ Հայաստանի մեջ չէ ան, ոչ ալ Կիլիկիո, թերևս Փոքր Հայքի գյուղ մըն է, ավելի հավանորեն Փոքր Ասիո ոչ հայկական շրջանակներեն մեկուն մեջ գյուղ մըն է հայաշատ բնակչությամբ. անհրաժեշտ էր ճշտել այդ կետը, պետք էր նաև ճշտել թվականը, ուր այդ պատմված դեպքերը անցած են. հայտնի է, որ համիտյան կոտորածներեն առաջ է, բայց չի գիտցվիր ո՞ր սուլթանին օրով, ի՞նչ էին այդ դահուն Թուրքիո մեջ ընդհանրապես տիրող պայմանները և ի՞նչ էր անոնց արձագանքը այդ շրջանին մեջ։

Գիրքը կկարդացվի հետաքրքրությամբ ու հաճույքով. պատմվածքը հաճախ կենդանի է, մերթ անկեղծ հուզմունքով լեցուն, մերթ ոգևորված պարզ ու ինքնաբուխ «հյումոր»-ով մը, երևան բերելով դիտելու կարողություն, տիպարները գծելու ձիրք և իրերն ու մարդիկը ազատառողջ և ազնիվ ոգվով մը դատելու ընդունակություն։ Կան հոն հատվածներ, ուր ոճն ալ սիրուն գնացք մը կստանա. տիպարները հաջող կերպով ներկայացված են իրենց արտաքին ու ներքին դիմագծությամբ։

Զմայլելի է այն էջը, ուր հեղինակն իր մորը տան հացը թխելու նվիրական գործողությունը կպատկերացնե։ Նկարագեղ է գյուղական աղբյուրին և անոր շուրջ կովի բռնվող գեղջկուհիներուն տեսարանը։ Թանկագին է ոգումը գյուղին ավանդական դեմքերեն մեկուն, «անանուն նահատակ»-ին, որ գեղեցկությանը համար ատենով սիրվել է թրքուհիներեն, բայց անոնց ուղածը չընելուն, մահմեդականություն չընդունելուն համար սպանվեր է. այդ դրվագը, ինքնատիպ մանրամասնություններով պատմված, օր մը կրնա մեծ բանաստեղծի մը կամ վիպասանի մը ձեռքը հրաշակերտի մը նյութ դառնալ։

«Պայքար»-ի վարչությունը շատ օգտակար բան ըրած է թերթին էջերուն մեջ այդ գործն իբր թերթոն հրատարակելե հետո զայն գրքի ձևով ի լույս ածելով։ Երանի թե,— կկրկնեմ այս առաջարկս,— պ. Մխալյանի օրինակին հետևին Թրքահայաստանի, Կիլիկիո, Փոքր Հայքի զավակ եղող ուրիշ գրողներ ու պատմեն հիշատակները, գծեն բնանկարներն ու կենցաղն իրենց գյուղին կամ գյուղաքաղաքին, հավաքեն ավանդություններեն, առածներեն, ժողովրդական երգերեն, հեքիաթներեն ինչ որ կհիշեն կամ հայրենակիցներն կրնան քաղել, որպեսզի գեթ մաս մը այդ բոլոր ջնջված հայ համայնքներուն պատկերեն ու հոգիեն պահպանվի ապագա սերունդներուն համար[1]։

Համաստեղի գիրքը, նույնպես իր գյուղին նվիրված, գրական գործ մըն է ամեն բանե առաջ, և իր տեսակին մեջ առաջնակարգ գործ մը, ուր անթերի գեղեցկությամբ ու հազվագյուտ ինքնատպությամբ ոճ մը երևան կուգա։

Դժբախտաբար, Համաստեղ ալ չի հիշատակեր անունն այն շրջանին, ուր իր գյուղական պատմությունները կանցնին[2]։ Հայ գյուղին ընդհանուր, համադրական պատկեր մը գծել կարելի չէ, և Համաստեղ այդ դիտավորությունը չէ ունեցած։ Հայ գյուղը նույնը չէ Կովկասյան Հայաստանի, Թրք. Հայաստանի, Փոքր Հայքի և Կիլիկիո մեջ. կան հասարակաց գծեր, բայց և կան շատ ավելի շեշտված բարքերու, միջավայրի, բնապատկերի տարբերություններ։ Տոտե, Մոփասան, Արեն, Միսթրալ իրենց պատմվածքներուն մեջ կհիշեն տեղին անունը, կճշտեն աշխարհագրական ու բնական որոշ միջավայրը, ուր իրենց պատմությունը տե-

---

1 Անկեց ի վեր պ. Խրայան հրատարակեց իր ծննդավայր Ծովքի (Կեոլճյուք) նվիրված մեծապես շահեկան ու հուզիչ գիրքը։

2 Այժմ ամենքս ալ գիտենք, որ ատոնք կանցնին Խարբերդի շրջանին մեջ, որու զավակն է Համաստեղ։

ղի կունենա. ցանկալի է, որ երկրորդ տպագրության մը մեջ Համաստեղ լրացնե այդ պակասը։

Բայց այդ պակասը միակն է, որ կնկատվի հատորին մեջ, որ ամեն տեսակետով թանկագին ու կատարյալ արտադրություն մըն է։ Համաստեղ նոր ճամփա մը չի բանար, անծանոթ աշխարհ մը չի հայտներ, իր կարգին կուգա պատմել գյուղը, զոր արդեն պատմեր են այն բոլոր հայ գրագետները, զոր թվեցի վերև։ Իր նախորդներեն ոմանց, մասնավորապես Թլկատինցիին, Զարդարյանին, ու նաև Հովհաննես Թումանյանին դասերեն օգտված է. հայտնի է, որ ուշադրությամբ ու խանդաղատանքով կարդացած է Թլկատինցիի գյուղական հզոր պատկերներն ու քրոնիկները, Զարդարյանի «Սև հավը կանչեց» հրաշակերտը և ուրիշ գյուղանվեր քնարերգական կամ վիպական գեղեցիկ էջերը, Թումանյանի «Անուշ»-ը, «Մարո»-ն, «Գիքոր»-ը, բայց նորությունը զոր կբերե՝ իր անձնական տեսությունն է, և իր ոճը, մեծապես ինքնատիպ, ջղուտ, հակիրճ, գունագեղ, կյանքով լեցուն, իրականության առույգ բանաստեղծությամբը թրթռուն։

Իր տնտղության նորությունը կկայանա բացարձակ առարկայականության մը մեջ. լիակատար իրապաշտն է ինք։ Աբովյան, Պռոշյանց, Ռաֆֆի ազգասիրական ձգտումներ ունեին, որ հաճախ հզորապես կտիրեն իրենց գյուղական նկարագրությանց մեջ. Սրվանձտյանց, Խրիմյան կրոնքի և ազգի մտահոգություններով լեցված են։ Ատով՝ անոնք մասնավոր ուժ մը, շեշտ մը կուտան իրենց էջերուն, բայց բնանկարներուն պատկերացումը, բարքերուն, տիպարներուն նկարագրությունը կներկեն քիչ մը իրենց տիրական զգացումներուն գույնովը։ Թլկատինցի, ու մանավանդ Զարդարյան ու Թումանյան, զուտ արվեստագետներ են, բայց իրենց անհատականությունը զորեղ է, իրենց անձնական աշխարհայացքը, իրենց ուրույն զգայնությունը շատ ինքնատիպ են ու շեշտված, և իրենց գործին մեջ այդ անձնականությունը՝ պատմված դեպքերուն, նկարագրված տիպարներուն հետ չէ ձուլված բոլորովին, ընդհակառակն՝ հաճախ կտիրե անոնց։ Համաստեղ հարազատ ու վճիտ ձայն մըն է, որուն մեջեն գյուղն ինքզինքը կերդե. ան մտած է իր նկարած տիպարներուն մորթին մեջ, խառնված է անոնց. յուրաքանչյուր պատմվածքի մեջ անոր դերակատարները միայն կտեսնենք, որ կշարժին, կխոսին, կգործեն՝ իրենց ուրույն հոգեբանության համեմատ. հեղինակը թաքուն է անոնց մեջ, անոնց շարժիչ ուժն է։ Անոր անձնականությունը կհայտնվի իր ոճին մեջ, որ իրն է, իրմե ստեղծված, և որ նույն պայծառ ու հանկուցիչ գեղեցկությունը կպահե բոլոր էջերուն մեջ։ Այդ ինքնությունը կհայտնվի նաև հոգեբանական թափանցողության ձիրքին մեջ, զոր ան

ի հայտ կբերե իր պատմվածքներու ընթացքին և որով այնքան ճշտորեն կըմբռնե ու ցույց կուտա իր գյուղին բնանկարներուն, մարդերուն ու անասուններուն հոգեբանության էական գծերը, որով հավատարմորեն կարտահայտե գյուղի մարդուն, բնության ու անասունին հանապազօրյա իրերախառն, կապակից, շաղապատված կյանքը՝ պարզուկ, խորունկ, տարերային, միշտ ինքնաբուխ ու հզոր, քաղքենի կենցաղին շքեղութենեն, բարդութենեն, նրբութենեն զուրկ. բայց և անոր արվեստականություններեն, իմաստակություններեն, կեղծիքներեն ալ զերծ։

Համաստեղ երիտասարդ մըն է՝ ապահովապես համիտյան ջարդերեն հետո ծնած, մեծ պատերազմին եղերական դեպքերուն ականատես եղած, բայց ան իր գյուղը կնկարագրե որպես թե թուրք ու հայու խնդիր գոյություն չունենար, և ասիկա շեմ նշանակեր իբր մեղադրանք մը. ան հայ գյուղը կպատմե ինքն իր մեջ, իր ներքին սովորական կյանքով, որ դարերե ի վեր, բարիի ու չարի ավանդական խառնուրդի մը վրա հիմնված, իր էական գծերուն մեջ քիչ փոխված ըլլալու է. ան միայն մեկ գլխու մը մեջ ոգած է տարագրությանց արհավիրքը, և շատ հակիրճ կերպով, պատմվածքին վերջաբանը կազմող երկու էջերուն մեջ, և այդ քանի մը տողերն ավելի սուր ու ազդեցիկ կերպով կզգացնեն այդ դժոխքի օրերուն սոսկումը, քան ինչ որ պիտի ըներ անոնց մեկ նոր ու մանրամասն նկարագրությունը։ Մերունի Մխսիի ու պառավ Մնուշին պատմությունն է. երկուքն ալ այրի, պատկից դրացի են, և ամեն օր կռիվ կընեն իրարու հետ, մերթ ամբողջ գյուղն իրար անցընելով և իրենց անասուններն իսկ ապշեցնելու աստիճանին հասցնելով իրենց գժտությանց կատաղությունը. բայց աղետի շրջանին, տարագրությանց սև ճամփուն վրա. օր մը իրարու կհանդիպին երկու կարավաններ, որոնց մեկուն մեջ Մխսին է և մյուսին մեջ Մնուշը, և հազիվ երկու ծերուկներն իրար կտեսնեն, մեկ բարձի վրա ծերացած երկու ամուսիններու պես իրարու գիրկ կիյնան ու կուլան փոքրիկ մանուկներու պես, ու Մխսին արցունքներուն մեջեն կըսե. «էրնե՞կ այն օրերուն»...

Մյուս բոլոր պատմվածքներուն մեջ անցնող դեպքերը սովորական, ամենօրյա, միամիտ բաներ են, զոր սակայն պատմողին արվեստը կներկայացնե ամենակենդանի, ամենաշահեկան գույներով. ոչ արտակարգ պատահար, վիպական կնճռոտություններով ոչ կացություն, ոչ տարօրինակ ու բարդ մարդկային տիպար պիտի չգտնեք հոն. գյուղին մարդիկն են, Համաստեղի գիտցած գյուղին որոշ մարդիկը, իրենց հատուկ դեմքով, տարազով ու հոգեբանությամբ, իրենց նախնական պարզ ու բուռն կրքերով, առաքինություններով կամ թերություններով, հավատքներով, վախերով ու տարփանքներով։ Անոնք ո՞չ յուտանկար-

ված են տեսածն ընդօրինակողի համբերատար ու չոր արվեստով մը, ոչ ալ մեկնաբանված են հոգեբան դիտողի երկայն ու կնճռոտ վերլուծումներով։ Շնորհիվ Համաստեղի տաղանդի հմայքին, անոնք գրքին էջերեն դուրս կցատքեն ու կապրին, կշարժին, կխոսին իրենք իրենց մեջ ամփոփված, հանդիսատես չունեցողի պես, և իրենց շարժումներովվրն ու խոսքերովն իսկ կգծեն իրենց հոգին։ Համաստեղ Շիրվանզադեեն ի վեր մեր մեջ երևցած ամենեն ճշմարիտ ու կատարյալ իրապաշտն է։

Ով որ ուշադրությամբ կարդա «Տափան Մարգարը», «Միջոն», որ գլուխ-գործոցներ են, ծայրահեղ պիտի չգտնե այս գովեստը։

Համաստեղ իր գյուղացիները կնկարե ոչ միայն հայրենի հողին վրա, այլև երկրեն դուրս, պանդխտության մեջ, իր Վարդանը, իր Կարամուն պապենական գյուղեն խլված խեղճ շինականներ են, զոր կարիքը քշեր տարեր է մինչև Ամերիկա, արևոտ դաշտերուն մեջ հողին օրհնյալ աշխատանքը կատարելու տեղ՝ գործարաններու մութին ու մուրին մեջ տքնելու հարկադրված. մին մեքենայի մը զոհ կերթա, մյուսը բոզի մը խաղալիք կդառնա։ Առաջին պատմվածքը անխառն հուզմամբ լեցուն խանդաղատանքով գրված զարիբի մարտիրոսագրություն մըն է, իր պարզության մեջ խորապես սրտառուչ, երկրորդը երգիծական եղերերգն է արգահատելիորեն ծիծաղաշարժ թշվառ էակի մը։

Գյուղի այս նկարիչն ամբողջական պիտի չըլլար, եթե մարդոց հետ անոնց մշտական ընկերները, անասունները ի հանդես չբերեր իր պատմվածքներուն մեջ, և արդարև անոնք ամեն բոպե քովն ի վեր կեբևան մարդերուն, նույնքան կենդանի ու ճիշտ նկարված. մեղուները, մրջյունները, ճանճերը, ձին, շունը, բաղերը, հավերը, աղավնիները, նույնքան ուշադրությամբ ու տեսակ մը գորովով նկարված են հոն, որքան մարդերը, և հոն կգտնենք ամբողջ գլուխ մը, է՛ն ուժովներեն, է՛ն հուզիչներեն մին, ուր հերոսը շուն մըն է, ծերուկ Ջալոն, որուն խոնարհ ու անբախտ կյանքն ու անգութ վաճխանը Համաստեղ պատմած է այնպիսի սրտագին շեշտով մը, որ ողբերգության մը պես մարդս կհուզե այդ պարզուկ բարի էակին ցավագին ճակատագրին տեսիլը։ Ուրիշ գլուխ մը, որ ամբողջովին նվիրված է նույնպես անասունի մը, «Նապաստակի մը օրագիրն» է, բայց անասունի մը դիմակին տակ մարդկային զգացումներ չէ որ պատկերացուցած է Համաստեղ, ինչպես ըրած են ուրիշ հեզինակներ, ան ջանադիր եղած և հաջողած է,— ինչքան որ ատի կարելի է մարդուն,— նապաստակին մտայնությունը թափանցել (ճիշտ ինչպես Անաթոլ Ֆրանս ըրած էր իր անմոռանալի Ոիքե շունին համար) և պատմել այն տպավորությունները, մտածումները, զոր այդ տարբական ուղեղը կրնա ունենալ։ Համաստեղ առաջինն է մեր գրականության մեջ, որ այս ձևով դիտած ու նկարած է անասունները, հնարավոր եղած հավատարմության ու ճշտության մեծագույն աստիճանով պատկերացնելով անոնց արտաքինն ու ներքինը։

Մեր Հայաստանցի հեղինակներեն Համաստեղ մասնավորապես սիրած ըլլալու է, ինչպես ըսի արդեն, Թլկատինցին ու Զարդարյանը։ Անոնց ընդարձակությունն ու զորությունը չունի,— գեթ ցարդ, որովհետև դեռ շատ բան կարելի է հուսալ[1] այսպիսի տաղանդ մը,— բայց իր արվեստին մեջ կմիացնե այն երկու տարբեր հատկությունները, որոնց յուրաքանչյուրին մեջ այդ երկու վարպետներեն ամեն մեկը ավելի ցայտուն կերպով զարգացած կերևա. ինքն ունի մաս մը Թլկատինցիին հյումորեն, գյուղական ու հայկական տեսակ մը մասնավոր համեղությամբ ու գունագեղությամբ լեցուն, ու հուզմունքին, խանդաղատանքին հետ զուգընթաց, մերթ խառնված երևցող այդ սրամտութենեն. ունի նաև բան մը Զարդարյանի քնարերգական թռիչեն, բնությունն ու մարդկային սիրտն իր ամենեն նուրբ երանգներուն մեջ թարմ, կենդանի, գեղեցիկ գույներով արտահայտելու կարողութենեն. բայց հետևող մը չէ բնավ անոնց, իր ոճը միշտ անձնական կնիք մը կկրե, իր հյումորը ավելի խիտ, ավելի առարկայական, ավելի ժուժկալ է, քան Թլկատինցիինը, իր քնարերգությունը ավելի հակիրճ է ու սուր, քան Զարդարյանինը, պատմվածքեն չանջատվիր, ոևէ չափով չի ծանրաբեռներ զայն, իր երանգապնակը բնական գույներով տարօրինապես ճոխ է, իր գրեթե բոլոր պատկերները, նմանությունները, փոխաբերությունները նոր են, վերադիրները գրեթե միշտ ինքնաստեղծ, լավ գտնված։

Այս հայ գյուղի զավակ եղող ու իր գրականության մեջ հայ գյուղի համն ու հոտն ուժգնապես զգացնող հեղինակը բնավ անծանոթ չէ ապահովապես եվրոպական գրագետներուն, գեթ անոնց որոշ մեկ շարքին. իր պատմելու արվեստը, և իր ոճին մեջ հայտնվող կատարելության, ժուժկալության, չափավորությամբ ձգտումը որոշապես ցույց կուտան, որ ան արևմտյան վիպումի լավագույն վարպետներուն բարերար ազ-

[1] Գյուղական պատմվածքներու իր հավաքածուին երևումեն ի վեր, Համաստեղ հրատարակեց «Հայրենիք» ամսագրին մեջ և այլուր՝ բազմաթիվ վիպակներ, պատմվածքներ, ու վեպ մը, թե՛ հայրենիքի շինական կյանքեն և թե՛ Ամերիկայի պանդուխտ հայաստանցիներու և նույնիսկ ամերիկացվոց բարքերեն, և ատոնց մեջ իր տաղանդը երևան եկավ հետզհետե ավելի ընդլայնած, զորացած ու մեծցած, պահելով հանդերձ միշտ իր պարզ ու ինքնակ, բնականորեն գունագեղ և իրապաշտորեն բանաստեղծական նկարագիրը։ «Շան մը հետ զրույցը», իշպես և «Համբույրը», զոր Համաստեղ իր կարգ մը ուրիշ գեղեցիկ պատմվածքներուն հետ հատորի մը մեջ հավաքված հրատարակեց վերջերս, մեր ազգային մատենագրության անմահ էջերու շարքին մեջ մտնելու արժանի հրաշակերտներ են։

դեցությունը կրած է, անոնց դասերեն գիտակցորեն օգտված է՝ առանց իր հայկական ոգին խաթարելու (որովհետև, երբ իրական գյուղացին է որ կպատմե, և մանավանդ Արևելքի գյուղացին, պատմությունը հաճախ երկարաբան է ու ճապաղ), բայց ուրիշ տեսակեաներով,— գյուղին կյանքն ու տիպարները հասկանալու ու մեկնաբանելու կարողությամբ,— ավելի արևելցի է, քան Զարդարյանը, ավելի մոտիկ է Թլկատինցիին։

* * *

Համաստեղ մեծ նորություն մըն է մեր գրական կյանքին մեջ։ Ան մերօրյա մատենագրության մեջ կրանա գլուխ մը, որ իրն է, ան ստեղծած է եղանակ մը, հայ գյուղացին,— և՛ անոր մեջեն մարդկային ճակատագիրը,— տեսնելու և թարգմանելու, զոր իրեն պես ներուժ ու ազդու կերպով մեր մեջ ոչ մեկն ունի այս պահուս։ Ան դեռ կրնա իր գծած ճամփուն մեջ հառաջանալով, անոր հավատարիմ մնալով հանդերձ, ընդարձակել այդ ճամփան, որ այնքան հարուստ է, բեղուն ու հրապուրիչ։ Եթե արդեն իսկ չէ կարդացած,— Տոտեի ու Մոբրանի թե կարդար,— եթե արդեն իսկ չէ կարդացած,— Տոտեի ու Մոփասանի գյուղական պատմվածքները, և մանավանդ Միսթրալի «Միրեյո»-ն։ Խառնվածքով ու ճաշակով ինքն ամենեն ավելի մոտիկ կթվի Տոտեին, և իր այս հատորին քանի մը պատմվածքներն ըստ իս համարժեք են Տոտեի լավագույն պատմվածքներուն։ Եվ ինքն է, որ թերևս օր մը մեզի պիտի կարենա տալ, մեր հրճվանքին համար, հայկական «Միրեյո» մը, որ անհրաժեշտ չէ որ ոտանավոր գրված ըլլա, ինչպես Միսթրալի հրաշակերտը։ Բանաստեղծության ամենաբարձր արտահայտությունը տաղաչափյալ ձևն է անշուշտ, բայց և խոր բանաստեղծությունը մը կարտաշնչվի տեսակ մը գրագետներու արձակին, ինչպես Շաթոպրիան, Ֆլոպեր, Ռընան, Ֆրանս, Պարես, Լոթի և հեքիաթներու, պատմվածքներու Տոտեն։ Մենք արդեն ունինք գյուղական վիպերգության այդ հանկուցիչ ու թանկագին ճյուղին մեջ քանի մը հոյակապ գործեր, ավելի հակիրճ, ավելի մասնական, քան Միսթրալի ընդարձակ ու համայնապարփակ գյուղապատկերը, Աբովյանի «Օվսաննա»-ն ու «Վերք Հայաստանի»-ին քանի մը մասերը, և Թումանյանի «Անուշ»-ը, «Մարո»-ն, գյուղի նախնական տարփանքներն ու ավանդական բարքերը պատկերացնող անմահ էջեր։ Համաստեղ կրնա տալ ատոնց պես գործ մը, ավելի բազմատարը, ավելի ընդարձակ գործ մը, որուն համար է կարծես, որ ինքն ստեղծված է, վիպերգություն մը, որ «Վերքի»-ն պես հայաշունչ ու հայագույն ըլլա, առանց քարոզչական, փրոփականտական տարրին, որ Աբովյանի գործին մեջ տիրական է։ Բայց ատիկա

գրելու համար Համաստեղ Հայաստան երթալու է. այդ հայ հողի ծաղիկներով հորինված երանգապնակն ունեցող թանկագին արվեստագետը պետք չէ ձգել, որ Ամերիկայի գործարաններուն մուխին մեջ դժգունի. Հայաստան է իր տեղը։

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

(Հիշատակներ)

Նամակը, զոր կհրապարակեմ Անահիտի այս թիվին մեջ, պատմական վավերաթուղթ մըն է, և Զոհրապը— ազգային գործիչը, մարդը և գրագետը— անոր մեջ է գրեթե ամբողջ։ Ան այս տողերը դրոշին ուղղված է Պալքանյան պատերազմներու վաղորդյանին, երբ Ազգային Պատվիրակությունը Եվրոպայի մեջ, ու ազգային կազմակերպություններ ու գործիչներ Պոլիս, Կովկաս ու Եվրոպա, կաշխատեին Թրքահայաստանի ու Կիլիկիո համար տեսակ մը վարչական ինքնավարություն ձեռք ձգել։ Հայտնի է, որ այդ միջոցին թափված ջանքերը հանդեցան վերջ ի վերջո որոշ արդյունքի մը, որ չէր ինչ որ ի սկզբան մեր ժողովուրդը ուզեց, հուսաց ու պահ մը իրականանալու մոտիկ կարծեց, բայց որ գրական արժեքն զուրկ ալ չէր։

Ինչ որ նախ մերոնք՝ իրենց նախկին սխալներուն կոնակ դարձընելով՝ ստացան, Հայությանն հանդեպ Ռուսիոյ վերաբերմունքին բարյացակամ դառնալն էր։ Թրքահայ ու ռուսահայ բոլոր կարևոր գործիչները վերջապես կըմբռնեին թե Արևմտյան Եվրոպայի վրա հույս դնելով Ռուսին և Թուրքին դեմ միանգամայն պայքար մղելը հիմարություն էր, թե Ռուսը մեզի դեմ ունենալով՝ ոչինչ կրնայինք ձեռք ձգել Թրքահայաստանի համար, բացի աղետե, թե Թուրք կառավարութենեն կարելի էր Թրքահայոց կացության որոշ բարելավում մը ստանալ, եթե Ռուսիա Եվրոպական մյուս տերությանց հետ, բայց ինքը անոնց ի գլուխ, և հաստատ կամքով, այդ բարելավումը պահանջող ըլլար և կորզված հանձնառությանց կատարումին գլխավոր հսկող դառնար։ Ասիկա հայերուն հասկցնելու մեջ Զոհրապ, որ այդ մասին ինծի պես կմտածեր շատոնց ի վեր, արդյունավոր դեր կատարեց, խորհրդապահ, բայց ազդեցիկ գործունեությամբ մը։ Ան տարիներե ի վեր բարեկամական հարաբերություններ ուներ՝ իր փաստաբան՝ Պոլսո ռուս դեսպանատան բարձրագույն պաշտոնյաներուն հետ, մասնավորապես առաջին թարգ-

ման Պ. Անտրե Մանտելսթամի հետ, որ հայասեր մըն էր և այդ միջոցին, ինչպես անկից ի վեր, այնքան ձեռերով ապացուցած է իր սրտագին համակրությունը մեր դատին համար. այդ սերտ հարաբերությանց շնորհիվ Զոհրապ կարևոր բաժին մը ունեցավ ռուս դիվանագիտությունը հայկական դատին նպաստավոր դարձընելու համար կատարված աշխատանքներուն մեջ։

Ան այդ շրջանին ինծի ղրկած է շատ շահեկան նամակներ, պահանջելով սակայն, որ որևէ մեկուն չխոսիմ ատոնց մասին, որևէ մեկը ինձմե զատ չտեսնե զանոնք և կարդալե հետո այրեմ ի ներկայության իր փարիզաբնակ մեկ մոտիկ ազգականին ,որ զանոնք ինծի կբերեր։ Կատարած եմ իր պահանջը, խորապես ցավելով հանդերձ այդպիսի նամակներ չնչել ստիպված ըլլալուս համար։

Այս նամակին համար, որ կավարտեր Բարենորոգմանց ծրագրին ստորագրումը Բ. Դրան և Ռուսիո կողմե, Զոհրապ, այլևս վստահ նոր ու բարեբաստիկ շրջանի մը բացումին, ուրախությենե արբշիռ, որևէ պահանջ չէր դրած այրելու։ Նորեն ոչ մեկուն եմ ցուցուցած զայն. բայց պահած եմ խնամքով՝ պահվելու արժանի թղթերու ծրարրիս մեջ, ուր մեր ժամանակակից կյանքեն բավական բազմաթիվ էջեր կան։

Այդ շրջանին Զոհրապ գործեց նաև ուրիշ ձևով մը, որ դարձյալ լիովին գաղտնի մնաց. խմբագրած էր ֆրանսերեն գործ մը Թրքահայ հարցին վրա, գործ մը՝ ամբողջ տոքյումաններու վրա հեցած, և զոր գրելու համար իր փայլուն վիպագրի գրիչը մեկդի դրած էր և ձեռք առած իր հզոր փաստաբանի գրիչը, ջերմ հայրենասերի սրտի մը արյունին մեջ թաթխված. այդ գործին ձեռագիր ղրկեց ինծի, խնդրելով որ բացարձակ գաղտնապահությամբ վրաս առնեմ զայն տպագրել տալու և ցրվելու հոգը։

Գիրքը տպվեցավ և երևցավ La question armenienne a la lumiere des documents տիտղոսով, և Ազգային Պատվիրակությունը զայն ղրկեց ամբողջ եվրոպական ու ամերիկյան մամուլին. հեղինակը կներկայանար իբր ֆրանսացի մը՝ Marcel Leart անունով։ Իր փաստացի, հստակ, չափավոր, համոզկեր պարունակությամբ, և գրված թեզին ճշմարտությունը պայծառորեն ապացուցանող տոքյումաններով, այդ գիրքը, ուր հեղինակը Թրքահայ հարցին բանավոր լուծումը ոչ միայն արդարության անվիճելի պահանջ մը, ոչ միայն քաղաքակրթության ու խաղաղության մատուցվելիք գնահատելի ծառայություն մը, այլև նույնիսկ Թուրքիոյ հիմնական շահերուն նպաստավոր ըլլալը կփաստեր, լավագույն տպավորությունը գործեց Եվրոպայի մեջ ու մեծապես օգնեց Ազգ. Պատվիրակության ջանքերուն հաջողման։ Ոչ ոք գիտցավ թե գործին հեղինակը Զոհրապն էր, ոչ իսկ Պողոս Նուպար փաշան, որուն ըսի թե ազնիվ ֆրանսացի մըն էր այդ գիրքը հորինողը, մինչև որ բավական ատեն հատո՝ ինքն իսկ հեղինակը քանի մը օտար ու հայ մոտիկ բարեկամներու փսփսացած ըլլալով գաղտնիքը, ատիկա ծանոթ դարձավ հայկական ու հայասիրական որոշ, ոչ շատ լայն, շրջանակի մը մեջ։ Չեմ կարծեր, սակայն, որ Թուրքերը գիտցած ըլլան այդ գրքույկին հեղինակը Զոհրապն ըլլալը ինչպես և որոշ տեղեկություն ունեցած ըլլան բարենորոգմանց հարցին համար հայկական գործունեության մեջ անոր ունեցած մասնակցության վրա. գիտեին, որ ան «լավ հայ» է, կկասկածեին անկից, բայց անոր անհայտ արարքներուն անծանոթ էին։ Ան Վարդգեսի հետ Հալեպեն Տիարպեքիր տարվելու միջոցին, ամայի ու մութ անկյուն մը վատորեն սպանվեցավ գռեհիկ մարդասպանի մը ձեռքով։ Կարելի է սակայն ըսել թե ան աքսորվեցավ ու մահվան դատապարտվեցավ, ոչ այնքան՝ մյուս հայ մտավորականներուն պես՝ լավ հայու, Թունդ ազգասերի կամ հեղափոխականի համբավ ունենալուն համար, որքան իր մեջ գտնվող զգայուն ու անզուսպ մարդուն մեկ պոռթկումին պատճառավ. բոլոր մյուս մտավորականներուն, աշխարհական ու եկեղեցական ղեկավար դեմքերուն աքսորեն հետո, Զոհրապ գեռ Պոլիս էր, և կկարծվեր թե պիտի մնար հոն. բայց այդ ճարպուկ, ճարտար, նրբամիտ մարդը, մերթ անկարող ազնիվ հուզման մը պայթումն արգիլելու, ամենեն արի հանդգնությունները կունենար. ատենցմե մին, զոր ինք ունեցած է հայաջինջ եղեռնին սկսելեն հետո Թալաթի երեսին պոռալով իր զույրույթը, իր մահավճիռն արտասանել տված է դժոխածին ճիվաղապետին». Զոհրապ ջղագրգիռ ու հուզված վիճակ մը ուներ. կպատմե Ալպոյաճյան. իր ջղայնությունը և հուզումը ավելի կսաստկացնեին այն բազմաթիվ դիմումները, որ աքսորականներու ընտանիքներ ամեն օր իրեն կընեին, իբր մեպուս իր բարեխոսությունը և միջնորդությունը խնդրելով։ Ամեն օր իր ճամփան սպասող տասնյակ կիներու, ողորմուկ տղայոց և անձկալի ընտանիքներու շարունակական աղաչանքները ու պաղատանքները և հոգեկան այն վրդովմունքը, որ իր անձին իսկ վտանգված ըլլալու գիտակցութենեն կծագեր, զինքը մղեցին հանդգնության ու կատաղության։ Այս հոգեկան տրամադրության տակ, բոլորովին գրգռված, հուզված, իր բոլոր զայրույթը կարտահայտե օր մը Իթթիհատի ընդհ. քարտուղար Միհրաթ Շյուքրի պեյի և ներքին գործոց նախարար Թալեաթ պեյի և անոնցմե հաշիվ և բացատրություն կպահանջե հայոց նկատմամբ գործադրված այդ անսահման և անվախճան ոճիրներուն համար։

«Օր մը, կըսե, ապահով եղեք, որ հաշիվ պիտի պահանջվի ձեզմե և դուք չպիտի կարենաք արդարացնել ձեր արարքները։

«Թալեաթ պեյ հեգնանքով կհարցնե.

«— Ով պիտի պահանջե այդ հաշիվը։

«— Ես,— կպատասխանե Զոհրապ,— Խորհրդարանի մեջ իբր հայ մեպուս ձենե հաշիվ պիտի պահանջեմ։

«Այդ վայրկյանին իսկ վճռված էր իր մահը։

«Հետևյալ օրը (մայիս 20) դեբերբակալվեր Զոհրապ՝ Կարնո մեպուս Վարդգեսի հետ և ուղղակի կառախումբ կդրվեր, ղրկվելու համար դեպի Տիարպեքիր, որուն Գատերազմական ատյանեն իբր թե հարցաքննության կկանչվեին։ Իթթիհատը վճռած էր մեջտեղեն վերցնել զանոնք, հաշիվ պահանջող ոչ ոք ձգելու համար»[1]։

Չերքեզ Ահմետ. Զոհրապն ու Վարդգեսը սպանող հրեշը. թուրք պատմագետ Ահմետ Բեֆիքին սա սոսկալի բառերով ներկայացուցած է իր գործած ոճիրը. «... Հետո Զոհրապը ձեռք անցուցի. ոտքիս տակ առի, խաշոր քարով մը գլուխը ճզմեցի, ճզմեցի մինչև որ սառկեցավ»[2]։ Այդ սքանչելի գլուխը, որ պարծանքներեն մին էր հայ ցեղին, այս պըժգալի ձևովն է որ իր կյանքը կորսնցուց. ի հավիտենական ամոթ այդպիսի ոճիր մը գործել տվող վայրենի կառավարության։

Քաղաքակիրթ երկրի մը մեջ, կառավարությունը, նույնիսկ եթե ծանոթ դառնար Զոհրապի մը իր ցեղին շահերը պաշտպանող գործիչի արարքներուն. պիտի շատանար զայն դատարանի առջև հանելով, և դատարանը շատ-շատ ատեն մը բանտարկության պիտի դատապարտեր զայն իբր Տերության շահերուն դեմ գրիչով ու խոսքով գործող անձ մը. բայց Զոհրապ իր կուռ ու ճարտար պերճախոսությամբ թերևս նույնիսկ պիտի համոզեր դատավորները, թե ինքը ընելով ինչ որ ըրած է՝ թե իր ցեղին իրավունքներուն, թե արդարության սկզբունքին և թե Տերության պատվույն ու լավ հասկցված շահերուն ծառայելու հավատքն ունեցած է. և հավանորեն ազատ պիտի արձակվեր։

Չկա հայ, որ չգիտնա Զոհրապի անունը, և չսիրեն զայն իբր մեծ գրագետներեն մին։ Չկա հայ, որ չգիտնա թե ան մեծագույն փաստաբաններեն մին եղավ զոր մեր ցեղն արտադրած ըլլա։ Ամենքը գիտեն թե ան ազգասեր մըն էր, թե Միացյալ Ընկերության հիմնադիրներեն և ղեկավար ուժերեն մին, Հայոց Երեսփոխանական Ժողովի ամենեն կա-

[1] Այպոյանյան. «Անհետացող դեմքեր», Գրիգոր Զոհրապ, իր կյանքն ու գործը։ Գոլիս, 1919։

[2] Նույն տեղը։

ռող և ուժեղ անդամներեն մին եղավ և հետո՝ օսմանյան Խորհրդարանին մեջ իբր հայ երեսփոխան կարևոր դեր կատարեց. բայց ինչ որ ան ըրած է ստվերի մեջ հայկական հարցին համար, քիչ հայեր գիտեն։ Պետք է բոլոր հայերը գիտնան Զոհրապի կյանքին այդ գիծը։ Նամակը, զոր կհրատարակեմ, անոր ազգասեր գործիչի տաք սիրտը և հստակ ու գրական միտքը ցույց կուտա պայծառորեն։ Ու կարժե, որ օր մը իր ֆրանսերեն գրքույկը հայերեն թարգմանվի ու մաս կազմե իր գործերու ամբողջական հավաքածուին. հայկական հարցին վրա հայերու կողմե գրված գործերուն լավագույններեն մին է այդ գիրքը։

Օսմանյան սահմանադրության վերահաստատումեն առաջ, Զոհրապ գրեթե ամեն տարի կուգար ամիս մը Փարիզ անցընել։ Յուրաքանչյուր անգամ, հաճախ իրար կտեսնեինք, ու սրճարանի մը անկյունը քաշված՝ երկար խոսակցություններ կունենայինք։ Պոլիս, ուր երկուքս ալ ծնած ենք, ես իրեն հետ մտերմական հարաբերություն չեմ ունեցած. ան գրական երեց ընկեր մըն էր, որուն համար մեծ հարգանք և հիացում ունեի, ան ինծի ազնիվ համակրություն մը ցույց կուտար. զինք ճանչցած էի խմբագրատան մեջ Արփիարի, Շահնազարի ու Բաշալյանի Հայրենիքին, որուն ամենեն սրտագին ու ամենեն տաղանդավոր աշխատակիցներեն մեկն էր առաջին շրջանին, հոն միայն կտեսնեի զինքը։

Հետո, ան Մասիս երկշաբաթաթերթը սկսավ հրատարակել Հրանտ Ասատուրի և Տիգրան Կամսարականի հետ, և ես կաշխատակցեի թե Հայրենիքին ու թե Մասիսին։ Այդ միջոցին գրաքննությունը արգիլած էր ոտանավոր գրության հրատարակումը— որովհետև լրտեսներ այնպես հասկցուցած էին Սուլթանին, թե ոտանավորով կարելի է ավելի դյուրավ վտանգավոր գաղափարներ խորհրդավոր ձևով մը արտահայտել. ատիկա պատճառ եղավ արձակ քերթվածներու նորամուտ սեռին զարգացման, ու ես մանավանդ՝ ոտանավոր չկարենալ հրատարակելու ցավն ատով կսփոփեի, անգամ մըն ալ իմ մեկ ոտանավորս արձակի ձևով հրատարակեցինք... Բայց Զոհրապ, որ իմ ոտանավորներս կսիրեր. համառ ու ճարպիկ դիմումները ըրավ կառավարության մոտ և տաղաչափյալ բանաստեղծության հրատարակման արտոնությունը ձեռք բերավ։ Կհիշեմ դեռ իր անուշ դեմքը՝ հաղթական ժպիտով մը լուսավորված՝ երբ այդ ավետիսը տվավ ինծի. «Ազատեցի քեզ, կըսեր, ալ Մուսադ կրնա հանգիստ սրտով քեզ ներշնչել»։ Եվ իր շնորհիվ Մասիսը ինչպես ուրիշ թերթեր վերսկսան ոտանավորներ հրատարակել։ Այս բոլորին հակառակ սակայն մեր միջև հարաբերությունները գրական էին լոկ, տարեց վարպետի մը և խանդավառ նորեկի մը միջև գոյություն ունեցող հարաբերության նկարագիրը կպահպանեին։ Այդ գրական հարաբերու-

թյունները վերջերը պզտիկ ամպով մը բոպե մը սքողվեցան։ Զոհրապ, որ աղվոր ու շփացած կնոջ քմահաճ փոփոխականություններ ու ջղային նեղսրտության նոպաներ ուներ, հանկարծ օր մը ելավ Արեւելքին մեջ ու հետո իր Մասիսին մեջ ինծի դեմ հոդված մը գրեց, Թեթեռս Պերպերյանի և Յուրյուճյանի հետ ունեցած գրական բանավեճերուս առթիվ։ Իր գրությունը փայլուն էր, սրամիտ. ինչպես միշտ, բայց անճիշդ և անարդար։ Պատասխանելը շատ դյուրին էր։ Պատասխանը գրեցի, և պիտի հրատարակեի, երբ Տեմիրճիպաշյան, որ Կեդրոնական մեջ գլխավոր ուսուցիչներես մին եղած էր, և որուն ցույց տված էի պատասխանս, խորհուրդ տվավ չհրատարակել։ Այնքան իր գրածը անհիմ ու անճիշդ է, ըսավ, որ օր մը ինք պիտի զղջա և դարմանե»։ Հետեւեցա վարպետիս խորհուրդին, և պատասխանս պատռեցի։ Եվ արդարեվ, ամիսներ հետո, երբ լույս տեսավ Թուղթի Փաք վիպակս, Զոհրապ Հայրենիքին մեջ ջերմ գնահատումի սրտաբուխ էջ մը հրատարակեց, ինչ որ վերանորոգեց մեր գրական սիրալիր հարաբերությունները։ Ատենք քիչ հետո բոլորովին խզվեցան՝ բավական երկար առենքին համար՝ երբ Զոհրապ հանկարծ իր Մասիսին մեջ ծանր հոդված մը հրատարակեց Հայրենիքին դեմ։ Իր բարեկամներուն և աշխատակիցներուն դեմ այդ անակնկալ և չափազուրկ հարձակողականը զայրացուց զիս, որ թեև ես անձնապես ատոր մեջ խնդրո առարկա չեի բնավ, զգացած վրդովմունքս ու սրտմտությունս կծու բառերով արտահայտող նամակ մը ուղղեցի իրեն. ինք ավելի ծանր ձեւով պատասխանեց իմ վարմունքիս. ես ալ իրեն հետ որևէ կապ չունեցա մինչև որ Փարիզ գալես քանի մը տարի հետո իրար նորեն գտանք։ Ինքն իսկ ուզած էր, որ այդ անցյալ բանակռվական ամպը փարատեր իր և իմ ինչպես և Բաշալյանի միջև. Տիգրան Կամսարականն է որ Բաշալյանը և զիս Զոհրապին հետ հանդիպցուց՝ փարիզյան ճաշարանի մը մեջ, և այդ հանդիպումին մեջ վերստին գտանք մեր Զոհրապը՝ ավելի քան երբեք սրտագին՝ սիրալիր։ Անկեց հետո իմ հարաբերություններս իրեն հետ եղան հետզհետե ավելի ջերմորեն բարեկամական, վերջերը ավելի քան բարեկամական, կրնանք ըսել մը հարաբերությունները շատ սիրված անդրանիկի մը հետ։ Մեր տեսակցությունները երբեմն ժամեր կտևեին. օրվան բոլոր կարևոր հարցերուն վրա՝ համաշխարհային թե ազգային՝ գաղափար կփոխանակեինք. կխոսեինք մանավանդ գրականության վրա. մեր սիրած հեղինակներուն մասին մեր տպավորությունները կհայտնեինք իրարու։ Անմոռանալիորեն քաղցր հիշատակ մը պահած եմ այդ հանդիպումներեն։ Ինք կգանգատեր իր Պոլսո «մինակությենեն». «Մտերիմներս, գաղափարակիցներս մեծ մասամբ ելան գացին, կըսեր. լավ կապրիմ, հարուստի պես կապրիմ, բայց

այն Հայրենիք—Մասիսի շրջանին մեր խումբը չունինք այլևս, մեր այն օրերուն մտավորական ջերմ ու եռուն կյանքը չունինք»։

Ես կմղեի զինքը ձգել Պոլիսը ու գալ Փարիզ։ Իրեն պես հզոր ուղեղ մը Փարիզի մեջ ալ պիտի հաջողեր իրը փաստաբան, ու պիտի կարենար ավելի ազատորեն ու լայնորեն իր գրական կարողություններն ի հայտ բերել։ Ան պիտի կարենար մանավանդ մեծ դեր կատարել մեր ազգային դատին նվիրված գործունեության մեջ։ Ան հրաբխային եռանդ մը կմիացներ դրական ոգիի, հաշվելու, տրամաբանելու կարողության։ Ան ի ծնե «ըմբոստ» մըն էր, իր վայելասեր եսամոլի երևույթին տակ ջերմ ազգասեր մը, ու նաև դիվանագետ ճապուկ միտք մը և թուրք ժողովուրդին ու կառավարության ինչպես և Եվրոպայի քաղաքական կացության լավ ծանոթ էր։ Ան, ազատ ու մեծ երկրի մը մեջ, իր բոլոր կարողությունները լիովին դնելով ի սպաս մեր ազգային դատին, առաջնակարգ գործ կրնար կատարել։ Թերևս իսկ ան հաջողեր դյուրացնել, ինք երբեք որևէ կուսակցության հարած չըլլալով, մեր կուսակցությանց միջև միակ ծրագրի մը շուրջ համաձայնություն մը, որ այնքան անհրաժեշտ էր և զոր հակառակ այնքան ջանքերու չէինք կրցած իրականացնել։ Այսպիսի հրավեր մը խորապես կզգացվեր ինք, ու կըսեր անկեղծ շեշտով մը թե իրեն համար ալ ատիկա շատ սիրելի բան մը պիտի ըլլար, բայց կվարաներ. կհետաձգեր. «Կեցիր, կեցիր, կավելցներ, մեծ Ֆոլվո մը զարնեմ, ան ատենը կուգամ»։ Այսինքն թե խոշոր գործ մը կուզեր հաջողցնել, և կարևոր գումար մը իրեն ապահոված, նյութական կացությունը ամուր հիմքերու վրա դրած, գալ այդպիսի կյանքի մը մեջ նետվիլ... Իր տկար կողմը այն էր, որ վարժված էր շատ ճոխ ապրելու, և զրկանքի կյանք մը՝ ինչպես եղավ ազգային դատին նվիրվողներու գրեթե ամենքին կյանքը, կոսկացներ զինքը... Այդ Ֆոլվոն երբեք չեկավ իր բաղձացած աստիճանով, և Զոհրապ միշտ դարձավ Պոլիս. հաջորդ տարին նորեն Փարիզ գալով իր գանգատները ավելի ևս սուր շեշտով կրկնելու համար։

Համիտյան Բեժիմին վերջին տարին, նորեն եկած էր Փարիզ. այս անգամ շատ հոգնած, հիվանդ, գրեթե ջղագար։ Կասկածելի դարձած էր Պոլիս, իրեն դեմ ամբաստանություններ եղած էին, փառաքանությունն իսկ ի գործ դնել արգիլած էին իրեն։ Շվարած էր, Փարիզ մնալ կուզեր, բայց միջոց չուներ. Պոլիս դառնալու կվախնար։ Այդ օրերուն, օր մը առի զինքը տարի Փարիզի մոտիկ Մեուտոնի անտառը, ուր զմայլելի արևոտ օրով մը երկար պտույտ մը ըրինք՝ հարյուր բանի վրա խոսակցելով. իրիկվան իջանք Պելվիվ, ուր ֆրանսացի մտերիմ մեկ բարեկամիս մոտ տարի զինքը, և միասին ճաշեցինք. ճաշեն հետո, մութին, երբեք

իշանք մինչև Պելվիվի փոքր Թերասը, ուրկից Փարիզը գրեթե ամբողջ
կերևա հեռուն իր վեհափառ գեղեցկությանը մեջ փռված. տուներու ան-
Բիվ լույսերը կծակծկեին մռայլ համայնապատկերը, որ մեր առջև կտա-
բածվեր։ Երազուն դիտելե հետո այդ տեսարանը, «Ով գիտե, ըսավ
Զոհրապ, ինչքան ցավեր կան կուտակված այդ կանթեղներուն լուսա-
վորած յուրաքանչյուր տան մեջ»,— բայց ինչո՞ւ ենթադրել, հարեց
Ֆրանսացի բարեկամս, որ ցավեր կան կուտակված այդ տուներուն մեջ,
թերևս, սիրո, ուրախության տեսարաններու վրա է որ կփայլին այդ լույ-
սերը...»։ Մին հզոր ու երջանիկ ազգի մը մեկ զավակին պես կտեսներ
իրերը, մյուսը՝ դժբախտ ու տկար ազգի մը...

Եվ օր մըն ալ օսմանյան սահմանադրության հռչակման լուրը
եկավ։ Ես շատ տխրեցա, որևէ վստահություն չունենալով Ժեռն Թուրքե-
ռուն վրա, և գիտնալով որ այդ սահմանադրությունը մեր հայկական
հարցին թաղումը պիտի ըլլար։ Ան հուսալից էր. «Նոր մարդիկ կան
թերևս անոնց մեջ, կսեր, պետք է քաջալերել զանոնք, օգնել անոնց».
և իսկույն մեկնեցավ Պոլիս։

Այնտեղեն խանդավառ նամակներ գրեց ինծի։ «Նոր» Թուրքերը
իրապես կային, տեսեր, շոշափեր, մոտեն ճանչցեր ու գնահատեր էր
զանոնք։ Կպնդեր, որ անպատճառ Պոլիս դառնայի, ուր՝ ըստ իրեն՝ ընե-
լիք շատ բան պիտի ունենայի։ Կմղեր զիս Անահիտի մեջ,— ուր ժեռն
Թյուրքերու և դաշնակցության միջև Փարիզ կնքված համաձայնությու-
նը խստորեն քննադատող քրոնիկ մը հրատարակած էի քանի մը ամիս
առաջ, քրոնիկ, զոր դեպքերը հետո այնքան դառնորեն արդարացուցին,—
համակրական բան մը գրեի նոր ռեժիմի մասին։ Համոզումներս հիմ-
նական փոփոխություն չկրեցին իր նամակներեն, բայց որովհետև զին-
քը շատ կհարգեի, մտածեցի որ թերևս որոշ չափով իրավունք ուներ, և
գնացի Ազատության հաղթանակը հոդվածս և Ազատության օրհներգը
արձակ քերթվածս, որոնց առաջինը Անահիտի իբր հավելված հրատա-
րակվեցավ և երկրորդը պոլսական թերթի մը մեջ։ Նորեն՝ հոդվածիս
մեջ, գնահատելով հանդերձ Թուրք հեղափոխականներու կատարած գոր-
ծը, որուն ռահվիրաները հայերն եղած էին, հույս կհայտնեի, որ այս
նոր ռեժիմին ղեկավարները պիտի ապացուցանեին նաև իրենց ազա-
տամտությունն ու արդարասիրությունը՝ 61-րդ հոդվածը լրջորեն գոր-
ծադրելով, ինչ որ հեգնական քննադատություններ հարույց՝ նույնիսկ
Հարություն Մոստիչյանի պես խոհական ու չափավոր ազգասերներու
լեղդմե, որոնք տարօրինակ կգտնեին ու Թրքահայաստանի համար մաս-
նավոր բարենորոգմանց խոսքը կընեի դեռ երբ ամբողջ օսմանյան Տի-
րությունը հիմնովին պիտի բարենորոգվեր... Ուզեցի նույնիսկ երթալ

Պոլիս, գեթ մեկ երկու ամսվան համար,— նորեն Փարիզ դառնալու հաս-
տատ որոշմամբ,— մոտեն տեսնելու համար այդ նոր Ռեժիմը, ու մա-
նավանդ վերստին տեսնելու համար ծննդավայրս, հին բարեկամներս,
և իմ սիրելի երկրորդ մայրս, որ դեռ ողջ էր և զոր կարոտցած էի։ Առանց
Զոհրապին, ոչ այդ երկու գրությունները հորինած կըլլայի, ոչ Պոլիս
գացած։ Պոլիս ամեն ինչ զիս վերահաստատեց իմ համոզումներուս մեջ։
Այդ մեկ ամսվան միջոցին ուր հոն մնացի, Պեշիկթաշ՝ ուր կբնակեի,
Թուրք ամբոխը երիտասարդ հույն մը բռնելով ոստիկանատուն տարավ
ու հոն ոստիկանության աչքին տակ կտոր-կտոր ըրավ, որովհետև այրի
թրքուհիի մը հետ համարձակեր էր սիրային հարաբերություն ունենալ...
բոլոր բայա ցեղերու ներկայացուցիչներեն բաղկացած պատգամավո-
րություն մը գնաց Մեծ Եպարքոսին, խնդրելու, որ պատժվին այդ մար-
դասպանները. և սակայն ոչ ոք պատժվեցավ... Իրիկուն մը, որ Ատոմ
Յարճանյանին տունը հյուր էի, մեզի ըսին թե հետևյալ օրը խոհեմու-
թյուն պիտի ըլլար չիջնել Պոլիս, վասնզի մոլեռանդ մահմեդական-
ները մտադիր էին ջարդ մը փորձել։ Ատոմ և ես միասին իջանք Պոլիս։
Փակ էին խանութները. Սթամպոլի փողոցները գրեթե ամայի էին. սա-
կավաթիվ անցորդներուն դեմքերը՝ մռայլ ու սպառնագին, կամ անձ-
կոտ։ Եվ ահա տեսանք հանկարծ ոհմակ մը ջարդարարի երախով մար-
դերու, որ կանանչ փաթթոցավոր դաժան դեմքով մոլլա մը գահավորա-
կի մը վրա նստեցուցած՝ զայն ուսերնուն վրա առած և ամեն կողմե
պաշարած, ոռնոցներ արձակելով փողոցե մը կանցնեին... Ջարդը տե-
ղի չունեցավ, բայց անոր շունչը կտիրեր քաղաքին մեջ, անոր ոգին,
կենդանի, համառ, դարանակալ կսպասեր մթնոլորտին մեջ։ Զոհրապ
առաջին օրերու խանդավառությունը չուներ այլևս, բայց կմտածեր
միշտ, որ ուրիշ բան չկար ընելիք բացի կարելի եղած չափով օգտվելե
իրերու նոր վիճակեն որ լավագույն էր քան երեկվանը։ Հուսախաբ էր մա-
նավանդ Հայերեն. ուզած էր օսմանյան Սահմանադրական Ակումբ մը
կազմել՝ հայ չափավոր ազատամիտ պուրժուա տարրերով. զենք բնավ
չէին խրախուսած։ Ուզած էր թերթ մը հիմնել, միջոցները չէր գտած։
Կուզեր և իր իրավունքն էր, ու հայոց շահն ալ այդ կպահանջեր— օս-
մանյան խորհրդարանը մտնել իբր մեպուս. հայ պուրժուաները, որոնց
դեմ իր գրիչը այնքան կծու եղած էր հաճախ, ոչ համակրություն ունեին
իրեն համար, ոչ վստահություն իր վրա. անոնց մեջ կային իսկ որ զին-
քը կասկածելի, վտանգավոր կնկատեին, իբր շահամոլ, հեղհեղուկ, ան-
նկարագիր մարդ։ Այդ շրջանակի մարդոցմե ոմանց հետ վեճեր ունեցած
եմ այդ օրերուն։ Ինծի համար Զոհրապ վայելասեր, քմահաճ, երկրոր-

դական բաներու մեջ՝ փոքրոխական մարդ էր, բայց Թուրքին մեջ Թունդ ազգասեր, և աղնիվ մարդ, ու շատ կարող միտք, անոր պես երիտասարդ մը օսմ. Խորհրդարանին մեջ ունենալը հայոց համար բարիք մըն էր։ Հայ պուրժուաներու տնտեսական կուսակցությունց վրա դաշնակցականներուն և մյուս հեղափոխական կուսակցությունց վրա կրթելու՝ օսմ. Խորհրդարանը մտնելու համար, ուր հետո ամենքը տեսան, թե ան հայ ցեղին շահերը ամենեն ավելի ուժգնորեն պաշտպանող, իր տաղանդով անոր ամենեն ավելի պատիվ բերող հայ անդամը եղավ։ Այդ օրերուն, Զոհրապ ինծի տվավ իր բարեկամության մեկ ուրիշ սիրուն ապացույցը, զոր հոս չեմ կրնար չհիշել։ Այդ միջոցին, նոր կաթողիկոսի ընտրության համար թրքահայ պատգամավորներ ընտրելու վրա էին. Բաբկեն սրբազանի թեկնածությամբ, Գուրյան սրբազան, որ պատրիարքական տեղապահ էր, և Խորխորանյան սրբազան, հաճեցան զիս նշանակել տալ պատգամավոր Շապին-Գարահիսարի և Մուշի. երբ ասիկա հաղորդեցի Զոհրապին (Ազգային Ժողովի մեջ էր), հայտնելով բուռն ուրախություն որ այդ մեծ առիթով՝ շնորհիվ իմ երեք եկեղեցական բարեկամներուս՝ Հայաստանը տեսնելու բախտը պիտի ունենայի, Զոհրապ միանգամայն հրճվանքի ու զայրույթի պայթում մը ունեցավ. «Ատանց քեզի բան մը հայտնելու, ըսավ, ես Ազգային Ժողովի աղաներուն առաջարկեցի, որ քեզ ընտրեն Իբր Գոլոս պատգամավորներեն մին. պատասխանեցի թե՝ «Մենք ալ զայն կհարգենք, բայց դրամ չունի, մենք լավագույն է, որ ընտրենք այնպիսի անձեր, որ իրենց դրամով երթան էջմիածին...»։ Եղբայր, կպտուր, ե՞րբ մարդ պիտի ըլլանք, այս դարուս ինչպե՞ս կարելի է դեռ այսպես մտածել...»։ Եվ արդարև Ազգ. ժողովը աշխարհական պատգամավոր ընտրեց Պ. Իփրանոսյանը, Պ. Թողոլը փալյանը և Պ. Գորյանը, լավ հայեր. որ սակայն բերանին մեկ անգամ չբացին էջմիածնա եկեղեցական ժողովին ամբողջ տեղությանը։

Կովկասեն ես ուղղակի Փարիզ դարձա, ուր մնալ ու իմ հասկցած ձևով մեր ազգին համար աշխատանքը շարունակել ավելի քան երբեք որոշած էի Պոլիս անցուցած մեկ ամիսես հետո։ Սահմանադրական բեմին այդ շրջանին, Զոհրապ մեկ քանի անգամ նորեն եկավ Փարիզ։ Իրիկուն մը էակար Շահենի (որուն նկարչական գործին հիացողն էր) տանը մեջ, հանդուցյալ Ռափայել Մարկոսյան և ինքը իրարու հանդիպեցան։ Զոհրապ հոն մեջտեղ նետեց սիրուն գաղափար մը, այն է որ Մարկոսյան գլուխ անցներ հայ ուսանողներու համար մասնավոր տուն մը հաստատելու ձեռնարկի մը, տուն մը, ուր անոնք մեկտեղ ապրեին, ամանագին պայմաններով, հսկողության տակ փորձառու և ձեռնհաս հայ տեսուչի մը, որ անոնց հայկական կրթությունն ալ զարգացնելու հոգ տաներ։ Մարկոսյան խանդավառվեցավ, և խոստացավ 10,000 ֆր. նվիրել, եթե ուրիշներ ալ միանային իրեն։ Զոհրապ Պոլսեն հետապընդեց այդ ծրագիրը, որուն ես ալ կրցածիս չափ ուժ կուտայի. ամբողջ ծրագրի մը խմբագրելով զբաղեց ինծի, որ ներկայացնեմ զայն Մարկոսյանին, ծրագիր, ուր իր առաջին գաղափարը ավելի ընդարձակած էր։ Ոչ աք Մարկոսյանի 10000-ին վրա գումար մը ուզեց ավելցնել, և այդ ծրագիրը մնաց չգործադրված։ Բայց թերևս այդ գաղափարն է, որ Մարկոսյանի մտքին մեջ արմատանալով, հետո իրականացավ Մարկոսյան ֆոնտի ձևին տակ. իսկ Զոհրապի բուն իսկ թելադրած գաղափարը՝ շատ ավելի մեծ սահմանի մը մեջ ահա իրականացավ Պողոս Նուպար փաշայի նույն ոգվով հղացած և կենդանությանն իսկ մարմնացուցած Հայ Ուսանողական Տան հիմնարկությամբ։

Ատանայի կոտորածեն հետո երբ Փարիզ տեսա զինքը, հարցուցի թե հիմա ինչ կմտածեր թուրք սահմանադրական բեժիմին մասին. ժպտեցավ տխրորեն. «Թուրքերուն մեջ, ըսավ. մինչև ցարգ կհավատամ, կան իրապես ազատամիտներ, բայց քիչ են, զանգվածը ահավորապես տգետ է և մոլեռանդ. իսկ մերիններուն մեջ ալ խենթեր կան։ Այդ խռովահույզ երկրին մեջ. մշտապես խռովյալ տարր մը եղեր ենք հիմա։ Անոնց համար ջարգը բնական ու սովորական բան մըն է, իսկ մեր խենթերը ջարդը հրավիրելու. պայթեցնելու համար ամեն ինչ կրնեն»։ Խորապես ազդված էր սակայն Կիլիկիո վրա խուժած ահավոր աղետեն. «Մարդու մ'ըսեր, կավիլցներ, բայց Պապիկյանին համբավավոր տեղեկագիրը ես եմ խմբագրած»։ Զոհրապին կտրուկ «ես եմ խմբագրած»-ը կնշանակեր թե տեղեկագիրը զոր գրած էր այն լուրջ, պարկեշտ և անվեհեր հայը որ Պապիկյանն էր և որ այդ անվեհերության զոհ գնաց, Զոհրապ առած, իր մեծ փաստաբանի ճաքտար մեթոդներով ու մեծ գրագետի կուռ ոճով վերամշակած. զոհրապացուցած էր։ Եվ ամեն օք կհիշեն այն հանդուգն ու ճարպիկ ճառը, զոր Ատանայի կոտորածին նվիրված հարցապնդման օրը, Զոհրապ արտասանեց օսմ. Խորհրդարանին մեջ։

Պալքանյան պատերազմներու միջոցին, Զոհրապ, որ մինչև այն ատեն. հայկական դատին համար մղված գործունեության շատ քիչ մասնակցած էր (թերևս հավատք չունենալուն համար). ստքավ գլխով (թեև գաղտնի) այդ շրջանին մեծ հույսեր ներշնչող հանգամանքներեն և Ազգ. Պատվիրակության նախագահ Պողոս Նուպարի և անոր գործակիցներուն եռանգուն ու կսրովի ջանքերեն խանդավառված, ինքնաբեր ու կարևոր աշխատակցություն մը բերավ այդ գործին, ինչպես ցույց տվի հոդվածիս սկիզբը, և ինչ որ ցնցվի այնքան ոգևորությամբ գրր-

ված իր նամակին մեջ, զոր կհրատարակեմ ստորև։ Այդ օրերուն (1913) է որ ան ունեցավ նաև այդ տողերը գրողին գրական ու հանրային գործունեության հորիզոնը սարքելու վեհանձն գաղափարը. եթե վերոհիշյալ նամակին վերջին էջը չեմ կրնար հրատարակել. պատճառն այն է, որ իր բարեկամությունը ինծի համար, հոտ՝ ինչպես և այդ օրերուն գրած ուրիշ նամակներու մեջ, ծայրահեղ ազնվությամբ ու ներողամտությամբ լի է։ Այդ առթիվ անգամ մը ևս տեսա ես թե այդ բուռն, կրքոտ, քմահաճ մարդուն մեջ ինչպիսի խոր զգացող սիրտ մը, ճշմարիտ հայու և ճշմարիտ բարեկամի սիրտ մը կար։

Կերևակայե՞ր, բարենորոգմանց ծրագրի մասին խանդավառ ու հավատավոր այդ նամակը գրած ատեն, թե տարի ու կես հետո, համաշխարհային զարհուրելի պատերազմ մը պիտի պայթեր, որ ոչ միայն պիտի հիմնահատակ քայքայեր Պալքանյան պատերազմներու վաղորդայնին մեր վաստրկած այդ բարենորոգմանց ծրագիրը, այլև պիտի հանգեր Թրքահայության փճացումին։

Վերջին անգամը որ տեսա զինքը Փարիզ, մեծ պատերազմեն երկու կամ երեք տարի առաջ էր։ Այդ շրջանի վերջին տեսակցությունը ունեցանք Փարիզի մոտ գյուղ մը, հետո միասին դարձանք Փարիզ, և կառքով իրեն ընկերացա մինչև իր պանդոկը. երբ հասանք պանդոկին առջև. ես թևերս բացի զինքը գրկելու և մնաս բարովի համբույրը իրեն տալու, ինչպես կնեինք ամեն անգամ երկար բաժանումե մը առաջ։ Դեմքը մոայլեցավ հանկարծ, հրեց-զիս, գլուխը անդին դարձուց, կառքին դռնակը ջղուտ շարժումով մը բացավ, ու առանց ետին նայելու՝ խենթի պես նետվեցավ դեպի պանդոկին դուռը, զիս ձգելով շվարած՝ կառքին մեջ որով պիտի շարունակեի երթալ մինչև տունս։ Հասկցա իսկույն իր այդ տարօրինակ վարմունքը թելադրող ներքին զգացումը, որ շատ տխուր էր, և սարսռացի. ինծի անգամ մը ըսած էր արդեն թե ամեն հեղ որ իր մեկ սիրելիեն կրաժնվի երկար ատենվան մը համար, սրտի անդիմադրելի սեղմում մը կունենա՝ մտածելով որ թերևս այլևս զայն պիտի չտեսնի և հրաժեշտի խոսքերն ու ժեստերը զինք անձկությամբ կլեցնեն...

Այս անգամուն, իր նախազգացումը ճիշտ էր, ահավորապես ճիշտ։ Այլևս չտեսանք զիրար։

Ինծի հաղորդած են, զինադադարի շրջանին, թե երբ պատերազմի հավանականությանց զրույցը սկսած է տարածվիլ ու զորանալ, Զոհրապ ըսեր է իր մտերիմներուն՝ «Վա՜յ հայ ժողովրդին, եթե համաեվրոպական պատերազմ ծագի. Թուրքերը՝ Իթթիհատեն ղեկավարված՝ անպատճառ կմիանան Գերմանիոյ, և Թրքահայության համար մահացու վտանգ կա այն ատեն»։ Ինք գիտեր, մոտեն ճանչնալով Իթթիհատական Թուրքերը, թե անոնք իրենց մտքին մեջ ունեին ոչ Թուրք տարրերը ճզմելու տիրական գաղափարը, գիտեր թե բարենորոգմանց ծրագրին ստացմամբ հայ գործիչներու ունեցած հաջողությունը, զոր Թուրքիոյ համար պարտություն մը և նվաստացում մը կնկատեին, կատղեցուցած էր զանոնք, և թե այդ ծրագիրը կրնար օգուտ տալ հայության՝ ու նույնիսկ օսմանյան պետության (ատոր միշտ համոզված կմնար) պայմանով, որ ընդհանուր խաղաղությունը շարունակեր և ամրանար, եվրոպական տերությունները բուռն վեճեր ու պատակտումներ չունենային, և Թուրքիոյ վրա հսկող Եվրոպա մը, ու մանավանդ Ռուսիա մը, մնար՝ զորեղ, հմայքոտ, ազդեցիկ։ Պատերազմը պայթեցավ, Թուրքը մտավ անոր մեջ. ու մեր բոլոր Զոհրապները գացին կորչիլ արհավիրքի ճամբուն մեջ, և «Վա՜յ հայ ժողովրդին» մարգարեությունը իմ խեղճ բարեկամիս երևակայածեն ալ ավելի սոսկալի կերպով իրականացավ։

* * *

Բանաստեղծ մը կար այդ տարօրինապես բարդ ու հզոր մարդուն մեջ։ Իր մեկ անտիպ կարևոր նամակին հրատարակման առթիվ գրված այս քանի մը էջերուն մեջ, ուր կոգեմ իր սիրելի թանկագին դեմքը և իրմե ունեցած հիշատակներս, չեմ հավակնիր այդ արտակարգ դեմքին ամբողջական կենդանագիրը տալ՝ նույնիսկ իր էական գծերուն մեջ։ Քանի մը հատոր կարելի է գրել այդպիսի մարդու մը՝ իբր մարդ, իբր գրագետ, իբր փաստաբան, իբր գործիչ հոգեկան ու մտավոր անձնավորությունն արտահայտելու համար։ Արշակ Ալեքսանճյանի Զոհրապի նվիրած գիրքը, զոր հրատարակեց անոր մահվընեն հինգ տարի հետո և որ շատ ավելի հաջող գործ մըն է, քան Չերազին նվիրվածը, Զոհրապի բազմաձև անձնավորության այդ գլխավոր գծերն արդեն իսկ ցույց կուտա ճշտությամբ, նրբությամբ, կենդանությամբ, ու մանրամասնությանց, վավերաթղթերու և մեջբերումներու ճոխ պաշարի մը վրա հիմնված։ Բայց այս հակիրճ նոթերուն մեջ, որ հիշատակի էջեր են, չեմ կրնար գեթ քանի մը տողով չմատնանշել ինչ որ Զոհրապի անձնավորության ամենեն կարևոր ու մնայուն տարրը եղավ, գրական մարդը, որուն մեջ բանաստեղծ մը կար։ Ան, ինչ որ ըրած է՝ հզորապես ըրած է. եղած է կյանքի ուժեղ վայելող, ուժեղ փաստաբան, ուժեղ հանրային գործիչ. բայց իր գործունեության ձևերեն այն զոր ամենեն ավելի հրայրքով. հեշտանքով կկատարեր, գրականությունն էր։ Կպաշտեր գրականությունը, մտավոր կյանքի երկրպագու էր. բանաստեղծը, գիտունը, ար-

վնասագէաը՝ գերագոյն մարդերն էին իրեն համար. և եթէ չունենար իր բարդ անձնավորութեան մէջ այն վայելուչներ ու գեղեցիկ գիծը՝ որ շատ դարեր էր և որ զինքը մղեց շատ հաճախ դրամ վատնելու հատկացնել իր ուժերուն մեծ մասը քան արքունական, կամ եթէ մեծ հարստութիւնը բաղդին բերմամբ իր ոգին ինկած ըլլար հանկարծ, ան իր բոլոր բոպենները և բովանդակ վատնակոր հոժարակամ պիտի ընծայեր գրական գործի մը, և պիտի արտադրեր շատ ավելի քնքաշակ և հզոր գործ մը քան ինչ որ կիթողուր Ը մը որ Փարիզ զինքը հանդիպցուցի Շիրվանզադէին ու միւսին քանի մը ծամ անցուցինը, Շիրվանզադէի իրեն ուղղած սիրուն խոսքերուն ան պատասխանեց՝ «Ես ամաչելու մրն եմ. գրականութիւնը շատ սիրելուս համար՝ պարապ ժամերուս մէջ քանի մը գրած եմ»։ Ամաչելու մը չէր, վարպետ մրն էր. հայ նորավեպին իշխանն էր, և կմնա մինչև այսօր. ինք է որ մեզի տուած է նորավեպեր որ Մոփասանի լավագոյններուն կհավասարին. իր մէջ Մոփասանի կտրուկ, հստակ, լիալիր ոճը և արագ, ուժեղ, համեղ պատմածքը կգտնենք՝ մերթ Տուռեական խանդաղատանքի մը խառնված։ Ու երբեմն բանաստեղծական, նոյնիսկ քնարերգական, քնքուշ ու կաթոգին շեշտ մը կանցնի հոն, որ հայկական է, իր արյունին ծնունդն է, և որ իրեն կուգա Ակնեն հոն։ Ան հարազատ զաւակ մրն էր Ակնա զմայլելի ժողովրդարանի սերած է։ Ան հարազատ զաւակ մրն էր Նոր Ակիան բանաստեղծներուն,— ինչպես հարազատ զաւակ մրն էր Նոր Ակիան բանաստեղծներուն,— ինչպես հարազատ զաւակ մրն էր Նոր Ակիան բանաստեղծներուն,— առհավական խորին ազդեցութիւններ, որոնց վրա իր ի բաներուն,— առհավական խորին ազդեցութիւններ, որոնց վրա իր ի ծնեն բերուստ, անդուսպ, գաղտուպատեր, ինքնատիպ անհատական խառնելիածքը ազդեցուցած էր Եվրոպական մշակոյթներին նախընտրաբար առանձնված ազատասիրական, ռազմավարական, հեղափոխական մտայնութեան և երազաշունչ էնդրանի, ուղղակի գրականութեան տարրեր։ Անշարժ, ան դուտ բանաստեղծ մը չէր, բանաստեղծ չէր՝ ամեն բանի առաջ, իր հատնավորներուն մէջ որ լավ շարադրված ու տաղաչափված են, խնամքով և կիրթ ոճանոցով գրված սիրուն էջեր կան. որ սակայն չեն հասանիր իր արձակ էջերուն զորութեանը, խորութեանը և կատարելութեանը։ Այդ արձակ էջերուն մէջ գիտորի ու հազիրանի, վերլուծողի և քննադատի, բարքերու և տիպարներու հզոր նկարչի ձիրքերն են որ կտիրապետեն. բայց անոնց վրա մերթ կաւելանի բանաստեղծի ջերմ ու թեթև թեավոր շունչ մը, դգայնական քնարերգականի երազանք մը, թուեղ թեթև թեավոր շունչ մը, դգայնական քնարերգականի երազանք մը, թուեղ ուրտի փղձկող հուզմունք մը։ Աստիկա չի տիրապետեր հոն, բանեցած

սթրիքնինին կդիմեր ազատելու համար իր հոգեկան ցավերեն. օ՜հ, շարատանջ գալարումները, որոնցմով իր մարմինը կպրկվեր ու կկծկվեր, ստգտանքները, որ իր անդամները կցնցեին ու ակռաները կափկափել կուտային, դժոխային հոգեվարքի մը այն բոլոր ցնորական շարժումները, ի՜նչպիսի ցուրտ մը կհոսեցնեին մեր սրտին մեջ և ի՜նչ սարսուռ մեր ոսկորներուն մեջ կսահեցնեին։ Բայց ահա հուզումեն տկարացած մեր ոսկորներուն մեջ կսահեցնեին։ Բայց ահա հուզումեն տկարացած ձեռքերը ծափեր կտեղային, և վերաբացված վարագույրին ետև կտեսնեինք Ադամյանը, որ ոտքի ելած, այդ վայրենական մահեն գունաթափ դեմքը ժպտով մը լուսավորելով, մատներուն ծայրովը համբույրներ կբաշխեր իր հիացողներու ամբոխին։

Ողբերգությունը, որ այսօր կատարվեցավ և որուն հանդիսատես եղավ անչափ խուռն բազմություն մը, որչափ մեծ արվեստագետին ներկայացումներեն ոչ մեկը ունեցած էր, այդ ողբերգությունը, որ ավելի վսեմ էր, քան կիր թագավորին անեծքը, ավելի տխուր, քան Տեզդեմոնայի ուռենվույն երգը, ավելի խոր, քան Համլետի մենախոսությունները, իրեն ոչ դերակատար այլ նյութ ուներ Ադամյանը, իրեն կրկնակ թատերաբեմ եկեղեցի մը և գերեզմանատուն մը, և դերասան՝ այն «մահերգակ մարդիկը, որ սև ունին ու խոժոռ դեմ», ու հեղինակը, այն խորախորհուրդ բանաստեղծը, որու ոսկրեղեն գրչեն արհավիրք ու աղջամուղջ կկաթի, մա՜հն էր։

Լույսերու և պսակներու ճոխ փթթումի մը մեջ, սպիտակ ուրվանման մոմերով շրջապատված, որ իրենց բոցեղեն ծխաշունչ գարգմանակը կհակեին, թավշապատ արծաթազարդ նուրբ ու փոքրիկ դագաղի մը կափարիչին տակ— ի՜նչպես նուրբ, աստված իմ, և ի՜նչքան փոքրիկ։ ծաղկատի աղջկան մը դագաղ կարծես,— Ադամյանը, կըսեին, կհանգչեր, ինչպես իր մեկ ներկայացումեն հետո, և փակված վարագույրի մը տեղ սև պատանքն էր, որ զայն ծածկեր մեր աչքեն։ Ու մինչ մահվան մռայլ երգերը թունդի կապույտ գալարներուն հետ կբարձրանային, մինչ կարմրած աչքերե արցունքներ կգլորեին և խեղդուկ հառաչներ սգավոր սրտերուն մորմոքը կմատնեին, խոլ երազով մը համակված, ես ակնկառույց դեպասեի այն վայրկյանին, ուր կարծեցյալ մեռելը կափարիչն ու պատանքը մեկդի նետելով դուրս պիտի հաներ իր հերարձակ գլուխը, և անգամ մը ևս արվեստական մահե մը գունաթափ իր դեմքը ժպտով մը ոգևորելով, մատներուն ծայրովը համբույրներ պիտի բաշխեր մեզի...

Ա՜հ, տեսանք, տեսանք այն վեհաճաճանչ դեմքը, զոր կլուսավորեր գմբեթարդ ճակատը, որու վրա զույգ ծաղկանց պես կբացվեին երկնանուշ խորահայաց աչքերը, և որ կշրջանակվեր առյուծի բաշի նման

խրոխտ ու մետաքսի պես փափուկ գանգրագեղ վարսերով, տեսանք այդ դեմքը Մահվան երկաթե ափին մեջ ճզմված, դեղին մեղրամոմի գույն առած, անհարթ ու կարծրաթել մորուքով մը կզակն ու այտերն աղտոտած, շրթունքը՝ գոգցես հավիտենական համբույրի մը մեջ սեղմված անշարժ, և աչքերը՝ կիսաբաց՝ արձակելով տարտամ նշույլ մը, որ դեռ երկնայվածք էր... Եվ ահա հանկարծ այդ դեմքն ու այդ մարմինը, և այդ ուղեղը, ուր հանճարը բունած էր, և այդ ճակատը, որ խորհուրդի տաճարի մը գմբեթն էր, և այդ աչքերը, որոնց մեջ ոչ միայն իր, այլև ամբողջ մարդկության հոգվույն խորագույն զգացումներն ու հզորագույն կիրքերը կբռնկեին, և այդ շրթները, որ մեր լեզվին ամենեն կորովի ու ամենեն քաղցրահնչյուն բառերը իրենց գերագույն ներուժությամբ կապրեցնեին, այդ բոլորը լաթի կտորի մը մեջ փաթթված մութ փոսի մը մեջ նետեցին, և ահա վարագույրը, բոլոր վերջին արարներուն վերջնապես վերջին վարագույրը, իջավ ծավալվեցավ անոր վրա, հողին սև, հողին խոնավ, հողին որդնոտ վարագույրը։ Խաղն ավարտված էր և ինծի թվեցավ հանկարծ, թե գոցված փոսին վրա, մահը, կանգնած հաղթական, չոր դեմքը հեգնական ծիծաղով մը վառած, դատարկ աչքերուն խոռոչներն ավերման լեղի հեշտությամբը լեցուն, կմախային մատներուն ծայրովը համբույրներ կբաշխեր մեզի...

* * *

Խե՜ղճ մեծ մարդ... դեռ երկու երեք ամիս առաջ ինծի կխոսեր Եվրոպա ընելիք ուղևորությանը վրա. «Կոկորդիս ցավերը անցան,— կըսեր,— երբ քիչ մըն ալ ուժ գա վրաս՝ մտադիր եմ ամառը Եվրոպա պտույտ մ'ընել և ձմեռը երթալ Մատերա անցընել»։ Ու կավելցներ.— «Բժիշկս խոստացավ, և հույս ունիմ, որ տարիե մը ձայնս նորեն կգտնեմ»։ Զինքը սրտապնդելու համար կըսեի.— «Ապահովապես, պարոն Ադամյան, երկու տարիեն ձեզ բեմի վրա կտեսնենք նորեն»։ «Աստուծով»,— կպատասխաներ անապատում ժպիտով մը։

* * *

Անոնք, որ բեմին վրա միայն տեսած էին Ադամյանը, ողբացին այսօր մեծ արվեստագետին կորուստը, բայց անոնք, որ զինքն իր ներքին կյանքին մեջ ալ ճանչցած էին, լացին նաև մարդուն վրա, որ այն-

չափ մեծ էր, որչափ արվեստագետը։ Ըսողներ եղած են, թե դերասանը զուրկ է անձնական հոգեբանութենե, թե ան լոկ հայելի մըն է, ուր կպատկերանան ուրիշներու դեմքերը, թե ան իր հատուկ զգացումը, ինքնուրույն կյանքը չունի, իր դերերուն կյանքն է, որ կապրի։ Ադամյանն ուներ իր սեփական անձնավորությունը, իր որոշ հոգեբանությունը, ուր իր խաղացած դերերեն յուրաքանչյուրը նուրբ, հզոր կամ վեհ տարր մը թողած էր, վասնզի իր ընտրած դերերը ամենեն բարձր պատկերացումներն էին մարդկային հոգվո ներքին տառամներուն,— բայց որ դերերեն զուրս ի հայտ կբերեր ուրույն նկարագիր մը, իրեն հատուկ կյանք մը, բարդ այլ ինքնատիպ ու մաքուր։ Եվ իր դերերուն գեղեցկագույններեն մին արդեն այն էր, զոր իր կյանքին մեջ իսկ կկատարեր, Գեղեցիկին ամբողջապես նվիրված իր զմայլելի կյանքին մեջ։ Այդ հատընտիր էակը, որ վարպետ մըն էր այն արվեստին մեջ, զոր— ըստ իս հանիրավի, երբ մեծ դերասաններու վրա է հարցը— «կեղծելու արվեստ» անվանած են, ամենեն անկեղծ մարդն էր իր սեսկական կյանքին մեջ, ինչպես որ խորապես անկեղծ էր բեմի վրա կատարած իր յուրաքանչյուր դերին մեջ։ Գույնով ու արտահայտությամբ վճիտ իր աչքերուն մեջեն իր գեղեցիկ հոգին հստակորեն կերևար։ Երբեք չեմ լսած իրմե խոսք մը, զոր շրթներն արտասանեին և սիրտը չստորագրեր։ Անմիջապես և ամբողջապես կըսեր՝ ինչ որ կխորհեր. դժգոհությունը երբեք չէր ծածկեր և գոհունակությունը հոժարակամ կհայտներ։ Դժգոհ կըլլար ամեն անգամ, որ լսեր ամբարտավան, ամբարիշտ կամ չարամիտ խոսք մը, կպահանջեր, որ համեստ, կրոնավոր, բարի ըլլայինք։ Դժգոհ կըլլար, երբ կտեսներ անիրավությունը, վատությունը, փոքրոգությունը, և այդ մոլությանց դեմ չէր խնայեր ծաղրը, զոր քիչ անգամ տեսած եմ իր բերանին մեջ, բայց որ սուր էր և խայթող՝ երբ ուզեր։ Դժգոհ կըլլար, երբ նյութապաշտ փիլիսոփայության, հոռետես գրականության, բնապաշտ վիպասանության ձգտումներ կտեսներ մեր մեջ. «Ինչո՞ւ,— կըսեր,— այդ երկրաքարշ մարդոց, ետևեն կերթաք, փոխանակ հետևելու լուսափայլ հավատացյալ մտքերու. ինչո՞ւ կյանքը կատեք և ձեր մանրադիտական աչքերով կջանաք սխալներ գտնել հսկա արարչության մեջ. ինչո՞ւ մեր լեզուն, որ ավելի կորով ունի քան փափկություն, որ ավելի ոսկոր ունի, քան ջիղ, կուզեք ճկել ֆրանսական արդի տեսակ մը անարյուն գրականության նրբության. ինչո՞ւ Փարիզի մոլության պատկերները կուզեք մեր մեջ տարածել. փոխանակ այդ Զոլաներուն, Մենտեսներուն, Պուրժեներուն, Տանթե, Կեոթե կարդացեք, Հյուկո, Լամարթին կարդացեք, Շեքսպիր, մանավանդ Շեքսպիր կարդացեք»։

Բայց գոհ կըլլար— և ի՞նչքան ուրախությամբ գոհունակությունը

կհայտներ քան դժգոհությունը— երբ կտեսներ իր շուրջ լարի զգացումներ, վեհ ձգտումներ, մեծության տենչ ու տաղանդ։ Ի՞նչ հրճվանքով կգնահատեր տաղանդի նույնիսկ կաթիլ մը։ Մեր արդի գրական շարժման կանոնավորապես կհետևեր, իրմե շատ ավելի պզտիկ մարդոց քով տեսնված անմիտ արհամարհանքը չուներ մեր նոր գրականության համար. հետին նորնկին մեջ իսկ երբ արժանիքի նշույլ մը գտներ, մատնանիշ կըներ ու կգովեր։ Իր կարծիքը երբեք չէր զլանար ոևէ գրության մասին, որ իրեն ներկայացվեր, դիտողություններ կըներ երբեմն, ու միշտ՝ քաջալերիչ խոսքեր։

Ադամյան համեստ էր, բայց իր համեստությունը, հեռու կեղծ ըլլալե, ա՛յն էր, զոր ունին ճշմարիտ մեծ մարդիկը։ «Գիտեմ,— կըսեր,— որ աննշան արվեստագետ մը չեմ, բայց մեծ ու կատարեալ արվեստագետ մը ըլլալու հավակնությունը չունիմ, պետք է միշտ աշխատիլ, միշտ սորվելու բան կա»։ Չէր թողուր երբեք որ իր ձեռը համբուրենք, հակառակ մեր բոլոր աղաչանքին. «Խնդրեմ, մի՛ ծերացնեք զիս»,— ըսավ օր մը ինծի։

Ոխակալ չէր։ Երբ հայ հրապարակագիր մը զինքը հրապարակավ նախատեց, հայոց մեծագույն դերասանը «օրինճի» անվանելով, երբ ուրիշ արարած մը թերթի մը մեջ ելավ գրեց, թե կոկորդի հիվանդությունը, որմե արդեն իսկ սկսած էր տառապիլ— կեղծված էր ու պատրվակ մըն էր Սիլլոդոսի բարենպատակ ցերեկույթին իր խաղացած կտորը չարտասանելու համար և թե բուն պատճառը այն էր, որ իրմե ձրի աշակցություն մը խնդրած էին, այդ զզվելի զրպարտության Ադամյան պատասխանեց մեմիայն իր բարեկամներուն, երկնելով սաղմոսերգուին խոսքը, «Սրբոմարթիմ զարհատարանս», և այնուհետև իր խոսակցությանց մեջ այդ մասին բան մը չասեցի։

Ադամյան հիվանդությունեն առաջ ջերմապես կփափագեր Եվրոպա երթալ և իր դերերը ներկայացնել արևմտյան մեծ ոստաններուն մեջ, մանավանդ Փարիզ ու Լոնդոն, բայց դրամ չուներ իրագործելու համար իր այդ ծրագիրը, որ այնքան պատվաբեր պիտի կարենար ըլլալ մեր ազգին։ Հիվանդությունը հայանվելեն հետո, ամիսներով փակվեցավ Պյոյուքտերե՝ իր փոքրիկ բնակարանին մեջ, նյութական նեղության ենթարկված։ Իր քանի մը մտերիմներեն և ազգականներեն զատ, ոչ ոք հետաքրքրվեցավ իրմով. մեր ընչեղ վաճառականներեն ոչ ոք մտքեն անցուց օգնել այդ մեծ հիվանդին, որուն կյանքը դեռ այնչափ հարկավոր էր մեր ազգին։ Կովկասցի իր հայ բարեկամներեն ոմանք բան մը ըրին իրեն համար, ոուսերն է, որ, վերջ ի վերջո, իմանալով իրենց Ադամյանին ցավագին վիճակը, փութացին իրենց հոգածությունը լրջորեն ցույց

տալ անոր, և օր մըն ալ լսեցինք, որ Ադամյան փոխադրվեր է Բերայի Ռուսաց հիվանդանոցը։ Այս լուրը որոշ ցնցում մը առաջ բերավ Պոլսո Հայության մեջ. առաջին օրերը գանվեցան հայեր, որ գացին իրեն հիվանդատեսի. նորեն, սակայն, հարուստներեն ոչ ոք գնաց անոր անկողնույն մոտ, ոչ ոք անոր տվավ ճամփորդության համար հարկ եղած գումարը, որով կարենար երթալ Եվրոպա ու մեծ վարպետներու խնամքին տակ թերևս իր կյանքը փրկեր վերահաս վտանգեն, հետզհետե նորեն իր ազգականներն ու քանի մը մտերիմ բարեկամները միայն մնացին իրեն այցելող։ Այս բոլոր անտարբերությունը տեսնելե հետո, Ադամյան կըսեր ինծի, օր մը, որ շատ կիրքով խոսած էի մեր եսամոլ մեծատանց դեմ.— «Պետք է անհիշաչար ըլլար, բարեկա՜մ, պետք է նեռրել այդ խեղճ մարդոց, որ չեն գիտեր ինչ որ կըսեն, ի՞նչպես կուզես որ անոնք ճաշակեն Շեքսպիր, Կյոթե, Շիլլեր, ու գնահատեն նկարիչ մը, բանաստեղծ մը, դերասան մը, քանի որ իրենց մանկությունը Քալբաքճըլար Ցոքուշի կամ Քույումճի Զարշըսին անցուցած են»։

Որչափ որ դյուրավ կմոռնար իրեն եղած նախատինք մը, այնչափ համակրություն և սիրո ցույց մը անմոռաց էր իրեն համար։ Իր բարեկամներուն հանդեպ տածած զորովը պաշտումի կհասներ։ Կովկասի մեջ իր թողած հայ մտերիմները հիշած ատեն աչքերը կլցվեին. դեռ իր մահվընեն քանի մը օր առաջ անոնց անունը տվեր և բարևները,— հուսկ հրաժեշտի ողջույն,— ղրկեր էր անոնց։ Ռուս գործավորներու կողմե հանգամանությամբ իրեն տրված պղտիկ նվեր մը խնամքով կպահեր ու կգուրգուրար անոր վրա.— «Թանկագին բան մըն է ինծի համար,— կըսեր.— տասնոցներով մասնակցած են հանգանակության»։ Եվ նույնիսկ տեսա, որ իր հիվանդության միջոցին իրեն այցելող անձերուն անունները կը գրանցագրեր, զանոնք հետո հրատարակելու համար ի նշան երախտագիտության։ Խե՜ղճ բարի մարդ, ատոր կարելիությունը չունենցավ։

***

«Ե՜ս, ե՜ս, թատրոնը թողո՜ւմ... ե՜ս։ Ուրեմն չե՞ք գիտեր ինչ բան է այս Նեսոսի պատմությունը, զոր ուսերեն նետելու համար մարդ պետք է միան ալ փրցնե։ Ես թատրոնը թողո՜ւմ, հրաժարի՜մ անոր հուզումներեն, անոր խանդավառություններեն, անոր վշտերեն. ես տեղս Քեմպլիճ և Մաքրեոդի՞ն ձգեմ, որպեսզի տարիե մը, թերևս վեց ամիսեն գիս մոռնա՞ն։ Բայց չեք մտածեր, թե դերասանը ոչինչ կձգե իրմե եռքը, թե

իր ողջ եղած ատենն է միայն ու կապրի, թե իր հիշատակը կջնջվի այն սեռունդին հետ, որուն կվերաբերի, և թե ցերեկեն գիշերին մեջ կիյնա, փառքեն՝ անշքության մեջ։ Ո՜չ, ո՜չ, երբ անգամ մը մարդ ոտքը դրած է այս աղետավոր ասպարեզին մեջ, պետք է մինչև ծայրն երթալ, սպառել անոր ուրախությունները ու ցավերը, պարպել անոր գավաթն ու անոր բանները, ըմպել անոր մեղրն ու անոր մուրը... պետք է ավարտել ինչպես սկսած ես, մեռնիլ ինչպես ոռ ապրած ես, մեռնիլ ինչպես մեռավ Մոլիեռ, ծափահարությանց, սուլմանց և կեցցեներու ժխորին մեջ...»։

Ո՞ւսկից կուգա այս ձայնը, և ո՞վ է, որ այս բառերը կարտասանե, Քի՞ն թե Ադամյան։— «Դերասան»-ն է, որ այսպես կխոսի, հավիտենական դերասանը, որուն հոգին կտառապի իր կրած դիմակներուն ետե, որուն հանճարն ու փառքը իր դիմագծերուն, իր շարժումներուն, իր շրթներուն մեջ են և անոնց հետ կմեռնին, մեծ Դերասանն է որ այսպես կխոսի, Քին կոչվի ան կամ Ադամյան։ Իր ապերախտ արվեստին տված վաղանցուկ համբավը, վաղորդայնին մտահոգությունը, մոռցվելու վախը հայ ողբերգուին ալ սիրտը կտանջեին, և այդ երկյուղներն ու լկիր նախազգացումները սքանչելապես երգած է իր գեղեցկագույն բանաստեղծություններեն միույն, «Դերասան»-ին մեջ.

Նկարչին մնա գեր հիշատակն ի կտավ,
Փիդիասան ի կրճի.
Կանհետանա ինչ հետ հանճարն ու զդիմակ
Դատե հաղույն սև հրճի.
Պատմուրի՞ն, նա ցուցն զինչ or մի հիշն
Ապագայում՝ թե հանի։

Ո՜չ, ո՜չ, պիտի չմոռցվիս դուն, սիրելի ու հավերժ ողբացյալ Ադամյան։ Մեր ազգին մեջ, ուր ցավալի պատճառներ աղքատացուցած են մեր թատրոնը, որ այժմ գրեթե գոյություն չունի, քու եզական հանճարիդ հիշատակը պիտի մնա անխախտ և անկորուստ իր անհավասարելի բարձրության մեջ։ Հայ երիտասարդությունը, հայ ուսանողությունը, որ քեզ կպաշտեր և որուն անչափ կհամակրեիր, պիտի չթողու, որ քու անունդ թառամի ու փչանա։ Զգացի՞ր արդյոք՝ ջերմագույններն այն արցունքներուն, որ այսօր թափեցան քու պաղած մարմնույդ վրա, պատանիներու աչքերեն կհոսեին։ Դիտեի՞ր թե ո՞վ էին անոնք, որ իրենց ուսերուն, իրենց ձեռքերուն, իրենց գլխուն վրա՞ առած տարին դագաղդ, ինչպես ատենով ներկայացումներեդ հետո հաղթական մարմինդ կտանեին հիացողներդ. երիտասարդ էին, դերասան, արվեստագետ, և մանավանդ

ուսանող։ Ո՞չ, մենք պիտի չմոռնանք քեզ, և պիտի թույլ չտանք, որ մոռնա քեզ ապագան։ Քու տաղերդ, որոնց մեջ հոգիդ կթրթռա, պիտի հրատարակվին ու պիտի միշտ կարդացվին իբր ազնիվ ու մեծ սրտի մը բաբախումները. քու այլևայլ դերերուն մեջ լուսանկարներդ պիտի անցնին գալիք սերունդներուն, որ պիտի ապշին անզուգական դեմքիդ հրաշալի կերպարանափոխությանց ու խորաթափանց արտահայտությանց վրա և պիտի զիրենք դժբախտ զգան քեզ վայելած չըլլալնուն։ Եվ երբ այն հողին կտորի վրա, ուր դրինք հեք հյուծյալ մարմնիկդ՝ կանգնենք զիզեցիկ և փառավոր հանճարիդ արժանի շիրիմ մը[1], ո՜վ մեր մեծ բարեկամը, ո՜վ մեր երեց եղբայրը, ո՜վ մեր հայրը պաշտելի, մենք հաճախ պիտի գանք անոր առջև արտասվել և աղոթել. և ցույց տալով մենք ավելի երիտասարդներուն քո նվիրական ոսկրոտիքդ պարփակող հիշատակարանը, պիտի ըսենք անոնց՝ «Գլուխնիդ բացեք, հոս կհանգչի Ադամյանը»։

Բ. ՀԻՇԱՏԱԿՆԵՐ

(Մահվենեն չորս տարի հետո գրված)

1888-ի աշնան սկիզբն էր, որ լուր ելավ, թե նշանավոր ողբերգու Ադամյանը Պոլիս պիտի գար քիչ օրեն։ Կեդրոնական վարժարանը, մեր կարգին մեջ մանավանդ, այդ լուրը հուզում առաջ բերավ։ Լսած էինք իր համբավը, գիտեինք որ Շեքսպիրի մեծագույն դերերուն ամենեն տաղանդավոր արտահայտիչներեն մին նկատված էր նույնիսկ ռուս դժվարահաճ քննադատությենեն. երևակայությունիս գրգռված, ողբերգական հոգեցունց տեսարաններու սարսուռովը արդեն համակված, հանճարեղ հայ արվեստագետ մը տեսնելու հույսովը ոգևորված, անձկագին կսպասեինք այդ մեծ հայուն, որ մեզ պիտի համայեր, մեզ պիտի լացներ ու մեզ պիտի հպարտացներ։ Իրիկուն մը խումբով Բերա ելանք, դիտելու համար իր գլխավոր դերերուն մեջ լուսանկարները, զոր ֆրանսական թատրոնին դուռը կախեր էին։ Անոնց մեջ ամենեն ավելի մեր ուշադրությունը գրավեցին մեռելի գանկ մ'ի ձեռին խոովահույզ Համլեթին զմայլելիորեն նուրբ ու վեհ դեմքը, Քինը, որ նավագի հագուստ հագած, գլխարկը ծալած, արհամարհոտ նայվածք մը կարձակեր, ցցված այտոսթևեր

ին վրա, երկու երեք անգամ իրեն հետևած եմ, նայվածքովս իր մարմնույն շրջագծերը փայփայելով, իր ամեն մեկ շարժման ուշադիր, ստվերի մը պես իրեն կապված, հանցավորի շփնումներով, երբ հանկարծ ետին դառնար, բայց գոհ, երջանիկ իրեն այնչափ մոտ գտնվելուս։

Իրիկուն մը, վերջապես, որ սիրված աղջկան գալուստը լրտեսող պարմանիի թափառումով մը կսլէտայի ծովնկերքը, տեսա հեռվեն Ադամյանը, որ իր ատանկոտ քայլվածքովը կուգար իր աղգական և իմ դպրոցակից ու բարեկամ Տիգրան Եսայանին հետ։ Սիրտս ցատքեց, Տիգրանը, երբ քիչ մը մոտեցան, նշան ըրավ ինծի։ Կերևա թե պիտի ներկայացներ զիս անոր։ Չկրցա տեղես շարժիլ ու զգացի, որ բառ մը պիտի չկրնայի արտասանել։ Պետք եղավ, որ բարեկամս գար թևերս բռներ ու զիս տաներ անոր քով։ Անիկա, արդեն ժպիտ մը աչքերուն մեջ, ձեռքըն ինծի կերկնցներ։ Իր ձեռքին հպումը ինծի ուժ տվավ, ու հիացման քանի մը բառեր կակազեցի։ Գովեստներս ծայրահեղ գտավ, ու իսկույն խոսքը փոխելով, ակնարկություն ըրավ քիչ օր առաջ «Արևելք»-ի մեջ հրատարակված «Ադամա վիշտը» փոքրիկ ոտանավորիս, որուն հավներ էր և քաջալերական սիրուն բաներ ըսավ ինծի, որ զիս բոլորովին շվարեցուցին։ Հրավիրեց զիս իր տունը երթալ զինքը տեսնել։ Իրմե բաժնված ատենս, հպարտությամբ արբշիռ, փափագ կղգայի դիմացս ելլողին իրտխտալու. «Ես Ադամյանին հետ խոսեցա»։

Անկե ետքը շատ անգամներ առիթ ունեցա զինքը տեսնելու։ իր տունը, ու մանավանդ Օրթաքյոյ, Եսայաններու տունը, ուր հաճախ կուգար։ Ներքին մարդը ինծի երևցավ այնքան մեծ, որքան արվեստի մարդը։ Ուրիշներ զինքը շատ դերասան կգտնեին առօրյա կյանքին մեջ. ես ընդհակառակն միշտ բնական կգտնեի զինքը բեմեն դուրս, ինչպես բեմին վրա։ Այն մեկ քանի մեծ դերերը, ամենքն ալ հոգեկան ծայրահեղ տագնապի խտացումներ, զոր սովոր էր ներկայացնել, իր հոգիին մեջ անցած, անոր խառնված էին։ Ի ծնե դյուրազգած, անիկա բնականորեն ծայրահեղ մարդը դարձած էր, որուն զգացումներն ու մտածումները ինքնին թատերական խոշորացում մը կառնեին և որ զանոնք արտահայտելու համար պետք ուներ բառերուն չափ ձևերուն, շարժումներուն, որոնք բառերուն անհրաժեշտ լրացուցիչն էին իրեն համար։ Ու մենք բնական կգտնեինք, որ ակռայի ցավի մը համար անգամ ոտքի ցատքեր հանկարծ և մատները մազերուն մեջ խոթելով «Դժո՜խք» պոռար։ Չէր կեղծեր։

Եվ ապացույցը, որ չէր կեղծեր, այն էր, որ «Հանդիսավոր չէր երբեք»։ Անոնք, որ զինքը մոտեն ճանչցած են, գիտեն թե ի՞նչ համեստ ու սիրուն մարդ էր մտերմության մեջ։ Երբեք չեմ հիշեր, որ բարեկամներու հետ մեծամիտ ձևեր առած ըլլար, անիմաստ ու անպետք ուռուցքմը դրած ըլլա իր վարմունքին ու բառերուն մեջ։ Սալոնի մը մեջ՝ ամենեն զվարթը, ամենեն զվարճախոսն էր, ու եթե մերթ իր բարեկամներուն հուզմունքի վայրկյաններ անցընել տված է «Դարբինները» կամ իր խաղերեն կտոր մը արտասանելով, ավելի հաճախ կհիշենք, որ զանոնք խնդացուցած է զավեշտական պատմություններով, զոր ամենեն սիրուն, ամենեն կենդանի ձևով վիպելու գաղտնիքն ուներ։ Ֆիկարո մը կար մեր Համլեթին մեջ։ Այդ համեղ սրամտությունը ան նորեն փայլեցուցած է իր կարգ մը տաղաչափյալ երգիծական վիպակներուն մեջ ալ, որոնք դժբախտաբար, ինչպես իր բոլոր բանաստեղծությունները, դեռ չհրապարակվեցան[1]։

Բայց երբեմն, երբ գրասեր և արվեստասեր երիտասարդներու հետ անկյուն մը առանձնանար, արվեստի ու գրականության վրա կխոսեր, և այդպիսի վայրկյաններու մեջ է, որ ճանչցա հմուտ, նրբաճաշակ ու լայնամիտ քննադատը, որ կար Ադամյանի մեջ և որ իր դեղեցկագիտությունը մեզի կբացատրեր։ Այդ դերասանը , որ բանաստեղծ էր միանգամայն (և հակառակ իր քերթողական արտադրությանց անհավասարություններուն և ձևի թերություններուն՝ լավագույն էջերուն մեջ արժեքավոր ու ինքնատիպ բանաստեղծ, ու մերթ նույնիսկ մեծ բանաստեղծ), որ նկարիչ ալ էր (իրմե մնացած են սիրուն դիմանկարներ), բազմակողմանի ու խորախոհ տեսություններ ուներ արվեստի մասին։ Գրականության, նկարչության, ինչպես դերասանության մեջ, բացարձակ իրապաշտությունը չէր սիրեր։ Իրականությունը օրինակելը արվեստ չէ,— կըսեր,— պետք է ընտրել իրականին մեջ ինչ որ նշանակալից է, ինչ որ բնորոշ է, և զայն լույսի մեջ դնել. ինչ որ ըսել չէ, թե կհարեր այն դպրոցին, որու համեմատ պետք է իրականեն տարբեր, իրականեն ավելի աղվոր ցույց տալ կյանքն ու մարդիկը։ Քորնեյլ չէր սիրեր։ «Գրականությունը պետք է մարդկային ըլլա, կըսեր. շինծու մարդկություն մը, որ ցույց տրվի անթերի և արվեստականորեն գեղեցիկ, չի հետաքրքրեր, չի հուզեր մեզ»։ Բայց, կավելցներ, մարդիկ իրենց իրականության մեջ ուսումնասիրելն հետո, պետք է զանոնք ի հանդես բերել իրենց մեծ ու ցայտուն գծերուն մեջ, դիտվածին մեջեն հղացում մը հանել։ Ատոր համար, իր նախընտրած վարպետը Շեքսպիրն էր։— «Մարդկությունը ամբողջ անոր գործին մեջ,— կըսեր,— իր հոգիին բոլոր խորշերովը, բանաստեղ-

[1] Այդ բանաստեղծությանց ձեռագիրն ինծի հաղորդված ըլլալով՝ «Մասիս»-ի մեջ անոնց հոդված մը գրված էի և անգամ մը ևս անոնց հրատարակման պետքը ցույց տված։ «Ճաղիկ»-ի այս հոդվածս լույս տեսած միջոցին կիմանայի, որ Վենետիկի Մխիթարյանք հրատարակեր էին այդ հատորը՝ Հ. Վ. Հացունիի ընդարձակ հառաջաբանով մը։

ծին երևակայությունը, այդ խորշերն իր խոշորացույցին մեջեն ցույց տալով, զանոնք ավելի որոշ, ավելի մեծ, ավելի կենդանի դարձուցած է,» «ճշմարիտ ու մեծ»,— ահա իր արվեստին նշանաբանը։ Այդ սկզբունքին գործադրությունն էր իր խաղացվածքը։ Իր ձևերն ու արտասանությունը չափազանցված գտնողները չէին խորհեր, որ անիկա պարտավոր էր որոշ տեսլականացմամբ մը արտահայտել դերեր, որ արդեն իրականության տեսլական պատկերացումներ էին։ Իր խաղացվածքը այնքան ներդաշնակ միացումն մըն էր իրականի ու տեսլականի՝ որքան գրական արվեստն իսկ Շեքսպիրին, որուն թարգմանն էր։ Ո՛նէ Մավրիտանացի մը անշուշտ այնպես չի խոսիր ու շարժիր ինչպես Ադամյանը «Օթելլո»-ի մեջ, բայց արդեն ան չի խոսեր ալ այնպես, ինչպես Շեքսպիրի խաղին մեջ։ Ադամյան կձգներ և կհաջողեր Շեքսպիրի հղացած Օթելլոն— ուր ամբողջ կիրք մը ու ամբողջ ցեղ մը կխտանան— մարմնավորելու, և հոն էր իր մեծությունը։ Կուզեր միանգամայն, որ գրականությունն ու գեղարվեստը ճշմարիտ ըլլալով հանդերձ, ազդող, թելադրող ըլլային, ժողովուրդը բարձրացնելու, մեծցնելու ծառայեին. այդ պատճառով այնչափ վնասակար՝ որչափ անիմաստ կգտներ ֆրանսացի բնապաշտ վիպասանները, որոնք, կսեր.— «մասնավոր ձգտում մը ցույց կուտան մարդուն մեջ աղտոտը, գձուը միայն ի վեր հանելու»։

Իբր վիպասան՝ կնախընտրեր Ռուսները, որոնց մեջ կգնահատեր մարդասեր շունչը, իրականության պատկերը հավատարմորեն գծելով հանդերձ ժողովրդին հոգին ազնվացնելու ձգտումը։ Իրիկուն մը դառնորեն գանգատեցավ ֆրանսական իրապաշտ ուղղության մեր մեջ այդ միջոցին չափազանց տիրապետելուն (Արփիարի, Զոհրապի, Բաշալյանի, Կամսարականի նորավեպներուն շրջանն էր), ու դժգոհություն հայտնեց ինծի, որ այդ պահուն՝ դեռ Կեղրոնականի աշակերտ, «Արևելք»-ին մեջ Մոփասանին, Զոլայեն, Տուռենն էջեր կթարգմանեի։ Ատոնք, կըսեր, մեր ցեղին հարմար հեղինակներ չեն, և կհորդորեր, որ մեծերը ճանչցնենք մեր ժողովրդին[1]։

1 Այսօր ալ իրավունք կուտամ Ադամյանին, հարցը որոշ տեսակետ մը նկատելով. բայց կկարծեմ, թե ճիշտ չէր իր անվերապահ մեղադրանքը այն հարումին համար, զոր մեր սերունդը ցույց կուտար օրվան տիրող գրական նոր ղպրոցներուն։ Իմ մասին, ես ինքս ալ իրեն պես կմտածեի, որ մեր սիրույն ու հիացման մեջ մշտապես առաջին տեղը բռնելու էին մարդկային գրականության հսկաները, որ դարերուն հաղթած են իրենց գործին հավիտենական գեղեցկությամբ. բայց կմտածեի նաև, որ անհրաժեշտ էր քալել ժամանակին հետ, ճանչնալ մեր օրերուն նոր գեղեցկագիտությունը, օգտվիլ նոր վարպետներեն, որ եթե նվազ մեծ էին քան այդ հսկաները, ավելի հարազատորեն կարտահայտեին մեր ժամանակի հոգեբանությունը ու ճաշակը։ Այդ մեծերը քիչ շատ մեր ժողովրդյան ծա-

Իր այս գեղեցկագիտության գուգահեռական էր իր ընդգրկած իմաստասիրությունը։

Իր բանաստեղծի երևակայությունը կհրճվեր կյանքի կյանք հավիտենական ճամփորդության գաղափարով. տեսակ մը ջղային գրգռման վայրկյաններու մեջ, ոգիներ կկանչեր, որ կուգային՝ ըստ իրեն՝ իրեն հետ կխոսեին, զինքը կներշնչեին, իր հարցումներուն կպատասխանեին։ Անոնցմե իմացեր էր, թե իր նախկին կյանքերուն մեջ ինքը Ճուզեփփե Գեռարտո և Որփեոս Կամսարական կոչված էր, և սպահով էր, որ մահվենեն հետո ուրիշ մոլորակ մը պիտի երթար բնակիլ...

Իր երևակայության չափ, իր սիրտը, իր ազնիվ սիրտն էր, որ զինքը կմղեր այդ իմաստասիրությունն ընդգրկելու։ Այդ բարձրորեն բարի սիրտը, զոր իր մտերիմները միայն ճանչցած են, այդ փափուկ քաղցր սիրտը, որ ամեն գեղեցիկ գաղափարի, ամեն գեղեցիկ գործի համար ամբողջ հուզում էր, որուն հիացումները այնչափ մեծ էին, որչափ խանդաղատանքները, որ իր ճշմարիտ մտերիմներուն համար բարեկամությանց ամենեն կատաղենն ու ամենեն վեհանձնը ի հայտ բերած էր[1], այդ սիրտը բնազդական մղումով մը մատեցած էր այն իմաստասիրությունն, որ տիեզերքը իրեն բարի կցուցներ։ Անհնար կթվեր իրեն համոզվիլ, թե նպատակը ամեն բան է, թե մահենեն հետո մարդուն ուրույն գոյությունը կչքանար. չէր կրնար ընդունիլ, որ այն անաղարտությունները, որոնցմով լե-

նոյ էին արդեն, պարտք կար արձակի և ստանավորի նորագույն վարպետներուն գործը ճանչցնել մեր հասարակության, և անոնց ազդեցությունն օգտվիլ՝ վերանորոգելու, արդիականացնելու համար մեր գրականությունը և մեր լեզուն։ Այն առեններու հայ երիտասարդ սերունդին շփումը Մոփասաններուն ու Տուռենեռուն, հետո Գոնչարներուն, Վերլեններուն, Վերհառներուն հետ, նոր շրջան մը բացավ մեր գրականության համար, և օգտակար, բեղմնավոր եղավ։ Ադամյան ինքն իսկ որ իբր տեսաբան այդպես կխոսեր, իր ինքնագիր բանաստեղծության մեջ՝ եթե մերթ Հյուգոյին ու Լամարթինին կշտանար մանավանդ, շատ ավելի հաճախ կհետևեր իր ժամանակի նորագույն բանաստեղծներեն ոմանց, զլխավորապես Քոփեին, կամ անկից ալ փոքր ոսա ու ֆրանսացի բանաստեղծներու, և միակ վիպակը, զոր գրած է՝ եվրոպական իրապաշտ գրականության ազդեցությունը ցույց կուտա։ Միայն թե իրավունք ուներ խորհուրդ տալու, որ սիստեմական հետևեսներեն, կյանքի տգեղությունները միայն ցույց տվող բնապաշտներեն (և ըստ իս՝ Տուռենն ու Գոնչարիսկ Մոփասանը ատոնցմե չեն) նախընտրեինք հավատավոր ու խանդավառ մտքերը, կյանքը իր ճիշտակի ու սեր հավիտենական խառնուրդով ներկայացնող լայն իմաստասիրությունները, և ատոնք՝ հանճարի կամ տաղանդի ավելի կամ նվազ մեծ չափով՝ հինները ու նորերուն մեջ հավասարապես կարելի է գտնել։

1 Ստեփան Մամիկոնյանին ու Սանգարյին ուղղած իր նամակները, որոնք վերջերս Վրուր դերասանին ձեռքով «Մուրճ»-ի մեջ հրատարակվեցան, արտաշարժ են ու զմայլելի՝ իրենց բարեկամական զուրգուրանքի խորանի շնորհով

ցուն է մարդկային կյանքը այս աշխարհիս վրա, փոխարինություն մը չգտնեն ապագա լավագույն կյանքի մը մեջ. ինքը կուզեր որ տիեզերքը ոչ թե կույր ուժ մը, այլ գիտակից իմացականություն մը ըլլար, ոչ թե հավիտենապես լարված անհուն մեքենա մը, այլ նպատակի մը ձգտող անսահման հոգի մը։ Իր Կովկասի լավագույն բարեկամներեն միույն՝ Սանդրոյին՝ քրոջը մահվան առթիվ ուղղած նամակին մեջ, զոր «Մուրճ»-ը հրատարակած է, ամբողջ զգացման վրա հենած իր փիլիսոփայությունը կերևա հորդ ու հուզումնալից պերճախոսությամբ մը պարզված. «...Այո, սիրելիս, հոգեփոխության վսեմ օրենքով միայն կարող ենք բացատրել մարդկանց վիճակին հակապատկեր դրությունները, մտածելով որ չարը արդեն նոր է սկսել յուր մարդկային առաջին գոյությունը անասունից։ Թշվառը քավում է իր երկրորդ կամ առաջին գոյության մի հանցանքը։ Խելացին, զորեղը, ուրիշ մի գոյության մեջ, բարվույն շնորհիվ արժանացեր է այդ կրկին շնորհաց, որպեսզի յուր նմանները զարգացնե։ Հարուստը կամ փորձվելու է ենթարկված, և կամ այն ստակը, որ ունի յուր մեջ, անցյալ գոյությանը գործած բարության պարգևն է, որ իրեն պատվանդ տվել է նրան ասված, որպեսզի շարունակե երկրիս վրա բարին գործել, տառապանք սփոփելու, արցունքներ սրբելու երջանկությունը վայելել։ Եվ այսպես հետզհետե մարդկային կյանքը ոմանց համար քավություն է, այլոց՝ յուր նմանին օգնություն, և ոմանց՝ զարգացման, փորձանաց և կատարելագործվելու միջոց, այլ երջանկություն՝ շատ քիչ անգամ. դորա համար, որ մարդիկ երջանկությունը նյութական հաճույքներու մեջ են փնտրում և միշտ զուր է գնում իրանց ջանքը։ Հոգեկան ձգտումների և վայելքների մեջ կարելի է միայն գտնել ճշմարիտ երջանկությունը, և որովհետև նրան փնտրող և գնահատողներ շատ սակավաթիվ են, հենց դրա համար էլ երջանկությունը խաբուսիկ և օտար մի բան է մեր աշխարհի վրա։ Թող փորձեն ասածս՝ ընկերին բարիք անելով, և երբ այդ բարիքը անելով՝ զգան իրենց սրտի խորքում մի անբացատրելի սուրբ և խաղաղ ուրախություն, արդյոք ի՞նչ բացատրություն կտան այն զգացմունքին, արդյոք կհանդգնի՞ն ասել, թե այդ զգացմունքը, այդ երջանկությունն էլ նյութից լինի։

...Ամենահետին մի սողունի, մի անբան կենդանվո կենաց մեջ կարգ, նպատակ և կանոն դնող ասվածը ինչո՞ւ համար բանական մարդուն նկատմամբ անարդար, անհմուտ ու անզորոմ լիներ։ Եթե լավ տեսնենք և մտածենք, կտեսնենք, որ մեր շուրջը ամեն ինչ սեր, իմաստություն և հայրախնամ գթություն է, ամեն ժպտին մեջ մի արցունք կա՝ ժպտին արժեքը դուրս բերելու համար, ամեն ուրախության մեջ մի տխրություն։ Օրը գիշերվան և գիշերը օրվան հակապատկերն է, նույն-

պես հոգին էլ մարմնույն, զի մարմինը գիշերն է հոգվույն, յուր բոլոր երկրային ցած կրքերով ու ձգտումներովը. և այդ գիշերվան խավարին մեջ խիղճն ու բանականությունը մեզ ջահ են, առաջնորդ, որպեսզի հոգեպես ճանչնանք զաստված, չդատենք նորան մեր աշխարհի վրա տեսնված անկարկատ և աններդաշնակ դեպքերի վրա հիմնվելով, ու մեր երկրային վշտերովն ու կրքերովը։ Եվ այն ժամանակ պիտի գտնենք ու տեսնենք այն աստվածը, այն բնությունը, որ արդար, իմաստուն և բարի է, և ոչ անխիղճ»։

Խե՜ղճ մեծ մարդ... իր այդ սփոփարար ու կազդուրիչ իմաստությունը իրեն մեծապես օգտակար եղավ իր վերջին դառն օրերուն...

Ա՜խ, այդ վերջը... օր մը հանկարծ լսեցինք, որ կոկորդի հիվանդությունեն մը բռնված էր։ «Ուրիել Ակոսդա»-ի երկրորդ ներկայացումեն ետքն էր, երբ ծանուցված էր արդեն, թե Իզմիր պիտի երթար քանի մը ներկայացում տալու։ Ձայնը այնպես մարած էր, որ անկարելի էր խաղալ, իր խաղերը մանավանդ, ուր պետք է որոտալ։ Բոլոր դերերը, բոլոր խնամքները օգուտ չէին ըրած, պայմանագրված էր, սակայն, Իզմիր ներկայացումներ տալ, և Հուսահատություն եկավ վրան զինքը անկարող գտնելով խոստումը գործադրելու. քանի մը բարեկամներու ըսեր էր, որ պիտի երթար, ներկայացմանց իրիկունը պիտի ջանար ոգելից ըմպելիքներով ձայնը բանալ, ու հիվանդ հիվանդ պիտի խաղար, որոշած՝ միջնարարի մը ինքզինքը սպանելու, եթե հանկարծ ձայնը կեսին մարեր։ Ոգելից ըմպելիքները իրենց դերը խաղացեր էին, և ձայնը այդ գիշերն ալ ապրեր էր։ Իզմիրեն հոգնած դարձավ, ավելի հիվանդ։ Այդ ծայրահեղ ճիգը սաստկացուցած էր կոկորդին ցավը։ Այն ատեն սկսավ զարհուրելի տոմը արվեստագետին, որ իր արտահայտության գործիքին օրե օր փչանալը կզգար։ Սիլլոզոսի ցերեկույթին, ուր «Համլեթ»-են մենախոսություն մը պիտի արտասաներ, սրտերնիս ճմլվեցավ, երբ տեսանք զինքը, որ դեմքը մթնած, բեմը ելավ ու բզքտված ձայնով մը ներում խնդրեց իր խոստումը կատարելու անկարող ըլլալուն։ Կանոնավոր դարմանումով ու հանգիստով, պահ մը ձայնը բացվեցավ, ու վերջին անգամ ըլլալով լսեցինք այդ պաշտելի մոնչյունը «Սեր առանց համարման»-ին և «Թերեզա»-ին մեջ։ Իր դերասանական կյանքին կտակն էին ատոնք։ Իր ձայնը, իր սիրական ձայնը, վիրավորված նժույգի վերջին ոգեվար ճիգով մը վերջին հաղթանակ մըն ալ տվեր էր իր տիրոջը, և հետո վերջապես մեռեր էր։ Պյոյուքտերե իր տունը քաշվեցավ այն ատեն, և այն տենդոտ, լուսավոր, մշտաշարժ կյանքի մարդը ընկղմեցավ ստվերի և անշարժության կյանքի մը մեջ, որ օրե օր կնվազեր, կհատներ։ Ինքը չէր հուսահատած, կկարծեր, թե այդ

նվազումը ժամանակավոր էր, և թե, ինչպես արդեն պատահեր էր, ձայնը նորեն պիտի բացվեր։ Երբեմն բարեկամ տուն մը գտնված միջոցին, ճաշեն հետո, երբ կոկորդը քիչ մը հանգիստ կզգար, խելահեղ ճիգ մը կըներ և կփորձեր կտոր մը արտասանել. հաջողությունը մանկական ուրախություն մը կպատճառեր իրեն։ «Տեսե՛ք, կաղազակեր,— ձայնս չեմ կորսնցուցած. կեցե՛ք, կեցեք՛ք, մե՛կ ամիսեն կտեսնեք բեմ կելլեմ նորեն»։ Մեկէ ավելի ամիսներ անցան, ու բեմ չելավ։

Այդ շրջանին, օր մը Պյոյուքտերե իրեն այցելության գացի։ Ցավագին վիճակի մը մեջ գտա զինքը, և զինքն ալ շատ տխրած տեսա։ Այդ հերոսի շարժումներով մարդեն հյուծած հիվանդ մը մնացեր էր, որ սանդուղեն շտապելով վեր ելած ըլլալուն համար հինգ վայրկյան հետո, որ համ ու թուլցած շարժումներ ուներ հիմա, և որ փսփսալով կխոսեր, Ձայնին երկարատև նվաղումը սկսեր էր զինքը խռովել, և այդ ճգնավորի կյանքը, որուն դատապարտված էր, կխենթեցներ զինքը։ Դառնությամբ գանգատեցավ այն անտարբերությենեն, որով պոլսեցիները այդ տագնապալից կացության մեջ զինքը լքած էին։ Դրամը հատած էր։ Մեր հարուստներեն ոչ մեկը մտքեն անցուցած էր օգնել իրեն։ Այցելության իսկ գացող չկար։ Իր ամբողջ աշխարհը քանի մը մտերիմներ ու քանի մը ազգականներ էին։ Լքումը, նյութական անձկությունը, և մանավանդ կյանքի պակասը, մենությունը եկեր զինքը։ «Մարդ չունիմ,— կըսեր,— որ խոսակցիմ, գեղարվեստի, գրականության վրա գաղափար փոխանակեմ», ու հուսահատ շարժումով մը «խեղդվում եմ,— կավելցներ,— իպոքոնդրիա է վրաս գալիս»։ Բանավ մը զբաղելու համար, ինքզինքը նկարչության ավեր էր. Օֆելիա մը գծելու վրա էր։ Նկարչեցնեն հոգնած ատեն, բանաստեղծություն կգրեր, հույսը չէր կտրած ապագայեն, հավատք ուներ, որ բուժումը պիտի գար վերջ ի վերջո։ Նույնիսկ Քոփեի արտասանելի մեկ նոր քերթվածը, l'Homme-affiche, ցույց տվավ ինծի. «Շատ գեղեցիկ է,— ըսավ,— մտադիր եմ արտասանել La Grève des forgerons-ին չափ հաջողություն կրնամ գտնել ասով»։ Կկարդար. շատ կկարդար, մանավանդ հոգեպաշտ իմաստասիրության գրքեր, որ հիմա ամեն ատենե ավելի սիրելի դարձեր էին իրեն։ Նույնիսկ իր ցավատանջ կյանքին ազդեցության տակ, այդ իմաստասիրությունը անզգալաբար կրոնքի փոխված էր իրեն համար. իմաստասեր հավատացյալը ճշմարիտ քրիստոնյայի մը մտայնությունն ստացած էր. իր անստուգության, իր անձկության մեջ, հավատքը իր միակ ապավենը դարձած էր, և զայն հետզհետե ավելի որոշ, ավելի հաստատ, ավելի ուժով կզգար իր մեջ։ «Աստուած բարի է,— կըսեր,— պիտի բժշկե զիս»։

Մեծ ավերակ մը տեսնողի պրտի սեղմումավը մեկնեցա այդ օրն իր

քովեն։ Կորսված էր մեր մեծ բարեկամը։ Չեմ գիտեր հոգվունք մը, որ այդ օրվան զգացած հուզմունքիս պես դիս տրորած ըլլա։ Իր լավ օրերուն իսկ, լսեր էի մեծի տրամությամբ խորհիլը, թե իր տաղանդեն ոչինչ պիտի մնա մահվանեն հետո, լսեր էի աղջկանդ ելած այն շեշտը, որով «Քին»-ին մեջ այդ մտածումն արտահայտող հատվածը կարտասաներ, և տարտուռով մը կարդացեր էր իր «Դերասանը» բանաստեղծությունը, ուր երգած է վաղանցուկ նկարագիրն իր արվեստին, որ օդին մեջ գծագրություն մըն է՝ շինված ատենն իսկ ջնջված, և որուն ստեղծագործությունները արվեստագետին հետ կմեռնեն։ Եվ տես, մեծ դերասաններու պատմության մեջ անլուր դժբախտությամբ մը, արվեստը արվեստագետեն առաջ կմեռներ Ադամյանի մեջ։ Իր տաղանդին կենդանի գերեզմանն էր հիմա ինքը։ Եվ անօրինակ լեզին ճաշակեց դեռ չմեռած տեսնելու, որ արդեն իսկ կմոռնային զինքը, որ իրապես գոյություն ունենալի դադրած էր։ Այս բարոյական հոգեվարքին դիմանալու համար մեծ հավատք մը պետք էր։ Աստուծո բարության գաղափարին փաթթվեցավ։ Այդ գաղափարն է, ապահովապես, որ զինքը նոր կեցության անձնատուն ըլլալի։

Այդ օրերուն դեպք մը տրիք եղավ իրեն իր հոգվույն բովանդակ չքնաղ ազնվությունը անգամ մը ևս ի հայտ բերելու։ «Արևելք»-ի մեջ տեսնեն մը ի վեր եկրատորակի «Զորքուտանի մը օրագիրը» ընդհանուր տիպազոսին տակ գրական էջերու շարք մը՝ «Ֆանթազիո» կեղծանունով. հոռետեսությամբ մթնցած էջեր էին, մխիթարիչ հավատալիքներեն որբացած, եվրոպացի նյութապաշտ խորհողներու, հոռետես բանաստեղծներու և մերոնցմե Տեմիրճիպաշյանին ազդեցության տակ գտնվող մտքի մը ծնունդ։ Իրիկուն մը «Արևելք»-ին մեջ տեսա բանաստեղծություն մը, «Առ Ֆանթազիո» տիպազոսով և Ադամյան ստորագրությամբ։ Հուզումեն դողացող տողերու մեջ, ուր մեծ եղբոր հանգիստանություն մը կուրվագծվեր, բանաստեղծը կմեղադրեր ինծի իմ հանգստությունս և ապերախտությունս աստուծո դեմ և կգտներ, թե ի՞նչպես ինքը իր սոսկալի ցավերուն մեջ իսկ չէր դադրեր աստված բարի գտնելե և անկից ուշատումը հուսալե։ Ամբողջ աղնիվ մարդը, զոր կճանչնայի արդեն, ավելի քան երբեք լուսափայլ ճառագայթ մը երևցավ ինծի հոգ. իմ մեծ բարեկամս եմ եղբայրս դիս, կցավեր դիս մոլորած տեսնելով, կուզեր փրկել զիս։ Ըսին, որ այդ ընդարձակ բանաստեղծությունը, ուր ահագին վառնում մը կա ամենախոր հուզման, հորինած էր շատ հիվանդ վիճակի մեջ, անիծողին վրա նստած՝ տուն տալով բարեկամի մը, քանի քանի անգամ ընդմիջվելով տիարությենեն, որ վրան մարելիք կբերեր կամ հաղեն, որ կոկորդը կպատռտեր։ Այդ մեծ ճիգը հանձն

առեր էր օգտակար ըլլալու համար խոնարհ հիացողի մը, զոր սիրել հաճեր էր։ Այդ բանաստեղծության մեջ— որ, իր քանի մը ձևական թերություններով հանդերձ, մեր քերթողական գրականության վսեմագույն էջերեն մին է— իր չարչարանքը կպատմեր, իր մահվան ու հուղարկավորության տեսիլն իսկ կնկարագրեր աղեխարշ տողերով։

Դպրոցականի իմաստակությամբ մը, ելա պատասխան մը գրեցի, ուր իրեն հայտնելե հետո խորին երախտագիտություն ինծի հանդեպ իր ունեցած բարձր սիրույն ու վեհանձն հոգածությանը համար, իր բանաձևած ասուծուն հավատալ չկարենալս կխոստովանեի ու կփաստաբանեի. միտքս ամբապես կառչած էր նյութապաշտ փիլիսոփայության, մեր ուսուցիչներեն Տեմիրճիպաշյանի և Մատթեոս Գաբագաշյանի ազդեցության և եվրոպացիներեն Պյուխների, Սփենսերի պես մտածողներու, Լեոփարտիի, Վինյիի պես հուսահատ ու հոռետես բանաստեղծներու տիրական շունչին տակ։ Հիշեր եի այն փաստերը, զոր Հյուկո կշարե եպիսկոպոսի մը ուղղած իր ծանոթ քերթվածին մեջ, ու կավելցնեի, թե ես չեի կրնար նույնիսկ հավատալ այն վերացական գիտակից անհուն անձնավորության, որուն հավատքը «թեխթ» Հյուկոն կերգե նույն քերթվածին մեջ։ Գիտեի, որ գոհ պիտի ըլլար զիս անկեղծ տեսնելով։ Իրոք ալ, անկեղծութենես գոհ եղեր էր. բայց նամակս շատ տխրեցուցեր էր զինքը։ Քիչ հետո, ռուսական Հիվանդանոցեն, ուր նոր փոխադրված էր, գիրք մը և նամակ մը ընդունեցա իրմե։

Ահավասիկ նամակը.

6 ապրիլ 1891
Թեռա, Ռ. Ն. Հիվանդանոց

Ակնիվդ իմ Զապանյան,

«Այս նշանավոր հեղինակը, որ բազմանմուտ և ուսյալ անձանց միջոցավ ճանչցա ու կարդացի, կարծեմ անդարմանելի հարվածը տված է նյութապաշտության, շատ լուրջ և տրամաբան ուշիմ փաստերով։ Եվ մի հոգեկան նոր աշխարհ կբանա մարդուս առաջ։ Ինձ համար ինչ կարելի է, մինչև անգամ դժվար, զտնել այսպիսի մի երկ։ Երկու օրինակ բերել ավի Փարիզից, միենն՝ ինձ, այլ մյուսը քեզ համար։ Գուցե տարիներով չտեսնենք միմյանց, այդ միջոցին կարդա այս հեղինակը լուրջ ուշադրությամբ, լավ թափանցե իր գաղափարները, թերևս նպաստավոր լինին քեզ փարատել հոգի մտածումներդ, որ ավելի անձնական դառնությանց արդյունք են, քան թե ուշիմ խորհրդածության և ուսմանց։

«Փորձություն կենաց, անհրաժեշտ է նույնպես։ Ո՜չ, եղբա՛յր, քո

արձակած վճիռները համեմատ չեն տարիքիդ և ուսմանդ. չէ՞ մի որ նախ շատ պետք է կարդալ և խորհիլ. և անշուշտ կան մարդիկ, որ մեզանից շատ ավելին խորհած են և գիտեն...

«Ընդունէ՛, ազնիվդ իմ, այս գիրքը, իբրև պատասխան նամակիդ, սիրալիր ողջույններուս հետ»։

Պ. Հ. ԱԴԱՄՅԱՆ

Գիրքը տիտղոսված էր «Մարդը բնության հանդեպ» և գործն էր (ֆրանսերեն թարգմանված) գերմանացի հոգեպաշտ իմաստասերի մը, Հեոֆերի։ «Գուցե տարիներով չտեսնենք միմյանց...»։ Ամբողջ նամակին մեջ այս տողը տեսա է՛ն առաջ։ Այդ տողը սիրաս մտավ։ Ինքը, խեղճը, միշտ հուսով՝ որ պիտի բուժվի և միշտ մտադիր Եվրոպա՝ նախ հիվանդի, հետո դերասանի իր ծրագրած պտույտն ընելու, իր ուղևորության կխորհեր այդ տողը գրած ատեն։ Բայց ես արդեն գիտեի, որ հյուծախտը իր մեջ տարածվեր էր և զինքը քիչ ատենեն պիտի առներ սաներ մեներ։ Այդ տողին մեջ իր հրաժեշտի ողջույնը գտա...

Ելա հիվանդանոցը գացի զինքը տեսնելու։ Հանցավորի ամաչկոտություն մը ունեի սենյակեն ներս մտած ատենս։ Թիկնաթոռի մը մեջ թաղվեր էր, երկայն սենեկազգեստով, թևերը երկու կողմեն կախ, երեսը պատին։ Զիս տեսնելուն, ցատքեց, ու ժպտալով թևերը բացավ ինծի։ Անառակ որդին ընդունող հոր ձևն ուներ։ Պատուհանին մոտ տարավ թիկնաթոռը, նստավ հոն, զիս դիմացը նստեցուց, լույսին, որպեսզի լավ դիտե զիս, ու երկայն, նշանակալից նայվածք մը հառեց վրաս, հանդիմանությամբ, ներողությամբ ու սիրով շինված։ Ես սուտ խոսեցա, ըսի որ իր նամակը զիս ցնցած էր, թե այդ գիրքը (զոր դեռ չէի բացած անգամ) խորունկ ազդեցություն մը ունեցած էր մտքիս վրա, ներողություն խնդրեցի իր սիրտը ցավցուցած ըլլալուս։ Ուրախութենեն կդողար։ Աստուծո վրա սկսավ խոսիլ։ Դեմքը կդիտեի։ Մազերը, որոնց մեջ ճերմակները շատցած էին, միշտ իրենց աղվոր ոլորներովը կպաշարեին իր անհուն ճակատը, բայց գույնը շատ դեղնած էր, երեսները ներս էին քաշված, աչքերուն տակ մանիշակ ծիր մը կտեսնվեր արդեն, ու դժգույն հոգնություն մը ամբողջ դեմքին վրա։ Ձայնը բոլորովին մարած էր. հևք մըն էր միայն, որ կելլեր բերնեն։ Նայվածքները, որ միշտ կվառվեին, որ հիմա կարծես ա՛լ ավելի խոսուն դարձեր էին, և դիմագծերուն շարժումները, կլրացնեին իր խոսքը։ Գարնան հրաշալի իրիկուն մը կար դուրսը, ու չափազանց պայծառ լույսը, որ սենյակը կողողեր ու վճիտ մթնոլորտ մը կհորիներ այդ մարած էության շուրջը, հեգ-

նող բան մը ուներ։ Աստուծո վրա իր հույսը կբացատրեր ինծի, անոր վրա իր հավատքը կպատմեր։ Ան պիտի բժշկեր զինքը։ Կհուսար տարին մը գտնել իր ձայնը և նորեն բեմ ելլել։ «Միայն թե,— կըսեր,— պետք է, որ այս ամառ Իտալիա երթամ ու ձմեռն ալ Մատերա կղզին անցընեմ. ապահով եմ, որ գալ տարի բուժված կլինեմ»։

Երբեք այնպես չէի զգացած կատաղությունը բնության այն անգութ օրենքին դեմ, որ մահն է, ինչպես այդ վայրկյանին, ուր կտեսնեի գիմացս ամբողջ մեծություն մը, ամբողջ աշխարհ մը, որ կփլչեր, որ վաղը մոխիր պիտի ըլլար։ Ես գիտեի, որ ինքը պիտի մեռներ, և իր միամիտ ու պայծառ հավատքը սիրտս կճմլեր։ Կխեղդվեի հուզմունքես՝ տեսնելով առջևս մարդ մը, որ իր ուժերուն բոլոր մնացորդովը, պատրանքի մը կկառչեր։ Բայց կզգայի նաև, որ այդպես, իր հավատքովը սրտապնդված, ոչ միայն երջանիկ էր ան, այլև մեծ։ Այո՛, իր տառապագին պատրանքին մեջ ան ավելի մեծ էր, քան բնությունը, որ զայն կտառապեցներ ու կխաբեր։

Ինքը անհատնում պետք մը կզգար խոսելու, միշտ խոսելու, ավելի բարձր, ավելի ուժով ըսելու ինչ որ կար իր սրտին մեջ, և չէր կրնար։ Պահ մը, ա՛լ ուժասպառ զգաց ինք-զինքը, դեպ-դեղին կտրած՝ թիկնաթոռին վրա ինկավ։ Ուզեցի մեկնիլ, հանգիստ թողուլ զինքը. թևես բռնեց, խնդրեց որ խոսիմ. ինքը թուղթ մը առավ, անոր վրա գոգդոգալով կգրեր իր պատասխանները։ Մարտիրոսություն մըն էր։

Վայրկյան մը միայն, երկար լռութենե մը հետո, որու միջոցին գլուխը թիկնաթոռին ձգած՝ դուրսը, դաշտերուն կանաչին վրա գարնան լույսին հեշտավետ երանությունը կդիտեր, դառնության լքում մը ունեցավ։ «Ուժ չունիմ,— հծծեց,— թիկնաթոռես անկողինս անդամ դժվար կերթամ»։ Ու գարունին բերած տիեզերական երիտասարդացումին հանդեպ, իր ուժերուն հարաճուն նվազումը հիմա անդիմադրելի տրտմության մը տակ կընկճեր զինքը։ Հանկարծ, գորովի պետք ունեցող տկար էակի պոռթկացող հուզմունքով մը, Կովկասի իր մտերմագույն բարեկամներեն երկուքը հիշեց, Ստեփան Մամիկոնյանը և Բաշինջաղյանը։ «Ինչքա՜ն կցավիմ,— կըսեր,— որ անոնք հիմա քովս չեն. անոնք տեսնելով վրաս ուժ պիտի գար»։ «Օ՜հ, բարեկամս,— կավելցներ,— չես գիտեր ի՜նչ ազնիվ անձեր են։ Աստված քեզի այդպիսի բարեկամներ տա...» Եվ գրպանեն նամակ մը հանեց Մամիկոնյանեն ու ցուցուց ինծի. «Գիտնա՜ս՝ ինչե՜ր գրում է ինձ»։ Եվ արցունք մը կախվեցավ աչքեն։ Հետո երկընցավ սեղանի վրայեն թուղթ մը առավ և ինծի տվավ. «Ահա,— ըսավ,— ինչ որ գրեցի այդ բարեկամիս համար»։ Տաղ մըն

էր, հեռավոր, սիրված բարեկամի մը հուշին մելամաղձոտությամբը թրթռուն.

Թե մոտս լինեիր, իմ հոգվո հատոր,
Պիտի խնդրեի քեզանից խոնարհ՝
Գատուհանին մերձ քշել զիմ բազկաթոռ,
Որ քեզ հետ նկատեմ գարունն ծաղկավառ...

Եվ երբ իմ աղոտ ու նրվազ աչեր
Ջինջ հորիզոնին վրա մընան սևեռ,
Ուր շիկնած ամպերն միմյանց տան պաչեր՝
Դեռ խավար գիշերն չհագած յուր սևեր,

Թույլ տուր ինձ դու ևս տալ քեզ իմս համբույր.
Զեռքդ էլ կուրծքիս վրա սեղմած ամուր, պինդ.
Թող ծաղկանց նման սիրաք մեր քաղցրաբույր
Սուրբ մտերմություն բուրեն միշտ ի թինդ։

Մահն իսկ այն պահուն թե գար ծանոթանեմ,
Հեռ մարմնից բաժնել հոգիս սիրակեզ,
Հուսով գիմեի արարչիս հեգեմ,
Զի շատ սիրեցի բարին և ըղձեզ։

Ռուսական մատուռին դանգակը զարկավ։ Մետաղին հնչյունը նեղացուց հիվանդը։ «Օ՜հ,— ըսավ,— ասոնք նյութական ձևականություններ են, կրոնքը մարդուս հոգիին մեջն է»։ Ու ցույց կուտար կուրծքը, որ հուզմունքով ուռած, կելևէջեր։ «Աստվա՜ծ,— մրմնջեց,— երբեք զայն ավելի որոշ չեմ տեսներ, որքան երբ սա աղվոր կապույտին նայիմ»։ Ու իր աննման կապույտ աչվքները, տարապայման կերպով լայնցած ու վառ, երկնքին մեծ կապույտին մեջ կսուզվեին. և իր այդ նայվածքները դիտելով, պահ մը ինծի բնական երևցավ, որ իր հոգին, վաղը այդպիսի նայվածքի մը մեջ թռչելով, այդ կապույտին մեջ երթար ու հոն ապրեր, ապրե՜ր առ հավետ...

Հաջորդ այցելությանս, զինքը շատ ավելի տկար գտա։ Շատ ավելի տխուր՝ մանավանդ։ Անտարբերությամբ մը, որ Պոլսո հայերուն հավիտենական ամոթը պիտի մնա, մարդ չկար զինք տեսնելու գայող։ Իր քանի մը ազգականներն ու բարեկամները միայն հավատարիմ մնացեր էին իրեն։ Դանգատեցավ մանավանդ, որ ա՛լ չէր կրնար իսկ գրել. հիվանդանալեն ի վեր, մեծագույն զբաղումը և հաճույքը գրելը եղած էր— իր ամենեն սրտառուչ բանաստեղծություններեն մեկ քանին այդ շրջանին գրած էր. հիմակ, ատոր ալ անկարող էր. «Աղվոր գաղափար-

ներ կուգան միաքս,— ըսավ,— բայց ուժ չունիմ, որ գրեմ։ միտս կմթնա, երբ ճիգ կընեմ գրելու»։

Երրորդ այցելությանս, անկողինն էր, անշարժ տարածված։ Գլուխը դարձուց, մոայլ ժպիտ մը ուրվագծեց, ձեռքը կոկորդին տարավ ու վհատ շարժում մ'ըրավ։ Վերջն էր։

Երեք օր հետո մահը իմացանք։

ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ

Ա.

Էտկար Շահինը ճանչցած եմ ասկից չորս տարիի չափ առաջ՝ Փարիզի մայթին վրա։ Առջի վայրկյանն այդ անկախ ու թափանցող մտքով, տենդոտ, կենդանի ու տարօրինապես ինքնուրույն տեսողությամբ օժտված ոգան դիս գրավեց։ Քիչ մարդ տեսեր եմ այնքան քիչ բան վարդապետորեն սրված, այնքան քիչ սիստեմականաբար «ուսումնասիրած» այնքան քիչ իմաստակորեն «գրականագետ» և այնքան ամեն բան իր պարզ ու սուր ու բացարձակապես անձնական դիտողությամբը ըմբռնող ու մեկնող, որքան Շահինը։ Պոլսեն շատ երիտասարդ ելած՝ վենետիկ ինկած է, հմտության ամենաթեթև ծրարով մը, բայց զինված՝ տեսնելու, զգալու, հասկնալու, թարգմանելու եզականորեն հզոր և իսկատիպ կարողությամբ մը։ Սորվածին, ավանդականին, վարժապետականին բոլոր խեղաթյուրող ու վտանգավոր բռնութենեն ազատ, իր միտքը, բնականորեն արվեստագետ, զմայլելի հափշտակություն մը ունեցած էր այդ նրբանուրբ գեղեցկության քաղաքին մեջ, որ վենետիկն է, քաղաք մը, որ ամենեն թելադրականներեն ու հրապուրիչներեն մեկն է իր բարբերուն ու տիպարներուն նկարչականությամբ, իր բնության այնքան փափկաճաշակ ու հազվագյուտ, որքան պերճափարթամ երփներանգությամբ և իր թանգարաններուն, եկեղեցիներուն ու պալատներուն մեջ կուտակված գեղեցկագիտական ճոխություններովը։ Այնտեղ, մոգությունների անդունդի մը մեջ կորսված՝ գրեթե միս-միանակ, իր գժնդակ ու հեշտավետ ու արդեն այնքան ջղայնորեն բեղուն շվարմանը մեջ իբր միակ առաջնորդող թել ձեռքին ունենալով բարի և ուշիմ իտալացիի մը, Փասլեթթի նկարչին, աննախապաշար և լայնատես խորհուրդը, Շահին կարողացեր էր ըմբռնել ինչ որ կա տիրականորեն և էականորեն գեղեցիկ այդ միջավայրին մեջ, ուր բախտը զինքը ձգեր էր։ «հասկցեր» էր, որ այդ գեղեցկությունով հղփացած քաղաքին մեջ

ամենեն ապշեցնող, ամենեն վիթխարի, իր կյանքի հորդությամբն և ուժի մեծությամբն ամենեն հարուստ ու ամենեն խորունկ գեղեցկությունը Թինթորեթթոյինն էր, և անկեղծ ու պարկեշտ՝ ամեն բանե առաջ, զգալով վիհը, որ կբաժներ զինքը այդ ուրիշ ժամանակի, ուրիշ գեղեցկագիտության և անմատչելի հանճարի մարդեն, շատացեր էր անոր շուրջն իր հիացումը պատցնելով, անկից կորովի ու անկեղծության մեծ դաս լոկ առնելով, և մտքեն իսկ չէր անցուցեր զայն ընդօրինակել. որովհետև անոր ջսիջախիչ լուծին ներքև մտնելու տխմարությունը այդ ունէ լուծի տակ մտնելու, ունէ բան «ընդօրինակելու» ի բնե անկարող մտքին անկարելի պիտի ըլլար։ Բնազդորեն «նորախոհ», բոլոր ջիղերովը «արդի կյանքի» ըմբռնողությանը և անտիպ ու այժմեական գեղեցկության մը ստեղծումին տենչացող, Շահին իր շուրջը թավալող թարմ կյանքին մեջ իր որսը կփնտրեր, իր մարդկության պատառը, զոր պիտի կարողանար ուժեղորեն ափել, յուրացնել և իր ոգայնությանը մեջեն թարգմանված՝ դարձնել մարդկության։ Պահ մը դեղերը էր Թինթորեթթոյին քովերը, իր վայելուչ ու բարակ արվեստականության մեջ արդեն այնքան «մոդեռն» ու խել մը մանրամասնությանց մեջ այնքան իրապաշտ այդ վարպետին. անոր հոյակապ ձեղնանկարները երկարորեն ու հիացումնորեն դիտեր էր, և անոր փորագրանկարներեն մեկ քանին ընդօրինակեր էր զբոսանքի համար, առանց գուշակելու, որ իր ապագա արվեստին գործիքը կպատրաստեր ատով։ Բայց «հասկցեր» էր մանավանդ Նովելլին ու Տուզեն, երկու մեծ դերասանները, որոնց իրապաշտությունն այնքան խորին ու ներուժ կենդանություն մը կրցած է արտացոլացնել, որքան հելլեն արվեստին գերագույն իդեալականությունը։ Եվ հռետորական գեղոններով ողողված Իտալիային մեջ Շահին զատեր, գտեր էր Սթերեթթին, սրտի երգիչը, հավիտենապես ու միշտ ճշմարիտ ցավերուն պարզ ու անթառամ բանաստեղծը։ Ատոնք էին այն անունները, զոր կհեղհեղեր Շահին՝ առաջին օրն իսկ, ուր զինքը ճանչցա. և կուզեր «մեկը» ըլլալ, ատոնց շարքեն, և ատոնցմե տարբեր։ Քիչ հետո, իր աշխատանոցին մեջ տեսա աղքատի դեմք մը, իր առաջին փորձը նկարչության։ Խեղճության մեջ մգլոտած, զազիր, ահազդիկ ու ողորմելի կերպարանք մըն էր ծեր մուրացկանի, որ մութ անկյուն մը կծկտած, ոսկորի կտոր մը կկրծե. խոշոր, կոշկոռոտ, աղտոտ ձեռվընները՝ ոսկորին կառչած, ու մացառուտ մորուքով մը լցրճված մութ, խորտուբորտ ու ցավագին գլուխը ուշադրությունս գրավեցին անմիջապես։ Այդ գլխուն և այդ ձեռվընեներուն մեջ, իտալացի վարպետներուն առաքյալի տիպարներեն ցոլք մը կար. բայց նմանությունը՝ այդ վարպետներուն պես ամուր, հզոր ու անկեղծ շինվածք մը ունենալու փա-

փագին մեջ կկայանար լոկ, գործին հղացումը, տիպարին մասնավոր հատկանշականությունը, կատաղի անոթության ու եղկելի գռեհկության այդ ժեսթին ըմբռնումը՝ Շահինին կվերաբերեին և իրեն միայն։ Աշակերտ ըլլալով հանգերձ Աքատեմի ժուլիանի մեջ՝ Պենժամեն Քոնսթանի և ժան-Փոլ Լորանսի պես տաղանդավոր, բայց ավանդականությամբ թրծված ուսուցիչներու, փոխանակ անոնց ճաշակին, անոնց ուղղությանը ոչէ կերպով հետևելու, փոխանակ ակադեմական նյութ մը ընտրելու և դպրոցի շինված ձև մը ի տես բերելու, Շահին գացեր էր Փարիզի փողոցեն գտնել տիպար մը, որ իրեն թվեր էր դեռ չխուզարկված գեղեցկություններ պարունակել, և անոր տղմի ու ցավի հոգին ուզեր էր կտավին վրա հավերժացնել։ Այդ «կեռ»-ի դեմքը, որ 1896-ի սալոնին ցուցադրվեցավ և փարիզյան մամուլին մեջ համակրանքով գնահատվեցավ, Շահինի ոչ միայն առաջին գործն է ժամանակագրական կարգով, այլ արդեն հայտնությունը իր նկարչական տեսողության, որոշավորումը իր խառնվածքին և ձգտումներուն, սահմանագծումը այն գեղեցկագիտական աշխարհին, զոր Շահին կոչված էր արտահայտելու։ Խեղճերը, ինկածները, թշվառության ու մոլության մեջ փտտած խարխուլ, ուրվականային ու սրտաճմլիկ մարդկություն մը, ու մասնավորապես «Փարիզի փողոցին խեղճերը» իրենց թվականի ու միջավայրի որոշ անհատականությամբ, ահավասիկ «աշխարհը, զոր Շահին տեսավ ու հասկցավ Փարիզ հասնելուն պես, և որուն որոշեց թարգմանն ըլլալ։ Կհիշեմ այն բոլոր սիրուն իրիկնագեմերը, ուր իրեն հետ կգեգերեի, երբեմն, Փարիզի հին նեղ փողոցներուն մեջեն կամ արտաքին պուլվառներն ի վար, կամ գետափին երկայնքը, մայրամուտի անգին ժամուն՝ երբ բարակ ու գրեթե սրամիտ արևի մը վերջին հոգնած ժպիտը տարտամ ապսենթի գույնով մը կանաչորակված, թեթև ու հիվանդ մշուշի մը մեջեն կծածանի՝ իրենց «աբերիթիֆ»-ին կամ սիրային ժամադրությանը հասնելու ջղուտ դեմքերուն կամ օրվան գատանքեն դարձող բանվորի դժնդակ գլուխներուն վրա։ Շահին զմայլանքով կխոսեր ինծի այդ ոչէ չափազանցութենե, ոչէ պոռոտ հորդափայլութենե խորշող, այլ միշտ նրբորեն ու մսկոտորեն ոսկեզօծ ու միշտ հեղհեղուկ, ու միշտ գորշ ու թափանցիկ ու սարսռացող ստվերներով մեղմացած «Փարիզի արև»-ին վրա. կբաղձար անոր դեռ չհասկցված, դեռ չնշմարված տարօրինապես ինքնատիպ ու սիրուն հրապույրն արտահայտելու հասնիլ օր մը իր նկարներուն մեջ. ու հուզմունքով ցույց կուտար բարակ վտիտ ծառերը՝ պուլվառներու երկայնքը իրենց չարաճճի մելամաղձությանը մեջ գալարված, ու իրենց թոչկոտող քայլերովն ու քովնտի նայվածքներովը սահող վտիտ ու սատանորեն շնորհալի գործավորուհիները, ու դեռնատան դռներու առջև անասնացած կարմիր, ուռուցիկ ողբալի դեմքերը հոգնած բանվորներու։ Այդ ամբողջը առանց ակադեմական խթարումի, առանց իմաստակ շտկուտուքի, կյանքին բիրտ ու թարմ պարզությամբը, կտավին վրա վերարտադրելու ահագին դժվարությունը կզգար. և պարկեշտ ու գիտակից արվեստագետի առողջ ու բեղուն հուսահատություններն ուներ երբեմն՝ առանց որոնց հավակնոտ միջակ մը, փքոցուռույց կրկնող մը լոկ կըլլա մարդ։

Իր կարծածեն ավելի արագ և իր երազածեն ավելի հաջող կերպով իրականացուց Շահին իր ծրագիրը։ «Կեռ»-ենհետո, 97-ի սալոնին ի տես կդներ «Փողոցի անկյուն» տիտղոսով նկար մը, ուր իրիկվան արևի մը տակ, Փարիզի փողոցի մը ծայրը, խորոված գետնախնձորի ճղճիմ ծրարի մը շուրջը ամբողջ ողորմելի ընտանիքի մը խոնվիլը կտեսնեինք. «Պ. Շահին,— կգրեր «Ֆիկառո»-ին մեջ Փարիզի ամենեն հեղինակավոր քննադատներեն մին՝ Արսեն Ալեքսանդր,— պ. Շահին «Փողոցի անկյուն» տիտղոսին տակ կներկայացնե խորոված գետնախնձոր ծախող հուժկու կնիկ մը, տեսակ մը մատակ գամփռ, որ թևերը մեջքին, կդիտե մեկ քանի խեղճեր, որոնց ծրար մը խորոված է ծախեր, միակ ոսկեզօծ բանը, որ այնքան ողորմելիորեն կճանչնան։ Տեսարանը ուժեղորեն նկարված է, առանց բրտության, առանց մարդասիրական զգայնամոլության, միայն անհամեմատական ու անպատեհ տղեկի դեմքով մը ավրված։ Այս նկարը զգացված բանի մը սրտահույզ տեսքն ունի։ Եվ կարելի է ըսել, թե բարքերու լավագույն պատկերներեն մեկն է։ Նույնիսկ լոկ նկարչին անկեղծության շնորհիվ ընդհանրության շեշտ մը կառնե ան, և այս նկարին մեջ ինծի կթվի տեսնել ուտեստ բաշխող անծանոթ, հզոր ու բիրտ ուժը, հանդեպ սովալլուկ մտատանջություններուն, անձկագին ուշադրություններուն, սրտաճմլիկ զննություններուն, զոր բախտին ձգված խեղճերը կսեռեն իրենց ձեռքը անցընել կրցած քիչ մը կազդուրանքին»։

98-ին Շահին ցուցադրեց «Էնթեռիոռ» մը, որ գործավորի ընտանիք մը կներկայացներ իր խոնարհ ու աղնիվ ներքնակենցաղին մեջ, իրիկվան ճաշի ժամուն, և «Ապաստանարան»-ը, ուր կտեսնեինք մայր մը իր երեխային հետ ածուխով անձնասպան եղած, նկար մը ամբողջությանը մեջ անհաջող, բայց ուր մորը գլուխն ու ձեռքերը, տառապանքի պատառ մը տարօրինապես կենդանի, անմոռանալի սարսուռ մը կուտային դիտողին։ 99-ին Շահին Սալոնին տվավ «Մոնմարթրի փողոց» մը՝ իրիկնադեմի արևի մը տակ, և «Գեղջ մարդը», հրապարակի մը վրա արձանի մը տակ կծկված թափառիկ մը, հուսահատության, ատելության ու ոճիրի ահավոր ալքերով։

Բայց այս բոլոր նկարները, յուղաներկով հորինված, դեռ չէին հաջողած Շահինի տաղանդն իր լրությանը մեջ հայտնելու։ Հղացումը անոնց մեջ նոր էր և անձնական, տիպարներուն ընտրությունը, անոնց դեմքին ու ժեստին ներուժությունը, զանոնք պարուրող մթնոլորտին և անոնց ապրած պարզ ու անձկագին տառամին նշանակությունը արդեն կուրվագծեին մեծ նկարիչը, որ գոյություն ուներ Շահինին մեջ. բայց արտահայտության գործիքը, յուղաներկին կիրարկումը անկատարություններ ցույց կուտար դեռ, այդ արդեն շատ գեղեցիկ և շատ շահեկան գործերուն մեջ «պակաս» մը կար։ Եվ Շահին, որ պիտի հաջողի օր մը նույնիսկ յուղանկարին մեջ անթերի էջեր արտադրելու, առաջինն էր զգաց ող, որ դեռ իր ուզածին չէր հասած։ Եվ ահա հանկարծ՝ ձանձրույթի վայրկյանի մը մեջ, Շահին մտածեց, զբոսնելու համար, փորագրության փորձել, առանց ոևէ ուսուցչի առաջնորդության՝ ինքնիրենը ջանաց թափանցել այդ նուրբ ու դժվարին արվեստին գաղտնիքին և առանց ջին «փլանշ»-ը, զոր իր ձեռքովը գծեց, փորեց ու տպեց, հրաշակերտ մըն էր։ Հասկցող հրատարակիչ մը, Սակո, սքանչացմամբ գնահատեց այդ խոստմնավետ սկզբնավորությունը, և մղեց զինքն այդ ճյուղը զարգացնելու։ Շահին իր ճշմարիտ կոչումը գտեր էր։ Շարունակեց։ Ու ետևետև, արտադրեց այն հոյակապ «փլանշ»-ները, որոնք փարիզյան քննադատության կողմե այդ արվեստին ամենեն շքեղ արտահայտություններուն կարգը դասվեցան։ Միշտ նույն «աշխարհն» էր, որ կպատկերացներ՝ այս նոր ձևին մեջ. նույն աշխարհը, հիմա ավելի ընդարձակված, իր բոլոր ճյուղավորումներուն մեջ մանրամասնորեն խուզարկված։ Մեզի ցուցուց բոլոր «ինկածները»,— իրենց շքեղ փտության ու քրքջացող տառապանքին մեջեն դժնդակորեն սիգացող բոզերը, և կես գիշերի հեռավոր պուլվառներուն ամայությանը մեջ մեղսակից լապտերներու արյունոտ լույսին տակ սպասող զոհ ու ոճրագործ աղջիկները, ու կնկան ու դանակի փողոցաձեմ ասպետները, և գիշերային ապաստարաններու լխլխած ու դանդաչկոտ մարդկությունները, և առանց տունի, առանց ընտանիքի, ճամփաներն ի վար մշտապես աստանդական «Շըմինո»-ն, ու փողոցի նստարանի մը վրա խոնջենքեն կոտրտած գլխիկոր ողորմելին, և տարիքեն ու դատանքեն այլանդակված ծերերն ու պառավները, և իր նենգ կիսամերկությանը մեջ վայրագորեն գալարված կին-անասունը, ու ասոնց հետ մեկ քանի կնոջ դեմքեր ալ՝ ուրիշ աշխարհե մը, առողջ գեղեցկության, ներդաշնակ շնորհի, երջանիկ կենսունակության, ազնվական ու հաղվագյուտ մարդկութենեն։ Այս բոլորը, զոր ուրիշ մը, Սթենլենը, մասամբ արտահայտած էր՝ տեսնելու բոլորովին տարբեր եղանակով մը ու ջղուտ, հապճեպ ու համառոտ գծագրության մը միջոցովը, Շահին կվերստեղծեր շատ խորին և շատ անձնական հայացքով մը մեկնված, երկայն հետազոտություններն և դժվարահաճ զտումն մը անցած ու լայնագիծ համադրական ոճով մը, որուն հրապույրը կբազմապատկվեր փորագրության արհեստին ամենաճարտար ու ընդարձակ տիրացումով մը և անոր մեջ իրեն հատուկ բազմատարր եղանակի մը գյուտովը։ Այս տարվան Սալոնին վրա իր հրատարակած հոդվածին մեջ, արդի ֆրանսական քննադատության մեծագույն ներկայացուցիչը՝ Կյուսթավ Օ՛ԷՖՈՒԱ կգրեր. «Ինքնատիպ փորագրություններուն մեջ, պ. Էտկար Շահինինները, օֆորթներ ու փուանթ-սեշներ, բոլորովին ինքնուրույն տեղ մը կգրավեն՝ գծվածքին որոշակամությամբը, ձևին ամփոփումովը, ճերմակություններուն ու սևություններուն ճիշտ բաշխումովը։ Արվեստագետը ոչ միայն ճարտար է պղինձը փորելու և ուզածին պես գործածելու, այլև գիտե տեսնել և տեսածը ցույց տալ։ Կարող կհանդիսանա դեմքերն ու տեսարանները խուզարկելու, և մեր հայեցողությանը կընծայե այն նուրբ ու ուշագրավ պատկերները, զոր հաջողած է արտահանել իրականութենեն»։

Ինչ որ Շահինի արվեստագիտական անձնավորության հատկանիշն ու իրական արժանիքը կկազմե, այն է, որ իր գործը միակ նոթ մը մշտապես հեղհեղելու, միևնույն «բրոսեդե»-ն շարունակաբար կրկնելու մեջ չի կայանար, ո՛չ ալ ճարտար ու նուրբ ձևի մը գաղափարազուրկ ու մակերևութային փայլին մեջ։ Շահին ամբողջ «սիքլ» մը ունի իր մշտքին խորը պատրաստ, կյանքի պատկերներու բազմազան ու ընդարձակ շրջան մը ամբողջ, որուն մեկ քանի առաջին հանգրվանները լոկ անցած են դեռ, և որուն թարգմանումին համար իր ձեռ ալ պիտի հաջողի ստանալ այն ճապուկ կերպարանափոխությունները, այն գործածված միջոցներու, արտահայտության եղանակներու անհատնում ու մշտանորոգ պեսպիսությունը, որ կյանքն իր հեղհեղուկ բազմակերպությանը մեջ վերարտադրել կարողացող հազվագյուտ մտքերուն հատուկ է լոկ։ Այդ «սիքլ»-ը արդեն ունի, և հետզհետե պիտի ունենա ավելի լայն սահմանի մը մեջ, իր մասնավոր փիլիսոփայությունը, կյանքն ըմբռնելու անհատական ու խորունկ եղանակ մը, որ մտածող-դիտողի և համադրող-իրապաշտի այդ խառնվածքին մեջեն՝ պիտի միշտ պահպանե մտածումի միություն մը այս բազմաձև արտահայտության առերևույթ հակասականության մեջ։ Եվ ասոր համար է, որ ոևէ չափազանցություն գործած չեմ ըլլար՝ հավատալով, որ Շահինը կոչված է մեծ արվեստագետներու կարգին մեջ տեղ մը գրավելու։

Բ.

(Իր արվեստագիտական գործունեության երեսնամյակի առթիվ)

Էտկար Շահին մին է այն հայերեն, որ ապացուցած են, թե հայ տաղանդը կրնա եվրոպական բարձրագույն միջավայրներուն մեջ հասնիլ արվեստի ամենեն մաքուր կատարելության։ Ան մեր ցեղին մեկ թանկագին նվերն է ֆրանսական արվեստին, ուր ավելցուցած է ինքնատիպ ու գեղեցիկ էջ մը,— ինչպես Մորեաս հույն ցեղին մեծարժեք մեկ նվերն էր ֆրանսական քերթության։

Տաղանդավոր արվեստագետներու ամբողջ բույլ մը ունինք մենք հիմա, Հայաստանի ու գաղութներուն մեջ։ Ատոնցմե ոմանք, անոնք մանավանդ, որ Հայաստան կապրին, ազգային միջավայրն ու զգայնությունը կարտահայտեն ուղղակի. անոնք, որ իրենց ամբողջ զարգացումը օտար երկրներու մեջ ունեցած են, եվրոպական արվեստագետներ են՝ իրենց անձնական տաղանդի տեսակովն ու գույնովը շահեկան. արդ, տաղանդի արտահայտական զորության որակն ու չափը Շահինին մեջ հասած են այնպիսի բարձրության մը, որուն քիչ հայեր հասած են, և ինչքան ալ ան, հանգամանքներու բերմամբ օտար երկրի մեջ հաստատված ըլլալով՝ այդ տաղանդը հայկական կյանքի արտահայտման նվիրած չըլլա, ինչքան ալ իրեն նպատակ դրած չըլլա ազգային արվեստի մը զարգացման աշխատիլ,— ինչ որ, այսուհետև մանավանդ, գլխավոր ձգտումներեն մին ըլլալու է հայ արվեստագետին,— այսուհանդերձ այն մեծ հաջողությունը, զոր ան ունեցած է իբր հայազգի արվեստագետ Փարիզի պես առաջացյալ ու դժվարահաճ միջավայրի մը մեջ,— և իր վրա գրող մեծ քննադատներ միշտ հիշած են անոր հայ ըլլալը,— հերձվանքի ու հպարտության աղբյուր մըն է ամեն ազգասեր հայու համար։ Եվ արդեն, եթե իր արվեստն ու արտահայտած նյութերը հայկական չեն, իր զգայնության խորքը, կյանքը տեսնելու իր եղանակը ներքին խորունկ կապ մը ունին հայ ցեղային զգայնության ու մեր ազգի ճակատագրին ինչ-ինչ գծերուն հետ։

Անցյալ՝ 1925 տարվան ընթացքին լրացավ Շահինի գեղարվեստական գործունեության երեսնամյակը, և այդ առթիվ կուզեմ ուրվագրել դիմագծությունն ու մեկնել նշանակությունը այդ հզոր արվեստագետին արտադրած գործին։

Շահին իր սկզբնավորությունն ըրավ 1896-ին, ցուցադրելով Ֆրանսացի Արվեստագետներու Ազգային Ընկերության տարեկան Սալոնին

մեջ գործ մը, ուր արդեն իսկ կյանքի իր տեսությունը, արվեստի տեսակը և անձնավորության էական գծերը կհայտնվեին։ Ցուղանկար պատկեր մըն էր, որ կներկայացներ անկուտի մը (un gueux). սուր իրապաշտության էջ մըն էր, կյանքեն փրցված պատառ մը,— թնճուկ յուղոտ մազերով, կնճռոտած դեմքով, ողորմելի տարվոջ մարդ մը, որ երկայն սև եղունգներով աղտոտ ոսկրուտ ձեռքերուն մեջ լղճուկ բան մը բռնած կխածներ զայն՝ անոթությունը խաբելու համար։ Պատկերը ուշադրություն գրավեց. լրագիրները առաջին անգամ ըլլալով քանի մը դրվատալից տողերով հիշատակեցին Շահինի անունը։ Հաջորդ Սալոնին՝ ան ցուցադրեց կին մը, որ աղքատութենեն ընկճված՝ փակ խցիկին մեջ ածուխը վառեր և անկողնին վրա՝ փոքրիկ զավակը գիրկը՝ անձնասպան եղեր էր։ Բոլոր գործերը, զոր արտադրեց այնուհետև այդ շրջանին, խոնարհներու, թշվառներու, տառապողներու աշխարհեն կառնեին իրենց նյութը, բանվորի ընտանիքներ՝ հյուծված դժգույն դեմքերով, փողոցը ածան ուտելիք ծախող կնիկներ՝ ողորմելի չքավոր էակներով պաշարված, աղքատութենե ուժասպառ երեխաներ, ապուշցած, անբանացած մարդոց դիմակներ, կամ սպառնագին աչքերով մուրացկաններ, Փարիզյան լուսապանծ կյանքին ստատոր կազմող մռայլ խեղճության զանազան երևույթները։ Իր արվեստը, այդ առաջին քայլերուն, անկատար էր դեռ. Շահին դեռ իր բուն գործիքը, իր արտահայտության անձնական դրոշմը, վերջնական ձևը չէր գտած, բայց արդեն իր հոգեկան բնորոշ ձգտումը, իր տաղանդի տեսակը, արվեստի և կյանքի մասին իր հիմնական ըմբռնումը հստակորեն կերևային այդ սկզբնական արտահայտության մեջ, և այդ գիծը մնաց մինչև վերջը իր գործին մեջ, իբրև անոր տիրական հատկանիշը. գործը ընդլայնեցավ, ճյուղավորեցավ. արտահայտության միջոցները նրբացան, ավելի վճռական և ինքնատիպ դարձան, բայց ոգին այդ գործին, արդեն առաջին օրեն հայտնված, մնաց անայլայլ, ավելի ևս խորանալով, ավելի գիտակից ու հզոր ձևով մը և ավելի այլազան երևույթներու մեջեն ինքզինքը թարգմանելով։

Եվ այդ ոգին է, որ Շահինի գործին ներքին կապը կկազմե իր ցեղին հետ։ Այդ գեղեցիկ առույգ երիտասարդը, որ բարեկեցիկ գորովագին ընտանիքի մը ծոցը՝ Գատրքեոյի հեշտագեղ մթնոլորտին մեջ իր մանկությունն անցուցած, հետո Մուրատ-Ռափայելյան վարժարանը ղրկվելով՝ իր պատանությունը Վենետիկի երանգաճոխ, երգալից, գեղարբշիռ մթնոլորտին մեջ սահեցուցած էր, որ կզգար իր մեջ ուժ, տաղանդ, կյանքի մեջ հաջողումն ապահովող բոլոր ձիրքերը, իր նկարչական ուսումը լրացնելու համար գալով Փարիզ, լույսերու, ցնծության, պերճանքի քաղաք, այդ տարիքի տղոց համար ամեն հաճույքներով լեցուն,

իր առաջին քայլերեն իսկ կնախընտրեր, բնազդորեն, հակիլ թշվառներու, տառապողներու ցավին վրա, զայն կճգներ իր արվեստովն արտահայտել, քան թե զվարթ կամ փայլուն նյութեր ընտրելով՝ իսկույն հաճելի դառնալ հասարակության մեծ մասին։ Կյանքի եղերական տեսիլներուն երկար ատեն ի վեր ընտելացած, տառապանքի բոլոր ձևերուն խորապես ծանոթ իր ցեղին հոգին էր, որ առհավական անգիտակից ու հզոր մղումով մը անոր այդ ձգտումին մեջ կհայտնվեր։

Վենետիկի մեջ Շահին իրեն առաջնորդ ունեցած էր Մխիթարյանները, որոնց ուսուցումը ճարտասանական, հռետորական է ընդհանրապես, դասական արվեստի, ակադեմական գեղեցկագիտության մղող. իբր նկարչության դասատու ունեցած էր իտալացի արվեստագետ մը, որ պատմական նյութերով նկարներ կհորիներ. Վենետիկի մուսեոնին, դրքասական պալատին և եկեղեցիներուն մեջ դիզված նկարչական հրաշալիքները դիտած էր երկարորեն, և ատոնցմե մասնավորապես սիրած էր Թինթորեթթոյի, Պելլինիի, Քարփաչիոյի, Թիեփոլոյի գործերը. այդ՝ մեծ վարպետները իր սքանչացումը գրաված, արվեստի սերն իր մեջ արծարծած էին, բայց ո՛չ Մխիթարյանց դասերուն, ո՛չ իտալացի վարժապետին, ո՛չ Վենետիկյան հին մեծ վարպետներուն մեջ է, որ ան պիտի գտներ իր բուն ուղեցույցը, այլ մեծ իրապաշտ դերասանին՝ Նովելլիին, որուն խաղացվածքը տեսնելով՝ առաջին սուր ըմբռնումն ունեցած էր այն արվեստին, զոր պիտի ուզեր ինքն իսկ իրականացնել նկարչության մեջ, արվեստ մը պարզ, բնական, անկեղծ, համակ արդիական, ուղղակի կյանքեն ներշնչված, առանց որևէ շտկուտուքի և ոևէ ճոռոմության։

Փարիզ, Աքատեմի ժյուլիանին մեջ, իր ուսուցիչներն եղած էին Պենժամեն Քոնսթան և Ժան-Փոլ Լորանս, որ այդ միջոցին հռչակավոր էին իբր հեղինակավոր վարպետներ, մին՝ աշխարհիկ կյանքի նկարներով, բարձր դասու անձնավորությանց կենդանագիրներով հանրածանոթ, մյուսը՝ պատմական մեծատարած գործերով, երկուքն ալ հմուտ արվեստագետներ, բայց որոնց գործին մեջ պայմանադրականը, հետևողականը գերակշիռ էր քան ինքնատիպը, սորվածը ավելի կտիրեր քան ստեղծվածը։ Փարիզի մեջ առաջին օրեն Շահինին ծանոթացած ու իր նախափորձերուն քայլ առ քայլ հետևած ըլլալով, կհիշեմ, որ իրեն կըսեի երբեմն՝ «Դուն ավելի մեծ արվեստագետ մը պիտի ըլլաս, քան Պենժամեն Քոնսթանն ու Ժան-Փոլ Լորանսը». ինքը, ծայրահեղորեն համեստ, կգայթակղեր, անհնար կնկատեր զայդ, և սակայն գուշակությունս կատարվեցավ. այդ շրջանեն Փյուվիս տը Շավան և Ռոտեն, որ այն միջոցին դեռ քիչերեն հասկցված էին, այսօր կտիրեն իբր իրապես մեծ արվեստագետներ, իբր հավիտենական վարպետներ, բայց Պենժամեն Քոնսթաններուն և Ժան-Փոլ Լորանսներուն հռչակը դժգունած է, անոնց գործերը այժմ կնկատվին հարգելի միջակություններ, մինչդեռ Շահին իր ճյուղին մեջ հասած է կատարելության մը, զորության մը, կյանքոտ ու անձնադրոշմ ստեղծագործության մը, զոր անոնք չունեին, և իր անունը ապահով է այլևս ֆրանսական փորագրանկարչության մեջ առաջին տեղերեն մին հավերժորեն գրավելու։

Եվ ասիկա կրցավ ընել Շահին, որովհետև Փարիզի մեջ ալ ան իր բնազդով գտավ ոչ միայն իր արվեստի ուղղությունը, իր նյութերը, այլ իր բուն առաջնորդները, որ դպրոցեն դուրսն էին. ան, խորապես հարգելով հանդերձ իր երկու ուսուցիչները, և անոնցմե սորվելով հանդերձ ինչ-ինչ կարևոր տարրերը «արհեստ»-ին, զոր անոնք լավ գիտեին, խանդավառորեն հարեցավ Թուլուզ-Լոթրեքին ու Տրկասին, ու սիրեց Ֆորենը, Սթենլենը, արվեստագետները, որ մեծ իրապաշտներ էին, իրենց ինքնատիպ արդիադրոշմ հզոր գործերուն մեջ Փարիզի թշվառներուն, անկյալներուն, լքյալներուն, մոլորյալներուն, ինչպես և շահագործողներու, հաստափոր եսականներու, մոլության տարածիչներու և զոհերու աշխարհը պատկերացնող։ Անոնցմե ներշնչվելով է, որ Շահին գտավ իր ճամփան, և իր գործը արդեն անոնց գործին մեկ տաղանդալից շարունակությունն է, նվազ հեղափոխական, նվազ լրագրական, ավելի նուրբ ու առարկայական, քան Սթենլենինը, ավելի մոտ Թուլուզ-Լոթրեքին, բայց նվազ կծու, նվազ թունավոր, ավելի մեղմ, կարեկից ու եղբայրական։

Շահին շատ «կարդացող», նկարչության մեջ «գրականություն գնող» արվեստագետներեն չէ, սիրած է սակայն քանի մը գրագետներ, և իր ընտրությունը հոդ ալ նշանակալից է, սիրած է Ֆլոպերն ու Թոլսթոյը, կյանքը հարազատորեն արտահայտող վարպետները, անոնք մանավանդ, որ կյանքին ցավերն ու մարդուն տկարությունները ճշգրտորեն ցույց կուտան, դառնությունով ու արգահատանքով։

Շահին, որոշապես նախասիրելով հանդերձ «ուղղակի» և անձնական արվեստը, ոևէ «դպրոցի» կապված չէ, տեսություններու, բանաձևերու հետամուտ չէ եղած երբեք, բնազդական մը եղած է, որ աչք մը ունեցած է ճիշտ ու սուր տեսնող, մատ մը, որ գիտե կենդանի կերպով արտահայտել և բնածին ճաշակ մը, որ ավելորդությունները մեկդի դնել կուտա և էականը կշեշտե իր արտադրությանց մեջ։

Շահին իր արտահայտության բուն գործիքը գտավ, երբ օր մը որոշեց փորագրանկարչության նվիրվիլ նախընտրաբար։ Հոդ իր հաջողությունը շանթարագ հանգամանք մը ունեցավ։ Ինքնիրենը մտածած էր

փորձել այդ ճյուղը, գրեթե ինքներինը սորված էր այդ արհեստը, կոր իր հետաքրքրություններով, գյուտերով զարգացուց, ճոխացուց, անձնականացուց հեռագրեան ու քիչ ատենն քննադատությունը զինքը հուշեցեց Ֆրանսական o-ֆորքին և փուանք-սեշին մեծագույն վարպետներեն մին։

Գործը, զոր արտադրած է իբր փորագրանկարիչ, շատ ընդարձակ է։ Անոր մեջ կան շարք մը կենդանագիրներ ծանոթ դեմքերու (Լուիզ Ֆրանս դերասանուհին, Քոքելի հրապարակագիրը, Անաթոլ Ֆրանս իր աշխատանոցին մեջ, Ալֆրետ Սեթվենս գելժ մեծ նկարիչը և այլն), կան բազմաթիվ էջեր Փարիզի և շրջակայքի բնանկարներու, փողոցանկարներու, կան տեսարաններ փարիզյան տոնավաճառներու տիպարները ներկայացնող, ժողովրդական կյանքի այլ և այլ երեսները պատկերացնող. կան շնորհի էջեր, կանացի դիմանկարներ, ոմանք նուրբ ու քնքուշ, հաճախ ավելի նկարագրով զորեղ, քան գեղեցկությամբ հրապուրիչ, գեղջկական բնության տեսարաններ կամ Սենի ափունքները իրենց հատուկ բանաստեղծությամբ. բայց ինչ որ հոն կտիրե նորեն, թշվառության, տաժանքի, տառապանքի տեսիլներն են, մշտաթափառ աղքատներ (շըմբնո), տնտուն խեղճերու գիշերային ապաստանարանի պատկերներ, կամուրջներու տակ քնացող ողորմելիներ, անգործ թափառող գործավորներ, ու հիվանդներ, գինովներ, մոլության մեջ ինկած փտած գիներ, ու բնության տեսարաններու մեջ ալ հաճախ նախընտրաբար խոնարհ, անշուք քաշված վայրերու, տխուր ամայի անկյուններու պատկերացումը, Փարիզի ծայրամասերու աղքատիկ ու թախծագին թաղերը, և անառուններու մեջ իսկ՝ ո՛չ հարուստ տուներու պատկանող շքեղ նժույգները, այլ ավելի շատ հաճախ՝ բեռ կրող, դժնդակ աշխատանքի լծված խոշոր «ժողովրդական» ձիերը։

Երբ, տարիներով Փարիզի նկարչական երգիչներեն մին ըլլալե հետո, Շահին գնաց նորեն տեսնել իր առաջին ուսումնասիրությանց սիրելի երկիրը՝ Իտալիան, անկից բերավ ամբողջ շարք մը փորագրանկարներու, և հոն ալ՝ Վենետիկի, ինչպես Փիզայի, Սիենայի, ինչպես Ասիզի տեսարաններուն և տիպարներուն մեջեն նախընտրած էր, միշտ նույն բնագրեն մղված, է՛ն խոնարհները, է՛ն անշուք ու անծանոթ մնացածները, աղքատիկ անկյուններ, ժողովրդական տիպարներ, ամենքն ալ պարուրված զվարթ լույսովն իտալական մթնոլորտին և ազնվական գեղեցկությամբն արվեստին, որ այդ երկրին ուրէ անկյունին մեջ իր ժպիտը կշողացնե։

Շահին մեծապես գնահատված է Ֆրանսական ամենեն հեղինակավոր քննադատներեն։ Կյուսթավ Ժեֆրուա, Արսեն Ալեքսանդր, Կապրիել Մուրե, Ռոժե Մարքս, Կյուսթավ Քան իր գործին նվիրած են, հանդեսներու մեջ, ընդարձակ հոդվածներ, ամենաբարձր ներբողներով պանծացնելով անոր տաղանդը։ Զայն գնահատած են նաև գրական վարպետներ, ինչպես Անաթոլ Ֆրանս և Միրպո. առաջինն իր մեկ նորավեպը վեպի ձևով ընդարձակեց՝ զայն Շահինի ձեռքով նկարազարդել տալով հրատարակելու մտադրությամբ, և այսպես ալ լույս տեսավ ան «Histoire comique» («կատակերգական պատմություն») տիտղոսով, Շահինի փորագրանկարներով գեղարվեստորեն մեկնաբանված։ Միրպո Շահինին տվավ իր մեկ նորավեպը, Dans l'antichambre» («Նախասենյակին մեջ») պատկերազարդելու։ Կապրիել Մուրե հատկապես գրեց գիրք մը Փարիզի տոնավաճառներուն վրա, և անոր գրեթե բոլոր էջերուն մեջ բնագրին կընկերանա Շահինեն փորագրանկար մը, և այդ շարքը Շահինին ամենեն հոյակապ արտադրություններեն մին է, իր տեսակին մեջ անմահ գլուխ-գործոց մը։

Տարիներ առաջ, Լյուքսենպուրկի ազգային մուսեոնի վարչությունը Շահինի գլխավոր փորագրանկարներու հավաքածուն գնեց. անոր գործերեն կգտնվին Գերմանիոյ և Իտալիոյ մուսեոններեն ոմանց մեջ։ Իտալիոյ մեջ մասնավորապես ծանոթ է ան և սիրված. կմասնակցի միշտ Վենետիկի տարեկան միջազգային ցուցահանդեսին, որ անցյալ տարի նույնիսկ ժյուրիի անդամ անվանեց զինքը։ Հայաստանի կառավարությունն ալ քանի մը տարի առաջ գնեց շարք մը Շահինի գործերեն Երևանի մուսեոնին մեջ դնելու համար, և Շահին ատիկա կհիշե միշտ մասնավոր հրճվանքով մը։

Շահին ունի նաև բավական բազմաթիվ գործեր փառթելով, հորինված. ատոնց մեջ կան կենդանագիրներ ու բնանկարներ, որ փափուկ ու արժեքավոր էջեր են։ Յուղաներկը երկար ատեն լքելե հետո (թեև մերթ ընդ մերթ դարձած է նորեն անոր՝ ծաղիկներ նկարելով, որոնք գեղեցիկ են), վերջերս դարձյալ ձեռք առավ զայն ու խմբական ցուցահանդեսի մը մեծ շարք մը յուղաներկով շինված գործեր ի տես դրավ, որոնց մեջ իր արվեստին էական հատկանիշները կերևային միշտ. բայց անտարակուսելի է, որ o-ֆորքները, փուանքսեշները և գծագրությունները կմնան ցարդ իր լավագույն գործերը, փորագրանկարչությունը իր արվեստին կատարելագույն գործիքն է ցարդ։ Ինչ որ ուժեղ է իր մեջ՝ գծագրությունն է՝ է՛ն առաջ, և անոր հետ լույսի և շուքերու բաժանման հշգրիտ զգացումը, դեմքերու և բնանկարներու հոգեբանության խորաթափանց ըմբռնումը և պարզ ու կենդանի արտահայտությունը։ Սակայն ան իր ուժերուն բովանդակ առուգության մեջ է դեռ. միշտ դժգոհ ինքն

իրմե, միշտ կատարելագործվելու հետամուտ, միշտ իր արվեստն ընդլայնելու, ճոխացնելու ցանկացող, ան դեռ կարող է իր սքանչացողնեբուն նոր անակնկալներ ընծայել, թե՛ փորագրանկարչությամբ, ուր դյուտեր ունի դեռ ընելիք, և թե՛ փասթելով ու յուղաներկով, ուր իր վերջին բառը չէ ըսած դեռ։

Այս մեծատաղանդ արվեստագետը, որ առաջին քայլերեն այնքան փայլուն հաջողություն ունեցավ, եղած է միշտ և մինչև ցարդ կմնա գերազանցորեն համեստ։ Կարելի է նույնիսկ ըսել, թե իր համեստությունը կրնանի չափազանցության կելու իր նյութական հաջողությունը, որ շատ ավելի մեծ պիտի ըլլար, եթե աշխարհիս գլխ քանի մը կարևոր կեդրոններուն մեջ իր ամբողջական գործին ցուցահանդեսներ սարքելու հետամուտ եղած ըլլար։ Մինչև ցարդ, նույնիսկ Փարիզի մեջ, շատացած էր տարեկան Սալոններուն և խմբական ցուցահանդեսներու մասնակցելով, իր գործին առանձին մեծ ցուցադրություն մը չէ ըրած. միշտ հետաձգած է այդ ծրագիրը, գայն թնալդող իր բարեկամներուն պատասխանելով, թե կսպասե ավելի ուժեղ, ավելի կատարյալ գործեր արտադրելու, որպեսզի այդպիսի քայլ մը առնել համարձակի։ Ձէ մոռցած երթալ Ամերիկա իր գործերը ցուցադրել, ինչպես ըրավ Հելլեռ (Ֆրանսացի նուրբ ու վայելչաշնորհ փորագրանկարիչը, բարձր դասու փարիզուհիներու ճարտար պատկերահանը, որ սակայն Շահինին ուժը, ընդարձակությունը և խորությունը չունի). չէ իսկ դեռ գացած ցուցահանդես մը սարքել մոտիկ Լոնդոնի մեջ, ուր մեծ հաջողություն պիտի ունենար ապահովապես։ Մեկ քանի ամիս առաջ վերջապես որոշում տվավ առանձին ցուցահանդես մը կազմելու Փարիզի մեջ, այն ալ իր գործերու մեկ շարքը միայն։ Ամեի տես դնելով (Իտալիո տեսարաններու և տիպարներու շարքը)։ Ամերիկացի մասնագետ արվեստասեր մը, որ եկած էր այդ ցուցահանդեսին, կըսեր իրեն. «Մենք Ամերիկա մեկ արվեստագետ մը չունինք, որ այս ճյուղին մեջ ձեզի հավասարի, իսկ Անգլիո մեջ հազիվ 2—3 հոգի կան, որ ձեզի չափ ուժով են. Ինչո՞ւ ցարդ չեք գացեր Ամերիկա ձեր գործերը ցուցադրելու»։

Պիտի ուզեի հիշատակել հոս հատվածներ բոլոր մեծ քննադատներեն, որ Շահինի գործին վրա խոսած են, բայց չափազանց շատ պիտի երկարեր այս հոդվածը, կշատանամ թարգմանելով քանի մը տողեր այն խանդավառ առաջաբանեն, զոր հանրածանոթ գրագետ ու քննադատ Քամիլլ Մաքլեր գրած էր այս վերջին ցուցահանդեսին հայտագրին համար։

«Շատոնց է, որ մղվեցա էտկար Շահինի արվեստին վրա սքանչանալ և իր անունը մտքիս մեջ սևեռել՝ տեսած ըլլալով իրմե քանի մը կենդանագիրներ, որոնց մին, անմոռանալիորեն արտահայտիչ, խեղճ դերասանուհի Լուիզ Ֆրանսինն է, և մյուսը՝ թափառիկ աղքատի մը դեմքը։ Ատիկա բավական էր հաստատելու համար վարպետությունը արվեստագետի մը, որ սահմանված էր ժամանակակից օ-ֆորթին ամենեն հմուտ ու հզոր մասնագետներեն մին ըլլալու, անոնցմե, որոնց գործը, առանձնաշնորհյալ հավաքածուներու կամ թանկագին գրքերու մեջ պահպանված, շատ ավելի երկար կյանք պիտի ունենա, քան այնքա՛ն ակադեմական կամ հեղափոխական նկարներ՝ հավասարապես անկենսունակ և իրենց արժեքեն ավելի աղմուկ հանած, վկայելու համար ինչ որ մեր ատենին արվեստը իրապես կատարած է հավիտենական գործերու շարքին մեջ մտնելու արժանավոր։ Անիկա պատված է «լռիկ արվեստը», միակը որ հաշվի կրնա դրվիլ, և այսօր ինքն ալ կպատվվի։ Մանրակրկիտ ու միանգամայն լայնատես նկարագրող մը եղած է թափառական անտուն մարդոց, ժողովրդական կյանքին, ցոփության վայրերու, տոնավաճառային հրճվանքներու։ Նկարազարդած է քանի մը հատորներ, ուր լույսի և շուքերու հրայրքին միացուցած է հանճարը ճշտատես, արգահատալից ու ողբերգական դիտողություն մը, որ ճարտար է դեմքերը շրջապատին ու զգացումը ձևին հետ կատարյալ կերպով կապելու մեջ։ Այս պահուս ես պիտի խոսիմ միայն իր իտալական ու վենետիկյան տեսիլներուն վրա։ Էտկար Շահին անոնցմե մաս մը ցույց կուտա հոս։ Ան ամբողջական ցուցադրություն քիչ կընե կամ բնավ։ Այսպիսի ցուցահանդես մը ատով ավելի ես արժեքավոր կդառնա։

«...Ոևէ զգայուն էակի համար բավական պիտի ըլլա այդ փորագրությանց վրա նայվածք մը նետել զմայլելու համար այն հանգարտ, բնական և երևութապես դյուրին եղանակին վրա, որով, քանի մը գծով, Շահին կվերակենդանացնե վճիտ հորիզոնները, կդգացնե ծանրությունը ջուրին, պատկառելի քարերը կօծե լատինական արևուն սաթի ու ոսկիի հեղուկովը, ստվերները կսարսռացնե և ցոլքերը կխաղցնե, կօգնե գույնը երևակայելու, և ավերակներու հեղգ կրավորականության մեջ կվերակոչե անցյալին վեհաշուք ու անջնջելի հոգին... Ով որ Իտալիա գացած է, ոչ թե հասարակ հետաքրքրությամբ մը, այլ մեծ բաներուն հարգանքովը, չպիտի կրնա այս պատկերները տեսնել առանց իր էության ներքնախորքին մեջ զգալու այդ հուզմունքը, որ գրեթե սիրահարի հուզմունք մըն է, և որ կծնի լսելով միայն անունները Սան-Ճիմինիանոյի, Փիզայի, Սիենայի, Փերուճիոյի և Ասիսի։ Շահին Թոսքանայի, Ումպրիայի մեջ, նոթագրած է ինչ որ այնքան ուրիշ արվեստագետներ

լքած էին հոգուտ շատ հոչակավոր տեսարաններու կամ ճարտարապետություններու. ներքին կյանքի համար իր հակումը իրեն սիրելի դարձուցած է այս անժառանգյալ անկյունները, ուր պատմության ծաղիկը այլևս անմոռուկ մը կամ ասպոտել մըն է միայն, հիշատակի խորհրդանշան մը մահվան մեջ։ Էջյալ գեղեցկությունը ինչքա՞ն շնորհ ունի, երբ այսպիսի մարդ մը զայն կներկայացնե։

«... Վենետիկի մեջ Շահին ինքնատիպ ըլլալու գրավը վաստակած է, հազար փորագրիչներե հետո, նույնիսկ Ռեխսլերեն հետո, որ զանոնք ամենքն ալ նեմմացուցած է։ Հոն ինչպես Իտալիո մնացյալ մասերուն մեջ, ցույց տված է իր կարողությունը չնկատված երևույթներ ընտրելու, թաքուն արտաշարժությունը ի հայտ բերելու, ազատ գմբեթի մը, քանդակագործության նշխարով մը, և արեւու երանգով մը իր խեղճությունը պճնող փլփլված կամարի մը, ծանր ջուրին մեջ իր ուրվականը ասեղնագործող այանի մը, խոնավ խավարով առեր դրան մը, ուր մարդ կերևակայե զարհուրելի անծանոթ մը հեշտության կամ սպանության. և Արևելքի քրիստոնյայի իր ժառանգականությունը խոսած է Շահինին մեջ, իրեն հասկցնել ու ճաշակել տված է ամեն ինչ, որ կա արտիտալական և արտաեվրոպական Բյուզանդիոնի ճորտ ու հաստշտակիչ այդ Վենետիկին մեջ, ուր պետք է մոռնալ լատին ոգին իր բուն մասնահատուկ նկարագրով։ Բայց ցեղը խանգավառած է արվեստագետը, որ վարժված է Փարիզյան հաստրակ դասակարգը ուսումնասիրելու։ Գերճանքի Վենետիկը ձգած է գեղամոլներուն և աշխարհաքաղաքացիներուն, և դիտած է, սիրած է աղքատ Վենետիկը, ճշմարիտը, ու կիները, որ այդ աղքատության մեջ կապրին։

«...Բայց ինչո՞ւ փորձել դժգույն ու հաշորդական բառերով արտահայտել ինչ որ պղինձը խածնող քանի մը գծերու հմայքը այնքան հրաստակորեն պիտի պարտադրե նայվածքին, մարդ կտեսնե հոտ, լույսն ու օդը, և հարթ հավասար ջուրը, ուր շրջված երկինքը քաղցր անդունդներ կբանա, կտեսնե քարերը, զոր սիրեց Ռըսքին, և մարմարներուն վրա՝ ցնցոտիները, և աշխատության ու ցոփության որջերը, և դժգույն բանվորուհիները արեւուն մեջ, և այդ մոբացկանուհին, որ ուժասպառ կկքի, և այդ տղաքը, որ կխաղան, ու մարդ կլսե վենետիկյան այդ բարբաջը, որ ջուրին պես կոլփլդա։ Կյանքն իսկ է, որ վերադարձված է։ Առար համար պետք էր այդ հոգին, որ ատակ է ամեն ինչ ըմբռնելու, և այդ նայվածքը, որմե ոչինչ կխուսափի, և այդ ձեռքը, որ կարող է ամեն ինչ արտահայտել»։

ՀՈՎՍԵՓ ՓՈՒՇՄԱՆ

Փուշմանի ցուցահանդեսը, որ տեղի ունեցավ վերջերս Փարիզի մեջ, գեղարվեստական դեպք մը եղավ։ Առաջին ցուցադրությունը, զոր ան սարքած էր երկու տարի առաջ, արդեն խիստ ունեցած էր ազվոր հաջողություն մը և փարիզյան մեծագույն թերթերու քննադատները հայ նկարչին ինքնատիպ տաղանդը դրվատած ու անոր գործին արեւելյան թույր հրապույրն ի վեր հանած էին. այս անգամ Փուշման ցույց կուտար փարիզյան հասարակության, ավելի մեծ սրահի մը մեջ, հավաքածու մը ավելի այլազան գործերու, որոնց մեջ անոր տաղանդը կհայտնվեր ավելի լիալիր ու տիրական ձևով մը և ուր անոր արվեստը, ինչ-ինչ էջերու մեջ, իր ամենեն խոր ու ամենեն կատարյալ արտահայտության հասած կերևար։ Այս ցուցահանդեսը եղավ հաղթանակ մը մեր հայրենակցին համար և ամենեն շքեղ ապացուցումներեն մին մեր ցեղին գեղարվեստական ստեղծագործ հանճարին։

Հովսեփ Փուշման, ինչպես արդեն գրած եմ իր առաջին Փարիզյան ցուցահանդեսին նվիրված հոդվածիս մեջ, զոր Եգիպտոսի «Արև»-ը հրատարակեց, հարազատ ու թանկագին արտահայտիչ մըն է Ասիո հնագույն ցեղերու ֆիզիկական ու բարոյական դիմագծության, նկարչական երգիչ մը անոնց իմաստասիրական ու գեղեցկագիտական ներքնաշխարհին։ Եվրոպացի մեծ նկարիչներ փորձած են Արևելքը թարգմանել, Ասիո բնության ու մարդկության խորհուրդները, մոգությունները, հինավուրց խոկումը արտահայտել. բացի Ռեմբրանտեն ու Տրլաքրուայեն, որոնց ներքնատես հանճարը, ինչ-ինչ էջերու մեջ, կրցած է թափանցել Արևելքի ոգիին՝ և զայն արտահայտել զորեղ ու կենդանի գույներով, գրեթե ամենքը ավելի կամ նվազ եվրոպական աչքերով ու ճաշակով Ասիա մը պատկերացուցած են։ Փուշման, զավակ հայ ցեղին, որ ինք արևելյի ըլլալե զատ, դարերե ի վեր Ասիո գլխավոր ցեղերուն հետ շփման մեջ գտնվելով՝ անոնց արվեստն ու աշխարհայացքը խորապես ըմբռնած և Ասիո շատ մը կետերուն վրա արվեստներու զարգացման կարևոր մասնակցություն ունեցած է, իր արյան մեջ ունենալով ասիական ոգիին բնազդաբար թափանցելու կարողությունը, արտադրած է գործ մը, ուր ինչ որ Ասիո քաղաքակրթություններն ունին ամենեն ավելի նուրբ, ինքնահատուկ ու ազնվական՝ կհամադրվի իր ճիշտ գույներով, իր կենդանի բուրումներով, իր իրական հոգեբանությամբ։ Եվրոպական արվեստի հմտությունը, զոր ան ստացած է Փարիզի մեջ, իրեն ծառայած է իր նկարչական գործիքը կազմելու, իր արտահայտության միջոցները պատրաստելու, ինչպես և Արևմուտքի գեղեցկագիտության լավագույն ավան-

դությանց ազդեցության տակ՝ իր մեջ վերլուծման, դասավորման, ամփոփման հատկությունները, չափի ու ներդաշնակության զգացումը զարգացնելու։ Իր գործին խորքը ասիական է համակ, իր ստեղծագործությունները ներքին կապ մը ունին, թեպետ Եվրոպայի կամ Ամերիկայի մեջ արտադրված շատոնց ի վեր այդ կողմերն ապրող արվեստագետի մը ձեռքով, ձևերու և գույներու այն հին համայիշ երաժիշտներուն հետ, որ Թիպեթի, Հնդկաստանի, Չինաստանի կամ Հայաստանի դիցաբանական արձանիկները, մանրանկարները, գորգերը, անոթները, զարդարանքները Հորինած են. Ասիո այդ վաղնջուց կախարդներուն մեկ պանդխտացած շառավիղն է ինքը, որ կուգա Արևմուտքի մարդոց աչքին փողփողեցնել արևելյան երկիրներու բնիկ դյութանքներեն քաղված արվեստի ծաղիկներու պարտեզ մը ամբողջ։

Դիտել ու ըմբռնել գիտցող այցելու մը, որ կմտներ Պերնհայմ ժեունի սրահը, ուր ցուցադրված էին Փուշմանի նկարները, ինքզինքն խկույն փոխադրված կզգար Փարիզեն փարսախներով հեռու, ուրիշ աշխարհ մը, հնագույն քաղաքակրթությանց աշխարհը, խորհրդավոր Ասիո ծոցը։ Հնդկաստանը, Չինաստանը, Պարսկաստանը կտիրեն հոն. անկյուն մը կժպտի հայ կանացի դեմքին վճիտ շնորհը. ուրիշ տեղ մը մոնկյուն մը կժպտի հայ կանացի դեմքին վճիտ շնորհը. ուրիշ տեղ մը մոնկոլ աղջկան մը մետաղե նայվածքը կշողա. անդին քյուրդ լեռնականուհիի մը առույգ խնդուքը կպայթի, Արարիան, Եգիպտոսը, Այճերիան ունին հոն իրենց էջը, ինչպես և Բյուզանդիոնն ալ, որ Եվրոպայի Արևելքը եղավ։

Փուշմանի արվեստը, մեծ մասամբ փոքրածավալ նկարներու մեջ արտահայտված, և ուր շատ քիչ բանով կազմված է յուրաքանչյուր նկար, իր առերևույթ պարզության ու ժուժկալության մեջ շատ բարդ արվեստ մըն է, և դայն ամբողջապես ըմբռնելու և ճաշակելու կարող պիտի ըլլան այն իրազեկ, հմուտ, նրբաճաշակ գեղասերները միայն, որ Հարկ եղած ճիգը պիտի ընեն նկարչին բազմապատիկ դիտավորությանց թափանցելու։ Պատկերներուն հատակագծին հղացման, առարկաներուն դասավորման, գույներու զուգադրության մեջ ան միշտ ցույց կուտա նուրբ զգայնություն մը՝ վերլուծող, հաշվող, իր արտադրելիք «ներդաշնակությունները» գիտակցաբար հորինող մտքի մը միացած։ Իր կենդանագիրները անհատական դեմքերու վերարտադրությունը չեն սոսկ, իր կարծեցյալ նաթիւ-մարթները հեռու են անշունչ իրերու, կրոնական առարկաներու կամ զարդարվեստական գեղորներու պարզ օրինակություն ըլլալե։ Պուտտայի արձանիկ մը, Գիշերվան ոգիին մեջ Քանդող հոգիուն ոգիին արձանիկները իր ստեղծած պատկերներուն մեջ իրը զաղափարներու մարմնացումներ կապրին, կշարժին, կգործեն, իր

հղացած տեսարաններուն մեջ էական դեր մը կկատարեն, ու դիմանկարներն ալ, միշտ բնորոշ, ինքնադրոշմ տիպարներու մեջեն մասնավորապես ընտրված, իրենց մորթի երանգով, շրթունքներու, աչքերու փայլով կամ մթությամբ, իրենց կեցվածքներով, հագուստի, զարդերու և մարմնոներդաշնակ զուգադրությամբ, երփնաթույր ու թանկագին գեղարվեստական առարկաներու տպավորություն մը կձգեն, ըլլալով հանդերձ որոշ ցեղի մը և որոշ անհատի մը ճշգրիտ ու կենդանի պատկերացումը։ Ի փոխարեն, ոչ միայն արձանիկները հոն կյանք առած են ու կմտածեն, կերազեն, կաղոթեն կամ կշարժին, կհակին, կքալեն, այլև անոթները, մանյակները, համրիչները, հին նկարազարդ ձեռագրի էջերը, ծաղկազարդ հախճապակիի պնակները «մեռած նյութ» («Նաթյուր-մորթ») ըլլալե կդադրին, իրենց մեջ հոգիի մը գոյությունը տեսանելի կընեն, իրենց կյանքն ու մտածումները, իրենց ժպիտը կամ խոկումը ունեցող խորհրդավոր էակներ կդառնան։ Ամեն ինչ ոգի է Փուշմանի գործին մեջ, և ատոր համար է, որ տարօրինապես նուրբ բանաստեղծություն մը կարտաշնչվի այդ գործեն։

Հաճույք մը պիտի ըլլար այդ նկարներեն ամեն մեկուն իմաստը բացատրել, անոնց հրապույրին հոգեկան ու ֆիզիկական քաղտնիքը ջանալ պարզել. այս հոդվածին սահմանները զայդ թույլ չեն տար. պիտի շատանամ այդ ցուցահանդեսին մեկ քանի գլխավոր էջերը հակիրճ վերլուծումի մը ենթարկելով։

Ահա «Բուրվառ» տիտղոսված նկարը, մանկամարդ հնդկուհի մըն է, որուն թրծված հողի գույն երեսին վրա սև սաթի թանձր փայլուն սևով լայն աչքերը կլճանան ու կշողա թարմ, մանր ու հույլ բերանը, կիսաբաց, տամուկ, ինչպես նորափթիթ ծաղիկ մը ցողաթուրմ. ձեռքն ունի բաց գույն կակաչ մը, զոր սիրուն շարժումով մը կբռնե ուղիղ, ինչպես կերոն մը. հագած է զգեստներ մուգ կանանչ ու մանիշակագույն, որ աչքերուն սևին հետ հնդկաց երեք սիրական գույները կներկայացնեն (Փուշման ցեղերու հոգին պատկերացնող իր գործերուն մեջ անոնցմե յուրաքանչյուրին ավանդաբար նախընտրած գույները տիրական ցույց կուտա), քովը կտեսնվի խնկաման մը, նրբաձև, փափկարվեստ անոթ մը, աղոթքի ու պաշտումի գործիք. բայց արվեստագետին հղացման մեջ բուն խնկամանը ինքն իսկ այդ վրդովիչ աղջիկն է, որուն թարմ գեղեցկությունը, ձեռքը բռնած կակաչին հետ, որ դեպի երկինք կցցե իր դրժգույն բոցի պես վեր սլացող գլուխը, կբարձրանա ու կբուրե, իբր կենդանի աղոթք մը և օրհնություն մը անուշահոտ, դեպի բոլոր գեղեցկությանց ստեղծիչ ուժը գերագույն։

Ահա «Թյուրքեստան» անունը կրող նկարը,— է՛ն ուժեղ էջերեն մին Փուշմանի գործին. աղջիկ մըն է, թարմ, բայց առնական դիմագծությամբ, այդ պատերազմիկ ցեղին հատկանիշներն իր վրա ցոլացնող. պզնձագույն ողորկ մազեր ունի մեջտեղեն շիտակ գծով մը բաժնված, սաղավարտի պես գլխուն փակած ու զայն սեղմելով, մոնկոլ աչքեր, երկբնացած անկյուններով, բիբերը բրոնզե կարծես շինված, պաղ, փայլուն, առանց խորության, փոքրիկ քիթ մը, նեղ ռունգերով, քիչ մը սրածայր, բերան մը կարմիր ու սեղմ,— որ համառ, կամազոր արտահայտություն մը կուտան իրեն,— երեսի ձվաձև մը լայն ու լեցուն, մորթ մը կաթի պես ճերմակ, վիզը բաց-կապույտ ուլունքե մանյակով մը զարդարված է, և ուսերն ի վար կիյնա կապույտ ցոլքերով դեղին շալ մը, որուն բացվածքեն նորափթիթ կուրծքը թեթևորեն շիկնած ճերմակ վարդի փափուկ երանգով մը կընդերևա։ Ետևը, ոսկեգույն խորքի մը վրա, հուժկու ձի մը կանգնած է, գլուխը դեպի աղջիկը դարձուցած, կարմիր թամբով, (կարմիր, կապույտ ու դեղին, Թյուրքեստանի գույները), և այդ ձին կներկայացնե կույսին աչքերուն մեջ փակված մտածումը,— կտրիճ ձիավորը, որ պիտի գա վաղը զինք առնանգել ու իր վրանը տանիլ։

Ահա «Լոնկ-Վոնկ Չինացին», իր դեղին մեղրամոմե երկայն կիսադեմքով, որուն խորամանկ ու ջղուտ արտահայտությունը կշեշտեն մանր ու պիշ աչքերն ու սեղմ մսոտ ցցված շրթունքները, երկայն նիհար մարմինը, սև պարզ զգեստի մը մեջ ծածկված, մանիշակագույն խորքի մը վրա կանջատվի (սև, մանիշակագույն ու դեղին, չինական գույները)։

Ահա «Հայաստանի ծաղիկը»։ Արծաթ խորքի վրա, պաշտելի ձվաձևով փոքրիկ լուսավոր դեմք մըն է հայ աղջնակի. սեփ-սև խիտ փայլուն մազերուն վրայեն, Տիգրանակերտի դեղին խայտաբղետ շալը կպաշարև գլուխը, կծածկե իրանն ամբողջ, բայց ձգելով միայն վիզը, ուր արծաթ վզնոց մը կշողա և ձախ թևը, որ դեղին զգեստով մը սքողված է. քիթը, մանր ու նրբառունգն, ազնվական ու անմեղ փափկության նիշ մը կդնե դեմքին վրա, բերանը ճոխ է և ուժեղ, խաղաղորեն փակ, անարատ ու ամոթխած։ Ինչ որ կտիրե դեմքին մեջ և ամբողջ նկարին մեջ, աչքերն են, անհուն աչքեր, մեծ կամարաձև հոնքերով, հորդ թարթիչներու սև ճաճանչներով պճնված լայն կոպերու տակ խոշոր սև թավիշե բիբերով, որոնք հայ գեղուհիին անզուգական նայվածքն ունին, քաղցրության անհատակ խորությամբ մը, իր արտահայտության մեջ ցավագին թվալու չափ գորովահեղց։ Հայ ցեղին սրտին ծաղիկն է ատիկա արդարև, պատկերացումը անոր էության ազնվագույն տարրին, մարմնացած տեսիլ մը քնքուշ անձնվիրության և մաքուր շնորհի։

Ահա՛ «Շեյխին աղջիկը», եգիպտացի մանկամարդուհի մը, փոքրիկ դեմք, գմբեթարդ ճակատ, որուն վերև խոված մազերու խոշոր մութ կույտ մը կդիզվի, աչքերն ամբողջ լեցնող սև լայն բիբեր, տափակ քիթ, հայգուստը մանիշակագույն,— կանանչ խորքի մը վրա։

Ահա «Քուրդիստանը». լեռնային աղջկան հուժկու մկանուտ դեմք մըն է, ճակատը դժգույն կարմիր ու կանաչ քարերով զարդարված վարսակալ մը, մորթը քիչ մը թուխ, արևահար, մազերը, սեփ-սև, գլուխը և ուսերը մանիշակագույն լաչակով մը փաթթված, բերանը լայն բացված է ուժգին մանկական ծիծաղի մը մեջ, որ աչքերը մանրցուցած ու զանոնք երկու սև ուղիղ գծերու վերածած է, և որ ընդլայնված թանձր հեշտական շրթունքներուն մեջեն երևան կհանե ճերմակ սատափափայլ մեծ ակռաներու կրկին շարքը շողշողուն. կուրծքը ծածկված է բաց կանանչ զգեստով մը, որուն վրա կրթնցուցած է ձեռքը՝ թուխ կարմիր, ազնվության գույն։

Բայց գանք այն նկարներուն, որ նաթուր-մորթ կթվին, մինչ քերթվածներ են խորհուրդի, մեղեդիներ ներքին կյանքի։

Ահա «Խաղաղության պատգամաբերը» և «Անպարտելի Չինաստանը», երկու կարևոր էջեր, ուր Չինաստանի հոգին կխտանա։ Առաջնույն մեջ Պուտտա մը թագակիր, ոսկեզօծ, նստած է հանդարտ ու վեհափառ. ետևը մութ կանանչ տերևներով ծառ մը իր նուրբ ոստերը ճաճանչաձև կոփռե. քովը կամուրջ մը, որուն վրայեն խաղաղության գրոշները կրող պատգամավորները կերթան Պուտտային պայծառ ներդաշնակ հոգին տարածել ալեկոծ մարդկության մեջ. խորքը սև է, չինական լաքային հոծ սևը, կարծես մութ գիշերվան մեջ փռված սև լիճ մը, որուն վրա սակայն լուսնի ցոլքեր կխաղան։ Մյուսը կներկայացնե չինացի սաղավարտակիր զրահապատ հուժկու պատերազմիկներ, որ իրենց ձիերուն վրա հեծած, մին կարմիր, մյուսը ճերմակ դրոշ ձեռքերնին բռնած, կուրան աներևույթ թշնամիին դեմ, իրենց հինավուրց հայրենիքը պաշտպանելու համար. խորքը սև է, ու նկարին առաջին գծին վրա կկանգնի չինական ազգը պատկերացնող արձանիկ մը, սևահեր կին մը, կանաչազգեստ, թևերը կուրծքին վրա ծալված հանդարտ ու ինքնավստահ շարժումով մը, իր ներկայացուցած ցեղին զանգվածեղ զորության զգացումով անշարժ ու անվրդով, ոտքերը դեղին պատվանդանի մը վրա ամուր հաստատված։

Ահա «Ապրելու հրճվանք»-ը. մեծդի պարարտ մարմնով չինական արձանիկ մըն է, որ անհոգ մշտածիծաղ վայելմոլը կպատկերացնե. արձանիկը հաս բոլորովին միս ու արյուն զգեցած է, ու կապրի, իր լայն դեմքը, գմբեթարդ ուռած փորը, կարմիր մսեղ ծիծերը, յուղոտ կոպերուն տակեն շարաճճի նայվածք մը սահեցնող մանր աչքեր, լայնաբաց

ամագին բերանը, իր ամբողջ անձը, պոռթկացող զվարթություն մը և անհոգություն մը կաղաղակեն։

«Դեղագործ»-ը, «Ապրելու հրճվանք»-ին հետ, երգիծական էջերեն մին է Փուշմանի, որ այդ նոթն ալ ունի թեթև անթույն հեգնության։ Երկայն թևերով բաց-գորշ մեծ վերարկուի մը մեջ փաթթված չինացի մըն է, բավական պատկառելի փորով, որ կանգուն է, սպասողական դիրքի մը մեջ հիվանդներուն կըսպասե անշուշտ. երկու քովը գետինը դրված են հին անոթներ զանազան ձևերով և որ դեղամանները կպատկերացեն. անոնց մեջ կտիրե ոսկեշող հին թանկագին պնակ մը (դեղ ծախելով դիզված հարստության նշանա՞կն արդյոք), խորքը ոսկեզօծ ճերմակ է ու կապույտ։

Կան, վերջապես, որ հոյակապ քերթվածներ են մտածումով ու նկարչական արտահայտությամբ։ Ատոնցմե են «Քանդիչ հովուն գալուստ»-ը և «Քանդիչ հովուն հաղթանակ»-ը։ «Քանդիչ հով»-ը ներկայացնող ոգին սև դեմքով, սև, հաստ ու կարճ մարմնով խոժոռ անձ մըն է, թուխ կարմիր վերարկուով, չինական ավանդական արձանիկ, որ հոս բոլորովին կենդանի էակ մը դարձած է, դեմքն ու մարմինը շարժման մեջ են։ Առաջին պատկերին մեջ, երբ նոր կհասնի, իր առջև ունի ծիածանափայլ անոթ մը՝ լեցուն տերևազարդ վարդերով, որ արդեն դժգույն են, բայց դեռ ոչ մեռած. երկրորդ պատկերին մեջ, սև փոքրիկ անոթ մը միայն կա այլևս իր ոտքին տակ, ու գետինը թափթփված գունատ մանիշակաթույր ծաղկի թոռմած թերթեր. խորքը սեփ-սև է։

Ահա «Նվերն առ խաղաղություն». Թիպեթի ոսկեզօծ թագակիր Պուտտան նստած է գահուն վրա, անդորր ու վեհաշուք արտահայտությամբ (խաղաղության ոգին իսկ է ան). իր ոտքին տակ մութ գույն վարդ մը կա փռված, իր կենսալից ուժեղ գեղեցկությունը բերելով անոր իբրև ընծա, խորքը կարմիր մետաքսե լայն սրահակով մը ծածկված է, որուն վրա ոսկի գեղագիծ տառեր աղոթքի խոսք մը կշողաքնեն։

Ահա «Աշնան փառքը». Թիպեթի գեղուհի մըն է (ոգևորյալ արձանիկ), որ նստած է շնորհալի դիրքով մը, մտամփոփ ու երազուն, ետևը մեծ հին պնակ մը, որ լուսնի լույսի պայծառությամբ մը կցոլա, և անոր վրա, բարձր անոթե մը աշնան տերևներ իրենց մելամաղձիկ դժգույն գեղեցկությունը կթափեն։ Առարկաներուն դասավորման, գույներուն զուգադրության ու նկարը կազմող գաղափարին մեջ կա ներդաշնակություն մը, քաղցրություն մը, փափկություն մը, որ անասելի են։

Ահա «Վարդի մը վերջին ժպիտը»։ Մահամերձ վարդ մըն է, որ հին ոսկեցոլ անոթի մը մեջեն դուրս կկախե իր ուժասպառ գլուխը, թուլցած, ճմրթված, բայց դեռ սիրուն, դեռ կենդանի՝ շնորհի վերջին նշույլով մը.

խորքը գորշ-վարդագույն է, կարծես իրմե անջատվող հոգին արդեն հոն, այդ իր հուսկ բուրմունքն ու հուսկ ժպիտն ընդունող միջոցին մեջ, քաղցրածավալ կծածանի։ Հրաշալիք մը գույներու երաժշտության, վարդի մը հոգեվարքին իրապես արժանի, և թարմ ու շնորհալի եղերերգ մը փափկորեն մելամաղձիկ երանգներու։

Նմանօրինակ ներշնչման մը արդյունք է և այն նկարը, որ «Օրհասական վարդին խոստովանությունը» տիտղոսը կկրե։ Հոս վարդը, որ մոտ կզգա իր մահը, մինակ չէ. իր հոգեվարքը տեղի կունենա ոտքին տակ Թիպեթի քրմուհիին, որ աթոռի վրա նստած է, ճերմակներ հագած, քիչ մը ծռած դեպի վարդը, և մահամերձ ծաղիկը ժամանակեն ոսկեզօծված հողե անոթե մը դուրս հանելով իր խոնջ գլուխը, կթվի անոր ըսել իր վերջին գաղտնիքները մեռնելե առաջ. խորքը ոսկեխառն մոլորագույն է։

Նկարներու նույն խումբին կպատկանի նաև այն, որուն տիտղոսն է «Դիքը, որ օրհասական ծաղկի մը վերջին շունչը կընդունի»։ Թիպեթի արձանիկ մըն է, որ հոն կտեսնենք դարձյալ, բայց ասիկա կներկայացնե այն ոգին, որ, ըստ ավանդության, մեռնող ծաղիկներուն հոգին իր ծոցին մեջ կառնե կամփոփե. անոր դեմքին ու կեցվածքին Փուշման տված է այն խոկուն ու քաղցր ամփոփումը, որ պետք է այդ երկյուղած ու նվիրական գործին համար, զոր կոչված է կատարել. իր առջև անոթի մը բերնեն կկախվին երկու արդեն գրեթե մեռած վարդերու գունաթափ գլուխներ։

Ահա ուրիշ նկար մը խորախորհուրդ. մտածման բանաստեղծությամբ համակ թաթավուն, և որ կկոչվի «Անցյալին ստվերը»։ Կտեսնենք հոն կանանչ անոթ մը, անոնցմե, որ Հնդկաստանի մեհյաններուն մեջ կգործածվին իբր յուղման, որմե ամեն ուխտավոր կամ աղոթող կգնե քանի մը կաթիլ՝ ավելցնելու համար կանթեղին, որ պետք է միշտ վառի Սիվայի արձանի առջև։ Անոթին մոտ ծալապատիկ նստած է աղոթողին արձանիկը, ձեռքերը միացուցած դեպի վեր, դեմքը միստիկ խոկումին մեջ կորսված. գլխուն ետև ան ունի տեսակ մը ամպհովանի, կարծես սերովբեական չորս թևերու ամփոփումով կազմված. խորքին վրա, որ ոսկեխառն շագանակագույն է, մեծ թռչուն մը կընդնշմարվի՝ թռիչը դեպի վեր ուղղած։ Եվ ասիկա եկհիշեցնե բարեպաշտ հնդիկներուն հին աղվոր աղոթքները. «Ով տե՞ր, քու տաճարիդ մեջ կանանչ անոթ մը ըլլամ, և դուն իմ մեջս քու սրբազան յուղդ լեցնես...» ...«Թռչուն մը ըրե զիս, որ թռչիմ ու քեզի հասնիմ...»։

Պիտի հիշատակեմ վերջապես երկու զմայլելի նկարներն ի պատիվ Խայամի և որ Պարսկաստան անունին մեջ պարփակված ամբողջ բանաս-

տեղծությունը կխտացնեն կարծես։ Մին կկոչվի «Օմար Խայամին գիրքը»։ Բանաստեղծին տաղերուն ձեռագիր գրքույկը, բացված, կանգուն կերևա հոն, իբր կեղրոնական ու տիրական առարկան։ Մեկ էջին վրա բնագիրը կտեսնվի ընդ աղոտ, մյուս էջը կպարունակե պարսկական մանրանկարի ավելի տպավորությունը կամ համադրությունը, քան օրինակություն մը։ Մեկ բովը կկանգնի անոթ մը, որուն մեջեն կբարձրանա վարդ մը, թարմ։ Փուշմանի նկարներուն մեջ սակավաթիվ են թարմ վարդերը, բայց այս վարդը իր թարմության մեջ այնքան հմայիչ է վառ ու փափուկ դեղեցկությամբ, որքան մյուս նկարներու օրհասական վարդերուն մելամաղձիկ շնորհը հուզիչ է ու թեկադրական։ Այս վարդը իր երիտասարդ գունագեղ գլուխը թեթև մը կծռե դեպի գիրքը, ոչ վերահաս մահվան ծանրության տակ կքելով, այլ մեծարանքի շարժմամբ մը խոնարհելու համար հանճարեղ բանաստեղծին մտավոր բուրաստանին առջև, ուր անթառամ փայլով ծաղիկներ ընդմիշտ կշողան։ Ձեռագրին մյուս կողմը նստած դերևա մորուեղ լքյադեմ մարդու մը արձանիկը (բանաստեղծին պատկերացումը թերևս)։ Խորքը՝ հալած ոսկիի անփայլ դեղնությամբ լիճ մըն է կարծես, ուր մանիշակագույն կղզի մը կլողա, ու ձեռագրին վառ ոսկին այդ խորքի դժգույն ոսկիին վրա դժվար ստացվելիք տպավորություն մը առաջ կբերե, երանգներու գերանուրը ներդաշնակությամբ գործ մը դարձնելով այդ նկարը։ Մյուս պատկերը, «Մեծարանք Օմար Խայամին», գրեթե միևնույն նյութը կկրկնե՝ քիչ մը տարբեր ձևով։ Հոս ալ ձեռագիրը կգտնե՝ իբր նկարին էական առարկան։ Անոր եռև կբարձրանա բարակ ոստերով կանանչ թուփ մը, որուն նուրբ տերևները կկախվին մեկ էջին վերև։ Մյուս կողմը կանանչ անոթ մը, որ դարերու ընթացքին հոգուն մեջ ոսկեզօծվեր, ծիածանի երանգներ է ստացեր, կպարունակե թարմ կարմիր վարդ մը կանանչ տերևներով պաշարված։ Ձեռագրին մեկ էջը, ուր բնագիրը տարտամորեն կզգացվի, ողողված է արևով, որուն լույսը կարծես տառերը հալեցուցած է և մագաղաթը թափանցիկ ու շողուն դարձուցած։ Մյուս էջին վրա կարմիրով ու ոսկիով շինված մանրանկարի ուրվական մը կծածանի, և դեպի այդ էջն է, որ սիրուն շարժումով մը կհակի վարդը, որ անոթեն դուրս կբարձրանա և որուն ստվերը այդ էջին վերի անկյունը, ճերմակ արևափայլ մագաղաթին վրա կձևացնե պաշտելի արատ մը, թեթև գորշ երանգով մը, ուր վարդի ու կանանչի ցոլքեր կխառնվին։ Խորքը նորեն նույն ոսկի լիճն է մանուշակաթույր կղզիով. ու նույն մորուեղ անձնավորությունը կերևա հոս ալ, ձեռագրին առջև նստած։ Խայամի մտածման դառն գեղեցկությունը չէ որ Փուշման ուզած է պատկերացնել այս երկու նկարներուն մեջ, այլ պարսկական հոգվույն տիրական գիծն եղող ազնվական շնորհն ու հայեցողական տեսլապաշտ վերացումներուն, պարսկական երկրի վարդախիտ արևաճոխ դրախտներուն, պարսիկ արվեստն ու քերթությունը բնորոշող փափկության, նրբության ու քաղցրության համադրությունն մ'ընել, ի պատիվ այդ հատընտիր ազգին մեծագույն բանաստեղծներեն մեկուն. և չէ՞ որ նույնիսկ այդ հմայաթափ ու խռովյալ մտածումով քերթողը, որուն դառնությունն արդեն աշխարհի անարդարություններեն խոցված վեհ սրտի մը թախծությունն է, ունի քառյակներ, ուր իր խոհերն արտահայտած է ամենեն հմայիչ քաղցրությամբ լեցուն ոճով մը։

Փուշմանի հաջողությունը շատ մեծ եղավ։ Իր ցուցահանդեսի հայտագրին առաջաբանը գրած էր «Թան»-ի գեղարվեստական քննադատ Թիեպո Սիսոն, որ Փարիզի մեծագույն քննադատներեն մին է։ «...Իր ընդարձակ հմտությեններն,— կըսե հոն,— որ միացած է փափուկ զգայնության մը, ծնած է այդ խտացյալ և հմայիչ, ոգեկոչող ու նրբորեն երաժշտական արվեստը, որ իրն է։ Ան բարակ ներդաշնակություններով կարտահայտե ամեն մեկ ժողովրդի նկարագիրն ու մասնահատկությունները, և Արևելքի ամբողջ բանաստեղծությունը անոնց մեջ պարփակված է։ ...Տեսեք իր նաթյուր-մորթները, չկա անոնց մեջ հատ մը, որ ցեղապրական, կրոնական կամ միստիկական արժեք մը չունենա, չկա հատ մը, որ անակնկալ լույս մը շարձրկե ցեղի մը սրտին կամ ուղեղին վրա... Նաթյուր-մորթներուն կմիանան ուսումնասիրություններ կանացի դեմքերու, որոնց մասնավոր հատկանիշները կընդգծեն հագուստին մանրամասնությունները, մազերու շտկվածքին պարզությունը կամ բարդությունը... Այդ տիպարներու ուսումնասիրությունները ամենքն ալ կպարփակվին վառ թույրերով մետաքսային դաշնակցությանց մեջ, որ պատկերացված անձին կամ անոր մորթի գույնի համեմատ կտարբերին։ Եվ այս ամենուն մեջ կա ազնվություն մը, զոր ավելի հշեշտե նրբախուզությունը հորինվածքին, որուն մանր ստորակետված վրձնի հարվածները մթնոլորտը թրթռուն կդարձնեն ու ամբողջությունները կյանքի ներուժ տպավորություն մը կուտան... Այս արվեստագետը համակ անակնկալ և համակ նրբախուզություն է։ Ամեն ինչ իրն է»։ Ներբողալից տողեր նվիրվեցան այդ ցուցահանդեսին՝ «Քոմեդիա»-ի, «Թանի, «Ֆիկարո»-ի, «Նյու-Յորք Հերըլտ»-ի և այլ լրագիրներու մեջ, և փարիզյան պատկերազարդ շաբաթաթերթերու մեծագույնը, «Լ'Իլլյուսթրասիոն» իր հունիսի 5-ի թիվին մեջ հրատարակեց Ֆրետերիք Մաքլերե ընդարձակ հոդված մը՝ Փուշմանի երկու նկարներու գունատիպ վերարտադրությամբ։ Փարիզի քաղաքապետությունը գնեց «Խայամեն էջ մը» նկարը Փրթի Փալեի թանգարանին համար։ Ուրախարիթ է հաստատել, որ այս անգամ,

օտարներու հետ գտնվեցան նաև հայ ունևոր գեղասերներ, որ գիտցան գնահատել այս մեծ արվեստագետին արժեքը և ուզեցին զարդարել իրենց տունը անոր մեկ հատընտիր գործով։ Տիկին Գափամաճյան գնեց «Վարդի մը վերջին ժպիտը», տիկին Մարի Կյուլպենկյան՝ «Աշունին փառքը», պ. Խ. Սվաճյան՝ «Դիքը որ մահամերձ վարդի մը վերջին բուրմունքը կհավաքե» և պ. Կ. Գալըպճյան՝ «Օրհասական վարդի մը խոստովանությունը»։

Երանի՜ թե գտնվեր նաև օր մը մեկենաս մը, որ Փուշմանի մեկ գեղեցիկ գործը գներ ու Հայաստանի Ազգային մուսեոնին նվիրեր։

ԷՄԻԼ ՎԵՐՀԱՐՆ

Շոգեկառքի մը անիվներուն տակ ջախջախված, քանի մը րոպեի մեջ անշնչացեր է աշխարհիս ամենեն վեհաշունչ բանաստեղծներեն մին։

Անողո՜րմ, անդարմանելի՜ դժբախտություն...

Պելճիքա կկորսնցնե իր ազգային քերթողը, մարդկությունը՝ ներկա պահուն մեծագույն երգիչը, և ազատական բանակը՝ իր բարոյական ամենաթանկագին ուժերեն մին։

Ոչ սիրտ ունիմ, ոչ ալ այս պայքարի օրերու ստիպողական աշխատանքներն ու մտահոգությունները ատեն և ուժ կթողուն ինծի, որպեսզի կարենամ «բազմակերպ շքեղության» հոյակապ պուետին ամբողջական գործին վրա ուսումնասիրություն մը փորձել։ Բայց հայ քերթության ու հայ ժողովրդի կողմեն սուգի և հարգանքի քանի մը խոսք այդ հազա՛ր անգամ ողբալի մահվան հանդեպ պարտք է արտասանել, որովհետև հայ ազգը մեծ բարեկամ մը կորսնցուց Վերհարնի մեջ։

Պելժ երկրին գեղեցկությունները, ֆլաման ցեղին ուժեղ կրքոտ ու միստիկ հոգին, պելժ ազգին արվեստագետ ու հանդուգն դեմքը՝ Վերհարն երգած էր իր բանաստեղծությանց մեջ կորովի և ինքնատիպ շեշտերով, բայց իր քնարը շատ մեծ էր, որպեսզի կարենար մեկ ազգի մը հոգին երգելու մեջ սահմանափակվիլ։ Ան արտահայտիչը հանդիսացավ նոր Եվրոպային բոլոր խորունկ ձգտումներուն, մերօրյա աշխարհին տենդոտ, բարդ, պայքարասեր, հետախույզ, անհագուրդ, շարժումնամոլ, ազատատենչ հոգիին։ «Եվրոպական մեծ բանաստեղծը» դարձավ Վերհարն, ինչպես հայտարարեցին՝ այս պատերազմեն առաջ, անգլիացի, ֆրանսիացի և ռուս քերթողներու հետ՝ գերման քննադատներն ու բանաստեղծներն ալ, որ իրեն համար ամենախոր սքանչացում ունեին։

Ինչպես ատենով իր հանճարի ու հայրենիքի եղբայրը՝ Ռյուպենս,

իր դարուն մեծագույն նկարիչը եղավ, Վերհարն՝ հզոր հոգով փոքրիկ պելժ ազգին ներքին մեծությունը ուժգնորեն ապացուցեց՝ այս վերջին քառորդ դարու մեջ մարդկության ամենեն վեհազոր բանաստեղծն ըլլալով։

Վերհարնի գործը, ընդարձակ, բազմատարր, տարօրինապես անձնագրոշմ, պիտի մնա իբր մին մարդկային քերթության կոթողներեն։ Բնության խորհուրդն ու պերճությունները, սիրո քաղցրությունն ու տառապանքը, կրոնքի վերացումները, ընկերական պայքարին արհավիրքն ու վեհությունը, քաղաքակրթության ու բնության միջև հավիտենական կռիվը, պատմական մեծ էջերու դյուցազնապատկերը ու հեքիաթի աշխարհին երազանկարը, այս ամենքը և ուրիշ ի՜նչքան նյութեր, իր հարուստ քնարին ներշնչարանը եղան և անոր մեջ գտան կուռ ու նոր արտահայտություն մը։

Կատարելության մոլի բծախնդիր մտքերը թերի կգտնեին Վերհարնի ձևը։ Մորեաս զայն կանվաներ «Պելճիքացի մեծ բանաստեղծ մը», «Պելճիքացին» հեգնոտ դիտումով մը շեշտելով։ Անարդա՜ր դատում։ Սամենի մը, Շարլ Կերենի մը, Հանրի տը Ռենիեի մը ճաշակի նրբությունը և ֆրանսերեն լեզվի հարազատ ու անբասիր մաքրությունը նույն չափով իր մեջ կարելի չէր անշուշտ գտնել, բայց ճիշտ չէ, որ ան «պելճիքացի» բանաստեղծ մը ըլլար միայն. իր ցեղին հատկանիշներն ունենալով, իր ցեղին հոգին մասնավոր տարփանքով ու զորությամբ երգելով հանդերձ, ան ֆրանսերեն լեզվով գրող համամարդկային մեծ քերթողն էր, և ատոր համար Ֆրանսա իրեն երախտագետ պիտի ըլլա, և այդ երախտագիտությունը, իր մահվան առթիվ և իր մահեն ալ առաջ հայտնող հեղինակավոր ֆրանսացիներ գտնվեցան, որոնցմե մին Հանրի տը Ռենիեն է, որ տարիներ առաջ անոր մեկ հատորին երևման ատեն՝ զայն կանվաներ Հյուկոյեն ի վեր ամենեն հզոր բանաստեղծը։

Ինչպես գրեթե բոլոր ճշմարտապես մեծ բանաստեղծներուն գործը, Վերհարնինն ալ անհավասար է, բայց իր լավագույն կտորներուն մեջ կա այն վերին ներշնչման բոցը, հանճարի այն փայլակը, առաքելական այն թռիչքը, որ մեծ քերթողներու հատկանիշն է, և որ կպակսի անթերիին մարմաջն ունեցող ոտանավորի արվեստագետներուն։

Ինծի հաճախ պատահած էր Հյուկոյին հետ համեմատել Վերհարնը։ Անոր տիտանյան հասակը չուներ և անոր չափ բազմաձև չէր. բայց ոչ ոք՝ ըստ իս՝ բացի Տոլստոյեն, իրեն չափ Հյուկոյի հետ կրնար համեմատվիլ. նվազ հսկա ու մեծատարած, բայց ավելի ջղուտ, հաճախ ավելի անկեղծ ու խոր էր ինք։ Իր մահվան առթիվ գրված անգլերեն ու ֆրանսերեն հոդվածներուն մեջ կնկատեմ, որ շատեր Հյուկոյի անունը

հիշած են՝ իբ առթիվ. բայց ոմանք գինք «պելժ Հյուկոն» անվանած են. այդ բանաձևն ալ սխալ է, կամ գեթ անկատար է. Վերհարն ոչ միայն Գելձիքայի Հյուկոն էր, այլ՝ ամբողջ Եվրոպայի Հյուկոն էր՝ այս վերջին քառորդ դարուն մեջ։

«Ազատ ռատնավոր»-ը՝ ֆրանսերեն լեզվին համար՝ առաջաշափության կատարելագույն ու գեղեցկագույն ձևը չի թվիր ինձի, երբ մանավանդ ան՝ ինչպես ոմանց մտա՝ կարուված արձակ մը է, առանց կշռության, առանց հանգի, առանց որևէ գգալի երաժշտության, անձև, անչրդ, թույլ ու մածուցիկ զանգված մը, որ ոչ արձակին կորովը, ոչ ոտանավորին թեավոր գնացքն ունի։ Բայց Վերհարն, որ գաստիկան տաղաչափությամբ զմայելի քերթվածներ արտադրած է, կշռության ու ներդաշնակության տարօրինակաս ճիշտ և խոր զգացումով մը կգրեր «ազատ ռատնավորը», զոր կսիրեր և որուն Հանրի տը Ռենիեին հետ՝ գերագույն վարպետն էր։ Իր ձեռքին տակ, ռատնավորը, կանոնավոր կամ ազատ, միշտ երաժշտություն էր, միշտ բանաստեղծություն, միշտ «ռատնավոր»։

* * *

Այդ «եվրոպական» քերթողը, այդ «միջազգային» երգիչը, պատերազմը հագիվ պայթած՝ իր հայրենիքին վրա խուժող ադետին հանդեպ կատաղի հայրենասեր մը դարձավ, և իր մինչև ան ատեն սիրած ու հարգած Գերմանիայի դեմ ամենեն անհաշտ ատելությամբ լեցուն ազդակներն արձակեց՝ բանախոսությանց, հոդվածներու և քերթվածներու շքեղ շարքի մը մեջ։ Վաթսունն անցած այդ նիհար ու տխեղծ մարդը. որ 8—10 տարի առաջ շղայլն ծանր ու ցավատանջ հիվանդությամբ մը ալ տառապած ու ուժասպառ էր, ամբողջ կորով, խանդ ու անձնվիրություն էր դարձած։

Անգլիա ու Ֆրանսա, քանի քանի քաղաքներու մեջ բանախոսություններով, հոդվածներով իր երկրին փառքը կպանծացներ ու դատը կպաշտպաներ, հոյակապ քերթվածներու շարքով մը, որ այլ և այլ լրագրաց մեջ երևցան, կերգեր սերը իր գյուղացիական ու մարտիրոս հայրենիքին ու արշավող բարբարոսին դեմ իր մոլեգին ատելությունը կաղաղակեր, վրիժապահանջ նզովքը կարձակեր։ Մահվանեն երկու շաբաթ առաջ այդ քերթվածները Հատորի մը մեջ ամփոփելով ի լույս ընծայեց «Պատերազմին կարմիր թերթը» վերնագրով։ Այս գիրքը, ներկա առիթիվ պայքարին գերագույն երգը, անոր նշանակությանը բացատրող, անոր զբաղեն բոլոր երանները մեկնող քերթողական ամենեն խորունկ, հարազատ, անկեղծ ու արտառուշ արտահայտությունը պիտի մնա, ինչպես Հյուկոյի «Ահավոր տարին» 1870-ի պատերազմին քնարական բարձրագույն արտահայտությունն էր եղած։ Ինչքա՜ն պիտի ուզեի մանրամասներեն խոսիլ այդ աննման գրքին վրա, զոր ծայրեն ծայր գլեցնեն անկեղծ ու խոր հուզմունք, բիրտ բռնության դեմ ազնիվ ատելություն, հայրենիքի պաշտում, դյուցազնության, ասպետական ոգիի բուռն ոգեր, ազատության դատի հաղթանակին վստահություն, և ուր պատերազմի վայրենի տգեղության սոսկումն ու զարշանքն ալ երբեմնի խազազության օրերուն քաղցրության կարոտը, մտավոր ինքնամփոփ մաքուր երազանքի հին բոպեներուն մելամաղձիկ ոգեկոչումն ալ մերթ կուգան իրենց ողբագին արձագանքը հնչեցնել, հատորին տալով, ո՛չ թատերական հայրենասերի մը գործին ուռուցիկ ու դիտումնավոր գույնը, այլ մեծ ճգնաժամի մը ուղղակի ազդեցության տակ թրթռացող մեծ հոգիի մը ինքնաբուխ ու մարդկային շեշտը, երբ գա, վաղը, արդարության հաղթանակին վրա հիմնված խաղաղությունը, հանդարտ մտքով այդպիսի սիրելի աշխատանքներու կրնանք դառնալ նորեն, և այդօրինակ գործելու խնամոտ ու մանրակրկիտ ուսումնասիրությունը փորձել։ Այստեղ ես կուրվագծեմ միայն քանի մը տպավորություններ, կհրավիրեմ մեր ժողովրդին ուշադրությունը այդ սքանչելի հատորին վրա, որուն ընթերցումը ոևէ զարգացածն հայու համար շինիչ ու օրատպնդիչ է, և այս քանի մը տողով վերլուծման կմիացնեմ ֆրանսերեն չգիտցող հայերուն համար՝ թարգմանությունը հատորին գեղեցկագույն էջերեն ոմանց, որ այս հոդվածես հետո պիտի հրատարակվին «Կոչնակ»-ի մեջ։ Ատով դարմանած ալ կըլլամ հանցանք մը. մեր լեզվով ոչինչ թարգմանված է ցարդ Վերհարնեն, բացի իր մեկ քերթվածեն, որուն հայերենը հրատարակված է Անահիտի մեջ։ Վերհարն այն քերթողներեն է, որոնք բազմաթիվ էջեր պետք էր թարգմանված ըլլային հայերեն, քանի որ ազնիվ ուժի, առողջ ու հավատավոր ներշնչման, բարձրացնող մտածման ու սիրտը կազդուրող ու լուսավորող երևակայության քերթող մըն է ան։ Ու թերևս՝ իր գերեզմանին վրա՝ հարգանքի լավագույն արտահայտությունը, սուգի ու կորովի հարազատագույն ընծան՝ իմ կողմես՝ այս դրժգույն ու կցկտուր տողերեն ավելի՝ իր հզոր ու վեհ քերթության մեկ քանի շեշտերը հայեցի բարբառով հայ ժողովրդին լսելի ընելով Հայության հոգիին մեջ հանգուցյալին մեծությենեն շող մը արձակելն է։

* * *

Իր հայրենասիրական եռանդին զոհ է գացեր Վերհարն։ Մեռեր է զինվորի մը պես՝ պայքարի մեջ, հաղթանակին համար։ Ցիդը, զոր կթափեր այս պատերազմին ոկսելեն ի վեր, իր ուժերեն վեր էրթինչպես ին-

ծի կրսեր դեռ երեկ իր հայրենակիցն ու բարեկամը, մեծանուն պելժ նկարիչ Հանրի տը Կրու։ Ռուան պտք էր երթար Պելճիքայի վրա բանախոսություն մը արտասանելու. իր ամուսինը, տեսնելով զայն՝ մեկնելեն առաջ՝ շատ հոգնած, կհանձնարարե անոր գետ մեկնող պելժ բարեկամի մը, Վիկտոր Ժիլսուլի՝ հոգ տանիլ անոր, հսկել վրան, չթողուլ զայն միանակ, թույլ չտալ որ շատ նեղվի և ավելի հոգնի։ Բանախոսութենեն հետո, Վերհարն կփութա կայարան իր բարեկամին հետ, բոլորովին ուժարեկ. շոգեկառքը կհասներ այդ պահուն, ահագին բազմություն կսպասեր Փարիզ երթալու համար. վախնալով որ շոգեկառքին մեջ նստուկ տեղ չի դտներ և կստիպվի քանի մը ժամ ոտքի վրա մնալ, Վերհարն կվազե դեպի շոգեկառքը, կցատկե վագոններեն մեկուն վրա, մինչ շոգեկառքը դեռ կանգ չէր առած, կսահի կիյնա երկու վագոնի մեջտեղը, և անիվը կանցնի երկու սրունքներուն վրայեն, արյունը հեղեղորեն կհոսի, կվերցնեն զինքը՝ մահամերձ. վերջին խոսքերը կըլլան «կի՜նս... հայրենի՜ք... մեռա՜...»։

Խե՜ղճ տիկին Վերհարն... ի՜նչ ահռելի պետք է ըլլա իր վգացած ցավը։ Այդ մեծ հոգին արժանավոր ընկերուհին էր այդ ազնիվ ու մեծասիրտ կինը։ Զավակ չունեին, և այդ երկու հատընտիր էակները իրարու համար թե՛ ամուսին, թե՛ զավակ, թե՛ քույր եղբայր էին։ Գորովը, որով տիկին Վերհարն պաշարած է իր ամուսինը՝ անոր երկար ու ցավագին հիվանդության միջոցին, քերթվածի մը պես գեղեցիկ ու խորունկ է եղած։ Ի՜նչ հանկարծական ու անողորմ փլուզում հիմա՝ իրեն համար։ Իր մտերիմներեն ոմանք կկարծեն, թե չպիտի կարենա տոկալ այդ ցավին։ Թող երկնային զորությունները քաջություն տան իրեն, որ կարենա տոկալ, և մնալ կենդանի՝ մինչև հաղթանակի ժամը։ Վերհարնի մահը ոչ միայն մեծ աղետ մըն է, այլև մեծ անարդարություն մը։ Քիչ մարդ այնքան արժանի էր ողջ մնալ մինչև արդարության հաղթանակին օրը, և տեսնել զայն իր աչքերով, որքան Վերհարնը։ Գեթ իր ընկերուհին, որ ամբողջ կյանքին մեջ անոր պահապան հրեշտակը եղած էր և այնքան խորապես արժանի էր անոր լուսեղեն անունը կրելու, մնա ողջ ու տեսնի իր աչքերով ծագումը ավետավոր օրվան, որուն համար այնքան թանկագին կյանքեր զոհվեցան։

***

Մարդը՝ Վերհարնի մեջ, ամենքը համաձայն են ասոր, այնքան պարզ ու համեստ էր, որքան բանաստեղծը հանդուգն ու հերարձակ։ Իր քերթությունը ինձեր տպավորությունը սրաթռիչ ու մոլեգին նժույգի

մը, երիտասարդ հրաշալի փրփրերախ նժույգի մը, որ օդագնաց վազքով մը միջոց կկտրեր սմբակներեն կայծակներ ցատքեցնելով, ու երբ դեռ զինքը անձամբ չէիք տեսած, կկարծեիք թե մարդը, որ այդ քերթությունը կարտադրեր, մեծդի, հուժկու, կարշնեղ հսկա մը ըլլալու էր, ըմբիշի բազուկներով, փայլակնացայտ աչքերով, անհուն ճակատի մը վերև ցցվող ալեծածան թավ բաշով մը. արդ, բարակ ու թեթև մարմնով միջահասակ մարդ մըն էր Վերհարն, որուն վրա ոչինչ կար տարօրինակ, որ կշանար ինքզինքը ցույց տալ որքան կարելի է ավելի պարզ ու բնական. իր ամբողջ ուժը, հայտնապես՝ ներսն էր թաքված, խտացած, կենտրոնացած, իր սրտին մեջ, իր ջիղերուն մեջ, և իր ամբողջ անձը սիրտե մը ու ջիղերե միայն կազմված կթվեր. իր դիրքին տիրական արտահայտությունը՝ միամիտ ու բացսիրտ բարություն մըն էր, իր կապույտ քնքուշ աչվները, որոնց մեջ նայվածքը մանկական անմեղություն մը պահած էր, այդ վտիտ դեմքին վրա կբացվեին գողտր ու մաքուր ծաղիկներու պես, և նույնիսկ երբ կրքոտ խոսակցության մը բոցեն վառեին՝ իրենց նուրբ ու սուր շողյունին մեջ՝ այդ բարության ու բարեմտության տպավորությունը չեշտելե ուրիշ բան չէին ըներ. այդ պարզուկ ազնվության տպավորությունը չէին զորեր խանգարել նույնիսկ Կոլվայի թավ վայրենկեց պեխերը, որ բարի հայրիկի մը պատկառելի շնորհը կավելցնեին այդ դեմքին։ Ամենքը համամիտ էին գովելու ադ մարդամոտ, համբույր ու հեզ բնավորությամբ մարդը, որ միշտ եղած էր ուղղամիտ ու հավատարիմ իր բարեկամներուն, չէր ճանչցած ո՛չ գոռոզություն, ո՛չ նախանձ, որ իր երիտասարդ պաշտոնակիցները կընդուներ ամենեն սիրալիր մտերմությամբ և հոժարակամ կշնորհեր իր բոլորանվեր աջակցությունը։ Այսօրվան պես կհիշեմ իմ առաջին տեսակցությունս իրեն հետ. 8—9 տարի առաջ էր, Սեն-Քլու, Կապրիել Մուրե բարեկամիս տունը գացեր էի այցելության, էտկար Շահինին հետ, Վերհարն հոն էր՝ իր կնոջ հետ, Հայոց մասին գիտեր ինչ որ կարդացեր էր իմ գրքերուս մեջ, զոր միշտ ղրկած էի իրեն, և այդ քանի մը գրքերը, մասնավորապես Chants Populaires և Les Trouvères Arméniens հատորներս հաջողեր էին իրեն սիրելի դարձնել մեր ազգը։ Հիվանդությունենն նոր ելած էր, և դեռ տկար կթվեր, կծկված մկոտ ձև մը ուներ, և կինը միշտ քովն էր, աչքը վրան, ամեն մեկ շարժմանը, ամեն մեկ աչքի քթթումին ուշադիր, ամեն բոպե հոգածու ժեստով մը, բառով մը զայն պաշարելով, պաշտպանելով, տաքցնելով։ Երկու ժամու չափ խոսակցեցանք իրեն հետ, այլևայլ հարցերու վրա, մանավանդ Արևելքի վրա, հայ բանաստեղծության, հայ ժողովրդական երգերու վրա, և ընդհանրապես ժողովրդական բանաստեղծության վրա, զոր պաշտելս և մարդկային ճշմարիտ բանաստեղծության

հիմք նկատելու իրեն կհայտնեի և զոր ինքն ալ խորապես կսիրեր։ Տարիներ հետո, երբ իրեն դիմեցի խնդրելով, որ հաճի քանի մը տող գրել իմ La Vie et Le Rêve հատորին իրր առաջաբան, ամենեն սիրուն փութկոտությամբ կատարեց խնդիրքս, և նամակը, զոր ինծի կղրկեր իրր առաջաբան, մեծարանք մըն էր, զոր այնքան սրտաբուխ կերպով կմատուցաներ մեր ցեղին։

Երբ Պելճիքա՝ այս պատերազմին սկիզբը՝ իր հերոսական վարմունքով ինքզինքը գերագույն փառքով պսակեց ու նույն ատեն բռնավորեն ոտնակոխ ըլլալով, մեր բազմաշարշար Հայրենիքին՝ որուն հետ անցյալին մեջ ալ ճակատագրի այնքան հանգիտություններ ունեցած է՝ անգամ մը ևս բախտակից դարձավ, ու երբ Վերհարն իր հարյուր հազարավոր ցեղակիցներուն հետ աքսորի ճամփան բռնեց և գնաց Անգլիա, գրեցի իրեն ինչ որ մեր ազգը կզգար Արևմուտքի Հայաստանին համար, և ստացա իրմե մեծ եղբոր մը ազնիվ ու սրտապնդիչ պատասխանը՝ ...«Հայաստան ու Պելճիքա, եղեռնաբախտ ու անմահ...»։

7—8 շաբաթ առաջ, «Պալգաքի տան» պահապանը կազմակերպած էր գրական հավաքույթ մը՝ ֆրանսացի մեծ վիպասանին բնակավայրն եղած այդ պատմական տան մեջ՝ ի պատիվ Պելճիքայի և իր գրականության. Վերհարն հոն էր ու կնախագահեր. Էմիլ Փինյո, երիտասարդ ֆրանսացի սրտոտ ու տաղանդավոր բանաստեղծը, որ գեղեցիկ եռանդով մը մեր գատը կպաշտպանե մամուլին մեջ, և որ այդ օրը պիտի խոսեր՝ հանուն ֆրանսական նորահաս գրողներուն՝ փառաբանելու համար Պելճիքան և իր գրական վարպետները, խնդրեց ինձմե ներկա ըլլալ այդ հանդեսին, որպեսզի Պելճիքային հետ Հայաստանը միացներ իր ներբողաձան ողջույնին մեջ. սիրով ընդունեցի հրավերը, որովհետև մեծապես կփափաքեի տեսնել պատերազմի օրերու Վերհարնը և իրեն հայտնել անգամ մը ևս Պելճիքային ու իրեն համար մեր ազգին հիացումը. բայց խնդրեցի Փինյոյեն չհիշատակել իմ անունս, անհարկի գտնելով, որ իմ համեստ անձս Վերհարնի մեծ անձնավորության քով դրվեր. Փինյո հարցեց իմ կամքս, բայց Վերհարն, թեպետ խուլ անկյուն մը թաքցած էր՝ հանդեսին ավարտելեն հետո երթալ զինքը տեսնելու և հետը խոսելու համար, իմանալով հոն ըլլալս, ուրի կանգնեցավ և պահանջեց, որ երթայի իր քով նստեի, և երբ մոտեցա, թևաբաց ընդունեցավ զիս, իր ժեստին տալով խորհրդանշական զմայլելի վեհություն մը և լայնություն մը, որպես թե իմ խոնարհ անձիս մեջ Հայաստանը ողջագուրեր։ Համբուրեցինք զիրար՝ ներկաներուն բուռն ու հուզված ծափահարությանց մեջ, և Փինյո քանի մը խոսքով մեկնեց այս տեսարանը։ «Հերոս ու մարտիրոս Պելճիքան է,— ըսավ,— որ կգիրկընդխառնվի դրժբախտ և արի Հայաստանին հետ՝ իրենց մտավորական մորը՝ Ֆրանսային թևերուն տակ»։ Քիչ օր հետո, գացի տեսնել Վերհարնը իր Սենքլուի տան մեջ. հյուր ուներ, ձգեց զանոնք և առանձնացավ ինծի հետ խցիկի մը մեջ և երկարորեն խոսեցանք մեր երկու նահատակ հայրենիքներուն վրա, մեր անձկությունները, մեր գանգատները, մեր հույսերը, մեր հավատքը հայտնեցինք իրարու, և այդ ժամը, զոր միասին անցուցինք՝ անջինջ պիտի մնա մտքիս մեջ մինչև վերջին շունչս։ Խնդրեցի իրմե գալ օր մը ինծի պատիվ ընել իմ ուսանողի վեցերորդիս մեջ քանի մը բարեկամներու հետ պատառ մը հաց ուտել։ Ամենասիրուն փութկոտությամբ ընդունեցավ, և մահվանեն 7—8 օր առաջ եկավ իմ անշուք հարկիս տակ սեղանակից ըլլալ ինծի, և բարեկամներուս և ինծի հետ ճաշակել քանի մը հայկական կերակուրներ, զոր իրեն համար պատրաստած էի։ Մեզի հետ էին այդ օրը Շահին, Հանրի տը Կրու, Ալեքսանյան, Փինյո, և քանի մը ուրիշ բարեկամներ։ Հինգ ժամ մնաց մեզի հետ, և ամենքս զմայլեցուց իր սրտի երիտասարդությամբը, որ իր հյուծյալ վտիտ մարմնույն մեջ կտիրապետեր, իր պարզությամբը, իր համեստությամբը, իր անհուն բարությամբը, իր սիրուն քնքուշ մարդու բնական հրապույրովը։ Իրեն հայտնեցի խորին հիացումս իր նոր լույս տեսած հատորին համար և անկեց իրեն առջև կարդացի գեղեցկագույն էջերեն մեկ քանին. խորապես զգացվեցավ, շիկնեցավ ինչպես ամոթխած մանկամարդ պատանի մը, և չէր ուզեր ընդունիլ, թե այդ հատորը այս պատերազմին քերթողական հզորագույն արտահայտությունն է, «օրը օրին հապճեպով գրված բաներ են», կըսեր, և անկեղծ էր իր համեստության մեջ։

Երբ «ցտեսություն» ըսելով բաժնվեցանք, մենե՞ք կրնար երևակայել, ավա՜ղ, որ այդ թանկագին էակը, որուն ձեռքը կսեղմեինք, որուն ձայնը լսելով կհրճվեինք, պիտի ընդմիշտ անհետանար՝ տխմար արկածի մը զոհ...

Իր գերեզմանին առջև, հիմա, միտքս՝ ցավով կծկված՝ կոգե ուրիշ անհետացած մը, ուրիշ թանկագին զոհ մը, մեր անմոռանալի Յարճանյանը, որ արտասվոր սեր ու պաշտում կտածեր Վերհարնին համար. Հանրի դը Ռենիեի, Մեթերլինքի, բայց մանավանդ Վերհարնի գործեն խանդավառվելով է, որ ան իր ճամփան գտավ և հասավ արտադրել գործ մը հզոր, ինքնատիպ ու խորապես հայկական, ուր կան էջեր Վերհարնի հզորագույն էջերուն հավասարող, և որ մեր քերթության փառքերեն ու կատարներեն մին կազմեց։ Կհիշեմ 1898-ի այն օրը, ուր ժնևի մեջ նորատի Յարճանյանին կարդացի Վերհարնի մեկ քերթվածը, և այդ րոպեին՝ առաջին անգամ ծանոթանալով մեծ բանաստեղծին՝ իր թարմ

հոգվույն մեջ անոր հարուցած տարօրինակ ոգևորությունը տեսա։ Տարիներ հետո, Յարճանյան ինքն ալ արդեն դարձած մեծ բանաստեղծ մը, իմանալով որ Վերհարնը անձամբ տեսեր էի, կհայտներ ինծի միևնույն խանդավառությունը իր մեջ մնացած անկեղծ, ավելի սաստկացած նույնիսկ. «Ուրեմն իրոք գոյությո՞ւն ունի այդ մարդը, կըսեր՝ իր պատկերավոր ջղուտ լեզվով. մեզի պես մա՞րդ մըն է, ձեռք ոտք ունի՞... կարելի բան չէ...»։

Ավա՜ղ. մեզի պես մարդ մըն էր ան, այո՛, հողեղեն զաղփաղփուն անոթ մը, որուն մեջ աստվածային հոգի մը կբնակեր, և կառքի մը անիվին մեկ շարժումը բավեց զայն խորտակելու...

Ի՜նչքան պիտի ուզեի, որ մանկության օրերուս հավատքը վերածներ մեջս,— և այս աշխարհասասան սոսկումի ու զուլումի օրերուն մեջ՝ չեմ ծածկեր, որ մերթ անդիմադրելի մղում մը կզգամ մեջս դեպի մեր հայրերուն, մեր հայ բարի պապերուն կազդուրիչ լուսավոր հավատքը դառնալ, անոր ապավինել՝ լավատեսությունս, արդարության հաղթանակին հույս ամրապնդելու համար,— ի՜նչքան պիտի ուզեի, որ այդ հավատքը ինծի ապահովեր, թե կորած չէ Վերհարններուն ու Յարճանյաններուն ետը, թե անոնք հիմա վերը, տեղ մը, խաղաղ ու մաքուր պոլորտի մը մեջ, ուրիշ ա՛յնքան գաղափարի հերոսներու և մարտիրոսներու հետ համախմբված, կհսկեն մեր վրա, կաղոթեն մեր դատին համար, և իրենց աննյութ աչքերով արդեն կտեսնեն հաղթանակի օրը...

Մեծ բարեկամ մը կորսնցուց մեր ազգը։ Վերհարն ավելի քան երբեք ջերմ ու սիրալիր համակրող էր դարձած մեր ցեղին ու մեր դատին, «Արևելքի Պելճիքային» դատին։ Տիեզերահռչակ անձնավորություն մըն էր ան. իր հիացողները բազմաթիվ էին Անգլիո, Ֆրանսայի, և Ամերիկայի, Իտալիո, Ռուսիո, Գերմանիո մեջ. հակառակ իր բռնած որոշապես հակագերման դիրքին, Գերմանիո մեջ իրեն համար զգացված պատկառանքը չէր նվազած. իրմե իսկ իմացա, որ գերման բանակը, երբ հասած էր Պելճիքայի այն գյուղը, ուր կգտնվեր իր տունը, հրաման ուներ չդիպչիլ այդ տան (ինչ որ գերման բռնապետության դեմ իր զգացած ատելությունը ոևէ չափով չէր փոխած). Պելճիքայի թագավորին, հերոս-թագավորին, Ալպեր Աի մտերիմ բարեկամն էր. իր քերթվածներեն մեկուն մեջ («Աղաղակը») ի՜նչքան գորովոտ կերպով հիշատակած էր Հայաստանը. ես հույս ունեի, որ ան քիչ հետո պիտի մղվեր գրել ամբողջ քերթված մը ի պատիվ մեր հինավուրց հայրենիքին։ Պատերազմին ավարտելուն՝ հաշվեհարդարության ժամուն, այդ մեծանուն ու մեծասիրտ մարդը կրնար, ու սիրով պիտի ուզեր, օգտակար ըլլալ մեր դատին։

Ողբա՜նք այս մահը, և մեր նահատակված արյունակից մտավորականներուն հիշատակին հետ՝ դառնաստուգ հարգանքով պաշարենք այս մեծ քերթողին, մեծ հայրենասերին ու մեծ բարի մարդուն հիշատակը։

ԲՈՒՇՔԻՆ ԵՎ ՄԻՑՔԻԵՎԻՉ

Այս միևնույն տարվան մեջ սլավ ցեղը տոնեց իր երկու մեծ բանաստեղծներուն հիսնամյակը։ Փետրվարին բոլոնիացիք Միցքիևիչին հիշատակը հանդիսավորեցին. այս վայրկյանիս ռուսները Բուշքինին անունը կպանծացնեն։ Երկու համացեղ բանաստեղծները համաբաղդ չեղան. կպատկանեին ցեղին երկու գլխավոր ճյուղերուն, և այդ երկու ճյուղերը մոլեգին մրցակիցներ էին. Բուշքին կներկայացնե այն ճյուղը, որ մրցմանը մեջ հաղթական ելավ ու մյուսին տերն ու հաղթողը դարձավ. Միցքիևիչ գերագույն արտահայտությունն է հաղթված ճյուղին հանճարին ու տառապանքին։ Ու թեպետ ռուս բանաստեղծը շատ ավելի ազմկալից, ընդարձակ ու երկարատև տոնավորում մը կունենա, լեհ քերթողին հիսնամյակը, իր խեղդված ու վեհ պարզությանը մեջ, այլապես նշանակալից էր և հուզիչ։ Բուշքին մարդկության համար ուրիշ բան չէ, բայց եթե նուրբ արվեստագետ մը, որուն երգին մեջ ժողովրդի մը զգայնությունը նոր կսկսի կազմակերպվիլ. Միցքիևիչ կմարմնավորվե մեծ դժբախտ ժողովրդի մը դյուցազնական ցավը՝ ամենեն հզոր քնարերգական խառնվածքներեն մեկուն մեջ արտահայտված։ Մեզի հայոցս համար որևէ վարանում կարելի չէ՝ երկու անուններուն միջև մեր նախընտրությունը որոշելու համար։ Բուշքին մեզ կշահագրգռե իբրև մին այս դարու տասը-քսան տաղանդավոր քնարերգակներեն. Միցքիևիչ մեր հիացմանը մեջ տեղ պետք է ունենա իբրև բարձրագույն հերոսներեն մեկը մարդկային բանաստեղծության, և մեր սրտին մեջ ամենեն կաթոգին անկյունը՝ մեր ազգային քերթողներուն անմիջապես քովը՝ իբրև գերագույն երգիչը մարտիրոս ժողովուրդներուն։

Լեհ բանաստեղծին հիսնամյակը կատարվեցավ ոստիկանական ամենախիստ հսկողության տակ, ամենեն ծայրահեղ սեղմումներով. Քրակովիո մեջ արձանին բացումին՝ արգելված էր որևէ ճառ արտասանել. բոլոնիացի գրագետներու խումբ մը գնաց՝ անխոսուկ, ծածկույթը վար առավ արձանին վրայեն, ու խռնված բազմությունը, լուռ ու մունջ, զբսպված հուզմունքով մը դիտեց պաշտված բանաստեղծին դեմքը և հիշեց անիծած օրերը, զոր ան երգեց։ Ռուս բանաստեղծին փառավորումը տե-

ղի կունենա կառավարության հովանավորության տակ, ամենեն պաշտոնական հանդիսավորությամբ. և բանաստեղծի մը հիշատակին համար չկա ավելի աղարտող, ավելի երկդիմի պատիվ, քան բռնապետական կառավարության մը մեծարանքը։ Եվ ռուս կառավարությունը, որ Թալեյրանի հոբելյանին առթիվ այնքան ցուրտ ու նույնիսկ թթված դեմք մը ցուցուց, իր այս ծայրահեղորեն փութկոտ ու պոռոտ խանդավառությամբը, զոր կշռայլե Բուշքինի հիշատակին առջև, ցավալի կերպով կշեշտե այն ամբողջ անձկորեն ազգայնամոլական, գրեթե կառավարական դույնը, որ կգտնվի Բուշքինի գործին մեկ մասին մեջ։ Բուշքին արքունիքի բանաստեղծի դերը ընդունեցավ, «ռուսական տիեզերապետության» երգիչը դարձավ ու ռուսական զորությունը ջատագովելու չափ հառաջ գնաց։ «Ինչո՞ւ այդչափ աղմուկ, ժողովրդական ճարտասանե՛ր, կգրեր Ֆրանսայի լեհասերներուն ուղղված քերթվածի մը մեջ. ինչո՞ւ բանադրանք կսպառնաք Ռուսաստանին։ Ի՞նչ է որ ձեզ իրար կանցընե։ Լիթվանիո խռովությունն՝ը։ Կեցցե՛ք։ Ատի սլավներու ներքին վեճ մըն է, խնդիր մը, զոր դուք չեք կրնար լուծել։ Երկար ատենե ի վեր այդ ժողովուրդները կպայքարին... մեկեն ավելի անգամներ անոնց կողմը կամ մերը մրրիկին տակ գլուխ ծռել ստիպվեցավ։ Ո՞վ հաղթական պիտի ելլե այս ահավոր կռիվեն. ամբարտավան լե՞հը, թե հավատարիմ ռուսը։ Սլավ առվակները ռուսական ծովուն մեջ պիտի երթան հալի՞ն, թե այդ ծովը պիտի չորնա»։

Սակայն Բուշքին լոկ շովեն մը չէր, նույնիսկ իրականապես բնավ երբեք շովեն մը չէր. պաշտոնական խանդավառության կմիանան այս վայրկյանիս Ռուսիո մտավորական դասակարգին հարգանքի արտահայտությունները. և հետաքրքրաշարժ վեճ մը ծագած է պահպանողական ու ազատական կուսակցություններու միջև, որոնց յուրաքանչյուրը Բուշքինը կուզե իրենը համարել։ Բուշքին «բանաստեղծ» մըն էր ամեն բանե առաջ, և առաջին արվեստագետը եղավ, որ ռուսերեն լեզուն ողորկեց, գրական գործիք մը դարձուց։ Այդ շովենի դերը կատարեց ստիպմամբ, պարագաներեն բռնադատված, առանց անկեղծության. խառնվածքով ու գաստիարակությամբ ազատասեր մըն էր, դպրոցին մեջ սնած էր ֆրանսական տասնևութերորդ դարու հեղինակներովը և իր առաջին փորձերուն մեջ Անտրե Շենիեի նմանողությամբ ազատության ուղղված գեղոններ հորինած էր. նույնիսկ մասնակցած էր ազատական գաղտնի ընկերություններուն, որոնք ռուս երիտասարդության մեջ կազմվեցան 1812-ի Նաբոլեոնյան ցնցումեն հետո և որոնք պիտի հանգեին 1825-ի հեղափոխության. հրատարակած իր բազմաթիվ հակակառավարական

պարսավագրեր ու երգիծանքներ. իր ընկերներեն շատերը Սիպերիա աքսորվեցան, ուրիշներ մահվան դատապարտվեցան, և Բուշքին աքսորվեցավ Կովկաս. հոն Պայրընի բանաստեղծությունները ճանչցավ ու անոնց ազդեցության տակ, ապստամբ, անհավատ քերթվածներ շարադրել սկսավ. Կովկասի կառավարչապետը Բեդերսպուրկ գանգատ հայտնեց անոր մասին, և Բուշքին հեռացվեցավ նույնիսկ Կովկասեն ու ղրկվեցավ Բսքով, իր հորը կալվածին մեջ, ուր զինքը փակեցին որևէ հարաբերություններե, որևէ միջավայրե խզված։ Կենցաղամոլ ու անհանդարտ, Բուշքին չկրցավ հանդուրժել այդ բանտի կյանքը, ու անկից ազատելու համար հանձն առավ տեսակ մը «մեղայագիր» գրել ձարին, որով կխոստանար «իր կարծիքներով չհակասել ընդունված կարգ ու սարքին» և երդում կուտար ոչ մեկ գաղտնի ընկերության չմասնակցելու։ Նիքոլա Ա. ընդունեցավ աղերսագիրը, ներեց Բուշքինին, զայն Մոսկվա բերել տվավ, և որոշեց,— ահռելի շնորհ,— որ անոր գրաքննիչը ինքն իսկ պիտի ըլլար. այնուհետև Բուշքին ստիպված եղավ իր բոլոր գրածները հրատարակելե առաջ կայսեր ցուցընել, որ կշնչեր անոնցմե ինչ որ անհաճո կթվեր իրեն։ Այս սեղմիչ ու նվաստացուցիչ կացությունը ճնշեց Բուշքինի միտքը և տառապեցուց զինքը. երբ 1829-ին ռուս-թրքական պատերազմը ծագեցավ, Բուշքին իրեն վիճակված կյանքեն զզված ու գանած, արկածախնդրական մղում մը ունեցավ պատերազմի գաշտը նետվելու, փախավ Մոսկվայեն Կովկաս ու անկից անցավ Տաճկաստան, ռուսական բանակը. անգամ մը թուրք զինվորներե պաշարվեցավ, ու քիչ մնաց մեռներ անոնց ձեռքը, եթե իր բարեկամները չփութային զինքը ազատել։ Պատերազմին ավարտեն հետո պարտավորվեցավ Ս. Բեդերսպուրկ դառնալ, ուր դարձյալ իր կյանքը և գրվածները ամենախիստ հսկողության ենթարկվեցան. մինչևիսկ գաղտնի ոստիկանության պետը անոր կցուցըներ այն ուղղությունը, որով պետք էր գրեր... Բուշքին ազնիվ, բայց թույլ խառնվածք, մեկ քանի անգամ հետեցավ այդ ոստիկանական մուսային ներշնչմանը։ «Փայլե ուրեմն, կերգե Ս. Բեթերսպուրկը փառաբանող քերթվածի մը մեջ, ով քաղաք մեծն Պետրոսի, և տևե միշտ անդրդելի ինչպես նույն ինքն Ռուսաստանը։ Թող հաղթահարված տարրերը հաշտվին քեզի հետ։ Ֆինլանտական ծովուն կոհակները թող իրենց ատելությունները, իրենց վաղեմի պարտությունները մոռնան. իրենց սնոտի մոլեգնությունները Պետրոսին հավերժական քունը վրդովելե թող դադրին...»

Վերջապես հանձն առավ արքունի սենեկապետի պաշտոնը, զոր կայսրը իրեն տվավ և եղավ ազնվականներու ընկերության մը մշտական արհամարհանքին ենթարկված։ Ջափազանց ջղոտցած այս անարգ

կացութենեն, օր մը կասկածեցավ իր կնոջը վրա, մենամարտի հրավիրեց Տանթես անուն ֆրանսացի մը, զոր իր կնոջը տարփածուն կարծեց, և անոր գնդակեն մեռավ։ Կայսրը բերել տվավ անոր բոլոր անտիպ գրությունները և անոնցմե ջնջեց ինչ որ վնասակար նկատեց...

Դժբախտ, ջախջախված կյանք մը, հոշոտված, բռնաբարված տաղանդ մը, ահա ինչ որ եղավ Բուշքինը։ Այնպես որ այդ «շովեն» կարծված, «շովեն» երևնալու բռնադատված բանաստեղծը զոհ մըն էր բռնության, և ավելի ազատ պայմաններու մեջ, եթե կարևնար արտահայտել ինչ որ անկեղծորեն կզգար, ապահովապես ամենեն խանդոտ երգիչներեն մեկը պիտի ըլլար ըմբոստացումին։ Իր լավագույն էջերը նորեն անոնք են, որոնց մեջ, թեև զսպված, թեև սքողված, ազատական ձգտումներ թարգմանած է։ Ատոր համար է որ Ռուսիո ամենեն ազատական մտքերը այսօր կմասնակցին Բուշքինը փառաբանելու գործին։ Ուրիշ կարևոր պատճառ մը, որ Բուշքինը սիրելի կդարձնե բովանդակ ռուս ժողովրդին, սա անժխտելի իրողությունն է, որ Օնեկինի քերթողը ճշմարիտ ռուս գրականության ռահվիրան եղավ եթե ոչ հիմնադիրը, ու ռուս գրական լեզուն ստեղծողն ու մեկ հարվածով գեղարվեստական բարձրագույն կատարելության հասցնողը։ Մինչդեռ Ժուքովսքի և Բուշքին ռուս գրականությունը ֆրանսականին տժգույն ու անանձնական նմանություն մըն էր. Ժուքովսքի ուրվագծած էր, իր պալլադներով, իսկականապես «ռուս» բանաստեղծության մը նախապատկերը. Բուշքին, կրած ըլլալով հանդերձ ֆրանսական գրականության ու հետո մասնավորապես Պայրընյան բանաստեղծության խորին ներգործությունը, կըրցավ, ազդված իր գեղջուկ դայակեն, որ հեքիաթներ կպատմեր իրեն, և իր թափառաշրջիկ կյանքին մեջ ռուս ժողովրդին հետ ուղղակի շփման մտնելով, ընդնշմարել այն ուրույն հոգին, ուրույն հրապույրը, որուն գեղեցկագիտությունը որ կար այդ ժողովրդին մեջ թաքուն. իր գործերուն մեծ մասը, ձևով մանավանդ, չափազանց համեվրոպական են, այն շրջանին եվրոպական ռոմանտիկ բանաստեղծության ռուսական ցոլացումը կներկայացնեն. բայց նյութերը ռուս ժողովրդական ավանդություններեն. ազգային պատմութենեն, կամ տեղական բարքերեն առնված են, և, տեղ-տեղ մասնավորագույն ու շեշտ ունեցող զգայնություն մը կսկսի նշուլել, որ արդեն արշալույսն է «ռուս հոգիին». Նիքոլա Կոկոլ, որ ռուսական գրականության ճշմարիտ հիմնադիրը եղավ, կխոստովանի թե իր ճամփան գտավ շնորհիվ Բուշքինի օրինակին ու մանավանդ անոր խորհուրդներուն։ Բուշքին, իր կարգ մը բանաստեղծություններով ու մանավանդ մեկ քանի տեղային կյանքեն քաղված վիպակներով, հողը պատրաստեց ռուսական իրապաշտության, որ Կոկոլեն հետո պիտի տար աշխարհիս այն երեք հսկաները, որ կկոչվին Տաստաևսքի, Թուրկենեֆ ու Թալսթոյ։

***

Առանց որևէ ստվերի, առանց որևէ երկդիմության, վեհապանծ գեղեցկությամբ դեմք մըն է Միցքիևիչը, հուզված ու հիացական դարերուն առջև իր շողարկած խրոխտությանը մեջ կանգուն։ Խորունկ, թրթռագին, թևավոր հանճարը, զոր բնությունը պարգևած էր իրեն, տարօրինապես մեծցավ ու ազնվացավ շնորհիվ այն ողբերգական կյանքին*, զոր բաղդը նշանակեց անոր։ Միցքիևիչ, ամենեն հզոր, ամենեն ազնվական ու ամենեն հարուստ զգայնություններեն մեկը որ երևցած ըլլան մարդկության մեջ, քնարը եղավ, ուր հնչեցին երազանքը, տառապանքը, հավատքը և հուսահատությունը մարդկության ամենեն գեղեցիկ, ամենեն նուրբ և ամենեն դժբախտ ժողովուրդներեն մեկուն։

Դարու մը մեջ, ուր իմացականությունը գերազոր ուժը եղավ, ոչ միայն գիտության, այլ նույնիսկ գեղարվեստի ու գրականության ոլորտին մեջ, Միցքիևիչ համառեցավ մնալ ներկայացուցիչը զգայնության, որուն վրա տարամերժորեն կհիմնվեին հին ներշնչումները։ Հավատքի, երևակայության ու երաժշտության ժողովուրդի մը զավակ, գյուղի մը նախնական ու երազկոտ բարքերուն մեջ ծնած ու կազմված, այս բանաստեղծը արհամարհեց վերլուծումը, որ կտիրեր իր շուրջը, հեգնեց գիտությունը, զոր անզոր ու անհրապույր կգտներ, ճշմարտությունն ու գեղեցկությունը իր սրտին բաբախումներուն մեջ փնտրեց, ուր խտացած կզգար ամբողջ ժողովրդի մը սրտին արյունը։ Միցքիևիչ վերջինն է հին աշխարհին բանաստեղծներուն։ Թեպետ ժամանակակից Կեոթեին ու Պայրընին, լեհ քերթողը շատ ավելի եղբայրություն ունի Տանթեի մը հետ, քան ԺԹ. դարու այդ քերթողներուն։ Կերգե հոգին, որուն կհավատա. կերգե զայն իր ամեն ձևերուն մեջ, սկսյալ ժողովրդական պարզուկ երևույթներեն՝ ուրվական, ոգի, դև, ևն, մինչև բնազանցական մեծաշուք հղացումները, աստված, հրեշտակներ, հավիտենական կյանք, ևն։ Ու ոչ մեկ սխոլաստիկ իմաստակություն, ոչ մեկ աստվածաբանական մեկնամոլություն չի կարծրացներ, չի չորցներ այդ ներշնչումը. ան

* Միցքիևիչի կյանքին վրա մանրամասն տեղեկություններ տալու համար մեր ընթերցողներուն, կհրատարակենք Բարեգի Քոլեժ տը Ֆրանսին ալավ լեզուներու և գրականության ծանոթ դասախոս Պ. Լուի Լեժեի մեկ ուսումնասիրության թարգմանությունը։

կբխի միմիայն հավատքեն, միմիայն խանդեն, անսպառ, վեթխարի խանդե մը, որ ինք իր մեջ ամբողջ երաժշտություն մը, ամբողջ իմաստասիրություն մը, ամբողջ գեղեցկություն մը կը գտնե։ Միցքիևիչ երգեցիկ ջղայնության կենդանի հրաշալիք մը եղած է. իր ամբողջ գործը հանպատրաստից քերթություն մըն է, հուզմունքին հանկարծական կայծին տակ ցայթքող կես-անգիտակից և այդ պատճառով իսկ ծայրահեղորեն հզոր, շփոթ ու վրդովիչ պերճախոսություն մըն է. իր էջերուն մեջ կզգանք հին գուշակներուն եռոտանին, սրբազան փրփուրներովն ու ցընցումներովը իր անձը, ամեն անոնց, որ զինքը ճանչցած են, Ներշնչյալին հրապույրը ներգործած է. բարեկամներու առջև, հավաքումներու մեջ, երբ ձայնը հանկարծ կարթննար իր մեջը ու երբ ամբողջ մարմինը ներքին մրրիկին հառնումովը կդողար, Միցքևիչ կցցվեր ու վաղանցուկ շունչին ազդեցությանը տակ քերթվածներ կստեղծեր։ Բուշքին, որ Մոսկվայի մեջ անոր աքսորին ատեն, անոր հետ մտերմական բարեկամություն մը ունեցավ, սարսափի մոտեցող սքանչացում մը կզգար անոր համար. «Ի՞նչ հանճար, կգուշեր իրիկուն մը, մտիկ ընելե հետո անոր մեկ հանպատրաստից արտասանած քերթվածը սալոնի մը մեջ, ի՞նչ հանճար, ի՞նչ սրբազան կրակ. ես ի՞նչ եմ անոր քով...»։

Փարիզ, 1830-ի լեհական ջախջախումեն հետո, երբ Լեհաստանեն դուրս ելլող և օտարության մեջ ցրվող բազմաթիվ գաղթականներու հետ Միցքևիչ եկավ հոն ապրիլ, իր խոսակցությունը, իր քերթվածները, և Քոլեժ տը Ֆրանսին մեջ իր դասերը, որոնք ունկնդիրները կէլեքտրականացնեին, այդ Արծիվ-Մարդուն համար երկյուղած հիացում մը հառաջբերին Միշլեի, Քինեի պես մտածողներու վրա, որոնք զինքը իրենց մեծ եղբայրը համարեցին, ու Մոնթալամբերի, Լամընեի պես հավատացողներու վրա, որոնք զինքը իրենց վարպետը հռչակեցին. «Քիչ օրեն պիտի լույս տեսնե, կգրեր Լամնե Լեհ ուխտավորներու գրքին հրատարակումեն քանի մը օր առաջ, փոքր հատոր մը Միցքևիչին, որ անվիճելի կերպով մեր ժամանակին առաջին բանաստեղծն է։ Զմայլելի բաներ կան այդ գրքին մեջ... Հավատքի և ազատության այդպիսի մաքուր արտահայտություն մը հրաշալիք մըն է մեր ստրկության և անհավատության դարուն մեջ»։ «Մենք զինքը երբեմն մարդեն ավելի բարձր տեսանք, կգրեր Միշլե ակնարկելով Քոլեժ տը Ֆրանսի մեջ Միցքևիչի դասերուն. կենդանի բոց մը (վսեմ ու ցավագին տեսարան), արցունքներ՝ փայլակներով խառնված, կթափառեին իր արյունոտ աչքերուն մեջ»։ «...Միցքևիչ, կգրեր Ռընան, հին դարերուն հետ թաքուն հաղորդակցության կապեր ուներ, որ զինքը անցյալի Տեսանող մը կցուցանեին։ Բայց միանգամայն Տեսանող մըն էր ապագային։ Իր ցեղին կհավատար. բայց կհավատար

մանավանդ աստվածային ոգիին, որ կբորբոքե ամեն ինչ որ կյանքի շունչը կկրե. և բոլոր ամպերուն մեջեն կտեսներ փայլուն ապագա մը, ուր խեղճ մարդկությունը պիտի մխիթարվի իր տառապանքներեն»։

Միցքիևիչի գործը, ծայրեծայր, «Ներշնչյալ»-ի գերականություն մըն է. ատով է որ կբացատրվին ոչ միայն անոր շքեղ գեղեցկությունները, այլև անոր անհավասարությունները. Միցքիեվիչ գիտակից արվեստագետ մը չէր, ինչպես Շելի կամ Կեոթե մը. և իր գործերը անճաշակություններե, երկարաբանություններե զուրկ չեն։ Հրաբուխը, իր ժայթքեցուցած ոսկի բոցերուն հետ, միանգամայն թափած է բնականաբար ա՛մագին դեզ մը տձև քարերու, հողի կոշտ զանգվածներու, ու լավայի, որ չորնալով կտգեղնա։ Բայց հրաբուխ մըն է ան և ունի այն գեղեցկությունը, զոր հրաբուխները միայն ունին։ Նոր ժամանակներու բանաստեղծության մեջ ոչինչ կարելի է գտնել, որ հավասարի այն ավյունի կրակոտությանն ու փայլին, այն թռիչի բարձրության ու զորության, զոր Միցքիևիչ կցուցընե Ֆարիսին, Շամֆարիսին, Խրիմի հնչյակներուն մեջ, որոնցմով վաղեմի արաբ բանաստեղծության կայծակը արթնցուց, ու նախահայրերու Քոնրատին արտակարգ մենախոսությանը մեջ, որով Եսայիներուն ու Եզեկիելներուն որոտումը վերհնչեցուց, և Լեհ Ուխտավորներու Գրքին մեջ, ուր նոր ավետարանի մը շեշտը լսելի ըրավ։

Միցքիևիչ մեծ նմանություն ունի Արևելքի երգիչներուն, մասնավորապես եբրայեցի մարգարեներուն հետ, ոչ միայն պատկերալից ու ավյունոտ քնարերգությանը համար, որով իր բանաստեղծությունը կբռնկի, այլ մանավանդ այն տեսակ մը միստիկական հայրենասիրությամբ, ուր Աստծո, Հայրենիքին ու Արդարության սերը իրարու կխառնվին։ Միցքիևիչ կվերաբերեր ժողովրդի մը, որ Հանճարին ու Տառապանքին կրկին սրբազնությունը ուներ. ըմբռնեց որ այդ ժողովուրդը Ազատության գաղափարը կներկայացներ՝ ընդդեմ ռուս զորության, որ Բոնապետությունը կխորհրդապատկերեր իր աչքին. բանտի մեջ, աքսորի մեջ, պանդխտության մեջ սորվեցավ մեծ ատելությունը Բիրտ Ուժին, ու իրեն թվեցավ թե լեհ ժողովուրդը, որ ազատության գաղափարին համար մարտիրոսանալու կդատապարտվեր. ճակատագրական պաշտոն մը ուներ կատարելու՝ ազգերուն ու ժողովուրդներուն մեջ, ինչպես որ Մարգարեները կհավատային թե Իսրայելի ժողովուրդը, հալածված ժողովուրդը, բայց Աստուծո ժողովուրդը, պաշտոն մը ուներ ազգերուն մեջ,— այն է տապալել ամբարշտությունն ու անարդարությունը, և հաղթական դարձնել Արդարությունը և ճշմարտությունը։ Նախահայրերու զմայլելի Քահանան իր տեսիլքին մեջ լեհ ազգը կտեսնե իբրև մեծ մարտիրոսը,

որ կառաապի մարդկության փրկությանը համար, իբրև Քրիստոսը ազգերուն. «...Ամբողջ Եվրոպան իմ ազգս տանջաբանը կառաջնորդե... կծաղրե զայն... «Դատարա՜ն... Հոն կկեցընեն անմեղը։ Դատարանին մեջ, անսիրտ վկաներ միայն կտեսնեմ, ու անհոգի դատավորներ... Եվ ահա թագավորները գոչեցին .— Թող դատապարտվի և տանջանքի ենթարկվի. անոր արյունը թող մեր ու մեր զավակներուն գլխուն իյնա. խաչեցե՛ք Մարիամին Որդին. թող Բարաբասները արձակվին. խաչեցե՛ք, համարձակեցավ ձեռք վերցնել Կեսարի թագին...» Ահա թագավորները բռնեցին, կաշկանդեցին զայն. ահա զայն աշխարհիս կցուցընեն՝ մարմինը հեգնություններով խոցոտված, ճակատը արյունոտ փուշերով պսակված... Խաչը իր բազուկները բովանդակ Եվրոպայի վրա կտարածե. կազմված է երեք չորցած ժողովուրդներե, որոնք երեք կարծր փայտի կտորներու պես են... Ահա կգամեն զայն, ահա իմ ազգս փրկչական գահին վրա ելավ... ու Մայր-Ազատությունը, անոր ոտքին տակ կանգուն, արտասվալից աչվները վեր կվերցնե...»

Լեհ-Ուխտավորներու Գիրքը այս գաղափարին ընդլայնումն է. «Հավատք և Ազատություն» կերգե բանաստեղծը, և կհավատա թե լեհ ժողովուրդ, որ իր պղծված հայրենիքեն հեռացած՝ աշխարհիս չորս անկյունը տարտրղնած է, իր դյուցազնական մարտիրոսությամբը կոչված է ստրկացած կուրացած կաշկանդված մարդկության մեջ տարածել այդ երկու լուսավոր գաղափարները, որոնք իրեն եղբայր կթվին, անբաժանելի կերևան.

«...Հիսուս Քրիստոս ըսավ. «Այն որ իմ ետևես կուգա, պետք է որ իր հայրն ու մայրը թողու, և սիրտը քաջությամբ զինե.

«Լեհ ուխտավորը կըսե. «Այն որ Ազատության ետևեն կերթա, պետք է որ իր հայրենիքը թողու և իր կյանքը վտանգի դնե։

«Որովհետև այն որ հայրենիքը կմնա և ստրկության կհանդուրժե կյանքը ապահովելու համար, կյանքն ու հայրենիքը միանգամայն պիտի կորսնցնե, և այն որ հայրենիքեն ինքզինքը կաքսորե՝ իր կյանքը վտանգելով ազատությունը պաշտպանելու համար, հայրենիքը պիտի փրկե և հավիտյան պիտի ապրի»։

Իր «հավատք»-ը ոչ մեկ առնչություն չունի պաշտոնական, ճնշողական եկեղեցիին հետ, որ բռնության նեցուկը կդառնա։ Այդ հավատքը զգացումե կծնի և ոչ թե պայմանագրութենե մը, ու շատ ավելի կմոտենա հեղափոխական բողոքին քան պահպանողական օրհներգին։ Միցքիևիչ կհավատա Հոգիին, որովհետև զայն կկարծե աղբյուրը գեղեցկության, ազնվության, բարության, ընդդեմ Նյութին, որ իրեն համար չարությունը, թանձրությունը, խավարն է. կհավատա Աստծո

որովհետև կկարծե, որ ան գերագույն սկզբունքն է արդարության։ Եվ ինչպես Մարգարեները, որոնք թագավորներուն դեմը կցցվեին իրենց սրտմտությանը մեջ զրահված ու անոնց բռնամոլությունը, վայրագությունը, անզգամությունը կքարկոծեին, որոնք Աստծո իսկ բողոք կբառնային, կհրավիրեին զայն արթննալ իր թմբութենեն ու մարդոց մեջ տիրող Չարը սպանելու փութալ, Միցքիևիչ կորոտա Չարերու մահաբեր զորությանը դեմ, զոր կնկատե իբրև մեկ արտահայտությունը Սատանին, վիթխարի խոշընդոտ մը համամարդկային երջանկության հաստատմանը ու զառանցող կատաղության, շվարած ու խենթացած հուսահատության վայրկյանի մը մեջ, (Քոնրատին վսեմ մենախոսությունը), աստուծո երեսն ի վեր իր զարմանքը, իր վրդովումը, իր զայրույթը աղաղակելու կհանդգնի. «Սուտ խոսեցավ այն, որ քեզ Սեր անվանեց, դուն Իմաստություն ես միայն... Աշխարհը մտքերուն ձեռքը ձգեր ես ու կթողուս, որ սրտերը հավիտենական ամլության մը մեջ հյուծին...»

Միցքիևիչ գրելով չբավականացավ. չափազանց համոզված էր իր զգացածին ու մտածածին, որպեսզի երգերով գոհարներ.ուզեց որ հալածված լեհությունը կազմակերպվի, իր դերը ըմբռնել և գործել սկսի։ Պիոս Թ.-ին կոչ մը ուղղեց՝ խնդրելով, որ եկեղեցին գլուխը անցնի այդ պայքարին, որուն զինվորները պիտի ըլլային լեհերը, և նոր խաչակրություն մը հարուցանե բռնություններուն և գահերուն դեմ. իր այս գաղափարները Ֆրանսայի մեջ մեծ խանդավառություն առաջ բերին, և Լամբնե, հետևողությամբ Լեհ Ուխտավորներու Գրքին, գրեց իր Հավատացյալի մը խոսքերը և ազատական կաթոլիկության մը դրոշակը պարզեց։ Բնականաբար պապությունը, որ կրոնական Չարություն մըն է, չէր կրնար կատարել դերը, զոր Միցքիևիչ կառաջարկեր, և բանաստեղծը տեսավ, որ պետք էր միայնակ գործել։ Հռոմի մեջ կազմակերպեց լեհական լեգեոն մը, որ Ավստրիո դեմ Իտալիո մղած պայքարներուն մեջ հերոսական մասնակցություն մը ունեցավ։ Իր կյանքին վերջերը Միցքիևիչ Պոլիս գնաց, ուր կզբաղեր լեհական մեծ լեգեոն մը պատրաստելու, Ռուսիո դեմ ապագա պատերազմներու համար. բայց մահը վրա եկավ, ու իր ծրագիրը անավարտ մնաց։

Միցքիևիչ, Շոբենին հետ, կներկայացնե մեծ ազգի մը հոգեվարքը, ու ոչ մեկ հոգեվարք այնքան գեղեցիկ եղած է, որքան Բոլոնիայինը։ Ցխրալի արևի-մուտք մը եղավ ան, արյունով, ոսկիով ու կրակով մեծահարուստ, անոր ցոլքերը բովանդակ Եվրոպայի վրա երկնցան ու գեղեցկություն բերին սրտերուն, կորովը ավելցուցին երազներուն, քաջություն տվին պայքարներուն։ Շոբեն հնչեցուց գերագույն մելամաղձու-

թյունը, մահամերձ դյուցազնի աղնվական ու խրոխտ մելամաղձությունը։ Միցքիևիչ երգեց Հոգին՝ նյութեն շղթայված, և ավել գեղեցիկ, ավելի խրոխտ, ավելի հզոր ու ամեհի, որովհետև շղթայված ու դժբախտ։ Եվ այդ հոգեվարքը այնքան գեղեցիկ եղավ, որ մահը արգիլեց. քաղաքացիական լեհաստանը ոչ ևս է, բայց լեհությունը մնաց, այդ գեղեցկությանը շնորհիվ զոր արտադրեց Հանճարին ու Դժբախտության զուգավորումեն. հակառակ ամեն հալածանքի, հակառակ արմատական ջնջման բոլոր ճիգերուն, լեհությունը ինքզինքը կպահե անխախտ, և եղած է, ինչպես Միցքիևիչ կերազեր, ազատագրության ուժ մը ընդդեմ ճարակման դրության, գլխավորներեն մին այն հեղափոխական տարրերուն, որոնք ռուս բռնության հիմերը կկրծեն ու կմաշեցնեն։

* * *

Այդ տարրերեն մեկը, և ամենեն կարևորը, այսօր նույն ինքն ռուս երիտասարդությունն է։ Բուշքին, որ անշուշտ ստիպմամբ գրած էր Բոլոնիո ապստամբության առթիվ հորինած անպիտան քերթվածը, հիմա ինքզինքը բացարձակապես անկարող պիտի զգար զայն գրելու։ Ռուս միտքը հեռու է այսօր ըլլալե՝ ինչ որ էր Բուշքինի օրով։ Եվ արդեն անիրավություն մը պիտի ըլլար սլավ ցեղին երկու ճյուղերուն իբրև լիակատար ներկայացուցիչները համարիլ Բուշքինն ու Միցքիևիչը։ Միցքիևիչ իր ժողովրդին հանճարին բարձրագույն արտահայտությունը եղավ, Բուշքին ռուսական գիտակցությունն է որ նոր կարթնա, ծանրածանր շղթաներու տակ կապկպված, ամեն քայլին բիրտ պատերու բախելով, որ անոր թռիչը կկասեցնեն, ստիպված՝ կրելու այնպիսի ազդեցությունները, որ զինքը ոչ միայն կսեղմեն այլ նույնիսկ կշարափոխեն։ Բուշքինի մեծ արժանիքը այդ դժոխային պայմաններուն մեջ

ՎԻՔԹՈՐ ՀՅՈՒԿՈ

Ֆրանսական ժողովուրդը այս տարի արտակարգ հանդիսությանց ամբողջ շարքով մը իր մեծագույն բանաստեղծին, Վիքթոր Հյուկոյի, հիշատակը տոնեց ու գործը փառավորեց՝ անոր մահվան հիսնամյակին առթիվ, հանդիսություններ, որոնց նմանը չեմ հիշեր որ ուրիշ ոևէ ֆրանսացի գրագետի համար կատարված ըլլա։ Հյուկոյի մեծատարած, բազմաձև, հուժկու գործը և շքեղ ու ալեկոծ կյանքը— դյուցազներգական վեպ մը,— զինքը կենդանվույն դարձուցած էին կուռքն իր ժողովուրդին և արև-դեմք մը համայն մարդկության համար. անոր թաղումը ունեցավ նկարագիր մը, զոր ոչ մեկ մտավորականի թաղումը չէր ունեցած Ֆրանսայի մեջ. մարմինը գիշեր մը Հաղթական Կամարին տակ զետեղվեցավ՝ հայտնի գրագետներու և բանաստեղծներու հույլե մը հսկված. մեկ միլիոն ժողովուրդ հետևեցավ դագաղին, և աճյունը Հաղթական Կամարեն տարին ուղղակի Պանթեոն, Ֆրանսայի մեծ մարդոց հուսկ հանգստավայրը, անոնց, «որոնց երախտապարտ է հայրենիքը»։ 1902-ին Ֆրանսա արդեն իսկ մեծահանդես արարողություններով տոնախմբեց իր ազգային բանաստեղծին ծննդյան հարյուրամյակը։ Այս տարվան հանդեսները թիվով ու շքեղությամբ գերազանցեցին 1902-ին կատարվածները։ Անոնց մասնակցեցան ժողովուրդը, մտավորական մեծ կազմակերպությունները, կառավարությունը, պաշտոնական բոլոր մարմինները։

Առաջին հավաքույթը տեղի ունեցավ Պանթեոնին մեջ, գլխավորաբար դպրոցական տղոց համար սարքված. երկրորդը կատարվեցավ Ֆրանսայի Գրողներու Ընկերության նախաձեռնությամբ, հետո՝ երեք ժողովրդական հսկա հավաքույթներ՝ Թրոքատերոյի լայնարձակ սրահին մեջ, առաջին երկուքը համազգային հանգամանքով՝ Ֆրանսայի ազգային բանաստեղծը պատվելու համար, երրորդը՝ նախաձեռնությամբ ձախակողմյան տարրերու, տարփողելու համար հեղափոխականը, կեղեքյալներու պաշտպանը, բռնության դեմ պայքարողը, որ այնքան մեծ տեղ բռնեց Հյուկոյի կյանքին ու գործին մեջ։ Հուսկ ապա, պաշտոնական հանդիսություն մը Սորբոնի մեծ ամփիթատրոնին մեջ, ուր հանրային կրթության նախարարը և այս հիսնամյակի հանդեսները կազմակերպող «ազգային հանձնախմբի» նախագահ ծանոթ բանաստեղծ Էմոն Հարոքուր խոսք առին և որուն մասնակցեցան՝ հատկապես ղրկված պատգամավորություններով կամ ուղերձներով՝ գրեթե բոլոր քաղաքակիրթ ազգերը, Գերմանիայեն մինչև Ճապոն, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի հանրապետություններեն մինչև Խորհրդային Միություն, որովհետև Հյուկո ոչ միայն եղավ իր ժողովուրդին հոգվույն ու հանճարին լավագույն տարրերուն քնարերգական ամենաբարձրը ներկայացուցիչը, այլև մին մարդկության ամենեն ազնիվ իդեալները վսեմորեն երգող սակավաթիվ հսկաներեն, որ գերագույն պատիվն են մարդկային ազգին։ Այդ բոլոր հանդեսներուն,— մանավանդ Թրոքատերոյի մեջ տեղի ունեցածներուն, ուր յուրաքանչյուր անգամ 5000-են ավելի բազմություններ կխռնվեին,— իրենց տաղանդին փայլը Հյուկոյի փառաբանման պարտականության կատարմանն ի սպաս բերին դրին Ֆրանսայի ամենեն նշանավոր այր ու կին դերասանները, երաժիշտները, երգիչները,— ինչպես և հոդվածներով ու ճառերով՝ շատ մը հայտնի գրագետներ։ Եվ անոնք որ այդ առթիվ՝ մեծ բանաստեղծին ամենեն գեղեցիկ քերթվածներուն մեծ արվեստագետներու բերնով հրաշալի արտասանումը լսեցին, շատ բան կորսնցուցին։

Հյուկո, Շեքսպիրի հետ, օտար բանաստեղծներեն մեր մեջ ամենեն ավելի սիրվածն եղած է ատենով,— ու Շեքսպիր բեմի միջոցով է, որ ժողովրդական դարձած է մեր մեջ, մինչ Հյուկո իր «Թշվառներ»-ով մեր ժողովուրդին բոլոր խավերուն ծանոթ ու պաշտելի հեղինակ մը եղած է. անոր քերթողական գործը մեծ ազդեցություն ունեցած է հայոց (մանավանդ արևմտահայոց) ժամանակակից գրականության վրա, մասնավորապես ռոմանտիկ շրջանին, և այն մինչև այսօր ունի մեր մեջ իր բազմաթիվ հարգողները։

Մեզի համար ալ պարտք մը կար մեր ազգի մեծարանքը այս առթիվ անգամ մը ևս հանդիսավորապես մատուցանելու «Արևելականք»-ի բանաստեղծի հիշատակին։ Հայ Գրողներու Ընկերակցության վարչությունը ուղեց այդ պարտքը կատարել, կազմակերպելով ի պատիվ Հյուկոյի գրական հանդես մը, որ տեղի ունեցավ հունիսի 22-ի իրիկունը։ Տիկին Ավետիսյան (Անայիս) հոն կարդաց գեղեցիկ ճառ մը, տիկին Սրկոն-Վեպեր և տիկին Սյուզան-Կոնել հոյակապորեն արտասանեցին Հյուկոյի լավագույն էջերեն մեկ քանին, ու տիկին Սրկոն-Վեպեր կարդաց նա Հյուկոյի մահվան վրա Գրիգոր Օտյանի գրած աղնվական մեկ էջին ֆրանսերեն թարգմանությունը. այս տողերը գրողն ալ կարդաց հոն բանախոսություն մը՝ Հյուկոյի ժամանակակից հայ կյանքի և գրականության մեջ գրաված տեղը պարզող։

Այդ իրիկուն արտասանված բանախոսություններեն, անցյալին մեջ հայ ծանոթ գրագետներու և բանաստեղծներու կողմե Հյուկոյի նվիրված քերթվածներու, հոդվածներու, ինչպես և այս տարվա հանդիսությանց առթիվ Հյուկոյի մասին Հայաստանի և արտասահմանի մեր մամուլին մեջ երևցած հոդվածներե ոմանց ֆրանսերեն թարգմանությունը

ամփոփեցի հատորի մը մեջ, որ լույս տեսավ արդեն։ Այդ հատորը ցույց պիտի տա, թե Ֆրանսայի քերթողական հսկան իր կենդանության իսկ արդեն ի՞նչքան խորապես սիրված, ի՞նչ արտակարգ հարգանքի առարկա դարձած է մեր մեջ, ի՞նչքան կանուխեն անոր վիպական ու թատերական գործերը թարգմանված ու տարածված են հայ հասարակության մեջ, և ցույց պիտի տա նաև թե հայ մտավորականությունը մինչև այսօր կպահպանե,— որքան ալ իր արտահայտության ձևը՝ հոս ու հոն՝ մերթ տարբեր գույն ստանա,— «Թշվառներ»-ու, «Արևելականք»-ի և «Պատուհասներ»-ու արդարամիտ, ազատաշունչ, մարդասեր քերթողին և «Հայեցողությանց» ու «Դարերու ավանդավեպ»-ի հմայիչ քնարերգակին ու հզորաշունչ դյուցազներգակին հանդեպ այդ պաշտամունքը։ Մտավոր հսկայի մը այդ արագ ու խոր ըմբռնողությունը և գրական պաշտամունքի մը հանդեպ ցույց տրված այդ տևական հավատարմությունը՝ հայ ժողովրդին պատիվ բերող երևույթներ են։

Կրնա զարմանալի թվիլ, որ իր երկրին մեջ, Հյուկո իր կենդանությանը ունենալե հետո կատաղի հակառակորդներ, ունենա մինչև ցարդ զինքը քամահրողներ, հեգնողներ կամ ծայրահեղ վերապահումներով գնահատողներ։ Բայց երբ նկատի ունենանք, որ Հյուկո իր կյանքի երկրորդ ու կարևորագույն շրջանին՝ քաղաքական և ընկերական մարզերուն մեջ իբր ռամկավարական մտայնության պաշտպան, իբր պահպանողականության դեմ երկարատև, բուռն ու արի պայքար մը մղող հեղափոխական գործիչ՝ իր հայրենակիցներուն մեկ մասին ատելությունն իր վրա հրավիրած է, և թե նաև՝ գրականության մեջ ալ հեղափոխական՝ տակն ու վրա ըրած է տիրող գեղեցկագիտական հինցած մաշած կանոնները, նոր լեզու, նոր ոճ, նոր տաղաչափություն հառաջ բերած է, վերանորոգած ֆրանսական բանաստեղծությունը, ուրեմն և ավանդամոլներուն խոր տհաճություն պատճառած է, հասկանալի կդառնա, որ միահամուռ և անվերապահ հիացումը այդպիսի գրագետի մը հանդեպ դեռ հաստատված չըլլա Ֆրանսական ժողովուրդին մեջ, ինչպես ան հաստատված է անգլիացվոց մեջ Շեքսփիրին, իտալացվոց մեջ Տանթեին, Գերմանացվոց մեջ Կյոթեին համար, որոնց սակայն մեջ Տանթեին, Գերմանացվոց մեջ Կյոթեին համար, որոնց սակայն հանճարի եղբայրն է Հյուկոն անտարակույս իբր բանաստեղծ։ Ոնսարին համար ալ, որ Հյուկոյեն առաջ՝ մեծագույն բանաստեղծն է, զոր Ֆրանսան ունեցած ըլլա, նույն ֆրանսական ժողովուրդը, առանց իսկ որ գոյություն ունենային՝ գեթ նույն չափով ու ձևով՝ այն պատճառները, զոր թվեցի վերև Հյուկոյի մասին, մեծապես անարդար գտնվեցավ, որդեգրելով Պուալոյի անճիշտ վճիռը այդ մեծ քերթողին նկատմամբ որ, իր կենդանությանը ամենախոր հարգանքի առարկա դառնալե, «թագավորներու բանաստեղծ և բանաստեղծներու թագավոր» հռչակվելե հետո, բացարձակ մոռացության մատնված էր երեք դար ամբողջ, մինչև որ Հյուկոյեն, Սենթ-Պյովեն ու իրենց ռոմանտիկ մեկ քանի ընկերներեն հասկցված, գնահատված և օգտագործված Ռոնսարը մեր այս Ի. դարուն մեջ վերջապես ֆրանսական բովանդակ մտավորականության ու ժողովուրդին կողմե նորեն ընդունվեցավ ու հռչակվեցավ իբր այս երկրին մեծագույն բանաստեղծներեն մին, իբր մին այն շատ սակավաթիվ քնարակիրներեն, որ «ազգային քերթող» փառավոր պատվանունին իրապես արժանի են։ Պետք է սակայն նկատել, որ Հյուկոյի հակառակ արտահայտվողները փոքրամասնություն մըն են Ֆրանսայի մեջ, և ֆրանսական մտավորականության ամենեն արդիական գրողներեն կամ ամենեն նրբաճաշակ հեղինակներեն իսկ շատերը եղած են և էն ցարդ ամենախոր հարգողներ Հյուկոյի, զայն Ֆրանսայի մեծագույն քերթողը նկատողներ։ Անոնք, որ իրենց վերապահումներուն կուտան ծայրահեղ համեմատություն, իսկական քննադատության օրենքներուն դեմ է որ կմեղանչեն։ Հյուկո— ինչպես և Վոլթեր, որուն լեռնակուտակ արտադրությանց մեծ մասը այսօր ոչ ոք կկարդա, բայց որուն պատմվածքները— հեգնաբան մտածողի գլուխ-գործոցներ, հավիտյան պիտի ապրին,— չափազանց շատ արտադրած է, և անշուշտ մեծապես անհավասար է. իր գործին մեջ կան մասեր, որ բոլորովին անարժեք են, կամ հապճեպ, միջակ, ուռուցիկ. ատոնք գոյություն չունին այլևս. Հյուկոն՝ ինչպես ամեն մեծ գրող՝ իր լավագույն էջերուն մեջ միայն տեսնելու է. և Հյուկոյի լավագույն էջերը շատ բազմաթիվ են ու բազմաձևորեն գեղեցիկ, անմահորեն գեղեցիկ։ Ատիկա տեսնողը և ատոր ամենաբարձր արժեքն ըմբռնողը՝ Հյուկոյի թերությանց կամ գործին թույլ մասերուն վրա խոսած ատենն իսկ ինքզինքը պարտավոր կզգա հարգանքով խոսելու և մտքեն չանցներ այդ թույլ մասերուն պատճառով հսկային մեծությունը նսեմացնել և անոր գեղեցիկ գործերուն արժեքը փոքրացնել։ «Թույլ բաներ, նույնիսկ հիմար բաներ շատ կան Հյուկոյի արտադրությանց մեջ,— կըսեր օր մը ինծի Անաթոլ Ֆրանս, Թրոքատերոյի մեկ մեծ հանդեսին մեջ Հյուկոյի մասին իր ներբողական ճառը արտասանելեն քիչ օր առաջ,— բայց երբ նկատի ունենանք իր գեղեցիկ էջերը, ստիպված ենք խոստովանիլ, որ այդ ահավոր մարդը ամեն ինչ ունի. ոչ միայն զորություն և շունչ. զոր ոևէ մեկեն ավելի ունի, այլ նույնիսկ նրբություն, ոչ միայն բարձր քնարերգություն և հզոր դյուցազներգություն, այլ մտածված դիտողություն, սրամտություն, ամեն ինչ»։

Անոնք, որ կհեգնեն «մարդարեն», որ կար Հյուկոյին մեջ, մարդ-

կային հոգվույն ու հանճարին իրական մեկ մեծությունն է որ կհեգնեն, ճշմարիտ մեծ բանաստեղծին իսկության ու կոչման ավանդական ու հարազատագույն ըմբռնումն է որ կոտնակոխեն։ Մարդկային բանաստեղծության հսկաները, «սկսելով հրեից մեծ բանաստեղծներեն, որ միմիայն «մարգարե» անունով ծանոթ ու հարգված են արդեն, «Մահապարաթա»-ին, «Ռամանյանա»-ին ու «Շահնամե»-ին քերթողները, Հոմերն ու Վիրգիլը, Տանթեն, Շեքսփիրն ու Կյոթեն, ինչպես և մեր Նարեկացին, ավելի կամ նվազ, ուղղակի կամ անուղղակի, յուրաքանչյուրն իր ժամանակին ըմբռնումներուն և իր խառնվածքին համեմատ, իրենց գործին մեջ եղած են բանաստեղծ-մարգարեներ, աստուծո՝ կամ իդեալին՝ և մարդկության միջև միջնորդներ, մարդկության հոգեկան առաջնորդներ, և ոչ թե լոկ խոսքի արվեստագետներ կամ կյանքը նրբորեն ու ճշտորեն արտահայտող պատկերահաններ։ Հյուկո մարգարեություն չէ դերասանած. ան ծնած էր բանաստեղծ-մարգարե ըլլալու համար, և իր ճակատագիրն է, որ գործադրած, իր կոչումն է, որ կատարած է։

Անարդար են դարձյալ անոնք, որ «քաղաքական քամելեոն մը» կկարծեն տեսնել Հյուկոյի մեջ, որովհետև նախ թագավորական եղած է՝ Պուրպոններու վերահաստատման շրջանին, հետո Պոնափարթի փառաբանիչ, հետո նորեն թագավորական, ու հետո՝ հեղափոխական և հանրապետական։ Ճիշտ է, որ իր կյանքի առաջին շրջանին մեջ, եթե իր գրական բուն ուղին գտնելու ու անոր մեջ վճռաբար հառաջանալու համար երկար չէ սպասած, քաղաքական և ընկերական հարցերու մեջ իր վերջնական դիրքը ճշտելու համար՝ զանազան փուլերե անցած է, իր Վանտեցի մոր ազդեցության տակ։ Լուի ԺԸ-ի և Շառլ Ժ-ի օրերուն՝ եղած է թագավորական, հետո Նափոլեոն Պոնափարթի հանճարի ու նկարագրի մեծության համար հիացում ունեցած և անոր հզորագույն դյուցազներգակը հանդիսացած է ու պահ մը նույնիսկ «ազատական կայսրության» մը Ֆրանսայի մեջ հաստատման համախոհ եղած է (Նափոլեոն Գ-ը կայսր, և ինք վարչապետ...)։ Հետո Լուի Ֆիլիփ ռամկավարական թագավորին օրով բարեկամ եղած է այդ պետին, բայց իշխան Լուի Նափոլեոնի պետական հարվածով Ֆրանսայի մեջ 1830-ի և 1848-ի հեղափոխություններով հաստատված ռամկավարական կարգերուն ջնջումին դեմ խորապես զայրացած, այն այլևս վերջնապես դարձավ հեղափոխական մը, ընդդիմադիր պայքարող մը, մոլեռանդ հանրապետական մը, ատոր համար հեռացավ նույնիսկ իր սիրած հայրենիքեն, կամավոր աքսորի մը անստույգ ու նեղություններով լի կյանքը հանձն առավ, և այլևս իր խառնվածքին ու մտայնության ամենեն

հարազատ քաղաքական վարդապետության՝ այն է ժողովրդական, հանրապետական կառավարության մը սկզբունքին վճռապես հարած, այդ իդեալին համար պայքարեցավ քսան տարի շարունակ, և Նափոլեոն Գ-ի անկումեն և հանրապետության Ֆրանսայի մեջ վերջնական հաղթանակե հետո, ան մնաց մինչև մահը իր երկրին մեջ այդ իդեալին մոլեռանդ պաշտպանը, անոր հաջողությամբ պսակված ամաքյալը, և իր այդ իդեալն ընդլայնելով՝ ան եղավ նաև համաշխարհային եղբայրական հանրապետության մը վսեմ երազին երգիչը։ Խծբծանքները հիմնավոր չեն ուրեմն Հյուկոյի կյանքին ալ հանդեպ, ուր անշուշտ տկարության բոպեներ, սխալներ կրնան գտնված ըլլալ, բայց որ իր ամբողջության մեջ ազնիվ մարդու մը, գաղափարապաշտ, հայրենասեր, մարդասեր մտավորականի մը կյանքն է։ Իսկ երբ Քլոտ Ֆարեր մը կհանդգնի «ԺԹ դարու ամենեն մեծ ապուշը» հորջորջել Հյուկոն, իր դերին մեջ է։ Համիդյան կոտորածներեն հետո թուրքերը շողոքորթող և թուրքին լուծին տակ ճզմված ժողովուրդներն անարգող, պատերազմի ատեն Թալեաթյան կառավարության հրամանով կատարված մեծազանգված ահավոր ոճիրներեն ետքն ալ թուրքին փաստաբանը և զոհերուն անվանարկիչը հանդիսացող այս պարոնը, որ իբր գրագետ Հյուկոյի քով թզուկ մըն է, հասկանալի է, որ «ապուշ» նկատե այն վեհ հոգին, որ բռնավորները խարանելը և կեղեքված ազգերն ու անհատները պաշտպանելը իր կյանքին ու գրականության գերագույն նպատակներեն մին համարեցավ։

Մեր նոր սերունդը քիչ կկարդա Հյուկո, և ցավալի է ատիկա, որովհետև Հյուկո ազնվացնող, նկարագիր կազմող հեղինակ մըն է։ Կարծողներ ալ կան մերոնց մեջ, թե ֆրանսացվոց նոր սերունդն իսկ այլևս չի հետաքրքրվիր Հյուկոյով, զայն հինցած, անշահեկան կնկատե։ Իմանալով, որ մտադիր էինք հատուկ հանդես մը սարքել ի պատիվ Հյուկոյի, ատոնցմե մին ինծի կըսեր. «Անիմաստ է, որ հայերը հանդես սարքեն հեղինակի մը համար, երբ ֆրանսացիք իսկ այլևս չեն կարդար զայն»։ Այս տարօրինակ խոսքն ըսողը տեղեկություն իսկ չուներ, որ տասնյակ հազարավոր ֆրանսացիներ ներկա գտնված էին Հյուկոյի հիշատակը փառաբանելու համար կազմված շարք մը հանդիսությանց, որ դեռ մինչև այս աշնան վերջը պիտի շարունակվին, զանազան ձևերով (խմբական պտույտներ և հանդեսներ այն բոլոր վայրերը Ֆրանսայի մեջ և ուրիշ տեղվանք, ուր Հյուկո իր կյանքի մեկ մասն անցուցած է, և այլն)։ Ֆրանսացվոց մտավոր կյանքին մոտեն հետևողներ գիտեն, թե ինչքան սխալ է Հյուկո անոնցմե մոռցված երևակայելը.

ինքզինքը հարգող ոչէ ֆրանսացի գրագետ— նույնիսկ ամենեն արդիականը— կարդացած է Հյուկոյի գլխավոր գործերը, իսկ ժողովրդական զանգվածը զայն միշտ կնկատե բանաստեղծական մեծագույն դեմքը իր երկրին։ Հյուկոյի տոմամները անոր գործին ամենեն ամուր մասը չեն, բայց «Էռնանի»-ն և «Ռյու Պլաս»-ը Կոմեդի Ֆրանսեզի խաղացանկին մեջ են միշտ, և այդ խաղերու ներկայացմանց թատրոնը միշտ լեփ-լեցուն է, որովհետև անոնք՝ Քորնեյլի խաղերուն պես վեհ զգացումներ, ազնիվ ու շինիչ գաղափարներ ծավալող գործեր են, ոտանավորներու հրաշալի երաժշտությամբ մը արտահայտված։ Այս հիսնամյակի հանդեսներուն առթիվ տեսնվեցավ, թե ի՞նչ խոր հիացումով խոսեցան Հյուկոյի մասին ոչ միայն Լյուսիեն Տեքավի կամ Ֆերնան Կրեկի պես հիներ, որ՝ ինչպես և դեռ ուրիշ շատեր՝ խանդավառ սքանչացող են հսկային, ոչ միայն Լեոն Տոտե մը որ, գեղեցկագիտական ու մանավանդ քաղաքական տեսակետով մեծ վերապահումներ ունի Հյուկոյի գործերեն շատերուն մասին, բայց որ անոր բանաստեղծությանց մեկ կարևոր մասին համար (մանավանդ «Հայեցողություններ», «Պատուհասներ» հատորներուն) հայտնեց ավելի քան երբեք ջերմ և անխառն հիացում, այլև այնպիսի գրողներ, որ նոր արվեստի մարդիկ են, գերազանցապես արդիական մտքեր, Լեո-Փոլ Ֆարկ մը կամ Ալեքսանդր Արնու մը։

Ես Հյուկոյապաշտ մը եղած եմ պատանության օրերես և այդպես ալ մնացած եմ. անսահման են իմ սերս ու երախտագիտությունս այդ հզոր ու բարի քերթողին համար, որուն գործերուն ընթերցումը կյանքիս առաջին, նախապատրաստական շրջանին ինծի անհուն հոգեկան հրճվանքներ պարգևած, մարդն ու գրագետն իմ մեջս կազմելու համար մեծապես նպաստած է (թեև իմ ինքնությունս գտնելես հետո զգուշացած եմ նմանող մ'ըլլալե վարպետին և իմ խառնվածքիս համեմատ ճամփաս գծած և իմ գործս կերտած եմ)։ Իրմե հետո ճանչցած եմ այն երեք մյուս հսկաները, որ են Տանթե, Շեքսպիր, Կյոթե. իրեն հետ գրեթե նույն ատեն ճանչցած եմ նաև Լամարթինն ու Մյուսեն ու սիրած եմ առաջնույն «Եվոլյան տավիղ»-ին հոգեշունչ վեհ մելամաշնակությունը և երկրորդին սրտալից մտերիմ քերթությունը և կենսալից ու զմայլելի թատերախաղերը. ավելի ետքն է որ ըմբռնած եմ թանկագին արժեքը այն ազնվական մտածող-բանաստեղծին, որ Վինյին է և մասնավոր գորով մը զիս անոր կապած է (այնպես որ անոր պաշտելի «Զեթրրթեն»-ը և լավագույն քերթվածները թարգմանած եմ). Վինյիեն խիստ առաջ, ես անձնապես «գտած» եմ Պոտլերն ու էտկար Փոն, Բայ-

րընն ու Լեոփարտին, Հայնեն ու Վերլենը և անհունապես սիրած եմ զանոնք, ինչպես և ավելի հետո (ու հիշատակելով միայն նոր ժամանակի եվրոպական բանաստեղծները)՝ Միցկիևիչը, Նելին, Թեոֆիլ Կորթիեն, Լքոնթ տը Լիլը, Մալարմեն, Ռեմպոն, Լաֆորկը, Սամենը, Մեթերլինքը, Վերհարնը և ուրիշներ, բայց այդ բոլոր սքանչելի բանաստեղծները, որոնցմե ոմանց համար— Պոտլեր, Վերլեն, Հայնե, Լեոփարտի, Փո,— սրտի մեծ հակում ունեցած եմ և ունիմ ցարդ, չեն կրցած հիացմանս մեջ իր հսկայի պատվանդանեն վար առնել «Հյուկո հայրիկը». ան մինչև այսօր ինծի համար կմնա Ֆրանսայի մեծագույն քնարերգակը՝ Վիլլոնեն ու Ռոնսարեն ի վեր, ու միակ դուցազներգակը՝ «Շանսոն դը Ռոլան»-ի քերթողեն ի վեր, ու այդ երեք նախորդներեն շատ ավելի հզոր. մինչև այսօր ան կմնա ինծի համար իբրև համամարդկային բարձր քնարերգակ և նոր ժամանակներու հզորաշունչ դյուցազներգակ, այնքան մեծ, որքան մեծ է Կյոթե իբր իմաստասեր բանաստեղծ, որքան մեծ են Շեքսպիր և Պալզակ իբր մարդկային կյանքի խորաթափանց հոգեբան, պատկերահան ու մեկնիչ, և ինքն է զոր Բալզակին հետ ֆրանսական ժողովուրդը կրնա դնել իբր գրական հսկա՝ մարդկության գերագույն հանճարներու հույլին մեջ։

Մեծ հաճույքով տեսա ուրեմն Երևանի երեք կարևորագույն թերթերուն մեջ հրատարակված հոդվածները։ Հասկանալի է, որ «Թշվառներ»-ու, «Պատուհասներ»-ու, «Ինսուներեք»-ի, «Ահավոր տարի»-ի Հյուկոն, հեղափոխական, բռնության դեմ կռվող, Փարիզի «քոմյունարներու» կոտորածին դեմ բողոքող Հյուկոն մասնավորապես տարփողված ըլլա այդ հոդվածներուն մեջ։ Հասկանալի է նաև, որ հոդվածագիրները— Սիմոն Հակոբյան, Վ. Թերզիբաշյան, Սիրաս,— գնահատելով հանդերձ Հյուկոյի դերը իբր քննադատ մարդկային ընկերության անարդարության, անոր մինչև դասակարգային պայքարի մարքսյան տեսակետը հառաջացած չըլլալը շեշտեն։ Բայց այդ վերապահումը, զոր բանաձևած են երեք գրողները, զիրենք բնավ չեն արգիլած մեծահանճար բանաստեղծին լավագույն գործերուն արտասովոր գեղեցկությունը, զորությունը և վեհությունը ճանչնալե և ջերմորեն ներբողելե։ Եվ ուրախ եմ, որ Սիրաս կառաջարկե խ. Հայաստանի Պետհրատին ի լույս ընծայել Հյուկոյի կարևոր գործերուն, և է՛ն առաջ «Թշվառներ»-ու և «Ինսուներեք»-ի, հայերեն նոր թարգմանություն մը։ Երանի թե հոն ջանային նաև հրատարակել հավաքածու մը Հյուկոյի գեղեցկագույն

քերթվածներեն գեթ մեկ մասին հայերեն թարգմանությանց, որովհետև Հյուկոյի մտածմանց և զգացմանց բարձրագույն արտահայտությունը իր բանաստեղծությանց մեջ է, որ կգտնվի, և մեր Չարենցներն ու Նորենցները, Մահարիները, Ալազանները և Տարոնցիները կրնան մեծապես օգտվիլ այդ հմայիչ քնարերգության և այդ ուժգնաշունչ դյուցազներգության լավագույն էջերուն ծանոթանալով։

Նվազ տրամաբանական էին վերապահումները, որոնց քիչ մը չափազանց տեղ տված էր Փայլակ Սանասար այն երկու հոդվածներուն մեջ, զոր «Հառաջ»-ը հրատարակած էր և որ շատ լավ մասեր կպարունակեին և կատարյալ պիտի ըլլային առանց Հյուկոն խծբծողներուն և նսեմացնել, վերծանել ճգնողներուն որոշ զիջումներ ընելու այդ մասնակի և ըստ իս անհարկի ձգտումին։ Հիացումը Հյուկոյի քերթողական հանճարին համար տիրական տարրն էր այդ հոդվածներուն մեջ, բայց վերապահումները մերթ այնքան հեռուն կերթային, որ բոպե մը հակասական կթվեին այդ հիացման հետ։ Փոլ Վալերիի «մտավորական տագնապներեն», որոնց արդյունքն է գաղափարներու և պատկերներու մաթեմատիքական հյուսք մը, նուրբ, բարդ ու ցուրտ, զուտ ուղեղային արտադրություն մը, ուր հուզմունքի կաթիլ մ'իսկ կարելի չէ գտնել,— այդ «տագնապներեն», զոր Սանասար լիովին բացակա կկարծե Հյուկոյի գործեն, շատ ավելի բարձր մտավոր աշխատանք և մարդկային ներաշխարհի պատկերացում կա ինչ-ինչ գործերուն մեջ Հյուկոյի, որ հեռո՛ւ լոկ ձևական մեծ արվեստագետ մ'ըլլալե, է՛ն առաջ մեծ հոգի մըն է, հզոր ու վեհանձն սիրտ մը, և խիզախ ու բարձրահայաց միտք մը։ Ճիշտ չէ նաև, որ ան «սովորական մարդուն», «միջին մարդուն» հոգին է, որ կարտահայտե ծայրահեղ ուժգնությամբ, ինչպես գրած էր Սանասար։ Ճիշտն այն է, որ հիվանդ չէ ան, ինչպես ցավագին, տառապող, հոռետես մարդոց հանճարեղ թարգմանները, որ են Լեոփարտի և Պոտլեռ, կամ աննման հրապույրով երգիչները անհատական ցավերու և ուրախությանց, ինչպես Հայնե կամ Վերլեն, այլ երգիչն է առողջ, ուժեղ, պայքարող, լավատես, հավատավոր, ստեղծագործ, կյանքի սիրահար մարդոց (ինչ որ «սովորական» կամ «միջին» մարդեն տարբեր բան է)։ Ան բանաստեղծն է, Շեքսփիրի պես, ոչ միայն իր ազգին, որուն քերթողական գերագույն արտահայտիչն է, այլ ամբողջ մարդկության, որ անոր մեջ կճանչնա ու կսիրե համաշխարհային կյանքի և մարդկային ճակատագրի էական ու մշտական հարցերուն մեծագույն երգիչներեն մին (այս մասին տարակուսողները թող կարդան «Դարերու ավանդավեպ»-ին ու «Հայեցողությանց» ինչ-ինչ

էջերը, և «Մտքին չորս հովեր»-ուն, «Ամբողջ Քնար»-ին, ու մանավանդ «Սատանի վախճան»-ը և «Աստված» տիտղոսով մեծ քերթվածներուն, որ իր մահվընեն ետքը հրատարակվեցան և որ մեր մեջ գրեթե բոլորովին անծանոթ են, գլխավոր հատվածները, ուր բանաստեղծը մտածման բարձունքներու մեջ կսավառնի)։ Հյուկոյի նկատմամբ մեր ժողովուրդի տածած ինքնաբուխ ու խորունկ զգացմանց ամենեն ճիշտ արտահայտողները կմնան ըստ իս Նարպեյներն ու Սեթյանները, Օտյաններն ու Պերպերյանները՝ իրենց խանդավառ պաշտումի էջերով և նույնիսկ ֆրանսական նոր բանաստեղծության ճոխ բուրաստանին քանի մը ծաղիկ ավելցնել ճգնող երիտասարդ շնորհալի ու դժբախտ Արմեն Տորյանը, որ մեր ռոմանտիկ վարպետներուն չափ բուռն սքանչացումով տարփողեց Հյուկոն ֆրանսերեն լայնաշունչ քերթվածի մը մեջ, և հայ ռոմանտիկ վեհոգի քերթողուհի տիկ. Անայիսը՝ հունիս 22-ի մեր հանդեսին իր արտասանած գեղեցիկ ճառով, ու նաև Վարուժանը, որ չեմ գիտեր թե ուրէ բան գրած է Հյուկոյի մասին, բայց գիտեմ թե կպաշտեր Հյուկոն և որուն գործը արդեն կպոռա, թե ան խորապես հասկցած ու սիրած է Հյուկոն և անկից օգտված է իր դյուցազներգական արու և շքեղ ոճը կազմելու և ուժեղ ոտանավորը դարբնելու համար։

Հյուկոյի արձակեն շատ բան թարգմանված է հայերեն, (թատերգությունները ամենամեծ մասամբ, վեպերեն՝ «Թշվառներ»-ը, «Նոթր դամ դը Փարի»-ն և «Իննսուներեք»-ը, և ատիկա պատվաբեր է մեր ցեղին, որովհետև այդ թարգմանությունները, թեպետ թերություններե ոչ զերծ, առաջին փորձերն են, որ կատարված են ամբողջ Արևելքի մեջ։ Բայց քերթվածներեն դեռ շատ քիչ ունինք հայերեն թարգմանված։ «Ուրվականք»-ին թարգմանությունը Մ. Պեշիկթաշլյանի ձեռքով՝ հրաշալիք մըն է, կան և կտորներ թարգմանված Թերզյանի, Ալփասլանի, Եղիշե պատրիարք Դուրյանի, տիկին Սեպիլի, Թորգոմ պատրիարք Գուշակյանի ձեռքով). այդ պակասը պետք է լրացնել։ «Անահիտ»-ի ներկա թիվին մեջ կդնեմ թարգմանությունը մեծանուն քերթողին գեղեցիկ էջերեն մեկ քանիին, հուսալով, որ ատիկա կրնա հետևողներ առաջ բերել և կունենանք օր մը հատոր մը՝ Հյուկոյի լավագույն բանաստեղծական էջերու հավաքածու մը պարունակող։

Սպասելով ատոր, կհանձնարարեմ մեր երիտասարդ գրողներուն, որ կարդան Բեյմոն Էսքոլիեի «Վիքթոր Հյուկոյի փառավոր կյանքը» և Ֆերնան Կրեկի «Վիքթոր Հյուկոյի գործը» երկու սքանչելի հատորները, որոնց առաջինը ամենահրապուրիչ և ամենավավերական ու կենդանի ձևով կպատմե Հյուկոյի արտակարգ կյանքը— ավելի շահեկան քան

շատ մը վեպեր— և որոնց մյուսը ամենեն ճիշտ ու արդար, ամենեն նուրբ ու խորաթափանց դատումն ու մեկնությունը կպարունակե Հյուկոյի գրական բովանդակ գործին, անոր բացառիկ հատկությանց, անզուգական գեղեցկությանց ու մեծությանց, ու նաև անոր թերության ու տկարության ճշգրիտ մատնանշումով։ Այդպիսի գրքերու ընթերցումը թանկագին նպաստ մը կրնա բերել մեր նորերուն մտքին ու սրտին զարգացման, բարոյական ու գեղեցկագիտական կարողության ճոխացման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արշակ Չոպանյան, Կ. Դալլաքյան 3

ՔԵՐԹՎԱԾՆԵՐ

Կուզեի որ սիրտըս ըլլար 23
Կնախանձիմ երջանիկ 23
Ծառերուն մեջ ավոտն իր վարդ 24
Աչքերուս մեջ շեշտակի 24
Անձայն և աղվոր 25
Արևուն լույսը 25
Ա՜խ, գեթ երբ սիրտդ 26
Սիրերգ առ լուսին 26

Տեսիլներ

Վերհիշում 27
Ստվերները 29
Աստղերը 31
Երազը 33
Ա 33
Բ 33
Գ 34
Դ 34
Ե 35
Օրոր մայր Հայաստանին 36
Լեռան ծաղիկ 39
Թովմաս Թերզյանին 46
Երգ հարության 49
Հայկական դյուցազներգություն 50

Արշալույս

Ադամի վիշտը 57
Կապույտ հնչյակ 58
Տաղ 59

Սիրո ճիչ . . . 59
Տաղ . . . 59
Որբուկը . . . 60
Երազ . . . 62
Անշեջ հուրը . . . 62
Ցայգերգ . . . 63
Իրիկվան երգը . . . 64
Բարեկենդան . . . 64
Պեպեքը . . . 65
Եղերերգ . . . 66
Աստղերը . . . 67
Մեռնիլ . . . 67
Մռայլ հնչյակ . . . 69
Ջարթոնք . . . 69
Փախուստ . . . 70
Հովը . . . 71
Հեքիաթ . . . 72
Սյուքը . . . 73
Աղջիկ մը որ կաղողեն . . . 73
Ապաստանը . . . 74
Ատե, բայց մի մոռնա զիս . . . 75
Ծաղիկը . . . 76
Գեղոն . . . 77
Այգը . . . 78
Սիրերգ . . . 78
Հովին երգը . . . 79
Այգերդ . . . 80
Սոխակը մեռավ . . . 82
Սպասում . . . 82
Իմ փունջս . . . 83
Լռին երաժշտություն . . . 83
Տաղիկ . . . 84
Ճերմակ հնչյակ . . . 84
Անչինչ բույրը . . . 84
Երազ . . . 85
Ռոնտո . . . 86
Կապը . . . 86
Վերահուշք . . . 87
Սույլը . . . 88
Մահիկը . . . 88
Գնտե՞ս . . . 89
Եղերերգ . . . 89
Ինչո՞ւ . . . 90
Մբրիկ . . . 91

Հառաչ . . . 92
Ցայգերգ . . . 92
Ջմռան պատկեր . . . 93
Տաղ . . . 93
Երազի մը մեջ . . . 94
Տաղ . . . 94
Ինչո՞ւ . . . 95
Վերջալույս . . . 95
Երբոր կինեն . . . 96
Ասուպներ . . . 96
Իր պատուհանին . . . 97
Ուրվանկար . . . 98
Երգ . . . 98
Առջի ձյուն . . . 98
Անծանոթը . . . 99
Լուսինը . . . 100
Երկու աղվոր աչուկներ . . . 100
Հնչյակ . . . 101
Ողբ . . . 101
Կաղանդը . . . 102
Ցողը . . . 102
Ճառագայթը . . . 103
Փասուռանները . . . 104

Ծովուն մոտ

Լոգուհիները . . . 106
Սարսուռ մը . . . 107
Որվանկար . . . 107
Քնացած ծով . . . 108
Ծովանկար . . . 108
Կայծեր . . . 109
Հյուսկենը . . . 109
Փրփուրը . . . 110
Ծովուն . . . 110
Ծովափին վրա . . . 111
Որորը . . . 111
Դանակը . . . 112
Լուսնի ծագում . . . 112
Հովհարը . . . 114
Ուրվանկար . . . 114
Ծովանկար . . . 114
Կովը . . . 115
Սեփ-սև է երկինքն . . . 115
Կիրկինդիսառնում . . . 116
Կոհակները . . . 116

Անձկություն

Երջանկությունը . . . 118
Առեղծվածը . . . 119
Գիշերին մեջ . . . 119
Իմ սիրտս . . . 120
Գիշերական . . . 121
Երկրիս մահը . . . 121
Տաղ . . . 122
Լեռան քարն ըսավ . . . 123
Հովին . . . 124
Կինը . . . 126
Մեկնում . . . 127

Փշրված սիրո եղերերգը

Տաղաշարք . . . 128
Ցավս աչքիս մեջ . . . 128
Լուսինն երկնքին մեջ . . . 129
Տես հիմա ինչ կերազեմ . . . 130
Եվ սակայն խորհե . . . 130
Սեպենք, սիրելիս . . . 131
Ա՜խ, երբ կըսեմ, որ . . . 132
Ինչպե՜ս մոռնալ քեզ... . . . 132
Անոնք որ մեծ անապատեն . . . 133

Խավարին մեջ

Քառյակներ . . . 134
Լռության . . . 134
Գլուխս ավա՜ղ . . . 135
Մեռած ջուրերու . . . 135
Ծովուն . . . 136
Դուն պիտի գաս . . . 137
Մահն իր անուշ թևերով . . . 138
Կյանքս եղավ լեռ մը . . . 139
Այս գիշեր . . . 139
Գիշերանվագ . . . 141
Սփինքսը . . . 143

Բլուրին վրա

Երգ մը . . . 144
Մարս . . . 144

Գեաթրիչե . . . 145
Մի ատեր վիշտը . . . 145
Անմահությունը հոգիին . . . 146
Անոր, զոր ատենով սիրեցի . . . 146
Մի պարծենար . . . 147
Հորս . . . 147
Կարմիր ըլլա թող . . . 148
Եթե ամեն բան իրոք . . . 149

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

Տղու հոգիներ

Ես ի՞նչ ընեմ հոգիով . . . 150
Աստված պապան . . . 152
Շիշը . . . 155
Երկու ծեծ . . . 156
Հեռավոր քույրիկը . . . 158
Սրբապղծում մը . . . 161
Անուրջը . . . 163
Փոքրիկ Սամարացին . . . 168
Առաջին նամակը . . . 169

Պատկերներ

Փայտե մարդերը . . . 171
Ամոլ մը . . . 172
Բուն . . . 173
Մուրացիկը . . . 174
Հրեշի մը ծոց հրեշտակ . . . 175
Քարե անկողին . . . 175
Փողոցի աղջիկը . . . 176
Սրբապղծություն . . . 178
Զին և անծանոթը . . . 178
Մուրացկան կինը . . . 179
Կենդանի սայլակ . . . 181
Կռիվ մը . . . 182
Սպիտակ հուղարկավորություն . . . 185
Ներունիների մահը . . . 186
Լուսնին հեգնությունը . . . 187
Դաճե մարդերուն զարմանքը . . . 188
Խթման իրիկուն . . . 189
Ագռավները . . . 190

Զատական պատկերներ

Հուշարկավորություն մը . . . 191
Ճերմակ պատկերներ . . . 193
Ստրիտեա փանայիրին . . . 195
Ողորմությունը . . . 200
Մայրը . . . 202
Խլյակ . . . 203
Ամբոխը . . . 205
Դեպի անցյալը . . . 211

Կյանք և երազ

Երջանկության աշխարհը . . . 213

Առձակ բանաստեղծություններ

Ա

Ցայգերգ . . . 219

Բ

Երգ . . . 220

Գ

Աբցունքն ու ծիծաղը . . . 220

Դ

Պատուհանին քերթվածը . . . 221

Ե

Կապույտին տակ սև . . . 223
Զեռիլիքի տոնավաճառը . . . 224
Լուսնին տակ . . . 230
Սերը . . . 231

Ա . . . 231

Բ . . . 231
Գ . . . 231
Դ . . . 232
Երգեր . . . 233

Ա . . . 233
Բ . . . 233
Գ . . . 234
Դ . . . 234
Պայրքլրի փանայիրը . . . 242
Երազի քաղաք . . . 242
Հազին քերթվածը . . . 244
Երկնքին ճամփան (հերիաթ) . . . 245
Լուսնին նամակը . . . 251
Ապագա ժամանակներու սևսիլ . . . 255
Սարսուռը . . . 260
Զյունին քերթվածը . . . 261
Քու մազերդ . . . 263
Աշնան երգ . . . 264
Օձը . . . 265
Լացող կինը . . . 266
Ցավին տունը . . . 269
Կույրերը . . . 276
Գեղոն ի պատիվ հայ լեզվի . . . 279
Որբերը . . . 281
Կյանքի տոնը . . . 283
Ութ ձայները . . . 287
Պզտիկ հայ գեղջուկին պատահարը . . . 289

Գրական դեմքեր

Գրիգոր Նարեկացի . . . 297
Ա . . . 297
Բ . . . 303
Գ . . . 313
Դ . . . 321
Ֆրիկ . . . 322
Նահապետ Քուչակ . . . 334
Մխիթար . . . 354
Մխիթարյանց գործը . . . 371
Խաչատուր Աբովյան . . . 381
Հ. Ղևոնդ Ալիշան . . . 411
Գեր. Արսեն Այտնյան . . . 431
Ն. Վ. Մկրտիչ Խրիմյան . . . 435
Կոմիտաս վարդապետ . . . 455
Կոմիտաս վարդապետ և հայ երաժշտությունը . . . 459
Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը . . . 493
Նախաբան . . . 500
Կենսագրություն . . . 501
Քննադատություն . . . 546
Վահան Թեքեյան . . . 631

Դանիել Վարուժան 644
Ատոմ Յարճանյան 655
Թովմաս Թերզյան 671
Մատթեոս Զարիֆյան 677
Բաֆֆի 680
Հովհաննես Թումանյան 728
Գաբրիել Սունդուկյանց 733
Համաստեղ և գյուղը հայ գրականության մեջ 745
Գրիգոր Զոհրապ 765
Պետրոս Ադամյան 779
Ա. Վերջին ներկայացումը 779
Բ. Հիշատակներ 786
Էտգար Շահին 800
Հովսեփ Փուշման 815
Էմիլ Վերհարն 824
Բուշքին և Միցքիեվիչ 833
Վիքթոր Հյուգո 844

ISBN 5-550-00006-7

Գրական-գեղարվեստական հրատարակություն

Արշակ Հովհաննեսի Չոպանյան

ԵՐԿԵՐ

Литературно-художественное издание

Аршак Оганесович Чопанян

СОЧИНЕНИЯ

Ереван, издательство «Советакан грох»

(На армянском языке)

Խմբ. վարիչ՝ Ստ. Է. Թոփչյան
Խմբագիր՝ Ա. Ս. Քիշոյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչ՝ Թ. Պ. Պողոսյան

ИБ № 5944

Հանձնված է շարվածքի՝ 25.12.1988 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 12.08.88 թ.։ ՎՖ 01378։ Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 50,22 պայմ. տպ. մամ.։ 45,6 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51000։ Պատվեր՝ 200։ Գինը՝ 4 ռ. 20 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.